ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ

ԼԵՒՈՆ ԽԱՉԻԿԵԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Հատոր Ա

329

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА АРМЕНИСТИКИ
ARMENOLOGICAL LIBRARY

ЛЕВОН ХАЧИКЯН
LEVON KHACHIKIAN

Труды
Works

Том I
Volume I

ГАНДЗАСАР GANDZASAR
БОГОСЛОВСКИЙ ЦЕНТР THEOLOGICAL CENTER
Ереван 1995 Yerevan

2868

ԼԵՒՈՆ ԽԱՉԻԿԵԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Հատոր Ա

ԳԱՆՁԱՍԱՐ
ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Երեւան 1995

ԳՄԴ 63·3(2Հ)+81·2Հ+76·11
Խ 280

Խմբագրական յանձնախումբ

Պարոյր Մուրադեան (գլխ. խմբագիր), տ. Մեսրոպ քհն. Արամեան, տ. Գրիգոր վրդ. Մաքսուտեան, ճ. Լեւոն Ջէքիեան, Պիոն Ցակոբեան, Պաւել Չոբանեան (քարտուղար)

Հատորը կազմեց Շ. Լ. Խաչիկեան

Խմբագիր Պ. Մ. Մուրադեան

Խաչիկեան Լ.
Խ 280 Աշխատութիւններ . - Հ1 . - Եր.: Գանձասար, 1995 - . - 22 սմ:
Հ1 . - 1995 . - 400 էջ:

Ակադ. Լեւոն Խաչիկեանի աշխատութիւնների սոյն հատորը նուիրուած է հայոց միջնադարեան մատենագրութեան նորայայտ կամ սակաւ քննարկուած խնդիրների ուսումնասիրութեանը՝ դպրութեան նախամաշտոցեան շրջանից մինչեւ ԺԸ դարը: Հատորում ներկայացուած են պատմաբանասիրական առանձնայատուկ կարեւորութիւն ունեցող բնագրեր, կատարուած բազում մատենագիտական, ազգագրական ու մշակութաբանական դիտարկումներ:

Խ $\frac{4502030000}{846(01)-95}$ 95

ԳՄԴ 63·3(2Հ)+81·2Հ+76·11

ISBN 5-8079-1040-0

© «Գանձասար» 1995

ԻՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Ա
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ
Տ. ՊԱՐԳԵՒԻ
ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՅ

Այս հատորը տպագրւում է
Հայ Առաքելական Եկեղեցու
ԱՄՆ-ի Արեւելեան թեմի առաջնորդ
Բարձրաշնորհ Տ. Խաժակ
արքեպիսկոպոս Պարսամեանի մեկենասութեամբ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հայագիտական ժառանգութեան մատենաշարային հրատարակութեան կարեւորութիւնը առանձնակի պատճառաբանութեան կարօտ խնդիր չէ: Շուրջ երկու հարիւր տարի հայաշխարհի տարբեր մշակութային կենտրոններում լոյս տեսնող հանդէսներում, ժողովածուներում, տարեգրքերում, ինչպէս նաեւ եւրոպական արեւելագիտական պարբերականներում հրատարակւում են հայագիտութեան հիմնարար խնդիրներ արծարծող, յաճախ նաեւ լուծող մեծ ու փոքր ուսումնասիրութիւններ: Նրանցից քչերն են արժանացել յետագայ վերահրատարակութեան, եւ որովհետեւ առ այսօր չի ստեղծուել հայագիտութեան թեմատիկ ու ժամանակագրական սպառիչ մատենագիտութիւն, բազում կարեւորագոյն հետազօտութիւններ պարզապէս մոռացութեան են մատնուել, իսկ նրանց հեղինակների յիշատակը՝ ակամայ խամրել: Սոյն պարագան երբեմն ցաւալի հետեւանքներ է ունենում, երբ վաղուց լուծուած հարցերը նորից քննութեան առարկայ են դառնում եւ կամ նոր հեղինակութեամբ շրջանառում: Հայագիտութեան անցեալ սերունդների վաստակի անմիջնորդ ծանօթութիւնը մերօրեայ հետազօտողին կազատի կրկնութեան փորձանքից եւ կմղի ինքնուրոյն ու հիմնաւոր պրպտումների:

Ոչ պակաս կարեւոր պիտի նկատել հայագիտութեան այլազգի նուիրեալների ժառանգութեան ճանաչումը: Մեր ազգային ու մասնագիտական պարտքն է վերահրատարակել, իսկ առանձին դէպքերում՝ նաեւ հայերէն թարգմանել նրանց առաւել նշանակալի աշխատութիւնները, արժեւորել այդպիսիք ըստ հայագիտութեան վերընթացի հանգրուանների եւ ներկայացնել հայոց ու օտար հանրութեանը: Աւելորդ է յիշեցնել, թէ «Հայագիտական մատենադարան» վերտառութիւնը ինքնին մերժում է տեղային-համայնքային, դաւանական-կուսակցական, մերազգի թէ օտար պատկանելութեան տարբերակումը: Ընդսմին, վերահրատարակութիւնը յաճախ չի լինելու սոսկ վերատպութիւն. մատենաշարի հատորները պատրաստող եւ խմբագրող մասնագէտները, բացի հեղինակը ներկայացնող առաջաբաններից, հետեւելու են արծարծուող հարցի պատմութեանը նաեւ նոր ժամանակներում՝ անհրաժեշտութեան պարագայում կցելով ծանօթագրութիւն, կատարելով վերապահութիւն կամ օժտելով նորագոյն գրականութեամբ: Նման ընթացքը կարդիականացնի տասնամեակներ առաջ լոյս տեսածը, նոր հետազօտութիւն կխթանի:

Հատորներիս յաջորդականութիւնը պայմանաւորուած է նրանց պատրաստութեան ընթացքով, ինչպէս նաեւ հրատարակութեան միջոցների հայթայթմամբ: Ողջունելով հովանաւորների պատրաստակամութիւնը եւ կոչ անելով սատար լինել հայագիտութեան վաստակաւորների ժառանգութեան հրատարակութեանը՝ միաժամանակ պիտի յիշեցնենք, թէ հատորների պատրաստման յանձնարարութիւնները տրուելու են խմբագրութեան անունով, որը եւ թելադրելու է կիրառելի սկզբունքներն ու կազմաւորման կերպը:

«ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՀԱՅԱԳԷՏԸ

Ակադեմիկոս Լեւոն Խաչիկեանի գիտական կենսագրութիւնը սկսւում է պետական ձեռագրատուն-Մատենադարանում աշխատելու տարիներից: Սովորաբար երիտասարդ գիտնականների առաջին հրապարակումները ներողամտութիւն հայցելու տարր են ունենում, բայց Լ. Խաչիկեանի այսօրուայ վաստակի բարձունքից դիտելիս անգամ նրա առաջին հրապարակումները դրա կարիքը չունեն, եթէ չասենք՝ այսօր էլ ուսանելի են: Հայագէտները (Ղ. Ալիշան, Գ. Խալաթեան) վաղուց գիտէին Վանական Վարդապետի «Յաղագս տարեմտին» ճառի գոյութեան մասին, բայց այդ արժէքաւոր տոմարական բնագրի գիտական հրատարակութիւնն ու ամփոփ գնահատութիւնը վիճակուած էր իրականացնել քսաներեքամեայ Լ. Խաչիկեանին[1]: Նրա բնութագրմամբ՝ «Յաղագս տարեմտին» աշխատութիւնը «ցայտուն կերպով ցոյց է տալիս մեր բանասիրութեան միայն նեղ շրջաններին յայտնի Վանական Վարդապետի գրչի ուժն ու գիտական կարողութիւնը»[2], իսկ այդ երկի գիտական բնագիրը կազմելու, Անանիա Շիրակացու հետ ունեցած աղերսը պարզելու, Արտաւազդին վերաբերող առասպելի տարբերակը գնահատելու եւ ծանօթագրելու հմտութիւնը, առանց չափազանցութեան, ցոյց էր տալիս մեր բանասիրութեան նեղ շրջաններին իսկ անյայտ երիտասարդ Լ. Խաչիկեանի «գրչի ուժն ու գիտական կարողութիւնը»: Եվ առհասարակ, Եղիշէի «Արարածոց մեկնութիւն» երկը դիսերտացիայի թեզ դարձնելը նշանակում էր, թէ Լ. Խաչիկեանը զբաղուելու է մատենագրութեան պատմութեան այնպիսի բնագաւառներով, որոնք ինչ-ինչ պատճառներով քննութեան առարկայ չեն դարձել, եւ որոնց մատենագրական կարեւորութիւնը կարօտ է բացայայտման:

Անդադրում ու անձանձրոյթ ձեռագրեր պրպտող Լ. Խաչիկեանը Մատենադարանի գրչագրերից մէկում (N 631) սովորական «Նախերգանք քարոզից» կոչուած գրութիւնից տարբերեց ու հայագիտութեան մէջ առաջին անգամ երեւան բերեց միջնադարեան նշանաւոր վարդապետանոց Գլաձորի սաների ատենախօսութիւնները՝ կատարելով Ղ. Ալիշանի երկար ժամանակ անկատար մնացած ցանկութիւնը[3]: Երկրի քաղաքական, կրօնական եւ մշակութային պատմութեան պատկառելի իմացութիւն պէտք էր ունենալ՝ յիշեալ ատենախօսութիւնների թեթեւակի ակնարկումների միջից ժամանակի աշխարհական ու հոգեւոր անձանց տեսնելու, անվրէպ հասցէագրելու եւ նաեւ բացայայտած յուշարձանները թուագրելու համար: Լ. Խաչիկեանի «Գլաձորեան համալսարանը եւ նրա սաների աւարտական ատենախօսութիւնները» աշխատութիւնը[4] այդ ամենի առկայութիւնն էր վկայում: Ի դէպ, առաջին յօդուած-հրապարակումներից սկսած, Լ. Խաչիկեանին բնորոշ է գիտական լայնախոհութիւնը. նրա աշխատութիւններում ուրիշների ուշադրութեանն առաջարկուող եւ նոր հետախուզումներ յուշող բազմաթիւ յղումներ ու ցուցումներ կան, որոնք երբեմն յաջողութեամբ ընկալուած ու գործածուած են, իսկ երբեմն էլ դեռ սպասում են ընկալունակ կատարողի: Յիշեալ յօդուածում, օրինակ, խօսք կայ Մխիթար Գօշի «արժէքաւոր եւ ցարդ անյայտ ճառերի ու մեկնութիւնների» մասին ձեռագրի մատնացուցումով (N 3276), որոնց ուսումնասիրութիւնը կամբողջացնէր մատենագրի վաստակը[5]:

---

1 «Յաղագս տարեմտին ի Վանական Վարդապետէ ասացեալ» («Գիտական նիւթերի ժողովածու», N 1, 1941, էջ 151-169)

2 Նոյն տեղում, էջ 152

3 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1891, էջ 137

4 Երեւանի պետական համալսարանի «Գիտական աշխատութիւններ», N 23, 1946, էջ 423-450

5 Նկատենք, սակայն, որ ձեռագրի 40ա-44ա էջերում գտնուող Մխ. Գօշի հեղինակութիւնը կրող «Յաղագս ողորմութեան եւ աղքատասիրութեան» ճառը իրականում պատկանում է Մխիթար Սասնեցուն:

Հայագէտներ Յ. Մանանդեանն ու Լ. Մելիքսէթ-Բէկը դիտել էին, որ Դիոգենէս Լաերտացին ստոյիկեան դպրոցի հիմնադիր Զենոնի աշխատութիւնների շարքում յիշատակում է «Յաղագս բնութեան» խորագրով եւ յունարէն բնագրով չպահպանուած մի երկ, որի հայերէն թարգմանութիւնն առկայ է ձեռագրերում:

Լեւոն Խաչիկեանը պրպտումների մէջ աւելի առաջ է անցնում եւ յայտնաբերում այդ երկի թարգմանութեան ընդարձակ խմբագրութիւնը[1]: Գիտնականի եզրակացութեամբ Դաւիթ Անյաղթի «Սահմանք իմաստասիրութեան» եւ Զենոնի «Յաղագս բնութեան» բնագրերը «թարգմանուել են նոյն գործչի կողմից, եւ կամ նրանց թարգմանիչները եղել են ժամանակակիցներ ու թարգմանչական նոյն դպրոցի համամիտ ներկայացուցիչներ»[2]:

Հայագէտի՝ «Զենոնի «Յաղագս բնութեան» երկի հայերէն թարգմանութիւնը» ուսումնասիրութիւն-հրապարակումը մէկ անգամ եւս հաստատեց այն ընդհանուր մշակութային նշանակութիւնը, որ ունեն միջնադարեան հայկական թարգմանութիւնները: Լ. Խաչիկեանն ակներեւ դարձրեց նաեւ, թէ թարգմանական այդ բնագրերը նշանակալի հետք են թողել մեր մատենագրութեան պատմութեան մէջ:

Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւնից» յայտնի էր, որ Կոստանդին Բարձրաբերդցին «Սահմանք կանոնականք» է հեղինակել եւ առաքել ըստ պատկանելոյն, բայց որ դրանից երեք տարի անց՝ 1251 թ., նա վերստին է անդրադարձել այդ խնդիրներին 1249 թ. հայ-վրացական հակամոնղոլական ապստամբութեան հետեւանքների թելադրանքով, պարզ դարձաւ՝ Լենինգրադի գրչագրերից մէկում Լեւոն Խաչիկեանի կողմից նոյն հեղինակի «Խրատական թուղթը» լոյս աշխարհ բերելով[3]: Այդ ոչ ծաւալուն բնագիրը, յիրաւի, «լրացնում է հայ պատմագիրներին եւ իր ուրոյն տեղը գրաւում մոնղոլական արշաւանքների ու տիրապետութեան առաջին տասնամեակների աղբիւրների շարքում»[4]: Հրատարակիչը բացայայտում է կաթողիկոսի խրատների քաղաքական դրդապատճառները, նրանց պատմական, իրաւագիտական, ազգագրական եւ կենցաղագիտական նշանակութիւնը: Աւելորդ չէ յիշել, որ այս ուսումնասիրութեան մէջ յստակօրէն իմաստաւորուեցին պաշտամունքային «քաջախօս» եւ «լեկրոտ», սովորութական «խաւարարգել», սոցիալ-կենցաղային «հաղկից» եւ «խապկից» տերմինները: Լեւոն Խաչիկեանի աղբիւրագիտական հմտութեանն ենք պարտական նաեւ Թղթի հեղինակային պատկանելութիւնը որոշելու եւ միջին հայերէնի պատմութեան նշանակալի մի աղբիւր երեւան բերելու համար:

1951 թ. լոյս ընծայած մի յօդուածով Լեւոն Խաչիկեանը նոր էջ բացեց միջնադարեան հայկական քաղաքների ներքին կեանքի ուսումնասիրութեան մէջ՝ ձեռքի տակ ունենալով Յովհ. Երզնկացու կազմած (1280 թ.) «Սահման[ք] եւ կանոնք միաբանութեան եղբարց, որք աստուածային սիրովն միաբանեցան յեղբայրութիւն միմեանց ի մայրաքաղաքս, որ կոչի Երզնկայ» գիտութեանն անծանօթ բնագիրը[5]: Մէկ տասնամեակ անց «Երզնկա քաղաքի «Եղբարց միաբանութեան» կանոնադրութիւնը (1280 թ.)» խորագրի տակ նա շրջանառութեան մէջ դրեց այդ իրօք եզակի եւ բովանդակալից սկզբնաղբիւրը՝ համոզուած լինելով, որ «այսուհետեւ եւս այն գրաւելու է սեւեռուն ուշադրութիւն»[6]:

1 «Գիտական նիւթերի ժողովածու», N 2, 1950, էջ 65-98
2 Նոյն տեղում, N 2, էջ 76
3 «Բանբեր Մատենադարանի», N 4, 1958, էջ 267-284
4 Նոյն տեղում, էջ 270
5 ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1951, N 12, էջ 73-84
6 «Բանբեր Մատենադարանի», N 6, 1962, էջ 365-377

Ի թիւս այլ հարցերի Լ. Խաչիկեանն անդրադարձաւ կազմակերպութեան կառուցուածքին, նրա անդամների սոցիալական պատկանելութեանը, նպատակներին ու խնդիրներին՝ նորովի մեկնաբանելով այլ աղբիւրների, այդ թւում եւ չափածոյ գործերի, հայրենների բովանդակած եւ յաճախ անհասկանալի մնացած տեղեկութիւնները:

Ակադ. Լեւոն Խաչիկեանի հրատարակած բնագրերի շարքում առանձնակի կարեւորութիւն ունեցողներից է Գրիգոր Պարթեւին վերագրուած «Հարցումը»[1]: Այն Եզնիկ Կողբացու հիմնական աղբիւրներից մէկն է, ուստի եւ գրուած է 5-րդ դարի 40-ական թուականներից ոչ ուշ: Ն. Ադոնցից յետոյ Լ. Խաչիկեանն այդ երկի հետ կապուած նոր լուսաբանութիւններ առաջադրեց: Մասնաւորապէս նա յստակեց երկի ստեղծման նպատակը՝ «Եկեղեցու ջատագովները ոչ միայն պէտք է հիմնաւոր տեղեկութիւններ ունենային դարաւոր աւանդոյթով ժողովրդի գիտակցութեան մէջ արմատացած հաւատալիքների ու պատկերացումների մասին, այլեւ պէտք է սովորէին քրիստոնէական վարդապետութեան դիրքերից դրանք մերժելու ձեւերն ու եղանակները»[2]: Տարաբնոյթ փաստերի ու դատողութիւնների լոյսի տակ Լ. Խաչիկեանը մեծ հաւանականութեամբ հետեւութիւն է անում, որ «Եզնիկի աղբիւր հանդիսացող «Հարցումի» հեղինակն ինքը Մաշտոցն է»[3], ուստի եւ իրաւացիօրէն այն կոչում է հայ մատենագրութեան երախայրիք: Աղբիւրագիտական առումով ուսանելի նորութիւններ են սուրբգրական վկայութիւնների բնութագրութիւնն ու Վահրամ Րաբունու քաղումների համադրութիւնը:

Լեւոն Խաչիկեանը մեր մատենագրութեան պատմութեան ամենահմուտ հետազօտողներից էր: Մաշտոցին ու նախամեսրոպեան գրի հարցին նուիրուած նրա ոչ ծաւալուն ուսումնասիրութիւնները թէ՛ փաստական, թէ՛ հետազօտական մեթոդի առումով նոր խօսք են՝ գրուած անկանխակալ ու քննախոյզ հեղինակի գրչով: Հմայագրերից նրա քաղած ու բնութագրած տուեալները նորովի հետազօտութիւնների հեռանկարներ ու ուղիներ են մատնացուցում[4]:

Լեւոն Խաչիկեանը փաստօրէն յայտնագործեց 11-րդ դարի հեղինակ Յակոբ Սանահնեցու «Ժամանակագրութեան» հատուածները: Իր փորձին ու վաստակին վայել հմտութեամբ նա դրանք զուգադրեց Կոզեռնի «Տեսիլքի», Ուռհայեցու «Ժամանակագրութեան» եւ Տարօնացու «Յակաճառութեան» համապատասխան դրուագների հետ եւ պարզեց նրանց աղբիւրագիտական աղերսը, որով եւ ուրուագծուեց Յակոբ Սանահնեցու կենսագրութիւնը, ճշգրտուեցին Յակոբ քահանայի եւ Յակոբ Սանահնեցու նոյնանձնութիւնը, ապրած ժամանակը, հայ-բիւզանդական յարաբերութիւններում ունեցած դերը եւ շատ այլ իրողութիւններ[5]: Գրեթէ նոյնը պէտք է ասել Լ. Խաչիկեանի «Մատթէոս Ջուղայեցու կեանքն ու մատենագրութիւնը» աշխատութեան մասին[6]: Լ. Խաչիկեանն առաջինը կազմեց նրա աշխատութիւնների մատենագիտութիւնը, բնութագրեց ու գնահատեց դրանք, ի մի հաւաքեց մատենագրութեան մէջ պահպանուած մանր ու մեծ տեղեկութիւնները նրա մասին եւ գրեց մենագրութեան արժէք ունեցող հետազօտութիւն[7]:

Տարաբնոյթ սկզբնաղբիւրների նախանձելի իմացութիւնն ու նրանց հաղորդումները

1 Նոյն տեղում, N 7, 1964, էջ 301-330
2 Նոյն տեղում, էջ 309
3 Նոյն տեղում, էջ 310
4 «Բանբեր Մատենադարանի», N 7, էջ 11-24, «Պատմա-բանասիրական հանդէս», 1963, N 4, էջ 145-158 եւ այլուր
5 «Բանբեր Երեւանի համալսարանի», 1971, N 1, էջ 22-48
6 «Բանբեր Մատենադարանի», N 3, 1956, էջ 57-84
7 Աշխատութեան վերջում կան ուշագրաւ առաջարկութիւններ:

վերլուծելու կարողութիւնը երբեմն-երբեմն «շեղել են» նոյնիսկ Լ. Խաչիկեանի հետեւողականութիւնն ունեցող գիտնականին: Այսպէս, Յովհ. Երզնկացու ճառերի ու քարոզների հաղորդած եւ յարակից տեղեկութիւններից նա նիւթեր է քաղել միջնադարեան հայկական բժշկութեան վերաբերեալ[1], իսկ երկու տասնամեակ անց՝ միանգամայն նոր փաստական նիւթի քննութեամբ գրել «Հայ բնագիտական միտքը 14-18-րդ դարերում» աշխատութիւնը[2]: Յովհ. Ջուղայեցու «Հաշուետոմարի» հրատարակութեամբ եւ ուսումնասիրութեամբ Լ. Խաչիկեանն իր նպաստը բերեց տնտեսական պատմութեանը[3]: Լ. Խաչիկեանի ընդգրկումն ունեցող հայագէտի համար այդ բոլոր «շեղումները» ուրիշ բան չեն, բան «Հայոց մատենագրութեան պատմութեան» հետազօտութիւն:

Այդ ամենով հանդերձ ակադ. Լեւոն Խաչիկեանն ամենից առաջ պատմաբան էր, սոցիալական, քաղաքական ու վարչական պատմութեան խոշորագոյն մասնագէտներից մէկը Հայաստանում: Դեռ 1947 թ. հրատարակած «Աղանդաւորական գաղափարախօսութիւնը Հայաստանում» յօդուածով[4] նա ապացուցեց աւանդական պատմութեան մէջ այդ քիչ հետազօտուած խնդրի կարեւորութիւնը: Յիշեալ առումով նրա «Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմութիւնից» մենագրութիւնը (1951 թ.) անդրանիկ յաջողուած փորձն էր՝ 4-րդ դարի վերաբերող հայկական եւ յունական աղբիւրների պահանջուելիք իմացութեամբ: Հայազգի Եւստաթիոս եպիսկոպոսի «մոլորութիւնը», որ այնքան անհանգստութիւն էր պատճառում բիզանդական գործիչներին (այդ թւում եւ Բարսեղ Կեսարացուն), փաստօրէն աւատականացող եկեղեցուն ընդդիմացող շարժում էր: Ի դէպ, Լ. Խաչիկեանը յաջողութեամբ փաստեց նաեւ Մեծ ու Փոքր Հայքերի ներքին իրավիճակի նոյնականութիւնը՝ մանաւանդ Արշակաւանի բնակեցման պատմութեան նորովի լուսաբանութեան առթիւ: Սրբագրելի տեղիներ ունեցող այդ մենագրութիւնը այսօր էլ չի կորցրել իր գիտական նշանակութիւնը:

Իրենց արծարծած խնդիրների կարեւորութեամբ ու խորութեամբ մենագրական աշխատանքի նուաճումներ են բովանդակում միջնադարեան Հայաստանի գիւղական համայնքին[5], արհեստագործութեան վիճակին ու զարգացման աստիճանին[6], տնտեսական գործարքներին[7] նուիրուած յօդուածները: Հայագիտութեան համար նոր են ոչ միայն նրանցում արուած եզրակացութիւնները, այլեւ քննութեան առնչուող աղբիւրների ընձեռած նիւթերը, որոնց լուսաբանումը տասնամեակների տքնութիւն եւ բոլորանուիրութիւն է պահանջել ձեռագրերի աշխարհը մտած հեղինակից:

Այդ նոյն ձեռագրական յուշարձանների անընդմէջ պրպտումների արդիւնքներն են ամփոփուած Լեւոն Խաչիկեանի նաեւ ոչ ձեռագրագիտական աշխատութիւններում, ինչպիսիք են, օրինակ, «Սիւնեաց Օրբէլեանների Բուրթելեան ճիւղը» տոհմագրական-տեղագրական ուսումնասիրութիւնը՝ քաղաքական ու մշակութային պատմութեան հարցերի առդրու-

1 ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1947, N 4, էջ 83-90

2 «Պատմա-բանասիրական հանդէս», 1971, N 2, էջ 23-44. հմմտ. «Հայ ժողովրդի պատմութիւն», հտ. 4, Երեւան, 1972, էջ 470-490:

3 **Յովհաննէս Տէր-Դաւթեան**, Ջուղայեցու հաշուետոմարը, աշխատ. Լ. Ս. Խաչիկեանի եւ Հ. Դ. Փափազեանի, Երեւան, 1984: Հմմտ. "Armeniaca", Venise, 1969, p. 244-252; **Levon Khachikian**, Le registre d'un marchand arménien en Persé, en Inde et au Tibet (1682-1693), "Annales", Paris, 1967, p. 231-278

4 Ն. Մառի անուան կաբինետի «Աշխատութիւններ», N 2, էջ 181-209

5 «Պատմա-բանասիրական հանդէս», 1958, N 1, էջ 110-134

6 ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1958, N 3, էջ 29-50

7 «Բանբեր Մատենադարանի», N 6, 1960, էջ 21-42

թեամբ[1], ինչպէս նաեւ՝ «Արտազի հայկական իշխանութիւնը եւ Ծործորի դպրոցը» մենագրութիւնը[2], որը պատմա-ազգագրական եւ մատենագրութեան պատմութեան ու կրթօջախների անցեալի համակողմանի ուսումնասիրութեան եզակի նմուշ է: Նման աշխատութիւնների շարքին է պատկանում նաեւ «Հայերը Մոսկուայում եւ Մոսկուա տանող ճանապարհներին» ընդգրկուն մենագրութիւնը, որ իբրեւ յօդուած լոյս տեսաւ Մատենադարանի «Բանբերում»:

Մենք դիտաւորութեամբ ընդարձակօրէն խօսեցինք Լեւոն Խաչիկեանի յօդուած-հրապարակում-ուսումնասիրութիւնների մասին, մինչդեռ հայագիտութեան լայն շրջանները գիտեն, որ մեր երախտաւորի առաւել յաճախ յիշատակուող, գրեթէ բոլոր հայագիտական աշխատութիւններում յղուող եւ, ինչպէս ասում են, սեղանի գիրք դարձած վաստակները ներկայանում են քառահատոր «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններով» (14-15-րդ դարեր), որոնց համար գիտնականն արժանացել է Մաշտոցեան մրցանակի: Առանց հարիւրաւոր յիշատակարաններ ընտրել-վերծանելու, ժամանակագրելու եւ գնահատելու էլ, առանց այդ ծաւալուն չորս հատորների էլ, որ ետպատերազմեան հայագիտութեան առաւել երեւելի նուաճումներից են, Լեւոն Խաչիկեան գիտնականն արժանի էր այդ մրցանակին եւ ունեցած միւս պատիւներին: Չխօսեցինք նաեւ, բայց առանց դիտաւորութեան, Լ. Խաչիկեանի գիտակազմակերպչական եւ խմբագրական գործունէութեան մասին: Կուզենայինք միայն ասել, որ Լ. Խաչիկեանի տեւական ու մանրախոյզ ուսումնասիրութիւնների կնիքն առկայ է նրա հեղինակակցութեամբ ու խմբագրութեամբ լոյս տեսած «Հայ ժողովրդի պատմութիւն» չորրորդ հատորում, ինչպէս որ այդ նոյնը շօշափելի է նրա խմբագրութեամբ ու ազնիւ հոգացողութեամբ լոյս տեսնած «Բանբեր Մատենադարանի» տասնմէկ ծաւալուն եւ օգտակար հատորներում (N 3-13): Մի խօսքով, ճիշտ է ասուած. «Թէպէտ եւ բաժինք շնորհաց են, այլ հոգի նոյն է»:

Լեւոն Խաչիկեանի գիտակազմակերպչական կարողութիւններն ակներեւ էին. նշանակալի չափով տնօրէնի հեղինակութեամբ էին պայմանաւորուած Մաշտոցի անուան Մատենադարանի ձեռագրերի աճը, այդ հաստատութեան ճանաչումն ու վաստակը: Պատահական չէ, որ միջնադարեան մատենագրութեան ու գրապատմութեան նստաշրջանները յաճախ այստեղ էին կայանում, իսկ Լեւոն Խաչիկեանի ուսուցչապետութեան արգասիքները դառնում էին ընդհանուր սեփականութիւն: Դժուար է մեզանում գտնել հայագիտութեամբ եւ յարակից ճիւղերով լրջօրէն պարապող միջին եւ երիտասարդ սերնդի որեւէ ներկայացուցչի, որն իր մասնագիտական կողմնորոշումով ու յաջողութիւններով այս կամ այն չափով պարտաւորուած չլինի Լեւոն Խաչիկեանին:

***

Որքան էլ խնկելի ու պարտաւորեցնող, սակայն գիտնականի յիշատակը յարգելու պատեհութիւնը չէ, որ մղում է սոյն ժողովածուն կազմելուն: Հայոց մատենագրութեան պատմութիւն գրելու ճանապարհին եղած յաղթահարելիքները դեռ չափազանց շատ են. հեղինակային, թեմատիկ ու ժամանակագրական մատենագիտութիւնների պակասը, ձեռագրական հաւաքածոների գիտական նկարագրութեան անաւարտութիւնը, գեղարուեստականութեան չափանիշով մատենագրական յուշարձանների գնահատութեան ակամայ սկզբունքի կիրառումը, ինքնուրոյն ու թարգմանական երկերի սահմանագծի անորոշութիւնը, Քրիստոնեայ Արեւելքի ստեղծած այլալեզու դպրութիւնների բաղդատական նիւթի անտեսումը եւ բազում այլ պարագաներ յամառօրէն մեզ պահում են հայոց մատենագրութեան

1 Նոյն տեղում, N 9, 1969, էջ 173-199

2 Նոյն տեղում, N 11, 1973, էջ 125-210

պատմութեան նախամատոյցներում:

Լեւոն Խաչիկեանը այն սակաւ ընտրեալներից էր, որոնք ճանաչում են բանասիրական-աղբիւրագիտական «մանրուքի» կարեւորութիւնը, ամէն մի յօդուած-հրապարակումով մի նոր հեղինակ կամ հեղինակի մի նոր երկ երեւան բերում: Աւելորդ է ասել, թէ մեր մատենագրութեան պատմութեան ապագայ հատորը կարող է կերտուել հէնց նման աշխատութիւնների, Անասեանական մատենագիտութիւնների եւ Տաշեանական վերլուծումների գումարումով միայն: Այդ նպատակի թելադրանքով է պայմանաւորուած առաջարկուող հատորի ե՛ւ նիւթի ընտրութիւնը, ե՛ւ տեղակարգման սկզբունքը: Այստեղ ներկայացուող առանձին յօդուածները, մանաւանդ սկզբնաւորման շրջանի հետ առնչուողները, նոյնութեամբ կարող են մատենագրութեան պատմութեան ներածուել, իսկ միւսները կլրացնեն արդէն յայտնին, պրպտելու մեթոդ ու ճանապարհներ կյուշեն այսօրուայ եւ գալիք սերնդի հայագէտներին: Խմբագրական միջամտելիքները նրանցում աննշան են, լրացնելիքները՝ քիչ ու դժուար[1]: Նիւթերի յաջորդականութիւնը ժամանակագրական է՝ մատենագրութեան պատմութեան կառոյցին ի նպաստ:

Ժողովածուն կազմելիս մտահոգիչ էր յաւելուածում ներկայացուող ընդարձակ գրախօսութեան հրատարակել-չհրատարակելու խնդիրը: Ինքը Լեւոն Խաչիկեանը գերադասեց այն հրատարակութեան չտալ, բայց եւ միաժամանակ՝ գրեթէ բոլոր միջնադարագէտ-հայագէտներս կարդացել ենք այդ վերլուծութիւնը, ինչպէս որ կարդացել ենք նաեւ հանգուցեալ հայագէտ Վազգէն Յակոբեանի նոյնքան ընդարձակ պատասխանը: Ցաւով ու ափսոսանքով պիտի խոստովանել, որ Լեւոն Խաչիկեանի գրախօսութիւնը սպասելի համոզկերութեամբ չընկալուեց, եւ սերնդակից ու սննդակից, նոյն ուսուցչի վարդապետանոցում ձեռնադրուած եւ տասնամեակներ մտերմաբար հայագիտութեանը լծուած երկու նուիրեալները՝ Լեւոն Խաչիկեանն ու Վազգէն Յակոբեանը, խորթացան միմեանց: Եւ այնուամենայնիւ, յիշեալ գրախօսութիւնն ու նրա պատասխանը բնագրագիտական աշխատանքի ձեռնարկի ընդգրկում ու կիրառութիւն ունեն, ուստի հայագիտութեան նոր սերունդը չպիտի զրկուի նրանց հիմամբ հմտանալու հնարաւորութիւնից: Ահա այս նկատառումով էլ «Յաւելուածում» հրատարակւում է Լեւոն Խաչիկեանի գրախօսութիւնը: Հատորի խմբագիրը, փաստօրէն, պարտաւորւում է հոգալ նաեւ բազմաշխատ պրոֆ. Վազգէն Յակոբեանի պատասխանի հրատարակումը՝ թերեւս առաջիկայում կազմելիք նրա աշխատութիւնների ժողովածուի յաւելուածում: Պատասխանից, սակայն, պիտի հանել այն էջերը, որոնք ակադեմիական գիտութեանը չեն առնչւում:

Ցուանք, որ ակադ. Լեւոն Խաչիկեանի այս ժողովածուին կհետեւեն միւսները, ուր կամփոփուեն միջնադարեան Հայաստանի քաղաքական, տնտեսական, վարչական ու մշակութային պատմութեան խնդիրներին վերաբերող աշխատութիւնները:

ՊԱՐՈՅՐ ՄՈՒՐԱԴԵԱՆ

[1] Նկատի են առնուել հեղինակային բոլոր լրացումները, առանձին դէպքերում կատարուել են ոչ էական խմբագրական կամ սրբագրական միջամտութիւններ, առաւելապէս կրճատումների տեսքով: Տարբեր յօդուածներում նոյն խնդրին վերաբերող հարցադրումների կամ եզրակացութիւնների զանազանութիւնը արդիւնք է նոր պրպտումների, ուստի խմբագրական միջամտութիւն չի կատարուել: Աստղանիշ կրող կամ անկիւնաւոր փակագծերի մէջ առնուած ծանօթագրութիւնները խմբագրինն են:

ՆԱԽԱՄԵՍՐՈՊԵԱՆ ԳՐԻ ՀԱՐՑԸ ԵՒ ՀՄԱՅԱԳՐԵՐԸ*

Վարդանանց հերոսամարտի վիպերգու Եղիշէն իր մի անտիպ աշխատութեան մէջ փորձում է բնորոշել իր ժամանակի լեզուները՝ վեր հանել նրանց առանձնայատկութիւնները. «Յոյների լեզուն,– գրում է նա,– փափուկ է, հռոմէականը՝ կորուկ, հոնինը՝ սպառնական, ասորունը՝ աղաչական, պարսկինը՝ պերճ, ալանինը՝ գեղեցկազարդ, գոթինը՝ ծաղրական...» եւ այլն, իսկ հայինը համեղական է, որ «կարէ զամէնն յինքն ամփոփել»[1]:

Ե դարում ստեղծուած հայ մատենագրութեան լեզուն խիստ կատարեալ է ու գեղեցիկ: Հայ եւ օտարազգի մի շարք գիտնականներ, հարցը խորապէս չուսումնասիրելով, դասական հայերէնի կատարելութիւնը բացատրելու համար ենթադրել են, որ հայերը դեռեւս հեթանոսութեան ժամանակ ունեցել են մայրենի լեզուով գիր ու գրականութիւն: Այս ենթադրութիւնը հակասում է հայ հին մատենագիրների (Կորիւն, Փարպեցի, Խորենացի) հաղորդած որոշակի տուեալներին, որոնք միաբերան վկայում են, թէ Մաշտոցն է հայ գրի ու գրականութեան հիմնադիրը: Զհաշուելով, սակայն, այդ իրողութեան հետ՝ նախամեսրոպեան գրի ու դպրութեան գոյութիւնը հաստատել կամեցող գիտնականներն աշխատել են հիմնաւորել իրենց թեզը՝ հայ եւ օտար աղբիւրների մի քանի մշուշապատ արտայայտութիւնների մտացածին իմաստ վերագրելով, ինչպէս նաեւ՝ «չէր կարող գոյութիւն չունենալ», «պէտք է գոյութիւն ունենար» եւ նման այլ յայտարարութիւններով:

Մանրամասն քննարկելով ու հերքելով բոլոր այս «փաստարկները»՝ մեծանուն հայագէտ Հ. Աճառեանն իր «Հայոց գրերը» աշխատութեան մէջ գրել է. «Ս. Մեսրոբէն առաջ հայերէն գրականութիւն տեսնելը, որ իբր թէ ջնջեց Լուսաւորիչը՝ այրելով բոլոր հայերէն գրքերը, անմիտ հեքիաթ մ՚է միայն»[2]: Այդ «հեքիաթին», սակայն, ոմանք դեռեւս հաւատում են, իսկ պրոֆ. Ա. Աբրահամեանը, կրկնելով իր նախորդներին, պնդում է, թէ հայերը մինչեւ Մաշտոցի մեծ գիւտը ունեցել են մայրենի լեզուով «հարուստ գրականութիւն»[3]:

Մեր նպատակից դուրս համարելով նախամեսրոպեան գրի գոյութեան օգտին մէջբերուող կարծեցեալ «փաստարկների» կրկին հերքումը՝ նշենք միայն, որ հայոց լեզուի կատարելութիւնը հայ մատենագրութեան արշալոյսին՝ եզակի երեւոյթ չէ բնաւ: Զարմանալի լեզուական կատարելութեամբ են շարադրուած արաբական, պարսկական, սլաւոնական եւ այլ գրականութիւնների անդրանիկ արտադրանքները. երկար դարեր նրանք համարուել են օրինակելի եւ անգերազանցելի նմուշներ մայրենի գրականութեան: Աւելին, ինչպէս իրաւացիօրէն նկատել է պրոֆ. Է. Աղայեանը, «դասական գրաբարը՝ V դարի առաջին կէսի մատենագրութեան լեզուն, հէնց այդ ժամանակի կենդանի, խօսակցական լեզուն է՝ գրական աստիճանին բարձրացած», եւ այն «չէր կարող անմիջական կապ ունենալ նախաքրիստոնէական շրջանի գրական լեզուի հետ»[4], եթէ նոյնիսկ նախաքրիստոնէական շրջանում հայերն ունեցած լինէին գիր ու գրականութիւն:

Անհրաժեշտ ենք համարում պարզութիւն մտցնել նաեւ հետեւեալ հարցում. որոշ գիտնականներ հաւասարութեան նշան են դնում «գիր» եւ «գրականութիւն» բառերի միջեւ. եթէ եղել է գիր, եղել է ուրեմն նաեւ գրականութիւն՝ ենթադրում են նրանք: Այս տեսակէտի հետ

* «Պատմա-բանասիրական» հանդէս, 1963, N 4, էջ 145–157

[1] Մատենադարան, ձեռ. N 1267, էջ 48բ

[2] Հ. Աճառեան, Հայոց գրերը, Վիեննա, 1928, էջ 106

[3] Տե՛ս, օրինակ, Ա. Աբրահամեան, Հայ գրի ու գրչութեան պատմութիւն, Երեւան, 1959, էջ 33–46:

[4] «Սովետական Հայաստան», 1962, N 94

եւս բնաւ չի կարելի համաձայնել:

Ինչպէս ամէն բան աշխարհում, այնպէս էլ գիրն ապրել է իր զարգացման հազարամեակների պատմութիւնը: Գրի սաղմնաւորման շրջանին յատուկ է պատկերագիրը (պիկտոգրամմա), որի միջոցով հնարաւոր էր գրանցել որեւէ պարզ դէպքի կամ իրողութեան մօտաւոր բովանդակութիւնը՝ առանց լեզուական կաղապարի, առանց մտքերի ու բառերի մասնատման: Գրի զարգացման յաջորդ փուլին յատուկ է գաղափարագիրը (իդեոգրամմա), որով արդէն արտայայտւում էին ամբողջական բառեր: Գաղափարագրերը, սակայն, անկարող էին արտայայտել տուեալ լեզուի հնչիւնները, ուստի միաժամանակ կարող էին կիրառուել այլալեզու տարբեր ժողովուրդների կողմից: Գաղափարագրերի յետագայ զարգացումով ստեղծւում է վանկային գիրը, որի մէջ արդէն նախկին գաղափարագրերին, կամ նրանց մի զգալի մասին, տրւում է վանկային իմաստ. ուստի վանկային գրերն արդէն այս կամ այն չափով հնարաւորութիւն են ընձեռում արտայայտել, սակաւ կամ առաւել յաջողութեամբ, տուեալ լեզուի բառերի հնչոյթը: Տառային կամ հնչիւնային այբուբենները գրի զարգացման ամենաբարձր աստիճանն են ներկայացնում:

Հանրայայտ ճշմարտութիւններ են սրանք, որոնց կրկնութիւնը այնուամենայնիւ անհրաժեշտ է՝ խնդիրը յստակօրէն ըմբռնելու համար:

Մեր անուանի հայագէտներ Հ. Աճառեանը, Մ. Աբեղեանը, Յ. Մանանդեանը, Ստ. Մալխասեանցը եւ այլ գիտնականներ, երբ ասում են, թէ Մաշտոցից առաջ հայ գրականութիւն չի եղել, դրանով նրանք բնաւ չեն ժխտում պատկերագրերի կամ գաղափարագրերի գոյութիւնը Հայաստանում. այդ հարցը նրանց չի էլ հետաքրքրել: Նրանք մերժել են հայերէնով հեթանոսական «աղքատ» կամ «հարուստ» գրականութեան գոյութիւնը՝ մի բան, որ մեր համոզմունքով՝ վէճի առարկայ չի կարող լինել:

Սրանով արդեօք սպառուե՞լ է հարցը, բացառւա՞ծ է արդեօք հասարակական խիստ նեղ նպատակների ծառայող, նախնական ու պարզունակ համակարգի ինչ-որ գաղափարագրերի գոյութիւնը հեթանոսական Հայաստանում: Ո՛չ, չի բացառուած: Չնայած այդպիսի գրերի որոնման ուղղութեամբ մեզ մօտ դեռեւս ծրագրուած աշխատանք չի տարուել, այնուամենայնիւ արդէն գտնուել ու նկարագրուել են մի շարք ժայռագրութիւններ (պատկերագրեր, խծագրեր), ինչպէս նաեւ գրի աւելի բարձր զարգացման աստիճանը յիշեցնող այլ նշաններ, հաւանաբար՝ գաղափարագրեր (նկատի ունենք Յոլակերտի արձանագրութիւնները): Առայժմ դժուար է որոշել, թէ ովքեր են փորագրել այդ գաղափարագրերը՝ հայե՞րը, թէ՞ Հայաստանի նախաբնիկները*:

Կարելի է յուսալ, որ հեթանոսական Հայաստանի նշանաւոր բնակավայրերի, մանաւանդ պաշտամունքային յուշարձանների պեղումները կարող են, նոր ու անակնկալ նիւթեր տրամադրելով գիտութեանը, լոյս սփռել նաեւ այս հարցի վրայ: Բայց սպասելու հարկ չկայ. հայ մշակոյթի պատմութեան համար որոշակի հետաքրքրութիւն ներկայացնող հարցի լուծմանը, կարծում ենք, շօշափելի նպաստ կարող են բերել նաեւ հմայական նշաններ պարունակող հայերէն ձեռագրերը, որոնց բնոյթի ու բովանդակութեան պարզաբանմանն է նուիրուած մեր այս յօդուածը:

***

Հայ մատենագրութեան հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի գրական երկերից, ի բաց առեալ «Յաճախապատում» ճառերը, պահպանուել են միայն բեկորներ: Ներմուծուած լինելով «Հայոց կանոնգրքի» խմբագրութիւններից մէկի մէջ՝ պահպանուել ու հասել է մեզ Մաշտոցի

* [Հեղինակի հարցադրումը ժամանակագրական է՝ արդէն իբրեւ էթնոս ձեւաւորուած հայե՞րը, թէ՞ պրոտոհայկական ցեղերը՝ նախաբնիկները: Խմբ.]

«Խրատագիր եւ զգացուցիչ» շրջաբերական թղթերից մի փոքրիկ հատուած, որն ուղղուած է հեթանոսական հաւատալիքների եւ մանաւանդ հմայութեան ստորեւ թուարկուող ձեւերի դէմ՝ «երազք եւ հմայք եւ յուռութք եւ բաջաղանք եւ դիւթութիւնք եւ թովչութիւնք եւ հարցուկք եւ ձեռնածուք եւ դեղահատք եւ խտիրք եւ որ ինչ նման են սոցին»: Մաշտոցը յայտնում է, որ բոլոր նրանք, ովքեր հաւատում կամ իրենք իսկ կատարում են այդպիսի հմայութիւններ, «նզովեալ են ի սուրբ եկեղեցւոյ եւ արտաքս ընկեցեալ յաստուածային հրամանաց»[1]:

Մաշտոցի սկսած պայքարը հեթանոսական հաւատալիքների ու պատկերացումների դէմ, գրեթէ առանց ընդհատումների, շարունակւում է ողջ միջնադարում: Եւ հայ հարուստ մատենագրութիւնը հնարաւորութիւն է ընձեռում հետեւելու այդ պայքարի առանձին դրուագներին, նոր տուեալներ քաղելու մեր ժողովրդի հնամենի պատկերացումների, ծէսերի, կախարդութեան, մոգական բժշկութեան ձեւերի ու եղանակների եւ յարակից այլ հարցերի մասին:

V դարի հայ նշանաւոր մատենագիր Եղիշէից պահպանուել է ինչ-որ ընդարձակ աշխատութեան (հաւանաբար «Արարածոց մեկնութեան») մասը կազմող մի թանկագին բեկոր: Այստեղ, ժողովրդական սնահաւատութիւնների մասին խիստ հետաքրքրական թուարկումը կատարելիս, հեղինակը գրանցել է նաեւ ուշագրաւ այսպիսի տողեր. «Թէ ոք այլանդակապէս ընդ այս մտածութիւնս անցանէ աւտար խորհրդովք՝ նշանագիրս գծել կամ մարգարէանալ առ յապայսն եւ երազահմայ լինել... այն արտաքոյ է քրիստոնէութեան»[2]:

Այսպիսով, V դարի 80-ական թուականներից (հէնց այս թուականներին պէտք է գրուած լինի Եղիշէի «Արարածոց մեկնութիւնը») ուղղակի վկայութիւն ունենք ինչ-որ նշանագրերի մասին, որոնք գրւում էին «օտար (այսինքն՝ հեթանոսական) խորհրդով» այնպիսի մարդկանց կողմից, որոնց եկեղեցական հեղինակը համարում է «արտաքոյ քրիստոնէութեան»:

Այս նոյն նշանագրերի մասին հետաքրքրական մանրամասնութիւններ են գրանցուած Յովհան Մանդակունու (V դար) վերագրուող, բայց Յովհան Մայրավանեցուն (VII դար) պատկանող «Թուղթ վասն հմայից դիւթականաց եւ անօրէն յուռթողաց» ճառի մէջ[3]: Ճառի հեղինակը, իր նախորդների նման, ձգտում է համոզել իր ունկնդիրներին, որ դիւթերը, թովիչները, հարցուկներն ու բոլոր հմայիչները սատանայի պաշտօնեաներ են. քրիստոնեաները չպէտք է խաբուեն նրանց պատիր հմայութիւններով, պէտք է խորշեն նրանցից՝ որպէս հեթանոս խաբեբաներից: «Իսկ եթէ անձամբդ,- գրում է նա,- առ դիւթս եւ առ թովիչս եւ առ հարցուկս եւ առ ուռութս եւ առ խտիրս եւ առ հմայս գերեցիս, ոչ եւս պարտ է զանձն կոչել քրիստոնեայ, զի հեռացեալ ես ի Քրիստոսէ»[4]: Ճառի մէջ այնուհետեւ թուարկուած են բազմապիսի հմայական ձեւեր ու եղանակներ, որոնցից ուշագրաւ է յատկապէս «գիր պահարան ընդ անձն արկանել»-ը[5]: Մայրավանեցին խաբուած է համարում նրանց, ովքեր «գիր պահարան» գրողներին բժշկի տեղ են ընդունում. այդ գրերը բնաւ չեն կարող ակնկալուող ներգործութիւնն ունենալ հիւանդների վրայ, որովհետեւ իսկական բժիշկները բուժում են սպեղանիներով ու խարելով, իսկ «գիր պահարան հակառակ է շնորհաց եւ պատուիրանացն Աստուծոյ»[6],- գրում է Մայրավանեցին: Նա նկարագրում է այդ «գիր պահարանների» կիրառութեան կերպը, որոշ չափով նաեւ բովանդակութիւնը՝ ճառի ստորեւ բերուող հատուածում. «Գրեալ պահարանս ի փողս ցաւածիցն արկանեն եւ

1 «Հանդէս ամսօրեայ», 1958, էջ 371

2 «Մատենագրութիւնք Եղիշէի», էջ 376

3 «Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Ճառք», Վենետիկ, 1836

4 Նոյն տեղում, էջ 184

5 Նոյն տեղում, էջ 185

6 Նոյն տեղում, էջ 186

ժամմուկս մտացածին բանից եւ զանուան որ ոչ լսի ի պատուիրանս՝ գրածս առնեն, եւ զանուն Քրիստոսի ընդ նոսին արկանեն, զի գրածն աստուածաձայն համարեսցի» եւ այլն[1]:

Քննարկուող հարցի կապակցութեամբ բացառիկ նշանակութիւն ունի XIII դարի նշանաւոր առակագիր եւ քարոզիչ Վարդան Այգեկցու «Վասն կռապաշտութեան» անտիպ քարոզը: Շուրջ 900 տարի էր անցել Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն յայտարարելու ժամանակներից, բայց Վարդան Այգեկցու հաղորդած տուեալները վկայում են, որ հայ ժողովրդի աշխարհհայեացքի մէջ դեռեւս կենսունակ էին հեթանոսական պատկերացումները, ծէսերն ու սովորոյթները: Ծանօթանանք այդ քարոզի՝ մեր նիւթին առնչուող մասերին:

Ըստ Այգեկցու՝ սատանայի սերմանած չարիքներից է եւ այն, որ «մնաց առ ազգս կանանց, նաեւ յազգս արանց՝ ուսումն ծրարագործութեան[2] եւ այլ փաթեթք սատանայականք. եւ խաբանաւք ուսուցանեն մի զմի եւ զոգէսս կործանեն ի նոյն չարն»[3]:

Կռապաշտութեան սիւներն են աստղաբաշխութիւնը, կախարդութիւնը, մարդկանց ճակատագրի գուշակութիւնը եւ այլն. այդ սիւները, սակայն, արձակել են բազմապիսի ճիւղեր, որոնք թուարկուած են Այգեկցու կողմից քարոզի ստորեւ բերուող հատուածում. «Դեղատուութիւնն եւ զաբրնկեցութիւնն եւ ձեռնածութիւնն եւ լուսնագիտութիւնն եւ աստեղաբաշխութիւնն եւ չար աւել զօրն եւ կամ զպահն, ...հայել ի կենդանակերպս եւ ասել բախտարկութիւն եւ ճակատագրութիւն իմն՝ չարի պատահել կամ բարոյ, քննել ախտարացոյցս եւ ծննդաբանել զթիւ ամաց մարդկան եւ այլ ծրարք եւ հանգուցակք իմն եւ լեզուակապք եւ քաղցրադեղք եւ անասնակապք իմն, զոր գայլակապս կոչեն. նաեւ կապեն զայր, զի թուլացեալ՝ ի կին մերձենալ ոչ կարէ, եւ այլ անթիւ հեթեթանք»[4]: Այգեկցու ժամանակակիցները, անվերապահօրէն հաւատալով հեթանոսական սնահաւատութիւններին եւ կախարդութիւններին, ի մեծ վիշտ մեր հեղինակի, «փախչին յեկեղեցւոյ եւ ի խաչէ, յԱւետարանէ եւ ի քահանայէ, յաղօթից եւ ի պահոց... եւ առհասարակ զառհ տուեալ՝ երթան առ կախարդս»[5]:

Հմայութեան ու կախարդութեան՝ միջնադարում յարատեւած ձեւերի մասին կան նաեւ այլ ձեռագրական տուեալներ: Մեր նպատակը չէ մատենագիտական լրիւ ցանկը տալ այդ կարգի նիւթերի, ուստի բերածով սահմանափակուենք: Նշենք միայն, որ կախարդութեան ու գուշակութեան դէմ «Հայոց կանոնագրքի» մէջ մուծուել են նաեւ մի շարք կանոններ, որոնցից յատկապէս երկուսը սերտօրէն առնչւում են քննարկուող նիւթին: «Հարցմունք պէս-պէս եւ պատասխանիք Աթանասի Աղէքսանդրացւոյ եպիսկոպոսի» խորագրով կանոնախմբի մէջ, օրինակ, կայ այսպիսի հարց ու պատասխան. «Հրց. Վասն պահպանաց երդմունս իմն եւ պահպանութիւնս գրեն եւ անուանս ազգի ազգիս, զոր մեք ոչ գիտեմք. պա՞րտ է համարձակ թողուլ զնոսա առնել զայն, թէ՞ նզովել եւ կարճել: Պատ. Նզովել պարտ է եւ յեկեղեցւոյ եւս հանել»[6]:

Մի այլ կանոնախմբի մէջ կարդում ենք. «Որ զհետ դիւթաց երթան եւ կամ զգիրս կախարդաց եւ կամ զիրս կախարդութեան ուսանին եւ զղջան ի բոլոր սրտէ, է (7) ամ ընդ

1 Նոյն տեղում, էջ 187

2 Քարոզի մի այլ ընդօրինակութիւնում «ծրարագործութեան» փոխարէն ասուած է «դիւաց չունչ ծրարս»:

3 Մատենադարան, ձեռ. N 8030, էջ 209ա

4 Նոյն տեղում, էջ 209բ

5 Նոյն տեղում, էջ 210ա

6 Մատենադարան, ձեռ. N 6409, էջ 60բ

ունկնդրիսն ապաշխարէ»[1]:

Նզովքը, արտաքսումը եկեղեցուց, եօթնամեայ ապաշխարութիւնը եւ սահմանուած այլ պատիժները անգամ անզօր են եղել արմատախիլ անել հազարամեայ հնութիւնից եկող հեթանոսական հաւատալիքներն ու պատկերացումները ժողովրդի գիտակցութիւնից, եւ դրանք յարատեւել են մինչեւ վերջին տասնամեակներն ու գրանցուել Հայաստանի մի շարք շրջաններում XIX-XX դարերի հայ ազգագրագէտների կողմից:

Մէջբերուած նիւթերը, այսպիսով, վկայում են այն մասին, որ, սկսած հէնց հայ մատենագրութեան սկզբնաւորման ժամանակներից մինչեւ ուշ միջնադար, հայ կախարդները, բախտագուշակներն ու մոգական բժշկութեամբ զբաղուող անհատները, ի թիւս այլ կախարդութիւնների, գծել են նաեւ ինչ-որ նշանագրեր (Եղիշէ), հիւանդների վզներին ինչ-որ «գրեալ պահարաններ» են արկանել (Յովհան Մայրավանեցի), ինչ-որ «դիւաց չունչ ծրարներ» ու «սատանայական փաթեթներ» կազմել (Վարդան Այգեկցի), «զգիրս կախարդաց» գրել եւ ուսուցանել («Կանոնագիրք Հայոց») եւ այլն:

Արդ, հնարաւո՞ր է արդեօք պարզել, թէ ինչ են եղել եւ ինչ տեսք են ունեցել հայ եկեղեցու վարդապետների խիստ վկայութեամբ հեթանոսական հնութիւնից ժառանգուած կախարդական կամ հմայական այդ գրերը:

Այս հարցերին պատասխանելու համար դիմելու ենք առաջին հերթին բազմաթիւ ձեռագիր օրինակներով մեզ հասած հմայիլներին եւ ախտարական ձեռագրերին: Հմայիլները գրաւում են մեր ուշադրութիւնը նախ եւ առաջ իրենց արտաքին տեսքով. ի տարբերութիւն բոլոր միւս ձեռագրերի՝ նրանք ժապաւէնաձեւ փաթեթների տեսք ունեն (շուրջ 10սմ լայնքով եւ երբեմն 10մ աւելի երկարութեամբ): Հայ գրականութեան սկզբնաւորման ժամանակաշրջանում թէ՛ Հռոմէական կայսրութեան մէջ եւ թէ՛ Ասորիքում՝ ամէնուրեք տարածուած էին առանձին տետրակներով եւ նրանց միացումով ստեղծուած գրքերը: Փաթեթաւոր գրքերն ընդհանրապէս, տուեալ դէպքում հմայիլները, իրենց արտաքին ձեւով գրքի աւելի հին տիպի ներկայացուցիչներ են: Էլ աւելի հետաքրքիր են հմայիլներն իրենց բովանդակութեամբ:

Ահա հէնց այս ժապաւէնաձեւ, ապա նաեւ սովորական գրքի տեսք ստացած հմայիլներն են, որոնք պահպանել են հեթանոսական հաւատքի խոր կնիքը կրող մեծաքանակ այնպիսի հմայական բանաձեւեր, պահպանակ գրեր ու աղօթքներ, որոնց մասին ակնարկներ ունէին իրենց ճառերում հեթանոսական հաւատալիքների դէմ պայքարող վերոյիշեալ հայ մատենագիրները: Ծանօթանանք այդ կարգի մի քանի հմայական բանաձեւերի.

1. ԳԻՐ ՉԱՐ ԱՉՔԻ

Ազի, մազի, զարեխի, զմրուխի,
Ել ծովիւն Միրանի,
Արածէր յովիտն Միրանի
Ցանխախաց պանիր եհան,
Որ ոք տեսաւ զարմացաւ,
Որ ոք կերաւ պատառեցաւ:
Ամենայն չար ակն նոյնպէս պատառեսցի ի դիմաց ծառայիցս
Աստուծոյ (այս անուն)՝ ընտանեաց եւ անասնոց եւ խաշանց

1 Նոյն տեղում, ձեռ. N 7066, էջ 11բ

եւ կաթին եւ մայրեաց եւ մեղուաց եւ երիվարաց եւ շտեմարանաց
եւ ամենայն գոյից, յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն[1]:

2. ԳԻՐ ԾԸԾԱՑԱՒԻ

Մայր Ծիրանի, դուստր Ծիրանի, դէտըր(՞) Ծիրանի: Երթայք քաղէք ալի ծաղիկ, աճնի ծաղիկ, ծիլ ծափ ծոմալ, ալ փարատեցան[2]:

3. ԳԻՐ ԿԱՊԻ

Բազբուկ, տապուկ, սաղուկ, սիթառ, փիրակ, կանաքուկ, անտիրաթիր, իդամիրամ, լորինակաւոր[3]:

4. ԳԻՐ ՋԵՐՄԱՆ

Մանխահի, շարահի ահի, սպանութեան ահի, անդոնի ահի, ալիխթի ահի, վասն ձեր արեւուտ՝ թողէք զծառայս Աստուծոյ[4]:

5. ԳԻՐ ԳԼԽԱՑԱՒԻ[5]

Ծառ մի կայր ի մէջ երկրի,
Որ ոչ ճիւղ ունէր եւ ոչ տերեւ եւ ոչ արմատ.
Արծիւ մի նստեալ էր ի վերայ նորա,
Որ ոչ գլուխ ունէր եւ ոչ թեւ եւ ոչ ոտք:
Հարցուք եղեն[6] արծիւն այն եւ ասեն.
Որ նստեալդ ես ի ծառդ, որ ոչ ճիւղ ունի եւ ոչ տերեւ եւ ոչ արմատ:
....[7]

Ասէ արծիւն՝ այն պեղծն.
Երթամ նստիմ ի գլուխ մարդոյն,
Զմիսն ուտեմ եւ զրղեղն ծծեմ
Եւ զաչաց լոյսն պակասեցուցանեմ:

1 Նոյն տեղում, ձեռ. N 4600, էջ 68ա
2 Նոյն տեղում, ձեռ. N 6867, էջ 545
3 Նոյն տեղում, ձեռ. N 4600, էջ 70բ
4 Նոյն տեղում, էջ 71ա
5 Նոյն տեղում, հմայիլ N 11 (A) եւ ձեռ. N 3248, էջ 51բ (B)
6 A հարցին
7 Պակաս է երեւում:

Եւ լսեցին զայն հրեշտակք եւ հրեշտակապետք եւ ասացին[1].
Կապեմք զքեզ ԴՃԿԵ (365) սրբօքն, որ կան ի սիրտ արեգականն...

Օրինակների թիւը կարելի է բազմապատկել. մենք ընտրութեամբ մէջբերեցինք այնպիսինները, որոնք բոլորն էլ, լինելով հմայական բժշկութեան դեղատոմսեր, ուղղուած են տարբեր հիւանդութիւնների դէմ: Դրանք, անշուշտ, միջնադարեան խմբագիրների եւ ընդօրինակողների կողմից կրել են մեծ ձեւափոխութիւններ. մէկի մէջ մուծուած է քրիստոնէական եռաստուածութեան բանաձեւ (Հայր, Որդի, Հոգի), մէկ ուրիշում ջերմով տառապող հիւանդը կոչւում է «ծառայ Աստուծոյ», երրորդում յիշատակւում են հրեշտակներ ու հրեշտակապետներ եւ այլն: Այս նորամուծութիւնները, սակայն, էական չեն, հմայական այդ բանաձեւերը, իրենց հիմնական մասով, անշուշտ, հազարամեակների հնութեան կնիք են կրում եւ չեն առնչւում քրիստոնէական ըմբռնումների հետ[*]:

Վիշապաքաղ Վահագնի ծննդեան մասին հեթանոսական երգի մէջ հանդիպում ենք Ծիրանի ծովին, որն իր երկունքով մասնակցում է ամպրոպ-աստծոյ ծննդեանը. չար աչքի հմայական բանաձեւի մէջ յիշատակւում է այդ Ծիրանի մայր աստուածութեան հովիւը, որն արածեցնում է աստուածութեան խաշներին Ծիրանի հովտում, ծծացաւի հմայական բանաձեւի մէջ յիշատակւում են Ծիրանի մայրը եւ Ծիրանի դուստրը:

Արտաւազդի մասին հնագոյն հայկական առասպելներում կան տուեալներ, որ նա կոչուել է նաեւ Շիդար անունով. եւ ահա «գիր կապի» հմայական բանաձեւի մէջ, ի թիւս հնութեան դրոշմ կրող այլ անուանակոչումների (տապուկ, սաղուկ, փիրակ, կանաքուկ եւ այլն), հանդիպում ենք նաեւ Սիթառին, որ յիշեցնում է մեզ վերոյիշեալ Շիդար-Արտաւազդին: Գլխացաւի հմայական բանաձեւի մէջ նկարագրւում է կենաց ծառի հակոտնեայ մահուան ծառը, «որ ոչ ճիւղ ունէր եւ ոչ տերեւ եւ ոչ արմատ», եւ չարագուշակ ու մահաբեր սանդարամետեան արծիւը, «որ ոչ գլուխ ունէր եւ ոչ թեւ եւ ոչ ոտք», եւ այլն եւ այլն[2]:

Եւ այս բոլորը, լրացնելով մէկը միւսին, վկայում են այն մասին, որ հմայիլ կոչուող ժապաւէնաձեւ ու գրքանման ձեռագրերը, չնայած իրենց ճնշող մեծամասնութեամբ պահպանուել են նորագոյն ժամանակների (XV-XVIII դարերի) ընդօրինակութիւններով, իրենց մէջ բովանդակում են հեթանոսական ըմբռնումների ու պատկերացումների արգասիք հանդիսացող հմայական ու մոգական զանազան աղօթքներ ու բանաձեւեր:

Սրանով, սակայն, չի սպառւում հմայիլների գիտական նշանակութիւնը. նրանցից շատերի մէջ կան ինչ-որ տարօրինակ նշանագրեր, որոնք արուած են դարձեալ հմայական ու բուժական նպատակներով՝ չար աչքից զերծ մնալու, չար ոգի թպղիին հալածելու, կատաղած շնից անվնաս մնալու, դիւահարներին բուժելու, սիրածի սէրը նուաճելու եւ բազմաթիւ այլ ակնկալութիւններով[3]:

Ծանօթանանք նաեւ այդ կարգի մի քանի հմայագրերի.

1 B հրամայեցին եւ ասեն *փխ* ասացին
* Հմայիլների թեմատիկ ու կառուցուածքային կազմութեան մասին, նմուշների առկցմամբ, տե՛ս **А. А. Одабашян**, Народные верования армян (По материалам рукописных талисманов XV-XIX вв.), "Кавказский эпиграфический сборник", VI, М., 1976, с. 107-130:
2 Ա. Մնացականեանը «Հայկական զարդարուեստ» իր ուսումնասիրութեան մէջ (Երեւան, 1955, էջ 542), Մատենադարանի N 605 ձեռագրի պահպանակից քաղելով, տպագրել է «Գիր կոտի» կոչուող հմայական մի բանաձեւ, որի մէջ յիշատակուած է հեթանոս հայերի մեռնող ու յարութիւն առնող Արա աստուածութիւնը՝ «սուրբ Արա» քրիստոնէական զգեստաւորութեամբ:
3 Տե՛ս, օրինակ, Մատենադարան, հմայիլ NN 5, 11, 134, ձեռ. NN 4322, 6867, 6678, 4600, 9072 եւ այլն:

1. Գիր չար աչքից պահպանութեան[1]:



2. Այս տլիսմս, որոյ վերայ կենայ, կախարդութիւն ոչ բանի յինքն[2]:



3. Այս թլիսմս գրէ ի վերայ հաց(ի), տուր շան, որ ուտէ, կապուի լեզուն չարայկամին...[3]:



4. Գիր սիրոյ, ջուրն ձգէ, տուր խմէ՝ սիրէ[4]:



Բազմաթիւ հմայական գրեր կան Մատենադարանի մի շարք ձեռագրերում (օրինակ՝ ձեռ. NN *4322, 6867) պահպանուած ուշագրաւ մի բնագրին աղնթեր, որի բովանդակութիւնը յանգում է հետեւեալին. տասներկու կենդանակերպերից ամէն մէկի տակ ծնուած մարդիկ ունեն իրենց յատուկ թշնամի ու հիւանդաբեր դեւեր, որոնք բնակւում են տարբեր վայրերում՝ դռան շեմին, կրակի եզրին, ջրին մերձ, հորի մէջ, աւերակ ջրաղացներում եւ այլուր: Սողոմոն Իմաստունը հանդիպում ու հարցաքննում է այդ դեւերին, սովորում նրանց հիւանդաբեր ներգործութիւնից մարդկանց փրկելու եղանակները եւ հաղորդում մարդկանց: Այդ դեւերին դիմագրաւելու համար մարդիկ պէտք է գիտենան դրանցից իւրաքանչիւրին հակառակ 3 կարգի հմայական գրերը՝ թլիսմները. առաջինը պէտք է պահել հիւանդի գլխի*

1 Մատենադարան, հմայիլ N 11

2 Մատենադարան, հմայիլ N 5

3 Մատենադարան, ձեռ. N 4322, էջ 30ա

4 Մատենադարան, ձեռ. N 9072, էջ 26բ

վրայ, երկրորդով պէտք է լողացնել հիւանդին, իսկ երրորդը՝ լուծել ջրի հետ եւ տալ հիւանդին ըմպելու: Այսպիսով, ձեռագրական այդ բնագրի մէջ կան 36 հմայական գրերի շարքեր (12 դեւերից իւրաքանչիւրի դէմ՝ 3 հմայագիր): Այստեղ բերում ենք մի քանի նմուշ այդ հմայագրերից.


1


2


3


4

Այս կարգի հմայագրեր պարունակող ձեռագրերի քանակը հէնց միայն մեր Մատենադարանում տասնեակներով է հաշւվում: Մենք նպատակ չենք ունեցել ուսումնասիրելու բոլոր այդ ձեռագրերը, քաղելու նրանց մէջ գրանցուած հմայական բոլոր նշանագրերը. բայց նախնական ուսումնասիրութիւն կատարելով՝ ընտրել ենք լաւագոյն մի քանի ձեռագրեր եւ նրանց նշանների համադրութիւնից կազմել հմայական նշանագրերի մի ցանկ:

Մեր օգտագործած հնագոյն ձեռագիրը (Մատենադարան, ձեռ. N *4600) 1499 թուականի ընդօրինակութիւն է, մի ձեռագիր հմայիլ* (N 5) XVI *դարից է, իսկ միւսները* XVII-XVIII *դարերի ընդօրինակութիւններ են:*

Օգտագործուած ձեռագրերն ու հմայիլները սրանք են.

a – *հմայիլ* N *11*	e – *ձեռ.* N *6867*
b – *հմայիլ* N *134*	f – *ձեռ.* N *9072*
c – *հմայիլ* N 5	g – *ձեռ.* N *4600*
d – *ձեռ.* N *4322*	h – *ձեռ.* N *6678*

1 Մատենադարան, ձեռ. N 4322, էջ 37բ

2 Նոյն տեղում, էջ 40ա

3 Նոյն տեղում, էջ 41ա

4 Նոյն տեղում, էջ 42ա

Ցանկ հիմայական նշանագրերի



Այս ցանկը կազմելիս մի շարքում ենք դրել միմեանցից գծագրական աննշան տարբերութիւններ ունեցող նշանները, ինչպէս եւ ցուցակից դուրս ենք թողել 80-ից աւելի նշաններ՝ յատկապէս N 134 *Հմայիլից (ե ձեռագիր), որը կրում է արաբական ազդեցութեան*

խոր կնիք: Ցուցակի վերջին 14 նշանները խիստ նման են հայկական տառերի: Չնայած այդ հանգամանքին՝ նպատակայարմար ենք համարել թողնել դրանք ցուցակում՝ ենթադրելով, որ այդ նշանները ձեւափոխուել ու նմանուել են հայկական այբուբենի նշաններին՝ յետագայում դրանց իմաստը չհասկացող գրիչների կողմից:

Չենք կասկածում, որ Մատենադարանում պահուող միւս հմայիլների ուսումնասիրութեամբ հնարաւոր կլինի այս ցանկը լրացնել հմայական այլ նշանագրերով եւ դրանց քանակը հասցնել մի քանի հարիւրի: Խնդիրը, սակայն, նշանների քանակի, ինչպէս նաեւ նրանց արտաքին գծագրութեան մէջ չէ: Իրենց բովանդակութեամբ ու պարունակած նշանագրերով նախաքրիստոնէական ծագում ունեցող հմայական այդ ձեռագրերը, ինչպէս արդէն ասացինք, ընդօրինակուել են մեծ մասամբ կիսագրագէտ եւ այդ նշանագրերի իմաստը չըմբռնող գրիչների կողմից: Այսպիսով, դրանք անտարակոյս շատ են հեռացել իրենց հնադարեան կերպարանքից:

Հարցի ուսումնասիրութեան ներկայ փուլում այդ հմայագրերի վերծանման մասին մտածելը վաղաժամ է: Դրանք, սակայն, Եղիշէի, Յովհան Մայրավանեցու, Վարդան Այգեկցու եւ այլ հեղինակների մեզ արդէն ծանօթ վկայութիւնների լոյսի տակ դադարում են ախտարական անիմաստ ու մտացածին խզբզանքներ համարուելուց եւ որոշակի նշանակութիւն ստանում՝ հայ ժողովրդի գրաւոր մշակոյթի սաղմնային վիճակի մասին շօշափելի տուեալներ պարունակելու առումով:

Առայժմ մենք չգիտենք հմայական այդ նշանագրերի վերծանման գաղտնիքը: Սակայն գիտենք արդէն դրանց զուգահեռ, մեսրոպատառ այբուբենով գրանցուած հմայական զանազան բանաձեւերի եւ մոգական բժշկութեան դեղատոմսերի բովանդակութիւնը: Վերյիշենք չար աչքի, ծծացաւի, ջերմի, գլխացաւի մասին վերը բերուած բանաձեւերը՝ աւելացնելով, որ ձեռագրերում կան բազմաթիւ այլ հիւանդութիւնների ու չար դիպուածների առթիւ կազմուած ու մեր կողմից չվկայակոչուած մի քանի տասնեակ այլ նմանօրինակ աղօթք-բանաձեւեր:

Այդպիսի պարզունակ մտքեր գրանցելու համար հեթանոսական ժամանակներում Հայաստանում կային, ուրեմն, ինչ-որ նշանագրեր (հաւանաբար գաղափարագրեր), որոնց դէմ երկար դարեր պայքարում էին Հայոց եկեղեցու գաղափարախօսները:

Մաշտոցը եւ նրա ժամանակակիցները, որ յամառ պայքար էին մղում դեռեւս իրենց գոյութիւնը պահպանած հեթանոսական մեհեանների եւ նրանց պաշտօնեաների դէմ եւ իրենց քարոզներով ձգտում էին արմատախիլ անել հեթանոսական հաւատքի անկապտելի մասը կազմող կախարդութեան ու հմայութեան ձեւերը, անշուշտ գաղափար ունէին քրմերի ու կախարդների կողմից կիրառուող հմայական այդ նշանների մասին:

Քրիստոնէութիւնն ընդունած յոյներն ու հռոմէացիները, ինչպէս նաեւ ասորիները եւ այլ ժողովուրդներ հեթանոսական ժամանակներից ժառանգած իրենց գիրը առանց տատանուելու օգտագործեցին քրիստոնէական գրականութիւն ստեղծելու համար, որովհետեւ յունական, լատինական ու ասորական գրերը հնչիւնական կատարեալ այբուբեններ էին:

Եւ եթէ Մաշտոցը, ծանօթ լինելով հմայագրերին, մայրենի լեզուով գրականութիւն ստեղծելու համար ստիպուած էր տարիների տքնաջան աշխատանքի գնով ի նորոյ ստեղծել հայկական այբուբենը, այդ նշանակում է, որ հայկական հմայագրերը ի վիճակի չէին ծառայելու ժամանակի պահանջներին:

Հմայագրերի հնարաւորութիւնները խիստ սահմանափակ էին. դրանց օգտագործմամբ հնարաւոր չէր ստեղծել իսկական գրականութիւն՝ պատմագրական, փիլիսոփայական, գեղարուեստական երկեր, թարգմանել Աստուածաշունչը, արտայայտել բարդ ու վերացական գաղափարներ: Հետեւաբար միանգամայն իրաւացի են V դարի մեր սկզբնաղբիւրները, երբ միաբերան ժխտում են հայ գրականութեան գոյութիւնը Մեսրոպ Մաշտոցի հանճարեղ գիւտից՝ հայկական այբուբենի ստեղծումից առաջ, եւ սխալ են այն գիտնականները, որոնք պնդում են, թէ հեթանոս հայերն ունեցել են գիր ու հարուստ գրականութիւն, կամ նրանց մեհեանները եղել են «մշակոյթի ու մատենագրութեան օջախներ»[1]:

***

Վերջում անհրաժեշտ ենք համարում նշել, որ հայկական հմայական նշանագրերի ուսումնասիրութեան գծով մեր կատարած աշխատանքը չի սպառւում սրանով: Մեր ձեռքի տակ կան փաստեր, որոնք ցոյց են տալիս հայկական միջնադարեան ձեռագրերում հանդիպող «Նշանագիրք իմաստնոցների», ինչպէս նաեւ միջնադարում տարածուած ծածկագրերից մի քանիսի սերտ առնչութիւնը հմայագրերի հետ:

Պրոֆ. Ա. Աբրահամեանը, որ զգալի աշխատանք է կատարել «Նշանագիրք իմաստնոցներ» պարունակող ձեռագրերի մի մասի ցանկը կազմելու գծով, շատ մեծ արժէք է վերագրում դրանց: Նրա կարծիքով հնարաւոր է թերեւս Մոխենջօ-դարոյի (Հնդկաստան) պեղումներից յայտնագործուած ու դեռեւս չվերծանուած գաղափարագրերը վերծանել հայկական գաղափարագրերի (իմա՝ «Նշանագիրք իմաստնոցների») օգնութեամբ՝ համոզուած լինելով, որ դրանց իմաստը «բարեբախտաբար պահել են հայկական ձեռագրերը»[2]:

Ցաւօք պէտք է արձանագրենք, որ պրոֆ. Աբրահամեանի յոյսերը չեն արդարանալու, որովհետեւ կան անժխտելի փաստեր այն մասին, որ «Նշանագիրք իմաստնոցների» մէջ մուծուած գաղափարագրերին մեր ձեռագրերում տուած իմաստները իրենց գերակշիռ մեծամասնութեամբ (եթէ ոչ ամբողջովին) յօրինուած են յետագայում՝ XII դարից ոչ վաղ, ուստի եւ գիտական արժէք են ներկայացնում սոսկ այնքանով, որքանով վկայում են հայկական հմայագրերի նկատմամբ միջնադարում առաջացած հետաքրքրութեան եւ նրանց քրիստոնէական իմաստ վերագրելու փորձերի մասին:

1 Ա. Աբրահամեան, նշ. աշխ., էջ 165

2 Նոյն տեղում, էջ 167

ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՉՈՐՐՈՐԴ ԴԱՐՈՒՄ*

(Ներսէս Պարթեւի եւ Եպիփանի նորայայտ «Հարցման» առիթով)

Մաշտոցի անուան Մատենադարանի N 582 ձեռագիրը դարիս սկզբներին յայտնի դարձաւ բանասիրութեանը որպէս Ջագաւանից ժողովի կանոնները պարունակող միակ սկզբնաղբիւր, իսկ այսօր այն գրաւում է մեր ուշադրութիւնը՝ իր ծալքերում թաքցրած ունենալով «Հարցումն տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի առ Եպիփան միայնակեաց» խորագրով ուշագրաւ բնագիրը: Չնայած իր փոքր ծաւալին (պարունակում է ընդամէնը 200 բառ)՝ այն հնարաւորութիւն է ընձեռում նորից անդրադառնալու Հայաստանում մինչ գրերի գիւտը օտար լեզուներով ստեղծուած գրական յուշարձանների բնոյթին ու բովանդակութեանը, որոշելու նրանց նշանակութիւնը հայալեզու գրականութեան ստեղծման գործում V դարի առաջին տասնամեակներին:

1

Հայոց հին մշակոյթի պատմութեանը տարբեր առիթներով անդրադարձած գիտնականներից ոմանք, ուշադրութիւն դարձնելով սկզբնաղբիւրներում առկայ որոշ տուեալների վրայ, յանգել են այն եզրակացութեան, որ քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն յայտարարուելու ժամանակից (շուրջ 313 թ.) մինչեւ գրերի գիւտն ու մայրենի լեզուով գրական յուշարձանների երեւան գալը հայերն ունեցել են օտարալեզու գրականութիւն[1]:

Այդ մասին բանասիրութեան մէջ արտայայտուած տեսակէտների լաւագոյն ամփոփումը գտնում ենք Եղիա Քասունու մօտ. «Նորագոյն հետազօտութիւնք,- գրում է նա,- կ'ապացուցանեն, որ Լուսաւորչի օրէն սկսեալ, նախամեսրոպեան այդ մէկ դարու միջոցին, Հայաստանի մէջ հետզհետէ գոյացաւ յունարէն եւ ասորերէն լեզուներով գրուած, բայց հայուն համար յօրինուած եւ հաւանօրէն մեծ մասամբ ալ հայ գրիչներէ արտադրուած գրականութիւն մը՝ ոչ արհամարհելի քանակութեամբ, բայց գլխաւորապէս կրօնական, վկայաբանական-պատմողական բովանդակութեամբ, որ ապա առանձին թարգմանիչներու կողմէ օգտագործուեցաւ Ե դարուն՝ հայերէն լեզուով անդրանիկ գրականութեան յօրինման մէջ[2]:

Օտար լեզուներով շարադրուած հայկական գրականութեան այդ յուշարձանների որոնման ուղղութեամբ որոշ աշխատանքներ արդէն կատարուել են: Արդարեւ կարելի է համարել մասնաւորապէս Բ. Սարգիսեանի ուսումնասիրութիւնը Ագաթանգեղոսի անուամբ մեզ հասած «Պատմութեան» բաղկացուցիչ բաժինների (Գրիգոր Պարթեւի կենսագրութիւն, Խոսրովի եւ Տրդատի պատմութիւն, Հռիփսիմեանց վկայաբանութիւն) բացայայտման եւ V դարի սկզբներին, հայկական այբուբենի ստեղծումից անմիջապէս յետոյ, յունարէնով գրուած այդ նիւթերի թարգմանութեան, համախմբման ու խմբագրութեան մասին: Բ. Սարգիսեանի ուսումնասիրութեամբ ապացուցուած կարելի է համարել, որ Ագաթանգեղոսի թարգմանութեան ու խմբագրութեան հիմնական աշխատանքը «Մաշտոցի վարքի» նշանաւոր հեղինակ Կորիւնին է պատկանում, եւ որ այդ գործը վերջինս կատարել է իր մեծ ուսուցչի վերակացութեամբ եւ աշակերտակից Եզնիկ Կողբացու գործակցութեամբ[1]:

Որոշակի հետաքրքրութիւն են ներկայացնում նաեւ Փաւստոս Բուզանդի «Պատմութեան» հնագոյն շերտերն ու հեղինակի օգտագործած աղբիւրները որոնելու ջանքերը, որոնք չնայած կատարեալ արդիւնքներ դեռեւս չեն տուել[2], բայց հնարաւորութիւն են ընձեռում եզրակացնելու, որ նշանաւոր այդ գրուածքն ամբողջական իր կերպարանքով ձեւակերպուել է V դարի կէսերին կամ 60-ական թուականներին՝ նախորդ հարիւրամեակում յօրինուած բանաւոր ու գրաւոր ստեղծագործութիւնների համախմբումով:

Մեծ հաւանականութեամբ նախամեսրոպեան շերտեր կան նաեւ Զենոբ Գլակի անուամբ յայտնի պատմագրական երկի մէջ: Եւ եթէ Ագաթանգեղոսի ու Բուզանդի աղբիւրները հիմնականում յունարէն էին շարադրուած, Զենոբի անուամբ նիւթերի հնագոյն շերտն անտարակոյս գրուած է եղել ասորերէն. որոշակի տուեալ ունենք այն մասին, որ մինչեւ VI դարի կէսերը (մինչեւ Թոդիկ վանահայրը) Գլակայ վանքում առաջնորդ եղած հոգեւորականները «ամենեքեան ասորիք էին, եւ տունն այն ասորի գրով եւ պաշտամամբ է վարեալ, մինչեւ Թոդիկ փոխեաց զամենայն կարգս եւ զասորոց ցեղսն բնաւ հալածական արար ի վանացն[3]»:

2

Մինչեւ հայերէն գրերի ստեղծումն ու հայալեզու մատենագրութեան ծաղկումը հայ եկեղեցու պաշտօնէութեան կողմից կամ նրա նախաձեռնութեամբ՝ վերոյիշեալ պատմագրական երկերի մէջ տեղ գտած նիւթերից բացի յօրինուել են նաեւ այլ երկեր՝ ճառեր, թղթեր, կանոններ եւ այլն: Հայ մատենագրութեան պատմութեան տարբեր հարցերի նուիրուած ուսումնասիրութիւնների մէջ երբեմն յիշատակւում են այդ կարգի որոշ գրուածքներ. դրանցից մի քանիսն արդէն տեղ են գտել Հայոց հին գրականութեան յուշարձանների ցանկի մէջ, բայց կան նաեւ պատշաճ ուշադրութիւն չգրաւած միաւորներ:

Ամբողջական ցուցակ կազմելը մեր նպատակից դուրս համարելով՝ ստորեւ փորձելու ենք համախմբել մեզ յայտնի տեղեկութիւնները նախամեսրոպեան շրջանում Հայաստանում

---

* «Պատմա-բանասիրական հանդէս», 1973, N 3, էջ 27-51

1 Տե՛ս, օրինակ, Հ. Գաթըրճեան, Պատմութիւն մատենագրութեան Հայոց, Վիեննա, 1851. Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901. Ա. Ջամինեան, Պատմութիւն հայ գրականութեան, Ա մաս, Նոր-Նախիջեւան, 1915. Եղիա Ս. Քասունի, Հայ մշակոյթի պատմութիւնը, Պէյրութ, 1954 եւ այլն:

2 Եղիա Ս. Քասունի, Հայ մշակոյթի պատմութիւնը, էջ 267

---

1 «Ագաթանգեղոս եւ իւր բազմադարեան գաղտնիքն, քննադատութիւն Հ. Բարսեղ վ. Սարգիսեանի», Վենետիկ, 1890: Այստեղ որպէս եզրակացութիւն կարդում ենք. «Կորիւն է նա ինքն խմբագրող եւ գլխաւոր թարգմանիչ ագաթանգեղոսեան գրոց՝ ունելով ինքեան գործակից զհռչակեալն ի գիր եւ ի բան աշակերտակիցն իւր զԵզնիկ Կողբացի» (էջ 118): Հմմտ. նաեւ Նորայր Բիւզանդացի, Կորիւն վարդապետ եւ նորին թարգմանութիւնք, Տփղիս, 1900:

2 Վերջնականապէս չի պարզուած դեռեւս Պրոկոպիոս Կեսարացու օգտագործած «Հայոց պատմութեան» հայերէն թէ յունարէն լինելու հանգամանքը, չի որոշուած, թէ ի՞նչ է եղել Մեսրոպ Վայոցձորեցու կողմից «Արեւելից գիրք» կամ «Հայոց մնացորդաց գիրք» կոչուած սկզբնաղբիւրը. Փաւստոսից յետագայում կատարուած մի քաղուա՞ծք, թէ՞ ուրոյն մի գրուածք, որից, անկախ իրարից, օգտուել են ե՛ւ Փաւստոսը, ե՛ւ Մեսրոպ Վայոցձորեցին: Այս կարգի բազմաթիւ հարցեր անպատասխան են մնացել:

3 Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երեւան, 1941, էջ 287:

Ղազար Փարպեցին եւս յայտնում է, որ V դարի կէսերին Սասանեան արքունիքի դրածոների պահանջով «պաշտօն եկեղեցւոյ եւ կարդացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս եւ եկեղեցիս Հայաստանեայց ժողովրդոցս» (Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904, էջ 13):

ստեղծուած քրիստոնէական գրականութեան այն յուշարձանների մասին, որոնք, յետագայում թարգմանուելով, հասել են մեզ, կամ որոնց մասին տեղեկութիւններ են պահպանուել մեր հնագոյն աղբիւրներում:

Օտարալեզու հայ գրականութեան հիմնադիրն անտարակոյս եղել է Գրիգոր Պարթեւը՝ յետագայում կոչուած Լուսաւորիչ, նշանաւոր այն գործիչը, որի ջանքերով IV դարի սկզբներին քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն յայտարարուեց, եւ պայմաններ ստեղծուեցին այդ նոր կրօնը հեթանոս երկրում արմատաւորելու համար:

Գրիգոր Լուսաւորչի անուան շուրջ ստեղծուած հրաշապատում զրոյցները (խոր Վիրապում 13–15 տարի տոկալը, խոզ դարձած Տրդատ թագաւորին բուժելը եւ այլն) քննական ուսումնասիրութեան հիմնական առարկայ դարձնելով՝ որոշ ուսումնասիրողներ հակուած են եղել կասկածելու նաեւ պատմական այդ գործչի կենսագրական իրական գրուագների վրայ: Մենք, սակայն, որեւէ հիմք չենք տեսնում տարակուսելու, որ Լուսաւորիչն իրօք սերուած է եղել Պարթեւական նշանաւոր մի ընտանիքից (հաւանաբար Սուրէնեան գերդաստանից)[1], իր պատանեկութեան տարիներն անցկացրել է Կեսարիայում, ուր բարձրագոյն կրթութիւն է ստացել եւ դաստիարակուել որպէս քրիստոնեայ, վերադարձել է Հայաստան, ծառայութեան մտել Արշակունեաց արքունիքում, քարոզել նոր կրօնը՝ դրա մէջ տեսնելով հայ պետականութեան ամրապնդման, կենտրոնախոյս հակումների սանձահարման մի հզօր ազդակ, հալածուել է այդ պատճառով, ի վերջոյ յաղթանակ տանելով՝ դրել է հայ քրիստոնէական եկեղեցու հիմքերը:

Քրիստոնէութիւնը Հայաստանում տարածելու համար անհրաժեշտ էին այդ նոր վարդապետութեան սկզբունքներին քաջատեղեակ պաշտօնեաներ: Գիտակցելով դրա անհրաժեշտութիւնը՝ Գրիգոր Պարթեւը, Ագաթանգեղոսի իսկ վկայութեամբ, «հաւանեցուցանէր զթագաւորն, զի ի գաւառաց եւ կողմանց կողմանց ի տեղիս տեղիս ժողովեսցեն բազմութիւն մանկտւոյ առ ի նիւթ վարդապետութեան»: Թագաւորի հրամանով հաւաքւում են մանուկներ «յարուեստ դպրութեան», նրանց վրայ կարգւում գիտուն վարդապետներ, «եւ զնոսա,– շարունակում է պատմագիրը,– յերկուս բաժանեալ, զոմանս յասորի դպրութիւն կարգեալ եւ զոմանս՝ ի հելլէն»[2]:

Նոր կրօնի քարոզիչներն իրենց ձեռքի տակ պէտք է ունենային ժողովրդական զանգուածների համար օտար այդ վարդապետութեան հիմնական դրոյթների ու ծէսերի, հին եւ դարերի հոլովոյթով սրբագործուած հաւատալիքների նկատմամբ որդեգրուելիք կեցուածքի եւ յարակից խնդիրների մասին մատչելի ցուցմունքներ ու հրահանգներ: Եւ քանի որ հայ քրիստոնէական եկեղեցու համար, ըստ ազդեցութեան երկու շրջանների, պաշտօնական լեզուներ էին դարձել յունարէնն ու ասորերէնը, բնականաբար պէտք է երեւան

1 Պարթեւ Արշակունիների վերնախաւը 7 նշանաւոր ընտանիքներից էր բաղկացած, որոնցից յայտնի են յատկապէս Կարէն, Սուրէն եւ Միհրան տոհմերը (յիշատակւում են նաեւ Սպանդիատ, Սպահպատ եւ Ջիկ կոչուածները. այս մասին տե՛ս Ричард Фрай, Наследие Ирана, М., 1972, с. 267: Զենոբ Գլակի վենետիկեան մի ձեռագրի մէջ յիշատակութիւն կայ այն մասին, որ Գրիգոր անունը Լուսաւորչի մկրտութեան անունն է եղել, իսկ մինչ այդ ծնողները նրան Անակշատ-Սուրէն են կոչել (Բ. Սարգիսեան, Ագաթանգեղոս եւ իւր բազմադարեան գաղտնիքն, էջ 37): Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ Անակ Պարթեւը եւ նրանից սերուող Գրիգոր Լուսաւորչի գերդաստանը պարթեւական վերնախաւի ամենանշանաւոր Սուրէն-Պահլաւների տոհմի մի ճիւղն է եղել:

2 «Ագաթանգեղեայ Պատմութիւն Հայոց», աշխատ. Գ. Տէր-Մկրտչեան եւ Ս. Կանայեանց, Տփղիս, 1910, գլ. ՃԽ, էջ 437-438

գոյքին այդ լեզուներով, բայց հայերի գործածութեան համար յօրինուած երկեր:

Մեր սկզբնաղբիւրներում ուղղակի ցուցումներ կան այն մասին, որ այդ խրատական՝ օտար լեզուներով, բայց հայերի պէտքերի համար կեանքի կոչուած մատենագրութեան հիմնադիրը եղել է ինքը՝ Գրիգոր Պարթեւը: Ագաթանգեղոսի մօտ կարդում ենք, որ նա աւանդել է «ճառս յաճախագոյնս դժուարապատումս, առակս խորհրդոց դիւրալուրս»[1]: Յաճախագոյն եւ դժուարապատում ճառերն իրաւամբ նոյնացուել են բազմաթիւ ձեռագրերով մեզ հասած եւ «սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի» գրչի արգասիք համարուող 23 այն ճառերի հետ, որոնք հէնց ձեռագրական աւանդոյթով «յաճախապատում եւ լուսաւորք» են կոչուած:

Եւրոպացի եւ հայազգի մի շարք բանասէրներ, այդ ճառերի մէջ գտնելով V դարի առաջին տասնամեակների պատմական կացութեան մասին որոշ ակնարկներ, կասկածով են վերաբերուել վերոյիշեալ տուեալներին եւ, առաջնորդուելով Կորիւնի այն վկայութեամբ, որի համաձայն հայ գրերի մեծանուն ստեղծողը նոյնպէս յօրինել է ճառեր «յաճախագոյնս, դիւրապատումս, շնորհագիրս, բազմադիմիս»[2], յանգել են այն մտքին, որ Գրիգոր Լուսաւորչին վերագրուած ճառերի իրական հեղինակ պէտք է համարել հէնց Մեսրոպ Մաշտոցին[3]: Սակայն եղել են եւ դեռեւս կարող են առաջ քաշուել այս կնճիռը հարթելու այլ եղանակներ: Եթէ այդ ճառերը կամ նրանց հիմնական մասը իրօք շարադրել է Գրիգոր Լուսաւորիչը, ապա այն թարգմանուած պէտք է լինի հայերէն՝ հայ գրականութեան կերպաւորման առաջին շրջանում, առաջին հայ թարգմանիչների կողմից: Գրիգորի ճառերի հայացման աշխատանքին կարող էր ձեռնամուխ լինել հէնց ինքը՝ Մաշտոց վարդապետը՝ Հայոց կրկին Լուսաւորիչը՝ իր ժամանակի պահանջների թելադրանքով ներմուծելով նրանց մէջ նոր պարբերութիւններ ու մտքեր[4]:

Ինչ վերաբերում է Մաշտոցի գրած ճառերին, ապա դրանք ոմանց կողմից նոյնացուել են Ագաթանգեղոսի «Պատմութեան» մէջ ագուցուած «Վարդապետութեան» հետ. այստեղ կան IV դարում ապրած մի շարք հեղինակների աշխատութիւններից քաղուած տեղիներ, ուստի այն, ինչպէս ենթադրել են, պէտք է գրուած լինի V դարում: Հանգամանօրէն քննարկելով Գրիգոր Լուսաւորչի անուամբ մեզ հասած ճառական գրուածքները՝ Բ. Սարգիսեանը յանգել

1 Ագաթանգեղոս, գլ. ՃԻԷ, էջ 466

2 Կորիւն, Վարք Մաշտոցի... ի ձեռն Մ. Աբեղեանի, Երեւան, 1941, էջ 78

3 Այս տեսակէտն արտայայտել են Պ. Ֆեթթերը, Ս. Վեբերը, Կ. Տէր-Մկրտչեանը, Մ. Աբեղեանը եւ ուրիշներ: Ա. Սրապեանը ««Յաճախապատում» ճառերի հեղինակի հարցը» իր յօդուածում (տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1962, N 5, էջ 25-38) համառօտակի մէջբերել է սրանց տեսակէտները եւ փորձ կատարել ուրիշ փաստեր շրջանառութեան մէջ դնել յօգուտ այս ենթադրութեան:

4 Մեր մի յօդուածի մէջ («Բանբեր Մատենադարանի», N 7, էջ 19), հետեւելով Մեսրոպ Մաշտոցին «Յաճախապատում» ճառերի հեղինակ համարող բանասէրներին, ուշադրութիւն էինք դարձրել ճառերից մէկի մի հատուածի վրայ, որն իրօք պատշաճ է գալիս հայոց գրերի արարիչ Մաշտոցի գրչին: «Նաեւ զքննութիւն արարածոց յօրինեաց որպէս զգիր դպրութեան եւ եդ անուանս, զի անուանքն զընդրութիւնն տայցեն գրոյն եւ միմեանց զորոշումն, եւ գիրն զբարս կարդացէ անուանն» («Յաճախապատում ճառք», Վաղարշապատ, 1894-1896, էջ 69),– ասուած է «Վասն յօրինուածոց արարածոց» ճառի մէջ: Այժմ էլ մնում ենք այն տեսակէտին, որ գրեր յօրինելու եւ նրանց անուններ տալու աննախադէպ երեւոյթը, որպէս բացատրական օրինակ, կարող էր օգտագործել մի անձնաւորութիւն, որն ինքն անձամբ առնչուել է այդպիսի մի աշխատանքի: Ուստի կարծում ենք, որ ճշմարիտ է Ա. Ջամինեանը՝ ճառերի հեղինակ համարելով Գր. Լուսաւորչին, իսկ թարգմանիչ՝ Մեսրոպ Մաշտոցին. «Կարելի է կարծել,– գրել է նա,– թէ վերջինս (իմա՝ Գր. Լուսաւորիչը – Լ. Խ.) է իսկական հեղինակը, իսկ առաջինը (Մ. Մաշտոցը) նոյն գործը թարգմանել է նորանոր յաւելումներով» (Ա. Ջամինեան, Հայոց Եկեղեցու պատմութիւն, Նոր Նախիջեւան, 1908, էջ 89-90):

է այն եզրակացութեան, որ «Յաճախապատումն» իրօք Լուսաւորչին է պատկանում, իսկ նրան վերագրուած «վարդապետութեան» հեղինակը Մեսրոպ Մաշտոցն է[1]: «Յաճախապատում» կոչուած ճառերը հոգեւոր խրատներ են, որոնց ընդհանուր խնդիրն է քրիստոնէական ուսմունքի եւ բարոյական սկզբունքների քարոզը: Ճառախօսն ուսուցանում է քրիստոնէական առաքինի կեանքի պայմանները՝ բարքերի մաքրութիւն, ժուժկալութիւն, սէր, հեզութիւն, գթութիւն, յորդորում է բարիք գործել, հեռու մնալ անառակութիւնից, չարից եւ այլն: Եւ այս ամէնը՝ մի ընդհանուր վերջնական նպատակի համար, որ է «աշխարհի խաղաղութիւնն ու շինութիւնը»[2]:

Գրիգոր Լուսաւորչի անուամբ պահպանուել են նաեւ ուշագրաւ կրօնական հրահանգներ: Նրա Արիստակէս որդին 325 թ. մասնակցել է Նիկիայի տիեզերական ժողովին եւ իր հետ Հայաստան բերել այդ ժողովի կանոններն ու նիկիական Հաւատոյ Հանգանակը:

Այս փաստն արձանագրելով՝ Ագաթանգեղոսն աւելացնում է, որ Լուսաւորիչը, ընդունելով ժողովի որոշումները, «ի նոյն լուսաւոր կանոնս յաւելեալ առաւել եւս զիւր վիճակն՝ զՀայաստան երկիրն, պայծառացուցեալ... լուսաւորէր»[3], իսկ Մովսէս Խորենացին նշում է, որ Հայ եկեղեցու հիմնադիրը «սուղ ինչ գլուխս յինքենէ ի կանոնս ժողովոյն յաւելու վասն առաւել զգուշութեան իւրոյ վիճակին»[4]: Երեսուն կէտից բաղկացած այդ կանոնները պահպանուել են «Հայոց կանոնագրքի» մէջ՝ մի քանի ձեռագրերում ունենալով այսպիսի խորագիր. «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթեւի՝ յաւելումն նիկիական» կամ «Կանոնք սրբոյն Գրիգորի Պարթեւի... յաւելումն ի նիկիական կանոնս»[5]:

Դրանք հակիրճ կանոնական հրահանգներ են, որոնցով ապաշխարութեան ժամկէտներ են սահմանւում քրիստոնեաների կատարած տարբեր յանցանքների ու զանցանքների համար: Պարզ նշմարւում է, որ շարադրուած են ոչ վաղ անցեալում քրիստոնէութիւն ընդունած մի

1 Բ. Սարգիսեանի մօտ, որպէս եզրափակում իր ուսումնասիրութեան այդ հատուածի, կարդում ենք. «Կամ Յաճախապատում գիրքն եւ կամ Գրիգորի կարծեցեալ վարդապետութիւնը պէտք է որ անհրաժեշտ ս. Մեսրովբայ լինի, որովհետեւ նորա կենսագրի ասածով՝ այնպիսի ճառեր գրած էր, իսկ այժմ այդ կրկին երկասիրութիւններէն դուրս նոյն սեռի ուրիշ անանուն գրութիւն մի ձեռքերնիս հասած չէ, եւ որովհետեւ Յաճախապատում գիրքը բոլոր իր ներքին հանգամանքներովն եւ պարզ եւ միաձեւ վարդապետութեամբքն աւելի Գրիգորի եւ նորա ժամանակին, քան թէ ս. Մեսրովբայ կարէ պատշաճել, ուրեմն հետեւութիւնն յայտնի է» («Ագաթանգեղոս եւ իւր բազմադարեան գաղտնիքն», էջ 403):

Վաղաժամ է, անշուշտ, այս եզրակացութիւնը վերջնական համարել. կան եւ դեռեւս կարող են երեւան գալ նոր տեսակէտներ հայ գրականութեան արշալոյսին ստեղծուած երկերի ժամանակագրական հերթաշարը որոշելու, միմեանց նկատմամբ նրանց ունեցած ոճական եւ գաղափարական առնչութիւններն ու տարբերութիւնները պարզելու եւ, ի վերջոյ, դրանցից իւրաքանչիւրի հեղինակային պատկանելութիւնը վերջնականապէս հաստատելու ճանապարհին: Այս բնոյթի ուսումնասիրութիւններին առաջիկայում կարող են նպաստել նաեւ էլեկտրոնային հաշուիչ մեքենաները եւ գիտահետազօտական աշխատանքների նոր ձեւեր ու եղանակներ: Ուստի մեր պարտքն ենք համարում զգուշացնել մեր խստապահանջ ընթերցողներին, որ ինչպէս «Յաճախապատում ճառերի» եւ «Վարդապետութեան», այնպէս էլ յաջորդ շարադրանքի ընթացքում յիշատակուող որոշ գրուածքների հեղինակային պատկանելութեան մասին այստեղ արտայայտուած տեսակէտները ցուցանիշ են հարցի ուսումնասիրութեան այսօրուայ վիճակի, որ յետագայում նոր փաստերի լոյսի տակ կարող են ճշգրտուել ու լրացուել: Մեր ուսումնասիրութեան հիմնական նիւթը, սակայն, վստահ ենք, որ առաջիկայում աւելի խորն է բացայայտուելու, եւ IV դարում Հայաստանում օտար լեզուներով ստեղծուած գրական յուշարձանների ցանկը լրացուելու է մեր կողմից չնկատուած այլ միաւորներով:

2 **Մ. Աբեղեան**, Հայոց հին գրականութեան պատմութիւն, գիրք առաջին, Երեւան, 1944, էջ 121

3 **Ագաթանգեղոս**, գլ. ՃԻԷ, էջ 465-466

4 **Խորենացի**, II, Ղ, էջ 24

5 Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», Ա, աշխատ. Վազգէն Յակոբեանի, Երեւան, 1964, էջ 594:

միջավայրում, ուր դեռեւս մեծ ազդեցութիւն ունեն կախարդները (թովիչ, ձեռնածու), ուր հանդուցեալների թաղման արարողութիւնների ժամանակ կատարւում են հեթանոսական ծէսեր («կոծ դնեն... զհերս խզեն... զճակատ հարկանեն»), ուր կան դեռեւս մեծ թուով հեթանոսներ, որոնց նկատմամբ քրիստոնեաներից շատերը շարունակում են ունենալ բարիդրացիական բնականոն յարաբերութիւններ («որք երթան ի տունս հեթանոսաց եւ ուտեն եւ ըմպեն անխտիր, Գ ամ արտաքոյ ապաշխարեն»,- գրուած է Դ կանոնի մէջ) եւ այլն: Այս յատկանիշներն ինքնին խնդրոյ առարկայ կանոնների հնութիւնն ու հարազատութիւնը հաւաստող վկայութիւններ են:

Նախամեսրոպեան շրջանում հայ եկեղեցականների կողմից ստեղծուած օտարալեզու գրականութեան մասին աղօտ պատկերացում ունենալով՝ այս կանոնների գրութեան ժամանակի մասին Մ. Օրմանեանը խուսափողական տողեր է շարադրել. «Չենք ուզեր ըսել,- գրել է նա,- թէ անոնք նոյն ինքն Գրիգորէ գրաւոր կերպով աւանդուած կանոններ ըլլան, բայց գոնէ պէտք է ընդունիլ, թէ Գրիգորի ժամանակին կարգադրութիւններն էին, որք աւանդութեամբ պահուելով՝ յարմար առեն մը գրի առնուեցան»[1]:

Մենք, սակայն, որեւէ արգելք չենք տեսնում՝ այդ կանոնները հէնց Գրիգոր Պարթեւի կողմից շարադրուած եւ յետոյ միայն՝ V դարի առաջին տասնամեակների ընթացքում հայերէնի թարգմանուած համարելու: Այսպէս մտածելու համար, բացի վերն ասածներից, պէտք է նկատի առնել եւ այն կարեւոր փաստը, որ Գրիգոր Լուսաւորչին պատկանող մի սահմանադրութեան յունարէնից թարգմանուած լինելու մասին կայ որոշակի վկայութիւն:

«Կանոնագիրք Հայոց» ժողովածուի մէջ կարեւոր տեղ են գրաւում Սահակ Պարթեւի կողմից շրջանառութեան մէջ դրուած 5 տարբեր կանոնական հրահանգներ, որոնք «Կանոնագրքի» խմբագիրների կողմից վերադասաւորուել են եւ մասնատուել առանձին յօդուածների. այդ աշխատանքի ընթացքում խախտուել է նրանց նախնական հերթաշարը, փոփոխութիւններ են կրել նրանցից մի քանիսի խորագրերը, չի բացառուած, որ որոշ հատուածներ փոխուել են կամ ենթարկուել ոճական ու լեզուական խմբագրութեան[2]:

Մաշտոցի անուան Մատենադարանի N 659 ձեռագրի մէջ, որ բացառիկ նշանակութիւն ունի «Հայոց կանոնագրքի» աղբիւրների եւ բանասիրական այլ հարցերի պարզաբանման համար, Սահակ Պարթեւի կանոնախմբի ԼԶ-Խ համարների տակ բերուած նիւթն ընդօրինակուած է որպէս ինքնուրոյն մի գրուածք՝ ունենալով այսպիսի կարեւոր խորագիր. «Սահմանադրութիւն կարգաց՝ ընկալեալ ի նահատակէն տեառնէ Գրիգորէ, թարգմանեցաւ ի ձեռն Եզնակայ, հրամանաւ երանելոյն Սահակայ եպիսկոպոսապետին Հայոց եւ նորին աթոռակցաց, թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի եւ որոշումն Վանաց»[3]:

Նոյն այս ձեռագրի մի այլ հատուածում, «Կանոն Լուսաւորչին» նոր վերնագրի տակ, ընդօրինակուած է նաեւ նոյն կանոնախմբի շարունակութիւնը: Սահակի անունով շրջանառութեան մէջ դրուած այս կանոնախումբը (նկատի ունենք ԼԶ-ԽԴ համարներով զատորոշուած նիւթը) Գրիգոր Լուսաւորչի անուան հետ է շաղկապւում նաեւ «Կանոնագրքի» համապա-

1 **Մ. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Ա, Պէյրութ, 1959, էջ 103

2 Այս մասին տե՛ս Ն. Ակինեանի «Ս. Սահակի վերագրուած կանոնները» յօդուածը («Հանդէս ամսօրեայ», 1946, էջ 48-70, 1947, էջ 1-25), հմմտ. նաեւ Վ. Յակոբեան, Կանոնագիրք Հայոց, Ա, էջ 624:

3 Տե՛ս ձեռ. N 659, էջ 227բ, նաեւ **Աբէլ** եպիսկոպոս **Մխիթարեանց**, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ՝ հանդերձ կանոնադրութեամբ ի պէտս ժառանգաւորաց, Վաղարշապատ, 1874, էջ 25-32:

տասխան հատուածի վերջում գրուած յիշատակարանի մէջ, որը ոչ այլ ինչ է, քան N 659 ձեռագրից վերը մէջբերուած խորագրի փոքր-ինչ ձեւափոխուած փոփոխակը («Այս սահմանադրութիւն կարգաց գրեցաւ հրամանաւ երանելւոյն Սահակայ մեծ հայրապետի Հայաստան աշխարհի, ընկալեալ ի քաջ նահատակէն՝ ի տեառնէն Գրիգորէ՝ Թարգմանեցաւ միայն ի յունէ ի հայ...» եւ այլն)[1]: Կանոնական այս հրահանգի մէջ սահմանուած են Հայ եկեղեցու տօների կարգը, վանքերի եւ եկեղեցիների իրավիճակը, նրանց սպասելիք տուրքերի տեսակներն ու չափը եւ այլն:

Մէջբերուած խորագրից ու վերջաբանից պարզւում է, որ այդ սահմանադրութիւնը ձեւակերպուած է Սահակ կաթողիկոսի եւ նրա աթոռակից եպիսկոպոսների կողմից այն սկզբունքների հիման վրայ, որոնք յունարէն լեզուով շարադրուել էին Գրիգոր Լուսաւորչի կողմից եւ թարգմանուել հայերէն Եղնիկի ջանքերով:

Մենք այժմ միջոց չունենք որոշելու, թէ Սահակի ժամանակ խմբագրուած՝ Հայ եկեղեցու համար գործնական նշանակութիւն ունեցող այդ «Սահմանադրութիւն կարգացի» մէջ Լուսաւորչի սահմաններից ինչն է անաղարտ պահպանուած եւ ինչը՝ V դարի պայմաններին համապատասխան նոր ի նոր յօրինուած, բայց պարզ է մի բան՝ այդ կանոնխմբի խմբագրման տարիներին հանրայայտ էր, որ Գրիգոր Լուսաւորիչը հեղինակ է եղել յունարէնով շարադրուած զանազան գրութիւնների: Մեզ յայտնի այդպիսի գրութիւններից է նաեւ վերջին տարիներս հայ բանասիրութեան ուշադրութիւնը գրաւած «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթեւի, դարձեալ հարցումն եւ պատասխանիք նորա» կոչուող մեծարժէք բնագիրը[2]: Խորագիրը երկու տարբեր նիւթեր է միաւորում. «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթեւի» խօսքերը վերաբերում են կանոնական մի հրահանգի, որն իր ձեւով ու բովանդակութեամբ շատ նման է Լուսաւորչի 30 այն կանոններին, որոնք, ինչպէս տեսանք վերը, շարադրուած են եղել որպէս յաւելուած Նիկիական կանոնների:

Միայնակ մեզ հասած այս կանոնի մէջ ասուած է. «Քահանայ, որ ընդ կնոջ ի քուն է՝ ի վաղիւն պատարագ մի՛ իշխեսցէ մատուցանել: Եւ աշխարհական, որ ընդ կնոջ ի քուն է՝ ի վաղիւն ուրինաց մի՛ լիցի հաղորդ»[3]: Խորագրի յաջորդ բառերը մտածել են տալիս, որ կանոնական այս հրահանգը շարադրուած է եղել ի պատասխան մեզ անյայտ մի եկեղեցականի կողմից Գրիգոր Պարթեւին արուած հարցումի:

Քննարկուող բնագրի բուն նիւթը յաջորդում է կանոնական հրահանգին եւ բաղկացած է

1 «Կանոնագիրք Հայոց», Ա., էջ 402, նաեւ էջ 626 (ԽԱ հատուածի կապակցութեամբ Վ. Յակոբեանի գրած ծանօթագրութիւնը):

2 Դրանից քաղուածքներ են հրատարակուել դեռեւս 1873 թ. Աբէլ Մխիթարեանցի կողմից «Արարատ» ամսագրի էջերում եւ «Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ» մեզ արդէն ծանօթ աշխատութեան մէջ: Ամբողջական բնագիրը (4 ձեռագրերի բաղդատութեամբ) մինչեւ առաջին աշխարհամարտը հրատարակութեան էր պատրաստել Գալուստ Տէր-Մկրտչեանը, սակայն ֆրանսերէն թարգմանութեան հետ միասին տպագրուել է Ն. Ադոնցի աշխատասիրութեամբ տարիներ յետոյ՝ 1926 թ. "Révue de l'Orient chrétien" պարբերականում (հատոր V (XXV), 1925-1926, NN 3, 4, էջ 309-357): Վերահրատարակել ենք մենք, համարելով «Հայ մատենագրութեան երախայրիք», «Բանբեր Մատենադարանի» ժողովածուի 7-րդ հատորի մէջ (էջ 301-330):

3 Կանոնական այս հրահանգն իր ձեւով ու բովանդակութեամբ շատ նման է վերոյիշեալ 30 կէտերից բաղկացած կանոնխմբի հէնց թէկուզ առաջին կանոնին. «Քահանայ, որ ի մեղս զառածեալ է՝ Ժ ամ ապաշխարեսցէ ջերմեռանդն սրտիւ, արտասուաք, տրաւք տնանկաց, ապա մտեալ հաղորդեսցի». հմմտ. նաեւ Բ, Գ, ԻԲ եւ ԻԹ կանոնների հետ («Կանոնագիրք Հայոց» Ա., էջ 245-249):

16 այլ հարցումներից (որանց են վերաբերում վերջին բառերը՝ «դարձեալ հարցումն եւ պատասխանիք նորա»), որոնք բարոյականութեան եւ մանաւանդ ժողովրդական հաւատալիքների տարբեր բնագաւառներին առնչուող ուշագրաւ նիւթեր են պարունակում: Հարցուողի անունը չի պահպանուել, պատասխանողը Գրիգոր Պարթեւն է:

Տեղին է այստեղ նշել, որ «Հարց ու պատասխանին» կամ «Թուղթը» քրիստոնէական գրականութեան հնագոյն տեսակն է. եկեղեցական հեղինակներն այդ ժանրն էին օգտագործում, երբ գրում էին իրենց ժամանակակիցներին հետաքրքրող զանազան հարցերի մասին կամ բացատրում ու մեկնաբանում հաւատքի հետ կապուած զանազան խնդիրներ: «Եկեղեցու հայրերը,- գրել է այդ մասին Մ. Աբեղեանը,- թղթերի մէջ նաեւ կանոններ էին տալիս քրիստոնէական պաշտամունքի, ծէսերի ու պաշտօնեաների եւ առհասարակ վարչական խնդիրների մասին»[1]:

Գր. Պարթեւի այս գրուածքը բացառիկ նշանակութիւն ունի յատկապէս հայ ժողովրդի հնամենի հաւատալիքների ու հեթանոսական պաշտամունքի տարբեր կողմերի լուսաբանութեան համար: «Հարցմունքի» այդ էջերը, շատ տեղերում գրեթէ բառացի, օգտագործուել են Եզնիկ Կողբացու կողմից՝ «Եղծ աղանդոց» աշխատութեան մէջ:

Մեր «Գրիգոր Պարթեւին վերագրուած «Հարցումը» որպէս հայ մատենագրութեան երախայրիք» յօդուածում, ելնելով անվիճելի այն իրողութիւնից, որ Եզնիկն իր ձեռքի տակ է ունեցել այդ բնագիրը, այն համարել էինք հայ ինքնուրոյն մատենագրութեան ցարդ յայտնի հնագոյն յուշարձաններից մէկը՝ կարծելով, որ Մեսրոպ Մաշտոցն է նրա հաւանական հեղինակը. նշել էինք միաժամանակ, որ «հարցի ուսումնասիրութեան ներկայ էտապում եւ ուղղակի վկայութիւնների բացակայութեան պայմաններում իհարկէ դժուար է վճռական եւ վերջնական համարել այս եզրակացութիւնը»[2]:

Գրքի գիւտից առաջ օտարալեզու հայ գրականութեան առկայութեան մասին գոյութիւն ունեցող նիւթերի համախմբումից յետոյ այլեւս չենք տեսնում որեւէ պատճառ՝ կասկածի տակ առնելու քննարկուող գրուածքի խորագրի ուղղակի վկայութիւնը այն Գրիգոր Պարթեւի կողմից շարադրուած լինելու մասին: Միաժամանակ աւելորդ չենք համարում նշել, որ ինչպէս այս, այնպէս էլ IV դարում ստեղծուած միւս գրուածքները ե՛ւ թարգմանուելիս, ե՛ւ յետագայ դարերում ընդօրինակուելու ընթացքում կարող են կրած լինել որոշ փոփոխութիւններ[3]:

1 Մ. Աբեղեան, Հայոց հին գրականութեան պատմութիւն, Ա., էջ 93-94

2 «Բանբեր Մատենադարանի», N 7, 1964, էջ 310

3 «Հանդէս ամսօրեայ» հայագիտական պարբերականը 1971-1973 թթ. իր համարներում լոյս է ընծայում Մարտիրոս Մինասեանի բանասիրական քննութիւնը Գրիգոր Պարթեւի նոյն այս «Հարցմունքի» հետ առնչուող բարդ խնդիրների մասին: Նա փորձում է ապացուցել, որ Գրիգոր Պարթեւի անունով պահպանուած «Հարցմունքը» յետին դարերի անարժէք մի յօրինուածք է, որ Եզնիկ Կողբացին որեւէ հայկական աղբիւր չի օգտագործել, որ ոսկեդարեան հայերէնը հէնց սկզբից կատարեալ ու անթերի լեզու է եղել եւ այլն եւ այլն:

Մէկ առ մէկ անդրադառնալ այդ տեսակէտներին անօգուտ է եւ անիմաստ, բայց բնաւ չանդրադառնալն էլ անկարելի է. հայագիտութեան հարցերով այժմ շատերն են հետաքրքրւում. բաւարար պատրաստութիւն դեռեւս չունեցողներից ոմանք կարող են հալած իւղի տեղ ընդունել Մ. Մինասեանի ասածները եւ թիւր պատկերացում կազմել հայոց գրականութեան պատմութեան սկզբնական շրջանի կարեւոր երեւոյթների մասին:

Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ անհրաժեշտ ենք համարել յօդուածիս վերջում համառօտակի անդրադառնալ Մ. Մինասեանի առաջ քաշած հիմնական հարցերին:

Գրիգոր Լուսաւորչի անունով հայերէն ձեռագրերի մէջ գտնւում են նաեւ մաղթանքներ, աղօթքներ, քարոզներ, տեսիլքներ եւ այլ գրուածքներ[1], որոնք ըստ մեծի մասի յօրինուել են յետագայ դարերում. Լուսաւորչի անունն այստեղ օգտագործուած է նրանց արժէքը բարձրացնելու միտումով: Չի բացառուած, սակայն, որ այդ կարգի նիւթերի մէջ եւս կարող են գտնուել իրօք IV դարում յունարէնով շարադրուած եւ յետագայում հայերէն թարգմանուած մէկ-երկու նմուշներ:

3

Գրիգոր Պարթեւն անշուշտ ունեցել է հետնորդներ, որոնք նորաստեղծ Հայ եկեղեցու դիրքերն ամրապնդելու եւ քրիստոնէական վարդապետութեան սկզբունքներն արմատաւորելու մտահոգութեամբ յունարէն եւ ասորերէն նոր երկեր են շարադրել: Այս գործիչներից շատերի անուններն իսկ չեն հասել մեզ, մի քանիսի մասին էլ պահպանուել են լոկ հպանցիկ ակնարկներ: Դրանցից է, ահա, Արտիթէս եպիսկոպոսը՝ մէկը Գրիգոր Լուսաւորչի 12 այն աշակերտներից, որոնք, քրմերի որդիներ լինելով, յատուկ ուսում էին ստացել, ձեռնադրուել եպիսկոպոս եւ առաքուել Հայաստանի տարբեր գաւառները՝ նորաստեղծ քրիստոնէական համայնքները ղեկավարելու համար[2]:

Մովսէս Խորենացին իր «Հայոց պատմութեան» երկրորդ գրքի 80-րդ գլխի նիւթը, ինչպէս երեւում է հէնց խորագրից, քաղել է այս Արտիթէս կամ Արտիթ եպիսկոպոսի մի թղթից, որ շարադրուած է եղել որպէս պատասխան Ցագոռճան կոչուող ինչ-որ վայրում բնակուող կամ ճգնող ոմն Մարկոս միայնաւորի գրաւոր հարցման[3]: Թուղթը տեղեկութիւններ է պարունակել Գրիգոր Լուսաւորչի կեանքի առաջին շրջանի մասին. Կապադովկիա է տարւում, քրիստոնեայ մկրտւում, ամուսնանում, որդիների հայր դառնում: Հայաստան է գալիս՝ Տրդատ թագաւորի մօտ ծառայութեան մտնելու, եւ այլն: «Անշուշտ,- գրում է այդ մասին Ղ. Ալիշանը,- աւելի փափագելի մանրամասնութիւնք այլ կային ի թղթին Արտիթեայ, որով կրնայինք հետ Ագաթանգեղոսի առաջին ազգային պատմիչ համարել զնա»[4]: Եպիսկոպոս դարձած հայ քրմորդու Արտիթ անուան յունարէն անուններին յարմարեցուած Արտիթէս ձեւից պէտք է ենթադրել, որ նա իր թուղթը գրել է յունարէն լեզուով: Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ, ինչպէս ասացինք արդէն, նա մէկն էր Գրիգոր Պարթեւի ձեռնասուն այն աշակերտներից, որոնց նկատմամբ յունական միջավայրում սնուած ու կրթութիւն ստացած Լուսաւորիչը «փոյթ ուսման ի վերայ ունէր՝ ընդ հոգեւոր խնամով եւ երկիւղիւ սնուցանել»[5]:

1 Տե՛ս Գ. Զարպհանալեան, Պատմութիւն հայ հին դպրութեան, չորրորդ տպագր., 1932, էջ 199-201:

2 Ագաթանգեղոս, էջ 441-442

3 Խորենացու «Պատմութեան» այդ գլխի խորագիրն է. «Յայտարարութիւն սակաւուք սննդեան եւ վարուց Գրիգորի եւ որդւոցն (ցանկի մէջ՝ որդւոց նորա) ի թղթոյն Արտիթեայ եպիսկոպոսի, որ վասն հարցմանն Մարկոսի միայնակեցի (ցանկի մէջ՝ միայնաւորի) ի Ցագոռճանի»:

Ցագոռճան տեղանունը տարբեր ձեռագրերում տարբեր աղճատ ձեւեր է ընդունել՝ դառնալով Ցագղիռճան, Ցառղին աւան, Ցագղին աւան, Ցագոոռճան, Ցագղիճան եւ այլն (տե՛ս Խորենացու «Պատմութեան» 99 եւ 219 էջերի տողատակի տարընթերցուածքները):

4 Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 41

5 Ագաթանգեղոս, ԾԻԱ., էջ 441

4

Գրական վաստակ ունեցող մեզ յայտնի յաջորդ գործիչն է եղել Գրիգոր Լուսաւորչի աւագ որդի Վրթանէսը, որն իր կրտսեր եղբայր Արիստակէսի մահուանից յետոյ, հաւանաբար 333 թ., ժառանգել Հայոց եպիսկոպոսապետութեան պաշտօնը, շարունակել իր նախորդների պայքարը հեթանոսութեան դէմ՝ զգալի յաջողութիւններ արձանագրելով քրիստոնէութեան սկզբունքները Հայաստանում արմատաւորելու եւ եկեղեցու անսասան հիմքերն ամրապնդելու բնագաւառում:

Փաւստոս Բուզանդը վկայում է, որ երբ հայոց սպարապետ Վաչէ Մամիկոնեանն ու նրա զինակիցները պարսից գերազանց ուժերի դէմ հերոսաբար մարտնչելուց յետոյ ընկան պատերազմի դաշտում, նրանց յիշատակը յաւերժ յարգելու համար Վրթանէսը «օրէնքով», «կանոնով» տօն սահմանեց. «Եւ եդ օրէնս ընդ աշխարհն մեծ քահանայապետն Վրթանէս՝ գնոցա առնել զյիշատակն ամ յամէ. եւ որք փոխանակ աշխարհին փրկութեան մեռանիցին ի նմանութիւն նոցա, եդ կանոն՝ յիշել զնոսա առ սուրբ սեղանն Աստուծոյ ի ժամ պատարագին» եւ այլն[1]:

Այսպիսով, որոշակի տուեալ ունենք Վրթանէսի հրապարակած կանոնական մի հրահանգի մասին, որ իրաւունք է տալիս մտածելու, թէ նրա կողմից կարող էին գրուած լինել նաեւ այլ կանոններ եւ շրջաբերական գրութիւններ:

Անկախ դրանից, Վրթանէսի անունը կապուած է գրական մի երկի հետ, որը մուծուել է «Հայոց կանոնագրքի» մէջ եւ կրում է «Երանելւոյն Մակարայ՝ սրբոյ քաղաքին Երուսաղէմի հայրապետի կանոնական թուղթ ի Հայս՝ վասն կանոնադրութեան Կաթողիկէ եկեղեցւոյ կարգաց, զոր չէ արժան ընդ սահման եւ ընդ հրաման անցանել» ընդարձակ խորագիրը:

Այս թուղթը կազմուած է մկրտութեան, օծման, պատարագի եւ եկեղեցու դասակարգութեան մասին ութ տարբեր հարցումների պատասխաններից: Ինչպէս պարզւում է ներածական տողերից, հասցէագրուած է Հայոց եպիսկոպոսապետ Վրթանէսին («առաքեալ ի կողմանց Արեւելից առ քրիստոսասէր եւ երկիւղած եպիսկոպոսապետդ Վրթանէս եւ առ համաւրէն եպիսկոպոսս եւ քահանայս Հայոց»[2]), որը Երուսաղէմ ուխտի գնացած հայ քահանաների միջոցով տեղեկութիւններ էր հաղորդել Հայաստանեայց եկեղեցու վիճակի եւ իրենց առջեւ ծառացած հարցերի մասին՝ խորհուրդներ խնդրելով Մակար հայրապետից:

«Թուղթ» կամ «Հարցմունք եւ պատասխանիք» կոչուող գրութիւնները, որպէս կանոն, կեանքի էին կոչւում երկու տարբեր անձնաւորութիւնների՝ հարց առաջադրողի եւ հարցին պատասխան տուողի համագործակցութեամբ: Իհարկէ, հիմնական դերը կատարում էր պատասխանողը (երբեմն հանդէս գալով նաեւ հարց առաջադրողի դերում). քիչ չէին, սակայն, եւ այն դէպքերը, երբ հարցադրողը գործունեայ մասնակիցն էր դառնում իր պատուիրած երկի ստեղծման աշխատանքի. նա էր նախաձեռնողը, նա էր ընտրում ստեղծուելիք երկի նիւթը, նաեւ կանխորոշում պատասխանների գաղափարական բովանդակութիւնը, քանի որ նա էր ընտրում բուն հեղինակին՝ անշուշտ, ծանօթ լինելով նրա հայեացքներին ու կարողութիւններին:

Վրթանէս կաթողիկոսի հարցումներին Մակար պատրիարքի տուած պատասխաններն

1 «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1933, III, ԺԱ, էջ 38

2 «Կանոնագիրք Հայոց», Բ, էջ 219-220

իրենց տեղն ունեն նախամեսրոպեան շրջանի օտարալեզու Հայ մատենագրութեան մէջ, քանի որ վերաբերում են Հայաստանին եւ պարունակում կարեւոր տուեալներ Հայ եկեղեցու վիճակի մասին IV դարի 30-ական թթ.՝ սերտօրէն շաղկապուած լինելով Վրթանէս կաթողիկոսի անուան հետ[1]:

Օտար լեզուներով գրական յուշարձաններ Հայաստանում ստեղծուել են, անտարակոյս, նաեւ Յուսիկ եւ Փառէն կաթողիկոսների գահակալութեան տարիներին: Յաւօք, նրանցից հետքեր չեն պահպանուել:

Այս առումով աւելի բարւոք վիճակում է գտնւում Ներսէս Պարթեւը (կաթողիկոս է եղել շուրջ 353-373 թթ.): Գիտենք, որ նա Հայաստանի տարբեր գաւառներում բացել էր դպրոցներ, ուր ուսուցումը կատարւում էր յունարէն եւ ասորերէն լեզուներով[2], նա մեծարւում էր նաեւ որպէս մի անձնաւորութիւն, որ «վարդապետական բանիւն զամենեցուն զփակեալ դրունս մտաց ի բարին յորդորելով բանայր»[3] եւ այլն:

Աւելի կարեւոր են այն տեղեկութիւնները, որոնց համաձայն Ներսէսը բազմաթիւ կանոններ է հաստատել եւ Աշտիշատում հրաւիրել ազգային ժողով («Ժողով արարեալ եպիսկոպոսաց եւ համօրէն աշխարհականօք»[4]), որի «Կանոնական սահմանադրութիւնների» (օգտագործում ենք Մ. Խորենացու արտայայտութիւնը) բովանդակութիւնը յայտնի է մեզ Բուզանդի եւ Խորենացու կողմից վերապատմուած լինելով: Ներսէս Պարթեւը յունական կրթութիւն ստացած եւ բիւզանդական կողմնորոշում ունեցող գործիչ էր, ուստի կարելի է չտարակուսել, որ այդ նշանաւոր ժողովի որոշումները նոյնպէս արձանագրուած են եղել յունարէն լեզուով:

5

Նախորդ շարադրանքով փորձեցինք համառօտակի ներկայացնել մեզ յայտնի բոլոր տեղեկութիւնները՝ ուղղակի թէ անուղղակի, Հայոց գրերի գիւտից առաջ՝ IV դարի ընթացքում, նորաստեղծ քրիստոնէական եկեղեցու եւ նորադարձ քրիստոնէական համայնքների կարիքների համար Հայաստանում օտար լեզուներով ստեղծուած գրական երկերի մասին: Դրանք, ինչպէս տեսանք, ըստ մեծի մասի եղել են կանոնական հրահանգներ,

1 Տասնեակ օտարազգի եւ հայ գիտնականներ, ըստ արժանւոյն գնահատելով Մակար Երուսաղէմացու այս թուղթը, համարել են այն ստոյգ եւ արժանահաւատ պատմական փաստաթուղթ եւ քաղել նրանից կարեւոր տեղեկութիւններ Հայոց եկեղեցու պատմութեան համար: Ն. Ակինեանը, սակայն, որ տառապում էր Հայոց պատմութեան ժամանակագրութիւնը «ճշգրտելու» մտայնութեամբ, դարիս 30-ական թուականներին անդրադարձաւ նաեւ այս բնագրին եւ առանց որեւէ լուրջ կռուանի, անհիմն ենթադրութիւնների ու անիմաստ զուգադրութիւնների հիման վրայ հրապարակ նետեց մի տեսակէտ, ըստ որի, իբր, այս թղթի հեղինակ Մակարը այդ անունը կրող երկրորդ անձնաւորությունն է, որ Երուսաղէմի պատրիարք է եղել 565-572 թուականներին, իսկ Վրթանէսը ոչ թէ Վրթանէս կաթողիկոսն է՝ Գրիգոր Պարթեւի աւագ որդին, այլ ոմն Սիւնեաց եպիսկոպոս, որ ապրել է VI դարի երկրորդ յիսնամեակում (տե՛ս **Ն. Ակինեան**, Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի առ Վրթանէս եպիսկոպոսապետ Սիւնեաց յաղագս կարգաց եկեղեցւոյ, Վիեննա, 1930): Բարեբախտաբար, ազատուած ենք այս տեսակէտին անդրադառնալու պարտականութիւնից, քանի որ այդ աշխատանքը օրինակելի բարեխղճութեամբ ու յաջողութեամբ կատարել է Վ. Յակոբեանը «Կանոնագիրք Հայոց» աշխատութեան Բ հատորի ընդարձակ ներածականի մէջ (տե՛ս էջ LXXVII-XCVIII):

2 «Կարգէր եւ տեղիս տեղիս դպրոցս յունարէն եւ ասորերէն յամենայն գաւառս Հայոց»,- գրում է այդ մասին Փաւստոս Բուզանդը (Դ, 4, էջ 86):

3 **Փաւստոս Բուզանդ**, IV, Դ, էջ 84

4 **Մովսէս Խորենացի**, III, Ի (էջ 279)

քրիստոնէական վարդապետութեան տարբեր կողմերը լուսաբանող ճառեր, թղթեր, «Հարց եւ պատասխանիներ», վարքաբանական-պատմագրական երկեր: Գրական աշխատանքով զբաղուել են քրիստոնէական եկեղեցու ամենաբարձրաստիճան պաշտօնեաները՝ Գրիգոր Լուսաւորիչը, նրա Վրթանէս որդին ու ձեռնասուն աշակերտներից Արտիթ եպիսկոպոսը, Ներսէս Պարթեւը եւ ուրիշներ, որոնց անունները չեն հասել մեզ:

Ահա գրական ստեղծագործութիւնների եւ հեղինակների այդ շարքին այժմ աւելանում է մի նոր բնագիր, որը ստեղծուել է Ներսէս Պարթեւի եւ Եպիփան միայնակեացի համագործակցութեամբ եւ հետաքրքրական տուեալներ է պարունակում հեթանոս Հայերի հաւատալիքների մասին:

«Հարցումն տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի առ Եպիփան միայնակեաց»՝ այսպէս է նորայայտ այդ նիւթի վերնագիրը: Գտնւում է Մաշտոցի անուան Մատենադարանի N 582 գրչագրի մէջ[1], որը յայտնի է բանասիրութեանը որպէս Զագաւանից ժողովի կանոնները եւ Մխիթար Այրիվանեցու «Ժամանակագրութեան» լաւագոյն ընդօրինակութիւնը պարունակող արժէքաւոր ձեռագիր[2]:

Ձեռագրի 123բ էջի ստորին հատուածից սկսւում է տարբեր ժողովուրդների ամսանունների հետաքրքրական մի ցանկ, որի մէջ տեղեկութիւններ կան նաեւ կենդանակերպերի անունների մասին[3]: Այս ցանկերը գրուած են երեքական սիւնակներով. աւարտւում են 124բ էջի վրայ՝ գրաւելով գրադաշտի մեծագոյն մասը: Էջի վերջում մի փոքր տեղ մնացել է դատարկ. ձեռագրի գրիչն այն օգտագործել է ընդօրինակելու համար մեզ հետաքրքրող «Հարցումի» սկզբի մի քանի տողը՝ շարունակութեանը յատկացնելով յաջորդ՝ 125ա էջը գրեթէ ամբողջութեամբ[4]:

Մխիթար Այրիվանեցու «Ժամանակագրութեան» բնագիրը, ինչպէս եւ վերը թուարկուած ու Մխիթարի անուան հետ առնչուող բոլոր նիւթերն արտագրուել են Դաւիթ անունով մի գրչի կողմից, որը որդին է Վարդան եւ Հռիփսիմէ ամոլի եւ ունեցել է Յովհաննէս ու Մարտիրոս անունով եղբայրներ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ այս գրչի նախընտրած նիւթերի մեծ մասն առնչւում են Մխիթար Այրիվանեցու անուան հետ, հաշուի առնելով եւ այն, որ Այրիվանեցու հոգու փրկութեան համար նա շարադրել է յատուկ մի յիշատակարան[5]՝ մեր ձեռագրի գրիչ

1 Ձեռագրի մանրամասն նկարագրութիւնը տե՛ս Գ. Յովսէփեանի «Զագավանից ժողովը» յօդուածի մէջ («Շողակաթ» հայագիտական ժողովածու, Վաղարշապատ, 1913, էջ 39-41):

2 Մ. Այրիվանեցու «Ժամանակագրութեան» Ք. Պատկանեանի հրատարակութիւնը (Մխիթար Այրիվանեցւոյ Պատմութիւն ժամանակագրական, ի լոյս ընծայեաց Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1867), որը մի շարք առաւելութիւններ ունի Մ. Էմինի հրատարակութեան (Մոսկուա, 1860) նկատմամբ, բխում է այս ձեռագրից:

3 Ցանկի մէջ կան տուեալներ, որոնք բացակայում են տոմարագիտական այլ ձեռագրերից: Մասնաւորապէս ուշագրաւ են մոնղոլական ամսանունների («Անուանք ամսոց մուղալին-թաթար») եւ կենդանակերպերի ցանկերը, ինչպէս նաեւ վրաց կենդանակերպերի անունները՝ հայերէն բացատրականներով (այս վերջինս՝ ձեռագրի 32բ էջի վրայ):

4 Էջի վերջում միայն ընդօրինակուած են Մխիթար Վարդապետի մի նամակի սկզբի տողերը (4 տող) որպէս օրինակելի նամակաձեւ. «Թագազարդ եւ մեծապատիւ, ի նախնեաց բարեաց եւ յաստուածասէր արմատոց վերընծիւղեալ մեզ բողբոջ յուսոյ եւ կայծակն բարէնշան, ի հանոյ եւ ի հարցն քոց ընկալեալ զաստուածապարգեւն իշխանութեանդ արգասիս, իշխանաց իշխան եւ մեծ պարոն այս անուն»: Սրան կից աջակողմեան լուսանցքի վրայ գրուած են **Մխ. վդ.** (իմա՛ Մխիթար վարդապետ) եւ **թուղթ** բառերը:

5 «Քրիստոս Աստուած,- գրել է նա,- բարեխաւսութեամբ ծնողի քո սուրբ Աստուածածնին Կուսիդ զտէր Մխիթար վարդապետն Այրիվանեցի դասաւորեալ ընդ կամարար սիրելիսն քո» եւ այլն (ձեռ. N 582, էջ 44բ):

Դութին նոյնացնում ենք նոյնանուն այն անձնաւորութեան հետ, որը 1423 թ. Այրիվանքում օրինակել է մի Մաշտոց[1]: Աշխատելով Այրիվանքում՝ նա հնարաւորութիւն է ունեցել օգտուելու Մխիթար Այրիվանեցու ժառանգութիւնից եւ հռչակաւոր այդ հաստատութեան մատենադարանում կուտակուած ձեռագրական գանձերից: Մեր ուշադրութիւնը գրաւած այս նոր բնագիրն, այսպիսով, կորստից փրկուել եւ կրկին գիտական շրջանառութեան մէջ է դրուել հայ մշակոյթի հինաւուրց եւ նշանաւոր կենտրոն Այրիվանքից:

Արդ, ովքե՞ր են մեր ուշադրութիւնը գրաւած բնագրի խորագրում յիշատակուած Հարցում անող Հայոց կաթողիկոս Ներսէսն ու Հարցմանը պատասխան տուող Եպիփան միայնակեցը:

Ներսէս անունով կաթողիկոսներ շատ են եղել Հայաստանում՝ Ներսէս Մեծ (353–373), Ներսէս Աշտարակեցի (548–557), Ներսէս Շինող (641–661) եւ այլն: Բայց երբ ծանօթանում ենք «Հարցման» բովանդակութեանը, կասկած չի մնում այլեւս, որ այստեղ յիշատակուած անձնաւորութիւնը Ներսէս Մեծն է՝ նա, որ եռանդուն գործունէութիւն է ծաւալել քրիստոնէական եկեղեցու դիրքերի ամրապնդման եւ հեթանոսական հաւատալիքների արմատախիլ բնաջնջման համար: Անծանօթ դէմք չէ նաեւ Եպիփան միայնակեցը՝ Ներսէս Մեծի ժամանակակից, ծագումով յոյն նշանաւոր այն հոգեւորականը, որ եղել է Դանիէլի աշակերտներից մէկը, սուրբ Շաղիտայի ընկերակիցը: Միայնակեաց այս ճգնաւորը Ներսէսի մահուանից յետոյ հաստատուել է Ծոփաց երկրում եւ մեծ աշխատանք կատարել քրիստոնէութիւնը տարածելու ասպարէզում. «Դարձուցանէր զբազում մոլորեալս ի հեթանոսութենէ ի քրիստոնէութիւն եւ լնոյր զերկիրն Ծոփաց վանիւք. եւ դնէր վարժեալ ընդ ամենայն երկիրն Ծոփաց»,– գրում է նրա մասին Փաւստոս Բուզանդը[2]: Երբ նա թողնում է նաեւ Ծոփաց աշխարհի իր միանձնանոցը, որ Մամբրէ էր կոչւում (Մամուշ գետի ափին), այնտեղ մնում են նրա բազմաթիւ հետեւորդները. «Բազում եղբայրս միաբանս միահաւանս հաւատացեալս կրօնաւորս քրիստոնէից, լեռնականս ճգնաւորս միանձունս»[3]:

Եպիփանը պատկանում էր Հայոց եկեղեցու այն պաշտօնեաների թւին, որոնք Գինդ վարդապետի սնուցած աշակերտների նման շրջում էին Հայաստանի հեռաւոր ծայրամասերում, հեթանոսներին դարձի բերում եւ քարոզում նոր կրօնի սկզբունքները: Ինչպէս Բուզանդն է գրում, նրանք «ընդ բազում հեթանոս տեղիս շրջէին յաշխարհս հեռաւորս եւ ի սփիւռս հեթանոսաց դարձուցանէին զմոլորութիւն բազմաց եւ զբազում մարդիկ ածէին ի գիտութիւն կենաց եւ ի ճանապարհն ճշմարտութեան»[4]: Քարոզչական այս աշխատանքները կատարող պաշտօնեաները ոչ միայն քաջածանօթ պէտք է լինէին քրիստոնէական վարդապետութեան սկզբունքներին, այլեւ պէտք է կարողանային յաջողութեամբ վիճաբանել հեթանոսների հետ, հերքել ժողովրդի մէջ արմատաւորուած հնամենի հաւատալիքներն ու առասպելները, ցոյց տալ նոր կրօնի առաւելութիւնները հնի նկատմամբ եւ այլն: Ներսէսի Հարցման Եպիփանի պատասխանը գրուած է հէնց այս նպատակով:

Պէտք չէ տարակուսել, որ եղել են նման եւ աւելի ընդարձակ ու բովանդակալից այլ

1 «ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», մասն առաջին (1401–1450 թթ.), կազմ. Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, 1955, էջ 303–304

2 Փաւստոս Բուզանդ, V, ԻԷ, էջ 225

3 Նոյն տեղում, V, ԻԸ, էջ 227

4 Նոյն տեղում, VI, ԺԶ, էջ 275

գրուածքներ եւս, որոնք, սակայն, ամենակուլ ժամանակի կեր են դարձել[1]:

Հայոց եկեղեցին իր սուրբերի շարքում տեղ է յատկացրել մեր «Հարցման» հեղինակ Եպիփան միայնակեցին եւ արաց ամսի 27-ին (փետրուարի 3) տօն կարգել Եպիփանի եւ նրա ընկերակից Շաղիտայի յիշատակին:

6

Այժմ ծանօթանանք նորայայտ Հարցման բնագրին՝ քաղելով Մաշտոցի անուան Մատենադարանի N 582 ձեռագրի 124բ–125ա էջերից.

ՀԱՐՑՈՒՄՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԷՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՌ ԵՊԻՓԱՆ ՄԻԱՅՆԱԿԵԱՑ

[Հարց]. Զի՞նչ են համբարուք, եւ յուշկապարիկք, եւ նաւհանկք, եւ ծովացուլք, եւ յարալէզք, եւ եղջիւրաքաղք, եւ քաղք, եւ պեւք, եւ խիպիլիկք, եւ պարիկք, եւ հոնկերք, եւ կադրիպոք, եւ խաղադիչք, եւ ձիացուլ, եւ չեղարք, եւ չահապետք, եւ վիշապք, եւ քաջք, եւ թէ այլ ինչ սոսկական անուանք ասին. եւ գայսոսիկ ազգի ազգի ասեն, եւ ծնունդք որպէս մարդկան:

Պատասխանի. Նախ զայս պարտ է գիտել, զի ոչ այլ բանական արարածք գոն, քան զհրեշտակս եւ զմարդիկ, որպէս Գիրք Սուրբք ասեն: Իսկ դեւք ապստամբեալք յԱստուծոյ եւ աստուածամարտք եղեալք՝ մեզ չարք եղեն առ ի մոլորեցուցանել եւ սուտ անուամբք կերպ ի կերպս լինելով, զի որսայցեն զմարդիկ ի կորուստ: Իսկ անիմաստքն ի մարդկանէ այսպէս կարծեն, եթէ են ինչ նոքա, այլ սոքա ամենեքեան են դեւք անմարմինք եւ ոչ են ծնընդական. եւ ըստ որում կերպի երեւին եւ անուանին, զնոյն ի մարդկանէ համբաւին. յաւերս քաղաքաց բնակելով գիւաց՝ յուշկապարիկք եւ համբարուք անուանեցան: Իսկ ըստ հեթանոսական բարբաջմանցն զծովացուլն ի ծովէ ասեն լեալ, եւ զպայն ի գետոց եւ զյարալէզն ի շանէ եւ զհանդիւն յիշոյ եւ զնահանկն ի ծովային ձիոյ: Եւ այս ոչ ճշմարտութեան տեսակք, այլ հեթանոսական բաջաղմունք, զի եթէ կարող գոն կերպարանել ի հրեշտակ լուսոյ եւ երբեմն ի կերպս կանանց եւ սեւ արանց երեւին եւ այլ երբեմն ի կերպս գազանաց, զի՞նչ զարմանք են, թէ ուրեք յանընդել եւ յանտեսեալ կերպարանս երեւին եւ անուանին:

Դժուար է վերջնական խօսք ասել այս բնագրի ամբողջական կամ թերի լինելու մասին: Եթէ դատելու լինենք այն փաստից, որ Եպիփանն իր պատասխանը շարադրելիս չի անդրադարձել Ներսէսի Հարցի մէջ առկայ երեւակայական բոլոր էակներին, այլ թուարկել է դրանցից միայն 5-ի անունները, կարելի է թերեւս մտածել, որ գրուածքը թերի է հասել մեզ: Սակայն բացառուած չէ եւ այն, որ, խօսելով մի քանիսի մասին ու մերժելով նրանց

1 Մ. Մինասեանն իր վերոյիշեալ յօդուածում, քննադատելով Ն. Ադոնցին եւ Լ. Խաչիկեանին, գրում է. «Երկու բանասէրներն էլ համակարծիք են, թէ Հարցարանը քրիստոնէական վարդապետութեան ուսուցման տեսակէտից շատ կարեւոր, համակողմանի, լրիւ ու անթերի ձեռնարկ է եղել (այս ընդգծուած բառերը Մինասեանն է հրամցրել Ադոնցին եւ տողերիս գրողին – Լ. Խ.): Սակայն հայ բանասիրութիւնը դեռեւս չի հաստատել, թէ հինգերորդ դարում գրուել են այսպիսի «հարցարաններ» («Հանդէս ամսօրեայ», 1972, էջ 206):

Մի կողմ թողնելով նորաթուխ մեր բանասէրի գրելաոճը՝ այսօր կարող ենք արձանագրել, որ հայ բանասիրութիւնն արդէն հաստատել է հեթանոսական հաւատալիքների մասին քննադատական «հարց ու պատասխանների» գոյութիւնը հայոց գրերի գիւտից էլ առաջ:

գոյութիւնը, Եղիփանն աւելորդ է համարել մէկ առ մէկ թուարկել Ներսէսի հարցման մէջ առկայ անգայ բոլոր էակներին, ուստի եւ բնագիրն ամբողջական է:

Հարիւանցի քննութիւնն իսկ բերում է այն տեսակէտին, որ փոքրիկ այս գրութիւնն ազգակից է Գրիգոր Պարթեւի «Հարցմունքի» 14-րդ կէտին:

Համոզուենք այդ բանում՝ զուգադրելով մի երկու նախադասութիւն.

Գրիգոր Պարթեւ

Նախ զայն տեսցուք, թէ զո՞ն այլ արարածք բանաւորք քան զհրեշտակս եւ զմարդիկ եւ զդեւս... եւ մարդկան (ըստ) կերպի երեւման անուանս եդեալ՝ կոչեն յուշկապարիկ, զոմն համբարու: Եւ նոյն ազդեցութեամբ դիւացն բարբաջեն մարդիկ, զծովացուլն ի կուսէ ասեն լեալ եւ զպայն ի գետոյ, եւ զառալէզն ի շանէ, եւ զխանդիոն ի յիշոյ, եւ նահանգն ի ձիոյ: Եւ այս ոչ եթէ տեսակք ինչ, այլ անուանք եւ եթ են հեթանոսական կռապաշտիցն:

Եղիփան միայնակեաց

Նախ զայս պարտ է գիտել, զի ոչ այլ բանական արարածք գոն քան զհրեշտակս եւ զմարդիկ որպէս Գիրք Սուրբք ասեն: Իսկ դեւք ապըստամբեալ յԱստուծոյ... եւ ըստ որում կերպի երեւին եւ անուանին՝ զնոյն ի մարդկանէ համբաւին. յաւերս քաղաքաց բնակելով դիւաց՝ յուշկապարիկք եւ համբարուք անուանեցան: Իսկ ըստ հեթանոսական բաջաղմանցն զծովացուլն ի ծովէ ասէն լեալ, եւ զպայն ի գետոց, եւ զյարալէզն ի շանէ, եւ զհանդիոն ի յիշոյ, զնահանգն ի ծովային ձիոյ: Եւ այս ոչ ճշմարտութեան տեսակք, այլ հեթանոսական բաջաղմունք:

Այս երկու զուգահեռ հատուածների նմանութիւնն այնքան ակնառու է, որ կարող է բացատրուել միայն այդ բնագրերի ազգակցութեամբ՝ միեւնոյն աղբիւրից կամ մէկը միւսից բխած լինելով: Մենք հակուած ենք մտածելու, որ Եղիփանն իր պատասխանը շարադրել է՝ ձեռքի տակ ունենալով Գրիգոր Պարթեւի «Հարցմունքը». նա իր աշխատանքը կատարել է տեղ-տեղ արտագրելով Գրիգորի 14-րդ պատասխանին՝ մասնակի լրացումներով ու փոփոխութիւններով: Նկատուող տարբերութիւնների մի մասը հաւանաբար առաջացել է այն ժամանակ, երբ այդ զոյգ բնագրերը տարբեր անձնաւորութիւնների կողմից յունարէնից թարգմանուել են հայերէն:

Եղիփանի պատասխանին, որը կարող է օգտակար լինել Գր. Պարթեւի «Հարցմունքի», ուստի եւ նրա հետ առնչուող «Եղծ աղանդոցի» համապատասխան հատուածների գիտական քննութեան համար[1], հայ ժողովրդի հնամենի հաւատալիքների ուսումնասիրութեանը նպաստող նոր տուեալներ չի պարունակում: Այս առումով շատ աւելի հետաքրքրական է Ներսէսի հարցը, որի մէջ, այլ աղբիւրներից եւս յայտնի երեւակայական էակներից բացի,

1 Գր. Պարթեւի «Հարցմունքի» եւ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի» մէջ, օրինակ, ասուած է, որ ծովացուլը կովից է առաջանում եւ ծովակում բնակւում. «Հարցմունքի» մի այլ հատուածում գրուած է, որ «զծովացուլն ի կուսէ ասեն լեալ»: Ներսէսի եւ Եղիփանի նորայայտ «Հարցումի» մէջ, սակայն, ծովացուլի ծագման մասին գրուած է այսպէս. «զծովացուլն ի ծովէ ասեն լեալ»: Ըստ այդմ ունենք «ի ծովէ», «ի կովէ» եւ «ի կուսէ». սրանցից մէկը («ի կուսէ») կամ երկուսը (նաեւ «ի կովէ») աղճատման արդիւնք կարող են լինել եւ այլն: Բնագրագիտական այս կարգի հարցերն արժանի են աւելի հանգամանալից քննութեան:

յիշատակուած են նաեւ խաղադէշ եւ կաղրիպլիս նորալուր անունները, ինչպէս եւ տրուած են արդէն յայտնի անունների այլակերպ տառադարձուած ձեւեր. օրինակ՝ հանդիւ (Գ. Պարթեւի «Հարցմունքի» մէջ գրուած է խանդիւ կամ խանդիւոն) եւ պեւ (հաւանաբար պայ անուան փոփոխակն է): Պեւ բառը «դեւ, սատանայ, հրեշ» իմաստով գործածական է եղել Արարատեան գաւառի որոշ բնակավայրերում մինչեւ վերջին ժամանակներս[1]:

Հայ հին մատենագրութեան ինքնուրոյն եւ թարգմանական գրուածքների մէջ յիշատակւում են շուրջ երեք տասնեակ երեւակայական էակների անուններ: Դրանցից շատերի մասին գոյութիւն ունեցող մատենագրական տուեալներն արդէն ի մի են բերուած Ղ. Ալիշանի «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց» մեծարժէք աշխատութեան մէջ, սակայն այս ուղղութեամբ որոնումները պէտք է շարունակել[2]: Եւ երբ հաւաքուած մատենագրական նիւթն ուսումնասիրուի բանահիւսական եւ ազգագրական տուեալների, ինչպէս նաեւ միջնադարեան հայկական ձեռագրերի լուսանցքներում նկարուած տարատեսակ առասպելական կենդանիների պատկերների համադրութեամբ (անշուշտ, հաշուի առնելով նաեւ հարեւան ժողովուրդների միջավայրից քաղուած ազգագրական տուեալները), ապա հնարաւոր կլինի ինչ-որ չափով բացել այն թանձր վարագոյրը, որ ծածկում է մեր հայեացքից հեթանոս հայերի ժողովրդական հաւատալիքների ինքնատիպ աշխարհը:

7

Հայոց այբուբենի գիւտից անմիջապէս յետոյ Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթեւը իրենց աւագ աշակերտների գործակցութեամբ եռանդուն աշխատանք ծաւալեցին քրիստոնէական հաւատքի Սուրբ Գրքերը եւ եկեղեցական հայրերի կարեւորագոյն ստեղծագործութիւնները յունարէն եւ ասորերէն լեզուներից հայերէն թարգմանելու համար: Ընդամէնը մի քանի տասնամեակների ընթացքում ոսկեդարեան կոչուող հայերէնով թարգմանուեցին Յովհան Ոսկեբերանի, Սեբերիանոս Եմեսացու, Բարսեղ Կեսարացու, Կիւրեղ Աղեքսանդրացու, Եւսեբիոս Կեսարացու, Եփրեմ Ասորու, Կիւրեղ Երուսաղէմացու, Եւագր Պոնտացու, Ափրատատ Զգօն Պարսկի, Իգնատիոս Անտիոքացու, Եւթաղի եւ շատ ու շատ հեղինակների կարեւորագոյն աշխատութիւնները:

Եւ եթէ մեր թարգմանիչների ուշադրութեան կենտրոնում չէին գտնւում քրիստոնեայ աշխարհում ճանաչում գտած օտարազգի մատենագիրների աստուածաբանական տարբեր հարցերի մասին գրած աշխատութիւնները (մեկնութիւն, ճառ, խրատ, վկայաբանութիւն, պատմութիւն եւ այլն), անկարելի է մտածել, որ նրանք առաւել ջանասիրութեամբ չէին դիմել իրենց հայրենի երկրում ապրած ու ստեղծագործած հեղինակներին, որոնք հայերէն գրերի ստեղծումից առաջ իրենց աշխատութիւնները ստիպուած շարադրում էին օտար լեզուներով՝ յունարէն կամ ասորերէն:

1 Տե՛ս Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 555: Հ. Աճառեան, Հայերէն գաւառական բառարան (Էմինեան ազգագրական ժողովածու, Թ), Թիֆլիս, 1913, էջ 906:

2 Թէ որքան արգասաւոր կարող են լինել դրանք, երեւում է թէկուզ այն փաստից, որ հէնց միայն Թէոն Աղեքսանդրացու «Յաղագս ճարտասանական կրթութեանց» թարգմանական բնագիրը (Յ. Մանանդեանի աշխատասիրութեամբ յունարէն բնագրի հետ մէկտեղ տպագրուած է 1938 թ. Երեւանում) պարունակում է հնամենի հաւատալիքների ուսումնասիրութեանը նպաստող հետեւեալ անունները. Խաժ (բերուած է որպէս հոմանիշ Γλαυκος դիցանուան, որը ծովայինների ու ձկնորսների Աստուածն է համարուել), Ջոհկաղեւ (Ποθιος), Պարիկք (Κενταυροι) եւ Հայկք (Γιγαντες):

Անուանի հայագէտ Նորայր Բիւզանդացին, բնագրագիտական զարմանալի մանրակրկիտ աշխատանք կատարելով, կարողացել է բացայայտել Կորիւնի բաժինը ոսկեդարեան թարգմանական գրականութեան մէջ: Նոյն բնոյթի ուսումնասիրութիւնները շարունակելով՝ հնարաւոր կլինի ինչ-որ չափով որոշել նաեւ Մաշտոցի ու Սահակի եւ նրանց մերձաւոր գործակիցներ Եզնիկի, Յովսէփի, Արձանի եւ միւսների աւանդը հայ թարգմանական գրականութեան մէջ:

Բանասիրական այս կարեւոր խնդրի լուծման գործին նպաստելու են նաեւ Գրիգոր Պարթեւի կանոններն ու «Հարցմունքը», Մակար Երուսաղէմացու Հայաստան առաքած թուղթը եւ վերջապէս՝ Ներսէս Մեծի ու Եպիփան միայնակեացի մեր այս յօդուածով գիտական շրջանառութեան մէջ դրուող «Հարցումը»: Այդ երկերը բացառիկ արժէք ունեն որպէս IV դարում օտար լեզուներով ստեղծուած հայ գրականութեան առ մեզ հասած մասունքներ եւ մանաւանդ որպէս հին հայերէնով գրի առնուած ու անաղարտ վիճակով պահպանուած անդրանիկ ստեղծագործութիւններ[1]:

1 Այդ կարգի երկերի ցանկը նոր ուսումնասիրութիւնների ճանապարհով առաջիկայում կարելի է ճոխացնել: Մասնաւորապէս ուշադրութիւն են գրաւելու V դարում շրջանառութեան մէջ դրուած վարքագրական յուշարձանները, որոնց մէջ, անտարակոյս, կան ամբողջութեամբ կամ մասամբ մինչեւ գրերի գիւտը յօրինուած եւ յետոյ միայն հայերէնի թարգմանուած նմուշներ:

Հէնց այժմ կարելի է նշել, որ այդ կարգի երկերից է Թադէոս առաքեալի ու Սանդուխտ կոյսի վկայաբանութիւնը, որը հայերէն է թարգմանել Սամուէլ անունով մի եպիսկոպոս: Սրան իրաւամբ նոյնացնում են Մաշտոցի աշակերտ, վրաց եպիսկոպոս Սամուէլի հետ՝ համարելով մեր առաջին թարգմանիչներից մէկը (տե՛ս Ն. **Անդրիկեան**, Սանդուխտի վկայաբանութեան թարգմանիչը, «Բազմավէպ», 1907, էջ 60-61. Վ. **Հացունի**, Կարեւոր խնդիրներ..., Վենետիկ, 1927, էջ 34-35. Ա. **Զամինեան**, Պատմ. հայ գրակ., Ա, էջ 85 եւ այլն):

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԾՆՆԴԵԱՆ 1600-ԱՄԵԱԿԸ*

Հայ ժողովուրդը 1962 թուականի մայիս ամսին տօնեց հայ գրի ու դպրութեան հանճարեղ հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի ծննդեան 1600-ամեակը:

Մեր հանրապետութիւնը պատշաճ հանդիսաւորութեամբ նշանաւորեց այդ մեծ մարդու յիշատակը, որն իր ժողովրդի պատմութեան դժնդակ մի շրջանում գտաւ անխորտակելի այն զէնքը, որով հայ ժողովուրդը դարեր շարունակ դիմագրաւելու էր օտար զաւթիչներին եւ ստեղծելու համաշխարհային ճանաչում ունեցող մշակոյթ:

Քիչ ժողովուրդներ կան աշխարհում, որոնք հաւաստի տուեալներ ունեն իրենց այբուբենի ստեղծման ու գրականութեան սկզբնաւորման հանգամանքների մասին: Բարեբախտաբար, Մաշտոցի կեանքի ու գործունէութեան մասին պահպանուել են արժանահաւատ սկզբնաղբիւրներ: Հասել է մեզ նրա աւագագոյն աշակերտներից մէկի՝ Կորիւնի գրած «Վարքն» իր ուսուցչի մասին. արժէքաւոր տուեալներ կան նաեւ Ղազար Փարպեցու եւ Մովսէս Խորենացու «Պատմութիւններում»:

Միակողմանի են այդ աղբիւրները. նրանցում յատուկ շեշտ է դրուած Մաշտոցի քարոզչական գործունէութեան վրայ եւ, ընդհակառակը, քիչ բան է տրուած հայ գրի ու դպրութեան սկզբնաւորման հետ կապուած մի շարք կարեւոր իրադարձութիւնների ու հարցերի մասին. այնուամենայնիւ նրանք հնարաւորութիւն են ընձեռում ուրուագծելու Մաշտոցի կեանքի ու գործի ստոյգ պատմութիւնը:

Ըստ այդ աղբիւրների՝ Մեսրոպ Մաշտոցը ծնուել է պատմական Հայաստանի Տարօնի գաւառի Հացեկաց գիւղում շուրջ 360-362 թուականներին, Վարդան անունով շինականի ընտանիքում: Եղել են փորձեր նրան ազնուական ծագում վերագրելու. յայտնի է, սակայն, որ Մաշտոցի ծննդավայրը «կարճագատների» գիւղ էր, ուստի Մաշտոցը՝ հաւանաբար ազատ շինականի որդի: Իր ճառերից մէկում նա ունի ուշագրաւ այսպիսի տողեր. «Եւ այս յայտնի է, զի ոչ տոհմից փառաւորութիւն փառաւոր առնի առ Աստուած, այլ առաքինութեան բարեհաճութիւն»[1]: Խիստ ուշագրաւ են այս տողերը՝ շարադրուած անտոհմիկների գրքերից:

Մաշտոցն իր ծննդավայրում, հաւանաբար Ներսէս Պարթեւի բացած յունարէն կամ ասորերէն լեզուով ուսուցանող դպրոցներից մէկում, հմտանում է այդ լեզուների մէջ եւ Խոսրով Դ-ի թագաւորութեան տարիներին գալիս Վաղարշապատ եւ մտնում արքունիք՝ զինուոր-գրագրի ստորին գործակալական պաշտօնով:

Կորիւնը հաղորդում է, որ նա իր այս պաշտօնում տեղեակ ու հմուտ դարձաւ աշխարհական կարգերին եւ իր զինուորական արուեստով՝ սիրելի իր զօրականներին:

Երկար չտեւեց Մաշտոցի ծառայութիւնը Արշակունեաց արքունիքում: Նա, ապրելով եւ աշխատելով մայրաքաղաքում, տեսնում էր հայ պետականութեան թուլացումը, նախարարական զօրաբանակների մարտունակութեան ջլատումը՝ երեւոյթներ, որ կապուած էին ֆեոդալական յարաբերութիւնների արմատաւորման հետ: Նախարարներից շատերը պատրաստ

* «Բանբեր Մատենադարանի», 1964, N 7, էջ 11-24

1 «Յաճախապատում ճառք», Վաղարշապատ, 1894-96, էջ 238

էին ծառայագրուել օտար տիրակալներին եւ դաւաճանել համընդհանուր հայկական շահերին՝ հարեւանների հաշուին իրենց սահմաններն ընդարձակելու կամ այլ առանձնաշնորհումների ակնկալութեամբ: Չկար ընդհանուր մի գաղափար, համազգային մի դրօշ, որի շուրջը համախմբուէին Հայաստանի կենտրոնական ուժերը՝ դիմագրաւելու համար մշակութային ինքնութեան վերացման նենգ ծրագրեր նիւթող Արեւելեան Հռոմէական կայսրութեանն ու Սասանեան Պարսկաստանին:

Հնում ամէն մի ժողովուրդ, մանաւանդ եթէ նրան պատմականօրէն բախտ էր վիճակուել միջազգային ռազմերթերի ու առեւտրական ուղիների ճամփաբաժանի վրայ ստեղծել իր հայրենի օջախը՝ պահպանելու համար իր ինքնութիւնը եւ ազատ գոյութեան իրաւունքը, անհրաժեշտաբար ունենալու էր զինական զօրութիւն եւ բարձր մշակոյթ:

Հայ ժողովուրդը IV դարի վերջերին չունէր ո՛չ մէկը եւ ո՛չ միւսը:

Գտնուելով շարունակ իրար բախուող Հռոմէական եւ Պարսկական կայսրութիւններին սահմանակից՝ Հայերը ստիպուած էին կա՛մ դաշնակցել արեւելեան հարեւանի հետ՝ կրելով արեւմտեան հզօր հարեւանի հարուածները, կա՛մ ընդհակառակը: Երկու դէպքում էլ Հայաստանի հողը թատերաբեմ էր թշնամի բանակների բախումների, ժողովուրդը երկուստեք ենթարկւում գերեվարութեան, աւարառութեան եւ անգութ սրածութեան:

Չորրորդ դարի կէսերից պարսկա-հռոմէական բախումները վերսկսուեցին աւելի մեծ կատաղութեամբ: 363 թուականին Յուլիանոս կայսեր Արեւելեան արշաւանքից յետոյ Պարսկաստանի եւ Հռոմէական կայսրութեան միջեւ կնքուած դաշնագրով կայսրութիւնը պարտաւորւում էր չօգնել Հայերին, եթէ պարսիկները մտնէին Հայաստան:

Մի տարի չանցած՝ Շապուհ Բ-ն արշաւեց մենակ մնացած Հայաստանի վրայ: Հայ ժողովուրդը 4 տարի շարունակ, չստանալով դրսից որեւէ օգնութիւն, դիմադրեց պարսից գերազանց ուժերին, սակայն պատերազմն աւարտուեց Հայերի պարտութեամբ[1]:

Փաւստոսի վկայութեամբ՝ Շապուհի զօրքերը Հայաստանում անգթօրէն հրդեհում էին բնակավայրերը, գերեվարում, սպանում ու բռնագատում բնակչութեանը, կողոպտում ու թալանում: Յատկապէս ծանր հարուած կրեցին հայկական քաղաքները, որոնք Արշակունեաց պետութեան ամուր յենարանն էին հանդիսանում:

387 թուականին Հայաստանը բաժանուեց երկու հզօր մրցակիցների միջեւ: Հայաստանի՝ Հռոմէական կայսրութեանը միացուած բաժնում Արշակունեաց թագաւորութիւնը վերացուեց մէկ-երկու տարի յետոյ. պարսկական մասում մինչեւ 428 թուականը շարունակում էին ընդմիջումներով իշխել Հայ թագաւորներ, որոնք, սակայն, պարսից արքաների կամակատարները դարձած՝ զուրկ էին ինքնուրոյն քաղաքականութիւն վարելու հնարաւորութիւններից:

Ղազար Փարպեցին Հազկերտ արքայի՝ Հայաստանի նկատմամբ բռնած դիրքը բնորոշում է՝ վերագրելով նրան այսպիսի խորհրդածութիւն. «Արդ, ի թագաւորել յազգէս մերմէ ի վերայ աշխարհին Հայոց՝ յամենայն այդպիսի կասկածանաց անհոգացեալ լինի թագաւորութիւնս մեր. եւ նոքա ցանկ երկիւղիւ եւ դողութեամբ ծառայեն մեզ եւ օտարոտիս ինչ եւ վնասակարս ինչ ոչ խորհին: Է զի եւ սովորութիւն առնուն յանկչել յօրէնս մեր, հանապազ

[1] Յ. Մանանդեան, Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան, հտ. Բ, մասն Ա, Երեւան, 1957, էջ 174 եւ յետ.

խօսիւք ընդ միմեանս եւ ընդելական բարեկամութեամբ, ի զբօսմունս որսոց եւ ի խաղս, որ լինին ի միջի նոցա. այլ եւ ամուսնութեանց տուրեւառիւք հաղորդեալք առ միմեանս՝ զատուցեալք այնուհետեւ որոշին ի սիրոյ նոցա եւ յօրինացն»[1]:

Այսպիսով, Հայ պետականութեան վերացման եւ Հայերին զրադաշտական կրօն պարտադրելու ծրագիրը Սասանեան Պարսկաստանի՝ Հայաստանի նկատմամբ մշակած քաղաքականութեան հիմնական բովանդակութիւնն էր կազմում մանաւանդ Հայաստանի բաժանումից (387 թ.) յետոյ:

Դրութիւնը ծանր էր ու անմխիթարական նաեւ Հայ ազգային մշակոյթի ու ինքնագիտակցութեան վիճակի առումով:

Դարաւոր իր գոյութեան ընթացքում Հայ ժողովուրդը ստեղծել էր հերոսական իր անցեալի եւ մաքառումների մասին էպիկական վէպեր ու երգեր, իր աստուածների՝ վիշապաքաղ Վահագնի, նրա տարփածու Աստղիկի, Արա Գեղեցիկի ու Շամիրամի, Հայկայ Տորք Անգեղի ու այլոց մասին գեղարուեստական բարձր կատարելութեամբ մշակուած առասպելներ, կրօնական տօների ու աշխարհական հանդէսների, խրախճանքների ու յուղարկաւորութիւնների ժամանակ ժողովրդական գուսանները կատարում էին հիասքանչ երգեր, որոնք յղկուելով դարերի ընթացքում, սերնդից սերունդ անցնելով՝ անկապտելի մասն էին կազմում ժողովրդի հոգեւոր կեանքի:

Հայ ժողովուրդը, սակայն, չունէր իր գիրն ու գրականութիւնը:

Սելեւկեանների ժամանակ Այրարատեան երկրում իշխող Երուանդեանները յունարէն լեզուով էին գրում իրենց արձանագրութիւնները: Արտաշիսեան հարստութեան հիմնադիր Արտաշէս Ա-ից պահպանուել են արամէական արձանագրութիւններ: Տիգրան Բ-ի եւ Արտաւազդ Բ-ի արքունիքում իշխում էր յունարէն գիրն ու գրականութիւնը: Արտաւազդն ինքը գրում էր յունարէն ողբերգութիւններ ու պատմական գրուածքներ:

Արշակունի Հայ թագաւորները, Մ. Խորենացու վկայութեամբ, պետական գրագրութիւններն ու պաշտօնական փաստաթղթերը շարադրում էին պահլաւերէն ու յունարէն:

IV դարի սկզբներին Տրդատ Գ թագաւորի եւ Գրիգոր Պարթեւի ջանքերով քրիստոնէութիւնը Հայաստանում յայտարարուեց պետական կրօն: Այդ մեծ բարեփոխութիւնն առաջին հերթին քաղաքական նշանակութիւն ունէր: Նոր կրօնի տարածումով ու եկեղեցու ստեղծումով Հայ Արշակունիները յոյս ունէին, որպէս զօրավիգ թագաւորական իշխանութեան, ստեղծել մի համապետական ուժեղ հաստատութիւն, որն ի վիճակի լինէր քրիստոնէութեան դրօշի ներքոյ միաւորելու Հայ նախարարների տնտեսական ու զինական ուժերը՝ օտար թշնամիների եւ սոցիալական պայքարի ելած ժողովրդական զանգուածների ընդվզումների դէմ:

Ժողովուրդը, սակայն, առերես ընդունեց քրիստոնէութիւն: Նոր եւ վերացական կրօնի էութիւնն ու բովանդակութիւնը անծանօթ էր մնում ժողովրդական զանգուածներին. ինչպէս Փաւստոսն է ասում, նրանք, ովքեր «ծանօթ էին յունարէն կամ ասորերէն գրագիտական տարերքին, միայն սրանք էին փոքր ի շատէ հասկանում այդ կրօնը: Իսկ նախարարների ու շինականների միւս խառնաղանջ բազմութիւնը... ոչ չնչին մի բան եւ ոչ մի նշոյլ իրենց լսածներից չէին կարող հասկանալ եւ մտքերում պահել» (Փաւստոս, 3, ԺԳ):

[1] Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904, էջ 18-19

Քրիստոնէութեան տարածմանը, անշուշտ, խանգարում էր նաեւ այն հանգամանքը, որ այդ գործն իրենց էին վերապահում ասորի եւ յոյն քարոզիչները, որոնք Հայաստան էին գալիս հաւատքի տարածման հետ մէկտեղ, նաեւ հեթանոսական մեհեանների ընդարձակ ու բարեբեր կալուածքները սեփականելու ձգտումներով: Քիչ չէին նաեւ Փառէն կաթողիկոսի (348–352) որդի Յովհան եպիսկոպոսի նմանները, որոնք կանգ չէին առնում ստորութեան ու քսութեան առաջ՝ թագաւորներից նորանոր կալուածքներ կորզելու համար:

Հայաստանի պատմութեան ողբերգական այսպիսի շրջանում էր աչք բացել ու անցկացրել իր երիտասարդական տարիները Մեսրոպ Մաշտոցը: Եւ ահա, թողնելով գործակալական իր պաշտօնը մայրաքաղաքում, նա մեկնում է Գողթան գաւառ՝ հեթանոսութեան դէմ պայքարելու եւ քրիստոնէութեան հիմունքները արմատաւորելու մտադրութեամբ:

Քաջատեղեակ յունարէնին եւ ասորերէնին՝ այդ նոր քարոզչին յաջողւում է մայրենի լեզուով մեկնաբանել քրիստոնէական վարդապետութեան հիմունքները եւ Գողթան գաւառի տէրերի զինական օժանդակութեամբ արտաքսել երկրից հեթանոս քրմերին:

Քարոզչական գործունէութեան այս տարիները վճռական նշանակութիւն են ունենում Մաշտոցի համար. նրա միտքը լուսաւորւում է այն գաղափարով, որ քրիստոնէութեան տարածման ու արմատաւորման եւ ժողովրդի ինքնուրոյն գոյութեան պահպանման համար անհրաժեշտ է ունենալ հայերէն գիր ու գրականութիւն:

Վերադառնալով Վաղարշապատ՝ Մաշտոցը իր մտքերին հաղորդակից է դարձնում Սահակ Պարթեւ կաթողիկոսին եւ արժանանում հաւանութեան: Հայերէն գիր ու գրականութիւն ստեղծելու անհրաժեշտութիւնը գիտակցւում է նաեւ Վռամշապուհ թագաւորի կողմից: Վերջինս յայտնում է, որ ամն ասորի Դանիէլ եպիսկոպոսի մօտ, ըստ որոշ լուրերի, կան ինչ-որ «հայկական գրեր»:

Մաշտոցի ու Սահակի խնդրանքով մարդ է ուղարկւում Դանիէլ եպիսկոպոսի մօտ, եւ ստացւում են այդ գրերը: Մաշտոցը, հաւաքելով մի խումբ մանուկներ, սկսում է սովորեցնել նրանց այդ «յանկարծագիւտ» գրերը, բայց շուտով համոզւում է, որ դրանք անկատար են, անբաւարար՝ հայոց լեզուի հնչիւններն ու վանկերը լրիւ արտայայտելու համար[1]:

Օգուտ չստանալով դանիէլեան գրերից՝ Մաշտոցը չի վհատւում, այլ առաւել վճռականութեամբ լծւում է հայերէն գրերի ստեղծման գործին: Իր հետ վերցնելով մի խումբ պատանիներ՝ թագաւորի հրամանով նա մեկնում է Ասորիքի Եդեսիա եւ Ամիդ քաղաքները՝ ասորի գիտնականների հետ խորհրդակցելու եւ իր աշակերտներին ասորական ու յունական կրթութիւն տալու նպատակով:

Ասորիքի մշակութային կենտրոնները, մանաւանդ Եդեսիան, իրենց նշանաւոր

1 Դանիէլեան այս գրերի ծագման, քանակի ու սիստեմի մասին ինչպէս միջնադարում, այնպէս էլ նորագոյն պատմագիտական երկերում տարբեր եւ իրարամերժ տեսակէտներ են արծարծուել: Մենք հակուած ենք ընդունելի համարելու մեծանուն հայագէտ Հ. Աճառեանի ենթադրութիւնն այն մասին, որ դանիէլեան այդ գրերը հայկական են համարուել թիւրիմացաբար՝ շփոթելով արամեան կամ արմէնական (հայկական) եւ արամէական համահնչիւն անուանակոչումները. ուստի եւ Մաշտոցի տրամադրութեան տակ սկզբից դրուել են ոչ թէ իրօք հայերէնի համար ստեղծուած ինչ-որ նշանագրեր, այլ արամէական այբուբենների մի տարատեսակ: Հանրայայտ է, որ արամէական այբուբենները պարունակում էին ընդամէնը 22 տառանիշ. բնականաբար, նրանցով անհնար պիտի լինէր հայերէն լեզուով դպրութիւն զարգացնել: Այս ենթադրութեան լոյսի տակ հասկանալի են դառնում Կորիւնի (նոյնպէս տարբեր մեկնաբանութիւնների տեղիք տուած) խօսքերն այն մասին, որ դանիէլեան նշանագրերը «յայլոց դպրութեանց թաղեալք (կամ քաղեալք) եւ յարուցեալք դիպեցան»:

դպրոցներով վաղուց ի վեր գրաւում էին հայ երիտասարդներին: «Այդ քաղաքում, ժամանակակից մի վկայութեամբ, աստուածային զգամամբ հիմնարկուած էին մերձակայ երկրների համար ասորերէն լեզուի դպրոցներ»: Նոյն աղբիւրում յիշատակուած են ի մասնաւորի ասորի, հայ եւ պարսիկ դպրոցներ՝ իրարից զատ[1]:

Ուշագրաւ է նաեւ Ղ. Փարպեցու մի վկայութիւնն այն մասին, որ մինչեւ գրերի գիւտը հայ պատանիները «բազում թօշակօք եւ հեռագնաց ճանապարհօք եւ բազմաժամանակեայ դեգերմամբ մաշէին զաւուրս իւրեանց ի դպրոցս ասորի գիտութեան[2]:

Եդեսիայի Բաբիլաս (իմա՝ Ռաբուլաս) եւ Ամիդի Ակակիոս եպիսկոպոսները Մաշտոցին ընդունում են հաճութեամբ եւ ըստ կարի նպաստում իր մեծ նպատակին հասնելու համար:

Մաշտոցը, «բազում աշխատութեանց համբերեալ», այնտեղ ուսումնասիրում է կիրառութեան մէջ եղող, ինչպէս եւ գործածութիւնից դուրս եկած բազմաթիւ այբուբեններ, խորամուխ լինում նրանց առաւելութիւններին ու թերութիւններին, վերլուծում հայերէնի հնչիւնական համակարգը, պարզում նրա բոլոր առանձնայատկութիւնները եւ այլն եւ այլն:

Գիտական խորաքննին այս հետազօտութիւնները Մաշտոցին բերում են այն մտքին, որ առկայ այբուբեններից եւ ոչ մէկը չի կարող հիմք հանդիսանալ հայերէնի համար. անհրաժեշտ է ստեղծել նոր ու ինքնուրոյն այբուբեն:

Իր առաջ դրուած գիտական խնդիրը Մաշտոցը լուծում է հանճարեղ խորաթափանցութեամբ. «Հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ եւ սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին: Եւ անդ վաղվաղակի նշանակեալ, անուանեալ եւ կարգեալ՝ յօրինէր սիղոբայիւք կապօք»[3]:

Կորիւնի այս նախադասութիւնը Մաշտոցի կատարած գործի էութիւնը հասկանալու համար վճռական նշանակութիւն ունի: Այստեղ հէնց սկզբից ասուած է, որ ստեղծուած նշանագրերը նոր էին, այլ խօսքով՝ չէին փոխառուած կամ պատճէնահանուած գոյութիւն ունեցող այբուբեններից, ստեղծուած էին նոր ի նորոյ: Շեշտում ենք այս հանգամանքը, որովհետեւ եղել են ու այժմ էլ կան գիտնականներ, որոնք ճգնել ու ճգնում են աշխարհում գոյութիւն ունեցած բոլոր այբուբենների տառաձեւերի միջից (յաճախ դրանք վերից վար կամ աջից ձախ ու ձախից աջ շրջելով ու զանազան ձեւափոխութիւններ կատարելով) գտնել հայերէն այս կամ այն տառը յիշեցնող մի նշան եւ պատահական նմանութիւնների հիման վրայ որոշել մեր այբուբենի կամ նրա տառերի մի մասի «սկզբնաղբիւրը»: Այդ գիտնականները մոռանում են, որ այբուբենի ստեղծման գործի դժուարութիւնը տառաձեւեր ընտրելու մէջ չէ բնաւ, այլ՝ լեզուի հնչիւնակարգի ճիշտ որոշման:

Վերը Կորիւնից մէջբերուած նախադասութեան մէջ այնուհետեւ ասուած է, որ Մաշտոցը նորաստեղծ այբուբենը «նշանակեց, անուանեց ու դասաւորեց, յօրինեց սիղոբաներով-կապերով»: Այս կարեւոր հատուածը լուսաբանուած է շատերի կողմից. նախընտրելի ենք համարում Մ. Աբեղեանի տուած բացատրութիւնը, ըստ որի՝ նշանակեց (նշանակեալ)

1 Յ. Տաշեան, Վարդապետութիւն առաքելոց անվաւերական կանոնաց մատենանը, Վիեննա, 1896, էջ 195–196

2 Ղ. Փարպեցի, էջ 13

3 Կորիւն, Վարք Մաշտոցի, ... ի ձեռն Մ. Աբեղեանի, Երեւան, 1941, էջ 48: Այս հատուածն Աբեղեանը թարգմանում է այսպէս. «Նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր եւ սքանչելի ծնունդներ՝ հայերէն լեզուի նշանագրեր: Եւ այնտեղ շուտով նշանակեց, անուանեց եւ դասաւորեց, յօրինեց սիղոբաներով-կապերով» (էջ 49):

տերմինի տակ պէտք է հասկանալ «հնչիւնի նշան ստեղծել», այսինքն՝ տառաձեւի արտաքին գծագրութիւնը յօրինել: Անուանեց տերմինը անշուշտ վերաբերում է տառերի անուանակոչութեանը՝ այբ, բեն, գիմ, դա, եչ եւ այլն: Կարգաւորեց (կարգեաց) տերմինը եւս հասկանալի է եւ վերաբերում է Հայոց այբուբենի տառերի դասաւորութեանը այբ-ից մինչեւ քէ (գուցէ եւ դրանց թուական արժէքներ տալուն): «Յօրինեց սիղոբաներով-կապերով» արտայայտութեան տակ, դարձեալ ըստ Մ. Աբեղեանի, պէտք է հասկանալ «գիր կապ» կարդալու եղանակի, այլ խօսքով՝ կարդալ սովորեցնելու սկզբունքների մշակումը:

Կորիւնը Մաշտոցի ստեղծած այբուբենը կոչում է սքանչելի: Իր մեծ ուսուցչին ներբողող երախտապարտ աշակերտի կողմից նետուած գովասանական մի խօսք չէ այդ: Հայկական այբուբենն իրօք սքանչելի եղաւ, այն առաւել յարմարն է բոլոր այբուբեններից եւ, ինչպէս իրաւացիօրէն նշում են մասնագէտները, ներկայացնում է գրի զարգացման ամենաբարձր աստիճանը.

1. Այն ունի ձախից աջ գրութիւն, որն աջից ձախ կամ վերից վար գրութեան նկատմամբ ունի մի շարք առաւելութիւններ:

2. Այն հիմնուած է կատարեալ հնչիւնական սկզբունքի վրայ. հայերէնի ամէն մի հնչիւն իր առանձին տառն ունի այբուբենում, եւ ամէն տառ միայն մէկ հնչիւնի արտայայտիչ է:

3. Այն հիմնուած է գրութեան անջատական սկզբունքի վրայ, ուստի ամէն մի տառ, գրուելիս լինի նա բառասկզբին, բառամիջում, թէ բառավերջին, մէկ եւ անփոփոխ գրութեան ձեւ ունի՝ ի տարբերութիւն պահլաւական ու ասորական, ինչպէս եւ յետագայում ստեղծուած արաբական այբուբենների:

Իր գործը յաջողութեամբ Եդեսիայում աւարտելուց յետոյ Մաշտոցը մեկնում է Սամոսատ: Այստեղ նա դիմում է Հռոփանոս անունով մի գեղագիր յոյն գրչի («գրիչ ումն հելլենական դպրութեան»)՝ նորաստեղծ տառերը գեղագրչութեան արուեստին համապատասխան գծագրել տալու եւ այդ արուեստն իր հետ տարած աշակերտներին սովորեցնելու խնդրով[1]:

Մաշտոցը պատմական իր առաքելութիւնը կատարել էր գերազանց յաջողութեամբ: «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ» ծրագրային բառերը մագաղաթի վրայ գրուելով՝ հայ ժողովուրդը ստացաւ իր ինքնագոյութեան հզօր լծակը. բացուեց հայ ժողովրդի դարերով կաշկանդուած լեզուն, եւ նա, հաղորդակից լինելով աշխարհի առաջաւոր ժողովուրդների ստեղծած մշակութային արժէքներին, աննկուն կորովով լծուեց ստեղծագործական աշխատանքի՝ հարստացնելով համաշխարհային մշակոյթը ինքնատիպ ու բարձր արժէքներով:

Ասորիքում Մաշտոցն այլեւս գործ չունէր: Հաւանաբար 405 թուականին իր աշա-

1 Մաշտոցի ու Հռոփանոսի համատեղ աշխատանքի մասին եւս տարբեր ենթադրութիւններ են արուել: Ոմանց կարծիքով՝ Հռոփանոսը եղել է քերական, եւ նրա օգնութեամբ Մաշտոցը դասակարգել է իր ստեղծած այբուբենի տառերը յունական քերականական գիտութեան սկզբունքներին համապատասխան, պարզել է, թէ որ ձայնաւորներն են կարճ կամ երկար, որ բաղաձայններն են լերկ, միջակ կամ թաւ եւ այլն: Այլ գիտնականներ կարծել են, թէ Հռոփանոսն օգնել է Մաշտոցին հայ գրերի տեսակներ (երկաթագիր, բոլորգիր, շղագիր եւ այլն) ստեղծելու գործում եւ այլն: Կորիւնի պատումից, սակայն, այլ բան չի կարելի եզրակացնել, քան այն, որ Հռոփանոսը, որպէս ճարտար մի գրիչ, բարետեսիլ եւ ընդօրինակութեան համար յարմար գծագրական տեսք է տուել արդէն յօրինուած հայկական տառերին եւ գրչութեան արուեստ սովորեցրել այդ նպատակով Սամոսատ տարուած հայ պատանիներին: Այս եզրակացութիւնը ամրապնդւում է Կորիւնի այն վկայութեամբ, որի համաձայն հէնց Հռոփանոսն է մագաղաթի վրայ անցկացրել Մաշտոցի թարգմանչական գործունէութեան երախայրիք տողերը՝ հայերէն գրուած առաջին նախադասութիւնը, որն ունեցել է ծրագրային նշանակութիւն՝ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

կերտների հետ միասին նա վերադառնում է Հայրենիք[1]: Վաղարշապատից ոչ հեռու, Ռահ գետի ափին, Վռամշապուհ թագաւորը եւ Սահակ կաթողիկոսը նախարարների, զօրքի եւ ժողովրդի հետ միասին ցնծագին դիմաւորում են յաղթանակով վերադարձող Մաշտոցին եւ բարձր ոգեւորութեամբ, տօնական խրախճանքներով առաջնորդում նրան մայրաքաղաք:

Մաշտոցն այն մարդը չէր, սակայն, որ պէտք է հանգիստ նստէր վաստակած դափնիների շուքի տակ: Սկսւում է նրա կեանքի մի նոր, ոչ պակաս արդիւնաւէտ ու օգտաշատ շրջանը: Անհանգիստ այդ հանճարը, շրջապատուած իր մերձաւոր աշակերտներով, ծաւալում է ծրագրուած մի գործունէութիւն՝ հայերէն գիրը տարածելու, հայրենի երկրի բոլոր ծայրամասերում դպրոցներ հիմնելու, հարեւան ու ազգակից ժողովուրդներին իր հանճարից բաժին հանելու, յունարէնից ու ասորերէնից թարգմանութիւններ կատարելու եւ վերջապէս՝ հայ ինքնուրոյն գրականութեան հիմնաքարերը դնելու ուղղութեամբ:

Նա անձամբ լինում է Մարաց կողմերում (Նախճաւանի շրջան), իր երբեմնի քարոզչութեան վայրում՝ Գողթան գաւառում, Սիւնեաց աշխարհում, բիւզանդական տիրապետութեան տակ ընկած հայկական շրջաններում, Վրաստանում, Աղուանքում, Գարդմանքում, Տաշիրքում եւ այլ վայրերում, ամէնուրեք ծաւալում լուսաւորական իր գործունէութիւնը՝ դպրոցներ հիմնում, ուսուցիչներ կարգում, գրագիտութիւն տարածում:

Այսպիսով, նա հանդիսանում է նաեւ հայագիր դպրոցի հիմնադիրն ու մեծ ուսուցիչը:

Մաշտոցի մասին գրուել են մի քանի տասնեակ մեծ ու փոքր ուսումնասիրութիւններ: Գրերի գիւտի հետ կապուած ամէն մի մանրամասնութիւն իրաւամբ գրաւել է հայագէտների ուշադրութիւնը, սակայն Մաշտոցի գործունէութեան ոչ պակաս արգասաւոր բնագաւառը,

1 Մաշտոցի Վաղարշապատ վերադառնալը, ուստի եւ հայ գրերի ու դպրութեան ստեղծումը, ըստ Կորիւնի, տեղի է ունեցել Վռամշապուհի թագաւորութեան վեցերորդ տարում: Իր «Վարքի» վերջում տառերի գիւտի թուականի մասին Կորիւնը հաղորդում է նաեւ ժամանակագրական այլ կոորդինատներ: Ըստ այդմ, գրերի գիւտը տեղի է ունեցել պարսից արքայ Հազկերտի գահակալութեան 8-րդ տարում եւ Մաշտոցի մահուանից (440 թ. փետրուարի 17) 35 տարի առաջ:

Թւում է, թէ բազմատեսակ ժամանակագրական այս կռուանները բաւարար պէտք է լինէին հայ գրերի գիւտի տարեթուի ստոյգ որոշման համար: Սակայն բնաւ այդպէս չէ. նախ՝ սկզբնաղբիւրներում վստահելի տուեալներ չկան որոշելու համար, թէ երբ են գահակալել Վռամշապուհը եւ Հազկերտը, ուստի եւ որ թուականը պէտք է լինի մէկի գահակալութեան 6-րդ, իսկ միւսի՝ 8-րդ տարին: Խնդիրն աւելի է բարդացուել որոշ գիտնականների կողմից, որոնք որոնուող տարեթիւը գտնելու համար հիմք են ընդունել Կորիւնի այն վկայութիւնը, որի համաձայն Մաշտոցն իր գիւտը կատարել է այն ժամանակ, երբ Ամիդում եպիսկոպոս է եղել Ակակիոսը, իսկ Եդեսիայում՝ Ռաբուլասը (Կորիւնի մեզ հասած բնագրում Բաբիլաս է գրուած. այդ անունը, սակայն, համարել են Ռաբուլաս անուան աղաւաղում): Ռաբուլասը եպիսկոպոս է եղել 412 թուականից, ուստի ոմանք (Գ. Տէր-Մկրտչեան) կարծել են, թէ տառերի գիւտի հետ կապուած աշխատանքները աւարտուել են 412 թուականից յետոյ: Ուրիշներ (Ն. Ադոնց, Յ. Մանանդեան) զանազան նկատառումներով ենթադրել են, որ Կորիւնի նախնական բնագրում Ռաբուլասի փոխարէն եղած պէտք է լինի Թէոդորոս Մոպսուեստացու անունը, ուստի գիւտը կատարուել է IV դարի 90-ական թուականների սկզբներին (392-393):

Խնդիրն աւելի է խճճուել մանաւանդ այն պատճառով, որ որոշ գիտնականներ, չնայած ստոյգ տուեալների, չեն կարողացել ճիշտ որոշել Մաշտոցի մահուան տարեթիւը եւ այլն:

Այսպիսով, հայ գրերի գիւտի տարեթիւը, տարբեր գիտնականներ տարբեր ելակէտերով հաշուելով, ետ ու առաջ են տարել քմահաճօրէն՝ տարուբերելով 392-412 (նոյնիսկ 416) թուականների միջեւ:

Նորագոյն ուսումնասիրութիւնների լոյսի տակ (նկատի ունենք յատկապէս Ե. Տէր-Մինասեանի «Բանբերի» 7-րդ հատորում հրատարակուող յօդուածը) թւում է, թէ կարող ենք անտարակուսելի համարել, որ Մաշտոցի մեծ գիւտը տեղի է ունեցել իրօք նրա մահուանից 35 տարի առաջ, ուստի՝ կա՛մ 405 թուականի սկզբներին, կա՛մ էլ 404 թուականի աշնան ամիսներին:

Հայ գրականութեան ստեղծման բնագաւառում նրա վաստակը մնացել է ստուերի տակ: Այս ուղղութեամբ հետազօտութիւններ գրեթէ չեն կատարուել. առկայ ձեռագրական տուեալներն ամբողջութեամբ դեռեւս երեւան չեն հանուել ու արժէքաւորուել: Այլ խօսքով՝ հայ բանասիրութիւնը դեռ մեծ պարտք ունի տալու հայ դպրութեան հիմնադրին:

Հասկանալի է, որ ներածական այս յօդուածում հնարաւորութիւն չենք ունենալու նոյնիսկ հարեւանցիօրէն շօշափել այդ հարցերը: Սակայն մի քանի խօսք ասել, այնուամենայնիւ, անհրաժեշտ է:

Մաշտոցի գրական զբաղմունքների մասին Կորիւնը ժլատ տեղեկութիւններ է հաղորդում: Իր «Վարքի» վերջին էջերում, երկու տարբեր առիթներով անդրադառնալով այդ հարցին, նա յայտնում է, որ Մաշտոցը գրել է բազմաթիւ դիւրըմբռնելի, հոգեշահ, բազմաբովանդակ ճառեր քրիստոնէական վարդապետութեան մասին եւ խրատական թղթեր է առաքել «ընդ ամենայն գաւառս»[1]:

Մի շարք հայագէտներ յանգել են այն եզրակացութեան, որ Կորիւնի յիշատակած «յաճախագոյն, դիւրապատում» ճառերը հէնց այն (թուով 24) «Յաճախապատում» կոչուած ճառերն են, որ հասել են մեզ Գրիգոր Լուսաւորչի անունով[2]: Դրանք խրատական բովանդակութիւն ունեն. ճառախօսը բացատրում է առաքինի կեանքի պայմանները՝ բարքերի մաքրութիւն, ժուժկալութիւն, սէր, ընկերասիրութիւն, հեզութիւն, գթութիւն: Տկարներին ու աղքատներին յորդորում է տոկալ կեանքի դժուարութիւններին, ենթարկուել ի վերուստ սահմանուած կարգերին, բայց, միեւնոյն ժամանակ, զօրաւորներից ու մեծատուններից պահանջում է արդարադատութեամբ ու գթասրտութեամբ վարուել իրենցից կախման մէջ գտնուողների նկատմամբ:

Բնական ու հասարակական արհաւիրքներով Աստուած պատժում է իշխանաւորներին, երբ նրանք «արհամարհեն զօրէնս եւ զիրաւունս տնանկաց եւ զողորմութիւնս կարօտելոց եւ զճշմարտութիւնն անիրաւութեամբ ունին եւ անտես առնեն զարտասուս նեղելոց եւ ձայնի զրկելոց ոչ լսեն»[3]:

Այս ճառերն ունեն նաեւ ճանաչողական մեծ արժէք: Մի առիթով հեղինակը, օրինակ, խօսում է դարբնութեան, ոսկերչութեան եւ այլ արհեստների մասին, որոնք «ի պէտս մարդկան բնաւորեցան». արհեստաւորները մեծ պատիւ են արժանանում եւ ստանում իրենց հասանելիք վարձը, երբ կարողանում են «գեղեցկագոյն յօրինել զէնս կամ զարդս եւ կամ այլ ինչ գործուածս». եւ ընդհակառակը՝ նրանք անարգանք են կրում, տոյժի ու տուգանքի տակ ընկնում, երբ «անարգի եւ անպիտան» արտադրանք են տալիս[4]:

Հայոց կանոնագրքի միջնադարեան խմբագրութիւնների մէջ մուծուել է «Երանելոյն Մեսրոպայ Հայոց վարդապետի» խորագրով մի փոքրիկ գրուածք, որն, անտարակոյս,

1 Կորիւն, էջ 78, 90, 92

2 Այդ մասին տե՛ս Մ. Աբեղեան, Հայոց հին գրականութեան պատմութիւն, I, էջ 119-126:

Ի միջի այլոց «դպրութեան գրի» յօրինման մասին ուշագրաւ տողեր կան «Յաճախապատումի» «Վասն յօրինուածոց արարածոց» ճառի մէջ. «Նա եւ զքննութիւն արարածոց յօրինեաց որպէս զգիր դպրութեան եւ եդ անուանս, զի անուանքն զքննութիւնն տայցեն գրոյն ի միմեանց զորոշումն. եւ գիրն զբարս կարդացէ անուանն» («Յաճախապատում», էջ 89): Այս տողերը խիստ պատշաճ են Մաշտոցի գրչին:

3 «Յաճախապատում ճառք», Վաղարշապատ, 1894-96, էջ75

4 Նոյն տեղում, էջ 48

հատուած է աւելի ընդարձակ մի բնագրից: Բանասէր Ն. Ակինեանը, հրատարակելով այդ գրուածքը[1], համոզուած է եղել, որ այն «առանց տարակուսի հանուած է Մաշտոց վարդապետի մէկ ճառէն»: Գրուածքն ուղղուած է հմայութիւնների դէմ եւ ազգագրական որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում. հեղինակը թուարկում է իր ժամանակ գոյութիւն ունեցող հմայութեան տարբեր ձեւերը («երազք եւ հմայք եւ յուռութք եւ բաշխադանք եւ դիւթութիւնք եւ թովչութիւնք եւ հարցուկք եւ ձեռնածուք եւ դեղահատք եւ խաւիրք եւ որ ինչ նման են սոցին») եւ յայտնում, որ բոլոր նրանք, ովքեր հաւատում կամ իրենք իսկ կատարում են այդպիսի հմայութիւններ, «նզովեալ են ի սուրբ եկեղեցւոյ եւ արտաքս ընկեցեալ յաստուածային հրամանաց»:

Եթէ նկատի առնենք այս բեկորի պարզ շարադրանքը, ուսուցողական բնոյթը, ուղղակի կոչումներն իր ունկնդիրներին («մի՛ վարել հմայիւք», «մի՛ երթալ զհետ երազոց», «մի՛ ոք զՅովսէփ եւ զԴանիէլ բերցէ ի մէջ» եւ այլն), կարելի է գալ այն եզրակացութեան, որ այն քաղուածք է ոչ թէ Մաշտոցի մի ճառից, այլ նրա «խրատագիր եւ զգացուցիչ» շրջաբերական թղթերից: Յետագայ որոնումներով թերեւս երեւան գան այդ կարգի նոր հատուածներ, գուցէ նաեւ ամբողջական թղթեր:

Հայերէն ձեռագրերից մի քանիսում պահպանուել է ազգագրական առումով խիստ հետաքրքրական մի գրուածք՝ ուղղուած հայ հեթանոսական հաւատալիքների դէմ. այն կրում է «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթեւի, դարձեալ հարցումն եւ պատասխանիք նորա» խորագիրը:

Այս գրուածքի մի կարեւոր մասը, աննշան փոփոխութիւններով, մուտք է գործել Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի» մէջ:

Կան անժխտելի հիմքեր՝ պնդելու համար, որ հայ մատենագրութեան հնագոյն այդ յուշարձանը շարադրուել է «Եղծ աղանդոցից» առաջ, ուստի Եղնիկն է օգտուել նրանից եւ ո՛չ հակառակը: Կան նաեւ բաւարար հիմքեր՝ եզրակացնելու համար, որ այդ յօդուածը Մաշտոցի գրչին է պատկանում եւ վերագրուել է Գրիգոր Լուսաւորչին յետագայում (ինչ-պէս «Յաճախապատում» ճառերը) գրուածքի հեղինակութիւնը բարձրացնելու միտումով:

Արժէքաւոր այդ աշխատութեան նպատակն է եղել հերքել Հայաստանում դեռեւս կենսունակ հեթանոսական հաւատալիքներն ու զրոյցները քրիստոնէական վարդապետութեան տեսանկիւնով[2]:

Եօթներորդ դարի մատենագիր Եղնիկ քահանայի կազմած հայ կաթողիկոսների եւ թագաւորների ցանկում կայ այսպիսի մի ցուցում. «Կարգ գործոցն Գրիգորի նորոգեալ արամբ միով երանելեաւ Տարաւնացւոյ, որում անուն Մեսրովպ ճանաչէր»: Այս վկայութեան հիման վրայ ակադ. Ն. Մառը ենթադրել է, թէ «Հայկական աւանդութեամբ Մեսրոպին է վերագրւում յունական քարոզիչ ս. Գրիգորի մասին եղած առասպելի մշակումը»[3]: Ն. Ադոնցը եւս, Գրիգոր Լուսաւորչի մասին վարքաբանական նիւթերի հաւաքման ու շարադրման հանգամանքներին անդրադառնալով, ենթադրել է, որ այդ գործն առաջին

1 «Հանդէս ամսօրեայ», 1958, էջ 379-381

2 Ուշագրաւ այդ աշխատութեանն է նուիրուած մեր «Գրիգոր Պարթեւին վերագրուած «Հարցումը» որպէս հայ մատենագրութեան երախայրիք» յօդուածը:

3 Н. Марр, Крещение армян, грузин, абхазов и аланов св. Григорием, арабская версия, СПб., 1905, с. 174-182

անդամ կատարած պէտք է լինի Մաշտոցը[1]։ Եթէ յետագայ պրպտումներով նոր տուեալներ երեւան բերուեն այս թեզն ապացուցելու համար, որ անհաւանական չէ, ապա կպարզուի, որ Մաշտոցը եղել է նաեւ հայ առաջին վարքագիր-պատմագիրը։

Ձեռագիր եւ տպագիր Շարակնոցներից շատերի մէջ պահպանուած է մի միջնադարեան ցանկ շարականների հեղինակների մասին («Որք զծորանս հոգւոյն արբին եւ ըստ ժամանակս ժամանակս երգեցին զեղանակաւոր երգս շարականաց»)։ Այդ ցանկում ասուած է, որ «սուրբն Մեսրոպ (ասաց) զկարգն ապաշխարութեան»[2]։

Մեծավաստակ հայագէտ, ակադեմիկոս Մ. Աբեղեանը իր «Հայոց հին գրականութեան պատմութիւն» դասական աշխատութեան առաջին հատորում, ինչպէս եւ 1912 թուականին «Արարատ» ամսագրում տպագրած յօդուածաշարի մէջ, հետազօտելով հայ հին հոգեւոր երգերը, յանգել է այն եզրակացութեան, որ «Ապաշխարութեան կարգի» երգերը իրօք կարող են գրուած լինել Մաշտոցի կողմից[3]։

Բանասէր Ա. Մնացականեանը նոր փաստերով հաստատում է այս ենթադրութիւնը եւ ապացուցում, որ Մաշտոցին է պատկանում նաեւ «Երից մանկանց» շարականների հնագոյն մասը[4], ուստի մենք այսօր հնարաւորութիւն ունենք մեծարելու մեր դպրութեան հիմնադրին՝ նկատի ունենալով նաեւ նրա գեղարուեստական ստեղծագործութիւնները։

Բացի վերոյիշեալ երգերից, Մաշտոցն, անշուշտ, գրել է նաեւ այլ հոգեւոր բանաստեղծութիւններ։ Դրանցից երկուսը յայտնի են մեզ Մատենադարանի N 1720 ձեռագրից (էջ 291ա–291բ, 336ա–339ա). դրանք կրում են «Աղօթք սրբոյն Մեսրոպայ Հայոց թարգմանչի» եւ «Սրբոյն Մեսրոպայ թարգմանչի ասացեալ աղօթք երրորդ ժամուն» խորագրերը։ Դրանցից մէկում Մաշտոցն ունի կենսագրական ակնարկ պարունակող այսպիսի տողեր.

Աղաչեմ զքեզ, Հոգիդ Սուրբ Աստուած,
Զի եղիցիս ինձ առաջնորդ եւ զօրացուցիչ եւ օգնական,
Շնորհեա՛ եւ ինձ լինիլ դարձուցիչ մոլորելոց,
Աղ անհամելոց, լոյս խաւարելոց։

Այս տողերը շատ են պատշաճ Մաշտոցի լուսաւորական գործունէութեանը. նա իրօք եղաւ իր ժողովրդի համար «դարձուցիչ մոլորելոց, աղ անհամելոց, լոյս խաւարելոց»։

Այսպիսով, Մաշտոցի հանճարը փայլել է ոչ միայն հայ գրերի ստեղծման իրօք տիտանական ու մեծ գործի մէջ, այլեւ նա հանդիսացել է հայ մատենագրութեան հիմնադիր, ճանաչողական ու գեղարուեստական մեծ արժէք ներկայացնող ստեղծագործութիւնների հեղինակ։

Իր կեանքի վերջին տարիներին արդէն 80-ին մօտեցած Մաշտոցը «զցայգ եւ զցերեկ», առանց դադարի շրջում էր Հայաստանի հեռաւոր անկիւնները, տարածում հայ գիրն ու դպրութիւնը, դպրոցներ բացում, նրանց յարատեւման համար միջոցներ որոնում, անդադրում

1 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, с. 342

2. Տե՛ս, օրինակ, Շարական հոգեւոր երգոց..., Էջմիածին, 1861, էջ Ա

3 «Հայոց հին գրականութեան պատմութիւն», I, էջ 491-494

4 Ա. Մնացականեանի «Մաշտոցը որպէս բանաստեղծ» յօդուածը տե՛ս «Բանբեր Մատենադարանի», N 7։

ստեղծագործում եւ սովորեցնում։ Մեծ հայրենասէր գիտնականի կեանքի թելը կտրուեց 440 թուականի փետրուարի 17-ին, շաբաթ օրը (ըստ հայկական հին տոմարի՝ մեհեկան ամսի 13-ին), Վաղարշապատ քաղաքում։

Հայոց հազարապետ Վահան Ամատունին, որ Մաշտոցի երախտաւոր աշակերտներից էր, նրա մարմինը մեծ հանդիսաւորութեամբ ու շուքով ամփոփեց Օշական գիւղում, ուր մինչեւ օրս մնում է այդ մեծ մարդու գերեզմանը։

Կան գիտնականներ, որոնք կարծում են, թէ Մաշտոցն իր գործունէութեան ընթացքում դժուարութիւններ չի կրել, դիմադրութեան չի հանդիպել, որ նա իր կենդանութեան ժամանակ իսկ պաշտելի է եղել մեր նախնիների կողմից եւ հակառակորդներ չի ունեցել[1]։ Այս տեսակէտը, իհարկէ, ճիշտ չէ։ Ե՛ւ Մաշտոցը, ե՛ւ մանաւանդ նրա աշակերտները հայ գրի եւ դպրութեան ստեղծման ու զարգացման ուղղութեամբ ծաւալած իրենց առաջադիմական գործունէութեան ընթացքում յաղթահարել են մեծ դժուարութիւններ, կրել այլազգի եկեղեցականների դիմադրութիւնը, իսկ 428 թուականից (Արշակունեաց հարստութեան բարձումից) յետոյ բախուել են նաեւ պարսից պաշտօնէութեան կողմից յարուցուած արգելքներին։

Չպէտք է մոռանալ, որ հայ պետականութեան վերացումից յետոյ պարսից արքունիքը աթոռազրկեց Սահակ Պարթեւին եւ նրա փոխարէն հայոց կաթողիկոս կարգեց ասորի հոգեւորականների։ Որ օտարազգի այդ կաթողիկոսները, յենուելով Հայաստանի մի շարք վանական հաստատութիւններում եւ թեմերում եկեղեցական բարձր պաշտօններ գրաւած իրենց ազգակից կղերականների վրայ, պէտք է հնարաւոր միջոցներով արգելակէին հայ գրի արմատաւորումն ու դպրութեան զարգացումը, այդ բխում է իրերի տրամաբանութիւնից, սակայն այդ մասին կան նաեւ հաւաստի վկայութիւններ։ Այսպէս օրինակ՝ Յովհան Մամիկոնեանի «Պատմութիւն Տարօնոյ» աշխատութեան վերջաբանում ասուած է, որ Տարօնի ամենախոշոր վանքերից մէկի՝ Գլակայ վանքի վանահայրութեան պաշտօնը մինչեւ Թոդիկ (վանահայր է եղել VI դարի վերջերին) գտնուել է ասորիների ձեռքում. «Ամենքեան ասորիք էին, եւ տունն այն ասորի գրով եւ պաշտամամբ է վարեալ, մինչեւ Թոդիկ փոխեաց զամենայն կարգս եւ զասորաց ցեղսն ընաւ հալածական արար ի վանացն»[2]։

Երկար տասնամեակներ է տեւել ասորերէնը հայ եկեղեցուց իսպառ վերացնելու եւ ասորի կղերականութեան դիմադրութիւնը կոտրելու համար, ուստի Մաշտոցի ու նրա աշակերտների կեանքի ուղին բնաւ վարդերով պատուած չի եղել։ Սակայն Մաշտոցի հանճարեղ գիւտով դարերի ընթացքում կուտակուած ու փոթորկող ժողովրդական հանճարը գտաւ հայրենի մշակոյթը ստեղծելու ուղին՝ կենսական սնունդ տալով ինքն իրեն ճանաչած, իր անկախութեան եւ ինքնութեան համար ե՛ւ սրով, ե՛ւ գրով մաքառելու անյողդողդ կամք ունեցող ժողովրդին։

Մաշտոցեան սերունդը մաքառեց այդ երկու ճակատներով։

Գրի աշակերտները՝ Եզնիկ, Կորիւն, Յովհան, Յովսէփ, Ղեւոնդ, ապա՝ Եղիշէ, Փաւստոս, Ղազար Փարպեցի, Մովսէս Խորենացի եւ բազմաթիւ ուրիշներ թարգմանեցին յունարէնից ու ասորերէնից եւ իրենք ստեղծեցին հին գրականութեան բոլոր ճիւղերին վերաբերող դասական

1 Տե՛ս, օրինակ, Ս. Մալխասեան, Մատենագիտական դիտողութիւններ, Երեւան, 1961, էջ 24-26։

2 Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երեւան, 1941, էջ 287

գործեր՝ պատմագրական, փիլիսոփայական, ճարտասանական եւ քերականական մեծարժէք երկեր: Նրանք կատարելագործեցին մայրենի գրական լեզուն եւ բարձրացրին Հայ ժողովրդի մշակոյթը դարեւոր գրականութիւն ունեցող ժողովուրդների մշակոյթի մակարդակին:

Սրի աշակերտները՝ Վարդանանք ու Վահանանք, մարտի դաշտերում պաշտպանեցին իրենց ժողովրդի պատիւը, իրենց ազգային ինքնութիւնը, իրենց նորաբողբոջ գիրն ու գրականութիւնը պարսից փղազէն բանակների դէմ:

Եւ այսպէս, յարատեւեց Հայ ժողովուրդը, յարատեւեց մեսրոպատեղծ Հայ այբուբենը, յարատեւեց Հազարամեայ Հայ մշակոյթը կենաց ու մահու անվերջ գօտեմարտերում:

ԳՐԻԳՈՐ ՊԱՐԹԵՒԻՆ ՎԵՐԱԳՐՈՒԱԾ «ՀԱՐՑՈՒՄԸ» ՈՐՊԷՍ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՐԱԽԱՅՐԻՔ*

1

Հայ մատենագրութեան Հնագոյն արտադրանքների շարքում իր պատուաւոր տեղն ունի Եզնիկ Կողբացու իմաստասիրական աշխատութիւնը, որը բանասիրութեանը յայտնի է «Եղծ աղանդոց» խորագրով:

Այն գրուել է եւ շարունակում է գրուել Հայ ու օտարազգի գիտնականների ուշադրութիւնը՝ որպէս Հայ դասական լեզուի անգերազանցելի յուշարձան եւ Հայ իմաստասիրական գրականութեան առաջին ինքնուրոյն երկասիրութիւն:

Եզնիկի ուսումնասիրողները զբաղուել են նրա աղբիւրների Հարցով եւ առ այսօր յայտնաբերել 10-ից աւելի երկեր, որոնց յունարէն բնագրերը, յաճախ ընդարձակ ու բառացի մէջբերումներով, տեղ են գտել Եզնիկի գործի մէջ:

Դեռեւս 1889 թուականին «Բազմավէպի» էջերում Հրատարակած «Եզնիկ եւ իւր երկասիրութիւնն» յօդուածում Հ. Թորոսեանն անվիճելի փաստերով ապացուցեց, որ Եզնիկի Գ գրքի Դ-Ե Հատուածները, որոնցում քննարկւում են պիւթագորեանների, պլատոնականների, ստոյիկեանների, եպիկուրեանների եւ այլոց ուսմունքները[1], բառացի քաղուած են Եպիփան Կիպրացու «Ընդդէմ Հերձուածոց» գրքից[2]:

Արժէքաւոր էին նաեւ Հ. Թորոսեանի դիտողութիւնները Եզնիկի եւ Բարսեղ Կեսարացու «Մեկնութիւն վեցօրէից» աշխատութեան առնչութիւնների մասին[3]:

Հ. Թորոսեանն իր ապացոյցները բերում էր Եպիփանի լատիներէն թարգմանութիւնից: Քիչ անց, 1892 թուականին, նոյն աշխատանքը, այս անգամ արդէն Համեմատելով Եզնիկի Գ գրքի Դ, Ե եւ Դ գրքի ԺԶ Հատուածները (1826 թ. Հրատարակութիւն, էջ 204, տող 6-208, տող 2, 296, տող 18-297, տող 15) Եպիփանի յունարէն բնագրի Համապատասխան Հատուածների Հետ, կատարեց Հ. Տաշեանը՝ «Խորովիկ եւ Գիրք Հերձուածոց» յօդուածում[4]:

1919 թուականին լոյս տեսաւ Գ. Գալեմքեարեանի «Նորագոյն աղբերք Եզնկայ Կողբացւոյ Ընդդէմ աղանդոց մատենին» արժէքաւոր աղբիւրագիտական ուսումնասիրութիւնը, որով երեւան Հանուեցին Եզնիկի Հետեւեալ նոր աղբիւրները.

1. ***Արիստիդէս Աթենացու*** *(II դար) «Ջատագովութիւնը»,*
2. ***Բարսեղ Կեսարացու*** *(IV դար) «Վեցօրէից մեկնութիւնը»,*
3. ***Մեթոդիոս Պատարացու*** *կամ* ***Ոլիմպիացու*** *(մհ. 312 թ.) «Վասն անձնիշխանու-*

* «Բանբեր Մատենադարանի», 1964, N 7, էջ 301-330

1 Եզնիկ, Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826, էջ 204-208

2 «Բազմավէպ», 1889, էջ 315-317

3 [Այդ խնդիրն այժմ քննարկուած է նաեւ Կիմ Մուրադեանի «Բարսեղ Կեսարացին եւ նրա «Վեցօրեան» Հայ մատենագրութեան մէջ» գրքում (Երեւան, 1976, էջ 205-209): Խմբ.]

4 «Հանդէս ամսօրեայ», 1892, էջ 294-295, 321-322

թեան» աշխատութիւնը,

4. **Հիպպոլիտոսից** (III դար) մի փոքրիկ հատուած:

Դէմ-դիմաց հրատարակելով Մեթոդիոսի «Վասն անձնիշխանութեան» աշխատութեան յունարէն եւ Եզնիկի հայերէն համապատասխան հատուածները, որոնք «Եղծ աղանդոցի» 1826 թուականի հրատարակութեան 44 էջերի նիւթն են կազմում՝ Գալեմքեարեանը գրում է. «Տեսնուեցաւ ուրեմն, որ Եզնիկ ս. Մեթոդիոսի «Վասն անձնիշխանութեան» գիրքն ամբողջ, ի բաց առեալ Ա եւ Բ հատուածները, ինչ-ինչ փոփոխութեամբ՝ մինչեւ վերջը թարգմանած եւ իւր գործոյն մէջ տեղաւորած է. այսինքն՝ առաջին մեծ մասն Ա գրքին մէջ՝ 40 երես ի տպագրութեան (էջ 19-58) եւ վերջին մասն Գ գրքին մէջ՝ իբր 4 երես (էջ 236-239)»[1]:

Եզնիկի փոխառած հատուածների համեմատութիւնը Մեթոդիոսի բնագրի հետ՝ հնարաւորութիւն են տալիս որոշելու մեր հեղինակի աշխատանքի մեթոդը: Լսենք դարձեալ Գալեմքեարեանին. «Եզնիկ,- գրում է նա,- իւր աղբեր այնպէս սերտօրէն կապուած է, որ կաշխատի առ հասարակ չշեղիլ աղբերէն: Աղբերէն շեղումներն, որոնց տեղ-տեղ հանդիպեցանք, են. ա) յապաւել, թողուլ այն մասերն, որ հուզուած խնդրոյն հայեցս չեն վերաբերիր, այլ տրամախօսական ձեւերն... բ) յաւելուլ, որ միջոցին Եզնկայ տկարութիւնը երեւան կ'ելլէ, վասն զի յաւելուածներն ամէնքը կրկնութիւն կամ մեկնութիւն են... արդէն բացուածներուն»[2]:

Իրաւացի էր Գալեմքեարեանը, երբ գրում էր, թէ կան հիմքեր ենթադրելու, որ Եզնիկի «գրութեան մէջ ուրիշ աղբիւրներ ալ ծածկուած պիտի ըլլան» (էջ 87):

Լ. Մարիեսն իր "Le De Deo d'Eznik de Kolb connu sous le nom de "Contre les sectes" (Paris, 1924) աշխատութեամբ Եզնիկի աղբիւրների ցանկն աւելացրեց Որիգէնի, Դիոդորի, Ադամանտիոսի, Եփրեմ Ասորու, Իրենէոսի եւ այլոց անուններով:

Նշանաւոր հայագէտ Ն. Ադոնցը Մարիեսի աշխատութեան առթիւ գրած «Քննական նշմարներ Եզնիկի մասին» ուշագրաւ յօդուածաշարում[3], ֆրանսիացի հայագէտի աշխատութեան գլխաւոր արժանիքը համարում է հէնց նոր աղբիւրների յայտնաբերումը՝ նշելով միաժամանակ, որ Եզնիկի եւ այս կամ այն հեղինակի նմանութիւնների մի մասը կարող է ընդհանուր զուգադիպումների արդիւնք լինել՝ երկուստեք կապ ունենալով մի ընդհանուր մայր աղբիւրի հետ[4]:

2

Եզնիկի առաջին գրքի ԺԵ-ԻԷ հատուածները շատ բարձր են գնահատւում Ադոնցի կողմից: Դրանք,- գրում է նա,- «ժողովրդական կենդանի միջավայրից առած թանկագին նիւթեր են, որ բերում է Եզնիկն ու լուսաբանում՝ պայքարելով հին տեսութեանց հետ, հայ ժողովրդի հաւատալիքների եւ պաշտամունքների աշխարհին վերաբերեալ հնաւանդ

1 Գ. Գալեմքեարեան, Նորագոյն աղբերք Եզնկայ Կողբացւոյ Ընդդէմ աղանդոց մատենին, Վիեննա, 1919, էջ 80

2 Նոյն տեղում, էջ 87

3 Տե՛ս «Բազմավէպ», 1925, N 7, էջ 196-200, N 10, էջ 294-298, N 12, էջ 366-371, 1926, N 1, էջ 12-17, N 3, էջ 69-72, N 4, էջ 108-113:

4 «Բազմավէպ», 1925, էջ 294-295

տեղեկութիւններ են, շողուն գոհարներ հայ փոլկլորի, որ փայլում են Եզնիկի էջերում»[1]:

Խոստանալով այդ նիւթերի ուսումնասիրութիւնը կատարել առանձին յօդուածով՝ Ն. Ադոնցն անհրաժեշտ է համարում նշել, որ Եզնիկի վերոյիշեալ էջերը «քաղուածոյ բնաւորութիւն ունին, եւ բացի արդէն յայտնի աղբիւրներից, ինչպէս օր. Հիպպոլիտը, Եզնիկն օգտուել է նաեւ մի հին յիշատակարանից, որ կոչւում է «Հարցումն եւ պատասխանիք սրբոյն Գրիգորի Պարթեւի»: Սորան է պարտական Եզնիկն մանաւանդ հայ փոլկլորի վերաբերեալ թանկարժէք նիւթերը»[2]:

Եզնիկի աղբիւր համարուած «Հարցումն եւ պատասխանիք» այդ «հին յիշատակարանը», բնագրի ֆրանսերէն թարգմանութեան եւ ուսումնասիրութեան հետ միասին, Ն. Ադոնցը լոյս ընծայեց իր խոստումից անմիջապէս յետոյ՝ "Révue de l'Orient chrétièn" պարբերականում[3]: Այստեղ ասուած է, որ խնդրոյ առարկայ բնագիրը հրատարակւում է Էջմիածնի մատենադարանի 4 ձեռագիր կանոնգրքերի հիման վրայ: Տարիներ առաջ (հաւանաբար մինչեւ 1913 թ.) Գալուստ Տէր-Մկրտչեանը (Միաբան) ուղարկուած է եղել Պետերբուրգ՝ Ն. Ադոնցին Մատենադարանի N 751 (այժմ N 659) ձեռագրում առկայ Գրիգոր Պարթեւի «Հարցման» ընդօրինակութիւնը մի տետրակով, որի լուսանցքներում նշուած են եղել 3 այլ ձեռագրերի ընթերցուածքները[4]: Դրանց հաշուառմամբ Ադոնցը կազմել է բաղդատական բնագիր՝ տողատակում նշելով ձեռագրական (ըստ մեծի մասի աննշանակ) տարընթերցուածները:

Հրատարակութեանն առընթեր ուսումնասիրութեան մէջ անուանի հայագէտը կրկին առիթ է ունենում անդրադառնալու ուշագրաւ այդ բնագրի եւ Եզնիկի առնչութիւնների հարցին եւ յանգում է այն եզրակացութեան, որ մեծ հաւանականութեամբ «Գրիգորի Հարցումը հնութեան հազուագիւտ բեկոր է, որ իր ժամանակին մօտ, կլանուել է գրեթէ ամբողջովին Եզնիկի գործի մէջ, բայց դիպուածով պահել է եւ իր անհատական գոյութիւնը՝ թաքնուելով կանոնգրքի ծալքերում»[5]:

Ի նպաստ այս եզրակացութեան՝ բերուող ծանրակշիռ փաստերն ու դատողութիւնները մանրամասնօրէն շարադրուած են Ն. Ադոնցի ուսումնասիրութեան մէջ, ուր եւ յղում ենք ընթերցողին[6]: Մեր կողմից, սակայն, լրացման կարգով անհրաժեշտ ենք համարում նոր փաստեր մէջբերել:

1 Նոյն տեղում, էջ 366

2 Նոյն տեղում, էջ 366-367

3 **Adontz N.**, Le questionnaire de sant Grégoire l'illuminateur et ses rapports avec Eznik (Révue de l'orient chrétien. Troisième série, tome V (XXV), 1925-1926, N 3, 4, p. 309-357)

Այս աշխատութեան ուսումնասիրական բաժնի հեղինակի իսկ կատարած թարգմանութիւնը լոյս տեսաւ «Հայրենիք» ամսագրում (1928, N 7, էջ 72-81):

Նշենք այստեղ, որ Ադոնցին ծանօթ չեն եղել իր հրատարակած բնագրի այն հատուածները, որոնք տպագրուել են դեռեւս 1873 թուականին Ա. Մխիթարեանի կողմից (տե՛ս «Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ՝ հանդերձ կանոնադրութեամբ ի պէտս ժառանգաւորաց, աշխատասիրեալ Աբէլ արքեպիսկոպոս Մխիթարեանց, ի Վաղարշապատ», 1874, էջ 23-24, նոյնը նաեւ՝ «Արարատ», 1873, էջ 408-409):

4 Այդ ձեռագրերն են՝ B – N 761 (այժմ N 778), C – N 458 (ըստ Գեւորգեան ցուցակի՝ այժմ N 2886), D – N 749 (այժմ N 657):

5 «Հայրենիք», 1928, N 7, էջ 73

6 "Révue de l'Orient chrétièn", tome V (XXV), 1925-1926, N3 et 4, p. 341-349. «Հայրենիք», 1928, N 7, էջ 74-78

Եզնիկի աղբիւրներից շատերը տրամախօսական կառուցուածք են ունեցել: Այդպիսին են, օրինակ, Մեթոդիոս Օլիմպիացու «Վասն անձնիշխանութեանը», Ադամանտիոսի «Յաղագս ուղիղ հաւատոյ յԱստուած» եւ այլք:

Ըստ որում, ինչպէս նկատել է Գ. Գալեմքեարեանը՝ ուսումնասիրելով Մեթոդիոսից Եզնիկի արած քաղուածքները, «Եղծ աղանդոցի» հեղինակն ամէն կերպ ձգտել է փոխել իր աղբիւրի տրամախօսական ձեւը («Եզնիկ,- գրում է նա,- իւր աղբիւրը բոլորովին կը լքէ եւ կ'աշխատի ամենայն եղանակաւ իւր աղբեր տրամախօսական ձեւը ջնջել»)[1]:

Ճիշտ նոյն պատկերն ենք ստանում՝ համեմատելով «Հարցումի» ու Եզնիկի զուգակշիռ հատուածները: «Հարցումի» մէջ կան այսպիսի տողեր. «Հարցումն. Մեղաւորք վասն մեղաց տանջին, իսկ տղայոց անմեղաց զի՞ տիրիցեն ցաւք. Պատասխանի. Զամենայն մարդ յորդեգրութիւն կոչէ Աստուած...» եւ այլն:

Այս նոյն հատուածը Եզնիկի գրչի տակ ձեւափոխուել ու ստացել է այսպիսի կերպարանք. «Այս ասացաւ վասն հարցանելոյ ոմանց, թէ մեղաւորք վասն մեղաց տանջիցին ի ցաւսն, տղայոցն անմեղացն ընդէ՞ր տիրիցեն ցաւք: Զամենայն մարդիկ յորդեգրութիւն կոչէ Աստուած...» եւ այլն:

Ինչպէս պարզ երեւում է, առաջին աղբիւրում տրուած է հարց եւ ապա նրա պատասխանը, իսկ Եզնիկի մօտ կայ միայն ակնարկ այն մասին, որ «այս ասացաւ վասն հարցանելոյ ոմանց». «Հարցումի» տրամախօսական կառուցուածքի փոփոխութեան դէպքում միայն՝ շարադրութիւնը կարող էր ստանալ այսպիսի կերպարանք:

Այս կարգի փոփոխութիւնները շատ են: Ծանօթանանք մի քանիսին

«Հարցումն»	Եզնիկ
Հրց. Դիւահարութեան պատճառ զի՞նչ է մարդկան.	-Եւ դիւահարութիւնք վասն հպարտութեան մարդկան լինին...
Պտխ. Վասն հպարտութեան մարդկան լինի...	
Հրց. Ծնունդք են դիւաց եւ մահ, աճեն եւ պակասեն:	-Եւ արդ, քանզի անմարմինք են հրեշտակք եւ դեւք, յայն սակս եւ ծնունդք ոչ գոն նոցա... Նախ զայն տեսցուք, թէ բնաւ գուցե՞ն այլ ինչ արարածք բանաւորք քան զհրեշտակս եւ զդեւս եւ զմարդիկ...
Պտխ. Նախ զայն տեսցուք, թէ գո՞ն այլ արարածք բանաւորք քան զհրեշտակս եւ զմարդիկ եւ զդեւս...	
Հրց. Ասեն քաջաց եւ վիշապաց տեարք (իմա՛ տաճարք) են ի լերինս բարձունս եւ բնակութիւնք, եւ զԱղէքսանդր կապեալ ունին ի Հռոմ եւ զԱրտաւանդ ի Մասիս եւ զԱրուանդ ի գետս եւ ի մառանս.	-Եւ ոչ որս երբէք՝ որպէս մարդկան՝ արարեալ վիշապաց, կամ առնիցեն. եւ ոչ տաճարք իբրեւ մարդկան են նոցա ի բնակութիւն: Եւ ոչ զոք ի թագաւորազգեաց եւ ի դիւցազանց ունին կապեալ առ իւրեանս կենդանի, զի կենդանիք ի մարմնաւորաց երկուն եւեթ կան, Ենովք եւ Եղիա...
Պտխ. Յորդւոց մարդկան կենդանի են Ենովք եւ Եղիայ...	

1 Գ. Գալեմքեարեան, նոյն տեղում, էջ 86

Զուգակշիռ այս հատուածները նոյնպէս վկայում են այն մասին, որ սկզբնաղբիւրը «Հարցումն» է. Եզնիկը ջանք է թափում փոխելու իր աղբիւրի տրամախօսական կառուցուածքը՝ յարմարեցնելով այն իր երկասիրութեան ձեւին: Ուշագրաւ է յատկապէս բերուած օրինակներից վերջինը. «Հարցումի» հեղինակն այդ հատուածում յիշատակում է քաջերի ու վիշապների կողմից արգելափակուած առասպելական հերոսներին (Աղեքսանդր, Արտաւազդ, Արուանդ), իսկ Եզնիկը անունները չի տալիս, բայց ակնարկում է նրանց «ոչ ոք ի թագաւորազգեաց եւ ի դիւցազանց» արտայայտութեամբ:

«Հարցումի» սկզբնաղբիւր լինելը հաստատւում է նաեւ հետեւեալ փաստով. Եզնիկի «զծովացուլն, զոր ի կովէ ելեալ ասեն եւ զպայն՝ իմն ի մարդկանէ եւ զաւլէզն՝ ի շանէ» նախադասութեան սկզբնագրում, այսինքն՝ «Հարցումի» մէջ, այն շարունակուած է «եւ զխանդիռն ի յիշոյ եւ զնահանգն ի ձիոյ» բառերով: Խանդիռ նորալուր առասպելական կենդանու անունը չի գործածուած հայ մատենագրութեան որեւէ այլ յուշարձանում: Հայ աղբիւրները, որոնց շարքում նաեւ Եզնիկը, անտեղեակ են կամ լռում են այն մասին, որ նհանգը ձիու յատկանիշներով է պատկերացուել ժողովրդի կողմից, ուստի եւ «Հարցումի» հեղինակն այդ տուեալները չէր կարող քաղած լինել Եզնիկից, իսկ Եզնիկը կարող էր այս կամ այն պատճառով չմէջբերել իր աղբիւրի վերոյիշեալ հատուածն ամբողջութեամբ, ինչպէս նա վարուել է մի շարք այլ դէպքերում եւս:

Կարեւոր է նաեւ հետեւեալ փաստի մատնանշումը. Եզնիկի մէջբերումներն Աստուածաշնչից համապատասխանում են մեզ հասած բնագրին, սակայն «Հարցումի» հեղինակն ամենայն հաւանականութեամբ իր ձեռքի տակ ունեցել է Հին եւ Նոր Կտակարանների թարգմանութեան հնագոյն մի օրինակ, որն իր որոշ մասերում ունեցել է շօշափելի տարբերութիւններ:

Այսպէս օրինակ՝ Եզնիկը մէջբերում է Պետրոսի առաջին թղթի Դ գլխի 18-րդ համարը ճիշտ այնպէս, ինչպէս գտնում ենք մեզ հասած Աստուածաշնչի օրինակներում՝ «Արդարն հազիւ կեցցէ, ամբարիշտն եւ մեղաւորն ո՞ւր գտանիցին» ձեւով (էջ 83):

Սակայն «Հարցումի» մէջ այդ նոյնը բերուած է այլ խմբագրութեամբ. «Արդարն հազիւ կեցցէ, իսկ ամպարիշտն ո՞ւր ապրի»:

Եզնիկն, իհարկէ, կարող էր փոխել իր աղբիւրի մէջ եղող աստուածաշնչեան հատուածը՝ համապատասխանեցնելով այն Եօթանասնից թարգմանութեան յունարէն բնագրի հիման վրայ Աստուածաշնչի նախնական թարգմանութեան իր իսկ մասնակցութեամբ կատարուած խմբագրութեանը. իսկ հակառակը պատկերացնել դժուար է. «Հարցումի» հեղինակը չէր կարող Եզնիկի ճիշտ մէջբերումը Աստուածաշնչից քմահաճօրէն փոխել[1]: Վերոյիշեալ փաստերը բաւարար են՝ համոզուելու համար, որ «Հարցումն» է սկզբնաղբիւրը «Եղծ աղանդոցի» համապատասխան հատուածների:

1 «Հարցումի» մէջ Աստուածաշնչից արուած քաղուածքները տարբերւում են հայկական թարգմանութեան կանոնական բնագրից նաեւ մի քանի այլ դէպքերում. Ղուկասի ԻԲ 31 համարը՝ «Սատանայ խնդրեաց զձեզ խարբալել», «Հարցումի» մէջ վկայակոչուած է միանգամայն տարբեր թարգմանութեամբ. «Խնդրեաց սատանայ մաղել զձեզ» (մաղել փխ խարբալել):

Եբրայեցոց թղթի Ժ 26 համարը նոյնպէս այլ խմբագրութեամբ է մէջբերուած «Հարցումի» մէջ: Կանոնական բնագրում այդ հատուածն այսպէս է. «Կամակար մտօք եթէ յանցանիցեմք յետ ընդունելութեան գիտութեան ճշմարտութեանն, այնուհետեւ ոչ եւս պիտոյ է-վասն մեղաց պատարագ»: Ընդգծուած ճշմարտութեան բառը բացակայում է «Հարցումից», իսկ ոչ եւս պիտոյ է-ի դիմաց այնտեղ գրուած է՝ անաւգուտ է:

3

Ե՞րբ է ստեղծուել Գրիգոր Պարթեւին կամ Լուսաւորչին վերագրուած այս արժէքաւոր երկը: Այս հարցը, բնականաբար, հուզել է Ն. Ադոնցին: «Բազմավէպում» հրատարակուած վերոյիշեալ այս յօդուածաշարում այդ կապակցութեամբ նա գրել է. «Արդեօք հնարաւո՞ր է հայ փոլկլորի թանկագին էջերը պարունակող «Հարցումն Գրիգորի» յիշատակարանը, որ աղբիւր է ծառայել Եղծ աղանդոցին, տանել եւ զետեղել հայ դպրութեան արեւածագին»[1]:

Որոշակի պատասխան Ն. Ադոնցը խուսափել է տալ՝ յայտնելով, որ դրանք «դժուար հարցեր են՝ սերտօրէն կապուած հայ դպրութեան ծագման բարդ հարցին»[2]: Այնուամենայնիւ նրա մտորումների ուղղութիւնը պարզ է դառնում տարբեր մէջբերուող արտայայտութիւնից. «Խոստովանելու է, որ Եզնիկն աւելի բախտաւոր վիճակի մէջ չէ, քան Փաւստոսը, Եղիշէն, Յաճախապատումը, Ագաթանգեղոսը, եւ գտնւում է նրանց հետ միեւնոյն ցանցի մէջ»[3]:

Մշուշապատ է ասուած, բայց հասկանալի. Ն. Ադոնցի կարծիքով ուրեմն՝ ինչպէս Փաւստոսի, Եղիշէի, Ագաթանգեղոսի պատմագրական երկերի ու «Յաճախապատում ճառքի», այնպէս էլ Եզնիկի «Եղծ աղանդոցի» ստեղծման ժամանակի խնդիրը կարօտ է նոր լուսաբանութիւնների: Այդ երկերը, Ադոնցի կարծիքով, աւելի ուշ ժամանակի ստեղծագործութիւններ են, քան ընդունւում են միջնադարեան աւանդոյթով: Ըստ այդմ էլ «Հարցումը»՝ Եզնիկի աղբիւրը, չի կարող, իբր, ստեղծուած լինել «հայ դպրութեան արեւածագին»:

Մեր կարծիքով, սակայն, որեւէ (ե՛ւ գաղափարական, ե՛ւ լեզուական) հիմք չկայ կասկածելու, որ «Հարցումը» հայ դպրութեան արեւածագի ջերմ շողերից է. աւելին՝ այն կարող է գրուած լինել հէնց այն ժամանակ, երբ հայ հեթանոսական հաւատալիքները, ժողովրդական լայն խաւերի շրջանում շատ կենսունակ լինելով, վտանգ էին ներկայացնում եկեղեցու համար ու թելադրում հայ եկեղեցու պետերին գաղափարապէս զինուել ու պայքարել նրանց դէմ: Իսկ գաղափարական այդ պայքարի համար պարարտ հող կար հէնց «հայ դպրութեան արեւածագին»:

Ելնելով այս մեկնակէտից՝ յաջորդ պարբերութեամբ մենք փորձելու ենք շարադրել մեր մտորումներն այն մասին, թէ ով կարող է լինել «Հարցումի» հեղինակը:

4

Ինչպէս արդէն առիթ ենք ունեցել նշելու, ձեռագրերը Գրիգոր Պարթեւին կամ Լուսաւորչին են վերագրում «Հարցումի» հեղինակութիւնը. խնդրոյ առարկայ բնագրի ցանկը կանոնգրքերում կրում է «Ցանկ կանոնաց Լուսաւորչին» խորագիրը, իսկ բուն բնագիրը՝ «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթեւի. դարձեալ հարցումն ու պատասխանիք նորա»:

Հանրայայտ է, որ այս կամ այն աշխատութեան հեղինակութիւնը բարձրացնելու մտահոգութեամբ միջին դարերում Գրիգոր Լուսաւորչին են վերագրել այլեւայլ՝ բոլորն էլ անհարազատ գործեր[4]:

1 «Բազմավէպ», 1926, էջ 13
2 Նոյն տեղում, էջ 13
3 Նոյն տեղում, էջ 72
4 Տե՛ս Գ. Զարպհանալեան, Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1886, էջ 174-180:

Ուստի «Հարցումի» հեղինակի որոշման ուղղութեամբ աշխատելիս, առաջին հերթին ուշադրութիւն պէտք է դարձնել գրերի գիւտից մինչեւ «Եղծ աղանդոցի» շարադրման քառասնամեայ շրջանի խոշորագոյն հայ մատենագիրների վրայ. այդ քառասնամեակին մենք չունենք մատենագիրներ, որոնք խիզախէին մրցման մէջ մտնել Սահակ Պարթեւի կամ Մեսրոպ Մաշտոցի հետ:

Սահակը եղել է հայ ամենաբեղմնաւոր թարգմանիչներից մէկը: Մաշտոցի եւ նրա աշակերտների մասնակցութեամբ նա թարգմանել է Հին եւ Նոր Կտակարանների գրեթէ բոլոր գրքերը, ինչպէս նաեւ ծիսական, աստուածաբանական եւ դաւանաբանական մի շարք բնագրեր. «Երանելոյն Սահակայ,- գրում է այդ մասին Կորիւնը,- զեկեղեցական գրոց դումարութիւնն կանխաւ ի յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ եւ բազում եւս զհայրապետաց սրբոց զճշմարիտ զիմաստութիւնն»[1]:

Միաժամանակ Սահակը հեղինակել է ինքնուրոյն գործեր՝ կանոններ[2], դաւանաբանական թղթեր եւ հոգեւոր երգեր: Նրա անունով մեզ հասած կանոնախմբերից երրորդի («Նորին Սահակայ, թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի եւ որոշումն վանաց») վերջին հատուածը (որ սկսւում է «Ազատն, որ մասնականաւ է, կէս կաշոյն երթիցէ ի վանս...» բառերով) «Հարցումի» հնագոյն ձեռագրում (1368 թ.) անջատուած է կանոնախմբից, ընդօրինակուած է նրանից էջեր յետոյ՝ վերագրուելով Գրիգոր Լուսաւորչին (ձեռ. N 659, էջ 261բ):

Ուշագրաւ է, որ հէնց նոյն ձեռագրում այդ կանոնախումբը կրում է բոլորովին տարբեր ու հետքննելի այսպիսի խորագիր՝ «Սահմանադրութիւն կարգաց՝ ընկալեալ ի նահատակէն տեառնէ Գրիգորէ. թարգմանեցաւ ի ձեռն Եզնկայ, հրամանաւ երանելոյն Սահակայ եպիսկոպոսապետին Հայոց եւ նորին աթոռակցաց, թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի եւ որոշումն վանաց» (ձեռ. N 659, էջ 227բ):

Այլ ձեռագրերում (որոնց հիման վրայ կատարուել է «Կանոնգրքի» Ա. Ղլտճեանի հրատարակութիւնը) այս յիշատակարան-խորագիրը առանց Եզնիկ-թարգմանչի անուան յիշատակութեան եւ փոքր ինչ ձեւափոխուած խմբագրութեամբ դրուած է կանոնախմբի վերջում[3]:

Սրա կապակցութեամբ մեծանուն հայագէտ Մ. Աբեղեանը ամենայն իրաւամբ գրել է. «Այս յիշատակարանն անպայման յետագայի գրութիւն է. Սահակի կանոնները վերագրուել

1 Կորիւն, Վարք Մաշտոցի, Երեւան, 1941, էջ 76
2 Նրա անունով «Կանոնգիրք Հայոցի» մէջ պահպանուել են հետեւեալ 6 կանոնախմբերը.

ա. Սրբոյն Սահակայ հայրապետի, յաղագս քորեպիսկոպոսաց, թէ որպէս պարտ է զկարգն հաստատուն պահել յեկեղեցիս.

բ. Նորին կարգ քահանայից առ ժողովրդականս եւ նոցին ժողովրդականաց հնազանդութիւն եւ կարգ ուղղութեան առ քահանայս.

գ. Նորին սուրբ Սահակայ, թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի եւ որոշումն վանաց.

դ. Նորին Սահակայ, թէ որպէս պարտ է եպիսկոպոսաց ունել զընտանիս սրբոյ եկեղեցւոյ.

ե. Նորին սուրբ Սահակայ, թէ որպէս պարտ է եպիսկոպոսաց պահել զգանձս եկեղեցւոյ կամ որպէս մատակարարել.

զ. Նորին սրբոյն Սահակայ հայոց կաթողիկոսի՝ գիր աւանդութեան յաղագս կարգաց սրբոյ եկեղեցւոյ եւ պտղոց ժողովրդականաց ընծայելոց ի տուն Աստուծոյ (տե՛ս «Կանոնգիրք Հայոց», Թիֆլիզ, 1913, էջ 12-56)

3 «Կանոնգիրք Հայոց», էջ 38-39

են ս. Գրիգորին՝ դրանց աւելի կարեւորութիւն տալու համար»[1]:

Արդ, չի՞ կարելի ենթադրել արդեօք, որ Եզնիկի աղբիւրը հանդիսացող «Հարցումը» եւս ոչ թէ Գրիգոր Պարթեւի, այլ նրա թոռնորդի Սահակ Պարթեւի հեղինակութիւնն է:

Այս հարցին պատասխանելուց առաջ անհրաժեշտութիւն է զգացւում ի միտ առնել հայ գրերի ստեղծող ու մատենագրութեան հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի մատենագիտական գործունէութեան հանգամանքները:

Կորիւնից գիտենք, որ Մաշտոցը «բազում թուղթս խրատականս եւ զգացուցիչս ընդ ամենայն գաւառս առաքէր», «...ճառս յաճախագոյնս, դիւրապատումս, շնորհագիրս, բազմադիմիս ի լուսաւորութենէ եւ ի հիւթոյ գրոց մարգարէականաց կարգել եւ յօրինել՝ լի ամենայն ճաշակօք աւետարանական հաւատոցն ճշմարտութեան»[2]:

Կորիւնի ասած յաճախագոյն, դիւրապատում ճառերը, ինչպէս ենթադրել են մի շարք անուանի հայագէտներ, հայ մատենագրութեան մէջ լայն տարածում գտած ու սիրուած «Յաճախապատում» կոչուող ճառերն են, որոնք, ունենալով դաւանաբանական բովանդակութիւն, Գրիգոր Լուսաւորչին են վերագրուել՝ դրանց աւելի մեծ հեղինակութիւն տալու համար[3]:

Գ. Գալեմքեարեանը[4], Ն. Ակինեանը[5] եւ մանաւանդ Մ. Աբեղեանը[6] ապացուցել են արդէն, որ «Յաճախապատումի» եւ «Եղծ աղանդոցի» միջեւ կան զգալի ընդհանրութիւններ ու առնչութիւններ: Եւ այդ միանգամայն բացատրելի է. Մաշտոցն ու Եզնիկը՝ մէկը՝ հանճարեղ ուսուցիչ, միւսը՝ նրա սիրեցեալ ու մերձաւորագոյն զինակիցը, իրենց գործունէութեան ընթացքում գաղափարական նոյն գետնի վրայ էին կանգնած, եւ ամէն մէկն իր կարողութիւնների չափով մասնակցում էր հայ նորաստեղծ մատենագրութեան զարգացման գործին:

Մաշտոցի գործունէութեան մէջ մեծ տեղ է բռնում քարոզչութիւնը. յայտնի է, որ մինչեւ գրերի գիւտը նա շրջել էր ու քարոզել Հայաստանի այն գաւառներում, որտեղ քրիստոնէութիւնը դեռ չէր արմատաւորուած, քրմական դասը դեռ չէր հալածուած: Քարոզչական իր գործունէութիւնն աւելի լայն ծաւալով Մաշտոցը վերսկսեց գրերի գիւտից յետոյ. եղաւ Մարաց կողմերում, Գողթնում, Սիւնիքում եւ շատ այլ վայրերում՝ ամէնուրեք քարոզելով կրօնական նոր վարդապետութեան սկզբունքները, սովորեցնելով հայերէն գրութիւն, բացելով դպրոցներ եւ այլն:

Հայ եկեղեցու հիմքերի ամրապնդման համար եթէ առաջնահերթ նշանակութիւն ունէր պարսից քէշի՝ զրադաշտական կրօնի դէմ ուղղուած պայքարը (մի ուսմունք, որ պարսից արքունիքը ցանկանում էր պարտադրել հայ ժողովրդին), ոչ պակաս նշանակութիւն պէտք է ունենար պայքարը ներքին ճակատում:

1 Մ. Աբեղեան, Հայոց հին գրականութեան պատմութիւն, գիրք առաջին, Երեւան, 1944, էջ 117
2 Կորիւն, Վարք Մաշտոցի, էջ 78
3 Մ. Աբեղեան, Նոյն տեղում, էջ 119-121: Անհրաժեշտ է, սակայն, նշել, որ այդ ճառերն ըստ երեւոյթին յետագայում կրել են փոփոխութիւններ, ընկալել որոշ յաւելումներ եւ այլն:
4 Գ. Գալեմքեարեան, Նոյն տեղում, էջ 16-17
5 «Բազմավէպ», 1926, էջ 70-72
6 «Հայոց հին գրականութեան պատմութիւն», գիրք առաջին, Եզնիկին նուիրուած հատուածի 135, 136, 138, 140, 143-145 էջերի տողատակի մէջբերումները

Հայ ժողովուրդն իր հազարամեայ գոյութեան ընթացքում ստեղծել էր վիպական երգեր ու առասպելներ. հնամենի հաւատալիքներն ու աւանդութիւնները, պատկերացումները զանազան չար ու բարի ոգիների ու միֆական կենդանիների մասին խոր արմատներ էին նետել եւ, անշուշտ, կենսունակ էին ժողովրդի գիտակցութեան մէջ: Բնականաբար, եկեղեցու ջատագովները ոչ միայն պէտք է հիմնաւոր տեղեկութիւններ ունենային դարաւոր աւանդոյթով ժողովրդի գիտակցութեան մէջ արմատացած հաւատալիքների ու պատկերացումների մասին, այլեւ պէտք է սովորէին քրիստոնէական վարդապետութեան գրքերից դրանք մերժելու ձեւերն ու եղանակները:

Ահա հէնց այս նպատակով է ստեղծուած Գրիգոր Պարթեւին վերագրուած «Հարցումը»: Եւ քանի որ քարոզչական այդ եռանդուն գործունէութեան ղեկը գտնւում էր Մաշտոցի ձեռքին, եւ նա էր ամենահմուտ քարոզիչը, առաջին հերթին նա կարող էր ըմբռնել «Հարցմունքի» նման մի երկ ստեղծելու անհրաժեշտութիւնը[1]:

Տրամաբանական այս եզրակացութիւնն ամրապնդւում է առաջին հայեացքից նիւթին չառնչուող հետեւեալ փաստով:

Արեւելեան Հայաստանում իր միսիան կատարելուց յետոյ Մաշտոցը մեկնում է Կոստանդնուպոլիս՝ Բիւզանդիայի տիրապետութեան տակ գտնուող հայկական շրջաններում եւս դպրոցներ բացելու եւ նորաստեղծ գիրն ու դպրութիւնը տարածելու համար: Այստեղ, ինչպէս հաղորդում է Կորիւնը, նա «բազում շնորհագիր մատեանս զհարցն եկեղեցւոյ առացեալ՝ ծովացուցանէր զվարդապետութեանն զխորութիւն»[2]:

Հաւանաբար «շնորհագիր» այդ մատեաններից մէկն է եղել Թէոդորոս Մոպսուեստացու «Յաղագս որ ի Պարսս մոգութեան» այն երեք ճառերը, որի մասին տուեալներ է գրանցել Փոտ պատրիարքն իր նշանաւոր «Մատենադարանում»:

Փոտը վկայում է, որ Թէոդորոսի այդ ճառերն ուղղուած են եղել մի հայ քորեպիսկոպոսի՝ Μαστουξιος անունով, Ն. Ակինեանը համոզիչ փաստերով ապացուցել է, որ

1 Որ Մաշտոցն իրօք զբաղուել է հեթանոսական սնահաւատքի հերքումով, այդ մասին ունենք ստոյգ տուեալ. Հայոց կանոնգրքի միջնադարեան խմբագրութիւնների մէջ ներմուծուած է «Երանելոյն Մեսրոպայ վարդապետի» կոչուած մի փոքրիկ բնագիր, որն ուղղուած է հեթանոսական կրօնի անկապտելի մասը կազմող տարացեղ հմայութիւնների դէմ: Ն. Ակինեանը, որ հրատարակել է այդ բնագիրը, մի քանի ձեռագրերի բաղդատութեամբ տուել է նրան պատշաճ խորագիր՝ «Խօսք ընդդէմ հմայից»:

Ստորեւ տալիս ենք այդ բնագիրը՝ ըստ Ն. Ակինեանի հրատարակութեան (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1958, էջ 379-381):

Երանելոյն Մեսրոպայ հայոց վարդապետի (Խօսք ընդդէմ հմայից)

«Բարուք ողջոյն մի ումն ի սրբոցն. գիտացէք, ասէ, ով սիրելիք, զի թէպէտ եւ բեւեռեաց Տէրն զչարն ընդ խաչափայտին, սակայն խայթոցք նորա մինչեւ ցայժմ խոցոտեն զմարդիկ ի կորուստ՝ հմայիւք, յուռթիւք, դեղահատիւք եւ ամենայն բըժժանօք դիւականօք: Եւ ոչ որ բառնայ ի մտաց զմահաբեր սերմունս չարին: Այլ մի վարել հմայիւք, այլ սուրբ աղօթիւք առ Աստուած կարդալով, եւ մի երթալ զհետ երազոց, այլ ունկնդիր լինել պատուիրանաց Աստուծոյ: Եւ մի ոք զՅովսէփ եւ զԴանիէլ բերցէ ի մէջ, զի այն ժամանակաւորք էին եւ հարկաւորք. ի ձեռն սրբոյ արանցն զծածկեալ խորհուրդն յայտնէր Աստուած տեսլեամբ:

Արդ, այսուհետեւ ոչ երազք ոչ հմայք խոտեալ են միայն, այլ եւ մարգարէութիւնք եւ առաքելութիւնք: Երազք եւ հմայք եւ յուռութք եւ բաջաղանք եւ դիւթութիւնք եւ թովչութիւնք եւ հարցուկք եւ ձեռնածուք եւ դեղահատք եւ խոտիրք եւ որ ինչ նման են սոցին, նզովեալ են ի սուրբ եկեղեցւոյ եւ արտաքս ընկեցեալ յաստուածային հրամանաց. եւ որ առնէ զմի ոք ի նոցանէ կամ ընդունի, ընդ նովին նզովիւք է կապեալ եւ ընդ նմին սատանայի իջանէ ի տարտարոս դառն տանջանաց գեհենին, զորոյ զվարդապետութիւնն ընկալաւ»:

2 Կորիւն, էջ 67

ապաւաղուած այդ անունը պէտք է սրբագրել Μαστουξιος, այսինքն՝ Մաշթոց ձեւով[1]: «Մաշտոցի համար գրուած երկը, իհարկէ,- ինչպէս նշել է Ադոնցը,- կարող էր տրամադրելի լինէր նրա սիրասուն աշակերտին՝ Եղնիկին»[2]:

Մեզ հետաքրքրող բնագրի հեղինակի հարցը պարզելու գործին մեծապէս նպաստում է այս տուեալը:

Պարսից գաղափարական ագրեսիայի առաջն առնելու համար Հայ եկեղեցին պահանջ է զգացել պարսից քէշի դէմ գրուած հիմնաւոր մի հերքումի:

Մաշտոցի խնդրանքով այդ աշխատանքը կատարել է եկեղեցական նշանաւոր մատենագիր Թէոդորոս Մոպսուեստացին (մհ. 428 թ., եպիսկոպոս 392-ից), դրանից օգտուել է Եղնիկն իր աշխատութեան երկրորդ գիրքը («Եղծ քէշին պարսից») գրելիս: Արդ, մի՞թէ նոյն Մաշտոցն օտար եպիսկոպոսներից պէտք է հայցէր նաեւ հայ ժողովրդի հնաւանդ հաւատալիքների մասին այնպիսի մի գրուածք, ինչպիսին է մեր «Հարցումը»: Եւ կարո՞ղ չէին արդեօք օտարները տեղեակ լինել հեթնոս հայերի հաւատալիքներին այնքան, ինչքան տեղեակ էր Հայաստանի գրեթէ բոլոր շրջաններում որպէս քարոզիչ շրջած Մեսրոպ Մաշտոցը:

Իհարկէ ոչ. ուստի վերոյիշեալ փաստերի ու դատողութիւնների լոյսի տակ կարելի է մեծ հաւանականութեամբ եզրակացնել, որ Եղնիկի աղբիւրը հանդիսացող «Հարցումի» հեղինակն ինքը Մաշտոցն է:

Հարցի ուսումնասիրութեան ներկայ էտապում եւ ուղղակի վկայութիւնների բացակայութեան պայմաններում իհարկէ դժուար է վճռական ու վերջնական համարել այս եզրակացութիւնը: Յուսով ենք, սակայն, որ հնարաւոր կլինի յետագայում ամրապնդել այն նոր տուեալներով:

Այսպիսով, Ն. Ադոնցի այն հարցին, թէ՝ «արդեօք հնարաւո՞ր է հայ ֆոլկլորի թանկագին էջերը պարունակող «Հարցմունք Գրիգորի» յիշատակարանը... տանել եւ զետեղել հայ դպրութեան արեւածագին», կարելի է տալ մի պատասխան միայն՝ այո՛, կարելի է. աւելին՝ **այն կարող է զետեղուել միայն եւ միմիայն հայ դպրութեան սկզբնաւորման առաջին տասնամեակներին, հանդիսանում է հայ ինքնուրոյն մատենագրութեան ցարդ յայտնի հնագոյն յուշարձանը եւ գրուել է հաւանաբար Մեսրոպ Մաշտոցի կողմից:**

5

Ն. Ադոնցը ցոյց է տուել, որ «Հարցումի» բնագրից հետքեր են նշմարւում Յովհան Մանդակունուն վերագրուող ճառերի մէջ: Այդ փաստն ինքնին, անկախ այն բանից, թէ ճառերը պատկանում են Յովհան Մանդակունուն (V դար) կամ Մայրավանեցուն (VII դար), գրաւական է «Հարցումի» հնութեան:

Հաւանաբար հայ մատենագրութեան այլ յուշարձանների մէջ եւս հնարաւոր կլինի յետագայում գտնել «Հարցումի» ազդեցութեան հետքեր, սակայն այս առումով առաջնակարգ նիւթ է պարունակում մի երկ, որի հեղինակի ու գրութեան ժամանակի մասին եւս բանասիրութեան մէջ տարբեր ու հակասական տեսակէտներ են արտայայտուել:

1 **Ն. Ադոնց**, Անծանօթ էջեր Մաշտոցի եւ նրա աշակերտների կեանքից ըստ օտար աղբիւրների (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1925, էջ 197): Այս ուշագրաւ եզրակացութիւնը, առանց հիմնաւոր ու համոզիչ փաստերի, անընդունելի է համարւում որոշ բանասէրների կողմից:

2 «Բազմավէպ», 1925, էջ 371

Ղ. Ալիշանին այն ծանօթ է եղել որպէս XIII դարի մատենագիր Վահրամ վարդապետի գործ՝ գրուած առ Հեթում թագաւոր[1]: Ն. Մառը ծանօթ է այդ նոյն աղբիւրին՝ իբրեւ ոմն Վարդանի ստեղծագործութեան[2]:

1928 թ. Ն. Ակինեանը հրատարակեց այդ բնագիրը եւ, հիմք ընդունելով Վիեննայի Մխիթարեան մատենադարանի 1849 թուականի N 99 ձեռագրի վերնագիրը (որ դրել է, անտարակոյս, ձեռագրի ընդօրինակող Սերովբէ Պօղոսեանը), վերագրեց այն Վարդանանց պատմութեան հեղինակ Եղիշէին [3]:

Ն. Ակինեանի տեսակէտն անհիմն է ու մերժելի[4]: Արդարացին Ղ. Ալիշանն էր, որն, ինչպէս պարզուեց, իր տուեալը քաղել էր խնդրոյ առարկայ բնագրի Վենետիկեան Մխիթարեանների մատենադարանում պահուող հնագոյն ձեռագրից (ձեռ. N 265/1108, ընդօրինակուած 1317-1318 թթ.): Ձեռագրում գրուածքը վերնագրուած է այսպէս. «Հարցումն թագաւորին Հեթում, թէ հրեշտակք յառա՞ջ արարեալ են, քան զերկինս եւ զլուսաւորս. պատասխան վարդապետին Վահրամայ»[5]:

Այս Վահրամն, անշուշտ, Րաբունի կոչուած կիլիկեան նշանաւոր մատենագիրն է՝ հեղինակ փիլիսոփայական ու պատմագրական մի շարք երկերի:

Հեթում Բ թագաւորի պատուէրով գրած վերոյիշեալ իր աշխատութեան մէջ Վահրամ Րաբունին գրեթէ բառացի մէջբերել է մեր բնագրից ընդարձակ քաղուածքներ:

«Հարցումի» բնագրի աղաւաղուած որոշ բառերի ու նախադասութիւնների սրբագրման գործին Վահրամի քաղուածքներն անտարակոյս կարող են որոշակի նպաստ բերել:

6

«Հարցումի» եւ «Եղծ աղանդոցի» զուգակշիռ հատուածների համեմատութիւնից առաջին հետեւութիւնը, որ կարելի է անել, այն է, որ այդ երկու բնագրերն էլ արմատական խմբագրութեան չեն ենթարկուել հարիւրամեակների ընթացքում: Այս, անշուշտ, չի վերաբերում առանձին աղճատուած մասերի, նախադասութիւնների ու բառերի, որոնց մի մասը հնարաւոր կլինի ճշտել այդ բնագրերի ուշադիր համեմատութեան միջոցով:

1. Եղնիկի «Բայց թէպէտ եւ ասին ինչ անուանք ի գրոց յուշկապարկաց կամ

1 Ղ. Ալիշան, Հին հաւատք հայոց, Վենետիկ, 1910, էջ 187, 195, 203, 210

2 **Н. Я. Марр**, Из летней поездки в Армению (отдельный оттиск из "Записок восточн. отдел. имп. русск. Археолог. общ.", том V, с. 9 եւ յետ.)

3 «Եղիշէի վարդապետի Հարցմունք եւ պատասխանիք ի Գիրս ծննդոց», հրատ. հ. Ներսէս վ. Ակինեան, Վիեննա, 1924

4 Տե՛ս Ա. Վարդանեանի փաստալից ու հիմնաւոր գրախօսութիւնը՝ տպագրուած «Հանդէս ամսօրեայի» էջերում (1929, N 1, էջ 1-10 եւ N 2, էջ 65-79) եւ տողերիս գրողի թեկնածուական դիսերտացիան՝ «Եղիշէի «Արարածոց մեկնութիւն» աշխատութիւնը» խորագրով, պաշտպանուած 1945 թ. Երեւանի պետ. համալսարանում (մեքենագիր, էջ 5-9):

5 **Ս. Սարգսեան**, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեան ի Վենետիկ, հտ. Բ, էջ 853

համբարուաց կամ պարկաց, ըստ կարծեաց մտաց մարդկան ասին» նախադասութեան դիմաց «Հարցումն» ունի. «Թէպէտ եւ ասեն յուշկապարիկք եւ համբարուք եւ պարիկք եւ պայք, ըստ կարծեաց մտաց մարդկան ասին»:

«Պայք»-ն այստեղ աւել է, Եզնիկը չունի:

Պայի մասին Եզնիկը խօսում է այլուր. «Ոչ երբէք ի մարդկանէ ելեալ պայն, եթէ երեւ արարած իցէ (իմա՛ երէւ արածիցէ). միտքն աղճատուած է: «Հարցումի» համապատասխան հատուածում կարդում ենք՝ «Ոչ երբէք ի մարդկանէ ելեալ պայն, զորմէ ասեն՝ թէ երեւ ածէ»:

Այս կապակցութեամբ Ն. Ադոնցը գրում է. «Եթե երեւածէ խորթ բառը կարդանք տրոհելով՝ երեւ ածէ, այն ժամանակ Նորայրի սրբագրութիւնը՝ առ երեւ արածիցէ (փոխանակ արարած իցէ) պէտք կլինի ուղղել՝ առ երեւ ածիցէ կամ աւելի ճիշտ՝ վերականգնել ըստ Հարցարանի՝ երեւ ածիցէ»[1]:

2. Եզնիկի՝ «զծովացուլն՝ զոր ի կովէ ելեալ ասեն եւ զպայն՝ իմն ի մարդկանէ եւ զառլէզն՝ ի շանէ» նախադասութեան դիմաց «Հարցումն» ունի հետեւեալ նախադասութիւնը. «ծովացուլն ի կուսէ (ուղղելի է՝ ի կովէ) ասեն ելեալ եւ զպայն՝ ի գեռոյ եւ զառալէզն՝ ի շանէ եւ զխանդիռն՝ ի յէշոյ եւ զնահանգն՝ ի ձիոյ»:

Այստեղ մէկը միւսի կողմից երկուստեք ուղղւում ու լրացւում են Եզնիկն ու «Հարցումը»: Ինչպէս վերն այլ առիթով ասացինք, Եզնիկի մօտ խանդիռի (ինչպէս եւ համբարուի՝ ձիուց առաջացած լինելու) մասին խօսք չկայ:

3. Մեր բնագրում կայ այսպիսի տեղիք. «Հարցումն. Քաջք աներեւոյթ արարածք են Աստուծոյ, զպատերազմունս նոքա հարկանեն, զորս երէից նոքա հարկանեն եւ զարմատս կալոց նոքա կրեն եւ գինիս ի հնձանաց, որպէս վիշապս գոռհմականս անդէոց ծծեն»:

Եզնիկը, հաւատարիմ իր շարադրութեան ձեւին, այստեղ եւս փոխել է իր աղբիւրի տրամախօսական եղանակը եւ խմբագրել այդ հարցը՝ տալով այսպիսի կերպարանք. «Եւ ոչ վիշապք գոռհմականս արդեանց կրեն, եւ ոչ զբաստ գոյ նոցա, եթէ զարդիւնս ի կալոց ուրեք կրիցեն, եւ ի զուր է կա՛լ կա՛լն ասել ումեք ի կալս՝ եւ ոչ ա՛ռ ա՛ռ»:

Եզնիկն այստեղ հեռացել է իր աղբիւրից. բայց վերջինիս միջոցով, այնուամենայնիւ, հնարաւոր է լինում սրբագրել «եւ ոչ վիշապք գոռհմականս արդեանց կրեն» արտայայտութիւնը: «Հարցումի» համապատասխան տողը՝ «գոռհմականս անդէոց ծծեն», որ նշանակում է «ուտում (լափում) են անասուններից լաւերին», աւելի յարմար է գալիս իմաստին: Այս կարծիքին է նաեւ Ն. Ադոնցը[2]:

4. Ըստ Եզնիկի՝ Արտաւազդին Մասիսի վրայ արգելափակել են դեւերը, իսկ ըստ «Հարցումի»՝ վիշապները («...զԱրտաւազդ զոմն արգելեալ է ի վիշապաց ի Մասիս եւ է կենդանի, եւ նա ելանելոց է եւ զաշխարհ ունելոց»): Նշենք նաեւ, որ Արտաւազդի առասպելը գրանցած Մ. Խորենացին Արտաւազդի շղթայումը վերագրում է քաջքերին, իսկ «Յայսմաւուրքում» այդ դերը կատարում են «չաստուածք» կամ «աստուածք»[3]:

1 «Հայրենիք», էջ 79
2 Տե՛ս «Հայրենիք», էջ 80:
3 Г. Халатянц, Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского, ч. II, Материалы, Москва, 1895, с. 74

Կարծում ենք, որ առասպելին հարազատ տուեալը «Հարցումինն» է, որովհետեւ, ինչպէս գիտենք վիպասանքից,

«Վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ
Եւ դեւ փոխանակ եդին»[1]:

Ուշադրութիւն ենք դարձնում այս տարբերութեան վրայ՝ նկատի ունենալով նրա կարեւոր նշանակութիւնը Արտաւազդի երկուութեան խնդրի լուծման գործում: Յայտնի է, որ քաջքերը բարի ոգիներ են, ուստի ըստ Խորենացու՝ չար է եղել Արտաւազդը: Վիշապներն, ընդհակառակը, չար ուժեր են, ուստի ըստ «Հարցումի»՝ Արտաւազդն է բարի: Նրա գալստեան հետ վառ յոյսեր է կապել ժողովուրդը, բայց նա մնացել է արգելակուած «անմիտ» մի հայ իշխանի («ըղձապատում հմաւորականների» տուած խորհրդով) արձակած հրամանի զօրութեամբ, որով դարբինները պարտաւորուել են նաւասարդին կռանով զարկել դատարկ սալին՝ Արտաւազդի շղթաների ամրացման համար:

5. «Հարցումին» ենք պարտական Երուանդի[2] մասին հնագոյն առասպելի գոյութիւնը հաւաստող միակ վկայութեամբ, որ Վահրամի միջնորդութեամբ ծանօթ է եղել Ղ. Ալիշանին: Եզնիկի մօտ այդ մասին յիշատակութիւն չկայ. կա՛մ դուրս է ընկել յետագայում, կա՛մ ինքն է աւելորդ համարել մէջբերել:

Այսպիսով, պարզ է դառնում, որ «Եղծ աղանդոցի» իմաստային աղճատումների մի մասը հնարաւոր է սրբագրել նրա աղբիւրը հանդիսացող «Հարցումի» համապատասխան հատուածների օգնութեամբ, եւ ընդհակառակը:

Աւելի լայն հնարաւորութիւններ կան լեզուական ու շարահիւսական բնոյթի ուղղումներ մտցնելու Եզնիկի բնագրում, որն իրաւամբ համարւում է դասական հայերէնի գլուխգործոցը[3]:

7

«Հարցումի» բնագրի հրատարակութիւնը "Révue de l'Orient chrétien" պարբերականի 1925–1926 թթ. 3–4-րդ միացեալ համարում՝ անծանօթ մնաց հայագիտական լայն շրջաններին: Հայաստանում, օրինակ, չկայ պարբերականի այդ համարից գէթ մէկ օրինակ:

Նկատի առնելով այդ՝ աւելորդ չենք համարում բնագրի վերահրատարակութիւնը՝ ոչ էական հետեւեալ փոփոխութիւններով.

1. Ձեռագրերի հիման վրայ կատարել ենք մի քանի ճշտումներ:

1 Մ. Խորենացի, Բ 61
2 Բնագրում այդ անունը բերուած է հնաւանդ՝ «Արուանդ» ձեւով, որը միանգամայն համապատասխանում է պահլաւական ձեւին, որից եւ փոխառուած է:
3 Այդ աշխատանքը կատարելու են մեր եզնիկագէտները, միայն մէկ օրինակով փորձենք շահագրգռել նրանց:
«Նոր հայկազեան բառգրքում» տեղ է գտել «կեղծս կեղծս» բառը՝ «սուտ, շինծու կերպարանքով» իմաստով: Բառգրքի հեղինակներին այն յայտնի է միայն Եզնիկից: Քանի որ այդ բառի դիմաց «Հարցումի» մէջ գտնում ենք «կերպս կերպս» («եւ կերպս կերպս զանձինս ցուցանիցեն եւ մարդկան կերպի երեւման անուանս եղեալ կոչեն...») բառը, որ կիրարկուած է հայ հին մատենագրութեան մի շարք յուշարձաններում, կարելի է ենթադրել, որ Եզնիկի բնագրում եւս եղել է «կերպս կերպս»:

2. Տարընթերցուածքներից նշել ենք միայն կարեւորները (հէնց տողաշարում, փակագծերի մէջ):

3. «Հարցումը» կանոնգրքի մէջ ներմուծող խմբագիրները, միւս կանոնխմբերի նմանողութեամբ, նաեւ «Հարցումի» համար կազմել են ցանկեր եւ ըստ այդմ համարակալել հարց ու պատասխանները (Ա-ից ԺԱ): Ցանկը («Ցանկ կանոնաց Լուսաւորչին») գիտական արժէքից զուրկ է, իսկ հարցերի համարակալումը ճիշտ չի կատարուած: Այդ իսկ պատճառով ցանկը դուրս ենք թողնում, իսկ հարցերի համարակալումը կատարում ենք ինքներս:

4. Աւելորդ ենք համարել նաեւ «Հարցումի» սկզբում որպէս Ա հարցումն դրուած կանոնական հրահանգի հրատարակումը. այն, ինչպէս նկատել է Ն. Ադոնցը, ոչնչով չի առնչւում «Հարցումին»[1]:

5. «Հարցումի» բնագրին զուգահեռ տուել ենք Եզնիկի, իսկ տողատակում՝ Վահրամ Րաբունու զուգակշիռ հատուածները (Ադոնցը եւս տպագրել է Եզնիկի հատուածները, բայց «Հարցումի» բնագրի վերջում):

6. Ինչպէս արդէն ասել ենք, Գ. Տէր-Մկրտչեանը ձեռքի տակ ունեցել է «Հարցումի» 4 ձեռագիր: Թուարկում ենք այդ ձեռագրերը Մաշտոցի անուան Մատենադարանի արդի համարակալութեամբ.

A - N 659, ընդօրինակուած 1368 թ., էջ 108բ-118բ,

B - N 778, ընդօրինակուած 1635 թ., էջ 377բ-403բ,

C - N 2886, ընդօրինակուած XVIII-XIX դդ., էջ 73ա-83բ,

D - N 657, ընդօրինակուած XVII դ., էջ 125ա-129բ:

Մենք, բացի սրանցից, ձեռքի տակ ունեցել ենք նաեւ մի այլ ձեռագիր.

E - N 9298, ընդօրինակուած է 1662-ից առաջ, էջ 302ա-306բ:

Վերոյիշեալ բոլոր 5 ձեռագրերից հնագոյնն ու լաւագոյնը A ձեռագիրն է: Որպէս Հայոց կանոնգրքի եզակի մի խմբագրութիւն՝ այն արժանի է ուշադիր քննութեան:

«Հարցումին» զուգահեռ հրատարակուող Եզնիկի հատուածները քաղուած են Լուի Մարիեսի կազմած եւ յետմահու հրատարակուած մեծարժէք քննական բնագրից[2], որը համեմատել ենք Եզնիկի միակ ձեռագիր օրինակի հետ (Մատենադարան, ձեռ. N 1097, էջ 187բ-314բ): Փոխել ենք Մարիեսի հրատարակութեան ուղղագրական անհարկի արխայիզմները (ևթն, թն, և ին, և-ի փոխարէն՝ ամէնուրեք եւ, եւ այլն):

«Հարցումին» առնչուող Եզնիկի հատուածները համապատասխանում են Մարիեսի հրատարակութեան ստորեւ նշուող էջերին (փակագծերում տալիս ենք նաեւ Վենետիկի 1826 թ. հրատարակութեան համապատասխան էջերը).

1. էջ 37, տող 11-12 (էջ 75, տող 24-25),

2. էջ 39, տող 30-40, տող 29 (էջ 82, տող 1-84, տող 14),

1 Այս է կանոնական այդ հրահանգը. «Քահանայ, որ ընդ կնոջ ի քուն է՝ ի վաղիւն պատարագ մի՛ իշխեսցէ մատուցանել: Եւ աշխարհական, որ ընդ կնոջ ի քուն է՝ ի վաղիւն աւրհնաց մի՛ լիցի հաղորդ»:

2 **Eznik de Kofb**, De Deo édition critique du texte arménien par Louis Mariès..., Paris, 1959 (Patrologia orientalis, tome XXVIII, fascicule 3)

3. էջ 41, տող 12-42, տող 18 (էջ 85, տող 21-88, տող 11),

4. էջ 46, տող 9-48, տող 13 (էջ 97, տող 4-102, տող 13),

5. էջ 48, տող 22-49, տող 1 (էջ 103, տող 4-26),

6. էջ 49, տող 9-50, տող 11 (էջ 104, տող 16-107, տող 4):

Տողատակում Վահրամ Րաբունուց մէջբերուող հատուածները քաղուած են նրա աշխատութեան (անհիմն կերպով Եղիշէին վերագրուած) Ն. Ակինեանի հրատարակութիւնից[1]: Հրատարակուած բնագիրը ստուգել ենք Մատենադարանի N 631 (էջ 195ա-221ա) ձեռագրի մէջ առկայ արժէքաւոր ընդօրինակութեան հետ բաղդատելով:

Յուսով ենք, որ հայ ինքնուրոյն մատենագրութեան երախայրիք այս բնագրի վերահրատարակութիւնն անհետեւանք չի մնալու: Այն մեծապէս նպաստելու է հեղինակի մասին արտայայտած մեր կարծիքի հաստատման կամ մերժման գործին, ինչպէս նաեւ՝ ինչ-որ չափով դիւրացնելու Եզնիկի համապատասխան հատուածների քննութեան ու սրբագրութեան գծով կատարուելիք աշխատանքը:

1 «Եղիշէի վարդապետի հարցմունք եւ պատասխանիք ի Գիրս Ծննդոց», հրատարակեց հ. Ներսէս վ. Ակինեան, Վիեննա, 1924 (քննական հրատարակութիւն մատենագրութեան եւ թարգմանութեան նախնեաց հայոց, հտ. Բ, պրակ 2)

Կանոն սրբոյն Գրիգորի Պարթեւի, դարձեալ հարցումն եւ պատասխանիք նորա[1]

(Révue de l'Orient chrétien, Troisième série, tome V (XXV), 1925-1926, No 3 et 4, pp. 312-322)

Եզնկայ վարդապետի Կողբացւոյ՝ Եղծ աղանդոց

(Edit. par Louis Mariès, Paris, 1959. Patrologia Orientalis, tome XXVIII, fascicule 3)

1. Հարցումն. Ո՞վ է հայր մահու.

Պատասխանի. *Նախանձ:*

2. Հարցումն. Ուստի՞ յայտ է.

Պատասխանի. *Յայտմանէ՝ նախանձու բանսարկուին մահ եմուտ յաշխարհս:*

Եւ նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ (էջ 37 տող 11–12):

3. Հարցումն. Եւ ո՞վ է մայր մեղաց.

Պատասխանի. *Ագահութիւն, որպէս ասեն. Արմատ ամենայն չարեաց արծաթասիրութիւն է:*

4. Հարցումն. Ո՞վ է, որ տանի ի կեանսն յաւիտենից:

Պատասխանի. *Հեզութիւն. վասն որոյ ասէ Հոգին Սուրբ, թէ՝ Յո՞վ բնակեցայց, եթէ ոչ ի հեզս եւ ի խոնարհս եւ որք դողան ի բանից իմոց:*

5. Հարցումն. Եւ ո՞վ առիթ դժոխոցն.

Պատասխանի. * Արբութիւն, վասն որոյ ասեն (var. ասէ). Ոչ այսպէս առնաց դանաւ-րէնն, որչափ գանամալթն:*

6. Հարցումն. Եթէ կարիցե՞ն կախարդք զբնութիւն արարածոց փոխել:

Պատասխանի. *Եթէ հաստատել կարեն, ապա եւ փոխել կարեն:*

7. Հարցումն. Ահա բազում լուաք, եթէ զմարդիկ փոխեն ի կերպարանս անասնոց.

Պատասխանի. *Ոչ ամենայն ինչ, որ առ աչաւք է, ճշմարտութիւն ասի, որպէս եւ ոչ ստուեր մարդոյ մարդ ասի: Զնմանութիւն եւ զկերպարանս կարեն ցուցանել, բայց ճշմարտութեամբ ոչ կարեն ցուցանել եւ ոչ փոխել զարարածս Արարչին, զի որ արարն, Նա միայն կարէ փոխել:*

8. Հարցումն. Նա աւանիկ գիրք ցուցանեն, թէ առնէին կախարդքն, զոր ինչ եւ Մովսէս առնէր:

Պատասխանի. *Ընդ բարբառ բանի՞ցն նայիցիս, թէ՞ ընդ ճշմարտութիւն իրացն. թէ արդարեւ որպէս Մովսէսն առնէր ճշմարտութեամբ, ոչ էր պարտ զՄովսեսի արարեալս առնել: Նա աւանիկ ճշմարտութիւնն զոչ*

---

1 Բ ձեռագրում խորագիրն այսպէս է. «Կանոն երկրորդ երանելոյն սրբոյն Գրիգորի Պարթեւի Հայաստանեայց Լուսաւորչի. Հարցումն գեղեցիկ պատասխանեաւք հանդերձ խրթնածածուկ բանից»:

Վահրամայ վարդապետի Հարցմունք եւ պատասխանիք (տպ. Եղիշէի անունով, Վիեննա, 1924)

...Հց. Թէ դեւք ի մարմին իսկապէս ոչ փոխին եւ ոչ ուտեն եւ ըմպեն ստոյգ եւ առնեն, զոր ասեն մարդիկ, ապա եւ կախարդք զիա՞րդ նոքաւք բազում իրս առնեն:

Պխ. Եւ զի՞նչ առնեն կախարդքն:

Հց. Կարեն զբնութիւն արարածոց փոխել:

Պխ. Սուտ է այդ. եթէ հաստատել կարեն, ապա եւ փոխել կարեն:

Հց. Ահա զբազումս լուաք, թէ զմարդիկ փոխեն ի կերպարանս անասնոց եւ թռչնոց, եւ ինքեանք ի կարաս հեծեալ երթան ի ճանապարհ հեռի եւ ի վերայ ջրոց քայլեալ՝ վաղվաղակի յատար աշխարհ ելանեն, քաջաց սեղան դնեն եւ ի նոցանէ բանս լսեն եւ առնեն:

Պխ. Դարձեալ զստութեան բանս յիշեն: Ի միտ առ. ոչ ամենայն ինչ, որ առ աչաւք է՝ ճշմարտութիւն ասի. զնմանութիւն եւ զկերպարանս ցուցանեն զիրար ինչ կախարդքն, զի այլ ոչինչ կարեն ճշմարտութեամբ ցուցանել, զի թէ ստանեայ կերպարանի ի հրեշտակ լուսոյ, որ չէ իսկ. նոյնպէս եւ պաշտաւնեայք նորա ցուցանեն ինչ, բայց ոչ ճշմարիտ. եւ ոչ կարեն փոխել զարարածս Արարչին, զի որ արարն, Նա միայն կարէ փոխել:

Հց. Նա աւանիկ եւ գիրք ցուցանեն, թէ յԵգիպտոս առնէին կախարդքն, զոր ինչ առնէր Մովսէս:

Պխ. Մի՛ ընդ բարբառ բանին հայեսցիս, այլ ընդ ճշմարտութիւն իրացն, զի թէ արդարեւ կարող էին կախարդքն առնել ինչ, որպէս Մովսէսն առնէր ճշմարտութեամբ, ընդէ՞ր ապա եւ զՄովսէսի արարեալսն առնէին եւ ոչ նոր ինչ. ուստի յայտ է՝ տեսաւղքն զարհուրեալք ի ճշմարիտ նշանացն Մովսէսի առ աչաւք թուէր, թէ եւ կախարդքն այնպէս առնէին, վասն որոյ ի նոյն տեղւոջ ճշմարիտ նշանն ի Մովսիսէ եղեալ՝ յանդիմանէր զստութիւն կախարդացն... Դարձեալ յորժամ կեղն եւ խաղաւարտն հալածեցին զնոսա, զի եղեւ կեղն եւ ի կախարդսն, յայտնի եղեւ ստութիւն նոցա, որք ի հարկէ խոստովանեցան, թէ՝ Մատն Աստուծոյ է այս: Քանզի թէ կարող լեալ էին, զհարուածս ի Մովսէս եւ յԱհարոն դարձուցեալ էին:

Հց. Մովսէսի ոչ կարէին առնել ինչ, զի Աստուած ընդ նմա էր, բայց մեղաւորաց կարեն առնել զչար եւ զբարի:

Պխ. Եւ ոչ երբէք. ոչ արդարոյ եւ ոչ մեղաւորի չունին կարողութիւն առնել ինչ չար կամ բարի առանց հրամանին Աստուծոյ, զի Տէր է, որ սպանանէ եւ կեցուցանէ, եւ ի Տեառնէ են ելք մահու, քանզի եւ ճնճղուկ յերկիր ոչ անկանի առանց Աստուծոյ, Որով ամենայն ինչ եղեւ եւ Նովաւ փոխի եւ Նովաւ անցանէ (Վահրամ, էջ 21-22):

Հց. Ապա եւ ամլո՞ցն ոչ կարիցեն կախարդքն որդիս տալ եւ զմէջս փակեալս բերրի (ձեռ. N 631՝ բերքի) առնել:

Պխ. Ամլութեան պատճառք յոլովք են. այն՝ զոր Աստուած արգելեալ է, չկարէ ոք նմա ձեռնհաս լինել՝ ոչ կախարդք եւ ոչ բժիշկք, զի յԱստուծոյ է, որպէս ասէր Յակոբ առ Հռաքել, յորժամ ասէր՝ Տո՛ւր ինձ որդիս. եւ Յակոբ պատասխանեաց՝ Մի՞թէ Աստուած իցեմ ես, որ արգելի զպտուղ որովայնի քոյ: Բայց եթէ ի պատճառէ ցաւոց իմեքէ, զայն կարեն բժիշկքն ուղղել ազնականութեամբքն Աստուծոյ՝ ազդեցութեամբ դեղոց. այլ զոր ձեռն վերնոյն փակեալ է՝ չէ ոք որ լուծանէ, բայց Ինքն միայն: Միթէ կարէին ամենայն բժիշկքն կամ կախարդք Սառայի տալ որդի կամ Եղիսաբէթի (էջ 23):

Հմմ. Վահրամ, ԻԱ եւ ԻԲ հարցումների հետ.

ճշմարտութիւնն յայտ առնեն, զի կանգնէր մի վիշապն եւ զբաղում վիշապս կլանէր, եւ ստուեր եւ նմանութիւն եւ տեղի անգամ ոչ երեւէր: Ապա մինչ ի կախարդքն դարձան հարուածքն՝ կեղք ու խաղալարտք՝ յայտնի եղեւ ստութիւն նոցա, եւ ի հարկէ խոստովան եղեն, թէ ձեռն Աստուծոյ է: Բայց թէ կարող լեալ էին, զհարուածսն ի Մովսէս եւ յԱհարովն դարձուցանէին:

9. Հարցումն. Մովսիսի ոչ կարէին առնել ինչ, զի Աստուած ընդ նմա էր, բայց մեղաւորաց կարեն առնել չար եւ բարի:

Պատասխանի. Ոչ միայն մեղաւորաց չեն ձեռնհաս կախարդք բարւոյ եւ չարի, այլ եւ ոչ անասնոց անմտից, բայց զոր Աստուած մատնէ. այլ առանց Աստուծոյ ոչ կարեն սպանանել, զի ի Տեառնէ են ելք մահու: Սպասէ մեղաւորն արդարոյն, այլ Տէր ծիծաղեսցի զնոքաւք եւ ոչ մատնէ զնա ի ձեռս նորա: Նա եւ ոչ ճնճղուկ անկանի յորոգայթ առանց հրամանի Հաւր ձերոյ, որ յերկինս է, զի ամենայն ինչ Նովաւ եղեւ եւ Նովաւ (var. Աստուծով) անցանէ:

10. Հարցումն. Կայէն առանց Աստուծոյ սպան զԱբէլ, եւ սպանողն Կայէնի առանց Աստուծոյ սպան զԿայէն, եւ Հերովդէս՝ զՅովհաննէս, եւ ամենայն արդարքն առանց Աստուծոյ մեռան յանաւրէնաց:

Պատասխանի. Զի թէ լինի մարդ առանց Աստուծոյ, եւ մեռանի: Ոչ պոռնկորդին Աստուծոյ հրամանաւն լինի, եւ ոչ մեղաւորն Աստուծոյ հրամանաւն մեռուցանէ զարդարն, այլ սատանայ է պատճառ չարեացն: Աստուած հրեշտակաց անքննելի է եւ անհասանելի ամենից, զի որ քննէ զծով՝ մեռանի: Լինելութեան պատճառ Աստուած է, զի աւրհնեաց ի սկզբանէ զարդարն աճել եւ բազմանալ. ի մերձենալ արուին յէգն Աստուծոյ հրաման կատարի, լինի աճումն ըստ նախակարգ հրամանի Աստուծոյ: Աստուած է պատճառ լինելութեան եւ ոչ սատանայ, որպէս ասէ. Առանց Աստուծոյ եղեւ եւ ոչինչ: Սատանայ հրապուրանաց է պատճառ: Նոյնպէս եւ մահու հրաման յԱստուծոյ է. Յորում աւուր ուտիցես՝ մեռցիս. եկեր եւ մեռաւ:

Եկն Քրիստոս եւ եսպան զմահ եւ կենդագործեաց զմարդիկ: Ինքն Քրիստոս Իւրով կամաւքն մեռաւ յանաւրինացն եւ արդարոցն թոյլ ետ մեռանիլ յամբարշտացն, զի ուրախասցին յարքայութեանն, որպէս եւ գրեալ է. Ընդ Քրիստոսի մեռանին, ընդ Նմին եւ թագաւորեսցեն:

Արդ, այնք որք զԱստուծոյ փառս եւ զպատիւ արարչութեանն սատանայի տան, ի հուր գեհենի է ժառանգութիւն նոցա:

11. Հարցումն. Եթէ կարիցե՞ն կախարդք որդիս տալ ամլոց եւ զմէջ (var. ի մէջ) սան-

---

Հց. Եւ ըստ որո՞ց տեղաց պատահէ այս ցաւ մարդոյն ի Տեառնէ:

Պխ. Ըստ ամենայն մեղանաց, առաւել վասն հպարտութեան եւ թերահաւատութեան մարդոյ:

Հց. Մարդկան ի չափ հասելոց գրեսցուք վասն մեղաց կրել զայս. անմեղ տղայքն ըստ որո՞ց սխալանաց տանջին ի դիւաց:

Պխ. Անհաս են խորքն Աստուծոյ, եւ Ինքն միայն գիտէ զաւգուտ մարդոյն... (էջ 24-25):

Հց. Ապա զիա՞րդ է, զի բազումք ասեն, թէ քաջք զպատերազմունս մղեն, եւ զորս երէոց որսան, եւ զարմտիս ի կալոցն կրեն, եւ զգինիս ի հնձանաց առնուն, վիշապք զտոհմականս անղէոց ծծեն, եւ յոլով մարդիկ տեսեալ են, զի վիշապ վերանայր յերկրէ յերկինս:

Պխ. Այսպիսի յիմարութեամբ լցեալ է երկիր. միթէ արժա՞ն է զայսպիսեաց ասացողսն քրիստոնեայ կոչել եւ կամ բնաւին առ մտաւորս ունել: Ոչ քաջ լեալ է եւ ոչ վիշապ. վիշապ անուն բառ է, զի որ ինչ յերկրի մեծ լինի՝ վիշապ ասեն ըստ գրոց, թէ Դու փշրեցիր զգլուխ վիշապին ի վերայ ջուրց եւ ետուր զնա կերակուր զաւրացն Հնդկաց. որ նշանակէ զփարաւոն փշրեալ ի Կարմիր ծովն եւ զէն եւ զարդ նոցա յալեացն յեզր ծովուն գտեալ, եւ ի ձեռն լաւորդացն ի խորան անկաւ յաշխարհն Հնդկաց. Նա էր վիշապ, որպէս մարդ մեծանձնեալ եւ յաղթանդամ ասի: Եւ թէ ուղիղ է, զոր ասեն ցորեան եւ գինի առեալ դիւացն, սակայն ոչ ուտեն եւ ոչ ըմպեն եւ ոչ ի տեղւոյն շարժեն զիրս, այլ երեւոյթս իմն տան: Միթէ հրեշտակքն, զոր մատուցանէին նոցա կերակուր, որպէս Մամրէ եւ Գեդէոն, կերա՞ն. անմարմնոյ բնութիւն զիա՞րդ կերակրի զմարմնական կերակուր. դեւք լոկ երեւոյթս տան:

Հց. Իսկ ընդէ՞ր ապա ասեն ոմանց տեսեալ քաջաց եւ վիշապաց տաճարս ի լերինս բարձունս եւ բնակութիւնս, ուր զԱղեքսանդր կապեալ ունին ի Հռոմ եւ զԱրտաւազդ Հայոց թագաւոր ի Մասիս եւ զԵրուանդ ի գետս եւ ի մռայլս:

Պխ. Ոչ Աղեքսանդր կայ կենդանի ի կապանս եւ ոչ Արտաւազդ եւ ոչ այլ ոք յառաջնոց անտի. զի յորդոց մարդկան Ենովք եւ Եղիայ միայն կենդանիք են, այլ ամենեցուն զմահ ճաշակեալ է: Բայց մոլորութիւն դիւաց խաբեաց զկռապաշտսն Հայոց ի ձեռն քրմացն, որք ասէին, թէ զԱրտաւազդ ոմն Հայոց թագաւոր վիշապք արգելեալ են կենդանի ի Մասիս լեառն. եւ նա ելանելոց է եւ զաշխարհ ունելոց. եւ ոմն ի յանմտաց, որ ունէր զիշխանութիւն Հայոց՝ զարհուրեալ հարցանէր զըղձապատումս դիւացն եւ զկախարդսն, թէ ե՞րբ լինի Արտաւազդայ ելանել ի կապանաց, եւ նոքա ասացեալ, թէ ոչ կամիս զելանելն նորա ի կապանացն՝ հրամա՛ն տուր ընդ ամենայն աշխարհս Հայոց դարբնաց, որ ի նաւասարդի ատ ամենայն դարբին կռանաւ դոփէ ի վերայ սալի իւրոյ. եւ երկաթք Արտաւազդայ անդրէն հաստատին: Զնոյն հրաման կատարեն այժմ ամենայն դարբինք ի նաւասարդում կռանաւ զսալ հարկանեն:

Որպէս զայս ստութիւն արձանացոյց սատանայ յաշխարհ, նոյնպէս եւ վիշապ, որ է աւձ մեծ, առ աչաւք մեծ

տուկս (իմա՝ զմէջ սկնդուկս) բարի առնել.

Պատասխանի. Ամլութեան բազում պատճառք են. այն զոր Աստուած արգելեալ է, չէ ոք որ նմա ձեռնհաս կարէ լինել՝ ոչ կախարդ եւ ոչ բժիշկ: Բայց եթէ պատճառք ցաւոց ինչ իցէ (var. են ինչ), զայն կարող են եւ բժիշկք ուղղել Աստուծոյ ազդեցութեամբն դեղովք: Այլ առանց Աստուծոյ թէ եւ ամենայն բժիշկք եւ կախարդք ժողովէին՝ ոչ կարէին Սառայի որդիս տալ: Զոր ձեռն վերնոյն փակեալ է, չէ ոք որ լուծանէ:

12. Հարցումն. Դիւահարութեան պատճառ ի՞նչ է մարդկան.

Պատասխանի. Վասն հպարտութեան մարդկան լինի, զի որդի որ մտավարժ է եւ իմաստուն, գան ոչ ըմպէ. իսկ որ անմիտ է, հանապազ գանալից է:

13. Հարցումն. Մեղաւորք վասն մեղաց տանջին, իսկ տղայոց անմեղաց զի՞ տիրիցեն դեւք:

Պատասխանի. Զամենայն մարդ յորդեգրութիւն կոչէ Աստուած, որպէս զԻսրայէլն. Նա է որդի իմ անդրանիկ Իսրայէլ, եւ Որդիս ծնայ եւ բարձրացուցի: Արդ, եթէ փակեալքն ընդ աւրինաւք որդիք կոչին, որչափ եւս առաւել ազատեալքս, զոր[ոց] ասէ իսկ. Ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել:

Արդ, զի իբրեւ յորդիս մատուցեալ է ի մեզ Աստուած առ. երբեմն խրատել [հարկանէ] զանսաստնս մեր, երբեմն զանդաստան եւ զայգիս մեր, զի հայելով ընդ այն ի միտ առցուք մտանել ընդ լծով երկեղի ծառայել Տեառն: Ապա մինչ այսու եւս ոչ խրատիմք, ի մեզ առաքէ տանջանս պէս պէս ցաւոց եւ խեղութեամբ, մտանէ եւ դիւաց զաւակս մեր, զի ի միտ առցուք, թէ Արդարն հազիւ կեցցէ, իսկ ամբարիշտն ո՞ւր ապրի:

...Եւ դիւահարութիւնք վասն հպարտութեան մարդկան լինին: Քանզի եթէ որդի ուրուք մտավարժ իցէ, գան ոչ ըմպիցէ. եւ որ չէն մտավարժ՝ բազում անգամ գծառայ այր առաջի նորա գան հարկանեն, զի ի նա հայեցեալ՝ ընդ այն լինիցի մտավարժ. ապա եթէ եւ այնու եւս ոչ խրատիցի, ի նա իսկ մատուցանեն զտանջանսն:

Այս առացաւ վասն հարցանելոյ ումանց, թէ մեղաւորք վասն մեղաց տանջիցին ի դիւացն, տղայոցն անմեղացն ընդէ՞ր տիրիցեն դեւքն:

Զամենայն մարդիկ յորդեգրութիւն կոչէ Աստուած, որպէս զԻսրայէլ ասէր. Որդի անդրանիկ իմ Իսրայէլ. եւ դարձեալ՝ թէ Որդիս ծնայ եւ սնուցի: Թէ առաքինեալքն ընդ աւրինաւք որդիք կոչէին, որչա՞փ եւս առաւել զոյոց ասէ՝ թէ Ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել:

Արդ, քանզի իբրեւ յորդիս մատուցեալ է ի մեզ Աստուած խրատել, երբեմն հարկանէ առաջի մեր իբրեւ գծառայ՝ զանասուն մեր, եւ երբեմն զանդս եւ զայգիս, զի ընդ այն հայեցեալ՝ մտցուք ընդ լծով Աստուծոյ երկիւղին: Ապա եթէ այնու եւս ոչ խրատիցիմք, ի մեզ իսկ մատուցանէ զտանջանսն՝

ցուցանէ, զի անազին երեւեալ՝ մարդիկ ի պաշտաւն առնիցեն զաւձն, որպէս եւ արարին բաբելացիք եւ եղլադացիք՝ զվիշապ աւձսն պաշտեցին եւ յԱրարչէ հեռացան: Սոյնպէս եւ ինքեանք դեւքն ջորիք եւ էշք երեւին ի կալ՝ կրել ցորեան եւ գինի. եւ արագ արագ վազ առնեն երեւութիւք ի դաշտս,իբր թէ որսան. Սուտք ամենեքեան (էջ 14–16):

ամբարիշտն ո՞ւր ապրի:

Եւ տղայոցն յայն սակս պատահի այն (var. չիք այն)՝ զի մի՛ արդարն ի բարիս գործելոյ ղաղարեսցէ, եւ մի՛ մեղաւորն ի մեղս յամել կարասցէ: Եւ չէ այսմ պարտական, այլ չար գործք մարդկան բարկացուցանեն զԱստուած, եւ այնպիսի ցասմամբ մատնէ զաղայս մեր դիւաց: Զի որպէս այլոց հաւատովք բժշկեաց զանդամալոյծն եւ չնորհեաց նմա թողութիւն մեղաց, նոյնպէս եւ այլովք տանջանաւք ածէ յերկիւղ զբազումս. է՝ զի անմեղ տղայովք, եւ է՝ զի մեղուցելովք, որպէս եւ Ինքն միայն գիտէ Բարերարն: Եւ ոչ եթէ ի դատապարտութիւն ինչ մարդոյն ողոյն լինի տանջումն դիւաց, այլ առաւել յարդահատութիւն. մանաւանդ թէ անմեղ ոք իցէ. եւ վասն այլոյ երկեղի ի միտսն արկանել մատնի յայնպիսի տանջանսն, զոր իբրեւ զմարակ կախեալ ի տան (var. տուն) իշխանին՝ զարհուրեցուցեալ զտեսաւղսն, նոյնպէս եւ տղայոցն լլկանսն ի զղջումն ածէ զմեղաւորսն:

Այլ ասեն՝ կախարդք յղեն զդեւսն եւ հանեն: Կախարդք զդեւս ոչ կարեն հանել. Տէրն ասաց. Սատանայ զսատանայ ոչ հանէ: Մարդ, որ զԱստուած թողու զբրութիւն, զպահս, զաղաւթս եւ ի դիւթս եւ ի կախարդս ապաւինի եւ քակէ զյոյսն յԱստուծոյ, թոյլ տայ Քրիստոս դիւաց բնակիլ ի նմա եւ տանջել զնա եւ պահանջել զոգի նորա եւ տանել ի դժոխս, որպէս զոգիս անաւրինացն: Կախարդք դիւաց բազինք են եւ չեն համարեալ ի քրիստոնեայս: Ոչ զոք ի կախարդաց կարես տեսանել անցաւս եւ անդեւս: Նա եւ տեսանեմք զկախարդսն միշտ լլկեալ (var. ծնկեալ) ի դիւացն, եւ մանաւանդ մոլիքն, զի նախ ինքեանք մոլին

կամ ցաւովք, կամ խեղութեամբք, կամ դիւաւք: Տանջին եւ անմեղք՝ զի ի մտի կալցին այլքն զբան իմաստնոյն՝ որ ասէ. թէ Արդարն հազիւ կեցցէ, ամբարիշտն եւ մեղաւորն ո՞ւր գտանիցին:

Եւ այն յայն սակս լինի՝ զի մի՛ արդարն յարդարութենէն ծուլասցի, եւ մի՛ մեղաւորն միշտ ի մեղսն կայցէ: Եւ չէ այնմ պարտական Աստուած, այլ չարիք մարդկան ածեն զԱստուած այնպիսի տանջանաւք խրատել զմարդիկ:

Զի որպէս այլոց հաւատովք հաստատեաց զանդամալոյծն եւ չնորհեաց նմա թողութիւն մեղաց, նոյնպէս եւ այլոց սակաւուց տանջանաւք ածէ յերկիւղ եւ ի խրատ զբազումս: Ցո՞րժամ զիպիցի անմեղաւք, եւ յո՞րժամ զիպիցի մեղաւորաւք, որպէս Ինքն միայն ճարտար գիտէ: Եւ ոչ եթէ ի դատապարտութիւն ինչ ոգոց լինին մարդոյն տանջանքն դիւաց, այլ առաւել եւս յարգահատութիւն. մանաւանդ թէ անմեղ ոք իցէ. եւ վասն այլոց երկիւղ ի միտս արկանելոյ՝ յայնպիսի տանջանս մատնիցի, զոր իբրեւ զմարակ կախեալ ի մեծի տանս՝ ցուցանէ Աստուծոյ տեսչութիւնն, զի հայեցեալ ընդ այն բազմաց՝ ամփոփեսցին եւ մտցեն երկիւղիւ ընդ Աստուծոյ հնազանդութեամբ... (էջ 39 տող 30 – էջ 40 տող 29):

Այլ կախարդք, ասեն, յղեն դեւս եւ հանեն զդեւս: Զի կախարդք զդեւս ոչ կարեն հանել՝ բաւական է մեզ հաւանեցուցանելոյ բանն Տեառն, զոր ասաց՝ թէ Սատանայ զսատանայ ոչ հանէ: Զի կախարդն եթէ հանէր, ապաքէն դիւաւք հանէր. եւ զդիւէ ասաց Քրիստոս՝ թէ Դեւ զդեւ ոչ հանէ. ապա յայտ է թէ այլազգ իմն իրք լինին, որպէս ի նոցանէն իսկ ելեալ է բանն, եւ ոչ ի մէնջ: Ասեն. հանել չկարեն, բայց անդէն կապել մարթեն, զի հանապազ խեղդ ընդ անձն հոգոց մարդոյն դեւն լինիցի: Եւ այն յԱստուծոյ արժանիցն յիրաւի լինի. զի եթող ամն զԱստուած, զաւրբս, զպահս, զաղաւթս, եւ ի կախարդն՝ որ եւ անձին չկարէ

մաքրել չիշխեն:

14. Հարցումն. Ծնունդք են դիւաց եւ մահ, աճեն եւ պակասեն.

Պատասխանի. Նախ զայն տեսցուք, թէ զո՞ն այլ արարածք բանաւորք քան զՀրեշտակս եւ զմարդիկ եւ զդեւս, եւ ապա եկեսցուք յայն, թէ իցէ՞ն դիւաց կէս մարմնաւորք եւ կէս անմարմինք: Զի չեն այլ արարածք բանաւորք, քան զերեք ջոկ, յԱստուածային Գրոց եւ ի բնութենէ արարածոց յայտ է: Թէպէտ եւ ասեն յուշկապարիկք եւ Համբարուք եւ պարիկք եւ պայք, ըստ կարծեաց միայն մարդկան ասին եւ ոչ ըստ բնութեան, զի դիւաց է կերպարանս ցուցանել, եւ մարդիկ զկերպարանս անուանադրեն, որպէս յորժամ քաղաքք եւ գեւղք աւերեսցին, եւ անդ դեւք բնակեսցեն եւ կերպս կերպս զանձինս ցուցանիցեն եւ մարդկան [ըստ] կերպի երեւման անուանս եդեալ՝ կոչեն զոմն յուշկապարիկ, զոմն Համբարու: Նոյնպէս եւ գրոց զանուանս նոցա՝ առ ի նշանակելոյ զաստակութիւն աւերածի աշխարհի, յուշկապարկաց ասեն բնակել յաւերակս, զի ի յոյն լեզուն յուշկապարիկն իշացուլ թարգմանի:

Արդ, ցուցանե՞ն, եթէ գտանի իշացուլք ի Բաբելոն. ուրեմն յայտ է՝ թէ լոկ անուանք են եւ ոչ տեսակք, եւ գիրք ըստ սովորութեան մարդկան խաւսից անուանեցին զդեւս, որ յաւերակսն Բաբելոնի բնակեալ են: Եւ նոյն ազդեցութեամբ դիւացն բարբանջեն մարդիկ, զծովացուլն ի կուսէ (իմա՝ ի կովէ) ասեն ելեալ, եւ զպայն ի գետոյ, եւ զառալէզն ի շանէ, եւ զխանդլիւն (var. զխանդիրն) ի յիշոյ, եւ նահանգն (var. զնահանգն) ի ձիոյ: Եւ այս (var. այսք) ոչ եթէ տեսակք ինչ, այլ անուանք եւ եթ են հեթանոսական կռապաշտից: Զի որք զդեւսն պաշտէին՝ ի դիւացն հաջէին իբրեւ զշուն, եւ նոյն մոլորութեան սովորութիւն կալաւ զերկիր: Եւ ոչ ի քրիստոնէից դարձան ի բաց ի դիւապաշտ մոլեգնութենէ, եւ ոչ ոք էր

իբրու մաքրել... (էջ 41, տող 12–42, տող 18):

Եւ արդ, քանզի անմարմինք են Հրեշտակք եւ դեւք, յայն սակս եւ ծնունդք ոչ գոն նոցա: Այլ ասեն Համբարուաց ծնունդք են եւ մեռանին: Նախ զայն տեսցուք, թէ բնաւ գուցե՞ն այլ ինչ արարածք բանաւորք քան զՀրեշտակս եւ զդեւս եւ զմարդիկ: Եւ ապա եկեսցուք յայնր ի քնին, թէ իցէ՞ն ի դիւաց կէսք մարմնաւորք եւ կէսք անմարմինք: Զի չիք ինչ արարած բանաւոր արտաքս քան զայս երիս ջոկս՝ զՀրեշտակաց, զդիւաց եւ զմարդկան, յամենայն Աստուածատուր Գրոց եւ ի բնութենէ արարածոց յայտնի է: Բայց թէպէտ եւ ասին ինչ անուանք ի գրոց յուշկապարկաց կամ Համբարուաց կամ պարկաց, ըստ կարծեաց միայն մարդկան ասին եւ ոչ ըստ բնութեան, քանզի դիւաց է կերպարանս կերպարանս ցուցանել, եւ մարդիկ ըստ կերպարանացն անուանս դնեն. Որպէս յորժամ քաղաքք եւ գեւղք աւերեսցին եւ անդ դեւք բնակիցեն, եւ կեղծս ի կեղծս յայտնիցին, եւ մարդկան ըստ կեղծեաց նոցա անուանս եդեալ՝ զոմն յուշկապարիկ, զոմն պարիկ, զոմն Համբարու կոչիցեն, նոյնպէս եւ գրոց ըստ մարդկան կարծեացն եկեալ՝ առ ի նշանակելոյ զաստակութիւն աւերածի աշխարհին՝ յուշկապարկաց ասեն բնակել յաւերակսն, զոր յոյն լեզու իշացուլս ասէ:

Արդ, ցուցցե՞ն թէ գտանիցին իշացուլք ի Բաբելոնի. ապա ուրեմն յայտ է՝ եթէ անուանք առանց անձանց են յուշկապարկաց եւ իշացլոց. եւ գիրք ըստ սովորութեան մարդկան կարծեաց եկեալ՝ նոյնպէս անուանեցին՝ առ ի զաւերն Բաբելոնի նշանակելոյ, իբրեւ զծովացուլն՝ զոր ի կովէ ելեալ ասեն, եւ զպայն՝ իմն ի մարդկանէ, եւ զառլէզն՝ ի շանէ: Եւ այն ոչ եթէ անձինք ինչ են, այլ անուանք զբանդագանաց, եւ բաջաղանք մոլորելոց միայն ի դիւաց: Զի ի մարմնաւորէ աներեւոյթ ինչ ոչ ելանէ, որպէս ոչ յաներեւութէ իմեք մարմնաւոր: Ոչ երբէք ի մարդկանէ ելեալ պայն՝ եթէ երեւ արարած իցէ (իմա՝ արածիցէ), եւ ոչ ի կովուց ծովացուլն ելեալ, եթէ ի ծովակս բնակիցէ: Զի մարմնաւորի չէ հնար՝ թէ ի ջուրս կեցէ, որպէս

յառաջնորդաց, որ հովուէր ըստ քարոզութեան Աւետարանին: Զայս գիտել ոչ իմանայ, թէ ի մարմնաւորէ աներեւոյթ ոչ ինչ ելանէ եւ յաներեւութէն մարմնաւոր ինչ: Ոչ երբէք ի մարդկանէ ելեալ պայն, զորմէ ասեն՝ թէ երեւ ածէ, եւ ոչ ի կովուց ծովացուլ եւ ի ծովակի բնակեալ: Զի ցամաքային մարմնաւորի ոչ ինչ է հնար ի ջուրս բնակիլ եւ ոչ ջրայնոյ ի ցամաքի. եւ ոչ իշխան (իմա՝ ի շանէ) ինչ եղեալ, թէ ընդ աներեւոյթ զաւրութիւնս կայցէ (var. կացցէ), եւ զոր շլեզն կոչեն, թէ զվիրաւորս պատերազմի լիզեն եւ ողջանան. այն բարբաջանք հեթանոսաց են եւ պառաւանց առասպելք, մանաւանդ թէ դիւաց իմն մոլորութիւն:

Այլ վիճեալ պնդին, թէ եւ մերումն զծովացլու ձայն հանապազ լսեմք, եւ ոմն թէ՝ զպայն իմ իսկ աչաւք տեսեալ է, եւ ոմն՝ զի զառալէզն իմ իսկ տեսեալ է լիզելով: Եւ այսպէս յամառին որպէս հեթանոսս եւ զայն ոչ իմանան, թէ դեւք լինին ի կերպարանս եւ հանեն ձայն ահագին: Եւ առաքեալ[ն] ասէ. Սատանայ կերպարանի ի Հրեշտակ լուսոյ, որչափ առաւել եւս յանասնոց կերպարանս ի զարհուրեցուցանել զմարդիկ: Ոչ այդպէս, ասէն, այլ յառաջին ժամանակն զխոցս պատերազմին ողջացուցին լեզուովն: Անմի՛տ, արդ, զի՞ չբժշկեն, ո՞չ նոյն պատերազմունք եւ արդ են: Ասեն. յայնժամ դիցազունք էին: Արժա՞ն է քրիստոնէից այնպէս խաւսել: Զի՞նչ իցեն դիցազունքն՝ անմարմի՞նք են, թէ՞ մարմնաւորք: Յայտ է թէ մարմնաւոր մարդիկ զմարդկան ուրուականս ի պաշտաւն առեալ դիս անուանեցին: Ապա եթէ անմարմինք էին, յայտ է թէ անմարմնոյն չէ մարթ թէ ընդ կանայս ամուսնանալ: Զի թէ այնմ հնար էր ծնուցանել. բայց ոչ էր հնար, զի որ անմարմինն է, նոյն եւ անսերմն է. զի սերմ մարմնաւորաց է եւ ոչ անմարմնոց: Զի որպէս ոչ գոյ ծնունդ (var. ծնունդք) դիւաց, նոյնպէս ոչ գոյ մահ. թէպէտ եւ անմահ Աստուածութիւնն է, սակայն անմահութիւն շնորհեաց Հրեշտակաց եւ ոգւոց (իմա՝ հոգւոց) մարդ-

ոչ ջրականին՝ թէ ի ցամաքի կեցէ. եւ ոչ ի շանէ ինչ ելեալ՝ եթէ ընդ աներեւոյթ զաւրութիւնս ինչ կեցէ, եւ յորժամ վիրաւոր ոք անկեալ ի պատերազմի գնիցի՝ թէ լիզիցէ եւ ողջացուցանիցէ՞. այլ ամենայն առասպելք են եւ պառաւաց զրզջիւնք եւ մանաւանդ թէ ի դիւաց իսկ մոլորութենէ:

Այլ եւ վիճեալ եւս պնդին ի բանիցն վերայ: Մին ասէ՝ թէ ի մերում գեաւղ ծովացուլ զկով (իմա՝ ծովացուլս կով) գործեաց, եւ զգոչիւնն հանապազ մեք լսեմք ամենեքեան: Եւ միւսն ասէ. զպայն իսկ իմ աչաւք տեսեալ է: Միթէ եւ զառալիզէ՞ն եւս ոք կարիցէ ասել՝ թէ եւ զայն ուրուք տեսեալ իցէ: Եւ եթէ յառաջին ժամանակն առալէզք լիզէին զվիրաւորս եւ ողջացուցանէին, արդ, ընդէ՞ր ոչ լիզիցեն եւ ողջացուցանիցեն, ո՞չ նոյն պատերազմունք են, եւ նոյնպէս վիրաւորք անկանին:

Այլ յայնժամ, ասեն, դիւցազունք էին: Եւ մեք զդիցն իսկ պահանջեսցուք ի նոցանէ: Մարմնաւո՞րք էին արդեաւք դիքն, թէ՞ անմարմինք: Եթէ մարմնաւորք էին, յայտ է եթէ մարդիկ էին, եւ զմարդկան ուրուականս ի պաշտաւն առեալ՝ դիս անուանեն: Ապա եթէ անմարմինք էին, չէր մարթ անմարմնոյն ընդ կանայս մարմնաւորս ամուսնանալ: Զի եթէ այնմ հնար ինչ էր, ոչ երբէք դադարէր սատանայ ի կանաց սատանայածինս ծնուցանել: Զի որ անմարմին ոք է, նա եւ անսերմն է: Վասն զի սերմն մարմնաւորաց է եւ ոչ անմարմնոց. եւ առանց սերման ի կնոջէ ծնանել, միումն եւեթ մարթ եղեւ՝ որ Արարիչն է բնութեան մարմնոյ. եւ որպէս կամեցաւ, կարող եղեւ ի Կուսէ ծնանել առանց ամուսնութեան:

կան: Եւ դիւաց ոչ աճումն ունի եւ ոչ ծախուումն, բայց մարդկան է աճումն ամուսնութեամբ (var. մարդկան աճումն ամուսնութեան) եւ մեռանիլ վասն պատուիրանազանցութեան մարմնով եւ ոչ հոգւով: Եւ այլ արարած ոչ գոյ, որով կերպարանել կարէ՝ ոչ վիշապ եւ ոչ այլ ոք, բայց հրեշտակք եւ դեւք:

Ուստի ամենայն իմաստնոց արտաքնոց իւրաքանչիւր դիցն ակարութիւն հայեցեալ՝ չիշխեցին ասել՝ թէ ի կնոջէ ոք առանց ամուսնութեան ծնաւ: Եւ որպէս ոչ գոն ծնունդք դիւաց, նոյնպէս եւ՝ ոչ մահ: Թէպէտ եւ անմահ բնութեամբ Աստուածութիւնն եւեթ է՝ որ մշտնջենաւորն է, եւ ոչ յումեքէ առեալ սկիզբն լինելոյ, այլ եւ սկզբնաւորացն եւ բանաւորաց պարգեւեաց աննախանձ զանմահութիւն, զհրեշտակաց եւ զդիւաց ասեմ եւ զոգոց մարդկան: Յորոց մարդիկ, քանզի յերկուց բնութեանց են՝ ի մարմնաւորաց եւ յանմարմնոց, յիրաւի սերին ծննդեամբ եւ գան յաճումն ամուսնութեամբ. եւ մեռանին մարմնովք եւ ոչ ոգովք՝ վասն պատուիրանազանցութեանն:

Այլ հրեշտակք եւ դեւք ոչ յաւելուած ծննդեամբ առնուն եւ ոչ պակասութիւն մահուամբ. այլ որպէս հաստատեցանն, նոյնպէս եւ նովին թուով կան՝ առանց յաւելուածոյ եւ նուազութեան: Եւ ոչ այլ ինչ արարած գոյ՝ որ կարիցէ ի կերպարանս կերպարանս լինել, որպէս զվիշապացն եւ զնհանգացն համբաւեն. այլ միայն հրեշտակք եւ դեւք՝ որ կարող են զաւդս գնդել եւ պարզել, եւ ազգի ազգի կերպարանս երեւեցուցանել...(էջ 46, տող 9-48, տող 13)

Եւ ոչ վիշապք զոռհմականս արդեանց կրեն, եւ ոչ գրաստ գոյ նոցա՝ եթէ զարդիւնս ի կալոց ուրեք կրիցեն, եւ ի զուր է կա՛լ կա՛լն ասել ումեք ի կալս, եւ ոչ՝ ա՛ռ ա՛ռ: Զի վիշապն որ ինքն գրաստ է, այնու զի անասուն եւ անխաւսունն է, զիա՞րդ որ ինքն գրաստ է՝ զայլ գրաստ վարիցէ: Զի վիշապի այլազգ ինչ բնութիւն չէ՝ եթէ ոչ աւձի, այն յայտ իսկ է: Եւ զաւձ յաղթանդամ կամ զգազան ինչ ծովածին՝կոչեն գիրք վիշապ: Որպէս զմարդ յաղթանդամ հսկայ անուանեն, նոյնպէս եւ զաւձ ցամաքային անճոնի եւ զգազանն ծովական լեռնաձեւ, զկիտացն ասեմ եւ զդելփինաց, վիշապս անուանեն ըստ այնմ՝ թէ Դու ջախջախեցեր զգլուխ վիշապացն ի վերայ ջուրց եւ ետուր կերակուր ժողովրդոց եթովպացւոց... (էջ 48, տող 22-49, տող 1):

15. Հարցումն. Քաջք աներեւոյթ արարածք են Աստուծոյ, զպատերազմունս նոքա հարկանեն, զորս երէից (var. էրէից) նոքա հարկանեն եւ զարմտիս կալոց նոքա կրեն եւ զգինիս ի հնձանաց որպէս վիշապք զոռհմականս անդէտց ծծեն:

Պատասխանի. Այսպիսի յիմարութեամբ լցեալ է երկիր: Մի՞թէ մարթ իցէ զայսպիսին քրիստոնեայ ասել: Ոչ քաջ լեալ է երբէք եւ ոչ վիշապ: Վիշապ բառ է, որ ինչ մեծ է յերկիր՝ վիշապ ասի ըստ Գրոց, թէ՝ Դու փշրեցեր զգլուխ վիշապին ի վերայ ջուրց. որպէս մարդ մեծանձն եւ յաղթանդամ՝ սկայ ասի:

16. Հարցումն. Ասեն. քաջաց եւ վիշապաց տեարք (իմա՝ տաճարք) են ի լերինս բարձունս եւ բնակութիւնք, եւ զԱղեքսանդր կապեալ ունին ի Հռոմ եւ զԱրտաւանդ՝ ի Մասիս եւ զԱրուանդ՝ ի գետս եւ ի մառանս.

Պատասխանի. Յորդւոց մարդկան կենդանի են Ենովք եւ Եղիայ. այլ ամենեցուն զմահ ճաշակեալ է: Բայց մոլորութիւն դիւաց խաբեաց զդիւցապաշտս Հայոց, թէ զԱրտաւազդ զոմն արգելեալ է վիշապաց ի Մասիս, եւ է կենդանի եւ նա ելանելոց է եւ զաշխարհ ունելոց: Եւ ուրումն յանմիտ իշխանաց Հայոց հարցեալ զգձապատումն հմաւորականս, թէ ե՞րբ լինիցի Արտաւազդայ գալ ելանել ի կապանաց, եւ նոցա ասացեալ. եթէ ոչ կամիս զելանելն նորա, հրաման տուր ընդ ամենայն աշխարհս Հայոց դարբնաց, որ աւր նաւասարդի է, ամենայն դարբին կռանաւ կոփէ ի վերայ սալի իւրոյ, եւ երկաթք Արտաւազդայ անդրէն հաստատին: Զնոյն հրաման կատարեն այժմ. ամենայն դարբին կոփէ կռանաւ իւրոյ ի վերայ սալի:

Սոյնպէս մեծացուցանէ սատանայ առաչաւք զվիշապն, զի յորժամ ահագինք երեւեսցին՝ ասցեն զնա ի պաշտաւն, թէ նահանգ ինչ իցէ գետոց կամ չահապէտ է: Յետ կարծեցուցանելոյն ինքն կերպարանի ստուերաձեւ երեւմամբ ահեղաձեւ տեսիլ, եւ զարհուրեցուցանել կերպարանի կամ վիշապ, կամ նահանգ, կամ չահապետ, զի այնու (var. այնիւ) զմարդիկ յԱրարչէն ապստամբեցուսցէ: Զի թէ էր նահանգ մարմնաւոր, ոչ երբեմն կնոջ պէս ցուլ անուն անուանին (var. անուանեն), ոչ մերթ մարդ երեւէր եւ մերթ աւձ, որով զաւձապաշտութիւն հնարեցաւ մուծանել յաշխարհս: Նոյնպէս եւ վիշապն՝ ոչ միանգամ

Եւ ոչ որս երբէք՝ որպէս մարդկան՝ արաբեալ վիշապաց, կամ առնիցեն. եւ ոչ տաճարք իբրեւ մարդկան են նոցա ի բնակութիւն: Եւ ոչ զօք ի թագաւորազգեաց եւ ի դիւցազանց ունին կապեալ առ իւրեանս կենդանի. զի կենդանիք ի մարմնաւորաց երկուսն եւեթ կան՝ Ենովք եւ Եղիա:

Այլ որպէս զԱղեքսանդրէ խաբէին դեւք՝ թէ կենդանի կայցէ, որոց ըստ եգիպտական հնարողութեանն՝ կապեալ արկեալ կախարդանաւք զդեւ ի չիշ կարծեցուցանէին, թէ Աղէքսանդրոս կենդանի իցէ եւ մահ խնդրիցէ[1]. եւ գալուստն Քրիստոսի խայտառակեաց զխաբէութիւնն եւ եհարձ ի միջոյ զդայթակղութիւնն, նոյնպէս եւ մոլորութիւնն դիւաց խաբեաց զդիւցապաշտս Հայոց, եթէ զոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կայ, եւ նա ելանելոց է եւ ունելոց զաշխարհս. եւ ի սնոտի յոյս կապեալ կան անհաւատք, որպէս եւ հրեայք՝ որ ի զուր ակնկալութիւն կապեալ կան, եթէ Դաւիթ գալոց է՝ շինել զԵրուսաղէմ եւ ժողովել զհրեայս եւ անդ թագաւորել նմա նոցա:

Եւ այնպէս ջանայ սատանայ՝ զի զամենայն ոք ի բարւոք ակնկալութենէ վրիպեցուսցէ եւ ի սնոտի յոյս կապիցէ: Մեծացուցանէ յաչս մարդկան զվիշապս, զի յորժամ ահագինք երեւեսցին ոմանց՝ առնուցուն զնոսա ի պաշտաւն: Կարծեցուցանէ թէ եւ նահանգք ինչ իցեն գետոց եւ չահապետք վայրաց: Եւ յետ կարծեցուցանելոյ՝ ինքն կերպարանի կամ ի վիշապի կերպարանս, կամ ի նահանգի իմն եւ ի չահապետի, զի այնու զմարդն յԱրարչէն թիւրեսցէ: Զի եթէ էր ինչ նհանգն անձնաւոր, ոչ երբեմն ի կնոջ կերպարանս երեւէր, եւ երբեմն փոկ լինէր եւ զաւղորդաց ընդ ոտս անկեալ՝ հեղձուցանէր.

---

1 Աղեքսանդրի մասին այս առասպելը, որի մանրամասնութիւնները «Հարցումի» մէջ չենք գտնում, ծանօթ է եղել նաեւ Եղիշէին: Իր «Արարածոց մեկնութեան» մէջ, որից պահպանուել են միայն առանձին հատուածներ, Եղիշէն գրել է. «Ապականացուին անմահանալն չէ հնար, եւ թէ էր՝ լինէր իբրեւ զառասպելն, զոր ասեն՝ զԱղեքսանդրոս ումն անմահ կայ՝ այնքան մաշեալ, որ լեզուն է միայն մնացեալ, զոր արկեալ ի շիշ, ասեն, հեծէ եւ ասէ. Ուրեմն թէ Ադամ անմահացեալ էր, լինէր իբրեւ զիս» (ձեռ. N 1267, էջ 77ա-77բ):

վիշապ երեւէր, մերթ աւձ, միանգամ մարդ, որպէս ցուցաքն: Իսկ թէ մարմնաւոր ինչ է, ապա փոխի ոչ. այլ թէ ի կալս ջրոյ ոք երեւին եւ աներեւութանան, եւ ի դաշտս երագագգ (var. *երագ ագգ ագգ*) *ձգին եւ ընթանան զհետ երէոց, դեւք կերպարանին առ ի մոլորեցուցանելոյ զմարդիկ:*

այլ կամ կինն կին կայր, կամ փոկն փոկ:

Նոյնպէս եւ զոր շահապետ վայրաց կոչեն, ոչ մերթ մարդ երեւէր եւ մերթ աւձ, որով եւ զաւձապաշտութիւնն հնարեցաւ յաշխարհ մուծանել: Նոյնպէս եւ վիշապն ոչ մի անգամ աւձաձեւ երեւէր եւ միւս անգամ մարդակերպ, որպէս յառաջագոյնն իսկ ասացաւ՝ թէ որ մարմնաւոր ինչ է, յայլ կերպարանս չկարէ փոխել:

Այլ թէ ի կալս ջորիք եւ ուղտք երեւիցին, դիւաց կերպարանք են այն եւ ոչ վիշապաց: Եւ եթէ ի դաշտս երագագանք ձգիցին, եւ հեծեալք իբրեւ զմարդիկ զհետ երէոյ արշաւիցեն, կեղծիք դիւաց են եւ ոչ ճշմարտութիւն ինչ իրաց (էջ 49, տող 9–50, տող 11):

* * *

Հարկադրուած ենք ըստ մեր խոստման համառօտակի անդրադառնալ Մ. Մինասեանի «Գրիգոր Պարթեւի կամ ս. Մաշտոցի վերագրուած «Հարցումը» եւ «Եզնիկ Կողբացի»» խորագրով յօդուածաշարին[1]: Եւ քանի որ չեղուելու ենք բուն նիւթից, մեր յօդուածի այս 8-րդ պարբերութիւնը Եղիշէի օրինակով կարող ենք կոչել «արտաքոյ ութն եղանակին՝ ութերորդ»[2]:

Ասել ենք արդէն, որ տողերիս գրողը իր մի յօդուածով[3], երջանկայիշատակ Ն. Ադոնցի հետ միասին, արժանացել է Մ. Մինասեանի բարեհաճ ուշադրութեանը:

Ի՞նչն է եղել մեր այդ յօդուածի նիւթն ու միտք բանին: Հետեւելով Ն. Ադոնցին եւ լրացուցիչ փաստեր մէջբերելով՝ փորձել ենք ցոյց տալ, որ Գրիգոր Պարթեւի անունը կրող «Հարցմունքը» հայ գրականութեան ամենավաղ շրջանի ստեղծագործութիւններից է եղել, եւ որ այն Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» անունով յայտնի երկի սկզբնաղբիւրներից մէկը լինելով՝ գրուել է 5-րդ դարի 40-ական թթ. տարիներ առաջ:

Մեր ընդդիմախօսը, սակայն, ճգնել է հակառակն ապացուցել՝ կարծելով, որ «գիտնական», «աստուածաբան», «կուռ տրամաբանութիւն ունեցող», «գեղեցիկ ու անգերազանցելի լեզուով ու ոճով օժտուած» եւ հազար ու մի այլ բարեմասնութիւնների տէր Եզնիկը չէր կարող այդ «խղճուկ», «անճարակ», «մակերեսային» (այս բոլոր չքեղ գնահատական-արտայայտութիւնների հեղինակն, անշուշտ, Մ. Մինասեանն է) գրուածքն օգտագործած լինել որպէս աղբիւր. ուստի սկզբից գրուել են Եզնիկի աշխատութեան համապատասխան հատուածները, եւ դրանից շատ յետոյ միայն նրա «ստրկական հետեւողութեամբ» ստեղծուել է այս «Հարցումը»:

Տարօրինակ այս տրամաբանութեամբ՝ որեւէ երկի համար աղբիւր ծառայած գրուածքները ե՛ւ իրենց բովանդակութեամբ, ե՛ւ լեզուով աւելի կատարեալ են լինելու, քան նրանցից կախման մէջ գտնուող երկերը, ուստի գրականութեան ու լեզուի զարգացումը տեղի է ունեցել վարընթաց գծով՝ լաւից վատ, կատարեալից՝ անկատար: Ահա տեսական այս հիմքի վրայ կանգնած մեր ընդդիմախօսը փառաբանում է Եզնիկին՝ որպէս մի հեղինակի, որն ինքնաբաւ լինելով, պէտք չի ունեցել օգտուելու այլ հեղինակների գրուածքներից. եւ այս՝ այն դէպքում, երբ բացայայտուած են արդէն շուրջ մէկ տասնեակ յունական աղբիւրներ, որոնցից Եզնիկն ընդարձակ էջեր է ընդօրինակել՝ յարմարեցնելով դրանք իր գրուածքի բովանդակութեանն ու նպատակին[4]:

---

1 Յօյժ երկարաբան այդ յօդուածաշարի մեզ հետաքրքրող մասերը տպագրուած են «Հանդէս ամսօրեայի» ստորեւ նշուող համարներում. 1972, N 1-3, էջ 73-94, N 4-6, էջ 199-212, N 7-9, էջ 347-354, N 10-12, էջ 439-462:

2 [Խօսքը «Օտարալեզու հայ գրականութիւնը չորրորդ դարում» յօդուածում եղած խոստմանն է վերաբերում: Շահեկան ամբողջութեան նպատակով յարմար նկատեցինք այդ յօդուածի վերջին բաժինը (բնագրում՝ 8-րդ) տեղափոխել այստեղ: Խմբ.]

3 Լ. Խաչիկեան, Գրիգոր Պարթեւին վերագրուած «Հարցումը»՝ որպէս հայ մատենագրութեան երախայրիք («Բանբեր Մատենադարանի», N 7, էջ 301-330)

4 Այս մասին տե՛ս Գ. Գալեմքեարեան, Նորագոյն աղբերք Եզնկայ Կողբացւոյ Ընդդէմ աղանդոց մատենին, Վիեննա, 1919:

Մեր ինքնահաւան եղնիկագէտը, իր ամէն մի խօսքին երկնառաք պատգամի ուժ վերագրելով, յայտարարում է, թէ ինքն արդէն հերքել է «Աղոնցի եւ Խաչիկեանի բոլոր փաստարկումները»: Աղոնցին թողնելով հանգիստ՝ տեսնենք, թէ ինչպէս է նա հաշուի մաքրել տողերիս գրողի հետ:

Եղնիկի աղբիւրներից շատերը, նշել ենք մենք վերոյիշեալ մեր յօդուածի մէջ, տրամախօսական կառուցուածք են ունեցել, այսինքն՝ գրուած են եղել ճիշտ այնպէս, ինչպէս մեր «Հարցմունքն» է: Արդէն Գ. Գալեմքեարեանն է նկատել, որ «Եղծ աղանդոցի» հեղինակն ամէն կերպ ձգտել է փոխել իր աղբիւրի տրամախօսական ձեւը:

Դէմ-դիմաց հրատարակած լինելով «Հարցմունքի» եւ «Եղծ աղանդոցի» ազգակից հատուածները՝ հնարաւորութիւն էինք տուել մեր ուշիմ ընթերցողներին անձամբ համոզուելու, որ սկզբնաղբիւրը «Հարցմունքն» է, իսկ Եղնիկի համապատասխան հատուածները՝ ըստ մեծի մասի բառացի, երբեմն էլ բարեշրջուած ու մշակուած, քաղուածքներ են այդ բնագրից:

Հաշուի էինք առել նաեւ բաւարար փորձ չունեցող սկսնակ բանասէրներին եւ մի քանի բնորոշ զուգակշիռ հատուածների յատուկ անդրադարձել էինք մեր ներածական խօսքի մէջ:

Ահա դրանցից մէկը. «Հարցմունքի» մէջ գրուած է.

Հարցումն. Մեղաւորք վասն մեղաց տանջին, իսկ տղայոց անմեղաց զի՞ տիրիցեն դեւք:

Պատասխանի. Զամենայն մարդ յորդեգրութիւն կոչէ Աստուած...» եւ այլն:

Եղնիկը, ձեւափոխելով հարց ու պատասխանին, բովանդակութիւնը մատուցել է համառօտելով՝ այսպէս. «Այս ասացաւ վասն հարցանելոյ ոմանց, թէ մեղաւորք վասն մեղաց տանջիցին ի դիւացն, տղայոց անմեղացն ընդէ՞ր տիրիցեն դեւք: Զամենայն մարդիկ յորդեգրութիւն կոչէ Աստուած...» եւ այլն:

«Այս ասացաւ վասն հարցանելոյ ոմանց» խօսքերով Եղնիկն ուղղակի մատնացոյց է արել իր աղբիւրը, որի մէջ, ինչպէս տեսանք, նոյն այդ հատուածը շարադրուած էր հարց ու պատասխանի ձեւով:

Նոյնն են ապացուցում նաեւ մեր մատնացոյց արած միւս օրինակները[1]:

Ինչպէս է «հերքում» մեր քննադատն այս եւ նման փաստերը. «Ինչպէս այս, այնպէս էլ միւս փաստերը,- գրում է նա,- անուժ են, քանի չապացուցուի Հարցարանի վաղեմութիւնը Եղնիկի երկի համեմատութեամբ... եթէ Լ. Խաչիկեանի պէս դատելու լինենք,- շարունակում է նա,- Եղնիկի բանավիճելու բոլոր նման դէպքերում պէտք է ենթադրենք մի հարցարան-աղբիւր»[2]:

Յիշեցնենք մեր ընթերցողին, որ Եղնիկի երկի մէջ խրօք թաքնուած են մի շարք հարցարան-աղբիւրներ, ինչպէս օրինակ՝ Մեթոդիոս Օլիմպիացու «Վասն անձնիշխանութեանը», Ադամանտիոսի «Յաղագս ուղիղ հաւատոյ յԱստուած» գրուածքը եւ այլն: Բառացի քաղելով սրանցից ամբողջական էջեր՝ Եղնիկն, ինչպէս ապացուցել է Գ. Գալեմքեարեանը, ճիգ ու ջանք է գործադրել իր աղբիւրների տրամախօսական ձեւը

1 Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», N 7, էջ 304-305:

2 «Հանդէս ամսօրեայ», 1972, էջ 75

ջնջելու[1]:

Պէտք չէ անտեսել նաեւ Եղնիկի մի այլ հաւանական աղբիւրը, որը չնայած չի պահպանուել, սակայն որի գոյութեան մասին հիմնաւոր փաստեր է հրապարակ հանել բազմավաստակ Ն. Աղոնցը[2]: Խօսքը Թէոդորոս Մոպսուեստացու «Յաղագս որ ի Պարսս մոգութեան» (Περί τῆς πξερσίδι μαγικῆς) երեք մասերից բաղկացած այն աշխատութեան մասին է, որ ձեռքի տակ ունեցել է Կ. Պոլսի նշանաւոր Փոտ պատրիարքը: Աշխատութիւնը նոյն պատրիարքի վկայութեամբ ուղղուած է եղել Մաստուբիոս անունով «ծագումով Հայաստանից քորեպիսկոպոսի», այսինքն գրուել է ի պատասխան առաջադրուած հարցումների: Աղոնցը հանգել է այն համոզման, որ Մաստուբիոս քորեպիսկոպոս կոչուածը հէնց Մեսրոպ Մաշտոցն է, հայ դպրութեան հանճարեղ հիմնադիրը[3]

«Հարցմունքի» տրամախօսական ձեւի կապակցութեամբ մեր շատաբան ընդդիմախօսի միւս ասածները արժանի չեն քննութեան:

Մեր բնագրի հնութիւնը ցոյց տալու համար ուշադրութիւն էինք դարձրել եւ այն իրողութեանը, որ նրա մէջ օգտագործուած սուրբգրական հատուածները շատ տեղերում չեն համապատասխանում Աստուածաշնչի մեզ հասած բնագրին[4]: Մենք երբէք նպատակ չենք

1 Գ. Գալեմքեարեան, նշ. աշխ., էջ 86

2 Ն. Աղոնց, Անծանօթ էջեր Մաշտոցի եւ նրա աշակերտների կեանքից՝ ըստ օտար աղբիւրների («Հանդէս ամսօրեայ», 1925)

3 Ե. Տէր-Մինասեանը «Հայոց գրերի գիւտի թուականի եւ այլ յարակից խնդիրների մասին» շատ արժէքաւոր յօդուածի մէջ (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», N 7, էջ 38-45) փորձել է կասկածի տակ առնել Ն. Աղոնցի ուշագրաւ առաջարկը Մաստուբիոս-Մաստոմիոսին Մաշտոցի հետ նոյնացնելու մասին: Սակայն նրա կասկածները հիմնաւորուած չեն. հենց Աղոնցի կողմից շրջանառութեան մէջ դրուած տուեալներն օգտագործելով՝ Ե. Տէր-Մինասեանը նշում է, որ «Մաշտոց» անունը յունական մի այլ աղբիւրի մէջ տառադարձուած է «Մաստիձէ» եւ «Մաստե(ն)ձէ» ձեւերով, ուստի եզրակացնում է, որ ճիշտ նոյնպէս պէտք է տառադարձուած լինէր նաեւ Թ. Մոպսուեստացու կամ Փոտ պատրիարքի մօտ: Սա տրամաբանական պահանջ չէ. «Մաշտոց» անուան շ եւ ց տառերը բացակայում են յունարէնից, ուստի տարբեր ժամանակներում ապրած տարբեր յոյն հեղինակներ իհարկէ տարբեր ձեւերով պէտք է տառադարձէին իրենց ականջին խորթ այդ անձնանունը: Բերենք մի բնորոշ օրինակ. Նիկիոյ ժողովին մասնակցել է Գրիգոր Լուսաւորչի որդի Արիստակէսը. սրա անունը, որի յունարէն տառադարձումը շատ դիւրին է, ժողովի արձանագրութիւնների մէջ պահպանուել է 3 տարբեր աղաւաղ ձեւերով՝ Արիստարքոս, Արիտսեկիսոս, Արսափիոս (տե՛ս **Մ. Օրմանեան**, Ազգապատում, Ա, 1959, էջ 112): Եւ եթէ անճանաչելի աղաւաղուած է այսքան պարզ տառադարձուող մի անուն, այն էլ նոյն գրուածքի մէջ, մի՞թէ տարօրինակ պէտք է համարել «Մաշտոց» անձնանուան աղաւաղ գրութիւնը յունական տարբեր աղբիւրներում:

Անընդունելի են նաեւ Ե. Տէր-Մինասեանի առարկութիւնները Մաշտոցի քորեպիսկոպոս կոչման մասին: Ինչ բովանդակութիւն է ունեցել եկեղեցական այդ պաշտօնը ուրիշ երկրներում՝ հետաքրքրական հարց է անշուշտ, բայց չի առնչւում Աղոնցի ուսումնասիրութեանը: Հայաստանում, ինչպէս գիտենք Փաւստոս Բուզանդից, IV դարի կէսերին քորեպիսկոպոսական պաշտօն ունէր նշանաւոր Դանիէլ եպիսկոպոսը՝ մի անձնաւորութիւն, որ Հայոց եկեղեցու ամենաազդեցիկ դէմքն էր՝ երկրորդը կաթողիկոսից յետոյ: Մաշտոցը նոյն դիրքն ունէր Սահակ կաթողիկոսի ժամանակ. եւ եթէ յունական աղբիւրը տեղեկութիւն է պահպանել նրա քորեպիսկոպոս լինելու մասին, որեւէ հիմք չունենք այդ մերժելու:

Երկար անդրադարձանք Մաշտոցի պատուէրով Թ. Մոպսուեստացու գրած «Յաղագս որ ի Պարսս մոգութեան» երկի հետ առնչուող հարցերին, որովհետեւ այդ երկու նշանաւոր անձանց համագործակցութեամբ ստեղծուած (աւա՜ղ, մեզ չհասած) աշխատութիւնը, որ եղել է Պարսից քէշի քննադատութիւնը քրիստոնէական եկեղեցու դիրքերից, անտարակոյս օգտագործուել է Եզնիկ Կողբացու եւ V դարի այլ հեղինակների կողմից: Եւ այս կապակցութեամբ Մ. Մինասեանի անպտուղ դատողութիւնները, որ արուած են Ե. Տէր-Մինասեանի մեծ հեղինակութիւնը չարաշահելով, զուրկ են գիտական արժէքից:

4 «Մեզ հասած բնագիր» ասելով նկատի ունենք Սուրբ Գրքի Զոհրապեան հրատարակութիւնը: Քաջ գիտակցում ենք, որ այն գիտական հետազօտութիւնների հիմք չի կարող հանդիսանալ, եւ որ վաղուց

ունենալ այս առիթով քննարկել նաեւ Եզնիկի սուրբգրական հատուածների բնոյթի հարցը, չնայած միշտ էլ գիտակցել ենք, որ հայ մատենագրութեան ինքնուրոյն եւ թարգմանական հնագոյն յուշարձանների միջնորդութեամբ մեզ հասած աստուածաշնչային մէջբերումների մանրագիտական քննութեան ճանապարհով երեւան են բերուելու անակնկալ ու հետաքրքրական նոր նիւթեր՝ ի նպաստ դասական հայերէնի հին շերտի գիտական ուսումնասիրութեանը[1]:

Մեր ընդդիմախօսն աւելի հանգամանօրէն է ուսումնասիրել «Հարցմունքի» սուրբգրական հատուածները (այստեղ եւս անհարկի մանրուքների մէջ թաղուելով) եւ հասել է այն արդիւնքին, որ նրանում Աստուածաշնչի 27 մէջբերումներ կան, որոնցից միայն 8-ն են նոյնանում Աստուածաշնչի մեզ հասած բնագրին, իսկ 19-ը, այսինքն՝ 70 տոկոսը, տարբերւում են: Եզնիկի զուգակշիռ հատուածներում կան ընդամէնը 7 սուրբգրական մէջբերումներ. սրանցից 4-ը համընկնում են, իսկ 3-ը (շուրջ 40 տոկոս) տարբերւում[2]:

Արդ, այստեղից չի՞ հետեւում արդեօք, որ «Հարցմունքի» հեղինակը (այժմ պէտք է ասել՝ թարգմանիչը) ձեռքի տակ ունեցել է հայերէն Աստուածաշնչի մի օրինակ, որը զգալապէս տարբեր է եղել մեզ հասած խմբագրութիւնից: Եւ եթէ այդ տարբերուող սուրբգրական հատուածներից թէկուզ մի քանիսը Եզնիկի մօտ փոփոխուած ու համապատասխանեցուած են Աստուածաշնչի բարեշտկուած խմբագրութեանը (այդ բանը ցոյց է տրուած մեր կողմից), սրանից չի՞ բխում արդեօք, որ «Եղծ աղանդոցի» սկզբնաղբիւրը «Հարցմունքն» է եղել:

Անկանխակալ բանասէրի համար հարցն, անշուշտ, պարզ է. «Հարցմունքի» սուրբգրական հատուածները չեն բխում Եզնիկից. սկզբնաղբիւրը «Հարցմունքն» է եւ ոչ հակառակը: Մ. Մինասեանը, սակայն, երկար ու ձիգ եւ բռնազբօսիկ դատողութիւններ է անում, Վահրամ Րաբունու (XIII դարի հեղինակ) «Հարցմունք եւ պատասխանիք» աշխատութիւնը, որ քննարկուող խնդրի տեսակէտից արժէքազուրկ է, նոյնպէս մանրակրկիտ «հետազօտութեան» նիւթ է դարձնում, պարզ հարցը խառնում ու խճճում է, որպէսզի ի վերջոյ յայտարարի, թէ ինքը հերքել է արդէն «Ադոնցի ու Խաչիկեանի բոլոր փաստարկումները...»:

Մենք ուրիշ փաստարկներ էլ էինք բերել «Հարցարանի» հնութիւնն ապացուցելու համար (խանդիռ երեւակայական կենդանու եւ նահանգի ձիու հետ առնչուած լինելու մասին տուեալների բացակայութիւնը «Եղծ աղանդոցից» եւ այլն): Սրանք եւս, իհարկէ, «հերքուած» են մեր ընդդիմախօսի կողմից[3]:

Ձեռք բերուած յաղթանակի դափնիները հանգստի չեն կոչել Մ. Մինասեանին եւ նա, յայտարարելով, որ «Ադոնցն ու Լ. Խաչիկեանը անտեսել են Հարցարանի լեզուն եւ նրա մասին ոչինչ չեն ասել», կամովին իր վրայ է վերցրել այդ թերին լրացնելու պատասխանատու ու դժուարին պարտականութիւնը:

հասունացել է Հին եւ Նոր Կտակարանների հայերէն թարգմանութեան գիտական բնագիրը ստեղծելու անհրաժեշտութիւնը:

1 1945 թ. շարադրուած մեր թեկնածուական թեզի մէջ, որ նուիրուած է Եղիշէի «Արարածոց մեկնութիւն» կորած աշխատութեան այն հատուածներին, որոնք պահպանուել են միջնադարեան այլ մեկնողական գրուածքներում, յատուկ գլուխ էինք նուիրել Եղիշէի օգտագործած Աստուածաշնչի օրինակին՝ բացայայտելով նրա մի շարք ուշագրաւ տարբերութիւնները:

2 «Հանդէս ամսօրեայ», 1972, էջ 94

3 Նոյն տեղում, էջ 81-82 եւ յետ.

Մինասեանի տեսական նկատէն այս խնդրում եւս գիտութեան հետ հեռաւոր առնչութիւն ունի. նա համոզուած է, որ Վիեննայի Մխիթարեանները դասական հայերէնի ուսումնասիրութիւնը այնպիսի կատարեալ աստիճանի են հասցրել, որ այլեւս դժուարութիւններ չկան «ստոյգ որոշելու գրաբար այս կամ այն գրուածքի պատկանելութիւնը այդ ժամանակաշրջանին» (այսինքն՝ V դարի առաջին յիսնամեակին)[1]:

Եւ այս ասւում է այն ժամանակ, երբ հայագիտութեան մէջ շարունակւում են կրքոտ վէճերը ոսկեդարեան եւ յունաբան կոչուող լեզուա-ոճական դրութիւնների յարաբերութեան ու ժամանակագրական սահմանների մասին, երբ դեռեւս չեն ուսումնասիրուած դասական հայերէնի կատարեալ ստեղծագործութիւնը համարուող Հին եւ Նոր Կտակարանների հին ու նոր շերտերը, չեն բացայայտուած շարահիւսական եւ բառամթերային այն տարբերութիւնները, որ գոյութիւն են ունեցել մի կողմից՝ սուրբգրական յուշարձանների նախնական-փուլթանակի կատարուած թարգմանութիւնների, միւս կողմից՝ նոյն բնագրերի յետագայում իրականացուած խմբագրութիւնների միջեւ:

Այս ամենին անգիտակ մեր ընդդիմախօսը ձեռնարկում է «Հարցմունքի» լեզուի ուսումնասիրութեանը երկու տարբեր մակարդակներով: Նախ երեւան է բերում շուրջ երկու տասնեակ բառեր ու կապակցութիւններ, որոնք կա՛մ տարբերւում են դասական հայերէնի օրինակելի ձեւերից, կա՛մ էլ ուղղակի սխալ են: Այսպէս օրինակ՝ գրուած է «կախարդքն», բայց պէտք է լինի «կախարդսն». գրուած է «լլկանս... ածէ», երբ լինելու էր «լլկանս... ածեն» (յոգնակի), «սերմն» բառը մի քանի տեղ գրուած է «սերմ» ձեւով (առանց վերջին ն-ի) եւ այլն:

Ձեւագրագիտական հետազօտութիւնների նուազագոյն փորձ ունեցող բանասէրն իսկ պէտք է տեղեակ լինէր, որ նման գրչական տարընթերցուածքների հիման վրայ անհնարին է ժամանակագրական խրթին հանգոյցներ լուծել, որոշել երկու տարբեր բնագրերից մէկն ու մէկի առաջնութիւնը կամ գրութեան ժամանակը եւ այլն[2]:

---

1 Նոյն տեղում, էջ 446

2 Վերջերս յայտնի դարձաւ, որ Երուսաղէմի N 1912 ձեռագրի մէջ (ընդօրինակուած 1369 թ.) նոյնպէս կայ Գրիգոր Պարթեւի «Հարցմունքը», որի ԺԴ եւ ԺԶ հարցումները հրատարակուել են Ն. Պողարեանի կողմից (տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հտ. վեցերորդ, Երուսաղէմ, 1972, էջ 346-347): Մեր հրատարակութեան եւ երուսաղէմեան ձեռագրի համապատասխան հատուածների միջեւ կան մէկ տասնեակից աւելի ուշագրաւ տարբերութիւններ:

Բերենք մի քանի օրինակ (նախ տալիս ենք մեր հրատարակութեան բառը կամ բառախումբը, ապա՝ երուսաղէմեան տարբերակը).

- «անեն եւ պակասեն»	- «անեն եւ ապականեն»,
- «կէս անմարմինք»	- «կէս առանց մարմնոյ»,
- «զառալէզն»	- «զարալէզն»,
- «զխանդիռն»	- «զխանդիռոնն»,
- «ընդ աներեւոյթ զաւրութիւնս կայցէ»	- «...բնակէ կամ կացցէ»,
- «եղանելոց է եւ զաշխարհ ունելոց»	- «...եւ զաշխարհ ունելոց»,
- «կնոջ պէս ցոյ անուն»	- «կնոջ պես յուրանաց անուն»,
- «նոյնպէս եւ զհետ երէոց»	- «եւ ընդ հետ ընթանան էրէոց» եւ այլն:

Արդ, հնարաւո՞ր է արդեօք գրչագրական այս կարգի տարընթերցուածքների հիման վրայ որոշել որեւէ երկի գրութեան ժամանակը կամ բանասիրական այլ խրթին խնդիրներ: Ժխտական պատասխան տալով այս հարցին՝ հարկ ենք համարում նշել, որ, մեր լեզուաբանների կողմից ձեւակերպուած ոսկեդարեան հայերէնի

Ի պատիւ մեր ընդդիմախօսի պէտք է ասել, որ նա չի բաւարարւում գրչագրական տարընթերցուածքների մանրակրկիտ հաշուառումով, այլ փորձում է բացայայտել նաեւ «Հարցմունքի» այն բառերն ու ոճերը, որոնք տարբերւում են «Եղծ աղանդոցից» ու չեն համապատասխանում դասական հայերէնի կանոններին: Այդ էլ քիչ է թւում մեր բծախնդիր բանասէրի համար, եւ նա ապաւինում է նաեւ լեզուական իր հոտառութեանը. «Մեսրոպեան հայերէնը,– գրում է նա,– ունի իր ներքին յատկութիւնները, որոնք աւելի շատ զգացւում են, քան ցոյց տրւում»[1]:

Տէրը գիտէ, թէ որքանով են զօրաւոր «զգացուած», բայց «ցոյց չտրուած» լեզուական այդ յատկութիւնները. ինչ վերաբերում է «Հարցմունքի» թւով 6 այն նախադասութիւններին, որոնք մանրամասնօրէն քննարկուել են մեր գրաբարագէտի կողմից՝ որպէս ոսկեդարեան հայերէնին անյարիր, նրա սկզբունքներին հակասող տեղիներ, ապա առանց դոյզն կասկածի կարելի է յայտարարել, որ դրանք ոչինչ չեն ապացուցում:

Մ. Մինասեանը հայոց գրաւոր լեզուի ձեւաւորման ու զարգացման ընթացքը պատկերացնում է այսպէս. ի սկզբանէ էր դասական գրաբարը՝ այսպէս կոչուած ոսկեդարեան լեզուն՝ անթերի իր բառապաշարով եւ քերականական ընտիր ձեւերով: Այդ լեզուով շարադրուած լաւագոյն երկերից է Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը». Գրիգոր Պարթեւի «Հարցմունքի» մէջ կան 6 նախադասութիւններ, որոնք չեն համատեղւում Վիեննայի Մխիթարեանների կողմից «յայտնագործուած» ոսկեդարեան գրաբարի քերականական ու լեզուա-ոճական կաղապարի հետ, ուստի դրանից հետեւում է պարզ ու որոշակի, որ «Հարցմունքը» «չի կարող գրուած լինել հինգերորդ դարի առաջին կէսի գրաբարով»[2]:

Օ՜, երջանիկ անգիտութիւն:

Այս փառայեղ տրամաբանութեամբ առաջնորդուելու դէպքում, Խ. Աբովեանի բարբառախառն աշխարհաբարը Շիրուանզադէի կամ Նար-Դոսի լեզուի հետ համեմատելով, ստիպուած պէտք է լինէինք արձանագրել, որ «Վէրք Հայաստանին» գրուած է «Քաոս» կամ «Մահը» վէպից տասնամեակներ յետոյ, քանի որ նրա մէջ կան բազմաթիւ «շեղումներ» արեւելահայ աշխարհաբարի հասուն շրջանի լեզուա-քերականական կանոններից: Անհեթեթ կլինի նման հետեւութիւնը. բայց ինչո՞վ են տարբերւում սրանից Մ. Մինասեանի դատողութիւնները Գրիգոր Պարթեւի «Հարցմունքի» լեզուի մասին:

«Հարցմունքը» շարադրուած է պարզ ու դիւրըմբռնելի գրաբարով. նրա մէջ չկայ նոյնիսկ մէկ յունաբան բառ կամ կապակցութիւն, իսկ եթէ կան մէկ-երկու նախադասութիւններ, որոնք շեղւում են ոսկեդարեան կոչուող հայերէնի դասական ձեւերից, ապա դրանք այլ բացատրութիւն են պահանջում: Այդ երկը յունարէնից թարգմանուել է հայ գրականութեան արշալոյսին, երբ ոսկեդարեան հայերէնն իր լինելութեան առաջին շրջանն էր բոլորում: Մի քանի տասնամեակ տեւող գրական աշխոյժ գործունէութիւն էր ծաւալուելու այդ լեզուի կատարելութեան համար. բարբառային ազդեցութիւններից զտուելու, իմաստասիրական բարդ մտքեր արտայայտել կարենալու համար ժամանակ էր պէտք, եւ յամառ ջանքեր էին գործադրուելու: Եւ եթէ «Եղծ աղանդոցը» մէկն է ոսկեդարեան գրաբարի հասուն շրջանի գեղեցիկ արգիւնքներից, «Հարցմունքը» նրա սկզբնական թոթովանքներից է:

Նախամեսրոպեան շրջանում օտար լեզուներով Հայաստանում ստեղծուած գրական այն յուշարձանները, որոնք թարգմանուել են V դարի սկզբներին եւ հասել մեզ, նոյն այդ տարիներին շարադրուած կամ թարգմանուած այլ գրուածքների հետ միասին (պէտք է որոնել ու գտնել դրանք) հէնց այն մեծարժէք ստեղծագործութիւններն են, որոնց մանրակրկիտ հետազօտութեան ճանապարհով պէտք է վեր հանուեն հայոց գրաւոր լեզուի վաղ շրջանի առանձնայատկութիւնները: Մեր ընդդիմախօս Մ. Մինասեանը ցաւօք հեռու է գիտական այդ ճշմարտութիւնները գիտակցելուց:

կանոնների նկատմամբ տարբեր գրուածքներ ուսումնասիրելիս շեղումներ տեսնելով, մենք իրաւասու չենք դրանք բոլորը ընդօրինակող գրիչների անուշադրութեան արդիւնք համարելու: Հակապատմական կլինէր մտածել, որ V դարի ընթացքում ստեղծուած բոլոր գրուածքները անխտիր շարադրուած են եղել դասական անթերի լեզուով, որը խաթարուել է յետագայում «անգրագէտ» գրիչների կողմից: Ժամանակն է գիտակցելու, որ ընդօրինակութիւնների ընթացքում ոչ միայն աղճատուել, այլեւ յաճախ շտկուել են հին բնագրերի լեզուա-ոճական թերութիւնները:

Այս կարեւոր հանգամանքը, ցաւօք, անտեսւում է ոչ միայն Մ. Մինասեանի, այլեւ շատ աւելի փորձ ու հմտութիւն ունեցող լեզուաբանների կողմից:

1 «Հանդէս ամսօրեայ», 1972, էջ 449

2 Նոյն տեղում

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ԵՐԿՐՈՐԴ ԳՐՔԻ ԾԴ ԳԼԽԻ ՄԱՍԻՆ*

(Ադրբեջանում գտնուած հին լատինական արձանագրութեան առնչութեամբ)

Մովսէս Խորենացու «Հայոց պատմութիւնը», չնայած մի շարք խիստ քննադատութիւնների, ոչ միայն չի կորցրել իր դերը որպէս առաջնակարգ ու հաւաստի սկզբնաղբիւր, այլեւ վիմագիր նոր յայտնագործութիւնների շնորհիւ տարեցտարի աւելի մեծ նշանակութիւն է ստանում որպէս փաստական անպարտ նիւթերի հիման վրայ կառուցած մի հոյակապ պատմագրութիւն: Սակայն դեռեւս աղբիւրագիտութիւնը մեծ անելիքներ ունի Խորենացու «Պատմութեան» վարկը վերականգնելու եւ նրա մեծատաղանդ հեղինակին ըստ արժանւոյն գնահատելու գործում:

Սոյն յօդուածով մենք ցանկանում ենք վիմագիր նոր նիւթի հիման վրայ վերանայել Խորենացու «Պատմութեան» միայն մէկ գլխի (գիրք երկրորդ, գլուխ ԾԴ) մասին եղած քննադատութիւնները եւ ցոյց տալ, որ այս դէպքում եւս Խորենացին, չնայած իր ձեռքի տակ եղած աղբիւրների միակողմանիութեան ու անբաւարարութեան, յաղթանակող է դուրս գալիս իր նորագոյն քննադատների հանդէպ:

Մ. Խորենացին իր «Պատմութեան» երկրորդ գրքի ԾԴ (54) գլխում պատմում է հետեւեալը. «Աղմուկ չփոթից իմն լեալ յարեւմուտս, ընդ որ վստահացեալ Արտաշէս՝ նշկահէալ ընդդիմանայ Հռոմայեցւոցն տէրութեանն՝ ոչ տալով հարկս: Իսկ Դոմետիանոսի կայսեր ցասուցեալ՝ զօրս ի վերայ Արտաշիսի առաքէ, որոց հասեալ ի կողմանս Կեսարու, զՏիրան եւ զզօրսն արեւմտեան առաջի արկեալ՝ ածեն տագնապաւ մինչեւ ի քաջ ընդարձակ հովիտն Բասենոյ, յորում ընդդէմ դիպեալ Արտաւազդ արեւելեայ եւ հիւսիսային զօրօքն, հանդերձ ամենայն որդւովքն արքայի, եւ պատերազմեալ՝ սաստկապէս վանդին: Յորոյ ի վերջս պատերազմին հասեալ Սմբատ հարաւային զօրօքն՝ ընդ մէջ անցեալ ապրեցուցանէ զորդիսն արքայի, յաղթութիւն եւ զրաւ պատերազմին արարեալ: Զի թէպէտ եւ ծերագոյն էր՝ երիտասարդապէս յարդարեաց եւ մղեաց զճակատն եւ հետամուտ եղեալ հալածեաց զզօրսն Հռոմայեցւոց մինչեւ ի սահմանս Կեսարու: Զայս կամելով երգել յառասպելսն՝ Դոմետ զոմն ասեն եկեալ, որ է ինքն կայսրն Դոմետիանոս. ոչ ինքն եկեալ այսր, այլ զհրաման նորա եւ զզօրս այլաբանելով յանուն նորա կոչէն:

Բայց ըստ բախտի եղեալ Արտաշիսի՝ մեռանի ի նմին ժամանակի Դոմետիանոս ի Հռոմ, եւ զկնի նորա Ներուաս ոչ աւելի թագաւորեալ քան զմի ամ: Ընդ որ առաւել հպարտացեալ զօրացն Հայոց եւ Պարսից՝ ապստամբ եւս ի Յոյնս արարին: Ընդ սոսա հայելով Եգիպտացւոց եւ կողմանցն Պաղեստինացւոց՝ արգելուն եւ նոքա զհարկսն Հռոմայեցւոց»[1]:

Ինչպէս Խորենացին ինքն իսկ ակնարկում է, այս գլխի շարադրութեան հիմնական աղբիւրը ժողովրդական առասպելն է, վիպասանքը: Բնական է ենթադրել, որ հեղինակին ծանօթ են եղել նաեւ այլ՝ գրաւոր ու հաւաստի աղբիւրներ, որոնց միջոցով նա կարողացել է առասպելից զատել նրա պատմական կորիզը եւ ցոյց տալ, որ չնայած առասպելում երգւում է

* «Տեղեկագիր» (ՀՍՍՌ ԳԱ հաս. գիտ.), 1948, N 11, էջ 91-97

1 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», աշխատ. Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 184-185

ոմն Դոմետի Հայաստան գալու մասին, բայց իրականում Դոմետը նոյն ինքը՝ Դոմետիանոս կայսրն է, որն անձնապէս չի եկել Հայաստան, այլ «զհրաման նորա եւ զզօրս այլաբանելով յանուն նորա կոչէն»:

Սակայն Խորենացու քննադատները, հակուած լինելով միշտ եւ ամէնուրեք կասկածել նրա հաղորդած պատմական փաստերին, ընթացել են բոլորովին այլ ուղղութեամբ: Ելնելով միանգամայն սխալ այն դրոյթից, որ հռոմէական քաղաքական շրջանակի մէջ մտնող երկրների կեանքում կատարուած բոլոր իրադարձութիւնները գրանցուել են ժամանակակից յունահռոմէական աղբիւրներում, եւ որ այդ աղբիւրների հիման վրայ շարադրուած եւրոպական գիտնականների ուսումնասիրութիւններն անթերի են փաստական կողմով ու շարադրանքի ճշմարտացիութեամբ՝ Խորենացու քննադատների մեծագոյն մասը մերժել կամ սրբագրել է նրա հաղորդած այն տուեալները, որոնք արտաքին աղբիւրներով չեն հիմնաւորուել:

Մոմզենն իր «Հռոմէական պատմութեան» մէջ յայտնում է, որ Դոմետիանոսի (81–96 թթ.) եւ ընդհանրապէս Փլաբիոսների դինաստիայի առաջին երեք կայսրերի օրօք բարեկամական յարաբերութիւնները Հռոմի եւ Հայաստանի միջեւ չեն խախտուել որեւէ ընդհարմամբ[1]:

Խորենացին այլ բան է ասում, ուրեմն, ըստ նրա քննադատների, կա՛մ նա լաւագոյն դէպքում սխալւում է եւ կա՛մ ստում, յօրինում իրենից չեղած ու չլսուած բաներ: Այսպէս օրինակ՝ Գ. Խալաթեանցը իր «Армянский эпос в истории Моисея Хоренского» *աշխատութեան մէջ (Մոսկուա, 1896 թ.) ուղղակի եւ առանց վերապահութեան քննարկուող գլխի տուեալները որակում է որպէս մտացածին* ("выдумка"), *իսկ ժողովրդական երգի վկայակոչումը՝ մի միջոց իր վրայից կեղծիքի պատասխանատուութիւնը դէն նետելու[2]:*

Այսպէս է դատում Խալաթեանցը. Խորենացին հէնց այնպէս, մի բան գրած լինելու համար յօրինում է մի ամբողջ գլուխ Դոմետիանոսի դէմ Հայերի ընդվզման, զայրացած կայսեր կողմից Հայաստան զօրք ուղարկելու, Բասէնի հովտում տեղի ունեցած ճակատամարտի ու Հայերի յաղթանակի մասին: Ապա, ցանկանալով հաւաստի դարձնել այդ, յենւում է իր իսկ կողմից յօրինուած ժողովրդական երգի վրայ, սակայն մի տողից աւելի «ժողովրդական» երգ չի կարողանում յօրինել («Դոմետ [զոմն ասեն] եկեալ») եւ այդ խղճուկ տողի մէջ Դոմետիանոս գրելու փոխարէն, որով կկարողանար ճշմարտապատում դարձնել իր յօրինուածքը, գրում է Դոմետ, յետոյ նոր գլխի է ընկնում, որ դրանք տարբեր անուններ են, եւ անհրաժեշտ է այդ անուանը կցել նաեւ մի ծանօթութիւն այն մասին, որ Դոմետը նոյն Դոմետիանոս կայսրն է, եւ այլն եւ այլն: Եւ այսպիսի «փաստարկներով» Խալաթեանցը Խորենացու երկրորդ գրքի 54-րդ գլուխն ամբողջովին համարում է կեղծիք, պատմականութիւնից զուրկ մի յօրինուածք:

Շատ աւելի զգոյշ է մօտենում քննարկուող գլխին Ա. Գարագաշեանը: Նա հաւատում է Խորենացու ակնարկած առասպելի գոյութեանը, ցաւ է յայտնում Հռոմայեցիների դէմ Արտաշէսի մղած պատերազմի մասին հիւսուած ժողովրդական երգի կորստեան առթիւ, բայց

1 **Mommsen**, Römische Geschichte, t. V, երկրորդ հրատ., էջ 393

2 Хоренский,- գրում է Խալաթեանցը,- прибегает к сочинительству, с целью придать больше оригинальности своему рассказу; но чтобы скрыть свою выдумку, стоящую в явном противоречии с достоверной историей, он сваливает ответственность за нее все на ту же аллегорию мнимой народной песни, из которой сам историк не мог однако провести более одного имени- Домет (**Г. Халатянц**, Арм. эпос, Москва, 1896, с. 319-320):

անտարակոյս է համարում, որ վիպասանքի Դոմետը Ներոնի հռչակաւոր զօրավար Դոմետիոս Կորբուլոնն է եւ ո՛չ Դոմետիանոս կայսրը[1]: Այս կարծիքն առանց վերապահութեան ընդունուել է շատերի կողմից եւ ստացել քաղաքացիութիւն[2]:

Խորենացուն չհաւատալու եւ մեզ հետաքրքրող դէպքերի ժամանակագրութեան տեղաշարժը առաջին դարի վերջերից դէպի նոյն՝ դարի կէսերը, Գարագաշեանի կողմից ըստ երեւոյթին հիմնաւորւում է այն փաստարկով, որ Դոմետիանոսի ժամանակ «չկար վէճ Հայաստանի համար ի մէջ Պարթեւաց եւ Հռոմայ»[3]:

Քննադատութեան այս ելակէտային դրոյթը թոյլ է եւ շատ կողմերով խոցելի: Նախ՝ Խորենացին խօսում է ոչ թէ Պարթեւների եւ Հռոմայեցիների միջեւ տեղի ունեցած վէճի մասին, այլ հաղորդում է, որ այն ժամանակ, երբ «աղմուկ չփոթից իմն լեալ [էր] յարեւմուտս», հայերն ընդդիմացան Հռոմէական տէրութեանը եւ դադարեցին հարկ վճարելուց: Բացի այդ, ինչպէս յայտնի է, Դոմետիոս Կորբուլոնը՝ Արտաշատի աւերիչն ու հայ-պարթեւական բանակներին պարտութեան մատնողը, ի վերջոյ ստիպեց Պարթեւներին ընդունել Հայաստանի հանդէպ Հռոմի գերիշխանութիւնը, այնինչ Խորենացին խօսում է ոչ թէ հայերի կրած պարտութեան, այլ ընդհակառակը՝ Հռոմէական զօրքերի՝ հայկական բանակներից կրած պարտութեան մասին՝ մի հանգամանք, որ չափազանց կասկածելի է դարձնում ռազմական իրենց բախտով հակադիր «ոմն Դոմետի» եւ Դոմետիոս Կորբուլոնի անձնաւորութիւնների նոյնացման փորձը:

Անշուշտ, Խորենացին, գրելով մեր կողմից քննարկուող իր գլուխը հիմնականում ժողովրդական երգի՝ վիպասանքի հիման վրայ, կարող էր վրիպել, ժամանակագրական սխալներ կատարել եւ պատմական իրադարձութիւնները ներկայացնել ոչ իրական գոյներով: Սակայն մի՞թէ ժողովուրդը կարող էր վիպական երգեր յօրինել, նրան պարտուող կողմ ներկայացնելով, այնպիսի մի ռազմական գործչի անուան շուրջ, որն իր յաղթական պատերազմական գործողութիւններով այնքա՜ն աւեր ու աւար էր հասցրել հայ ժողովրդին: Անտարակոյս, ո՛չ: Ուստի Մ. Խորենացու «Պատմութեան» երկրորդ գրքի ԾԴ (54) գլխի բացառիկ արժէք ներկայացնող տուեալները ըստ էութեան չեն հերքուած: Միայն նոր ուսումնասիրութիւնների ու լրացուցիչ փաստերի միջոցով կարելի կլինի պարզել դրանց արժանահաւատութեան աստիճանը:

Այդպիսի նախնական մի ուսումնասիրութեան հնարաւորութիւններ է ընձեռում 1948 թուականին Ադրբեջանում գտնուած հին լատինական արձանագրութիւնը: Արձանագրութեան գիւտի պատմութիւնը հետեւեալն է: 1939 թուականին Սանգաչալի երկաթուղային կայարանից մօտ 15կմ արեւելք, Ջինգիրդաղ լեռան ստորոտում (Քաբրիստան), Ի. Մ. Ջաֆարզադէն գտաւ լեռան վրայ փորագրուած պատկերներ: 1947 թուականին Ադրբեջանական ԽՍՀ Գիտութիւնների ակադեմիայի Պատմութեան ինստիտուտը հնագիտական այդ վայրի ուսումնասիրութիւնը մտցրեց իր գիտական պլանի մէջ եւ 1947 ու 1948 թթ. այնտեղ ուղարկեց գիտական էքսպեդիցիաներ Ի. Ջաֆարզադէի գլխաւորութեամբ:

1 Ա. Գարագաշեան, Քննական պատմութիւն Հայոց, մասն Բ, Թիֆլիս, 1895, էջ 243

2 Այսպէս օրինակ՝ ակադ. Յ. Մանանդեանը գրում է. «Վիպասանքի մէջ յիշուած է եղել, որ Հայաստան եկել էր եւ պատերազմում էր Արտաշէսի դէմ «Դոմետ ոմն», որը իհարկէ ոչ թէ Դոմետիանոս կայսրն է, ինչպէս սխալ ենթադրում է Խորենացին, այլ հռոմայեցիների զօրավար Դոմետիոս Կորբուլոնն է» (Յ. Մանանդեան, ՔնՆ. տեսութ. Հայ. պատմ., հտ. Ա, Երեւան, 1944, էջ 353):

3 Ա. Գարագաշեան, նոյն տեղում, էջ 253

Վերոյիշեալ էքսպեդիցիաների մասնակիցներն այդ վայրում եւ մերձակայքում գրանցեցին ու նկարագրեցին 123 հնագիտական օբյեկտ, որոնք մեծ մասամբ փորագրութիւններ են քարերի վրայ ու պատկերում են եղնիկներ, այծեամներ, առիւծներ, ձիեր, շներ, որսի ու զոհաբերութեան տեսարաններ, նաւակներ, հաւանօրէն պաշտամունքային ծէսերի հետ առնչուող խմբական պարեր եւ այլն: Սակայն ամենահետաքրքիր յայտնագործութիւնը եղաւ Հռոմէական XII լեգէոնի թողած լատիներէն արձանագրութիւնը, որը գտնուեց Բեյուկդաշ լեռան ստորոտում, մի մեծ քարաժայռի վրայ, 1948 թ. յունիսի 2-ին[1]:

Արձանագրութիւնը, ըստ լեզուաբան պրոֆ. Պ. Խ. Տումբիլի ընթերցման ու համառօտութիւնների լրացման, կարդացւում է այսպէս՝

IMPE⌈RATORE⌉ DOMITIANO
CAESARE AVG⌈USTO⌉
GERMANIC⌈O⌉
I⌈NVICTO⌉ IVLIVS
MAXSIMVS>
LEG⌈IO⌉ XII FUL⌈MINATRIX⌉[2*]

Այսինքն՝ «Անյաղթ իմպերատոր կեսար Օգոստոս Գերմանիկոս Դոմետիանոսի ժամանակ. Յուլիոս Մաքսիմուս. XII «Կայծակնաշանթ» լեգէոն»:

Արձանագրութեան ընթերցումը (բացի 5-րդ տողի > նշանից, որը չի բացատրուած) բաւարար է, ուստի հռոմէական XII լեգէոնը Դոմետիանոսի իշխանութեան տարիներին (81–96) ինչ-ինչ քաղաքական ու ռազմական նկատառումներով հասել է մինչեւ Կասպիականի ափերը: Հռոմէական աշխարհագիրների տուեալներով Դոնից մինչեւ Կասպիական ծով ընկած ընդարձակածաւալ տարածքը, չպարփակուելով որոշակի սահմանների մէջ, կոչուել է Ասիական Սարմատիա:

I-II դարի պատմիչ Սուետոնիոսը հաղորդում է, որ Դոմետիանոսի ժամանակ ընդդէմ հռոմէական տիրակալութեան Սարմատիայում բռնկուել է ապստամբութիւն, որին զոհ է գնացել մի լեգէոն՝ զօրահրամանատարի հետ միասին: Իմպերատորը ստիպուած է եղել ապստամբութեան ճնշման նպատակով յատուկ արշաւանք կազմակերպել դէպի Սարմատիա[3]:

XII «Կայծակնաշանթ» լեգէոնը, որն արեւելեան ռազմաբեմում հանդէս է եկել նաեւ յետագայում, Յուլիոս Մաքսիմուսի հրամանատարութեամբ արշաւել է Սարմատիա՝ ամենայն հաւանականութեամբ քաղաքական այս դէպքերի առնչութեամբ: Արձանագրութեան գտնուած վայրն արշաւելու համար հռոմէական զօրքերն ինչ ճանապարհ էլ որ ընտրէին,

1 **И. М. Джафарзаде**, Древне-латинская надпись у подошвы горы Беюкдаш, "Доклады Академии Наук Аз. ССР", том IV, № 7, 1948, Баку, с. 307, տե՛ս այնտեղ նաեւ արձանագրութեան արտատպութիւնը:

2 Նոյն տեղում, **П. Х. Тумбиль**, Римская надпись I века н. э., обнаруженная в пределах Азербайджана (Кабаристан), с. 312-313

* [Արձանագրութեան վերծանութեան ճշգրտումը կատարել է Ե. Պախոմովը (տե՛ս նրա "Римская надпись I в. н. э. и легион XII фульмината", ИАН Азерб. ССР, 1949, № 1): Այն որոշ լրացումներով վերահրատարակուել է Կ. Վ. Տրեւերի "Очерки по истории и культуре Кавказской Албании" գրքում (М.-Л., 1959, с. 342-343) եւ ունի հետեւեալ տեսքը. Imp(eratore) Domitiano Caesare Aug(usto) Germanic(o) I Julius Maximus> leg(ionis) XII Ful(minatae) = Իմպերատոր Կեսար Օգոստոս Գերմանիկոս Դոմետիանոսի ժամանակ. Յուլիոս Մաքսիմուս՝ Ֆուլմինատուսի XII լեգէոնի կենտուրիոնը [կատարեց]:

Ի դէպ, Կ. Վ. Տրեւերը ծանօթ է Լ. Ս. Խաչիկեանի նոյն յօդուածին եւ յղում է այն: Խմբ.]

3 Նոյն տեղում, էջ 313

անցնելու էին Հայաստանի վրայով[1], ուստի եւ որեւէ անշուշտութեամբ չփման մէջ էին մտնելու Հայ զինական ուժերի հետ՝ կա՛մ որպէս դաշնակիցներ, կա՛մ որպէս թշնամիներ:

Պատմական իրադարձութիւնների այս ոլորտում Մ. Խորենացու «Պատմութեան» քննարկուող գլուխը, հակառակ նրա քննադատների, յուշում է այլ մեկնութիւն: Դոմետիանոս կայսեր ժամանակ Հռոմն ապրում էր ռազմական անյաջողութիւնների շրջան. կայսեր ձեռնարկած արշաւանքները հիմնականում պաշտպանողական բնոյթ էին կրում եւ մղւում էին անհրաժեշտութեան դրդմամբ, ակամայ: Դեցեբալի գլխաւորութեամբ հիւսիսից արշաւում էին դակերը, որոնք հարուածի տակ էին պահում կայսրութեան պետական մարմնի ամենակենսական մասերը: Դոմետիանոսն ի վերջոյ ստիպուած եղաւ դակերի հետ կնքել Հռոմի համար անպատուաբեր հաշտութիւն՝ պարտաւորուելով ամէն տարի «նուէր» անուան տակ հարկ վճարել դակերին:

Հռոմի գերիշխանութիւնն ընդունած ժողովուրդները, օգտուելով ստեղծուած քաղաքական նպաստաւոր դրութիւնից, բնական է, որ պէտք է ձգտէին թօթափել հռոմէական գաղութարարների ծանր լուծը: Հայաստանից ոչ հեռու, Սարմատիայում, ինչպէս տեսանք, բռնկւում է ապստամբութիւն, որին զոհ է գնում մի լեգէոն:

Հայաստանում այդ ժամանակ իշխում էին Արտաշէս-Տրդատի յաջորդները: Ճիշտ է, Խորենացին դէպքերը պատմում է՝ կապելով Արտաշէսի անուան հետ, բայց ապացուցուած է արդէն, որ **Արտաշէսը** եղել է հայ թագաւորների տիտղոսն այնպէս, ինչպէս **Արշակը**՝ Պարթեւների, եւ **Կեսարը**՝ հռոմայեցիների մօտ: Եւ բացի այդ, Խորենացու հիմնական աղբիւրի՝ ժողովրդական երգի մէջ, համակցման օրէնքով, մի հերոսի (Արտաշէս-Տրդատի) շուրջն են կենտրոնացուել մի քանի ժամանակներում տարբեր արտաշէսների կողմից կատարուած ու վիպական գունաւորում ստացած պատմական իրողութիւնները[2]:

Այսպիսով, Տրդատի յաջորդներ Արտաւազդի եւ Աշխադարի ժամանակ (82-108[3], երբ արեւմուտքում Հռոմի գործերը խառնուել էին («զմուկ չփոթից իմն լեալ յարեւմուտս»), Արտաշէս-Արտաւազդը որոշում է դէն նետել հռոմէական անպատուաբեր լուծը եւ դադարում է հարկ վճարելուց ու թերեւս, ինչպէս սարմատացիք, ոչնչացնում է Հայաստանում գտնուող հռոմէական զօրամիաւորումները («...Արտաշէս նշկահեալ ընդդիմանայ Հռոմայեցւոցն տէրութեանն՝ ոչ տալով հարկս»): Դոմետիանոս կայսրը, լսելով այդ մասին, ստիպուած է լինում զօրք ուղարկել Հայաստան՝ ապստամբութիւնը ճնշելու համար («իսկ Դոմետիանոսի կայսեր ցասուցեալ՝ զօրս ի վերայ Արտաշիսի առաքէ»):

Հռոմայեցիք սկզբից յաջողութիւններ են ունենում. արեւմտեան հայկական զօրքերի հրամանատար Տիրանը, նահանջելով նրանց զօրութեան առաջ, Կապադովկիայի սահմաններից գալիս-հասնում է մինչեւ «ի քաջ ընդարձակ հովիտն Բասենոյ»: Արեւելեան ու հիւսիսային զօրքերով վրայ է հասնում Արտաւազդը եւ ճակատամարտ տալիս, որը շնորհիւ օգնութեան եկած Սմբատի (Հարաւային զօրքերի հրամանատար) աւարտւում է հռոմայեցիների

1 Տուեալ հարցի համար միեւնոյն է՝ որ ուղեգծով. Սատաղա-Արտաշա՞տ, թէ՞ Տիգրանակերտ-Արտաշատ (այս ուղեգծերի մանրամասն ուսումնասիրութիւնը տե՛ս ակադ. Յ. Մանանդեանի «Հին Հայաստանի ճանապարհները ըստ Պեւտինգերեան քարտէզի» աշխատութեան մէջ):

2 Հետաքրքիր է յիշել նաեւ, որ Խորենացու շարադրութեան մէջ Արտաշէս-Տրդատը պասիւ գործող անձի դերում է հանդէս գալիս, իսկ, ընդհակառակը, Արտաւազդը հայկական հիմնական զօրաբանակների՝ արեւելեան ու հիւսիսային զօրքերի հրամանատարն է:

3 Օգտւում ենք Գարագաշեանի «Ժամանակագրութիւնից» (տե՛ս «ՔՆՆ. պատմ.», հտ. Բ, էջ 253):

պարտութեամբ («...Յորոյ ի վերջս պատերազմին հասեալ Սմբատ հարաւային զօրօքն ընդ մէջ անցեալ ապրեցուցանէ զորդիսն արքային՝ յաղթութիւն եւ զրաւ պատերազմին արարեալ»): Հռոմայեցիք խուճապահար, հետապնդուելով հայերից, փախչում են «մինչեւ ի սահմանս Կեսարու»:

Խորենացու ժամանակ երգուող ժողովրդական առասպելում Հայաստան եկած հռոմէական զօրքերի պետ է համարուել Դոմետը: Պատմահայրը գրում է, որ այդ անուան տակ ժողովրդական երգիչներն ի նկատի ունեն Դոմետիանոս կայսրը, բայց եւ տեղեակ է, որ նա անձամբ չի եկել Հայաստան, այլ «զհրաման նորա եւ զօրս այլաբանելով յանուն նորա կոչեն»: Նորագիւտ լատինական արձանագրութիւնը հաստատում է անուղղակի կերպով Խորենացու նաեւ այս տուեալը: XII լեգէոնը Սարմատիայում, ինչպէս տեսանք, գործել է Դոմետիանոսի անունից, բայց՝ Յուլիոս Մաքսիմուսի հրամանատարութեամբ[1]:

Այս դէպքերի մօտաւոր ժամանակը որոշելու համար կարեւոր են Խորենացու յաջորդ տողերը՝ «բայց ըստ բախտի եղեալ Արտաշիսի՝ մեռանի ի նմին ժամանակի Դոմետիանոս»: Ինչպէս ստոյգ յայտնի է, Դոմետիանոսը սպանուել է 96 թուականին, ուստի հայ-հռոմէական այս բախումները կատարուած պէտք է լինեն 86 (Հռոմի պարտութիւնը դակերից) - 96 (Դոմետ. մահը) թուականների միջեւ:

Ուշագրաւ են նաեւ քննարկուող գլխի յաջորդ դէպքերը: Ներուայի կարճատեւ թագաւորութեան ընթացքում (96-98 թթ[2], ինչպէս եւ Տրայանոսի (98-117) թագաւորութեան առաջին իսկ տարիներին, հռոմայեցիները, զբաղուած լինելով ներքին հարցերով եւ դակերի դէմ պատերազմելով, ուժ ու ժամանակ չունէին հայկական գործերով զբաղուելու: Հայերը կարողանում են ամրացնել իրենց նուաճումները եւ պարթեւների հետ մէկտեղ ասպատակում հռոմէական սահմանները («Ընդ որ առաւել հպարտացեալ զօրացն Հայոց եւ Պարսից՝ ասպատակ եւս ի Յոյնս արարին»):

Այսպիսով, Մովսէս Խորենացու Հայոց պատմութեան երկրորդ գրքի ԾԴ (54) գլխում պատմուած դէպքերը հիմնականում հաւաստի են եւ հիմնաւորւում են պատմական այլ աղբիւրներով (յատկապէս՝ նորագիւտ լատինական արձանագրութեամբ): Ուստի եւ Խորենացու քննադատները այս դէպքում եւս չփաստարկուած իրենց յարձակումներով անկարող են ստուեր գցել I դարի վերջին ժամանակի քաղաքական անցուդարձի մասին հաղորդած նրա թանկարժէք տեղեկութիւնների ու նրա մեծատաղանդ «Պատմութեան» վրայ:

1 Շատ հնարաւոր է, որ Խորենացին իր տուեալները քաղել է Հայաստանի տարածքում եղած համանման արձանագրութիւնից:

2 Ըստ Խորենացու՝ թագաւորել է մէկ տարի:

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՅՈՎՀ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ «ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ*

Յովհան Մամիկոնեանի «Պատմութիւն Տարօնոյ» աշխատութեան համեմատական բնագրի հրատարակութեամբ[1] *Մատենադարանը կատարել է գովասանքի արժանի մի քայլ՝ ընթերցող լայն հասարակութեանը տրամադրելով վաղուց ի վեր հրապարակից սպառուած եւ մեր մատենագրութեան պատմութեան մէջ իր հայրենասիրական վեհ գաղափարներով ու օտար նուաճողների դէմ հայ ժողովրդի մղած պայքարի հերոսական դրուագների նկարագրութեամբ եզակի տեղ բռնող մի սկզբնաղբիւր: Սակայն այս հրատարակութեան նշանակութիւնը չի սպառւում վերոյիշեալով. մեր օրւայ բարգաւաճող պատմագրութեան յետագայ զարգացման համար չափազանց կարեւոր է հայ մատենագրութեան ինչպէս անտիպ, այնպէս էլ հնում ոչ գիտական մեթոդներով հրատարակուած երկերի համեմատական բնագրերի հրատարակման գործը: Արդ, այս հրատարակութեամբ Մատենադարանը սկիզբ է դնում իր հաւաքածոյում գտնուող հարուստ գրչագրերի համեմատութեամբ մի շարք պատմագրական եւ գիտական բնագրերի հրատարակմանը:*

Բնագիրը հրատարակութեան է պատրաստել պատմական գիտութիւնների թեկնածու (այժմ՝ դոկտոր) Աշոտ Աբրահամեանը, որ, համեմատելով Մատենադարանում իրեն յայտնի 23 գրչագրերը, որոնք պահպանել են Յովհան Մամիկոնեանի աշխատութեան բնագիրը, ընտրել է նրանցից վեց լաւագոյն գրչագրեր եւ նրանց բաղդատման միջոցով (օգտագործելով նաեւ Կ. Պոլսի եւ Վենետիկի հրատարակութիւնները) կազմել է համահաւաք բնագիր:

Որեւէ երկի համեմատական բնագրի յաջող հրատարակման նախապայմանը տարբեր գրչագրերից բաղդատման միջոցով ստացուած լաւագոյն տարընթերցուածքների ճիշտ ընտրութիւնն է հրատարակչի կողմից եւ այն բնագրի մէջ մտցնելու կարողութիւնը: Առանց վերոյիշեալ պայմանի, խօսք անգամ չի կարող լինել որեւէ երկի գիտական համեմատական բնագիր կազմելու մասին: Սակայն դրախօսուող բնագրի հրատարակիչը, հաւանաբար իր աշխատանքը դիւրացնելու միտումով, որպէս բաղդատական բնագիր ներկայացրել է հրատարակութեան համար հիմք ծառայած N 1328 գրչագրի սովորական արտատպութիւնը՝ այլ գրչագրերի տարբերակները որպէս յաւելուած տեղաւորելով տողատակի ծանօթագրութիւնների բաժնում:

Ղեկավարուելով վերոյիշեալ տարօրինակ սկզբունքով[2] *հրատարակիչը չի օգտուել հիմք հանդիսացող գրչագրի բնագիրը բազմաթիւ անխուսափելի աղաւաղումներից ու թերութիւններից մաքրելու լայն հնարաւորութիւնից եւ, հակառակ իր հաւաստիացման, նորանոր ու*

* «Տեղեկագիր» (ՀՍՍՌ ԳԱ հաս. գիտ.), 1944, N 1-2, էջ 141-150

1 **Յովհան Մամիկոնեան**, Պատմութիւն Տարօնոյ, ՀՍՍՌ Ժողկոմսովետին կից Պետական Ձեռագրատուն Մատենադարան, աշխատութեամբ եւ առաջաբանով՝ պատմ. գիտ. թեկնածու Ա. Աբրահամեանի, մասնագիտական խմբագիր՝ Ե. Տէր-Մինասեան, Երեւան, 1941

2 Հրատարակիչը հնարաւոր է համարել, մի երկու տեղ շեղուելով իր սկզբունքից, ուղղել բնագիրը համաձայն այլ գրչագրերի ընթերցուածքների: Այդպիսի ուղղումների թւին է պատկանում էջ 84.5-ի «զմարդիկն բերին ի տեղի անցուցին» հատուածը, որի դիմաց N 1328 գրչագիրն ունեցել է «...ի Մեղտի անցուցին» ձեւը: Թերեւս N 1328-ի այս ընթերցուածքի պահպանումը հեղինակի սկզբունքի արդարացման միակ դէպքը լինէր: Տեղին չէ նաեւ հիմք հանդիսացող գրչագրի հասկանալի ու հարթ «եւ ոչ մի բան թագոյց (Վահան) ի նմանէ (ի Միհրանայ)» ձեւի փոխարինումը «եւ մի բան ոչ թագուցեալ ի նմանէ» ձեւով (էջ 190.3-4):

բազմապիսի աղաւաղումներով աւելացրել է նախորդ հրատարակութիւններում տեղ գտած թերութիւնները:

Մեր յօդուածի բնոյթը թոյլ չի տալիս մեզ ցոյց տալ բնագրի բոլոր աղճատումները ու թերութիւնները, սակայն կանխելու նպատակով առաջիկայում հրատարակուելիք այլ երկերի բնագրերում նման տիպի թերութիւնների հնարաւոր գոյութիւնը, ինչպէս եւ որոշ նախադասութիւններ աղաւաղումներից ազատելու նպատակով մենք թոյլ ենք տալիս մեզ մեր թեզի ապացուցման համար բերել թերեւս անհրաժեշտից աւելի թուով օրինակներ:

Նախ նշում ենք բնագրում տեղ գտած քերականական ու շարահիւսական սխալ ձեւերը, աղճատուած եւ կամ բովանդակութեանը չհամապատասխանող այն բառերն ու դարձուածքները, որոնք հեշտութեամբ ուղղւում են հրատարակչի կողմից արհամարհուած միւս գրչագրերի համապատասխան հատուածների միջոցով:

Բնագրում տպագրուած է.	Ըստ այլ գրչագրերի պէտք է ուղղել[1].
Խրատել զիշխանսդ զայդոսիկ՝ լինել եկեղեցւոյ զարդս (էջ 43, տող 6)	*Խրատեա զիշխանսդ... (գրչագրեր ՎԼՊ)*
Իսկ զՏիմոթէոս լուայ թէ գնաց... (44.7)	*Իսկ զՏիմոթէոսէ լուայ թէ գնաց... (ՄՊ)*
Զի դեռ մանկունք երկրիս ի դպրոցի են... (48.11)	*...ի դպրոցս են (Լ)*
...զտեալ կիր ի բնակութիւն կացն, սկիզբն արար եկեղեցւոյ (100.3–4)	*...ի տանէ կացն... (Լ)*
զի աւանք էին սոքա (Կուառս, Մեղտի, Բրեխ եւն) բազումք... (111.7)	*զի աւանք էին սոքա մեծամեծք (ՎՍԼ)*
...եկն այր մի եւ պատմեաց, եթէ արք հիւսիսոյ գան ի վերայ (113.3–4)	*...գան ի վերայ մեր (ՀՎԼՍ)*
...ակն լուսոյ ընէր ի նոյն տապանին (115.2)	*...զակնն լուսաւոր... (ՎԼ)*
...լուան զձայն սաղմոսերգութեան նոցա, զի զայլն յանտառէն (120.6–7)	*...զայր յանտառէն (Վ)*
...հանդերձ քահանայիւք եւ անուշահոտ խնկաւք (122.8)	*...հանդերձ ջահիւք... (ՎԼՍԲ)*
Բայց ի պատերազմէն արգելեալ թագաւորն ասելով (128.3)	*...արգել զնոսա Տրդատ (ԼԲՍ)*
...վասն ունելոյ զքեզ եկեալ է Ծ եւ ԸՌ եւ հրամայեաց զաւրացն... (129.8)	*...յիսուն եւ ութ հազար աւ... (ՀՄՎ) (աւ-ը չփոխուած է եւ-ի հետ)*

1 Օգտագործում ենք հրատարակչի համառօտագրութիւնները. Լ=N 1886 գրչագիր, Բ=N 1912 գրչ., Հ=N 2618 գրչ., Մ=N 1772 գրչ., Ս=N 7898 գրչ., Վ=վենետիկեան հրատարակութիւն (1832 թ.), Պ=Կ. Պոլսի հրատարակութիւն (1722 թ.):

...փչուցին ի Հարաւակողմն անտառն (131.6)	...ի Հարաւակողմն անտառին (ՎԼԲՍ)
զոր տեսեալ Դո արանցն, որ ի վերայ գեղջն էին (131.10)	...որ ի գեղջն կային (ՍԲԼՎ)
...ապա թէ ոչ՝ քանդեալ զերկիրդ քո սրով եւ գերութեամբ (133.8–9)	...քանդեմ զերկիրդ քո... (ՎԼԲՍՀԳ)
...առաջի սրբոյ սեղանոյն (մանկանն) երկրպագեցուցին Տեառն եւ բերին եւոուն գնա (150.5)	...եւուն զմայր իւր (ԼԲ)
ո՞չ ես զքեզ ծնայ եւ անուցի եւ դու գիս միայն թողեր (151.3)	...եւ զիա՞րդ դու զիս միայն թողեր (ՎՍԼԲ)
...որ խոտաճարակքն էին ի վանսն (165.4)	...որ խոտաճարակքն էին եկին ի վանսն (ՎՍԼԲ)
...զեւթննկեանն սպանին (175.1)	...զեւթանեքեանն սպանին (ՎԼՍ)
...կալեալ զխելս կարմնճին (187.9)	...կամրջին (ՎԼՍԳ)
...երկու ոմանց (188.1)	...երկուց ոմանց (ՎԳ)
...այդ գերեզման ձեզ եղիցի չնորհելով Պարսից արքայի (195.7)	...չնորհիւ Պարսից արքայի (ՎՍ)
...մի՞թէ որդիս խնդրես յերանաց մերոց (209.3)	...յարանց մերոց (ՍԼԳԲ)
Յիրաւի է այդ անուն իմ (214.11)	Յիրաւի է անունդ իմ (ՎՍԼԲ)
Իսկ նա զոէգն ձգեալ (223.4)	Եւ նորա ձգեալ զոէգն (ՎՍԼ)
...դու քրիստոնեայ լեր... եւ իւր-եանքըդ քեզ (233.4)	...եւ դոքա քեզ (ՎԼՍԳ)
...զքաջ արծիւ (241.6)	զքաջ արծուի (ՎԼՍ)
...կաչի ապարէ (256.4)	...կաչեալ ապար (ՎՍ)
	...կաչէ ապար (Լ)
...էր սա զատակաց յայլոց բանակացն (256.10)	...զատական յայլ... (ԼՍ)
...ջրով ամեհեաւք (256.5)	...ջրեաւք (ԳՀՄՎ)
Եւ եղեւ...զժրութիւն ընդ պարսիկս եւ ընդ Վահան (168.4)	Եւ եղեւ գժտութիւն... (ՎՍ) եւ այլն եւ այլն:

Նմանօրինակ աղճատումների ու սխալների թիւը կարելի է անուազն հնգապատկել: Դրանք յաճախ դժուարացնում են պատմուածքի ըմբռնումը, սակայն մեծ մասամբ անցնում են աննկատելիօրէն... Բնագրի վրայ աւելի բացասաբար են անդրադարձել աղաւաղուած այնպիսի նախադասութիւնները, որոնց ճշտմամբ ու լրացմամբ միայն հնարաւոր է լինում հասկանալ բնագիրը: Տեղի սղութեան պատճառով սահպուած ենք նման աղաւաղումներից եւս

բերել միայն սակաւաթիւ օրինակներ:

Այսպէս, էջ 47.3–5-ում կարդում ենք. «Տեառն եւ սիրելի եղբարց եւ հալածական մչակացդ վասն բանին կենաց ի տէր ողջոյն սեռմ, հանդերձ Տրդատաւ եւ ամենայն իշխանաւքս»: Եթէ նոյնիսկ ուչադրութիւն չդարձնենք չարաճիւսական անհարթութիւնների վրայ («Տեառն եւ սիրելի եղբարց» փխ «Տեառն սիրեցեալ եղբարցդ» – ՎՄՍ), դարձեալ անհնար կլինի որոշել, թէ ով է գրութեան հեղինակը՝ բնագրի մէջ չմտցնելով Լ գրչագրում «կենաց» բառից յետոյ պահպանուած «Գրիգորիոս արքեպիսկոպոս Հայոց» հատուածը:

52 էջում խօսւում է Երուսաղէմի պատրիարքի մահուան մասին առանց յիչատակելու նրա անունը. ըստ Լ գրչագրի՝ հատուածը պէտք է լրացուի հետեւեալ ձեւով. «վախճանեցաւ Երուսաղէմի հայրապետն Սիմաքոս»: «Իսկ Եղիազար եկեալ ի ճանապարհին հանդիպի սրբոյն Գրիգորի եւ Տրդատայ. եւ խնդացեալ յոյժ, դարձաւ ըկնի նոցա մինչեւ ի Հռոմ քաղաք: Եւ անդ կացեալ բազում աւուրս, ապա խնդրեալ ի նչխարաց սրբոց առաքելոցն մասն ինչ...» (52.12–53.3) հատուածից չի հասկացւում՝ ով է խնդրողը. թւում է, թէ խօսքը պիտի Եղիազարին վերաբերի: Լ գրչագրի համապատասխան հատուածում պահպանուել է խնդրողի անունը՝ «խնդրեալ սրբոյն Գրիգորի»:

«Պատմութիւն Տարօնոյ» աչխատութեան՝ Զենոբին վերագրուած գլուխների վերաբերեալ բանասիրութեան մէջ եղել են չափազանց կրքոտ ու անխնայ քննադատութիւններ: Այդ աչխատութիւնը համարուել է նոր ժամանակներում ստեղծուած ու անյաջող մի կեղծիք: Այս թեզի ապացուցման համար յաճախ յենուել են նախորդ հրատարակութիւնների համար հիմք ծառայած գրչագրերում եղած մի բացարձակ աղաւաղուած նախադասութեան վրայ, որի մէջ հեղինակը, իբր իր աչխատութեան կեղծիք լինելը սքօղելու նպատակով, յայտնում է, թէ՝ «ես յառաջագոյն գրեցի քան զնա (Ագաթանգեղոս)» (65.7–8): Լ գրչագրի հիման վրայ հեչտութեամբ վերականգնւում է սկզբնական բնագիրը հետեւեալ ձեւով. «Եւ դուք մի ինչ աղարտէք զսակաւ պատմութիւնս եւ կամ թէ Ագաթանգեղոս ընդէ՞ր ոչ է գայսոսիկ յիչեալ, զի նա յառաջագոյն էր գրեալ»:

Դժբախտաբար, հրատարակիչն այս դէպքում եւս անխախտ է պահել իր «սկզբունքը»:

«...եւ գրեցին [ի վերայ արձանին] զայս. Առաջին պատերազմ եղեւ, որ յոյժ պատերազմող Արձան քրմապետն...» (94–95) անճանաչելի դարձած նախադասութիւնը պէտք է ուղղուի, ըստ Լ գրչագրի, հետեւեալ ձեւով. «Այս առաջին պատերազմ եղեւ ընդ իրեարս, որ էր յոյժ սաստիկ, պատերազմին գլխաւոր Արձան քրմապետն...» եւ այլն:

Հրատարակիչը Լ գրչագրի «եւ եդ (սուրբն Գրիգոր) ի ներս, ի տապանին զմին ակն պատուական, զոր եբեր ի Կեսարիոյ» միանգամայն պարզ ու հասկանալի նախադասութիւնից հրաժարուելով՝ գերադասել է յանուն իր չարաբաստիկ սկզբունքի բնագրում թողնել «եւ եդ զնոյն տապանն ի նոյն պղնձի տապան. եւ եդ անդ զմին ակն լուսոյ, զոր եբեր ի Կեսարիայ» (100.10–101.1) նախադասութիւնը: Դժուարանում ենք ասել՝ վերոյիչեալ նախադասութիւնից արդեօք որեւէ բան հասկացե՞լ են հրատարակիչն ու մասնագիտական խմբագիրը:

Սահպուած ենք նոյն հարցն առաջադրել նաեւ «...զի մի կախեալ զպատուական նչխարսն, անհաչտ թչնամութիւն լիցի ընդ նա, որ մտանէն եւ որ ակնարկէն ընդ նա իսկ» (102.7–10) հատուածի առթիւ, որի փոխարէն Լ գրչագիրը պահպանել է «...անհաչտ թչնամութիւն լիցի աստուծոյ ընդ նոսա, որք արկանեն եւ ընդ նա որ մտանէ» ձեւը:

«...զի որպէս զայլ տեղեացն չէ ինչ գրեալ, զի թագաւորաց ժամանակագիրք են: Այս պատճէն առաջին պատերազմին Արձանին» (116.8–10) հատուածը պետք է ուղղել այնպէս,

ինչպէս այն պահպանուած է ԼՍ գրչագրերում եւ վենետիկեան հրատարակութեան մէջ, այսինքն՝ «...զի որպէս զայլ տեղեացն չեմ ինչ գրեալ ի թղթի, նոյնպէս եւ այլք իմս չլիցին: Այս պատճէն առաջին՝ Արձանին պատերազմին եւ որ ինչ գործեցաւ յաւուրս իմ»:

«Հրամայեաց [սուրբն Գրիգոր] վէմս ժողովել, զոր եւ կոչի Աւետեաց խաչ» (122.5-6) հատուածն անճանաչելի է դարձել. ի՞նչ պատճառով պէտք է քարակոյտը կոչուէր «Աւետեաց խաչ»: ՍԲՀ գրչագրերը «ժողովել» բառից յետոյ պահպանել են «բլրաձեւ, եւ կանգնեաց այդ նշան խաչի» բառերը, որոնց միջոցով փարատւում են բոլոր տարակուսանքները:

Հրատարակութեան համար հիմք ծառայած գրչագրի արտագրողը, հաւանաբար չփոթելով նախագաղափար օրինակի Լ եւ ւ տառերը, աղաւաղել է «Եւ մորակեալ [Տրդատ] զերիվարն իւր զկնի Գեղահոնի այնչափ փութայէս մինչ զի չետ քայլել նմա եւ ոչ Ժ քայլ առաջի իւր» նախադասութիւնը՝ նրա վերջին բառերը փոխելով հետեւեալ կերպ. «...զի չետ քայլ եւ (եւ քայլել) ոչ Ժ քայլ» (135.10-136.2): Հրատարակիչը նոյնիսկ բացարձակ գրչական սխալի դէպքում գերադասել է «անաղարտ» պահել իր սկզբունքը:

«Իսկ Նիհորճէն Որմիզդ գումարեալ զաւրս Պարսից...» (159.1) նախադասութեան մէջ թւում է, թէ Որմիզդ-ը Նիհորճէն-ի (պէտք է լինի՝ Նիխորճէս) կրկնանունն է, այնինչ ԼԲՎ գրչագրերից պարզւում է, որ Նիխորճէսը սպանողն է Որմիզդի («Նիխորճէս, որ զՈրմիզդ եսպան...»):

Յօդուածի ծաւալը չընդարձակելու համար նախընտրում ենք նման արժանի միւս օրինակները բերել առանց մեկնաբանութիւնների: Ընթերցողի համար դժուար չի լինի բնագրի եւ այլ գրչագրերի դէմ առ դէմ դրուած համապատասխան հատուածներից ջոկել խոտելին ու աղճատուածը անաղարտից:

Բնագրում տպագրուած է.	Այլ գրչագրեր ունեն.
«Միւս պատճառ վասն նորա եւ միւս քննութեան աւանդոյն Մեհանդրի» (52.4-5)	«Վասն երկուց պատճառաց, մի՝ վասն նորա, եւ միւս՝ վասն աղանդոյն Մեհանդրի»
«...գրաւել զսիրտ նոցա ի յաշտութիւն» (67.5)	«...գրաւել զսիրտ նոցա ի յաշտութիւն, այլ սովով եւ սրով հանել զվրէժս եղբաւրն իւրոյ, զոր եսպան արքայն Պարսից» (ՀՎՇԼ)
«...զի այս տուն թագաւորին Հայոց է եւ դուք իշխանք արքային Հայոց» (85.15)	«...եւ դուք իշխանք նորա» (ՎԼՍ)
«Իսկ զաւրացն ի մէջ առեալ սպանին արս Ջ» (99.2)	«Իսկ զաւրացն ի մէջ առեալ զքուրմսն սպանին արս Ջ» (ՎԼՍ)
«Եւ առեալ ածեր զնոսա ի տէրունական տաճարին տեղիսն» (106.2)	«...ի տերունական տաճարն» (ԼՍ)
«...եւ ոչ ոք իցէ, որ կարիցէ հանել զդոսա, առ ի գտանել, ուր եղեալ են» (116.2-3)	«...եւ ոչ ոք կարէ գտանել զդոսա» (ՎՍԼ)
«...աւետաւորս արձակեցաք ի սորոտ Արձանին» (122.2)	«...առ Տրդատ ի սորոտ Արձանին» (ՊՀ)
«...առ եզր գետոյն, որ անցանէր ընդ մէջ գաւառին Հաշտենից» (138.10-139.1)	«...առ եզեր գետոյն փոքեր, որ անցանէր ընդ մէջ գաւառին Հաշտենից, որ երթայ ընդ արեւելս հիւսիսական» (ՎԼԲՍ)
«Եւ պատարագս... բազում զառանց եւ աղքատաց բազում ողորմութիւն առնէին» (141.6-8)	«Եւ պատարագս... բազում զառանց բերեալ մատուցին աստուծոյ...» (ԲԼ)
«...յաւուր միում առեալ [կինն Վարդպատրկայ իշխանին Արծրունեաց] փոքրիկ մանուկ մի ի տանէն, եւ էր անդրանիկ եւ գայր բազում յաւժարութեամբ...» (149.19-11)	«...յաւուր միում առեալ զփոքրիկ մանկիկն, զիւր անդրանիկն, որ էր ի տանէն, գայ բազում յաւժարութեամբ...» (ՎԼԲՍ)
«...զառիվայրն, որ ի գլուխ Սագակայ է» (154.9)	«...զառիվայրն, ի հարաւոյ կուսէ վանացն որ ի գլուխ Արդակայ է» (ՎԼԲՍ)
«...առեալ զՄուշեղ տարաւ նոյն իշխանն Տարաւնոյ ի Դուին» (158.6-7)	«...առեալ Մուշեղ, զտէրն Մշոյ եւ Խութայ իշխանն Տարաւնոյ եւ Սասնոյ, տարաւ ի Դուին» (ՀՎՍՄՊԼ)
«...զայս[՞] ասացեալ՝ յարձակեցան» (159.6)	«...զայս ասացեալ, եթէ՝ սուրբ Կարապետ, հա՛ս մեզ յաւգնութիւն, յարձակեցան...» (Լ)
«...թքակոծեաց զանմտութիւն նորա» (161.11)	«...թքակոծեցին զնա եւ զանմտութիւն նորա պարսաւեցին» (ՎԼՍԲ)
«յիշեաց Խոսրով զուխտ իւր եւ եկ առ աւար եւ գերութիւն» (164.6-7)	«յիշեաց Խոսրով զուխտն Մաւրկայ՝ որ ի մէջ նորա եւ իւր, եւ եկն անց ի Յոյնս չորեքտասան բիւրաւք, առ աւար եւ գերութիւն» (ՎԼԲ)
«Եւ ինքն առեալ զաւրս իւր Շ[1], երթեալ առ Մուշեղ. Յ այր թողեալ յանդս Մեղտեայ, եւ երկու հարիւր այր աշտենաւորս ի Սանասայ ի Ծմակն թողեալ, եւ ինքն Մ այր առեալ գնաց ի Մուշն աւան առ Միհրան» (184.6-185.1)	«Եւ ինքն առեալ արս եւթն հարիւր, եկն ի Մուշն աւան, երեք հարիւր այր թողեալ յանդս Մեղտեայ եւ երկու հարիւր այր աշտենաւորս ի Սանասայ ցեղէն ի Ծծմակն թողեալ եւ ինքն երկու հարիւր այր առեալ ընդ իւր՝ եկն առ Միհրան» (Լ)
«...եւ զգիրն վասն պատճառի ոչ ետ տանել ի բանտ» (193.4-5)	«...եւ զգիրն վասն պատճառոյ իւրոյ արկանել ետ ի բանտ» (ՎԼՍ)

1 Այս նախադասութեան մէջ խիստ կարեւոր է յատկապէս Շ-ի ուղղումը «եւթն հարիւր»-ով: Եթէ գումարենք Մեղտիում թողնուած զօրքերի թիւը (300) Ծծմակում թողնուածի (200) եւ իր հետ վերցրածի (200) հետ, ապա կստանանք 700 եւ ոչ՝ 500: Անշուշտ, սխալն առաջացել է Է եւ Ե տառերի նմանութիւնից: Աղբիւրագէտի առաջնահերթ խնդիրներից մէկն էլ իր կողմից հրատարակուող բնագիրը նման աղաւաղումներից մաքրելն է:

Նման, անգամ աւելի սրտնեղիչ աղճատումներ հետաքրքրուողը կարող է գտնել գրախօսուող բնագրի համարեայ բոլոր էջերում (հմմտ., օրինակ, 157.4, 159.10, 162.15, 163.1, 179.3, 184.1, 186.4, 188.3, 190.6, 193.4, 200.8, 203.8, 204.2, 206–207, 209.1, 211, 216.1, 221.1, 232.1, 237.6, 243.2, 246.1, 246.6, 249.2, 250.4, 263.3, 265.1, 268.10 եւ այլ էջերի բնագրերը համապատասխան տարբերակների հետ): Մենք հնարաւորութիւն չունենք եւ աւելորդ ենք համարում մէջբերել ուրիշ օրինակներ եւս:

Անցնենք այլ տիպի թերութիւնների քննարկմանը:

Հրատարակիչը բնագրից դուրս է նետել բազմաթիւ հետաքրքիր պարբերութիւններ միայն այն բանի համար, որ նրանք բացակայում են N 1328 գրչագրում: Այդ քայլին արգելք չի հանդիսացել ո՛չ այն փաստը, որ առանց այդ պարբերութիւնների բնագիրը յաճախ դառնում է անմիտ ու անհասկանալի, ու ո՛չ էլ այն, որ միւս գրչագրերը համարեայ առանց բացառութեան պահպանել են այդ պարբերութիւնները:

Նման շատ դէպքերից նշենք միայն մի քանի ակնառու օրինակներ.

ա) 105.5 էջում «Եւ շարժեալ ծածկեցաւ տեղին» բառերից յետոյ ԼՎՍ գրչագրերում պահպանուած «իսկ վաղիւն ածեալ... եւ ոչ գտին» պարբերութիւնը՝ Դեմետրէի տաճարում քրմերի թաքցրած գանձերը գտնելու նպատակով կատարուած ապարդիւն որոնումների, այդ տաճարի հիմքի վրայ եկեղեցի կառուցելու եւ այլ դէպքերի մասին:

բ) 112.5 էջում «...եւ պարսաւորս Մ եւ Զ» բառերից յետոյ նոյն ԼՎՍ գրչագրերում պահպանուած հատուածը («իսկ Պարեխ... զգաւառն Հաշտենից») Պարեխ, Կեռեղք, Բաղու գիւղերի երդերի ու պատերազմողների թուի մասին, որ, հակառակ հեղինակի խոստման, բացակայում է բնագրից:

գ) 140.3 էջում «Իսկ ընդդէմ դարձեալ զաւրապետն Գեղեհոնի» բառերից յետոյ նոյն գրչագրերում պահպանուած խիստ հետաքրքիր եւ ընդարձակ հատուածը՝ հիւսիսային ցեղերի արշաւանքի ժամանակ Տրդատ թագաւորին ձերբակալելու նպատակով նրանց ձեռք առած միջոցների ու անյաջողութեան մասին:

Կարեւոր են նաեւ 114.7, 117.2, 119.3, 145.7, 145.10, 266.8 էջերից դուրս մնացած հատուածները:

Չենք կարող լռութեամբ անցնել հրատարակուած բնագրի գլխակարգութեան եւ գլուխների վերնագրերում եղած թերութիւնների կողքով:

Յովհան Մամիկոնեանը, խմբագրելով Տարօնի եւ Գլակայ վանքի պատմութեան վերաբերեալ իր ունեցած նիւթերը, նրանք բաժանել է չորս գլխի.

Առաջին գլուխ. «...Պատմութիւն Տարաւնոյ, զոր թարգմանեաց Զենոբ Ասորի եպիսկոպոսն».

Երկրորդ գլուխ. «...Պատմութիւն վասն ինեակնեան տեղեաց եւ պատերազմին որ յԱրձանն եղեւ».

Երրորդ գլուխ. «Եթէ ոյք էին որ յաջորդեցին յառաջնորդութիւն սուրբ Կարապետին».

Չորրորդ գլուխ. «Գլուխ Պարսից Պատմութեան...»:

Վերոյիշեալ գլուխները բաժանուած են եղել ենթագլուխների (պատճէնների):

Առաջին գլխի պատճէններն են.

ա) «Պատճէն առաջին. [Գիր] սրբոյն Գրիգորի, զոր գրեաց եւ յղեաց ի Կեսարիայ».

բ) «Պատճէն երկրորդ. Պատասխանի պայմանաւոր գրոյ[ն] սրբոյն Գրիգորի, զոր գրեաց Կեսարու հայրապետն»:

Երկրորդ գլխի պատճէններն են.

ա) «[Պատճէն առաջին]. Զենոբայ Ասորւոյ պատասխանի թղթոյն ասորւոց».

բ) «Պատճէն երկրորդ. Վասն պատերազմին որ յԱրձանն եղեւ»:

Երրորդ գլուխը պատճէններ չունի:

Չորրորդ գլուխը բաղկացած է չորս պատճէններից.

ա) «[Պատճէն առաջին. Վասն] գալոյն Միհրանայ ի Տարաւն...».

բ) «[Պատճէն] երկրորդ. Վասն գալոյն Վախթանգայ ի Տարաւն...».

գ) «[Պատճէն] երրորդ. Վասն գալոյն Տիգրանայ եւ կոտորածին որ ի Հոնընկեցն».

դ) «Պատճէն չորրորդ. Վասն գալոյն Վարդուհեր եւ մեռանելոյն ի Փանդիկ...»[1]:

Չըմբռնելով գրախօսուող բնագրի վերոյիշեալ կառուցուածքը եւ ղեկավարուելով իր չարաբաստիկ սկզբունքով՝ հրատարակիչը, հասկանալի է, վերնագրերը նոյնպէս հրատարակել է թերութիւններով:

Նախ՝ գլուխների ու պատճէնների վերնագրերը դիտելով որպէս ամբողջութիւն՝ հրատարակիչը միեւնոյն տառաձեւերն է գործածել նրանց համար եւ յաճախ իրար ձուլել է տարբեր վերնագրեր:

Որպէս օրինակ՝ վերցնենք չորրորդ գլխի վերնագիրը, ինչպէս այն հրատարակուած է բնագրում. «Գլուխ Պարսից պատմութիւն(°), եւ գալն(°) Միհրանայ ի Տարաւն երեսուն հազարով. եւ կոտորել(°) Գայլուն Վահանայ զնոսա յԱւձ քաղաքի». վերնագիրն այս ձեւով (անգամ եթէ ուշադրութիւն չդարձնենք քերականական արտառոց ձեւերի վրայ) միանգամայն անհասկանալի է. բարեբախտաբար, միւս գրչագրերի տուած տարբերակների հիման վրայ հնարաւոր է ճշտել վերնագիրը հետեւեալ ձեւով.

ԳԼՈՒԽ ՊԱՐՍԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ (ՍԼԲ) [Պատճէն առաջին. Վասն] գալոյն Միհրանայ ի Տարաւն երեսուն հազարաւ եւ կոտորելն Գայլուն Վահանայ զնոսա յԱւձ քաղաքի (ՎԼՍԲ)

Ուղղագիծ փակագծերի մէջ առնուած բառերը բխում են բնագրից թէկուզ այն պատճառով, որ յաջորդ ենթագլուխը վերնագրուած է «[Պատճէն] երկրորդ. Վասն գալոյն Վախթանգայ...» բառերով (ըստ N 1328 եւ ԼՍԲ գրչագրերի), սակայն, դժբախտաբար, հրատարակիչը վերոյիշեալ պատճառներով երկրորդ պատճէնը վերնագրել է «Երկրորդ գալն Վախթանգայ ի Տարաւն...» բառերով, որի շնորհիւ, հակառակ բնագրի բովանդակութեան, ստացւում է այն թիւրիմացութիւնը, թէ Վախթանգը երկու անգամ է արշաւել Տարօնի վրայ...

Չի կարելի անտես առնել նաեւ չորրորդ գլխի երրորդ պատճէնի վերնագրի աղճատման փաստը: Յաջորդելով «Վասն գալոյն Միհրանայ...» եւ «Վասն գալոյն Վախթանգայ...» պատճէններին՝ այն պէտք է կրէր «երրորդ» թուահամարը (ինչպէս եւ ունեն ԼՍՄՊՀ գրչագրերը), սակայն հրատարակիչը մեզ համար անյայտ պատճառներով գերադասել է միայն մէկ

1 «Մծուան խաչի» եւ «Վասն մահուան Տիրանայ» գլուխները ընդմիջարկութիւններ են, գտնւում են միայն սակաւաթիւ գրչագրերում:

գրչագրում պահպանուած «երկրորդ» սխալ թուահամարը:

Հրատարակութեան նշելի թերութիւններից մէկն էլ դէպի յատուկ անունների գրութիւնը հրատարակչի ցուցաբերած ոչ լուրջ վերաբերմունքն է: Միեւնոյն յատուկ անունը բնագրի տարբեր էջերում բազմիցս տարբեր գրութեամբ է մէջբերուած. այսպէս օրինակ՝ երբեմն գրուած է Գրիգոր, երբեմն Գրիգորիս, Ռահան-Ըռահան, Գիանեա-Գիանէ, Ծծմայ-Ծծմահոտ-Ծծմակ-Ծմակ, Սուրեն-Սուրեան-Սուրէն, Ուղնուտ-Ողնուտ-Եղնուտ, Սրոց ձոր-Սրենց ձոր-Սրեմաձոր եւ այլն եւ այլն. թէ որ ձեւն է ճիշտ, այդ չի պարզուած հրատարակչի կողմից:

Բնագրում յատուկ անունների սխալ եւ իրար հակասող ձեւերի առկայութիւնը աւելի լուրջ թերութիւն է, քան սովորական բառերի ու արտայայտութիւնների արդէն մեզ ծանօթ սխալ եւ աղաւաղուած ձեւերի առկայութիւնը:

Չենք կարող չնշել նաեւ անձնանունների եւ տեղանունների աղաւաղումներից մի քանիսը:

Գրչագրերից մեծ մասի տուած «Մամիկոնենից» (<Մամիկոնեան) միանգամայն ճիշտ ձեւի փոխարէն բնագրում շարունակ օգտագործուած է «Մամիկոնէից» ձեւը. տպագրուած է «ի Պարթեւն» (68.7)՝ փոխանակ «ի Պարտաւն», Ուղուհի փխ Ոգուհի (70.4), Յափթաղինեկեայ փխ Հեփթաղենեկայ (71.11), Անկիւղ կամ Անկեղ (77.7, 81.2, 82.8 եւն) փխ Անգեղ (ինչպէս կայ 136.10), Դավնադաշտի փխ Դունայ դաշտին (78.7), արք Մեղտոյ փխ Մեղտեայ (87.8), Բաւէն փխ Բասեան (89.3), Գիխանէ փխ Գիանէ (95.3), Հոռա փխ Հոռենայ (<Հոռեան) 108.10, Կիւրիղ փխ Կիւրեղ (157.1), Մուրիկ փխ Մաւրիկ (158.3), Բալխաստան փխ Բահղ Տահստան (158.10), Նիհորճէն փխ Նիխորճէս (159.1), Ծմակն փխ Ծծմակն (186.2), ի Մուրատն փխ ի Մաւր անդր (188.10), Արածնի փխ Արածանի (200.6), Բուստր փխ Բոստր (201.10), աւելոյ Առինչ փխ Աւելոյառինչ[1] (213.6), Շերանիկք փխ Շիրենիք[2] (247.15), գիւղն Պալունեաց փխ գաւառն... (259.3) եւ այլն եւ այլն:

Բնագրում կան նաեւ ոչ քիչ քանակութեամբ տառասխալներ, որոնց մի մասն անշուշտ պէտք անուշադիր սրբագրութեան արդիւնք համարել. որպէս օրինակ նշենք դրանցից մի քանիսը՝ մէջ (139.1), և փխ եւ (141.3), ողջակիզած (141.6), ընդդեմ (140.3), մատնէն, ակնարկէն (102.9), տերունական (106.3) եւ այլն եւ այլն:

Բնագրի վրայ բացասաբար է ազդում նաեւ թուականների տառանիշերով արտայայտուած լինելը: Չափազանց դժուար կլինի շարքային ընթերցողի համար կարդալ, ասենք, «...Կուսաս ունի երդահամարս ԳՌ եւ ԲԺան (երեք հազար եւ երկոտասան) եւ հեծեալս ՌԼ (հազար երեսուն) եւ հետեւակս ԲՌ եւ Մ (երկու հազար եւ երկու հարիւր)» նախադասութիւնը, որի թուական արժէքները բառերով արտայայտելու դէպքում (ինչպէս մենք արել ենք փակագծերի մէջ) նախադասութեան ընթերցումը կհեշտանար*:

Միայն մի գրչագրով մեզ հասած բնագրերի հրատարակման ժամանակ բնագրի ուղղագրական բոլոր ձեւերը, անգամ բացարձակ տառասխալները թերեւս անհրաժեշտ է նոյնութեամբ արտայայտել տպագրուող բնագրում, սակայն համեմատական բնագրում, ինչպիսին է գրախօսութեան նիւթ դարձած բնագիրը, անբացատրելի է նման ուղղագրական ձեւերի գո-

1 «Առինչ» նշանակում է բնակատեղի, ամրութիւն (հմմտ. Բագառինջ եւ այլն):

2 Կազմուած է շէր (երգ) բառից:

* [Այս դիտողութիւնը վերապահելի է: Խմբ.]

յութիւնը՝ տեղոյ փխ տեղւոյ, եկեղեցոյ փխ եկեղեցւոյ եւ այլն, նամանաւանդ, երբ նոյն բառերի դիմաց գրչագրերի մեծ մասը պահպանել է քերականական ճիշտ ձեւեր:

Անհրաժեշտ ենք համարում մի քանի խօսք ասել նաեւ տարբերակների բաժնում նկատուող թերութիւնների մասին:

Կան բազմաթիւ բառաձեւեր, որ տարբերակների բաժնին են մտել, բայց նոյնն են, ինչ որ բնագրի համապատասխան բառերը. այսպէս՝ 42.1 էջի տարբերակների բաժնում նշուած է, որպէս ԼՍՄ գրչագրերի տարընթերցուածք, «փիճակիս» ձեւը, բնագրում էլ տպուած է «վիճակիս» 151.11 էջում՝ որպէս ԲԼ գրչագրերի տարընթերցուածք, նոյնպէս բնագրերին համապատասխան «այդչափ աշխատանք քո» ձեւը (հմմտ. նաեւ 84.11, 84.12, 89.4, 91.4, 149.11 եւ այլն): Տարակուսում է ընթերցողը՝ տարբերակները հրատարակուած են վրիպակներո՞վ, թէ՞ ուղղակի թիւրիմացութեամբ են այդ բառաձեւերը մուտք գործել հրատարակութեան մէջ:

Կան տարբերակներ, որոնց բնագրի որ բառին համապատասխանելն անհնար է լինում պարզել. այսպէս օրինակ՝ 140 էջի տարբերակների բաժնի 2-րդ տողում, որպէս ՍԼՎ գրչագրերի ընթերցուածք, բերուած է «զձեռանէ նորա» արտայայտութիւնը, բայց թէ 2-րդ տողի ո՞ր բառերին է փոխարինում այն յիշեալ գրչագրերում, մնում է անբացատրելի: Կարդում ենք նաեւ նախորդ եւ յետնորդ տողերը՝ յոյս ունենալով, որ, ինչպէս բազմաթիւ այլ դէպքերում, տողանիշը սխալ է բերուած, սակայն արդիւնքի չենք հասնում այս դէպքում եւս:

Միեւնոյն խմբագրութեան պատկանող գրչագրերի տուած տարբերակներից առաջ բերուող տառանիշերը, որոնք պայմանականօրէն արտայայտում են մեր Մատենադարանի՝ համեմատութեան ժամանակ օգտագործած գրչագրերի համարները, նշւում են առանց որեւէ կանխորոշուած հերթականութեան. մե՛րթ տպագրուած է ԼԲ, մե՛րթ ԲԼ կամ ՎԼՍԲ, ՍԲԼՎ, ԲՎՍԼ եւ յիշեալ տառանիշերի հնարաւոր բոլոր դասաւորութիւններով, իսկ այս հանգամանքը դժուարացնում է ցանկացած գրչագրի եւ կամ տարբեր խմբագրութիւնների պատկանող գրչագրերի տարբերակները հեշտութեամբ ու արագօրէն գտնելու եւ իրարից զատելու գործը:

Եզրակացութիւնը պարզ է. Մատենադարանի տնօրինութեան գովելի նախաձեռնութիւնը վերջացել է անյաջող: Հայ պատմագրերի, ինչպէս եւ գիտական բնագրերի հրատարակման խիստ պատասխանատու եւ կարեւոր գործին պէտք է լծուեն մեր փորձառու եւ լաւագոյն մասնագէտները:

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ «ՎԱՆԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ» ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ*

Հայաստանում քրիստոնէութեան տարածման ու պետական կրօն յայտարարուելու պատմութեան մասին առկայ սկզբնաղբիւրները, մեծ չափով նաեւ նոյն այդ հարցերին նուիրուած ուսումնասիրութիւնները խարսխուած են հայ գրականութեան սկզբնաւորման տարիներին հիւսուած եւ յետագայ ժամանակներում ճոխացուած ու գունազարդուած աւանդութիւնների վրայ: Դրանց պատմա-բանասիրական հիմնաւոր վերլուծութիւնը՝ գիտութեան արդի պահանջներին համապատասխան, նոր է սկսւում. առ այսօր դեռեւս չեն որոշուել այն ուղիները, որոնցով Հայաստան են ներթափանցել քրիստոնէութեան վարդապետութեան գաղափարները, չեն ճշգրտուել ժամանակագրական շատ հարցեր, չեն պարզաբանուել յոյն եւ ասորի քարոզիչների ազդեցութեան իրական ոլորտները, նրանց եւ հայ հոգեւոր գործիչների միջեւ տեղի ունեցած գոտեմարտերի քաղաքական եւ տնտեսական շարժառիթների հետ աղերսուող բազմաբնոյթ հարցերը եւ այլն:

Շատ խոչընդոտներ կան սրանց գիտական պարզաբանման ճանապարհին, որոնցից ամենախոշորը, թերեւս, կապուած է աղբիւրների ուսումնասիրութեան արդի վիճակի հետ:

Հայոց դարձի ամենահեղինակաւոր սկզբնաղբիւրը, ինչպէս յայտնի է, Ագաթանգեղոսի մատեանն է, որ հասել է մեզ Ե դարի կէսերին իրագործուած եւ յետագայում նոր յաւելումների ենթարկուած հայերէն խմբագրութեամբ. ինչպէս նաեւ յունարէն, արաբերէն ու այլ լեզուներով կատարուած ընդարձակ ու համառօտ մի շարք թարգմանութիւն-խմբագրութիւններով: Եւ եթէ մանրակրկիտ ու արդիւնաւէտ աշխատանք է կատարուած այդ խմբագրութիւնների (մանաւորապէս յունարէն ու արաբերէն փոփոխակների) փոխադարձ առնչութիւնները որոշելու, աղաւաղուած տեղիները ճշգրտելու եւ աղբիւրագիտական այլ հարցեր պարզաբանելու տեսակէտից, շատ քիչ բան է արուած առ այսօր պատմա-քննական խորագնին ուսումնասիրութիւնների ճանապարհով քրիստոնէութեան տարածման հետ կապուած հրաշապատումները պեղելու, պատմականն ու իրականը առասպելականից ու յետագայ գունազարդումներից զատելու եւ զտելու ուղղութեամբ: Նոյնը կարելի է ասել նաեւ Հայոց դարձի եւ Հայոց եկեղեցու կազմաւորման շրջանի վերաբերեալ տեղեկութիւններ պարունակող ուրիշ աղբիւրների ուսումնասիրութեան արդի վիճակի մասին:

Այդ աղբիւրների շարքում կան ինչպէս ամբողջական ու մեծ պատմագրքեր (օր.՝ Յովհ. Մամիկոնեանի եւ Ստ. Օրբէլեանի պատմութիւնները), այնպէս էլ աւարտուն պատմագրական «մանրապատումներ» (օր.՝ «Պատմութիւն Գետարգել սուրբ Նշանին», «Պատմութիւն Խաչկավանից», «Յիշատակագրութիւնք եպիսկոպոսաց առաքելական վիճակիս Արտազու» եւ այլն), որոնք, կոչուած լինելով պատասխանելու հեղինակին ու նրա միջավայրին յուզող մէկ հարցի, յաւակնում են ներկայանալ իբրեւ պատմական վաւերաթուղթ եւ ըստ այդմ լրացնել կամ ուղղել տուեալ հարցի շուրջ եղած պատմական գրաւոր ու բանաւոր տեղեկութիւնները:

Պատմագրական այս մանրապատումներից շատերը հայ քրիստոնէական գրականութեան ամենահռչակաւոր մատեանին՝ Ագաթանգեղոսին, իրականում առնչւում են ոչ թէ նրանով, որ ընդլայնում են մեր պատկերացումները վերջինիս նկարագրած պատմական իրականութեան շուրջ, այլ նրանով, որ Ագաթանգեղոսի համեմատ դրանք որոշ չափով իրենց աւանդական հիմքում ներկայացնում են միկրոդարձերի պատմութիւններ: Լինելով յօրինովի գրուածքներ՝ իրենց հիմնական մասով նրանք զուրկ են պատմական հիմքից ու բնաւ չեն կարող արժանահաւատ սկզբնաղբիւրի դեր կատարել՝ վերականգնելու եւ մեկնաբանելու համար այն ժամանակաշրջանի երեւոյթները, որն արտացոլւում է: Ընդհակառակը՝ նշուած «պատմութիւնները», իբրեւ պատմական սկզբնաղբիւր, շատ կարեւոր ու արժէքաւոր են այն ժամանակաշրջանի պատմութեան համար, որում իրենք ստեղծուել ու գրաւոր կեանքի են կոչուել, իսկ իբրեւ գրական յուշարձաններ նրանք անկասկած արժանի են յատուկ ուշադրութեան նաեւ այն բանի համար, որ օգնում են մեզ ճիշտ ըմբռնել եւ բացատրել որոշ կարեւոր յուշարձանների (օր.՝ «Տարօնի պատմութեան») գրական տիպը:

Խնդրոյ առարկայ «պատմութիւններն» իրենց տարատեսակներով շատ տարածուած են եղել ողջ քրիստոնէական աշխարհում: Քննենք այդ տարատեսակներից մէկը՝ «Վանից պատմութիւնը»:

«Վանից Պատմութիւնք» ընդհանուր խորագրի տակ գիտութեամբ կարող են համախմբուել միջնադարեան մատենագրութեան մէջ ուրոյն տեղ գրաւող եւ իրենց մեծագոյն մասով յօրինովի ու առասպելական այն «պատմութիւնները», որոնց նպատակն է եղել սրբագործել վանական ու եկեղեցական նշանաւոր հաստատութիւնների գոյութիւնը՝ նրանց հիմնարկութիւնը վերագրելով անցեալի քաղաքական ու եկեղեցական հեղինակաւոր գործիչների, օժտելով նրանց Քրիստոսի, առաքեալներից մէկի կամ մի քանիսի, Աստուածամօր, ինչպէս եւ որեւէ այլ սրբի մասունքներով, հրաշապատում զրոյցներ հիւսելով նրանց մասին: Այդ «պատմութիւններից» շատերի մէջ ուշագրաւ տեղ է գրաւել վանական հաստատութիւններին պատկանող կամ նրանց ախորժակը գրգռող անշարժ ու շարժական կալուածքների, նրանց հոգեւոր ենթակայութեան տակ գտնուող շրջանների ու բնակավայրերի միջնադարեան քրիստոնեայ հաւատացեալների կողմից պաշտամունքի առարկայ հանդիսացող սուրբերի մասունքների թուարկութիւնը: Եւ այս բոլորը [երբեմն] սրբագործուել է սուտ ու պատիր կալուածագրերով, նշանաւոր անձանց վերագրուած նուիրաբերական կեղծ հրովարտակ-արձանագրութիւններով, յանձնարարական նամակներով եւ այլն:

Եւրոպական միջնադարեան գրականութեան մասնագէտները վաղուց ի վեր ուշադրութիւն են դարձրել այս կարգի «պատմութիւնների» վերոնշեալ **ֆունկցիոնալ** *առանձնայատկութիւնների վրայ, բացայայտել նրանց ժանրային առանձնայատկութիւնները:*

Հայ միջնադարեան գրականութեան մէջ եւս կան բազմաթիւ վանքերի, խաչերի եւ այլ սուրբ համարուած մասունքների մեծ ու փոքր «պատմութիւններ»՝ իրենց ժանրային տարատեսակներով ու երբեմն մէկից աւելի խմբագրութիւններով: Սակայն նրանք ըստ մեծի մասի յատուկ պատմագիտական քննութեան չեն արժանացել: Աւելին, արտաքին երեւոյթով պատմագրական երկերին ազգակից նկատուող այդ «պատմութիւնները» բանասիրական աշխատանքի անհրաժեշտ փորձ ու բաւարար հմտութիւն չունեցող որոշ մասնագէտների կողմից քննարկման նիւթ են դարձել որպէս ճշգրիտ պատմական գրուածքներ՝ դուռ բացելով արտառոց թիւրիմացութիւնների:

Ահա, նկատի ունենալով այդ հանգամանքը, սոյն յօդուածով փորձելու ենք ընդհանուր գծերով բնութագրել հայկական «Վանից Պատմութիւնները»՝ քննութեան նիւթ դարձնելով բազում յուշարձաններից միայն մէկ բնորոշ օրինակ՝ համոզուած լինելով, որ դրանք բոլորը ոչ միայն արժանի են աւելի հանգամանալից պատմա-բանասիրական ու գրականագիտական

* «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, 1982-1984, հտ. Ժ, էջ 9-19

ուսումնասիրութեան, այլեւ վաղուց հասունացել է այդ կարգի գրուածքների հաւաքման, գիտական մշակման եւ հրապարակման ժամանակը:

***

Հայ միջնադարեան եպիսկոպոսական աթոռների, վանական ու եկեղեցական հաստատութիւնների գունազարդուած ու առասպելախառն պատմութիւնները տարբերւում են միմեանցից իրենց ծաւալով, կառուցուածքով ու պարունակուած նիւթերով: Աւանդական «Կոնդակ վանից» կոչուող եւ նոյն կաղապարով ձուլուած ժապաւէնաձեւ նմուշներին առընթեր (այդպիսիք տարածուած են եղել յատկապէս Վասպուրականի շրջաններում) ստեղծուել են նաեւ աւելի ընդարձակ ու բովանդակալից «պատմութիւններ», որոնց մէջ տուեալ հաստատութեան հիմնարկէքի չինծու պատմութեան հետ միասին կարեւոր տեղ է յատկացուել նաեւ կեղծ, վաւերական ու արժէքաւոր կալուածագրերի, նուիրաբերական արձանագրութիւնների եւ այլ փաստաթղթերի (այդպիսին է, օրինակ, Սանահնի վանքի նշանաւոր «քաթուկը»): Քիչ թիւ չեն կազմել նաեւ խաչափայտի մասունքների եւ այլ «սրբութիւնների» մասին յերիւրուած պատմութիւնները, որոնք եւս վերջին հաշուով շրջանառութեան մէջ են դրուել վանական հաստատութիւնների կողմից՝ իրենց հեղինակութիւնը բարձրացնելու, ուխտաւորներ շահելու, նոր շարժական ու անշարժ կալուածքներ ձեռք բերելու յոյս-նպատակով:

Առաւել մեծ չափով դրանք պահպանուել, կամ դրանց գոյութեան մասին տեղեկութիւններ են մեզ հասել Վասպուրականի եւ Տարօն-Տուրուբերանի շրջանների վանական հաստատութիւններից:

Որքան էլ տարբեր են դրանք իրենց կառուցուածքով ու բովանդակած նիւթերով, բոլորն էլ գրեթէ անխտիր (մի երկու տարբերութիւնների մասին առիթ կունենանք արտայայտուելու) իրենց սկզբնաւորութիւնը փորձում են առնչել կա՛մ Թադէոս ու Բարդուղիմէոս առաքեալներին, կա՛մ էլ Գրիգոր Լուսաւորչին ու Տրդատ թագաւորին: Քիչ չեն օրինակները, երբ Հայաստանում քրիստոնէութեան տարածման այդ երկու շրջանների աւանդական գործիչների կեանքն ու ձեռնարկած շինարարական աշխատանքները կամրջւում են միմեանց, եւ Գր. Լուսաւորիչը հանդէս է գալիս որպէս առաքեալների գործի շարունակող, նրանց հիմնադրած հաստատութեան վերաշինող, ծաղկեցնող կամ սուրբ մասունքներով օժտող:

Հնագոյններից մէկը պէտք է համարել Հոգեաց վանքի[1] *Տիրամօր պատկերի մասին ընդարձակ պատմութիւնը, որ վերագրուած է Մովսէս Խորենացուն*[2]*:*

Ծանօթանանք նրա բովանդակութեանը: «Պատմութեան» սկզբում տրւում է Աստուածածնի ազգաբանութիւնը, որ, արտագրուած լինելով թարգմանական ինչ-որ գրուածքից, ինքնուրոյն արժէք չի ներկայացնում: Ուշադրաւ մասն սկսւում է այն տեղից, ուր պատմւում է, որ Քրիստոսի առաքեալները հաւաքւում են Տիրոջ Յարութիւնից յետոյ եւ խնդրում Տիրամօրը կիպարիսի փայտից պատրաստուած մի տախտակ մօտեցնել իր դէմքին, որպէսզի դէմքը

---

1 Հոգեաց վանքը գտնուել է Վանից 10-12 ժամ հեռաւորութեան վրայ, պատմական Անձեւացեաց գաւառում:

2 Գրուած է որպէս պատասխան Սահակ Արծրունի իշխանի հարցման եւ օժտուած է այսպիսի ընդարձակ խորագրով՝ «Պատասխանի թղթոյն Սահակայ, յորումն են բանք մարգարէականք եւ վասն փոխման Աստուածածնին, թէ որպէս եղեւ կամ որպէս շնորհեցաւ անարատ տիպ պատկերին ի փայտն, եւ թէ յոյր ձեռն եւ զինչ եղեւ պատճառք խնդրոյն, կամ թէ յումմէ բերաւ ի Հայս». տե՛ս «Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1865, էջ 281-296:

տպագրուի այդ տախտակի վրայ, եւ այդ պատկերը «լիցի բժիշկ վիրաւորելոց եւ նշխար հաւատացելոց», մանաւորապէս՝ ունենայ բորոտութեան ախտը բուժելու յատկութիւն: Այդպէս էլ լինում է: Աստուածածնի մահուանից յետոյ առաքեալներից Բարթողիմէոսը, որ, Թովմայի հետ մէկտեղ Հնդկաստան մեկնած լինելով, այդ հաւաքին ներկայ չէր գտնուել, վերադառնում է Երուսաղէմ եւ յոյժ վշտանում՝ Աստուածածնին կենդանի չգտնելով, նաեւ նրա գերեզմանը դատարկ տեսնելով: Միւս առաքեալները, ի մխիթարութիւն իրենց ընկերոջ, Բարթողիմէոսին են նուիրում այդ հրաշագործ պատկերը:

Բարթողիմէոսը Սուրբ Հոգու հրամանով մեկնում է Հայաստան, քանի որ լուր է ստանում Սանատրուկ թագաւորի կողմից Արտազ գաւառում Թադէոս առաքեալի սպանութեան մասին: Գալիս է Անձեւացեաց գաւառի Դարբնաց քար կոչուող վայրը՝ հեթանոսական պաշտամունքի մի կենտրոն, հալածում է կռոց պաշտօնեաներին, խորտակում Անահիտի արձանը ու խաչ կանգնեցնում այն լեռան վրայ, ուր գտնւում էր Դարբնաց քարի քուրան (ըստ երեւոյթին պաշտամունքի սեղանը կամ հրաբխային ինչ-որ խառնարան): Այդ նոյն վայրում Բարթողիմէոս առաքեալը կառուցում է փոքրիկ եկեղեցի յանուն սուրբ Աստուածածնի՝ նրա մէջ ամփոփելով Տիրուհու պատկերը, որ շնորհում է այդ վայրերում ապաստանած սուրբ կանանց: Կառուցում է նաեւ վանական խրճիթներ եւ իր աշակերտներից քահանայ կարգում ու տեղն անուանում Հոգեաց վանք՝ «յանուն Տիրամօրն եւ սուրբ Կուսին»:

Բարդուղիմէոսն այնուհետեւ սկսում է իր քարոզչութիւնը Հայաստանի տարբեր շրջաններում ու նահատակւում է Ուրբանոս քաղաքի Բասմա կոչուած տեղում:

Յետագայում Հոգեաց վանքը ընդարձակում է Գրիգոր Լուսաւորիչը: Առաքեալի շինած խաչը Լուսաւորիչն իր ձեռքն է առնում եւ գործածում մինչեւ ճգնաւորական կեանքին նուիրուելը, ապա նոյն այդ խաչը դրւում է Տրդատ թագաւորի գերեզմանի վրայ: Իսկ Հոգեաց վանքի Աստուածամօր պատկերը, ինչպէս գրուած է «պատմութեան» մէջ, «կայ մինչեւ ցայսօր ժամանակի, յորում բժշկութիւնք լինին եւ ուրախութիւնք ոչ սակաւք: Եւ լուսաւորէ զախտացեալս ամենայն, որ գան առ նա հաւատով եւ յուսով...»:

Այս գրութիւնը, անտարակոյս, համասեռ «պատմութիւնների» հետ միասին միջնադարեան արձակի ուշագրաւ նմուշներից մէկը կարող է համարուել եւ արժանանալ բանասէրների ու գրականագէտների ուշադրութեանը:

Սակայն շատ դիւրին է ապացուցել, որ Բարթողիմէոս ու Թադէոս առաքեալների, Սանատրուկ թագաւորի, այնուհետեւ Գրիգոր Լուսաւորչի ու Տրդատի անունների շուրջ հիւսուած այս գրուածքը պատմական եղելութիւնների հետ առնչութիւն չունի եւ, իհարկէ, ոչ մի կերպ չի կարող շաղկապուել Մովսէս Խորենացու անուան հետ: Աւելին, այս «պատմութեան» մէջ կան անուղղ ակնարկներ, որոնք հնարաւորութիւն են ընձեռում մերձաւորապէս որոշելու, թէ երբ եւ ինչ նպատակով է շրջանառութեան մէջ դրուած այս «պատմութիւնը»:

Ինչպէս յայտնի է, 9-րդ դարի կէսերին հասունացել էին պայմանները՝ արաբական տիրապետութեան դէմ հայ ժողովրդի մղած դարաւոր պայքարը յաջողութեամբ պսակելու:

Իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին 875 թ. իւրայինների կողմից արդէն ճանաչուեց որպէս Հայաստանի թագաւոր: Արաբական տիրապետութեան կենտրոն Դուին քաղաքը նոյնպէս գրաւուեց Աշոտի կողմից, եւ արաբ վերջին ոստիկանն անփառունակ վտարուեց Հայաստանից: 886 թ. Հայաստանի անկախութիւնը ճանաչուեց նաեւ հարեւան պետութիւնների կողմից, մեծ հանդէսներով Աշոտ Բագրատունին օծուեց Հայաստանի թագաւոր:

Օտար լծի դէմ նոյն այդ տասնամեակներին յամառ մարտեր էին մղւում նաեւ պատմական Հայաստանի այլ նահանգներում, մասնաւորապէս Վասպուրականում՝ Արծրունի իշխանների գլխաւորութեամբ: Բագրատունեաց եւ Արծրունեաց նախարարութիւնների միջեւ մրցակցութիւն է սկսւում առանձին շրջանների, մասնաւորապէս Նախճաւանի համար. արաբները փորձում են ի շահ իրենց օգտագործել հայ աւատատէրերի հակամարտութիւնները: Գագիկ Արծրունուն 908 թ. արքայական թագ է տրւում, որով եւ նոր դժուարութիւններ են ստեղծւում Բագրատունեաց իշխանութեան ներքոյ ողջ Հայաստանի միաւորման համար:

Մովսէս Խորենացուն վերագրուած եւ քննարկման ենթակայ «Հոգեաց Վանքի Պատմութիւն» գրուածքը շարադրուած պէտք է լինի 9-րդ դարի 70-80-ական թուականներին Արծրունեաց իշխանութեան սահմաններում ապրող եւ Արծրունի իշխանների քաղաքական նկրտումների ջատագով մի հոգեւորականի կողմից, որի քաղաքական երազանքն է եղել Հայաստանի անկախութիւնը երկու հզօր իշխանութիւնների՝ Բագրատունիների եւ Արծրունիների համերաշխութեան ու ձեռնտուութեան պայմաններում:

«Պատմութիւնը», ինչպէս ասել ենք արդէն, շարադրուել է որպէս «պատասխանի թուղթ» Սահակ Արծրունու հարցման: Այդ Սահակ Արծրունին, ըստ գրուածքի հեղինակի, եղել է Խորենացու մեկենաս Սահակ Բագրատունու ժամանակակիցն ու մերձաւորը: Խորենացին, ինչպէս յայտնի է, կատարելով Սահակ իշխանի պատուէրը, շարադրում էր «Հայոց պատմութիւնը» եւ մաս առ մաս առաքում այլ վայրում գտնուող իշխանին:

Ըստ «Հոգեաց Վանքի Պատմութեան» ներածական թղթի՝ երկու Սահակ իշխանները՝ Բագրատունի եւ Արծրունի, այդ ժամանակ գտնւում էին հէնց Նախճաւան քաղաքում[1], այսինքն՝ այն վայրում, որ կռուախնձոր էր դարձել Հայաստանի քաղաքական ուժերի համար 9-րդ դարի երկրորդ կիսամեակում:

Ըստ գրուածքի հեղինակի՝ այդպէս չէր, սակայն, Մովսէս Խորենացու երանելի ժամանակներում, երբ թշնամանքի ու բախման պատճառ հանդիսացող այդ նոյն քաղաքում համերաշխօրէն զրուցում եւ գրքերի ընթերցանութեամբ էին զբաղւում երկու հզօր իշխանները: Սահակ Արծրունին անմիջապէս ծանօթանում էր Մ. Խորենացու գրած «Հայոց Պատմութեանը» («զգրեալ գիրս Բագրատունեաց իշխանին, զգրեալս ի քէն ընթերցաք, եւ ուսաք զսումունս հայկական ազանցս Հայոց, զմեր նախնեաց գալ յայս երկիր» եւ այլն, այսպիսի տողեր է, երբ, ուղղում Մ. Խորենացուն Սահակ Արծրունի իշխանը[2]) եւ իր հերթին պատուիրում Հայոց պատմահօրը գրիչ վերցնել՝ այս անգամ արդէն Արծրունեաց աշխարհի նշանաւոր սրբավայրերից մէկի «պատմութիւնը» շարադրելու համար («Այլ կամիմք ուսանել ի քէն զսքանչելագործութիւն պատկերին, որ յանուն Տիրամօրն կայ ի Հոգեաց վանս...»):

Մ. Խորենացին, իհարկէ, սիրով պէտք է ընդառաջէր Արծրունի իշխանի ցանկութեանը, եւ այդ «պատմութիւնն» իր նպատակին հասած չէր լինի, եթէ մեզ անյայտ հեղինակը Մ. Խորենացու անունից շարադրած չլինէր Արծրունիներին փառաբանող այսպիսի տողեր. «Քեզ ասեմ, իշխանդ Արծրունեաց, եցոյց ինձ տէր, զի յորդւոց քոց երեք եղբարք վասն Քրիստոսի

1 Այս «պատմութեան» որոշ ձեռագրեր ունեն ուշագրաւ խորագրեր՝ «Թուղթ Սահակայ մեծի իշխանի սպարապետի առ Մովսէս Խորենացի վարդապետ յորս եւ բանք Սահակայ Բագրատունւոյ, ի միում տեղւոջ լինելով ի Նախճաւանի», կամ «Թուղթ Սահակայ Արծրունւոյ եւ Սահակայ Բագրատունւոյ իշխանաց առ Մովսէս Խորենացի. ի միում տեղւոջ լինելով ի Նախջուանի», տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, մասն Ա, Վենետիկ, 1901, էջ 52:

2 Տե՛ս «Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք», էջ 281:

ի մահ մատնեալք, երկուքն արեամբ վկայք լինին Քրիստոսի, եւ մինն վրիպեալ ի նոցանէ եւ ոչ յայժմ վայելէ: Վասն նոցա Աստուած զթագն թագաւորին Սենեքերիմայ յորդիս քո դարձուցեալ յերկարաձգէ յերկրի»:

Արդ, ի՞նչ պատմական դէպքերի մասին է «մարգարէանում» Խորենացին, կամ ինչի՞ մասին ակնարկում գրուածքի իրական հեղինակը վերոյիշեալ տողերով:

Գագիկ Արծրունու երեք որդիները՝ Սահակը, Համազասպը եւ Մերուժանը, արաբների դէմ պայքարող ուժերի առաջամարտիկներից էին: Եգիպ ոստիկանը ձերբակալում է նրանց, տանում Պարտաւ եւ պահանջում կրօնափոխ լինելով ազատուել կամ նահատակուել: Սահակն ու Համազասպը մերժում են հաւատափոխութիւնը եւ սպանւում են չարաչար («սրով զգլուխն բարձեալ եւ ապա զփայտէ կախեալ»,- գրում է Ասողիկը[1]): Իսկ Մերուժանը մահմեդականութիւն է ընդունում, իշխանութեան կոչւում, սակայն սպանւում է Դաւիթ Մամիկոնեանի կողմից, ուստի «վրիպեցաւ նաեւ յերկնաւորէն»,- ինչպէս գրուած է նրանց վարքի մէջ[2]:

Սահակն ու Համազասպը, որպէս քրիստոնէութեան համար նահատակուած հերոսներ, սրբացուել են Հայոց եկեղեցու կողմից, նրանց յիշատակը յաւերժացուել է նաեւ Աղթամարի Սուրբ Խաչ տաճարի հարաւային պատի աջ կողմում, ուր այսօր էլ պահպանուել են նրանց գեղեցիկ խորաքանդակները համապատասխան մակագրութիւններով[3]:

Այս տեղի է ունեցել 886 թուականին, ուստի «Հոգեաց Վանքի Պատմութեան» գրութեան վաղագոյն եզրը պէտք է փնտրել այդ թուականից յետոյ: Գրուածքի մէջ, սակայն, կան ուրիշ տուեալներ, որոնք հնարաւորութիւն են տալիս աւելի ճշգրիտ պարզել գրութեան շարադրման մերձաւոր ժամանակը:

Խորենացուն վերագրուած այս եւ վերը մէջբերուած տողերում յոյս է յայտնուած, որ Աստուած Սենեքերիմ թագաւորի թագը յանձնելու է Արծրունիներին («զթագն թագաւորին Սենեքերիմայ յորդիս քո դարձուցեալ յերկարաձգէ յերկրի»), իսկ Գագիկ Արծրունին, ինչպէս ասացինք արդէն, արքայական թագի արժանացաւ 908 թուականին: Հէնց այդ տարեթիւն էլ կարելի է հիմք ընդունել մեր «պատմութեան» շարադրման իրական թուականը որոշելիս: Խորենացու անունն օգտագործած մեր հեղինակը ոգեւորուած է Բագրատունեաց եւ Արծրունեաց քաղաքական յաջողութիւններով՝ համոզուած, որ նրանք համագործակցելով մեծ նպաստ են բերելու հայրենիքի բարգաւաճման գործին:

«Զի որպէս երկուց մարդոյ լինելութեամբ երկիրս հաստատեցաւ,- գրուած է «Պատմութեան» մէջ,- այսպէս ի ձեռն երկուց տանցդ՝ Արծրունեաց եւ Բագրատունեաց, այս աշխարհիս սերունդք բնակին: Եւ որպէս երկու աչք զբոլոր մարմին զարդարէ, այսպէս երկու կողմանքդ արեւելից եւ հիւսիսոյ լուսաւորին: Եւ որպէս երկու ձեռք միացեալ ի գործ պիտոյանան, այսպէս եւ երկիրս Հայոց ի ձէնջ գոյանան: Եւ որպէս ի վերայ երկուց ոտից բոլոր մարմինն հաստատի, այսպէս եւ ի ձեռն երկուց տանց ամենայն ազգք Հայոց հնազանդք լինելով՝ ի մի մարդ կատարեալ ի Քրիստոս լինին: Եւ դուք երկոքին ցեղք ընդ միմեանս անշարժ կայք»[4]:

1 «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Գ տպ., Ս. Պետերբուրգ, 1885, էջ 133

2 Մ. Աւգերեան, Ծաղիկ վարուց սրբոց, Վենետիկ, 1800, էջ 254-255

3 "Documenti di Architettura Armena", N 8, Aght'amar, p. 67, նկար N 38

4 «Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք», էջ 284

Եւ ահա, 10-րդ դարի սկզբներին ստեղծագործող հայրենասէր հեղինակը ձգտում է քրիստոնէական հին աւանդութիւնների արծարծումով, Մովսէս Խորենացու նման համազգային հեղինակութեան անուան շահատակումով, իր հայրենի բնագաւառը համարելով Քրիստոսի առաքեալների եւ Լուսաւորիչի գործունէութեան ասպարէզ, նոր փայլ հաղորդել Արծրունեաց թագաւորութեանը: Եւ եթէ այս պարզաբանումներից յետոյ փորձենք անդրադառնալ Մովսէս Խորենացուն վերագրուած «Հոգեաց Վանքի Պատմութեանը», որոշել նրա պատմական արժէքը եւ այլն, պէտք է արձանագրենք, որ այն բացարձակապէս անպիտան մի գրուածք է մեր թուարկութեան 1-4-րդ դարերի պատմութեան հարցերի լուսաբանութեան համար, սակայն, որոշելով նրա գրութեան իրական ժամանակը 10-րդ դարի առաջին տասնամեակով, բանասիրութիւնը հնարաւորութիւն է ստանում օգտակար նիւթեր քաղել նրանից՝ ժամանակի քաղաքական ակնկալութիւնների, գաղափարական հոսանքների, որոշ չափով նաեւ հեթանոսական հին հաւատալիքների ու պաշտամունքային կենտրոնների մասին մեր գիտելիքներն ընդարձակելու համար: Միաժամանակ այն ուշագրաւ գրական մի յուշարձան է, որ հնարաւորութիւն է ընձեռում ուսումնասիրելու նաեւ միջնադարեան գրական արձակի արտայայտչական միջոցները, լեզուական իրողութիւնները, գրական հին աղբիւրներն ու եկեղեցական աւանդութիւններն օգտագործելու եւ մշակելու նորահնար եղանակները եւ այլն:

Սրանով չի սպառւում Հոգեաց վանքի հետ առնչուող հրաշապատումների շարքը: Կայ նաեւ աւանդութիւն վանքի անուանակոչութեան մասին: Վանքի մօտ կայ մի քարակոյտ՝ Հանգստաքար կոչուող յարմար մի քարով. վանք այցելող ուխտաւորներին պատմում էին, որ Աստուածածինն այդ քարի վրայ նստած երեւացել է Բարթողիմէոս առաքեալին ու հրամայել ձորի մէջ յանուն իր հոգու տաճար կառուցել, ըստ այդմ էլ վանքը կոչուել է Հոգեաց վանք[1]:

Բարթողիմէոս առաքեալի անուան հետ առնչուել են այլ վանքերի (մասնաւորապէս Ս. Բարթողիմէոս վանքի[2]) «պատմութիւններ», սակայն այս առումով շատ աւելի մեծ դեր է վերագրուել Թադէոս առաքեալին, որին նուիրել են շատ մեծ թւով վանական հաստատութիւնների հիմնարկէքի հրաշապատում զրոյցներ:

1 Հ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Գ մաս, Վիեննա, 1947, էջ 763

2 Նոյն տեղում, էջ 789-790 եւ այլն

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՄՕՏ ԱՐՏԱՇԷՍ Ա-Ի ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՊԱՀՊԱՆՈՒԱԾ ՎԻՊԱԿԱՆ ՀԱՏՈՒԱԾԻ ՄԱՍԻՆ*

ԺԱ դարի մեծանուն գիտնական ու քաղաքական գործիչ Պահլաւունի իշխան Գրիգոր Մագիստրոսի նամակները, պահպանած լինելով ժողովրդական մի շարք աւանդութիւններ ու զրոյցներ, մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում:

Հայ բանասիրութեանը յատկապէս զբաղեցրել է նրա նամակը՝ գրուած Մոկաց եւ Մանազկերտի եպիսկոպոս Գրիգորին, որտեղ բերուած է նաեւ «ի գռեհիկս աւանդեալ» մի հատուած հայ ժողովրդական վէպի արտաշէսեան ցիկլից: Հատուածը, կանխելով Մագիստրոսի «Թղթերի» լիակատար հրատարակութեանը (1910 թ.), բազմիցս լոյս է տեսել համառօտ կամ ընդարձակ մեկնաբանութիւններով:

Ամբողջ նամակը, որ Կ. Կոստանեանի հրատարակութեան մէջ ԼԳ համարի տակ է բերուած, հետեւեալն է.

«Յաւուրս ձմերայնոյ եղեալ ահագին որոտումն յամսեան ահեկի, որ էր քսաներորդ երրորդ, եւ զայսոսիկ գրեաց ի Գրիգոր եպիսկոպոսն Մոկաց եւ Մանազկերտոյ, սակս եղոյ եւս անձրեւ սաստիկ.

Կամիմք իմանալ զձիածինն պատուեալ, ծայրագոյն ծերունւոյն հիրար տարատամեալն, ամօքեալ թխահերօք (տարբ. թխանայ հերօք) զհիքութեանն բերելով ձեւ իղական: Թերեւս եւ Ակէս լուծեալ զմակաւազեանն հրաշունչ մօրուեղ (տարբ. մաւրուեղ) յօքնայածուկ ի գովրացի գովար (տարբ. ի գասացի գուսար) յեղափոխէ: Որ յերկեանն ճայթիւն գոռմանն եւ խոնջիւն վրնջելոյ պայթուցեալ պապչելին լալաւարթիւն ալախութեան քաղուն: Ուրեմն նահանջեալ յԱմնոսէ, զնխեանն նշանակեալ ցուցակութիւն, երեւակայէր, եւ այն ի կողմանէ տասնեկին եօթն անկեանց յունականին թուոյ, կամ եթէ ի Թորգոմեան երից եօթն անկեանց եաւկի բարդեցելոց ահեկան: Որում Արտաշէսն Պարթեւ բաղձայր մխոյ մրրկեալ ծխոյ չամանդաղեալ մակաւաստ չինից եւ քաղաքաց: Ո՛ տայր ինձ, ասէր, զծուխ ծխանի եւ զառաւօտն նաւասարդի, զվազելն եղանց (տարբ. եզանց) եւ զվազելն եղջերուաց, մեք փող հարուաք եւ թմբկի հարկանէաք, որպէս օրէնն է թագաւորաց: Եւ զայս ասեն ի վախճանելն իւրում, զոր եւ ի գռեհիկս աւանդեալ գտաք, ողջ լեր»[1]:

Նամակի վերնագրում, որն անկասկած գրուած է նամականիի հին խմբագրի կողմից, համառօտակի ու պարզորոշ շարադրուած է նրա հիմնական բովանդակութիւնն ու գրութեան շարժառիթը, որ է «ձմեռ ժամանակ, ահեկի ամսի 23-ին եղած մեծ որոտումը եւ սաստիկ անձրեւը»:

Ղ. Ալիշանը՝ նամակի ու վիպական հատուածի առաջին քննարկողը, իր «Ազգային վիպասանութիւն» յօդուածում[2], մէջբերելով վիպական հատուածն ամբողջապէս, հետեւեալ ծանօթութիւնն է կցում նրան.

«Արտաշէսի հիւանդութեան ու մահուան դիպուածներն ալ կ'երգէ վիպասանութիւնն, եւ

* «Գրական-բանասիրական հետազօտումներ» (ՀՍՍՌ ԳԱ Մ. Աբեղեանի անւ. գրակ. ինստ.), 1946, գիրք 1, էջ 405-421

1 Կ. Կոստանեան, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 86-87

2 Ղ. Ալիշան, Յուշիկք հայրենեաց հայոց, հտ. Բ, Վենետիկ, 1870

կ'երեւի թէ այն վիպասանութենէն առնուած է Մագիստրոսի յիշածն, թէ Արտաշէս Պարթեւ մեռած առեն՝ յիշելով կենաց եւ տարւոյն գարունը, երբ առաւօտեան լուսը ցօղին հետ խառնուած բարակ մեգի պէս գեղերու եւ քաղաքներու վրայ կը տարածէր, բսած ըլլա՝ ո տայր ինձ...»[1] եւ այլն:

Չենք ցանկանում շօշափել այն հարցը, թէ Ալիշանն ինչու է Արտաշէսի բաղձանքը համարում եղած «մեռած առեն» (Մագիստրոսն ուղղակի վկայում է, որ «զայս ասեն ի վախճանելն իւրում»), որովհետեւ ինքն իսկ, երկբայելով իր ասածի ճշմարտութեան վրայ, գրում է. «կարելի է թէ Ա. Արտաշէսի գրոյն ալ ըլլայ այս»: Բայց անկարող ենք ընդունել «Արտաշէսն... բաղձայր մլոյ մրրկեալ ծխոյ շամանդաղեալ մակաւասար չինից եւ քաղաքաց» արտայայտութեան ալիշանեան վերապատումը («առաւօտուն լոյսը ցօղին հետ խառնուած բարակ մեգի պէս գեղերու եւ քաղաքներու վրայ կը տարածէր...»), որովհետեւ այդ գեղագիտական մեկնաբանութիւնը հակասութեան մէջ է մտնում նամակի բովանդակութեան հետ, որն, ինչպէս տեսանք, վերաբերում է բնական արհաւիրքի («աճագին որոտումն... անձրեւ սաստիկ»):

Մեզ հետաքրքրող նամակը քննութեան նիւթ է դարձրել նաեւ Մ. Էմինը իր ("Моисей Хоренский и древний эпос Армянский(աշխատութեան մէջ:

Էմինի մեկնաբանութեամբ՝ «վիպասանն այդ տողերի մէջ պատկերում է մահացած թագաւորին, որն ուրուականների թագաւորութեան մէջ իր վիշտն է արտայայտում անդարձ գնացած թագաւորական զուարճութիւնների առթիւ՝ այն բանի համար, որ նա այլեւս անկարող է տեսնել ծխնելոյզներից ոլորապտոյտ բարձրացող եւ առաւօտներին չէների ու քաղաքների վրայ տարածուող ծուխը»[2]: Իր բացատրութեան համաձայն էլ Էմինը կատարել է «Ո՜ տայր...» հատուածի ռուսերէն զողորիկ, բայց անհարազատ թարգմանութիւնը՝

"О! еслиб кто дал мне (видеть)
из труб (выходящий) дым
И утро Навасардское,
И бег оленей и крик ланей!
Мы в рога трубили и в барабан били,
Как то обычно царям".[3]

Այս թարգմանութեամբ անհնարին է ըմբռնել հատուածի առնչութիւնը նամակի բովանդակութեան հետ:

Ի՞նչ կապակցութեամբ պիտի Մագիստրոսը «յաւուրս ձմերայնոյ» տեղի ունեցած յորդահոս անձրեւի ու որոտի նկարագիր նամակին կցէր վիպական այդ հատուածը: Եթէ Մ. Էմինի բացատրութիւնը ճիշտ համարենք, մնում է անհասկանալի: Առաւել եւս, նաւասարդ ամիսն ըստ հայկական քաղաքական տոմարի ընկել է յունիս-օգոստոս ամիսներին[4], իսկ ըստ

1 Նոյն տեղում, էջ 112

2 Н. **Эмин**, Моисей Хоренский и др. эпос арм., Москва, 1881, с. 80-81. "В них випасан представляет умершего царю, выражающего в царстве теней сожаление о невозвратно миновавших царских забавах; о том, что ему не видать более клубящегося дыма, выходящего из труб и стелющегося по утрам поверх сел и городов".

3 Նոյն տեղում, էջ 81: «Զվազելն եղջերուաց» արտայայտութեան թարգմանութիւնը (крик оленей) սխալ է:

4 428 թուի նաւասարդի 1-ը համապատասխանել է օգոստոսի 11-ին: Տե՛ս Մատենադարանի «Գիտական նիւթերի ժողովածու», 1, Լ. Սեմենովի «Հայկ. տոմարի մի քանի հարցերի մասին» յօդուածը (էջ 21):

կրօնական տոմարի՝ համապատասխանել է մարտ-ապրիլ ամիսներին (սկսելով գարնանային գիշերահաւասարին)[1]:

Հասկանալի է, որ «յաւուրս ձմերայնոյ», աւելի որոշակի ասած՝ աշեկան ամսի 23-ին կատարուած դէպքի առիթով Գրիգոր Մագիստրոսը չէր կարող մէջբերել մի վիպական հատուած, ուր երգւում է նաւասարդ ամսուայ (տուեալ դէպքում միեւնոյն է, այն համապատասխանում է մարտին, թէ օգոստոսին) եղնիկների որսը:

Դժուար չէ վերոյիշեալից յանգել այն եզրակացութեան, որ ինչպէս Ալիշանի, այնպէս էլ Էմինի կողմից Մագիստրոսի ԼԳ նամակին տրուած մեկնութիւնները վերանայման կարիք են զգում:

Մ. Էմինը, փոխառելով Ալիշանի երկբայաբար յայտնած կարծիքը այն մասին, որ նամակի վիպական հատուածը վերաբերում է Արտաշէսի «մեռած առենին», հանգամանօրէն քննարկում է այդ հարցը: Համադրելով այս եւ Մ. Խորենացու մօտ պահպանուած Արտաշէսի անէծքի վիպական հատուածները միմեանց հետ՝ նա մի շարք հետաքրքիր դատողութիւններ է անում անդրաշխարհեան կեանքի, «ուրուականների աշխարհի» մասին հեթանոս հայերի հաւատալիքների վերաբերեալ:

Դժբախտաբար, ինչպէս իրաւացի կերպով ցոյց է տուել Գ. Խալաթեանցը "Армянский эпос" աշխատութեան մէջ[2], Մագիստրոսի գրանցուած հատուածը նման դատողութիւնների հնարաւորութիւն չի տալիս, որովհետեւ, ինչպէս յիշատակեցինք, «Ո՜ տայր» հատուածը Արտաշէսի բաղձանքն է ոչ թէ «մեռած առեն», այլ «ի վախճանելն»:

Այս հարցով հետաքրքրուողը մանրամասնութիւններ կգտնի Գ. Խալաթեանցի յիշեալ աշխատութեան էջերում, որի մէջ հեղինակը քննարկել է Մագիստրոսի նամակը նախորդներից առաւել մանրամասնութեամբ:

Նամակի քննարկումը Խալաթեանցին բերում է հետեւեալին.

(1) Նկարագրուած ամպրոպն ու անձրեւը տեղի են ունեցել ձմռանը, աշեկանի 23-ին, որ համապատասխանում է ապրիլին, (2) տարուայ այն պահին, երբ Արտաշէս Պարթեւը ցանկութիւն էր յայտնում տեսնել ծխնելոյզներից բարձրացող ծուխը եւ այլն, (3) վիպական հատուածում Արտաշէսը ցաւ է յայտնում այն բանի համար, որ ձմռանը՝ աշեկանին չի կարող դուրս գալ որսի, ինչպէս այդ անում էր ամռանը նաւասարդին (օգոստոսին), որը յատկապէս լաւ ժամանակ էր եղնիկների որսի համար, (4) այդ հատուածը պահպանուել է ժողովրդի մէջ որպէս աւանդութիւն, եւ չի կարող դիտուել որպէս հին վէպի բեկոր, եւ (5) Արտաշէս Պարթեւին պէտք է նոյնացնել ոչ թէ վիպասանքի, այլ Տակիտոսի «Տարեգրութիւններում» յիշատակուած Արտաշէսի հետ (18-38 թթ.), որը հռչակուել էր որսերի ու խնջոյքների հանդէպ ունեցած սիրով եւ ազգային սովորոյթների կրքոտ պաշտպանութեամբ, որի հետեւանքով էլ յոյժ սիրելի էր դարձել իր ժողովրդին[3]:

Այս եզրակացութիւնների դէմ ունենք մի շարք առարկութիւններ:

Նախ՝ եթէ ամպրոպն ու անձրեւը, որոնք առիթ են հանդիսացել Մագիստրոսի նամակի

1 Այս առթիւ տե՛ս Ղ. Ալիշանի «Յուշիկքի» Ա հատորում (Վենետիկ, 1869) հրատարակուած «Հայկայ շրջան» յօդուածը, ուր կարդում ենք. «Երբեմն էլ մեր նախնիք փոխանակ արեգի՝ նաւասարդը զուգած են ընդ Մարտի եւ Նիսանի» (էջ 87):

2 **Г. Халатянц**, Армянский эпос в истории Армении Моисея Хоренского, Москва, 1986

3 Նոյն տեղում, էջ 312-313

գրութեանը, եղել են ձմռանը (իսկ այդ մասին նամակի վերնագրում կայ ուղղակի վկայութիւն), ապա ահեկան ամիսը ոչ մի կերպ չի կարող համապատասխանել ապրիլ ամսին, ուստի Գ. Մագիստրոսն իր նամակում գործածել է կրօնական տոմարը, ըստ որի նաւասարդը սկսւում է գարնանային գիշերահաւասարին (մարտի 22) եւ ո՛չ օգոստոսին:

Երկրորդ՝ նամակում ոչ մի ակնարկ չկայ այն մասին, թէ Արտաշէսը տարուայ այդ պահին (ըստ Խալաթեանցի՝ ապրիլին) է ցանկութիւն յայտնել տեսնելու «ծխանի ծուխը» եւ այլն: Այս եզրակացութիւնը արդիւնք է բնագրի «**որում** Արտաշէսն Պարթեւ բաղձայր...» պարբերութեան թիւր ըմբռնման: Ընդգծուած «որում» բառը Խալաթեանցն ընկալել է որպէս «որ»-ի ներգոյական հոլովաձեւ (յորում) եւ կցել նախորդ պարբերութեանը (ուր, իրօք, խօսւում է ահեկան ամսուայ մասին, սակայն նամակի գրութեան ամսաթուի եւ ոչ՝ այլ առիթով): Ուշադիր ընթերցումը կասկած չի թողնում, որ «որում»-ը «որ»-ի տրական հոլովաձեւն է, եւ նրա բացայայտիչներն են «մլոյ մրրկեալ ծխոյ...» բառերը, որով եւ այդ նախադասութիւնը հասկացուելու է հետեւեալ կերպ. «շէնքերի ու քաղաքների վրայ հաւասարապէս (տարածուող) մրրկեալ մլին եւ մառախուղացած ծխին էր տենչում Արտաշէս Պարթեւը»:

Երրորդ եզրայանգումն այնքան չինծու է, որ հարկ չկայ կանգ առնել նրա վրայ: Միայն կարելի է զարմանալ այդպիսի անհիմն, բնագրից չբխող եզրակացութեան առթիւ:

Ինչ վերաբերում է չորրորդ եւ հինգերորդ կէտերին, անհրաժեշտ է ասել հետեւեալը: Ինչպէս հայ, այնպէս էլ բոլոր թագաւորների ու իշխանների ժամանցի ամենասիրելի ձեւերից մէկը որսն է եղել: Այդ նպատակով Խոսրով Կոտակ արքան, ըստ Մովսէս Խորենացու վկայութեան, տնկել է տալու մի հսկայական արհեստական անտառ եւ այն լցրել որսի կենդանիներով[1], ուստի Տակիտոսի վերոյիշեալ վկայութեան վրայ հեցած հնարաւոր չէ «Ո՜ տայր...» հատուածը վերագրել մի այլ Արտաշէսի, երբ Արտաշէս Ա-ի մասին Մ. Խորենացու մօտ պահպանուած վիպական հատուածները վկայում են, ինչպէս դիտել է հանգուցեալ ակադ. Մ. Աբեղեանը, որ Արտաշէս Ա-ի մասին եղել է ժողովրդական մի ընդարձակ վիպասանութիւն:

Յիշատակուած բանասէրների կողմից մեզ հետաքրքրող վիպական հատուածի առթիւ առաջարկած մեկնութիւնները, ինչպէս տեսանք, հեռու են գոհացուցիչ համարուելուց: Արտաշէս Ա-ի վիպասանքից մնացած բեկորը նոր մեկնութեան կարիք է զգում:

Նոր մեկնութիւն առաջարկելու համար նախ եւ առաջ անհրաժեշտ է հնարաւորին չափ խորամուխ լինել նամակի բովանդակութեանը՝ նրա եւ վիպական հատուածի միջեւ գոյութիւն ունեցող կապի եզրերը գտնելու նպատակով:

Գրիգոր Մագիստրոսի լեզուն մանուածապատութեան, անկանոնութեան ու միտումնաւոր ստեղծուած բարդութիւնների մի այնպիսի համակցութիւն է, որ անհնարին է դարձնում գոնէ մեզ հետաքրքրող նամակի բառացի թարգմանութիւնը:

Կան նամակում մի շարք բառեր, որոնք հաւանօրէն ստեղծուել են Մագիստրոսի կողմից եւ չեն մտել հայ լեզուի բառարանների մէջ (մակաւաղեան, դովար), կան նաեւ այնպիսիները, որոնց տրուած բացատրութիւնները պայմանական եւ յոյժ կասկածելի են (լալաւարթիւն, ալախութման[2]: Հասկանալի է, որ նման պարագաներում առաջարկած մեր մեկնութիւն-

1 Մ. Խորենացի, Պատմութիւն, Թիֆլիզ, 1913, գիրք երրորդ, գլ. Ը, էջ 265. «Իսկ սորա (Խոսրովու)... զբոսանաց հաւորսութեանց եւ այլոց որսոց պարապեալ, նորին աղագաւ եւ անտառ առ Ազատ գետովն տնկէ, որ յանուն նորա կոչի մինչեւ ցայսօր ժամանակի»:

2 Այս երկու բառերին էլ պրոֆ. Հ. Աճառեանը տալիս է միեւնոյն բացատրութիւնը՝ «այծի պապաչիւն»:

թարգմանութիւնից բառացիութիւն չպէտք է պահանջել:

Ըստ մեր ըմբռնման՝ նամակում ասուած է.

Ցանկանում ենք երեկուայ (ահեկի 23-ի) ճայթումն ու գոռոցը պաղաչող, մխմխացող (լալաւարութիւն), ալախութման (ալիքների մէջ սուզուո՞ղ) քաղի (այծի) աղմկալից խնճոյքին ու վրնջոցը հասկանալ հետեւեալ կերպ. Զառամեալ ծերունու նման դանդաղկոտ դարձած Ջիածինը[1] (ամպրոպային վիշա՞պ) ամոքում է իրեն թուխ մազերով՝ իր խեղճութեանը տալով խղական կերպարանք: Կամ գուցէ Արէսը հրաշունչ, ճարպիկ ու հերատատ Մակաւաղեանին (նոյնպէս միֆական կենդանի, վիշա՞պ) ձեւափոխելով դարձնում է զորական(՞) տաւար(՞):

Յաջորդ տողերում Գ. Մագիստրոսը մանուածապատ արտայայտութիւններով հաւանաբար յայտնում է նամակի գրութեան ամիսն ու ամսաթիւը հայոց եւ եբրայական տոմարով (ահեկի 24), ապա շարունակում՝ «Շէնքերի ու քաղաքների վրայ հաւասարապէս (տարածուող) մրրկեալ մլին (մո՞ւխ) եւ մառախուղացած ծխին էր տենչում Արտաշէս Պարթեւը, ասելով՝

Ով կտար ինձ ծխանի ծուխը
եւ նաւասարդի առաւօտը,
եղնիկների վազքը
եւ եղջերուների արշաւը.
Մենք փող ենք փչում
եւ թմբուկ զարկում
ինչպէս կարգն էր թագաւորների:

Եւ ասում են, թէ այս իր մահանալու ժամանակ է (ասել), որը գտանք գանձիկների (չինականների) մէջ աւանդուած»:

Որ նամակի սկզբում Մագիստրոսն ակնարկում է մի առասպել՝ թերեւս յունական, որը կապուած է ինչ-որ ամպրոպային աստուծոյ կամ դիւցազնի հետ, աւելի քան հաւանական է. դժբախտաբար, նամակի շարունակութեան անորոշութեան շնորհիւ անհնար է աւելի որոշակի հետեւութիւններ անել կամ նշել հեղինակի մտահղացման համար հիմք հանդիսացած առասպելը յունական:

Փոքր-ինչ աւելի հնարաւորութիւն ունենք Արէսի հետ առնչուած առասպելը քննելու համար:

Յենուելով Ագաթանգեղոսի պատմութեան մէջ բերուած Տրդատի հրովարտակի «քաջութիւն հասցէ ձեզ ի քաջն Վահագնէ» արտայայտութեան վրայ՝ Ղ. Ալիշանն իրաւացիօրէն յանգել է այն եզրակացութեան, որ հայկական Վահագնը իր որոշ գծերով ազգակից պէտք է եղած լինի Արէս աստծուն[2]:

Արէս-Վահագն համադրումը իրաւունք է տալիս մեկնուող հատուածը («Թերեւս եւ Առէս յուծեալ զՄակաւաղեանն հրաշունչ մորուեղ յօքնայածուկ ի զովրացի զովար յեղափոխէ»)

1 Ըստ Հայկազեան բառարանի՝ «ի ձիոյ ծնեալ եւ ըստ քերթողաց՝ որոտմունք եւ շանթք իբրեւ յերիւարաց Արամազդայ կամ արեգական առթեալ», ակնյայտնի սխալ է. ինչպէ՞ս կարող էր Մագիստրոսը որոտից ու շանթից ասել «զառամեալ ծերունու նման դանդաղկոտ դարձած» եւ այլն: Կարծում ենք՝ Ջիածինը միֆական մի կենդանու անուն է, հաւանաբար՝ ամպրոպային վիշապի, որը պատկերւում էր որպէս ձի, ջրի եւ այլն (տե՛ս Մ. Աբեղեան, Հայ ժող. առասպելները, էջ 116):

2 Ղ. Ալիշան, Հին հաւատք Հայոց, Վենետիկ, 1895, էջ 296

գլխով որպէս վիշապների դէմ հողմ յարուցանելով եւ անձրեւելով կռուող մի աստուծոյ (Վահագն, Մարս, Արէս եւ այլն) հետ կապուած առասպելի ակնարկութիւն:

Վահագնի եւ ընդհանրապէս գարնան ու բուսականութեան աստուածների, բնութեան չար ուժերի (վիշապների) դէմ մղած կռուի հիմնական բովանդակութիւնը Մ. Աբեղեանի շարադրութեամբ հետեւեալն է. «վիշապը, պտտահողմի կամ ամպրոպի չար անձնաւորումը, իր ընկեր չար ոգիների հետ, իբրեւ հողմ «Թանձրացեալ ամպով» բարձրանում է, արեգական լուսոյ երեսը կտրում կամ փոթորիկի մէջ հարձակւում է արեգական վրայ... եւ յափշտակում է նրան կամ ուրիշ առասպելներով երկնային անձրեւաբեր ամպերի, ջրերի առաջը կտրում է եւ վայր հոսելն արգելում է՝ անոնց առաջ ցամաք ամպերի լեռներ ու բուրգեր կանգնելով: Իսկ փոթորիկի կամ ամպրոպի աստուածը... կռւում է վիշապի եւ նրա չար ոգիների դէմ, խորտակում նրա բուրգերը կամ լեռները, սպանում է նրան եւ ազատում արեգակը եւ կամ ջրերը վայր է հոսեցնում»[1]:

Գ. Մագիստրոսի նամակների մեծագոյն մասի հիմնական նպատակը եղել է յունական ու հայկական առասպելների յիշատակութեամբ կամ ակնարկութեամբ ընդգծել իր գիտականութիւնը: Մէկ անգամ այդ բանի համար առիթ է ծառայել նուէր ստացած կարմրախայտ ձուկը, մի այլ անգամ՝ նուռը, եւ այլն:

Մոկաց եւ Մանազկերտի եպիսկոպոսին ուղղած սոյն գրութեան առիթը, ինչպէս տեսանք, եւ ակնյայտ է նամակի վերնագրից, եղել է «ահագին որոտումն. անձրեւ[ն] սաստիկ»: Այդ առիթն օգտագործելով՝ Մագիստրոսը, իրեն յատուկ մշուշապատութեամբ, թուարկել է որոտման ու անձրեւի հետ կապակցուող իրեն յայտնի առասպելները, որոնք (գոնէ նրանցից մէկը՝ առանց կասկածի) վիշապների դէմ կռուող Արէսի-Վահագնի առասպելն են յիշեցնում:

Հասնելով այս արդիւնքին՝ մենք հնարաւորութիւն ենք ստանում մօտենալու նամակի եւ վիպական հատուածի առնչութեան հարցին նոր լոյսի տակ:

Սակայն նախքան այդ հարցի քննարկումը անհրաժեշտ է պարզել վիպական հատուածի առաջին տողի («Ո տայր ինձ ծուխ ծխանի») իմաստը: Այդ տողի մեզ յայտնի առաջին մեկնաբանողները եղել են «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» մեծարժէք բառարանի հեղինակները: «Ծխան» բառը նրանք նոյնացրել են «ծխահանք» բառին՝ վերջինիս տալով «ծխնելոյզ... ծակ, որ ի դուրս հանէ զծուխս եւ զգոլորշիս» բացատրութիւնը:

Այս բացատրութեանն են հետեւել վիպական հատուածի բոլոր քննարկողները՝ աներկբայ համարելով «ծխան» եւ «ծխնելոյզ» բառերի հոմանիշութիւնը: Սակայն այդ բացատրութիւնն անկարելի է ընդունել, որովհետեւ դրանով չի պարզւում, թէ ինչ կապ կայ ծխնելոյզներից բարձրացող ծխի եւ նաւասարդի առաւօտեայ միջեւ: Տրամաբանական չէ կարծել, թէ Արտաշէսը երազել է նաւասարդի առաւօտեայ ծուխը, որովհետեւ այդ ամսին (միեւնոյն է՝ համապատասխանում է այն ապրիլին, թէ օգոստոսին) յատուկ չէ ծխնելոյզներից ելնող ծուխը կամ, աւելի ճիշտ, ծուխն ընդհանրապէս: Գուցէ «ծխանի-ծուխ»-ը տեսնելու բաղձանքը մահամերձ Արտաշէսի կողմից չէր կապակցւում նաւասարդի առաւօտեայ հետ, նա երազում էր մէկը միւսից անկախ՝ թէ՛ առաջինը (ծուխը), թէ՛ երկրորդը (նաւասարդի առաւօտը):

Այս մեկնաբանութիւնը նոյնպէս գոհացուցիչ չէ: Դրանք այնքան տարբեր բաներ են, որ եթէ ընդունելու էլ լինենք մահամերձ թագաւորի բաղձանքների քմահաճոյ եւ անտրամաբա-

[1] Մ. Աբեղեան, Հայ ժողովրդական առասպելները, էջ 157-158

նական լինելու հնարաւորութիւնը, դարձեալ դրութիւնը չի փոխուի: Դարերի ընթացքում ձեւաւորուած ու յղկուած ժողովրդական վէպի մէջ անտրամաբանական կցութիւններ ենթադրելու հիմք չունենք:

Մնում է վիպական հատուածի առաջին տողին տալ նշուած հակասութիւնները լուծող մի այլ բացատրութիւն:

Այդպիսի հնարաւորութիւն ընձեռում է մեզ յունաբան դպրոցի թարգմանութիւններից մէկը, որը պահպանուել է Մաշտոցեան Մատենադարանի գրչագրերից մէկում, ինչպէս եւ վենետիկեան Մխիթարեանների մատենադարանում[1]: Աշխատութեան վերնագիրն է՝ «Ասկղեպիադեայ՝ վասն չորից բնութեանց մարդոյ եւ տարոյ եւ ամսոյ»[2]:

Աշխատութիւնը թարգմանուած պէտք է լինի Է դարում կամ աւելի վաղ. որովհետեւ Անանիա Շիրակացին յիշատակութիւն ունի նրա մասին իր «Յաղագս շրջագայութեան երկնից» աշխատութեան մէջ[3], եւ նրա հետքերը նկատւում են Յովհան Օձնեցու ու Խոսրովիկի երկասիրութիւններում:

«Վասն չորից բնութեանց մարդոյ» աշխատութեան առաջին ենթագլխում կայ հետեւեալ հատուածը.

«...Ծանի՛ր զի ի հրոտից եւ ի նաւասարդի եւ ի հոռի ամսեան արիւն յաւելու. եւ ի սահմի եւ ի տրէ եւ ի քաղոց ամսեան՝ խարտեաշ մաղձն յաւելուն. եւ յարաց եւ ի մեհեկի եւ յարեգ սեւ մաղձն յաւելուն. եւ յահկի եւ ի մարերի եւ ի մարգաց՝ մաղաս յաւելու»:

Հրոտից, նաւասարդի, հոռի ամիսները բերուած են աշխատութեան մէջ որպէս գարնան ամիսներ. սահմի, տրէ, քաղոց ամիսները՝ ամռան. արաց, մեհեկի, արեգ ամիսները՝ աշնան, իսկ ահեկի, մարերի եւ մարգաց ամիսները՝ ձմռան:

Վերը մէջբերուած պարբերութիւնից յետոյ աշխատութեան մէջ անհրաժեշտութիւն է եղել կրկնելու այդ ամիսներն այլ կապակցութեամբ: Այս անգամ հեղինակը կամ թարգմանիչը բոլոր ամիսները յանուանէ թուելու փոխարէն բաւարարուել է գարնան, ամռան, աշնան եւ ձմռան առաջին ամիսների անունների յիշատակութեամբ: Միւս ամիսների թուարկման փո-

[1] Տե՛ս Գ. Զարպհանալեան, Մատենադարան հայկ. թարգմանութեանց, Վենետիկ, 1889, էջ 316-317. նաեւ՝ Մատենադարանում պահուող ցուցակներից N 18-ը՝ «Վենետիկի Մխիթարեանց հայ գրչագրաց համառօտ ցանկ՝ 1888 թուին կազմուած հայր Բառնաբաս Եղայեան գրագետից» (էջ 6բ):

[2] Այս աշխատութիւնը բժշկագիտութեան պատմութեան համար առանձնակի հետաքրքրութիւն է ներկայացնում: Յունական մատենագրութեան մէջ Ասկղեպիադէս անունով մի շարք գրողներ են յայտնի, որոնցից մի քանիսը՝ բժիշկ:

Դրանցից որի՞ն պէտք է ճանաչել որպէս այս աշխատութեան հեղինակ՝ կարելի կլինի որոշել յատուկ ուսումնասիրութիւնից յետոյ: Առայժմ կարող ենք ասել միայն, որ այն փաստարկումը, որի հիման վրայ Գ. Զարպհանալեանը ժխտում է աշխատութեան պատկանելութիւնը Ասկղեպիադէս Բիւթանացի մեծանուն յոյն բժշկի գրչին (մահ. 90 ն. մ. թ.), համոզիչ չէ: Զարպհանալեանի համար վճռական նշանակութիւն ունի այն հանգամանքը, որ Ասկղեպիադէսի անունով մեզ հասած երկերի շարքում չի գտնւում «վասն չորից բնութեանց մարդոյ...» աշխատութիւնը. սակայն դա, իհարկէ, անառարկելի փաստ չէ: Հայերէն թարգմանութեամբ պահպանուել են բազմաթիւ յոյն հեղինակների երկեր, որոնց բնագրերը չեն գտնւում. յիշենք Փիլոն Եբրայեցու երկերը, Եւսեբիոս Կեսարացու ժամանակագրութիւնը, Զենոն Ստոյիկի «Յաղագս բնութեան» երկը եւ այլն: Շատ հնարաւոր է, որ Ասկղեպիադէսի այդ երկի յունարէն բնագրին վիճակուել է վերոյիշեալների բախտը:

[3] Տե՛ս Ա. Աբրահամեան, Շիրակացու մատենագրութիւնը, Երեւան, 1944, էջ 321. «Նաեւ բնութիւն մարդկան ըստ երկրի գոյանան. զի ի ձմերայնի ջերմ լինի ներքին որովայն, դիւրահալ լինի կերակուրն ի վերոյ մարմինն հով. եւ յամարայնի ի վերոյ ջերմ եւ ի ներքոյ հով: Զոր եւ իմաստունքն ի բժշկաց պատմեն զայս Ասկղիպիադեայ եւ Հիպոկրատայ ուսմանն ճարտարապետքն ասացին»:

խարէն գործ է ածել «եւ այլ Բ ամիսքն» արտայայտութիւնը:

Նշուած ձեւով յիշատակուած են՝ «Հրորտից եւ այլ Բ ամիսքն» (Նաւասարդ, Հոռի), «սահմի եւ այլ Բ ամիսքն» (տրէ, քաղոց), «արաց եւ այլ Բ ամիսքն» (մեհեկի, արեգ): Միայն յաջորդ՝ ձմռան եռամսեակը բնագրում այլ ձեւով է բերուած: Սպասելի էր «ահկի եւ այլ Բ ամիսքն» ձեւը (ինչպէս հանդիպում ենք նոյն բնագրի մէկ այլ հատուածում), սակայն դրա փոխարէն կարդում ենք. ***«Ծիրանի ամիսն եւ այլ Բ ամիսքն»:***

Սրանից հետեւում է, որ աշխատութեան թարգմանչի կամ արտագրողներից մէկի համար ահկի եւ ծիրանի ամսանունները համարժէք են եղել. եւ կամ ձմռան առաջին ամսուայ համար հայերէնում գործածուել են թէ՛ ***ահեկի*** *(ահեկան), թէ՛* ***ծիրան*** *բառերը*[1]:

---

1 Միջնադարեան հայ տոմարագէտների երկերի, յայսմաւուրքների եւ այլ տիպի ձեռագիր աշխատութիւնների միջոցով մեզ հասած հայկական ամսանունների վերաբերեալ բանասիրութիւնն իր վերջնական խօսքը դեռ չի ասել: Սովորաբար դրանք ստուգաբանուել են պարսկերէն, նաեւ վրացերէն լեզուի օգնութեամբ ու դիտուել որպէս փոխառութիւններ (հրոտից, սահմի, հոռի եւ այլն) եւ կամ կապուել գիւղատնտեսական աշխատանքների ու բնական երեւոյթների հետ (օրինակ՝ քաղոցը բացատրուել է «քաղել» կամ անասունների «քաղ»-զուգակցութիւն, ինչպէս եւ «քաղ»-այծ բառերի միջոցով): Թւում է, թէ վերոյիշեալ սկզբունքներով կատարուած ուսումնասիրութիւնը դրական արդիւնքներ չի կարող տալ: Անհրաժեշտ է նախ ճշտել հայկական ամսանունների գրութեան ձեւերը եւ նախնականն ու հնագոյնը գտնելու ուղղութեամբ աշխատանք ծաւալել, որովհետեւ մի շարք ամսանուններ հասել են մեզ տարբեր գրութեան ձեւերով, իսկ մի քանիսն էլ տարբեր անուանակոչութեամբ: Այսպէս օրինակ՝ **հրոտից** ամսանունը հնագոյն ձեռագիր աղբիւրներում ամէնուրեք գրուած ենք գտնում **հրորտից** ձեւով, տրէ-ն հանդիպում է տրեայ ձեւով, **մեհեկին**՝ մեհեկան, **ահկին**՝ ահեկան ձեւով եւ այլն:

Ահեկանը, ըստ միջնադարեան տոմարագէտների, հնում կոչուել է հարուանց, իսկ ինչպէս տեսանք, նաեւ ծիրան, հոռի ամսանուան հին անունը, ըստ Յովհան Երզնկացու անուամբ հրատարակուած տօնապատճառի, եղել է մատրան («այր ոմն զմատրան ամիս ի հոռի փոխարկեաց» - Ղ. Ալիշան, Հին հաւատք, էջ 140): Մեր Մատենադարանի յայսմաւուրքներից մէկում մարերի-յունիս զուգադրութեան կից նշանակուած է նաեւ հիզան ամսանունը, որ թւում է այդ ամսուան հին անուանակոչութիւնը («Մարերի ի ԻԵ, եւ յունիս, հիզանի Ա. վկայաբանութիւն սրբոյն Պետրոսի եւ Պօղոսի...» - ձեռ. N 3811, էջ 937) եւ այլն: Արդ, նրանցից որո՞նք են հնագոյնները, փոփոխութիւնները ե՞րբ եւ ի՞նչ պարագաներում ու պատճառով են կատարուել՝ ահա այն հարցերը, որոնք լուսաբանման կարիք են զգում:

Ընդունելի արդիւնքների հասնելու համար ի նկատի պէտք է ունենալ մի այլ հանգամանք եւս. հայկական ամսանունները, առանց բացառութեան, սեռական հոլովաձեւով են բերւում աղբիւրներում (հմմտ. նոյն բանը նաեւ հայկ. տեղանունների կապակցութեամբ՝ Կարնոյ քաղաք, Այլաբերից գիւղ, Շիրակեաց լեառ եւ այլն եւ այլն): Ամսանունները հնում գիտակցուել են որպէս տուեալ քաղաքական ու մշակութային միաւորման բաղադրիչ մասեր կազմող ցեղախմբերին կամ ցեղախմբերի տոտեմ-աստուածներին վերաբերող, նրանց պաշտպանութեան տակ գտնուող եւ նրանց նուիրուած ժամանակամիջոցներ: Եթէ այս դատողութիւնը ճիշտ է, որի առթիւ չենք կասկածում, ապա մարաց (ամիս)-ը պէտք է առաջացած համարել «մարք»-մարեր էթնիկական անունից, արաց (ամիսը)՝ Արա (աստուծոյ), թերեւս «արիք»-արիներ էթնիկական տերմինից, արեգ (ամիս)-ը՝ Արեգ աստուծոյ, ուստի եւ նրան պաշտող էթնիկական միաւորի անունից, Հրորտից (ամիս)-ը՝ Հրարտք-ուրարտք-ուրարտացիներ անունից: Մէկ առ մէկ պաշտպանել մեր առաջարկները, այս ծանօթութեան սահմաններում, իհարկէ, անհնարին է: Ծանօթանանք միայն վերջին՝ հրորտից ամսանուան առթիւ պրոֆ. Հ. Աճառեանի յայտնած կարծիքին. ըստ նրա՝ այդ իրանական փոխառութիւն է պհլ. fravartikan-«աւելեաց» բառից: Իսկ ինչո՞ւ չի կարող լինել հակառակը, այդ ամսանունը ինչո՞ւ չէր կարող հաբեթական աշխարհից անցնել իրանական աշխարհ՝ մի բան, որ նոյնքան, գուցէ առաւել տրամաբանական է, բայց անտեսւում է իրանական մշակոյթի ազդեցութեան ուժը գերագնահատելու հետեւանքով: Անշուշտ կարող էր:

Այնուհետեւ հայկական ամսանունների ու տոմարի քննութեան ընթացքում յատուկ ուշադրութիւն պիտի դարձնի, գուցէ Անանիա Շիրակացու կողմից գրանցուած, այն ժողովրդական աւանդութեան վրայ, ըստ որի՝ հայկական ամսանուններն առաջացել են հայերի առասպելական նախահօր՝ Հայկի (հայկական Զրվանի) որդիների ու դուստրերի անուններից: Այս տեղեկութիւնը ենթադրել է տալիս հայ էթնոսի կազմաւորման մասին եղած վեպի մի հնագոյն՝ Մ. Խորենացու շարադրածից տարբեր ու մանրամասն փոփոխակի գոյութիւն, որտեղ Հայկի սերունդների թւում յիշւում են մի շարք այլ տոտեմ-աստուածներ (ցեղախմբեր): Հաւանական է, որ ժողովրդի կազմաւորման երկարատեւ պրոցեսի այս կամ այն էտապում, նոր եւ կենսունակ էթնիկական

Ստացուած արդիւնքը ***ծիրան*** *եւ* ***ահկի*** *բառերի հոմանիշութեան մասին լուծում է քննութեան նիւթ հանդիսացող վիպական հատուածի վերոյիշեալ մթին տեղը:*

Շատ հաւանական է, որ «Ո տայր ինձ զծուխ ծիրանի» նշանակում է՝ «ով կտար ինձ ահկի ամսուայ (յունուարի) ծուխը»:

Այս բացատրութեամբ պարզւում է նաեւ «որում Արտաշէսն Պարթեւ բաղձայր մրոյ մրրկեալ ծխոյ չամանդաղեալ մակաւասար չինից եւ քաղաքաց» պարբերութեան ու վիպական հատուածի կապը նամակի բովանդակութեան հետ:

Նամակը գրուած է «յաւուրս ձմերայնոյ», ահկի ամսի 23-ին եղած որոտման եւ անձրեւի առիթով, Արտաշէս Պարթեւն էլ երազել է ահկի, ծիրան ամսուայ մրրկեալ մխին եւ մառախուղացեալ ծխին (որ թերեւս պէտք է հասկանալ «խիտ մառախուղ», «սեւ ամպ» իմաստով):

*Վիպական հատուածի ներմուծումը նամակի մէջ այժմ պատճառաբանուած է**:

Սակայն չկա՞ն արդեօք աւելի սերտ աղերսներ նրանց միջեւ, Արտաշէսի բաղձանքն արդեօք եղնիկների որսի սիրահար մահամերձ թագաւորի բաղձա՞նք է, թէ՞ որոշ կապ կայ այդ հատուածի եւ նամակի սկզբում յիշատակուած առասպելների միջեւ:

Դեռեւս 1899 թուին «Բիւրակն» լրագրի էջերում Վ. Ս. Քիւրքճեանը հրատարակել է մի փոքրիկ ազգագրական յօդուած «Կաթնաղբիւր» վերնագրով:

Յօդուածում նկարագրուած է Կեսարիայում պահպանուած մի սովորոյթ. ամէն տարի մայիսի 7-ին, արեւածագից շատ առաջ, տարէց կանայք իրենց կաթնատու խոշոր եղջերաւոր անասունների հետ մէկտեղ ուխտի են գնում գիւղից քառորդ ժամուայ հեռաւորութեան վրայ գտնուող «Կաթնաղբիւր» կոչուող մի աղբիւրի: Մոմ են վառում, ծխում են խունկ եւ լուանում կաթնաղբիւրի ջրով իրենց եւ անասունների կրծքերը: Այդ ժամանակ հասնում է հովիւն ու քշում անասուններին արօտի: Յօդուածագիրն այդ տեսարանը, երբ արեգակի ծագելու եւ բնութեան զարթօնքի պահին կաթնաղբիւրի մերձակայքում իրար են խառնւում անասունների բառաչն ու կանանց խօսակցութիւնները, համեմատում է Գ. Մագիստրոսի նամակի վիպական հատուածի «զվաղելն եղանց եւ զուարդելն եղջերուաց» տողի հետ. ապա յայտնում է, որ «հոսը ամէն ոք կը սկսի ճաշել ու զբօսնուլ»՝ դրան էլ յարակցելով «մեք փող եւ թմբուկ հարկանէաք» տողը[1]:

Իհարկէ, Քիւրքճեանի յօդուածում վիպական վերոյիշեալ տողերը միայն զարդարանքի դեր են կատարում, այնուամենայնիւ ուշադրութեան արժանի է, որ մեր բանասիրութեան կողմից որպէս որսի նկարագիր ճանաչուած վիպական բեկորի ու անկասկած հեթանոսական

միաւորներ մերձենալով մի որեւէ ցեղերի կոնֆեդերացիայի եւ մտնելով նրա կազմի մէջ, պէտք է իրենց հետ բերէին նաեւ իրենց աստծոյ պաշտամունքը: Այս պատճառով դարերի ընթացքում փոփոխուել է ինչպէս ժողովրդի էթնիկական կառուցուածքը, այնպէս էլ նրա պանթէոնն ու դրանից բխող՝ դրա հետ սերտ աղերսներ ունեցող տոմարը:

Սոյն յօդուածի սահմաններից վերոյիշեալով մենք շատ հեռացանք: Մեր համեստ նպատակն էր միայն շեշտել հայկական ամսանունների եւ ընդհանրապէս տոմարի հետ կապուած մի շարք հարցերի առթիւ նոր ուսումնասիրութիւններ կատարելու անհրաժեշտությունը, ինչպես եւ այդ ուսումնասիրութեան միջոցով տուեալ տոմարը ստեղծած էթնոսի բաղադրիչ տարրերի ու հեթանոսական պանթէոնի հետ կապուած մի շարք հետաքրքրական խնդիրներ պարզելու հնարաւորությունը:

* [Եղնիկի ու ձմրան («բանջարաբուսոկի»), վիշապի հետ կապուած մի ուշագրաւ աւանդութիւն գրառել է հայագէտ Գ. Տէր-Մկրտչեանը Ն. Մառին հասցէագրած նամակում (տե՛ս «Մառը եւ հայագիտութեան հարցերը», Երեւան, 1968, էջ 259: Խմբ.]

1 «Բիւրակն», 1899, էջ 360. Վ. Ս. Քիւրքճեան, Կաթնաղբիւր

ժամանակներից պահպանուած մի տօնախմբութեան միջեւ նա հնարաւոր է համարել զուգահեռներ անցկացնել:

Առաջադրուած հարցի լուծման համար կարեւոր են բոլոր՝ թէ՛ պատմական, թէ՛ ազգագրական տեղեկութիւնները, որոնք վերաբերում են նաւասարդի ու ահկի (ծխան) ամիսներին Հայաստանում տեղի ունեցած հեթանոսական տօներին եւ դրանց հետ կապուած սովորոյթներին:

Նաւասարդը հայկական ամենատօնաչատ ամիսն է եղել ինչպէս հեթանոսական, այնպէս էլ քրիստոնէական ժամանակներում:

Այդ ամսի 1-ին սկսւում էր ամանորայ ամենաբեր դից «համաշխարհական» կամ «աշխարհաժողով» տօնը, որի տակ պէտք է հասկանալ նոր տարուայ ամենաբեր աստուածների տօն: Այդ աստուածների թւին էր պատկանում Վահագնը[1]: Ըստ աւանդութեան՝ կործանելով Վահագնի աշտիշատեան տաճարը՝ Գրիգոր Լուսաւորիչը տեղը հիմնեց Յովհաննէս Մկրտչի եկեղեցին եւ Վահագնի տօնի փոխարէն նոյն նաւասարդի 1-ին կարգեց տօն Յովհաննի եւ Աթանագինէսի: Իսկ «Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետի» (Յովհան Մկրտչի) պաշտամունքն ակնյայտօրէն Վահագնի պաշտամունքն է քրիստոնէական զգեստաւորումով:

Վերոյիշեալից թերեւս հնարաւոր լինի եզրակացնել, որ վիպական հատուածի նաւասարդի առաւօտն առնչւում է Վահագնի տօնին՝ մի տօն, որ կապուած է եղել այդ աստուծոյ միֆական ծննդեան («Երկնէր երկին, երկնէր երկիր...») եւ վիշապների դէմ մղած հերոսամարտերի հետ[2]: Այս ենթադրութիւնն աւելի հաւանական կհամարուի, եթէ վերյիշենք Գ. Մագիստրոսի նամակի այն մասը, որտեղ ակնարկուած է նոյն Արէսի-Վահագնի կռուին ինչ-որ միֆական Մակաւազեանի (վիշապի) հետ:

Իսկ ի՞նչ հեթանոսական տօն կամ սովորոյթ է կապուած ահկի կամ ծխան ամսուայ հետ:

Բորչալուի գաւառում տարեմտին (դեկտեմբերի 31-ին) ամէն ընտանիք մի մեծ գերան էր քարշ տալիս գլխատուն, գերանի մի ծայրը դնում էին օջախի մէջ եւ վառում: Այդ «տարեմտի քյոթուկը» պէտք է անընդհատ վառուէր մինչեւ ծննդեան երեկոն: Ծննդեան երեկոյին վերցնում էին այդ գերանից մնացած ածուխը, տանում հանդերում թաղում, որպէսզի թէ՛ բերքն առատ լինի, եւ թէ՛ կարկուտը չխփի արտին: Հաւատում էին, որ կարկուտ եկած միջոցին եթէ այդ գերանի ածխից դուրս ձգեն, ապա երկինքը կխաղաղուի, ուստի պահում էին ածխի մի մասը՝ պէտք եղած ժամանակ գործադրելու նպատակով[3]:

Ինչպէս արդէն նշել ենք, ահկի-ծխան ամիսը, ըստ կրօնական տոմարի, ձմեռուայ առաջին ամիսն է եղել. աւելի կոնկրետ՝ այն սկսուել է դեկտեմբերի 22-ից ու տեւել է մինչեւ յունուարի 22-ը, ուստի Բորչալուում պահպանուած հեթանոսական սովորոյթը տեղի է ունեցել հին՝ ահկի-ծխան ամսուայ մէջ: Թերեւս ***ծխանի ծուխի*** *բաղձանքը որոշ կապ ունի հեթանոսական այդ սովորոյթի (հնում՝ տօնակատարութեան) հետ, որի ընթացքում, իրօք, գիւղերի ու քաղաքների վրայ բնական մառախուղի հետ մէկտեղ պէտք է որ տարածուէր «տարեմտի քեոթուկի» գլխատներից բարձրացող ծուխը:*

---

1 Տե՛ս Ղ. Ալիշան, Հին հաւատք Հայոց. նաեւ՝ Յուշիկք հայրենեաց Հայոց, հտ. Բ, յօդուած ԺԲ («Տօնք նաւասարդի»):

2 **Մ. Խորենացի**, Պատմ., գիրք առաջին, գլ. ԼԱ, էջ 80. «Ընդ վիշապաց ասէին յերգին՝ կռուել նմա եւ յաղթել եւ կարի իմն նմանագոյնս զՀերակլեայ նահատակութեանցն նմա երգէին»

3 Տե՛ս «Ազգագրական հանդէս», գիրք X, 1903, էջ 250, Ե. Լալայեանի «Բորչալուի գաւառ» յօդուածը:

Մի այլ կողմով էլ է ուշագրաւ այս սովորութիւնը:

Գերանից մնացած ածուխը, ինչպէս տեսանք, քշում է կարկտաբեր ամպերն ու արտերը բերքառատ դարձնում, իսկ կարկուտը նոյնպէս չար ոգիների (դեւի, վիշապի) արգասիք է. եթէ «տարեմտի գերանի» ածուխը չարահալածի դեր է կատարում, ապա ուրեմն այն հեթանոսական աստուածութիւնը, որի պաշտամունքի հետ է կապուած եղել Բորչալուում մինչեւ վերջերս պահպանուած այդ սովորոյթը, նոյնպէս եղել է կարկտաբեր դեւի-վիշապի հալածիչ, բարի ու երկրագործութեան հովանաւոր մի աստուածութիւն:

Այդպիսի ֆունկցիաներ ունեցած պէտք է լինէին ինչպէս Վահագնը, այնպէս էլ բազմաթիւ այլ անուններով, բայց համանման բովանդակութեամբ, զանազան ցեղախմբերի կողմից պաշտուած աստուածները. մի հանգամանք, որ իրաւունք է տալիս վիպական հատուածի «զծուխ ծխանի» արտայայտութիւնը նոյնպէս կապել այն աստուածութեան պաշտամունքի հետ, որի մասին ակնարկութիւն կայ Գր. Մագիստրոսի նամակի սկզբում:

Սակայն վիպական հատուածի յաջորդ՝ 3–7 տողերը կարծես թէ հակասում են առաջին երկու տողերի մեր մեկնութեանը:

«...Զվազելն եղանց,
եւ զվագելն եղջերուաց.
Մեք փող հարուաք
եւ թմբկի հարկանէաք,
որպէս օրէն է թագաւորաց»

Հատուածում մահամերձ թագաւորը երազում է եղնիկների եւ եղջերուների որսը:

Բայց ի՞նչ կապ կարող է լինել որսի եւ Վահագնի պաշտամունքի հետ կապուած հանդէսների միջեւ:

*Սասանեան, մեծ թւով մեզ հասած տաշտակները (*БЛЮДО*) օգնում են այդ հարցի պատասխանը գտնելու գործում:*

Դրանցից մէկում պատկերուած է զինավառ Խոսրով Բ արքան՝ արքայական հանդերձաւորութեամբ, հեծած իր փառայեղ նժոյգը՝ դիմացը եւ աջ կողմում գտնուող որսի կենդանիներին նետահարելիս: Որսի կենդանիների մէջ նկատւում են առիւծներ (2), վագր (1), վարազ (1) եւ եղջերուներ ու եղնիկներ (7), ուստի որսը կարելի է համարել եղնիկների ու եղջերուների որս:

Այսպիսի մի տեսարան պատկերուած է նաեւ Դուրա-Եւրոպոսի միհրական մեհեանի որմնանկարում, որ 209–211 թուերի գործ է: Այնտեղ պատկերուած է Միհրը: Միհրի ու Խոսրով Բ-ի սպառազինութիւնը, կեցուածքը ձիու վրայ, լարուած աղեղները յար եւ նման են միմեանց: Միհրի որսի կենդանիներն էլ, ընդհանուր առմամբ, նոյնանում են Խոսրովի որսի կենդանիների հետ (2-եղջերու, 2-եղնիկ, 1-գա՞յլ):

Համեմատելով միմեանց հետ այս եւ նման մի քանի յուշարձաններ՝ Կ. Վ. Տրեւերն առաջարկում է նշուած ընդհանրութիւնների մի սրամիտ բացատրութիւն[1]:

Ըստ նրա՝ թագաւորները, պատկերուելով կենդանիների դէմ կռուելիս, մօտեցնում էին

---

1 Տե՛ս նրա "Отражение зороастризма в искусстве" յօդուածը. հրատարակուած է Պետ. Էրմիտաժի "Труды Отдела истории культуры и искусства Востока" ժողովածուում (том I, Ленинград, 1939, с. 243-254):

իրենց կերպարը ընդդէմ խաւար ու չար սկզբունքի պայքարող աստուծոյ՝ երկնային որսորդ Միհրի կերպարին[1]: Ժողովրդի գիտակցութեան մէջ եւս աստիճանաբար աստուածացուած թագաւորի ու աստուծոյ միջեւ եղող պատուարը վերանում է. եւ նրանք (թէ՛ արուեստի, թէ՛ գրականութեան մէջ) պատկերւում են համընդհանուր, միմեանց ծածկող գծերով:

Շատ հնարաւոր է, որ Խոսրով Բ-ի որսը փորագրող վարպետն իր սիւժէն ըմբռնել է որպէս սոսկ թագաւորական զուարճութիւն՝ առանց հասու լինելու այդ կերպարի նախկին միհրական բովանդակութեանը:

Նոյնպէս հնարաւոր է, որ մեր վիպասանները մահամերձ Արտաշէսի բաղձանքն ըմբռնել են որպէս որսասէր թագաւորի վշտի արտայայտութիւն: Սակայն Արտաշէսի երազած այն որսը հաւանօրէն կապ ունի նաւասարդ ու ծխան ամիսներին տեղի ունեցած հեթանոսական հանդէսների հետ՝ որպէս ծիսական որսի մի արարողութիւն: Թագաւորը, որպէս հանդէսի կրօնական ղեկավար, քրմապետ, հալածելով եղնիկներին ու եղջերուներին, պատկերում էր այն հերոսամարտը, որ մղել է երկնային չար ուժերի դէմ մարտնչող աղեղնաւոր որսորդ աստուածը (Վահագն, Արէս, Միհր եւ այլն):

Վիպական հատուածում ասուած է, որ օրէնք էր թագաւորների համար որսի ժամանակ փող փչելն ու թմբուկ զարկելը (տող 5-7): Սովորական որսերի ժամանակ թագաւորական շքախմբի կազմում լինում էին եւ՛ փող փչողներ, եւ՛ թմբկահարներ, ուստի այդ տողերը նոյնպէս, համապատասխան վիպական հատուածի բովանդակութեան, նոր բացատրութիւն են պահանջում:

Տօնական աստուծոյ երկնային որսը թագաւորը պէտք է ներկայացնէր անձնապէս: Ստանձնելով մենամարտիկ որսորդի դեր՝ նա պէտք է եւ փող փչէր եւ թմբուկ զարկէր, որովհետեւ որսն այլ կերպ երկնային որսի կատարեալ պատկերը չէր լինի: Այսպիսով, վիպական հատուածում Արտաշէսի կողմից երազուած որսն առնչուել է ծխան եւ նաւասարդ ամիսներին տեղի ունեցող Վահագնի կամ նոյն բովանդակութեամբ մի այլ աստուածութեան տօնական հանդէսներին՝ որպէս կրօնական ծէս-արարողութիւն:

Ի մի բերելով Գրիգոր Մագիստրոսի՝ Մոկաց ու Մանազկերտի եպիսկոպոս Գրիգորին ուղղած նամակի քննութեան արդիւնքները՝ յանգում ենք հետեւեալին.

ա) Նամակի գրութեան առիթը ձմռանը՝ ահկի-ծխան ամսի 23-ին տեղի ունեցած «ահա-գին որոտումն», «սաստիկ անձրեւն» է եղել:

բ) Վերոյիշեալ առիթն օգտագործելով՝ Գրիգոր Մագիստրոսը համառօտակի շարադրել կամ ակնարկ է նետել ամպրոպաբեր եւ անձրեւաբեր բարի ու չար աստուածների կռուի վերաբերեալ եղած մի երկու առասպելների վրայ, որոնցից մէկը յիշեցնում է վիշապաքաղ Վահագնի հայկական առասպելը՝ յունական պճնուճանքով (Արէս փոխանակ Վահագնի):

գ) Նամակի վերջում Արտաշէսեան ցիկլից բերուած վիպական հատուածը նախորդ ուսումնասիրողների կողմից (Աբեղեան, Էմին, Խալաթեանց) մեկնուել է անբաւարար եւ ոչ գոհացուցիչ: Նրանք հատուածը քննարկել են առանց խորամուխ լինելու նամակում յիշուած առասպելների բովանդակութեանը եւ չեն կարողացել մեկնել վիպական հատուածի առաջին տողը:

դ) Առաջին՝ «Ո՜ տայր ինձ զծուխ ծխանի» տողը նշանակում է ոչ թէ՝ «Ո՜վ կտար ինձ

1 Նոյն տեղում, էջ 249

ծխնելոյզներից (երդիք) ծուխը», ինչպէս հասկացուել է, այլ՝ «Ո՜վ կտար ինձ ահկի (ծխանի= յունուար) ամսուայ ծուխը»:

ե) Ծխան բառը այս (ահկի) իմաստով գործածուած ենք գտնում բժշկագիտութեան պատ-մութեան համար մեծ արժէք ներկայացնող «Անկղեմիպաղեայ վասն չորից բնութեանց մար-դոյ...» թարգմանական ձեռագիր աշխատութեան մէջ:

զ) Վիպական հատուածի առաջին երկու տողերում («Ո՜ տայր ինձ զծուխ ծխանի եւ զառաւօտն նաւասարդի») մահամերձ Արտաշէս Ա-ն հաւանաբար երազել է ահկի-ծխան եւ նաւասարդ ամիսներին կատարուող տօնախմբութիւնները (որոնք նոյնպէս առնչուած են եղել երկնային չար ուժերի՝ վիշապների դէմ մարտնչող մի աստուածութեան պաշտամունքի հետ), իսկ յաջորդ տողերում՝ այդ տօնախմբութիւնների հետ կապ ունեցող եղնիկների ու եղջերու-ների որսերը, որոնց ժամանակ թագաւորը ստանձնում է ծիսական որսի արարողապետի պաշ-տօնը:

ՅԱԿՈԲ ՍԱՆԱՀՆԵՑԻ՝ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ XI ԴԱՐԻ*

Ուշ միջնադարից պահպանուել են հայ մատենագիրների ու պատմագիրների մի քանի ուշագրաւ ցանկեր[1]*, որոնց մէջ հանրայայտ ու անուանի հեղինակների կողքին յիշատակւում են նաեւ քիչ յայտնի եւ բոլորովին անյայտ անուններ: Առաջին անգամ Ղ. Ալիշանն է ուշադրութիւն դարձրել այդ ցանկերի վրայ եւ ըստ արժանւոյն գնահատել նրանց գիտական նշանակութիւնը: Նա մասնաւորապէս անդրադարձել է Ղազար Ջահկեցու «Դրախտ ցանկալի» կոչուած աշխատութեան միջնորդութեամբ մեզ հասած 36 հայ պատմիչների ցանկին*[2]*՝ նշելով, որ, բացի նշանաւոր եւ այլուստ էլ յայտնի պատմագիրներից, այդտեղ յիշատակուած են նաեւ միանգամայն անծանօթ հեղինակների անուններ՝ Յակոբ, Եսայի, Սարգիս, Դանիէլ եւ այլն*[3]*:*

Արդէն եօթանասուն տարի է անցել «Հայապատումի» հրատարակութիւնից, բայց դեռեւս փորձեր չեն կատարուել՝ վերոյիշեալ պատմիչների գործերը երեւան բերելու: Միակ բացառութիւնը թերեւս Յակոբ կոչուած պատմագրի հետ է կապուած: Հ. Աճառեանը «Հայոց անձնանունների բառարանում» այդ անուան առնչութեամբ գրել է. «Յակոբ քահանայ, անծանօթ պատմիչ. գրել է պատմական մի գործ՝ սկսած Ադամից մինչեւ 1101 թուականը: Սրա մի օրինակը գտնւում է Փարիզի Bibl. Nationale-*ում (*Manus. Bibl. nat., *էջ 133): Երեւի սրա հետ նոյնն է Յակոբ անծանօթ պատմիչը, որին յիշում է Ղազար Ջահկեցի, Հայապատում, 13»*[4]*:*

*Այս տեղեկութիւնը, ցաւօք, թիւրիմացութեան արդիւնք է: Մեծանուն գիտնականի մատնանշած Փարիզի ազգային գրադարանի հայերէն ձեռագրերի ցուցակի համապատասխան էջում խօսք կայ ոչ թէ Յակոբ (*Jacques*), այլ Յովհաննէս (*Jean*) քահանային պատկանող պատմական դէպքերի համառօտ մի ցանկի մասին, որը, սկսելով Ադամից, հասցուած է մինչեւ հայոց 550 (=1101) թուականը*[5]*:*

Այդ ժամանակագրութեան հեղինակ Յովհաննէս քահանան ոչ այլ ոք է, քան XI-XII *դարերի նշանաւոր մատենագիր Յովհաննէս Սարկաւագ վարդապետը: Փոքրիկ այդ բնագիրը երկիցս արդէն տպագրուել է. սկսւում է, իրօք, Ադամից («Եթէ կամիցիս յելանելոյն Ադամայ ի դրախտէն գիտել զժամանակն») եւ աւարտւում «ՇԾ (1101) թուին՝ պատառումն գաւկին» տեղեկութեան գրանցումով (դրան անմիջապէս յաջորդում է Սարկաւագի մահուան մասին մի*

* Բանբեր Երևանի համալսարանի, 1971, N 1, էջ 22-48

1 Այս ցանկերի ամբողջական ու քննական հրատարակութիւնն իրականացրել է Յ. Անասեանն իր «Հայկական մատենագիտութիւն» (Երեւան, 1959) մեծարժէք աշխատութեան Ա հատորի ներածական ուսումնասիրութեան «Մատենագիտական բնագրեր» կոչուող բաժնում (տե՛ս էջ XXXIX-LXXVI):

2 «Գիրք աստուածաբանական, որ կոչի Դրախտ ցանկալի՝ շարադրեալ ի Ղազարու աստուածաբան վարդապետէ Ջահկեցւոյ», Կ. Պոլիս, 1735, էջ 646-647: Յետագայում Ն. Ակինեանը, քաղելով Անթիլիասի մատենադարանի մի ձեռագրից, հրապարակեց Ղազար Ջահկեցուց աննշան տարբերութիւններ ունեցող մի ուրիշ ցանկ (**Ն. Ակինեան**, Բաղէշի դպրոցը, 1500-1704, Վիեննա, 1952, էջ 309-311):

3 **Ղ. Ալիշան**, Հայապատում, մասն Ա, Վենետիկ, 1901, էջ 13

4 **Հ. Աճառեան**, Հայոց անձնանունների բառարան, հտ. Գ, Երեւան, 1946, էջ 484-485

5 Ցուցակի հեղինակ Ֆ. Մակլերն այսպէս է ներկայացրել 1662 թ. ընդօրինակուած N 252 ձեռագրի 63-66 էջերը գրաւող եւ խնդրոյ առարկայ «պատմական գործը». De Jean le Prêtre, sur les événements de l'histoire, depuis la sortie d'Adam du Paradis terrestre Jusqua l'an 550 de l'ère arménienne (=1101 d. I. C.) (տե՛ս Catalogue des Manuscrits Arméniens et Géorgiens de la Bibliothèque Nationale, par Frédéric Macler, Paris 1908, էջ 133:

գրանցում. «ՇՀԸ թուին փոխեցաւ ի Քրիստոս մեծ վարդապետն Սարկաւագն»[1]*: Ըստ այդմ՝ այս «ժամանակագրութիւնը», որի պատմագիտական արժէքը մեծ չէ, վերոյիշեալ Յակոբի հետ որեւէ առնչութիւն չունի:*

Այսպիսով, ինչպէս Ղազար Ջահկեցու ժամանակ (մահ. 1751 թ.), այնպէս էլ այսօր, հայագիտութեան մէջ ադօտ մի վկայութիւն կայ միայն Յակոբ անունով հայ պատմիչի գոյութեան մասին: Եւ յայտնի չէ նոյնիսկ, թէ երբ է ապրել եւ ինչի մասին է գրել մոռացուած այդ պատմագիրը:

***

Վերջին երկու տասնամեակների ընթացքում Մաշտոցի անուան Մատենադարանի ձեռք բերած մէկ հազարից աւելի հայերէն ձեռագրերի մէջ մասնաւոր ուշադրութեան արժանի են պոլսահայ մտաւորական Թորոս Ազատեանի (1895-1955) հաւաքած մի քանի տասնեակ ձեռագրերը, որոնք բանասէրի այրու բարեհաճութեամբ դիւանական բազմաթիւ փաստաթղթերի, հնատիպ գրքերի եւ այլ նիւթերի հետ մէկտեղ ուղարկուել էին մայր հայրենիք: Այդ ձեռագրերից մէկը, որ գրանցուել է Մատենադարանի 9832 համարի տակ, յայտնաբերուել է Դիարբեքիրում 1950 թուականին: Ընդամէնը 38 թերթից բաղկացած եւ արտաքինից անհրապոյր այդ փոքրիկ գրչագիրը բանասիրական ուշագրաւ նիւթերի մի շտեմարան է: Այստեղ գտնում ենք 1587-1592 թթ. եւրոպական երկրներում ճամփորդած Սարգիս աբեղայի «Ուղեգրութեան» միակ օրինակը[2]*, Լանկ-Թամուրի դէպի Իրան ու Անդրկովկաս կատարած առաջին արշաւանքի (1387 թ.) մասին Ստեփանոս վարդապետի բովանդակալից գրառումները (սրանք աղբիւր են ծառայել Թովմա Մեծոփեցու համար) եւ վերջապէս՝ ընդամէնը 3 փոքրադիր էջից բաղկացած պատմագրական թերի մի հատուած՝ «Ի ժամանակագրութենէ Յակոբայ քահանայի» խորագրով (էջ 25բ-27ա): Ահա նորայայտ այս պատառիկը հնարաւորութիւն է ընձեռում նոր փորձ կատարելու մոռացուած հայ մատենագիր Յակոբի կեանքի ու ստեղծագործութեան որոշ կողմեր բացայայտելու ուղղութեամբ:*

***

«Ի ժամանակագրութենէ Յակոբայ քահանայի» խորագիրը կրող վերոյիշեալ գրուածքն իր բովանդակութեամբ նորոյթ չէ հայ պատմագրութեան համար: Նրա մի փոփոխակը, որպէս աղբիւրագիտական ինքնուրոյն միաւոր, յայտնի է վաղուց ի վեր «Տեառն սուրբ վարդապետին Յոհաննիսի, որ մականուն Կոզեռն կոչի» խորագրով եւ տպագրուել է Ն. Մառի աշխատասիրութեամբ անցեալ դարի վերջերին[3]*: Նոյնը, խմբագրական որոշ փոփոխութիւններ կրելով, օգտագործուել է Մատթէոս Ուռհայեցու կողմից, իսկ այդտեղից էլ, համառօտուելով, մուտք գործել Սմբատ Սպարապետի «Ժամանակագրութեան» մէջ:*

Խնդրոյ առարկայ պատմական պատառիկը կարելի է բաժանել չորս ինքնուրոյն հատուածների: Ստորեւ մէկ առ մէկ ներկայացնելու ենք դրանց բովանդակութիւնը՝ անդրադառնալով իւրաքանչիւրի աղբիւրագիտական բնութագրութեանը:

1 **Վ. Յակոբեան**, Մանր ժամանակագրութիւններ 13-18-րդ դդ., հտ. I, Երեւան, 1951, էջ 22-25. **Ա. Աբրահամեան**, Յովհաննէս իմաստասէրի մատենագրութիւնը, Երեւան, 1956, էջ 131-133

2 Այդ ուղեգրութեան բնագիրը, տողերիս գրողի աշխատասիրութեամբ, տպագրուել է «Պատմա-բանասիրական հանդէս» պարբերականի 1970-ի N 3-ում [վերահրատարակութիւնը տե՛ս սոյն գրքում: Խմբ.]

3 Տե՛ս **Н. Я. Марр**, Сказание о католикосе Петре и ученом Иоанне Козерне (из сборника факультета восточных языков, "Восточные заметки"), СПб., 1895, с. 9-34:

Առաջին հատուածը վերաբերում է բիւզանդական կայսր Վասիլ Բ-ի (976–1025) Արեւելեան արշաւանքին: 1021 թուականին մեծ բանակով կայսրն արշաւում է Տայք եւ պահանջում Հայոց Յովհաննէս-Սմբատ թագաւորից՝ Անի քաղաքն ու «զամենայն տունն Շիրակայ» անձնել կայսրութեանը: Հայոց թագաւորը «յաղագս թուլութեան ու տկարութեան մարմնոյ» ստանձնում է կատարել այդ պահանջը՝ «զկնի մահուան իւրոյ» իր տիրոյթները Բիւզանդիային կտակելով:

Պատմական այս անցուդարձերին անդրադարձել են հայ եւ օտարազգի մի շարք մատենագիրներ:

Արիստակէս Լաստիվերտցին, օրինակ, բոլորովին այլ ձեւով է մատուցում այս դէպքերի ընթացքն ու հերթականութիւնը: Ըստ նրա՝ Վասիլ Բ կայսրն արշաւում է Արեւելք, պարտութեան մատնում վրացիներին, մեկնում ձմեռելու «ի գաւառն Խաղտեաց»: Այստեղ է գալիս [illegible] Պետրոս կաթողիկոսը՝ հրահանգ ստացած լինելով Հայոց թագաւոր Յովհաննէս-Սմբատից՝ ստորագրելու «Հայոց կործանման գիրը», այսինքն՝ մի փաստաթուղթ, որի ուժով Անին իր շրջակայքով թագաւորի մահուանից յետոյ տրուելու էր բիւզանդացիներին: Հայ ժողովրդի ու պետականութեան համար տարարախտ հետեւանքներ ունեցող այս արարքն Արիստակէսը բացատրում է Հայոց թագաւորի անզաւակութեամբ. «քանզի իւր ոչ գոյր որդի՝ ժառանգակալ թագաւորութեանն»,– գրում է նա[1]:

Վարդան Արեւելցին կտակի շարժառիթ համարում է այն, որ Յովհաննէս-Սմբատին նեղում էր վրաց թագաւորը («Այլ եւ նեղէր զՅովհաննէս արքային վրաց. վասն որոյ պատ[illegible]արգին պատուիրէ տալ ձեռագրով զԱնի զկնի մահուան իւրոյ ի Հոռոմս»[2]): Իսկ բիւզանդական պատմագիր Կեդրենոսի կարծիքով՝ կտակի խնդրական պատճառը Հայոց թագաւորի երկիւղն էր Վասիլ Բ-ի վրէժխնդրութիւնից: Նա, վրացիների հետ դաշնակցած, պայքարել էր բիւզանդացիների դէմ, ուստի պարտութիւնից յետոյ ստիպուած է եղել համակերպուել ստեղծուած պայմաններին՝ ստորագրել իր մահից յետոյ երկիրը բիւզանդացիներին յանձնելու պայմանագիրը:

Յ. Մանանդեանը, որ յատուկ քննութեան նիւթ է դարձրել Յովհաննէս-Սմբատի չարաբաստիկ կտակի մասին առկայ տարբեր ու հակասական տեղեկութիւնները, Կեդրենոսի հաղորդածն է համարում իրականն ու ճշմարտացին[3]: Այս եզրակացութիւնն, ըստ երեւոյթին, ընդունելի է: Մեզ համար, սակայն, կարեւոր է արձանագրել, որ Յակոբ քահանայի բացատրութիւնը, որին հետեւել են Մատթէոս Ուռհայեցին եւ Սմբատ Սպարապետը, ինքնատիպ լինելով, խիստ տարբերւում է ինչպէս Լաստիվերտցու, այնպէս էլ միւս՝ աւելի ուշ ապրած հեղինակների վարկածից: Ըստ այդմ, որոշ հիմք ենք ստանում մտածելու, որ Յակոբ քահանան ինքնուրոյն գիրքորոշում ու պատմագիտական հայեացքներ ունեցող մի մատենագիր է եղել:

Այս եզրակացութիւնը հաստատւում է, երբ քննութեան ենք առնում Յակոբի «Ժամանակագրութեան» մեզ հասած երկրորդ հատուածը, որ նուիրուած է բիւզանդա-վրացական 1021–1022 թթ. պատերազմին:

1 «Պատմութիւն Արիստակէսի Լաստիվերտցւոյ», աշխատ. Կ. Ն. Իւզբաշեանի, Երեւան, 1963, էջ 28–29, 31–32

2 «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 93

3 Յ. Մանանդեան, Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան, հտ. 3, Երեւան, 1952, էջ 19–21

Ըստ Յակոբի՝ դէպքերն այսպիսի ընթացք են ունեցել. Վասիլ կայսրը, Արեւելք գալով, իր մօտ է հրաւիրում Վրաց Գէորգի (1014–1027) թագաւորին, բայց վերջինս, Բիւզանդիայի դէմ պատերազմած լինելով, խուսափում է ներկայանալ: Բախւում են բիւզանդական եւ վրացական բանակները. Ռատ եւ Զոյատ եղբայրների գլխաւորութեամբ գործող վրացիները սկզբից յաջողութիւն են ունենում, սակայն Ռատի երիվարը խրւում է ճահճուտի մէջ, եւ անվեհեր զօրավարը սպանւում է. «Յայնժամ պարտեցան զաւրքն Վրաց եւ եղեն փախստական առաջի զաւրացն Վասլին»,– գրում է Յակոբը:

Այս պատերազմի մասին մանրամասն տուեալներ կան Արիստակէս Լաստիվերտցու, «Վրաց պատմութեան» («Քարթլիս ցխովրեբայի»), Յահեայ Անտիոքացու երկերում եւ ուրիշ սկզբնաղբիւրների մէջ: Յակոբի շարադրանքը, սակայն, ուշագրաւ մանրամասնութիւններով տարբերւում է միւսներից: Նա է, որ տեղեկութիւն է հաղորդում Ռատ իշխանի եղբայր Զոյատի մասին եւ յայտնում, որ վրաց զօրքի քաջարի այդ հրամանատարները Լիպարտի եղբայրներն են[1]: Լաստիվերտցին հիմնական ճակատամարտի վայրը մատնանշում է «մերձ ի ծովակն՝ որ կոչի Պաղակացիս» ձեւով, իսկ Յակոբը՝ «ի կողմն Շիրանայ դաշտին»: Այս տեղանունը, անտարակոյս, «Քարթլիս ցխովրեբայի» հայկական թարգմանութեան մէջ[2] Շիրիմք կոչուած անուան գրչական աղճատ գրութեան արդիւնք է եւ առնչութիւն չունի, իհարկէ, Շիրակի հետ*:

Յակոբի ժամանակագրական հատուածներից երրորդի բովանդակութիւնը կարելի է ամփոփել հետեւեալ հակիրճ շարադրանքով. վեց ամիս Վրաստանում մնալուց յետոյ Վասիլ Բ կայսրը մեկնում է Տրապիզոն՝ ձմեռելու: Ազդեցիկ շքախմբով այստեղ է գալիս նաեւ Պետրոս կաթողիկոսը, որին ընդունում են մեծ յարգանքով: Ջրօրհնէքի արարողութեան ժամանակ, երբ Պետրոսը մեռոնը թափում է գետի մէջ եւ սուրբ նշանով խաչակնքում, հրաշք է տեղի ունենում: Իսկ երբ յոյն հոգեւորականներն են օրհնում ջուրը, ոչինչ չի կատարւում: Յոյները բաց են թողնում սպիտակ աղաւնի՝ Սուրբ Հոգու խորհրդանշանը, որ պէտք է սաւառնէր ու խաղար գետի վրայ, սակայն վրայ է հասնում մի արծիւ ու ճանկում աղաւնուն: Վասիլ կայսրը սկսում է երկմտել «ի հաւատս Հոռոմոց» եւ որոշ ժամանակ անց, երբ Անտիոքի կողմերում է լինում, գաղտնի գնում է Սեւ լեռան վրայ գտնուող Պաղակծիակ վանքը եւ մկրտւում հայոց դաւանանքով:

Այս դէպքերին անդրադարձել են մի շարք հայ մատենագիրներ: Նրանք բոլորն էլ, բացառութեամբ Արիստակէս Լաստիվերտցու, իրենց նիւթն ուղղակի կամ միջնորդաբար քաղել են Յակոբ քահանայի շարադրանքից: Իսկ Յակոբը, եթէ նոյնիսկ ծանօթ է եղել Լաստիվերտցու Պատմութեանը, նոր դրուագներ աւելացնելով ու գունազարդելով, անչափ հեռացել է նրանից: Արիստակէսն, օրինակ, Պետրոսի շքախմբի մասին որեւէ տուեալ չի հաղորդում, մինչդեռ Յակոբին յայտնի է, որ Հայոց կաթողիկոսին ուղեկցել են 12 եպիսկոպոսներ, ութսուն կրօնաւորներ ու վարդապետներ եւ 300 հեծեալներից բաղկացած պահակախումբ:

1 Կ. Թումանովը, յատուկ ուսումնասիրելով Տայոց իշխանական այս գերդաստանի հետ կապուած սկզբնաղբիւրները, յանգել է այն եզրակացութեան, որ սրանք հայ Մամիկոնեանների բաղկեդոնական դարձած ճիւղն են (տե՛ս **Cyril Toumanoff**, The Mamikonids and the Liparitids, տպագրուած ARMENIACA, Mélanges d'études arméniennes ժողովածուի մէջ, Վենետիկ, 1969, էջ 125-137):

2 «Քարթլիս ցխովրեբայի կամ Վրաց պատմութեան հին հայերէն թարգմանութիւնը», լոյս ընծայեց Իլիա Աբուլաձէն, Թբիլիսի, 1953, էջ 222:

* [**Շիրանայ** ձեւը գալիս է վրաց. Շիրիմնի-ի թեք հոլովաձեւից՝ **Շիրիմթայ**: խմբ.]

Ջրօրհնէքի պատմութիւնը Լաստիվերտցու մօտ դեռեւս չի գունազարդուած հրաշապատումներով. «Ցնցուղս լուսոյ ճառագայթից յանկարծակի ծագեաց ի ջուրցն, զոր տեսին առ հասարակ ամենեքեան»,- գրում է նա[1]: Յակոբի մօտ, սակայն, այլ կերպ է նկարագրուած այս դրուագը. «Յորժամ,- գրում է նա,- արկանէր (Պետրոսն) զսուրբ մեռոնն ի ջուրն եւ նշան սուրբ խաչին Քրիստոսի հարեալ ի գետ անդ՝ հուր սաստկապէս իբրեւ զփայլակն ցոլացեալ եղեւ ի վերայ ջրոյն եւ կայծեցաւ գետն առ վայր մի»:

Ջրի ընթացքը մի ակնթարթ արգելակուելու մասին Յակոբ քահանայի վարկածը Յովհ. Կոզեռնի «Տեսիլքի» մէջ դառնում է «յետս դարձաւ»[2], իսկ Կիրակոս Գանձակեցու մօտ արդէն՝ Պետրոս կաթողիկոսի աղօթքի ուժով ջուրը հոսում է գետն ի վեր. «Դարձաւ ջուր գետոյն ի վեր, եւ լոյս սաստիկ ծագեաց, որ նուաղեցուցանէր զճառագայթս արեգական»[3]:

Վասիլ Բ կայսեր հայադաւան դառնալու աւանդութիւնը, կապուած Պաղակծիակ վանքի հետ, անյայտ է Լաստիվերտցուն, ուստի Յակոբ քահանայի կողմից է շրջանառութեան մէջ դրուել: Այսպիսով, կրկին յանգում ենք այն եզրակացութեան, որ մեր պատմագիրն անկախ ուրիշներից նիւթեր է հաւաքել, մշակել ու շարադրել՝ ցուցաբերելով ինքնուրոյն մօտեցում, ունենալով ուրոյն մտածելակերպ:

Յակոբ քահանայի «Ժամանակագրութիւնից» արուած վերջին քաղուածքը վերաբերում է Հայոց ՆՀԸ թուականի հոկտեմբերի հինգի (կամ երեքի) երեկոյեան տեղի ունեցած երկնային անսովոր երեւոյթներին, որոնք նկարագրուած են այսպէս. «Պատառեցաւ վերին հաստատութիւն յերկնիցն, եւ յարեւելից մինչեւ ի մուտս ընդ երկուս հերձեալ երկինք, եւ համատարած լոյսն սաստկապէս [հոսեալ ի յերկիր, եւ յահէ բարկութեան դողացեալ երերէին ամենայն արարածք]» եւ այլն[4]: Այդ նշաններն աստուածային բարկութեան արտայայտութիւն համարելով՝ մի խումբ իշխաններ դիմում են անուանի տոմարագէտ Յովհաննէս Կոզեռն վարդապետին ու խնդրում մեկնաբանել դրանց թաքուն իմաստը: «Հոգեւոր» վարդապետը հրաշքը շաղկապում է Քրիստոսի Մկրտութեան եւ սատանայի արգելափակման հազարամեայ տարելիցի հետ: Նա ասում է. «Ո՛վ որդեակք, լուարո՛ւք ինձ... ահա արձակեցաւ (սատանայ) ի վերայ արարածոց, զոր կապեալն էր Քրիստոս իւր սուրբ մկրտութեամբն»[5]: Այնուհետեւ վախճանաբանական դատողութիւններ է անում, աւաղում բարքերի անկումը, հաւատքի թուլացումը եւ այլն:

Արիստակէս Լաստիվերտցին լաւ ճանաչում է Յովհաննէս Տարօնեցի վարդապետին, որին «վերադիր անուամբ» Կոզեռն էին անուանում, յիշատակում է, որ նա գրել է ինչ-որ «Հաւատոյ գիր»[6], սակայն որեւէ տեղեկութիւն չունի երկնային վերոյիշեալ երեւոյթների մասին նրա արած վախճանաբանական դատողութիւնների մասին:

Յակոբ քահանան Կոզեռնի հետ կապուած պատմութեան վերջում ասում է. «Այս այսպէս խաւսեցաւ սուրբ վարդապետն վասն կատարածի նշանին եւ այլ բազում ինչ ճառեաց...»[7]:

---

1 Արիստակէս Լաստիվերտցի, էջ 31

2 Н. Марр, նշ. աշխ., էջ 20

3 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատ. Կ. Ա. Մելիք-Օհանջանեանի, Երեւան, 1961, էջ 94

4 N 9832 ձեռագրում պահպանուել են միայն այս հատուածի առաջին տողերը (մինչեւ «սաստկապէս» բառը՝ ներառեալ): Շարունակութիւնը լրացնում ենք Յովհ. Կոզեռնի «Տեսիլքից»:

5 Ձեռ. N 1324բ-325ա, հմմտ. Ն. Մառ, նշ. աշխ., էջ 21:

6 Արիստակէս Լաստիվերտցի, նշ. աշխ., էջ 26

7 Անհրաժեշտ ենք համարում մէկ անգամ էլ յիշեցնել, որ Կոզեռնի «Տեսիլքի» միայն սկզբի մասն է պահ-

Այստեղից թերեւս կարելի է եզրակացնել, որ մեր հեղինակը ձեռքի տակ ունեցել է Կոզեռնի հետ կապուած աւելի ընդարձակ գրաւոր մի աղբիւր: Գրաւոր ինչ-որ աղբիւրի երբեմնի գոյութիւնը հաստատւում է կարծես հետեւեալ փաստով: Յովհաննէս Կոզեռնը գրել է «Մեկնութիւն տումարաց» խորագրով մի աշխատութիւն, որը պահպանուել է մի շարք ձեռագրերով: Ահա այդ աշխատութեան մէջ նա փորձում է գիտականօրէն բացատրել աստեղաձեւ ցոլմունքի առաջացման պատճառը: Նա գրում է. «Իսկ վասն ցոլման աստեղաձեւ աւդոյ, որ լինի ի գիշերի յաւդս՝ ի պարզ ժամանակի, զոր ոմանք ցոլ աստղ կոչեն. եւ այս կարի անպատշաճ է Աստուծոյ արարածոյ անկանել կամ փոփոխել՝ մինչեւ ի Գալուստն երկրորդ: Եւ մանաւանդ աստեղացդ, զոր հաստատեալ է Արարիչն յաւդս, եւ ոչ կարեն անկանել կամ փոփոխիլ ուր կամին: Իսկ որ աստեղաձեւ ցոլանայ յաւդս, ոչ է աստղ, այլ հողմք եւ աւդք ընդ միմեանս բախեալ հուր ցոլանայ: Եւ վկայէ սուրբն Գրիգոր Նիւսացի... թէ բռնութիւն հողմոց ջերմ աւդոյն իբրեւ զհուր ի բոցոյ բաժանեալ՝ ի վեր ցնդեալ աստեղաձեւ կերպարանս ցուցանէ, զոր ոմանք ցոլացեալ աստղ կոչեն»[1]:

Այս նոյն երեւոյթի մասին է խօսւում նաեւ Յակոբ քահանայի «Ժամանակագրութեան»՝ Կոզեռն վարդապետին նուիրուած հատուածում. «Համատարած լոյսն սաստկապէս հոսեալ եղեւ յերկիր ի հիւսիսոյ կողմանէ, զոր այժմ մարդիկ ցոլացեալ աստղ ասեն». բայց տեղի են ունենում նաեւ այնպիսի երեւոյթներ, որոնք, ըստ Կոզեռնի, կարող էին կատարուել միայն աշխարհի կործանման օրերին («եւ այս կարի անպատշաճ է Աստուծոյ արարածոյ անկանել կամ փոփոխել՝ մինչեւ ի գալուստն երկրորդ»): Ուստի նա, տոմարական հաշիւներ կատարելով, որոշում է, որ Քրիստոսի մկրտութիւնից անցել է ուղիղ հազար տարի[2] եւ, ըստ Յովհաննու «Յայտնութեան», եկել է սատանայի կապանքազերծ լինելու պահը, մօտեցել աշխարհի վերջը եւ այլն:

Ինչպէս տեսնում ենք, խիստ նման, նոյնիսկ նոյնական են օդերեւութաբանական-տիեզերագիտական ու վախճանաբանական այն պատկերացումները, որ առկայ են մի կողմից՝ Յովհաննես Կոզեռնի «Մեկնութիւն տումարաց» աշխատութեան մէջ, միւս կողմից՝ նրան վերագրուած «Տեսիլքի» առաջին մասում: Այստեղից եզրակացնում ենք, որ Յակոբ քահանան գրաւոր ինչ-որ տուեալների հիման վրայ է հիւսել իր «Ժամանակագրութեան» մեզ յայտնի վերջին այս հատուածը:

Յովհ. Կոզեռնի «Տեսիլքի»՝ իր հրատարակութեան ներածական յօդուածում Ն. Մառը, անհամոզիչ փաստարկներով, կասկածի տակ է առնում քննարկւող հատուածի ՆՀԸ թուականը՝ առաջարկելով այն սրբագրել ՆՀԲ-ով (այդպէս է «Տեսիլքի» իր օգտագործած ձեռագրում, որ 1320 թ. ընդօրինակութիւն է): Սակայն ո՛չ Յակոբ քահանայի անունով պահպանուած պատառիկը, ո՛չ «Տեսիլքի» հնագոյն օրինակները, ո՛չ էլ Մատթէոս Ուռհայեցու եւ Սմբատ Սպարապետի ժամանակագրական երկերի համապատասխան հատուածների վերլուծութիւնը չեն հաստատում անուանի գիտնականի այս ենթադրութիւնը: ՆՀԸ թուականը կա-

---

պանուել Յակոբ քահանայի ժամանակագրութիւնից հատուածներ պարունակող N 9832 ձեռագրում: Շարունակութիւնը քաղում ենք «Տեսիլքի» հնագոյն ձեռագրից՝ օգտագործելով նաեւ Ն. Մառի վերոյիշեալ հրատարակութիւնը: Ստորեւ առիթ կունենանք համոզուելու, որ Կոզեռնի «Տեսիլքը» Յակոբի ժամանակագրական հատուածներից տարբերւում է միայն ոճաբանական որոշ առանձնայատկութիւններով:

1 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. N 1999, էջ 74ա-74բ

2 «Հայոց թուականս այսաւր ՆՀԸ (478), եւ կայ զառաջին ՇԾԲ (552), որ լինի հազար եւ երեսուն. զԼ (30) տուր յառաջ քան զմկրտութիւնն, եւ զհազարն՝ ի մկրտութենէն մինչեւ ցայսմ»,- գրուած է «Տեսիլքի» մեզ յայտնի հնագոյն ընդօրինակութեան մէջ (ձեռ. N 1324, էջ 325ա, հմմտ. Ն. Մառ, նշ. աշխ. էջ 21):

բոտ չէ սրբագրութեան[1]:

Ահա սրանք են Յակոբ քահանայի անունով N 9832 ձեռագրում պահպանուած նիւթերը: Ասել ենք արդէն, որ ձեռագրի մեզ հետաքրքրող բաժինը վերջից թերի է, ուստի հնարաւորութիւն չունենք որոշելու՝ ՆՀԸ թուականի տակ շարադրուած հատուածով արդեօք աւարտւե՞լ է այն, թէ՞ ունեցել է շարունակութիւն:

Յովհաննէս Կոզեռնի «Տեսիլքի» բազմաթիւ ձեռագրերում, ՆՀԸ թուականի դէպքերի նկարագրութիւնից յետոյ, կայ նաեւ շատ ընդարձակ մի հատուած՝ ՆՁԵ (1036) թուականին տեղի ունեցած արեւի խաւարման առնչութեամբ ստեղծուած անհանգստութեան, Յովհան Կոզեռնի մօտ մի երկրորդ պատգամաւորութիւն ժամանելու եւ վերջինիս վախճանաբանական նոր ու տարատ դատողութիւնների մասին:

Ն. Մառն արդէն համոզիչ փաստերով ցոյց է տուել, որ Կոզեռնի երկրորդ այդ «Տեսիլքը» յօրինուած պէտք է լինի 1097 թ. խաչակրաց առաջին արշաւանքից մի քանի տասնամեակ յետոյ եւ 1147 թ. երկրորդից մի քանի տարի առաջ, երբ Մերձաւոր Արեւելքում մեծ յոյսեր էին կապում խաչակրաց նոր կազմակերպուելիք արշաւանքի յաջողութեան հետ[2]: Նկատի ունենալով այս ուշագրաւ դիտողութիւնը, ինչպէս նաեւ հաշուի առնելով այն հանգամանքը, որ հատուածը բացակայում է ե՛ւ Յովհ. Կոզեռնի «Տեսիլքի» հնագոյն ձեռագրից, ե՛ւ Սմբատ Սպարապետի «Ժամանակագրութիւնից»[3]՝ գալիս ենք այն համոզման, որ Կոզեռնի հետ կապուած երկրորդ այս «մարգարէութիւնը» յետոյ էր յօրինուած, ուստի չէր կարող մաս կազմել Յակոբ քահանայի «Ժամանակագրութեան»:

Այդ «Ժամանակագրութիւնը», սակայն, ընդարձակ մի երկ է եղել, որից միայն մի քանի քաղուածքներ է կատարել N 9832 ձեռագրի կամ նրա գաղափար օրինակի գրիչը. այդ մասին ուղղակի վկայութիւն կայ խորագրում (այնտեղ ասուած է՝ «Ի ժամանակագրութենէ Յակոբայ քահանայի», որ ենթադրել է տալիս շատ աւելի ընդարձակ մի աշխատութիւն, որից միայն

1 Թուականի իր սրբագրութիւնը հաւանական դարձնելու մտահոգութեամբ Ն. Մառը հետամուտ է համարում երկնային նշաններին Կոզեռնի տուած մեկնութեան կարեւորագոյն այն հատուածը, որով գիտնական վարդապետը տոմարագիտական դատողութիւններ է անում՝ ցոյց տալու համար, որ Քրիստոսի մկրտութիւնից իբր անցել է ճիշտ հազար տարի: Սակայն, ինչպէս ցոյց տուեցինք, հէնց այդ հատուածի վրայ է խարսխուած Յովհ. Կոզեռնի ողջ մեկնութիւնը: Իրաւացի է Ն. Մառը, երբ ակնյայտ հակասութիւն է գտնում քննարկուող հատուածի այն մասում, ուր ՆՀԸ թուականը համարւում է «ի թագաւորութեանն Հոռոմոց Վասլի»: Վասիլ Բ-ն վախճանուել է 1025-ին՝ շուրջ 4 տարի ՆՀԸ թուականից առաջ: Սակայն այս հակասութիւնը բնաւ էլ չի շտկւում, երբ երկնային նշանների թուականը համարում ենք ՆՀԲ (1023), քանի որ, ըստ Ուռհայեցու, հէնց նոյն այդ թուականին էլ վախճանուել է Վասիլ կայսրը (այս անգամ էլ, ուրեմն, 1025-ից 2-3 տարի առաջ): Ըստ այդմ, մենք կարծում ենք, որ յետագայի յաւելում պէտք է համարել միայն «ի թագաւորութեանն Հոռոմոց Վասլի» արտայայտութիւնը՝ անձեռնմխելի պահելով ՆՀԸ թուականը:

2 Այստեղ ակնարկներ կան «արիական ազգի» կողմից Երուսաղէմի ազատագրման, մահմեդականների համախմբման եւ նախայարձակման հետեւանքով Սուրբ քաղաքի կրկին թշնամիների ձեռքն անցնելու, ինչպէս նաեւ «հռոմայեցոց թագաւորի» գլխաւորութեամբ կազմակերպուելիք յաղթական նոր արշաւանքի մասին: Մատնանշելով այս փաստերը՝ Ն. Մառն իրաւացիօրէն 1047-ին նախորդող տարիներն է համարում այս նիւթի գրութեան ետին եզրը:

3 Հանրայայտ է, որ Սմբատ Սպարապետի «Ժամանակագրութեան» սկզբի մասը գրեթէ ամբողջովին Մատթէոս Ուռհայեցու համառօտ փոփոխակն է: Ըստ այդմ, կարելի է նոյնիսկ կասկածել երկրորդ տեսիլքի հարազատութեանը Մ. Ուռհայեցու նախնական բնագրին: Տեղին է նշել այստեղ, որ Մ. Ուռհայեցու Ժամանակագրութեան զոյգ հրատարակութիւններն էլ (Երուսաղէմ, 1869, Վաղարշապատ, 1898) գիտական չեն: Հասունացել է նոր մի հրատարակութեան անհրաժեշտութիւնը, որն իրագործելու է ինչպէս Մաշտոցեան Մատենադարանում պահուող շուրջ 10 չօգտագործուած ձեռագրերի, այնպէս էլ այլ գրապահոցներում առկայ օրինակների մանրակրկիտ բաղդատութեան ճանապարհով:

քաղուածքներ են կատարուել): Արդ, արդեօք հնարաւորութիւն ունե՞նք որոշելու, թէ ժամանակագրական ինչ սահմաններ է ընդգրկել կորած այդ երկը, ի՛նչ նիւթեր պարունակել, երբ եւ ում կողմից շարադրուել: Փորձենք ըստ հնարաւորի պատասխանել այդ հարցերին:

***

Յակոբ քահանայի «Ժամանակագրութեան» պահպանուած հատուածների բաղդատութիւնը Մատթէոս Ուռհայեցու «Ժամանակագրութեան» նոյնական հատուածների, ինչպէս նաեւ Յովհ. Կոզեռնի «Տեսիլքի» հետ բերում է այն աներկբայելի համոզման, որ սկզբնաղբիւրը Յակոբի բնագիրն է եղել (այս եզրակացութիւնը ակնյայտ կդառնայ յօդուածի վերջում հրապարակուող զուգահեռ բնագրերի ուշադիր ընթերցումով. այդտեղ կողք-կողքի մէջբերուած են Յակոբի, Կոզեռնի «Տեսիլքի», Մատթէոս Ուռհայեցու եւ Սմբատ Սպարապետի համապատասխան հատուածները):

Ուռհայեցու «Ժամանակագրութիւնն» իր սկզբի մասում փոքր-ինչ թերութիւն ունի (պակաս է մի պարբերութիւն, որ մասամբ կարելի է լրացնել Սմբատի օգնութեամբ), կան նաեւ բազմաթիւ աղաւաղուած յատուկ անուններ ու նախադասութիւններ: Ընդհանուր առմամբ, սակայն, այն պահպանուել է ամբողջական վիճակով. բաղկացած է 3 խոշոր բաժիններից[1]: Առաջին եւ երկրորդ բաժինների վերջում Ուռհայեցին անդրադառնում է իր աշխատանքին, շարադրում պատմագրական իր հայեցքները եւ ակնարկներ անում իր աղբիւրների մասին: «Արդ, մինչեւ ցայս վայր,– գրում է նա՝ եզրափակելով հարիւրամեայ շրջանը,– բազմաջան եւ աշխատաւոր քննութեամբ գտեալ գրեցաք գշարագրական գրեալս զհարիւրից ամաց, զորս ի բազում ժամանակաց հետաքննեալ հասու եղաք ընդ այնքանեաց տեսողացն եւ լսողացն, որք էին ի հին ամաց ծնեալք. եւ ընդ ընթերցողն (թերեւս պէտք է ուղղել «ընդ ընթերցելն» ձեւով – Լ. Խ.) յառաջին պատմագրացս, որք ականատեսք էին լեալք ամենայն եղելոցս եւ նեղութեանցս այսոցիկ, զոր վասն մեղաց կրեաց տունն Հայոց»[2]: Հարիւրամեայ այս շրջանին Ուռհայեցուն նախորդած եւ մեզ յայտնի հայ պատմագիրներից անդրադարձել են Ստեփանոս Ասողիկը (սրա պատմութեան վերջին թուականը 1003-ն է[3] եւ Արիստակէս Լաստիվերտցին (գրել է 1000-1071 թթ. պատմութիւնը): Սրանց ազդեցութիւնն աննկատելի է Մատթէոսի մօտ. ամենայն հաւանականութեամբ, նա նոյնիսկ ծանօթ էլ չէ այս հեղինակներին: Իսկ ովքե՞ր են եղել այդ «առաջին պատմագիրները», որոնք «ականատեսք էին լեալք» 951-1051 թթ. դէպքերին, եւ որոնց գրուածքներից նիւթ է քաղել նա: Դրանցից մէկն, անշուշտ, եղել է Յակոբ քահանան. եւ մենք իրաւասու ենք Ուռհայեցու «Ժամանակագրութեան» առաջին եւ երկրորդ բաժիններում փնտրելու Յակոբ քահանայի «Ժամանակագրութիւնից» կատարուած այլ քաղուածքներ եւս:

Յակոբ քահանայի՝ մեզ հասած ժամանակագրական պատառիկի թուական պարունակող հատուածները սկսւում են «Ի թուականութեանն Հայոց» եւ «Դարձեալ ի թուականութեանս

1 Առաջին բաժինն ընդգրկում է 951-1051 թթ. իրադարձութիւնների նկարագրութիւնը, ուստի կարելի է կոչել հարիւրամեայ շրջան (էջ 1-112), երկրորդը յիսնամեայ շրջանն է՝ 1051-1101 թթ. դէպքերով (էջ 112-276), իսկ երրորդ բաժինը (էջ 277-369), որ գրուած է առաջին երկուսի շարադրումից տարիներ յետոյ, ծրագրուած է եղել որպէս պատմութիւն «ամաց քսան եւ հնգից», բայց հասցուած է մինչեւ 1138 թուականը (դրանից մէկ-երկու տարի յետոյ էլ, հաւանաբար, հեղինակը կնքել է իր մահկանացուն): Շարունակութիւնը (1137-1212 թթ. շրջան) գրել է Գրիգոր Երէցը (գուցէ նաեւ այլ հեղինակներ):

2 Մ. Ուռհայեցի, էջ 112

3 «Ստեփանոսի Տարօնացւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885

Հայոց» բանաձեւերով, իսկ միւս պարբերութիւնները կապակցուած են վերոյիշեալ հատուածներին «Եւ յայնժամ», «Յայնժամ», «Զորս յետ ժամանակաց», «Իսկ», «Զի ահա» շաղկապներով: Նոյն այս բանաձեւերով ու շաղկապներով են սկսւում նաեւ Մատթէոս Ուռհայեցու մեծ ու փոքր ժամանակագրական միաւորները: Այս երկու աղբիւրների կառուցուածքային ու ոճական ազգակցութիւնը ցոյց տալու համար կարելի էր մէջբերել անհաշիւ օրինակներ[1]: Այս հանգամանքն ինքնին թոյլ է տալիս մտածել, որ Մատթէոս Ուռհայեցին իր աղբիւրից ոչ միայն ընդարձակ քաղուածքներ է կատարել, այլեւ իւրացրել է նրա շարադրանքի ձեւն ու կառուցուածքը:

Յակոբի պահպանուած հատուածները փոքրաթիւ են ու վերաբերում են միայն XI դարի 20-ական թուականների դէպքերին. չնայած դրան՝ ուշադիր քննութեամբ հնարաւոր է լինում Մատթէոսի երկի տարբեր մասերից ի յայտ բերել Յակոբի գրելաձեւին բնորոշ մի շարք արտայայտութիւններ, ինչպէս նաեւ փաստական ու գաղափարական ուշագրաւ ընդհանրութիւններ, որոնք աւելի ակնառու են դարձնում այս երկու ժամանակագրութիւնների առնչութիւնները:

Անհրաժեշտ ենք համարում մի քանի օրինակով հիմնաւորել մեր այս եզրակացութիւնը:

Գիտենք արդէն, որ Յակոբի կարծիքով Յովհաննէս-Սմբատ թագաւորն իր տէրութիւնը կտակել է Բիւզանդիային «յաղագս թուլութեան եւ տկարութեան մարմնոյ»: Հայոց թագաւորի այս բնութագիրը կրկնուած է նաեւ Մատթէոսի «Ժամանակագրութեան» մի այլ հատուածում. «Յովհաննէս աւագ էր քան զԱշոտ եւ իմաստուն եւ հանճարեղ յոյժ, բայց մարմնովն տարտամ եւ հեղգ եւ թուլամորթ ի պատերազմունս»[2]:

Յակոբի ժամանակագրական հատուածներից երրորդի մէջ ասուած է, որ Պետրոս կաթողիկոսը գնում է Վասիլ Բ կայսեր մօտ «երկոտասան եպիսկոպոսօք եւ ութանասուն կրօնաւորք քահանայիւք եւ վարդապետօք՝ Յովսէփ Ընծուց եւ Կոգեան Յոհաննէս»: Բոլորովին այլ առիթով Ուռհայեցին յայտնում է, որ Վասիլ Բ կայսրը «յանուանէ գիտէր վասն Յովսէփայ Ընծայուց հօրն եւ յաղագս Յովհաննիսի, որ հոմանուն ասէին Կոգեան»[3]: Պետրոս կաթողիկոսի շքախմբի մէջ էին մտնում նաեւ 300 հեծեալ թիկնապահներ՝ «ի փառաւորացն»: 1049 թուականին, այս անգամ Կոստանդին Մոնոմախ կայսեր հրաւէրով, Կ. Պոլիս է ժամանում նոյն Պետրոս կաթողիկոսը. Ուռհայեցին չի մոռանում յիշատակել, որ նա գնում էր «իր տանեցի ազատօքն փառաւոր արամբք երեք հարիւր»[4]:

Յակոբը, 1021-1022 թթ. վիրա-բիւզանդական պատերազմին անդրադառնալով, յատուկ ջերմութեամբ խօսում է Ռատ եւ Զոյատ իշխանների մասին, յայտնում, որ նրանք «էին եղբարք Լիպարտին, արք զօրաւորք եւ քաջք» եւ այլն: Մատթէոս Ուռհայեցին XI դարի 50-ական թուականների առնչութեամբ երկու տարբեր առիթներով խօսում է Լիպարտի մասին՝ երկու անգամ էլ յիշելով, որ նա եղբայրն էր «Ռատին՝ առն քաջին», կամ «Ռատին եւ Զոյատին՝ վրացի ազգաւ, ի հզօր ջոկէ»[5]:

1 Մատթէոս Ուռհայեցու մօտ էջից էջ հանդիպում ենք «Ի թուականութեանն Հայոց», «Դարձեալ ի թուականութեանն Հայոց», «Իսկ զկնի», «Յայնժամ», «Եւ յայնժամ» ու նման բազմաթիւ սկսուածքների (հէնց միայն «Ժամանակագրութեան» առաջին 15 էջից կարելի է վկայակոչել տասնեակ օրինակներ):

2 **Մ. Ուռհայեցի**, էջ 7

3 Նոյն տեղում, էջ 44

4 Նոյն տեղում, էջ 104

5 Նոյն տեղում, էջ 104, 109 (Լիպարիտի և նրա սերունդների մասին տես **Ս. Տ. Երեմեան**, Լիպարիտ

Փաստական նիւթերի այս կրկնութիւններն ու նմանութիւնները իրաւունք են տալիս մտածել, որ Յակոբից են քաղուած նաեւ Մատթէոսի «Ժամանակագրութեան» վերոյիշեալ տեղիները:

Կան նաեւ ոճական ուշագրաւ ընդհանրութիւններ. ստորեւ, էջի ձախ կողմում, մէջբերում ենք Հայոց ՆՀԸ թուականի երկնային նշանների նկարագրութիւնը Յակոբի «Ժամանակագրութիւնից», իսկ աջ կողմում տալիս ենք մի շարք հատուածներ Ուռհայեցուց, որոնք վերաբերում են տարբեր պատմական ու բնական արհաւիրքների, սակայն շարադրանքի ոճով մեծապէս նմանւում են նախորդին

ՅԱԿՈԲ ՔԱՀԱՆԱՅ

Դարձեալ ի թուականութեանս Հայոց ՆՀԸ... եղեւ ահաւոր նշան եւ սոսկալի եւ բարկութիւն ի վերայ ամենայն արարածոց: Վասն զի ահայ այս ինչ լինէր ի հոկտեմբեր ամսոյն, որ աւր Ե (5) էր: Ի յերեկոյին ժամուն պատառեցաւ վերին հաստատութիւն յերկնիցն եւ յարեւելից մինչեւ ի մուտս ընդ երկուս հերձեալ երկինք, եւ համատարած լոյսն սաստկապէս [հոսեալ ի յերկիր, եւ յահէ բարկութեան ցողացեալ երերէին ամենայն արարածք. այլ յառաջ քան զնուագել լուսոյն եղեւ ահաւոր գոչիւն ընդ ամենայն երկիր. եւ աստեղք ամենայն երեւէին որպէս ի մէջ գիշերի, վասն զի խաւար կալաւ զամենայն երկիր[1]:

ՄԱՏԹԷՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ

Եւ յետ սակաւ աւուրց աստուածասաստ բարկութիւնն շարժեցաւ յերկնից, եւ ահա ելանէր հողմն ուժգնակի, մինչեւ ի սաստկութենէ գոչմանն շարժէր երկիրն, եւ ի բռնութենէ հողմոյն հող երկրին ի վեր հոսեալ տարածէր ի վերայ զօրացն քրիստոնէից... (էջ 15):

Յորժամ թուականութիւնն Հայոց հասանէր ի յամս ՆԿԵ, զարթեաւ աստուածասաստ բարկութիւնն ի վերայ ամենայն քրիստոսական ժողովրդեանն եւ երկրպագողաց սուրբ խաչին (էջ 46):

Յայնժամ քահանայական դասքն շարժեցան միաբան զքրիստոսական սուրբ նշանն եւ ի վերայ թշնամեացն դիմեալ յարձակեցան. եւ հուր սաստկապէս ցոլացեալ ի նոցանէ եւ եհար զզօրսն այլազգեացն (էջ 82):

Դարձեալ ի թուականութեանս Հայոց յամի ՆՂԴ եղեւ մեծասաստ բարկութիւն Աստուծոյ ի վերայ արարածոց... եւ եղեւ շարժ ահաւոր եւ սոսկալի, եւ զողաց ամենայն տիեզերք առ հասարակ... եւ պատառեցաւ երկիրն... (էջ 97-98):

զօրավարի յաջորդները եւ Դանիշմանեան տոհմի ծագումը, «Տեղեկագիր», 1947, N 8, էջ 65-79: Խմբ.]

1 Ուղղագիծ փակագծերի մէջ առած հատուածը, որ N 9832 ձեռագրում չի պահպանուել, լրացրել ենք Յովհ. Կոգեռնի հնագոյն ձեռագրից (Մատենադարան, ձեռ. N 1324):

Յամս թուականութեանս Հայոց ՆՂԸ յաւուր Մոնոմախի կայսերն... զարթեաւ աստուածաստատ բարկութիւնն ի տանէն Պարսից (էջ 102):

Այս շարքը կարելի է լրացնել նաեւ այլ նախադասութիւններով: Բայց բերածն էլ բաւական է համոզուելու, որ Ուռհայեցու անունով հասած «Ժամանակագրութեան» մէջ, մանաւանդ նրա հարիւրամեայ բաժնում, գրեթէ անաղարտ վիճակով օթեւան են գտել Յակոբ քահանայի «Ժամանակագրութիւնից» բազմաթիւ քաղուածքներ: Դրանց բոլորի ի յայտ բերման համար ոճաբանական մանրակրկիտ հետազօտութիւն պէտք է կատարել, որ դուրս է մնում մեր յօդուածի ծրագրից:

***

Ե՞րբ է շարադրուել Յակոբ քահանայի «Ժամանակագրութիւնը»: Նրա անունով պահպանուած հատուածները հնարաւորութիւն են ընձեռում պատասխան տալու այս հարցին:

Երկնային արտասովոր երեւոյթների կապակցութեամբ Յովհ. Կոզեռնի մարգարէախօսութեան բաժինն աւարտւում է հեղինակի հետեւեալ եզրափակումով. «Զայս այսպէս խաւսեցաւ սուրբ վարդապետն վասն կատարածի նշանին եւ այլ բազում ինչ ճառեաց, զոր եւ կատարելոց էր վասն հաւատացելոց, զոր եւ կատարեցաւ մի առ մի ի ձեռն ելին կատաղի ազգին թուրքաց՝ պիղծ որդոցն Քամա»[1]:

Սելջուկ-թուրքերի առաջին արշաւանքը Հայաստան տեղի է ունեցել 1048 թուականին, բայց նրանք կայուն հաստատուել են հայկական բարձրավանդակում դրանից 16 տարի յետոյ՝ 1064 թուականին, երբ Ալփասլանի ու Մելիք-շահի գլխաւորութեամբ գրաւեցին Հայաստանի կենտրոնական ու հիւսիսային շրջանները եւ տէր դարձան Անի մայրաքաղաքին: Ըստ այդմ՝ Յակոբ քահանան իր «Ժամանակագրութիւնը» գրած պիտի լինի 1048-ից կամ, աւելի ճիշտ, XI դարի 60-ական թուականներից յետոյ:

«Ժամանակագրութեան» terminus ad quem-ը որոշւում է Պօղոս Տարօնացու Թէոփիստէ երկարենակ հայ փիլիսոփային ուղղած հակաճառութեան օժանդակութեամբ: Այն, որպէս պատասխան մի գրութեան, շարադրուել է 1101-ին, իսկ խմբագրուել ու ընդարձակուել է հեղինակի կողմից երկու տասնամեակ անց՝ 1122 թուականին: Երկու այս խմբագրութիւններում էլ պահպանուել է մի հատուած, որն անմիջական կապ ունի Յակոբ քահանայի «Ժամանակագրութեան» հետ (մէջբերում ենք համառօտ եւ ընդարձակ փոփոխակներով).

1 Մէջբերում ենք Յովհ. Կոզեռնի «Տեսիլքի» հնագոյն ձեռագրից (ձեռ. N 1324, էջ 325ա): Մ. Ուռհայեցու մօտ խմբագրուած է այսպէս. «Զայս այսպէս ասաց սուրբ վարդապետն Հայոց վասն կատարածի բարկութեան նշանին եւ այլ բազում ինչ ճառեաց, որ կատարելոց էր իր վերայ հաւատացելոցս, զոր ահա ամենայն ինչ կատարեցաւ մի առ մի ի ձեռն ելից կատաղի եւ շուն ազգին թուրքաց, անօրէն եւ պիղծ որդոցն Քամայ» (էջ 54-55):

Համառօտ խմբագրութիւն

Առաւն (իմա՛ Ահարոն) դուկդ դա մեծ է եւ երեւելի, դա մեծ կերով հաւատ չուղղէ՝ որչափ եւ ջանա. եւ դա մեծախել է եւ իմաստուն, թող յայտ չմտաբերէ, զի Հոռոմոց մեծ բարեպաշտն Վասիլ թագաւորն զայս ընդդէմ Հայոց չէ հոգացեալ. եւ յաւրհնել ջրոյն Հայոց եւ Հոռոմոց առաջի նորա՝ նշան մեծ արար Աստուած Հայոց ազգիս առաջի թագաւորին. հուր եւ լոյս փայլատակեաց ի վերա ջրոյն, ուր զձէթն աւրհնութեան արկանէր Պետրոս կաթողիկոսն Հայոց, ուստի զարմացեալ քրիստոսապաշտեալ կայսրն Վասիլ՝ խոնարհեցուցեալ զգլուխն արկանել ջրոյն ի վերա եւ աւրհնիւր ի հայրապետէն: Եւ այս եղեւ առաջի զաւրաց թագաւորին[1]:

Ընդարձակ խմբագրութիւն

Եւ ահա ծայթեր՝ դուք էք, որ Հայ լեզու էք, եւ սուէք զձեզ Հոռոմք: Եւ ահա Առօտն (իմա՛ Ահարոն) այր պատուական է եւ տունկ (իմա՛ դուկ) մեծ եւ փառաւոր, եւ երեւելի իշխան, բայց Խօզնա գաւառովդ եւ մեծ կերպով (իմա՛ կերով կամ զուցե՝ Մեծկերտո՞վ) զհաւատս ոչ կարէ ուղղել եւ որչափ ջանայ՝ չհնազանդի ոք դմա: Արդ, ահա է դա մեծախելք եւ այր իմաստուն, թող չձեռնարկէ ի սուտ քննութեամբ ձեր: Վասն զի յառաջն մեծ թագաւորն Հոռոմոց Վասիլն՝ զայդ ամենայն քննութիւնդ վասն հաւատոյ ոչ է արարեալ ընդ Հայս: Եւ զայս ճշմարտապէս գիտեմք, զի յաւուրսն տէր Պետրոսի Հայոց կաթողիկոսի՝ յորժամ զջուրն օրհնէր, եւ ի Հայոց եւ ի Հոռոմոց անդ էին ժողովեալ: Եւ այս եղեւ առաջի Վասիլ թագաւորին եւ զօրաց նորա, զի զնշան մեծ արար Աստուած Հայոց ազգիս, զի յորժամ արկանէր զսուրբ միւռոնն ի ջուրն, հուր եւ լոյս սաստիկ փայլատակեաց ի վերայ ջրոյն եւ այս գրեալ կայ իսկ: Եւ աստուածասէր թագաւորն հիացեալ զարմանայր ընդ սքանչելիսն, զոր երեւեցոյց Աստուած. եւ խոնարհեցուցեալ զգլուխն՝ արկանէր զջուրն ի վերայ իւր եւ օրհնեցաւ ի հայրապետէն. եւ այս եղեւ վկայութեամբ տեսողացն՝ ամենայն զօրաց թագաւորին: Եւ յայնժամ ամենաբարի թագաւորն Հոռոմոց՝ պատուով եւ իշխանութեամբ յոյժ մեծարեաց զազգս Հայոց[2]:

Ընդգծուած տողերը, անտարակոյս, քաղուած են Յակոբի «Ժամանակագրութիւնից» (հմմտ. «...յորժամ արկանէր զսուրբ միւռոնն ի ջուրն... հուր սաստկապէս իբրեւ զփայլակն ցոլացեալ եղեւ ի վերայ ջրոյն»..., «եւ խոնարհեալ թագաւորն եւ արկանէր զաւրհնեալ ջուրն ի վերայ գլխոյ իւրոյ՝ աջովն տէր Պետրոսի»): Պօղոս Տարօնացին «եւ այս գրեալ կայ իսկ» խօսքերով մատնանշում է հաւանաբար հէնց Յակոբ քահանայի «Ժամանակագրութիւնը»:

1 «Պաւղոսի իմաստասիրի Տարաւնացոյ վարդապետի Խաւսք ընդդէմ... երկարենակացն Հոռոմոց թղթին պատասխանի» (ձեռ. N 1324, էջ 322բ)

2 «Թուղթ երանելոյն Պօղոսի Տարօնացոյ... ընդդէմ Թէոփիստեայ Հոռոմ փիլիսոփայի», Կ. Պոլիս, 1752, էջ 273

Ուստի պարզւում է, որ այդ երկը գրուած պէտք է լինի 1048-ից յետոյ, 1101-ից առաջ, այսինքն՝ XI դարի երկրորդ կիսամեակում:

Արդ, ո՞վ է արդեօք այդ ժամանակաշրջանում Յակոբ անունով նշանաւոր մի անձնաւորութիւն, որ կարող էր նաեւ պատմագրական երկի հեղինակ լինել: Այս հարցի պատասխանը որոնելիս մեր ուշադրութիւնն է գրաւում Յակոբոս կամ Յակոբ Սանահնեցի կոչուած վարդապետը, որը մեծ հռչակ էր ստացել որպէս խոշոր իմաստասէր ու գիտնական. «Սորա,- գրում է նրա մասին Մ. Ուռհայեցին,- հասեալ ի վերայ հին եւ Նոր Կտակարանաց Աստուծոյ... ի վերայ հեթանոսական իմաստութեանցն եւ տեղեկացեալ ամենայն փիլիսոփայական խորին գիտութեանցն»[1]:

Ուռհայեցին երիցս անդրադառնում է այս վարդապետին՝ կենսագրական որոշ տեղեկութիւններ հաղորդելով նրա մասին: Կոչուել է Քարափնեցի, նաեւ Քարահատայ որդի, իսկ այնուհետեւ, հաստատուած լինելով Սանահնում՝ Հիւսիսային Հայաստանի նշանաւոր մշակութային այդ կենտրոնում, ճանաչուել է աւելի Սանահնեցի յորջորջումով*: Աշակերտել է Սանահնի վանահայր Դէոսկորոսին, որը 1037-1038 թթ. գրաւեց կաթողիկոսական աթոռը, սակայն կարգալոյծ եղաւ ու իր կեանքի վերջին շրջանն անցկացրեց իր վանքում (մահացել է 1063 թուականից յետոյ)[2]:

Կոստանդին Դուկաս (1057-1067) կայսեր հրամանով Կոստանդնուպոլսում դաւանաբանական քննութիւն է կատարուել յոյն եւ հայ անուանի վարդապետների մասնակցութեամբ: Հայերի ներկայացուցիչն է եղել Յակոբ Սանահնեցին, որն, ըստ Մ. Ուռհայեցու, «արար դիմադրութիւն բազում յամենայն հարցմունսն ընդդէմ Հոռոմոց, բայց սակաւ մի վասն երկբնութեանն Քրիստոսի ի կողմն Հոռոմոց դարձաւ»: Սանահնեցի վարդապետի դաւանաբանական հայեացքները հաճոյքով ընդունւում են կայսեր կողմից, եւ նրա յանձնարարութեամբ Յակոբը գրում է «Գիր միաբանութեան Հայոց եւ Հոռոմոց»[3]:

Լսելով այդ մասին՝ Կոստանդնուպոլիս է գալիս գահազուրկ Գագիկ Բագրատունի թագաւորը, որն իմաստասէրի մեծ համբաւ ունէր. նա հրապարակօրէն պատռում է միաբանութեան վնասակար այդ գիրը, մեղադրում է Յակոբին ինքնագլուխ քայլեր կատարելու համար եւ Հայոց դաւանանքի մասին գրում նոր «Գիր հաւատոյ»: Յակոբ Սանահնեցու այս դանցանքը, սակայն, չի վնասում նրա հեղինակութեանը, եւ նա շարունակում է մեծ յարգանք վայելել՝ համարուելով ժամանակի ամենանշանաւոր գիտնականներից մէկը:

Միջնադարից պահպանուել են շարականների հեղինակների արձակ ու չափածոյ մի քանի ցանկեր[4], որոնցից երկուսի մէջ յիշատակուած է նաեւ Յակոբ վարդապետը. մէկ անգամ՝

---

1 Մ. Ուռհայեցի, էջ 227

* [Նրա մասին տե՛ս Լ. Մելիքսէթ-Բէկ, Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց (վրացերէն), Թիֆլիս, 1928, էջ 96-99: Խմբ.]

2 Կ. Ղափադարեան, Սանահնի վանքը եւ նրա արձանագրութիւնները, Երեւան, 1957, էջ 50

3 Մ. Ուռհայեցի, էջ 161-162

[Այս փաստը, կարծում ենք, խնդրական է դարձնում վերջերս «Գանձասար» հանդէսում շարունակաբար տպագրուած (Ա, էջ 304-338, Բ, էջ 168-218, Գ, էջ 174-215) «Բան հակաճառութեան...»՝ Սանահնեցուն պատկանելը: Այն խիստ հակաքաղկեդոնական շարադրանք է: Խմբ.]

4 Այս ցանկերից հնագոյնը հաւանաբար այն է, որ բերել է իր «Հարցմանց գրքի» մէջ Վանական Վարդապետը: Այդ աշխատութեան մէկ օրինակը Երուսաղէմի մատենադարանի N 1288 ձեռագիրն է (տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հատոր չորրորդ, կազմեց Նորայր եպիսկոպոս Պողարեան, Երուսաղէմ, 1969, էջ 485): Վանականի «Հարցմանց գիրքը» բանասիրական ուշագրաւ նիւթերի մի շտեմա-

Գրիգոր Մագիստրոսից յետոյ՝ «Յակոբ վարդապետ Սանահնեցի» ձեւով (որպէս հեղինակ «Յանակզբնական ծոցոյ Հօրն» սկսուածքով հանգստեան շարականի), միւս անգամ՝ Պետրոս կաթողիկոսից յետոյ՝ «Յակոբ Մեծքարեցի» յորջորջումով[1] (որպէս հեղինակ Աստուածամօր ծննդեան եւ սուրբ Տարագրոսի մասին շարականների)[2]: Պարզ է ուրեմն, որ Յակոբ վարդապետը բանաստեղծական շնորհք էլ է ունեցել եւ իր մասնակցութիւնն է բերել հայ հոգեւոր երգերի Շարակնոց կոչուող ժողովածուի կազմաւորման աշխատանքներին: Բազմաշխատ այս եկեղեցական գործիչն ու մատենագիրն իր կեանքի վերջին տարիներն անցկացրել է Եդեսիա կամ Ուռհա քաղաքում, որը XI դարի 80-ական թուականներին միակցուել էր նշանաւոր հայ իշխան Փիլարտոսի տիրոյթներին եւ գտնւում էր Թորոս իշխանի կառավարութեան ներքոյ[3]: Քաղաքի բնակչութեան մէջ հայ տարրը նշանակալից դեր էր կատարում ե՛ւ իր բազմութեամբ, ե՛ւ տնտեսական ու քաղաքական կեանքում գրաւած ղեկավար դերով[4]: Ե՞րբ էր հաստատուել այստեղ Յակոբ Սանահնեցին՝ չգիտենք, բայց կեանքի վերջին շրջանի ու մահուան մասին Մ. Ուռհայեցու մօտ պահպանուել են մանրամասն տուեալներ. «Դարձեալ,- գրում է նա,- ի թուականութեանս Հայոց ի յամի ՇԼԴ (1085) մեռաւ Հայոց վարդապետն Յակոբոս Քարափնեցին, որ յորջորջեալ կոչէր Սանահնեցի՝ այր հզօր եւ կորովի... եւ յայսմ ժամանակիս էր ի քաղաքն յՈւռհա, եւ ծերութեամբ քաղաքավարեալ զկեանս իւր եւ դաւով նենգութեամբ լուծեալ եղեւ ի կենացս, վասն զի գտանէին զնա մեռեալ ի մահիճս իւր առանց հեծութեան եւ ցաւոյ»: Այնուհետեւ ժամանակագիրը հաղորդում է, որ ողջ քաղաքը հաւաքուեց՝ նրա թաղման հանդէսին մասնակցելու. նրա մարմինն ամփոփեցին քաղաքի հիւսիսային կողմում՝ պարսպից ոչ հեռու գտնուող իւր եկեղեցու շրջափակում («ի դուռն սուրբ եկեղեցւոյ իւրոյ»)[5]:

Այս տուեալները կարեւոր են ոչ միայն Յակոբ Սանահնեցու կեանքի վերջին շրջանն ուսումնասիրելու առումով. առաւել հետաքրքրական է այն պարագան, որ Յակոբ վարդապետն ապրել ու իր մահկանացուն կնքել է Մատթէոս Ուռհայեցու հայրենի քաղաքում: Այս ուշագրաւ հանգամանքով պէտք է բացատրել հէնց այն բացառիկ սերտ կապը, որ գոյութիւն ունի այդ երկու հեղինակների կողմից շարադրուած ժամանակագրական երկերի միջեւ: Մատթէոսը, ապրելով ու ստեղծագործելով Ուռհայում, պատեհութիւն եւ հնարաւորութիւն ունէր շփուելու Սանահնեցի նշանաւոր վարդապետի հետ նրա կենդանութեան օրօք, օգտուե-

---

րան է՝ արժանի ուսումնասիրութեան եւ հրատարակութեան: Երուսաղէմում եղած ժամանակ (1966 թ.) վերոյիշեալ ձեռագրից ընդօրինակել ենք մի քանի հատուածներ, որոնցից նմուշի համար մէջբերում ենք Վրաց արքունիքում տեղի ունեցած գիտական վէճերի մասին ուշագրաւ հետեւեալ վկայութիւնը. «Խնդիր եղեւ ի Վիրս, զի ի տան թագաւորին ախչիկ մի աւէր, թէ հոգիս երկու է՝ մինն անմահ է եւ մինն մահկանացու. եւ ընդդէմ այսմիկ ջանային շատք, եւ աւելի մի ոք, որ ի ժամանակին իշխան էր՝ Ճղաւնտիտել իշխան ի տան թագաւորին՝ Վասիլայ անուն, որդի քեռ աթաբեկ Իւանէի: Սա մին աւէր զհոգիս եւ անմահ, եւ աղչիկն՝ երկու, եւ ի յաւելն չկարաց պարզել կամ հաստատել, եւ ոչ սայ զմինն: Այս երէք ամ խնդրեցաւ անհաստատ եւ անհաւանելի...»:

1 Յակոբ Սանահնեցու՝ Քարափնեցի, Մեծքարեցի եւ Քարահատայ որդի յորջորջումների մէջ թերեւս ծագումնաբանական կապ գոյութիւն ունի: Պէտք է նկատի ունենալ, սակայն, որ Մեծքար անունով անապատ է եղել՝ «ընդ հովանեաւ սուրբ վկայիցս Տարագրոսի, Պրոբոսի, Անդրոնիկոսի»: Այս անապատում 1260 թ. ընդօրինակուել է Մատենադարանի N 469 ձեռագիրը:

2 Յ. Անասեան, նշ. աշխ. էջ LXVI, LXVIII

3 Տե՛ս Г. Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952, с. 75:

4 Այս մասին ակնարկներ կան Ն. Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմի տարբեր մասերում (տե՛ս «Ողբ Եդեսեայ քաղաքի... վայելչահիւս չափաբանութեամբ շարադրեալ սրբոյն Ներսէսի Շնորհալւոյ...», Կալկաթա, 1832):

5 Մ. Ուռհայեցի, էջ 227

լու եւ ընդարձակ քաղուածքներ կատարելու նրա գրական ժառանգութիւնից մահուանից յետոյ:

Մատթէոս Ուռհայեցու «Ժամանակագրութեան» մէջ, մանաւանդ նրա սկզբնական մասերում, կան բացառիկ նշանակութիւն ունեցող եւ հաւաստի գրանցումներ, մէջբերուած են պաշտօնական յոյժ հետաքրքիր փաստաթղթեր, բացայայտուած՝ երեւոյթներ, որ կարող էին յայտնի ու հասկանալի լինել միայն քաղաքական լայն կապեր ունեցող անուանի ու նշանաւոր գործիչների, որոնցից չէր բնաւ Ուռհայեցի մեր ժամանակագիրը:

Երկու բնորոշ օրինակներով բացայայտենք մեր միտքը:

Մ. Ուռհայեցին իր «Ժամանակագրութեան» մէջ[1] ամբողջութեամբ զետեղել է բիւզանդական կայսր Յովհաննէս Զմշկիկի (969–976) մի շատ կարեւոր նամակը՝ ուղղուած Հայոց Աշոտ Ողորմած (953–977) թագաւորին, որի մէջ կայսրն արտակարգ մանրամասնութեամբ նկարագրում է արաբների դէմ 975 թուականին ձեռնարկած իր արշաւանքի ընթացքն ու յաջողութիւնները: Այդ նամակը բիւզանդագէտների կողմից ճանաչուած է որպէս ստոյգ ու վաւերական[2]: Արդ, ի՞նչ ճանապարհով է նամակն ընկել Ուռհայեցու «Ժամանակագրութեան» մէջ:

Գիտենք արդէն, որ Յակոբ Սանահնեցին 1065 թուականին Կոստանդնուպոլսում յոյն հոգեւորականների հետ բանավիճել է դաւանաբանական հարցերի շուրջ եւ որոշ զիջումներ կատարել, բայց վրայ է հասել Գագիկ թագաւորը, մերժել Սանահնեցու ստորագրած հաւատոյ գիրը եւ շարադրել Հայոց եկեղեցու դաւանանքի մասին մի նոր գրութիւն: Ուռհայեցին այդ մասին ասում է. «Եւ գրեաց Գագիկ գիր հաւատոյ ձեռամբ իւրով այսպէս եւ տայր գնա ի թագաւորն եւ ի պատրիարգն. եւ ունէր գիրն պատճէն այսպէս» (այնուհետեւ մէջբերուած է ընդարձակ այդ գրութիւնը[3]:

Նորից նոյն հարցն ենք տալիս. որտեղի՞ց գիտէ այս մանրամասնութիւնները Ուռհա քաղաքում ապրող համեստ վանականը, եւ ինչպէ՞ս է ընկել նրա ձեռքը Գագիկ թագաւորի շարադրած «Հաւատոյ գիրը»:

Ամէն ինչ պարզ ու յստակ է դառնում, երբ նկատի ենք ունենում Յակոբ Սանահնեցուն: Սա իր «Ժամանակագրութեան» մէջ, որ եղել է Ուռհայեցու կարեւորագոյն աղբիւրը, անշուշտ կարող էր անդրադառնալ վերոյիշեալ եւ բազմաթիւ այլ դէպքերի մանրամասնութիւններին, օգտագործել կաթողիկոսական ու թագաւորական դիւանների մէջ պահուող փաստաթղթեր եւ այլն: Վերյիշենք, որ նա եղել է մի քանի տարի կաթողիկոսական աթոռը գրաւած Դէոսկորոս Սանահնեցու մերձաւոր աշակերտը, անձնական ծանօթութիւն է ունեցել Գագիկ Բագրատունի թագաւորի հետ, մտերիմ մարդ է եղել Սենեքերիմ Արծրունու Դաւիթ եւ Ապուսահլ որդիների համար (որոնք իշխում էին Սեբաստիայում) եւ, վերջապէս, ճանաչուած ու հեղինակաւոր գործիչ է համարուել ոչ միայն հայկական շրջաններում, այլեւ Բիւզանդական կայսրութեան մայրաքաղաքում:

1 Նոյն տեղում, էջ 19–28

2 Տե՛ս, օրինակ, **G. Schlumberger**, L'Epopée Byzantine, Paris, 1896, p. 282-283; **Х. И. Кучук-Иоаннесов**, Письмо императора Иоанна Цимисхия к армянскому царю Ашоту ("Византийский временник", 1913, т. X, с. 1-21); **Nicolas Adonz**, Etudes Arméno-Byzantines, Lisbonne, 1965; b. 141-147 (La léttre Tzimiscès au roi Ashot)

3 Մ. Ուռհայեցի, էջ 163–178

Յակոբ Սանահնեցի վարդապետին Յակոբ քահանայի հետ նոյնացնելու համար պէտք է յաղթահարել մի կարծեցեալ դժուարութիւն. գիտենք, որ «Ժամանակագրութեան» մեզ հասած հատուածների խորագրում հեղինակը «Յակոբ քահանայ» է կոչուած, բայց Սանահնեցի Յակոբը Ե՛ւ Մ. Ուռհայեցու մօտ, Ե՛ւ շարականների ցանկերում մեծարուած է «վարդապետ» տիտղոսով: Արդեօք կա՞յ այստեղ հակասութիւն: Բնաւ ոչ: Վճռական այս պատասխանի համար բաւական կլինի մտաբերել Յովհաննէս Սարկաւագ անունով յայտնի գիտնական-մատենագրին ժամանակակիցների կողմից տրուած տիտղոսները: Այս նշանաւոր անձնաւորութիւնն ամէնուրեք ինքն իրեն կոչում է Յովհան քահանայ («Յովհաննու քահանայի Յաղագս անկիւնաւոր թուոց», «Յովհաննու քահանայի Յաղագս եղանակաց...», «Յովհաննու քահանայի Յաղագս խրատու մանկանց» եւ այլն), սակայն իր ժամանակակիցներն ու աշակերտները նրան ոչ միայն ճանաչում են որպէս վարդապետի, այլ մեծարում «վարդապետաց վարդապետ», «երից երջանիկ վարդապետ», «երից երանեալ ամենաերջանիկ վարդապետ»[1] բազմայարկ արտայայտութիւններով: Յովհաննէսը քահանայ է ըստ հոգեւոր կոչումի, իսկ վարդապետ՝ ըստ գիտական աստիճանի: Նոյնն է նաեւ Յակոբ քահանայ-վարդապետի պարագան:

Պարզելով նաեւ այս կնճիռը՝ կարող ենք եզրափակել մեր քննութիւնը հետեւեալ արդիւնքներով.

1. Հայոց պատմագիրների ցանկում յիշատակուած Յակոբը XI դարի ժամանակագիր է: Մաշտոցի անուան Մատենադարանի N 9832 ձեռագրում «Ի ժամանակագրութենէ Յակոբայ քահանայի» խորագրով պահպանուած են արժէքաւոր հատուածներ նրա կորած աշխատութիւնից:

2. Յակոբի «Ժամանակագրութիւնը» հիմնական աղբիւր է եղել Մատթէոս Ուռհայեցու համար: Իր «Ժամանակագրութեան» առաջին բաժինը, ինչպէս նաեւ որոշ մասեր երկրորդ բաժնից Մատթէոսը բնաքաղել է Յակոբից՝ պահպանելով նոյնիսկ շարադրանքի ձեւն ու ոճը:

3. Յակոբ քահանան ոչ այլ ոք է, քան Մատթէոս Ուռհայեցուց եւ այլ աղբիւրներից յայտնի անուանի գիտնական ու եկեղեցական գործիչ Յակոբ վարդապետ Սանահնեցին: Մերձաւոր գործակիցը լինելով Դէոսկորոս կաթողիկոսի եւ մտերիմ կապեր ունենալով ժամանակի նշանաւոր քաղաքական ու եկեղեցական գործիչների հետ՝ Յակոբ Սանահնեցին պատմական կարեւոր անցուդարձերի գլխաւոր դերակատարներից է եղել, հնարաւորութիւն է ունեցել նիւթեր քաղել թագաւորական ու կաթողիկոսական դիւաններից:

4. Իր կեանքի վերջին տարիները Յակոբ վարդապետն անցկացրել է Եդեսիա (Ուռհա) քաղաքում, ուր եւ կնքել է իր մահկանացուն 1085 թուականին: Մատթէոս Ուռհայեցին հնարաւորութիւն է ունեցել լայնօրէն օգտուելու նրա ձեռագիր ժառանգութիւնից:

***

«Ի ժամանակագրութենէ Յակոբայ քահանայի» խորագրով N 9832 ձեռագրում պահպանուած պատմական քաղուածքների անջատ հրապարակումը, առանց այդ աղբիւրի հետ անմիջապէս առնչուող՝ յետագայում կատարուած բանաքաղութիւնների հաշուառման՝ ցան-

1 Այս տուեալները քաղուած են Ա. Աբրահամեանի «Յովհաննէս Իմաստասէրի մատենագրութիւնը» (Երեւան, 1956) աշխատութեան բնագրի բաժնից:

կալի գիտական արդիւնք չէր կարող ունենալ: Խորհելով այդ մասին՝ որոշեցինք հրապարակումը կատարել 4 զուգահեռ սիւնակներով: Առաջին սիւնակում ներկայացրել ենք N 9832 ձեռագրի մեզ հետաքրքրող հատուածի պարունակութիւնը՝ տառացի նոյնութեամբ, երկրորդ սիւնակում՝ հրապարակել Յովհ. Կոզեռնի «Տեսիլք» անունով յայտնի՝ բնագիրը, որ Յակոբի մեզ հասած ժամանակագրական հատուածների խմբագրական մի փոփոխակն է (վերակազմուած երկրորդ խաչակրաց արշաւանքից՝ 1147 թ. քիչ առաջ), Երրորդը յատկացրել ենք Մատթէոս Ուռհայեցու «Ժամանակագրութեան» համապատասխան հատուածներին, իսկ Չորրորդը՝ Սմբատ Սպարապետի «Ժամանակագրութեանը», որն իր հին մասով ոչ այլ ինչ է, քան Մատթէոսի համառօտութիւնը:

Բանասէր ընթերցողը, միեւնոյն աղբիւրից բխող այս երեք բանաքաղութիւնները բաղդատելով, դիւրութեամբ պատկերացում կկազմի, թէ ինչպէս էին միջնադարեան հեղինակները օգտւում իրենց սկզբնաղբիւրներից եւ, համապատասխան իրենց նպատակի եւ ճաշակի, իմաստային եւ ոճական փոփոխութիւններ կատարում:

Մի երկու խօսք՝ օգտագործուած ձեռագրերի եւ ներկայացուող բնագրերի փոխյարաբերութիւնների մասին

N 9832 ձեռագրի՝ Յակոբ Սանահնեցուն պատկանող հատուածը (էջ 25բ–27ա) ընդօրինակուած է XVII դարի ոչ կանոնաւոր նօտրգրով: Բնագիրն ընդհատուած է «եւ համատարած լոյսն սաստկապէս» խօսքերով, որով աւարտւում է 27ա էջը: Յաջորդ (27բ) էջն անյայտ պատճառներով անգիր է թողնուած, սակայն յետագայում այդ եւ միւս հերթական թերթերի վրայ փակցրել են «Հարանց վարքի» մի հին ձեռագրից անջատուած աւելի փոքր չափսերի թերթիկներ, որոնք «Ժամանակագրութեան» հետ ոչ մի առնչութիւն չունեն:

Յովհ. Կոզեռնի «Տեսիլքը», ինչպէս ասել ենք արդէն, հրատարակուած է մեծանուն հայագէտ Ն. Մառի կողմից անցեալ դարի վերջերին, 1320 թուականի մի ձեռագրից: Մեր Մատենադարանում այդ բնագրի բազմաթիւ ձեռագրեր կան, որոնցից հնագոյնն է N 1324-ը՝ ընդօրինակուած 1281 թուականին: Այս բնագիրը շատ աւելի մօտ է Յակոբ քահանայի ժամանակագրական հատուածներին, քան Ն. Մառի հրատարակածը[1]: Նկատի ունենալով, որ վերջինս մատչելի է ուսումնասիրողներին՝ երկրորդ սիւնակով ներկայացնում ենք N 1324 ձեռագրի փոփոխակը:

Մատթէոս Ուռհայեցին օգտուել է ոչ թէ Յովհ. Կոզեռնի «Տեսիլքից», ինչպէս կարծում էր Ն. Մառը (ծանօթ չլինելով նորայայտ ժամանակագրական հատուածներին), այլ Յակոբ Սանահնեցու «Ժամանակագրութիւնից» անմիջականօրէն: Ուռհայեցու սիւնակը լրացնում ենք 1898 թ. Վաղարշապատի հրատարակութիւնից (էջ 49–50, 52–55):

Ուռհայեցուց յետոյ հրապարակ իջած հայ պատմագիրներից Սամուէլ Անեցին առաջինն է, որ նշումներ ունի Վասիլ Բ կայսեր արշաւանքի, Պետրոս կաթողիկոսի՝ Տրապիզոնում կատարած ջրօրհնէքի հանդէսի եւ Յովհ. Կոզեռնի տեսիլքի մասին[2]: Բոլոր այդ հատուածներն էլ, սակայն, բացակայում են Սամուէլի հնագոյն ձեռագրից (Մաշտոցի անուան Մատենադա-

1 Ն. Մառն իր հրատարակած բնագրի մէջ նկատում է մի շարք ռամկաբանութիւններ (вульгаризмы)՝ նրանց մեծ նշանակութիւն վերագրելով (էջ 18): Դրանք, սակայն, ոչ թէ հեղինակի կամ «Տեսիլքի» խմբագրի ուղղագրական սկզբունքների մասին են վկայում, այլ պարզապէս Մառի օգտագործած ձեռագրի ընդօրինակող գրչի «սրբագրութիւնների» արդիւնք են: Մատենադարանի վերոյիշեալ, ինչպէս նաեւ 1300 թ. ընդօրինակուած N 2607 ձեռագրի մէջ այդ ռամկաբանութիւնները չեն նկատւում:

2 Հմմտ. Սամուէլ Անեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 105-107:

րան, ձեռ. N 5619, ընդօրինակուած է 1176 թուականին) եւ մուծուել են նրա բնագրի մէջ շատ ուշ ժամանակներում՝ քաղուելով Սմբատ Սպարապետի «Ժամանակագրութիւնից»: Ըստ այդմ, Սամուէլ Անեցու տպագրութեան մէջ առկայ հատուածները, որպէս հետամուտ յաւելումներ, անտեսել ենք:

Սմբատ Սպարապետի «Ժամանակագրութեան» հնագոյն մասը, որի մէջ մտնում են նաեւ մեզ հետաքրքրող հատուածները, գրեթէ բառացի քաղուած է Ուռհայեցու «Ժամանակագրութիւնից»: Չորրորդ սիւնակով տալիս ենք Սմբատի համապատասխան հատուածները՝ քաղելով այդ աղբիւրի գիտական հրատարակութիւնից, որը Վենետիկի Մխիթարեան միաբանութեան անդամ Հ. Սերովբէ վ. Ագըլեանն իրագործեց 1956 թուականին:

I

Ի ժամանակագրութենէ Յակոբայ քահանայի

(1) Ի Թուականութեանս Հայոց ՆՀ (1021) եղանէր Վասիլ Թագաւորն յԱրեւելս անթիւ բազմութեամբ զաւրօք խուժադուժ ազգաւ, եւ խնդրեաց զԱնի եւ զամենայն տունն Շիրակա ի Յոհանիսէ՝ որդւոյ Գագկայ: Իսկ նա յաղագս Թուլութեան եւ տկարութեան մարմնոյ /26ա/ խոստացաւ տալ զԱնի ի Հոռոմս զկնի մահուան իւրոյ:

(2) Յայնժամ Թագաւորն Վասիլ դարձաւ յաշխարհն Վրաց եւ գրեաց Թուխթ առ Գէորգ Վրաց Թագաւորն՝ գալ նմա առ նայ: Իսկ նայ ոչ առ յանձն գալ առ Վասիլն, զի բազում իշխանս կորոյս ի տանէն Հոռոմոց եւ երարձ զամենայն մեծամեծս Յունաց աշխարհ/է/ն: Յայնժամ յարեաւ Վասիլն ի պատերազմ ընդ Վրաց զաւրացն, վասն զի եկին հասին ընդդէմ զաւրացն Վասլին եւ ի կողմն Շրանայ դաշտին հանդիպեցան միմեանց: Իսկ Ռատ իշխանն եւ Զոյատն, որք էին եղբարք Լիպարտին, արք զօրաւորք եւ քաջք, ուժգին բախէին զզօրսն Վասլին եւ առիւծաջան յարձակեալ եւ խողողեալ զաւրսն Վասլին: Եւ յայնժամ երիւարն Ռատին խրեցաւ ի մաւրխն՝ ի ջրագնաց տեղիսն, եւ ի նմին տեղոջ սպանեցաւ քաջ զօրավարն Ռատ. եւ յայնժամ պարտեցան զաւրքն Վրաց եւ եղեն փախստական առաջի զաւրացն Վասլին, եւ յայնմ տեղոջ եղեն կոտորած սաստիկ: Եւ կացեալ Վասիլն յայնմ աշխարհին ամիս վեց՝ հաւանեցոյց զնա եւ ինքն դարձաւ Տրապիզոն ձմերեաց:

II

Պատմութիւն նշանաց, որ եղեն ի դուշակս առաջիկա աւուրցն, որ կատարեցաւ, ասացեալ սուրբ վարդապետին Յոհաննիսի Կոզռան՝ Հայոց վարդապետի

Ի Թուականն Հայոց ՆՀ եղանել (իմա՛ եղանէր) Թագաւորն Յունաց Վասիլն յԱրեւելս անթիւ բազմութեամբ խուժադուժ ազգաց եւ խնդրեաց զԱնի եւ զամենայն տունն Շիրակա ի Յովաննիսէ որդո Գագկա: Իսկ նա վասն Թուլութեան եւ տկարութեան խոստացաւ տալ զԱնի ի Յոյնս զկնի մահուան իւրո:

Յայնժամ Թագաւորն Վասիլ դարձաւ յաշխարհն Վրաց, գրեաց Թուղթ առ Թագաւորն Վրաց Գաւրգի՝ գալ նմա առ ինքն ի հնազանդութիւն: Իսկ նա ոչ առ յանձն գալ առ Վասիլն, զի բազում իշխանս ի տանէն Հոռոմոց եւ յաշխարհէն բարձեալ էր: Յայնժամ Թագաւորն Վասիլ յարեւ ի պատերազմ ընդ զաւրացն Վրաց, զի եւ զաւրքն Վրաց եկին հասին ընդդէմ Վասլին ի կողմն Շիրակա դաշտին, եւ հանդիպեցան միմեանց սաստիկ պատերազմաւ: Իսկ Ռատ իշխանն եւ Զուատ, որ էին եղբարք միմեանց զաւրաւոր եւ քաջ, ուժգին բախէին զաւրսն Վասլին՝ Յունաց Թագաւորին, եւ առիւծաջան յարձակեցան եւ խողողեցին զբազումս ի զաւրացն Յունաց: Ապա յայնժամ վատ իմն հանդիպեցան, զերիվարս Ռատին խրեալ ի մաւրատ ինչ տեղոջ, կատարեցաւ քաջն Ռատ. յայնժամ պարտեցան զաւրքն Վրաց եւ եղեն փախստական առաջի զաւրացն Յունաց, եւ յայնմ տեղոջ եղեւ կոտորուած սաստիկ: Եւ կացեալ անդ Վասիլն ամիս Զ (6) յանմ աշխարհի՝ մինչեւ հաւանեցոյց զնոսա եւ ինքն ապա դառնայր ձմերոց ի Տրապիզոն:

III

Ժամանակագրութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ (Վաղարշապատ, 1898)

Ի Թուականութեանս Հայոց ՆՀ եղանէր Վասիլն յԱրեւելս անթիւ զօրօք եւ խնդրեաց ի Թագաւորէն Հայոց զԱնի եւ զԿարս: Եւ Յովհաննէս որդին Գագկայ խորհեցաւ տալ վասն Թուլութեան սրտին իւրոց:

Իսկ Վասիլն դարձաւ յաշխարհն իւր եւ գրեաց առ Գորգի Թագաւորն Վրաց՝ գալ նմա ի հնազանդութիւն, զոր ոչ ընկալաւ եւ ոչ յանձն էառ: Յայնժամ գայ Վասիլն պատերազմաւ ի վերայ նորա. եւ զօրքն Վրաց գնացին ընդդէմ նորա. եւ Ռատն եւ Զոյատն՝ արք քաջք՝ եղբարք Լիպարտին, ուժգին բախեցին զզօրսն Վասլին, մինչեւ սպանաւ Ռատն, զի ձին նորա խրեցաւ ի տեղի մի տիղմ եւ անդ սպանաւ. եւ ապա դարձան ի փախուստ զօրքն Վրացեաց. եւ զօրք Վասլին զկնի կոտորէին: Եւ կացեալ Վասիլն անդ ամիս Գ, մինչեւ հաւանեցոյց զնոսա, եւ ի Տրապիզոն ձմերեաց:

IV

Տարեգիրք Սմբատայ Սպարապետի (Վենետիկ, 1956)

Ի Թուին Հայոց ՆՀ եղանէր Վասիլն յԱրեւելս անթիւ զօրօք եւ խնդրեաց զԱնի եւ զԿարս: Եւ Յովհաննէս որդի Գագկայ խորհեցաւ տալ վասն Թուլութեան սրտի իւրոյ:

Իսկ Վասիլն դարձաւ յաշխարհն իւր եւ գրեաց առ Գորգի Թագաւորն Վրաց՝ գալ նմա ի հնազանդութիւն. զոր ոչ ընկալաւ եւ ոչ յանձն առ: Յայնժամ գայ Վասիլ Թագաւորն պատերազմաւ ի վերայ նորա. եւ զօրքն Վրաց գնացին ընդդէմ նորա, եւ Ռատն եւ Զոյատն՝ արք քաջք՝ եղբարք Լիպարիտին, ոյժգին բախեցին զզօրսն Վասլին՝ մինչեւ սպանաւ Ռատն, զի ձին նորա խրեցաւ ի տեղի մի տիղմն եւ անդ սպանաւ. եւ ապա դարձան ի փախուստ զօրք Վրացեացն. եւ զօրք Վասլին զկնի երթեալ կոտորէին: Եւ կացեալ Վասիլն անդ ամիս Գ, մինչեւ հաւանեցոյց զնոսա, եւ ի Տրապիզոն ձմերեաց:

I

(3) Յայնժամ գայր առ Վասիլ թագաւորն տէր Պետրոս /26բ/ կաթողիկոսն Հայոց յաղագս սիրոյ, հանդերձ երկոտասան եպիսկոպոսօք եւ ութնասուն կրօնաւոր քահանայիւք եւ վարդապետօք՝ Յովսէփ Ընծուց եւ Կոզեռն Յոհաննէս եւ այլ ԳԾ (300) ձիաւորս ընդ նմայ ի փառաւորացն: Եւ յորժամ ետես թագաւորն զտէր Պետրոս՝ կարի յոյժ մեծարեաց զնա քան զամենայն առաջնորդսն տանն Յունաց:

Եւ եղեն հանդիպեալ յաւուր միում ջրաւրհնէքիցն, հրամայեաց թագաւորն զտէր Պետրոս եւ զվարդապետսն եւ զքահանայս տանն Հայոց ի վեր կացուցանել քան զառաջնորդս Յունաց եւ նախ տէր Պետրոսի հրամանաց աւրհնել զջուրն. եւ եղեւ յորժամ արկանէր զսուրբ մեռոնն ի ջուրն եւ նշան սուրբ խաչին Քրիստոսի հարեալ ի գետ անդ՝ հուր սաստկապէս իբրեւ զփայլակն ցոլացեալ եղեւ ի վերայ ջրոյն, եւ կապեցաւ գետն առ վայր մի: Եւ տեսեալ թագաւորին եւ ամենայն Հոռոմոց՝ հիացեալ զարհուրեցան: Եւ խոնարհեալ թագաւորն եւ արկանէր զաւրհնեալ ջուրն ի վերա գլխոյ իւրոյ՝ աջովն տէր Պետրոսի: Իսկ աւրհնելն Յունաց զջուրն՝ ոչ ինչ երեւեալ նշան: Եւ յորժամ թողին ի վերայ ջրոյն զսպիտակ աղաւնին, զի խաղասցէ ի վերայ ջրոյն, խոյացեալ արծուի մի եւ էառ զնայ /27ա/ եւ եղեւ հիացումն մեծ: Եւ դարձաւ տէր Պետրոս մեծաւ պարգեւօք յաշխարհն Հայոց:

Իսկ թագաւորն մտախորհ լինէր վասն տեսլեան նշանին, որ երեւեցաւ ի վերայ ջրոյն, եւ յայնմ աւրէ երկմտեալ ի հաւատս Հոռոմոց, զորս յետ ժամանակաց գնացեալ յաշխարհն Անտիոքայ քաղաքին եւ զաղտաբար ի զաւրացն երեք հաւատարիմ

II

Յայնժամ գայր առ Վասիլն տէր Պետրոս կաթողիկոսն Հայոց յաղագս սիրո պատճառի, հանդերձ ԲԺ (12) եպիսկոպոսաւք եւ Բ (2) մեծանուն վարդապետաւք, յորոց մինն էր Յուսէփ Հնձուց, եւ միւսն Յոհաննէս Կոզեռն կոչեցեալ, եւ այլ երեք հարիւր ձիաւորաւք ի փառաւորաց եւ յանուանի արանց: Իսկ յորժամ ետես թագաւորն զտէր Պետրոս, կարի յոյժ մեծարեաց զնա քան զամենայն առաջնորդսն Յունաց:

Եւ եղեւ ի հանդիպել մեծի աւուրն յայտնութեան եւ մկրտութեան տեառն, յորժամ զջուրն կամեցան աւրհնել, հրամաեաց թագաւորն Վասիլ զտէր Պետրոս իւրաովքն հանդերձ ի վեր կացուցանել քան զամենայն առաջնորդսն Յունաց եւ նախ տէր Պետրոսի հրամայեաց աւրհնել զջուրն եւ ապա Հոռոմոց: Եւ եղեւ յարկանելն տէր Պետրոսի զսուրբ մեռոնն ի ջուրն եւ զնշան սուրբ խաչին խոնարհեցուցեալ ի ջուրն, հուր սաստկապէս իբրեւ զփայլակն ցոլացեալ ի վերա ջրոյն, եւ կապեցաւ գետն՝ դադարեալ առ ժամ մի. եւ տեսեալ թագաւորին եւ ամենայն Հոռոմոց՝ հիացեալ զարհուրեցան: Եւ խոնարհեցուցեալ թագաւորն զգլուխն իւր առաջի տէր Պետրոսի՝ տայր արկանել զջուրն ի վերա գլխո իւրո՝ աջով նորա: Իսկ յաւրհնելն Հոռոմոց զջուրն՝ ոչ ինչ երեւէր նշան: Այլ զի ունէին սովորական աղաւնի սպիտակ եւ թողին, զի խաղասցէ ի վերա ջրոյն. եւ եղեւ իբրեւ թողին յանկարծակի, իբրեւ ի տեսչութենէ Աստուծոյ, արծիւ մի խոյացեալ առ զաղաւնին, եւ եղեւ հիացումն ի վերա ամենուեց: Եւ դարձաւ տէր Պետրոս մեծաւ ուրախութեամբ յաշխարհն Հայոց: Իսկ թագաւորն յայնմհետէ մտախորհ լինէր վասն նշանին, որ երեւեցաւ, եւ այնուհետեւ երկմտեալ ի հաւատս Հոռոմոց. զոր եւ յետ ժամանակի ինչ

III

Եւ գնայր առ թագաւորն Վասիլ տէր Պետրոս կաթողիկոսն Հայոց եւ սուրբ վարդապետն Յովհաննէս Կոզեռն բազում սպասուք. եւ թագաւորն ընկալաւ զնոսա մեծաւ պատուով: Եւ ի հասանելն մեծի աւուր մկրտութեան տեառն մերոյ՝ մեծարեաց թագաւորն զտէր Պետրոսն եւ վարդապետսն Հայոց եւ ի վեր եւս կացուցանել քան զառաջնորդսն Յունաց եւ յառաջ տէր Պետրոսի հրամայեաց օրհնել զջուրն. զոր իբրեւ արկանէր զմիւռոն սուրբ ձիթոյն ի ջուրն եւ հարկանէր սուրբ նշանաւն զջուրն, հուր սաստկապէս ցոլացեալ երեւէր ի վերայ ջրոյն եւ կապեցաւ գետն առ վայր մի եւ ոչ շարժէր: Եւ տեսեալ թագաւորին եւ զօրացն զարհուրեցան. եւ խոնարհեալ թագաւորն՝ արկանէր զօրհնեալ ջուրն ի վերա գլխոյն աջովն տէր Պետրոսի: Եւ դարձաւ տէր Պետրոսն մեծաւ պարգեւօք յաշխարհն Հայոց: Իսկ Վասիլն յետ ժամանակաց գայ յԱնտիոք ի ծածուկ Գ արամբք հաւատարմօք, եւ եկեալ ի Սեաւն լեառն՝ ի տեղին, որ կոչի Պաղակծիակ, եւ ի հօրէ եւ յառաջնորդէ տեղւոյն առնու զքրիստոնեական կնիքն: Եւ յայնմ հետէ եղեւ որպէս զհայր աշխարհիս Հայոց:

IV

Եւ գնայր առ թագաւորն Վասիլ տէր Պետրոս կաթողիկոսն Հայոց, եւ Յովհաննէս Կոզեռն բազում սպասուք. եւ թագաւորն ընկալաւ զնոսա պատուով: Եւ ի հասանել մեծի աւուր մկրտութեան տեառն մերոյ՝ մեծարեաց թագաւորն զտէր Պետրոս եւ զվարդապետսն Հայոց եւ ի վեր եւս կացուցանել քան զառաջնորդսն Յունաց եւ յառաջ տէր Պետրոսի հրամայեաց օրհնել զջուրն. զոր իբրեւ արկանէր զմերոն սուրբ ձիթոյն ի ջուրն եւ հարկանէր սուրբ նշանաւն զջուրն, հուր սաստկապէս ցոլացեալ երեւէր ի վերայ ջրոյն, եւ կապեցաւ գետն առ վայր մի եւ ոչ շարժէր: Եւ տեսեալ թագաւորին եւ զօրացն զարհուրեցան. եւ խոնարհեալ թագաւորն՝ արկանէր զօրհնեալ ջուրն ի վերայ գլխոյ աջովն Պետրոսին: Եւ դարձաւ տէր Պետրոս մեծաւ պարգեւօք յաշխարհն Հայոց: Իսկ Վասիլն յետ ժամանակաց գայ յԱնտիոք ի ծածուկ Գ արամբք հաւատարմօք գայ ի Սեաւ լեառնն՝ ի տեղին, որ կոչի Պաղակցեակ, եւ ի հօր տեղւոյն առնու զքրիստոնեական կնիքն: Եւ յայնմ հետէ եղեւ որպէս հայր աշխարհիս Հայոց:

I

արամբք գնացեալ. եկանէր ի Սեաւ լեառն՝ ի վանքն, որ Պաղակծիակ կոչի, եւ ծածկաբար ի հաւրէն առնոյր զքրիստոսական կնիքն. եւ յանմ աւրէ եղեւ որպէս հայր Հայոց ազգիս եւ յայտնապէս Բժ-ան գեղս շնորհեաց վանացն, որ եւ են իսկ:

(4) Դարձեալ ի Թուականութեանս Հայոց ՆՀԸ (1030) եւ ի Թագաւորութեանն Հոռոմոց Վասլին եղեւ ահաւոր նշան եւ սոսկալի եւ բարկութիւն ի վերայ ամենայն արարածոցս: Վասն զի ահայ այս ինչ լինէր. ի հոկտեմբերի ամսոյն, որ աւր Ե (5) էր, ի յերեկոյին ժամուն պատառեցաւ վերին հաստատութիւն յերկնիցն եւ յարեւելից մինչեւ ի մուտս ընդ երկուս հերձեալ երկինք, եւ համատարած լոյսն սաստկապէս...

II

գնացեալ յաշխարհն Անտիոքացոց, եւ գաղտնաբար ի զաւրաց իւրոց գնաց երեք հաւատարիմ արամբ ի Սեաւ լեառն՝ ի վանքն, որ Պաղակծիակ կոչի, եւ ծածկաբար ի հաւրէ վանացն առնոյր զքրիստոսական մկրտութիւնն. եւ յայնմ աւրէ իբրեւ զհայր եղեւ նա ազգիս Հայոց, եւ յայտնապէս Բժ գեղ շնորհեաց վանացն:

Դարձեալ ի Թուակ[ան]ութեանս Հայոց ՆՀԸ նոյն ի Թագաւորութեանն Յունաց Վասլին եղեւ ահաւոր նշան յերկինս՝ սոսկալի ի վերա երկրի: Քանզի ահա այս ինչ լինէր. ի հոկտեմբերի ամսո, որ աւր երեք էր ամսեանն, յերեկոին ժամուն պատառեցաւ վերին հաստատութիւնն երկնից՝ յարեւելից կուսէ մինչեւ յարեւմուտս ընդ երկուս հերձեցան երկինք. ի հիւսիսական կողմանէ համատարած լոյս սաստկապէս հոսեալ ի յերկիր. է յահէ բարկութեան դողացեալ երերէին ամենայն արարածք, այլ յառաջ քան զնուազել լուսոյն եղեւ ահաւոր գոչիւն ընդ ամենայն երկիր. եւ աստեղք ամենայն երեւէին որպէս ի մէջ գիշերի, վասն զի խաւար կալաւ զամենայն երկիր: Յայնժամ զկնի երեք աւուրն ժողովեցան իշխանք եւ ազատք եւ եկին առ մեծ վարդապետն Հայոց Յոհաննէս, որ էր աստուածազգեաց եւ հրաշակերտւն եւ լի իսկ առաքելական եւ վարդապետական եւ մարգարէական շնորհիւ: Եւ յորժամ եկին իշխանքն եւ ազատքն ի հարցանել եւ իմանալ զմեկնութիւն նշանին որ եղեւ, յայնժամ տեսին զվարդապետն Հայոց, զի կայր ի վերա երեսաց իւրոց անկեալ, զոհին ի խոր արտմութեան: Եւ նոցա սակաւ ինչ համարձակել՝ հարցին զնա, իսկ նա լալով եւ հառաչանաւք պատասխանի առնէր ասելով. Ո՛վ որդեակք, լուարուք ինձ, զի ահա այս հազար ամ է կապանաց սատանայի, զոր

III

Ի Թուականութեան Հայոց ՆՀԸ յամս կայսերն Յունաց Վասլի եղեւ յերկինս ահաւոր նշան եւ սոսկալի եւ բարկութիւն ի վերայ ամենայն արարածոց: Ի հոկտեմբեր ամսոյ Գ (3) յերրորդ ժամու աւուրն պատառեցաւ վերին հաստատութիւնն երկնից յարեւելից կուսէ մինչեւ յարեւմուտս ընդ. երկուս հերձաւ կապուտ երկինդ, եւ լոյս պայծառ յերկիր Թափեցաւ ի հիւսիսային կողմանէ. եւ մեծաւ շարժմամբ դողաց ամենայն երկիր. եւ նախ քան զնուազիլ լուսոյն եղեւ գոջիւն եւ Թնդիւն ահաւոր ի վերայ ամենայն արարածոց. խաւարեցաւ արեգակն եւ աստեղք երեւեցան որպէս ի մէջ գիշերի, եւ սուգ զգեցան ամենայն երկիր. եւ զառն արտասուօք աղաղակէին ամենայն ազինք առ Աստուած: Եւ ապա յետ երեք աւուր ժողովեցան ամենայն իշխանք եւ ազատքն հրամանաւ Թագաւորին Հայոց Յովհաննիսի եւ եկեալ առաջի սուրբ վարդապետին Յովհաննու Կոզեռանն, որ էր այր աստուածազգեաց եւ հրեշտակակրօն եւ լի իսկ առաքելական եւ մարգարէական գրոց գիտութեամբ: Եւ յորժամ եկին իշխանքն Հայոց հարցանել զնա եւ իմանալ վասն հրաշալի տեսլեանն եւ նշանին, եւ տեսին զսուրբ վարդապետն Յովհաննէս անկեալ ի վերայ երեսաց իւրոց արտմութեամբ, եւ լայր դառնապէս: Եւ ի հարցանելն նոցա՝ նա զառն ողով եւ աղիողորմ հառաչանօք ետ պատասխանի եւ ասաց.

Ո՛վ որդիք, լուարուք ինձ, վայ եւ եղուկ է ամենայն մարդկան, զի ահա այսօր հազար ամ է կապանացն սատանայի, զոր կապեաց տէրն մեր Յիսուս Քրիստոս

IV

Ի ժամանակս Վասլին, ի Թուին ՆՀԸ, երեւեցաւ յերկինս սոսկալի նշան, որպէս Թէ պատառեցաւ երկինքն, եւ լոյս սաստիկ յերկիր անկաւ, եւ զահի հարան ամենեքեան ընդ լուսոյն հեղումն: Յայնժամ ժողովեցան առ վարդապետն Հայոց Յովհաննէս Կոզեռն եւ հարցանէին վասն սոսկալի նշանին: Եւ նա արտասուօք սկսաւ պատմել զչարութիւն յետին ժամանակիս, զոր ինչ գալոց էր ի վերայ երկրիս:

II

կապեաց Տէր մեր Յիսուս Քրիստոս ի Յորդանան գետ իւր սուրբ մկրտութեամբն. եւ այժմ արձակեցաւ ի կապանաց ըստ ասացելո Հրեշտակին ի տեսլեանն Յոհաննու աւետարանչի, որ ասաց Հրեշտակն, թէ՝ Հազար ամ կապեսցի բանսարկուն եւ դարձեալ արձակեսցի ի կապանաց իւրոց: Եւ ահա արձակեցաւ ի վերա արարածոց, զոր կապեալն էր Քրիստոս իւր սուրբ մկրտութեամբն, զի ահա Հայոց թուականս այսաւր ՆՀԸ եւ կալ զառաջին ՇԾԲ (552), որ լինի Հազար եւ երեսուն. զԼ (30) տուր յառաջ քան զմկրտութիւնն եւ զՀազարն ի մկրտութենէն մինչեւ ցայսմ: Որդեակք իմ, լալով ինչ ունիմ ասել ձեզ, զի վասն այսորիկ եղեւ պատառումն երկնից, զի ահա յայսմհետէ ոչ ոք կարէ կալ հաստատուն ի վերա երկիր առ ի պատուիրանն աստուծոյ. ոչ Հայրապետ, ոչ քահանա, ոչ կրաւնաւոր եւ ոչ իշխան: Իշխանք յարենան ի գողս եւ յանիրաւ դատաստանս, կրաւնաւորք թողուն զանապատս իւրեանց եւ սիրեն զաշխարհս, առեն զկարգ կրաւնաւորութեան եւ յարենան ի ցանկութիւն կանանց. եւ յայսմ աւրէ յամենայն արարածոց խափանի փառաբանութիւնն աստուծոյ, դառնան յետս ի ճշմարտութենէն, եւ մոլորին աշխարհք զհետ երգոց դիւականաց եւ ատեն զաղաւթս, որ առ Աստուած: Իշխանք պեղծ մեղաւք յանդգնին եւ մոլորին, միշտ ի գինարբուս դեգերին վասն սիրո չար ախտին. Հայրապետք եւ եպիսկոպոսք, քահանայք, կրաւնաւորք արծաթասէր լինին առաւել քան թէ քրիստոսասէրք, եւ յայսմհետէ զսատանայի կամսն մեծապէս կատարեն մարդիկ, քան զաստուծոյն. եւ ի ձեռն անարժան պատարագացն, որ յայսմհետէ լինելոց է, առաւել բարկանա Աստուած արարածոց, եւ առաւել մատուցողին. վասն զի յանարժանից պատարագելոց է Քրիստոս եւ յանարժանս բաշխելոց, եւս առաւել

III

խաչիւն իւրով սրբով, մանաւանդ իւր սուրբ մկրտութեամբն ի Յորդանան գետն. եւ արդ, արձակեցաւ սատանայ ի կապանաց իւրոց ըստ վկայութեան տեսլեանն Յովհաննու աւետարանչին, որպէս ասաց նմա Հրեշտակն աստուծոյ, թէ՝ Ռ ամ կապեսցի սատանայ եւ դարձեալ արձակեսցի ի կապանաց իւրոց: Եւ ահա այսօր արձակեցաւ սատանայ ի Հազար ամէ կապանաց իւրոց, որ Հայոց թուականն ՆՀԸ ամ է, եւ կալ զառաջինն ՇԾԲ, որ լինի ՌԼ ամ. զերեսուն ամն տուր յառաջ քան զմկրտութիւնն եւ կալ զՀազարն մինչեւ ցայսօր: Եւ արդ վասն այսորիկ եղեւ պատառումն երկնից: Եւ ահա յայսմհետէ ոչ ոք կարասցէ կալ հաստատուն ի հաւատս Քրիստոսի եւ ի պատուիրանսն Աստուծոյ՝ ոչ Հայրապետ եւ ոչ վարդապետ, ոչ եպիսկոպոս եւ ոչ քահանայ, ոչ աբեղայ եւ ոչ կրօնաւոր, ոչ իշխան եւ ոչ ժողովուրդ. իշխանք յարենան ի գողս եւ յաւազակս եւ յափշտակողս, դատաւորք ի կաշառս եւ յանիրաւ դատաստանս. կրօնաւորք թողուն զանապատս եւ զմենաստանս եւ յաշխարհի զբաղմունս դեգերին եւ շրջին ընդ փողոցս եւ ի մէջ կանանց ատեն զաղօթս եւ թողուն զկարգս կրօնաւորութեան իւրեանց, սիրեն զվարս աշխարհի եւ զհետ երթան գովեստից մարդկան, որոճալով որոճեն զդիւական երգս եւ փքացեալ ի վերայ ընկերացն ասելով թէ՝ Ես կցորդ եւ մեղեդի գիտեմ եւ դու՝ ոչ. եւ այսու պատճառաւ պղտորեն զկարգ ժամատեղացն. լինին եւ բազումք ուսումնատեացք, ծոյլք եւ դատարկարանք տրտնջողք եւ ամբաստանողք՝ եւ ուր ուրեք երեւի ճշմարտութիւն ի մարդիկ, զի լինին կամապաշտք, անձնասէրք եւ ընկերատեացք, չոգմոգք, քսուք, ստախօսք, Հպարտք, փառասէրք, անձնահաճք, ինքնահաւանք, որկորամոլք, գինեսէրք եւ

II

վիրաւորելոց է Քրիստոս, քան զխաչեալն եւ զթաղեալն ի Հրէից. արձակիլն սատանաի այս է, որ լցաւ երկիր անիրաւութեամբ, եւ ոչ երբեւ ճշմարտութիւն: Եւ արդ, ո՛րդեակք իմ, զայս պատուիրեմ ձեզ հառաչանաւք սրտի, լալով եւ ողբալով, զի քակին ոմանք ի հաւատոյ եւ պարծանաւք ուրանան զՔրիստոս. վասն այսորիկ խաւար կալաւ զամենայն արարածս:

Զայս այսպէս խաւսեցաւ սուրբ վարդապետն վասն կատարածի նշանին եւ այլ բազում ինչ ճառեաց, զոր եւ կատարելոց էր վասն հաւատացելոց, զոր եւ կատարեցաւ մի առ մի ի ձեռն ելին կատաղի ազգին Թուրքաց՝ պեղծ որդոցն Քամա:

III

ցանկասէրք: Որդեակք իմ, ահա յայմհետէ խափանեսցի փառաբանութիւնն Աստուծոյ ի մարդկանէ եւ ոչ երբեւ ճշմարտութիւն առ մարդիկ: Այլ եւ իշխանք պիղծ եւ մեծ ախտիւ յանդգնեալ եւ մոլորեալ՝ թողուն զհողս շինութեան տանց եւ յաջողուածս գործոց եւ միշտ եւ հանապազ ի գինարբուսն դեգերին վասն սիրոյ եւ ցանկութեան չար եւ պիղծ ախտին. հայրապետք եւ եպիսկոպոսունք եւ քահանայք եւ կրօնաւորք՝ արծաթասէրք առաւել քան աստուածասէրք: Որդեակք իմ, ահա յայմհետէ սատանայի կամքն առաւել կատարեսցի յորդիս մարդկան քան զաստուծոյն, եւ ի ձեռն անարժան պատարագողացն, որ յայմս հետէ լինելոց է, բարկանայ Աստուած ի վերայ արարածոցս, եւս առաւել ի վերայ մատուցողին զնա, զի յանարժանիցն պատարագելոց է Քրիստոս եւ յանարժանոն բաշխի. եւ առաւել վիրաւորելոց է Տէր մեր Յիսուս Քրիստոս ի յանարժան քահանայիցն, քան զչարչարիլն եւ զխաչիլն ի Հրէից, զի արձակեցաւ սատանայ ի հազար ամէ կապանց իւրոց, զոր կապեաց Քրիստոս: Եւ զայս, որդեակք իմ, պատուիրեմ ձեզ հառաչանօք սրտիւ լալով եւ ողբալով, վասն զի քակտին բազումք ի հաւատոյ եւ պարծանօք ուրանան զՔրիստոս, եւ վասն այսորիկ խաւար կալաւ զամենայն արարածս: Զայս այսպէս ասաց սուրբ վարդապետն Հայոց վասն կատարածի բարկութեան նշանին եւ այլ բազում ինչ ճառեաց, որ կատարելոց էր ի վերայ հաւատացելոց, զոր ահա ամենայն ինչ կատարեցաւ մի առ մի ի ձեռն ելից կատաղի եւ չուն ազգին Թուրքաց՝ անօրէն եւ պիղծ որդւոցն Քամայ:

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԲԱՐՁՐԲԵՐԴՑՈՒ ԽՐԱՏԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ՝ ԱՌԱՔՈՒԱԾ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ 1251 ԹՈՒԱԿԱՆԻՆ*

Կոստանդին կաթողիկոս Բարձրբերդցու (1221-1267) խրատական թղթի մեզ յայտնի միակ ձեռագիրը պահւում է Լենինգրադի Մ. Ե. Սալտիկով-Շչեդրինի անուան Պետ. հանրային գրադարանի ձեռագրական բաժնի հայերէն ձեռագրերի հաւաքածուի մէջ:

1954 թուականի նոյեմբերին, գործուղուելով Լենինգրադ, հնարաւորութիւն ունեցանք ընդօրինակելու 90 ամբողջական ձեռագրերից բաղկացած այդ հաւաքածուի ԺԵ դարի ձեռագրերի յիշատակարանները, ինչպէս նաեւ թռուցիկ կերպով ծանօթացանք ձեռագրերի բովանդակութեան հետ:

Հայերէն ձեռագրերի այս հաւաքածուն բաղկացած է երկու (հին եւ նոր) շարքերից, ուր ամէն մի շարքում (серия) գրանցուած է 45 ձեռագիր՝ 1-ից 45 ինքնուրոյն համարակալութեամբ:

Հին շարքի ձեռագրերը (старая серия, N 1-45) ստացուել են 1891 թուականին Կամենեց-Պոդոլսկից՝ սուրբ Նիկողայոսի անուան հայկական եկեղեցին եւ նրան կից արխիւը լուծարքի ենթարկելուց յետոյ: Հաւաքածուի այս շարքի մասին համառօտ մի հաղորդում է հրատարակուած գրադարանի 1891 թ. հաշուետուութեան մէջ (տե՛ս "Отчет императорской публичной библиотеки за 1891 год", СПб., 1894, с. 11-16), որտեղ թռուցիկ նկարագրուած են ամենաարժէքաւոր 13 ձեռագրերը, ինչպէս նաեւ ձեռագրերի հետ միասին ստացուած 54 հայերէն տպագիր գրքերը (նկարագրութիւնը կատարել է Ն. Մառը): Ձեռագրերի մեծագոյն մասն ընդօրինակուած է Ուկրաինայի եւ Լեհաստանի հայկական գաղթավայրերում, ուստի օգտակար նիւթ կարող են մատակարարել այդ գաղթավայրերի պատմութեան հարցերով հետաքրքրուող մասնագէտներին:

Աւելի մեծ արժէք են ներկայացնում հաւաքածուի նոր շարքի ձեռագրերը (новая серия, N 1-45), որոնք ձեռք են բերուել գրադարանի կողմից սակաւ ճանապարհներով, 1891 թուականից յետոյ ընկած տասնամեակներում:

Այս ձեռագրերը, եթէ նկատի չառնենք նրանցից մի քանիսի յիշատակարանների հրատարակութիւնները «ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարանները» ժողովածուի մէջ (տե՛ս էջ 651-661), մինչ այժմ անծանօթ են մնացել հայագէտներին:

Դրանցից ուշադրութեան արժանի են յատկապէս հետեւեալները.

ա) N 14, կրկնագիր ձեռագիր, բաղկացած 255 մագաղաթեայ թերթերից, երկրորդ գիրը 1554 թուականից: Պարունակում է նաեւ Անանիա Շիրակացու թուաբանական աղիւսակները.

բ) N 39, Մխիթար Գոշի Դատաստանագիրք Հայոց եւ Ասորա-Հռոմէական դատաստանագիրք՝ ընդօրինակուած Թովմա դպրի կողմից 1404 թուականին.

գ) N 31, Հարցմանց գիրք Գրիգորի Տաթեւացւոյ՝ ընդօրինակուած Հերմոնի վանքում Գրիգոր Ախալցխացի դպրի կողմից (պատմական հարուստ բովանդակութեամբ ու կենցաղագրական ուշագրաւ մանրամասնութիւններով լի յիշատակարանով).

դ) N 15, Յայսմաւուրք՝ ընդօրինակուած Կարապետ դպրի կողմից 1427 թուականին. եւ

* «Բանբեր Մատենադարանի», N 4, 1958, էջ 267-284

վերջապէս՝

ե) N 37, բազմազան նիւթերի ժողովածու՝ ընդօրինակուած ԺԵ դարում: Այս ձեռագրի 208ա-214բ էջերի վրայ ընդօրինակուած է Կոստանդին Բարձրբերդցու մեր ուշադրութիւնը գրաւած «Խրատական թուղթը»[1]:

Սահմանափակ ժամանակ ունենալով մեր տրամադրութեան տակ՝ 1954 թուականին կարողացանք միայն որոշ քաղուածքներ անել խրատական այդ թղթից: Յետագայում մեր խնդրանքով պատմական գիտութիւնների թեկնածու Հախիսիմէ Զանփոլադեանը ընդօրինակեց ձեռագրի մեզ հետաքրքրող էջերը, իսկ 1956 թուականին գրադարանի արտաքին սպասարկման բաժնից ստացանք «Խրատական թղթի» էջերի պարզ լուսանկարները, որոնք հնարաւորութիւն են տալիս ծայրից ծայր անսխալ վերծանել հրատարակութեան արժանի այդ բնագիրը:

* * *

Մեզ հետաքրքրող թուղթը սկսում է այսպէս. «Խրատական թուղթ ի ձեռն մեր վարդապետին Վարդանայ»:

Այս առաջին դէպքը չէր, երբ Կոստանդին կաթողիկոսը դիմում էր Արեւելեան Հայաստանի հայերին «ի ձեռն» (նշանակում է՝ միջնորդութեամբ, գործակցութեամբ) Վարդան Արեւելցու:

Յայտնի է, որ դեռեւս 1246 թուականին կաթողիկոսը «բերեւ եռեւ զաւեր աշխարհիս Հայոց եւ զտառապանսն, զոր կրէին ի հարկահանացն եւ ի զօրաց թաթարին, եւ մտախոհ եղեալ իմացաւ՝ եթէ մեղք են այսմ ամենայնի պատճառ... փութացաւ գրել թուղթս շրջաբերականս եւ կանոնս համաշխարհականս» (Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1909, էջ 278-279)*:

Կիրակոս Գանձակեցին իր «Պատմութեան» մէջ ամբողջութեամբ մէջբերում է այդ շրջաբերական թուղթն ու «Սահմանք կանոնականքը»՝ յայտնելով, որ դրանք Կիլիկիայից Արեւելք է բերել նոյն Վարդան Արեւելցին, որը Երուսաղէմից հայրենիք վերադառնալու ճանապարհին, հինգ տարի մնալով Կիլիկիայում, սերտ կապեր էր հաստատել Հեթում թագաւորի եւ Կոստանդին կաթողիկոսի հետ (նոյն տեղում, էջ 279):

Այդ մասին շրջաբերական իր թղթի նախաբանում խօսում է նաեւ կաթողիկոսը: «Առաքեցի զարդիւնական վարդապետդ զՎարդան,- գրում է նա,- փոխանակ անձին իմոյ, զոր եւ ինձ նախախնամութիւնն Աստուծոյ՝ ձգելով առ իս ի կողմանց ձերոց ի հինգ ամաց հետէ, զոր իբրեւ տեսի եւ ճանաչեցի ըստ կարի, կապեցի զդա միջնորդութեամբն Աստուծոյ ընդ անձին իմոյ կենօք եւ մահու՝ մեծաւ հարկիւ եւ սիրով բեւեռեալ ընդ իս յաւիտեան» (նոյն տեղում, էջ 282-283):

Գալով հայրենիք՝ Վարդանը շրջում է «ընդ գաւառս Հայոց», ծանօթացնում եպիսկոպոսներին, վանականներին ու իշխաններին կաթողիկոսի կանոնական սահմանների հետ եւ վերցնում նրանցից «ձեռագիր հաւանութեան», այսինքն՝ կանոնական սահմանները կատարելու պարտաւորութիւն: Յայտնի է նաեւ, որ յետագայում նա Հաղբատում եւ Զագավանքում գումարում է եկեղեցական ժողովներ ու մշակում կանոններ, որոնք շատ կէտերով նմանւում

1 Ձեռագիրը մուտք է գործել Սալտիկով-Շչեդրինի անուան գրադարանի ձեռագրական բաժին 1950 թուականի նոյեմբերի 30-ին:

են Կոստանդին կաթողիկոսի «Սահմանքի» կանոններին (տե՛ս **Գարեգին վարդապետ**, Զագավանից ժողովը, «Շողակաթ», էջ 22-46):

Վարդանի եւ Կոստանդին կաթողիկոսի միջեւ սերտ կապերի գոյութեան մասին փաստերը չեն սահմանափակւում սրանցով: Գիտենք, որ դեռեւս Կիլիկիայում գտնուած ժամանակ (1246 թ.) Վարդանը գործակցել է կաթողիկոսին՝ պատշաճ պատասխան գրելու համար Հռոմի պապի կողմից Հեթում թագաւորին ուղղուած դաւանաբանական գրութեանը:

Պատասխան այդ թուղթը հայ դաւանաբանական գրականութեան գլուխգործոցը կարելի է համարել: Կաթողիկոսը, դարձեալ «ի ձեռն արդիւնական վարդապետին Վարդանայ», ոչ միայն վճռականօրէն մերժում է կաթոլիկ եկեղեցու տեսակէտն այն մասին, թէ «Հռոմայ աթոռն միայն ունի իշխանութիւն ի վերայ երկրի կապելոյ եւ արձակելոյ, եւ ծառայութիւն պարտին նմա ամենայն եկեղեցիք», այլեւ պապի գրութեան մէջ գտնում է «հնգետասան սխալ եւ անընդունակ բան» եւ յայտարարում, որ «զիւրեանց (կաթոլիկների) արուեստակեալ առասպելսն իսկի չընդունիմք, այլ եւ արհամարհեմք» եւ այլն[1]:

Կոստանդին կաթողիկոսի պատուէրով Վարդանը գրել է նաեւ «Դաւանութիւն հաւատոյ» խորագրով մի գրութիւն[2]:

Ուշագրաւ է, որ Կոստանդին Բարձրբերդցու նորայայտ խրատական թուղթը եւս, ինչպէս տեսանք, գրուած է «ի ձեռն մեր վարդապետին Վարդանայ»:

Արդ, ի՞նչ է նշանակում յաճախ կրկնուող այս «ի ձեռն» արտայայտութիւնը: Եւ Վարդան վարդապետը կաթողիկոսի կամքի ու մտքի լոկ թարգմա՞նն է հանդէս գալիս այս ու վերոյիշեալ դէպքերում, թէ՞ ինքը գործուն մասնակցութիւն ունի կաթողիկոսի ստորագրութեամբ հրապարակուած պաշտօնական այդ գրութիւնների շարադրմանը. այս մի հարց է, որի պատասխանը պէտք է զբաղեցնի հայ բանասիրութեանը:

Ինչեւէ. «Սահմանք կանոնականքից» ընդամէնը 5 տարի յետոյ՝ «յեւթնհարիւր թուի մերոյ տոմարիս եւ Լ (30) հայրապետութեանս մերոյ», այսինքն՝ 1251 թուականին, Կոստանդին կաթողիկոսը կրկին պահանջ է զգում շրջաբերական թղթով դիմելու Արեւելեան Հայաստանի հայերին:

Խրատական այդ թուղթը բաղկացած է երկու բաժնից՝ ա) Նախաբան եւ բ) 18 կանոն, ըստ որում 3-րդ կանոնը չի ընդօրինակուած բնաւ, իսկ 18-րդ կանոնը թերի է ընդօրինակուած, ուստի դժուար է որոշել, որ հէնց այդ կանոնով էլ աւարտուելիս է եղել բնագիրը:

Ձեռագրի գրիչը, ընդօրինակելով 18-րդ կանոնի առաջին բառերը (2,5 տող), անցրել է թողել շուրջ 7 տողի չափ տարածութիւն: Կարելի՞ է արդեօք այս փաստից եզրակացնել, որ բնագրի մեզ հասած միակ օրինակը թերի է ընդամէնը 7 տողով, չգիտենք: Այնուամենայնիւ, ելնելով այն փաստից, որ Կոստանդինի «Սահմանք կանոնականքը» պարունակել է ընդամէնը ԻԲ (22) կանոն[3], կարելի է ենթադրել, որ մեր միակ բնագրի թերութիւնը մեծ չէ. թերեւս,

1 Տե՛ս «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 503-509: «Թուղթ Կոստանդեայ կաթողիկոսի Հայոց, զոր գրեաց առ Հէթում թագաւորն ի յաստուածապահ դղեկէս, ի հայրապետական աթոռոյս Հռոմկլաէս, ի մայրաքաղաքն Սիս. պատասխանի թղթին որ ի պապէն Հռոմայ բերաւ առ թագաւորն Հայոց Հէթում, ի ձեռն լիկաթին, որ կոչէր Տիմանչ. ի թուիս Հայոց ի ՈՂԵ (1246), ի ձեռն արդիւնական վարդապետին Վարդանայ, յարմար իրիս»:

2 Գ. Սրուանձտեանց, Թորոս աղբար, Բ, էջ 395

3 Նկատի ունենք Կ. Գանձակեցու «Պատմութեան» Ոսկան Երեւանցու 1858 թ. Մոսկուայի հրատարակութեան

ձեռագրում ինչ-ինչ պատճառներով չի ընդօրինակուել վերջից ընդամէնը մէկ-երկու կանոն:

Նախաբանում կաթողիկոսը մի քանի անգամ, նկատի ունենալով, անշուշտ, 1246 թուականին առաքած «Սահմանք կանոնականքը», ակնարկում է, որ ինքը նման թղթով դիմել է Արեւելեան Հայաստանի բնակչութեանը նաեւ տարիներ առաջ: Նա գրում է. «Եւ յառաջ զօր յղարկեցի առ ձեզ կարճ բանիւ զմեր սուրբ հարցն զխրատ եւ զուսումն, թէ որպէս պարտ է լինել քրիստոնէին» (ձեռ. էջ 211ա), կամ՝ «Մեք զհակառակն հասկացաք, թէ բնաւ չէք լսել աղաչանացս մեր եւ չէք արարեալ. եւ բազմապատկեալ են եւ շատացեալ ամենայն չարեք եւ մեղաց տեսակք, զոր յառաջ սակաւ ունէիք» (էջ 208բ):

Այդ «մեղաց տեսակները» թուարկուած են նախաբանի տարբեր էջերում, այսպէս. «ծուլացեալ էք ի յուսմանէ եւ յաղաւթից եւ ի ժամատեղաց եւ էք իբրեւ զանբան անասունք՝ չգիտելով զաւրէնս քրիստոնէից» (էջ 208ա), չունէք «սահման խոստովանութեան եւ հաղորդութեան եւ եկեղեցազարդութեան եւ քահանայասիրութեան եւ աստուծոյ պտղաբերութիւն» (էջ 208բ):

Եւ ահա, հայերի գործած այս «ծանր մեղքերով» է բացատրում կաթողիկոսը մոնղոլական հրոսակների՝ Հայաստանում գործած անլուր խժդժութիւնները՝ գերութիւն, սպանութիւն, հարկային տաժանակիր լուծ եւ այլն:

Նախաբանի պատմական տեսակէտից ամենաուշագրաւ տողերը հէնց նուիրուած են մոնղոլական արշաւանքներին յաջորդող տարիների քաղաքական աղէտաւոր անցուդարձերին: Այս առումով «Խրատական թուղթը» լրացնում է հայ պատմագիրներին եւ իր ուրոյն տեղը գրաւում մոնղոլական արշաւանքների ու տիրապետութեան առաջին տասնամեակների աղբիւրների շարքում:

Կրկին դիմելով Արեւելեան Հայաստանի հայերին՝ Կոստանդին Բարձրբերդցին իր զարմանքն է յայտնում այն բանի կապակցութեամբ, որ նրանք, չնայած ճաշակած են եղել արդէն Աստուծոյ ցասման գաւազանի դեր ստանձնած մոնղոլների հարուածների սաստկութիւնը, սակայն ճիշտ ճանապարհի չեն եկել եւ շարունակում են մեղսասէր իրենց առօրեան:

Արժէ ծանօթանալ նախաբանի այդ հատուածին: «Եւ այդ եւս առաւել հիացումն եւ մեծ զարմանք,– գրում է կաթողիկոսը,– որ այդպէս մոռացայք զպատուհասն, զոր կրեցիք՝ հարուածեալք եւ գանեալք գաւազանաւ ցասմանն Աստուծոյ, եւ տեսանէք աչաւք ձերովք զերինս եւ զդաշտս ձեր, որ սակաւ մի յառաջ լի էին զիակօք ոսկերաւք սպանելոցն, եւ զայրս եւ զխորաձորս, որ լցեալ էին փախստականաւք, եւ ուտէք եւ ըմպէք զհաց եւ զգինի ի գետնոյդ զոր տեսէք առոգեալ արեամբ սիրելեաց ձերոց, դուք որ ծովացուցէք զաշխարհդ ձեր մեղաւք եւ տեսէք զդա լցեալ արեամբ եւ արտասուաւք: Եւ զի լոյս պատուիրանին տեսան եւ աւրէնք եկեղեցւոյ ոչ ծագէին ի սիրտս ձեր, վասն այնորիկ տեսէք զխափանումն եկեղեցւոյ եւ զկոխումն եւ կողոպուտ սպասուց եւ պաշտելի եւ ահաւոր նշանից եւ աստուածային գրոց: Եւ ոչ սնուցանէիք զտղայս ձեր աստուածապաշտութեամբ եւ ուսմամբ տեսան, առին զնոսա ի տանց եւ ի գրկաց ձերոց, այլ եւ ի ծոցոյ սուրբ եկեղեցւոյ՝ զգնեալս արեամբ Քրիստոսի զառինսն, եւ տարեալ վաճառեցին յազգս եւ յաշխարհս հեռաւորս իբրեւ զանբան անասուն» (էջ 209ա–209բ):

բնագիրը: Ա. Պալճեանի հրատարակութեան մէջ (տե՛ս «Պատմ. կաթողիկէ վարդապետութեան ի Հայս եւ միութեան նորա ընդ հռոմէական եկեղեցւոյ ի Փլորինտեան Սիւնհոդոսի», Վիեննա, 1878, Յաւելուած Է., էջ 267-272) «Սահմանքը» բաժնուած է ԻԴ (24) կանոնների:

Շարունակութեան մէջ Բարձրբերդցին արձանագրում է, որ ողորմածն Աստուած «էարկ ի բարի կամս մեծազաւր ղանին եւ իւր խաղաղասէր զաւրագլխացն եւ զաւրացն, եւ արարին խաղաղութիւն մնացորդացդ ի ձեռն քրիստոսասէր եւ աղքատասէր պարոնին Աւագին» (էջ 209բ): Այս հատուածից պարզ է դառնում, որ մէջբերուած նկարագրութիւնը վերաբերում է 1236 թուականի դէպքերին, որովհետեւ, ինչպէս յայտնի է, Աւագն այդ թուին անձնատուր եղաւ Չարմաղանին (Չուրմաղուն) եւ կրկին վերահաստատուեց իր կալուածքներում՝ հարկատու դառնալով մոնղոլներին եւ պարտաւորուելով մասնակցել նրանց յետագայ արշաւանքներին: Յաջորդ տարին Աւագը մեկնեց մեծ ղանի արքունիքը եւ, սիրով ընդունուելով, ետ ուղարկուեց Հայաստան: Չարմաղան զորավարը հրաման ստացաւ երկրի իշխանութիւնը յանձնել Աւագին եւ նրա աջակցութեամբ հնազանդեցնել միւս իշխաններին (տե՛ս **Յ. Մանանդեան**, Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան, հտ. Գ, Երեւան, 1952, էջ 203–206):

Հայ ժողովուրդն, այսպիսով, ընկաւ կուլտուրական ցածր աստիճանի վրայ կանգնած քոչուոր մոնղոլների ծանր ու զարհուրելի տիրապետութեան տակ: Հայ ֆեոդալները, ընդունելով մոնղոլների գերիշխանութիւնը, սկսեցին գործակցել նրանց՝ «ի նեղելոցն եւ ի պահանջելն վասն իւրեանց շահելոյ» (**Գանձ.**, էջ 349) եւ առաջուայ նման «զրկէին եւ կողոպտէին զաղքատս եւ ի զրկանաց անտի գնէին հանդերձս մեծագինս եւ ագանէին, ուտէին եւ ըմպէին եւ մեծամեծս փքանային» (նոյն տեղում, էջ 303):

Այն բանից յետոյ, երբ մոնղոլներն իրենց սուրը պատեանի մէջ դրին, Բարձրբերդցու կարծիքով՝ Արեւելեան Հայաստանի բնակչութեան համար ստեղծուեցին կեանքի մխիթարական պայմաններ. «Եւ դարձեալ կարկատեցայք եւ արմատ արձակեցիք եւ շինեցայք: Եւ մեք լսեցաք եւ մխիթարեցաք եւ աւրհնեցաք զԱստուած եւ զղանին եւ զիւր հեծելին բարեխաւսութիւնն, որ առ մեզ» (էջ 209բ–210ա): Պէտք է կարծել, որ նա իր տեղեկութիւնները քաղում էր այնպիսի տեղեկատուներից, որոնք հայ ֆեոդալների բարօրութիւնը նոյնացնում էին ժողովրդի բարօրութեան հետ:

Կաթողիկոսն անշուշտ գիտէր, որ մոնղոլներն անտանելի ծանր հարկեր էին բարդել ժողովրդի վրայ. «Հարկդ ծանր է եւ խիստ»,– գրում էր նա: Սակայն այդ եւս բացատրում էր ժողովրդի մեղքերի բազմութեամբ. «եւ այլ վասն մեղաց է, զի կարկտիւ եւ երաշտով եւ խորշակով եւ մարախով պակասութիւն է ի լինել երկրիդ պտղաբերացդ, ուստի զհարկն ձեր վճարէք»,– ասում էր նա խրատական իր թղթում՝ հաւաստիացնելով, որ ժողովրդի վիճակը կբարւոքուի ոչ թէ մոնղոլների դէմ զէնք վերցնելով, այլ պարկեշտ վարքով Աստուծոյ պատուիրաններին հետեւելով եւ մոնղոլական ղանի ու իր զօրքերի կենդանութեան ու յաջողութեան համար աղօթելով:

Ժողովուրդը, սակայն, կաթողիկոսի նման չէր մտածում: Եւ 1249 թուականին Հիւսիսային Հայաստանի շրջաններում ու Վրաստանում մոնղոլական տիրապետութեան դէմ բռնկւում է ապստամբութիւն:

Ժամանակակից հայ եւ վրաց աղբիւրները չեն մանրամասնում այդ ապստամբութեանը ժողովրդական խաւերի մասնակցութեան փաստը: Գրիգոր Ակներցին նոյնիսկ դէպքը պատմում է այնպէս, որ իբր ապստամբութիւն չի էլ եղել, այլ Դաւիթ թագաւորի արքունիքում հաւաքուած իշխանները կերուխումի ժամանակ, երբ բաւական գինովցած էին, մտածել են միայն այն մասին, որ միասնական ուժերով մոնղոլների դէմ դուրս գալու դէպքում իրենք կարող են յաղթանակող լինել. («յորժամ հաշուեցան եւ համար արարին զօրացն Հայոց եւ

Վրաց ասացին գլուխեանցն յաղթող լինել ի վերայ զօրաց տաթարին»): Սակայն պատմիչի հաւաստիացումներով այդ «ոչ թէ ուղորդ խորհեցան կամ խօսեցան, այլ առ կատականս» կամ «ոչ ուղորդ, այլ ընդ խաղս եւ ընդ կատակս»[1]:

Վրաց եւ հայ իշխանները բանտարկւում եւ հազիւ ազատւում են մահուանից՝ մեծ փրկանք վճարելով, իսկ Հիւսիսային Հայաստանի եւ Վրաստանի շրջանները կրկին անգամ ասպարէզ են դառնում մոնղոլական զօրքերի խժդժութիւնների*:

«Եւ ինքեանք (մոնղոլները) յարձակեցան ի կողմանս Վրաց, ի վերայ բազում գաւառաց, որք ապստամբ եւ որք ոչ, եւ զբազումս կոտորեցին եւ զեւս բազմագոյնս գերի վարեցին, զարս եւ զկանայս եւ զմանկունսն գետամոյն առնէին անթիւ ի բազմութենէ. եւ այս գործեցաւ ի ՈՂԸ (1249) թուականին Հայոց»,– գրում է Կիրակոս Գանձակեցին (էջ 305):

«Անթիւս կոտորեցին եւ գերեցին գեօղս եւ ագարակս եւ գործեցին խայտառականս ի կանայս ի Հայս եւ աւելի յաշխարհն Վրաց»,– լրացնում է նրան Վարդան Արեւելցին (էջ 148):

«...Ի գերելոյ եւ յաւարելոյ զաշխարհն ոչ դադարէին»,– ասում է Գրիգոր Ակներցին (էջ 21) եւ այլն:

Շատ արժէքաւոր է նաեւ Կոստանդին կաթողիկոսի «Խրատական թղթի» տուեալը այս ապստամբութեան առնչութեամբ մոնղոլների գործած վայրագութիւնների մասին: Նա գրում է. «Դարձեալ զայրացոյց Աստուած զբարս զաւրացդ, որ առ ձեզ, եւ հանին զուսերս ի պատենից եւ լարեցին զաղեղունս իւրեանց եւ ծայրաքաղ արարին ի բազում տեղիս՝ զմարդ եւ զանասուն եւ զստացուածս, որպէս առ մեզ էհաս համբաւն» (210ա):

Բայց իր հոգեւոր հօտի գործած մեղքերը կաթողիկոսի աչքին այնքան խոշոր են երեւում, որ նրան թւում է, թէ «դեռ ոչ արար ողորմածն Աստուած ըստ մեղաց մերոց եւ ոչ հատոյց զամենայն չարիսն մեր, եւ հաշտեցան ընդ մեզ դարձեալ ի Տեառնէ յաջողեալ զաւրքն ղանին, եւ կայք ի տունս եւ ի վանորայս եւ ի հայրենիս ձեր» (210ա):

Բաւարարուէ՛ք ձեր ունեցածով, աղերսում է Բարձրբերդցին, «մի՛ առնէք զմեզ ամաւթով... եւ մի՛ մատնէք զանձինս ձեր աստէն կենաւք ի մեծամեծ փորձութիւն եւ յետ աստի կենացս անշիջանելի գեհենին եւ աններելի տանջանացն, այլ զգաստացարո՛ւք եւ ի յուշ եւ ի խելս եկէք...» (էջ 211ա):

Այդ ճանապարհով միայն եւ ո՛չ անհնազանդութեամբ ու ապստամբութեամբ, կարծում է Բարձրբերդցին, ժողովուրդը մոնղոլ տիրապետողների բարեացակամութեամբ կարող է նաեւ թեթեւացնել տնտեսական իր ծանր վիճակը:

«Արդ, դուք մեզ լսեցէ՛ք,– գրում է նա,– եւ ի բարին դարձիք եւ ի ձեր պարկեշտ վարքն ըստ պատուիրանին Աստուծոյ, եւ մեք երաշխաւոր եմք, որ ամենայն ճշմարտութեամբ Աստուած առ ձեզ դառնայ՝ գթութեամբ եւ ողորմութեամբ յաւդոց եւ յեղանակաց տարւոյ... եւ

1 **Մաղաքիայի աբեղայ** (Գրիգոր Ակներցի), Պատմութիւն վասն ազգին նետողաց, Ս. Պետերբուրգ, 1870, էջ 20–21: Այդ ապստամբութեան մասին տե՛ս նաեւ «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 148, **Կիրակոս Գանձակեցի**, էջ 303–305, **Մխիթար Այրիվանեցի**, էջ 67, «Մանր ժամանակագրութիւններ», I, էջ 42 (Ստեփանոս եպիսկոպոսի «Տարեգրութիւնը»), «Մանր ժամանակագրութիւններ, II, էջ 140 (Անանիա Սեբաստացու «Ժամանակագրութիւնը»), **Մելիքսէթ-բէկ**, Վրաց աղբիւրներ, էջ 57 եւ այլն:

* [Մանրամասն տե՛ս «Վրաց ժամանակագրութիւն», Երեւան, 1971, էջ 93–101: Խմբ.]

երկիր առատութեամբ տացէ ձեզ զպտուղ իւր, եւ զանիծ կամքն արձականայ եւ թեթեւացուցանէ զմեղս, զի սիրտ թագաւորաց ի ձեռին Աստուծոյ են, եւ նա է տուեալ զամենայն աշխարհս զանիծ եւ այլ է տալոց նմա, չպակասէ ոչինչ զձեր մալն թեթեւացնելով: Ապա դուք զառաջին աղաւթք նմա եւ իւր զաւրացն արարէք, զի այն է մեր աւրէնքն, որ զոր Աստուած մեզ տէր եւ թագաւոր տացէ՝ յառաջին աղաւթքն մեր զնմա կենդանութիւնն եւ զաջողումն խնդրեմք, եւ այսաւր զնա է տուեալ եւ թող հանապազ զնա տա» (էջ 210բ):

Կոստանդին Բարձրբերդցու այս խրատները թելադրուած չէին միայն քրիստոնէական բարեպաշտութեան եւ Աստուծոյ կողմից առաքուած տէրերին հնազանդօրէն ծառայելու սկզբունքով: Չպէտք է մոռանալ, որ պատմութիւնը բանկուելուց մի տարի առաջ՝ 1248 թուականին, Հեթում թագաւորն իր եղբայր Սմբատ Սպարապետին ուղարկել էր մոնղոլական մեծ ղանի՝ Գույուկի մօտ՝ յայտնելու համար իր հպատակութիւնը՝ յոյս ունենալով, որ մոնղոլների օգնութեամբ Կիլիկիան կկարողանայ յաջողութեամբ դիմագրել եգիպտական սուլթանութեանը: Եւ բնականաբար, կիլիկեան արքունիքը եւ նրա քաղաքական շահերի ջատագով հայ կաթողիկոսութիւնը մոնղոլների հետ շահաւէտ դաշինք կնքելու մտադրութեամբ ամէն կերպ պէտք է ձգտէին շահել նրանց սիրտը հայերի նկատմամբ, ցոյց տալ, որ հայ ժողովուրդն ամէնուրեք՝ ե՛ւ բուն երկրում, ե՛ւ Կիլիկիայում, մոնղոլների հնազանդ հպատակներն են ու նրանց տիրակալութեան ջերմ կողմնակիցները:

Յայտնի է միաժամանակ, որ, սկսած 1245 թուականից, եւրոպական մի շարք թագակալներ Հռոմի պապի գլխաւորութեամբ առաքելութիւններ էին յղում մոնղոլական ղաների մօտ՝ փայփայելով նրանց քրիստոնեայ դարձնելու եւ նրանց զինական անպարտելի ուժը Եգիպտոսի, Պաղեստինի ու Սիրիայի դէմ ծրագրուող խաչակրաց արշաւանքին ի նպաստ օգտագործելու անիրականանալի յոյսեր[1]: Կիլիկեան հայկական թագաւորութիւնը, իր սեփական քաղաքական ու տնտեսական շահերն ունենալով, շահագրգռուած էր այդ ծրագրերի իրականացմամբ եւ իր հերթին ջանքեր էր գործադրում այդ ուղղութեամբ: Արեւելեան Հայաստանի բնակչութեան անհնազանդութիւնը մոնղոլներին՝ հասկանալի պատճառներով կարող էր վնաս բերել Կիլիկիայի եւ նրա եւրոպական դաշնակիցների քաղաքական ու տնտեսական շահերին:

Այս պատմական հանգամանքներն ի նկատի ունենալով միայն հնարաւոր է լինում բացայայտել Կոստանդին կաթողիկոսի խրատների քաղաքական դրդապատճառները:

Բայց հայոց կաթողիկոսը, որպէս եկեղեցու գլուխ, ունէր նաեւ իր նկատառումները:

Հայ ժողովրդի կրած բոլոր տառապանքները բացատրելով ժողովրդի իսկ «գործած» աններելի յանցանքներով՝ քրիստոնէական պատուիրանների խախտումով, կաթողիկոսը ձգտում էր ամրապնդել ժողովրդի հաւատը, բարձրացնել եկեղեցու հեղինակութիւնը, վերականգնել քրիստոնէական բարոյականութեան ու աստուածավախութեան խախտուած սկզբունքները, մի խօսքով՝ «դարձի բերել» Աստուծոյ ճանապարհից շեղուած իր հօտին:

Հէնց այս նպատակին են ուղղուած «Խրատական թղթի» կանոնները, որոնք պատմական, ազգագրական ու կենցաղագրական զգալի հետաքրքրութիւններ են ներկայացնում:

Կանոններից մի քանիսը 1246 թուականին Հայաստան առաքուած «Սահմանք կանոնականքից» են քաղուած ու վերաշարադրուած փոքր ինչ համառօտելով: Դրանք են Ա, Է,

[1] Տե՛ս Յով. Յակոբեան, Ուղեգրութիւններ, հտ. Ա, Երեւան, 1932, էջ 1-3:

ԺԱ, ԺԳ, ԺԷ կանոնները, որոնք նոյն հերթականութեամբ համապատասխանում են «Սահմանք կանոնականքի» Է, ԺԵ, ԺԹ, ԺԴ, ԺԸ կանոններին:

Այդ կանոնների նմանութիւններն ու տարբերութիւնները պարզ ցոյց տալու մտադրութեամբ ստորեւ զուգահեռաբար մէջբերում ենք դրանք ամբողջութեամբ կամ հատուածաբար:

Սահմանք կանոնականք» (**Կ. Գանձակեցի**, Պատմութիւն, էջ 288-294)	«Խրատական թուղթ» (Լենինգրադի Հանր. գրադարան, ձեռագր. բաժին, Հայերէն ձեռ. ֆոնդ, Նոր շարք, N 37, էջ 211բ-214բ)
Է. Զպսակն ընտրութեամբ արասցեն՝ վեց ծննդովք հեռացեալ յազգակցութենէ արեան. փեսայն մի՛ պակաս քան զչորեքտասան ամն եւ հարսն քան զերկոտասան (էջ 289-290):	1) Եւ առաջին այս եղիցի ուսումն, որ ամուսնաւորքն հինգ ազգաւ հեռի լինին յարեան ազգակցութենէ եւ ի վեցերորդին պսակին, քան զԺԳ տարին պակաս չլինի հարսն եւ փեսայն՝ քան զԺԴ... (էջ 211բ):
ԺԵ. ...եւ յամենայն տեղիս՝ ի մեծ եւ ի փոքր յիշոց աւագ դնեն՝ ի գաւառս, ի քաղաք, ի գիւղս եւ յագարակս, եւ զանօրէն յիշոցասացսն, զբարկութիւնն Աստուծոյ շարժողսն եւ զաններելի անօրէնս, որ անարգեն զհաւատսն, զստեղծող, զկնունս, զհրեշտակ, զքահանայ, զբերան, զերես, զգերեզման եւ զայլ այսպիսիս զնոր բուսեալ չարիսդ՝ զայնպիսեացն զլեզուսն հատցեն եւ կամ ծակեսցեն եւ լար ի ներս ածցեն եւ նախատանօք ի շուրջ ածցեն օր մի, եւ ըստ գոյին տուգանս առցեն եւ յաղքատս տայցեն (էջ 292):	2) Է. Յիշոցաւագ դնել յամենայն տեղիս ի մեծ եւ ի փոքր՝ անողորմ տուգանով եւ խրատով, եւ առաւել որ հաւատ կամ բերան կամ երես անարգէ կամ քահանայ կամ գերեզման՝ զլեզուն ծակեն եւ լար անցուցանեն եւ ի շուրջ ածեն ծեծելով եւ տուգանք առնուն եւ ընդ աղքատացն ի մալն տան (էջ 213ա):
«ԺԹ. Ժողովրդականքն յօժարութեամբ եւ աղաչանօք տացեն զհասս քահանայիցն յամենայն արմտեաց պտուղս եւ զկարգեալ բաժին մատաղին եւ պսակին ընծայիւք եւ թաղմանն հանդերձ եւ ժամու դրամ՝ ոչ գին պատարագին, այլ երիցուն հանդերձի եւ կերակրոյն, որ աղօթից եւ պատարագի պարապի յեկեղեցին (էջ 292-293):	3) ԺԱ. ...Պսակին եւ թաղմանն եւ մատաղին զինչ աւրէնքն է, տացեն ժողովուրդքն երիցուն, եւ խաչահամբոյր եւ յամենայն արդեանց պտուղ՝ բաժին Աստուծոյ, որ այլ ամենայն ստացուածքն աւրհնութեամբ լցցին... (էջ 213բ):
ԺԴ. Առաւել ջան տարցեն եպիսկոպոսք եւ քորեպիսկոպոսք զպոռնիկսն եւ զշնացողսն, զհմայս եւ զամենայն յանցաւորսն՝ գեհենին երկիւղիւ ի դարձ ածել: Իսկ զանդարձն մարմնաւոր պատուհասիւ եւ հոգեւորաւ խրատել եւ տուգանել... (էջ 291):	4) ԺԳ. Կախարդ եւ գող եւ պոռնիկ եւ բոզ եւ յիշոցասաց կա՛մ դառնան ի չարէն, կա՛մ հալածին անողորմ, զի մի՛ յանմեղացն վերայ ածցեն զբարկութիւնն Աստուծոյ (էջ 214ա):

ԺԼ. Քահանայն ի տարւոջն յեկեղեցին ժողովեսցէ զարսն առանձինն եւ զկանայսն առանձինն եւ որիշ զկուսան աղջկունսն եւ որիշ զտղայսն զմանրէրսն եւ ըստ իւրաքանչիւր պատշաճի խրատեսցէ աղաչանօք եւ սաստիւ, եւ իմասցի իւրաքանչիւրոցն զվարքն, եւ գիտեսցէ Հանապազ. եւ թէ ինքն չէ բաւական՝ ի ձեռն այլ կատարելոյ արասցէ, որպէս սաէ սուրբն Աթանաս յիւր կանոնքն (էջ 292):

5) ԺԵ. Գ անգամ ժողովէ ի տարին երէցն յեկեղեցին որիշ որիշ զարս եւ զկանայս եւ զկուսան աղջկունս եւ զկուսան կորճերն, եւ Հարմար Հասակացն եւ վարուցն խրատ տացէ, զի ամէն Հասակի եւ վարուց եւ բարուց խրատ ուրիշ է (214ա):

Նման կանոնների այս Համադրութիւնը ցոյց է տալիս, որ «Խրատական թուղթը» գրուած է աւելի դիւրըմբռնելի, ժողովրդական-խօսակցական լեզուով, եւ բացի այդ, կանոններն այստեղ փոքր-ինչ Համառօտուած են եւ դարձուած աւելի պարզ ու նպատակայայց:

Իմաստի տեսակէտից էական տարբերութիւններ «ՍաՀմանք կանոնականքի» եւ «Խրատական թղթի» Համադրուած կանոնների միջեւ չկան՝ ի բաց առեալ 2-րդ օրինակի վերջաւորութեան: Ինչպէս տեսանք, «ՍաՀմանքի» 15-րդ կանոնով առաջարկւում է յիշոցատուներին տուգանել եւ ստացուած դրամը բաժանել աղքատներին («եւ ըստ գոյին տուգանս առցեն եւ յաղքատս տայցեն»), իսկ «Խրատական թղթի» Համապատասխան 7-րդ կանոնով սաՀմանուած է գանձուող տուգանքը տալ մոնղոլներին՝ ի դիմաց աղքատների եկամտաՀարկիմալի («եւ տուգանք առնուն եւ ընդ աղքատացն ի մալն տան»): Ուշագրաւ այս տարբերութիւնն ինքնին վկայում է մոնղոլների կողմից գանձուող Հիմնական Հարկի ծանրութեան մասին: 1251 թուականին մալը գանձւում էր այնպիսի բարձր չափերով, ու վճարել անկարող չքաւորները ենթարկւում էին այնպիսի պատիժների, որ նրանց փոխարէն մալը վճարելն ու նրանց մոնղոլական Հարկահանների ձեռքից ազատելն ինքնին Համարւում էր բարեգործութիւն, ճիշտ այնպէս, ինչպէս մի քանի տարի առաջ ողորմութիւն բաշխելը:

«Խրատական թղթի» միւս 13 կանոնները (Բ, Դ, Ե, Զ, Թ, Ժ, ԺԲ, ԺԴ, ԺԶ, ԺԷ, ԺԼ) նուիրուած են այնպիսի Հարցերի, որոնք «ՍաՀմանք կանոնականքում» կա՛մ բնաւ չեն շօշափւել, կա՛մ յատուկ կանոնի նիւթ չեն դարձել: Դրանք են. խրատ՝ նորածին մանկանց սնուցանելու եւ ստիճանաբար քրիստոնէական Հաւատքի սկզբունքներն ու աղօթքները նրանց ուսուցանելու մասին (Բ), կնունքի (Դ), խոստովանութեան (Ե), Հաղորդութեան (Զ) եւ պաՀքի մասին (Ը), գիւթութեան, երազաՀանութեան ու գուշակութիւնների, նրանցից Հեռու կենալու անՀրաժեշտութեան մասին, «զի այսպիսիքս աւտար են ի կրաւնից քրիստոնէից» (Ժ, ԺԱ): Մեռածների թաղման ժամանակ մազ կտրելու, երես ու ձեռք կեղեքելու, լալական վարձելու եւ նման սովորութիւնները՝ որպէս «Հեթանոսաց եւ ոչ քրիստոնէից» սովորութիւններ մերժելու մասին (ԺԲ): Շաբաթ եւ կիրակի օրերը եկեղեցի գնալու անՀրաժեշտութեան եւ այնտեղ «լռութեամբ եւ երկիւղիւ» աղօթելու (ԺԴ) եւ այն մասին, որ կարողներն եւ ունեւորները ակարներին չպէտք է բռնադատեն, «զի մի՛ տրտմեցուսցեն զԱրարիչն նոցա» եւ այլն, (ԺԶ) միմեանց զրկելուց, խաբելուց եւ նման ախտերից զերծ մնալու անՀրաժեշտութեան (ԺԷ), եւ վերջապէս՝ քաՀանաների ընտրութեան մասին (ԺԸ, թերի):

Թուարկուած կանոններից պատմական ու ազգագրական առումով յատուկ Հետաքրքրութիւն են ներկայացնում Թ, Ժ, ԺԲ եւ ԺԷ կանոնները, որոնք արժանի են աւելի մանրամասն ծանօթացման:

Թ եւ Ժ կանոնները Հնարաւորութիւն են տալիս ծանօթանալ Հայ ժողովրդական Հաւատալիքների եւ սնաՀաւատութիւնների մի բնագաւառի Հետ, որը բաւարար չափով չի լուսաբանւում միջնադարեան յայտնի սկզբնաղբիւրների միջոցով: Ստորեւ մէջբերում ենք այդ կանոնների բնագրերը.

«Թ. Գարի եւ ալիւր եւ աւազ եւ ուլուն եւ ջուր մի՛ դիւթեսցեն. եւ խորութիւն Հաւատոց (ուղղելի է՝ Հաւոց) թռչման եւ կռչման եւ մարմնոյ խաղալոյ եւ երազոյ եւ ձայնի կրակոյ եւ դրան եւ սողնոյ ինչ երեւելոյ ի տանն, զի այսպիսիքս աւտար են ի կրաւնից քրիստոնէից, եւ մի՛ ոք իշխեսցէ առնել, զի մեծ մեղք են» (213բ):

Այսպիսով, պարզւում է, որ Հայ ժողովրդի մէջ տարածուած են եղել գուշակման ու երազների մեկնութեան զանազան եղանակներ: Գուշակութիւններ են արել գարու, ալիւրի, աւազի Հատիկների, ինչպէս նաեւ ուլունքների միջոցով՝ ցրելով դրանք եւ իմաստաւորելով Հատիկների պատաՀական դասաւորութիւնը: Հմայութիւններ են արել նաեւ թռչունների թռիչքի ու ձայների միջոցով, մարմնախաղութեամբ, կրակի եւ դրան արձակած ձայներից, որեւէ սողունի երեւալուց եւ այլն:

Ժ կանոնում ասուած է. «Ի քաջախաւս եւ յերազաՀան մի ոք երթիցէ եւ լեկրոտի մատն (իմա՝ մաւտն, մօտն) ազի մի՛ իշխեսցեն ածել եւ մի՛ ի բանից նոցա խաբեսցին եւ մի՛ Հաւատասցին բնաւ» (էջ 213բ):

ՆՀԲ-ի Հեղինակներին յայտնի են «քաջախօս» բառի Հետեւեալ իմաստները. «քաջաբան, քաջալեզու, Համարձակախօս, քաղցրախօս». դրանցից եւ ոչ մէկը, սակայն, չի յարմարւում կանոնի բովանդակութեանը: Ուստի պէտք է ենթադրել, որ «քաջախօս» բառը Հնում ունեցել է նաեւ «ոգիների, քաջքերի կամ դեւերի Հետ խօսող, կախարդ, պատգամախօս» նշանակութիւնը՝ ելնելով այն բանից, որ «քաջ» կամ «քաջք» բառն իրօք ունի «ոգի, ցնորք, ոգի, այս, դեւ» նշանակութիւնները (Հմմտ. նաեւ «երազախօս» եւ այլն):

«Լեկրոտ» բառը ցարդ յայտնի էր միայն Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւնից»: «Վասն Դաւթի մոլորեցուցչի» գլխում նա պատմում է, որ «Եւ լեկրոտք (Մոսկուայի եւ Թիֆլիզի Հրատարակութեան մէջ սխալմամբ՝ լեկրորդք), որ երթային առ նա, ասէր, թէ՝ խաղացէք առաջի իմ եւ պարեցէք, եւ նոքա առնէին այս յօժարութեամբ, քանզի այս ազգ դիւաց ախորժեն զխաղ եւ զպար» (**Կ. Գանձակեցի**, Վենետիկ, էջ 183, Թիֆլիս, էջ 309): Հ. Աճառեանը, ձեռքի տակ ունենալով միակ այս վկայութիւնը իր «Արմատական բառարանում» (III, էջ 187), «լեկրոտ» բառին տուել է այսպիսի բացատրութիւն՝ «մի տեսակ դիւաՀար, որ միշտ ուզում է պարել»:

«Խրատական թղթի» քննարկուող կանոնը Հնարաւորութիւն է տալիս ճշտել այս բառի իմաստը. ըստ այդմ՝ «լեկրոտ» էին կոչւում այն գուշակները, որոնք երաժշտութեան տակ յափշտակութեամբ պարում էին մինչեւ ուշաթափութեան աստիճան եւ ապա ինքնամոռացութեան մէջ սկսում պատգամախօսել: «Լեկրոտ» բառին այսպիսի իմաստ վերագրելուց յետոյ միայն Հասկանալի կդառնայ կանոնի վերջաւորութիւնը, որտեղ ասուած է. «մի՛ ի բանից նոցա խաբեսցին եւ մի՛ Հաւատասցեն բնաւ»*:

ԺԲ կանոնով կաթողիկոսը պատուիրում է. «Ի վերայ մեռելոյ մազ մի՛ կտրեսցեն եւ սեաւ մի՛ արասցեն եւ զերես մի՛ կեղեքեսցեն եւ զձեռս եւ լալական մի՛ վարձեսցեն եւ խաւարարգել մի՛ լիցին, զի մի՛ զինքեանս եւ զմեռեալս վնասցեն եւ ամաւթով լինին յԱստուծոյ» (էջ 214ա):

Հեթանոսական ժամանակներից պաՀպանուած թաղման ծէսերի ու արարողութիւնների մասին ուշագրաւ վկայութիւններ են պաՀպանուած Հայկական մի շարք աղբիւրներում[1]:

---

1 Հմմտ. Փաւստոս, IV, գլ. ԺԵ, «Կանոնգիրք Հայոց», Գր. Լուսաւորչի կանոն ԺԷ, Աթանասի ԼԶ, Սահակի ԼԳ, Շահապիւանի ԺԱ եւ այլն կանոնները (տե՛ս ձեռ. N 6409, էջ 48բ, 54բ, 58ա, 70բ, 79բ եւ այլն):

Մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում «խաւարարգել» լինելու սովորոյթը, որն արտայայտութիւն է գտել նաեւ «Սասնայ ծռեր» ժողովրդական էպոսի լաւագոյն պատումներից մեկում (շատախցի Մանուշակ Զադոյեանի պատումը): Մհերի կինն ամուսնու սպանութիւնից յետոյ ուխտում է. «Ջուր մաչ եմ օջխին եմ տըղեն չիլնի, հօր հեֆ առնի, ես արեւալուս չկամ», եւ իրօք «արեւալուս» չի դուրս գալիս, «խաւարարգել» է լինում, մինչեւ իր Դաւիթ որդին կոտորում է թշնամիներին ու բերում է իր հօր սպանող Վրհարի գլուխը. այնժամ միայն «անու մեր նոր հանոր տնեն էլաւ տուս» (Սասմա ծռեր, հտ. Ա, Երեւան, 1936, էջ 707-720):

«Խրատական Թղթի» կանոնների շարքում պատմական ու ազգագրական իր նշանակութեամբ յատուկ տեղ է բռնում նախավերջին կանոնը: Նախ ծանօթանանք նրա բնագրին.

«Ի գրկանաց եւ ի խաբելոյ պատրաստ կայցեն քրիստոնեայքն եւ ի նենգելոյ զիրեարս՝ արք եւ կանայք, հաղկիցք եւ խապկիցք եւ զինուորակիցք եւ արուեստակիցք, գնաւղք եւ վաճառաւղք, զի որ մարմնական իրաւք զրկէ բռնութեամբ կամ խաբելով, զինքն հոգւով զրկէ եւ յաւիտենական կենաւքն» (էջ 214բ):

Կանոնի իմաստը մեկնութեան կարօտ չէ: Կաթողիկոսը զգուշացնում է հոգեւոր իր հօտին, որ հանդերձեալ կեանքում կպատժուեն բոլոր անձինք՝ լինեն նրանք ամուսիններ, զինուորականներ, գնողներ, արուեստակիցներ (համքարներ), վաճառողներ կամ գնողներ, «հաղկիցք ու խապկիցք», ովքեր փոխադարձաբար կխաբեն ու կնենգեն միմեանց:

Բացատրութեան կարօտ են միայն կանոնի «հաղկիցք եւ խապկիցք» տերմինները:

Ս. Ամատունու «Հայոց բառ ու բանում» կայ Լոռու բարբառից վերցուած «հախկ» բառը՝ «ընկերակից գութանաւորների ամէն մէկի վարելիք հողը» նշանակութեամբ (էջ 383): Ուստի դժուար չէ եզրակացնել, որ Հայաստանի որոշ շրջաններում «հաղկից» էին կոչւում հարակաշները, այսինքն՝ այն գիւղացիները, որոնք, չունենալով համապատասխան քանակութեամբ քաշող անասուն ու գիւղատնտեսական գործիքներ, միաւորւում էին, կազմում ընկերակիցների խմբեր եւ միասնական ուժերով ու միջոցներով վար ու ցանք անում:

Ոչ պակաս հետաքրքրութիւն է ներկայացնում «խապկիցք» տերմինը: Գիւղական այն ընտանիքները, որոնք փոքր քանակութեամբ կաթնատու անասուններ ունէին, օրուայ ընթացքում իրենց ստացած չնչին կաթով անկարող էին իւղ ու պանիր պատրաստել: Դարերի գործունէութեան փորձով ժողովուրդը գտել էր այդ դրութիւնից դուրս գալու եղանակը: Նոյն վիճակի մէջ գտնուող գիւղական մի քանի ընտանիքներ փոխադարձ համաձայնութեամբ պայմանաւորւում էին օրուայ ընթացքում ստացած իրենց կաթը որոշեալ չափ-ամանով, հերթականութեամբ տալ ընտանիքներից մէկին: Ամանը, որով փոխ էին տալիս կաթը, կոչւում էր ղաբ կամ խաբ, խապ (տաճկ. gab - աման բառից), որից եւ ընկերակցութեան անդամները՝ խապկիցք: Հայ ժողովրդական առակներից մէկը նուիրուած է հէնց նենգող «խապկիցներին»: Ընդամէնը տասը այծ ունեցող այրի մի կին, լինելով խապկից, «յամէն օր շերեփ մի ջուր լնոյր ի կաթն եւ ի խափ (տարբերակ՝ խապ, խաբ) տայր»: Իր այծարած որդու «է՞ր աննես դայդ վնասդ» հարցին մայրը տալիս է այսպիսի պատասխան. «Որդի, մեր կաթնս քիչ է, այնոր համար առնեմ, թէ քիչ մի աւելի լինի մեր կաթն, որ մեզ ձմանս թացան լինի» (Ն. Մառ, Ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Բ, Ս. Պետերբուրգ, 1894, էջ 238-239):

Վերոյիշեալով, անշուշտ, չի սպառւում Կոստանդին կաթողիկոսի «Խրատական Թղթի» պատմական եւ ազգագրական նշանակութիւնը: Այն գրուած էր Արեւելեան Հայաստանի բոլոր բնակավայրերում ընթերցուելու համար, ուստի Թղթի լեզուն չէր կարող ժողովրդական լայն զանգուածներին անհասկանալի գրաբարը լինել: Լեզուաբաններին թողնելով Թղթի լեզուի մասնագիտական քննութիւնը՝ նշենք միայն, որ միջնադարեան աշխարհաբարի տարրերը գերակշռում են այնտեղ: Կարելի է մէջբերել բազմաթիւ նախադասութիւններ ու

դարձուածքներ, որոնք ուղղակի գրուած են միջնադարեան աշխարհաբարով: Օրինակ. «Արդ, պատե՞հ է, որ այսպիսի ազգն եւ անբիծ եւ անարատ հաւատն եւ ամենեւին մաքուր ի հերձուածոյ այնպէս ծուլացեալ լինի եւ տգիտացեալ, որ չգիտենայ զիւր պատիւն եւ չունենայ սահման խոստովանութեան եւ հաղորդութեան եւ եկեղեցպաշտութեան եւ քահանայասիրութեան եւ Աստուծոյ պտղաբերութիւն, զոր աստուածապահ թագաւորն մեր եւ կաթողիկոսն եւ թագաւորութիւն՝ ամենայն եպիսկոպոսաւք եւ մեծամեծաւք յառնում են եւ այլ մերձակայ քրիստոնեայքս, ուր մեր եպիսկոպոսներս ի հասանել են՝ ունին Աստուծոյ շնորհաւքն, եւ դուք, ուր այն ամենայն աստուածազարդ նշանքն եղեն, չունիք» (էջ 208բ-209ա) եւ այլն:

«Խրատական Թղթի» բնագիրը հրատարակում ենք Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անուան հանրային գրադարանի հայերէն ձեռագրերի Նոր շարքի N 37 ձեռագրի համապատասխան էջերի լուսանկարների հիման վրայ՝ օգտագործելով նաեւ Հ. Ջանփոլադեանի կատարած ընդօրինակութիւնը:



«Խրատական Թղթի» բնագրի առաջին էջը:

[ԽՐԱՏԱԿԱՆ ԹՈՒՂԹ ԿՈՍՏԱՆԴԵԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ]

/208ա/ Խրատական թուղթ ի ձեռն մեր վարդապետին Վարդանայ, որպէս թէ ես եմ եկեալ եւ ձեզ առաջի զերեսս ի գետինն եդեալ աղաչեմ արտասուաւք զմի մի իւրաքանչիւր ի ձէնջ եւ զանձն իմ փոխան ասեմ, որ զայդ չափաւոր եւ դիւրագործ աւրէնքդ առնէք յամենայն կարողութենէ ջանացեալ, վասն ձեր հոգւոյ եւ մարմնոյ աւգտի եւ շահու եւ փրկանաց ի պատուհասէ փորձանաց, եւ մեզ՝ ի պարծանս եւ յանդատապարտութիւն, որ ընդ ձեր համարս պարտիմք տալ Աստուծոյ: Եւ արդ, ի յեւթնհարիւր թուիս մերոյ տումարիս եւ յԼ (30) հայրապետութեանս մերոյ, յորում ակն ունէաք ողորմութիւն ինչ գտանել յԱստուծոյ եւ բարի համբաւ լսել զձէնջ, մեք զհակառակն հասկացաք, թէ բնաւ չէք լսել աղաչանացս մեր եւ չէք արարեալ. եւ բազմապատկեալ են եւ չատացեալ ամենայն չարիք եւ մեղաց տեսակք, զոր յառաջ սակաւ ունէիք: Այլ ծուլացեալ էք ի յուսմանէ եւ յաղաւթից եւ ի ժամատեղաց եւ էք իբրեւ զանբան անասունք՝ չգիտելով զաւրէնս քրիստոնէից, զպատիւ հաւատոյս Հայաստանեայց զարեգակնափայլ եւ զճառագայթաւէտ կրաւնս սուրբ վաստակաւորին Գրիգորի: Եւ զայս ցեղ մեծ եւ զպարծելի եւ զնշանաւոր ազգս Հայոց, զոր Քրիստոս Աստուած /208բ/ յառաջ քան զխաչիլն ողջունեաց եւ աւրհնութեան թուղթ գրեաց, եւ Ե (5) առաքեալ ի սուրբ աշակերտաց Իւրոց ի Հայք առաքեաց եւ ապա զսուրբ տիկնայսն՝ զսուրբ Հռիփսիմեանքն յԱրեւմտից յղարկեաց՝ սուրբ Աստուածածնին միջնորդիւ խաւսեցեալ, եւ Վիրապին սքանչելեաւքն դարձոյց զՀայք առ Ինքն: Եւ Ինքն իսկ՝ Թագաւորն փառաց Քրիստոս իջեալ ի բարձանց եւ ոսկի ուռամբ ջարդէր զգլուխ բանսարկուին եւ բացեալ զանդունդս արկանէր ի տարտարոսն զայն, որ չկամէր թողուլ զՀայք ի ձեռաց: Եւ հրեղէն Աջովն իւրով ի վէմս քանդակեալ տար գիր Հայոց՝ մեծարելով քան զազգս ամենայն: Եւ այսպէս Ինքնածագ է հիմնարկու հաւատոյս Հայաստանեայց եւ ոչ մարդ ոք:

Արդ, պատե՞հ է, որ այսպիսի ազգն եւ անբիծ եւ անարատ հաւատն եւ ամենեւին մաքուր ի հերձուածոյ այնպէս ծուլացեալ լինի եւ ագահացեալ, որ չգիտենա զկիր պատիւն եւ չունենա սահման խոստովանութեան եւ հաղորդութեան եւ եկեղեցազարդութեան եւ քահանայասիրութեան, եւ Աստուծոյ պտղաբերութիւն, զոր աստուածապահ թագաւորն մեր եւ կաթուղիկոսն եւ թագաւորութիւն՝ ամենայն եպիսկոպոսաւք եւ մեծամեծաւք յառ/209ա/նում են, եւ այլ մերձակայ քրիստոնեայքս, ուր մեր եպիսկոպոսերս ի հասանել են՝ ունին Աստուծոյ շնորհաւքն, եւ դուք, ուր այն ամենայն աստուածագործ նշանքն եղեն, չունիք: Եւ այդ ետս առաւել հիացումն եւ մեծ զարմանք, որ այդպէս մոռացայք զպատուհասն, զոր կրեցիք՝ հարուածեալք եւ զանեալք զաւազանաւ ցասմանն Աստուծոյ. եւ տեսանէք աչաւք ձերովք զերկիրս եւ զդաշտս ձեր, որ սակաւ մի յառաջ լի էին դիակոյտ ոսկերաւք սպանելոցն, եւ զայրս եւ զխորաձորս, որ լցեալ էին փախստականաւք, եւ ուտէք եւ ըմպէք զհաց եւ զգինի ի գետնոյդ, զոր տեսէք առողեալ արեամբ սիրելեաց ձերոց: Դուք, որ ծովացուցէք զաշխարհդ ձեր մեղաւք եւ տեսէք զդա լցեալ արեամբ եւ արտասուաւք, եւ զի լոյս պատուիրանին Տեառն եւ աւրէնք եկեղեցւոյ ոչ ծագէին ի սիրտս ձեր՝ վասն այնորիկ տեսէք զխաւարումն եկեղեցւոյ եւ զկոխումն եւ կողոպուտ սպասուց եւ պաշտելի եւ ահաւոր նշանից եւ աստուածային գրոց: Եւ ոչ անուցանէիք զողայս ձեր աստուածապաշտութեամբ եւ ուսմամբ Տեառն՝ առին զնոսա ի տանց եւ ի գրկաց ձերոց, այլ եւ ի ծոցոյ սուրբ եկեղեցւոյ՝ զգնեալս արեամբն Քրիստոսի զգառինսն, եւ տա/209բ/րեալ վաճառեցին յազգս եւ յաշխարհս հեռաւորս իբրեւ զանբան անասուն: Եւ չատ ետս այն էին, որ ոչ գիտէին զչար եւ զբարի եւ ոչ զայն, եթէ ո՞ւմ որդիք իցեն եւ կամ յորմէ՞ ազգէ եւ աշխարհէ: Եւ որք գիտենն եւ յիշեն՝ ետս ողորմելի, զի կարաւտին ծնաւղաց եւ ազգայնոց, տաւնից եւ բարեկենդանաց եւ աւրինաց քրիստոնէութեան, եկեղեցւոյ եւ հաղորդութեան. եւ ի խորոց սրտէ հառաչեն զառնագոյն հեծեծանաւք եւ ոչ հասանեն վասն իմ մեղացն առաւել քան զձեր, որ վարդապետութեամբ այսպիսի աւուրց զիպեցայ եւ ժամանակի զառնագունի՝ տեսանել եւ լսել զկսկիծ եւ զաղէտ իմոցդ աղեաց եւ անդամոց:

Եւ ի վերայ այսորիկ, զի զաւրացաւ ողորմութիւնն Աստուծոյ մեծին ի վերայ մեր, եւ էարկ ի բարի կամս մեծազաւր զանին եւ իւր խաղաղասէր զաւրագլխացն եւ զաւրացն, եւ արարին խաղաղութիւն մնացորդացդ ի ձեռն քրիստոսասէր եւ աղքատասէր պարոնին Աւագին, որ զիւր կեանքն ձեզ փոխան եդետ: Եւ դարձեալ կարկատեցայք եւ արմատ արձակեցիք եւ շինեցայք: Եւ մեք լսեցաք եւ մխիթարեցաք եւ աւրհնեցաք զԱստուած եւ զզանին եւ զիւր /210ա/ հեծելին բարեմտութիւնն որ առ մեզ:

Եւ վասն զի որպէս արժանն էր չեթող ամենայն ոք զիւր ճանապարհն չար եւ մեղաց սովորութիւնն, դարձեալ զայրացոյց Աստուած զբարս զաւրացդ որ առ ձեզ, եւ հանին զսուսերս ի պատենից եւ լարեցին զաղեղունս իւրեանց, եւ ծայրաքաղ արարին ի բազում տեղիս զմարդ եւ զանասուն եւ զստացուածս, որպէս առ մեզ էհաս համբաւն: Եւ ընդ կապանս եւ եռանդն մահու անցուցին եկիւղիւ զիշխանս երկրիդ, եւ մեծաւ հայրենի եւ գթասիրտ պարոն Աւագն յետ այնորիկ վախճանեցաւ, եւ շիջաւ ճրագն վառ: Բայց դեռ ոչ արար ողորմածն Աստուած ըստ մեղաց մերոց եւ ոչ հատոյց զամենայն չարիսն մեր, եւ հաշտեցան ընդ մեզ դարձեալ ի Տեառնէ յաջողեալ զաւրքն զանին, եւ կայք ի տունս ի եւ վանորայս եւ ի հայրենիս ձեր, եւ եկեղեցիք են ի ձեզ տեղիք աղաւթից եւ պատարագաց ի յիշատակս մեռելոց եւ ի սնունդ եւ ի փրկութիւն կենդանեացդ: Ի վերայ այդորիկ աւրհնութիւն եւ գոհութիւն, պատիւ եւ փառք անճառ սիրոյն եւ գթութեանցն Քրիստոսի Աստուծոյ մերոյ յաւիտեանս յաւիտենից:

Եւ թէ հարկդ ծանր է եւ խիստ՝ եւ այլ վասն մեղաց է, զի կարկտիւ եւ երաշտով եւ խորշակով եւ մարախով պակասութիւն/210բ/է ի լինել երկրիդ պտղաբերացդ, ուստի զհարկն ձեր վճարէք: Արդ, դուք մեզ լսեցէք եւ ի բարին դարձիք եւ ի ձեր պարկեշտ վարքն ըստ պատուիրանին Աստուծոյ՝ եւ մեք երաշխաւոր եմք, որ ամենայն ճշմարտութեամբ Աստուած առ ձեզ դառնայ գթութեամբ եւ ողորմութեամբ յաւրոց եւ յեղանակաց տարւոյ, բարեխառնութեամբ երկինք երկնաւորաւքն տացէ զքաղցրութիւն իւր ի վերա ձեր, եւ երկիր առատութեամբ տացէ ձեզ զպտուղ իւր, եւ զանին կամքն արձականայ եւ թեթեւացուցանէ զմալն, զի սիրտ թագաւորաց ի ձեռին Աստուծոյ են, եւ նա է տուեալ զամենայն աշխարհս զանին եւ այլ է տալոց նմա, չպակասէ ոչինչ զձեր մալն թեթեւացնելով[1]: Ապա դուք զառաջի աղաւթք նմա եւ իւր զաւրացն արարէք, զի այն է մեր աւրէնքն, որ զոր Աստուած մեզ տէր եւ թագաւոր տացէ՝ յառաջին աղաւթքն մեր զնմա կենդանութիւնն եւ զաջողումն խնդրեմք, եւ այսաւր զնա է տուեալ եւ թող հանապազ զնա տա: Զի ուստի՞ այնպիսի չարատեաց եւ մեղսատեաց իշխանութիւն եւ բարեսէր եւ լաւասէր, զի մեր աւրէնքն այլ այն է, որ յիշող բնաւ չգիտեն եւ զգողութիւն եւ պոռնկութիւն մարդոյ եւ զրոզութիւն /211ա/ արամբի կնոջ առնն եւ զնենգութիւն եւ զստախաւսութիւն եւ զկեղծաւորութիւն եւ զամենայն չարութիւն մարդոյ:

---

1 Բնագրում՝ չթեթեւացնելով:

Եւ արդ, ես Հոգեւոր Հայրս ձեր եւ Հայրապետս, որպէս թէ ի ծունկս իջեալ առաջի ձեր՝ մեծի եւ փոքու, մաղթեմ արտասուաւք՝ բարեխաւս ունելով առ ձեզ զարիւն եւ զքրտունս եւ զվարս եւ զվաստակ առաջին Հայրապետացն սրբոց եւ քաջ նահատակացն, եւ զիմ ծերացեալ հասակ եւ զալիս առաջի ձեր ընկենում եւ այնպէս աղաչեմ՝ մի՛ առնէք զմեզ ամաւթով եւ զատապարտ առաջի ատենին Աստուծոյ, որ պահանջելոց է յինէն եւ յայլ առաջնորդացն ձերոց՝ զհամարս կենաց եւ վարուց ձերոց, եւ մի՛ մատնէք զանձինս ձեր աստէն կենաւք ի մեծամեծ փորձութիւն եւ յետ աստի կենացս անշիջանելի գեհեննին եւ աններելի տանջանացն, այլ զգաստացարուք եւ ի յուշ եւ ի խելս եկէք եւ ի գիտութիւն ճշմարտութեան, եւ ի բաց հանէք զամենայն բիծ եւ զարատ յանձանց ձերոց եւ զանաակ մեղաց, որ արտաքս պատուիրանին մտեալ է ի ձեզ:

Եւ յառաջ զոր յղարկեցի առ ձեզ կարճ բանիւ զմեր սուրբ հարցն զկրաւ եւ զուսումն, թէ որպէս պարտ է լինել քրիստոն/211բ/եին, զոր մինչ ի մեզ պահեալ է մեր ազգս, եւ ի մեր ժամանակս լսեմք, թէ ի մոռացմունս եղեալ յաղքատութենէ եւ յանպարապութենէ եւ առաւել ի մեր ծուլութենէ, որ չենք զգուշացուցել եւ չենք ասացել եւ ամաւթով ենք յԱստուծոյ եւ ի ձեզանէ: Արդ, դարձեալ յուշ առնենք ձեզ, զոր վերստին գրեցաքն, որ ով գիտէ՝ հաստատի, եւ ով չգիտէ՝ ուսանի, զի յառաջ գիտելն է եւ ապա առնելն:

Ա. Եւ առաջին այս եղիցի ուսումն, որ ամուսնաւորքն հինգ ազգաւք հեռի լինին յարեան ազգակցութենէ եւ ի վեցերորդին պսակին: Քան զԺԳ (13) տարին պակաս չլինի հարսն, եւ փեսայն՝ քան զԺԴ (14), եւ յեկեղեցին զպսակն եւ նուէր եւ հաղորդին արժանիքն, եւ Ը (8) աւր սուրբ կենան մինչ ի վերանալ պսակին: Եւ աղուհացիցն եւ յինունքն եւ յամենայն աւրապահք եւ շաբաթապահք եւ յամենայն կիրակէի եւ ի խաչին եւ յայտնութեան ութաւրէքն ոչ աւրհնեն պսակ, զի ոչ է հրամանք հեշտանալ անկողնաւք: Եւ երբ յղի է կինն՝ ի բաց կան, որպէս եւ անասնոց անգամ աւրէն է, եւ ի ժամ արձակման արեանն՝ նոյնպէս:

Բ. Երբ ծնանի մանուկն չառնեն ինչ հմայութիւն եւ կապեն յորորոցն կամ /212ա/ ի բազուկ տղային, այլ խաչիւն կնքեն յանուն եւ ի դնելն եւ ի դիացուցանելն կաթն կամ ջամբ: Եւ երբ զձեռն շարժել կարէ տղայն ուսցնեն, որ ինքն կնքէ զխաչն, նախ ի գլուխն, ապա յոտն, որ լինի բուն խաչին, ապա ի ձախ թեւն, ապա յաջն բերէ, որ լինի խոտորնակ թեւն, եւ երբ լեզուն արձակի[1] յառաջ զԱստուծոյ անունն տան խաւսել՝ Աստուած, Տէր Յիսուս Քրիստոս, Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, աւրհնեալ է Աստուած, աւրհնեալ Քրիստոս Աստուած, աւրհնեալ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, փառք Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն, աւրհնեալ Սուրբ Երրորդութիւնն այժմ եւ միշտ, ապա զՍուրբ Աստուածն, ապա զՀայր մեր որ յերկինս: Զայս բանիս արդ ուսուցանեն քահա[նա]յքն տղայոց, մինչ ի ծերս եւ ի պառաւունս: Եւ յաւրն Գ (3) անգամ ասեն՝ ի ժամ քնոյն եւ առաւաւտոյն եւ ի հացին ժամն, ԺԲ (12) ծնրով, մեծաւ փութով[2]:

Դ. Մին շաբաթ կնքեն զտղայն, երէցն նուէր եւ երկեղիւ եւ անզրոյց, բայց թէ մահու երկեղ լինի՝ յամէն ժամ կնքեն: Այլազգոյ եւ կնոջ չտան սան զտղայս քրիստոնէից:

1 Գրուած է եղել «հաստատի», սակայն լուսանցքի վրայ յատուկ նշանով ցոյց է տրուած, որ պէտք է կարդալ «արձակի»:

2 Գ կանոնը կա՛մ վրիպել է ընդօրինակողի ուշադրութիւնից եւ չի արտագրուել, կա՛մ էլ Բ կանոնից յետոյ սխալմամբ նշանակելով Դ (միջանցելով Գ–ն)՝ ընդօրինակողը խախտել է կանոնների նախնական համարակալութիւնը:

Ե. Յամենայն կիրակէի առնու քահանայն զխոստովանութիւնն ի ժողովրդենէն՝ ի Դ (4) ամէն ի վեր՝ յառնէ եւ ի կնոջէ: Եւ թէ շատ է ժողովուրդն ի ԻԱ (21) /212բ/ աւրն անպատճառ ճանաչէ զիւր ժողովուրդն երէցն, թէ որպէս է կացեալ. եւ ի մտի պահեն զյանցանքն՝ մինչ որ ասեն իրիցուն: Եւ թէ մեծ ինչ մեղք է՝ յաւրն յորում դիպեցաւ խոստովանի, եւ մի հանգիստ անձինն մինչ որ խոստովանի, եւ խառվութիւն ի վաղիւն մի եղցէ քրիստոնէին: Եւ խոստովանութեան խրատ վայելչական զեկուցանեմք: Գ (3) ծունր դնէ ընդ արեւելս եւ ասէ՝ Հաւատամ ի քեզ՝ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, երրորդութիւն եւ մի աստուածութիւն, անոխակալ եւ անյիշաչար, որ քննես զսիրտս մեր եւ քննես զամենայն գործս մեր, հաւատամ ի քեզ՝ Քրիստոս Աստուած, որ եկիր եւ գալոց ես դատել զաշխարհս ըստ իւրաքանչիւր գործոց: Եւ ի ծունկս իջանէ առաջի քահանային մարդն գլխիբաց եւ կինն ծածկով եւ ասէ՝ Մեղայ Աստուծոյ, մեղայ սուրբ պատուիրանի նորա, մեղայ առաջի Աստուծոյ եւ հրեշտակին, որ պահէ զիս, մեղայ իմոյ անձինս եւ ամենայն մերձաւորաց իմոց, մեղայ խորհրդով, բանիւ եւ գործով, աչաւք, ականջաւք, լեզուաւք, ձեռաւք, ոտաւք եւ ամենայն անդամաւքս, առաւել կամաւք եւ գիտութեամբ, քան թէ ակամա եւ անգիտութեամբ, մեղայ եւ քեզ /213ա/ տէր երէց եւ իմ հոգեւոր հայր, մեղայ քո սուրբ խրատուն եւ աւրինացն, զոր պատուիրեցէր ինձ: Եւ ապա սկսանի որպէս եւ լեալ է եւ զաւրինակ մեղացն, պարսաւելով զինքն եւ արտասուաւք, եւ այնպէս ջանայ, որ աւելի ասէ քան զայն, որ լեալ են իրքն:

Զ. Յամէն Խ (40) աւր հաղորդեսցին արժանաւորքն ահիւ եւ դողութեամբ եւ մեծաւ յուսով եւ լի հաւատով, որպէս ի ճշմարիտ մարմին եւ յարիւն Աստուծոյ մերձեցեալք: Գ (3) աւր սուրբ կացցեն յանկողնոյ աւրինաւոր՝ յառաջ քան զհաղորդիլն եւ յետոյ: Զգուշանան եւ սուրբ պահեն զբերանն ի յիշոցաց, եւ յամենայն չար խաւսից, ի մատնութենէ, ի զուր ասելոյ եւ սուտ, ի բանբասանաց, յանբարասան խաւսից, ի խաբելոյ, յաւելի ուտելոյ, ի խմելոյ եւ յանսուրբ կերակրոյ. որպէս զԱստուծոյ դուռն մտից պահել զբերանն:

Է. Յիշոցաւոր դնել յամենայն տեղիս՝ ի մեծ եւ ի փոքր, անողորմ տուգանով եւ խրատով, եւ առաւել որ հաւատ կամ բերան կամ երես անարգէ կամ քահանայ կամ գերեզման՝ զլեզուն ծակեն եւ լար անցուցանեն եւ ի շուրջ ածեն ծեծելով, եւ տուգանք առնուն եւ ընդ աղքատացն ի մայն տան:

Ը. Ամէն պահք անձու/213բ/կն եւ անգինի եւ անամուսնութիւն լիցի եւ ամենայն զգայութեանցն պահպանութիւն յամենայն մեղաց եւ ոչ միայն յուտելոյ եւ յըմպելոյ, զի պահք է անունն:

Թ. Գարի եւ ալիւր եւ աւազ եւ ուլուն եւ ջուր մի զիւթեսցեն, եւ խարութիւն հաւուց[1] թռչման եւ կռչման եւ մարմնոյ խաղալոյ եւ երազոց եւ ձայնի կրակոյ եւ զրան եւ սողնոյ ինչ երեւելոյ ի տանն, զի այսպիսիքս աւտար են ի կրաւնից քրիստոնէից, եւ մի ոք իշխեսցէ առնել, զի մեծ մեղք են:

Ժ. Ի բաշխաւս եւ յերազահան մի ոք երթիցէ եւ լեկրոտի մա[ւ]տն ազի մի իշխեսցեն ածել, եւ մի ի բանից նոցա խաբեսցին եւ մի հաւատասցեն բնաւ:

ԺԱ. Կնքոյն եւ խոստովանութեանն եւ հաղորդին դրամ մի տացեն եւ ոչ երիցունքն առցեն, այլ ձրի լիցի ամենեւին, զի պարգեւ Աստուծոյ է եւ ոչ մարդոյ: Որպէս եւ մեք անարծաթ ձեռն դնեմք ի վերայ եպիսկոպոսացն եւ եպիսկոպոսքն ի վերայ քահանայից՝

1 Բնագրում, անշուշտ վրիպակով, գրուած է «հաւատոց»:

նոյնպէս եւ քահանայքն իւրեանց արասցեն անպատճառ: Ապա պսակին եւ թաղմանն եւ մատաղին, զինչ աւրէնքն է, տացեն ժողովուրդքն երիցուն, եւ խաչահամբոյր եւ յամենայն արդեանց պտուղ՝ բաժին Աստուծոյ, որ այլ ամենայն ստացուածքն աւրհնութեամբ լցցին, եւ Աստուած բաժնակից լիցի /214ա/ քրիստոնէից եւ պահէ զպտուղս տարւոյն յամենայն վնասուէ:

ԺԲ. Ի վերայ մեռելոյ մազ մի կտրեսցեն եւ սեաւ մի արասցեն. եւ զերես մի կեղեքեսցեն եւ զձեռս, եւ լալական մի վարձեսցեն, եւ խաւարարգել մի լիցին, զի մի զինքեանս եւ զմեռեալս վնասցեն եւ ամաւթով լինին յԱստուծոյ անյուսաբար կոծ դնելով, զի հեթանոսաց [է] եւ ոչ քրիստոնէից այդպիսի աւրէնք:

ԺԳ. Կախարդ եւ գող եւ պոռնիկ եւ բոզ եւ յիշոցասաց կամ դառնան ի չարէն, կամ հալածին անողորմ, զի մի յանմեղացն վերայ ածցեն զբարկութիւնն Աստուծոյ:

ԺԴ. Շաբաթ կիւրակէքն ամէն մեծ եւ փոքր ի ժամատեղն երթան եւ աղուհացքն՝ յամէն աւր. եւ զրոյց մի տացեն ի ժամատեղն, այլ լռութեամբ եւ երկեւղիւ յաղաւթս կացցեն, որպէս յառաջի աստուծոյ համարելով զինքեանս:

ԺԵ. Գ (3) անգամ ժողովէ ի տարին երէցն յեկեղեցին որիշ որիշ՝ զարս եւ զկանայս եւ զկուսան աղջկունս եւ զկուսան կտրճերն եւ յարմար հասակացն եւ վարուցն խրատ տացէ, զի ամէն հասակի եւ վարուց եւ բարուց խրատ ուրիշ է:

ԺԶ. Կարողք եւ ունեւորք զիւրեանց թիկունք մի արասցեն եւ ազատ նոցին[1] եւ զոյժ հարկին ի տկարսն եւ յաղքատսն թողցեն, զի մի տրտմեցուսցեն զԱրարիչն նոցա, եւ /214բ/ նոցա պսակ զուգեսցեն ի հանդերձեալն եւ զիւրեանցն զրկեսցեն, զի մեղք նոցա սրբի, որ յայս ժամանակս իրք մի ոյժ հասանէ[2], զի վասն մեղաց է պատուհասն:

ԺԷ. Ի զրկանաց եւ ի խաբելոյ պատրաստ կայցեն քրիստոնեայքն եւ ի ննդելոյ զկերարս՝ արք եւ կանայք, հաղկեցք եւ խապկեցք եւ զինուորակեցք եւ արուեստակեցք, գնաւղք եւ վաճառաւղք, զի որ մարմնական իրաւք զրկէ բռնութեամբ կամ խաբելով՝ զինքն հոգւով զրկէ եւ յաւիտենական կենաւքն:

ԺԸ. Արժանաւորացն եւ ուսելոցն եւ լաւ քահանայիցն լիցին եկեղեցիք եւ ժողովուրդք[3]:

1 Աղճատուած բառ է, թերեւս պէտք է կարդալ «նոցին» կամ «նստին»:

2 Կարելի է կարդալ նաեւ «հասանի»:

3 Այսքանով աւարտւում է: Շարունակութիւնը չի ընդօրինակուած ձեռագրում:

«ՅԱՂԱԳՍ ՏԱՐԵՄՏԻՆ Ի ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԱՍԱՑԵԱԼ»*

ԱՌԱՋԱԲԱՆ

Վանական մականուամբ յայտնի Յովհաննէս վարդապետը ծնուել է XII դարի 70-ական թուերին Տաւուշ գաւառում:

XIII դարի առաջին տարիներին նա, որպէս Մխիթար Գօշի աշակերտ, շրջում է նրա հետ եւ անգամ գրի անցկացնում Զաքարիա սպասալարի կողմից հրաւիրուած դաւանաբանական ժողովի հանգամանքները:

Աշակերտելով ժամանակի ամենախոշոր գիտնականներից մէկին՝ նա երիտասարդական հասակից ճանաչւում է որպէս հեղինակաւոր ու գիտնական վարդապետ. «Համբաւ իմաստութեան սորա [Վանականի] տարածեցաւ ընդ աշխարհս. եւ գային առ նա յամենայն կողմանց եւ ուսանէին ի նմանէ զվարս պարկեշտութեան եւ սրբութեան եւ զգիտութիւն աստուածեղէն գրոց. եւ լուսաւորեալք գնային յիւրաքանչիւր տեղիս լոյս լինել աշխարհաց»,- գրում է մի ժամանակակից: Եւ իրօք, համաձայն նրա աշակերտներ Կիրակոսի եւ Վարդանի վկայութիւնների, նրա շուրջն էին խմբուել բազմաթիւ ուսումնասէր աշակերտներ: Վանականը շարունակում էր իր անդուլ ուսուցչական գործունէութիւնը անգամ մոնղոլական աշխարհաւեր արշաւանքների ժամանակ՝ պատսպարուելով Տաւուշ բերդի մօտ գտնուող մի քարայրում:

Մոնղոլները, պաշարելով քարայրը, ստիպում են Վանականին եւ քարայրում պատսպարուած նրա աշակերտներին ու գիւղացիներին անձնատուր լինել: Բոլորին գերելուց, մեծ զրկանքների ենթարկելուց յետոյ մոնղոլները վաճառում են Վանականին Գագ բերդի քրիստոնեաներին 50 դահեկանով: Այնուհետեւ, հաստատուելով իր կառուցած Խորանաշատ վանքում, Վանականը շարունակում է իր մանկավարժական ու գիտական գործունէութիւնը մինչ մահ: Նա մահանում է 1251 թուի մարտի 18-ին:

Վանական վարդապետը թողել է գրական հարուստ ժառանգութիւն, սակայն նրա գործերից ամենաարժէքաւորները ցարդ կորած են: Կորած է նրա Պատմութիւնը, որը համաձայն Կիրակոսի ու Վարդանի վկայութեան՝ մոնղոլների եւ Հայաստանում կատարած նրանց արշաւանքների համար մեծ արժէք ունեցող աղբիւր է եղել: Կորել է նաեւ Զաքարիա սպասալարի հրաւիրած դաւանաբանական ժողովի դէպքերի նրա նկարագրութիւնը, որը նոյնպէս արժէքաւոր աղբիւր է եղել հայ հոգեւորականութեան լուսաւորչական եւ քաղկեդոնական թեւերի պայքարն ուսումնասիրելու համար:

Պահպանուել են եւ մեզ հասել Վանականի [«Գիրք հարցմանց»], «Համեմատութիւն հնոյ եւ նորոյ Կտակարանաց», «Մեկնութիւն գրոյն Յովբայ», «Ուրախացիր պսակ կուսից շարականի տեսութիւն», «Խրատ դաւանութեան», «Պատճառ առաջաւորաց պահոց» եւ մեզ հետաքրքրող «Յաղագս տարեմտին» աշխատութիւնները:

«Յաղագս տարեմտին» աշխատութիւնը մեզ հասած գործերի մէջ լաւագոյն տեղերից մէկն է գրաւում եւ ցայտուն կերպով ցոյց է տալիս մեր բանասիրութեան միայն նեղ շրջաններին յայտնի Վանական վարդապետի գրչի ուժն ու գիտական կարողութիւնները:

* «Գիտական նիւթերի ժողովածու», N 1, Երեւան, 1941, էջ 151-169

Աշխատութիւնը ծանօթ է եղել միայն սահմանափակ թւով մասնագէտների. որոշ մէջբերումներ է անում այնտեղից Ղ. Ալիշանն իր «Հին հաւատք» ուսումնասիրութեան մէջ[1], որից եւ օգտւում է պրոֆ. Աբեղեանը[2]: Աւելի լայն կերպով այն օգտագործուել է պրոֆ. Գ. Խալաթեանցի կողմից, որն իր "Арм. эпос в Ист. Моисея Хоренского" աշխատութեան մէջ հրատարակել է Արտաւազդի առասպելին վերաբերող հատուածն ամբողջութեամբ: Այսպիսով, «Յաղագս տարեմտին» աշխատութիւնը դեռեւս չի գրաւել մեր բանասիրութեան լայն շրջանների ուշադրութիւնը եւ իր հիմնական մասով մնացել է անօգտագործելի:

Աշխատութեան մէջ շօշափուած են տարեմուտի, տարւայ, ամիսների, արեգակի, լուսնի, մոլորակների եւ մի շարք ժողովուրդների տոմարների վերաբերեալ բազմաթիւ հետաքրքիր հարցեր, եւ տրուած են այդ հարցերին գիտական բացատրութիւններ, որոնք, շարահիւսուած լինելով բազմաթիւ փաստերի հետ, աշխատութիւնը դարձնում են տիեզերագիտութեան եւ աստղաբաշխութեան պատմութեամբ հետաքրքրուող մասնագէտների համար կարեւոր սկզբնաղբիւր:

Այսպէս օրինակ՝ չափազանց հետաքրքիր է տպագրուող տեքստում բերուած այն տեղեկութիւնը, ըստ որի՝ վրաց եւ աղուանից տարեմուտը սկսւում է հայոց տարեմտից 4 օր յետոյ (ուրեմն՝ օգոստոսի 15-ին): Հետաքրքիր է նոյն էջում բերուած այն առասպելը, ըստ որի բացատրւում է տարբեր ժողովուրդների տարեմուտի տարբեր օրերով սկսուելը:

Հայ լեզուաբանութեան պատմութեան համար կարեւոր նշանակութիւն ունի այն միտքը, ըստ որի՝ իրերի եւ երեւոյթների անունները տրուել են համապատասխան նրանց բովանդակութեան: Այս սկզբունքը հայ մատենագրութեան մէջ գործադրուած է շատ հնուց. դեռեւս Մովսէս Խորենացին իր Պատմութեան մէջ բազմաթիւ տեղանուններ եւ տոհմանուններ բացատրում է այս սկզբունքով, սակայն սկզբունքը, որպէս լեզուաբանական մի դրոյթ առաջին անգամ արտայայտուած է այստեղ: Նոյն ոգով եւ բացատրուած են հեղինակի կողմից հայկական ամիսների անունները:

Վանականի երկում ճիշտ կերպով են բացատրուած արեգակի խաւարումը, լուսնի շարժման առանձնայատկութիւնները եւ այլն եւ այլն:

«Յաղագս տարեմտին» աշխատութիւնը շարադրուած է ոչ թէ ժամանակի գիտական նեղ շրջանների, այլ լայն հասարակութեան համար. ճառի ձեւով շարադրուած աշխատութիւնը կարդացուել է եկեղեցիներում տարեմտի օրը (օգոստոսի 11-ին) բազմաթիւ հանդիսականների ներկայութեամբ: Լայն հասարակութեան համար շօշափել գիտական խնդիրներ, որոնք անմիջապէս չէին առնչւում սովորական եկեղեցական քարոզների հետ՝ նոր քայլ էր, ուստի զուր չէ, որ նա ճառի սկզբում յայտնում է, որ ոմանք կարող են տարակուսել եւ հարց տալ, թէ՝ «Այսօրիկ հաւատոյ կամ վարուց աւգուտ զինչ», եւ պատասխանում է. «Բազում ինչ ամենայն իրաւք, վասն զի աշխարհս ծով է, որպէս ասէ մարգարէն, ժամանակն՝ չափ կամ կամուրջ կամ ճանապարհ ի ծովու, եւ այս երեւելի մարդիկս ի ճանապարհի կենցաղոյս նշան բաւեն հարկանելոյ, զի մի՛ որպէս կոյր անցանիցեմք ընդ կենցաղս»:

Այսպիսով, ժամանակի խոշոր մատենագիր եւ ուսուցիչ Վանականի նպատակն է եղել լայն հասարակութեանը ծանօթացնել աստղաբաշխութեան եւ տոմարի մասին եղած գիտու-

1 Ղ. Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, էջ 178, 211

2 Տե՛ս Մ. Աբեղեան, Հայ ժողովրդական առասպելները, Վաղարշապատ, 1899:

թեան հետ. այդ նպատակով նա աշխատութիւնը կազմել է դիւրըմբռնելի լեզուով. որոշ խնդիրներ աւելի հասկանալի դարձնելու համար կատարել է գեղեցիկ ու պատկերաւոր համեմատութիւններ եւ այլն: Օրինակ՝ ինչքան հասկանալի ու պատկերաւոր են նրա հետեւեալ տողերը. «Արեգակն բոլոր շրջի որպէս ագուռի, որպէս անիւ, իսկ լուսինն ի թռիչս՝ որպէս թռչուն, որպէս նետ». Նմանագոյն տողեր շատ կարելի է գտնել աշխատութեան մէջ:

«Յաղագս տարեմտին» աշխատութեան ամենահետաքրքիր մասից մէկն Արտաւազդի առասպելն է, որը պրոֆ. Գ. Խալաթեանցի շնորհիւ վաղուց ի վեր յայտնի է դարձել բանասիրութեանը[1], սակայն, դժբախտաբար, չի օգտագործուած առասպելի խորը ուսումնասիրման համար:

Հարեւանցիօրէն տեսնենք, թէ ինչ նոր գծեր է իր մէջ պարունակում առասպելի՝ Վանականի կողմից շարադրուած պատումը.

ա) Արտաւազդի շղթաները լիզող շներն այս պատումում կոչւում են «յարալէզներ»: Մեր մատենագրութեան մէջ «արալէզ» բառի գրութեան երեք ձեւեր կան. ըստ որում իւրաքանչիւր հեղինակ ըստ իր գրութեան էլ հասկացել է այս բառը:

Փաւստոս Բիւզանդը գրել է «առլէզ» եւ հասկացել է որպէս «առնող եւ լիզող», Եզնիկն ու Անանունը գրել են «արալէզ»՝ Արային լիզող, իսկ մեր հեղինակը, գերուելով «յար լեզուն» [զկապանս Արտաւազդայ] եւ «Արալէզ» բառերի նմանահնչիւնութեամբ, «յարալէզ» է անուանում Արտաւազդի շներին[2] եւ բառը հասկանում է որպէս «յար լիզող»: Այսպիսով, Արտաւազդի առասպելի պատումներից միայն այս պատումում Արտաւազդի շները կոչւում են «յարլէզներ»:

բ) Այնուհետեւ Վանականը յայտնում է, որ արալէզներից մէկը սպիտակ է, միւսը՝ սեւ: Այս տեղեկութիւնը տալիս են նաեւ «Յայսմաւուրքներում» եղած պատումները, որոնց հիմքը հաւանաբար Վանականի պատումն է հանդիսացել:

գ) Եւ վերջապէս, Վանականը հաղորդում է, որ Արտաւազդի շղթաները նաւասարդի մէկին (տարեմտին) բարակւում են այնքան, որ եթէ դարբինները կռանը չզարկեն զատարկ սալին, եւ նոյնատիպ գործողութիւն չկատարեն միւս արհեստաւորները, ապա Արտաւազդը կկտրի շղթաները, դուրս կգայ աշխարհ:

Նաւասարդի մէկը Վանականի ժամանակ համապատասխանում էր օգոստոսի 11-ին, սակայն հին հայկական տոմարով նա ընկնում էր գարնանամտին, երբ վերածնւում էր բնութիւնը:

Այս տեղեկութիւնները կռահել են տալիս, որ Արտաւազդի առասպելում հեռաւոր յիշողութիւններ են պահպանուել մի մեռնող ու յարութիւն առնող աստուածութեան մասին, որ բերում է գարուն, վերակենդանացնում է բնութիւնը, ուստի եւ իր վրայ կրում է պտղաբերութեան, աճման, կեանքի ֆունկցիաները: Հաւանաբար ուշ աշնանը բուսականութեան մահացման հետ մէկտեղ Արտաւազդին բռնում են դեւերը (Եզնիկ) կամ քաջքերը (Խորենացի) եւ կամ, նորագոյն պատումներում, չաստուածները (բոլոր դէպքերում էլ՝ չար ոգի) եւ շղթայում ձիւնապատ Մասիսի վրայ:

1 Տե՛ս проф. Г. Халатянц, Арм. эпос в Ист. Арм. Моисея Хоренского, 1896, Москва, часть II, с. 73:

2 Արալէզները պատկերացում էին շան կերպարանքով. այդ առթիւ Եզնիկը գրում է. «...եւ զառլէզն, ի շանէ ելեալ ասեն»:

Մասիս (Արարատ) սարը հայ ժողովրդական հաւատալիքներով, որոնք պահպանուել են մինչեւ XIX դարը եւ հարեւանցիօրէն նշուել Մ. Թաղիադեանի կողմից[1], համարուել է «մութն աշխարհ», որտեղ իշխում են չար ոգիներ, եւ որտեղ հաւանաբար տեղափոխւում էին մարդիկ իրենց մահուանից յետոյ:

Մասիսում քաջքերի կողմից շղթայուած Արտաւազդին մենակ չեն թողնում իր շները՝ սեւ եւ սպիտակ արալեզները, որոնց գոյները կարող են ցերեկուայ եւ գիշերուայ, գարնան եւ ձմռան, կեանքի եւ մահու հակադիր ուժերի առասպելական պատկերացումները լինել. նրանք լիզում են Արտաւազդի շղթաները (գուցէ հնում լիզել են վէրքը), մինչեւ գարնանամուտին նորից դուրս է եկել Արտաւազդը, վերածնել աշխարհը, պարգեւել կեանք, բուսականութիւն՝ նորից մեռնելու եւ նորից ծնուելու համար:

Իհարկէ, մեզ հասած պատումները հնարաւորութիւն չեն տալիս անվերապահօրէն յայտարարել, որ Արտաւազդը, նման Արային[2], հնագոյն ժամանակներում պաշտուել է հայերի կողմից որպէս գարնան, բնութեան եւ պտղաբերութեան աստուածութիւն, սակայն վերոյիշեալ փաստերն անկասկածելիօրէն ցոյց են տալիս, որ Արտաւազդի առասպելի մեզ հասած պատումներից ոչ մէկը սկզբնական չէ, եւ որ առասպելի որոշ պահերը յիշեցնում են փոքրասիական ժողովուրդների մէջ շատ տարածուած մի հնագոյն աստուածութեան (Թամուզ՝ բաբելացիների, Դիոնիսոս՝ յոյների մօտ, եւ այլն):

Առասպելի այս պատումը հետաքրքիր է նաեւ մի այլ կողմից. ըստ բոլոր պատումների՝ Արտաշէսի թաղման ժամանակ շատ-շատերը, չցանկանալով ապրել իրենց սիրելի թագաւորի մահուանից յետոյ, ինքնասպանութիւն են գործում ու թաղւում նրա հետ: Դժուար չէ եզրակացնել, որ այս հեռաւոր յիշողութիւն է բարձրաստիճան մարդկանց թաղման ժամանակ մարդկային զոհեր կատարելու (այդպիսի թաղումներ Հայաստանում յայտնաբերել է Ե. Լալայեանը. տե՛ս «Դամբարանների պեղումները Հայաստանում»): Վանականի պատումում այդ մասը շարադրուած է այնպէս, որ հաստատում է վերոյիշեալ եզրակացութիւնը: Նա գրում է՝ Արտաշէսի մահուան ժամանակ «ծառայքն եւ աղախնայքն սպանին զինքեանս ի վերայ նորա». իսկ ըստ Գ ձեռագրի՝ «եւ ծառայս եւ աղախնայս սպանէին ի վերայ նորա...»: Այսպիսով, մի դէպքում ինքնասպանութիւն գործողները սորուկներ ու սարկուհիներ են, իսկ միւս դէպքում նրանք ոչ թէ ինքնասպանութիւն են գործում, այլ սպանւում են այլոց կողմից:

Վանականն աշխատութիւնը գրելու ժամանակ այլ աղբիւրների հետ միասին ձեռքի տակ է ունեցել եւ լայնօրէն օգտագործել է Անանիա Շիրակացու «Տիեզերագիտութիւն եւ տոմար» աշխատութիւնը, որ լոյս տեսաւ Մատենադարանի հրատարակութեամբ 1940 թուին:

Ակնյայտ դարձնելու համար Շիրակացու աշխատութեան օգտագործումը Վանականի կողմից բերենք օրինակներ.

Տիեզերագիտութիւն եւ տոմար	Յաղագս տարեմտին
ա) «Տեսնելով զարեգակն շրջանէ ի շրջան հասեալ՝ իմացաւ զպակասումն աւուրցն եւ աւէ տարաւ...» (էջ 74):	ա) «...Եւ դարձեալ զարեգակն տեսեալ կէտէն ի կէտն բոլոր ընթացեալ՝ ասացին. «տարաւ զիմ ժամանակս»...» (էջ 158):
բ) «Տեսանելով առաջնոցն զլուսինն լցեալ եւ մաշեալ՝ իմացան զանցաւորութիւն կենաց իւրեանց եւ ասացին. «է մեզ պատկեր»...» (էջ 75):	բ) «Տեսեալ զնա [զլուսին] մարդիկ լրնծաիլ եւ ի մաշիլ՝ ասացին «իմ ես աւրինակ ծնընդեան եւ մահու» (էջ 162):

Անանիա Շիրակացուց է վերցուած նաեւ հայկական ամիսների անունները Հայկի որդիների եւ դուստրերի անունների հետ կապելու առասպելը եւ այլն (հմմտ. «Տիեզերագիտութիւն եւ տոմար», գլ. ԽԲ, էջ 75-77, գլ. Կ, էջ 94, «Յաղագս տարեմտին», էջ 160, 162 եւ այլն):

«Յաղագս տարեմտին» աշխատութիւնը լայնօրէն օգտագործուել է Վանականի աշակերտների եւ այլ մատենագիրների երկերում, ուստի այն կարող է պարզել նաեւ աղբիւրագիտական որոշ խնդիրներ: Յատկապէս այն իրենց աշխատութիւններում օգտագործել են Կիրակոս Գանձակեցին եւ Վարդան Արեւելցին[1]:

* * *

Վանական վարդապետի «Յաղագս տարեմտին» աշխատութեան տեքստը կազմելու ժամանակ օգտագործել ենք երեք ձեռագիր:

Որպէս հիմք ընդունել ենք Մատենադարանի N 5561 (872) ձեռագիրը (Ա ձեռագիր). բովանդակութիւն՝ Տօնապատճառ. մեզ հետաքրքրող աշխատութիւնը՝ «Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետէն ասացեալ» վերնագրով, բռնում է ձեռագրի 271ա–276բ էջերը:

Ա. Ձեռագրի համառօտ նկարագրութիւնը

Թերթ՝ 385, մեծ. 25×17, նիւթ՝ թուղթ, կիճակ՝ վնասուած, գրութիւն՝ միասիւն, գիր՝ բոլորգրին անցնող միջին մեսրոպեան, գրիչ՝ Գրիգոր, ժամանակ՝ ԺԲ–ԺԳ դար:

Յիշատակութիւններ, էջ 154ա. «Զմեղուցեալ[ա]կ գրիչս՝ Գրիգորէս աղաչեմ յիշել, որպէս զայր աղքատ եւ յամենայն բարեաց թափուր»:

էջ 175բ. «մի ջակեր(՞) եղբայր, վասն այն մանր գրեցի եւ յոյժ աշխատեցա, զի աչքս խոց էր անբժշկելի վասն իմ մեղացն. զհօգւոյս կուրութիւնս յայտնեաց Աստուած ի մարմնոյս տեսութիւնս, զի եղեց նշաւակ ամենեցուն: Զգերապայծառ վարդապետն Գրիգոր մականուն Բջնեցի կոչեցեալ՝ գեղապանծոյն եւ բազմահռչակ, որ զաւրինակս շնորհեաց, յաղաւթս մաղթեմ յիշել»:

1 Տե՛ս Մ. Թաղիադեան, Ճանապարհորդութիւն, Կալկաթա, 1847:

2 Տե՛ս проф. Г. Капанцян, Хетские боги у армян, Ереван, 1940, с. 25-27:

1 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Թբիլիսի, 1909, էջ 43-44, 200-201. Վարդան, Պատմութիւն տիեզերական, Մոսկուա, 1861, էջ 12, 16:

Ա ձեռագրի թերութիւնները չտկել ենք N 4130 ձեռագրով (Բ ձեռագիր): «Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետէ» աշխատութիւնը գտնւում է Բ ձեռագրի 66բ–72բ էջերում:

Բ. Ձեռագրի համառօտ նկարագրութիւնը

Բովանդակութիւն՝ Տօնապատճառ. թերթ՝ 517. մեծ. 26×17,8. վիճակ՝ վնասուած, գրութիւն՝ միասիւն: Գիր՝ բոլորգրին անցնող միջին մեսրոպեան. գրիչ՝ Տիրացու. ժամանակ՝ ՉԺԶ (1267). տեղ՝ Հաղբատ: Ունի ընդարձակ եւ շատ հետաքրքիր յիշատակարան Վարդան Արեւելցու կեանքի եւ Տօնապատճառ կոչուող ժողովածուների ծագման պատմութիւնն ուսումնասիրողի համար, ուստի որոշ կրճատումներով բերում ենք յիշատակարանը (էջ 516բ–517ա):

«Փառք Սուրբ Երրորդութեան...

Իղձք փափագանաց սիրոյն որ առ Աստուած[1].... արդարոց, անզբաղապէս ներմատծի ի ուէ եւ ի գիշ[երի], յորոց մի գոլով ի լրացելոց(?) հոգւոյն երջանիկ հայրն մեր եւ հասարակաց՝ Վարդան վարդապետն, յառաջին հեղինակացն ի մերումս բացափայլեալ ժամանակի, յամենեցունց ողիս արեգակնածաղ փայլմամբն շողիւք լուսաւորեալ[ա]կ, ըստ բազման աչաց եւ ականջաց ներքին մարդոյն՝ արանց միանգամայն եւ կանանց, մեծաց եւ փոքունց, եկեղեցականաց եւ աշխարհականաց, եւ ամենայն չափու հասակի, նաեւ աւտար ազգաց եւս: Եւ այսպէս երկար ժամանակ ի ծերութեան հասեալ պայման բարի քաղաքաւարութեամբ կեցեալ ըստ կամացն Աստուծոյ ի զարդ եկեղեցւո[յ] եւ ի պարծանս ուղափառ հաւատացելոց՝ փոխեցաւ ի հանգիստն արդարոց. յիշատակ նորա աւրհնութեամբ եղիցի առաջի Աստուծոյ: Վասնորոյ հոգ տարեալ սա յոյժ եկեղեցւոյ եւ նորին մանգանց վերածնելոց ի Քրիստոս, եւ բազում ինչ թիւրեալ ի սուրբ Գրոց ուղղեաց ի մեկնչաց սրբոց: Նաեւ զՍաղմոսն գլխովին եւ զերկարութիւնն յայլ եւ յայլ մեկնչաց ի մի վայր ժողովել, կարճ եւ համառաւտ բանիւ մեկնեալ դիւրահաս ընթերցողաց: Որպէս եւ զայս բուրաստանս ամենալիր ծաղկացս, պատճառս տաւնից տէրունականաց եւ հարցմունք սուրբ բանասիրաց՝ առաքելական եւ մարգարէական եւ աւետարանական(?), հաւաքեալք ի սուրբ արանց, որ ամբարեալ կան ի սմա, որով եւ ես ի[սկ?] յամենայնի անարժանս եւ անպիտանս, որ Տիրացու անուանեցա[յ] ի նորին աշակերտացն, որ եւ ի սա աշխատեցայ եւ ըստ կարի իմ ջանացա[յ], զտէրունական տաւնից պատճառն, որ ի սա գծագրեցաք: Վասնորոյ մաղթեմ զաս ժառանգողացդ, յընթ[երցող]աց եւ յաւգտողացս. եւ յաւրինակաւ[ո]ղացդ.... հաչակաւոր սուրբ ուխտիս ի յԱստուած.... Հաղբատ, թուականութեանս(?) Հայոց ՉԺԶ (1267)... տէրունական սուրբ եւ աստուածընկալ նշանիս... Աստուածածնիս եւ այլ սրբոցս: Յաթոռակալութեանս տէր Յովհաննիսի մեծի հռետորի եւ սուրբ վերադիտողի, ի մէջ համագումար եղբայրութեանս: Եկեալ մեր ի Վանանդ գաւառէ ի Կարս քաղաքէ՝ պանդխտանալ աստ եւ բազում ինչ աշխատիլ, վասնորոյ կրկին մաղթանաւք, երեսամած աղաչանաւք հայցեմք, որ... հանդիպիք այսմ հոգեշահ խրախճանութեանս, զի խնդրէ՛ք ի Քրիստոսէ ազատել հանցանացն մեր թողութիւն... եւ այլն»:

1 Ձեռագրի մաշուած եւ ցեցակեր լինելու հետեւանքով որոշ տեղեր մնում են անընթեռնելի. այդ տեղերը նշանակում ենք բազմակէտերով, իսկ մեր կողմից կրճատուած մասերը՝ 3 կէտով:

Տեքստը կազմելու ժամանակ ձեռքի տակ ունեցել ենք նաեւ N 4669 (1187) ձեռագիրը (Գ ձեռագիր), որը գրուած է 1675 թուին Գրիգոր երէցի կողմից ***Պերկամայում****: Ձեռագիրը զանազան նիւթերի ժողովածու է, մեզ հետաքրքրող աշխատութիւնը (որը գտնւում է ձեռագրի 22ա–29ա էջերում), ինչպէս եւ միւս նիւթերը գրուած են բազմաթիւ տառասխալներով ու կրճատումներով, որոնք երբեմն անհասկանալի են դարձնում որոշ պարբերութիւններ.*

օրինակ՝ ձեռագրում «անունս տիրանց դնէին» փխ «անուն ըստ իրաց»

«տարուղին ժամանակս» փխ «տարաւ զիմ»

«աննշանքն են» փխ «այն նշանք են» եւ այլն եւ այլն:

Չափազանց շատ են նաեւ ուղղագրական սխալները՝ աւ-երը մեծ մասամբ փոխարինուած են ***օ****-երով, ուստի շատ դէպքերում գրուած է* ***անուանեցօ*** *(անուանեցաւ),* ***օուր*** *(աւուր): Դ-ի եւ* ***տ****-ի փոխարէն յաճախ գրուած է* ***թ*** *(ընթանեաց, քաղթնութիւն, Պաթմոս).* ***գ****-ի փոխարէն՝* ***ք*** *(սուք, թարքման, աւաք) եւ այլն:*

Վերոյիշեալ նկատառումներով՝ տարբերակների մէջ մենք նշեցինք Գ ձեռագրի միայն այն տարբերութիւնները, որոնք կարող են այլ իմաստ տալ տեքստին:

Արտաւազդի առասպելի յատուածի տարբերակներում նշել ենք նաեւ Գ. Խալաթեանցի կողմից հրատարակուած[1] հատուածի եւ մեր տեքստի միջեւ եղող կարեւոր տարբերութիւնները՝ X պայմանական նշանի տակ:

1 Տե՛ս **Г. Халатянц**, Арм. эпос в Ист. Арм. Моисея Хоренского, 1896, Москва, часть II, Материалы, с. 74:

ՅԱՂԱԳՍ ՏԱՐԵՄՏԻՆ՝ Ի ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԱՍԱՑԵԱԼ

Աստուծով իմաստնացեալն Սողոմոն ի գիրս իւրական զեկուցանէ մեզ յաղագս Աստուծոյ արարչութեանն՝ անճառ եւ անհաս աստուածաբանութեամբ, այսպէս ասելով՝ «Աստուած իմաստութեամբ հիմունս արկ երկրի հաստատեաց զաշխարհս խորհրդով, հանճարով իւրով զանդունդս պատառեաց. եւ ամպք հոսեցին զանձրեւ»[1]: Յաղագս որոյ ի քննութիւն կամիմք մտանել տարերց եւ տարերաց, ժամուց եւ մասանց եւ կարաւտիմք աստուածային ձեռացն եւ իմաստութեանն Որդւոյ եւ Հանճարոյ Հոգոյն: Իմաստութեան խորհրդով հաստատել զատարտամ գնացս բանից մերոց եւ անդընդական գթութեամբքն բանալ մեզ զխորհուրդ աւուրս. եւ զւարթարար անձրեւովք լնուլ զծարաւի եւ զպապեալ միտս մեր առ ի կարաւղ գոլ սպասաւորութեան ահարկու եւ պատկառելի հարց եւ եղբարց եւս տաւել բազմաժողով ատենիս, զի յոյժ դժուարին է յաղագս Աստուծոյ խաւսել, զի անհասական է մարդկային մտաց, թէպէտ մտացի ոք իցէ. այլ այնքան կարէ ոք հասու լինել, որքան տան մեզ ծանաւթութիւն սուրբ գիրք: Յերիս անձինս որոշեալ եւ ի մի կատարեալ՝ ըստ աստուածութեանն, ըստ տէրութեանն, ըստ արարչութեանն, ըստ նախախնամութեանն, ըստ բնութեանն, ըստ ներգործութեանն, ըստ կամացն, ըստ թագաւորութեանն, ըստ իշխանութեանն, ըստ պատւոյն, ըստ փառացն, ամենայն ինչ մի՛ բաց յանձանցն երեք եւ մի, մի եւ երեք: Իսկ մարդեղութիւնն Որդւոյ ո՛չ յաւելեալ եւ ոչ պակասութիւն, այլ մնաց նոյն Որդի՝ որպէս է՛րն յաթոռն հայրական. անճառ միութեամբ Աստուած եւ մարդ կատարեալ, որով Աստուծոյ տամք զամենայն զբարձրագոյնսն եւ զխոնարհագոյնսն, զի իցէ փրկութիւն մեր յԱստուծոյ եւ ոչ ի մարդոյ: Արդ, Սուրբ Երրորդութեամբն ամենեքեանքն ի լինելութիւն եկին, որպէս աստուածախաւս մարգարէն ասէ. «Ի սկզբանէ արար Աստուած զերկին եւ զերկիր», այսինքն՝ ի սկսանելոյ եղեւ, ո՛չ էր. եւ ապա արար, զի մի ասիցեն հակառակորդքն, թէ կայր կամ ինքնին եղեւ, եւ կամ այլ ոք գո արարիչ, յայտ արար թէ չէր եւ արար Աստուած. բայց որ ի սկսանելոյ լեալ իցէ, դարձեալ կատարումն ունի: Մովսէս յառաջ զերկինս ասաց արար Աստուած եւ ապա զերկիր, իսկ Դաւիթ՝ «Դու Տէ՛ր ի սկզբանէ զերկիր հաստատեցե՛ր, եւ գործք ձեռաց քոց երկինք են»[2]: Նա զվերին երկինն ասէ, որ յառաջնումն աւուրն եղեւ, եւ Դաւիթ՝ զհաստատութիւնդ, որ յերկրորդումն աւուրն եղեւ: Զի հրեղէն երկինն շուրջ գալ ասի եւ ոչ այլայլիլ, եւ երկին՝ այլայլիլ եւ ո՛չ շուրջ գալ, որով ցուցանի թէ նախախնամութեամբն Աստուծոյ ամենայն ինչ կա՛ հաստատուն եւ դարձեալ անցանի, թէպէտ եւ յանգութիւն ո՛չ անկանի այլ դադարի եւ յայլ կերպարանս փոխի նորոգմամբ ի գալստեան Տեառն, եւ նորո՛յ երկին եւ նորոյ երկիր, զոր եսն առնեմ, կայ առաջի իմ. զի ամենայն որ ինչ ի պէտս մեր եղեալ է՝ անցանելով է, որպէս եւ չորեք յեղանակս. զի առաջին բուսուցանէ, երկրորդն հասուցանէ, եւ երրորդն ի կատար ածէ, /272ա/ եւ չորրորդն որպէս յշտեմարանս ժողովէ: Զնոյն եւ ի մեզ է տեսանել՝ ըստ տղայութեան, մանկութեան եւ երիտասարդութեան եւ ծերութեան, որպէս եւ արեգակն ելանելովն եւ բարձրանալովն եւ մտանելովն զնոյն տայ ապացոյց: Արդ, զամենայն արար Աստուած ի վեց աւուր, թէպէտ կարող էր ի վայրկեան ժամու առնել՝ ո՛չ արար, այլ զամենայն աւուր կատարած ուրիշ եդ, որ իմանին, թէ արարածք են, եւ չլինին զամագիւտ չար աղանդքն. քանզի վեցն խորհրդական թիւ է, զի երկու երեք է եւ երեք երկու եւ մին վեց, որով արարածք եղեալ պահին. նոյնպէս եւ եւթն, որ է հանգիստ Աստուծոյ, զի նա ի ներքոյ տասնեկին անծին է եւ անծնունդ. վասն այնորիկ պատուեն եբրայեցիք զեւթն, զվեցն գործեալ եւ յեւթն հանգուցեալ, որպէս վասն Աստուծոյ գրեալ է. եւ այսպէս ի շաբաթս եւ յաւուրս. եւ ի տարիս՝ վեց գործել եւ յեւթն հանգիստ եւ թողութիւն: Զի բազում տաւնք էին Հրէից ըստ մարմնոյ ծնունդք եւ կալք եւ կութք եւ շինուածոց նաւակատիս եւ այլս բազումս, իսկ հոգեւորն շաբաթն, որ խաղաղոյն առ նոսա պատւի, ամսամուտ եւ ամսագլուխ, տարեմուտ եւ շաբաթամուտ եւ այլք յոլովք: Այլ Մովսէս երիս տաւնս ի տարոջն կատարել հրամանեաց զգլխաւորագոյնսն՝ զելիցն յԵգիպտոսէ եւ զտաղաւարահարացն եւ զքաւութեանն: Իսկ տաւն ելիցն առաւել մեծագոյն էր առ նոսա, էր որ վասն ինքեանց ազատութեան եւ պատւոյ, եւ էր որ վասն խորհրդոյ նորոյս: Որպէս եւ ասէր Աստուած՝ ամիսս այս եղիցի ձեզ սկիզբն ամսոց եւ աւրս՝ աւուրց եւ տարիս՝ տարոյ. նոքա զայն պատուէին. եւ զտաղաւարահարացն. վասն քառասնամեայ յանապատին տաղաւարաւքն բնակելոյ հարցն նոցա, յորս պարծէին. եւ զտարեկանացն, զոր ասէ մարգարէն. «փո՛ղ հարէք ի գլուխս ամսոց, յաւուր նշանաւորի տարեկանաց մերոց»[3]: Երբ գայր տարին եւ 'ի կատար ելանէր, զինքեանս ընծայեցուցանէին, եւ զմիմեանս թագաւորաց եւ իշխանաց մեծամեծաց ընծայք տային. նաեւ սիրելեաց եւ ազգականաց՝ շնորհաւորելով զառաջիկայն եւ զանցեալն զոհանային, թէ խաղաղութեամբ անցաք ընդ տարիս՝ ներքնաւք եւ արտաքնաւք: Զնոյն եւ մեք կատարեմք ընծայելով միմեանց եւ այլոց, ընտանեաց եւ աւտարաց[4], թէ հոգեկան ինչ եւ թէ մարմնական: Առնէ ինչ եւ հեթանոսն՝ թանձրագոյն եւ մարմնական, որպէս այն, որ զհացն բոլորավզեր առնել սովոր են, որպէս թէ բոլոր տարիս, անցեալն եւ որ առաջ /272բ/ ի կայ, շահաւոր եւ խաղաղութեամբ եղեւ եւ լինի, զի ի ժամանակիս սովորաբար վարիմք զայս սակաւ պատճառս աճեցուցեալ, թէ առ նոսա եւ թէ առ այլ ազգ անդուստ սկսեալ:

Իսկ թէ զի՞նչ է տարի: Առաջին մարդիկն, ասեն, իմաստունք էին, անուն ըստ իրացն դնէին: Տարի, զի յինքեան տանի զաւր, զշաբաթ, զամիս, զչորս յեղանակս. եւ դարձեալ զարեգակն տեսեալ կիտէն 'ի կէտն բոլոր ընթացեալ, ասացին. «տարաւ զիմ ժամանակս»: Իսկ եգիպտացիքն տարի ըստ լուսնին առնեն, զերեսուն աւրն: Այլ եւ զայս դիտել արժան է, զի դիր անուանց 'ի նախնոյն Ադամայ է կենդանեաց, իսկ թիւ կենդանակերպիցդ եւ մոլորակացդ՝ յԱզաւրոսէ թագաւորէ, որ թագաւորեաց առաջին յորդոց անտի Սեթայ եւ ի սմանէ անուանեցաւ քաղդէութիւնն: Եւ գիւտ գրոյ յԵնովքա, թէպէտ եւ այլք յԵնովսա ասեն գիր եւ մոլորակացդ գիւտ, այլ Ենովք արար նշանագիրս կարճոտունս եւ բազմատարս, եւ այնու եթող զկեանս վարուց առաջնոցն եւ զմարգարէութիւնն իւր, զոր գտեալ Արփաքսադ յետ ջրոյն. առաջին քաղդէացիք իմաստասիրեցին գիր եւ թագաւորութիւն կալեալ, եւ ապա որդի նորա Կայնան բազմացոյց զՔաղդէացւոցն մոլորութիւն՝ բախտ եւ ճակատագիր ասելով ըստ աստեղացդ եւ մոլորակացդ շրջագայութեան. եւ որդիք

նորա իբրեւ Աստուած համարեցան զնա եւ երկրպագեցին նմա եւ կանգնեցին նմա պատկեր ի կենդանութեան իւրում. եւ այս եղեւ սկիզբն պատկերապաշտութեան: Երկրորդ՝ Արգիացիք, երրորդ՝ Եգիպտացիք, չորրորդ՝ Եբրաեցիք, հինգերորդ՝ Փիւնիկեցիք, ապա աստուստ արար Կադմոս[5] գիր Յունաց, վասն որոյ առ Սողոն ասէ ամն երիկեան գոլ զՅոյնս: Նոյնպէս զանազան է մուտ տարեմտից եւ անուն ամսոցդ, զի Եբրաեցւոց եւ Մակեդոնացւոց տարեմուտն ի միասին է, միով աւուրբ զկնի գարնան հաւասարակածին, իսկ Հա[յ]ոց ընդմիջել ամարանն է. եւ ութ ազգաց՝ Եգիպտա[ցւոց], Եթով[պացւոց], Աթենա[ցւոց], Բիւթեն[ացւոց], Կապադ[ովկացւոց], Վրաց եւ Աղուանից՝ չորս աւուրբ զկնի Հա[յ]ոցն է, իսկ Յունացն եւ Ասորոցն ընդ միջել աշնան յեղանակին է. եւ Հոռոմոցն յետ մտանելոյ ձմերան, եւ որպէս ուսաք յիմաստնոց ի բաժանել լեզուաց եւ գնալն յիւրաքանչիւր տեղիս ՀԲ (72) ատենաւորացն՝ ըստ հեռաւորութեան եւ մերձաւորութեան աշխարհաց, եւ ժամանելոյն ի նոսա՝ զաւրն զայն տարեմուտ կարգեցին /273ա/ եւ ուսուցին որդոց իւրեանց պատուել զաւրն զայն տրաւք ընծից: Իսկ անուն ամսոցդ՝ են որ ի նախնեացն յանուանէ, եւ են որ յեղանակացդ, եւ են որ ի դիցն. քանզի Եբրաեցիք եւ Մակեդոնացիք զաւել աւուրքն դնեն սկիզբն տարոյն, եւ ասեն՝ աւր առաջին եւ երկրորդ եւ երրորդ եւ չորրորդ եւ հինգերորդ եւ վեցերորդ մուան նիսան ամսոյ, որ թարգմանի կազմութիւն՝ զի ի հողոյ կազմեաց զԱդամ: Զնոյն եւ յայտ առնէ աւրն, զի ուրբաթ ասի, որ է կազմութիւն. ասի եւ բաւթ, այսինքն սուգ եւ տրտմութիւն, վասն ելանելոյն ի դրախտէն եւ լսելոյն, թէ՝ «Հող էիր եւ 'ի հող դարձցիս»[6]: Իսկ Իար որ է Նոյ՝ այր արդար, Սիւան, Սեմ. Թամուզն, Թարաարի, Աբրաամ. եւ այս հաստատ եղեալ է հրամանաւ Աստուծոյ ի մարգարէիցն: Իսկ Հա[յ]ոցս է ի վերայ որդոց Հայկին, ըստ տասն ծննդոցն. հինգ արու՝ Նաւասարդն, Հոռի, Սահմի, երեք դուստր՝ Մարի եւ այլն, եւ երկու ի վերայ եղանակացդ. զի Նաւասարդին նոր ասի, այսինքն սկիզբն տարոյ եւ դարձեալ թէ արդէն աւելոյ եղանակ ի վերա[յ]մեկանացն Ովկիանու: Եւ Հոռի, զի հորեն երկրագործք եւ մշակք զցորենն եւ զգինին յըշտեմարանս ժողովելով. զի յինն Հոռի մուտ է աշնան եւ ունի կենդանակերպս երիս՝ կշիռ, կարիճ, աղեղն: Տիւն ժամս երկոտասան, նոյնպէս եւ գիշերն: Իսկ Սահմի, զի զնա հարաւաբինն եւ զա հիւսիսաբինն, եւ դարձեալ իմաստուն արք սահմանեն զտունս իւրեանց առ ի գալ ձմերան: Եւ Տրէ, զի կրէ գիշերն յաւրէն, զժամն եւ զմասունքն: Իսկ Քաղոցն, զի արձակի խոյն ի հաւան ըստ հանճարեղ արանց, այլ եւ քաղի ժամն եւ մասունքն, զի Քաղոցի տասն ձմեռնամուտ է եւ ունի երեք կենդանակերպ՝ այծեղջիւր, ջրհոս, ձուկն. տիւն ժամս ինն, գիշերն հնգետասան: Եւ Արանց ի յունել ձեան զլեռինս եւ զըլուրս, ասեն՝ արանց է այս ճանապարհ եւ ոչ կանանց. արի մարդոց է աւրս եւ ոչ թուլից եւ վատաց: Մեհեկի զի տունկք եւ բոյսք, որպէս զմեռեալ լինին՝ եղեմնապատ եւ ձիւնաթաղ. Մեհեկի այսինքն ածի: Արեգ՝ որպէս թէ յառնեն բոյսք եւ բանջարք ստորուածախն հրամանաւն. արի ասէ հիւսիւս եւ եկ հարաւ, որ է գարնան ամիս, զի երկոտասան մուտ է, ունի եւ երեք կենդանակերպ՝ խոյ, ցուլ, երկաւոր. տիւն ժամս երկոտասան, նոյնպէս եւ գիշերն: Իսկ Ահկի այսինքն ահ անկանի ի յառնել գետոց եւ ի թուլանալ ձեան. ահ է, ասեն, մարդոյ ամենայն ուրէք, զի գետահարոյցք է: Մարերի, որպէս թէ թաւանան մայրիք տերեւովք եւ ոստ/273բ/աւք եւ լինին մայր թռչնոց եւ գազանաց: Իսկ Մարգացն, որ է ժամանակ ածելոյ զմարգ, որ ի դաշտս եւ ի հովիտս իցեն, յայգեստանս եւ ի բուրաստանս. յորժամ արեգակն առ շամբն եւ կամ յետ շանն իցէ, զի ի ԺԳ ունի երեք կենդանակերպ՝ խեցգետին, առիւծ, կոյս. գիշերն ժամս ինն, եւ տիւ հնգետասան: Եւ Հրոտից՝ ըստ գրութեան է, զի հուր է ոտիցն, որ այրէ ներքուստ ի վեր ջերմութիւն արեգական[7]: Եւ ի գիրս սրբոց մարգարէից այլոց ազգաց անուանք ոչ յիշի, բայց ի Հա[յ]ոց՝ Անդրէաս եւ Զաքարիա:

Իսկ Աղուան ամիս նաւասարդուլ, որ է Նաւասարդցի՝ այսինքն ի թոռացն է յուստերաց կամ ի դստերաց: Իսկ Վրացն. ախածիլ, որ ստուգաբանի այսպէս՝ ախաց, ախացի, թէ մեծ պատրոնացի: Սեթիսլի, որ է Սոնեթացի, բայց սոքա եւ յոյնք ինքեանց ամսամտաւք ոչ վարին, այլ ծառաաբար զհետ երթան այլոց:

Իսկ Յունացն ի վերայ դիցն անուանցն է. Դիոս, այս ի Դիոնեսիոսէ, զոր որթոց եւ այլոց այլանդակութեանց արարիչ ասեն: Ապելլիոս, այս Ապողոն է, Պերիտոս, այս պան է Նոխազոտն:

Իսկ Հոռոմոցն ի վերայ նախնեացն է. Յունուարի՝ այս Յովան է նախնին իւրեանց: Բայցիի ասեն ոմանք, թէ յաւուրս Մանասէի՝ Նումաս Պոմ[պ]իլոս[8] երկու ամիս յաւել ի տարին Հոռոմոց, զի յառաջ քան զնա տասն էր. եւ յաւել նա զ[Յ]ունուարն եւ զՓեպրուարն: Իսկ Մարտն եւ Ապրիլն իմաստասիրաց անուանք են. եւ Աւգոստոսն՝ թագաւորի: Բայց այսոցիկ հաւատոյ կամ վարուց աւգուտ զի՞նչ, ասիցէ ոք. բազում ինչ ամենայն իրաւք, վասն զի աշխարհս ծով է, որպէս ասէ մարգարէն, ժամանակն չափ կամ կամուրջ կամ նաւ կամ ճանապարհ ի ծովու, եւ այս երեւելի մարդիկս ի ճանապարհի կենցաղոյս նշան բուռն հարկանելոյ, զի մի որպէս կոյրք անցանիցեմք ընդ կենցաղս, այլ թէ որ յիշեն բարիք են՝ ի նոյն նախանձն յորդորիմք, եւ եթէ չարք՝ զգուշանայցեմք, վասն զի աւր եւ տիւ եւ գիշեր վասն այն եղեն, զի մարդիկ իմաստասիրեսցեն՝ ըստ մարգարէին. «աւր՝ աւո՛ւր բղխէ զբան. եւ գիշեր՝ գիշերի՛ ցուցանէ զգիտութիւն»[9]: Եւ վասն արեգական եւ լուսնի եւ աստեղաց ասաց Աստուած. «եղիցին 'ի նշանս եւ ի ժամանակս, եւ յաւուրս, եւ ի տարիս», վասնզի որչափ զարեգակն դեր ի վերայ գագաթան ունիմք գնալով՝ աւր կոչեմք զնա, զի աւրն պատկեր է ամսոյն, եւ ամիսն տարոյն, զի տարին ՅԿԵ (355) աւր է. եւ յամիսն նոյնքան ժամանակք[10] են եւ յաւրն այնչափ մասն.[11] իսկ մասն արեգական մի չուրջ գալն է. նոյնպէս եւ լուսնին, մասն՝ նորա չուրջն է. քանզի արեգակն բոլոր չրջի /274ա/ որպէս աղաւրիք, որպէս անիւ, իսկ լուսինն 'ի թռիչս՝ որպէս թռչուն, որպէս նետ: Արեգակն մեծակն ասի կամ ուընջեան ասաղ՝ կամ լուսոյ ակն. չափ մեծութեան նորա քան զցամաք երկիր: Լուսինն նւազ լոյս, իգական լոյս, մթագոյն լոյս:

Եւ զի մաւտ յաշխարհս է, եւ որպէս հաւլի որ ծովու հանդէպ է՝ մղատագոյն երեւի, եւ որ ցամաքի՝ մաքրագոյն. թէպէտ ոմանք ասեն մրուր լուսոյ, այլ զլոյս գիտեմք պարզ էութիւն: Լուսինն անաւթն է. որպէս անուանն յայտ առնէ, թէ լոյս ունի. եւ ի հնանալն պատի զթիկամբն եւ ի նորանալն ի միւս կողմն պատի եւ ի ներքս մտանէ. եւ տեսեալ զնա մարդիկ յընծայիլ եւ ի մաշիլ ասացին, իմ ես աւրինակ ծննդեան եւ մահու: Իսկ անմոլար աստեղքն ի վերայ աւգոյդ որպէս բեւեռեալ են. նմաւ

չարժին եւ շրջին: Իսկ մոլորակքն շրջագայք են եւ գործաւորք եւ տանուտէրք: Եւ խաւարումն արեգական, որ բնութեամբ լինի ի նորանալ լուսնին, զի ընդդէմ անցանէ, իսկ որ ոչ այսպէս՝ այն նշանք են նոր իրաց, որ ի ժամանակին լինելոց իցէ: Իսկ խաւարումն լուսնի այսպէս լինի՝ Արուսեակն առաջի արեգական երթայ եւ փայլածուն զկնի եւ լուսինն ի մէջ նոցա. թէ այն երկու մոլորակքն յարեգական մաւտին՝ լուսինն խաւարի. եւ թէ քան զայս աւելի է՝ նշանք են: Եւ աւեն ամպեր Ռաստ եւ Ջանապ անուն, թէ նոքա խաւարեցուցանեն զարեգակն եւ զլուսին[12]: Եւ չափ բարձրութեան երկնից, որչափ յարեւելից յարեւմուտս՝ այնչափ մի եւ կէս՝ ըստ կամարի զմրեթաձեւ ձգեալ: Իսկ տարի արեգական. 'ի զարնան զուգաւորութենէն ի նոյնն է. եւ լուսին՝ յաւուր լրմանէն ի նոյնն, վասն զի թաւալի արեգակն յիլիցն ի մուտս ՅԿ (360) անգամ վասն զի թաւալմամբ գնա արեգակն ի հասարակածէն եւ ՅԿ (360) անգամ ի գիշերի ընդ երկրաւ մինչեւ ցծագումն իւր. եւ անտի յառաջ մի մի թաւալ յաւել. իսկ զիջականսն մի մի թաւալ պակաս է: Զվեց ամիսն ի տւընջեան թաւալմունս յաւելու եւ զվեց՝ ի գիշերի: Եւ առ մի մի թաւալումն Շ (500) ասպարէս լինի յառաջ խաղացումն, զի այնքան է մեծութիւն նորա: Իսկ ՅԿ (360) թաւալումն լինի ՃՁՌ (180,000) ասպարէս եւ ՆԾ (450) թաւալումն ՄԻԵՌ (225,000), վասն որոյ երկրաչափք ՃՁՌ (180,000) ասպարէս ասացին զերկրի լայնութիւն եւ զերկայնութիւն: Ասպարէսն ըստ աւդաչափութեան է քայլս ՃԷ (107), եւ զքայլն Զ (6) ոտն, եւ ոտն ԺԶ (16) մատն, եւ մղոնն Է (7) ասպարէս: Եւ ըստ Պարսից ասպարէսն ՃԻԳ (123) քայլ է, եւ գետնաչափութեամբ՝ մղոնն Ռ (1000) քայլ, եւ խրասախն Գ (3) մղոն:

Իսկ ըստ լուսնի տարին ՅԾԴ (354) աւր է, ըստ երկոտասան լրմանց իւրոց /274բ/ եւ ամսոց, վասն զի սա ուսոյց զերեսուն աւրն կոչել ամիս, որ ասէ իմ ես: Իսկ հինգ աւրն չարահար է ի նոր տարին կամ ի նոր ամիսն: Իսկ լուսնի աւրն ԻԳ (23) ժամք են եւ երկու մասն, վասն զի երկու մասն աւելի ընթանայ քան զարեգակն յամենայն աւուրս: Եւ ժամն լուսնի հինգ մասն են, եւ այս՝ սակս խոնարհութեան իւրոյ, զի շատ միջոցաւ հեռի է յարեգականէ, վասն զի նա զկամարաւն պատելով յերեսուն մասն կատարէ զժամն եւ սա սակս ուղեգնացութեան հինգ մասն, եւ հնգեակ վեցեակ լինէ, ըստ այս չափ մասին մերձ է լուսինն յերկիր քան զարեգակն: Եւ գնայ լուսինն, ո՛չ թաւալմամբ, այլ սողելով, եւ մասն լուսնի անձնաչափ տեղափոխութեամբ իւր, եւ այն երկու մասունք լուսնի ժողովին յամսեանն եւ լինին Կ (60), որ են հնգամասնեան երկոտասան ժամք, իսկ երկու ամիսն ՃԻ (120) մասն, որ լինի հնգամասնեայ ժամք ԻԴ (24), որ է աւր մի, եւ լինի երկոտասան ամիսն Զ (6) աւր: Այս մասունք են եւ կեսմասնականք եւ վերածականք եւ դոյն զաւր վեցեակ, սակս աւարտմանդ ի վեց աւր. սա լինի յարակայ հեռագայ ամին. վեց աւրս այս եւ հինգ աւելիքն, սոքա կոչին հնգեակ եւ վեցեակ, եւ սոքաւք պարտ է գտանել զքանիս լուսնին, եւ յանցեալ ամէն գան ի մի եւ լինին երկոտասան աւր, որ կոչի վերադիր կամ յարակայ: Բայց ոչ կարէ վերադիրն զքանիս լուսնին ցուցանել, վասն զի երկամասնութեան հինգ աւրն կորընչի եւ ոչ կարէ բերել զթիւսն կատարեալս: Իսկ որ վասն արեգական շաբաթանալոյ ասեն 'ի ԻԸ (28) ամի, ժողովեալ մասունքն եւթն աւր լինի, եւ շաբաթանալ ասի: Նոյնպէս եւ լուսին ԺԹ (19) ամի ժողովին եւ լինին եւթն եւ

շաբաթ: Եւ այսոքիկ յերկար ժամու պետք են առ ի քննութիւն, զոր անդրէն թողլի է:

Իսկ աւր եւ տիւ Մովսէս անուանեաց առաջին եւ երկրորդ եւ երրորդ, եւ զմինն, առանձինն՝ շաբաթ եւ Հեթանոսք Կուռնոս. եւ այլ մի ըստ միոջէքն եւ զեւթն՝ Աֆրոդիտեայ: Եւ ի հաւատալ մեծին Կոստանդիանոսի՝ սուրբն Սեղբեստրոս առեալ զանուն շաբաթուն եդ ի վերայ իւրաքանչիւրոցն, ասաց՝ միաշաբաթ, երկշաբաթ. այլաւքն հանդերձ: Եւ վասն լրմանցդ այսպէս ասեն, թէ ի թագաւորութեանն Անտոնինոսի՝ Արիսիդէս Աթենացի արար լրումն Հռոմոց 'ի Դ (4) ապրիլի. եւ ի Սեւերեայ թագաւորութեանն Եգիպ[տացւոց] եւ Եթէոպ[ացւոց] արար Ղեւոնդ՝ հայրն Որոգինի: Եւ յաւուրս Աղեքսանդրի՝ Մամեայ որդւոյ՝ Որոգինէ արար լրումն տասն ամի Արաբ[ացւոց] եւ Մակեդոն[ացւոց]:

Եւ ի թագաւորութեանն Գայիոսի, Անատոլիս եպիսկոպոս արար Յուն/275ա/աց եւ Ասորոց: Իսկ ի թագաւորութեանն Կոստանդիանոսի՝ Եւսեբի Կեսարու [Հայրապետն] արար լրումն Բիւթ[ա]ն[ացւ]ոց եւ Կապադ[ովկացւ]ոց: Եւ յաւուրս որդոյ նորա, Անդրէաս[13] եղբայր Մանդնոսի եպիսկոպոսի, միաբանութիւն արար ութն ազգաց լրմանց իննեւտասներեկաց եւ կարգեաց զերկերիւրեակն: Ի նոյն ժամանակս եղաւ եւ յայլոց ոմանց իննսուն եւ հնգեակն: Իսկ ի թագաւորութեանն Յուստիանոսի ամբարշտի, որ զտեսանընդառաջնի [տաւնն] փեպրուարի յերկուսն փոխեաց երկերիւեակն Անդր[է]այ լցաւ եւ պիտոյ էր զլուխ ՇԺԹ (519)-եակ կանոնին: Եւ ինն ամ խափան եկաց տումար եւ տաւն: Ապա Էաս իմաստասէր Աղեքսանդրացի[14] ժողովեաց առ ինքն երեսուն այր իւր նմանի, եւ յառաջ վարե[ա]լ զարվեստն Անդրէասայ, արարին ՇԼԲ (532) ամաց լրումն ի նոյն դառնալով, վասն այն անտարակուսելի է բոլորն այն: Բայց զԻրիոն[15] իմաստասէրն ի դրան թագաւորին ոչ կոչեցին, սուտ եւ հերձուածող գոլով, եւ յորժամ իմաստասէրն յուեաց՝ Եղոգս անուն, եբեր զաւրինակն եւ քննել Իրիոն զմասունս հնգեակի եւ վեցեակի, որ ոչ երբեք լեալ էր, զի հինգ հնգեակ եւ վեց վեցեակն, որպէս յառաջն ասացաւ մասունք են մին՝ արեգական եւ մին՝ լուսնին, այլ նա հակառակ ասաց, արար զապրիէլ հնգետասան 'ի վեշտասան եւ զվեց ի հինգ. արդ այն ԺԶ (16)-ն չբերէ ինչ սխալ, այլ այն վեցն եղեալ ի վեց եւ ի հինգ տարումն կիւրակէ ածէ մեզ որպէս եւ է. իսկ այն է նոցա շաբաթ, ըստ Իրիոնի առնելոյն: Եւ նոքա ընդ Հրեայսն զատիկ առնեն եւ ի սուրբ ժողովոյն նզովքն անկանին, զի գրեալ է նոցա կանոնս, թէ ընդ խաչահանունսն եղիցին: Իսկ մեք ի միւս կիւրակէն տամք եւ զերծանիմք, քանզի յետ ութ ամի իմաստասիրացն ապա երեւեցաւ եղծումն իրացն եւ Հայք յԱգդէէ Գամրացի իմաստասիրէ՝ յառաջ առեալ էին զուղղորդն եւ յայն ժամ ընդ պարսից իշխանութեամբ գոլով՝ չանկան յեղծումն նոցա. եւ էր այն 'ի տասն թւականին Հա[յ]ոց: Եւ որպէս ոչ ընկալան Հայք զչար աղանդն Քաղկեդոնի, նոյնպէս եւ ոչ զայս, թէպէտ յետ երեսուն ամի թագաւորեաց Զենոն եւ գրեաց ամենայն ուրէք, որ անուանի հենատիկոն, որ թարգմանի միաբանութիւն ուղղափառութեան. եւ նզովեցին զժողովն Քաղկեդոնի: Այսու սահմանաւ վարեցաւ Անաստաս եւ զաւրք Աստուածն խաչեցա[ն] հաստատեաց: Բայց զկնի ամենեցուն, վերոյ ասացեալն Յուստիանոս արար ժող/275բ/ով ի Կոս-

տանդինուպաւլիս, զոր Հինգերորդ ժողով կոչեն, և եղծեաց զամենայն կարգս և զկրաւնս, ընդ իւր միաբանեալ զամենայն ազգս բարբարոսաց Հիւսիսային, մինչև 'ի Վիրս: Արար յղմունք Անանիայ և զկնի տէր Մովսէս[16], և յայսմ ամենայնի ընդ մեզ էին Վիրք ճԺԴ (114) ամ: Եւ յորժամ մերքս բաժանեցան և զտումարս շրջեցին՝ յԱրաց յերեսունն էր յայտնութիւնն. վասն այն ասեն՝ կալ թիւ մի յԱրաց ամսոյ: Եւ շրջելոյ պատճառ ասեն ոմանք, թէ ընդ պարսից իշխանութեամբ էին, իշխանքն կամեցան թէ ընդ նոսա յար լիցի, որ երկու անգամ տարեմուտ ո՛չ պիտի առնել: Բայց Հայք աւելի քան զԱսորիք և զՀրեայք՝ չեն լեալ ընդ Պարսաւք, զի Պարսից տաւնն և ամիսն ի միասին շարժի և մեր տաւնքս անշարժ են: Եւ այլք ասեն, թէ վասն աշխատելոյ մանկանց ի յուսումն, զի դիւրաւ զատանելին՝ դիւրավ արհամարհելի է: Եւ ոմանք թէ կամեցան ամենայնիւ բաժանել զմեզ ի Յունաց, զի մի խառնեսցուք ընդ նոսա տաւնիւք կամ ամսաւք կամ տարեմտիւք: Այլ մեք Աստուծոյ շնորհաւքն՝ զտերունական և զգլխաւոր տաւնսն սեփական ի գրոց ունիմք. և այս ի՞նչ վնաս նոցա կամ մեզ. տաւն որ յաւուրս Վարդավառին՝ բարեկենդան առնել, կամ որ յինունքն աշունն: Բայց այս է պատճառն, որ երբ կամեցան առնել համառաւտ և սեփական, և մինչդեռ էին ի ջանս, մեռաւ կաթողիկոսն և յետ նորա արուեստաւորն[17], և այլ ոչ եղեւ ումէք փոյթ: Իսկ ի ժամանակս Եւքելլոսի Աթենացւոյ[18] առ որով եղաւ ագոնն[19], որ է մրցութիւն՝ Ղոմբիադն կոչեցեալ, որով Հելլենացիքն վարեն զժամանակս իւրեանս. և հնարեցաւ զայս ի Փարինոսէ, հրամանաւ Հերակլեայ, առ ի խաղաղել զխիստ պատերազմն՝ «Կացէք, ասէ, մինչև ի տարին ուրախութեան և ապա ցուցցէ իւրաքանչիւր ոք զուժ իւր և զարուեստ և պսակեսցի»: Բայց Եւսեբի առ Յովաթամաւ արքայիւ ասէ այլոց բանիւ: Բայց առնեն զագոնն ի հինգ ամին, յորժամ չորքն լնու և հինգն սկսանի. և այս է նահանջն, որով տումարական արուեստն յառաջանայ ի ժողովումն: Այլ մեզ տարի և տարեկան, որպէս թէ փրկութիւն և փրկանք Քրիստոս է. և տարեմուտ՝ ծննդեամբ մաւտ նորա յաշխարհս, և չորս յեղանակ, չորեք նիւթեայ բնութիւնս, կուսական յղութիւնն՝ որպէս ձմեռն, /276ա/ և ծնունդն որպէս գարունն. ամառն նշանքն, աշունն կամաւոր անշնչանալն ի խաչին, աւել աւուրք հինգ զգայութիւնքս: Եւթ աւր շաբաթու՝ ձայնին եւթն գործարանքն, երկոտասան ամիսք՝ տիրական անդամքն ՅԿԵ (365) աւր՝ Յ [300] յաւդուածքն. տիւ՝ աստուածութեան լոյսն. գիշեր՝ մարդկութեանն եղեալ որպէս ծածկոյթ: Ընդ տիւ և ընդ գիշեր աւր մի՝ բանն մարմնովն մի Քրիստոս: Արեգակն՝ աւետարանն: Լուսին՝ աւրէնքն, արուսեակն՝ Յովանէս, գիշերավար՝ Պաւղոս, կենդանակերպք՝ երկոտասան առաքեալքն, եւթն մոլորակքն՝ Ստեփաննոսեանքն, անմոլար աստեղքն՝ մարգարէքն, երկինքն՝ երկնաւորն, երկիր՝ երկնաւորն, հուր՝ Հայրն, հողմն՝ Հոգին, դրախտ՝ եկեղեցի, կենաց փայտ՝ խաչն, աղբիւր՝ Տիգրիս վտակն, պտուղ՝ մարմինն և այլք այսպիսիք:

Թէ պարծի հռոմեցին, թէ յունուարի վեցն ծնաւ Քրիստոս, ո՛չ ինչ նուազ այն, զի ի Նաւասարդի ԻԵ (25) զծնաւղն իւր փոխեաց յատեացս, թէ բարեբախտիկ կայսր, զի ի գրեալն զմարդիկ, ծնաւ Ազատարարն ի ծառայութենէ, առաւել զուարճացի Աբգար, զի գրեալ զաւանեաց զնա Աստուած և Որդի Աստուծոյ:

Քննել արժան է և զայս, թէ զիա՞րդ եկեղեցիք հայաստանեայցս ի մուտն Նաւասարդի տաւն կատարեն Յովանու: Ասեն թէ, թագաւորն Հա[յ]ոց Արտաշէս բարեմիտ երևեալ յազգի անդ իւրում՝ շինութիւն և խաղաղութիւն աշխարհի ամենայն ուրէք յաճախ յաւելեալ և սիրելի ամենեցուն և հռչակաւոր լեալ: Որդի մի էր նորա՝ Արտաւազդ անուն՝ բախած ի մանկութենէ, զոր Շիդարն կոչեն: Եւ հաւրն գիտելով, զի ոչ էր բաւական վարել զթագաւորութիւնն՝ ոչ ետ նմա: Իսկ յորժամ վախճանեցաւ և որդի յար ինքեան ոչ մնաց՝ սուգ ծանր եղև աշխարհի, այնքան՝ զի բազում զէնս խորտակեալ ի վերայ գերեզմանին և երիվարս յոլովս. այլ և ծառայքն և աղախնայքն սպանին զինքեանս ի վերայ նորա: Եւ զայն տեսեալ Արտաւազդայ տրտմեցաւ յոյժ և ասէ. «Որքան կենդանի էր՝ զթագաւորութիւնն ինձ ոչ ետ, և արդ ի մեռանելն՝ աւերեաց զերկիր. աւէր երկրի զիա՞րդ թագաւորեցից»: Եւ ապա հեծեալ յերիվար, զբաւսանաց աղագաւ, գնալ ի կողմն կամրջին Միհմաւրի և անդ հարեալ յայսոյն չարէ՝ ընկեցեալ ի կամրջէն՝ ջրասոյզ եղեալ անյայտ լինէր: Իսկ մերձ /276բ/ակայքն համբաւ այսպիսի վերացուցին. աստուածքն զայրացեալ վասն զհայրն բամբասելոյն՝ յափշտակեցին զնա ի լեառն Մասիս և երկաթի կապանաւք կայ ի բանդի, և երկու շունք՝ սև և սպիտակ՝ յար լեզուն զկապանս նորա. այս է յարալէզն՝ առասպելն որ ասեն: Յայս յաւելուած առարին քուրմքն ժամանակի և ասացին, թէ երկաթի կապանքն ի տարեմտին ի մազն եկած լինի, և թէ կորի, արտաքս ելանէ և աւերէ զաշխարհս: Ապա աւրէնք գրեցին յազգս Հա[յ]ոց՝ ամենայն արհեստաւոր մի անգամ բախել զարուեստն ի մուտն Նաւասարդի, յաւելուած կապանացն Արտաւազդայ: Դարբին զաւլն հարկանէ կռանաւ՝ զատարկ, այսպէս հանդերձագործն, նոյնպէս և այլքն: Զայն խափանելոյ աղագաւ սուրբ Լուսաւորիչն Գրիգորիոս կարգեաց հաստատուն յայսմ աւուր տաւն մարգարէին և Մկրտչին Յովանու:

Արդ, որովհետև հասաք յաւուրս յայս շնորհիւ Աստուծոյ խաղաղութեամբ և տաւնել արժանաւորք եղաք զնոյն ինքն, որոյ տաւնեմքս և որոց այսաւր յիշատակ է՝ յիշելով զսուրբ կոյսն և զսուրբն Ստեփաննոս նախավկայն՝ առաքելովք և մարգարէիւք և մարտիրոսաւք և նահատակաւք, վկաիւք և խոստովանողաւք, և որ մերն է Լուսաւորիչ բազմաչարչար նահատակն Գրիգորիոս, բարէխաւս և միջնորդ կալցուք առ նորա գործ Սուրբ Երրորդութիւնն՝ զաւրս զայս շնորհաւոր առնել և խաղաղական կենաւք անցուցանել հանուրց հաւատացելոց՝ եկեղեցականաց և աշխարհականաց, թագաւորաց և իշխանաց, ազատաց և ռամկաց, տերանց և ծառայից, տիկնանց և աղախնաց, հարստից և աղքատաց: Նորաբարն Աստուած նոր արասցէ զսոսա զամենեսեանն ներքոյ և արտաքոյ, նոր և չահեկան և աճեցուն տարի և ժամանակ ածելով յամենայն ժամանակաց: Նոր արեգակ և լուսին և աստեղք, նոր ծագեալ թագաւորն փառաց, նոր ողորմութեամբ երևեալ աստեղախուռն սրբովք. և կացցէ ի միջի՝ ձերում և նոր արասցէ հոգւով և մարմնով՝ պատկառելի գլխաւս և կատարեալ անդամոցդ. նոր ամ՝ երկոտասան ամսաւք երկոտասան անդամոցդ շնորհի, և նոյն ինքն տարեկանն մեր Յիսուս Քրիստոս՝ Հայր և Հոգով՝ նոր տարի և նոր աւուրք բերցէ ձեզ ՅԿԵ (365), նոյնքան ոսկերացն և երակաց: Նոյնպէս՝ նոր ժամք և մասունք

ուրնջեան եւ գիշերի, նոր աւրհնութիւն հանգիցէ ի մատունս ոսկերաց ձերոց, նոր խնդութիւն զգեցեալք երկնաւորք եւ երկրաւորք նոր բերկրանաւք ասասցեն՝ եղիցի, եղիցի: Այլ եւ զսերմանս բարեպաշտութեան անսխալ աճին լայնութեամբ եւ ընդարձակութեամբ. եւ զարմատս հաւատոյ անվթար, գծագիկ յուսոյ անթառամ, եւ զպտուղ հաւատացմանն տոհմականաւք ձեզ՝ սպասաւորելոց եւ մեզ՝ սպասաւորացս, շնորհաւք բարոյն, հոգեկանաւք եւ մարմնականաւք, զաւրանալ հանապազ 'ի փառս աւագին ամենայն բարեաց, որում փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Բառացի վերցուած է Հին Կտակարանից. Առակք Սողոմոնի, գլ. Գ 19:

2. Թուղթ առ եբրայեցիս, գլ. Ա 10

3. Գիրք Սաղմոսաց Դաւթի, Ձ 4

4. Այս հատուածը Գ ձեռագիրը հաղորդում է մի քիչ այլ ձեւով, որն աւելի լաւ է առնչւում բովանդակութեան հետ: Այնտեղ գրուած է. «զնոյն եւ մեք առնեմք՝ ընծաելով միմեանց եւ այլոց, ընթանեաց եւ աւաքաց. թէ հոգեկան ինչ իցէ, թէ՝ մարմնական»[*]: Եթէ աչքի առաջ ունենանք նաեւ վերեւի պարբերութիւնը, ուր խօսւում է հրեաների կողմից իրենց իշխաններին ու թագաւորներին տարեմուտին նուէր տալու սովորութեան մասին, ապա պարզ կլինի, որ հայերը նոյնպէս նոր տարուայ օրը նուէրներ էին մատուցում իշխաններին («աւաքաց»):

5. **Կոզմաս Միլեթացի** - հնում համարւում էր յունական արձակի եւ պատմութեան նախահայրը, ապրել է VI դարում ն. մ. թ. Նրան վերագրել են առասպելական որոշ գծեր:

6. Գիրք Ծննդոց, գլ. Գ 19

7. Վանականը ծանօթ է եղել Անանիա Շիրակացու «Տիեզերագիտութիւն եւ տոմար» աշխատութեան մէջ եղած հայկական ամիսների անունների մասին եղած առասպելին, բայց չի բաւարարուել այդ բացատրութեամբ: Նրա բացատրութիւնների համար որպէս հիմք է ընդունուած Սարկաւագ վարդապետի կողմից 1084 թուին կարգաւորուած տոմարը, որը քիչ անց «Յայսմաւուրքների» միջոցով աւելի լայն տարածում գտաւ:

Ընդունելով սարկաւագադիր տոմարը, ըստ որի Նաւասարդի մէկը համապատասխանում է Յուլեան տոմարի օգոստոսի 11-ին՝ Վանականը, անկախ իր լեզուաբանական դրոյթի սխալ կամ ճիշտ լինելուց, պիտի յանգէր բռնազբօսիկ եզրակացութիւնների, որովհետեւ Նաւասարդի մէկը ի սկզբանէ համընկնում էր ոչ թէ օգոստոսի 11-ին, այլ գարնանամուտին:

[*] Գ ձեռագրում դ-ի եւ տ-ի փոխարէն թ կամ գ-ի փոխարէն ք գործածելը սովորական եւ բազմաթիւ անգամ կրկնուող սխալներից է. օր.՝ քաղթէութիւն, կաթմօս, շիթար, սուք, թարքման եւ այլն:

8. **Նումա Պոմպիլոս** - հռոմէական 7 թագաւորներից երկրորդը: Յունական եւ հռոմէական պատմագրերը սրա անուան հետ են կապում որոշ իրաւական եւ կրօնական ռեֆորմների անցկացումը: Սրան են վերագրում նաեւ տոմարի կարգաւորումը: Նա հռոմէական տարուայ վրայ, որն ունէր 10 ամիս եւ 304 օր, աւելացրեց 2 ամիս: Այդպիսով, հռոմայեցոց տարին դարձաւ լրիւ լուսնային տարի՝ 355 օր:

9. Գիրք Սաղմոսաց Դաւթի, ԺԸ 19:

10. «Հայկազեան բառգրքի» հեղինակներին եւ պրոֆ. Հ. Աճառեանին (տե՛ս «Արմատական բառարան») յայտնի են «ժամանակ» բառի՝ տարի, դարաշրջան, հասակ, օրհաս, կեանք, տարուայ եղանակ, յարմար առիթ նշանակութիւնները: Բայց «Տարին ՅԿԵ օր է. եւ յամիսն նոյնքան ժամանակք են» հատուածին վերոյիշեալ նշանակութիւններից ոչ մէկը չի յարմարւում: Ակներեւ է, որ «ժամանակ» բառը, բացի վերոյիշեալներից, ունեցել է նաեւ երկու ժամուայ տեւողութեան նշանակութիւն:

11. «Մասն» բառը յայտնի է վայրկեանի եւ վրացերէն լեզւում՝ 15 վայրկեանի նշանակութեամբ (տե՛ս **Հ. Աճառեան**, Արմատական բառարան): Այստեղ «մասն» բառը գործածուած է չորս րոպէ տեւողութեան նշանակութեամբ:

12. Ռաստ եւ զանապ ամպերի մասին տեղեկութիւն կայ նաեւ Վարդան Արեւելցու Պատմութեան եւ սաղմոսների մեկնութեան մէջ: Մի դէպքում նրանք հանդէս են գալիս որպէս փոթորիկ՝ վիշապի գլուխ եւ պոչ, «որ զամենայն երկիրս բոլորեալ է». միւս դէպքում նրանք պատկերացւում են որպէս ամպեր՝ «Թանձր ամպքն կոչեցեալ ռաստ եւ կամ զանապ»[1], եւ պատճառ են հանդիսանում արեւի եւ լուսնի խաւարման:

Արեւի եւ լուսնի խաւարման այս բացատրութիւնը սերտ առնչութեան մէջ է հայ ժողովրդի հաւատալիքների հետ: Անգամ XIX դարում Վանի շրջանում հաւատում էին, որ «սատանանեռը (=վիշապք) կժողովին երբեմն եւ կուգեն հակառ կայնել արեւուն, որպէս զի անոր լոյս երեսը չտեսնան մարդիկ»[2]:

Ռաստ եւ զանապ ամպերի մասին Վանականի հաղորդածն անչուշտ հետաքրքիր է ժողովրդի հաւատալիքների եւ աշխարհայեացքի լուսաբանման համար:

13. **Անդրէաս Բիւզանդացի**. «Երկերիւրեակ» կոչուած շրջանի կազմողը, որը գործածութեան մէջ մտաւ 353 թուին, եւ որով սկսեց առաջնորդուել եկեղեցին եկեղեցական տօների կատարման գործում: Երկերիւրեակը վերջացաւ 552 թուին:

14. **Էաս Աղեքսանդրացի**. 552 թուին Անդրէասեան շրջանի սպառման շնորհիւ, ինչպէս մեր հեղինակն է գրում, «ինն ամ խափան եկաց տումար եւ տօն»: Եկեղեցական տօների համար մի հաստատուն ցուցակ ստեղծելու գործը ստանձնեց Էաս Աղեքսանդրացին: Նա 561 թուին Աղեքսանդրիայում հրաւիրեց 36 գիտնականների ժողով, որտեղ եւ կազմուեց հինգհարիւրակը կամ Էասեան շրջանը:

15. **Իրիոն Բիւզանդացի**. սրա գլխաւորութեամբ Բիւզանդական եկեղեցին քննարկեց Էասեան հինգհարիւրակ շրջանը եւ որոշ փոփոխութիւններով ընդունեց այն:

1 Տե՛ս Վարդանի «Պատմութիւն տիեզերական», Մոսկուա, 1861, էջ 180: Պիտի լինի ոչ թէ «Ռաստ եւ կամ զանապ», այլ «Ռաստ եւ զանապ», հակառակ դէպքում «Թանձր ամպքն» յոգնակի չէր գրուած լինի:

2 **Գ. Սրուանձտեանց**, Գրոց ու բրոց, Կ.Պոլիս, 1874, էջ 109

16. **Մովսէս Եղվարդեցի** կաթողիկոսը 584 թուին Դուինում հրաւիրում է եկեղեցական ժողով, որտեղ քաղաքական եւ դաւանաբանական նկատառումներով ընդունեցին Հասեան (եւ ոչ՝ Իրիոնեան) շրջանը՝ յարմարեցնելով այն հայկական շարժական տոմարի պահանջներին: Այստեղ Անանիայի անուան յիշատակութիւնը թիւրիմացութեան արդիւնք է:

17. Այս հատուածում հեղինակն ակնարկում է Անաստաս Ակոռեցի կաթողիկոսին (661–697), որը 665 թուին Անանիա Շիրակացուն յանձնարարում է հայկական շարժական տոմարը դարձնել անշարժ: Ըստ Յովհաննէս կաթողիկոսի վկայութեան՝ Անանիան «ջան ի վերայ եդեալ՝ յաջողեցաւ բարեձեւել ըստ բոլոր ազգաց պայմանի, անշուշտ, այսինքն՝ հաստատուն յօրինել զկարգ հայկականս տոմարի»: Սակայն կաթողիկոսի, ապա եւ Շիրակացու (արուեստաւորի) մահուամբ խափանուեց տոմարական այդ կարեւոր բարեփոխութիւնը:

18. **Էսքիլլոս Աթէնացի** (ծնուել է Էլեւսինում՝ 525, մահ. 456) յունական ողբերգութեան հայրը: Նրա ողբերգութիւնները առեղծուել են եւ անմիջականօրէն կապուած են Դեմետրայի եւ Դիոնիսի պաշտամունքի հետ կապուած կրօնական տօների հետ:

19. **Ագօն.** Յունաստանում կրօնական եւ քաղաքական տօների հետ կապուած եւ պարբերաբար կրկնուող խաղեր եւ մրցակցութիւններ:

«ՅԱՂԱԳՍ ՏԱՐԵՄՏԻՆ Ի ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԱՍԱՑԵԱԼ»-Ի ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

էջ 180

1. X Բան վասն տարէմտին, Բ Ասացեալ չիք, 2. Բ Սաղամոն, 5. Ա աստուածաբանութեան, 7. Գ զհիմունս, 9. Բ ամբք, 11–12. Ա տարերաց չիք , 12–13. Գ կարաւտ եմք, 13. Բ աստուածական, 14–15. Ա հողոյն չիք, 19. Բ անձրեւաւք, 20. Բ զմիտս, 20–21. Բ սպասաւորութիւն: 25. Բ մարդկայինս, 28. Ա որոշել, 31. Ա ըստ բնութեանն չիք, 35. Բ բաց ի, 37. Բ որդոյն, Ա պակասումն, 43. Ա, Բ փրկութիւնն, 46. Բ աստուածախաւսն աւէ, 47–48. ՁՁ «զերկինս եւ զերկիր» ուղղեցինք համաձայն Ծննդոց գրքի Ա գլխի առաջին պարբերութեան:, 48. Բ թէ ի սկսանելոյ, 49. Ա տասցեն, 50–51. Ա կամ ինքն եղէ : 54. Բ կատարած, 58. Բ ձեռաց քոց չիք, 59. Բ յառաջնում, 61. Բ յերկրորդում, 62. Բ երկինքն, 66. Բ անցանէ, 67. Ա անդանի, 68. Բ կերպարան, 69–70. Բ եւ նորոյ երկիր չիք, 71. Ա որ փխ ամենայն որ ինչ, 75. Բ ի կատարումն, 82. Ա աւր:

էջ 181

1. Ա վայրկան, 3. Ա որիշ եղ, 4. Բ զամագիտ, 7. Բ եւ մին վեց չիք, 8. Բ զեւթներորդն, 15. Բ գործել եւ յեւթանն հանգչել, 18. Բ կուտք, 26. Ա զքաւութիւնն, 31. Բ սկիզբն աւուրց, 32. Բ սկիզբն տարոյ, Բ մեծարէին փխ պատուէին, 35. Բ բնակեցան հարք նոցա յոր պարծէին, 40. Ա ընծաեցանէին, 42. Բ ընձայք, 47. Բ ընձաելով, 48. Գ աւաքաց փխ աւտարաց, 49. Բ ինչ իցէ, 52. Բ որպէս թէ աւրինակաւ, 54. Բ չնոհաւոր փխ շահաւոր, 56. Ա սակաւ չիք, 58. Ա անդուռն, 64. Ա բոլորն: 70–71. Բ յԱղաւբեսէ, 72. Ա անգի, 73. Բ քաղդէութիւն, 74. Բ թէպէտ ոմանք, 75. Ա մոլորակացս, 76. Ա Ենոք, 77. Գ կարճոստունս, 78–79. Բ առաջնոց եւ զմարգարէութիւն:

էջ 182

1. Բ զաստուած, 2. Ա երկրպագին, Ա կանկնեցին, 9. Բ իրիկեան, 10. Բ նոյնպէս եւ, 18. Ա Աղւանից, 21. Բ իսկ Հոռմեցոցն, Բ ձմերանն է, 22. Ա իմաստնոցն է ի բաժանել, 28. Ա պատուել զաւրն զայն չիք, 29. Բ տրովք, Ա խս փխ իսկ, 30. Բ յանունն է, 31. Ա յեղանակացտ, 33. Բ գլուխ տարո, 37. Ա հող, 41. Ա ի չիք, 43. Ա Նու այր, Բ Նո այր, ուղղեցինք Նոյ՝ այր: 47. Ա Հայկինն, 48. Բ Հոռ, Սահմ, 50. Ա եւ Բ ձեռագրերում «եղանակացդ» բառից յետոյ լուսանցքում կայ հետեւեալ յաւելումը. «Մարգաց եւ Հրատից, որ է սուրգապէս ամենայնդ 'ի վերայ եղանակացդ»: Այս յաւելումը մուել է Գ ձեռագրի տեքստի մէջ:, 51–53. Բ եւ դարձեալ… Ովկիանու չիք, 54–55. Բ զցորեան եւ զգինի, 55–59. Բ զի յինն… եւ գիշերն չիք, 61. Բ իմաստունք, 62. Բ ի ձմերանոյն, 63–64. Ա զի առնու գիշեր յաւրէն ի ժամն եւ զմասունքն, որպէս կրելով յինքն:, 65–70. Բ ըստ հանճարեղ արանց… գիշերն հնգետասան չիք, 73. Ա մարդ է, ՁՁ Մահեկի, 75. Բ կան փխ լինին, 76. Ա մահ, 78. Ա հիւսիւսի, 79–82. Բ զի երկոտասան… եւ գիշերն չիք, 84. Ա աՀ է չիք, 85. Ա ամենայն մարդոյ, 86. Ա թէ չիք:

էջ 183

1. Բ աերեւաւք, 4. Ա ակածելո, 5. Ա յազեստանի, 7. Բ եւ առ շանն, 7. Բ զի ի ԺԳ… եւ ոխ ԺԵ, 8. Ա խեծգետի, 10. Բ Հրատիցն, 10. Բ դրութեան, 13. Ա սուրբս, 13–14. Ա այլոց անուանք ոչ յիշի ազգաց, 14. Ա Անկէաս, Բ Անդէաս: 17. Բ Նաւասարդեցի, 20. Բ ախեցի, 20–21. Ա պատրոնաց, 21. Բ Սոնեթեցի, 23. Ա ծառաբար, 28. Ա Ապլիոս, 30. Բ Հոռմեցոցն, 31. Բ է չիք, 33. Ա Պոլիմոս, 34. Բ Հոռմեցոց, 37. Ա Ապրիլին, 38. Ա աւգոստոս, 39. Ա այսոցիկ չիք, 43. Ա նաւ ճանապարհ, 44. զի փխ եւ, 45. Բ ի ճանապարհին, 48. Բ յիշինն, Բ նոցա փխ նոյն, 50. Ա իսկ փխ վասն զի, 51. Ա վասն այն եղեն չիք, 53. Բ բխէ, Ա բղխէ զբան չիք, 54. Ա զգիտութիւն չիք, 55. Բ եւ ասեղաց չիք, 56–57. ՁՁ «եղիցին յաւուրս եւ ի ժամանակս եւ ի տարիս եւ ի նշանս» ուղղեցինք համաձայն Ծննդոց գրքի Ա գլխի 14 պարբերութեան:, 58. Ա զի չափ զարեգակն, 62. Ա ժամք են: 77. Ա Լուսնին, 79. Ա զհնանալն, 82. Բ յընձաիլ, 84. Բ անմոլարքն ի վերայ, 85. Ա բեւեռ են:

էջ 184

1. Ա մոլորականքն, 1–2. Բ մոլորակքտ շրջագայք որպէս գործաւորք եւ տանուտեարք, 5. Ա անցանի, Ա այսպէս ոչ, 9. Ա բայց փխ եւ, 13. ՁՁ զՌաստ, 19. Բ զուգաւորութենէ, 20. Բ ի նոյն, 22–24. Ա ՅԿ անգամ… հաստարակօրէն չիք, 24. Ա ՅԿԵ անգամ, 26. Ա եւ անգի մի թաւալ, 30. Բ աստ եւ այլուր «ասպարէզ», 34. Ա մի Ռ փխ ՄԻԵՌ, 41–42. Բ ձԽԳ քայլ է, 43. Ա խրասխն, 44. Ա լուսնին, 44–45. Ա Աւր է չիք, 48. Բ է աւրն չարարկ է, 49. Ա ի տարին, Ա լուսնին, 53. Ա յայս: 55. Բ հետի չիք, 56. Բ կամարոյն, 57. Ա կատարելով, 58–59. ՁՁ և էգ Ձ եկ լինէ(?), 62. Ա անձաչափ, 65. Ա

լինի, Բ և ամասնեա, 67. Ա է ամսեան, 70. Բ եւ կեսք մասնականք, 71. Ա վերածակքն, 72. Ա սայ լին, 80. Բ երկամասնութիւն, 80–81. Ա է աւուրն կոչի, 81. Բ ոչ բերէ, 83. Ա ի չիք, 85–86. Գ լուսինն ի ժԹ ամին է աւուրքն չաբաթ:

էջ 185

8. Ա Ափրոդիտէ, 10. Ա չաբաթուն չիք, 12. Բ եւ այլաւքն, 13. Ա լրմանցտ, 14–15. Ա Արխեդէս, 16. Ա դ-իցն ապրիլի, 16. Ա Սեւերա, 20. Բ Որոգինէս, 29–30. Ա Անդրէ եղբայր Մագնոսի, 32. Ա եւ կարգեաց չիք, 34. Ա մասանց փխ ոմանց, Ա ԼԷ-ակն, 36. Ա ընդ աջն, 37. Ա փետրուարի, 40. Բ տումարն, 41. Ա յԱղեքսանդր, 42. Ա առ ինքն չիք, Բ այր չիք, 44. Ա Անդրա, Բ արարին չիք, 47. Ա զիրոն, 51. Բ մասունս, 52–53. Բ լեալ է, 54. Բ յառաջ, 57–58. Ա, Բ ժԵ, ժԶ եւ Զ, Զ-ն Ե, 59. Բ ազալ, 60. Բ կիրակէ, 61. Ա այն է, 64. Ա անգանին, 69. Բ յԱգդէ, 71. Ա զողղորդն, Բ զուղորդն, 75. Ա կեդրոնի փխ Քաղկեդոնի, 78. Ա ուր անուանի, 82–83. Ա խաչեցար, 84. Բ մեր:

էջ 186

4. Ա Հիւսայիւն, Բ Հիւսւսաինն, Բ բարբարոսաց ազգս, 5. Ա ցՎիրս, 7. Ա Վիրգ: 9. Ա յարանց, 11. Ա եւ պատճառ շրջնլոյն, 15. Բ չպիտի, 18. Բ չարժիլ, 19–20. Ա թէ վասն չիք, 21. Ա գիւր, 23. Ա ամենեւին, 24. Ա տատնեսցուք փխ խառնեսցուք, 24–25. Ա կամ ամսաւք չիք, 28. Ա սոցա, 30. Ա բարեկեանդան, Բ. բարեկենդանին, 37. Ա ազոն, 38. Ա մրցութեան, 40–41. Ա ի Փոտինոսի հրամանէ, Բ ի Փիտիոսի հրամանէ. ուղղեցինք ի Փատինոսէ, հրամանաւ, 45. Բ արուեստ, 52. Ա փրկական փխ փրկանք, 54. Բ մուտն, 58. Բ աչունն, Ա անչնչանալ, 61. Բ գործարանք, Ա ամխաքն, 62–63 Գ ՑԿԵ յօդխուածքն, 64–65. Ա մարդկութիւնն որպէս ծածկոյթ եղեալ, 66–67. Ա բան մարմնով միտքս փխ մի Քրիստոս , 70. Բ առաքեալք: 72. Ա, Բ երկինք, 73. Բ ապայ երկրաւորն, Ա հայր, 75. Ա, Բ Տիգին ուղղեցինք Գ ձեռագրով:, 81. Ա գրեյն, 83. Ա զւարճացի:

էջ 187

3. Ա, Բ կատարէ, 5. Ա, Բ երեւել, 7. Ա յաւելել հաճախ, 9. Ա Արտաւազ, 15. X չէնս, 17–18. Բ ծառայք եւ աղախնայք, 17–19. Գ եւ ծառայս եւ աղախնեայս սպանէին ի վերայ նորա ինքեանք, 19. Բ Եւ չիք, 20. Բ աւէր, 22. ՁԶ ի մեռանելս, 23. X երկրիս, 25. Բ յերիվարայ, 27. Ա յայսուն, 26. X Մեծամօրի, 27. Բ ընգեցեալ, 31. Բ բամբասելոյ, 32. Ա լեռն, 35. Բ յարալէզ, 35–36. Ա առասպելն չիք, 37. Բ քուրմք ժամանակին, 38. Ա կապաւք, Բ ի չիք, 38–39. Ա ի մազ ընկած, 40. X եւ աւերէ չիք, 41. Բ դրին փխ գրեցին: 46. Ա հանդերձագրածն, 48. Ա Գրիգոր լուսաւորիչն, 49. Բ տաւնել, 50. Ա Յովանու չիք, 52. ՁԶ չնորհելով, ուղղեցինք չնորհիւ, 53. Ա եղեաք, 54. Ա տաւնեմք, 55–56. Բ եւ Սանփաննոս, 58. Բ վկաաւք, 64–65. Բ անցուցանել չիք, 65. Բ Հայաստանեացս փխ Հաւատացելոց, 70. Բ Աստուածն, Ա զոսա չիք, 71. Բ զամենեսեան, 75. Բ աստեղք չիք, 78. Բ ոգով, 82. Բ տարեկանն չիք, 83. Ա հոգովն, 84. Բ աւր եւ աւուրքք:

էջ 188

1. Բ աւրհնութեամբ, 3. Ա ագեցեալ, 3–4. Ա երկնաւք եւ երկրաւք, 6. Ա անօղալ, 8. Բ յուսոյն, 9. Ա հառուցման, 10. Բ սպասաւորացդ:

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՑՈՒ «ՎԱՍՆ ԲԱՆԻՆ ՄԱՍԱՆՑ» ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ[*]

Վարդան Արեւելցին[1] մեր մատենագրութեան այն դէմքերից է, որի հանճարը փայլել է բազմաթիւ բնագաւառներում. նա մեծ պատմագիր է, քերականագէտ, բազմաթիւ հետաքրքիր ճառերի ու քարոզների հեղինակ, մի շարք թէ՛ փիլիսոփայական եւ թէ՛ աստուածաբանական երկերի մեկնիչ. յօրինել է շարականներ, կազմել ու խմբագրել «Տօնապատճառ» կոչուող ժողովածուն, հանդիսացել է մեծ թւով անուանի մատենագիրների եւ հասարակական գործիչների ուսուցիչ, առաջնակարգ դեր է կատարել որպէս քաղաքական գործիչ եւ այլն եւ այլն:

Վարդանի թողած գրական ժառանգութիւնը լայն հասարակութեան սեփականութիւն դարձնելը, ինչպէս եւ նրա՝ որպէս քաղաքական գործչի ամբողջական պատկերը ստեղծելը որքան պիտանի, նոյնքան եւ դժուար ու երկար տարիների աշխատանք պահանջող գործ է եւ կարող է յաջողութեամբ պսակուել միայն այն դէպքում, երբ նրա բազմաթիւ ստեղծագործութիւններից գոնէ ամենաարժէքաւորները հրապարակուելով՝ դառնան մասնագէտների լայն շրջանների ուսումնասիրութեան առարկայ[**]:

Հրատարակելով նրա «Վասն բանին մասանց...» փոքրիկ, բայց արժէքաւոր աշխատութիւնը հեղինակի ամենասեղմ կենսագրականով եւ պարզաբանելով մի քանի հարցեր հեղինակի կեանքի ու աշխատութեան նշանակութեան վերաբերեալ՝ յոյս ունենք, որ նպաստում ենք այդ գործին:

* * *

XIII դարի սկզբին տնտեսապէս բարգաւաճ, քաղաքական ու սոցիալական բախումներով հարուստ կեանք ապրող եւ մշակութային մեծ դեր կատարող Գանձակ քաղաքում ծնուել եւ ժամանակի ամենաառաջաւոր մարդկանց շրջապատում մեծացաւ Վարդան Արեւելցին: Մինչեւ մոնղոլների արշաւանքը նա իր եղբայր, յետագայում՝ Բջնոյ եպիսկոպոս Գրիգորի հետ սովորում էր Վանականի դպրոցում եւ նրա ամենասիրելի աշակերտն էր համարւում: Հաւանաբար մոնղոլների առաջին մեծ արշաւանքի տարին (1236 թ.) նա թողեց իր հայրենիքը եւ ճանապարհ ընկաւ դէպի Երուսաղէմ, որտեղ այդ ժամանակ գտնւում էին անուանի հայ վարդապետներ (Յովհաննէս Գառնեցի եւ այլն): Երուսաղէմում Վարդանը երկար չմնաց: Նա իր գործուն բնաւորութեամբ, ուսուցանելու, ստեղծագործելու, քարոզելու անյագ եռանդով չէր կարող բաւարարուել Երուսաղէմի փոքրիկ հայկական գաղութով: Նրան հարկաւոր էին պատանիներ, որոնց ուսուցանէր, հայ ունկնդիրներ, որոնց քարոզէր, կուլտուրական մթնոլորտ՝ իր մտածմունքներին հաղորդակից լինելու, իր գրական երկերը տարածելու համար, ուստի Վարդանը 1238 թուին թողնում է Երուսաղէմը Հայաստան վերադառնալու յանկութեամբ:

---

[*] «Տեղեկագիր» ՍՍՌՄ ԳԱ Հայկ. ֆիլիալի, 1943, N 2, էջ 81–89:

[1] Նա Արեւելցի է կոչուել Կիլիկիայի գիտական շրջաններում, բուն Հայաստանում նրան կոչում են Վարդան Մեծ, Վարդան Աղուանցի եւ այլն: Նրա Պատմութիւնը Մ. Էմինի կողմից Բարձրբերդցուն է վերագրուել թիւրիմացաբար:

[**] [Այդ աշխատանքը այժմ մասամբ կատարուած է, տե՛ս **Փ. Փ. Անթաբեան**, Վարդան Արեւելցի. կեանքն ու գործունէութիւնը, գիրք Ա, Երեւան, 1987, գիրք Բ, 1989: Խմբ.]

Հայաստանի ճանապարհին Վարդանն այցելում է Կիլիկիայի Հռոմկլա ամրոցում նստող Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսին (1221–67), որին այնքան է դուր գալիս, որ, համաձայն Կիրակոս Գանձակեցու վկայութեան, կաթողիկոսը «ոչ կամէր երբէք մեկնել ի նմանէ»[1]:

Ցոյց տրուած լաւ ընդունելութեան պատճառով Վարդանը Կիլիկիայում մնում է հինգ տարի եւ Հայաստան վերադառնում միայն 1243 թուին՝ իր հետ բերելով կաթողիկոսի շրջաբերական-կոնդակը եւ Սսի եկեղեցական ժողովի (որի ակտիւ մասնակիցներից մէկն էլ ինքն էր) կանոնները[2]:

Վարդանը Հայաստանում գումարում է բազմաթիւ ժողովներ, ուր անցկացնում է վերոյիշեալ կանոններին համապատասխան կանոններ եւ, մինչեւ իր կեանքի վերջը բազմաթիւ մատենագրական արժէքներ ստեղծելով եւ ուսուցչական ու քաղաքական չափազանց աշխոյժ գործունէութիւն վարելով, մեռնում է Հաղբատում 1271 թուին:

Կիլիկիայում անցկացրած տարիները Վարդանի համար լինում են գրական գործունէութեան բեղուն տարիներ: Այդ շրջանում նա Հեթում Ա թագաւորի խնդրանքով գրում է «Ժղլանքը» (գլոսանք), որտեղ բոլորին հասկանալի լեզուով, պարզ համեմատութիւններով բացատրում է աստուածաբանական մեկնութեան կարօտ մի շարք խնդիրներ: Նոյն թագաւորի համար գրում է նաեւ Դիոնիսիոս Թրակացու «Քերականութեան» մեկնութիւնը եւ հարց ու պատասխանի ձեւով կազմուած մի աշխատութիւն, որտեղ շարադրուած են ժամանակի ամենաառաջաւոր հայեացքները տիեզերագիտութեան, երկրի կառուցուածքի, գրի եւ հայ գրերի գիւտի, երաժշտութեան եւ այլ հետաքրքիր խնդիրների մասին: Հաւանաբար հէնց այդ ժամանակ նա կատարում է նաեւ Միքայէլ Ասորու Պատմութեան թարգմանութիւնը[3]: Վարդանի կողմից նոյն տարիներին գրուած փոքրածաւալ աշխատութիւններից մէկն է բանասիրութեանը ցարդ անյայտ մնացած «Վասն բանին մասանց» աշխատութիւնը, որը հեղինակի «Քերականի մեկնութեան» խօսքի մասերին վերաբերող գլուխների ամենասեղմ շարադրանքն է:

* * *

«Վասն բանին մասանց» աշխատութիւնը, համաձայն վերնագրի, գրուած է «ի խնդրոյ բարեզարդ քահանայի Թորոս անուն կոչեցելոյ՝ եղբօրորդւոյ տեառն Կոստանդեայ Հայոց կաթողիկոսի»[4]: Պատուիրատուն, որպէս կաթողիկոսի ազգական, չափազանց մօտ յարաբերութիւնների մէջ էր արքունիքի եւ անձամբ Հեթում թագաւորի հետ եւ, որպէս այդպիսին, հանդիսանում էր պալատական շրջաններից իրեն հեռու պահող ու կիլիկեան աննշան վանքերից մէկում ապաստանած Վարդանի ու թագաւորի միջեւ կապ պահպանող անձնաւորութիւնը:

Պահպանուել է Վարդանի գրութիւնը՝ ուղղուած Հեթում թագաւորին, որտեղ նա իր առօրեայի մասին գրում է հետեւեալը. «Ես շատ պատճառ ունէի, որ խափանէր զիս յայս ձեռնարկութենէս՝ տկարութիւն, մութն խրճթիս եւ հողմ Պարխարու փոշեխառն փչելով ընդ պատուհանս եւ պաղ օդոյս, բայց սիրովն հրաշագործիւ յաղթահարեալ եղեն պատճառքն»[1]: Նոյն գրութիւնից պարզւում է, որ թագաւորը խնդրել է Վարդանին աշխատութիւն գրել խղաբեր կանանց եւ պատարագի խորհրդի մասին ոմն Թորոսի միջոցով[2], որն իր այցելութիւնների ժամանակ խնդրել է Վարդանից մեր կողմից հրատարակուող «Վասն բանին մասանց» աշխատութիւնը:

Ամենայն հաւանականութեամբ աշխատութեան պատուիրատու Թորոս քահանան նոյն անձնաւորութիւնն է, որը ըստ Կիրակոս Գանձակեցու տեղեկութեան՝ գտնւում էր Մանգուղանին այցելութեան գնացող Հեթում Ա թագաւորի շքախմբում[3]:

Նոյն Թորոս քահանայի եւ Կիրակոսի նշած Բարսեղի հետ կարող են նոյնանալ նաեւ Մատենադարանի N 345 (155) 1270 թուին գրուած ձեռագիր Աստուածաշնչի գրիչներ Թորոս երէց Ռաբբինենցը (չափազանց գեղեցիկ լուսանցազարդերի ու գլխագրերի ծաղկող) եւ Բարսեղ քահանան: Թէ ինչ կապ կայ հանրահռչակ նկարիչ Թորոս Ռոսլինի եւ Թորոս երէցի միջեւ, այս հարցը վերջնականօրէն կարող է լուծուել միայն այս ձեռագրի եւ Ռոսլինի այլ նկարների մասնագիտական համեմատութեամբ, սակայն սկզբից եւեթ կարելի է ասել, որ այդ երկու Թորոսների նկարների միջեւ այն աստիճան նմանութիւն կայ, որ յօգուտ նրանց նոյնութեան յայտնած կարծիքը հիմնաւորւում է ըստ ամենայնի:

* * *

Հայ քերականական գրականութիւնը դարեր շարունակ գոյութիւն է ունեցել ու զարգացել որպէս մեկնողական գրականութիւն: Դիոնիսիոս Թրակացու երկը (Τέχνη γραμματική) հանդիսացել է այն հիմնաքարը, որի վրայ իրենց մեկնողական աշխատութիւններն են կառուցել Դաւիթ փիլիսոփան (Հարքացի), Մովսէս Քերթողը, Անանունը, Ստեփաննոս Սիւնեցին, Գրիգոր Մագիստրոսը, Համամ Արեւելցին եւ այլք[4]:

Ինչքան էլ յաջող լինէին այդ մեկնութիւնները, եւ ինչքան էլ նրանց հեղինակները լայն գիտական զարգացում ցուցաբերէին, այնուամենայնիւ նրանց ստեղծագործութիւնների նպատակն էր ոչ թէ առաջ քաշել նոր քերականական խնդիրներ, տալ այս կամ այն հարցի վերաբերեալ նոր տեսակէտներ, այլ միայն եւ միմիայն լաւագոյն կերպով լուսաբանել Դիոնիսիոս Թրակացու երկը: Վերոյիշեալ մեկնութիւնները, ինչպէս եւ մեկնութեան նիւթը քերականութիւններ չէին այդ գիտութեան արդեան իմաստով, նրանց մէջ քերականական հարցերի հետ սերտօրէն շաղկապուած էին ճարտասանական ու փիլիսոփայական բնոյթի բազմաթիւ հարցեր, որոնք այդ գիտութիւնը մօտեցնում էին գրականութեան տեսութեանն ընդհանրապէս. ճիշտ է, Մովսէս Քերթողն իր մեկնութեան մէջ յայտնում է, որ «քերթող է, որ զմասունս գիտէ բանին եւ ճանաչէ զդէմս խաւսիցն, զոր ինքն տեղեակ է լեզուին»[5], սակայն հին քերա-

---

1 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիզ, 1909, էջ 279

2 Նոյն տեղում, էջ 278–79

3 Վարդանն անշուշտ իմացել է ասորերէն. այդ են ապացուցում նրա հետեւեալ տողերը. «...բայց զտա յԱսորոց, թէ [Մովսէս] զէլսն գրեաց յառաջ» (Մատենադարան, ձեռ. N 2544, էջ 76ա):

4 Խօսքը «Ժղլանք» եւ «Մեկնութիւն քերականին» աշխատութիւնների գրութեան մասին է:

1 Մատենադարանի ձեռ. N 2544, էջ 173բ: Տե՛ս նաեւ Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 470, որտեղ «Պարխարու» բառի փոխարէն տպագրուած է «Պարխըցու»:

2 «...եւ յիշեա զոր ի ձեռն Թորոսի հրամայեցիր վասն խղաբերից կանանց գրել ձեզ եւ ի խորհուրդ պատարագին» (ձեռ. N 2544, էջ 172բ. Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 470):

3 Հեթումի շքախմբի մասին Կիրակոսը գրում է հետեւեալը. «Եւ եպիսկոպոս տէր Ստեփաննոսն եկն եւ Մխիթար վարդապետն եւ Բարսէղ քահանայ... եւ Թորոս քահանայ կուսակրօն...» (էջ 352–353):

4 Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, СПб., 1915

5 Նոյն տեղում, էջ 159

կանական գրականութեան մէջ քերականութիւնը միշտ էլ մնաց որպէս փիլիսոփայութեան եւ ճարտասանութեան հետ շաղկապուած մի գիտութիւն:

Ինչպէս Դիոնիսիոսի երկի թարգմանութիւնը, այնպես էլ նրա հին մեկնութիւնները, որպէս յունաբան դպրոցին պատկանող ստեղծագործութիւններ, գրուած են մի այնպիսի բարդ ու արհեստական լեզուով, որ կարող էր հասկանալի լինել միայն յունական կրթութիւն ստացած ու յունարէնին տիրապետող անձանց, ուստի պատահական չէ, որ այդ երկը մեկնուել է հայ գրականութեան մէջ տասն անգամ, տասը տարբեր հեղինակների կողմից:

Վարդան Արեւելցու «Քերականի մեկնութիւնը»*, ինչպէս եւ մեր կողմից հրատարակուող «Վասն բանին մասանց» փոքրիկ աշխատութիւնը առանձնայատուկ տեղ են գրաւում հայ քերականական գրականութեան մէջ: Նրանք միակն են, որ գրուած են բոլորին հասկանալի ու պարզ մի լեզուով, որի հիմքում ընկած է կիլիկեան բարբառը: Ոչ միայն լեզուն, այլեւ այդ աշխատութիւնների ողջ կառուցուածքը պարզ է, շարադրանքը՝ սահուն եւ ազատ արհեստական գիտականութիւնից, ոճը՝ ճոխ, ժողովրդական դարձուածքներով ու կեանքից վերցրած օրինակներով հարուստ[1]: Դրանք գրուած են ոչ թէ մի խումբ, ժամանակի գիտութեանը լաւատեղեակ մասնագէտների, այլ սովորական ընթերցողների համար, որոնք դատում եւ մտածում են ոչ թէ ճարտասանական արհեստական սկզբունքներով, այլ բնական դատողութեամբ:

Քերականութեան այս պարզեցումը հեղինակը չի կատարել ի վնաս նրա գիտականութեան, ընդհակառակը՝ նրա «Վասն բանին մասանցը», վերայիշեալ դրական կողմերից զատ, հայ հին քերականութիւններից միակն է, որ, ազատուելով ճարտասանական ու փիլիսոփայական գիտութիւնների խառնուրդից, հանդէս է գալիս որպէս զուտ քերականական գիտութիւն՝ գիտութիւն խօսքի մասերի վերաբերեալ (МОРФОЛОГИЯ): Որոշ հարցերի միակողմանի լուծմամբ ու երբեմն անգամ խնդրի բնորոշումը տալու փոխարէն յաջող օրինակներով բաւարարուելով՝ հեղինակը ցանկացել է նիւթը մատչելի դարձնել պատուիրատուին: Նոյն խնդիրների վրայ նա մանրամասնօրէն կանգ է առնում իր «Քերականի մեկնութեան» մէջ:

Վարդանը հետնորդներ չունեցաւ. նրանից յետոյ գրուած քերականական աշխատութիւնները (Եսայի Նչեցու, Յովհաննէս Երզնկացու) եղան հին-յունաբան դպրոցի հետեւութեամբ գրուած աշխատութիւններ կամ ուղղակի հին մեկնութիւնների շարահիւսումներ: Լեզուն, փոքր փոփոխութիւններով, մնաց նոյնը: Վանքերին կից դպրոցներում յատուկ տարածում գտաւ Յովհ. Երզնկացու աշխատութիւնը, որը միայն հին մեկնութիւնների չափազանց լաւ կատարուած կոմպիլացիա էր:

Ինչո՞վ բացատրել այս շրջադարձը դէպի հին-յունաբան դպրոցը... արդեօ՞ք մոնղոլական արշաւանքներով ու տիրապետութեամբ, թէ՞ դրա հետ միասին նաեւ իսպանացի ու պորտուգալացի խիզախ ճանապարհորդների կողմից արուած աշխարհագրական մեծ գիւտերով ու ծովային նոր ճանապարհների յայտնագործութեամբ՝ սրանք հարցեր են, որոնք սպասում են լուծման:

---

* [Բնագրի գիտական հետազօտութիւնը տե՛ս Վարդան Արեւելցի, Մեկնութիւն քերականի, աշխատասիրութեամբ՝ Լ. Գ. Խաչերեանի, Երեւան, 1972: Խմբ.]

1 Օրինակ՝ «Վասն բանին մասանցի» մէջ հեղինակը յաճախ նիւթն աւելի պարզ դարձնելու համար օրինակ է բերում հէնց պատուիրատուից. «Թորոս դարպաս շինեաց», «Թորոս որդիք ունի, ապրանք ունի», «Քրիստոսապահ Թորոս», «Ստեփաննոս՝ որդի [Թորոսի"]» եւ այլն:

* * *

«Վասն բանին մասանց» աշխատութեան տեքստը հրատարակում ենք Մատենադարանի 3 ձեռագրերի հիման վրայ, տալիս ենք ձեռագրերի համառօտ նկարագիրը.

Ա, N 2544

Բովանդակութիւն՝ ժողովածու գերազանցապէս Վարդան Արեւելցու գործերի. թերթ՝ 231. մեծ.՝ 17×12,5. նիւթ՝ թուղթ. գրութիւն՝ միասիւն, գիր՝ բոլորգիր. վիճակ՝ սկզբից եւ վերջից պակաս էջեր. ժամանակ՝ ԺԴ° դար. գրուած է հմուտ գրչի կողմից եւ տալիս է լաւ ընթերցումներ:

Մեզ հետաքրքրող յօդուածը գտնւում է հետեւեալ նիւթերի շարքում.

196ա – Հարցմունք Դչխոյի եւ պատասխանիք Սողոմոնի:

201ա – Վասն բանին մասանց ի խնդրոյ բարեզարդ քահանայի Թորոս անուն կոչեցելոյ՝ եղբաւրորդւոյ տեառն Կոստանդեայ Հայոց կաթողիկոսի ի Վարդանայ Աղուանեցւոյ, կարճառօտ:

203բ – (Նորին Վարդանայ) Աղաւթք տղայոց առ Սուրբ Երրորդութիւնն:

Բ, N 2189

Բովանդակութիւն՝ ժողովածու. թերթ՝ 441. նիւթ՝ թուղթ. գրութիւն՝ միասիւն. գիր՝ բոլորգիր. վիճակ՝ բաւարար. ժամանակ՝ 1394°. գրիչ՝ Գրիգո՞ր. տեղ՝ Թաւրէզ:

«Վասն բանին մասանց» աշխատութիւնը գտնւում է հետեւեալ նիւթերի շարքում».

395բ – Վասն Աստուածութեանն վկայութիւնք՝ ասացեալ ի յիմաստասիրաց:

397բ – Բան ինչ պիտանի ի վարդապետաց:

399բ – Բան Վարդանայ գերազանց սուրբ վարդապետի ասացեալ (Վասն բանին մասանց):

400բ – (Այլ բանք նորին Վարդանայ) եւ այլն:

Գ, N 1784

Բովանդակութիւն՝ ժողովածու. թերթ՝ 248, մեծ.՝ 20,5×15, նիւթ՝ թուղթ. գրութիւն՝ մեծաւ մասամբ միասիւն. գիր՝ նոտր. վիճակ՝ բաւարար. ժամանակ՝ ԺԷ° դար, գրել են մի քանի գրիչներ:

«Վասն բանին մասանցը» գտնւում է հետեւեալ նիւթերի շարքում.

199բ – Հարցմունք Դչխոյի եւ պատասխանիք Սողոմոնի՝ որդւոյ Դաւթի:

200բ – Բայց առ ի մէնջ եւ դու առակ մի:

201ա – Վասն բանին մասանց... ի Վարդանայ Աղուանեցւոյ. կարճառօտ:

201բ – (Այլ եւ այլ մանր մեկնութիւնք նորին Վարդանայ):

205բ – Նորին Վարդանայ վարդապետի Աղօթք տղայոց առ Սուրբ Երրորդութիւնն առաւօտուն եւ այլն:

Աշխատութեան որոշ հատուածներ աւելի հասկանալի դարձնելու, ինչպէս եւ ընթերցողին Վարդանի «Մեկնութիւն քերականին» աշխատութեան մասին որոշ գաղափար տալու նպատակով մի քանի խնդիրների վերաբերեալ՝ ցածում բերել ենք հատուածներ «Մեկնութիւն քերականին» աշխատութիւնից՝ վերցնելով այն Մատենադարանի N 2371 ձեռագրից: Ձեռագիրը գրուած է 1357 թուին Ստեփաննոս գրչի կողմից Սուրխաթում: Աշխատութիւնը գտնւում է ձեռագրի (որը քերականական եւ բառագիտական նիւթերի ժողովածու է) 5ա–72ա էջերում:

Վասն բանին մասանց, ի խնդրոյ բարեզարդ քահանայի Թորոս անուն կոչեցելոյ՝ եղբաւրորդւոյ տեառն Կոստանդեայ Հայոց կաթողիկոսի. ի Վարդանա[յ] Աղուանեցւոյ. կարճառաւտ[1]

Բանին մասունք ութ են եւ են այսոքիկ. նախ՝ անուն[2], երկրորդ՝ բայ, երրորդ՝ ընդունելութիւն, չորրորդ՝ յաւդ, հինգերորդ՝ դերանուն, վեցերորդ՝ նախդիր, եւթներորդ՝ մակբայ[3], ութերորդ՝ շաղկապ:

Բան կոչի կատարումն խորհրդոյ, երբ[4] ասես, թէ[5] հոգեւոր տէրն հրամայեաց եկեղեցի շինել, կատարեալ[6] բան է[7]. Հոգեւորն նախադրութիւն է, եւ տէրն՝ անուն, եւ հրամայեացն՝ բայ, եւ եկեղեցի շինելն՝ խորհուրդ կատարեալ:

Իսկ բանին առաջին մասն անունն[8] է, եւ գոյութեան սահմանն ունի անունն, ընդ որով է[9] մարմին եւ անմարմին՝ երկինք, երկիր, Աստուած, մարդ, ձի, արծուի*:

Յետ անուանն բայ է, որ զանունն եւ զգործն ցուցանէ, որպէս ասել[10] Թորոս[11] զարպաս շինեաց:

Երրորդ[12] մասն բանին ընդունելութիւնն[13] է, որ է ունելութիւն, որպէս ասել[14] Թորոս որդիք ունի, ապրանք ունի:**

Չորրորդ մասն յաւդն է: Յաւդն զաւդ ասի, որ ցուցանէ զմերձն[15] եւ զհեռին, զմէկն եւ զբազումն[16]. Սէ-ն մաւտ ցուցանէ եւ Նու-(ն)՝ հեռի, որպէս ասել[17] գեաւղս քո է, գեաւղն[18]

---

* Յաղագս անուան, ի մեկնութենէ քերականին Վարդանայ Արեւելցւոյ

«...Եւ մարմին, որ բռնի ձեռամբ եւ շաւշափի, որպէս քար կամ փայտ. եւ իրն անմարմին է, անըմբռնելի եւ անշաւշափելի, որպէս ինքն [իմաստաւէրն] ասէ, թէ խրատ կամ հանճար կամ իմաստութիւն. իսկ յատկապէս, որպէս ճարտասան եւ կամ թուական եւ կամ այլ արհեստք, որ յատկապէս առանձնանան եւ իւրեանց սահմանաւն երեւին: Իսկ հասարակաբար ասէ զընդհանուր մարդն, եւ յատկապէս անուամբ զմի որ բաժանեալ ի յայլոց անուանցն. այս ի վերայ մարմնոցն: Իսկ ի վերայ անմարմնոցն, որպէս մակացութիւն կամ խրատ. արէնք եւ կամ իմաստութիւն, որ են բանի զաւրութիւնք անմարմինք. եւ այս հասարակաբար է»:

1 Բ ձեռագրում վերնագիրն այսպէս է. «Բան Վարդանայ գերազանց սուրբ վարդապետի ասացեալ»: 2 Բ **Հարցումն**, քանի՞ են մասունք բանի. **պատասխանի**. ութ, եւ են այսոքիկ, նախ... 3 Ա Մակբա: 4 Ա աստ եւ այլուր՝ Եք փխ երբ: Բ Չի երբ: 5 Ա միշտ թե փխ թէ: 6 Բ այս կատարեալ: 7 Ա խորհուրդ փխ բան է: 8 Բ, Գ անուն: 9 Ա, Բ է չիք: 10 Ա, Գ որպէս ասել չիք: 11 Ա, Բ Սղմն [Թէ՞ Սողոմոն] փխ Թորոս: 12 Ա Յերրող: Բ Եւ երրորդ: 13 Բ, Գ ընդունելութիւն: 14 Ա, Գ որպէս ասել չիք: 15 Բ զմեծն: 16 Բ զմէկն եւ զբազումսն: 17 Ա,Գ որպէս ասել չիք: 18 Բ գիւղս: Գ գեօղս... գեղն:

** Յաղագս ընդունելութեան

«Ընդունելութիւն հասարակ ասի գոյանալ ի բայէ եւ յանուանէ, մասն մի անտի եւ մասն մի աստի առեալ, որպէս ասեմք՝ Ամբատ գրէ. զի Ամբատն անուն է եւ գրեն բայ: ...Ընդունելութիւն է՝ շինեալ, արարեալ, բերեալ. ահա դէմք ոչ ցուցանէ, թէ ով շինէ կամ առնէ, այդ որպէս կենդանին զտեսակս յինքեան ընդունի եւ երկինք զաստեղս եւ մարմին ախտական զմարդիկ, նոյնպէս ընդունելութիւն զանուն եւ բայ»:

քո է: Թէ՛ Քէ՛ եւ Ցոյ[19] գնես շատ ցուցանէ, որպէս՝ սոքա, սոցա: Յեգերգիրն է[20] յաւդն եւ նշանաւոր ցուցանէ գիրքն[21], [որպէս] հովիւն[22] [քաջ], կոյսն յղացի, մարդն եկն:*

Հինգերորդ մասն դերանունն է[23], որ կոչի փոխանուն, որ փոխան[24] անուանն այլ անուն ասես. Ստեփաննոս՝ որդի, արեւ՝ հոգի, դու, դա, նա, քեզ:**

Վեցերորդ մասն բանին նախադրութիւնն[25] է, որ է ճոխաբանութիւն, յորժամ հէգ ինչ դնես յառաջք բանին՝ բարի[26] թագաւոր, իմ ապաւէն պարոն[27], քրիստոսաշա՞հ Թորոս: Կամ շարամանելն՝ չար նախդիր է մանելն իրքն:***

Եւթներորդն՝ մակբայ[28] է, որ է վերնաբայ եւ կամ[29] կրկնաբայ: Թէ[30] երկու մարդոյ իրք կամիս տալ, ասես ճորտուն՝ երկաքանչիւրոցն տուր, եւ թէ ամենայ կամիս, ասես՝ իւրաքանչիւրոցն կամ երկուց, երից, չորից[31]:

Ութերորդ մասն բանին շաղկապն է: Կապն մէկ[32] իրաց չլինի, այլ երկուց կամ բազմաց. Եւ-ն շաղկապ է, որ շաղէ գիրքն, այսինքն՝ կապէ, կցէ, միացնէ: Երբ[33] ասես՝ գնացէք[34] յարտն դու եւ Ստեփաննոսն[35] եւ Վասիլն. եւ-ն[36] կապէ ընդ իրար: Է եւ այլ[37] զաւրութիւն շաղկապին, յորժամ ասես՝ գնաց, ցուցեր, թէ եկեալ չէր ուստէք, թէ՛ եւ գնաց ասես, զեւ-ն դնելով ցուցեր, թէ եկն, ապա գնաց****: Այս են մասունք բանին:

---

* Յաղագս յաւդի

«Յաւդն կցումն եւ միաւորութիւն կոչի, որպէս ջիղք եւ կապք մարմնոյն, այսպէս եւ յաւդ բանի... զի մերս ի վախճանին գայ նշանաւոր յաւդդ, իբր թէ՝ ձին եւ ձիդ եւ ձիս, զի թէ ասես ձի՝ ակն ոչ նշանակեցեր, թէ ինչ ասացեր. իսկ դնելով զյաւդն ասիցես ձին, անդէն նշանակեցեր, զի յաւդն է, որ նշանակէ զիրն, թէ յառաջն եւ թէ ի յետն, զի թէ այլք դնեն ի սկիզբն, մեք ի վերջն, այսպէս՝ կոյսն յղացի, հովիւն քաջ, գիտութիւնն էակացն, կիզիկեցին, եւ գիտեմք անդէն զնշանակեալն նոյին կու յարակեալ յաւդն»:

** Յաղագս դերանուան

«Զոր աւրինակ, որ մարդ անունն ի վերայ բոլոր տեսակին ասուի, նոյնպէս եւ դերանունս ի վերայ ամենայնին երթալ՝ եզակեանց եւ երկուորականաց եւ յոքնականաց, մատաւորաց եւ հեռաւորաց: Զի երբեմն զհեռաւորն յիշեմք ասելով, թէ նա աստ էր, կարաւղ էր կատարել զայս իրքս, չասաց թէ ով, յուկ ասաց թէ նա, ու այն դերանուն է եւ այս անուանն նմանութիւն է: Եւ յիրաւի ասի թերանուն, զի զգոյութիւն բնութեանն ոչ ցուցանէ յասելն, թէ նոցա, նոքա... նա, իմոյ, քոյոյ, նորա... բայց եւ տիրանուն ասի դերանունս, այսինքն ճշմարիտ անուն, զի ասեն այս հին է մշտնջենաւոր՝ ես, դու, նա, նորա, նոցա, նոքա, քան զՄովսէս եւ զԱհարովն եւ զՊաւղոս եւ զՊետրոս կամ զՊղատոն եւ զՍոկրատ, զի սոքա յետոյ եղան եւ ոչ կան եւ մնան յաւիտեան: Եւ ստոյգ անունն անժամանակ, անդէմ եւ անտեղի է, որպէս դերանունս ցուցանէ, զի միշտ էր եւ ոչ անկանի յէութիւն, զի ասելն ես, դու, նա, նոքա, նոցա, գոյութիւնք են եւ ոչ սոսկ անուն, որ այսաւր ասի եւ վաղիւ [ոչ]. վախճանի, զի դրականք են եւ ոչ բնութեամբ»:

*** Յաղագս նախադրութեան

«....Նախդիր ասի այսր աղագաւ, զի նախ եղեալ լինի եւ յառաջ քան զանուն եւ զբայ եւ յամենայն տեղիս, ոչ իբրեւ պատուաւոր, այլ իբրեւ զսպասաւոր... Յաղագս զարդու եւ գեղեցկութեան իմացեալ եղեւ նախադրութիւնս»:

**** Յաղագս շաղկապի

«Եւ շաղկապ ասի ի շաղղելոյ իմն եւ միաւորելոյ եւ կապելոյ ի կարգի զբառն ընդ բառն եւ զմիտս ընդ միտս, զի մեկնութիւն բանին յայտնեսցէ»:

19 Ա Ցաւ. եւ ի լուսանցս՝ Ցո: Գ Ցօ: 20 Ա եւ : 21 Բ եւ ... գիրքն չիք: 22 Ա յաւդ եւ հովիւն: Բ յաւդն հովիւն: 23 Գ դերանուն: 24 Բ այսինքն, որ փոխ: Գ փոխ: 25 Բ, Գ նախադրութիւն: 26 Բ այսինքն բարի: 27 Բ իմաստուն պարոն, իմ ապաւէն տէր: 28 Ա Մակբա: 29 Բ, Գ կամ չիք: 30 Բ այսինքն թէ...: 31 Բ ամենու կամիս տալ՝ երկաքանչիւրոցն կամ երկուց, երից, չորից: 32 Բ մին: 33 Չի երբ: 34 Բ, Գ գնացէք չիք: 35 Ա Ստեփն: 36 Բ, Գ եւ: 37 Բ այլ իմն

1280 ԹՈՒԱԿԱՆԻՆ ԵՐԶՆԿԱՅՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ «ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆԸ»*

Միջնադարեան Հայաստանի քաղաքների ներքին կեանքի մասին հայ պատմագիրների աշխատութիւններում կան միայն պատահական ու անորոշ ակնարկներ: Դրանց միջոցով անհնար է քիչ թէ շատ բաւարար պատկերացում ունենալ այդ քաղաքների եւ շրջակայ գիւղերի միջեւ գոյութիւն ունեցող ամէնօրեայ տնտեսական կապերի, քաղաքային բնակչութեան դասակարգային շերտաւորման, առեւտրաարհեստաւորական շերտերի եւ ֆեոդալական վերնախաւի միջեւ տեղի ունեցող բախումների, քաղաքային ինքնավարութեան մարմինների, նրանց իրաւունքների ու սոցիալական կազմի եւ բազմաթիւ այլ հարցերի մասին:

Բարեբախտաբար, մեր Մատենադարանում կան մինչ այժմ պատշաճ ուշադրութիւն չգրաւած ձեռագիր սկզբնաղբիւրներ (խօսքը վերաբերում է XII-XV դարերում գրուած քարոզգրքերին, մեկնողական գրուածքներին եւ կանոնագրքերին), որոնք պարունակում են վերոյիշեալ հարցերի լուսաբանմանը նպաստող ուշագրաւ նիւթեր:

Տնտեսական ու սոցիալական հողի վրայ բախւում էին արտադրող արհեստաւորների շահերը մի խումբ մեծատուն առեւտրականների շահերին, որովհետեւ վերջիններս, հանդէս գալով որպէս պատուիրատուներ եւ տէրը լինելով արտադրուող ապրանքի հում նիւթին ու իրացնելով արտադրանքի վաճառքը հեռաւոր շուկաներում, շահագործում էին արհեստաւորների աշխատանքը: Բախւում էին նաեւ հմուտ արհեստաւոր վարպետների շահերը «գործաւորների» (ենթավարպետներ) եւ «աշակերտների» շահերին, որովհետեւ վերջիններս, արտադրական գործիքներ չունենալով եւ կաշկանդուած լինելով գոյութիւն ունեցող օրէնքներով ու սովորոյթներով, զրկուած էին ինքնուրոյն կերպով արտադրելու հնարաւորութիւնից: Քաղաքային բնակչութեան ամենաստորին աստիճանի վրայ էին գտնւում իրաւազուրկ մշակները, որոնց շարքերն օրաւուր լրացնում էին ճորտական լծից ազատուել տենչացող գիւղացիներով:

Դիտող ու կշռադատող ժամանակակիցների համար պարզ էր, որ «ի չքաւորութենէ աղքատի եւ յառատութենէ մեծատան ի մէջ ժողովրդեան ծնանի երկպառակութիւն»[1]:

Ահա, այդ յարատեւ ու անդադրում «երկպառակութեան», այսինքն՝ սոցիալ-տնտեսական շահերի ամէնօրեայ բախումների ընթացքում քաղաքի աշխատաւոր շերտերն աստիճանաբար հասունանում էին աւելի կազմակերպուած պայքարի: Քաղաքներում ստեղծւում են առեւտրական ու արհեստաւորական եղբայրութիւններ, որոնք, միաւորելով նոյն զբաղմունքի կամ նոյն սոցիալ-տնտեսական գոյավիճակի մարդկանց, կարեւոր դեր են խաղում երկրի տնտեսական ու քաղաքական կեանքում:

Այդ եղբայրութիւնների գոյութեան ու էութեան հարցը պարզելու տեսակէտից բացառիկ արժէք են ներկայացնում Մատենադարանի ձեռագրերից մեզ յայտնի դարձած «Սահմանք եւ կանոնք միաբանութեան եղբարց...» խորագրով կանոնները, որոնք վերաբերում են Երզնկա

* «Տեղեկագիր» (ՀՍՍՌ ԳԱ հաս. գիտ.), 1951, N 12, էջ 73-84

1 Մատենադարան, ձեռ. N 677, էջ 254

քաղաքին[1]:

* * *

XII-XIV դարերի Հայաստանի քաղաքների մէջ, որպէս միջազգային առեւտրի կարեւորագոյն հանգուցակէտ եւ արհեստագործութեան կենտրոն, ուրոյն տեղ է գրաւում Երզնկան:

Գտնուելով Արեւելքը Արեւմտեան Եւրոպայի երկրների եւ Ռուսաստանի հարաւային շրջանների հետ կապող կարեւորագոյն երկու ուղեգծերի վրայ՝ նա մասնակցում էր միջազգային առեւտրին թէ՛ որպէս Թաւրիզ-Այաս բանուկ մայրուղու օղակներից մէկը եւ թէ՛ որպէս Տրապիզոնի ցամաքային մատոյցը: Այսպիսով, Երզնկայի առեւտրականները սերտ կապերի մէջ էին կիլիկեան նաւահանգիստների, Տրապիզոնի, Ղրիմի, ինչպէս եւ Իրանի ու Հայաստանի վաճառաշահ քաղաքների՝ յատկապէս Թաւրիզի ու Անիի հետ:

XII-XV դարերում Երզնկա այցելած ճանապարհորդները խօսում են նրա մասին՝ որպէս «հայաբնակ», «ընտիր», «մեծ ու շէն» քաղաքի, գովում են Երզնկայի ճարտար մանածագործներին, որոնք հիւսում են «աշխարհի լաւագոյն բեհեզները» (Մարկո Պոլո) կամ «իր անունով կոչուող գեղեցիկ կերպասները», վկայում են այն մասին, որ այնտեղ կան «լաւ կարգաւորուած շուկաներ», զարմանում են քաղաքում արտադրուող պղնձէ ամանների եւ յատկապէս զարդարուն աշտանակների արուեստով եւ յայտնում են, որ քաղաքի վերոյիշեալ արտադրանքը մեծ հռչակ ունի հեռաւոր շուկաներում (Իբն-Բատուտա):

Արաբ աշխարհագիր Յակուտին իր «Աշխարհագրական բառարանում» Արզանջան (Երզնկա) անուան դիմաց գրում է. «Այն գեղեցիկ եւ համբաւաւոր քաղաք է, շատ հաճոյալի եւ բարիքներով լի»: Երզնկան ճանապարհորդների ուշադրութիւնն է գրաւում նաեւ յետագայ՝ XV դարում:

Իսպանացի Կլաւիխոն (ճանապարհորդել է 1403-06 թթ.) յայտնում է, որ «շրջապատի բոլոր կողմերից կարելի է տեսնել գիւղեր՝ որթատունկերով եւ բուսականութեամբ. ամբողջ դաշտում մշակւում էր որթատունկ եւ հացահատիկ... Քաղաքը շատ բազմամարդ է, եւ այնտեղ կարելի է տեսնել շատ գեղեցիկ փողոցներ ու հրապարակներ: Այնտեղ բնակւում են պաշտօնական մեծաթիւ անձինք, որոնց մեծագոյն մասը հարուստ մարդիկ են, կան նաեւ մեծափարթամ վաճառականներ»:

Վստահելի տուեալներ են մեզ հասել նաեւ Երզնկայի ճարտարարուեստ ոսկերիչների, արծաթագործների ու շինարարների մասին («Հայապատում», Բ, 480, **Կ. Երզնկացի**, *էջ 96 եւ այլն), ինչպէս նաեւ այն մասին, որ Երզնկայի շրջակայքում խաղողից, մրգածառերից ու հացահատիկից բացի մշակւում էին նաեւ բամբակ[2]:*

1 Երզնկայի եղբայրութեան «Սահմանքի» բնագիրը պահպանուել է Մատենադարանի երկու (N 2329 եւ 652) ձեռագրերում: N 2329 ձեռագիրը բովանդակութեամբ քերականական, խրատական ու կանոնական նիւթերի ժողովածու է՝ բաղկացած 303 թղթի թերթերից, ընդօրինակուած է Երզնկայում 1291 թուականին: «Սահմանքի» բնագիրը գտնւում է ձեռագրի 287բ–295ա էջերում:

Երկրորդ ձեռագիրը Մատենադարանի N 652 կանոնական ու խրատական նիւթերի ժողովածուն է: Բաղկացած է 132 թղթի թերթերից, ընդօրինակուած է ԺԵ–ԺԶ դարում Գրիգոր կրօնաւորի կողմից Յակոբ եպիսկոպոսի համար: «Սահմանքի» բնագիրը գտնւում է ձեռագրի 70բ–75բ էջերում:

2 Այս տեղեկութեան հեղինակը *XVII* դարի կէսի նշանաւոր տեղագիր Յակոբ Կարնեցին է: Նա գրում է. «Եւ ունի (երկիրն Եկեղեաց) քաղաք մեծ՝ զԵզնկայ, որ լի է ամենայն բարութեամբ, բամբակօք, այգեստանօք եւ մրգաբեր ծառօք» («Տեղագիր Վերին Հայոց», 1903, էջ 11-12):

Առկայ աղբիւրները հնարաւորութիւն են տալիս մերձաւորապէս որոշել նաեւ Երզնկայի բնակչութեան թիւը: Ըստ ամենահամեստ հաշուարկի՝ XIII-XV դարերում քաղաքն ունեցել է 18000-ից ոչ պակաս բնակիչ (ամենայն հաւանականութեամբ՝ 40-50 հազար)[1]:

Պարբերաբար կրկնուող կործանարար երկրաշարժերն ու բազմաթիւ արշաւանքներն ու ասպատակութիւնները, որին ենթարկուել է Երզնկան նշուած դարերում, նրան ծանր վէրքեր են հասցրել, սակայն ժամանակաւորապէս էին միայն խանգարել քաղաքի նորմալ կեանքը: Քաղաքը շնորհիւ իր բնակչութեան տոկունութեան եւ բարենպաստ դիրքի շուտով բուժել է իր վէրքերը եւ ողջ միջնադարի ընթացքում շարունակել է կարեւոր դեր խաղալ Փոքր Ասիայի տնտեսական ու մշակութային կեանքում:

1280 թուականին Երզնկայում տեղի է ունենում կարեւոր մի իրադարձութիւն, ստեղծւում է ինչ-որ եղբայրութիւն: Գրիգոր Սանահնեցի անունով մի ծերունի վարդապետ կարգւում է այդ եղբայրութեան գլուխ, իսկ Յովհան Երզնկացի նշանաւոր վարդապետը գրում է այդ եղբայրութեան «Սահմանք եւ կանոնքը»:

* * *

Մեր միջնադարեան քաղաքների ներքին կեանքի ուսումնասիրման համար մեծ արժէք ներկայացնող այս կանոնների մասին, որքան մեզ յայտնի է, թռուցիկ յիշատակութիւն ունի միայն Ղ. Ալիշանը «Երզնկա եւ Յովհաննէս Երզնկացի» խորագրով իր յօդուածում («Յուշիկք հայրենեաց Հայոց», հտ. երկրորդ, Բ տպ., Վենետիկ, 1921, էջ 416): Նա յայտնում է,

1 Բնակչութեան մերձաւոր թիւը որոշելիս նկատի ենք ունեցել Երզնկայի երկրաշարժերի մասին մեզ հասած հետեւեալ վստահելի տուեալները: 1255 թուականից մի քանի տարի առաջ տեղի ունեցած երկրաշարժից, ինչպէս հաղորդում է Ռ. Ռուբրուքը, «տասը հազար անունով մարդիկ կորած էին, ի բաց առեալ աղքատներից, որոնց մասին արձանագրութիւն չկար» (տե՛ս «Ուղեգրութիւններ», հտ. Ա, էջ 24): Պակաս չի եղել զոհերի թիւը նաեւ 1268-ի երկրաշարժից: 1458 թ. երկրաշարժի մասին մի յիշատակագիր յայտնում է հետեւեալը. «Եկաւ ահագին շարժ եւ աւերեաց զբոլոր մայրաքաղաքն յերզնկայ, եւ երկոտասան հազար այր եւ կին ի ներքոյ հողին մնացին» (ձեռ. N 1309, էջ 261ա), 1483 թ. երկրաշարժի մասին Մատենադարանի ձեռագիր Աւետարաններից մէկի ստացող Յոհանէսը գրում է. «Վասն ծովացեալ մեղաց իմոց Երզնկայ քաղաք տապալեցաւ եւ ԺԸՌ (18000) ոգի ի ներքեւ հողու մնաց, եւ այլ ոչ մնաց մի կենդանի» (ձեռ. N 6879, էջ 364ա): Քաղաքի կործանարար երկրաշարժերի մասին Երզնկայի բանաստեղծները աղեկտուր ողբեր են յօրինել: Դրանցից Ղուլ-օղլի Երզնկացին գրում է, որ երկրաշարժից

«...Տասն հազար հոգի մեռան

Հայ ու հոռոմ ու մուսուրման

Մայրաքաղաքն աւերեցաւ» (ձեռ. N 7709, էջ 108բ):

Թորոս Երզնկացին հաւանօրէն նոյն շարժի մասին գրած իր ողբի մէջ ունի հետեւեալ տողերը.

«...Անասելի մարդ կոտորեց

Ներս, որ թուաւ՝ տասն հազար.

Շատ մի սպաննեց մեծ խոնահին...

Շատ հինէրպանտ փէշաքէրներ» (ձեռ. N 9271, էջ 108ա):

Կան նաեւ այլ վկայութիւններ (տե՛ս, օրինակ, «Պատմութիւն Առաքելի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1884, գլ. ԾԵ, էջ 481, 482, 486 եւ այլն), բայց սահմանափակուենք բերածով: Տուեալներից ոչ մէկում շարժից զոհուած երզնկացիների թիւը 10000-ից պակաս չի ցոյց տրուած: Իսկ 1483 թ. երկրաշարժի մասին խօսող ժամանակակիցը, յայտնելով, որ զոհերի քանակն էր 18000, աւելացնում է, թէ այլեւս մարդ չմնաց կենդանի:

Ճիշտ է, այդ դարերում հազիւ թէ քաղաքներն ունենային մանրամասն ու ճշգրիտ տուեալներ իրենց բնակչութեան մասին, այնուամենայնիւ կարծում ենք, որ ժամանակակիցները առասպելական չափազանցութիւններ իրենց տուած զոհերի մասին չէին կարող գրել, ուստի եւ հաւանական ենք գտնում, որ Երզնկան *XIII-XV* դարերում ունեցել է ոչ պակաս քան 40-50 հազար բնակչութիւն:

որ 1280 թուին Սուրբ Գրիգոր վանքի միաբանները նորոգեցին իրենց միաբանութիւնը եւ խնդրեցին Յովհան Երզնկացուն իրենց համար կանոններ գրել: Վերջինս, կատարելով նրանց խնդիրը, գրեց «Կանոնք եւ սահմանք միաբանութեան եղբարց...» վերնագրով կանոնախումբը: Ալիշանն, անշուշտ, թիւրիմացութեան մէջ է: Կանոնախմբի բովանդակութեան նման շփոթութիւն կարող էր առաջանալ, եթէ ենթադրենք, թէ նա ձեռքի տակ ունեցել է նոյն Յովհան Երզնկացու մի այլ աշխատութիւնը, որի վերնագիրը («Յաղագս միաբանութեան եղբարց, բանք սակաւ եւ պիտանիք՝ վկայութեամբ Գրոց սրբոց, զորմէ թուղթ գրեցի սիրով եղբայրութեան այնոցիկ, որք ցանկան փափականաւք բանից իմաստութեան»[1]) փոքր-ինչ նման է մեզ հետաքրքրող կանոնախմբի վերնագրին:

«Սահմանք եւ կանոնքը» բաղկացած է մի նախաբանից եւ երեք գլուխներից:

Նախաբանում ասուած է, որ մարդկանց համար գոյութիւն ունի կեանքի եւ վարքի երկու ճանապարհ. մէկն այն է, որ Սուրբ Հոգու առաջնորդութեամբ տանում է դէպի հանդերձեալ երջանիկ կեանք, միւսը, որ լայն է ու ընդարձակ եւ գտնւում է սատանայի առաջնորդութեան ներքոյ, տանում է դէպի կորուստ: Շատերն են գնում այս երկրորդ ճանապարհով: Երզնկայի եղբայրութեանը պէտք է առաջնորդի Սուրբ Հոգին դէպի «յերկիր ուղիղ բարի ճանապարհաւն»:

Ապա հեղինակը յայտնում է, թէ չորս տարբեր տեսակի եղբայրութիւններ գոյութիւն ունեն: Եղբայր են կոչւում նախ՝ բոլոր մարդիկ միմեանց նկատմամբ. երկրորդ՝ եղբայր են միեւնոյն ծնողների զաւակները, երրորդ՝ բոլոր քրիստոնեաները, մկրտուելով միեւնոյն աւազանում եւ լինելով «Քրիստոսի եւ երկնաւոր Հաւրն որդիք», դառնում են եղբայրներ:

Այլ է Երզնկայի եղբայրութիւնը: «Այլ դուք,– գրում է Յովհան Երզնկացին,– ի վերայ այսոցիկ չորրորդ տեսակք եղբայրութեան հաստատեցէք ի միջի ձերում, որ գրովն է եւ կանոնական սահմանաւք եւ բարեկէր ժողովմամբ եւ ընկերակցութեամբք եւ միաբանութեամբ եւ միով հաւատով եւ սիրով եւ երկնաւոր ցանկութեամբ»:

Այս նախաբանից յետոյ շարադրուած են եղբայրութեան կանոնները՝ բաղկացած երեք գլուխներից:

Առաջին գլխով սահմանուած են այն կանոնները, որոնք վերաբերում են «եղբայրութեան» անդամներից ամէն մէկի բարոյական կերպարին եւ անձնական կեանքին («Եթէ ամենայն ոք իւր անձամբն որպէս քաղաքավարի»):

Միաբանութեան անդամները պարտաւոր են սիրել Աստծուն, հնազանդուել եւ խնամել իրենց ծնողներին, պատուել եւ իրենց վաստակից «պտուղ» տալ քահանաներին, մինչեւ ամուսնութիւնը «անարատ կուսութեամբ» մնալ, ամուսնանալուց յետոյ հեռու կենալ «յօտար եւ ի պիղծ անզգոնոյ», ամէն օր երեք անգամ աղօթել, շաբաթ եւ կիրակի օրերին անպատճառ գնալ եկեղեցի եւ ներկայ լինել պատարագին, խոստովանել յանցանքը, հաղորդուել, լինել աշխատասէր, աղքատներին ողորմութիւն տալ եւ այլն:

Այս գլուխը եղբայրութեան նպատակներն ու էութիւնը պարզելու տեսակէտից քիչ նիւթ է տալիս: Ակնյայտ է, որ Յովհան Երզնկացին, որպէս Հայ եկեղեցու ճանաչուած գաղափարախօսներից մէկը, մասնակցութիւն է ունեցել այս եղբայրութեան համար «Սահմանք եւ կանոնք» ստեղծելու գործին սոսկ այն նպատակով, որ միաբանութեան մէջ մտնող «աղայա-

1 Մատենադարան, ձեռ. N 728, էջ 54բ-84ա

հասակ մանկանց» աշխարհիկ ձգտումները սանձահարի, նրանց միաբանութեանը տայ «կրօնական միաբանութեան» երանգ:

Այնուամենայնիւ այս կանոնների հիման վրայ հնարաւոր է մի քանի կարեւոր հարցեր պարզել:

Պարզւում է նախ, որ միաբանութեան մէջ ընդգրկուածները եթէ ոչ գերազանցապէս, ապա իրենց մեծամասնութեամբ երիտասարդ մարդիկ են: «Սահմանքի» հեղինակը նրանց դիմում է հետեւեալ խօսքերով. «Լուարո՛ւք, երիտասարդք եւ տղայահասակ մանգունք, որք միաբանիք եղբայրութիւնս»:

Զ (6) կանոնից, ուր սահմանուած են աղօթքի ու ծնրադրութեան ժամերը եւ՛ տղամարդկանց, եւ՛ կանանց համար, հնարաւոր է ենթադրել, որ եղբայրութեան դռները փակ չէին եղել կանանց առաջ:

Առաւել հետաքրքիր ու բովանդակալից է «Սահմանքի» երկրորդ գլուխը, ուր շօշափուած են այն հարցերը, «թէ զինչ օգնութիւն եւ շահ արասցեն միմեանց այս միաբանեալ եղբարքս, եւ որ է պտուղ միաբանութեան սոցա»:

«Եղբայրների» միմեանց հանդէպ ունեցած պարտաւորութիւններից առաջինն է՝ միասնական ջանքերով օգնել եւ ազատել այն «եղբօրը», որն «ի փորձութիւն մարդկան անգանիցի եւ բռնաւորաց նեղիցի»: Եթէ որեւէ մէկը մեղքի մէջ թաթախուի, եղբայրները հնարաւոր միջոցներով (աղօթք, խրատ, յանդիմանութիւն, արգելման հրաման) պիտի ձգտեն ազատել նրան սատանայի ծառայութիւնից, աղքատութեան մէջ ընկնողին, ըստ իրենց կարողութեան, պարտաւոր են օգնել բոլոր «եղբայրները», հիւանդին պարտաւոր են մխիթարել այցելութեամբ, դեղով եւ բժշկով, հանգուցեալի թաղմանը նոյնպէս մասնակցելու են բոլորը, ըստ որում իւրաքանչիւրը պարտաւոր է իր միջոցներով մէկ օր պատարագ անել յանուն վախճանուածի:

Այս երկրորդ գլխի յօդուածներից պարզւում է նախ, որ եղբայրութեան հիմնական նպատակը փոխօգնութիւնն է, ամէնօրեայ համագործակցութիւնը եւ միասնական պայքարն ընդդէմ «բռնաւորաց», ընդդէմ «չար մարդկան»:

Երրորդ գլխում շարադրուած են այն յօդուածները, որոնք վերաբերում են ուրիշ վայրերից եկողների հանդէպ «եղբայրների» պարտաւորութիւններին: Նրանք պէտք է հիւրընկալէին, պատուէին եւ օգտակար լինէին այլ վայրերից եկած վարդապետներին եւ օտարականներին:

«Սահմանքի» վերջում Երզնկացին դիմում է «եղբայրներին» եւ ասում, որ, առաջնորդուելով իր կողմից շարադրուած սկզբունքներով, նրանք կնմանուեն ամուր պարսպի.

«Զի որպէս բազմութիւն քարանց,– ասում է նա,– ժողովեալ ի մի տեղի՝ պարիսպ ամրութեան եւ պահապան ամուր է քաղաքի, այսպէս եւ դուք իբրեւ զկենդանի քարինս սիրովն Աստուծոյ մածեալ՝ անառիկ ամրութեամբ կացէք ի հաստատութիւն»:

Յայտնում է նաեւ, որ եղբայրութեան անդամը պարտաւոր է ենթարկուել եւ կատարել «Սահմանքի» կէտերը: Աններելի յանցանք գործողները վտարուելու են միաբանութիւնից:

Վերջում պարզւում է, որ եղբայրութեան մէջ եղել են «կր(տ)սերներ» եւ «աւագներ»: «Եղբայրութիւնն» ունեցել է իր պաշտօնէութիւնը՝ «Տասին գլուխն», «Քառասունին մեծն», «Գլխաւորք եղբարցն» եւ «Գլուխ եղբայրութեանն»:

Այսպիսով, «Սահմանքի» ուսումնասիրութեամբ որոշակի է դառնում, որ 1280 թ. Երզնկա

քաղաքում ստեղծուած «Եղբայրութիւնը» եղել է քաղաքային աշխատաւորական շերտերի, յատկապէս «երիտասարդների» եւ «տղայահասակ մանկանց» ընդգրկող ու շաղկապող մի կազմակերպութիւն:

«Տասին գլուխ» տերմինը հնարաւորութիւն է տալիս վստահօրէն դատել, որ կազմակերպութեան ստորին օղակում միաւորուել են եղբայրութեան տասն անդամներ՝ իրենց գլուխ ունենալով տասնապետը: Մէկ տասնեակ անձերից բաղկացած 4 այսպիսի օղակներ միաւորուել են «Քառասունին մեծի» հրամանատարութեան ներքոյ:

Կազմակերպչական նման, եթէ կարելի է ասել՝ զինուորական սկզբունքը հնարաւոր կլինէր կիրառել միայն այն դէպքում, երբ «Եղբայրութիւնը» լինէր քաղաքային աշխատաւորական լայն շերտերը միաւորող կազմակերպութիւն՝ անմիջաբար առնչուած չլինելով այս կամ այն արհեստի կամ առեւտրի մասնաճիւղի հետ:

Իսկ որ այն միաւորուել է գերազանցապէս քաղաքի աշխատաւորական շերտերին, այդ պարզ երեւում է «Սահմանքի» այն յօդուածներից, որոնք վերաբերում են միմեանց հանդէպ «եղբայրների» ունեցած պարտաւորութիւններին (օգնել աղքատ եղբօրը, այցելել եւ բուժել հիւանդին, կազմակերպել մահացածի թաղումը եւ այլն եւ այլն): Կազմակերպութիւնը ղեկավարուել է «Գլխաւորք եղբարց» կոչուող օրգանի կողմից, որի աւագ անդամը՝ «Գլուխ եղբայրութեանը», եթէ ոչ որպէս կանոն, ապա 1280 թուին եղել է հոգեւորական: Ըստ երեւոյթին, նրա ֆունկցիան է եղել հսկել եղբայրութեան կրօնա-բարոյական սկզբունքներին եւ սանձահարել «միաբանեալ մանկանց» աշխարհիկ ձգտումները:

«Եղբարց միաբանութեան» մէջ եղել են «աւագ» եւ «կրտսեր» անդամներ: Ըստ որում, «Սահմանքի» տուեալներով, աւագ եղբայրը պարտաւոր է եղել քաղցրութեամբ խրատել կրտսերին, իսկ վերջինս՝ հնազանդութեամբ լսել աւագին:

«Աւագների» ու «կրտսերների» տարիքային տարբերութիւնը պարզ է, սակայն այս աստիճանաւորումը, թւում է, արդիւնք է ոչ միայն անդամների ծերութեան ու երիտասարդութեան: Միջնադարեան համքարական կազմակերպութիւնների կեանքում սերտ աղերս գոյութիւն ունէր աշխատողի տարիքի եւ սոցիալ-տնտեսական դրութեան հետ: Աշակերտները ուսման որոշուած ժամանակաշրջանն անցկացնելուց յետոյ սովորաբար իրաւունք չէին ստանում ինքնուրոյն կերպով արհեստով զբաղուելու կամ դառնում էին ենթավարպետ՝ չկորցնելով յետագայում, որոշ կուտակումներ անելուց յետոյ, սեփական արհեստանոց ունենալու երազանքը:

Նրանց շահերը բախւում էին վարպետների շահերին, որոնք նրանց անմիջական շահագործողներն էին, եւ այս հողի վրայ նրանց միջեւ յաճախակի ընդհարումներ էին տեղի ունենում: Սակայն նրանք աւելի յաճախ պայքարի էին դուրս գալիս քաղաքի ֆեոդալական տէրերի եւ մեծատուն վաճառականների դէմ՝ դաշնակցելով իրենց վարպետների հետ:

«Սահմանքի» տուեալներով՝ միաբանութեան հիմնական նպատակը միասնական պայքարն էր ընդդէմ բռնաւորների եւ տնտեսական փոխօգնութեամբ ու համագործակցութեամբ միմեանց զօրավիգ ու նպաստամատոյց լինելը: «Վասն զի,– կարդում ենք «Սահմանքում»,– աշխարհս այս ծով է, եւ մարդիկ ալեկոծին ի սմա պէս-պէս պատահմամբ գործոց: Եթէ ոք յեղբարութենէս ի փորձութիւն մարդկան անգանիցի եւ բռնաւորաց նեղիցի, ամենայն եղբայրքն ջան եդեալ հանցեն զնա ի հասանել վշտացն... եւ եթէ ոք յաղքատութիւն անգցի եւ ի չքաւորութիւն մարմնոյ, այլ եղբարքն ըստ կարողութեան եւ ըստ ուժոյ օգնեսցին...»:

Ցաւօք, «Սահմանքի» հեղինակի հաղորդած տուեալներն անբաւարար են եղբայրութեան ...ութն աւելի լրիւ պատկերացում կազմելու համար. մի շարք կարեւոր ու հետաքրքրաշարժ ...րցեր, օրինակ՝ ի՞նչ բնոյթ են կրել եւ ի՞նչ հարցեր են լուծում «եղբայրների» հաւաքոյթ-...ում, քաղաքի տնտեսական կեանքում ի՞նչ ֆունկցիա ու դեր են կատարել եղբայրութեան ...կավար մարմինները եւ նման մի շարք այլ հարցեր, մեր ձեռքի տակ եղած աղբիւրների ...եալներով առայժմ չեն ստանում իրենց լուծումը:

Վերոյիշեալ հարցերի լուսաբանմանը լայնօրէն օժանդակելու են XIII դարում, մոնղոլա-...ն տիրապետութեան լծի խստացման ժամանակաշրջանում, Փոքր Ասիայի քաղաքներում ...աջ եկած «ախի» («եղբայր») կազմակերպութեան մասին եղած վկայութիւնները[1]: «Ախի-...ը» քարոզում էին եղբայրութիւն եւ հիւրասիրութիւն. Իբն-Բատուտան, որ 1332 թ. ...նապարհորդելով Փոքր Ասիայում՝ յաճախ հիւրընկալւում էր «ախիների» (ի միջի այլոց, եւ Երզնկայի «ախիների» կողմից), վկայում է, որ նրանք կանգնած էին ազատութեան ...շտպանութեան դիրքերում եւ ոչնչացնում էին բռնաւորներին ու նրանց կամակատար-...ին: Տառապեալներին ու չքաւորներին օգնելը պարտադիր էր նրանց համար: Յայտնի է եւ, որ «ախիները» հիմնականում երիտասարդ ամուրի մարդիկ էին:

XIX-XX դարերի ազգագրական տուեալները միաբերան վկայում են այն մասին, որ Անդր-...կասի քաղաքների համքարական կազմակերպութիւնները միաւորում էին նոյն արհեստի ...րդկանց՝ անկախ նրանց ազգային պատկանելութիւնից եւ կրօնական դաւանանքից: Տիրող ...ակարգերի ձգտումը՝ սերմանել ազգամիջեան ատելութեան ու կրօնական անհանդուրժո-...կանութեան թոյնը սոցիալ-տնտեսական նոյն պայմանների մէջ գտնուող այլազգի աշխա-...տաւորութեան մէջ, հակահարուած էր գտնում համքարական կազմակերպութիւնների կեանքի ...ործունէութեան բոլոր կարեւոր բնագաւառներում:

Կան վստահելի տուեալներ այն մասին, որ համքարական կազմակերպութիւնների այդ ...նդութիւնը նոյնպէս դարաւոր պատմութիւն ունի: Յայտնի է, որ «ախի» կազմակերպու-...ն մէջ ընդգրկւում էին նաեւ Փոքր Ասիայի քաղաքների քրիստոնեայ աշխատաւորների ...կայացուցիչները: Այս առումով ուշագրաւ է նաեւ այն փաստը, որ 1462 թուին Կաուց ...ապատում ընդօրինակուած Յայսմաւուրքի գրիչ Խաչատուրը յիշատակութիւն ունի ձեռա-...ստացողի մեծ պապ «ախի Կարապետի» մասին (ձեռ. N 4883, էջ 613բ):

Երզնկայի եղբայրութեան մէջ միաբանուածները նոյնպէս տոգորուած են հարեւան ...ողովուրդների հետ հաշտ ու խաղաղ գործակցելու գաղափարով ու ջերմ ձգտմամբ: Եղբայ-...թեան սահմանքի մէջ այդ առթիւ կարդում ենք.

«Եւ խաղաղասէրք լինին եղբարքս մեր ի մէջ աշխարհի, ընդ ամենայն ազգ մարդկան ...ով առնիցեն զասել եւ զլսել, որ յամենայն ազգէ իմաստունք լիցին՝ մեծարեսցին եւ ...ստութենէն չահեսցին՝ առանց հակառակութեան»:

Համոզուած ենք, որ «ախիների» (որոնցից շատ կային նաեւ Երզնկայում) եւ Երզնկայի ...բայրների» միջեւ եղել են մերձաւոր կապեր:

Երզնկայի «Եղբարց միաբանութիւնը», «Սահմանքի» վստահելի տուեալով, պաշտօնա-

«Ախի» կազմակերպութեան մասին տե՛ս **Вл. Гордлевский**, Из жизни цехов в Турции. К истории "ахи" ("Записки Коллегии востоковедов", *II*, вып. 2, Ленинград, 1927. **Вл. Гордлевский**, Государство сельджукидов Малой Азии. Москва, Ленинград, 1941. **В. Бартольд**, Ислам, СПб., 1918 եւ այլ աշխատութիւններ:

կան բնոյթ է ստացել եւ եկեղեցու կողմից ճանաչուել որպէս ընդունելի կազմակերպութիւն 1280 թուականին:

Մեզ այժմ հետաքրքրում է կարեւոր մի հարց. Երզնկայի այս եղբայրութիւնն ունեցե՞լ է արդեօք իր նախորդները հայկական քաղաքներում, եւ նման տիպի կազմակերպութիւններ եղե՞լ են արդեօք նաեւ յետագայում՝ բուն Հայաստանում եւ հայկական գաղթավայրերում: Հասկանալի է, որ այս հարցերը մեծ կարեւորութիւն ունեն միջնադարեան Հայաստանի քաղաքների սոցիալ-տնտեսական կեանքն ուսումնասիրելու տեսակէտից. ցաւօք, նրանց գոհացուցիչ պատասխան տալու համար առայժմ մենք զուրկ ենք հարուստ նիւթերից:

Այնուամենայնիւ մատենագրական որոշ տուեալներ ու ակնարկներ կան, որոնց կողքով չի կարելի լռութեամբ անցնել:

Մատթէոս Ուռհայեցին իր «Ժամանակագրութեան» մէջ[1] պատմում է «յառաջ քան զքսան ամ», այսինքն՝ 1120-ական թուականներին տեղի ունեցած մի շատ կարեւոր դէպք: Լսենք նրան.

«...Նոյնպէս յաւուրն բարեկենդանին եւ նոյն ամին եկեալ կարաւան ի յարեւելից ի քաղաքն Անտիոք, եւ բարձեալ բերէին տարեխ ձուկն եւ կային ի մէջ շուկային ի գնմարբու-թեան. եւ ի լսել քաղաքացեացն զձայն պարուց նոցա՝ ամենայն արք քաղաքին հասանէին ի վերայ նոցա եւ ծեծելով զանալից արարին զնոսա, սկսան հանել զնոսա ի քաղաքէն. էին արք իբրեւ ութսուն՝ բրէզաձք եւ ընտրեալք քաջութեամբք: Եւ յայնժամ ձայն տուեալ մանկտա-ւագն նոցա, եւ նոցա միաբան զինամխեալք էին՝ յարձակեցան ի վերայ քաղաքացեացն եւ ի Սեւատոյն դրանէն մինչեւ ի տէր-Պետրոս՝ զամենայն արս քաղաքին փախստական արարին եւ կառափնաբեկ եւ ոտնակոտոր արարին արս բազումս. եւ ապա խաչիւ եւ աւետարանով երդուեալ նոցա բնաւ այլ ոչ մեղանչել նոցա: Եւ յայնժամ արարին խաղաղութեան եւ դար-ձան ի տեղիս իւրեանց»:

Անտիոք եկած վաճառականների բերած ապրանքը Վանայ լճի տարեխ ձուկն է՝ տառեխը, ուստի առեւտրականներն էլ Վասպուրականից են՝ ամենայն հաւանականութեամբ հէնց Վան քաղաքից: Կերուխում, երգ ու կին՝ ահա նրանց առօրեան օտար շուկաների եռու-զեռի մէջ: Նրանք կազմակերպուած զինական ուժ են ներկայացնում, զինուած են բրերով (այդ չի նշանակում, թէ այլ զէնք չեն ունեցել), ունեն իրենց հրամանատարը, որ Ուռհայեցու կողմից կոչւում է «Մանկտաւագ», վերջինիս կոչով բոլորը, «որ էին արք իբրեւ ութսուն», մի մարդու նման ոտքի են կանգնում եւ հալածում իրենց ծեծողներին: Նրանք հարիւրաւոր կիլոմետր դժուար ճանապարհ են անցել, ազատել են իրենց ապրանքը գիշատիչ տասնեակ հայեացքներից. շրջանցել են բազմաթիւ մաքսատներ ու խորամանկութեամբ, ուժով, խելքով ու հմտութեամբ հեռաւոր Վասպուրականից Անտիոք հասցրել իրենց ապրանքը՝ տառեխ ձուկը:

Նրանց այլ ընկերակիցները, նոյնպիսի դժուարութիւններ յաղթահարելով, գնում էին Պարսկաստանի մարդաշատ քաղաքները, հասնում էին Պարտաւ եւ այլ հեռաւոր վայրեր: Եւ ամէնուրեք նրանք, վաճառական լինելով հանդերձ, միեւնոյն ժամանակ զինուած կռուողներ էին, որ պաշտպանում էին իրենց անձն ու չահը:

Պատահակա՞ն է արդեօք 80 կորիճ վաճառականների այսպիսի համագործակցութիւնը

[1] **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 226

հայրենիքից հեռու: Արդեօք միայն անձնական շահն ու օգո՞ւտն է տանեալ դէպքում միաւո-րել նրանց: Համոզուած կարելի է յայտարարել, որ ոչ: Ոչ՝ թէկուզ այն պատճառով, որ նրանք հանդէս են գալիս որպէս կերուխումի, գինու ու կռուի փորձուած ընկերներ. մի ընկե-րութիւն, որ չէր կարող ծնուել Անտիոքի ճանապարհին: Եթէ նրանք իրար հետ կապ չունե-ցող անհատներ լինէին, օտար շուկայում նոյնիսկ հակադիր շահեր պէտք է ունենային, ամէն մէկը պէտք է ձգտէր աւելի շուտ վաճառել իր ձուկը եւ տուն դառնալ:

Վերոյիշեալ հետաքրքրաշարժ դէպքի հանգամանքները պարզելու համար բացառիկ արժէք է ներկայացնում Մատթէոս Ուռհայեցու մէջբերած հատուածի «մանկտաւագ» տերմինը: «Մանկտաւագը» հանդէս է գալիս որպէս բրերով զինուած 80 երիտասարդների ղեկավար, նրա կոչով բոլորը կռուի են ելնում: Չափազանց ուշադրաւ այս տերմինը կազմուած է «մանկտի» եւ «աւագ» բառերից: Մեր բառարաններում («Նոր հայկազեան բառագիրք», Ստ. Մալխասեանի «Հայերէն լեզուի բացատրական բառարան») «մանկտի» բառի արձանագրուած իմաստներից են «պատանի», «երիտասարդ», «զինուոր», «քաջ զօրական» եւ այլն: Ուշադրաւ է նաեւ «մանկտի» բառի գաւառային իմաստներից մէկը, որը համարժէք է «մակարներ» (ամուսնացող երիտասարդի ընկերներ) բառին: Բացի արձանա-գրուած այս իմաստներից, Յակոբ Կլայեցու (XIII դար) «Մեկնութիւն նուրբ գրեաց» աշխա-տութեան մէջ կայ մի հատուած, ուր այդ «մանկտի» բառը գործածուել է «երիտասարդ արհեստաւոր» իմաստով[1]:

«Մանկտի» բառի այս իմաստները, ինչպէս եւ այն որոշակի տուեալները, որոնց համա-ձայն Երզնկայի եղբայրութեան եւ «Ախի» կազմակերպութեան անդամների մեծագոյն մասը ամուրի երիտասարդներ, այսինքն՝ «մանկտիք» էին, անտարակոյս են դարձնում այն, որ Մատթէոս Ուռհայեցու նկարագրուած դէպքի մէջ գործող «մանկտաւագը» մեզ արդէն ծանօթ եղբայրութեան նման ինչ-որ քաղաքային կազմակերպութեան ղեկավար անձ է, որի հրամանին հլու եւ կոչին հպատակ գործում են եղբայրութեան մէջ ընդգրկուած «մանուկնե-րը»՝ լինի իրենց հայրենի քաղաքում, լինի բուն երկրից անսահման հեռու՝ օտար հորիզոն-ներում:

«Հայկազեան բառագրքի» եւ մեր միւս բառարանների հեղինակներին «Մանկտաւագ» տերմինի գործածութեամբ միայն մի հատուած է յայտնի, եւ դա Մ. Ուռհայեցու մեզ արդէն ծանօթ հատուածն է: Բարեբախտաբար, այդ բառը մեր մատենագրական երկերում գոր-ծածուել է նաեւ յետագայում: XIV դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններում, օրինակ, «մանկտաւագ» տերմինին հանդիպում ենք երեք անգամ:

1. 1334 թ. Կաֆայում ընդօրինակուած «Ճառընտիրի» յիշատակարանում. («[յիշեցէք] Բահատուր բազազին, պարոն Հասրաթին, Սիմէոն չրախճուն, մանկտաւագ Կազուրին, պարոն Աւրատին եւ այլ երախտաւորաց»)[2]:

2. 1343 թ. մի յիշատակարանում («զպատուեալ ծերունին զԹագուոր մանկտաւագն»)[3]:

1 Այդ հատուածում հեղինակն ասում է, որ դիպակագործութեամբ, ոսկեգործութեամբ եւ շքեղ ու թանկարժէք ապրանքներ արտադրող այլ արհեստներով հոգեւորականները չպէտք է զբաղուեն, «այծէիք յոստայնան-կութեամբ բաւականասցուք յոստայնանկական արուեստս, եւ մի որ մանգանց անարգել մտաց իմացուածք են եւ նոցին գայթակղութիւն, զի մանկունք փարին ընդ պայծառ արուեստս եւ այս, որ մանկանց գայթակղութիւն է անընդունելի է մեզ» (Մատենադարան, ձեռ. N 598, էջ 176ա):

2 Լ. Խաչիկեան, ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Երեւան, 1950, էջ 265

3 Նոյն տեղում, էջ 334

3. 1357 թ. Սուլթանիայում Մխիթար Անեցի դպրի կողմից ընդօրինակուած ձեռագրում: Դպրին գործակցել է մանկտաւագ Ներսէսը («զբազմավէր ոգի զմանկտաւագ Ներսէս՝ զաւ-կաւ աշխատողս ի սմայ, աղաչեմ միով Տէր-ողորմեայիւ օգնական լինել»)[1]: Այդ նոյն ձեռա-գրի յիշատակարանում յիշուածների մեծագոյն մասն արհեստաւորներ են՝ ուսթայ Վրանը, դալալ Նուրադինը, գինեծախ Զաքարէն:

Անտարակոյս, այս տերմինին կհանդիպենք նաեւ յետագայ՝ XV-XVII դարերի յիշատակա-րաններում եւ այլ աղբիւրներում[2]: Այս նշանակում է, որ «մանկտաւագութիւն» ինստիտու-տը, գոյութիւն ունենալով դեռեւս XII դարի սկզբներին (1120 թ. մերձաւորապէս), իր գոյու-թիւնը շարունակել է նաեւ յետագայում:

«Մանկտաւագ» տերմինի հետաքրքրութիւնն այսքանով չի սպառւում: XIX-XX դարերի ազգագրական տուեալներով՝ Հայաստանի, Վրաստանի եւ Թուրքիայի քաղաքներում արհես-տաւորական համքարութիւններում յատուկ պաշտօնեայ կար, որ կոչւում էր «իգիթբաշի» կամ «ջիգիթ-բաշի»: XIX դարում այդ պաշտօնեայի պարտականութիւնն էր ուստա-բաշու կարգադրութիւնները հաղորդել համքարութեան անդամներին, ժողովի հրաւիրել նրանց եւ այլն: Այդ չնչին եկամուտ բերող պաշտօնը սովորաբար յանձնում էին համքարութեան այն անդամներին, որոնք ժամանակաւորապէս կամ ընդմիշտ զրկուած էին արհեստը բանեցնելու կարողութիւնից[3]:

Իգիթ-բաշու պարտաւորութիւնների ու պաշտօնի մէջ չկայ որեւէ բան, որ առնչուի նրա անուան (իգիթ, ջիգիթ՝ թուրքերէն նշանակում է ջահել, քաջ եւ այլն) իմաստին: Նա ստորա-դաս պաշտօնեայ է, ուստի որեւէ մէկի հանդէպ «աւագ» (բաշի) չէ. նա որեւէ կերպ չի առնչւում նաեւ «երիտասարդ» ու «քաջ» իմաստներին:

Սակայն այդպէս էր XIX դարում, երբ Անդրկովկասում եւ Թուրքիայում համքարական կազմակերպութիւնները, զարգացման դարաւոր ընթացք ապրելով, կորցրել էին իրենց կազ-մակերպչական հին սկզբունքներից շատ-շատերը, երկրի հասարակական ու քաղաքական կեանքում չէին կատարում այնքան կարեւոր դեր, ինչպէս անում էին նրանց հեռաւոր նախորդները XII-XIII դարերում, զինուած ուժ իրենցից այլեւս չէին ներկայացնում եւ այլն: Այս բոլորի հետ մէկտեղ, այնուամենայնիւ, «իգիթ-բաշի» տերմինը (որ հայկական «մանկ-տաւագ» տերմինի հարազատ թարգմանութիւնն է), ինչպէս նաեւ «աղսախկալ», «ուստաբա-շի» եւ համքարութիւնների հետ կապուած այլ տերմիններ վկայում են քաղաքային համքարական կազմակերպութիւնների եւ միջնադարեան «եղբայրութիւնների» սերտ կապի եւ առնչութեան մասին:

Շարադրուած տուեալներով, որքան էլ նրանք սուղ եւ ակնարկային լինեն, թւում է, թէ կարելի է ապացուցուած համարել, որ դեռեւս XII դարում Հայաստանի քաղաքներում կային կազմակերպութիւններ, որոնք միաւորում էին քաղաքի արհեստաւորական եւ առեւտրական շերտերին, պայքար կազմակերպում ընդդէմ «բռնաւորների», օգնում տնտեսապէս քայ-քայուած ընկերոջը, միմեանց զօրավիգ լինում քաղաքական ու տնտեսական գործունէութեան

1 Նոյն տեղում, էջ 428

2 «Մանկտաւագ» բառը գործածուել է նաեւ որպէս անձնանուն: Հ. Աճառեանը (տե՛ս «Հայոց անձնանունների բառարան», հտ. Գ, էջ 203) գտնում է, որ այն կազմուած է «մանկտի» եւ «աւագ» հայերէն բառերից եւ ունի «մանուկների աւագ, ուսուցիչ կամ վարժապետ» իմաստները:

3 Ю. Ахвердов, Тифлисские амкары, Тифлис, 1887, с. 17 и др.

բոլոր բնագաւառներում: Նրանք միաժամանակ կարեւոր դեր էին խաղում որպէս զինուած ուժ: Մանկատաւագի գլխաւորութեամբ նրանք յարձակւում էին իրենց թշնամիների վրայ, հալածում իրենց հարստահարողներին, իսկ յաճախ նաեւ, որպէս քաղաքի իսկական հայրենասէրներ, կրծքով պաշտպանում էին այն օտար նուաճողների յարձակումներից: Այդպէս օրինակ՝ յայտնի է, որ 1243 թ., երբ մոնղոլները Բաչու Նոյինի գլխաւորութեամբ պաշարեցին Երզնկան, «բնակիչք քաղաքին բազում հարուածս հասուցեալ ի վերայ զօրացն թաթարին...»[1]:

Մեր հետաքրքրող ժամանակաշրջանում Հայաստանի բոլո՞ր քաղաքներն են արդեօք ունեցել այդպիսի կազմակերպութիւններ. այս հարցին վճռական պատասխան տալ չենք կարող: Թւում է, սակայն, որ այն խոշոր քաղաքները, որոնք կարեւոր դեր են կատարել որպէս արհեստագործութեան եւ միջազգային առեւտրի կենտրոններ, պէտք է որ ունենային այդպիսի կազմակերպութիւններ:

Մեզ արդէն յայտնի է, որ Երզնկան եւ Վասպուրականի քաղաքներից մէկը (ամենայն հաւանականութեամբ Վանը) ունեցել են նման կազմակերպութիւններ:

Երզնկայի եղբայրութեան «Սահմանքի» մէջ կայ հետեւեալ ուշագրաւ յատուածը.

«Իսկ երրորդ գլուխն այն է, որ եւ այլոց բարի արասցեն, որ գան ի հեռաւոր աշխարհաց եւ կամ ի սոցանէ գնան յայլ աշխարհ, օգտին եւ օգտեցուցանեն»:

Հատուածի բովանդակութիւնն այն է, որ «եղբայրները» պարտաւոր են այլ վայրերից եկողներին բարութիւն անել (հիւրընկալել, կերակրել եւ այլն), որպէսզի իրենք եւս փոխադարձաբար հիւրընկալուեն ուրիշ երկրներ գնալու դէպքում: Այս հատուածը չի կարելի դիտել սոսկ որպէս քաղաքային կազմակերպութիւնների «հիւրասիրութեան» արտայայտութիւն: Օտար հեռաւոր երկրների հետ կապ ունեցող եւ հեռաւոր քաղաքներում հիւրընկալութիւն ակնկալող քաղաքացիներն անշուշտ առեւտրականներ էին, որոնք, անդաւաճան իրենց «առ» եւ «տուր»-ի սկզբունքին, «օգուտ» էին տալիս այլոց՝ «օգուտ» ստանալու ակնկալութեամբ միայն («օգտին եւ օգտեցուցանեն»):

Այստեղից թերեւս կարելի է եզրակացնել, որ նման եղբայրութիւններ գոյութիւն են ունեցել Հայաստանի եւ շրջակայ երկրների այլ վաճառաշահ քաղաքներում նոյնպէս: Կարծում ենք, որ միջնադարեան Հայաստանի մայրաքաղաք Անիի վերաբերեալ ունենք փոքրինչ աւելի որոշակի տուեալ:

Ինչպէս արդէն առիթ ենք ունեցել նշելու, 1280 թուին Երզնկայի եղբայրութեան «գլուխ» է կարգւում Գրիգոր Սանահնեցի անունով մի ծերունի վարդապետ: Այդ Գրիգոր վարդապետն, ամենայն հաւանականութեամբ, Երզնկայում հաստատուած հէնց այն գրասէր Ահարոն-Գրիգոր վարդապետն է, որն ընդօրինակել է տուել Երզնկայի եղբայրութեան «Սահմանքի» մեզ յայտնի հնագոյն ձեռագիրը (թիւ 2329): Այդ ձեռագրի 281ա–283ա էջերի ինքնագիր յիշատակարանում ձեռագրի ստացող այդ Գրիգորը գրում է.

«Ի թու[ականին] Չխ (1291)... նուաստ եւ անարժան սպասաւորս բանի Ահարոն մականուն Գրիգոր կոչեցեալ ստացա զգիրքս զայս, որ է Քերական եւ Արուեստ գրագարձի եւ Համառօտ կանոնք՝ երկու գիտութեամբ. մի՝ զի ընթերցեալ աւգտեցայց ի սմանէ, վասն որոյ եւ խոշորագիծ ետու գրել ի թերութեան ժամանակի, եւ երկրորդ՝ զի յիշելոյ պատճառ

---

[1] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիզ, 1909, էջ 268

լիցի մեզ յետ վճարելոյ մեզ ի մարմնաւոր կենացս...»[1]:

Այս նոյն ձեռագրի մէջ յետագայում արուած երկու յիշատակութիւնների համաձայն (էջ 1բ, եւ 283ա)՝ այս Գրիգոր-Ահարոն վարդապետը վախճանուել է 1316 թ. օգոստոսի 18-ին: Սակայն Երզնկայում նրա կեանքն այդ մէկ քառորդ դարի (1291–1316 թթ.) ընթացքում խաղաղ չի անցել:

Նրան պատկանող մի այլ ձեռագրի ինքնագիր յիշատակարանից (ձեռ. N 1342, «Մեկնութիւն Ղուկասու յիզնատիոսէ») տեղեկանում ենք, որ այն գրուել է.

«Ի մայրաքաղաքն Երզնկա, բայց ի կատարումն ոչ եղ. զի այլազգիք մահմեդականք ապստամբեցին ի գաւառն ի քառասներորդաց պահոցն յերկրորդ շաբաթուն եւ բազում քրիստոնեայս՝ եկեղեցականս եւ աշխարհականս նահատակեցին եւ յանխնա եւ անողորմ սրակոտոր արարին եւ զայլսն գերի վարեցին, եւ սաստիկ եւ անհնարին ահ եւ երկեղ եւ տագնապ եւ խռովութիւն եղեւ բնակչաց քաղաքին: Եւ որպէս յոլովք ցրուեցան ի քաղաքացեացն ընդ ամենայն կողմանս, նոյնպէս եւ մեք մազապուրծ եղեալ՝ բազում տառապանաւք եւ աշխատութեամբ զիմեալ յԱրեւելից կողմն: Խնամք ողորմութեանն Աստուծոյ առաջնորդել հասուց զմեզ յԱնի քաղաքս. եւ աստ եղեւ կատարումն գրոցս՝ շնորհաւք եւ աւգնականութեամբն Աստուծոյ ի թուականիս հայոց ՉԽԱ (1292), ի մարերի Ժ (10) եւ ի հոկտեմբեր ԺԳ (13), ձեռամբ մեղապարտ եւ անարժան վարդապետի Ահարոնի՝ մականուն Գրիգոր կոչեցեալ»[2]:

Անի քաղաքում նրան հիւրընկալում են եւ խնամում Գրիգոր ծեր քահանան, Սիմէոն միայնակեաց Մարընդունեցին եւ ուրիշները: Երախտագիտութեամբ է յիշում նա իր հանդէպ «գութ եւ ողորմութիւն» ցոյց տուած անձանց:

Հակուած ենք կարծելու, որ Երզնկայի 1292 թ. աղէտից փրկուած Գրիգոր-Ահարոն վարդապետն Անիում հեշտութեամբ գտնում էր թէ՛ օթեւան, թէ՛ «խնամք ու գթութիւն», թէ՛ գիրք ու մտերմութիւն, որովհետեւ Անի քաղաքում եւս կար Երզնկայի «Եղբայրութիւն» կազմակերպութեան նման մի կազմակերպութիւն, որի անդամների պարտաւորութիւնների մէջ եւս հիւրընկալութիւնն ու օտարականին պատուելը առաջին տեղերից էր գրաւում:

* * *

Այժմ աշխատենք առկայ սուղ փաստերի միջոցով առաջ քաշել Երզնկայի եղբայրութեան եւ ընդհանրապէս քաղաքային ալխերի գաղափարախօսութեանն առնչուող մի երկու հարց[3]:

Ինչպէս արդէն տեսանք, XII-XIII դարերի Հայաստանի քաղաքներում դասային հակամարտութիւնները ծայր աստիճան սրւում էին: Փողի ուժով տնտեսական ու քաղաքական կեանքի հրամանատարական բարձունքները նուաճող մեծահարուստ ու փարթամ վաճառականները, որոնք պարծենում էին ոչ թէ իրենց տոհմի ազնուականութեամբ ու հին անցեալով, այլ իրենց հսկայական նիւթական միջոցներով, բնական է, որ պէտք է պայքարէին երկրի ֆեոդալ իշխողների եւ նրանց կամակատարների դէմ: Այս պայքարի արդիւնքը լինում էր այն, որ շատ մեծատուն վաճառականներ դրամի ամենակարող ուժով ձեռք էին բերում

---

[1] Մատենադարան, ձեռ. N 2329, էջ 282ա

[2] Մատենադարան, ձեռ. N 1342, էջ 260ա-260բ

[3] Այս շրջանի «Հերձուածողական» գաղափարների մասին մենք արդէն առիթ ենք ունեցել խօսելու «Աղանդաւորական գաղափարախօսութիւնը Հայաստանում *XII-XIV* դարերում» յօդուածում (տե՛ս Ն. Մառի անուան կաբինետի «Աշխատութիւններ», 1947, N 2, էջ 181-209): Այժմ ձեռքի տակ ունենք նոր նիւթեր:

կալուածքներ, իսկ այդ կալուածքների հին տէրերը, աստիճանաբար կորցնելով իրենց ունեցուածքը, զրկւում էին անաշխատ ու շռայլ կեանք վարելու իրենց նախկին հնարաւորութիւններից:

Մեծատուն վաճառականների եւ նրանց գաղափարախօսների համար գաղտնիք չէր, որ եկեղեցու հովանու տակ էին պատսպարւում եւ զգեստաւորուած շարունակում տիրել իրենց հսկայական կալուածքներին հայ ֆեոդալական ընտանիքների նուազ ու փոքր շառաւիղները:

Տնտեսական ու սոցիալական այս հողի վրայ քաղաքներում հանդէս են գալիս մարդիկ, որոնք «Բամբասեն իսկ (զվարդապետս) ագահս եւ հեշտասէրս եւ իշխանողս անուանեն զնոսա եւ զատարկակեացս եւ որ ինչ սոցին նման են»[1]:

Վարդապետներին եւ ընդհանրապէս հոգեւորականութեանը «հեշտասէր» անուանողները, բնական է, որ պէտք է թերանային հաւատի հարցերում եւ հակադրուէին եկեղեցու գաղափարախօսութեանը: Եւ իրօք, 1371 թ. մի հոգեւորական վկայում է այն մասին, որ ինքը ծանօթ է 15-ամեայ մի պատանու, որը դեռեւս եկեղեցի չի մտել եւ պատարագ չի տեսել, եւ մի ուրիշի, որը 10 տարուց աւելի է, ինչ չի հաղորդուել:

«Եկեղեցի,– գրում է նոյն հեղինակը,– սարքի ոտմամբ լցեալ, զգեստ փոշակալեալ եւ ցեցակերեալ կամ բնաւ անզարդեալ, հաղորդութիւն խորհրդոյն բորբոսքն եղեալ կամ ի մկանց ծախեցեալ, քահանայք եւ առաջնորդք գայթակղեցուցանեն եւ ոչ չինեն զհաւատս»[2]:

Քաղաքային իշխող շերտերն այնուամենայնիւ իրենց կապերը չէին խզում եկեղեցուց: Ընդհակառակը՝ XII-XIV դարերում նրանք էին հիմնականում, որ կառուցել էին տալիս ու վերաշինում եկեղեցիներ ու վանքեր: Նրանք քաջ ըմբռնում էին, որ եկեղեցին իրենց պէտք է գալու, որովհետեւ մեծատուններին դէմ ծառանում էին հասարակութեան աշխատաւոր ու չքաւոր այն շերտերը, որոնց մտահոգում է այն հարցը, թէ՝ «Վասն է՞ր չարքն ի հանգիստ կան եւ մեծատունք են եւ փափկանան միշտ եւ յուրախութեան են յանապազ, եւ մեք՝ կարօտ ամենայն բարեաց»[3]:

«Չարերի» շարքում այդ «կարօտ ամենայն բարեաց» շերտերը դնում են բոլոր նրանց, ովքեր «փափկանան միշտ եւ յուրախութիւն են»: Այդ շերտերը հասել էին արդէն այն գիտակցութեանը, որ Աստուած բոլոր մարդկանց ստեղծել է «զոյգ եւ հաւասար», միեւնոյն իրաւունքներով՝ իշխել գազանների, սողունների, թռչունների ու ձկների վրայ: Ուստի եւ տիրող եւ ճորտ գիւղացու, մեծահարուստ վաճառականի եւ աղքատ քաղաքացու փոխյարաբերութիւնները ստեղծուել են յետագայում՝ բռնութեան ճանապարհով: «Տիրելն այսու եղանակաւ գործեցեալ եղեւ ի սկզբանէ, զի հզօրքն եւ կարօղքն բռնացան ի վերայ տկարացն եւ հնազանդեցուցին զնոսա եւ ընչեղքն եւ հարուստքն ծառայեցուցին ինքեանց զաղքատսն»[4]:

Եկեղեցու գաղափարախօսները քարոզում էին, թէ սատանան մարդկանց կորստի մատնելու համար բազմաթիւ հնարներ գիտէ. «Զոմանս (խաբէ սատանայ) թատերաւք խաղուց եւ չարաչար ծաղրօք եւ լկտի կատականօք, դատարկ եւ վայրապար խաւսաւք, զքաջաց զրոյցն

1 Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն եօթանց թղթոց ..., Կ. Պոլիս, 1826, էջ 54
2 Մատենադարան, ձեռ. N 581, էջ 255բ–256բ
3 Բարսեղ Մաշկեւորցի, Մեկնութիւն սրբոյ Աւետարանին, որ ըստ Մարկոսի, Կ. Պոլիս, 1826
4 Նոյն տեղում, էջ 103–104 (տե՛ս նաեւ Մատենադարան, ձեռ. N 1314, էջ 64բ–65ա):

տալ տայ եւ ուսուցանէ զմարդն զաւրաւոր մանուկ եւ յաղթող լինել, եւ այն է կորուստ: Ի կռիւ կամ ի խաղ փութացուցանէ եւ ի սպանութիւն...»[1]:

Ժողովրդին իր «քաջաց զրոյցներից», իր սիրելի գուսանների ու վարձակների երգից ու տաղից, առածից ու հանելուկից կտրելու, հեռացնելու նպատակով եկեղեցու գաղափարախօսները բազմապիսի հնարների էին դիմում: Ներսէս Շնորհալին ժողովրդական հանելուկների նմանողութեամբ կրօնական բովանդակութեամբ հանելուկներ էր յօրինում, «զի փոխանակ առասպելեաց՝ զայն ասասցեն ի գինարբուս եւ ի հարսանիս»[2]:

Մխիթար Գոշն ու Վարդան Այգեկցին օգտագործում էին ժողովրդական կենսախինդ ու առողջ առակները՝ մեկնաբանելով եւ նրանց մէջ դնելով այլ՝ ժողովրդին խորթ գաղափարախօսութիւն: Սակայն աշխատաւոր ժողովուրդը սնւում էր իր ստեղծագործական վճիտ աղբիւրներից, երգում էր իր հայրենները, լսում իր ծոցից դուրս եկած գուսաններին ու ասացողներին, չանսալով ու արհամարհելով եկեղեցականների կողմից դրուած արգելքն ու անէծքը՝ շտապում էր դիտել թատերական ներկայացումներ եւ այլն: Մեր Մատենադարանի ձեռագրերում կայ Խաչին նուիրուած մի հետաքրքիր ներբողեան, որի մէջ գտնում ենք ուշագրաւ հետեւեալ տողերը.

«Յորժամ զանազան թատերք մոլորութեանցն ի փողոցս քաղաքացն երեւութանան յօրինեալք, յայնժամ է տեսանել զխառնութիւն մարդկան կատարեալ ձգել զանձինս առ տեսարանն վնասակար ոգւոյն... բազումք զվաճառաշահութիւնն արհամարհելով անդ երթալ դեգերին, այլք զարուեստս ձեռագրութեանն անփոյթ արարեալ զօրն ամենայն նստին զատարկացեալք՝ լսել վնասակար հնչմանցն ձայն, որք զհոգւոյն գործեն զապականութիւն: Իսկ յորժամ իցէ ժամանակ լսելութեան աստուածային ինչ շահաւոր պատմութեանց՝ տաղտկացեալք հրաժարին եւ տարտամեալք հեղգալով ի բաց դարձուցանեն զլսելիս...»[3]:

Այս եւ նման այլ վկայութիւններից պարզ է դառնում, որ քաղաքային աշխատաւոր շերտերն ունէին իրենց կենսաթրթիռ մշակոյթը, իրենց թատրոնը, գուսաններին եւ գաղափարախօսներին:

Երզնկայի եղբայրութեան հետ գրական բեղմնաւոր գործունէութեամբ եւ անձնական կապերով անմիջապէս առնչւում է XIII-XIV դարերի նշանաւոր բանաստեղծ Կոստանդին Երզնկացին: Երզնկացին իր մի շարք տաղերում ակնարկներ է անում այն հալածանքների ու զրկանքների մասին, որ ինքը կրել է կղերականներից ստեղծագործելու համար՝ ընդհանրապէս, եւ «աշխարհի» եւ «սիրոյ» բան ստեղծագործելու համար՝ մասնաւորապէս: Օրինակ՝ մի տեղ նա գրում է.

«Ոմանք չարախօսեն զինէն վասն նախանձու, թէ որպէս խօսի սա այսպիսի բան, զի վարդապետի չէ աշակերտել...»[4]:

Կամ՝

1 Ձեռ. N 2776, էջ 252բ
2 «Կիրակոսի Գանձակեցւոյ Հայոց պատմութիւն», Վենետիկ, 1865, էջ 69
3 Ձեռ. N 1880, էջ 355ա
4 Կոստանդին Երզնկացի, ԺԴ դարու ժողովրդական բանաստեղծ եւ իւր քերթուածները, հրատ. Մ. Պոտուրեան, Վենետիկ, 1905, էջ 57

«Ոմանք չար են հետ ինձ
Ու նախանձով են յիմ վերայ
Վասն իմ գըրեալ բանիս,
Որ առ մարդիկ երեւանայ...»[1]:

Եւ կամ՝

«Նայ կէսք մ'ասեն դայ է
Յիմար ու խեւ մաղաս կարթել.
Ու կէսք մ'ասեն թէ պարտ է
Ջայսպիսոյ արհւնն հեղել.
Նայ ես պատասխանեմ
Թէ՝ Կոստանդին չէ պարտ լըսել...»[2]:

Բայց ոչ բոլոր տեղերում է Կոստանդինը գանգատւում իրեն նախանձողներից ու հալածողներից: Ընդհակառակը՝ «Տաղ սիրոյ»-ի մէջ, ուր գովերգում է «գեղեցիկ մարճին», որի նմանը ոչ ոք դեռ չի տեսել, նա յայտնում է.

«...Եղբարք մի կան հետ մեզ սիրով.
Աշխարհի բան ուզեն գրով.
Նայ ես վասն այն յայտնի ձայնով
Սիրու բաներս ացի յոլով»[3]:

Ովքե՞ր են այդ «եղբայրները», որոնք Կոստանդինից «աշխարհի բաներ» են ուզել, ովքե՞ր են, որոնք սիրել ու տարածել են նրա «սիրոյ բաները»: Կոստանդինի «քերթուածների» հրատարակիչ Պոտուրեանն իրաւացիօրէն նկատում է, որ այս տաղի մէջ նշուած «Եղբայրքը կրօնաւորք չէին անշուշտ», բայց ովքեր էին՝ այդ հարցը նա թողնում է անպատասխան: Հնարաւոր է, որ Կոստանդին Երզնկացու պատուիրատու «Եղբայրքը» Երզնկայի մեզ արդէն ծանօթ միաբանութեան «Եղբարքն» լինեն:

Այս հաւանական եզրակացութիւնը հիմնաւորւում է հետեւեալ փաստով: Կոստանդին Երզնկացին ունի «Բան Կոստանդեայ առ մեր հոգեւոր եղբայրն Ամիր. հոգով ի հոգի եւ սրտէ ի սիրտ» խորագրով մի բանաստեղծութիւն, որը սկսւում է հետեւեալ տողերով.

«Պարոն Ամիր, մեր պարծանաց
Եղբայր եւ սիրելի...»[4]:

Այստեղից պարզ է, որ Կոստանդինի «հոգեւոր եղբայր» Ամիրը աշխարհական մարդ է («պարոն»): Այդ նոյն պարոն Ամիրն է (Փոլին Քալայճաչի մականունով), որ 1336 թ. Թաւրեժում ընդօրինակել է Կոստանդինի տաղերի մեզ հասած հնագոյն ժողովածուն:

Երզնկա-Թաւրեժ վաճառաշահ ճանապարհով անցնող ու դարձող «պարոն ամիրները» հէնց այն «եղբայրներն» էին, որոնց համար Յովհան Երզնկացին 1280 թ. կազմեց «Կանոնք եւ սահմանքը»: Դրանց խնդրանքով էր, որ Կոստանդին Երզնկացին գրեց իր «աշխարհի» եւ «սիրոյ» գողտրիկ տաղերը:

Կարծում ենք, որ Կոստանդինը չի բաւարարուել Երզնկայի «Եղբայրների» պատուէրով մի քանի սիրոյ երգեր յօրինելով: Նրա ստեղծագործութիւնների մտայնութիւնն ու նպատակադրումն բատինքեան տոգորուած են քաղաքային պլեբսի գաղափարներով ու մտորումներով:

---

1 Նոյն տեղում, էջ 97

2 Նոյն տեղում, էջ 109

3 Նոյն տեղում, էջ 171

4 Կոստանդին Երզնկացի, ԺԳ դարու ժողովրդական բանաստեղծ եւ իր քերթուածները, հրատ. Մ. Պոտուրեան, Վենետիկ, 1905, էջ 153

ԵՐԶՆԿԱ ՔԱՂԱՔԻ «ԵՂԲԱՐՑ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ» ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ (1280 թ.)*

Հայկական ՍՍՌ Գիտութիւնների ակադեմիայի հասարակական գիտութիւնների բաժանմունքի «Տեղեկագրի» 1951 թ. N 12-ում տողերիս գրողը հրատարակել էր մի հաղորդում՝ նուիրուած 1280 թուականին Երզնկայում կազմակերպուած Եղբայրութեանը եւ նորաստեղծ այդ կազմակերպութեան համար Յովհաննէս Երզնկացու (մհ. 1293 թ.) գրած «Սահման եւ կանոնքին»:

Շատ ժամանակ չի անցել այդ հաղորդման հրատարակումից, բայց այն մտել է արդէն գիտական լայն շրջանառութեան մէջ. Երզնկայի եղբայրութեան «Սահման եւ կանոնքը» իրաւացիօրէն համարուել է կարեւոր մի սկզբնաղբիւր, որը լոյս է սփռում միջնադարեան հայկական քաղաքների ներքին կեանքի վրայ՝ հանդիսանալով համքարութիւնների գոյութիւնը հաւաստող ամենաուշագրաւ փաստաթղթերից մէկը. «Սահման եւ կանոնքը» հնարաւորութիւն է ընձեռել միաժամանակ նոր տեսանկիւնից քննարկելու միջնադարեան նշանաւոր բանաստեղծներ Յովհաննէս եւ Կոստանդին Երզնկացիների ստեղծագործութիւնները՝ բացայայտելով դրանց կապը քաղաքային բնակչութեան՝ առեւտրականների եւ արհեստաւորների եւ մասնաւորապէս եղբայրութիւնների մէջ ընդգրկուած ամուրի երիտասարդների հետ:

Սրանով, սակայն, չի սպառւում Երզնկայի Եղբայրութեան «Սահման եւ կանոնքի» նշանակութիւնը. այսուհետեւ եւս այն գրաւելու է սեւեռուն ուշադրութիւն՝ որպէս միջնադարեան հայկական քաղաքներում ստեղծուած եղբայրութիւնների մասին եզակի ու բովանդակալից սկզբնաղբիւր:

Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ լոյս ենք ընծայում Երզնկայի եղբայրութեան կանոնադրութիւնը Մատենադարանի այդ բնագիրը պարունակող երեք ձեռագրերի բաղդատութեամբ:

Հակիրճ այս ներածականում, վերաշարադրելով «Տեղեկագրի» 1951 թ. N 12-ում տպագրուած մեր հաղորդման հիմնական եզրակացութիւնները, միաժամանակ նոր նիւթերի հիման վրայ կատարում ենք որոշ լրացումներ:

* * *

1280 թուականին Երզնկայում կազմակերպուած Եղբայրութեան մէջ միաւորուել են քաղաքի առեւտրական եւ արհեստաւորական շերտերին պատկանող ամուրի երիտասարդները: Նրանց նպատակն է եղել միացեալ ջանքերով դիմագրաւել «բռնաւորաց» եւ «չար մարդկանց», օգնել տնտեսապէս քայքայուած ընկերոջը, զօրավիգ լինել միմեանց տնտեսական ու հասարակական կեանքի տարբեր բնագաւառներում:

Եղբայրութիւնն ունեցել է մարտական կազմակերպութիւն. սկզբնական օղակում միաւորուել են տասն անդամներ՝ տասնապետի («տասին գլուխն») հրամանի ներքոյ. 4 այդպիսի օղակներից կազմուել է Եղբայրութեան յաջորդ բջիջը՝ «քառասունին մեծի» գլխաւորութեամբ: Կազմակերպութեան գործերը տնօրինել է «գլխաւոր եղբարք» կոչուող մարմինը՝

* «Բանբեր Մատենադարանի», 1962, N 6, էջ 365–377

«գլուխ եղբայրութեանն» անուանեալ պաշտօնեայի նախագահութեամբ:

Եղբայրութեան մէջ եղել են «աւագ» եւ «կրտսեր» անդամներ: Ըստ որում կրտսերը պարտաւոր է եղել հնազանդուել աւագ եղբօրը, իսկ վերջինս՝ քաղցրութեամբ վարուել ու խրատել կրտսերին: Եղբայրութեան անդամները պարտաւորուել են խստագոյնս հետեւել կանոնադրութեան հրահանգներին. յանցապարտները վտարուել են եղբայրութիւնից:

Մատթէոս Ուռհայեցու «Ժամանակագրութեան» մի ուշագրաւ հատուածը[1], ինչպէս եւ այլ փաստեր հնարաւորութիւն են տալիս պարզելու, որ ցարդ սխալ մեկնաբանուած «մանկտաւագ» (նաեւ «մանկապար», «մանգապար») միջնադարեան տերմինը սերտօրէն աղերսւում է Երզնկայի Եղբայրութեանը յար եւ նման կազմակերպութիւնների հետ, ուստի եւ նման կազմակերպութիւններ եղած պէտք է լինեն հայկական կամ հայաբնակ բոլոր այն քաղաքներում, որոնցում տարբեր առիթներով յիշատակուել են մանկտաւագ կոչուող պաշտօնեաներ:

Վերոյիշեալ մեր հաղորդման մէջ, յենուելով կողմնակի որոշ փաստերի վրայ, եզրակացրել էինք, որ Երզնկայից բացի եղբայրութիւնների գոյութիւնը հաւաստւում է նաեւ Անիում եւ Վանում: Ձեռքի տակ ունենալով մանկտաւագ կոչումը կրող անձանց մասին վկայութիւններ պարունակող յիշատակարաններ՝ նոյն կարծիքն էինք յայտնել նաեւ Սուլթանիայի (Իրան) եւ Կաֆայի (Ղրիմ) մասին, որոնց բնակչութեան մի զգալի մասը հայեր էին[2]:

Այժմ կարող ենք աւելացնել, որ մանկտաւագ, ուստի եւ եղբայրութիւն է եղել նաեւ Կարին քաղաքում: 1283 թուականին Կարինի գաւառի Կան գիւղում ընդօրինակուած մի ձեռագրի յիշատակարանում կան այսպիսի տողեր. «Ես տէր (Աւաքս) ստացայ զսուրբ Աւետարանս... յիշատակ ծնաւղաց իմոց եւ ամենայն նախնեաց, հաւրն իմոյ մանկտաւագ Մերչերոյն եւ մաւրն իմոյ Մինասթերին»[3]:

Աւելի առատ են տեղեկութիւնները երիտասարդ ու ամուրի հայ երիտասարդների ուկրաինահայ եւ լեհահայ գաղթավայրերում ստեղծուած կազմակերպութիւնների մասին: Այս առումով մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում Վիեննայի Մխիթարեանների Մատենադարանի N 453 ձեռագիրը, որի էջերում ընդօրինակուած է Յազլովեց քաղաքի «Կարինեարաց եղբայրութեան» կանոնադրութիւնը (վերահաստատուել է 1658 թ. փետրուարի 10-ին ախրահաչակ Նիկոլ արքեպիսկոպոս Թորոսովիչի կողմից): Այն իր ամբողջութեամբ դեռ չի հրատարակուած. բայց նոյնիսկ Հ. Տաշեանի ցուցակում մէջբերուած քաղուածքները[4] հնարաւորութիւն են տալիս ընդհանրութեան որոշ կէտեր նշմարել Երզնկայի եւ Յազլովեցի եղբայրութիւնների միջեւ:

Յազլովեցի եղբայրութեան ղեկավարութիւնը կենտրոնացուած է եղել կարիճների (իմա՝ «երիտասարդ ամուրիների») «վոյվոդայ» (воевода) *եւ «ստարօստայ»* (староста) *կոչուող պաշտօնեաների ձեռքում: 1646 թուականին վոյեվոդա է եղել վոյթ Կարապետի որդի Սիմէոնը, իսկ ստարոստա՝ պան Էսերպեկի որդի Խլոպը, այլ խօսքով՝ հայկական համայնքի ամե-*

1 Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 226

2 Սուլթանիայում յիշատակւում է Յովհաննէս մանկտաւագը 1329 թ., եւ Ներսէս մանկտաւագը՝ 1357 թ., իսկ Կաֆայում՝ Կազուր մանկտաւագը՝ 1334 թ. (տե՛ս Լ. Խաչիկեան, ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Երեւան, 1950, էջ 217, 265, 426):

3 Բ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Միխիթարեանց ի Վենետիկ, հտ. առաջին, Վենետիկ, 1914, էջ 645

4 Հ. Յ. Տաշեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Միխիթարեանց ի Վիեննա, 1895, էջ 923–924

ծազդեցիկ եւ ունեւոր անձանց որդիների ձեռքին է եղել Եղբայրութեան ղեկավարութիւնը:

Կանոնադրութիւնը բաղկացած է 31 արտիկուլներից, որոնք շօշափում են «Կարիճաւորաց եղբայրութեան» ներքին կազմակերպութեանը եւ անդամների փոխադարձ պարտաւորութիւններին ու իրաւունքներին վերաբերող բազմապիսի հարցեր:

Ուշագրաւ է նաեւ 1690 թ. Եղիազար կաթողիկոսի կողմից հաստատուած, իսկ այնուհետեւ՝ 1790 թ. Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի վերահաստատած Պատուշան, Յաշ եւ Ռոմանի քաղաքների «Կարիճաւորաց եղբայրութեան» կանոնադրութիւնը[1]:

Կամենից-Պոդոլսկ քաղաքի «Կարիճաւորաց եղբայրութեան» մասին մեզ յայտնի վկայութիւնը 1522 թուականից է: Քաղաքի հայկական եկեղեցիներից մէկի նուիրաբերութիւնների մատեանում այդ թուականի տակ գրանցուած է հետեւեալը. «Զմիաբան կարիճներն նկարել տուին զկէս եկեղեցին՝ հանդերձ բոլորովին պատկերքներով»[2]: Նիկոլ Թորոսովիչի արքեպիսկոպոսութեան տարիներին (1626-1681) ստեղծուել է նաեւ Ստանիսլաւի «Կարիճաւորաց եղբայրութիւնը»[3]:

Եղբայրութիւններ, անշուշտ, եղել են նաեւ Ուկրաինայի, Լեհաստանի, Մոլդաւիայի, Ռումինիայի եւ Հունգարիայի հայաբնակ միւս քաղաքներում, որոնցից մի քանիսի մասին պահպանուել են արխիւային արժէքաւոր փաստաթղթեր: Դժբախտաբար դրանք դեռեւս հրապարակուած չեն, ուստի վաղաժամ է որեւէ խօսք անել այն մասին, թէ որքանով են մայր հայրենիքից կտրուած ու հեռաւոր այդ երկրների հայաշատ քաղաքներում ստեղծուած Եղբայրութիւնները ծագումնաբանօրէն կապուած բուն Հայաստանի նոյնատիպ կազմակերպութիւնների հետ:

Սակայն եթէ նկատի առնենք այն հանգամանքը, որ վերոյիշեալ երկրների քաղաքային կեանքի, առեւտրի եւ արհեստագործութեան զարգացման գործում հայ գաղթականները նշանակալից դեր են կատարել եւ հարիւրամեակներ շարունակ յամառօրէն ձգտել են իրենց համայնքների ներքին կեանքը կազմակերպել հայրենի երկրի աւանդական սկզբունքներով, կարելի է թերեւս եզրակացնել, որ քաղաքաբնակ երիտասարդների եղբայրութիւնները եւս այդ գաղթավայրերում ստեղծուել են ոչ թէ տեղական ժողովուրդների համանման կազմակերպութիւնների, այլ միջնադարեան Հայաստանի քաղաքների օրինակով:

Հրապարակելով Երզնկայի եղբայրութեան «Սահման եւ կանոնքը»՝ յոյս ենք յայտնում, որ այս հարցը յատուկ քննութեան առարկայ կդառնայ ուկրաինահայ եւ լեհահայ գաղութների պատմութեամբ զբաղուող մասնագէտների կողմից եւ կստանայ իր բաւարար պատասխանը: Եւ եթէ պարզուի, որ Հայաստանից դուրս գտնուող հայաբնակ քաղաքների Կարիճաւորաց եղբայրութիւնների հիմքում ընկած են հայրենական աւանդութիւնները, ապա մենք հնարաւորութիւն կունենանք միջնադարեան Հայաստանի քաղաքային կեանքի աղօտ պատկերը լուսաւորելու համար այս կամ այն չափով օգտուել նաեւ Ուկրաինայի եւ Լեհաստանի հայաբնակ քաղաքների մասին պահպանուած հայերէն, հայատառ ղփչաղերէն եւ լեհերէն արխիւային առատ նիւթերից:

1 Տե՛ս «Արարատ» ամսագիր, 1889, էջ 387-405:

2 Մ. Բժշկեան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 149

3 Ղ. Ալիշան, Կամենից, տարեգիրք Հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ, հաւատչեայ յաւելուածովք, Վենետիկ, 1896, էջ 129: Տե՛ս նաեւ Լ. Խաչիկեան, Հայկական գաղթավայրերը Ուկրաինայում XVI-XVII դարերում («Տեղեկագիր», 1954, N 4, էջ 53-54):

«Տեղեկագրում» տպագրուած վերոյիշեալ մեր հաղորդման մէջ մատնանշել էինք, որ հայկական քաղաքների եղբայրութիւնները ընդհանուր շատ բան են ունեցել փոքրասիական քաղաքներում XIII դարում առաջացած «Ախի» («Եղբայրութիւն») կոչուող կազմակերպութիւնների հետ:

Արաբ նշանաւոր ճանապարհորդ Իբն-Բատուտան, որ 1332 թուականին շրջում էր Փոքր Ասիայում, յաճախ հիւրընկալուել է «ախիների» կողմից եւ ծանօթացել մասնաւորապէս Երզնկայի «ախիների» կազմակերպութեանը, ուշագրաւ տուեալներ է հաղորդել կազմակերպութեան անդամների միմեանց նկատմամբ ունեցած պարտաւորութիւնների, նրանց հաւաքոյթների ու խնջոյքների եւ դաւանած գաղափարների մասին: Ախիները, ըստ Իբն-Բատուտայի, կանգնած էին ազատութեան պաշտպանութեան դիրքերում, պայքարում էին բռնակալների ու նրանց կամակատարների դէմ, տառապեալներին ու չքաւորներին օգնելը մտնում էր նրանց սրբազան պարտականութիւնների մէջ եւ այլն:

Նոյն սկզբունքների վրայ են խարսխուած եղել նաեւ հայկական եղբայրութիւնների գաղափարական ու կազմակերպչական հիմքերը: Երզնկայի Եղբայրութեան մէջ միաբանուածները տոգորուած են եղել հարեւան ժողովուրդների հետ յաշտ ու խաղաղ ապրելու եւ գործակցելու ջերմ ձգտմամբ: «Սահման եւ կանոնքի» մէջ կան ուշագրաւ այսպիսի տողեր. «Եւ խաղաղասէրք լինին եղբարքս մեր ի մէջ աշխարհի, ընդ ամենայն ազգ մարդկան սիրով առնիցեն զասել եւ զլսել, որ յամենայն ազգէ իմաստունք լիցին, մեծարեսցին եւ յիմաստութենէն շահեսցին՝ առանց հակառակութեան»:

Հայրենի քաղաքից դուրս առեւտրական կարաւանների հետ երթեւեկելիս եղբայրութիւնների՝ զէնքի սովոր ու զինավառ անդամները («մանկտիք», «կարիճաւորայք») մանկտաւագի հրամանատարութեամբ պաշտպան էին կանգնում իրենց կեանքին ու գոյքին, թշնամական յարձակումների ժամանակ նրանք անտարակոյս մասնակցում էին հայրենի քաղաքի պաշտպանողական մարտերին, իսկ խաղաղ պայմաններում նոյն այդ երիտասարդները խմբւում էին խնջոյքների, գիշերներ լուսացնում գինարբութեամբ, ունկնդրում իրենց սիրելի բանաստեղծների եւ գուսանների յօրինած սիրոյ եւ ուրախութեան երգերը, լսում ժողովրդական առասպելների «քաջաց զրոյցները», որոնք սովորեցնում էին «զօրաւոր մանուկ եւ յաղթող լինել», եւ զուարճանում էին հեզաճամուկ վարձակների ու մորճերի պարերը դիտելով, երգերն ըմբոշխնելով:

Մեր հաղորդման մէջ ցոյց էինք տուել Կոստանդին Երզնկացու սերտ կապն ու մտերմութիւնը Երզնկայի եղբայրութեան անդամների հետ: Կոստանդինն իր լաւագոյն սիրոյ տաղերից մէկը գրել է հէնց երզնկացի եղբայրների պատուէրով, որոնց մասին ակնարկել է ստորեւ բերուող քառեակի մէջ.

«Եղբարք մի կան հետ մեզ սիրով,
Աշխարհի բան ուզեն գրով,
Նայ եւս վասն այն յայտնի ձայնով,
Սիրու բաներս ացի յոլով»[1]:

1 Կոստանդին Երզնկացի, ԺԳ դարու ժողովրդական բանաստեղծ եւ իր քերթուածները, հրատ: Մ. Պոտուրեան, Վենետիկ, 1905, էջ 161

Յովհաննէս Երզնկացու մտերիմներից է եղել իր հայրենակից Յակոբ մանկտաւագը՝ մի անձնաւորութիւն, որը հաւանաբար մէկն էր Երզնկայի Եղբայրութեան ղեկավար մանկտաւագներից: Սրա խնդրանքով է յօրինել Յովհաննէսն իր արժէքաւոր ստեղծագործութիւններից մէկը, որն ունի «Յակո՛բ, զարթի՛ր ի քնոյ մեղաց» սկզբնաւորութիւնը[1]:

Բանաստեղծութեան մէջ կան մի քանի ակնարկներ պատուիրատուի մասին. նրա երեսուն տարին նոր է լրացել, եղել է «աղօթից ծոյլ», եկեղեցի չյաճախող ու պահք չպահող մի երիտասարդ: Իրաւացի է Ա. Սրապեանը՝ ենթադրելով, թէ Մխիթար Ապարանեցու կողմից հէնց այս Յակոբ մանկտաւագն է յիշուած՝ որպէս մէկը, որն ուրացել է Սուրբ Երրորդութիւնը եւ «Հանապազորդ յաղօթս էր» ասել, թէ «ինքն է Հայր, ինքն Որդի եւ ինքն Հոգին Սուրբ»[2]:

Միջնադարեան հայ գուսանական քնարերգութեան գլուխգործոց հայրենների մի զգալի մասը եւս յօրինուած է քաղաքաբնակ ամուրի երիտասարդների պատուէրով ու նրանց խնջոյքներում երգուելու համար: Հայրեններից մէկի անծանօթ երգիչն իր խօսքն ուղղակի հասցէագրում է խնջոյքի սեղանին բոլորած «մանուկներին»՝ այսպէս.

Գիշերս ես ի քուն էի,
Քունս ի ներս սրտիկս երեցաւ.
Եկին ու բերին խապար՝
«Քո սիրած եարն զքեզ մոռացաւ»:
-Մանկտի՛ք, ձեր արեւդ ասեմ,
Լսեցի, լեզուս կապեցաւ[3]:

Ծանօթանանք նաեւ մի ուրիշ հայրենի.

Գիշերս ես ի դուրս ելայ,
Քիչ մի լուրջ ու քիչ մի գինով.
Իմ եարն ինձ դէմ դիպաւ,
Ծոցն ի լի կարմիր խնձորով.
Ձեռըս տարայ, այն տըւի,
Նա կանչեց՝ «Տարա՛ւ ճըղներով»:
-Մանկտի՛ք, ձեր արեւն ասեմ,
Կամ չառի ես իրմէն ճորով[4]:

Եւս մէկ օրինակ.

...Յանչափ ջանացի իր հետն,
Որ իրմէն պագիկ մի առի,
Ի քաղցրութենէն, եղբայրք,

1 Ա. Սրապեան, Յովհաննէս Երզնկացի, Երեւան, 1958, էջ 172
2 Ղ. Ալիշան, Հայապատում, Բ, Վենետիկ, 1901, էջ 552
3 Մ. Աբեղեան, Գուսանական ժողովրդական տաղեր, Երեւան, 1940, էջ 42
4 Նոյն տեղում, էջ 163

Բռներ է սրտիկս, որ կայրի...[1]:

Սրանցով չեն սահմանափակւում այն հայրենները, որոնցում երգիչ-գուսանը դիմում է իր ունկնդիրներին՝ կոչելով նրանց մեզ ծանօթ եւ քաղաքաբնակ ամուրիների կազմակերպութիւնների հետ սերտ աղերսի մէջ եղող «մանկտի», «եղբայր», նաեւ «կտրիճ» տերմիններով[2]:

Սակայն կարեւորը այդ կոչումները չեն, այլ այն, որ հայրենների մեծագոյն մասը յօրինուած է հէնց քաղաքային առեւտրական ու արհեստաւորական շերտերի կեանքին ու գործունէութեանը բնորոշ պատկերներով ու միջադէպերով. նրանց նիստ ու կացը, շահի ետեւից աշխարհից-աշխարհ թափառելը, «բաժգող անցնելը» (այսինքն՝ մաքսանենգութիւնը), արուեստակիցների («հարիֆների») հետ սեղան նստելն ու գինարբուքով զուարճանալը եւ կեանքի այլ բնորոշ կողմերը արտացոլուել են հայրեններում՝ գեղարուեստական մեծ ընդհանրացումներով: Շատ յաճախ մեր գուսանները հէնց նրանց տեսանկիւնով են դիտել աշխարհն ու գնահատել մարդկային ու հասարակական յարաբերութիւնները:

Բերենք մի բնորոշ օրինակ. 1371 թուականին շարադրուած ձեռագիր մի աշխատութեան անյայտ հեղինակը ողբացել է Հայ եկեղեցու անմխիթար վիճակը, ժողովրդի (յատկապէս երիտասարդութեան) խորթացումը եկեղեցուց եւ այլն: «Իսկ ժողովրդականք,- գրել է նա,- ամայիք եւ թափառականք, կորդացեալ մտաւք, մոլորեալ ի գիտութենէ. զխոստովանութիւն ոչ գիտեն, ...յեկեղեցի ոչ դիմեն, ...զաղօթս եւ զարտասուս ոչ ճանաչեն, ...ի պատարագ ոչ փափագին» եւ այլն: «Լուա յումեմնէ,- շարունակում է նա,- զի պատմէր զմարդոյ՝ վկայեալ ի հարազատ եղբաւրէ իւրմէ, զի հնգետասանամեա գոլով եւ դեռ պատարագն չէր տեսեալ յեկեղեցւոջ. եւ զայլ ումեմնէ՝ թէ ժ (10) ամ աւելի եւս էր, որ Մարմնոյ եւ Արեան Տեառն չէր հաղորդել»[3]:

Տասնհինգամեայ այդ պատանին, որ իր կեանքում դեռ եկեղեցի չէր մտել ու պատարագ չէր տեսել, կամ նրա տարեկիցը, որ տասը տարուց աւելի հաղորդութիւն չէր ընդունել, անտարակոյս պատկանում էին քաղաքաբնակ այն երիտասարդների թւին, որոնք ունկնդրում եւ սիրով արտասանում էին հանրածանօթ այն հայրենը, ուր ասուած է.

Քանի մարըն զիս բերեր,
Քահանի չեմ խոստովաներ.
Ուրտեղ քահանայ տեսեր,
Նայ ծռեր ճամփուս ու ելեր.
Ուրտեղ մէկ աղուր տեսեր,
Գիրկ ու ծոց 'ւ ի դէմ գնացեր...[4]:

Միջնադարեան հայ քնարերգութեան լաւագոյն այս էջերի ստեղծագործական միջավայրի ու տարածման ոլորտների մասին մեր գիտելիքներն անշուշտ հարստանում են այն բանից յետոյ, երբ տեղեակ ենք դառնում հայկական քաղաքներում ստեղծուած ամուրի երի-

1 Նոյն տեղում, էջ 178-179
2 Տե՛ս նաեւ նոյն տեղում, էջ 146, 147 եւ այլն:
3 Մատենադարան, ձեռ. N 581, էջ 255բ, 256բ
4 Մ. Աբեղեան, Գուսանական ժողովրդական տաղեր, էջ 145

տասարդների եղբայրութիւնների գոյութեանը եւ խորամուխ լինում նրանց անդամների գործունէութեան եւ նիստուկացի մանրամասնութիւններին:

«Սահման եւ կանոնքի» բնագիրը հրատարակում ենք Մատենադարանի ստորեւ նշուող երեք ձեռագրերի բաղդատութեամբ.

A – N 2329, «Ժողովածու», 1291 թ., էջ 287բ–295ա

B – N 652, «Կանոնգիրք», XV-XVI դդ., էջ 70բ–75բ

C – N 2173, «Ժողովածու Յովհաննէս Երզնկացու քարոզների եւ մեկնութիւնների», ԺԴ դար, էջ 257–260բ (վերջից թերի):

***

Սահման եւ կանոնք միաբանութեան եղբարց[1], որք աստուածային սիրովն միաբանեցան յեղբայրութիւն միմեանց ի մայրաքաղաքս, որ կոչի Եզնկայ[2], ի թուիս ՉԻԹ (1280): Աստ հանդիպելով եւ ծերունի[3] վարդապետն Գրիգոր[4] Սանահնեցի, որ եւ գրեցաւ ի գլուխ եղբայրութեանս[5]. եւ ես՝ նուաստ վարդապետ[6] Յովհաննէս Եզնկացի[7], գրեցի զսահման եւ զխրատ եղբայրութեանս եւ զշահաւետ աւգուտն[8] որ ի սմանէ, առաջնորդութեամբ Սուրբ Հոգւոյն

Բանն Աստուած, որ բանիւ գոյացոյց զամենայն արարածս եւ զբանն խրական հոգի կոչեաց եւ կեանք՝ բանիւն[9] իմաստութեամբ զարդարեաց զհոգիս մեր, զի որպէս հացիւ կերակրի մարմին, այսպէս բանիւ հաստատի հոգի:

Արդ, հոգիացուցիչ Բանն Քրիստոսի ուսուցանէ զմեզ[10], զի երկու են դուռն եւ ճանապարհ վարուց մարդկան, զոր ընտրեն[11] եւ գնան ճանապարհորդք կենցաղոյս: Նեղ է դուռն, եւ անձուկ է[21] ճանապարհն, որ տանի ի կեանսն, եւ սակաւք են, որք մտանեն ընդ նա[13]. լայն է եւ ընդարձակ է ճանապարհն, որ տանի ի կորուստն, եւ բազումք գնան[14] ընդ նա:

Արդ, նեղ եւ անձուկ ճանապարհ՝ զառաքինութիւնն ասէ եւ զբարեգործութիւնն, որ հեշտասէրքն եւ մեղասէր մոլորեալքն ոչ կարեն գնալ. եւ սակաւք են յաշխարհի, որք յաւժարական սիրով գնան ընդ նա, իսկ լայն եւ ընդարձակ ճանապարհ՝ զմեղացն ասէ եւ զչար գործոցն[15], զոր մեղասէր[16] եւ աշխարհասէր մարդիկ սիրեն եւ յաւժարին գնալ ընդ նա: Արդ, այս երկու ճանապարհիս երկու առաջնորդ են, որ կոչեն զմարդիկ գնալ զհետ[17] իւրեանց: Բարի ճանապարհին՝ առաջնորդ է Հոգին Սուրբ, զոր եւ մարգարէն Դաւիթ հայցէ. «Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ յերկիր[18] ուղիղ»: Եւ չար ճանապարհին առաջնորդ[19] սատանայ է, զոր վէմն հաւատոյ Պետրոս ասէ. «Ոսոխն ձեր սատանա իբրեւ զառիւծ գոչէ եւ խնդրէ թէ զոյ[20] կլանէ»:

Արդ, եկեսցի եղբայրութեանս[21] մեր Հոգին[22] Սուրբ առաջնորդ, հանդերձ Հարբ եւ Միածնի Որդովն[23], եւ առաջնորդեսցէ մեզ յերկիր ուղիղ՝ բարի ճանապարհաւն ընդ արքունի պողոտայն, առանց խոտորելոյ յաջ կամ յահեակ[24], զի մի ի զինուցն երկոցունց խոցոտե-

ցուք, այլ իբրեւ ի վերայ կամրջի[25] գետոյ ընդ մէջն գնալով մի վերոյ կամ ներքոյ գետամէժ լիցուք: Եւ զի ժողովասէր է բնութիւն մարդոյս եւ ընդունակ չարի եւ բարոյ[26] ըստ նմանութեան աւդոյս, զի զորաւրինակ աւդ ի ծագել արեգականն՝ լուսաւորի եւ ի գալ գիշերոյն՝ սեւացեալ խաւարանա, այսպէս եւ մարդ, եթէ զաստուածային բանն եւ զհոգեւոր խրատն եւ զլոյս պատուիրանացն Աստուծոյ առնու ի միտ՝ լուսաւորի եւ պայծառանա, եւ թէ[27] սատանայի ազդմանցն եւ մեղաց խրատուն լինի ընդունակ՝ նմանանա[28] եւ խաւարի: Եւ զորաւրինակ հող երկրի, զոր ինչ սերմանէ մարդ[29]՝ զայն բուսուցանէ. այսպէս եւ հողեղէն բնութիւն մարդոյս, զոր ինչ սերմանեն՝ զայն պտղաբերէ[30], եթէ փուշ՝ մեղաց եւ եթէ ծաղիկ՝ առաքինութեան: Արդ, լոյս պատուիրանացն Աստուծոյ լուսաւոր լիցի յոգի եղբայրութեանս, եւ ծաղիկք[31] ամենայն բարութեանց բուսցին եւ բնութիւն սոցա:

Բայց արժան է գիտել, եթէ քանի տեսակք են եղբայրութեանն[32]:

Առաջինն այս է. զի ի միոյ բնութենէ տարերացս միոյ Արարչին ստեղծուածքն[34] եղբայր ասին. եւ այս հասարակաց է՝ բանականաց եւ անբանից, կենդանեաց եւ անկենդանեաց:

Իսկ երկրորդ եղբայրութիւն այն է, որ ի միոջէ ծնողաց[35] ծնեալ լինին. եւ այս սակաւաւոր է:

Իսկ երրորդ եղբայրութիւն, որ եւ ճշմարիտն է եւ հոգեւորն, այն է, որ ի Հոգւոյն Աստուծոյ ծնեալքն եւ ի մի աւազան մկրտեալքն եղբարք ասին միմեանց եւ Քրիստոսի եւ[36] երկնաւոր Հաւրն որդիք եւ արքայութեանն ժառանգաւորք[37] եւ[38] Քրիստոսի ժառանգակիցք. եւ այս յատուկ[39] քրիստոնէից է պարգեւեալ շնորհք, որք[40] անուամբն Քրիստոսի կնքին:

Այլ դուք ի վերայ այսոցիկ չորրորդ տեսակք եղբայրութեան հաստատեցէք ի միջի ձերում, որ գրովն է եւ կանոնական[41] սահմանաւք եւ բարեկէր ժողովմամբ եւ ընկերակցութեամբ եւ միաբանութեամբ եւ միով[42] հաւատով եւ սիրով եւ երկնաւոր ցանկութեամբ: Եւ ոչ եթէ նոր է այս, այլ զոր քրիստոնէից[43] վայել է գործ՝ զայն ուսուցանէ:

Եւ քաղցր է այս եղբայրութեան սահման, զի որպէս բազմութիւն աստեղաց զերկինս զարդարեն, այսպէս եւ բազմութիւն եղբարց սիրով[44] ժողովելոց՝ զեկեղեցի պայծառացուցանեն: Եւ որպէս բազմութիւն զաւրաց քաջամարտիկ զինուորաց միաբանելոց դիւրաւ յաղթեն թշնամեացն, այնպէս եղբարցն բազմութիւն քաջ հաւատով եւ հաւասար սիրով՝ դիւրաւ յաղթեն սատանայի եւ մեղասէր դիւացն եւ չար մարդկան, որք շարժին ի սատանայէ:

Եւ արդ, գիտցուք զսահման միոյ եղբայրութեանս, որ[46] են երեք սեպական գլուխք. առաջին[47], եթէ ամենայն ոք իւր անձամբն որպէ՞ս քաղաքաւարի. երկրորդ՝ թէ զի՞նչ աւգտութիւն եւ շահ արասցեն միմեանց այս միաբանեալ եղբարքս, եւ ո՞ր է պտուղ միաբանութեան սոցա. երրորդ՝ թէ որպէ՞ս ի հասարակաց կենցաղոյս ի մէջ աշխարհի եւ ի մէջ բազում ազգաց իմաստութեամբ գնասցեն ի շինութիւն տեսողացն եւ ի փառս անուանն Քրիստոսի:

Եւ արդ, առասցուք[48], զոր պարտ է ամենայն ումեք իւր անձինն առնել. զի զորաւրինակ արեգակն հասարակաց ծագէ, բայց ում տեսանելիքն առողջ են՝ նա լուսաւորի, այսպէս եւ աստուածային[49] աւրէնքն[50] հասարակաց է ամենայն աշխարհի, այլ որ սիրէ եւ գործէ՝ նայ է աւրինապարտ եւ աստուածային լուսովն պայծառացեալ:

Լուսաւորք, երիտասարդք եւ տղահասակ[51] մանկունք[52], որք միաբանէք[53] յեղբայրութիւնս:

ա) Այս ձեզ առաջին աւրէնք՝ սիրեցէք զԱստուած զԱրարիչն ձեր եւ վասն սիրոյ նորա արհամարհեցէք զամենայն սէր աշխարհիս:

բ) Երկրորդ. պատուեցէք զծնողսն[54] ձեր՝ զհայր եւ զմայր, որ հետ[55] Աստուծոյ պատճառ են ձեր[56] ստեղծմանն, եւ ծերութեան[57] նոցա խնամ տարէք եւ հրամանացն հնազանդ լերուք, զի աւրհնութեան նոցա արժանի լիցիք[58]:

գ) Երրորդ. պատուեցէք զքահանայսն Աստուծոյ իբրեւ զհոգեւոր ծնողսն[59]. եւ ձեր քահանային[60], որոյ ժողովուրդ էք, խոստովանեցէք, եւ ի վաստակոց եւ յաշխատութեանց ձերոց տուք նոցա պտուղ, որպէս զի[61] աղաւթք նոցա, որ վասն ձեր մատուցանեն Աստուծոյ՝ ընդունելի լիցի:

դ) Չորրորդ. սուրբ պահեցէք զանձինս ձեր ի մեղաց եւ անարատ կուսութեամբ մնացէք՝ մինչ արժանի լինիք առնուլ զպսակն աւրհնութեան, որպէսզի Աստուծոյ նուէր լիցին անձինք ձեր, եւ մի սատանայ նման գայլոյ զիշատեալ պատառեսցէ զձեզ:

ե) Հինգերորդ. յետ առնելոյ զպսակն աւրհնութեան եւ միաւորիլ սուրբ ամուսնութեամբ ընդ կողակցին[62] ձերոյ, զոր[63] յԱստուծոյ պատշաճեցաւ, սուրբ պահեցէք զանձինս ձեր յաւտար եւ ի պիղծ անկողնոյ[64], զի մի զպսակն[65] աւրհնութեան կորուսանէք եւ անկանիք[66] յանէծս սատակիչս եւ զրկիք ի քրիստոնէութեան անուանէ՝ շունք կոչելով վասն շնութեան մեղացն:

զ) Վեցերորդ. յամենայն աւր[67] երիս անգամ յաղաւթս կացէք՝ ի լուսանալ աւուրն եւ ի ժամ ուտելոյ հացին եւ երեկունն[68] ի ժամ քնոյն: Յաժէն ժամ ԺԲ (12) ծունր այր մարդն եւ ի (20) ծունր[69] կին մարդն. եւ որ այլ աւելի կարէ՝ զայն իւր հոգւոյն[70] զաւրութիւնն եւ սէրն գիտէ, զոր առ Աստուած ունի:

է) Շաբաթն[71] աւրն եւ կիրակէն[72] անպատճառ յեկեղեցին երթայք, որ զաւետարանին ձայնն լսէք ու[73] Քրիստոսի ձայնին լինիք արժանի եւ զպատարագն տեսանելով՝ զՔրիստոս տեսանէք:

ը) Յամենայն կիրակի[74] զշաբաթուն[75] յանցանքն խոստովանեցէք եւ ի Խ (40) աւրն հետ մի հաղորդեցէք. եւ յամենայն[76] տէրունական տաւն յեկեղեցին ժողովեցէք եւ զխորհուրդ տաւնին հասկացիք. եւ զկիրակին ի բան առնելոյ սուրբ պահեցէք:

[թ)] Զբերանն, որ Աստուծոյ անուանն խոստովանող է եւ հաղորդական[77], ի յիշոցաց սուրբ պահեցէք եւ յամենայն աղտեղի խաւսից եւ մի զԱստուծոյ ստեղծուածն զլեզուն սատանայի առնէք գործի:

[ժ)] Զամենայն զգայարանս ձեր ամրացուցէք երկեւղիւն[78] Աստուծոյ. զաչքն՝ ի յարատ հայելոյ, զականջն՝ ի չար եւ ի մեղաց խրատէ, զձեռն՝ ի զրկելոյ եւ ի գողանալոյ եւ ի հարկանելոյ, եւ զոտքն՝ ի մեղս ընթանալոյ[79]: Այլ այսպէս արարէք. աչաւք զԱստուծոյ գեղեցիկ արարածս տեսէք եւ բերանով զԱրարիչն աւրհնեցէք, ականջով զպատուիրանս նորա լսեցէք, ձեռաւք յաղաւթս եւ յաշխատութիւն գործոյ եւ յողորմութիւն աղքատաց բարեգործեցէք[80] եւ զսիրտ ի չար խորհրդոց սրբեցէք[81]:

Եւ այս ամենայն ումեք իւր անձինն աւրէնք եւ[82] զգուշութիւն յաստուածային հրամանացն եւ ի գրոց սրբոց:

Բ. Իսկ երկրորդն, որ եղբարցն առնեն եւ[83] վասն սիրոյն Աստուծոյ զեղբայրսիրութիւն[84] կատարեն՝ այս է.

ա) Վասն զի աշխարհս այս ծով է եւ մարդիկ ալէկոծին ի սմա պէս պէս պատահմամբ գործոց. եւ թէ[85] ոք յեղբայրութենէս ի փորձութիւն մարդկան անկանիցի[86] եւ ի բռնաւորաց[87] նեղիցի, ամենայն եղբայրքն ջան եդեալ հանցեն[88] զնա ի հասեալ[89] վշտացն, զի որ եղբայր եղեւ մեզ, Քրիստոս ասացէ՝ «Ի բանդի էի եւ եկիք առ իս»:

բ) Եւ եթէ ոք ի փորձութիւն մեղաց անկեալ[90] ի ձեռս սատանայի մատնեսցի՝ ամենայն եղբարքն աղաւթիւք եւ բարի խրատով եւ ողոքանաւք, այլ եւ սաստիւք եւ ամենայն հնարիւք ազատեսցեն զանկեալն[91] ի ծառայութիւն մեղաց եւ Քրիստոսի ընծայեսցեն, նմանեալ այնմ, որ գթացաւ ի վերայ անկելոյն[92] ի ձեռս աւազակացն[93]:

գ) Եւ թէ[94] ոք յաղքատութիւն անկանիցի[95] եւ ի չքաւորութիւն մարմնոյ, այլ եղբարքն ըստ կարողութեան եւ ըստ ուժոյ աւգնեսցեն եւ աղքատ եղբաւրն աւգնելով՝ Աստուծոյ փոխ տացեն, որ հազարապատիկ վճարէ յայսմ աշխարհի եւ ի հանդերձեալն զկեանսն յաւիտենականս[96] պարգեւեսցէ:

[դ)] Եւ թէ[97] ոք ի տկարութիւն եւ ի ցաւ հիւանդութեան մարմնոյ անկանիցի[98], յամենայն աւր եղբայրութենէն[99] ի տեսութիւն գնասցեն եւ զհիւանդացեալն մխիթարեսցեն եւ դեղով եւ բժշկով ձեռնտու լիցին, որպէսզի լուիցեն ի Քրիստոսէ, թէ[100]՝ «Հիւանդ էի եւ տեսէք զիս»:

[ե)] Եւ թէ[101] ումեք աւր վախճանին հասցէ եւ փոխեսցի յանցաւոր կենացս՝ ամենայն եղբարքն զմարմինն պատուով ի գերեզման[102] տանիցեն[103], որպէս վայել է, եւ զհողն հողոյն տացեն. եւ ամէն եղբայր[104] մին աւր պատարագ տայ[105] առնել յանուն վախճանելոյն:

Եւ այս սահման է, զոր եղբարքն միմեանց առնեն, եթէ մաւտաւոր եւ[106] եթէ հեռաւոր լիցի եղբայրն՝ սիրով եւ հաւատով ի մէջ իւրեանց համարեսցին:

Իսկ երրորդ գլուխն այն է[107], որ եւ այլոց բարի արասցեն, որ գան ի հեռաւոր աշխարհաց, եւ կամ ի սոցանէ գնան յայլ աշխարհ, աւտարին եւ աւտանեցուցանեն:

Եթէ վարդապետ եկեսցէ յայլ[108] աշխարհէ՝ գլխաւորք եղբարցն ի տեսութիւն երթիցեն եւ պատուեսցեն զնա եւ շահեսցին ի վարդապետական բանիցն եւ ժողովեսցին առ նա ի քարոզութիւն սուրբ գրոց. եւ ի գնալն՝ յուղարկեսցեն[109] զնա սիրով եւ ըստ մարմնոյ պիտոյիցն ըստ կարին տացեն հոգեւոր սերմանողին զմարմնաւոր պտղաբերութիւնն: Այսպէս եւ եպիսկոպոսաց արասցեն. նոյնպէս վանականաց եւ աղաւթարար եղբարցն եւ ճգնաւորաց ասպնջական եւ հանգուցիչք լիցին[110]:

Եւ խաղաղաւէրք լինիցին[111] եղբարքս մեր ի մէջ աշխարհի. ընդ ամենայն ազգ մարդկան սիրով առնիցեն զասել եւ զլսել, որ յամենայն ազգէ իմաստունք լիցին՝ մեծարեսցեն եւ յիմաստութենէն շահիցին[112] առանց հակառակութեան, հեզ բարուք, հանդարտ գնացիւք, պարկեշտ կացաւք[113], իբրեւ զդահեկան ոսկի ի մէջ տղմոյ աշխարհիս անապակ եւ յստակ[114] մնալով. իբրեւ զլոյս արեւու ի մէջ[115] զարշահոտութեանց պայծառ մնալով՝ յիւրեանց բարոյն տալ այլոց՝ որպէս արեգական[116] լոյս, եւ յայլոց[117] պղծութեանց ոչ ուսանիլ, որպէս եւ արեգակն ոչ առնու յայլոց պղծութեանց:

Արդ, դուք, պատուական եղբարք, այսպիսի աւրինաւք զարդարեցէք զանձինս ձեր, զի լինիցիք միմեանց որպէս զպարիսպ ամուր, զի որպէս բազմութիւն քարանց ժողովեալ ի մի տեղի պարիսպ ամրութեան եւ պահպանութեան է[118] քաղաքի, այսպէս եւ դուք իբրեւ զկենդանի քարինս սիրովն Աստուծոյ մածեալ՝ անառիկ ամրութեամբ կացէք ի հաստատութիւն: Եւ որպէս դրախտ բազում տնկաւք զարդարի, այսպէս եւ դուք եղերուք իբրեւ զդրախտ Աստու-

ծոյ քաղցրաճաշակ պտղով զարդարեալ եւ որպէս բուրաստան անուշահոտ ծաղկաւք լիացեալ[119]: Եւ զորաւրինակ Թագ Թագաւորի ի յոսկոյ եւ ի մարգարտոյ եւ յականց պատուականաց յաւրինի, նոյնպէս եւ դուք Թագ պարծանաց լերուք[120] գլխոյն մերոյ Քրիստոսի եւ իւրաքանչիւր գիր գեղեցիկ գործս փայլեցէք իբրեւ զակն լուսատու, եւ որպէս ակունքն յոսկին չարեալ[121] միանան, նոյնպէս եւ դուք յամբիծ[122] հաւատն եւ յանկեղծ սէրն յարմարեալ[123] գեղեցիկ եւ պայծառ լուսով փայլեցէք, եղերուք մաւր ձերոյ եկեղեցւոյ կենդանի զանձ եւ պարծելի որդիք, եթէ ուտիցէք եւ եթէ ըմպիցէք[124], զամենայն ի փառս Աստուծոյ արասջիք:

Արդ, որ սիրէ զեղբայրութիւնս զայս եւ խառնի ի միաբանութիւն սոցա, պահեսցէ նախ զաւրէնս զայս եւ զսահման եղբարցս՝ գրեսցի նա ի գիր միաբանութեանս, եւ Քրիստոս գրեսցէ ի դպրութիւն կենաց, իսկ չնացաւղն եւ յիշոցնատուն եւ այլ զանազան մեղաւք վարեալն մի՛ կացցէ ի գրի աստ. իսկ որ աւրինապահքն են՝ սիրով զմիմեանս շահեսցին: Աւագ եղբայրքն[125] քաղցրութեամբ[126] խրատեսցէ եւ կրսերն հնազանդութեամբ[127] լուիցէ, որ գիտունն է՝ մի հպարտասցի, եւ որ տխմարն է՝ մի յուսահատեսցի, այլ իբրեւ զՔրիստոսի անդամ միմեանց խնամ տանիցին, զմեծն եւ զիմաստունն պատուեսցեն եւ զփոքրն եւ զանուսումն գթով խրատեսցեն:

Տասին գլուխն եւ քառասնին մեծն յամենայն ժամ ի վարդապետաց ուսցին եւ զայլսն աւգտեցուսցեն[128] եւ զամենայն բան բարի խրատով գլխաւորացն արասցեն:

ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

1 B եղբարցս: 2 AB մեծ փխ որ կոչի յեզնկայս: 3 AB ի Թւ: 4 B Գրիգոր չիք: 5 B միաբանութեան եղբայրութեան գլուխ փխ ի գլուխ եղբայրութեանս: 6 C վարդապետս: 7 C Յոհաննէս, A Եզնկացի, B Յոհաննէս Երզընկացի: 8 B եւ աւգուտն: 9 AB բանին: 10 A մեզ: 11 A ընդրեն: 12 AB է չիք: 13 B այն փխ նա: 14 B մտանեն փխ գնան: 15 A զչարագործոցն: 16 A մեղսասէրքն: 17 B ի հետ: 18 C ի յերկիր: 19 B առաջնորդն: 20 B զով, C զո: 21 B եղբայրութիւնս փխ եղիցի եղբայրութեանս: 22 AB հոգի: 23 B որդւովն: 24 A յահեկ: 25 B կարմընջի: 26 B բարոյ եւ չարի: 27 AB եթէ: 28 B եւ նսեմանայ: 29 AB ոք փխ մարդ: 30 B պտղաբերի: 31 AB ծաղիկ: 32 B եղբայրութեանս: 33 AB արարչի: 34 B սանդուածք: 35 AB ծնաւղաց: 36 B եւ չիք 37 AB ժառանկաւորք: 38 B եւ չիք: 39 C յատուկ չիք: 40 B որ, C որ չիք: 41 C կանովնական: 42 B միով չիք: 43 C քրիստոսնէից: 44 C սիրով չիք: 45 BC որ: 46 B ուր: 47 C առաջինն: 48 A ասացուք: 49 A այս աստուածային: 50 AB աւրէնքս: 51 A տղայահասակ: 52 A մանգունք: 53 AB միաբանիք: 54 AB զծնաւղսն: 55 A եառ: 56 B ձեզ: 57 B ի ծերութեան: 58 B լինիք: 59 B ծնաւղսն C ծնաւղն: 60 C քահանային: 61 B դի չիք: 62 C կողակիցն: 63 C որ: 64 A պեղծ անգողնոյ: 65 AB պսակն: 66 A անգանիք: 67 B յաւրն փխ յամենայն աւր: 68 AB երիկունն: 69 A ծունր չիք: 70 AB հոգոյն: 71 AB չաբաթ: 72 C կիրակէ աւրն: 73 AB լսելով փխ լսէք ու: 74 C կիրակէ A կւրակէի: 75 B զշաբթուն: 76 B ամէն: 77 C եւ հաղորդական չիք: 78 AB երկիւղիւն: 79 AB եւ զոտքն ի մեղս ընթանալոյ չիք: 80 AB բարէգործեցէք: 81 C սրբիցէք: 82 C աւրէնք եւ չիք: 83 B եւ չիք: 84 B զեղբայրութիւն: 85 AB եթէ փխ եւ թէ: 86 A անգանիցի: 87 A եւ բռնաւորաց: 88 B հանիցեն: 89 AB հասանել: 90 A զանգեալն: 91 A անգեալ: 92 A անգելոյն: 93 AB աւագակաց: 94 AB եթէ: 95 AB անգցի: 96 C յաւխտենական: 97 AB եթէ: 98 A անգցի: 99 B յամէն աւր առողջ եղբայրքն փխ յամենայն... եղբայրութենէն: 100 AB եթէ: 101 AB եթէ: 102 A գերեզմանի: 103 B թաղեսցին ի գերեզմանի: 104 B եղբայրք: 105 B տան: 106 B եւ չիք: 107 B այս է: 108 B յայլ չիք: 109 B ուղարկեսցին: 110 B հանգուցիչ, C հանկուցիչ: 111 AB լինին: 112 AB չահեսցին: 113 B պարկեշտք կացուք: 114 B յիստակ: 115 A արեւու ի մէջ չիք: 116 A արեգակն: 117 Այստեղ, թերթերի կորստի պատճառով, ընդհատվում է C ձեռագիրը: 118 A պահապան ամուր է: 119 B պտղովք լցեալ փխ ծաղկաւք լիացեալ: 120 B եղերուք: 121 A չարել: 122 B յանբիծ: 123 A յարմարել: 124 A ըմբիցէք: 125 B աւագ, գիտուն եւ իմաստուն եղբայրն: 126 B քարոզութեամբ: 127 B կրսերն եւ անմիտն եւ տգէտն հնազանդութեամբ: 128 B աւգտեցուցեն:

ԳԼԱՁՈՐԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԵՒ ՆՐԱ ՍԱՆԵՐԻ ԱՒԱՐՏԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ*

Վարդան Այգեկցու առակներից մէկում պատմւում է հետեւեալը.

«Ըմբռնեցին զմէկ աշխարհականն ի մեղս եւ բերին առ սարկաւագն. եւ սարկաւագն ասաց, թէ երէցն ատա է եւ քան զիս մեծ է եւ ունի իշխանութիւն, առ նա տարէ՛ք. եւ տարին. եւ երէցն ասաց, թէ եպիսկոպոսն ատա է, առ նայ տարէ՛ք. եւ տարին. եւ եպիսկոպոսն ասաց, թէ կաթողիկոսն ատա է, առ նայ տարէ՛ք. եւ տարին. եւ կաթողիկոսն ասաց, վարդապետն ատա է, առ նայ տարէ՛ք. եւ տարին. եւ վարդապետն եդ կանոնս եւ արժանացուց ապաշխարութեամբ...»[1]

Այս առակն արտայայտում է Հայկական եկեղեցում տիրող իրական յարաբերութիւններ: Վարդապետական ինստիտուտը Հայ եկեղեցու կեանքում կատարել է չափազանց կարեւոր դեր[2]: Այդ ինստիտուտը, յարմարուելով նորագոյն պայմաններին, աշխարհիկ իշխանութեան թուլութեան կամ բացակայութեան պայմաններում յաճախ կրել է իր վրայ, դատականից ու կուլտուրականից զատ, նաեւ քաղաքական ֆունկցիաներ:

Մխիթար Գօշը, որի անհատական ջանքերով ու ձեռներէցութեամբ ստեղծուած «Դատաստանագիրքն» ընդունուեց ժամանակակիցների կողմից եւ գործածուեց Հայաստանում ու Հայ գաղթավայրերում մի շարք դարերի ընթացքում, սոսկ վարդապետ էր... Սոսկ վարդապետ լինելով՝ նա նախաձեռնեց գրել իր՝ մեր մատենագրութեան մէջ եզակի «Գծագրութիւնը»՝ ուղղուած վրաց կաթողիկոսին, որով Հայ եւ վրաց ժողովուրդների միջեւ դաւանաբանական տարբերութիւնների հիման վրայ սերմանուող թշնամութիւնը որակեց որպէս հակաքրիստոնէական ակտ:

Նոյնպիսի մի վարդապետ էր, առանց եկեղեցական որեւէ պաշտօնի, ԺԳ դարի խոշոր մատենագիր եւ քաղաքական գործիչ Վարդան Արեւելցին, որի առաջ բաց էին ինչպէս Հայ թագաւորի ու կաթողիկոսի, այնպէս էլ մոնղոլական էլխանների պալատները: Լինելով իր արտայայտութեամբ «լուր արեգայ»՝ նա հնարաւորութիւն ունէր ներքին ու արտաքին քաղաքականութեան վերաբերեալ խորհուրդներ տալու մոնղոլ տիրողներին եւ պաշտպանելու իր ժողովրդի դատն ու իրաւունքները:

Այսպիսի օրինակների թիւը կարելի է բազմապատկել, սակայն բերուածներն անգամ բաւարար են ցոյց տալու համար Հայկական եկեղեցու այդ ինստիտուտի (վարդապետութեան) կատարած հսկայական դերն ինչպէս ներքին՝ եկեղեցական, դատական, մշակութային, նոյնպէս եւ արտաքին յարաբերութիւնների բնագաւառում: Ուստի վերոյիշեալից դժուար չէ եզրակացնել, որ Հայ եկեղեցին միշտ էլ լուրջ ուշադրութիւն պիտի նուիրած լինի այն ուսումնական հաստատութիւններին, որոնք վարդապետական կադրեր էին պատրաստում:

Յովհաննէս Սարկաւագի՝ Անիում հիմնադրած դպրոցը՝ Մխիթար Գօշի Նոր-Գետիկեան դպրոցը (ուր, ըստ Կ. Գանձակեցու վկայութեան, «բազումք էին, որք աշակերտեցան ի նմանէ

---

* «Գիտ. աշխատ. Երեւանի համալս.», 1946, հտ. 23, էջ 423-450

1 Н. Я. Марр, Сборники притч Вардана, т. II, СПб., 1894, с. 164-165

2 Н. Я. Марр, Критика и мелкие статьи, СПб., 1903, с. 33-36

վարդապետական բանին...»), նրա աշակերտ Վանականի, ապա Վարդանի, Ներսէսի, Եսայու եւ այլոց դպրոցները (համալսարանները) հէնց այնպիսի հաստատութիւններ էին, որոնք տալիս էին երկրին թէ՛ բարձրաստիճան հոգեւորական կադրեր եւ թէ՛ մշակութային, գիտական գործիչներ՝ վարդապետներ:

ԺԳ–ԺԴ դարերում Հայկական ուսումնական ու գիտական հաստատութիւնները թափառական կեանք էին վարում: Իրար յաջորդող արշաւանքների, ասպատակութիւնների եւ դրանցից բխող աւարառութեան եւ աւերածութեան պայմաններում երկրի գիտական ուժերը ստիպուած էին լինում յաճախ պատսպարուել անմատոյց քարանձաւներում, շարունակել իրենց դասախօսութիւնները եւ պարապմունքներն աշակերտների հետ աւանից-աւան, վանքից-վանք թափառելով՝ զրկուած լինելով կենսական միջոցներից, քաղցած ու բոկոտն:

Մեծ ուսուցիչ Վանականն իր դասախօսութիւնները շարունակում էր անգամ այն ժամանակ, երբ մոնղոլական հրոսակախմբերի ահից շրջակայ շէների բնակչութեան հետ մէկտեղ պատսպարուել էր Տաւուշ բերդից ոչ հեռու գտնուող մի քարանձաւում:

Վարդան Արեւելցին՝ „ խորգի աշակերտը, մի քանի տարուայ ընթացքում իր աշակերտներով շրջագայել է ողջ Հայաստանում՝ իր համալսարանի համար ապահով ու հարմար կայան գտնելու յոյսով. Վարդանի աշակերտ Գէորգ Կիլիկեցին 1267 թուին արտագրած իր Տօնապատճառի յիշատակարանում յայտնում է հետեւեալը.

«Մեզ եղեւ ժամանակ ինչ գեգերել ի դուռն աստուածպարգ այնր տաճարի (Խորվիրապ) սակս կրթութեան... ի մեծ վարդապետէն Վարդանայ... որ ի դուռն սրբոյն Գրիգորի նստելով՝ յաստուածայինն ուղղէր ճանապարհ. եւ անտի փոխեալ եկեալ առ մեծ իշխանն Քուրդ, եւ մեր զկնի նորա հետեւեալ... յանուանեալն Սաղմոսավանք, ուր եւ զառաջինն աւարտեցաք հատոր սրբոց մատենիս: Եւ քան զի զէպ լինէր եւ անտի եւս փոխել նմա ի գործ բարւոք ուսուցչութեան ի տեղի, ուր ակր յաջողեցէ, յուղարկեալք եղեալ մեր ի ստացողէ տառիս ի բուն իւրեն[անց ի] մեծահռչակ... սուրբ ուխտս Թեղինեանց, ուր եւ յանկ խակ հանաք զառաջարկեալս»[1]:

Վարդանն իր աշակերտների հետ միասին խաղաղ անկիւն որոնելու յոյսով ստիպուած էր դեգերել շատ վայրեր շրջել: Այսպէս, վերադառնալով Կիլիկիայից 1246 թուականին եւ կատարելով Կոստանդին կաթողիկոսի յանձնարարութիւնները, մեկուսանում է Անդրէի վանքում «ի մեկուսարանն իւր», այնուհետեւ անցնում է Խորվիրապ, ապա Սաղմոսավանք, Թեղենեաց մենաստան, Յաւրճ, Խորակերտի մենաստան, Հաղբատ եւ այլ վայրեր: Նրա վերջին կայանը եղել է Խորվիրապի մենաստանը, որտեղ եւ, համաձայն Սամուէլ Անեցու «Ժամանակագրութեան» շարունակողի (էջ 161) եւ Դաւիթ վանահօր մի վկայութեան[2], կնքել է իր մահկանացուն եւ թաղուել 1269 թուականին:

Վարդանի ուսուցչական գործունէութիւնը շարունակում է նրա աշակերտ Ներսէս Մշեցին (Տարօնացին), որի մասին պահուել է նրա աշակերտ Մաթէոս Կիլիկիացու հետեւեալ վկայութիւնը.

«...յետ փոխման նորա (Վարդանայ)... նստաւ յաթոռ նորին եւ լուսափայլեաց

---

1 Գարեգին վարդապետ, Զագավանից ժողովը. տե՛ս «Շողակաթ» հայագիտ. ժողովածու, Վաղարշապատ, 1913, էջ 32:

2 Հ. Ոսկեան, Յովհ. Վանական եւ իր դպրոցը, Վիեննա, 1922, էջ 50

զարդս Հայոց ուսմամբ գրոց (Ներսէս). եւ Հասեալ բարիոք ծերութեան Հանգեաւ... ի նոյն վանս Գլաձորոյ»[1]:

Ինչպէս տեսնում ենք, Ներսէս Մշեցին իր վարդապետութեան գոնէ վերջին տարիներն անցկացրել է եւ մահացել մեր մշակոյթի կարեւորագոյն օջախներից մէկում՝ Գլաձորում, ուստի գլաձորեան համալսարանի հիմնադրումը պէտք է կապել Ներսէս Մշեցու անուան եւ նրա գործունէութեան հետ, որն ընկնում է 1269-1284 թուականների միջեւ (Վարդանի մահուանից մինչեւ Ներսէսի մահը)[2]:

Ներսէսի մասին եղած պատմական սուղ տեղեկութիւնների հիման վրայ քիչ բան կարող ենք ասել նրա անձնաւորութեան եւ համարեայ ոչինչ՝ նրա մատենագրական ու գիտական գործունէութեան մասին, սակայն պահպանուած մի շարք ժլատ յիշատակութիւններ միաբերան ներկայացնում են նրան որպէս «վարժապետ եւ խրատիչ սուրբ վարդապետ», «որ լուսափայլեաց զարդս Հայոց ուսմամբ գրոց» եւ այլն[3]:

Մեզ համար աւելի մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում նրա յաջորդ եւ աշակերտ Եսայի Նչեցու անձնաւորութիւնը: Նա ծնուել է Սասունի Նիչ աւանում: Ծննդեան ստոյգ թուականն անյայտ է, սակայն մի շարք տուեալների հիման վրայ հնարաւոր է դրա մերձաւոր որոշումը: Աղբիւրները միահամուռ վկայում են, որ նա սկզբից աշակերտել է Վարդան Արեւելցուն, ապա նրա մահուանից յետոյ՝ Ներսէս Մշեցուն[4]*: Վարդան Արեւելցուն աշակերտած լինելու համար նրա մահուան թուականին նա առնուազն պէտք է լինէր 15-20 տարեկան (աւելի հաւանական լինելու հնարաւորութիւնը ժխտում է, որովհետեւ նա ուսումը 1269 թուականին՝ Վարդանի մահուան ժամանակ, դեռեւս կարիք էր զգում շարունակելու): Մահացել է 1342 թուին (որոշ աղբիւրներ որպէս մահուան թուական նշում են 1338-ը, սակայն մեզ աւելի հաւանական է թւում վերոյիշեալ 1342 թիւը)*[5]*, խորին ծերութեան՝ մօտաւորապէս 85-90 տարեկան հասակում. եթէ մահուան թուականից հանենք նրա հաւանական տարիքը մահուան ժամանակ (85-90), ապա կստանանք նրա ծննդեան համար որպէս հաւանական թուական 1252-57 թուականները, որ համապատասխանում է մեր առաջին ենթադրութեանն այն մասին, թէ Վարդանի մահուան ժամանակ նա պէտք է լինէր 20 տարեկանին մօտ երիտասարդ:*

Ներսէս Մշեցու մահուանից յետոյ, 1284 թուին, նա իր վրայ է վերցնում գլաձորեան համալսարանի վարդապետաց վարդապետութիւնը եւ շարունակում է իր բեղմնաւոր գործու-

1 Ղ. Ալիշան, Սիսական, էջ 131

2 Մ. Օրմանեանն իր «Ազգապատում» աշխատութեան մէջ (տե՛ս էջ 1800), հետեւելով Չամչեանին, հակառակ գոյութիւն ունեցող անժխտելի փաստերի, Ներսէս Մշեցու վարդապետանոցը տեղաւորում է Մշոյ Առաքելոց կամ Ղազարու վանքում եւ նրա աշակերտ Եսայի Նչեցուն ուսանելու է ուղարկում Մուշ՝ մի վայր, որտեղ Եսայի Նչեցու լինելու մասին որեւէ վկայութիւն չի պահպանուել:

[Գլաձորի հիմնադրութեան ժամանակի, տեղորոշման եւ այլ խնդիրների վերաբերեալ վերջին տարիներին բազմաթիւ աշխատութիւններ են լոյս տեսել: Մասնաւորապէս տե՛ս **Ս. Արեւշատեան, Ա. Մաթեւոսեան**, Գլաձորի համալսարանը միջնադարեան Հայաստանի լուսաւորութեան կենտրոն, Երեւան, 1984: Ցաւօք, Լ. Խաչիկեանի սոյն կարեւոր յօդուածին լաւածանօթ վերոյիշեալ հեղինակները, չգիտես ինչու, զլացել են այն յղել: Խմբ.]

Ղ. Ալիշան, Սիսական, էջ 131

Մ. Օրմանեան, Ազգապատում, էջ 1800

Օրմանեանը Եսայու մահուան թուականը համարում է 1333-ը՝ վկայակոչելով Ղ. Ալիշանի «Սիսական» աշխատութեան 384 էջը, սակայն ինչպէս այդ էջում, այնպէս էլ այլուր այդ թուականի մասին չկայ որեւէ յիշատակութիւն:

նէութիւնը մինչեւ մահ՝ շուրջ վաթսուն տարի: Իր աշակերտների եւ ժամանակակիցների կողմից Եսայի Նչեցին վայելել է մեծ յարգանք եւ սէր, նրան այլ կերպ չեն յիշում ժամանակակիցները, քան «քաջ» կամ «վսեմական, անյաղթ հռետոր»[1]*, «ամէնիմաստ փիլիսոփայ», «ձիր իմաստից», «վարդապետաց վարդապետ» եւ այլն եւ այլն, իսկ նրա ղեկավարած ուսումնական հաստատութիւնը՝ որպէս «Յիսուսական համալսարան», «Երկրորդ Աթէնք» եւ այլն:*

Եսային թողել է նաեւ պատկառելի քանակութեամբ եւ որակի մատենագրական արժէքներ, որոնցից կարեւորներն են.

ա) «Մեկնութիւն քերականի»,

բ) «Մեկնութիւն Եզեկիէլի մարգարէի»,

գ) «Բան վասն կարգաց եկեղեցւոյ եւ ժամասացութեան»,

դ) «Լուծմունք Եսայեայ մարգարէութեան» եւ բազմաթիւ ճառեր, նամակներ ու այլ գրութիւններ:

Եսայուն յաջորդեց նրա ամենաընդունակ աշակերտներից մէկը՝ Յովհան Որոտնեցին՝ լինելով ընդամէնը 27 տարեկան (ծնուել է 1315 թուին): Վերջինս իր գիտութեամբ եւ թողած հարուստ գրական ժառանգութեամբ[2] *գերազանցեց թէ՛ իր ուսուցչին եւ թէ՛ նրա նախորդին, ղեկավարեց քաղաքական ու գրական այն արիւնահեղ պայքարը, որ Հայ եկեղեցին ստիպուած էր մղել Եսայի Նչեցու մի այլ աշակերտի՝ Յովհան Քռնեցու եւ նրա հետեւորդների դէմ, որոնք, դաւաճանելով ազգային եկեղեցու եւ ժողովրդի շահերին, ընդունել էին Լատինական եկեղեցու դաւանութիւնն ու աշխոյժ պայքար էին մղում Հայ եկեղեցին պառակտելու դիտաւորութեամբ:*

Գլաձորեան համալսարանը դադարեց գոյութիւն ունենալ Յովհան Որոտնեցու վարդապետութեան օրօք. շուտով (ստոյգ թուականն անյայտ է) Որոտնեցին, քաղաքական եւ տնտեսական մի շարք հանգամանքներից դրդուած, համալսարանը տեղափոխեց Տաթեւ: Այնտեղ, արդէն որպէս Տաթեւի համալսարան, այդ ուսումնական հաստատութիւնը բեղմնաւոր արդիւնքներ տուեց թէ՛ Որոտնեցու եւ թէ՛ նրա աշակերտ՝ մեծ գիտնական Գրիգոր Տաթեւացու վարդապետութեան տարիներին:

Մեր Մատենադարանի N *7823 գրչագրում պահպանուել է հաւանաբար Դաւիթ Բաղիշեցու պատմութիւնից մի հատուած, ըստ որի Գ. Տաթեւացու համալսարանը բաղկացած էր երեք «ուսումնարանից» (ֆակուլտետ).*

«Ի միումն,- ասուած է գրչագրում,- ուսուցանէր զնախկին երգիչ վարդապետաց զերաժշտութիւնս քաղցրալուր ձայնի եղանակաւ: Մինչեւ անգամ յամենայն երկրէ եւ ի քաղաքաց եկեալ պարապէին առ ոտս նորա: Եւ ի միւումն՝ նկարագրութիւն պատկերահանութեան եւ զանազան նկարչութիւնն: Եւ ի միւսումն՝ զներքին եւ զարտաքին

1 Մատենադարան, գրչ. N 1141, էջ 331ա

2 Որոտնեցու թողած գրական ժառանգութեան ուսումնասիրութիւնը սկսուել է միայն վերջին տարիներս: Նրա փիլիսոփայական հայեացքների մասին ամփոփ գաղափար տուեց Վ. Չալոյեանը Մատենադարանի 2-րդ գիտ. սեսիայում կարդացած իր "Формальная логика Иоанна Воротнеци" զեկուցումով: Որոտնեցու տարրաբանական հայեացքներն ուսումնասիրել է Տ. Ղազանչեանը, իսկ առակների հետաքրքիր ժողովածուն պատրաստել է հրատարակութեան Վ. Խեչումեանը:

գրեանս…» (գրչ. N 7823, էջ 42-43):

Ինչպէս տեսնում ենք, չնայած քաղաքական ու տնտեսական մի շարք աննպաստ հան-գամանքների, Գլաձորեան մայր համալսարանից սերուած Յովհ. Որոտնեցու, Գ. Տաթեւացու եւ այլոց համալսարանները ոչ միայն կարողացան պահպանել գլաձորեան համալսարանի գիտական աւանդոյթները, այլեւ նոր արժէքներ տուեցին գիտութեան այն բոլոր ճիւղերի բնագաւառներում, որոնք այս կամ այն չափով առնչւում էին համալսարանի նպատակների ու միտումների հետ:

***

Մատենադարանի գրչագրերից մէկում պահպանուած «Վասն անապատաւորաց» վեր-նագրով քարոզում ասուած է, որ «չորս իրս հարկաւոր է ի պէտս ուսման… Պարտ է զի կամք վարդապետին լինի ուսուցանող եւ այն՝ առանց ագահութեան կամ փառասիրութեան. երկ-րորդ՝ ջերմ սէր ուսանողացն, երրորդ՝ ժամանակն խաղաղութեան, չորրորդ՝ տեղիքն անա-պատ եւ անդորր»[1]:

Գլաձորեան համալսարանն ապահովուած էր թէ՛ պահանջուող բարոյական ատրճանի վրայ կանգնած եւ գիտնական վարդապետներով, թէ՛ ջանասէր ուսանողներով եւ թէ՛ տեղի անդորրութեամբ (համալսարանն ընկած էր Վայոց Ձորի Սրկղունք աւանից արեւելք՝ մի գեղատեսիլ վայրում), սակայն, որ ամենակարեւորն է, համալսարանն իր գործունէութիւնը ծաւալել էր քաղաքական ու տնտեսական բարենպաստ մի ժամանակաշրջանում, որի վրայ անհրաժեշտ է նետել պատմական համառօտ մի ակնարկ:

ԺԳ դարի 30-ական թուականներից մոնղոլական հորդաների աշխարհաւեր արշաւների ու անտանելի ծանր տիրապետութեան ներքոյ, ի թիւս Ասիայի այլ ժողովուրդների, հեծում էր նաեւ հայ ժողովուրդը: Հայ-վրացական միացեալ զինուորական ուժերը չկարողացան քիչ թէ շատ լուրջ դիմադրութիւն ցոյց տալ մոնղոլական հորդաներին. Կիրակոս Գանձակեցու արտայայտութեամբ՝ «ոչ ոք էր, որ ընդդէմ կար նոցա կամ պատերազմէր ընդ նոսա…»[2]: 1236 թւին մէկ տարուայ ընթացքում մոնղոլների ձեռքն անցան Հայաստանի եւ հարեւան երկրների վաճառաշատ քաղաքները՝ Շամքորը, Անին, ապա Կարսը եւ այլն, բնակչութիւնը գերեվարուեց, իսկ քիչ անց, իրենց ծանր հարկապահանջութեամբ քամելով ժողովրդի ողջ կենսական հիւթերը, մոնղոլները չորացրին երկրի յետագայ վերածաղկման ամէն մի հնարա-ւորութիւն: Համատարած աւերածութիւնից զերծ մնացին միայն Հայաստանի մի քանի շրջաններ, որոնցից էին Սիւնիքն ու Վայոց ձորը:

Սմբատ Օրբէլեանը, այցելելով Մանգու ղանին եւ նուիրելով նրան մի հազւագիւտ գոհար, ստանում է նրանից ինչուական իրաւունք, այսինքն՝ նրա տիրապետութեան տակ եղող շրջանները սկսում են ենթարկուել անմիջականօրէն մոնղոլական արքունիքին, ուստի եւ ազատւում են մոնղոլական հարկահաւաքների եւ պաշտօնեաների չահատակութեան վայր լինելուց: Սմբատի յաջորդ Տարսայիճ Օրբէլեանի օրօք եւս շարունակւում է Սիւնիքի համե-մատաբար տանելի վիճակը. նա պատերազմական իր յաղթանակների շնորհիւ նոյնպէս շա-հում է մոնղոլ իշխողների սէրն ու հովանաւորութիւնը.

1 Մատենադարան, գրչ. N 573, էջ 39ա-բ
2 Կիրակոս, Պատմութիւն Հայոց, Թիֆլիզ, 1909, էջ 240

«Պատուեալ եւ սիրեցեալ յաչս աշխարհակալացն եւ ամենայն մեծամեծաց՝ վարէր իշխանութիւն իւր բարձր եւ շքեղ փառօք»,- գրում է իր հօր մասին Ստեփանոս Օրբէլեանը. այնպէս որ Սիւնիքը Ստեփաննոսի հօրեղբօր, հօր, ինչպէս եւ եղբօր՝ Էլիկումի ժամանակ, երբ «ամենայն աշխարհ աւերեալ եւ ապականեալ էր, եւ վանորեայք խափանեալ ի պաշտամանէ… (եր) իբր զտապան Նոյեան ի մէջ աշխարհակործան ալեացն…»[1]:

Նման՝ համեմատաբար բարենպաստ վիճակի մէջ էին նաեւ Պռօշեան իշխանական տան կալուածքները: Պռօշ Խաղբակեանը, մասնակցելով մոնղոլական արշաւանքներին դէպի Բաղ-դադ եւ Նփրկերտ, նոյնպէս հովանաւորւում էր մոնղոլ իշխանների կողմից. Պռօշի յաջորդ եւ որդի Պապաքի (1284-99), նրա եղբօրորդի Էաչի (1299-1317), ապա Ամիր Հասան Բ-ի (+1351) իշխանութեան օրօք եւս Պռօշեանների կալուածքները մնում էին բարեկեցիկ վիճա-կում, ուստի եւ՝ իրենց գրաւում երկրի գիտական ուժերի ուշադրութիւնը:

Պռօշեանների տնտեսական ու բարոյական ամենալայն օժանդակութեան ու հովանաւորու-թեան պայմաններում նրանց իշխանութեան տակ գտնուող Վայոց ձորի Աղբերց վանքում, Գլաձորում, իր կայեանն է գտնում Վարդան Արեւելցու բազմաթափառ դպրոցը Ներսէս Մշե-ցու վարդապետութեան օրօք, որն արդէն, որպէս Գլաձորի համալսարան, շուրջ եօթանասուն-տարի հանդիսանում է Հայաստանի մտաւոր ու քաղաքական ամենախոշոր կենտրոնը՝ ակտիւ դեր կատարելով նաեւ երկրի եկեղեցական ու քաղաքական գործերում:

Սակայն Գլաձորի համալսարանի տեւական եւ բեղուն գործունէութիւնն արդիւնք չէր միայն Սիւնիքի եւ նրա հարեւան Վայոց ձորի (որ հոգեւոր թեմ էր Սիւնեաց մետրոպոլիտու-թեան) տնտեսական բարեկեցութեան եւ քաղաքական համեմատաբար խաղաղ պայմանների: Գլաձորի համալսարանի գործունէութիւնը պայմանաւորուած էր նախ այն գօտեմարտերով, որ հայկական եկեղեցին սկսել էր մղել օտարամուտ եւ հայկական եկեղեցու ինքնուրոյ-նութիւնը վտանգող գաղափարախօսութիւնների դէմ՝ անկախ այն բանից՝ դրանք թելադրւում էին Հռոմի՞ց, թէ՞ Բիւզանդիայից:

Հարկաւոր էր պատասխանել ինչպէս պապի ուղիղենցիայից եկող դաւանաբանական պահանջներին ու գրութիւններին (որոնցից մէկի մէջ Վարդան Արեւելցին, իր արտայայտու-թեամբ, գտել է «հնգետասան սխալ եւ անընդունելի բան»), այնպէս էլ հերքել բուն Հայաս-տանի, յատկապէս քաղաքային բնակչութեան որոշ շերտերում տարածուած հակալուսաւոր-չական ուսմունքները. շերտեր, որոնք ըստ Ստեփաննոս Օրբէլեանի դիպուկ արտայայտու-թեան՝ «Մամոնայի ծառայելով դանձէն գանձս յերկրի առաւել քան զամենայն ազգս. եւ ազանեն բեհեզս եւ ծիրանիս. եւ ուրախ լինեն առատապէս իբրեւ զմեծատունն. եւ Ղազարոս անկեալ առ դրուս նոցա՝ ոչ տան ի փշրանացն… ի տապլէքն խաղալով (այսինքն է նարտ) զմիմեանց մեծութիւնս յափշտակեն…»[2] եւ այլն եւ այլն:

Հարկաւոր էր հակաճառել «ընդդէմ այնոցիկ», որք՝

ա) «…զմի եւ զանբաժանելի բնութիւն Որդոյն Աստուծոյ ժպրհին յանդգնաբար քակել եւ յերկուս բաժանել եւ դնել անդ անձինք՝ կամք, կիրք եւ գործք».

բ) «…ապականեն զաստուածային խորհուրդն ջրով եւ խմորով».

1 Ստ. Օրբէլեան, Պատմութիւն տանն Սիսական, Մոսկուա, 1861, էջ 316
2 Ստ. Օրբէլեան, Բան դիմադրական ընդդէմ հերետիկոսացն, Մատենադարան, ձեռ. N 573, էջ 113

գ) «...ի խաչին ուրանան զԱստուածութիւնն եւ մարդ խոստովանին գոլ զչարչարեալն վասն մեր եւ ոչ Աստուած»[1] եւ այլն եւ այլն:

Այսպիսի ընդդիմագրութիւններ գրելու կարող կադրեր աճեցնելու խնդիրը,– կադրեր, որոնք իրենց եկեղեցու գաղափարախօսական գրքերը կարող կլինէին պաշտպանել՝ ոչ միայն յենուելով սուրբ հայրերի ու Աստուածաշնչի դոգմաների վրայ, այլեւ այնպիսի նորագոյն զէնքերով, որոնցով զինուած էին իրենց թշնամիները (փիլիսոփայութիւն, բնական գիտութիւններ եւ այլն),– յուզում էր Հայկական եկեղեցու հեռատես բարձրաստիճան հոգեւորականութեանը:

Այն հանգամանքը, որ Ստեփանոս Օրբէլեանի՝ Գրիգոր Անաւարզեցի կաթողիկոսին ուղղած դաւանաբանական թղթի ներքոյ ստորագրում է Եսայի Նչեցին («Կրտսերս ի բանաւորաց եւ յետին վարժապետ իմովք աշակերտօքս»), արդէն պարզ կերպով ցոյց է տալիս ուսումնական այդ բարձրագոյն հաստատութեան դերը Հայ եկեղեցու ներքին ու արտաքին կեանքում:

Համալսարանի վրայ գրուած յոյսերն արդարացան. միայն Եսայի Նչեցու վարդապետութեան ընթացքում (1284–1342) այնտեղ սովորեցին եւ, վարդապետական աստիճան ստանալով, ակտիւ գիտական ու քաղաքական գործունէութեան ասպարէզ մտան 363 աշակերտներ:

Համալսարանի համբաւը հռչակուեց ողջ Հայաստանում, ուսման անյագ ծարաւով այնտեղ դիմեցին երիտասարդ ուժեր Հայաստանի բոլոր գաւառներից՝ ուսանելու եւ հայրենիքին պիտանի քաղաքացիներ դառնալու համար: Այսպէս օրինակ՝ ոմն Ներսէս վարդապետ իր պատուիրած Աստուածաշնչի յիշատակարանում 1330 թուին գրում է.

«Ես Ներսէս, անուամբ վարդապետ... յաշխարհէն Տարօնոյ ի գաւառէն Սանոնու... ի գեղջէն որ կոչի Կոռ, եղէ ցանկացող ուսման եւ ընթացայ յԱրեւելս, ի գաւառն Վայոց Ձոր, ի վանքն Գայլեձոր. եւ եօթն ամ վարժեցայ ի վարժումն հին եւ նոր տառից եւ այլ բազում սրբոց բանից... ի վարդապետութեան Եսայեայ Րաբունապետի, որ այժմ կայ Գլաձորի...»[2]:

Մի այլ յիշատակագիր 1314 թուին գրում է.

«Ես, նուաստ անուն Մխիթար Եզընկայեցի (ընթացայ) ի մայրն իմաստից Գլաձոր՝ առ ոտս Եսայեայ վարդապետի ի վարժումն աստուածիմաստ գրոց» եւ այլն («Հայապատում», էջ 526):

Եւ իրօք, գլաձորեան համալսարանը տուեց երկրին անհրաժեշտ գիտական ու քաղաքական գործիչների մի ամբողջ սերունդ, որոնց գործունէութեան եւ թողած հարուստ գրական ժառանգութեան վրայ կանգ առնելը մեզ շատ հեռու կտանէր. բաւարարուենք յիշատակելով, որ Սիւնեաց միտրոպոլիտ, «Պատմութիւն տանն Սիսական», «Ողբ ի դիմաց Վաղարշապատու», «Բան դիմադրական ընդդէմ հերետիկոսացն» եւ ցարդ անյայտ մնացած «Հարցուածք վասն բնութեանցն»[3] մեծարժէք աշխատութիւնների հեղինակ եւ խոշոր քաղաքական գործիչ Ստեփանոս Օրբէլեանը, բանաստեղծ եւ եկեղեցական գործիչ Խաչատուր Կեչառեցին, բազ-

1 Նոյն տեղում, էջ 56ա, 66բ եւ այլն

2 Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 546: Յիշատակարանից պարզւում է, որ ուսման տեւողութիւնը Գլաձորում եօթ տարի էր:

3 Ստեփանոսի այս աշխատութիւնը, որ մենք նպատակ ունենք հրատարակել, փիլիսոփայական լուրջ երկ է:

մաթիւ ճառերի ու մեկնութիւնների հեղինակ, «Համառ... փիլիսոփայական արհեստից»[1] Մխիթար Սասնեցին, «ընտիր ոճով Եւագրի գրուածոց վրայ տեսութիւն մը յօրինած»[2] Կիրակոս Երզնկացին, Վարդան Արեւելցուն վերագրուած աշխարհագրութեան հեղինակ Վարդանը եւ այլ բազմաթիւ բազմաշխատ գործիչներ ու մատենագիրներ գլաձորեան համալսարանի սաներն էին:

Ղեւոնդ Ալիշանը, իր «Սիսական» մեծարժէք աշխատութեան մէջ թուելով Գլաձորի համալսարանի իրեն յայտնի գրական վաստակներից կարեւորները, գրում է.

«Փափագելի խնդիր է այլոց եւս գրոց Եսայեա եւ վանակցաց նորին եւ աշակերտաց, առ ի վերայ հասանել, եթէ զի՞նչ եւ որքա՞ն շնորք էին նորա եւ տեղւոյն, որովք այնքան դրուատեցաւ եւ հռչակեցաւ վարժարանն այն եւ վարդապետարան՝ երկրորդն Աթէնք»[3]:

Գլաձորեան համալսարանի աւարտական ատենախօսութիւնների ի յայտ գալով՝ մասամբ իրագործուած պիտի համարել բազմաշխատ բանասէրի փափագը:

* * *

Գլաձորի համալսարանի ուսանողների աւարտական ատենախօսութիւնները պահպանած՝ մեզ առայժմ միակ յայտնի գրչագիրը, որ բազմապիսի նիւթերի (մեծ մասամբ քարոզների) ժողովածու է, կրում է մեր Մատենադարանի N 631 (602)-ը: Ատենախօսութիւնները գտնւում են գրչագրի 49ա–86բ էջերում: Այն գրուած է ԺԴ–ԺԵ դարերում Գրիգոր Սամսոնեցու ձեռքով, պատուիրատուն է Մկրտիչը: Գրուած է բոլորգրով, միասիւն, բաղկացած է 274 թերթից. նիւթը թուղթ է, կազմը՝ դրոշմազարդ կաշի: Առաջին հայեացքից մեզ հետաքրքրող յօդուածները թողնում են քարոզների սովորական նախերգանքների տպաւորութիւն[4]:

Անգամ մեր մատենագրութեան ամենագիտակ անձնաւորութիւններից մէկը՝ բանասէր Ն.

1 Զարպհանալեան, Պատմութիւն հայ դպրութեան, հտ. Բ, 1878, էջ 189–191

2 Նոյն տեղում, էջ 232

3 Ղ. Ալիշան, Սիսական, էջ 137

4 Մեր գրչագրերում յաճախ հանդիպող սովորական քարոզների նախերգանքների մասին որոշ գաղափար տալու նպատակով աւելորդ չենք համարում բերել մի բնորոշ նախերգանք՝ «Նախերգանք պիտանի նախքան զընթրան քարոզի» վերնագրով, N 4618 գրչագրում (էջ 36բ) պահպանուած հատուածից: Նախերգանքը, ինչպէս կարելի է եզրակացնել յուսանցքում գրած «հայոց» բառից, օգտագործուել է որպէս նախերգանք հայ ժողովրդի վիճակի վերաբերեալ կարդացած քարոզների:

«Մանաւանդ զատորաւուզեալ եւ ներգեւեալ տունս Թորգոմայ Ասքանազեան, ազինս Աբեթեան, ազգիս Հայկազեան, ի թագաւորական գահոյից, ի պատրիարգական աթոռոց, ի իշխանական պերճութեանց, ի հայրենական ժառանգութեանց եւ փարթամ արգասեաց, եւ յամենայնէ թափուր եւ յունայն եղեալ ցրուեալ եւ վարատեալ, տարագիր եւ տարաշխարհիկ ընդ ոլորտս տիեզերաց: Եւ եմք տառապեալ յերկրի այսօր վասն մեղաց մերոց: Վասն որոյ առ հեծութեան սրտի եւ առ դալար աղեաց ողբս առեալ եւ արտօսր յեղեալ, առ ծունկս անկեալ եւ կական բարձեալ ի սփնհողոս սուրբ բանակաց եւ ի ջոկս մարտիրոսաց, ի հանդէս ճգնաւորաց եւ ի գունդս կուսանաց, ի գումարս մարգարէից եւ ի խումբս նահատակաց, ի հոյլս աշակերտաց սրբոց եւ ի դասս երջանկաց առաքելոցն յիննեակ դասս հրեշտակացն: Այլ եւ Տիրամայրն Աստուածածին եւ ի նոյն ինքն մարդացեալ Աստուած ընծայեալն Հօր պատարագ վասն մեր: Զի ի պատիւ աւուրս շնորհի եւ ի բարեխօսութիւն այս քան յիշատակեալ երկնագումար եւ աստուածաբնակ հազարաւորացս եւ բիւրաւորացս՝ հայտնեսցէ ընդ հայկազեանս սեռիս եւ վերստին դարձեալ առաջինն նորոգեսցէ, որպէս էաքն նախ՝ զերագոյն քան զազինս ամենայն, ի պատիւ փառաց իւրոց, անայէկոծ կենօք եւ խաղաղութեան արգասիւք, հաստատեսցէ զաթոռ եւ զգաւազան իշխանութեան, թագաւորական պետութեան եւ քահանայական օծութեան ազգիս հայկազեան, ամէն»:

Ակինեանը, իր Համառօտ ցուցակում[1] գրանցել է այդ ատենախօսութիւնները որպէս սովորական «նախերգանք քարոզից» եւ Թողել է անուշադիր: Սակայն մանրակրկիտ քննութիւն կատարելուց յետոյ դժուար չէ փոխել նրանց մասին ստացած առաջին տպաւորութիւնը:

Այսպէս օրինակ՝ գրչագրի 73ա էջից սկսուող ատենախօսութեան մէջ (որ Ակինեանը գրանցել է որպէս «Տիրական եւ արարչական է այս բան Հրամանի» բառերով սկսուող նախերգանք) Հեղինակն Աստծուն է դիմում Հետեւեալ խօսքերով.

«Իսկ ես, անարժան ծառա քո, միշտ գտեալ ի քէն ողորմութիւն, ի նախնեաց եւ յարգանդէ մաւր իմոյ ի քեզ անկեալ եւ անեալ ի ծոց եկեղեցո... մերս սանձողիդ, որ արժանի արարեր զաւրութեամբ քով՝ անուան փառաց եւ կոչման վարդապետութեան, լինել անաւթ ինչ ի պէտս սպասաւորութեան տան քում մեծի եւ երկնաւորի, իշխել վստաՀութեամբ ի բուրաստանս ծաղկոցաց, խաւսուն մարգաց եւ Հովտաց շուշանաց եւ տալ անոյ, ըստ կարի մերում... որբացան մանկանց Սիոնի սրբո...»[2] եւ այլն:

Բերուած տողերից պարզ երեւում է, որ նրանց Հեղինակը, լինելով Հոգեւոր ընտանիքի զաւակ («ի նախնեաց եւ յարգանդէ մաւր իմոյ ի քեզ ունկեալ») արժանացել է վարդապետական աստիճանի («անուան փառաց եւ կոչման վարդապետութեան»):

«Յաղագս որոյ,– շարունակում է նա,– անվճար երախտեաց պարտական եղեալ իմ, նախ քեզ (Աստուծոյ) Հատուցից զերեխայրիս կալո իմո եւ Հնձանի եւ զանդրանիկս բանական Համարձակութեան զպտուղ շրթանց...», այսինքն՝ իր առաջին Հրապարակային ատենախօսութիւնը, որ պատկերաւոր կերպով Համեմատուած է կալի եւ Հնձանի առաջին արդիւնքի Հետ: Իսկ ատենախօսութեան վերջում, աւանդական օրՀնութիւններից անմիջապէս առաջ, Հեղինակը խնդրում է չդատապարտել իրեն, եթէ իր ասոյթներում գտնուեն մաքեր՝ «արտաքոյ լաւին եւ յոյժ Հեռի ի ճշմարտութենէն...», որովՀետեւ իր այդ ելոյթն առաջինն է, ուստի եւ չէր կարող զերծ չլինել Թերութիւններից («զի զայս առաջինն է, որ տուաւ մեզ Համարձակութիւն...» եւ այլն):

Նոյն բանն աւելի ցայտուն կերպով արտայայտուած է 60ա էջից սկսուող ատենախօսութեան մէջ, որի Հեղինակը շնորՀակալութեան ջերմ խօսքեր ուղղելով երկրի աշխարՀիկ եւ Հոգեւոր տէրերին եւ իր ուսուցիչներին՝ չի մոռանում իր առաջին Հրապարակային ատենախօսութիւնը («Նաւակատեաց տեսութեանը») ունկնդրելու եկած Հանդիսականներին եւ դիմում է նրանց Հետեւեալ խօսքերով.

«...զքրիստոսասէր եւ զբարեպաշտ եւ զսիրելիս սրբոց, ուրՀնութեան արժանաւոր տանուտերքդ եւ Հոգեսէր եւ ազգասէր բարե (պաշտ տիկնայքդ), որ բազում ծնաւղական գութ ի մեզ ցուցե(ա)լ եւ այսաւր աշխարՀասփիւռաբար ի մերս եկիք **Նաւակատեաց տեսութիւն**, զորս զամենեսեան արժանացուսցէ ամենախնամն Աստուած պայծառ Հարսանեացն տեսութեան եւ առագաստին ուրախութեան»:

Քննարկուող Հարցի կապակցութեամբ չափազանց Հետաքրքիր է նաեւ վերոյիշեալ ատենախօսութեան նախաբանը, ուր ատենախօսը յայտնում է, որ ամէն մի նոր ինչ «բարեպատեՀ երեւի տեսողաց», ինչպէս անՀաս, դեռեւս տապաՀամ պտուղն ախորժելի է Թւում մարդկանց

1 Ն. Ակինեանի կազմած «Էջմիածնի մատենադարանի գրչագրերի համառօտ ցուցակը», որտեղ գրանցուած են 1–2360 գրչագրերը, մեր Մատենադարանի սեփականութիւնն է կազմում:

2 Մէջբերուող հատուածների ուղղագրութիւնը թողնում ենք անփոփոխ:

որպէս նորութիւն, ինչպէս նոր խօսել սկսող երեխաների բարբառանքը մեծ Հաճոյք է պատճառում ծնողներին, այնպէս էլ յոյս է յայտնում, որ իր՝ որպէս առաջին անգամ Հրապարակային ելոյթ ունեցողի նկատմամբ Հանդիսականները խստապաՀանջ չեն գտնուի:

Այսպիսով, պարզւում է, որ N 631 գրչագրում պաՀպանուած յօդուածները ոչ Թէ քարոզների սովորական նախերգանքներ են, այլ ատենախօսութիւններ կամ ատենախօսութիւնների Հատուածներ են այնպիսի Հեղինակների, որոնք առաջին անգամ են Հրապարակային ելոյթ ունենում: Սակայն դեռեւս պէտք է ապացուցել, որ մեզ Հետաքրքրող ատենախօսութիւնները գրուել են եւ կարդացուել Հեղինակների կողմից ինչ-որ ուսումնական Հաստատութիւն աւարտելու կապակցութեամբ[1]: Ատենախօսութիւններն այս Հարցի պարզաբանման Համար եւս տալիս են առատ նիւթ. մենք կբաւարարուենք երկու փաստ բերելով:

60ա էջից սկսուող ատենախօսութեան Հեղինակը ատենախօսութեան վերջում օրՀնութիւններից ու բարեմաղթութիւններից մաս է Հանում նաեւ իր դաստիարակներին, ուսուցիչներին եւ ուսումնակիցներին, իր բաղձանքն է յայտնում՝ վերջիններին եւս տեսնել իրենց նպատակին (իմա՝ կրթութեան աւարտմանը) Հասած: Մեզ Հետաքրքրող Հատուածը բերում ենք ամբողջութեամբ.

«...Եւ դուք դաստիարակք եւ անուցիչ Հարք իմ Հոգեւորք, աչե(ա)լք պատուեալք եւ իմաստիւք ծերունիք, նաեւ սիրեցեալ եղբարք եւ Հասակակից(ք), որ բազումս վաստակեցէք ի մեզ, որոց, փոխանակ սիրոյ եւ երախտեաց, բազմապատիկս Հատուսցէ բարեացպարտն Աստուած աստ եւ ի Հանդերձեալն:

Եւ դուք, աստուածային բանիւն աճեցեալք եւ լիապատար իմաստիւք զարդարեալ ուսումնակիցք եւ Հոգեւոր սեղանոյն Հացկիցք, որ յոլով ամաւք, զմեծ մասն կենաց ձերոց ի դեգերանս Հանճարոյ մնացեալ եւ ի ծայր իմաստիցն ժամանեալ, եւ այժմ զոր ձեր երանել անարգամեծար կամաւք զմեր նուաստութիւնս յառաջ մատուցէք եւ աղաւԹիւք եւ խրատու աւժընդակե(ա)լ մերում Թերութեանս յանկ Հասուցէք, որոց, ամենաբաշխ Հոգին Սուրբ փոխատրելով ըստ ձերոց աննախանձ բարեաց կամացդ, լցուսցէ անճառ իմաստիւքն իւրովք եւ զբաղձանս ձեր ի լրումն ածել ժամանեցուսցէ՝ ի կատարեալ շնորՀն պետական, առնել եւ ուսուցանել զաւանդն տերունական զաւսեալ եւ զլեալ ի սուրբ եւ յամենալի Հանճարոց եւ վարուց կատարելապետիս մերոյ եւ Հաւր, ի պարծանս սորա եւ ի գովութիւն յաւուրն Քրիստոսի...»:

73ա էջից սկսուող ատենախօսութեան Հեղինակը եւս դիմում է իր ուսումնակիցներին.

1 Իհարկէ, վերոյիշեալից սխալ կլինի եզրակացնել, որ այս ատենախօսութիւնները փոխարինել են համալսարանի աւարտական քննութիւններին: Համալսարանաւարտը նախքան հրապարակային իր առաջին ելոյթը, Հայ եկեղեցում տիրող կանոնների համաձայն, պէտք է ստացած լինէր աստիճան «ծայրագոյն վարդապետութեան», որով եւ իրաւունք՝ «սաղմոսել, վարդապետել եւ յայտնել զբանս աստուածայինս, ի լեզու խօսել եւ թարգմանութիւնս առնել առ ի շինութիւն եղբարց եւ ի կատարումն եկեղեցւոյ» (տես՝ «Գիրք զաւազան տալոյ աշակերտացն ճշմարիտ բանին... յօրինեալ սրբոյն Գրիգորի Տաթեւացւոյ...» յօդուածը, «Մաշտոց ձեռնադրութեան», Վաղարշապատ, 1876, էջ 111): Ծայրագոյն վարդապետութեան աստիճան հնարաւոր էր ստանալ միայն ուսումնական որեւէ հաստատութիւն աւարտելուց կամ աւարտական քննութիւններ տալուց յետոյ միայն: Ըստ Մխիթար Գօշի «Դատաստանագրքի» (մասն Ա, յօդուած Գ, էջ 88)՝ «վարդապետք եղիցին ըստ իրաւանց նախակրթեալք Հին եւ Նոր Կտակարանաց եւ Կանոնական հրամանաց: Յերկուց եւ յերից վարդապետաց կոչեսցին ի պատիւ հրամանի, թեեւ պատահի միոյ աշակերտել...»: Անշուշտ, «երկուց եւ երից» վարդապետների ներկայութեամբ մանրակրկիտ քննութեան ենթարկուած վարդապետացուն կարող էր ստանալ վարդապետական աստիճան, ուստի եւ ատենախօսելու իրաւունք՝ պահանջուող գիտական պատրաստութիւնն ունենալով միայն:

«...Զմբռնլի եւ զպատուական եղբարքդ, որք ի Հեռաստանէ աշխարհէ եւ որք ի մօտուստ եկեալ աշակերտիք աստուածային իմաստից... զհոգի չնորհաց երջանիկ Հօրս մերոյ (այսինքն՝ իրենց վարդապետի) Հանգուցէ ի վերա(յ) ձեր... եւ ժամանեցուցէ զխրաքանչիւր ոք յաւարտումն բարի յուսոյն իւրոյ...»:

***

Անհամեմատ դժուար է մեզ հետաքրքրող աւարտական առենախօսութիւնների ժամանակը, ուստի եւ՝ Համալսարանի ժամանակը որոշելու խնդիրը: Այդ դժուարութեան պատճառը հետեւեալն է. N 631 կամ նրա նախագաղափար գրչագրի արտագրողը մեզ հետաքրքրող նիւթն արտագրել է ոչ որպէս մի որոշ Համալսարանի աւարտող ուսանողների առաջին առենախօսութիւններ:

Օգտուելով այն իրողութիւնից, որ նրանց նիւթը կամ աւելի ճիշտ՝ նրանց նախերգանքներն ու վերջաբանները, գրուած լինելով չափազանց վարպետօրէն ու գեղեցիկ, կարող են նախերգանքների ու վերջաբանների գեր կատարել ճարտար քարոզչի ընդունակութիւններ չունեցող ամէն մի քարոզչի համար՝ մեզ անյայտ արտագրողը կամ խմբագրողը ջէն է նետել առենախօսութիւններից ամէն մի արտայայտութիւն, միտք, անձնանուն, որ այս կամ այն կերպ կարող էր յիշեցնել ունկնդիրներին քարոզի սկզբնական աղբիւրը:

Այսպէս օրինակ՝ արտագրելով այդպիսի առենախօսութիւններից մէկի (սկ. 49ա էջից) միայն նախաբանն ու վերջաբանը՝ այն բառերից յետոյ, որոնց (չաղճատուած օրինակում) յաջորդում էին առենախօսութեան բնաբանի բառերը՝ խմբագիրը գրել է «այս ինչ է» («Նեցուկ եւ դաւազան զաւրութեան առաքեսցէ մեզ Տէր ի Սիոնէ՝ անսայթաք եւ անգայթակղ գնալ մեզ առաջի եղեալ ճանապարհս, որոյ նախադրութիւնն այս ինչ է»): «Այս ինչ է» բառերի փոխարէն գրչագրից օգտուող քարոզիչը կարող էր դնել իր ցանկացած բնաբանը՝ ելնելով իր քարոզի նիւթից:

Բարեբախտաբար, մեզ անյայտ խմբագիրն իր առաջ դրած խնդիրը կատարել է ոչ փայլուն կերպով, անգամ այդպիսի անդամահատուած վիճակում առենախօսութիւնները (յատկապէս 60ա էջից սկսուողը) պահպանել են որոշ տուեալներ, որոնք հնարաւորութիւն են տալիս ոչ միայն նրանց գրութեան մերձաւոր ժամանակը, այլ անգամ ճշգրիտ տարեթիւը որոշել:

Մենք առաջադրուած խնդրի լուծման համար ստիպուած ենք մէջբերել մի ընդարձակ հատուած 60ա էջից սկսուող առենախօսութիւնից: Առենախօսութեան հեղինակը չափազանց ընդարձակ տեղ գրաւող օրհնութիւններից յետոյ գրում է[1].

ա) «Եւ արդ, ողորմութիւնն Աստուծոյ... գթացէ նախախնամական սիրով յիւրական արարածս եւ զերկոսեան սիւնս ամրութեան քրիստոնէական դաւանութեան անսասանելի պահեսցէ ամէնայաղթ իւրով զաւրութեամբն:

Զամբիծ եւ զաստուածամերձ անձն եւ տիրական պատկերն... զհայրապետն մեր զաէր... (անուան փոխարէն չորս կետէր ամբաձեւ դասաւորութեամբ) եպիսկոպոսաւք եւ վարդապետաւք եւ բնաւին իսկ լրման ուխտիւ սուրբ եկեղեցոյ՝ ճշմարիտ հաւատով եւ անբասիր վարեաւք ամրացեալ միացուսցէ ի մի լրութիւն ընդրութեան:

[1] Մեր յետագայ աշխատանքը դիւրացնելու նպատակով մէջբերուող հատուածը բաժանում ենք 4 մասի՝ ա, բ, գ, դ թուահամարներով:

Մանաւանդ զաւրինակն հաւատոյ, զքանոն սրբութեան, զծայրագոյն պատուոյ վիճակեալն, զվերադիտող(ն) սրբահաւաք ուխտիս սրբութեան եւ զառաջնորդն մեր ի Քրիստոս, զաէր պահեսցէ... բազում ժամանակաւք...»:

բ) «...Զբարեպաշտ եւ զմեծազաւր՝ ծիրանածին եւ արքայազարմ թագաւորն մեր... ամենայն իշխանաւք եւ իշխնցեալաւք... ամրացուսցէ յամենայն հակառակողաց իւրեանց»:

գ) «...Բայց ինձ աստանաւր յառաջել, ողբս եւ աղետ հասուցանէ յաղագս անկրկնելի կործանմանս եւ անողջանալի բեկմանս, զի բարձաւ ի մէնջ թագն գլխոց եւ ուրախութիւնն սրտից, վանիչն պատերազմաց եւ հերքիչն այլասեռից... ողբացէք, զի ոչ է ի միջի, որ եկեղեցիսն զարդարէր եւ զսուրբսն պատուէր, եւ զսոցին նմանսն, որ ամենեցուն է գիտելի: Այլ ինքն ողորմածն Աստուած, որ հարկանէ եւ բժշկէ... մխիթարեսցէ զտրտմեալքս... զսոյն տեղի թերութեան լցուցանելով ի նորին զաւակաց...»:

դ) «...Եւ տաւել այժմու աստուածասէր եւ բարեխնուն... պարոնայքս (անունները չկան) որք են զարդ եկեղեցոյ... պահպանեալ լիցին յամենակալ բազկաց Տեառն իւրեանց՝ ծնողաւք եւ սիրելեաւք...»:

Վերցնենք նախ բ) հատուածը՝ «Ծիրանածին եւ արքայազարմ» թագաւորի յիշատակութեամբ, որին, ելնելով առենախօսութիւնների լեզուից, ոճից եւ ոգուց, անշուշտ, պէտք է փնտրել կիլիկեան հայկական թագաւորների շարքում:

Յիշատակութիւնը չի կարող վերաբերել ո՛չ Լեւոն Ա-ին (1198-1219) եւ ո՛չ էլ Հեթում Ա-ին (1226-1270)՝ հէնց այն պատճառով, որ նրանցից ոչ մէկն արքայազարմ չէր: Ռուբինեանց թագաւորներից արքայազարմ կոչուելու իրաւունք ունէին միայն Հեթումի հետնորդները, ուստի «արքայազարմ» թագաւորի յիշատակութեամբ առենախօսութիւնը կարող է գրուած լինել միայն Հեթումի մահուանից՝ 1270 թուից յետոյ: «Ծիրանածին» մակդիրը հայ թագաւորների վերաբերեալ առաջին անգամ գործածուած ենք գտնում Վահրամ վարդապետի այն ճառի մէջ, որ նա կարդացել է Լեւոն Բ-ի թագադրման հանդէսին[1]: Ճառի վերջաբանում կան հետեւեալ խօսքերը.

«...Թագաւորեսցէ սա (Լեւոն) ի կեան յայս ծիրանածին որդւովք իւրովք եւ զարմիւ...»:

Այս հանգամանքը եւս հաստատում է մեր վերոյիշեալ ենթադրութիւնը:

Աւելի հետաքրքիր են ա) հատուածի քննութեան արդիւնքները: Պէտք փնտրել մի ժամանակաշրջան, որի ընթացքում բացի կաթողիկոսից եղած լինի մի այլ բարձրաստիճան հոգեւորական «ծայրագոյն պատուոյ վիճակեալ», որ արժանի լինէր կրելու «աւրինակ հաւատոյ», «քանոն սրբութեան» մականունները, եւ, որ աւելի կարեւոր է, կաթողիկոսի դաւանաբանական ուղիղ ընթացքի վերաբերեալ եղած լինէին տարակոյսներ (այլ կերպ չենք հասկանում առենախօսի այն խօսքերը, որով նա իր բաղձանքն է յայտնում տեսնել կաթողիկոսին իր մերձաւոր հոգեւորականների հետ միասին՝ «ճշմարիտ հաւատով եւ անբասիր վարեաւք ամրացեալ... ի մի լրութիւն առաքելական ընդրութեան»):

[1] Տե՛ս «Արարատ» ամսագիր, 1869, էջ 101:

1270 թուից յետոյ վերոյիշեալ բոլոր տուեալներին համապատասխանում են Ստեփանոս Դ Հռոմկլայեցու կաթողիկոսութեան տարիները (1290-1293):

Արեւելեան Հայաստանում Կոստանդին Կատուկեցի կաթողիկոսի դահընկէցութիւնը դիտւում էր (ինչպէս որ իրօք էր) որպէս Կիլիկիայի հոգեւորականութեան եւ արքունիքի որոշ շրջանների լատինամոլ քաղաքականութեան արդիւնք, ուստի նրա յաջորդի՝ Ստեփանոս Հռոմկլայեցու հաւատի (դաւանանքի) ուղղութեան վերաբերեալ, մանաւանդ նրա դահակալութեան սկզբնական շրջանում, բնականօրէն կարող էին կասկածներ առաջանալ:

Այդ նոյն տարիներին Արեւելեան Հայաստանի հոգեւոր գործերը, որպէս de facto կաթողիկոս, վարում էր Սիւնեաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբէլեանը, որին ժամանակակիցները բուն Հայաստանում յաճախ կոչում էին անգամ քահանայապետ. որպէս օրինակ նշենք Մաթէոս վարդապետի՝ 1292 թուին արտագրած յիշատակարանը.

«Գրեցաւ (աւետարանս)... ի գաւառիս, որ կոչի Վայոց Ձոր ի քահանայապետութեան նահանգիս՝ Տեառն Ստեփաննոսի...»[1]

Այսպիսով, տենախօսութեան գրութեան ժամանակը վերոյիշեալ տուեալների հիման վրայ աւելի է կոնկրետանում եւ ամփոփւում Ստեփանոս Հռոմկլայեցու կաթողիկոսութեան տարիների, այն է՝ 1290-93 թուերի միջեւ:

Դ հատուածում տենախօսը ողբում է մի բարձրաստիճան աշխարհիկ մարդու մահը՝ հանգուցեալի հասցէին շռայլելով «թագն գլխոյ», «ուրախութիւն սրտից», «վանիչ պատերազմաց», «հերքիչ այլասեռից», եկեղեցիների զարդարող եւ այլն պատուանուններ: Այնուհետեւ իր ցանկութիւնն է յայտնում՝ տեսնել նրա զաւակներից որեւէ մէկին՝ յաջորդած իր հանգուցեալ հօրը:

Վերոյիշեալ պատուանունները պատշաճ են ինչպէս Սմբատ Օրբէլեանին, այդպէս նաեւ նրա եղբայր Տարսայիճին: Սմբատն անզաւակ մահացաւ, ուստի տենախօսը նրան չէր կարող նկատի ունենալ. ինչ վերաբերում է Տարսայիճին, ապա Ստ. Օրբէլեանի նրան տուած մակդիրները եւ տենախօսութեան մէջ հանգուցեալին ուղղած պատուանուններն ըստ ամենայնի ծածկւում են իրար:

Ստեփաննոսի տեղեկութեամբ նոյնպէս՝ Տարսայիճը մէկն էր, որ «բազում զիւրութիւն եւ ողորմածութիւն առնէր նեղեալ ազգիս Հայոց... Ազատեաց (ի հարկէ) զամենայն եկեղեցիս: Նաեւ այնքան ողորմած եւ գթած եղեւ առ ամենեսեան, զի ի Նախիս գիւղ... խաչ կանգնէին եւ անուամբ նորա կոչէին գնա (զխաչն)...» եւ այլն[2]:

Աւելի նշանակալից է Ստեփաննոսի տեղեկութիւնն իր եղբայրների միջեւ հօր ժառանգութեան առթիւ ծագած վէճերի մասին.

«Որդիք նորա (Տարսայիճի),- գրում է Ստեփաննոսը,- վիճէին ի վերայ տէրութեան եւ իշխանութեան հօրն, որք գնացեալ ի դուռն արքունի՝ յանդիման եղեն աշխարհակալ Ղան Արղունին: Իսկ նորա յառաջ կոչեալ զաւագագոյն զԵլիկումն եւ կարգեալ զնա ի տեղի հօրն՝ կացուցանէ իշխան ի վերայ ամենայնին»[3]:

1 Գ. Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պռօշեանք, էջ 148

2 Ստ. Օրբէլեան, Պատմութիւն, էջ 212-313

3 Նոյն տեղում, էջ 315

Ինչպէս տեսնում ենք, տենախօսութեան մեզ հետաքրքրող երրորդ հատուածը համընկնում է ամբողջապէս այն ամենին, ինչ պատմում է Օրբէլեանը Տարսայիճի մահուան եւ նրա որդիների ժառանգական վէճերի մասին, ուստի մեզ հետաքրքրող տենախօսութիւնը գրուած եւ կարդացուած պէտք է լինի Տարսայիճի մահուան եւ Ելիկումի բարձրակալման միջեւ ընկած ամիսների ընթացքում, այսինքն՝ 1290 թուականին:

Դ հատուածը, նոր բան չաւելացնելով վերոյիշեալ արդիւնքներին, աւելորդ անգամ հաստատում է նրանց ճշտութիւնը: Հատուածում յիշատակուած «աստուածասէր եւ բարիանուն» պարոնները ոչ այլ ոք են, եթէ ոչ Պռօշ Խաղբակեանի որդիները՝ Պապաք (+1298) եւ Ամիր Հասան Ա-ն (+1292), որոնք բազմաթիւ այլ աղբիւրներում եւս յիշւում են միասին, այսպէս՝ 1288 թուին գրուած մի արձանագրութեան մէջ կարդում ենք.

«Ի թուականիս Հայոց ՉԼԷ յիշխանութեան Պապաքին եւ Ամիր Հասանայ, ես Սարգիս եւ որդի իմ Պետրոս շինեցաք զաղբիւրս եւ կանգնեցաք զխաչս...»[1]:

Գ. Յովսէփեանը «Խաղբակեանք եւ Պռօշեանք» իր աշխատութեան մէջ յայտնում է, որ «Էջմիածնի Մատենադարանի N 734 խառն գրչութեամբ ձեռագրի մէջ մի հատակտոր (fragment) կայ, ամենայն հաւանականութեամբ՝ Գլաձորի դպրոցականներից մէկի աշխատութեան մաս, որի վերջաւորութիւնը բարեմաղթութիւն է Խաղբակեանց կամ Պռօշեանց տոհմի ժամանակակից իշխանների՝ Ամիր Հասանի եւ նրա եղբայրների հասցէին»[2]:

Յովսէփեանի հրատարակած փոքրիկ հատուածն այդ fragment-ից ոչ մի կասկած չի թողնում, որ այն նոյնպէս Գլաձորի համալսարանի համար ըստ երեւոյթին աւանդական դարձած աւարտական մի տենախօսութեան մաս է, որը բարեբախտաբար չի աղճատուած որեւէ խմբագրի կողմից:

Ունենալով Ամիր Հասան Բ-ի մասին յիշատակութիւն՝ այն գրուած կարող է լինել միայն Եաչի մահուանից (1317 թ.) յետոյ, ուստի, ամփոփելով տենախօսութիւնների գրութեան ժամանակի մասին մեր խօսքը, կարող ենք հաստատապէս պնդել, որ նրանք գրուել են Գլաձորեան համալսարանի ամենափայլուն շրջանում, երբ համալսարանը վարում էր «վարդապետաց վարդապետ» Եսայի Նչեցին:

Այս եզրակացութիւնից յետոյ պարզ են դառնում տենախօսութիւնների՝ սիրով եւ պատկառանքով լի այն տողերը, որ ուղղում են իրենց հոգեւոր հօրը համալսարանաւարտները: 45ա էջից սկսուող տենախօսութեան հեղինակը սիրելի ուսուցչին ուղղած շնորհակալական խօսքը սկսում է այսպէս.

«...Արդ, երկեւղ եւ զարհուրումն պաշարէ զիս, խաւմի հոգի իմ, եւ դողան ոսկերք իմ, տարակուսին միտք իմ եւ խորհուրդ իմ, ընդարմանա շրթունք իմ, եւ կապի լեզու իմ... աչք իմ շրտնու. ճառագայթից սորա եւ ափ իմ ոչ կարէ ըմբռնել զսա. Թողուլն անբանութիւն է, եւ արժեկութեան բան փառաց սորա ոչ ունին միտք իմ: Եւ զտանիմ բիւրապատիկ պարտուց ներքոյ, զի ի քեզ անկայ յորովայնէ, հա՛յր, քեւ մեծացա եւ զարդացա եւ քեւ ի չափ հասա: Ձեռք քո աշխատասէր սնուցին զիս ի Քրիստոս հոգեկանաւք եւ մարմնականաւք ուսմամբ. աչք քո քաղցրահայեաց լուսաւորեցին զիս, բանք քո բարի առաջնորդեցին ինձ... հեզ եւ մարդասէր հոգի քո հանկոյց զիս...» եւ

1 Ղ. Ալիշան, Սիսական, էջ 175

2 Գ. Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պռօշեանք, էջ 200

այլն:

Բազմաթիւ նման շնորհակալութիւններից եւ բարեմաղթութիւններից, որոնք հանդիպում են ատենախօսութիւններում՝ ուղղուած րաբունապետին, բերենք նաեւ 53ա էջից սկսուողի համապատասխան հատուածը.

«Ո՛վ, հայր հոգեւոր,– բացականչում է ատենախօսը,– երկրայս գոմ, թէ զի՞նչ ասացից զքեզ. արեգա՞կն, եւ ահա զտուն միայն լուսաւորէ: Եւ թէ աղբի՞ւր, երբեմն յարտաքին հեղեղաց եւ ի գազանաց կոխելով՝ պղտոր իմն գործի: Եւ թէ դրա՞խտ յոգնապտուղ՝ ի ձմերան եղանակին խամրի: Այլ սեղան առատացից հոգեւոր հացին, որ մինչ առատաբար բաշխես կերողաց՝ եկեղեցականաց եւ աշխարհականաց, իշխանաց եւ ռամկաց եւ ամենայն աստուածային ժողովրդոց: Եւ իմ յետ Աստուծոյ երախտաւոր, կարեկից եւ ցաւակից, յանձանձիչ եւ մխիթարիչ՝ ողո(ր)մացեալն Աստուած պատուեսցէ զերիտասարդութիւն քո եւ զվարձս աշխատութեան քո ընդ յառաջնոց վարդապետացն տացէ՝ ընդ (Յ)ովհաննու, Բարսղի, Կիւրղի եւ Աթանասի...»[1] (էջ 55ա):

Աւարտողները չեն մոռանում իրենց բարեմաղթութիւններում յիշել նաեւ «գիտնական եւ գարդինական» մեւս «բարունիներին», իրենց «ալեւք պատուելոյք եւ իմաստուք ծերունիք» դաստիարակներին եւ սնուցող հայրերին, որոնցից միայն երկուսի՝ Տիրատուր եւ Դաւիթ վարդապետների անուններն են պահպանուել մեր աղբիւրներում: Տիրատուրը յայտնի է N 7823 գրչագրի «Յաղագս արեւելեան վարդապետաց» յօդուածից՝ որպէս Յովհ. Որոտնեցու ուսուցիչներից մէկը: Ղ. Ալիշանին յայտնի է հանելուկների հեղինակ «Տիրատուր վարդապետ մը ԺԴ դարու», որ ամենայն հաւանութեամբ նոյն Յովհ. Որոտնեցու ուսուցիչն է[2]:

Համալսարանի ամենահեղինակաւոր դասախօսը Եսայի Նչեցուց յետոյ Դաւիթն էր, որը նոյնպէս ստորագրել է Ստեփանոս Օրբէլեանի՝ Գրիգոր Անաւարզեցի կաթողիկոսին ուղղած դաւանաբանական յայտնի գրութիւնը՝ որպէս «Նուաստ ոգի, քարոզ բանի եւ վարդապետ Հայաստանեայց (այսպէ՛ս) եկեղեցւոյ...»[3]:

Մնում է պարզել եւս մի խնդիր. արդեօք այս աւարտական ատենախօսութիւնները յատուկ էին միայն Գլաձորի՞ համալսարանին, թէ՞ այդ աւանդոյթը գալիս է Հայաստանի աւելի հնագոյն ուսումնական հաստատութիւններից:

Մեր Մատենադարանի N 3276 գրչագրում, Մխիթար Գօշի արժէքաւոր եւ ցարդ անյայտ ճառերից ու մեկնութիւններից անմիջապէս յետոյ, պահպանուել է մի հատուած իմն վարդապետի ուղղուած գովեստի արտայայտութիւններով, որոնք յաճախ բառացիօրէն համընկնում են գլաձորեան աւարտական ատենախօսութիւնների՝ Եսայի Նչեցուն ուղղուած համանման արտայայտութիւններին:

Գտնուելով Գօշի աշխատութիւններին կից, այն կարող է պատկանել նրա աշակերտներից որեւէ մէկի գրչին, սակայն կարող է նաեւ, որ աւելի հաւանական է, պատահականօրէն մտած

1 Այս հատուածը հետաքրքիր է նաեւ այլ տեսանկիւնով. պարզւում է, որ՝

ա) Եսային իր գիտութիւնն առատաբար բաշխում էր թէ՛ հոգեւորականներին եւ թէ՛ աշխարհականներին՝ իշխաններին եւ ռամիկներին.

բ) ատենախօսութիւնը գրելու ժամանակ նա երիտասարդ էր («Աստուած պատուեսցէ զերիտասարդութիւն քո»):

2 Ղ. Ալիշան, Յուշիկք..., հտ. Բ, էջ 124

3 Ստ. Օրբէլեան, Պատմութիւն, էջ 338

լինել այդ գրչագրի մէջ, որն, ի դէպ ասած, բազմազան նիւթերի ժողովածու է:

Ինչպէս առաջադրուած, այնպէս էլ այդ աւանդութեան՝ Որոտնեցու եւ Տաթեւացու համալսարաններում շարունակուած լինելու կամ չլինելու խնդիրները կլուծուեն միայն նոր տուեալների երեւան գալով:

***

Գլաձորեան աւարտական ատենախօսութիւնների մասին ամփոփ գաղափար տալու համար նպատակայարմար ենք գտնում համառօտ կերպով շարադրել խմբագրի կողմից համեմատաբար քիչ աղճատուած ատենախօսութեան հիմնական մտքերը: Ցաւօք սրտի, աղճատումներից համեմատաբար զերծ է մնացել այնպիսի մի ատենախօսութիւն, որը քիչ բանով է տարբերւում միջնադարում լայն տարածում գտած բարոյագիտական քարոզներից:

Ատենախօսութեան սկզբում հեղինակն օգնութեան է կանչում Սուրբ Հոգուն եւ Քրիստոսին («եկեսցէ յիս գթութիւնք քո Տէր Աստուած իմ Յիսուս»), որպէսզի բարեյաջող սկսի եւ աւարտի հրապարակային իր առաջին ելոյթը: Այնուհետեւ դիմում է Աստծուն՝ յայտնելով, որ ինքն իր ողջ կեանքում վայելել է Նրա գթութիւնն ու հովանաւորութիւնը, մինչեւ որ արժանի է համարուել անգամ բարձրագոյն պատուի՝ «կոչման վարդապետութեան». «յաղագս որոյ,– շարունակում է նա,– անվճար երախտեաց պարտական եղեալ», պատրաստւում է նախ նրան հատուցել «երախայրիս կալոյ իմո եւ հնձանի եւ զանդրանիկս բանական համարձակութեանս՝ զպտուղ շրթանց՝ խոստովանութեամբ հաւատոյ ուղիղ դաւանութեան...», ապա, շարադրելով իր դաւանանքը, որպէս Հայ եկեղեցու վարդապետ խնդրում է տալ իրեն «զլրումն շինուածոյ լայնութեան եւ երկայնութեան, խորութեան եւ բարձրութեան, Հին եւ Նոր Կտակարանաց... ընթանալ ինձ ի խորս անսահման ծովուն, բանալ զանդունդս գրոց եւ խոր իմաստից եւ անտուստ հանել արժանաւոր ինչ փարթամութիւն՝ յաւգուտ ինձ եւ Սիոնի որդոյ...»:

Այնուհետեւ յայտնում է, որ որպէս բնաբան իր ատենախօսութեան ընտրել է Պօղոս առաքեալի «Այլ եկեսցէ աւր Տեառն իբրեւ գող...» արտայայտութիւնը[1] եւ չափազանց պատկերաւոր ու գեղարուեստական դարձուածքներով յայտնում է, որ Տիրոջ Դատաստանի օրը պիտի գայ բոլորի համար անսպասելիօրէն, ինչպէս գող, «որ ի գիշերի, յանպատրաստից, մինչ ի քուն կայցէ տանուտէրն, ի վերայ հասանէ...», ուստի Դատաստանից որպէս արդար դուրս գալու եւ անդրաշխարհային երանութիւնները վայելելու համար անհրաժեշտ է «սիրտ սուրբ ունել եւ վարս պարկեշտս եւ զհոգի ուղիղ», լինել «պարկեշտս վարուք, մեղմ հայեցուածովք եւ անզբաղ մտաւք», /77բ/ չաղտեղուել «մեղաւք կամ ապականեալ չարաւահոտութեամբ... արբեցութեամբ կամ շւայտութեամբ», այլ լինել ըստ ամենայնի անբիծ եւ անարատ, իսկ՝

«Անբիծ եւ անարատ զկատարեալ առաքինին ասէ, որ ոչ խորշ ինչ մեղաց ունիցի եւ ոչ կարկամութեան, այլ յամենայնի լուսափայլ, ամենայնի սուրբ ի մեղաց... Անբիծ եւ անարատ այն է, որ ոք եւ ոչ միով իւիք իցէ մեղուցեալ, ոչ մեծ մեղաց, ոչ փոքրագունից, զի թէ ոք ազատ է պոռնկութենէ, եւ յարատ է աչքն՝ չէ անարատ եւ անբիծ, եւ թէ ոք ազատ է երգմնահարութենէ եւ ի ստախօսութենէ եւ ի մատնութենէ, բայց բամբասող կամ խեղկատակ կամ տրտնջող կամ առ ունկն ճառ (իմա՛ ունկնճառ) եւ չարախօս՝ ոչ է այնպիսին անբիծ եւ անարատ...» (էջ 79բ):

1 Ա Թես. Ե 2

Կատարեալ գեղարուեստօրէն նկարագրում է բնութեան զարթօնքը, գարունն իր ծաղիկներով, նորածիլ բոյսերով, որպէսզի, զուգահեռ անցկացնելով իրական եւ անդրաշխարհային կեանքի միջեւ, շեշտի վերջինիս կատարելութիւնն ու գեղեցկութիւնը.

«Եւ եթէ երկիրս այս անցաւոր է,– գրում է նա,– այսպէս զւարճացուցանէ զմեզ, եւ երկին Հասակ օդով՝ երեւե(ա)լ գեղեցիկ եւ վայելուչ եւ ցանկալի, եւ արեգակն վճիտ լուսով պայծառանա, եւ լուսինն եւ պարք աստեղացն զբոլոր գիշերն ջահաւորեն, եւ երկիր ի գարնանային Հասանելով ժամանակ խնդամտաբար եւ ծիծաղական զինքն՝ ի ձեռն ծաղկանցն ցուցանելով գեղեցիկ... տեսողացն երեւի, եւ խնդութեան պատճառ<ք> լինի ծառաւք եւ ծաղկաւք եւ բուսովք զարդարեալ... ապա զի՞նչ իմանամք եւ կամ զի՞նչ զմտաւ ածեմք զնոր երկին... եւ երկիր...» (էջ 79ա):

Ընդհանրապէս տեղին է նշել, որ աւարտական բոլոր ատենախօսութիւնները գրուած են գեղարուեստական մեծ կատարելութեամբ, անգամ ամենավերացական գաղափարները եւ մտքերը շարադրուած են կեանքից վերցուած պատկերների, բնութեան նկարագրութիւնների Հետ շաղաՀիւսուած: Ատենախօսութիւնների մեծ մասը կարդացւում է որպէս գեղարուեստական արձակ ստեղծագործութիւններ:

Ըստ երեւոյթին, գլաձորեան Համալսարանում լուրջ ուշադրութիւն էին դարձնում իրենց սաների քարոզչական ապագայի վրայ եւ վարժեցնում նրանց իրենց ատենախօսութիւնները գրաւիչ ու Հետաքրքիր դարձնելու գործում՝ առաջնորդուելով Հաւանաբար այդ ժամանակ արդէն գոյութիւն ունեցող «Վասն քարոզի եւ քարոզչաց» խրատական յօդուածով[1]: Վերոյիշեալ յօդուածը, որ պարունակում է տասը խորՀուրդներ՝ քարոզը Հետաքրքիր, բովանդակալից եւ ունկնդիրներին մատչելի դարձնելու մասին, առաջարկում է երկար քարոզելու դէպքում «ի յուրախացնող եւ ի սիրտ բացող բանները զրուցէ, որ մարդկանց սիրտն չի մխորի եւ չի ձանձրանայն»[2]: Ատենախօսը Հետեւել է այս խորՀրդին: Բարոյական իր Հետաքրքիր խրատներից ու դատողութիւններից յետոյ նա յայտնում է, որ «այսչափ ասացեալքս բաւականասցի ի մեր նւաստութենէս», եւ Համեստօրէն շարունակում է. «եթէ էր ինչ եւ արդասաւոր եւ մաւտ ի լաւն՝ Աստուծոյ (է) շնորՀ եւ ձերոց (ունկնդիրների) յաւժարամտութեան եւ աղօթից, ապա թէ արտաքո լաւին եւ յոյժ Հեռի ի ճշմարտութենէն՝ այն մեր Հեղգութեանս եւ փոքրատար ամանի մտացս...» (էջ 80ա):

Ատենախօսութեան վերջում օրՀնութիւնների երկար մի շարք է բերուած, ուր յիշւում են Համարեա Հայ եկեղեցում պաշտուող բոլոր սուրբերն ու սրբութիւնները.

«ԱւրՀնեալ ես դու, Ամենասուրբ Երրորդութիւն... աւրՀնեալ ես դու, ամենակալդ Աստուած...» եւ այլն եւ այլն:

ԱյնուՀետեւ գալիս են բարեմաղթութիւններ՝ ուղղուած Համալսարանի Հովանաւոր բարեպաշտ իշխաններին, վանական միաբանութեան անդամներին, գիտական ուսուցիչներին, աշակերտակիցներին եւ ատենախօսութիւնն ունկնդրելու Հաւաքուած Հանդիսականներին.

«...Թագաւորն թագաւորաց եւ կեանքն աշխարՀի Քրիստոս զօրացուսցէ... զամենայն թագաւորսն քրիստոնէից եւ յաղթօղս արասցէ ամենայն թշնամեաց... աւրՀնեսցէ... զսուրբ ուխտս զայս եւ զընակիչ(ս) սորա... եւ զմիաբան եղբայրութիւնս

[1] Յօդուածը մեզ ծանօթ է մեր Մատենադարանի N 771 գրչագրից (էջ 261-64), վերնագրել ենք մենք:

[2] Նոյն տեղում, էջ 264

զայս. եւ զգիտնական եւ զարդիւնական սուրբ բաբունիս, զՀայր եւ զՀոգաբարձու եւ զառաջնորդ սրբոց, զփակակալ սուրբ եկեղեցւոյս եւ զամենայն բանաւոր զարդիւնաւորս եւ զմիաբանքն՝ աւրՀնեսցէ Քրիստոս Աստուած ամենայն Հոգեւոր աւրՀնութեամբ, որ ոչ անցանէ... Եւ աղօթիւք ձերօք եւ բարեխօսութեամբ ամենայն սրբոց, մեզ եւ մերոցն սնուցողաց եւ բարեկամաց եւ երախտաւորացն՝ մեռելոց եւ կենդանեաց լիցի գտանել մասն ողորմութեան յաւուրն դատաստանի ի կարե(ա)ց ժամուն, ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրՀնեալ յաւիտեանս, ամէն»:

Այս եւ առաւել չափով նաեւ միւս ատենախօսութիւնների բնորոշ գծերից մէկն էլ նրանց Հեղինակների առանձնակի սէրն է դէպի փիլիսոփայութիւնը, որի շնորՀիւ եւ փիլիսոփայական գաղափարութիւնների առատութիւն է նկատւում նրանց ատենախօսութիւններում: Գլաձորեան Համալսարանականների այդ սէրը մեզ Համար Հասկանալի է ու բնական:

Այսպէս օրինակ՝ 49ա էջից սկսուող ատենախօսութեան մէջ ժամանակի գիտութեան կողմից ընդունուած՝ «արուեստ» Հասկացողութեան բնորոշումը ձեւակերպուած է Հետեւեալ յստակ նախադասութեամբ.

«Արուեստ է գումարումն Հաւաքման յառաջակիրթ արանց, զոր գտեալ եւ կրթեալ փորձիւ թողին այնոցիկ, որ զկնի գալոց էին, վասն պիտանացու ինչ իրաց եւ կարեաց աշխարՀայնոց» (էջ 49բ):

Վերը շարադրուած ատենախօսութեան մէջ արարչութեան մասին կայ Հետեւեալ Հետաքրքիր դատողութիւնը.

«Արար Աստուած զերկինս եւ զՀրեշտակս, զլոյս եւ զերկիր եւ զջուր եւ զՀուր եւ զաւդ, եւ են[1] արարածք մեծամեծք եւ գլխաւորագոյնք, իսկ այլ արարածքդ ծայրք են եւ ծնունդք ի սոցանէ յառաջ եկեալք եւ շարախառնեալք ի զանազան կերպս եւ ի տեսակս, որպէս Հուր, զի ծնաւղ է լուսոյ եւ ցուցիչ բնութեան նորա, զի առանց Հրոյ լոյս ոչ երեւի. եւ երկիր ծնաւղ է ջրոյ եւ աւդո եւ պատճառ գոյացութեան նոցա...» (էջ 75բ):

Կենդանական աշխարՀի բազմակերպութիւնն ու բազմատեսակութիւնը դիտելով որպէս Հիմնական, Աստուծոյ կողմից ստեղծուած, սակաւաթիւ «մեծամեծ եւ գլխաւորագոյն» արարածների զարգացման արդիւնք՝ ատենախօսութեան Հեղինակը, անկախ այն բանից, թէ տուեալ դէպքում շարադրում է իր սեփական կարծիքը, թէ կրկնում է մի ուրիշին, Հակադրուելով Աստուածաշնչին, յայտնում է ԺԳ դարի Համար չափազանց առաջադէմ Հայեացք՝ բնութեան եւ կենդանական աշխարՀի բազմազանութեան պատճառների բացատրման տեսակէտից:

Այսպիսով, գլաձորեան Համալսարանականների աւարտական ատենախօսութիւնների երեւան գալով մասամբ լրացւում է այն բացը, որ ցարդ գոյութիւն ունէր մեր միջնադարեան Համալսարանների գործունէութեան ու ներքին կեանքի ճանաչման բնագաւառում: Իսկ մեր մատենագրութեան պատմութիւնը Հարստանում է պատմագեղարուեստական մեծ արժէքներ ունեցող մի ժանրով:

Գլաձորեան Համալսարանը՝ ատենախօսութիւնների Հեղինակների «մայրն իմաստից»՝ իր

[1] «Եւ են» բառերը դժուարութեամբ են ընթերցւում գրչագրում, թերեւս նպատակայարմար լինի այն ուղղել «որ են» բառերով, որ աւելի յստակ կդարձնէր նախադասութեան իմաստը:

«գիտնական եւ արդիւնական» վարդապետներով, միջնադարեան քաղաքական, գիտական եւ եկեղեցական կեանքում ամենաառաջնակարգ դեր խաղացած շրջանաւարտներով, յառնում է մեր առաջ որպէս ուսումնական մի հաստատութիւն, որ, հիմնադրուած լինելով գերմաներէն լեզուով ամենահին համալսարանից (Պրահա) շուրջ ութսուն տարի առաջ եւ համարեայ համակակից լինելով եւրոպական գիտական մտքի ամենահեղինակաւոր հաստատութիւններից մէկին՝ Փարիզի համալսարանին, մրցում է նրա հետ թէ՛ իր կատարած մշակութային եւ կրթական դերով, թէ՛ թողած մատենագրական հարուստ ժառանգութեամբ եւ թէ՛ դասաւանդուած գիտութիւնների բազմազանութեամբ ու խորութեամբ:

ՄԱՏԹԷՈՍ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ԿԵԱՆՔՆ ՈՒ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ*

Հայ միջնադարեան մատենագրութեան պատմութեանը նուիրուած ձեռնարկներում եւ բանասիրական աշխատութիւններում դեռեւս շատ կան թռուցիկ յիշատակուած այնպիսի գործիչների անուններ, որոնք, ճանաչուած ու անուանի լինելով իրենց ապրած ժամանակներում, այժմ լիակատար մոռացութեան են մատնուած: Այդպիսի գործիչներից մի քանիսի ձեռագիր աշխատութիւնների ուսումնասիրութիւնից ստացուած արդիւնքները վկայում են այն մասին, որ մեր ժողովրդի պատմութեան հետ կապուած մի շարք չլուսաբանուած ու կնճռոտ հարցեր հնարաւոր է պարզաբանել հէնց այդ մոռացուած հեղինակների աշխատութիւնների միջոցով:

Այդպիսի մի մատենագիր է ԺԴ դարի վերջին եւ ԺԵ դարի առաջին տասնամեակներում ապրած ու ստեղծագործած Մատթէոս Ջուղայեցին: Միջնադարում Մատթէոս Ջուղայեցին համարուել է նշանաւոր հայ մեկնիչներից մէկը. նրա աշխատութիւնները զգալի չափով ընդօրինակուել ու տարածուել են ե՛ւ Հայաստանում, ե՛ւ հայաշատ գաղթավայրերում:

ԺԷ դարի հեղինակ Վարդան Բաղիշեցին «Ով ոք են արարեալ զլուծմունս եւ զքաղուածոյս Աստուածաշունչ Գրոց» ցուցակի մէջ, Գր. Տաթեւացու եւ Առաքել Սիւնեցու աշխատութիւնների թուարկումից անմիջապէս յետոյ, տեղ է յատկացնում Մատթէոս Ջուղայեցուն եւ տալիս նրա կարեւոր աշխատութիւնների ցանկը. այսպէս՝ «զՂուկասու գլխոյ քաղուածուն եւ զՅոհաննու գլխոյ փոքր քաղուածուն. զԳործոց քաղուածուն եւ Ծ քարոզ Մատթէոս Ջուղայեցին է արարեալ՝ աշակերտ Գրիգորի Տաթեւացոյն»[1]:

1750 թուականին Կ. Պոլսում լոյս է տեսնում Մատթէոսի «Վասն քարոզութեան բանի՝ առեալ ի վարդապետութենէ սուրբ հօրն Եւագրեայ...» աշխատութիւնը, հրատարակիչ Յովհաննէս դպրի ստեղծած՝ «Գիրք ութն խորհրդոց մեղաց՝ արարեալ սրբոյ հօրն Եւագրեայ եւ հաւաքեցեալ ի մի յոգնաջան երկամբ Մատթէոսի վարդապետի բանասիրի» խորագրով:

Հանրայայտ է, որ կաթոլիցիզմի եւ հայ ունիթոռների դէմ յատկապէս ուժեղ պայքար ծաւալուեց Հայաստանում ԺԴ դարի երկրորդ կիսամեակում Տաթեւի դպրոցի հիմնադիրներ ու ղեկավարներ Յովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթեւացու եւ նրանց բազմաթիւ աշակերտների կողմից: Այդ աշակերտներից էր նաեւ Մատթէոս Ջուղայեցին, որի մասին «Պատմութիւն հայերէն դպրութեան» երկհատորանոց ընդարձակ աշխատութեան մէջ Գ. Զարբհանալեանն անհրաժեշտ է համարել գրել ընդամէնը մի-երկու տող[2]: Իսկ բանասէր Բ. Սարգսեանը համարել է նրա լեզուն «գռեհիկ», մեկնաբանութիւնները՝ «ցամաք» եւ յայտարարել, որ նա իբր Տաթեւի դպրոցից դուրս «բազմաթիւ ընթերցողներ ունեցած պիտի չըլլայ»[3]:

Գ. Զարբհանալեանի աշխատութեան առաջին տպագրութիւնից (1878 թ.) անցել է շուրջ 80 տարի, բայց, ցաւօք, շատ աննշան բան է արուած Մատթէոսի կենսագրութեան եւ նրա

* «Բանբեր Մատենադարանի», N 3, 1956, էջ 57-84

1 Մատենադարան, ձեռ. N 8444, էջ 182ա-182բ

2 «Մատթէոս վարդապետ վեցօրեայ արարչութեան վրայ Մեկնութիւն մը (ունի), յիսուն այլ եւ այլ Քարոզք, յորոց երեք միայն հասած են առ մեզ՝ Աւետարանչաց ու Գործոց համառօտ մեկնութիւններ, Եւագրի գրոց քաղուած մը» («Պատմ. հայերէն դպրութեան», Բ, էջ 219-220):

3 «Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացւոյ վարք եւ մատենագրութիւնք», Վենետիկ, 1907, առաջաբանը՝ Բ. Սարգսեանի, էջ ԺԽԸ-ԺԽԹ

թողած ձեռագրական հարուստ ժառանգութեան ուսումնասիրման ուղղութեամբ։ Միակ ուշադրութեան արժանի աշխատանքն այս բնագաւառում պէտք է համարել հանգուցեալ մեծանուն ու բազմավաստակ հայագէտ Հ. Աճառեանի «Հայոց անձնանունների բառարանի» 3-րդ հատորում Մատթէոսի մասին գրուած յօդուածը։ Այստեղ հայերէն ձեռագրերի հրատարակուած ցուցակներից հաւաքուած են նրա աշխատութիւնների վերնագրերը, մի երկու խօսք է ասուած նրա կենսագրութեան մասին, ինչպէս նաեւ նշուած են հայագիտական բոլոր այն փոքրաթիւ ուսումնասիրութիւնները, որոնցում այս կամ այն առիթով յիշատակուած է Մատթէոսի անունը։

Մեր սոյն համառօտ հաղորդմամբ փորձում ենք Մատթէոս Ջուղայեցու մեզ հասած բոլոր աշխատութիւնների եւ նրա մասին առկայ մատենագրական տուեալների օգտագործմամբ առաջին քայլն անել շատ կողմերով ուշադրութեան արժանի եւ հետաքրքրաշարժ այդ մատենագրի կեանքն ու գործունէութիւնն ուսումնասիրելու ուղղութեամբ։

Մատթէոսի ծննդեան թուականի մասին սկզբնաղբիւրները չեն պահպանել որեւէ տուեալ։ Որպէս ճանաչուած մեկնիչ նա հրապարակ է իջել ԺԴ դարի 90-ական թուականների սկզբներին, ուստի կարելի է ենթադրել, որ ծնուած պէտք է լինի նոյն դարի 50-ական թուականներին։

Բ. Սարգսեանը Եւագր Պոնտացու մասին գրած ուսումնասիրութեան մէջ, հարեւանցիօրէն անդրադառնալով Մատթէոսին, «հաւանօրէն ծննդեամբ Երզնկացի» է համարում նրան[1]։ Սակայն մեզ յայտնի բոլոր աղբիւրները[2] միաբերան վկայում են այն մասին, որ Մատթէոսը Ջուղայեցի է։

ԺԴ դարում հին Ջուղան փոքրիկ մի գիւղաքաղաք էր։ Գտնուելով Արաքսի նշանաւոր այն կամրջի մօտ, որով անցնում էր միջազգային նշանակութիւն ունեցող քարաւանային ճանապարհներից մէկը[3], պէտք է ենթադրել, որ դեռեւս այդ ժամանակ Ջուղան այս կամ այն չափով վերածուել էր առեւտրական մի հանգրուանի, իսկ ջուղայեցիները, որպէս առեւտրականներ ու միջնորդներ, մասնակցում էին այդ առեւտրին։ Թերեւս նաեւ դրանով պէտք է բացատրել այն հանգամանքը, որ Մատթէոսի աշխատութիւնները լի են առեւտրի ու արհեստագործութեան մասին ուշագրաւ բազմաթիւ տուեալներով։

Մատթէոսի տարբեր աշխատութիւնների մէջ գրանցուած են տուեալներ, որոնք հնարաւորութիւն են տալիս եզրակացնելու, թէ մեր հեղինակն իր կեանքի առաջին շրջանում (մինչեւ Տաթեւում հաստատուելը) շրջագայութիւններ ու ճամփորդութիւններ է կատարել Հայաստանում եւ հարեւան երկրներում։

Աւելորդ չի լինի ծանօթանալ նրա աշխատութիւնների վերը ակնարկուած տուեալների հետ։

1 «Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացւոյ վարք եւ մատենագրութիւնք», էջ ՃԽԸ

2 Թովմա Մեծոփեցի, էջ 50-51. Վ. Բաղիշեցի, ձեռ. N 8444, էջ 182ա-182բ եւ այլք

3 Այդ կամրջի մասին 16-րդ դարի քուրդ պատմիչ Շարաֆ-բէկը գրում է հետեւեալը. «Կամուրջը հիմնուած է տաշած ժայռի վրայ անխախտ ամրութեամբ, վերեւը՝ զարմանալի հարթ, եւ քարերը միացած են այնպէս կանոնաւոր եւ ամուր կերպով, որ ամենահնարագէտ ճարտարապետը պէտք է զարմանայ։ Կամարներն այնքան բարձր ու երկայն են, որ հիմի հիմքերի սրունքը 60, միւսինը 50 պարսկական բազուկ է։ Կամարի ստորին մասումը շինուած է քարուանսարայ, իսկ երկու ծայրումը՝ դռներ՝ զարմանալի գեղեցկութեամբ» (ՀԱ, 1899, էջ 66)։

Այսպէս, Կոստանդնուպոլսում լինելու մասին Ջուղայեցին խօսում է իր քարոզներից մէկում, որը կրում է «Քարոզ սուրբ Խաչի...» խորագիրը։ Այստեղ նա պատմում է, թէ ինչպէս արաբական արշաւանքների ժամանակ Կ. Պոլիսը փրկուել է կործանումից, եւ աշխատում է համոզել իր ունկնդիրներին, որ այդ կատարուել է սուրբ Խաչի զօրութեամբ։ Այս կապակցութեամբ ի միջի այլոց նա ասում է նաեւ, որ «իմ ականատես եղեալ սուրբ տեղեացն (Կ. Պոլսի) եւ համբուրեալ»[1]։

«Բան յԱւետարանէն Յովհաննու» աշխատութեան մէջ Մատթէոսն աշխատում է բացատրել «օն» ձայնարկութիւնը եւ յայտնում է, որ դա ըստինքեան բան չի նշանակում, «զի բառ է երկրէ, որպէս Սեբաստացիք կան ասեն, եւ Կարնոյ քաղաքացիք՝ տի, արճիշեցիք՝ անէ, իսկ խլաթեցիք, որ է Բզնունիք՝ օ ասեն յամենայն բանի»[2]։

Դժուար է պնդել, բայց հաւանական է ենթադրել, որ մեր հեղինակն անձամբ եղել է Սեբաստիա, Կարին, Արճէշ եւ Խլաթ քաղաքներում եւ իր այցելած վայրերում ուսումնասիրել է ժողովրդի լեզուն, բառ ու բանը։

Նրա քննասէր ու խուզարկու բնաւորութեան մասին աւելի ցայտուն վկայութիւն է պահպանուած «Քննութիւն Գործոց առաքելոց» աշխատութեան մէջ։ Այստեղ առիթ է ներկայանում խօսելու դողի (բորոտութիւն) հիւանդութեան մասին։ Մոկաց երկրում դողի ցաւով տառապողներ շատ տեսնելով եւ ձգտելով որոշել դրա յարուցիչները՝ Ջուղայեցին ուշադրութիւն է դարձրել մոկացիների սննդի վրայ եւ, պարզելով, որ նրանց սննդի մէջ մեծ տեղ է բռնում ծանրամարս կորեկի հացը, մեղրն ու ընկոյզը, եկել է այն եզրակացութեան, որ «այս (ցաւն) անկի ի սաք կերակրոյ՝ ի մեղրէ եւ յընկուզոյ եւ ի կորեկէ հացոյ։ Եւ այս է պատճառն Մոկաց երկրին, յորում բազումք դողիք լինին»[3]։

Վերոյիշեալ «Քննութիւն Գործոց առաքելոց» աշխատութեան մի այլ հատուածից, որի հետ առիթ կունենանք ծանօթանալու այլ կապակցութեամբ, պարզւում է նաեւ, որ մեր հեղինակը հաւանօրէն շրջագայել է նաեւ Խաչէնի շրջաններում։ 1392 թ. եղել է Մակուում. Մխիթարիչ Ապարանեցին այդ թուականին Մակուում գրած մի ձեռագիր յիշատակարանում վկայում է. «Ի գեօղս որ կոչի Մակու, առ պարոնութեամբ տէր Զաքարիայի մեծ կրաւնաւորի եւ բարունապետիս Մատթէոս վերակոչեցեալ, ի թուականութեան մարդեղութեան Տեառն ՌՅՂԲ» («ԺԴ դարի յիշատակարաններ», հտ. Ա, էջ 61)։

1393 թուականից մէկ կամ մի քանի տարի առաջ Մատթէոսը եղել է նաեւ Աղթամարում[4]։ Նրա աշխատութիւնների աւելի մանրակրկիտ հետազօտութեան ճանապարհով թերեւս կարելի կլինի ընդարձակել մեր հեղինակի ճանապարհորդութիւնների շրջանակները[5]։ Սակայն մէջբերուած տուեալներն էլ միանգամայն բաւարար են ցոյց տալու համար, որ յանձին Մատթէոս Ջուղայեցու մենք ունենք մի մատենագիր, որը բնաւ չի բաւարարուել վանական սահմանափակ «իմաստութիւններով», այլ, շրջագայելով Հայաստանում եւ Հայաստանի սահմաններից դուրս, շփուել է աշխատաւոր ժողովրդի հետ, ծանօթացել է նրա նիստուկացին եւ զբաղմունքներին, ուսումնասիրել է կեանքն իր տարբեր կողմերով եւ, ինչպէս կտեսնենք ստորեւ,

1 Ձեռ. N 2229, էջ 230բ

2 Ձեռ. N 5871, էջ 34ա

3 Ձեռ. N 1402, էջ 131ա

4 Ձեռ. N 969, էջ 107բ

5 Ենթադրում ենք, օրինակ, որ նա պէտք է եղած լինի նաեւ Հռոմում։

իր աշխատութիւնների մէջ լայնորէն օգտագործել է իր մթերած գիտելիքներն ու ուշագրաւ գիտողութիւնները:

Որտեղ է ստացել Մատթէոս Ջուղայեցին իր նախնական կրթութիւնը՝ չգիտենք: Պարզ է, սակայն, որ նա իր երիտասարդական տարիներին ուսումնասիրել է ոչ միայն հայ մատենագրութիւնը, այլ նաեւ տիրապետել է արաբերէն գրաւոր լեզուին, ծանօթացել է մահմեդականների կրօնական գրքերին այն աստիճան, որ անհրաժեշտութեան դէպքում կարողացել է քաղուածքներ անել նրանցից[1] եւ տալ խրթին մեկնաբանութիւններ:

Մատթէոսը բարձրագոյն կրթութիւն է ստացել Յովհան Որոտնեցու եւ Գրիգոր Տաթեւացու համալսարաններում. «Աշակերտ տեառն Յովհաննու Որոտնեցւոյն», «նուաստ եւ յետին աշակերտի եռամեծացն Յովհաննու եւ Գրիգորի», «նուաստ Մաթէոսի վարդապետի՝ աշակերտի.եռամեծին Գրիգորի», «յաշխատութենէ վարժապետին իմո Գրիգորի մեծի» եւ նման այլ արտայայտութիւններով, որ հանդիպում են Մատթէոսի աշխատութիւնների վերնագրերում եւ յիշատակարանների մէջ, նա իր յարգանքն է մատուցում իր նշանաւոր ուսուցիչներ Յովհ. Որոտնեցուն եւ Գր. Տաթեւացուն:

1391 թուականին Երնջակի Ապրակունեաց վանքում Ջուղայեցին շարադրում է թուական ունեցող իր աշխատութիւններից անդրանիկը՝ «Մեկնութիւն Ղուկասու Աւետարանին»: Պարզ է ուրեմն, որ Գ. Տաթեւացու մանկավարժական ինքնուրոյն գործունէութեան սկզբից (1386 թ.) ընդամէնը 4–5 տարի յետոյ մեր հեղինակն արդէն դուրս էր եկել աշակերտական շրջանից եւ շարադրում էր մեկնողական աշխատութիւններ:

Նոյն այս տարիներին (1393-ից առաջ, հաւանաբար 1392 թուականին) լինելով Ախթամարում՝ Մատթէոսը վէճի է բռնուել մահմեդական մի դանիշմանի հետ եւ շարադրել է այդ վէճի բովանդակութիւնը՝ ի խնդրոյ Շիրխան գիւղի տանուտէր Աբրաղամի՝ «Վասն հարցման անօրինաց. գանազան պատասխանիք» խորագրով:

Վերոյիշեալ փաստերը վկայում են այն մասին, որ մեր հեղինակը ԺԴ դարի 90-ական թուականների հէնց առաջին տարիներին, դուրս գալով ուսումնառական շրջանից, ճանաչուած վարդապետ էր Սիւնիքում եւ Վասպուրականում:

Ծանր տարիներ էին դրանք հայ ժողովրդի համար: Լանկ-Թամուրի արիւնարբու զօրքերն ասպատակում էին Հայաստանի նահանգներն ու շրջանները, սպանում ու գերեվարում խաղաղ բնակչութեանը, թալանում եւ աւերում գիւղերն ու քաղաքները: «Ի ժամանակի նեղութեան, ուր աւերեալ քակեաց դաշխարհս ամենայն հուրն հարաւային Թամուր կոչեցեալ»,– գրում է այդ մասին Մ. Ջուղայեցին 1395 թուականին Տաթեւի վանքում[2]:

Թամուրի զօրքերն ամբողջ 13 տարի («յՊԼԵ ամէն մինչեւ ի ՊԽԸ ամ թուականին») պաշարման մէջ էին պահում Երնջակի անառիկ բերդը, ուր գտնւում էր Ջելալբեան Ահմեդի որդի սուլթան Թահիրը: Ուշագրաւ է, որ Երնջակի բերդում պաշարման մէջ է եղել նաեւ Մատթէոս Ջուղայեցին: Այնտեղ է շարադրել նա Յակոբ Մծբնայ հայրապետին նուիրուած մի գեղեցիկ տաղ, որտեղ ակնարկներ կան նաեւ հայ ժողովրդին հասած ծանր հարուածների մասին.

1 Այդպիսի քաղուածքներ գտնում ենք նրա «Վասն հարցման անօրինաց» աշխատութեան մէջ. բերենք մէկ օրինակ. «Զայն որ ի ձեր մսաֆն գրած է ի իէ (27) վարազն, թէ Յիսէ ռահուլլահ եւ քալիմաթուհու...» եւ այլն (ձեռ. N 3854, էջ 298բ):

2 «ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», կազմ. Լ. Խաչիկեան, Երեւան, 1950, էջ 613

«Մեծի հանդիսի աւուրս
Առ քեզ պաղատիմ, Յիսուս,
Սուրբ ըզհայրապետն Յակոբ
Առ քեզ բարեխաւս ընկալ.
Աստանաւր վըտանկ հասեալ,
Ով սուրբ հայրապետ ընտրեալ.
Զորդիս քո գերի վարեալ,
Զտաւն քո հանդիսի ցըրւեալ...» եւ այլն[1]:

Երբ եւ որքան է Երնջակում պաշարման մէջ մնացել մեր հեղինակը՝ չենք կարող որոշել: Յայտնի է սակայն, որ 1393 թ. նա գտնւում էր Տանձափարախ անապատում՝ Տաթեւի վանքին դէմ առ դէմ, ձորակի միւս կողմը: Այստեղ «նստեալ լռիկ ի տան»՝ նա շարադրել է «Վասն քարոզութեան բանի» իր աշխատութիւնը: 1395 թ. նրան գտնում ենք Տաթեւում, ինչպէս ինքն է ասում՝ «պանդխտական կենօք». մի արտայայտութիւն, որը վկայում է այն մասին, թէ Մատթէոսն իրեն պատահական ու ժամանակաւոր հիւր էր համարում այդտեղ:

Սակայն, ըստ երեւոյթին, հէնց այդ թուականին նա մշտապէս հաստատւում է Տաթեւում եւ նշանակալից դեր է կատարում Տաթեւի համալսարանի կեանքում: Շուտով նա այնպիսի փորձառութիւն է ձեռք բերում դասախօսական ասպարէզում, որ մի քանի տարի անց Գ. Տաթեւացին նրան է արժանաւոր համարում՝ լինելու իր ժառանգորդը, եւ Մատթէոսն աշակերտների խնդրանքով եւ բոլորի հաճութեամբ նստում է «յաթոռ տէլէտութեան»[2], այսինքն՝ դառնում է Տաթեւի համալսարանի գլխաւոր վարդապետներից մէկը: Այս մասին շատ կողմերով հետաքրքրական իր յիշատակարանի մէջ տուեալներ է հաղորդում Թումա Սիւնեցի գրիչը Ծար գաւառի Քարավաճառ գիւղում 1402 թուականին: Նա գրում է, որ Գրիգոր Տաթեւացին, «ունելով որդի հարազատ եւ ժառանգ վարդապետութեան իւրոյ՝ զծաղկեալն ամենայն բարութեամբ եւ զարդարեալն ամենայն շնորհիւ՝ վարդապետական խոհեմութեամբ եւ փիլիսոփայական արհեստիւ՝ զախոյանն ընդդէմ հերձուածողաց՝ զվարդապետն Մատթէոս, զոր յայսմ ամի (=1402 թ.) կամակցութեամբ Սուրբ Հոգոյն եւ ջանիւ վարդապետին Գրիգորի եւ աղաչանաւք գրոց աշակերտաց անձանց նստաւ յաթոռ տէլէտութեան, զոր Տէր Աստուած վայելել տացէ եւ պահեսցէ զսոսայ հայր որդով բերկրեալ՝ պսակ պարծանաց կաթողիկէ եկեղեցւոյ»[3]:

1407 թուականի ինքնագիր մի յիշատակարանից պարզւում է, որ Մատթէոսը միաժամանակ վարում էր Տաթեւի վանքի վանահայրութեան պաշտօնը. «որ ի չար ժամու եղէ քաղաքապետ եկեալ ի սուրբ ուխտս Եւստաթէի»,– գրում է նա[4]:

Ժամանակի քաղաքական անցուդարձերի արժէքաւոր նկարագրութեամբ՝ Մատթէոսը մի այլ յիշատակարան է շարադրում նոյն՝ 1407 թուականին ամն Մըմբարաքշահի պատուէրով ընդօրինակած Աւետարանի վերջում: Նա յայտնում է, որ ձեռագրի ընդօրինակութիւնը կատարուել է «ի դառն եւ ի նեղ ժամանակիս, որում ազգն նետողաց անջինջ կորաւ, եւ

1 Ձեռ. N 425, էջ 46բ–47բ

2 Յուն. ՛ο τελειωτη΄ς – կատարեալ բառից:

3 «ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», մասն առաջին (1401–1450 թթ.), կազմ. Լ. Խաչիկեան, Երեւան, 1955, էջ 25

4 Նոյն տեղում, էջ 77

փոխանորդ նորին իշխեց աթոռոյս Ատրպատականի Թորգոմածին* Ղարա-Ուսուֆ անուամբ. որ եւ մարտեաւ երկու անգամ եւ յաղթահարեալ զոմն ի թոռանց չար գազանին Թամուրին՝ չարաբարու, անհեղատեսիլ եւ չարասիրտ՝ անուամբ Աբ[ուբ]աքր: Եւ այն եւս ի վերին խնամոցն ամենակարողին Աստուծոյ, որ ազատեաց աշխարհս ի յայն անիրաւ խնդրողացն, որ եւ զամենայն ազգ եւ զամենայն լեզու ի ներքո նոցա հնազանդ եւ գերի կային, որում ազատեաց զմեզ Փրկիչն Յիսուս Քրիստոս...»[1]:

Մատթէոսը, ինչպէս եւ ողջ հայ ժողովուրդը որոշ յոյսեր էին կապում Թամուրեանների պարտութեան հետ: Կարծում էին, թէ Ատրպատականում եւ Հայաստանում իշխանութիւնը գրաւած նոր տիրակալները բարուոքելու են ժողովրդի ծանր վիճակը: Սակայն բոլորի հետ մէկտեղ Մատթէոսը եւս շատ չանցած համոզուեց, որ անհիմն ու սին էին բոլոր այն սպասելիքները, որ ակնկալւում էին Կարա-Կոյունլուների յաղթութեան առնչութեամբ:

Քաղաքական խորին յուսախաբութիւն ու հոգեկան ծանր վիճակ էր ապրում 1410-1411 թուականներին Մատթէոս Ջուղայեցին:

Մռայլ գոյներով է նկարագրում իր ապրած օրերը մեր հեղինակը Գրիգոր Տաթեւացու թաղման կապակցութեամբ արտասանած դամբանականի մէջ, ինչպէս նաեւ իր գլուխգործոցը կազմող «Քննութիւն Գործոց առաքելոց» արժէքաւոր աշխատութեան ընդարձակ յիշատակարանում: Մէջբերում ենք մի ուշագրաւ հատուած այդ յիշատակարանից. «Ի սպառել ազգիս Հայկազեան եւ ի վերջին դարուս սաստկացեալ ոգւոց տարաժամ կորուսեալց՝ մեծի եւ փոքու, եւ ի ստորասուզեալ դասուն քահանայական եւ ի հարեալ ժանեաց բանսարկուին, յամս թուականի ՊԿ (1411), ի բռնակալութեան ազգին Թորգոմեան (իմա՝ թուրքմէն Կարա-Կոյունլուների)... որ եւ յիշել եմ զառաջին չարիսն Թամուր կոչեցեալ կաղին եւ ի նոյն վտանգի գոլով... Յայս դառնութեան ժամանակիս ես՝ նուաստ եւ խեղդամահ ի մեղս Մաթէոս, յետնեալս յիմաստից եւ ազէտս ի գիտնականաց եւ մնացեալս որբ ի յիմ հարազատագոյն հարանց՝ հոգեկանաց եւ մարմնականաց, որ եւ յայժմ ամի եղեւ զրաւ կենաց մեծ բարունոյն իմոյ Գրիգորի... որոյ սուգն պաշարեաց զիս եւ ես մոռանալ զառօրեայ կենցաղս...» եւ այլն[2]:

Իր շրջապատում մխիթարական ոչինչ չի տեսնում մեր հեղինակը. ժողովրդի վիճակը ծանր է, հարկահանութիւնն՝ անտանելի, հայ իշխանները միմեանց օժանդակելու եւ զօրավիգ լինելու փոխարէն կռւում են իրար դէմ, հոգեւորականութիւնը՝ շահասէր, ամէնուրեք տիրում է բռնութիւն, աւազակութիւն, խաբեբայութիւն եւ անբարոյականութիւն: Այս բոլորի մասին անչափ կարեւոր ու հետաքրքրական տուեալներ է գրանցում իր վերջին աշխատութեան մէջ Մատթէոսը, իսկ Գր. Տաթեւացու թաղման առթիւ արտասանած դամբանականում իր ժամանակի վիճակը նկարագրում է հետեւեալ յուսահատ տողերով. «Ամենեքեան աքացեն զմիմեանս, խածատեն զմարմինս իրերաց, բամբասեն զառաջնորդս իւրեանց, տրտնջեն ի տանուտեառնէ իւրեանց. ի մարմինս մաշին, ի միտս տանջին, ի հարկահանաց ձանձրանան, յանօրինաց տառապին, զտիւ լան, զգիշերն ողբան, բարիքն տրտմին, եւ չարացեալքն ուրախանան: Եւ այս ամենայն վասն մեղաց մերոց»[3]: Անձնական իր կեանքում եւս դառնութիւններ է ճա-

* [Իմա՝ թուրքմէն: Խմբ.]

1 «ԺԵ դարի յիշատակարաններ», էջ 76

2 Նոյն տեղում, էջ 119

3 Նոյն տեղում, էջ 120

շակում Մատթէոս Ջուղայեցին. նա բողոքում է իր աշակերտների ծուլութիւնից եւ միաբանակից «սուտ եղբայրների» նիւթած դաւերից: «Այլ եւ անմեղադիր լինել աղաչեմ,- գրում է նա իր վերջին յիշատակարանում,- զի դառնութիւն ժամանակիս եւ աշխատանք (կամ «աղճատանք») չար խորհրդոց շփոթեալ աղտեղացուցին զհոգի եւ զմարմին իմ, մանաւանդ ծուլութիւն անդուլ եւ անհնազանդ աշակերտաց վիրաւորեցին զիս, եւ յաւէտ վիշտք ի սուտ եղբարց, որք անհրաժեշտ վատթարութեամբ դառնացուցին զիս. վասն որոյ եւ ոչ կարացի զբովանդակն մակագրել, այլ զամփոփ ի բազմաց...»[1]:

1411 թուականից յետոյ Մատթէոս Ջուղայեցու մասին որեւէ յիշատակութիւն չենք գտնում: Այդ ժամանակ նա արդէն այնքան ծեր կամ հիւանդ է եղել, որ իրեն համարել է կանգնած «ի գերեզմանի դրան»[2]: Ե՞րբ են բացուել նրա առաջ այդ դռները՝ չգիտենք, ուստի եւ ծննդեան տարեթուի հետ մէկտեղ առայժմ անյայտ է մնում նաեւ Մատթէոսի մահուան տարեթիւը:

Մատթէոս Ջուղայեցին ապրեց ստեղծագործական կարճատեւ կեանք: Տարեթիւ կրող նրա աշխատութիւններից անդրանիկը, ինչպէս արդէն տեսանք, շարադրուած է 1391, իսկ վերջինը՝ 1411 թուականին: Այսպիսով, մեր հեղինակը ստեղծագործել է ընդամէնը 20 տարի: Սակայն այդ երկու «դառն ու դժար» տասնամեակներում նա շարադրել է պատկառելի քանակութեամբ աշխատութիւններ, որոնց ամբողջական ցանկը, ճշտուած վերնագրերով, տալիս ենք ստորեւ՝ հնարաւորութեան դէպքում նշելով նաեւ իւրաքանչիւրի գրութեան տարեթիւը, շարադրման վայրը:

1. «Ի գլխոյն Ղուկասու հաւաքումն բանից եւ հոլով քարոզք ի մեկնութենէ Իգնատիոսի Հայոց վարդապետի, ժողովեալ աշխատութեամբ Մատթէոսի աշակերտի Գրիգորի»[3]

Շարադրել է Երնջակի Ապրակունեաց վանքում 1391 թուականին[4]:

2. «Յովհաննու Որոտնեցոյ տիեզերալոյս բաբունապետի արարեալ բան յաւետարանէն Յովհաննու, որ ասէ՝ Ի սկզբանէ էր Բանն եւ Բանն էր առ Աստուած»

Չնայած վերնագրում որպէս հեղինակ գրուած է Յովհան Որոտնեցու անունը, բայց աշխատութիւնը, ինչպէս պարզւում է յիշատակարանից[5], հիմնականում շարադրել է Մատթէոս Ջուղայեցին:

Ընդհանրապէս Մատթէոսը սիրում է իր աշխատութիւնների վերնագրերում նշել այն հեղինակների անունները, որոնցից այս կամ այն չափով օգտուել է այս կամ այն աշխատութիւնը շարադրելիս:

1 Նոյն տեղում

2 Նոյն տեղում, էջ 121

3 Օգտագործել ենք N 5332 ձեռագրում ընդօրինակուած (էջ 58ա-154ա) բնագիրը: N 1345 ձեռագրում աշխատութեան վերնագիրը փոքր-ինչ տարբեր է. եւ չնայած այդ ձեռագիրն ընդօրինակուած է ուշ շրջանում (1697 թ.), նրա երկրորդ մասն աւելի նախնական է թւում. «Ի գլխոյն Ղուկասու աւետարանչին, ի մեկնութենէ Իգնատիոսի սուրբ վարդապետին Հայոց, զոր յետոյ ես՝ Մատթէոս վարդապետս, աշակերտ տեառն Յովհաննու Որոտնեցոյն ժողովեալ հաւաքեցի եւ արարի զայս քաղուած գիրքս առ ի յօգուտ ուսումնասիրաց անձանց» (էջ 6ա):

4 «ԺԴ դարի յիշատակարաններ», էջ 591-592

5 «ԺԵ դարի յիշատակարաններ», էջ 121

Սոյն աշխատութեան գրութեան թուականը որոշ չէ, սակայն կարծում ենք, որ շարադրուած պէտք է լինի վերոյիշեալ՝ «Ի գլխոյն Ղուկասու Հաւաքումն բանից» աշխատութիւնից անմիջապէս յետոյ, որովհետեւ յիշատակարանում հեղինակը յայտնում է, «որ եւ այս անսչութեան բանի ընդ նախասացեալ մեկնութեանն, որ ըստ Ղուկասու աւետարանին է՝ գիցի»[1]*:*

3. «Մատթէոսի վարդապետի՝ վասն հարցմանց անօրինաց զանազան պատասխանիք, զոր խնդրեալ բարեպաշտն Արիստոմ մեծ տանուտէրն Շիրիանայ»

Աշխատութիւնը շարադրել է «ի դրան որբոյ Խաչին ի կզզոջն Ախթամարայ, ընդ խօսելն մեր ընդ փնասա/կաք եւ պիղծ գանիշմանին Ալի կոչեցելոյն, որ եւ յետոյ նա սպան զկաթողիկոսն Ախթամարայ զտէր Զաքարիա»[2]*:*

Ախթամարի Զաքարիա Բ կաթողիկոսը նահատակուել է 1393 թուականին, ուստի աշխատութիւնը գրուած պէտք է լինի 1393-ից առաջ:

4. «Համառօտութիւնք ի քաղուածոյ գործոց առաքելոց, զոր արարեալ է սուրբ վարդապետն մեր Մատթէոս, աշակերտ սրբոյն Գրիգորի Տաթեւացւոյն. ժողովեալ յամենէն Ղազար չնչին բանասիրէ»[3]

5. «Յետ քննութեան այնոցիկ, որ վերաբերին ի տնօրէնութիւն մարմնացեալ Բանին...»[4]

6. «Նորին Մատթէոսի վարդապետի ի մեկնութենէն Յոհաննու Ոսկեբերանին կարճառօտ...»[5]

7. Գանձեր ու տաղեր

ա) «Տաղ ազնիւ (Յակոբայ Մծբնայ Հայրապետին) ի Մաթէոս վարդապետէ»

սկ. «Մեծի հանդիսի աւուրս...»

Շարադրել է Երնջակում՝ պաշարուած լինելով Թամուրի զօրքերի կողմից, ուստի՝ 1386-1399 թթ. ընթացքում, թերեւս մինչեւ 1391 թուականը: Տաղը ձայնագրուած է բարդ ու բազմաքանակ խազերով[6]*:*

բ) «Կանոն երեւման խաչին»

սկ. «Էսկակից Որդի Հաւր քո հըզաւրի...»

Տների սկզբնատառերը յօդում են հետեւեալ բառերը՝ «Ի Մատթէոսէ, խնդրեաց Գրիգորն (Մերենց)»: Գանձն ունի տաղ ու յորդորակ, որոնք նոյնպէս ձայնագրուած են երաժշտական ճոխ խազերով[7]*:*

գ) «Կանոն մեծահրաշ կիրակէի»

1 Տե՛ս լրիւ՝ «ԺԵ դարի յիշատակարաններ», էջ 121:
2 Ձեռ. N 969, էջ 107-112բ
3 Բարգէն առաքեալ կաթողիկոս, Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային մատենադարանին, Անթիլիաս, 1961, ձեռ. N 108, էջ 525-625
4 Նոյն տեղում, էջ 625-641
5 Նոյն տեղում, էջ 690-699
6 Տե՛ս ձեռ. N 425, էջ 46բ-47բ:
7 Ձեռ. N 425, էջ 255ա-258բ

սկ. «Միակդ ահաւոր

Տէր եւ զաւրաւոր...»

Ակրոստիքոս՝ «Մաթէոսի է, խնդրեաց Գրիգոր»[1]:

դ) «Գանձ մեծի երկուշաբաթին»

սկ. «Ի սկզբան էին

Արարեալ գերկին...»

Ակրոստիքոս՝ «Ի Մաթէոսէ, խնդրեաց Գրիգոր»[2]

ե) «Մեղեդի անոյշ (սրբոյ Հայրապետաց գ. ժողովոցն) ի Մաթէոս վարդապետէ»

սկ. «Միայն բանին Հաւր իմաստնոյ

Ծառայ վայելուչք արժանիք պատուոյ...»

Ակրոստիքոս՝ «Մաթէոսի է երգս այս, նոր է գրեալ»[3]:

Այս գանձերի ու տաղերի մի մասը, ինչպէս ասացինք, ձայնագրուած են երաժշտական ճոխ խազերով, մի հանգամանք, որ իրաւունք է տալիս կարծելու, թէ Մատթէոս Ջուղայեցին եղել է ոչ միայն բանաստեղծ, այլ նաեւ երաժիշտկոմպոզիտոր:

8. «Մատթէոսի վարդապետի աշխատասիրեալ վասն քարոզութեան բանի, ի վարդապետութենէն սուրբ Հօրն Եւագրեայ, որ միտք անապատի կոչի եւ ի նորին վարուցն հետեւողէ սրբոյն Նեղոսէ, որ ցան եւ ցիր գոյր ի բանս նոցա՝ հաւաքեալ ի մի ի պէտս բանասէր անձանց»

Շարադրել է Տանձափարախ անապատում 1393 թուականին[4]*:*

9. «Նուաստ Մաթէոս վարդապետի՝ աշակերտի եռամեծին Գրիգորի աշխատասիրեալ առ ի հաւաքումն բանից, որ հայի առ Զ (6) աւուր գործս Աստուծոյ, ի խնդրոյ Սարգիս կրօնաւորի, ի բանն Սողոմոնի, որ ասէ՝ Ամենեցուն ճարտարապետն ուսոյց ինձ իմաստութիւն»

Շարադրել է 1395 թուականին Տաթեւի վանքում[5]*:*

10. «Վասն ժամանակաց գիտելոյ զօրքանն»

Սինքրոնիկ փոքր աղիւսակ է, որով որոշւում են եկեղեցական ու քաղաքական կարեւոր ճանաչուած իրադարձութիւնների թուականները՝ ջրհեղեղից եւ այլ դէպքերից հաշուած: Շարադրել է 1402 թուականին, հաւանաբար Տաթեւում: Ձեռագրերում (օրինակ՝ N 3854, էջ 293բ-295ա) ընդօրինակուած է Մատթէոսի աշխատութիւնների շարքում, բայց հեղինակի անունը վերնագրում չի նշուած:

11. «Նորին Մատթէոսի վարդապետի ներբողեան ողբերգաբար՝ ոգեալ ի թաղումն երջանիկ րաբունապետին Գրիգորի: Ընդ նմին յիշատակեալ զողբս լալեաց կոտորածին, որ

1 Նոյն տեղում, էջ 261ա-262բ
2 Ձեռ. N 474, էջ 152ա-157ա
3 Ձեռ. N 474, էջ 106բ-108բ
4 «ԺԴ դարի յիշատակարաններ», էջ 606
5 Նոյն տեղում, էջ 613

ի Վրացտուն՝ ի Փայտակարան քաղաքի, քանզի պատկեր աւուրց ի մի դիպեցաւ, մանաւանդ ի Հրաշագեղ Կարապետ՝ եղբայր իւր»

Գրիգոր Տաթեւացին մահացել է 1409 թ. դեկտեմբերի 27-ին եւ թաղուել է 1410 թ. յունուարի սկզբներին, ուստի Մատթէոսն իր դամբանականը շարադրած ու արտասանած պէտք է լինի 1410 թ. սկզբներին Տաթեւում[1]:

12. «Մատթէոսի նուաստ եւ յետին աշակերտի եռամեծացն Յովհաննու եւ Գրիգորի՝ աշխատասիրեալ ի քննութիւն գործոց առաքելոց, ի մեկնութենէ սուրբ հարցն Յովհաննու Ոսկեբերանի եւ Եփրեմի, ի խնդրոյ հարազատ եղբօր մերոյ Յակոբ վարդապետի՝ մականուն Ովսանանց կոչեցեալ»

Մատթէոսի ամենաընդարձակ ու կարեւոր աշխատութիւնն է, շարադրել է 1411 թուականին, հաւանաբար Տաթեւում[2]:

13. Քարոզներ

Մենք արդէն տեսանք, որ «Ով ոք են արարեալ զլուծմունս եւ զքաղուածոս Աստուածաշունչ Գրոց» ցանկի հեղինակը Մատթէոսին է վերագրում նաեւ «Ծ (50) քարոզ»[3]:

Նրա քարոզներն ընդօրինակուած են մեր Մատենադարանի թթ. 662, 969, 1357, 2114, 2157, 2229 եւ այլ ձեռագրերում, բայց դրանց քանակը 50-ի չի հասնում[4]:

Քարոզները գրուած են, ինչպէս ընդունուած էր, Աստուածաշնչից քաղուած բնաբաններով: Որպէս բնաբան ընտրուած են «Մի՛ սպանաներ», «Մի՛ սուտ վկայեր», «Մի՛ շնար», «Մի՛ գողանար», «Արթուն կացէք յամենայն ժամ», «Յարեցան սուտ մարգարէք», «Ես եմ հովիւ քաջ» եւ այլ բազմաթիւ աստուածաշնչային խօսքեր:

Մատթէոսի այս քարոզները լի են պատմական, տնտեսագիտական, կենցաղագիտական, գրականագիտական հետաքրքրութիւն ներկայացնող բազմաթիւ ուշագրաւ տուեալներով եւ ճանաչողական մեծ արժէք են ներկայացնում:

Քարոզների շարադրման թուականը որոշ չէ: 1391 թուականին շարադրուած «Ի գլխոյն Ղուկասու հաւաքումն բանից» աշխատութիւնը նոյնպէս պարունակում է քարոզներ եւ գրուած է հէնց ի նպաստ քարոզչութեան, հակաճառութեան եւ բեմբասացութեան («է պիտանացութիւն սորա ի քարոզս բանի եւ ի կազ գրուցաց եւ ի բեմբասացութիւնս»): Արդ, Մատթէոսի քարոզների եւ այդ աշխատութեան որոշ հատուածներ բառացի համընկնում են միմեանց: Նկատի ունենալով այդ հանգամանքը՝ հակուած ենք կարծելու, որ իր քարոզները նոյնպէս Մատթէոսը շարադրել է ԺԴ դարի 90-ական թուականներին «Ի գլխոյն Ղուկասու հաւաքումն բանից» աշխատութիւնից (գրուած 1391 թ.) յետոյ:

Սրանով աւարտւում է Մատթէոս Ջուղայեցու մեզ յայտնի աշխատութիւնների ցանկը:

---

1 Ամենայն հաւանականութեամբ, Մատթէոսին է պատկանում նաեւ Գրիգոր Տաթեւացու կեանքի եւ կենսագրութեան ուսումնասիրութեան համար կարեւոր նշանակութիւն ունեցող վարքաբանական այն գրուածքը, որը պահպանուել է մեր Մատենադարանի N 6607 ձեռագրի 5ա-6ա էջերում՝ «Ի սմին աւուր՝ ի դեկտեմբերի ԻԷ (27) ննջումն եւ հանգիստ երիցս երանեալ քաջ րաբունապետին Գրիգորի՝ աշակերտի Յովհաննու Որոտնեցոյ» խորագրով (տպ. «ԺԵ դարի յիշատակարաններ», էջ 103-104):

2 «ԺԵ դարի յիշատակարաններ», էջ 118-121

3 Ձեռ. N 8444, էջ 182ա-բ

4 N 2229 ձեռագրում, օրինակ, ընդօրինակուած ենք գտնում ընդամէնը 39 քարոզ:

Ջուղայեցին, սակայն, զբաղուել է նաեւ ձեռագրերի ընդօրինակման աշխատանքով: Նրա բազմացրած ձեռագրերից մեզ յայտնի են հետեւեալ երեքը.

1. Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» աշխատութիւնը՝ ընդօրինակուած շուրջ 1397 թ. Աստմ աբեղայի խնդրանքով[1]:

2. Աւետարան՝ ընդօրինակուած 1407 թ. Տաթեւում Յովէլ քահանայի խնդրանքով[2]:

3. Մի այլ Աւետարան՝ ընդօրինակուած նոյն թուականին ամն Մըմբարաքշահի պատուէրով[3]:

Անտարակոյս, մեզ հասած կամ մեզ յայտնի այս երեք ձեռագրերը Մատթէոսի ընդօրինակութիւնների միայն մի չնչին մասն են կազմում:

Այսպիսով, Մատթէոս Ջուղայեցին մեզ ներկայանում է որպէս Տաթեւի նշանաւոր համալսարանի անուանի դասախօսներից մէկը, որն իր ստեղծագործական ոչ երկարատեւ կեանքի ընթացքում շարադրել է մի շարք ծաւալուն աշխատութիւններ, զբաղուել է քարոզչական գործունէութեամբ եւ ընդօրինակել է բազմաթիւ ձեռագրեր:

Մեր սոյն համառօտ հաղորդման հիմնական նպատակն է պարզել, թէ ինչ արժէք են ներկայացնում մեր հեղինակի աշխատութիւնները ԺԴ-ԺԵ դարերի Հայաստանի սոցիալ-տնտեսական կեանքի պատմութիւնն ուսումնասիրելու համար:

Մենք արդէն տեսանք՝ Մատթէոս Ջուղայեցու աշխատութիւնների մեծագոյն մասը կրօնական բովանդակութիւն ունի: Նրանք կա՛մ մեկնութիւններ են, կա՛մ քարոզներ, կա՛մ էլ աստուածաբանական գրականութեան այլ ժանրերին պատկանող ստեղծագործութիւններ:

Նման իր ժամանակի բոլոր եկեղեցական գործիչներին՝ նա իր աշխատութիւններով ձգտել է քարոզել եւ ուսուցանել Հայ եկեղեցու գաղափարական դրոյթները, փորձել է բարձրացնել եկեղեցականների հեղինակութիւնը, նպաստել եկեղեցու տնտեսական դիրքերի ամրապնդմանը:

Իր բազմաթիւ քարոզներում Մատթէոսը խօսում է այն մասին, որ օտարազգի տէրերի բռնութիւնների ու հալածանքի դէմ, ինչքան էլ դրանք ծանր լինեն, ժողովուրդը չպէտք է ընդվզի ու պայքարի եւ իր փրկութեան յոյսը պէտք է դնի միայն երկնային դատաւորի վրայ: «Գիտացուք մեք՝ քրիստոնեայքս,- գրում է իր աշխատութիւններից մէկում Մ. Ջուղայեցին,- թէ Քրիստոս է մեզ դատաւոր, ապա պարտ է ի նա ընկենուլ զդատաստան չարչարողացն մերոց եւ հալածողացն եւ մեզ ուրախութեամբ տանել զլկանն եւ մի մեզէն վրէժխնդիր լինել մեզ, զի «Իմ է վրէժխնդրութիւն»,- ասէ Տէր» եւ այլն[4]:

Սակայն սխալ կլինէր միջնադարեան որեւէ եկեղեցական հեղինակի գնահատել՝ ելնելով միայն նրա հասարակական ու սոցիալական հայեացքներից:

Իր աշխատութիւնների մեծագոյն մասը Մատթէոս Ջուղայեցին շարադրել է «Վասն քարոզութեան բանի», այսինքն՝ նկատի ունենալով ունկնդիրների լայն լսարան՝ արհեստաւորների, առեւտրականների, շինականների եւ ընդհանրապէս աշխատաւոր մարդկանց:

---

1 «ԺԴ դարի յիշատակարաններ», էջ 615

2 «ԺԵ դարի յիշատակարաններ», էջ 76-77

3 Նոյն տեղում, էջ 75-76

4 «Բան յԱւետարանէն Յովհաննու», ձեռ. N 5871, էջ 26բ

Նա շատ լաւ տեղեակ է եղել, որ «Բազումք ի լսել քարոզութեանն բամբասեն, թէ սպիտակ կուտեալ է, կամ կու խարէ, կամ թէ յերկար կու ասէ, եւ կամ ձանձրանան ի բազմութենէն, եւ կամ այլ իմն բան խօսին՝ ոչ ունկն դնելով քարոզութեանն»[1]:

Իսկ որպէսզի ժողովուրդը չբամբասի քարոզչին, ունկն դնի նրա քարոզութեանը, եւ քարոզը հասնի իր նպատակին, այդ բոլորի համար անհրաժեշտ էր խօսել ժողովրդի լեզուով, կանգ առնել նրան յուզող սոցիալական ու տնտեսական հարցերի վրայ, պարզ ու պատկերաւոր օրինակներ ընտրելով ժողովրդի առօրեայ կեանքից ու կենցաղից՝ դրանց միջոցով դիւրամարս դարձնել գաղափարական բարդ խնդիրները եւ այլն եւ այլն[2]:

Հէնց այդպէս էլ վարուել է Մատթէոս Ջուղայեցին: Եւ դրանով պէտք է բացատրել այն հանգամանքը, որ Մատթէոսի աշխատութիւնները լի են ժամանակի սոցիալ-տնտեսական յարաբերութիւնների, ժողովրդի վիճակի, կենցաղի, զբաղմունքի եւ բազմաթիւ այլ հարցերի մասին հեղինակային թուով այնպիսի տուեալներով ու ասոյթներով, որոնք մեծապէս բարձրացնում են նրանց ճանաչողական արժէքը եւ իրաւունք են տալիս մեր հեղինակին պատուաւոր տեղ գրաւել ԺԴ–ԺԵ դարի հայ մատենագիրների շարքում:

Աշխատենք Մատթէոս Ջուղայեցու աշխատութիւնների մէջ ցրուած կարեւոր այդ տուեալների ու ասոյթների օգտագործմամբ փոքր-ինչ ծանօթանալ նրա ապրած ժամանակաշրջանի հետ:

Ինչպէս արդէն տեսանք, Մատթէոսը, որպէս մատենագիր, հրապարակ իջաւ ԺԴ դարի վերջերին, երբ Լանկ-Թամուրի զօրքերն ասպատակում էին Հայաստանը. «Ի ժամանակի նեղութեան, ուր աւերեալ քակեաց զաշխարհս ամենայն հուրն հարաւային՝ Թամուր կոչեցեալ»,– գրում էր այդ մասին Ջուղայեցին:

Թամուրի մահուանից եւ նրա ժառանգների պարտութիւնից յետոյ Արարատականում եւ Հայաստանում իշխանութեան գլուխ անցաւ Կարա-Կոյունլու քոչուորական ցեղերի առաջնորդ Կարա-Յուսուֆը:

Սակայն երկար տարիներ պէտք չէին համոզուելու համար, որ Կարա-Կոյունլուների նոր դինաստիայի յաղթանակով հայ ժողովրդի վիճակի մէջ ոչ մի փոփոխութիւն չպէտք է տեղի ունենար: 1411 թ. գրած իր «Քննութիւն Գործոց առաքելոց» աշխատութեան յիշատակարանում Մ. Ջուղայեցին, տեսանք, որ յայտնում էր, թէ նոր տիրապետողների բռնակալութիւնը յիշել է տալիս «զառաջին չարիսն Թամուր կոչեցեալ կաղին» եւ այլն:

Այս ընդհանուր ձեւով արուած յայտարարութիւնները կոնկրետ ու իմաստալից բովանդակութիւն են ստանում Ջուղայեցու տարբեր աշխատութիւնների մէջ, ուր նա այլեւայլ առիթներով անդրադառնում է հայ ժողովրդի կրած տառապանքներին:

Իր «Վասն քարոզութեան բանի» աշխատութեան մէջ, օրինակ, այլազգի բռնաւորների մասին մեր հեղինակը գրում է հետեւեալ ուշագրաւ տողերը. «Դարձեալ, գրացիք են մեզ չար բռնաւորք եւ այլազգիք, զի ի մին հողոյ եւ նոյն ծնողաց եմք, եւ զնոյն պատկերս մարդոյ

1 Նոյն տեղում, էջ 19ա

2 Այս մասին հետաքրքրական տուեալ է պահպանուած միջնադարեան մի քարոզի մէջ, որտեղ ասուած է. «Սովորութիւն է հանճարեղաց եւ իմաստնոց յորժամ տգիտաց եւ տխմարաց զմեծամեծաց եւ զբարձրագունից եւ զանյայտ իրաց զճառս բանիւ կամին յառաջ բերել՝ զընտանի եւ զբնրոն աւրինակաց բուռն հարկանել, այսինքն ի տեսելոց կամ ի լսելոց յարացուցիչ զանտեսիցն յանդիման կացուցանել իմացուած» (ձեռ. N 1098, էջ 13բ):

ունին, եւ միտք եւ բան եւ ամենայն՝ հաւասարք են, եւ սիրտ գազանի ունին. եւ յանխնայ կեղեքեն եւ տանջեն զմեզ. ոչ միայն ի մարմինս, այլ եւ ի հոգիս վնասեն. զինչս յափշտակեն, զմարմինս չարչարեն եւ ի մեղս ձգեն եւ ի հաւատոց զրկեն, նախատեն եւ հալածեն եւ սպանանելով զմեզ՝ համարին պաշտօն մատուցանել Աստուծոյ»[1]:

Մէջբերուած հատուածի վերջին միտքն աւելի պարզորոշ շարադրուած է Ջուղայեցու քարոզներից մէկում այսպէս. «Արդ, առեն զօքա (մուսուլմանք), եթէ ոք զքրիստոնեայ կոտորէ կամ սպանանէ՝ արքայութիւն նմա է»[2]:

Այլ կապակցութեամբ նա յայտնում է, որ տիրող բռնաւորները «զարիւնս աղքատաց ծծեն եւ անիրաւ դատեն»[3] կամ «բազում անգամ... սպանանեն վասն ագահութեան եւ կամ վասն նախանձու»[4] կամ որեւէ մէկի մահուանից յետոյ նրա թողած գոյքից հարուստ բաժին ստանալու դէպքում «զրկեն զզաւակսն, մանաւանդ զի զրովանդակն տանին»[5] եւ այլն եւ այլն:

Մատթէոս Ջուղայեցին հայ ժողովրդի համար ստեղծուած ծանր իրաւական ու տնտեսական վիճակի պատճառները բացատրում է միջնադարեան «մեղք եւ հատուցում» սկզբունքով: Աստուածային կամքով հայերն իբր պատժւում են իրենց մեղքերի համար: Նոյնիսկ Թամուրն ընտրուած է եղել տիրոջ կողմից՝ պատուհասելու համար հայերին իրենց գործած մեղքերի դիմաց[6]:

Ջուղայեցին «վասն մեղաց մերոց» սկզբունքով է բացատրում նաեւ բնական ու հասարակական բոլոր արհաւիրքները. «Սոյնպէս եւ այժմ մի զհետ միոյ շրջին երբեմն մահ տարաժամ՝ առհասարակ կոտորին, երբեմն շարժ, երբեմն գայլ, երբեմն մարախ, թրթուր, ջորեակ, ժանկ, երբեմն կարկուտ, սով, սրածութիւն, հեղեղ եւ այլքն: Սոքա յաշխարհէ ոչ բառնին վասն մեղաց, այլ միշտ ի սաստկութիւն պահեն զմարդիկ»,– գրում է նա «Ահա մեղուորք կորիցեն» բնաբանով քարոզում[7]:

Սակայն ուշագրաւ է այն հանգամանքը, որ Ջուղայեցու աշխատութիւնների մէջ մեղաւոր են համարւում հասարակութեան ոչ բոլոր խաւերի ներկայացուցիչները հաւասարապէս: Ջուղայեցու կարծիքով՝ հիմնական մեղաւորները հայ իշխաններն են: Ժողովրդի ապահովութեան ու բարեկեցութեան, նոյնիսկ նրանց հաւատի պահպանութեան հիմնական պատասխանատուն աշխարհական իշխանութեան ներկայացուցիչներն են: «Առանց Տրդատայ ոչ կարաց սուրբն Գրիգոր ի Հայոց մին կին ի հաւատ բերել»,– սրամտօրէն նկատում է Ջուղայեցին իր քարոզներից մէկում[8] եւ հայ ժողովրդի համար ստեղծուած ծանր կացութեան հիմնական մեղքը գցում է հայ անմիաբան, վաւաշոտ ու անգութ իշխանների վրայ:

«Իսկ քրիստոնեայ իշխանն,– գրում է նա,– պոռնիկս եւ վաւաշոտս եւ մատնողս եւ

1 Ձեռ. N 6607, էջ 229բ

2 Ձեռ. N 2229, էջ 188բ

3 «Բան յաւետարանէն Յովհաննու», ձեռ. N 5871, էջ 46բ

4 «Քարոզ ի բանն՝ Մի սուտ վկայէր», ձեռ. N 2229, էջ 130ա

5 «Քննութիւն Գործոց առաքելոց», ձեռ. N 1402, էջ 235ա

6 Տե՛ս «Քննութիւն Գործոց առաքելոց» (ձեռ. N 1402, էջ 84բ), ուր ասուած է «ի պատերազմն զանհրկիւղն ընտրեմք եւ Տէրն ի պատուհասն զանհաւատն (ընտրէ), որպէս... այժմ զԹամուրն»:

7 Ձեռ. N 662, էջ 161ա

8 Ձեռ. N 2229, էջ 206բ

սպանողս, յորմէ յաճախեալ մեղօքն բարկացուցին զանբարկանալի բնութիւնն. եւ **ետ զմեզ ի կոխան անօրինաց, եւ գերեցաք յամենայն ազգս, եւ վա՛յ է ինձ»**[1]:

Այս բոլորից յետոյ, զարմանում է Ջուղայեցին, Հայ ֆեոդալական տների վերջին տկար ու անզօր ներկայացուցիչները միաբանելու եւ միմեանց զօրավիգ լինելու փոխարէն շարունակ կռուում են իրար դէմ. «Այժմ մնացեալ սուտ իշխանքն Հայոց զմիմեանց ջիլս հատանեն եւ զարմանալի եւս (է), զի բոլոր երկիրս աւեր եւ վասն աւերածիս կռուին»,- գրում է նա[2]:

Մեղքերից անմասն չեն նաեւ Հայ հոգեւորականութեան ներկայացուցիչները, մեծատունները, առեւտրականներն ու արհեստաւորները, սակայն նրանց նկատմամբ Ջուղայեցին համեմատաբար մեղմ արտայայտութիւններ է գործածում:

Մատթէոսի ապրած ժամանակները Հայ ինքնագլուխ եկեղեցին միակ հաստատութիւնն էր, որն այս կամ այն չափով միաւորում էր Հայ ժողովրդի ցիրուցան արուած զանգուածները եւ աշխատում, իր շահերից ելնելով ու իրովի, վառ պահել ազգային գրականութեան ու մշակոյթի այն աւանդոյթները, որոնք կարեւոր ու անհրաժեշտ էին գաղափարական ու սոցիալ-տնտեսական իր դիրքերի պաշտպանութեան ու ամրապնդման համար:

Այդ իսկ պատճառով Մատթէոս Ջուղայեցու գրական գործունէութեան մէջ կարեւոր տեղ է բռնում պայքարը մահմեդականութեան, այլ խօսքով՝ օտարազգի տիրապետողների գաղափարախօսութեան դէմ: Ամբողջովին այդ խնդրին է նուիրուած վերոյիշեալ «Վասն հարցմանց անօրինաց. զանազան պատասխանիք» աշխատութիւնը, որը շարադրուած է 1393-ից առաջ Ախթամարում, ամն դանիշման Ալիի հետ ունեցած վիճաբանութիւնից յետոյ: Այստեղ պարզ ու դիւրըմբռնելի պատասխաններ են տրուած բոլոր այն հարցերին, որոնցով մահմեդական կրօնի պետերը դիմում էին Հայերին քրիստոնէութեան դիրքերի խախտման ու նրանց հաւատափոխ անելու մտադրութեամբ:

Նման հարցեր են շօշափուած նաեւ Մատթէոսի «Յարեցան սուտ մարգարէք» բնաբանով քարոզի մէջ[3]: Ուշագրաւն այն է, որ իր պատասխաններով Մատթէոսը բնաւ չի վիրաւորում մահմեդականների կրօնական զգացմունքները ու չի ցանկանում դիպչել նրանց համոզմունքներին: Նրա կարծիքով՝ մահմեդականները պարտաւոր են հնազանդուել իրենց մարգարէի պատուիրաններին, որովհետեւ Մահմեդն է նրանց կռապաշտութիւնից հաւատքի բերել. «բայց Ձեզ արժան է նմա հնազանդել, զի զձեզ ի հաւատք եբեր եւ ի կռապաշտութենէ զարձոյց»,- գրում է նա[4]:

Այլ բան է քրիստոնեաների խնդիրը. Մահմեդը պատմական ասպարէզ է իջել մի քանի հարիւր տարի այն բանից յետոյ, երբ Հայերը, հեթանոսութիւնը մերժելով, ընդունեցին քրիստոնէութիւն, ուստի Հայերն իրաւասու են նրան չճանաչելու եւ չընդունելու. «Մահմատն ձեր,- գրում է նա,- մեզ ոչինչ երախտիք չունի, զի երեկ՝ զմեզ ի հաւատք գտաւ, եւ մեք աստուածապաշտ էաք, երբ նա եկել, եւ մեզ ոչինչ չէ ուսուցել, եւ ի նմանէ հաւատք չենք առել. վասն այնորիկ եւ ոչ ճանաչեմք զնա»[5]:

1 «Քննութիւն Գործոց առաքելոց», ձեռ. N 1402, էջ 258բ
2 Նոյն տեղում, էջ 215բ
3 Ձեռ. N 2229, էջ 185բ-190բ
4 Ձեռ. N 3854, էջ 202բ
5 Ձեռ. N 3854, էջ 302ա

Մէջբերուած հատուածը բաւական է ցոյց տալու համար, որ Մատթէոս Ջուղայեցին ձգտում էր հաստատել այլակրօն ժողովուրդների միջեւ համերաշխութիւն եւ փոխադարձ յարգանք՝ միեւնոյն ժամանակ վճռականապէս դէմ դուրս գալով Հայերին բռնի մահմեդականացնելու քաղաքականութեան դէմ:

Մեր հեղինակի ապրած ժամանակներում օտար տիրապետութեան հետեւանքները զգացւում էին նաեւ ժողովրդի առօրեայ կենցաղում եւ նիստուկացի մէջ: Հայերը, հրաժարուելով իրենց հնամենի ու գեղեցիկ անձնանուններից, իրենց երեխաներին տալիս էին մոնղոլական, թուրքական ու արաբական անձնանուններ՝ Ալամ-խաթուն, Յախշի-բէկ, Աղբուղայ, Արղլա, Դամուր-բուղա եւ այլն եւ այլն:

Մատթէոս Ջուղայեցին վնասակար է համարում այդ սովորութիւնը եւ գտնում է, որ պատժի են արժանի այն քահանաները, որոնք քրիստոնեայ մանուկներին անուանակոչում են օտար ու խորթ անուններով. «Վասն որոյ,- գրում է նա,- պատժին քահանայք, յորժամ քրիստոնեայ տղային Ղուտբադին դնեն կամ Ֆախրատին» եւ այլն[1]:

Մատթէոս Ջուղայեցու աշխատութիւնները շատ աւելի կարեւոր նիւթեր են պարունակում իր ապրած ժամանակաշրջանի Հայաստանի ներքին կեանքի, սոցիալ-տնտեսական յարաբերութիւնների եւ մշակութային երեւոյթների ուսումնասիրութեան համար:

Նախ համառօտակի ծանօթանանք նրա աշխատութիւնների մէջ ցրուած այն տուեալների հետ, որոնք վերաբերում են գիւղական կեանքի տարբեր կողմերին:

Իր «Քննութիւն Գործոց առաքելոց» աշխատութեան մէջ Ջուղայեցին ֆեոդալական հասարակութեան դասային կառուցուածքը տալիս է հետեւեալ աստիճանաւորմամբ՝ «թագաւոր, իշխան, ձեռնաւոր, տանուտէր, շինական»[2]:

Բարձրագոյն երկու աստիճանները Ջուղայեցու ապրած ժամանակաշրջանում գրաւում էին ըստ մեծի մասին Հայաստանի օտարազգի տիրապետողները՝ քոչուորական ցեղերի աւագանիները եւ պետական պաշտօնեաները: Հայ նուաճուած ժողովուրդը տեղ ունէր միայն (բացառութիւններն ի նկատի չենք առնում) հիերարխիկ սանդուղքի ստորին աստիճաններում («ձեռնաւոր, տանուտէր, շինական»):

Ձեռնաւորները ֆեոդալի կողմից նշանակուող այն պաշտօնեաներն էին, որոնք հաշուառման էին ենթարկում հարկատու տուեալ օբյեկտից՝ գիւղից կամ քաղաքից, գանձուելիք հարկի չափը, ցուցակագրում էին բոլոր աշխատունակ չափահաս մարդկանց եւ հաւաքում հարկերը:

Իւրաքանչիւր գիւղական համայնքի մէջ կային ազդեցիկ եւ ունեւոր ընտանիքների աւագներ՝ տանուտէրեր, որոնք ներկայացնում էին գիւղական համայնքը պետութեան եւ ֆեոդալի առաջ ու պատասխանատու էին հարկերի ժամանակին եւ ըստ որոշեալ չափի գանձման համար:

Վերոյիշեալ իր աշխատութեան մէջ Մ. Ջուղայեցին «անկարգ», այսինքն՝ հաստատուած կարգից դուրս ու տարօրինակ գիւղերի շարքին է դասում այն գիւղերը, որոնք չունեն ձեռնաւոր ու տանուտէր: Ուշագրաւ այդ հատուածում, որի հետ արժէ ծանօթանալ, Ջուղայեցին

1 «Քննութիւն Գործոց առաքելոց», ձեռ. N 1402, էջ 195բ
2 Ձեռ. N 1402, էջ 83բ

պատասխան է տալիս այն հարցին, թէ «քանի են աւերակն» (այսինքն՝ աւերակների ինչ տեսակներ կան): Պատասխանը տալիս ենք ստորեւ.

«Նախ՝ կոչի աւերակ անապատն, որ ոչ է բնաւ շինեալ... Երկրորդ՝ անկարգ շէնն, որ ոչ ունի ձեռնաւոր եւ տանուտէր՝ աւեր կոչեմք, որպէս խաչինեցէք (իմա՝ խաչէնացիք)[1]: Երրորդ՝ աւեր կոչեմք, թէ իցէ ձեռնաւոր եւ տանուտէր, եւ ոչ սերմանեալ աշունն եւ գարունն, եւ ասեմք՝ աւերեցաւ: Չորրորդ՝ աւեր կոչեմք յորժամ փախեալ լինին շինացիքն, եւ տեղիքն դատարկ: Հինգերորդ՝ կատարեալ աւերն, յորժամ գեղն բոլոր ջնջի մահուամբ կամ սրով. եւ զի այլոցն գոյ հնար շինութեան, բայց յետնոյս՝ ոչ»[2]:

Այս եւ նախորդ մէջբերումից պարզ ու որոշակի է դառնում, որ ձեռնաւորները եւ տանուտէրերը, որպէս գիւղական համայնքի ազդեցիկ եւ ունեւոր անդամներ, շինականների նկատմամբ արտօնեալ մի դաս էին կազմում:

Գիւղական համայնքը խորը շերտաւորում էր ապրել: Գիւղական բնակչութեան մի զգալի մասը, ծանր հարկապահանջութեան հետեւանքով զրկուելով արտադրութեան միջոցներից, ստիպուած էր կա՛մ փախչել քաղաք, կա՛մ էլ, համագիւղացի փարթամների «հովանու տակ» մտնելով, ենթարկուել նրանց տնտեսապէս եւ իրաւապէս:

Այս երեւոյթը նկատուել ու արձանագրուել է Զուղայեցու կողմից «Տէր, սիրեցի զվայելչութիւն տան քո» բնաբանով գրուած քարոզում: Այստեղ հեղինակը խօսում է հնազանդութեան եւ ենթակայութեան ձեւերի մասին, որոնցից է համարում նաեւ «ըստ կարեաց», այսինքն՝ կարիքից մղուած հնազանդութիւնը. «Որպէս աչակերտ,- գրում է նա,- վասն կարեաց իւրոց հնազանդի վարդապետին, եւ նա տիրէ նմա իբրեւ սեպհական տէր... եւ աղքատք մեծատանց, որպէս ի քաղաքս եւ ի գիւղս է տեսանել, որք ընդ հովանեաւ փարթամացն բազումք կան վասն կարեաց իւրեանց»[3]:

Կարեւոր են նաեւ Զուղայեցու յայտնած տուեալները գիւղացիներից գանձուող հարկերի մասին: Նա յանուանէ յիշատակում է գլխահարկը, որը գանձւում էր հպատակ ժողովուրդներից զինուորական ծառայութեան դիմաց, կոռը, որը տառապանք է համարում, ինչպէս նաեւ «տուգանքները»՝ մի հաւաքական տերմին, որի տակ պէտք է հասկանալ մի շարք հարկեր եւ այլն:

Այդ հարկերն այն աստիճան ծանր են եղել հայ շինականութեան համար, որ նրանք ստիպուած դիմել են հաւատափոխութեան: Զուղայեցին ուղղակի յայտնում է, որ մարդիկ ուրանում են իրենց հաւատքը եւ ընդունում մահմեդականութիւն նաեւ «վասն տուգանաց ղալանի» եւ «վասն տառապանաց, զոր կոռ ասեն»[4]: Պէտք է կարծել, որ մահմեդականութիւն ընդունածների վիճակը փոքր-ինչ բարելաւել է, եւ այս ճանապարհով օտար տիրապետողները երբեմն ձգտել են իրագործել ուծացման իրենց քաղաքականութիւնը:

Զուղայեցին ուշագրաւ տուեալներ է հաղորդում նաեւ պարսկալեզու աղբիւրներում «կանալղա» կոչուող այն հարկի մասին, որն արտայայտւում էր թագաւորական սուրհան-

1 Խաչէնի գիւղերում ձեռնաւոր եւ տանուտէր չլինելու մասին այս վկայութիւնը մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում եւ արժանի է լուրջ ուշադրութեան:
2 Ձեռ. N 1402, էջ 83բ
3 Ձեռ. N 969, էջ 172բ
4 «Քննութիւն Գործոց առաքելոց», ձեռ. N 1402, էջ 140ա

դակներին, պետական պաշտօնեաներին, օտարերկրեայ դեսպաններին եւ նրանց ուղեկիցներին, ծառաներին ու ձիերին կերակրելու, ապաստան տալու, նրանց բոլոր կարիքները հոգալու պարտաւորութեամբ:

Մեր հեղինակը «կանալղայի» փոխարէն գործածում է շատ յաջող, ըստ երեւոյթին ժողովրդական ծագում ունեցող «բռնահիւր» տերմինը: Յայտնում է, որ «բռնահիւրացն պիտոյանան ծախք»[1], իսկ մի այլ տեղ («Տէր, սիրեցի զվայելչութիւն տան քո» բնաբանով քարոզում) բացատրում է, որ սէրն ու յարգանքը կարող են լինել ե՛ւ կամաւոր, ե՛ւ ակամայ: Ակամայ է այն կեղծ «սէրը», որ մարդիկ ստիպուած են լինում, «երկնչելով ի նոցանէ», ցոյց տալ բռնահիւրերին, չար թագաւորներին եւ իշխաններին, ծառայել նրանց «ինչս տալով» եւ այլն[2]:

Իր մի այլ քարոզում Զուղայեցին խօսում է եկեղեցական տուրքի մասին՝ յայտնելով, որ «տուրքն, որ առ Աստուած չափով եւ համարով է, այսինքն՝ ըստ ընչից իւրեանց, զի համարով Ժ (10)-էն զմինն խնդրէ»:

Զուղայեցու կողմից նշուած հարկերից բացի հայ գիւղացիութիւնը նրա ապրած ժամանակաշրջանում պետութեանն ու ֆեոդալին վճարում էր բազմաթիւ այլ հարկեր եւս, որոնց մեր հեղինակն իր աշխատութիւններում առիթ չի ունեցել անդրադառնալու:

Այդ հարկերի մեծ մասը գանձւում էր հարկային պաշտօնեաների կողմից՝ գիւղովի: Իւրաքանչիւր գիւղական համայնք իր տանուտէրերի եւ ձեռնաւորի միջոցով պարտաւոր էր հաւաքել տուեալ գիւղի վրայ ըստ հարկային ցուցակների դրուած ողջ հարկը եւ յանձնել պետական պաշտօնեաներին: Եւ ահա այստեղ բացւում էր չարաշահութեան մեծ ասպարէզ գիւղի տանուտէրերի ու ձեռնաւորների համար: Սրանք, օգտագործելով իրենց դիրքն ու տնտեսական կշիռը, գիւղական համայնքից պահանջուող հարկերի իրենց վրայ դրուած բաժինը եւս բարդում էին չունեւոր ու աղքատ իրենց համագիւղացիների վրայ:

Այս մասին եւս իր քարոզներից մէկում շատ հետաքրքրական տուեալ է հաղորդում Մ. Զուղայեցին: Նա գրում է. «Կոչին ծածուկ գող եւ տանուտէրք գեղից եւ վերակացուք, որք յաղքատս գրկեն. եւ այնպէս երեւեցուցանեն, թէ մեք աւելի տամք, եւ յաղքատացն առեալ տան եւ զինչս իւրեանց պահեն»[3]:

Ուշագրաւ են նաեւ Զուղայեցու հաղորդած տուեալները շինականների փախուստի մասին դէպի այլ շրջաններ եւ հեռաւոր երկրներ՝ մի բան, որ յատկապէս ԺԴ եւ ԺԵ դարերում Հայաստանում զանգուածային չափեր էր ընդունել:

Զուղայեցին մի առիթով բռնութեան վնասների մասին խօսելիս յայտնում է, որ «իշխանարարն զշինութիւնն պակասեցուցանէ, եւ յայտ է ի շինականացն, զի յորժամ իշխանութեամբ չարժին իշխանքն՝ թողուն եւ փախչին, իսկ յորժամ ընկերանայ՝ նոքա վարեն եւ առաւելացուցանեն զշինութիւնն»[4]:

Գիւղացիութեան փախուստը առաջն առնելու նպատակով դեռեւս իլխանութեան ժամանակ մշակուել էին մի շարք միջոցառումներ: Ռաշիդ-ադ-դինը յայտնում է, որ իրենց

1 Նոյն տեղում, էջ 50բ
2 Ձեռ. N 2229, էջ 143
3 «Քարոզ ի բանն՝ Մի գողանար», ձեռ. N 2229, էջ 133ա
4 «Քննութիւն Գործոց առաքելոց», ձեռ. N 1402, էջ 76ա

գրանցուած վայրերից այլ շրջաններ փախած գիւղացիների վերադարձման համար յատուկ պաշտօնեաներ էին ուղարկւում:

Զաւզայեցու նոյն «Բնութիւն Գործոց առաքելոց» աշխատութեան մի հատուածից կարելի է եզրակացնել, որ փախած գիւղացիների վերադարձման ու աւերակ մնացած շրջանների վերաբնակեցման համար աշխարհագիր էին կատարում: Ճիշտ է, այդ հատուածում մեր հեղինակն աշխատում է բացատրել Օգոստոս կայսեր ժամանակ տեղի ունեցած աշխարհագրի ինչ լինելը, բայց նրա տուած բացատրութիւնն անտարակոյս բխել է իրերի ժամանակակից վիճակից: Նա գրում է. «Զի աշխարհագիրն այն էր, որ զինչ տեղիք որ շատ էին բնակիչք՝ անտի առեալ տանէր յաւերականն եւ շինէր. եւ զինչ տեղւոյ շինական որ կայր ի յայլ տեղիս՝ զայն ի յիւր բնական հայրենիքն տանէր»[1]:

Բազմաթիւ տուեալներ ու ակնարկներ են ցրուած Զաւզայեցու աշխատութիւններում նաեւ գիւղատնտեսական աշխատանքների, աղբով այգիները պարարտացնելու պրակտիկայի եւ այլ յարակից հարցերի մասին, յիշատակուած են նաեւ երկրագործական մի քանի գործիքների անուններ եւ այլն եւ այլն: Առանց վարանումի կարելի է ասել, որ մեր հեղինակի մեկնողական ու աստուածաբանական բովանդակութեամբ աշխատութիւններն ու քարոզները շատ աւելի նիւթեր են պարունակում աշխատաւոր մասսաների կեանքի ու կենցաղի պայմաններն ուսումնասիրելու համար, քան մեր նշանաւոր պատմիչներից շատերի աշխատութիւնները:

Այս բանն աւելի ցայտուն կդառնայ քաղաքային կեանքի ու կենցաղի մասին Զաւզայեցու գրանցած տուեալների հետ ծանօթանալուց յետոյ: «Ի գլխոյն Ղուկասու հաւաքումն բանից» աշխատութեան մէջ մեր հեղինակը յայտնում է, որ Ղուկաս աւետարանիչը մարդկային բնութիւնն իրը նմանեցրել է քաղաքի հետ եւ այդ կապակցութեամբ քաղաքների արտաքինի մասին հաղորդում է յիշատակութեան արժանի տուեալներ: Քաղուածարար մէջբերում ենք աշխատութեան այդ մասից մի քանի հատուած.

«Քաղաքն ամրացեալ է պարսպօք եւ պուրջօք... Քաղաքն են տունք բաժանեալք ի միմեանց... Իւրաքանչիւր տունս գործի ուրիշ գործ... Բարերարքն պահեն ի քաղաքի, իսկ զվատթարս արտաքս հանեն... Սպասաւորք կարգեալ են ի քաղաքի՝ բերել նմա զամենայն ինչ... Բազում դրունք են քաղաքին...» եւ այլն[2]:

Իսկ «Բնութիւն Գործոց առաքելոց» իր ամենակարեւոր աշխատութեան մէջ մեր հեղինակն աւելի է ունենում պատասխան տալու այն հարցին, թէ քաղաքային բնակչութիւնն աշխատանքի բնոյթով ինչ խաւերից է բաղկացած: Քաղաքի բնակիչներին, Զաւզայեցու կարծիքով, կարելի է բաժանել 10 խմբի հետեւեալ կերպ.

*«**Նախ**՝ այնոքիկ, որ վայրապար շրջին, զի ոչ ունին գործ ի յայս անուն քաղաք եւ գնան:*

***Երկրորդ**՝ որ պատահմամբ կան, որպէս մորողքն, որ թէ պատահի՝ ուտեն եւ թէ ոչ՝ մնան (անօթի):*

***Երրորդ**՝ որ աշխատանօք ապրին, որպէս մշակք:*

***Չորրորդ**՝ որք հնարօք ապրին, որպէս արուեստաւորք:*

1 Ձեռ. N 1402, էջ 99ա

2 Ձեռ. N 1345, էջ 63ա-63բ

***Հինգերորդ**՝ բանահօգութեամբ, որպէս դալաք(?) եւ գեսպանք:*

***Վեցերորդ**՝ հարամութեամբ եւ գողութեամբ:*

***Եւթներորդ**՝ դատաստանու եւ իրաւամբք, որպէս դատաւորք:*

***Ութներորդ**՝ իմաստութեամբ եւ հանճարով, որպէս գիտունք, որք են ուսուցանողք:*

***Իններորդ**՝ ազօթիւք եւ պահօք, որպէս ճգնաւորք:*

***Տասներորդ**՝ իշխանութեամբ, որպէս հօգեւոր եւ մարմնաւոր թագաւորք»[1]:*

Չի կարելի ասել, թէ այս բաժանումը մեծ ճարտարութեամբ է կատարուած: Ակնբախ է քաղաքաբնակներին անպատճառ 10 խմբի բաժանելու ցանկութիւնը (սրանով պէտք է բացատրել, անշուշտ, գեսպանների ու աղօթողների համար յատուկ խումբ սահմանելը): Միեւնոյն ժամանակ չի կարելի չզարմանալ առեւտրականների մասին յիշատակութիւն չունենալու կապակցութեամբ:

Բերուած ցանկի վերոյիշեալ թերութիւնները, սակայն, մասնակի են, եւ այն, ամբողջովին վերցրած, զգալի հետաքրքրութիւն է ներկայացնում՝ լրացնելով մեր գիտելիքները միջնադարեան հայկական քաղաքների բնակչութեան դասերի մասին: Յատկապէս կարեւոր պէտք է համարել քաղաքներում մշակների գոյութեան մասին Մատթէոսի հաղորդած տեղեկութիւնը, որը լրացւում է նրա միւս աշխատութիւնների մէջ գրանցուած տուեալներով:

Պարզւում է, որ՝ «Մշակն ի վարձու ամենայն ոք վասն գործոյ կալնու... Ըստ կամաց Տեառն առնէ զգործն... Մի օրն մին դահեկան լինի մին մշակի վարձն... Մշակ ոք ոչ կարէ ազնիւ նիւթ գործել կամ կարել... Մշակն ոչ կարէ ինչս յետս ձգել վասն վաղուանն, զի հացիւ զաւուրն հանէ պայինի: Շալակով մանէ ի տունն... Զարչարեալ է մարմին մշակին՝ աղտոտեալ է սեւացեալ եւ նոյնպէս ննջէ» եւ այլն:

Այս հատուածները քաղուած են Զաւզայեցու «Զանազարուք մտանել ընդ դուռն նեղ» բնաբանով քարոզից[2], եւ նոյնը կրկնուած ենք գտնում նաեւ «Բնութիւն Գործոց առաքելոց» աշխատութեան մէջ[3]:

Այսպիսով, Զաւզայեցին հնարաւորութիւն է տալիս մեզ պարզելու, որ մշակները վարձւում էին քաղաքներում մասնագիտական պատրաստութիւն չպահանջող ամէն կարգի սեւ աշխատանքների, յատկապէս բեռնակրութեան համար: Նրանց ստացած աշխատավարձը հազիւ բաւարարել է օրուայ ապրուստի պարէնը («ինչս ոչ կարէ յետս ձգել վասն վաղուանն, զի հացիւ զաւուրն հանէ պայինի»): Սրանով, սակայն, չեն սպառւում մշակների մասին Զաւզայեցու աշխատութիւններում ցրուած տուեալները: Նա յայտնում է նաեւ, որ մշակներ կային նաեւ գիւղերում.

«Քանի՞ կերպիւ մարդ առնու ինչ ի մարդոյ» հարցին մի տեղ պատասխանում է՝ «չորս կերպիւ» եւ կերպերից մէկը համարում է վարձկանութիւնը. «զի,– շարունակում է նա,– լինի մշակ եւ հովիւ եւ այլ ինչ. եւ առնուն համարով աւուրց զվարձս»[4]. մի այլ տեղ ակնարկ ունի երկրագործական աշխատանքների ժամանակ վարձւող մշակների մասին, «որ յանդի եւ ի

1 Ձեռ. N 1402, էջ 155ա-155բ

2 Ձեռ. N 2157, էջ 41ա-41բ

3 Հմմտ. ձեռ. N 1402, էջ 102ա-102բ:

4 «Բնութիւն Գործոց առաքելոց», ձեռ. N 1402, էջ 118բ

հրապարակն աննեն (գործ) առանց պատկառանաց»[1]:

Մշակները պարտաւոր են աշխատել մինչեւ ուշ երեկոյ, «այլ թէ հիւանդանա ի կէսօրն՝ ոչ առնու զվարձն»[2], կամ՝ որ «ոչ արասցի զգործն կամաց վարձողին՝ ոչ առնու վարձ»[3] եւ այլն:

Գիւղերից քաղաք փախած ոչ բոլոր գաղթականներին էր յաջողւում մշտական կամ ժամանակաւոր գործ ճարել այնտեղ. այս մասին կարեւոր մի տուեալ կայ հայկական միջնադարեան առակներից մէկում[4]: Հաւանական է ուրեմն, որ մշտական աշխատանք եւ ապրուստի որեւէ այլ միջոց չունեցող քաղաքաբնակ սոցիալական այդ շերտը, այսօր վարձկան լինելով, վաղը կամ միւս օրը ստիպուած պէտք է լինէր մուրացկանութեան ձեռք կարկառել եւ կամ նոյնիսկ դիմել գողութեան: Դրանով պէտք է բացատրել այն հանգամանքը, որ Ջուղայեցին քաղաքի բնակչութեան շերտերի իր բաժանման մէջ յատուկ տեղ է տալիս «մուրացողներին» ու «հարամիներին եւ գողերին»: Եւ ուշագրաւն այն է, որ մեր հեղինակն արդարացնում է գողերին, որովհետեւ նրանք ապրուստի այլ միջոց չունենալու պատճառով էին դիմել այդ ծայրայեղ միջոցին:

Այս մասին Ջուղայեցու մօտ կարդում ենք. «Գիտելի է, զի զանազանել արժան է զգողին դէմսն եւ զընչից տէրսն: Քանզի են, որ աղքատք են ամենեւին եւ առնեն գողութիւն, եւ զայս անճարակութիւնն առնէ, այսպիսեացս ներելի է գողութիւնն, զի հարկաւոր պիտոյք բնութեանս հարկեաց առնել զգործն զայն»[5]: Միեւնոյն ժամանակ պատժի արժանի են համարւում բոլոր այն գաղտնի ու յայտնի գողերը, որոնք զրկում են ուրիշներին, թալանում ու յափշտակում ոչ թէ կարիքից դրդուած, այլ իրենց ունեցուածքը կրկնապատկելու, շռայլութեան ու զեխութեան մէջ ապրելու համար: Դրանց շարքին է դասում Ջուղայեցին կաշառառու իշխաններին, վանքերի ընչաքաղց առաջնորդներին, դիւանադպիրներին, որոնք խարդախում են փաստաթղթերը, ծուռ դատաւորներին, գիւղերի տանուտէրերին, որոնք հարկերի ծանրութիւնը բարդում են աղքատ համագիւղացիների վրայ, խաբեբայ առեւտրականներին, խարդախ արհեստաւորներին եւ նմաններին:

Այլ առիթով մենք արդէն ասացինք, որ Ջուղայեցու աշխատութիւնների մէջ յատկապէս մեծ տեղ են բռնում արհեստագործութեան ու առեւտրի վերաբերեալ այս կամ այն առիթով գրանցուած տուեալները: Դրանք կասկած չեն թողնում այն մասին, որ մեր հեղինակը երկար ժամանակ ապրել է հայկական քաղաքներում եւ ի մօտոյ ծանօթ է մի շարք արհեստների արտադրական պրոցեսներին ու առեւտրականների գործունէութեան մի շարք կողմերին:

Նրա աշխատութիւնների մէջ յիշատակուած են դարբնութիւնը, ոսկերչութիւնը, արծաթագործութիւնը, պղնձագործութիւնը, հիւսնութիւնը, ոստայնանկութիւնը, կերպասագործութիւնը, աղեգործութիւնը, պարանագործութիւնը, ներկարարութիւնը, դանկարարութիւնը, անծուղագործութիւնը եւ այլ արհեստներ: Իսկ որոշ դէպքերում նա ոչ միայն թռուցիկ յիշատակութիւն է անում արհեստագործութեան այս կամ այն ճիւղի մասին, այլ տալիս է արտադրական պրոցեսի ամբողջական նկարագրութիւնը, թուարկում է արհեստաւորի գործիքները,

[1] «Քարոզ վասն աղարճնութեանն», ձեռ. N 2229, էջ 180բ

[2] Ձեռ. N 6607, էջ 179բ

[3] Ձեռ. N 662, էջ 149ա

[4] Տե՛ս **Н. Я. Марр**, Сборники притч Вардана, часть II, тексты, СПб., 1894, с. 147:

[5] «Քարոզ ի բանն՝ Մի գողանար», ձեռ. N 2229, էջ 155բ

մի խօսքով՝ մատակարարում է հայ միջնադարեան արհեստագործութեան ուսումնասիրողներին անգնահատելի նիւթեր:

Ծանօթանանք այդ կարգի տուեալներից մի քանիսի հետ, որոնք յատկապէս շռայլօրէն ցրուած են Ջուղայեցու «Բնութիւն Գործոց առաքելոց» աշխատութեան մէջ:

Ահա ոստայնանկի աշխատանքի պրոցեսի եւ դազգահի ուշագրաւ նկարագրութիւնը. «...Ոստայնանկ, յորժամ ոստան հենէ, նախ չափէ զմի թելն եւ ապա հենէ. եւ ի գործելն՝ ոտիւքն եւ ձեռօք վճարէ. եւ զինչ գործէ՝ ծրարէ ի վերայ սալմնին, ոչ գիտելով, թէ զինչ գործեաց՝ մինչեւ վճարէ. եւ ի վճարելն հատանէ եւ ապա դարձեալ յետ տայ ի սալմնէն եւ կրկին չափէ եւ տեսանէ զգործն. թէ բարի է՝ փառաւորի ի տեսանելն գնա, եւ թէ գարշ է՝ տրտմի. եւ ի ծախելն կրկին փառաւորի՝ զգինս առնելով աշխատանաց իւրոց»[1]:

Սրանից պակաս հետաքրքիր չէ ճոնի աշխատանքի նկարագրութիւնը՝ դարձեալ նոյն աշխատութիւնից. «Ճոնն հանէ զայլ կենդանեաց մորթ եւ աղէ եւ չորացուցանէ եւ դարձեալ լուանայ եւ հանէ զմիսն եւ դնէ յաղոց՝ զարկ ալերբ եւ խմորով, եւ հանեալ դարձեալ չորացուցանէ եւ ապա գործէ եւ կակղէ եւ յետոյ ներկէ եւ ի բազում մորթոյ մի հանդերձ կարէ»[2]:

Այս նկարագրութիւնն ուշագրաւ է յատկապէս այն տեսակէտից, որ հնարաւորութիւն է տալիս պարզել աշխատանքի բաժանման ոչ խոր աստիճանը կաշեգործութեան մի բնագաւառի՝ մուշտակագործութեան մէջ: Ինչպէս պարզւում է, աշխատանքի բոլոր պրոցեսները, սկսած կենդանու կաշին քերթելուց մինչեւ մուշտակ կարելը, կատարուել են միեւնոյն արհեստաւորի (ճոնի) կողմից:

Արժէ ծանօթանալ նաեւ քիմխա կամ նաշիճ կոչուող թանկարժէք գործուածքի պատրաստման ուշագրաւ նկարագրութեան հետ: Ջուղայեցին յայտնում է, որ այդ արհեստը պատկանում է ծանր ու դժուար արհեստների թւին, եւ բացատրում է այսպէս. «զի զվարազ ոսկին ի վերայ մորթոյ կացնեն եւ մանր թել կտրեն եւ այնպէս հնարեն ի գործելն, որ այն բարակ թելին ոսկին երեւի ի վեր լինի. եւ վասն այսորիկ դժուար է այս գործ քան զամենայն ինչ...»[3]:

Նոյն տեղում «զի՞նչ է պիտոյ կարգացողացն» հարցին Ջուղայեցու տուած պատասխանի մէջ մէկ առ մէկ թուարկւում են դարբնի բոլոր գործիքներն ու պարագաները. «Կռանն եւ պլէշտիկն, քուրան եւ կրակն, փուքսն, գործելին, դազն եւ կռանաւորքն, երկաթն եւ յետ ամենեցուն ջուրն, որով մխէ եւ ամրի»[4]:

Կարելի էր մէջբերել նաեւ աղեգործութեան, պարանագործութեան, ներկարարութեան եւ այլ արհեստների մասին Մատթէոսի հաղորդած տուեալներից քաղուածքներ, բայց բաւականանանք սրանով եւ անցնենք առեւտրի ու շուկայական հաստատութիւնների մասին մեր հեղինակի հաղորդած տուեալներին:

Յայտնի է, որ մոնղոլական ծանր տիրապետութեան ընթացքում Հայաստանի ու հարեւան երկրների քաղաքներին ծանր հարուած հասցուեց: Համաշխարհային առեւտրի մէջ նշանակալից դեր կատարող մի շարք բազմամարդ քաղաքներ մոնղոլական տիրապետողների գիշա-

[1] Ձեռ. N 1402, էջ 64ա

[2] Նոյն տեղում, էջ 189բ–190ա

[3] Նոյն տեղում, էջ 10ա

[4] Նոյն տեղում, էջ 19ա–19բ

տիչ հարկային քաղաքականութեան հետեւանքով աստիճանաբար անկման դիմեցին: Քաղաքների մի մասն էլ շարունակում էր իր գոյութիւնը, սակայն շատ աւելի համեստ մասշտաբներով էր մասնակցում տարանցիկ առեւտրին: Այնուամենայնիւ սխալ կլինէր կարծել, թէ Մատթէոս Ջուղայեցու ապրած ժամանակաշրջանում Հայաստանի քաղաքներն ամբողջովին կորցրել էին իրենց նշանակութիւնը՝ որպէս միջազգային տարանցիկ առեւտրի կարեւոր հանգրուաններ:

Թաւրիզից դէպի Սեւ ու Միջերկրական ծովերի նշանաւոր նաւահանգիստները տանող երբեմնի բանուկ ճանապարհների վրայ, որոնք իրենց մի մասով անցնում էին Հայաստանի վրայով, դեռեւս շարունակում էին իրենց գոյութիւնը մի շարք քաղաքներ (Երզնկա, Խլաթ, Արճէշ եւ այլն): Հայ առեւտրականները կարեւոր դեր էին կատարում նաեւ հարեւան երկրների առեւտրի ու արհեստագործութեան նշանաւոր կենտրոններում՝ Թաւրիզում, Սուլթանիայում, Գանձակում, Թիֆլիսում, Ամիդում, Հալէպում եւ այլ մարդաշատ քաղաքներում:

Հայ խոշոր առեւտրականները, որոնք այս շրջանում խօջայ կոչումով են հանդէս գալիս աղբիւրներում եւ, շարժական ու անշարժ հսկայական կալուածքների տէր դառնալով, կոչւում են նաեւ մեծատուններ, բացի առեւտրական գործունէութիւնից, զբաղւում էին նաեւ վաշխառութեամբ, հարկերի կապալառութեամբ, իսկ յաճախ նաեւ կատարում էին երկրի տէրերի յանձնարարութիւնները՝ որպէս դիւանագէտներ ու դեսպաններ:

Մատթէոս Ջուղայեցու աշխատութիւններում ուշադրութեան արժանի վկայութիւններ կան նաեւ առեւտրականների ու վաշխառուների գործունէութեան մասին: Այսպէս՝ իր քարոզներից մէկում Ջուղայեցին յայտնում է, որ աւազակները «ոչ կարեն յամենայն ժամ աւազակութիւն առնել եւ ոչ յամենայն տեղիս», իսկ վաշխառուները, ընդհակառակը, «վաշխ առնուն յամենայն ժամ՝ զցայգ եւ զցերեկ, եւ յամենայն տեղիս՝ ի մէջ մարդկան եւ ի մէջ հրապարակի, եւ զամենայն թագաւոր, զիշխան, զաղքատ եւ զամենայն ոք»[1]:

Միանգամայն ճիշտ տուեալ է հաղորդում մեր հեղինակը. վաշխառուներն իրենց շօշափուկները տարածել էին տնտեսութեան բոլոր բնագաւառներում, եւ նրանցից կախման մէջ էին գտնւում նոյնիսկ տիրապետող դասակարգի ազդեցիկ ներկայացուցիչներից շատերը:

Երկրի տիրապետողները, շահագրգռուած լինելով, մտահոգւում էին առեւտրական ճանապարհներն ապահով դարձնելու խնդրով, այնուամենայնիւ յարատեւ ու արիւնալի պատերազմական բախումների, ֆեոդալական ու միջցեղային կռիւների պայմաններում, պարզ է, որ առեւտրականները ստիպուած պէտք է լինէին ինքնապաշտպանութեան դիմելու: Ճանապարհներն ապահով չէին նաեւ գողերից ու աւազակներից. «Նոքա են գողք,- գրում է Ջուղայեցին,- որք ի ճանապարհի եւ յանդաստ եւ ի կիրճս լերանց նստեալ զպահողն յայտնապէս յափշտակեն, որոց եւ գեղջուկքն հարամի ասեն»[2]: Առեւտրական քարաւանները այդ պայմաններում շարժւում էին միայն զինուած ջոկատների ընկերակցութեամբ: «Զի զէնք եւ հեծեալս առնուն ընդ յինքեանց (ճանապարհորդք), զի թշնամիքն յաղթեալ՝ սատակեսցին զնոսա»,- յայտնում է Ջուղայեցին[3]:

Քաղաքների շուկաներում ու փողոցներում կատարուող առեւտրի եղանակի մասին Ջու-

1 «Քարոզ վասն Է՛ մահու չափ մեղաց», ձեռ. N 2114, էջ 275բ
2 «Քարոզ ի բանն՝ Մի գողանար», ձեռ. N 2229, էջ 132ա
3 «Քարոզ մահու», ձեռ. N 2229, էջ 160բ

ղայեցին առիթ է ունենում օգտակար տուեալներ հաղորդելու «Քննութիւն Գործոց առաքելոց» աշխատութեան մի հատուածում, որտեղ ստուգաբանում է «փողոց» բառը: Նա ելնում է Տաթեւի համալսարանի միջավայրում քաղաքացիութիւն ստացած այն սկզբունքից, ըստ որի առարկաների անունները դրուած են նրանց յատկութիւններին համապատասխան: Նրա կարծիքով՝ «փողոց» բառը կապ ունի «փող» (դրամ), «փող» (շնչափող) եւ «փոխ» բառերի հետ, որովհետեւ փողոցում «**փողով** են ամենայն արուեստք, որ ի նմա կատարի, զի առանց փողի ոչ առնուն եւ ոչ տան», կամ «այս ինչ տան եւ զայլն **փոխեն**, որպէս զարծաթն տուեալ եւ ի նորին տեղւոյն առնուն հաց կամ այլ ինչ», նաեւ այն պատճառով, որ «զամենայն ինչ ի նմա իբրեւ **փողիւ** գոչէ, թէ աստ եմ, մանաւանդ տեարք ընչից ձայնեն՝ այս ինչ է առ իս»:

Հետաքրքիր է նաեւ շարունակութիւնը. «Զղալպն (դրամի) յայտնեն, զի ամենայն ոք գնէ եւ վաճառէ ի միտս իւր թիւրութիւն, իբր թէ զվաճառականս իմ խաբեցից... Այլ ստուգաբանութեամբ է, զի այն տեղիքն ոչ է այնպէս, զի զբնակիչս իւր յաւիտեանս պահէ, այլ այսօր այս անուն խօճայ, ի վաղիւն՝ **փոխի** միւս ի տեղի նորա»[1]:

Ոչ պակաս հետաքրքրութիւն է ներկայացնում նոյն աշխատութեան մի այլ հատուածը, որը նուիրուած է կրպակ, գողբակ, խանութ, փուտկա եւ պանդոկ բառերի ստուգաբանութեանը: Ջուղայեցու կարծիքով՝ այդ բոլոր տերմինները միեւնոյն իմաստն ունեն՝ «ամենեքեան սոքա զմի իր նշանակեն, որ այժմ այլ լեզու քարուանսարահ կոչեն»: Յայտնի է, որ պանդոկը, նման եկեղեցու, բաժանուած է լինում երեք բաժինների՝ «երիս տապաղայս. ի ներքոյ անասունքն, եւ ի միջին՝ մարդիկն եւ փոքր ապրանք, իսկ վերջինն՝ պատուական ապրշմեղէնք, ոսկեղէնք եւ ակունք պատուականք»[2]:

Մ. Ջուղայեցու եւ նրա ժամանակակից այլ հեղինակների աշխատութիւններում նմանօրինակ տուեալներ շատ կան, եւ հաւանական է, որ այդ տուեալների հաւաքման ու ի մի բերման միջոցով միայն հնարաւորութիւն կունենանք լրացնել այն խոշոր բացը, որ սկզբնաղբիւրների պակասութեան հետեւանքով գոյութիւն ունի միջնադարեան հայկական քաղաքների ուսումնասիրութեան բնագաւառում:

Ոչ պակաս արժէքաւոր տուեալներ է հաղորդում մեր հեղինակը նաեւ քաղաքային մշակոյթի, քաղաքներում տեղի ունեցող թատերական ներկայացումների, երիտասարդ քաղաքացիների հաւաքոյթների ու զուարճութիւնների մասին: Իր քարոզներից մէկում, օրինակ, ի նկատի ունենալով ամենայն հաւանականութեամբ քաղաքի արհեստաւորական ու առեւտրական շերտերին, նա գրում է. «աներկիւղք եւ պակասամիտք եղեալ ի թատերս նստին անամօթացեալք եւ ի գիւտմոլ տեսարանէն աներեւոյթ նետով վիրաւորին եւ թէպէտ ոչ մարմնով, սակայն զոգիս պղծեալ ապականին»[3]:

Հայագիտութիւնը դեռեւս ստոյգ տուեալներ չունի իր տրամադրութեան տակ միջնադարեան թատերական ներկայացումների բովանդակութիւնը որոշելու համար: Ցաւօք, այդ կարգի տուեալներ չեն գտնւում նաեւ Մատթէոս Ջուղայեցու աշխատութիւններում: Այնուամենայնիւ այլ աղբիւրների հետ մէկտեղ հարցի քննարկման ժամանակ ուշադրութիւն են գրաւելու նաեւ մեր հեղինակի կողմից գրանցուած հետեւեալ երկու տուեալները. «Ըմբշամարտք յորժամ ի թէատրոնն ընթանան մեծամեծք եւ փոքունք յարուցեալ մի զմիմեամբք անցանեն,

1 «Քննութիւն Գործոց առաքելոց», ձեռ. N 1402, էջ 183ա
2 Նոյն տեղում, էջ 266ա–266բ
3 «Քարոզ ցասման, ի բանն՝ Տէր Աստուած մեր, տուր մեզ...», ձեռ. N 2229, էջ 251բ

զի տեսանիցեն զբաջութիւնս նոցա»[1]:

Որ թատրոններում տեղի էին ունենում նաև ըմբշամարտութիւններ, այդ յայտնի է նաև այլ աղբիւրներից:

Յաջորդ մէջբերումը քաղում ենք Ջուղայեցու «Հաւաքումն բանից, որ հայի առ Զ աւուր գործս Աստուծոյ» աշխատութիւնից. «Թագաւորք,– գրուած է այնտեղ,– նստեալ ի վերայ ապարանից իւրեանց՝ տեսանիցէ զխաղս թէատրոնի եւ ծաղր առնէ զնոսա»[2]:

Ցանկալի էր այստեղ ակնարկուած ներկայացման բովանդակութեան մասին աւելի շատ բան լսել, սակայն եղածն էլ բաւական է հաւատալու համար, որ տեղի են ունեցել նաև ծիծաղաշարժ բովանդակութեամբ ներկայացումներ:

Միջնադարեան քաղաքներում բանթօղից յետոյ երիտասարդ արհեստաւորներն ու առեւտրականները յաճախ հաւաքւում էին խնջոյքի ու գինարբուքի: Այդտեղ էին մեր գուսանները երգում իրենց սիրոյ ու զուարճութեան երգերը, գեղեցկուհի վարձակները՝ պարում երաժշտական գործիքների նուագակցութեան տակ: Հնչում էին աշխարհիկ բովանդակութեամբ տաղերն ու հայրենները: Եկեղեցական մատենագիրներից շատերն են պայքարել այդպիսի հաւաքոյթների դէմ. դրանցից է նաև մեր հեղինակը: Այդ երիտասարդներին Ջուղայեցին «լկտի» ու «յանդուգն» է համարում, իսկ նրանց մէջլիսներում կատարուածը՝ «աղտեղութիւն»: Նա գրում է. «Յամենայն աւուր լկտիքն ու յանդգունքն ի քաղաքի ժողովին եւ ազգի ազգի աղտեղութիւն առնեն, որ յերեկոյի ժամուն սայրան ասեն»[3]:

Մէջբերուած տուեալներով հարկաւ չեն սպառւում Մատթէոս Ջուղայեցու հաղորդած տուեալները միջնադարեան մշակոյթի ու գրականութեան տարբեր բնագաւառների վերաբերեալ: Մի տեղ, օրինակ, նա աշխատում է բացատրել, թէ ճանճրութեան դեւը մարդկանց ինչ որոգայթների մէջ կարող է նետել: Թուարկուած որոգայթներից առաջինն այսպէս է որոշուած. «առեալ տա զուսումն եւ ասէ՝ զի՞նչ է այդ ամենայն, ո՞ կարէ ուսանել. եւ ազգի ազգի է. այս չարական է, եւ միւսն խաղտեսր, եւ կցորդ, եւ Սողոմոն: Մին փոխ Նարեկացի լաւ է, քան զամենայն սաղմոս Դաւիթի»[4]:

Այլեւայլ առիթներով իր աշխատութեան մէջ Ջուղայեցին մէջբերում է նաև ժողովրդական ասածներ, որ «գեղջուկքն ասեն». դրանցից է՝ «սրտին սէրն ի տուրս ձեռին երեւի» եւ «սուտ վկային հուրն է բաժին»:

Մի յօդուածում անհնար է սպառիչ խօսք ասել Ջուղայեցու աշխատութիւններում իր ժամանակի սոցիալ-տնտեսական յարաբերութիւնների, մշակութային երեւոյթների, ժողովրդի կեանքի ու կենցաղի հարցերին վերաբերող առատօրէն ցրուած բոլոր նիւթերի մասին:

Մեր հեղինակը շատ կարեւոր տուեալներ ունի նաև միջնադարեան հերձուածողների մասին, որոնք «զայսմ աշխարհի զուտեյն եւ ըմպելն եւ զհեշտութիւնն քարոզեն», բազմաթիւ տեղեկութիւններ է հաղորդում ծառաների իրաւական ու տնտեսական վիճակի մասին, անդրադառնում է վանական տնտեսութեանը եւ որոշում վանքի գործաւորների պարտաւորութիւնները, գործածում է սոցիալական, ադմինիստրատիւ, հարկային ու իրաւական բազմաթիւ

1 «Քննութիւն Գործոց առաքելոց», ձեռ. N 1402, էջ 173ա

2 Ձեռ. N 774, էջ 310ա

3 «Քննութիւն Գործոց առաքելոց», ձեռ. N 1402, էջ 232ա

4 «Վասն քարոզութեան բանի», ձեռ. N 6607, էջ 52

տակաւագիտ տերմիններ (օրինակ՝ հող, տոնլուխ, բասխախ, ղապալայ, ճորտ) եւ այլն եւ այլն:

Այս բոլորից յետոյ տարակուսել չի կարելի այն բանում, որ Մատթէոս Ջուղայեցին գրաւելու է իր վրայ միջնադարեան պատմութեան այլեւայլ բնագաւառներն ուսումնասիրող պատմաբանների սեւեռուն ուշադրութիւնը:

Բայց նրա կողքով սահմանսրտօրէն չպէտք է անցնեն նաև միջնադարեան հայ հասարակական մտքի ու գիտութիւնների պատմութեան հարցերով զբաղուող մասնագէտները: Նրանց ուշադրութեանը ներկայացնենք մի քանի ուշագրաւ փաստեր:

Մեր կարծիքով՝ Ջուղայեցին առաջին հայ հեղինակն է, որ փորձել է որոշել, թէ որոնք են բնութեան մէջ ի սկզբանէ ստեղծուած նիւթերը: Նրա կարծիքով՝ այդ նիւթերն են ոսկին, արծաթը, պղինձը, անագը, կապարը, երկաթը, լաժվարդը, միպակը, ծծումբը եւ զանազան թանկագին քարերը[1]: Նա ձգտել է տալ նաև վերոյիշեալ սկզբնական նիւթերի յատկութիւնները եւ տարբերութիւնները միմեանց նկատմամբ: Պղնձի յատկութիւններն, օրինակ, նա բնորոշում է հետեւեալ կերպ. «Իսկ պղինձն ունի բազում յատկութիւն. նախ՝ զի ժանգ ունի բնական եւ զառն է եւ առանց կապարի ոչ հալի: Երկրորդ՝ զի մաչէ զգործօնեայս իւր: Երրորդ՝ զի վնասակար հոտ ունի...: Չորրորդ՝ զի սրակ կարմիր ունի: Հինգերորդ՝ զի ապականիչ է ոսկոյ եւ արծաթոյ: Վեցերորդ՝ զի միայնակ ինքն ոչ ունի գեղեցկութիւն եւ ոչ յանօթ պիտոյանա: Եւթներորդ՝ զի ջեռուցանէ զջուրն: Ութերորդ՝ զի ազդումն տա ի կերակուրն փութով: Իններորդ՝ զի ջերմութիւն հրոյն թափանցէ ի նա խակոյն, յորժամ հասանէ ի նա: Տասներորդ՝ զի նա է միաւորիչ երկաթի»[2]: Նման ձեւով նա որոշում է նաև միւս նիւթերի յատկութիւնները:

Պարզ է, որ Ջուղայեցու այս աշխատութիւնն արժանի է մեր քիմիկոսների ուշադիր քննութեանը:

*Շատ աւելի մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում, մեր կարծիքով Մատթէոսի բնագիտական հայացքները: Իր քարոզներից մեկում նա արտայայտում է այն միտքը, որ մարդիկ եւս սկզբից եղել են չորքոտանի, յետոյ միայն, անհրաժեշտութիւնից դրդուած նրանք կանգնել են հետեւի ոտքերի վրայ, իսկ առաջին երկուսը ուղղելով՝ դարձրել են իրենց համար դործիք: Անասունների եւ մարդկանց տարբերութիւնը Ջուղայեցու կարծիքով հենց կայանում է նրանում, որ անասունները զուրկ են մտածելու ունակութիւնից, ուստի եւ չորքոտանի են մնացել:**

Բնագիտութեան մասնագէտներին թողնելով այս շատ ուշագրաւ մտքի արժեքաւորումը, անհրաժեշտ ենք համարում առանց կրճատման մէջ բերել նշուած քարոզի մեզ հետաքրքրող հատուածն ամբողջութեամբ, հնարաւոր կասկածների առաջն առնելու համար:

1 Տե՛ս «Հաւաքումն բանից, որ հայի առ Զ աւուր գործս Աստուծոյ», ձեռ. N 774, էջ 331բ–332ա:

2 Ձեռ. N 774, էջ 333ա

* Լ. Խաչիկեանի այս եզրայանգումը վերանայելի է: Նախ՝ Մատթէոս Ջուղայեցուց վկայակոչուած հատուածում *կանգնեցաւ* ձեւը կրաւորական է, ինչը մեծանուն մատենագէտը իբրեւ ներգործական ձեւ է ընդունել: Քարոզում միարժէքօրէն շեշտուած է, որ մարդն արարուել է Աստուծոյ կողմից պատուի եւ փառքի մէջ եւ մեղքի անկումով կորցրել իր սկզբնական կատարելութիւնը, ոչ թէ՝ անկատար կենդանական կերպերից հասել մարդկայինին: Այս միտքը յստակօրէն արտայայտւում է արդէն քարոզի բնաբանում. «Մարդն ի պատուի էր եւ ոչ իմացաւ, հաւասարեաց անասնոց անբանից եւ նմանեաց նոցա» [Սաղմ. ԽԸ 13] (Մեսրոպ քահանայ Արամեան):

«Զի մարդս,- գրում է Ջուղայեցին,- կրկին գործ ունի առնել. մին՝ զի ոտքն ընթանայ, եւ միւսն՝ զի առնէ արուեստ եւ գործէ զերկիր ձեռօք: Արդ, զի անասունք ոչ ունին միտք, որով արուեստ առնեն, վասն որոյ ոչ պիտոյանայ նոցա ձեռք, իսկ մարդս ունի իմաստութիւն եւ գիտութիւն եւ արուեստ եւ բան, որոց կարօտանան ձեռք, վասն որոյ ի հարկէ ի վերայ երկուց ոտից կանգնեցաւ եւ զերկուսն ուղղեալ գործի շինեաց բնութիւն բանին եւ արուեստին»[1]:

Իր կեանքի վերջին տարիներին, ինչպէս արդէն նշել ենք, Մատթէոս Ջուղայեցին վիրաւորանքներ է կրել իր «անգութ եւ անհնազանդ» աշակերտներից եւ դառնօրէն վշտացել «սուտ եղբայրների» հալածանքներից: Նա ոչինչ չի յայտնում այդ վիրաւորանքների ու հալածանքների պատճառների մասին. մենք էլ վաղաժամ ենք համարում որոշակի որեւէ բան ասել. բայց չի՞ կարելի արդեօք մտածել այն մասին, որ Ջուղայեցուն հալածել ու վշտացրել են հէնց նրա արտայայտած ուշագրաւ գաղափարների համար:

Իր վերջին աշխատութեան յիշատակարանում մեր հեղինակը վշտով արձանագրում է այն փաստը, որ հայերը օտարամոլ են, խոնարհւում են այլազգի հեղինակութիւնների առջեւ եւ, ընդհակառակը, արհամարհում են սեփական գիտնականներին նոյնիսկ այն դէպքում, երբ օտարների նկատմամբ նրանք ունեն ակնառու առաւելութիւններ: «Այլ եւ սովորութիւն է բնական մերոյ ազգիս,- գրում է նա,- ի յօտար ազգաց իմաստից բանին ցանկալ եւ որոնել, թէեւ կարի յետնոց է արարեալ եւ զնոյն ընթեռնուլ եւ զիւրոյ հօր, թէեւ կարի մեծաց է աշխատեալ՝ ոչ ընդունել. վասն որոյ աղաչեմ՝ մի զանմտութիւնս զայս ի գործ ածել, այլ ընդ օտարացն եւ զքոյսս սիրել եւ մեծարել»[2]:

Ճշմարտացի քննադատութեան այս խօսքն աւելորդ չի լինի կրկնել նաեւ մեր ժամանակներում թէկուզեւ այն պատճառով, որ մենք մոռացութեան ենք մատնել Մատթէոս Ջուղայեցու նման մի խոշոր գործչի ու գիտնականի:

***

Մատթէոս Ջուղայեցին միակը չէ միջնադարեան մոռացուած կամ պատշաճ ուշադրութիւն չգրաւած հեղինակներից: Այս կամ այն չափով նրան են նմանւում Սարգիս Շնորհալին, Վարդան Այգեկցին, Վարդան Արեւելցին, Յակոբ Կլայեցին, Բարսեղ Մաշկեւորը, Առաքել Սիւնեցին եւ բազմաթիւ այլ՝ իրենց ժամանակ մեծ դեր կատարած մատենագիրներ ու գիտնականներ: Նրանց մեծագոյն մասը թողել է մեզ միայն աստուածաբանական աշխատութիւններ, կրօնական մեկնութիւններ եւ բարոյագիտական քարոզներ: Դրանց մէջ, ճիշտ այնպէս, ինչպէս Մատթէոս Ջուղայեցու աշխատութիւններում, հսկայական օգտակար նիւթ կայ գրանցուած:

Կարծում ենք, որ հասունացել է միջնադարեան մեր մատենագիրների այդ կարգի աշխատութիւններից ըստ թեմաների կամ ըստ հեղինակների կազմուած քաղուածոյ ժողովածուներ հրատարակելու ժամանակը: Այդ ճանապարհով միայն հնարաւոր կլինի մասամբ լրացնել սկզբնաղբիւրների այն խոր պակասը, որ զգում է իւրաքանչիւր պատմաբան իր աշխատանքի հէնց առաջին քայլափոխին, երբ փորձում է ձեռնարկել միջնադարեան Հայաստանի ներքին կեանքի եւ սոցիալտնտեսական յարաբերութիւնների ուսումնասիրման գործը:

---

1 «Քարոզ ի բանն՝ Մարդ պատուի էր եւ ոչ իմացաւ», ձեռ. N 2229, էջ 109ա

2 «ԺԷ դարի յիշատակարաններ», էջ 120-121

ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆՅԱՅՏ ԷՋԵՐԻՑ*

Վերջին երկու տասնամեակների ընթացքում Մաշտոցի անուան Մատենադարանի հայերէն ձեռագրերի հաւաքածուն աճել է աւելի քան հազար միաւորով: Նոր ձեռք բերուած ձեռագրերի շարքում իր բովանդակած հետաքրքրական նիւթերով ուրոյն տեղ է գրաւում անշուք արտաքին ունեցող փոքրիկ այն ձեռագիրը, որ գրանցուած է 9832 համարի տակ: Նրա մասին առիթ ենք ունեցել արդէն մեր խօսքն ասելու՝ հրատարակելով ուղեգրական եւ պատմագրական երկու փոքրիկ բնագրեր[1]: Այժմ, գիտական շրջանառութեան մէջ ենք դնում նոյն ձեռագրի նիւթերից երկու ժամանակագրութիւն. մէկը՝ նուիրուած Լանկ-Թամուրի դէպի Իրան եւ Անդրկովկաս կատարած առաջին արշաւանքին առնչուող դէպքերին, միւսը՝ 1392-1443 թթ. տեղի ունեցած քաղաքական կարեւոր անցուդարձերին:

Ստորեւ քննարկելու ենք այդ բնագրերը՝ փորձելով որոշել նրանց հեղինակային պատկանելութիւնն ու պատմա-բանասիրական արժէքը:

1. ՍՏԵՓԱՆՆՈՍ ԵՒ ՆԵՐՍԷՍ ՄԵԾՈՓԵՑԻՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հայ պատմագիրներից Թովմա Մեծոփեցին է առաւել մանրամասնօրէն անդրադարձել Լանկ-Թամուրի առաջին արշաւանքին՝ նկարագրելով 1386-1387 թթ. Հայաստանում տեղի ունեցած ողբերգական անցուդարձերը: Գերիշխում է այն տեսակէտը, որ նա «իբր ականատես գրէ զգործոց Լանկթամուրայ եւ այլոց բռնաւորաց»[2], սակայն այժմ, երբ յայտնի է Մեծոփեցու ծննդեան ճշգրիտ տարեթիւը (1378)[3], դժուար է այլեւս հաւատալ, որ ապագայ պատմագիրը, լինելով ընդամէնը 9 տարեկան մի մանուկ, ի վիճակի էր իր յիշողութեան մէջ ամբարել վաղ պատանեկութեան տարիներին տեղի ունեցած խառնաշփոթ ու բարդ եղելութիւնների յիշատակները՝ տասնամեակներ յետոյ դրանք հանգամանօրէն վերապատմելու համար: Եւ ահա, վերոյիշեալ N 9832 ձեռագրում պահպանուել է Լանկ-Թամուրի 1386-1387 թթ. արշաւանքի մասին հէնց այն սկզբնաղբիւր-պատմութիւնը, որն իր ձեռքի տակ ունեցել եւ լայնօրէն օգտագործել է Թովմա Մեծոփեցին:

Ըստ բովանդակութեան՝ պատմագրական այս երկը կարելի է բաժանել ութ հատուածների, որոնցից իւրաքանչիւրը նուիրուած է մի որոշակի դրուագի նկարագրութեանը: Ստորեւ թուարկում ենք այդ հատուածները՝ համառօտակի ներկայացնելով նրանց պարունակութիւնը:

1. Լանկ-Թամուրը քաղաքական պայքարի ասպարէզ է իջնում եւ սկսում իր նուաճումները:

---

* «Պատմա-բանասիրական հանդէս», 1972, N 4, էջ 231-248

1 «Սարգիս աբեղայի ուղեգրութիւնը» («Պատմա-բանասիրական հանդէս», 1970, N 3, էջ 125-148) եւ «Յակոբ Սանահնեցի՝ ժամանակագիր XI դարի» («Բանբեր Երեւանի համալսարանի», 1971, N 1, էջ 22-48)

2 Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, Ա, Վենետիկ, 1784, էջ 17

3 1444 թ. շարադրուած իր մի յիշատակարանում Թ. Մեծոփեցին ինքնակենսագրական տուեալներ է հաղորդում. «Եւ ես,- գրում է նա,- ԿԶ (66) տարոյ եմ» («ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», Ա, Երեւան, 1955, էջ 567), ըստ այդմ՝ ծնուել է 1378 թ.:

2. Արշաւում է Հայաստան: Կողքի տանուտէրը փրկում է իր գիւղի եւ շրջակայքի բնակչութեանը՝ դիմադրութիւն կազմակերպելով Թակալթու լեռան վրայ:

3. Գետարգել սուրբ Նշանն անյայտանում է:

4. Վրաց Բագրատունիների ծագումը: Բագրատ V Թագաւորը (1360–1393), ծուղակի մէջ գցելով, բնաջնջում է Թամուրեան մի զօրախումբ, որը դրուել էր իր հրամանատարութեան ներքոյ վրացական ցեղերի նուաճման համար:

5. Թամուրը բախւում է Կարա-կոյունլու ցեղախմբի առաջնորդ Ահմադի եւ նրան ենթակայ ամիրների զինական ուժերին: Մշոյ դաշտում տեղի է ունենում ճակատամարտ Թամուրեանների եւ Փիր-Հասան ցեղապետի աշխարհազօրի միջեւ: Թամուրեանները պարտութիւն են կրում: Կենտրոնական Հայաստանի մի շարք շրջանների բնաւեր եղած բնակչութիւնը փրկւում է կոտորածից ու գերութիւնից:

6. Թամուրը գալիս է Մուշ, այցելում ճակատամարտի վայրը եւ, երկնային պատիժ համարելով իր զօրախմբի բնաջնջումը, հրաժարւում է Փիր-Հասանի դէմ պատժիչ արշաւանք ձեռնարկելու մտքից:

7. Արծկէ քաղաքում բռնում են Կարապետ անունով ջուղայեցի մի աբեղայի, որ վերադառնում էր Երուսաղէմից, եւ Թամուրի հրամանով եպիսկոպոս ձեռնադրելով՝ ուղարկում են Սամարղանդ՝ որպէս հոգեւոր հովիւ այնտեղ հաստատուած հայերի: Այս կապակցութեամբ վերապատմւում են Սմբատ Վրկան մարզպանի ժամանակ միջինասիական երկրամասերում ի յայտ բերուած հայկական բնակչութեան մասին առկայ տուեալները:

8. Թամուրը գրաւում է Վան քաղաքը. պարսպից վար նետուած մարդկանց դիակներից այնքան բարձր դէզ է գոյանում, որ յետոյ նետուածներն այլեւս չեն մահանում: Թամուրեան մի իշխան ազատ է արձակում իրեն բաժին ընկած գերիներին՝ փրկելով Վասպուրական նահանգն իսպառ ամայութիւնից:

Այս տուեալներին յաջորդում է մի փոքրիկ պարբերայթ Լանկ-Թամուրի երրորդ արշաւանքի մասին, որի ընթացքում պարտութեան են մատնուել օսմանեան բանակները, եւ գերեվարուել է զօրեղ սուլթան Բայազիտ Ա Յըլդըրումը (1402 թ. յուլիս): Այս գրանցումն ըստ երեւոյթին կատարել է մէկ ուրիշ անձնաւորութիւն՝ Թերեւս ժամանակագրական նախորդ գրուածների յետագայ ընդօրինակողներից մէկը:

Արդ, ո՞վ է քննարկուող երկի հեղինակը:

Այս հարցին պատասխան տալու համար 5-րդ գրուածքում կան հակասական տուեալներ: Պատմելով Քաջբերունեաց երկրի հայ բնակչութեան դէպի Տարօն կատարած փախուստի մանրամասնութիւնները՝ հեղինակը յայտնում է, որ այդ բազմութիւնը դիմել է դէպի Մշոյ Սուրբ Կարապետի վանք իր՝ Ստեփանոս վարդապետ Մեծոփեցու եւ Ներսէս եպիսկոպոսի գլխաւորութեամբ: «Եւ ես Ստեփանոս վարդապետ Մեծոփեցի եւ Ներսէս եպիսկոպոսն զփախստական քրիստոնեայքն հանաք ի Սուրբ Կարապետ վանն զի Թամուրն քաղցր աչօք էր հայեալ ի յԱրկար եպիսկոպոսն»,– գրում է նա:

Այսպէս՝ դիւրին եւ մէկէն հեղինակի հարցը պարզուած կարելի էր համարել, եթէ ընդամէնը մի քանի տող յետոյ, Քաջբերունիքից փախուստ տուած ժողովրդի Խոյթի լեռներում կրած տառապանքներին անդրադառնալով, հեղինակն իր մասին գրած չլինէր. «Զոր եւ ես, Ներսէս եպիսկոպոս կայի ի մէջ նոցա» նախադասութիւնը:

Ըստ այդմ, որպէս պատմական գրուածների հեղինակ, մէկ դէպքում Ստեփանոս վարդապետն է ընթերցողին ներկայանում առաջին դէմքով (ընկերակցութեամբ Ներսէս եպիսկոպոսի), միւս դէպքում՝ Ներսէս եպիսկոպոսը միայնակ (առանց Ստեփանոսի):

Այս երկուսն էլ Քաջբերունեաց գաւառի անուանի եկեղեցական գործիչներից են: «Հեզահոգի եւ սրբազան» Ներսէս արքեպիսկոպոսը, Թ. Մեծոփեցու վկայութեամբ, եղել է Մեծոփայ վանքի յետագայ առաջնորդ Յովհաննէս վարդապետին քահանայ ձեռնադրողը[1], ուստի եպիսկոպոս էր արդէն 1374 թ. կամ դրանից էլ մի քանի տարի առաջ[2]: Մեր ժամանակագրութեան տուեալներով՝ նա այդ պաշտօնում է եղել նաեւ Լանկ-Թամուրի առաջին արշաւանքի փոթորկայոյզ տարիներին: Ներսէսի կեանքի վերջին շրջանի մասին տուեալներ չեն պահպանուել, ուստի չգիտենք՝ երբ է կնքել իր մահկանացուն: Կարծում ենք, որ ոտք չի դրել XV դարի շեմին:

Ստեփանոս վարդապետի մասին առկայ տուեալներն աւելի յստակ են. եղել է Յովհաննէս Մեծոփեցու ընկերակիցը, շուրջ 1374 թ. նրանք միասին մեկնել են «առ մեծ վարժապետն Յովհաննէս մականուն Կախիկ, յերկիրն Սիւնեաց ի յՈրոտն գաւառ»: Ստեփանոսը, բնատուր ձիրքերով օժտուած, երեք տարում աւարտել է բարձրագոյն ուսման դասընթացը, Որոտնեցուց ստացել վարդապետական գաւազան եւ առաքուել Քաջբերունիք՝ «գալ մխիթարել զբազմութիւն քրիստոնէից եւ վանորէից անխրատից, զի անտերունչ էր գաւառն այն»[3]: Շնորհալի այս վարդապետի գործունէութիւնն ընդհատուել է Լանկ-Թամուրի երկրորդ արշաւանքի տարիներին: Կոտորածի ու գերեվարութեան սարսափից Քաջբերունեաց հայութեան հետ Կոգովիտ փախած եւ Դարա գիւղում ապաստան գտած Ստեփանոսը փակել է իր աչքերը 1395 թ.: Ականատես Թ. Մեծոփեցին այս կապակցութեամբ գրել է. «Եւ եկեալ հասաք ի գաւառն Կոգովիտ ի գիւղն Դարա: Անդ հանգեաւ սուրբ վարդապետն Ստեփանոս՝ աշակերտ մեծին Յովհաննու Որոտնեցւոյն, յընկերաց սուրբ վարդապետին Յովհաննու»[4]:

Ժամանակակից ու գործընկեր այս երկու մեծոփեցիների մասին առկայ տուեալները հնարաւորութիւն չեն ընձեռում կողմնորոշուելու, թէ սրանցից որն է քննարկուող պատմական գրուածների ստոյգ հեղինակը՝ Ներսէս եպիսկոպո՞սը, թէ՞ Ստեփանոս վարդապետը: Գրական-գիտական պատրաստութիւններ ձեռք բերած անձնաւորութիւնը Ստեփանոսն է եղել՝ Յովհան Որոտնեցու ուժեղ աշակերտներից մէկը, բայց Ներսէս եպիսկոպոսն էլ, Քաջբերունեաց տարագիր ժողովրդի հոգեւոր առաջնորդի իր հանգամանքով, հեղինակ համարուելու պատշաճ թեկնածու է, մանաւանդ որ հիմք չունենք մերժելու 5-րդ գրուածքի «Եւ ես՝ Ներսէս եպիսկոպոս կայի ի մէջ նոցա» մեզ արդէն ծանօթ տողի որոշակի ցուցումը:

Այս պարագաներում, մինչեւ լրացուցիչ տուեալների երեւան գալը, արդարացի պէտք է համարել Պատմութեան հեղինակ լինելու պատիւը նրանց միջեւ կիսելու հաշտեցուցիչ

1 **Թովմա Մեծոփեցի**, Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 54

2 Ըստ Թովմայի՝ Յովհաննէս Մեծոփեցին Որոտնեցու բարձրագոյն դպրոցում սովորել է 12 տարի («երկոտասան ամ առ նա դադարեալ») եւ վարդապետական գաւազան է ստացել Որոտնեցու մահուանից յետոյ իր աշակերտակից Գրիգոր Տաթեւացուց՝ «յետ աւերման վերին կողմանն ի չար բռնաւորէն Թամուր շաղաթայէն» (**Թ. Մեծոփեցի**, էջ 55-56), այսինքն՝ 1387-ից յետոյ: Ժամանակագրական այս տուեալների համադրումով յանգում ենք այն եզրակացութեան, որ Յովհաննէս Մեծոփեցին քահանայ է ձեռնադրուել 1374 թ., ուստի Ներսէսը Մեծոփայ վանքի առաջնորդ եւ Քաջբերունեաց եպիսկոպոս է եղել այդ թուականից առնուազն մի քանի տարի առաջ:

3 **Թովմա Մեծոփեցի**, էջ 55

4 Նոյն տեղում, էջ 47

առաջարկը՝ ըստ այդմ գրուածքն օժտելով «Պատմութիւն առաջին արշաւանաց Լանկ-Թամուրայ՝ արարեալ Ստեփանոսի եւ Ներսէսի Մեծոփեցւոց» խորագրով:

Այս գրուածքը գրեթէ ամբողջութեամբ մուտք է գործել Թովմա Մեծոփեցու Պատմութեան մէջ: Թովման, սակայն, ձգտել է յաւելեալ տեղեկութիւններով հարստացնել իր օգտագործած սկզբնաղբիւրը, ճշգրտել ու լրացնել նրա մէջ պատմուող անցուդարձերն ականատես եւ ականջալուր մարդկանցից քաղած յաւելեալ տեղեկութիւններով: Թովմայի կատարած յաւելումների բնոյթը ցոյց տալու համար ստորեւ մէջբերում ենք քննարկուող գրուածներից երկրորդը՝ նրան զուգահեռ տալով Թ. Մեծոփեցու Պատմութեան համապատասխան պարբերութիւնը՝ ճոխացուած լրացուցիչ տեղեկութիւններով:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ ԵՒ ՆԵՐՍԻՍԻ ՄԵԾՈՓԵՑԻՈՑ

Եւ գնաց (Թամուր Լանկն) յերկիրն Սիւնեաց՝ ի վերայ բերդին Երնճակու, եւ չառ զնա. զքաղաքն Սուրմարի ի հիմանց տապալեաց, որ էր պարսպեալ ազգին Բագրատունեաց: Իսկ բարի տանուտէր մի ի գեղջէն Կողբայ ազատեաց զիւր գեղն եւ այլ բազում անձինք՝ հնարիւք ի լեառն Թաքալթու:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹՈՎՄԱՅԻ ՄԵԾՈՓԵՑԻՈՑ

Եւ անտի չուեալ եկն յերկիրն Սիւնեաց ի վերայ ղղեկին Երնջակու, եւ ապա ի վերայ երկրին Ծակատուց՝ չառ զքաղաքն Սուրբ Մարի, ի հիմանց տապալեալ զամուրն մեր, զոր էր ամրափակեալ պատուական ազգին Բագրատունեաց: Եւ գերեաց զքաղաքն եւ զամենայն շրջակայ գեղորայսն: Իսկ բարեպաշտ տանուտէր մի Մարտիրոս անուն, յոյժ զօրեղ զօրական, ողորմած եւ աղքատասէր ի գեղջէն Կողբայ, ելեալ ի լեառն Բարդող, որ կոչի յայլոց Թակալթու, յոյժ արի եւ քաջ մանկամբ գեղջն, ապրեցոյց զամենայն հաւատացեալսն մեծաւ պատերազմաւ եւ արտապինդ զօրութեամբ, օգնութեամբ հզօրին Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի փրկչին մերոյ: Եւ թէպէտ բազում անգամ պատերազմեալ, ոչ կարացին առնուլ զլեառն զայն: Որ յետոյ այրն այն նահատակեցաւ ի պիղծ Թուրքմանէն Սահաթ անուն, հեղձուցեալ ի ջուրն Արազու անտես ի մարդկանէ (էջ 17-18):

Ինչպէս տեսնում ենք, Թովման իր սկզբնաղբիւրի սեղմ շարադրանքն ընդարձակել է՝ եղակի օգտակար յաւելում կատարելով միայն վերջին մասում Կողբի տանուտէր Մարտիրոսի եղեռնական վախճանի մասին: Այդ դէպքը, որ տեղի է ունեցել նկարագրուած անցուդարձերից առնուազն մէկ-երկու տասնամեակ յետոյ, բնականաբար չէր կարող արձանագրուած լինել Ստեփանոսի եւ Ներսէսի կողմից:

5-րդ գրուագում հակիրճ մի նախադասութեամբ մեր հեղինակները ծանուցել են, որ «Ի յայս ժամու կին մի զիւր որդին ինքն մորթեց եւ ինքն ի վերայ որդոյն զինքն սպանեց, թէ

չանկանինք ի Տաճիկ եւ ապականինք»: Սրա հիման վրայ Թովմա Մեծոփեցին ընդարձակ մի վարք է հիւսել՝ այն պճնազարդելով սուրբգրական օրինակներով: Ինքնակամ նահատակուած պատուախնդիր այս կնոջ մասին լրացուցիչ տեղեկութիւններ ժողովելու համար Թովմա Մեծոփեցին գնացել է Մուշ, տեսակցել ու զրուցել տեղեակ մարդկանց հետ. «Ի նոցանէ զճշմարիտն ստուգեցաք եւ ձեզ յիշատակ օրհնութեան Աստուծոյ թողաք»,- գրում է նա[1]:

Վերը շարադրուածից պէտք չէ թիւր կարծիք կազմել այն մասին, որ Ստեփանոս եւ Ներսէս Մեծոփեցիների Պատմութեան բոլոր տուեալներն անխտիր ու ծայրից ծայր օգտագործուել են Թովմայի կողմից: Ո՛չ, ամենեւին: Հրապարակուող ժամանակագրական գրուածների մէջ կան նաեւ այլուստ անյայտ նորոյթներ, ինչպէս եւ յայտնի դէպքերի առաւել ճշգրիտ՝ չզարդարուած ու չայլափոխուած նկարագրութիւններ: Մասնաւորապէս հարկ է նշել, որ մեր հեղինակները, Լանկ-Թամուրի ասպատակութիւնների կործանարար բնոյթը շեշտելով հանդերձ, փորձել են բացայայտել նաեւ աշխարհակալ այդ բռնակալի գործունէութեան իրական շարժառիթներն ու նպատակները: Ուշագրաւ են յատկապէս հայ վանական հաստատութիւնների եւ բարձրաստիճան հոգեւորականութեան նկատմամբ Լանկ-Թամուրի որդեգրած դիրքորոշման մասին նրանց գրառումները: Մի առիթով նրանք ասում են, որ Թամուրը բարեացակամ է եղել («քաղցր աչօք էր հայեալ») Մշոյ Սուրբ Կարապետ վանքի առաջնորդ Արգար եպիսկոպոսի նկատմամբ, ի հետեւանս որի «խիստ չէն էր վանքն Սուրբ Կարապետու». մէկ այլ կապակցութեամբ նշում են, որ նա նուէրներ է բաշխել Մշոյ շրջակայքում գտնուող երեք նշանաւոր վանքերի (Աղբերկայ, Առաքելոց եւ Ս. Կարապետի) առաջնորդներին եւ այլն:

Թովմա Մեծոփեցին իր Պատմութեան մէջ տեղ է յատկացրել Երուսաղէմից վերադարձող Կարապետ անունով ջուղայեցի մի աբեղայի՝ թամուրեանների կողմից ձերբակալուելու գրուագին՝ խօսելով նաեւ Սամարղանդ քշուած քրիստոնեաների ու նրանց հաւատքի մասին[2]: Այդտեղից, սակայն, պարզ չի իմացւում, թէ ինչ առնչութիւն կայ Սամարղանդի քրիստոնեաների եւ վերոյիշեալ Կարապետ աբեղայի միջեւ: Հատուածի խաթարուած իմաստը վերականգնւում է հրապարակուող բնագրի համապատասխան տողերի օժանդակութեամբ: Պարզւում է, որ այդ ջուղայեցի աբեղային հէնց Լանկ-Թամուրի հրամանով են բռնել ու եպիսկոպոս ձեռնադրել՝ հոգեւոր առաջնորդի պաշտօնով Սամարղանդ ուղարկելու համար:

Թամուրեան կայսրութեան մայրաքաղաք Սամարղանդը դարձել էր առեւտրի եւ արհեստագործութեան նշանաւոր կենտրոն: Նուաճուած բոլոր երկրներից մայրաքաղաք էին տարւում հազարաւոր հմուտ արհեստաւորներ, առեւտրականներ, գիտութեան եւ արուեստի գործիչներ եւ այլ զբաղմունքի տէր մարդիկ: Մեծ էր նաեւ հայերի թիւը: Կաստիլիայի Հենրիկոս թագաւորի դեսպան Կլաւիխոն, որ Միջին Ասիայում էր գտնւում XV դարի առաջին տարիներին, յայտնում է, որ «նա (Թամուրը) բոլոր երկրներից այնքան տարացեղ ժողովուրդ է հաւաքել այս (Սամարղանդ) քաղաքում՝ ինչպէս տղամարդկանց, այնպէս էլ կանանց, որ բոլորը միասին, ասում են, թէ հարիւր յիսուն հազարից աւելի են: Նրանց մէջ կային շատ տարբեր ազգութիւններ՝ թուրքեր, արաբներ եւ մահմեդական այլ ազգեր, հայ քրիստոնեաներ եւ յոյն կաթոլիկներ, նեստորականներ, յակոբիկներ եւ այն քրիստոնեաներից, որոնք կնու-

1 Նոյն տեղում, էջ 25-27
2 Նոյն տեղում, էջ 28-29

քը կատարում են գէմքի վրայ խարանելով»[1]: Քրիստոնեաների այս թուարկման մէջ Հայերին առաջին տեղն է յատկացուած՝ Հաւանաբար նրանց թուական գերակշռութիւնը Հաշուի առնելով:

Ստեփանոս եւ Ներսէս Մեծոփեցիների Պատմութեան քննարկուող Հատուածը մեծապէս նպաստում է Միջին Ասիայի եւ մասնաւորապէս Սամարղանդի Հայկական գաղթօջախի մասին մեր գիտելիքների ընդարձակմանը: Ինչպէս տեսնում ենք, Լանկ-Թամուրն անձամբ մտաՀոգուած է եղել իր կայսրութեան կենտրոնական շրջաններ տարագրուած Հայ գաղթականների՝ որպէս ինքնուրոյն Համայնք կազմակերպուելու, իրենց Հոգեւոր առաջնորդն ունենալու Հարցերով:

Հրապարակուող բնագրում, անշուշտ, կան անյայտ անցուդարձերի մասին Համառօտակի, բայց ճշմարտապատում այլ գրանցումներ եւս:

2. ԿԻՐԱԿՈՍ ՌՇՏՈՒՆՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ստեփանոս եւ Ներսէս Մեծոփեցիների պատմական գրուագներին կից, առանց սաՀմանազատման որեւէ նշանի, N 9832 ձեռագրում ընդօրինակուած է մի այլ ժամանակագրութիւն, որն ամփոփում է 1392–1443 թթ. տեղի ունեցած կարեւոր անցուդարձերի մասին մէկ տասնեակ գրառումներ՝ տարեթուերի նշումով միմեանցից տարանջատուած: Դրանցից մի քանիսը գրեթէ բառացի Համընկնում են Մատենադարանի N 582 ձեռագրի 152բ–153բ էջերում ընդօրինակուած ժամանակագրութեան Համապատասխան Հատուածներին: Նախ ծանօթանանք դրանց զուգակշիռ շարքին.

Ձեռագիր N 582

ՊԽԱ (1392) դարձեալ եկաւ [Թամուրն] ի Բաղդատ եւ արար բազում աւերս ի միջագետս եւ դարձաւ յաշխարՀն իւր…

ՊԽԹ (1400) դարձեալ եկաւ իր վերայ Վրացն եւ Հառ շատ գերի եւ գնաց յաշխարՀն իւր եւ սատակեցաւ ՊԾԳ (1404):

ՊԾԵ (1406) Ղարայ-Ուսուֆն, որ ի Թամուրէն փախաւ, եւ էջ ի Շամըն, եւ կապանօք տարան ի Մսր. եւ անդ[ի] եկն ի Կարբայ երկիրն եւ գնաց ի Դաւրեժ եւ Հառ մինչեւ ի Սուլթանիայ:

ՊԾԷ (1408) դարձաւ ի յԱրճէշ եւ յԱրծկէ եւ Շմեզդին ընկերեալ նմայ, արարին շատ աւեր Վանա եւ Ոստանայ[2]:

Ձեռագիր N 9832

ՊԽԱ (1392) կրկին գնաց ի Պաղտատ եւ աւերեաց:

ՊԽԹ (1400) դարձեալ եկն ի Վրացտունն եւ աւերեաց եւ առաւ շատ գերի, եւ գնաց Սմրղանտ եւ անդ սատակեցաւ:

ՊԾԳ (1404) Ղարա-Ուսուֆն, որ փախուցեալ էր ի Թամուրէն, եւ գնացեալ էջ ի Շամ քաղաք, եւ կապանօք տարան ի Մսր, եկն ի Կարբի, եւ անդի գնացեալ Հառ զԹարվէզ՝ մինչեւ ի Սուլտանիայ:

ՊԾԵ (1408) եկն ի յԱրճէշ, ի յԱրծկէ, եւ Շմըզաին ի Բաղըշու ընկերեաց նմա, արարին շատ աւեր…

1 Рюи Гонзалес де Клавихо, Дневник путешествия к двору Тимура в Самарканд, в 1403-1406 гг., пер. И. И. Срезневского, СПб., 1881, с. 328

2 N 582 ձեռագրի «ժամանակագրութիւնը» տպագրուած է Վ. Յակոբեանի աշխատասիրութեամբ «Մանր ժամանակագրութիւններ XIII-XVIII դդ.» (հտ. 1, Երեւան, 1951, էջ 118–119) աշխատութեան մէջ: Այդ բնագիրը գրեթէ ամբողջութեամբ օգտագործել է նաեւ Առաքել Դաւրիժեցին. շարայարելով տարբեր աղբիւրներից քաղուած Համանման տուեալներ՝ նա կազմել է Համահաւաք մի ժամանակագրութիւն՝ բառացի մուծելով նրա մէջ նաեւ N 582 ձեռագրի ժամանակագրութեան մեզ Հետաքրքրող Հատուածները (տե՛ս «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1896, էջ 627–628):

Այս Հատուածները ոչ միայն ազգակից են, այլեւ նոյնական (եթէ նկատի չունենանք խմբագրական աննշան տարբերութիւնները): Բայց այս ժամանակագրութիւններից իւրաքանչիւրում, մանաւանդ N 9832 ձեռագրում կան յաւելեալ մեծ ու փոքր Հատուածներ: Այս Հանգամանքը մտածել է տալիս, որ ի դէմս դրանց մեզ են Հասել միեւնոյն ժամանակագրութեան՝ տարբեր ճաշակի տէր մարդկանց կողմից կատարուած զոյգ քաղուածքներ:

Ի Հիմնաւորումն այս եզրակացութեան կան նաեւ այլ կռուաններ: Սամուէլ Անեցու «Ժամանակագրութեան» շարունակողներից մէկը, նոյնութեամբ ընդօրինակելով N 582 ձեռագրի ժամանակագրութեան վերը մէջբերուած Հատուածն ամբողջութեամբ, յայտնում է, որ ինքը լոկ քաղուածքներ է կատարել իր ձեռքի տակ եղած աւելի ընդարձակ ժամանակագրութիւնից: Նա գրում է. «Թողեալ զմանրամասնաւորսն եւ գրեցից զայնս, զորս ինձ են պիտանացուք»: Եւ դրանից յետոյ, մեծ թռիչք կատարելով, նա իր ընթերցողներին Հրամցնում է կաթողիկոսական աթոռն էջմիածնում վերաՀաստատելու, Կիրակոս Վիրապեցուն կաթողիկոս ընտրելու, ապա գաՀընկէց անելու մասին սաորեւ ներկայացուող տեղեկութիւնները.

ՊՂ (1441) զաջ Լուսաւորչին ի Սսոյ գողացեալ բերին յէջմիածին, եւ վերստին Հաստատեցին զկաթողիկոսութիւն՝ զԽորվիրապայ Հայրն՝ զտէր Կիրակոս օրՀնելով զկաթողիկոս:

ՊՂԲ (1443) ընկեցին զտէր Կիրակոս նախանձու, եւ Գրիգոր եպիսկոպոս Մակուեցի նստաւ թուրքով եւ զաքալով[1]:

Այս երկու պարբերութիւններից առաջինը բացակայում է Ն՚ւ քննարկուող «ժամանակագրութիւնից», Ն՚ւ N 582 ձեռագրից, բայց որ եղել է սկզբնօրինակի մէջ, ինչպէս տասցինք արդէն, վկայուած է Սամուէլի «ժամանակագրութեան» շարունակողի կողմից: Ինչ վերաբերում է վերջին (1443 թ.) Հատուածին, ապա Հէնց այս տեղեկութեան գրանցումով են աւարտւում «ժամանակագրութեան» միւս ընդօրինակութիւնները: Այսպէս.

Ձեռագիր N 582

ՊՂԲ (1443) զտէր Կիրակոս կաթողիկոսն փոխեցին վասն նախանձոյ, եւ Մակուեցին նստաւ զաքալով եւ թուրքով: Եւ զիս եւ Սարգիս վարդապետն տօգանել տվին. զինչ վասութիւն որ արարին կաթողիկոսին եւ Սարգիս վարդապետին եւ ինձ, Աստուած թողոյ նոցա զմեղս նոցա[2]:

Ձեռագիր N 9832

ՊՂԲ (1443) զտէր Կիրակոս Հանին ի կաթողիկոսութէնէն եւ Մակւեցին նստաւ զապալով:

Այս Հատուածի ամբողջական շարադրանքը (N 582 ձեռագրի ծաւալով) պաՀպանուել է նաեւ Ա. Դաւրիժեցու Պատմութեան մէջ: Դեռեւս 1914 թ. անդրադառնալով դրան՝ անուանի բանասէր Գարեգին Յովսէփեանը յանգել է այն եզրակացութեան, որ այդ Հատուածը գրուած

1 «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 175

2 ՄՄ N 582 ձեռագրում այս դէպքի գրանցումից յետոյ կան 1187–1294 թթ. վերաբերող մի քանի Հակիրճ գրանցումներ, որոնք, ինչպէս ցոյց է տուել նաեւ Հրատարակիչ Վ. Յակոբեանը, չեն առնչւում նախորդ Հատուածներին եւ անշուշտ քաղուած են այլ աղբիւրներից:

պիտի լինի Թովմա Մեծոփեցու կուսակից Կիրակոս վարդապետ Ռշտունցու կողմից[1]: Նոյն տեսակէտին է նաեւ Վ. Յակոբեանը, որն, անծանօթ իր նախորդի ճիշտ եզրակացութեանը, աւելի հանգամանօրէն է անդրադարձել «Ժամանակագրութեան» հեղինակի հարցին[2]: Ըստ այդմ, նոյն Կիրակոս վարդապետն է հեղինակը նաեւ մեր N 9832 ձեռագրում պահպանուած ժամանակագրական հատուածների, որոնց մէջ, ինչպէս տեսնելու ենք, անյայտ գրանցումներ կան նաեւ շատ հետաքրքրական անցուդարձերի մասին մինչ այժմ:

Արդ, ի՞նչ գիտենք «Ժամանակագրութեան» հեղինակ Կիրակոս Ռշտունցի վարդապետի մասին:

Թովմա Մեծոփեցին, անդրադառնալով Կիրակոս Վիրապեցի կաթողիկոսի պաշտօնազրկման եւ աքսորման հանգամանքներին, պախարակում է հակառակորդ կուսակցութեան գործիչներին, մեղադրում նրանց վատաբարոյ արարքների մէջ. «Եւ կատարեցին զչար խորհուրդս իւրեանց,- գրում է նա,- եւ ապա ակսան զոպասաւոր վարդապետք Էջմիածնին՝ զվարդապետն Կիրակոս Ռշտունեաց եւ զրաբունապետն մեր զՍարգիս ի սուրբ ուխտէն Սալնապատայ մատնել անօրինաց. ի միոյն առին տասներեք հազար դահեկան եւ ի միւսոյն վեց հազար դահեկան՝ մատնութեամբ երկու եպիսկոպոսացն՝ Զաքարէի եւ Անտոնի»[3]:

Այս վկայութիւնից պարզւում է, որ Կիրակոս Ռշտունեաց վարդապետը, լինելով Կիրակոս Վիրապեցի կաթողիկոսի ամենամերձաւոր գործակիցներից մէկը, 1443 թ. հալածուել ու վտարուել է Էջմիածնից եւ այնուհետեւ, չբաժանուելով աթոռազուրկ արուած կաթողիկոսի կուսակից խմբակցութեան պարագլուխ Թովմա Մեծոփեցուց, հաւանաբար հաստատուել է Մեծոփայ վանքում:

Սրա մասին լրացուցիչ տեղեկութիւններ ձեռք բերելու համար անհրաժեշտ էր պարզել XV դարի առաջին յիսնամեակի գործիչ, իրեն Կիրակոս Բանասէր կոչող անձնաւորութեան ինքնութիւնը. Ռշտունցի եւ Բանասէր կոչուող Կիրակոսները տարբե՞ր մարդիկ են, թէ՞ նոյն անձնաւորութիւնը: Այս հարցի պատասխանը գտնում ենք Կիրակոս Ռշտունցու «Ժամանակագրութեան» մի բեկորում, որ ընդօրինակուած է Մաշտոցի անուան Մատենադարանի N 1382 ձեռագրի 306բ կիսով չափ դատարկ թողնուած էջի վրայ, XV դարի ձեռագրով:

ՊՀ (1421) նստաւ Սքանդարն [ղան]

ՊՀԱ (1422) առաջին գալն Շահռուխին,

ՊՀԸ (1429) միջին գալն եւ Բուսախան [ղան] եղիր եւ տանուտէր աղեղնաւորն.

ՊՁԵ (1436) յետին գալն եւ տանուտէր խնցգետին.

ՊՁԹ (1440) Ջահանշէն Շամշուլտէ առ եւ կոտորեաց աւելի քան զինն Ռ եւ մեծ սուգ եղեւ քրիստոնէից, զի բազումք թողին զՔրիստոս:

Քրիստոս Աստուած, ողորմեայ Կիրակոս Բանասիրին, եւ թող զմեղս նորին՝ զմահու չափն եւ զներելին, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին եւ ամենայն սրբոց գնդին, ամէն[4]:

---

1 Գարեգին վարդապետ Յովսէփեան, Թովմա Մեծոփեցու կեանքը, Վաղարշապատ, 1914, էջ ԻԴ.

2 «Մանր ժամանակագրութիւններ», հտ 1, էջ 113-114

3 «Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը», հրատ. Կ. Կոստանեանց, Թիֆլիս, 1892, էջ 81-82

4 ՄՄ ձեռ. N 1382, էջ 306բ: Հմմտ. «ԺԵ դարի յիշատակարաններ», Ա, էջ 506-507:

Նման մի յիշատակագրութիւն էլ գտնում ենք N 582 ձեռագրի հէնց այն հատուածի վերջում[1], ուր ընդօրինակուած են մեզ հետաքրքրող ժամանակագրական նիւթերը. «Քրիստոս Աստուած, ողորմեայ Կիրակոս Բան[ա]սիրին եւ իւր ծնողացն եւ ամենայն արեան մերձաւորացն, ամէն...»,- կարդում ենք այնտեղ[2]:

Այս տուեալներն իրաւունք են տալիս այլեւս պնդելու, որ իրեն Կիրակոս Բանասէր կոչողը ոչ այլ ոք է, քան Թովմա Մեծոփեցու կողմից Կիրակոս Ռշտունեաց վարդապետ կոչուած անձնաւորութիւնը: Իսկ այս եզրակացութիւնից յետոյ, յաջորդ քայլը կատարելով, դժուար չէ քննարկուող «Ժամանակագրութեան» հեղինակ Կիրակոս Բանասէրին նոյնացնել Թովմա Մեծոփեցու կենսագիր Կիրակոս Բանասէրի հետ[3]:

Կիրակոս Բանասէրի «Ժամանակագրութեան» առաւել ամբողջական պատկերը պահպանուել է N 9832 ձեռագրում: Այստեղ արժէքաւոր տուեալներ կան Կարա-Կոյունլու Սքանդարի (մասամբ նաեւ նրա հօր՝ Կարա-Յուսուֆի) մղած պատերազմների ու Հայաստանի տարածքի վրայ սփռած ասպատակութիւնների մասին, որոնք ճշգրտում ու ամբողջացնում են մեր գիտելիքները XV դարի 20-30-ական թթ. անցուդարձերի վերաբերեալ: Այս առումով յատուկ հետաքրքրութիւն է ներկայացնում Մշոյ դաշտի եւ շրջակայ գաւառների բնակչութեան գերեվարութեան եւ դէպի Սուլթանիէ կազմակերպած բռնագաղթի մասին հատուածը եւ մանաւանդ՝ Սքանդարի եւ Բաղէշի քուրդ ամիրի միջեւ 1426-1428 թթ. ընթացքում ծաւալուած գոտեմարտերի նկարագրութիւնն այլուստ անյայտ մանրամասնութիւններով:

Խօսելով այն մասին, որ Սքանդարը մտադրուել էր քրդերից գրաւել Բաղէշի բերդը՝ մեր ժամանակագիրը յայտնում է, որ «ամառն գայր Սքանդարն եւ աւերէր՝ յորժամ խաղէր զԲաղէշ, եւ ոչ կարէր առնուլ, ձմեռն քուրդն ելանէր ի Բաղըշ(ու) բերդէն եւ խնդճք զանաւթիքն եւ զթալանածքն նոր սպանանէր եւ անցուցանէր, թէ չի մնայ շինութիւն, որ զարունն Սքանդարն չի գայ ի վերայ Բաղըշու: Եւ ի յայսպիսի խեղճ տառապանաւք կային Գ (3) տարի Մուշ, Կինճ, Խնուս, Պուլանուխն, Սասնոյ կէսն... եւ այսպէս ջնջեցան մեծ եւ փոքր, որ բնաւ շինութիւն չմնաց, դարձաւ աւերակ եւ ամայի»:

Կիրակոս Ռշտունցու «Ժամանակագրութեան» նորայայտ այս տարբերակը, որ ամենաամբողջականը լինելով առ այսօր յայտնի ընդօրինակութիւններից ու քաղուածքներից[4]՝

---

1 Այս ձեռագրի մէջ կան տարբեր ժամանակներում եւ տարբեր անձնաւորութիւնների կողմից արտագրուած հատուածներ:

2 ՄՄ ձեռ. N 582, էջ 154բ: Հմմտ. «ԺԵ դարի յիշատակարաններ», Ա, էջ 550:

3 Այս մասին «Թովմա Մեծոփեցու կեանքը» իր աշխատութեան մէջ կռահում ունի նաեւ մեծանուն Գ. Յովսէփեանը: Վկայակոչելով N 1382 ձեռագրում յիշատակուած ժամանակագրական բեկորը՝ նա յայտնում է, որ «Կիրակոս բանասէրը, [որ] գրել է Սքանդարի եւ Ջհանշահի արշաւանքների տարեթուերը, հաւանօրէն նոյնն է մեր (այսինքն՝ Թ. Մեծոփեցու վարքի հեղինակ - Լ. Խ.) Կիրակոսի հետ» (տե՛ս նշ. աշխ., էջ ԺԵ, 3-րդ ծանօթագրութիւն):

Տեղին է նշել, որ Կիրակոս Բանասէրն իր մասնակցութիւնն է բերել Թ. Մեծոփեցու պատմագրական երկերի խմբագրման աշխատանքներին: Ամենայն հաւանականութեամբ հէնց նա է մի տուփի մէջ միաւորել իր ուսուցչի «Պատմութիւն Լանկ-Թամուրայ եւ յաջորդաց իւրոց», «Վասն միաբանութեան Հայոց եւ կաթողիկոս ձեռնադրութեանն», «Յաղագս Էջմիածնին օրհնութեան եւ կաթողիկոս ձեռնադրութեանն ի նմա» եւ «Վասն աքսորման տէր Կիրակոս կաթողիկոսին» խորագրերը կրող պատմագրական երկերը (վերջին երեքը մի ամբողջութիւն են կազմում, հրատարակուել են Կ. Կոստանեանցի աշխատասիրութեամբ «Յիշատակարան կամ Պատմութիւն վերահաստատման աթոռոյն Էջմիածնի» խորագրի տակ):

4 Նկատի ունենք ՄՄ N 582 ձեռագիրը, N 1382 ձեռագրում պահպանուած բեկորը, Սամուէլ Անեցու շարունակողներից մէկի կատարած քաղուածքը, ինչպէս եւ Առաքել Դաւրիժեցու Պատմութեան մէջ տեղ գտած «Ժա-

ուշագրաւ եւ արժէքաւոր նորոյթներ է պարունակում, մեզ է հասել գրչագրական աղճատումներով: Չգիտենք՝ հէնց ա՞յս ձեռագրի, թէ՞ գաղափար օրինակի գրիչը կոպիտ սխալներ է կատարել յատկապէս թուականներն ընդօրինակելիս: Այսպէս օրինակ՝ ՊԾԵ (1406) թուականին տեղի ունեցած դէպքերին նուիրուած պարբերութեան թուականը սխալմամբ ՊԾԳ (1404) է նշանակել, ՊՀԷ (1428) եւ նախորդ տարիների անցուդարձերի համար (որոնք կապուած են Սքանդարի գործունէութեան հետ) ՊԾԷ (1408) տարեթիւն է նշանակել (այդ ժամանակ Սքանդարը հազիւ 10–15 տարեկան պատանի էր), Ջհանշահի դէպի Վրաստան ձեռնարկած արշաւանքի թուականը (1440 թ.) մէկ տարի առաջ է տարել եւ այլն:

Տարեթուերի այս աղճատումները գլխաւորութեամբ սրբագրում են «Ժամանակագրութեան» միւս փոփոխակների, նոյն տարիներին շարադրուած յիշատակարանների եւ այլ սկզբնաղբիւրների համադրման տուեալներով: Բնագրի վերջում տրուած ծանօթագրութիւնների մէջ հիմնաւորուած են սխալ տարեթուերի մեր կատարած սրբագրումները, ինչպէս եւ ըստ հարկի լրացուցիչ տեղեկութիւններ են տրուած պատմուող դէպքերի մասին:

Մեզ մնում է ասել, որ Կիրակոս Բանասէր Ռշտունցին իր այս «Ժամանակագրութեամբ» եւ «Պատմութիւն մեծի բարունապետին Թումայի» գրուածքով[1] իրաւամբ յայտ է ներկայացնում պատուաւոր տեղ գրաւելու XV դարի հայ պատմագրութեան խորշակահար անդաստանում:

Ստորեւ նոյնութեամբ հրապարակում ենք վերը քննարկուած ժամանակագրական զոյգ բնագրերը, որոնցից առաջինը՝ Ստեփանոս եւ Ներսէս Մեծոփեցիների շարադրածը, գրաւում է N 9832 ձեռագրի 19ա–22ա էջերը, իսկ երկրորդը՝ Կիրակոս Ռշտունցու «Ժամանակագրութիւնը»՝ 19ա–24ա էջերը:

մանակագրութեան» համապատասխան հատուածները:

1 Տե՛ս Գարեգին վարդապետ Յովսէփեան, Թովմա Մեծոփեցու կեանքը, էջ 1-13:

1

[ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՒԱՆԱՑ ԼԱՆԿ-ԹԱՄՈՒՐԱՑ՝ ԱՐԱՐԵԱԼ ՍՏԵՓԱՆՈՍԻ ԵՒ ՆԵՐՍԻՍԻ ՄԵԾՈՓԵՑԻՈՑ]

(1) Թվն. ՊԼԳ (1384) ելեալ Թամուր Լանկն ի Սմրղանտայ բազում հեծելով ի վերայ Թարմիզոյ խանին, զոր յառաջն ծառայական էր լեալ Թարմիզու խանին, եւ ի պատճառս ինչ փախստական գնացեալ ի Սմրղանտ, եւ եղեւ մեծ հարամիկ. եւ այս հնարիւքս առեալ զՍմրղանդ, եւ զաւրացաւ, էառ զՊուխարայ: Եւ խաղաց ի յառաջ եւ էանց ընդ մեծ գետն Ջահուն, եւ էառ զթագաւորանիստ քաղաքն Հրէ, եւ էառ զՇահ-Մանսուրն զտէրն Խորասանու եւ զամենայն աշխարհն նորա՝ զԽորասան, զՇիրազ, զՔրման, զԱսպահան, զՆիւշապուհ, զԿուրան, զՄակուրան, զԹուլսն, զԹաշան, զԴաղման, զՄազանտարան, զՌէ, զՂում, զՔաշան[1]: Եւ հասաւ մինչ ի Սուլթանիա, եւ անդի չուեալ եկն ի Թարվէզ եւ էառ:

(2) Եւ գնաց յերկիրն Սիւնեաց՝ ի վերայ բերդին Էրնճակու, եւ էառ զնա, զքաղաքն Սուրմարի ի հիմանց տապալեաց, որ էր պարսպեալ ազգին Բագրատունեաց: Իսկ բարի տանուտէր մի ի գեղջէն Կողբայ ազատեաց զիւր գեղն եւ այլ բազում անձինք հնարիւք, ի լեառն Թաքայթու[2]:

(3) Ի սոյն ժամանակս անփոփեցաւ Գետարգել սուրբ Նշանն, որ էր ի կենաց փայտէն, զոր /19բ/ տուեալ էր Սեղբեստրոս սրբոյն Գրիգորի: Զոր Բ (2) աբեղայ Կողզվանու, ի վանաց սուրբ հաւրն Վարդկայ, տարեալ պահեցին, եւ ճաղաթայն ի վերայ հասեալ սպան զաբեղայքն, եւ յետոյ շատ որոնեցին եւ ոչ գտին, զի այսպէս եղեւ [ի] խնամոցն Աստուծոյ[3]:

(4) Եւ աւերեաց աշխարհաւերն Թամուր զբոլոր աշխարհս եւ զՀայաստան աւելի քակեաց եւ մտեալ ի Տփխիս քաղաք եւ գերեաց իսպառ: Իսկ թագաւորն Վրաց Բագրատ անուն յազգէն Հրէից, որք գերեցան յազգէն Բաբելացոց յառաջն եւ յետոյ ի Տիգրանայ, եւ այս պատճառաւ խառնեցան յազգս մեր եւ յետոյ եղեն մեզ թագաւորք ընտիրք, եւ նեղացեալ ի Յունաց եւ ի Պարսից տուին զԱնի հռոմին, եւ փոքր Գագի[կ]ն էր ուծեա[լ] թագաւոր, գնաց ի Ծամրնդաւ, եւ այլ մնացեալքն ի Բագրատունեաց գնացին ի մէջ Վրաց եւ եղեն նոցա թագաւոր եւ յետոյ եղեն քաղկեդոնիկ. սոյ բազում ընծաիւք գնաց առաջի Թամուրին: Իսկ արին Բագրատ խաբեաց զԹամուրն, թէ «Տո՛ւր ինձ զաւրք բազում, զի երթայց յազգն իմ, զամե[նե]եան տաճկացուց», եւ են այսոքիկ՝ Դիալ, Աւսեթ, Իմերէլ, Մկրէլ, Ափխազ, Սաւնքէր, Վրացի, Մախ[4]. եւ Թամուրն /20ա/ [հ]աւատաց եւ ետ զաւրն ի ձեռն նորա, եւ նա տարեալ զաւրքն

1 «Ժամանակագրութեան» «զԹաշան... զՔաշան» հատուածը Թովմա Մեծոփեցու մօտ սրբագրուած է այսպէս. «զԹանջան, զԹամղան, զՄազանդարան, զՌէ, զՂազուին» (**Թ. Մեծոփեցի**, էջ 12):

2 Թ. Մեծոփեցու Պատմութեան համապատասխան հատուածից տեղեկանում ենք, որ Կողբ գիւղի այս քաջարի տանուտէրի անունը Մարտիրոս է եղել, եւ որ նա յետագայում ջրախեղդ է արուել Արարատեան երկրի տիրակալ Ամիր-Սաադի հրամանով (**Թ. Մեծոփեցի**, էջ 17-18):

3 XV դարի սկզբներին (գուցէ եւ շատ աւելի ուշ) յօրինուած մի յիշատակարանի համաձայն Գետարգել սուրբ Նշանը 1401 թ. յայտնաբերուել է Յովհաննէս, Թումաս եւ Կիրակոս կրօնաւորների ջանքերով եւ պահ տրուել Ռշտունեաց գաւառում (Ոստանից հարաւ) գտնուող Սուրբ Եղիշէի կամ Վարդպատրկի վանքում (տե՛ս **Ղ. Փիրղալեմեան**, Նօտարք Հայոց, Կ. Պոլիս, էջ 15-16: Հմմտ. «ԺԵ դարի յիշատակարաններ», Ա, էջ 53):

4 Վրացական ցեղերի այս թուարկման մէջ աղաւաղուած է միայն Սաւնքեր ցեղանունը, որով անտարակոյս նկատի են առնուած սուանները (տե՛ս "Фома Мецопеци о Грузии", перевод, введение и комментарии проф. Л. Меликсет-Бека, Тбилиси, 1937, с. 20, ուր դէմ-դիմաց տրուած է Թ. Մեծոփեցու համապատասխան հատուածի գրաբար բնագիրը՝ քաղուած Կ. Շահնազարեանի հրատարակութիւնից, եւ վրացերէն թարգմանու-

չաղաթին՝ զամե[նե]խեան կոտորեաց. զառաջ ելին Թամ[ուր]ին Գ (3) որդիքն՝ Գորգին, Կոստանտին[ն], Դաւիթն, եւ եղեւ սեւերես:

(5) Բարկութեամբ եկ աշխարհէս Հայոց ի վերայ Մահմատ խանին[1], եւ նա փախեաւ մինչեւ ի Ճապըխջուր: Եւ զաւրքն Թամուրին յաղթեցաւ, բայց Թամուրն մնաց ողջ եւ նոր զօրք ժողովեաց, ով ոք որ ցրուեալ էին. Թուրքման[ն] եկաւ ի Մուշ եւ Թամուր յետեւն:

Իսկ ի յայս խառնակմանէն, որ Բ (2) խանն իրար էին առեր, աշխարհս էր անաւրացեր: Երկիրն Քաջբերունոյ-Արճէշ, Խորխոռունեաց տունն-Հանադաշտն եւ Մանածկերտ-Հարքնիս[2] փախեան ի ճաղայթայէն եւ եկեալ հասին ի գաւառն Մշոյ՝ ի քնար սուրբ Կարապետու: Եւ ես Ստեփանոս վարդապետս Մեծոբեցի[3] եւ Ներսէս եպիսկոպոսն զփախստական քրիստոնայքն հանք ի սուրբ Կարապետ, վասն զի Թամուրն քաղցր աչօք էր հայեալ ի յԱրկար եպիսկոպոսն, խիստ չէն էր վանքն սուրբ Կարապետու: Տէր Արկարն եւ Յակոբ վարդապետն խիստ ընդունեցին զմեզ եւ զամէն փախստական մխիթարեցին կերակրով, պատարագօք եւ հաղորդութեամբ: Եւ անդի իջաք ի դաշտն եւ գնացաք ի Խասգեղ, որ գնայաք ի յԱրճէշ: Իսկ /20բ/ զաւրքն Թամուրին կողոպտեցին զԽիզան եւ Թալանեցին եւ յերաշխի տունն ի Խութայ Շէխ-Շարաւ անուն. եւ նա ի խնամոցն Աստուծոյ եհան զմեզ ի լեառն Խութա. եւ [յ]անկարծակի հասին զաւրքն Թամուրին ի վերայ Խիզանին՝ կոտորել եւ ի գերել: Զոր եւ ես՝ Ներսէս եպիսկոպոս կայի ի մէջ նոցա եւ տեսանէի զանողորմ խեղճն, զոր բազմութիւն հաւատացելոցն աղաղակեցին առ Աստուած:

Եւ ի յայս ժամու կին մի զիւր որդին ինքն մորթեց եւ ինքն ի վերայ որդոյն զինքն սպանեց, Թէ չանկանինք ի տաճիկ եւ ապականինք[4]: Իսկ յորժամ զայս խեղճս տեսաք այլ առաւել աղաղակեցաք ի Տեառն եղբօր սուրբ Նշանն, որ կայր ի Վանդիրն, զոր բերեալ էր սուրբ առաքեալն Թադէոս, որ էր ի կենաց փայտէն: Եւ հայեցեալ ժողովուրդքն եւ գերիքն ի սուրբ Կարապետ եւ բարձր ձայնիւ աղաղակեցին, եւ ի միւս կողմանէ ամենեքեան յերկրպագեցաք սուրբ Առաքելոցն, որ է Ղազարու վանքն, զի անդ է հանգուցեալ ի մասանց Ղուկա-

թիւնը):

1 Այս Մահմատ խան կոչուածը թուրքմէնական Կարա-կոյունլու ցեղախմբի առաջնորդ Կարա-Մուհամադն է՝ նշանաւոր Կարա-Յուսուֆի հայրը: Կարա-Մուհամադը, սկսած XIV դարի 70-ական թթ., խոշոր դեր է կատարել Ջելաիրեան պետութեան քաղաքական կեանքում: 1387 թ., երբ Թամուրն Ատրպատականի եւ Հայաստանի շրջանները ասպատակելուց յետոյ իր հիմնական ուժերն ուղղել էր Ոսկէ հորդայի դան Թոխթամիշի դէմ, Կարա-Մուհամադը փորձեց նոյնիսկ իր տիրապետութիւնը հաստատել Ատրպատականում:

2 Հայոց միջնաշխարհի գաւառների այս թուարկումը հասկանալի դարձնելու համար կրկնակ անուններով յիշատակուած տեղանունները շաղկապել ենք գծիկներով: Վերջին (Հարքնիս) տեղանունը ձեռագրում գրուած է Հանրքիս աղաւաղ ձեւով: Սրբագրել ենք Թ. Մեծոփեցու համապատասխան հատուածի օգնութեամբ (տե՛ս **Թ. Մեծոփեցի**, էջ 21):

3 Մեծոփայ վանքի անունը միջնադարեան որոշ աղբիւրներում ստուգաբանուած է որպէս «Մեծ յոբ» (յոբ նշանակում է փոս)՝ վանքի մօտ եղող արհեստական խոր լճի անունից (տե՛ս Համազասպ Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, Վիեննա, 1942, էջ 420–421): Ըստ այդմ, Ստեփանոս վարդապետի Մեծոբեցի մականունը պէտք չէ աղճատուած համարել:

4 Ներածական խօսքում ասել ենք արդէն, որ թշնամիների ձեռքը գերի չընկնելու համար կամովին նահատակուած մայր ու որդու սրտաճմլիկ այս պատմութիւնը Թովմա Մեծոփեցու գրչի տակ առանձին վկայաբանական գրուածքի տեսք է ստացել՝ ճոխացուելով այդ ժանրին յատուկ հնարանքներով: Թովման Մեծոփայ վանքի վարդապետների եւ աշակերտների հետ միասին իր տարագրութեան տարիներին (1435–1439 թթ.) անձամբ եղել է Մուշ քաղաքում, գնացել Սուրբ Կարապետի վանք, հանդիպում ունեցել 1387 թ. դէպքերին ականատես եւ ականջալուր մարդկանց հետ (յանուանէ յիշատակում է Դաւիթ անունով մի կրօնաւոր), որոնց պատմածների հիման վրայ ընդարձակել է իր սկզբնաղբիւրի չոր ու ցամաք գրանցումը:

սու աւետարանչին եւ Անդրէի առաքելոյն, եւ Բ (2) աջն Պետրոսի եւ Պաւղոսի սուրբ առաքելոյն, զոր սուրբ Սեղբեստրոս եւ Թագաւորն Կոստանդիանոս տուեալ էին պարգեւք Լուսաւորչին, եւ Լուսաւորիչն հանգուց ազդմամբ հրեշտակին ի լեառն Տիւրոսի՝ ի միջնադուռին, ի Թիկունս Մշոյ, որ ասի Ղազարու վանք, /21ա/ վասն զի շինեաց Լուսաւորիչն զսուրբ առաքեալքն յորժամ եկն ի Հառմայ ինքն եւ Տրդատ, եւ եդիր հայր վանացն զՂազար՝ եղբայրն Գլակայ:

Յորժամ որ գերիքն ամենեքեան, որ անկեալ էին ի ձեռն ճաղաթային բարձր ձայնիւ աղաղակեցին ընդդէմ սրբոցն, եւ բերեալ եզ մի զենեցաք ընդդէմ Ղազարու վանացն, յայնժամ եղեն մեծ հրաշք, զի Թուրքմանն Փիր-Հասանն, որ որոշեալ էր ի Ղարա-Մահմատէն եւ վասն երկիւղի Թամուրին կամէր ելանել ի Ծովասարն[1] եւ սակաւ մի զաւրք ընդ նմայ, յանկարծակի դիպեցան զաւրացն ճաղաթային, որ զանթիւ գերիսն տանէին: Եւ չաղաթայն հրաման առեալ ի Թամուրէն՝ զՓիր-Հասանն բռնել եւ զաւրքն կոտորել: Յայնժամ ճիչ բարձին գերիքն ի սուրբ Աղբերիկ եւ ի սուրբ Առաքելաքն եւ ի սուրբ Կարապետն, եւ աստ եղեւ մեծ սքանչելիք, զի ակներեւ Գ (3) սպիտակափայլ արք, հեծեալ ի ձի սպիտակ եւ զային ի վերայ աւդոյն որպէս զարծիւ եւ խառնեցան ի զաւրքն Փիր-Հասանին, զոր պատմեաց մեզ ճգնաւոր աբեղայն տէր Կարապետն, որ աչաւք էր տեսեալ ինքն եւ այլ բազումք ի գերեացն: Եւ յայս հրաշիցս ուժ առեալ Փիր-Հասանն եւ կոտորեցին զչաղաթայն, զի մէկ Թուրքմանն Ճ (100) չաղաթայ մորթեց, եւ գերեալքն ամենեքեան զերծեալք ի ճաղաթայէն՝ որդօք եւ դստերաւք՝ աւրհնեցաք զԱստուած եւ զսքանչելագործ զսուրբս իւր /21բ/[2]:

(6) Իսկ երկրորդում աւուրն եկն Թամուրն ի Մուշ քաղաք, եւ կոչեաց առ ինքն զամիրայն նոցին եւ ասաց. «Տա՛ր զիս ի վերայ Թուրքմանին, որ առնում զվրէժն իմ». եւ գնացին ի տեղի պատերազմին: Յայնժամ ետես Թամուրն իւր աչաւքն, որ առանց սրոյ մեռեալքն բազում էին, քան զսրով սպանածն. յայնժամ հիացաւ Թամուր Լանկն եւ ասաց. «Այս գործ Աստուծոյ է». եւ երկուցեալ ի Թուրքմանէն ի յետս դարձաւ, եւ խիլայեց զԳ (3) վանաց առաջնորդքն, եւ այլ ոչ նե[ն]գեաց Մշոյ, եւ գնաց ի Բաղէշ եւ արար ահր յետ ամիր Շարաւին:

(7) Անդի չուեալ եկն ի Արծկէ. ըմբռնեցին աբեղա մի Կարապետ անուն, որ գայր յԵրուսաղէմայ, ի Ճուղայ գեղջէն, եւ տուն եպիսկոպոս աւրհնել հրամանաւ Թամուրին, եւ առաքեցին ի Սմրղանդ քաղաք՝ վասն ազգին Հայոց, որ գերեցան ի Շապհոյ ի ձեռն անաւրէն Վասակայ՝ յորժամ քաջ Վարդանն նահատակեցաւ: Ի թվին Հայոց Ծ (602 թ.) Սմբատ Բագրատունին, որ պատուեցաւ Խոսրովու արքայէն Պարսից, գնաց աշխարհն Վրկանայ, որ ասի Սագաստան, որ է Սմրղանդ, եւ եգիտ անդ զգերեալ ազգս Հայոց, եւ մխիթարեաց զնոսա, զի մոռացեալ էին զլեզուն եւ զգիրն. նոր հաստատեաց զգիրն եւ զլեզուն Հայոց ի մէջ նոցա, եւ արար զՀաբէլ երէց՝ նոցա եպիսկոպոս: Եւ Լանկ Թամուրն զայս Կարապետ աբեղայս /22ա/

1 Թ. Մեծոփեցու Պատմութեան տպագրի մէջ Ծովասար փիպաշունչ տեղանունն աղաւաղուելով դարձել է ժողովարան(՞):

2 Պատերազմական այս գործողութիւնների եւ գերեվարուած հայ բնակչութեան գլխին եկած փորձանքների մասին ընդարձակ այս հատուածը, շատ տեղերում գրեթէ բառացի նոյնութեամբ, ընդօրինակուել է Թ. Մեծոփեցու կողմից: Վերջինս, սակայն, ճոխացրել է իր շարադրանքը լրացուցիչ մանրամասնութիւններով: Խօսելով, օրինակ, Կարա-կոյունլու ապստամբ ցեղապետ Փիր-Հասանի մասին՝ նա յայտնում է, որ «յետ. ժամանակի» այդ քաջարի գործիչը Բայրամ անունով իր որդու հետ միասին սպանուել է Կարա-Մուհամադի կողմից եւ այլն (տե՛ս **Թ. Մեծոփեցի**, էջ 23):

նոցա մխիթարութիւն առաքեաց ի Սմրղանդ[1]:

(8) Եւ ինքն գնաց ի վերայ Վանայ, առ զնա. եւ անչափ մարդ կոտորեաց. մինչ զի յետին մարդն, որ ի քարէն ի վայր ընկնէր, այլ ոչ մեռանէր ի բազմութենէ դիականցն: Եւ զգերիքն բաժանեցին ի վերայ իւրեանց, եւ իշխան մի ճաղաթայ զիւր բաժին[ն] ազատ ար[ար], եւ նորա

1 Սամարղանդում եւ շրջակայ երկրամասերում բնակութիւն հաստատած հայերի համար Լանկ-Թամուրի հրամանով եպիսկոպոս ձեռնադրելու մասին ուշագրաւ այս տեղեկութիւնը, որ Թ. Մեծոփեցու գրչի տակ ձեւափոխուելով՝ մասամբ անհասկանալի է դարձել (տե՛ս **Թ. Մեծոփեցի**, էջ 21), բացառիկ արժէք ունի միջինասիական երկրամասերի հայ գաղթականութեան պատմութիւնն ուսումնասիրելու համար: Քննարկուող հատուածի այն մասը, ուր խօսւում է Վրկանաց երկրի (այստեղ սխալմամբ նոյնացուած է Սամարղանդի հետ) հայերի մասին, որոնց գտել է VII դարի սկզբներին Սմբատ Բագրատունին մարզպանը՝ լեզուն եւ հաւատը կորցրած վիճակում, նորոյթներ գրեթէ չի պարունակում: Նրանց մասին տեղեկութիւններ կան Սեբէոսի, Յովհաննէս Դրասխանակերտցու, Ասողիկի, ինչպէս նաեւ Սամուէլի, Կիրակոսի եւ Մխիթար Այրիվանեցու մօտ (այս մասին տե՛ս **Н. Я. Марр**, Аркаун - монгольское название христиан, СПб., 1905, с. 48-49): Հրապարակուող «Ժամանակագրութեան» մէջ վերոյիշեալ աղբիւրներից, արդէն յայտնի տուեալներից բացի, փորձ է արուած նաեւ որոշելու, թէ երբ է ստեղծուել Վրկանաց երկրի հայկական գաղութը. մեր ժամանակագիրների կարծիքով՝ այդ հայերը գերեվարուել են «ի Շապհոյ, ի ձեռն անաւրէն Վասակայ, յորժամ քաջ Վարդանն նահատակեցաւ»: Պարզ է, սակայն, որ այս տեղեկութիւնները ժամանակավրէպ են (Պարսից Շապուհ արքան Վարդան Մամիկոնեանի եւ Վասակ Սիւնեցու ժամանակակից է դարձուած) եւ մեր հեղինակների մտքի ծնունդն են հանդիսանում:

Գիտենք, որ Վրկանաց երկրի հայերը շարունակում էին գոյատեւել որպէս կազմակերպուած համայնք առնուազն մինչեւ Յովհաննէս Դրասխանակերտցի կաթողիկոսի ժամանակները (X դար):

Միջինասիական հայկական գաղթօջախների մասին XI-XIII դարերից հաւաստի տեղեկութիւններ չեն պահպանուել: Սակայն պէտք չէ մտածել, թէ աշխարհագրական այս միջավայրում նուազել է հայերի թուաքանակը: Ինչպէս հայ վաճառականների երթեւեկով, այնպէս էլ հայկական կայուն բնակչութիւն ունեցող գաղթօջախների առկայութեամբ հեռաւոր այս երկրամասերը նշանակալից են եղել նաեւ յետագայում: Այդ մասին առկայ ցաք ու ցրիւ տեղեկութիւնները փորձել է ի մի բերել եւ իմաստաւորել Ն. Մառը իր վերոյիշեալ "Аркаун" աշխատութեան մէջ (տպագրուած է "Византийский временник" պարբերականի XII հատորում, 1905 թ., կայ նաեւ առանձնատիպ): Եօթնագետքի (Սեմիրեչյէ - այսպէս է կոչւում Բալխաշ լճի աւազանը) շրջանում գտնուող Փիշպեկ գիւղի գերեզմանատանը անցեալ դարի վերջին յայտնաբերուած հայերէն-ասորերէն տապանաքարը եկաւ վկայելու, որ 1323 թ. այդ վայրում նեստորական ասորիների հետ միասին ապրում էին նաեւ հայեր՝ ունենալով իրենց եպիսկոպոսը (տապանաքարի վրայ փորագրուած է. «Տէր Յովան Հայոց եպիսկոպոս, ի թւ. Հայոց ԷՃՀԲ գրեցաւ յիշատակարան»). յայտնի դարձաւ նաեւ, որ 1375 թ. կազմուած կատալոնեան մի քարտէզի վրայ Իսսիկկուլ լճից հարաւ մատնացոյց է արուած «հայկական մի վանք սուրբ Մատթէոսի անունով» եւ այլն (**Н. Я. Марр**, Надгробный камень из Семиречия с армянско-сирийской надписью, 1323, ЗВОАО, том VIII, с. 344-349; **В. В. Бартольд**, Очерк истории Семиречья, Фрунзе, 1949, с. 45):

Ուսումնասիրողները հակուած են եղել այս միջավայրում ապրող հայերին ազգային եկեղեցուց կտրուած սիրիական քաղկեդոնականների (մելքիտների) դաւանանքին յարող համայնքի անդամներ համարելու: Այս խնդիրը, սակայն, կարօտ է աւելի հանգամանալից անկանխակալ հետազօտութեան: Միջինասիական հայկական գաղթօջախների պատմութիւնն ուսումնասիրելու համար ի թիւս այլ նիւթերի պէտք է օգտագործել նաեւ հայ կաթողիկոսներից մէկի (հաւանաբար Մխիթար Գռներցու, որ գահակալել է 1341-1355 թթ.) ընդհանրական մի թուղթը, որ շարադրուած է Ոսկէ հորդայի դան Ջանիբէկի իշխանութեան տարիներին, այսինքն՝ 1342-1357 թթ. միջոցին: Հայ եկեղեցու գահակալը, իր օրհնութիւնը յղելով աշխարհասփիւռ հայութեանը, մասնաւորապէս դիմում է իր հօտի այն բեկորներին, որոնք, «սահեալ նժդեհութեամբ», բնակութիւն են հաստատել միջինասիական երկրամասերում: Ահա ընդհանրական թղթի մեզ հետաքրքրող հատուածը. «...եւ որք ի մասն արեւմտեան կողմանցդ սահեալք նժդեհութեամբ, եւ որք ի կողմանց Ասիացւոց, որ եւ հիւսիսի, որ էք ի կող եւ ի յուսս տիեզերաց, ինքնակալ տէրութեամբ եւ անյաղթ զօրութեաք բազմեալ պաղատ ածապահ (աստուածապա°հ) մեծ ղանիդ Ճանիպէկի. սկսեալ անտի մինչեւ ի թագաւորական եւ յարքայանիստ հոյակապ քաղաքդ Ղրիմ, յԱզախ եւ ի Սարայ, եւ որ շուրջ զրոլոր Էթիլ (իմա՝ Վոլգա) գետով, եւ որք զՋահուն գետով, զօր Ամոյն կոչեն (իմա՝ Ամու-Դարյա) ակումբ առեալ եւ ընդարձակ տարածեալ, այսինքն՝ մինչեւ ի ծովն Կասբից» (ՄՄ ձեռ. N 9622, էջ 671. այս շրջաբերական թուղթն արժանի է ամբողջական տպագրութեան):

ազատեալ գերիքն Վասպուրականա շինութեան պատճառ եղեն[1]:

(9) Գնաց Թամուրն ի Հոռմաց տունն, եւ զՍեբաստիայ աւերեաց, եւ զփոքրիկ տղայքն կալ արարին՝ ներքոյ ոտիցն ձիանուն: Եւ Հասաւ ի Պուրսայ, եւ զՀոռմաց սուլտանն զԻլտրում Պայեազիտն եւ զիւր կինն գերի արար, եւ զաշխարհն աւերեաց անողորմ Թամուր Լանկն[2]:

2

[ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԻՐԱԿՈՍԻ ԲԱՆԱՍԻՐԻ ՌՇՏՈՒՆՑԻՈՅ]

[ՊԼԵ (1386) Թամուրն եկաւ ի Դաւրէժ եւ Նախչվան եւ զՎան, կոտորեաց աւելի քան ԳՌ (3000) մարդ[3]:

ՊԽԱ (1392) կրկին գնաց ի Պաղտատ եւ աւերեաց:

ՊԽԹ (1400) դարձեալ եկն ի Վրացտունն եւ աւերեաց եւ առաւ շատ գերի, եւ գնաց Սմրղանտ եւ անդ սատակեցաւ [ՊԾԳ (1404)][4]:

ՊԾԱ (1402) Թագաւորեաց որդի Թամուրին Շահրուղ իմիրզան:

ՊԾԵ (1406)[5] *Ղարա-Իւսուֆն, որ փախուցեալ էր ի Թամուրէն, եւ գնացեալ էջ ի Շամ քաղաք, եւ կալանօք տարան ի Մսր, եկն ի Կարբի, եւ անդի գնացեալ էառ զԹարվէզ՝ մինչեւ ի Սուլտանիայ:*

ՊԾԷ (1408) եկն ի յԱրճէշ, ի յԱրծկէ, եւ Շմրզաին ի Բաղըշու ընկերեաց նմա, արարին շատ աւեր: Եւ անաւրէն Ղարայ-Իւսուֆն անչափելի չար եղաւ, մինչ զի սահման եղաւ կանանց, յորժամ որ տղայքն լային, նա զայս ասէին. «Մի լայք թէ՝ եկաւ Ղարա-Իւսուֆն»

1 Լանկ-Թամուրը Վանը գրաւել է 1387 թ. սեպտեմբեր ամսին, 26 օր տեւող պաշարումից եւ յամառ մարտերից յետոյ: Այդ մասին տեղեկութիւններ են գրանցել ժամանակակից մի շարք յիշատակագիրներ եւ ժամանակագիրներ: 1388 թ. շարադրուած մի յիշատակարանում, օրինակ, ասուած է, որ գրաւելով Վանի բերդը՝ Լանկ-Թամուրն այն աւերել է. «քարահատակ արար զոմանս գերեաց եւ զոմանս գահավիժեաց եւ զայլս ի սուր սուսերի մաշեաց եւ զերկիրն հրով ճարակեաց» («ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», Երեւան, 1950, էջ 573): Մէկ ուրիշը չափածոյ ողբ է հիւսել այդ մասին (նոյն տեղում, էջ 589-590).

Առնու զդղեակն զՎան քաղաքի.

Զողորմի մեծի եւ ոչ փոքրի,

Զամէն ի բերդն ի վայր ձգի

Ու զմնացեալն գերի տանի:

2 Ներածական խօսքում արդէն ասել ենք, որ վերջին պարբերութիւնը, որի մէջ տեղեկութիւններ են գրանցուած 1401-1402 թթ. անցուդարձերի մասին (Սեբաստիայի գրաւում, օսմանեան սուլթան Բայազիտ Ա-ի գերեվարում եւ այլն), հաւանաբար շարադրուած է մի այլ անձնաւորութեան կողմից:

3 «Ժամանակագրութեան» առաջին այս պարբերութիւնը քաղել ենք N 582 ձեռագրից, որի մէջ սկզբնաւորութիւնն ամբողջական է: Առանց այս պարբերութեան անհասկանալի էր մնալու յաջորդ հատուածը, ուր ասուած է, թէ՝ «ՊԽԱ (1392) կրկին գնաց (ո՞վ գնաց) ի Պաղտատ եւ աւերեաց»:

4 Լանկ-Թամուրի մահուան թուականը լրացրել ենք N 582 ձեռագրից, ուր ՊԽԱ եւ ՊԽԹ թուականների տակ գրանցուած հատուածները պահպանուել են անվթար՝ պարունակելով լրացուցիչ տեղեկութիւններ: Մէջբերում ենք այդ հատուածներն ամբողջութեամբ. «ՊԽԱ (1392) դարձեալ եկաւ ի Բաղդատ եւ արար բազում աւերս ի Միջագետս եւ դարձաւ յաշխարհս իւր: Եւ էր սուլտան Ահմատի որդին սուլտան Տահիրն ի յԱլնջոյ բերդն. եւ Վրաց թագաւորն եկն ի վերայ բերթին եւ էառ, եւ սուլտան Տահիրն տարաւ ի Տփխիս: Եւ Թամուրն իբրեւ լուաւ զայս ՊԽԹ (1400) դարձեալ եկաւ ի վերայ Վրացն եւ էառ շատ գերի եւ գնաց յաշխարհ իւր եւ սատակեցաւ ՊԾԳ (1404) («Մանր ժամանակագրութիւններ», 1, էջ 118-119):

5 Մեր ձեռագրում տարեթիւն աղճատուելով՝ դարձել է ՊԾԳ (1404). ուղղել ենք ըստ N 582 ձեռագրի:

/22բ/[1]:

ՊՀ (1421)[2] ելաւ Շահրաւղն ի Սմրղանտու եւ եկաւ, կոտորեաց զՂարա-Իւսուֆն, եւ նստաւ որդին Ղարա-Իւսուֆին Սքանդարն ի Թավրէզ, եւ ՃՌ (100,000) հեծելով եկաւ ի վերայ Մշոյ, Բաղիշու, եւ խսարէց զարնանէ մինչեւ յհանկամուտն, եւ ոչ կարաց առնուլ. յայնժամ գերեաց զկէսն Սասնոյ, եւ զՄշու դաշտն զամէն, զԽութ, զԿինձ, զՎարդով, զԽնուս, զՊուլանուխն. զայսքան երկիրս գերեաց, եւ սուրկուն արար զամէնն, եւ տարաւ ի Սուլթանիա. զգերանքն այրեաց, զլեզուն խափանեաց եւ հաւատոց եհան:

Իսկ յորժամ լսեց զչարութիւն Սքանդարին Շահրուխ իմիրզան[3], ելաւ ի Սմրղանտա ԷՃՌ (700,000) մարդով եւ եկն ի վերայ Սքանդարին: Եւ անաւրէն Իսքանդարն ՃՌ (100,000) -[աւ] փախեաւ ի Շահրաւղէն, եւ հասաւ Շահրուղն ի Ղլաթ. եւ պատերազմեցան եւ յաղթեցաւ Իսկանդարն, փախեաւ եւ անկաւ ի Ջուլամերկ: Եւ [Շահրուղն] զՊուսափու խանն եդիր ի Թարվէզ, եւ ինքն գնաց ի Հրէ, այլ ի Սմրղանդ: Զանացաւ Շահրուխ իմիրզան, զի Սքանդարն չատ աւերք կանէր ի աշխարհիս[4]:

Այլ Շահրուխն զիր որդին զՈւլուխբէկն եդիր ի Սմրղանդ: Եւ ասորի երէց մի նեստորական երթեալ ի Սմրղանդ ի տուն մի իշխանի /23ա/ արար սպասաւորութիւն եւ հաւանեցոյց զպարոնն, մինչ զի տունն յինքն վստահացաւ, անկաւ ի յետ կնոջ իշխանին: Եւ գնաց զաշխարհն իւր, եւ գրեաց Թուխթ եւ յղրկեաց ի Սմրղանդ, թէ՝ «Սուտ է ձեր աւրէնքն, ես եկի, զձեզ խաբեցի եւ զձեր կանայքն խայտառակեցի»: Եւ իշխանին առեալ զԹուխթն տարաւ առ Ուլուխբէկն իմիրզան. եւ նայ հարցեալ, թէ որ ազգէ էր, եւ ասացին, թէ յեսայի էր: Եւ տղա Թագաւորն հրաման եատր զքրիստոնայքն, որ անդ ի Սմրղանդ էին՝ զորս կոտորել եւ զորս տանջացնել: Այս չարիս եղեւ եւ գործեցաւ ի ձեռն անաւրէն ասորի երիցոյ մի: Եւ գնաց եպիսկոպոս մի Յովանէս անուն ի Մեծոբայ՝ մականուն Զանկի, ի մէջ նոցա գերելոց պատճառաւ, եւ տեսեալ էր զայս խեղճ, եւ երեր մեզ զբաւթն[5], վասն զի խիստ ընտիր քրիստոնեայք էին եւ ընդունողք կարգաւորաց, եւ ունէին ընտիր եկեղեցիք եւ քահանայք. ամէն խափանեցան ի ձեռն չարագործ իրիցոյ ասորոյ միոյ[6]:

1 Կարա-Յուսուֆի անունը տալով երեխաներին վախեցնելու մասին ուշագրաւ այս տեղեկութիւնը բացակայում է N 582 ձեռագրից. եւ ընդհակառակը՝ այնտեղ, այս հատուածի անմիջական շարունակութեամբ, կարդում ենք ստորեւ բերուող հետաքրքրական տեղեկութիւնը Բաղէշի քուրդ ամիր Շամս-եդ-դինի եւ Ոստանի Ամիր-Եզդինի միջեւ տեղի ունեցած կռիւների մասին. «Եւ միւս տարին (այսինքն՝ 1409-ին) Շմեզդնի հեծելն եկին եւ այրեցին զՈստուան: Եւ բարկացեալ Ամիր-Եզդին[ն] գնաց եւ այրեաց Կ (60) գեղ ի Բաղիշոյ» («Մանր ժամանակագրութիւններ», 1, էջ 119):

2 Տարեթիւը մեր ձեռագրում նշանակուած է ՊՀԸ, այսինքն՝ 1429, որ վերաբերում է յաջորդ պարբերութեան մէջ պատմուող դէպքերին: Ըստ N 582 ձեռագրի ուղղում ենք ՊՀ (1421):

3 Շահռուխի երկրորդ արշաւանքը տեղի է ունեցել ՊՀԸ (1429) թուականին (տե՛ս նախորդ ծանօթագրութիւնը):

4 Լանկ-Թամուրի որդի Շահռուխի (1409-1447) առաջին եւ երկրորդ արշաւանքների մասին կարեւոր մանրամասնութիւններ պարունակող այս գրանցումները N 582 ձեռագրում անճանաչելի համառօտուելով՝ այսպիսի կերպարանք են ընդունել. «Յառաջին գալն Շահռուհին ՊՀ (1421) եւ խոյն տանուտէր, յաղթեաց թուրքմանին եւ գնաց: Բ (2) գալն ՊՀԸ (1429) եւ աղեղնաւոր տանուտէր, կոտորեաց զթուրքն ի Սալամաստ եւ զԲուսախտն դան եդիր եւ գնաց յաշխարհ իւր» («Մանր ժամանակագրութիւններ», 1, էջ 119):

5 Այս նախադասութեան «գերելոց» բառը մեր ձեռագրում բացայայտ վրիպակով դարձուած է «գրոց», ուղղում ենք ըստ Թ. Մեծոփեցու Պատմութեան ստորեւ մէջբերուող հատուածի. «Եւ գնացեալ եպիսկոպոսն մեր Յովհաննէս մականուն Զանկի վասն գերելոց, գրեաց եւ զայս բոթ դառնութեան երեր մեզ. վա՜յ մեզ» (**Թ. Մեծոփեցի**, էջ 28):

6 Սամարղանդի եւ ողջ թամուրեան պետութեան (Մաւերաննահրի) քրիստոնեայ գաղութի անհետման մասին այս տեղեկութիւնն ամբողջութեամբ (աննշան լեզուական փոփոխութիւններով) տեղ է գտել Թ. Մեծոփեցու

ՊՀԷ (1428)[1] անաւրէն Սքանդարն դարձեալ կոտորեց եւ աւերեաց զՄուշ՝ զմնացեալքն, վասն զի ջանայր, որ առնէր զԲաղէշ ի /23բ/ քրդուն եւ առնէր իւրն ամրոց, եւ ոչ կարէր: Յայնժամ ամառն գայր Սքանդարն եւ աւերէր՝ յորժամ խսարէր զԲաղէշ եւ ոչ կարէր առնուլ, ձմեռն քուրդն եկանէր ի Բաղէշ[ու] բերդէն եւ խեղճք զանաւթիքն եւ զԹալնածքն նոր սպանանէր եւ տնցուցանէր, թէ չի մնա շինութիւն, որ զարունն Սքանդարն չի գայ ի վերայ Բաղիշու: Եւ ի յայսպիսի խեղճ սաստապանաւք կային Գ (3) տարի Մուշ, Կինձ, Խնուս, Պուլանուխն, Սասնոյ կէսն, վասն զի սովն եւ սաստաժամ մահն սաստկացեր էր եւ ամենեքեան հալածանաւք կային, զի մայրն որդովքն յերկուն ի վար պարկէին, եւ սատաւատուն կու տեսանէին, որ մայրն՝ որդովքն մեռեալ էին: Եւ այսպէս ջնջեցան մեծ եւ փոքր, որ բնաւ շինութիւն չմնաց, դարձաւ աւերակ եւ ամայի:

Իսկ Սքանդարն Է (7) տարի ԺՌ (10,000) մարդով եղեւ հարամի, զՄիջագետս, զՀռոմայ

Պատմութեան մէջ (էջ 28-29) եւ այդ աղբիւրի միջնորդութեամբ ճանաչուել արեւելագէտների կողմից որպէս թամուրեան պետութեան սահմաններում բնակութիւն հաստատած քրիստոնեաների (մասնաւորապէս՝ նեստորականների) պատմութեան վերջին արարի ճշմարտացի նկարագրութիւն: Այս մասին տե՛ս Ի. Պ. Պետրուշեւսկու "К истории христианства в Средней Азии" յօդուածը (տպագրուած է "Палестинский сборник" պարբերականի մէջ. вып. 15 (78), 1966, с. 141-147):

Կիլիկեան Հայաստանի նշանաւոր քաղաքական գործիչ Սմբատ Գունդստաբլը 1248 թ. Միջին Ասիայում եղած ժամանակ մի նամակ էր յղել Կիպրոսի թագաւորին, որի մէջ Սամարղանդի քրիստոնեաների, մանաւանդ նրանց հոգեւոր առաջնորդների մասին խիստ քննադատական տեղեկութիւններ կան («նրանք, ովքեր այստեղ քարոզիչ են համարւում, արժանի պէտք է լինէին խիստ պատիժների» եւ այլն): Սմբատը նկատել է, որ նախկինում քրիստոնեաներին սարսափի մէջ պահող մահմեդականներն այժմ (այսինքն՝ մոնղոլների աշխարհակալութեան սկզբնական շրջանում) «իրենք են կրկնակի հալածւում» եւ այլն (**В. В. Бартольд**, Сочинения, том II, часть 2, Москва, 1964, с. 317): Երկար չի տեւում, սակայն, Սամարղանդի քրիստոնեաների արտօնեալ այս վիճակը: XIII դարի 50-ական թթ. վերջերից արդէն ուժերի յարաբերակցութիւնը փոխւում է յօգուտ մահմեդականների: Մոնղոլ աւագանու զօրեղ մի խմբաւորում, մահմեդականութիւնն ընդունելով որպէս պետական կրօն, թշնամական դիրք է գրաւում քրիստոնեաների նկատմամբ, եւ 1256-1259 թթ. միջոցին մահմեդականներին յաջողւում է մի եկեղեցու մէջ ոչնչացնել քրիստոնեայ հաւատացեալներին եւ աւերակների կոյտ դարձնել այդ շինութիւնը (այս մասին տեղեկութիւններ է հաղորդել պարսիկ պատմագիր Ջուվեյնին իր «Թարաքատ-ի Նասիրի» աշխատութեան մէջ):

Այս տեղեկութիւնը, սակայն, ինչպէս իրաւացիօրէն նշել է Ի. Պետրուշեւսկին իր վերոյիշեալ յօդուածի մէջ, վերաբերել է միայն Սամարղանդի քրիստոնեայ համայնքներից մէկին: Քրիստոնեաները յետագայում եւս, մինչեւ XV դարի 20-ական թթ., շարունակել են զգալի դեր խաղալ Մաւերաննահրի տնտեսական կեանքում, մանաւանդ առեւտրի եւ արհեստագործութեան մարզերում: Ուշադրութեան արժանի է Կիրակոս Բանասէրի քննարկուող պարբերութեան վերջին հատուածը, որի մէջ Սամարղանդի քրիստոնեաները, մինչեւ նրանց զանգուածային բարձումը, մեծարուած են որպէս ընտիր եւ առատաձեռն հաւատացեալներ («վասն զի խիստ ընտիր քրիստոնեայք էին եւ ընդունողք կարգաւորաց եւ ունէին ընտիր եկեղեցիք եւ քահանայք»):

Սամարղանդի քրիստոնեաների բնաջնջումը, որի պատմութիւնը շարադրուած է 1421-1428 թթ. դէպքերին նուիրուած պարբերութիւնների միջնամասում, ըստ երեւոյթին տեղի է ունեցել 20-ական թթ. առաջին տարիներին, քանի որ Ուլուղբէկը, որի հրամանով օրէնքից դուրս են յայտարարուել Սամարղանդի քրիստոնեաները, այստեղ կոչուած է «տղա թագաւոր» (ծնուել է 1394 թ., Սամարղանդի կառավարիչ նշանակուել 1409 թ.): Ի. Պետրուշեւսկու կարծիքով եւս՝ այս դէպքը տեղի է ունեցել 1421-1429 թթ. միջոցին (տե՛ս նշ. աշխ, էջ 146):

1 Այս պարբերութեան թուականը գրչական ակնյայտ վրիպակով ՊՃԷ (1408) է նշանակուած: Տասնաւոր թիւը ուղղում ենք՝ դարձնելով Հ (70)՝ նկատի ունենալով, որ այստեղ նկարագրուած անցուդարձերն իրօք տեղի են ունեցել 1426-1428 թթ. ընթացքում: Թովմա Մինասենց անուանի գրիչը 1428 թ. շարադրած իր նշանաւոր յիշատակարանում, անդրադառնալով նոյն այս դէպքերին, գրել է. «Իսկ ի յՊՀԴ (1425) թուին էառ ամիրզա Սքանդարն զԿլան եւ զայլ բերդորայքն, եւ մրլքեց զաշխարհս մեր: Եւ միւս այլ տարին գնաց ի վերայ Բաղիշոյ: Եւ այս Գ (3) տարի է, որ Բաղէշ ի խըսար է, եւ զվերջն Աստուած գիտէ» («ԺԵ դարի յիշատակարաններ», Ա, էջ 376): Կիրակոս Բանասէրը նոյնպէս անդրադառնում է Բաղէշի բերդի եռամեայ այս պաշարմանը՝ շատ աւելի մանրամասն ու կարեւոր տեղեկութիւններ հաղորդելով պատերազմական գործողութիւնների ընթացքում շրջակայ գաւառների հայ գիւղացիութեան կրած տառապանքների մասին:

տունն՝ զամէն աւերէց: Եւ եկն Եզընկան, կամէր ձմեռնել, քանզի որ հեծեալն ի վերայ զարնէր, ինքն թողուր ու փախչէր եւ նոր հեծել ժողովէր:

ՊՁԷ (1438) ղուլն ի Մսրա, որ ասեն Զարքազ, յանկարծ/24ա/ակի հասաւ յԵզընկան՝ ի վերայ Սքանդարին, կոտորեաց զաւրս նորա, եւ Սքանդարն փախաւ ըստ իւր սովորութեան եւ կամէր կրկին հեծել ժողովէր. յայնժամ իւր զաւրքն ձանձրացեալ էին, զինքն սպանին, եւ զիւր որդին[1] գծիհանշահ արին թագաւոր ի Թավրէզ, ապա թէ սակաւ մի հանդարտեցաւ աշխարհս[2]:

ՊՁԹ (1440)[3] գնաց ճիհանշան ի Վրացտուն, առաւ զՇամշուլտէ. ԳՌ (3000) մարդ կոտորեաց եւ ԹՌ (9000) գերի արար[4]:

ՊՂԲ (1443) զտէր Կիրակոսն հանին ի կաթուղիկոսութենէն եւ Մակեցին նստաւ ղապալով[5]:

---

1 Այս տուեալը սխալ է: Ջհանշահը (1437-1467) Սքանդար Կարա-Կոյունլուի եղբայրն է եւ ո՛չ որդին:

2 Սքանդարի փոթորկայոյզ գործունէութեան վերջին շրջանի մասին կարեւոր այս պարբերութիւնը, Կիրակոս Բանասէրի «Ժամանակագրութեան» N 582 ձեռագրում պահպանուած տարբերակում խիստ համառօտուելով, ստացել է այսպիսի կերպարանք. «ՊՁԷ (1438) ղուլն եկաւ ի յԵզնկէն եւ սպանաւ: Սքանդարն ի յորդոյն եւ նստաւ Ջաանշէն»: Այստեղից անկարելի է իմանալ, թէ ով է «ղուլ» կոչուածը, եւ ինչ հանգամանքներում է սպանուել Սքանդար Կարա-Կոյունլուն («Մանր ժամանակագրութիւնների» հրատարակչի չհիմնաւորուած կարծիքով՝ «ղուլ» անուան տակ թաքնուած է Երզնկայի իշխող Օթմանը): Ըստ այդմ, մեր ձեռագիրը այս դէպքում եւս անաղարտ է պահել Ժամանակագրութեան բնագիրը: Սակայն նոյնը չենք կարող ասել քննարկուող հատուածի տարեթուի վերաբերեալ: Մեր ձեռագրում գրուած է ՊՁԸ (1439), որ սրբագրում ենք N 582 ձեռագրի ՊՁԷ (1438) տարեթուով՝ հաշուի առնելով նաեւ Կիրակոս անունով մի գրչի՝ Բաղէշում շարադրուած յիշատակարանի ստորեւ մէջբերուող պարբերութիւնը. «...եւ ղանութեան Ջհանշահ միրզին, որ յայսմ ամի Սքանդար՝ եղբայր նորա սպանաւ ձեռամբ որդւոյ իւրոյ եւ նստաւ ի թաղթն Ջհանշէն, եւ ի թուականիս Հայոց ՊՁԷ (1438)» («ԺԵ դարի յիշատակարաններ», Ա, էջ 487): Տեղին է այստեղ նշել, որ Սքանդարը սպանուել է 1437 թ.: Այդ դէպքից մի քանի ամիս յետոյ, բայց արդէն յաջորդ՝ 1438 թ. շարադրուած յիշատակարանների մէջ բնականաբար կարող էին «յայսմ ամի» անորոշ դարձուածքը գործածել՝ հաշուի չառնելով, որ, ըստ անշարժ տոմարի, մարդկութիւնը թեւակոխել է արդէն յաջորդ թուականի սահմանները:

3 Այս տարեթիւը, մեր ձեռագրում նոյնպէս աղճատուելով, դարձել է ՊՁԷ (1439): Ուղղում ենք՝ նկատի ունենալով N 582 ձեռագիրը («Մանր ժամանակագրութիւններ», I, էջ 119), «Ժամանակագրութեան» N 1382 ձեռագրում պահպանուած պատառիկը («ԺԵ դարի յիշատակարաններ», Ա, էջ 506), Յովհաննէս գրչի շարադրած վկայաբանական գրուածքը Սամշուղէի քրիստոնեայ բնակչութեան կոտորածի մասին (նոյն տեղում, էջ 507) եւ այլ ժամանակակից սկզբնաղբիւրներ: Սրանք բոլորը միաբերան Ջհանշահի դէպի Վրաստան կատարած արշաւանքի եւ Սամշուղէի աղէտի տարեթիւը 1440 թ. են նշում:

4 Այս հատուածից յետոյ Կիրակոս Բանասէրի «Ժամանակագրութեան» անաղարտ բնագրում ըստ երեւոյթին եղել է 1441 թ. դէպքերի մասին այն գրանցումը, որ փրկել է Սամուէլ Անեցու «Ժամանակագրութեան» շարունակողներից մէկը՝ իր ճաշակով որոշ քաղուածքներ կատարելով «Ժամանակագրութեան» ամբողջական բնագրից: Ահա այդ գրանցումը. «ՊՂ (1441) զաչ յուսաւորչին ի Սսոյ գողացեալ բերին յէջմիածին եւ վերստին հաստատեցին զկաթողիկոսութիւն, զխորվիրապայ հայրն՝ զտէր Կիրակոս օրհնելով զկաթողիկոս» (Սամուէլ, էջ 175):

5 Այս վերջին հատուածը համառօտագրուելով՝ հեռացել է նախնական բնագրից ու զրկուել հեղինակի մասին ունեցած կարեւոր տուեալներից: Ինչպէս նշել ենք ներածական խօսքի մէջ, այս հատուածը համեմատաբար անաղարտ պահպանուել է N 582 ձեռագրի մէջ. այսպէս. «ՊՂԲ (1443) զտէր Կիրակոս կաթողիկոսն փոխեցին վասն նախանձոյ եւ Մակուեցին նստաւ ղաբալով եւ թուրքով: Եւ զիս եւ Սարգիս վարդապետն տօգանել տուին, զինչ վատութիւն որ արարին՝ կաթողիկոսին եւ Սարգիս վարդապետին եւ ինձ՝ Աստուած թողոյ նոցա զմեղս իւրեանց» («Մանր ժամանակագրութիւններ», I, էջ 119):

ՍԱՐԳԻՍ ԱԲԵՂԱՅԻ «ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆԸ»*

Միջին դարերում Երուսաղէմից յետոյ քրիստոնեայ ժողովուրդների համար բարեպաշտական ուխտագնացութիւնների նշանաւոր վայրեր էին համարւում Հռոմը, ուր, ըստ աւանդութեան, գործել եւ նահատակուել էին Պետրոս ու Պօղոս առաքեալները, եւ Սպանիայի հիւսիս-արեւմտեան ծայրամասում (Գալիսիայում) գտնուող Սանտյագօ դէ Կոմպոստելլա քաղաքը, ուր իբրեւ թէ պահւում է Յակոբ առաքեալի գլխատեալ մարմինը: Այդ սրբավայրերն այցելողների թւում եղել են նաեւ բազմաթիւ հայ ուխտագնացներ, որոնք յաղթահարելով մեծ դժուարութիւններ՝ հեռագնաց ճանապարհորդութեամբ Հայաստանից հասել են մինչեւ Սպանիայի անծանօթ այդ ափերը՝ բարի յիշատակ թողնելով իրենց մասին[1]:

XV-XVI դարերում ասիական եւ եւրոպական երկրների միջեւ տեղի ունեցող առեւտրի մէջ հայ վաճառականութեան դերի ընդլայնմանը զուգընթաց բազմանում են վերոյիշեալ երկրներում ղեգերող հայ մարդիկ: Այժմ արդէն ուխտագնացութիւնից աւելի նրանց սկսում է հետաքրքրել իրենց այցելած երկրների քաղաքական ու տնտեսական վիճակը, ժողովուրդների վարքն ու բարքը, անսամ քաղաքների բնակչութեան թիւն ու դրամունքը, նշանաւոր վանական եւ քաղաքացիական շինութիւնները եւ այլն: Օտար բանակայական լծի տակ կեղեքուող հայ ժողովրդի գործիչները սկսում են այցելել եւրոպական երկրներ նաեւ իրենց հայրենիքի ազատագրութեան համար օգնութիւն ստանալու սին յոյսերով եւ քաղաքական այլ նպատակներով՝ յաճախ ստանձնելով դիւանագիտական յանձնարարութիւններ Իրանի, Վրաստանի եւ այլ երկրների գահակալներից:

Եւրոպական երկրներում շրջագայած առաջին նշանաւոր հայը եղել է Մարտիրոս եպիսկոպոս Երզնկացին, որ 1489-1496 թթ. գեղերել է Իտալիայում, Շուեյցարիայում, Գերմանիայում, Ֆլանդրիայում, Անգլիայում, Ֆրանսիայում եւ Սպանիայում՝ յետագայում հակիրճ գրի առնելով իր ճամփորդական տպաւորութիւնները[2]:

Մարտիրոսից շուրջ մէկ դար յետոյ, 1586 թուականին, Որոտանի շրջանի Գետաթաղ գիւղից մի երիտասարդ՝ Փիրզատայ անունով, նոյնպէս ձեռնարկում է հեռագնաց ճամփորդութեան. «Իմ տանէն ելայ, ասկայկան մոլորեցի, օտար աշխարհ եկայ»,- գրում է նա[3]:

---

* «Պատմա-բանասիրական հանդէս», 1970, N 3, էջ 125-148

1 Դրանցից են Սիմէոն Հայր (X դար), Դաւիթ Հայկազնը (XII դար), Կիլիկեան Հայաստանի վերջին գահակալ Լեւոն V-ը եւ ուրիշներ (տե՛ս «Բազմավէպ», 1937, NN 2-5, էջ 51-52):

2 Մարտիրոս Երզնկացու «Ուղեգրութիւնը» վաղուց յայտնի է հայերէն բնագրով ու եւրոպական թարգմանութիւններով: Martyr (Evêque), Relation d'un voyage fait en Europe et dans l'Océan Atlantique à la fin du XVe siècle, sous le règne de Charles VIII; trad. en français par J. Saint-Martin, Paris, 1828 (ֆրանսերէն թարգմանութիւն): «Մարտիրոս եպիսկոպոսի Երզնկացւոյ ուղեգրութիւն ի Սպանիա» («Բազմավէպ», 1937, NN 2-5, էջ 49-60): Վ. Յակոբեան, Մարտիրոս Երզնկացու ճանապարհորդական նոթերը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1957, N 6, էջ 97-110): Relación de un viaje por Europa, con la peregrinación a Santiago de Galicia, verificado a fines siglo XV, por Mártir obispo de Arzenyan (պորտուգալերէն թարգմանութիւնը եւ ներածական յօդուածը՝ Emilia Gayangos de Riaño-ի):

3 Փիրզատա Ղափանեցու փոքրիկ «Ուղեգրութիւնը» տպագրուած է «Բազմավէպի» 1882 թ. համարում (էջ 317-318): Հատուածներ է հրատարակել նաեւ Աշոտ Յովհաննիսեանը «Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան» աշխատութեան Բ հատորում (Երեւան, 1959, էջ 76-77)՝ քաղելով Տիրայր վարդապետի կազմած Օքսֆորդի Բոդլեան գրադարանի հայերէն ձեռագրերի անտիպ ցուցակից («Ուղեգրութեան» բնագիրը պահպանուել է այդ գրադարանի N 122 հայերէն ձեռագրում):

Թուրքիայից անցնելով Լեհաստան՝ Փիրզատան լինում է Գերմանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, այնուհետեւ այցելում է Սպանիա՝ «Մադրիլ քաղաքն... մեծ թագաւորին թախտն», եւ եւրոպական այլ երկրներ:

1598 թ. անշուշտ հայազգի բանագնացի միջոցով Քարթլիի Սիմոն թագաւորը (1558-1600) Թիֆլիսից հայերէնով մի գրութիւն է ուղարկում Սպանիայի թագաւոր Փիլիպպոս II-ին թուրքերի դէմ քրիստոնեայ պետութիւնների զինական ուժերը միաւորելու եւ միասնական պայքարի ճակատ ստեղծելու անհրաժեշտութեան մասին: Նամակից պարզ է դառնում, որ առաջինը «Թուղթ ու գիր սիրոյ միաբանութեան» ուղարկողը եղել է Սպանիայի թագաւորը: Չպէտք է տարակուսել, որ այս բանակցութիւնները հայ գործիչների միջոցով են իրականացուել[1]:

Բանասիրութեանը յայտնի յաջորդ հայազգի ուղեգնացը, որ իր ճանապարհորդութիւնների մասին հետաքրքրական տուեալներ է գրանցել ինքնակենսագրական բնոյթ ունեցող գրուածքի երկրորդ մասում, Երնջակի շրջանի Ապարաներ գիւղի ունիթոր քահանայ Աւգուստինոս Բաջեցին է:

XVII դարի սկզբին, մտերմանալով սպանացի մի դոմինիկեանի հետ, որը շահ Աբասի մօտ իր գործերն աւարտելով՝ պատրաստւում էր Եւրոպա վերադառնալ, Աւգուստինոսը դառնում է նրա ուղեկիցներից մէկը եւ Ռուսաստանի վրայով անցնում Եւրոպա. լինում է Լեհաստանում, Գերմանիայում, Սպանիայում, Պորտուգալիայում եւ Իտալիայում: Անսեթեւեթ լեզուով մեր ուղեգիրը նկարագրում է իր կեանքի դրուագները հայրենիքից հեռու ընկած երկրներում՝ յատուկ ուշադրութիւն դարձնելով տեսած բազմաթիւ քաղաքների ու վանական հաստատութիւնների շինուածքին, նրանցում պահուող սրբութիւններին[2]:

Աւգուստինոս Բաջեցին դեռ չէր աւարտել իր գնացումները, երբ աշխարհ տեսնելու, տարբեր ժողովուրդների կեանքն ու կենցաղը ուսումնասիրելու մեծ ծրագրով ճանապարհորդական գաւազան վերցրեց ու Լվով քաղաքից դուրս եկաւ՝ օտար երկրներ թափառելու հայ ուղեգրական գրականութեան իսկական ռահվիրայ, մեծատաղանդ Սիմէոն դպիր Լեհացին: 1608 թ. սկզբներին դուրս գալով Լվովից՝ նա եղաւ Ստամբուլում, Մարմարի եւ Էգէեան ծովերի ափնեայ քաղաքներում, Վենետիկում, Հռոմում, Ֆլորենցիայում, ապա Փոքր Ասիայում ու Հայաստանում, Եգիպտոսում, Պաղեստինի սրբավայրերում, Սիրիայում եւ այլ վայրերում: Խորաթափանց եւ սրատես մեր ուղեգիրը՝ լայն աշխարհհայեացքի եւ դեմոկրատական հայեացքների տէր մի անձնաւորութիւն, իր գեղեցիկ գրուածքում ոչ միայն ոգեւորութեամբ ու կենդանի գծերով նկարագրում է տեսած վայրերի արժանայիշատակ յուշարձանները, այլեւ յատուկ ուշադրութիւն դարձնում ժողովրդական-աշխատաւորական խաւերի տնտեսական ու իրաւական վիճակի վրայ, մանաւանդ բացայայտում Թուրքական կայսրութեան տաժանակիր լծի տակ կեղեքուող ժողովուրդների թշուառ ու իրաւազուրկ կեանքի իրական պատկերը: Սիմէոն դպրի «Ուղեգրութիւնն» առաջնակարգ սկզբնաղբիւր է նաեւ հայկական Սփիւռքի ու հարաւ-արեւելեան Եւրոպայի մի շարք երկրների պատմութեան համար[3]: Նշանաւոր այս աշխատութեամբ աւարտւում է միջնադարեան հայ ուղեգրութիւն-

1 Աշոտ Յովհաննիսեան, նշ. աշխ., էջ 74

2 Տպագրուած է Գ. Պատկանեանի «Նշխարք մատենագրութեան Հայոց» աշխատութեան մէջ (Ս. Պետերբուրգ, 1884, էջ 5-23)՝ «Աւգոստինոսի Բաջեցւոյ ճանապարհորդութիւն յԵւրոպա» խորագրով:

3 «Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն, տարեգրութիւն եւ յիշատակարաններ», ուսումնասիրեց եւ հրատարակեց Հ. Ներսէս Վ. Ակինեան, Վիեննա, 1936. Симеон Лехаци, Путевые заметки, перевод с армянского,

ների շղթան, եւ գրականութեան այդ ժանրը դուրս է գալիս խանձարուրային իր վիճակից:

Սոյն հրապարակումով ընթերցողների ուշադրութեանը ներկայացուող ուղեգրութեամբ լրացւում է եւրոպական երկրներ այցելած ու իրենց տպաւորութիւնները գրանցած հայ ուղեգիրների աղքատիկ ցանկը XVI դարի վերջին տասնամեակներին ապրած Սարգիս աբեղայի անունով: Այս նոր ուղեգիրն իր փոքրածաւալ գրուածքով ընդարձակում է մեր գիտելիքները եւրոպական երկրների, ինչպէս նաեւ նորայայտ Ամերիկայի վերաբերեալ միջնադարեան Հայաստանում ամբարուած տեղեկութիւնների մասին, միաժամանակ օգտակար տուեալներ հաղորդում իր այցելած երկրների, մանաւանդ Սպանիայի ու Պորտուգալիայի յիշարժան վայրերի, տնտեսական եւ քաղաքական դրութեան վերաբերեալ:

***

Առաջին աշխարհամարտի դժնդակ ու ողբերգական տարիներին Արեւմտեան Հայաստանի ողջ տարածքում մարդկային պատմութեան մէջ աննախադէպ վայրագութեամբ թուրք բարբարոսների կողմից ոչնչացուեցին հայ ժողովրդի ստեղծած նիւթական ու հոգեւոր մշակոյթի անգնահատելի յուշարձանները: Աւերակների կոյտի վերածուեցին միջնադարեան մշակոյթի կենտրոնները՝ հարիւրաւոր վանքեր ու եկեղեցիներ, խարոյկի զոհ դարձան հազարաւոր ձեռագիր մատեաններ՝ գիտական աշխարհին անծանօթ բովանդակութեամբ, զարդարուած չքեղ մանրանկարներով ու կազմերով*:

Փրկուեց մշակութային գանձերի հազիւ մէկ տասներորդը:

Սակայն պատմական Հայաստանի հեռաւոր խորշերում ծուարած փոքրաթիւ հայկական համայնքներում, իսկ աւելի մեծ չափով՝ հայերի տուն ու տեղին տէր դարձած թուրք եւ քուրդ նորաբնակների մօտ, պատահական որոշ տուեալներից դատելով, եղել են ու գուցէ կարող են յայտնաբերուել հայ մշակոյթի բնաջնջուած յուշարձանների բեկորներ, ձեռագիր արժէքաւոր մատեաններ, գիտական կարեւոր փաստաթղթեր:

Հրաշքով փրկուած այդպիսի մի յուշարձան է Սարգիս աբեղայի «Ուղեգրութիւնը», որի միակ ձեռագիր ընդօրինակութիւնը 20-25 տարի առաջ գտնուել է Դիարբեքիրում (Տիգրանակերտ), տեղի հոգեւոր հովուի ջանքերով[1]: Այդ ձեռագիրը 1950 թ. մարտի 17-ին փոխանցուել է Կ. Պոլիս, մեր անուանի գրագէտ Թորոս Ազատեանի (1895-1955) հաւաքածուի մէջ (այս մասին համառօտ յիշատակութիւն կայ ձեռագրի վերջին էջի վրայ): Վերջինիս մահուանից յետոյ հանգուցեալի այրու կողմից բազմաթիւ այլ ձեռագրերի ու մեծարժէք արխիւային նիւթերի հետ միասին ձեռագիրն ուղարկուել է Հայաստան՝ Ե. Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարան:

1958-1961 թթ. թանգարանը Մատենադարանին է յանձնել Թ. Ազատեանի արխիւում

предисловие и комментарии М. О. Дарбинян, М., 1965:

* [Այդ մասին տե՛ս Ս. Քոլանջեան, Հայկական կոտորածները եւ մեր ձեռագրական կորուստները, «Էջմիածին», 1965, Բ-Դ, էջ 96-107, Ե-Է, էջ 133-144, 1966, Ը, էջ 27-37, Թ-Ժ, էջ 88-93, 1967, Ե, էջ 46-57, Զ, էջ 50-55: Խմբ.]

1 Գ. Սրուանձտեանցը 1881-ից առաջ եղել է Դիարբեքիրում (Տիգրանակերտ) եւ համառօտակի գրանցել Ս. Սարգիս եւ Ս. Կիրակոս եկեղեցիներում, առաջնորդարանում եւ մասնաւոր անձանց մօտ եղած 93 ձեռագիր մատեաններ, ինչպէս նաեւ 42 ձեռագիր՝ Չնքուշի Միրաճայեաց Ս. Աստուածածին վանքում (տե՛ս Գ. Սրուանձտեանց, Թորոս աղբար, մաս Բ, Կ. Պոլիս, 1881, էջ 410-488): Սարգիս աբեղայի «Ուղեգրութիւնը» պարունակող ձեռագիրը նրա տեսած ու նկարագրած ձեռագրերի մէջ չի եղել:

եղող միջնադարեան հայերէն ձեռագրերը[1], որոնց շարքում՝ նաեւ այժմ Մատենադարանի 9832 համարի տակ գրանցուած ու մեզ հետաքրքրող փոքրածաւալ գրչագիր մատեանը, որի առաջին նիւթ-միաւորը Սարգիս արեղայի «Ուղեգրութիւնն» է[2]:

Ենթադրում էինք, որ կարեւոր այս բնագրի մասին Ազատեանը կարող էր որեւէ յիշատակութիւն արած լինել իր թղթերում կամ հաղորդագրութիւն տպագրած՝ Կ. Պոլսի պարբերականներում, մասնաւորապէս «Ժամանակ» օրաթերթի մէջ, որին աշխատակցում էր իր կեանքի վերջին տարիներին: Սակայն նրա արխիւի նիւթերի ցուցակներում, ինչպէս նաեւ յօդուածների խնամքով հաւաքուած կտրոնների մէջ որեւէ յիշատակութիւն այդ «Ուղեգրութեան» ու նրա յայտնաբերման մանրամասնութիւնների մասին չգտանք: Ուստի Սարգիս արեղայի «Ուղեգրութիւնը» նորոյթ է հայ մատենագրութեան համար:

* * *

«Ուղեգրութեան» միակ ձեռագիրը թերի է սկզբից. պահպանուած առաջին թերթը սկսւում է «...Թուխ կասեն: Վանք մի կայ Կ (60) հաբեղայ կայ ի մէջն... սուրբ Նիկողիոս հայրապետի մարմինն մէջն է» բառերով: Տարակոյս չկայ, որ Սարգիս արեղան «Ուղեգրութեան» այս հատուածում նկարագրում է Նիկողայոս հայրապետին նուիրուած նշանաւոր սրբատեղին, որ գտնւում էր Զմիւռնիա (Իզմիր) քաղաքում[3]: Այստեղից նաւով նա մեկնում եւ հասնում է Յոնիական ծովի Կափալյա (Kephallinia) կղզին՝ յայտնելով, որ «Ըստամպոլէն մինչեւ ի հոն ԾԶ (56) ուրն հասար»: Պարզ է դառնում ուրեմն, որ նա Զմիւռնիայից* առաջ եղել է Կոստանդնուպոլսում (Ստամբուլում), բայց անորոշ է մնում, թէ որտեղից է սկսել իր ճամփորդութիւնը: Այդ մասին «Ուղեգրութեան» մէջ չկայ որեւէ ցուցում կամ ակնարկ:

«Ուղեգրութեան» լեզուն, անտարակոյս, արեւմտահայ բարբառների խմբին է պատկանում. Սարգիս արեղայի խօսուածքում պարզ նկատւում է ձայնեղների խլացում՝ բ>պ (Բլուա-Ապլյայ, Բուրգաս-Պըրղըս, Բենեւենտո-Պէնուվէնդ եւ այլն), դ>տ (դ'Արս-տ'Արս, Պադուայ-Պատուայ, Կորդուայ-Գորտուայ եւ այլն), գ>կ (Մալագայ-Մալակայ, Գրանադայ-Ակրանատ եւ այլն): Նրա համար սովորական են արեւմտահայերէնին յատուկ հոն (այնտեղ), ալ («ժէն քաղաք ալ անցայ»), մը («եկեղեցի մը կայ»), մ'ալ բառ-դարձուածքները: Ուշագրաւ է նաեւ այն, որ նա օգտագործում է թուրքերէն կամ թուրքերէնի միջնորդութեամբ իւրացուած մի շարք բառեր՝ բառ երեւոյթին չիմանալով դրանցից շատերի հայերէն համանիշները[4]:

[1] Թ. Ազատեանի մօտ եղել են նաեւ այլ ձեռագրեր ու փաստաթղթեր, որոնց մի մասը ձեռք է բերել ծանօթ բանասէր Հ. Քիւրդեանը. «Քանի մը տարի առաջ,- գրել է նա,- ողբացեալ Թորոս Ազատեանի շնորհիւ բազմաթիւ հին ու նոր ձեռագիրներ տետրակներ եւ դիւանական թուղթեր ձեռք բերի Կ. Պոլիս» («Ցուցակ հայերէն ձեռագրաց Նիկոմիդիոյ եւ շրջակայից», Վենետիկ, 1969, էջ 67):

[2] Ձեռագրի համառօտ նկարագրութիւնը տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հտ. Բ, Երեւան, 1970, էջ 1000: Տե՛ս նաեւ **Օ. Եգանեան**, Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները, Երեւան, 1965, էջ 175:

[3] Տե՛ս **Մ. Աւգերեան**, Լիակատար վարք եւ վկայաբանութիւն, 1813, էջ 305–340, «Վարք սրբոյն Նիկողայոսի սքանչելագործ հայրապետին Զմիռնոյ»:

[Իրականում ս. Նիկողայոսը միւրացի էր, ուր եւ գտնւում էր նրա անունը կրող եկեղեցին: Նոր ժամանակներում այդ բնակավայրը կրում է Դեմրէ, նաեւ Կալա անունները: Խմբ.]

* [Կարդա՛ «Միւռիայից»: Խմբ.]

[4] Տալիս ենք այստեղ Սարգիս արեղայի «Ուղեգրութեան» մէջ առկայ այդ բառերի այբբենական ցանկը.

«Ուղեգրութեան» վերջին դրուագում մեր ճանապարհորդը յայտնում է, որ Ազգերման քաղաքում նաւ նստելով՝ նա անցել է Սեւ ծովը եւ մէկ ամիս նաւելով՝ հասել Հայաստան («Ա ամիս ծովն կացի, հասայ Հայաստան»): Շարադրանքի այս ձեւը կարծել է տալիս, որ նա, կտրելով Սեւ ծովը հիւսիս-արեւմուտքից հարաւ-արեւելք, ափ է իջել հաւանաբար Տրապիզոնում եւ առանց նոր ու երկարաձիգ դեգերումների հասել իր հայրենի գաւառը, որ կարող էր լինել Բարձր Հայքի շրջաններից մէկը (ամենայն հաւանականութեամբ Երզնկան):

Կան նաեւ այլ նկատառումներ՝ Սարգիս արեղայի պատմա-աշխարհագրական այդ միջավայրի հետ կապելու:

Գիտենք արդէն, որ 1489–1496 թթ. եւրոպական երկրներում ճամփորդել է Մարտիրոս Երզնկացին, որը ներկայանում է իր ընթերցողներին այսպէս. «Մարտիրոս միայն անուամբ եպիսկոպոս Եզընկացի, ի սուրբ Կիրակոսու անապատէն, ի Նորգեղակ գեղէն»:

Ս. Կիրակոսի եւ Յուղիտայի վանքը գտնւում է Երզնկայի հարաւում՝ մէկուկէս ժամ հեռաւորութեան վրայ: Երկար ժամանակ եղել է Երզնկայի առաջնորդարանը եւ սիրուած ուխտատեղի: Կանգուն էր մինչեւ վերջին ժամանակներս[1]:

Մարտիրոսի եւ Սարգսի ուղեգրութիւնների առաջին կէսի բաղդատութիւնից զարմանալի նմանութիւններ են ի յայտ գալիս: Վերջինս կարծես տեղեակ է իրենից ճիշտ մէկ դար առաջ ճամփորդած Մարտիրոսի երթուղուն եւ քայլ առ քայլ հետեւում է նրան. մեր երկու ճանապարհորդներն էլ Վենետիկից նախ անցել են Հռոմ, ապա Իտալիայից մտել Շուէյցարիա, կանգ առել Կոնստանց քաղաքում, անցել Բազէլ եւ Հռենոսի առափնեայ քաղաքներով

Դեամի (թուրք.) - նաւ

Ջնճիլ (պարս.) - շղթայ

Թաճ (պարս.) - թագ

Իսպիտալ, իսպիտալիս (լատ.) - հիւանդանոց

Խանայ (պարս.) - տուն

Խասաֆ, իմա՝ ղասաբ (արաբ.) - մսագործ

Խասապխանայ (արաբ.-պրսկ.) - սպանդանոց, մսավաճառի խանութ

Խատար - տե՛ս Ղատար

Խարճ (արաբ.) - ծախս

Կամի - տե՛ս Դեամի

Ղատար (արաբ.) - որքան, քանակ

Ճամ (թուրք.) - ապակի

Միլաթ (արաբ.) - ժողովուրդ, կրօնական համայնք

Մոյտան (պրսկ.) - հրապարակ

Նաշ (արաբ.) - դիակով դագաղ, պատգարակ

Պուրճ (պարս.) - բուրգ

Պազազ (արաբ.) - կերպասավաճառ

Պաղի (արաբ.) - մնացեալ, ուրիշ

Տապաղայ (արաբ.) - հարկաբաժին

Տարպայ (արաբ.) - անգամ

Տօնանմայ (թուրք.) - նաւատորմ

Ֆութա (արաբ.) - մարմնի ծածկոյթ, ղենջակ

Ֆուրթանա (յուն., թուրք.) - փոթորիկ

[1] Հ. Հ. Ոսկեան, Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1951, էջ 82-89

(Ստրասբուրգ, Կոբլենց, Քեօլն) բարձրացել են հիւսիս, եղել Ախէնում, Անուերսում (Անտվերպէն), Ֆլանդրիայի քաղաքներում եւ մինչեւ Անգլիա:

Սարգիս աբեղայի բնորոշ երթուղին չէր կարող այսպիսի ճշգրտութեամբ համընկնել Մարտիրոս եպիսկոպոսի երթուղու հետ, եթէ նա ծանօթ չլինէր իր նախորդի ճամփորդական յուշագրութեանը, որի ձեռագիրն անշուշտ պահւում էր Ս. Կիրակոսի վանքի մատենադարանում[1]: Ուրեմն կարելի է ենթադրել, որ Սարգիս աբեղան կա՛մ նոյն Ս. Կիրակոսի վանքի վանական է եղել, կա՛մ էլ, Երզնկայի շրջակայքի մի այլ վանքում լինելով, հնարաւորութիւն է ունեցել այցելելու Ս. Կիրակոս եւ ծանօթանալու Մարտիրոս եպիսկոպոսի այնտեղ պահուող ձեռագրին:

Որ նոյն միջավայրից են դուրս եկել մեր երկու ուղեգիրները, պարզ երեւում է նաեւ նրանց գրուածքների մի շարք հատուածների նոյնութիւնից: Եթէ անտեսենք խմբագրական ու գրչագրական ոչ էական տարբերութիւնները, ապա Սարգսի «Ուղեգրութեան» գրեթէ մէկ-երրորդ մասն ընդօրինակուած է Մարտիրոսի «Ուղեգրութիւնից»:

Համընկնում են յատկապէս հետեւեալ հատուածները.

1. Վենետիկ քաղաքի եւ Ս. Մարկոսի հրապարակի ու եկեղեցու նկարագրութիւնը.

2. Հռոմի ու շրջակայքի սրբութիւնների նկարագրութիւնը.

3. Կոլոնիա (Քեօլն) քաղաքին նուիրուած ընդարձակ հատուածը.

4. Սանտա-Մարիա դ'Աքս (Ախէն) քաղաքի Ս. Աստուածածնի եկեղեցու նկարագրութիւնը.

5. Անուերս քաղաքի մասին պարբերութիւնը.

6. Փարիզի եւ մասնաւորապէս Նոտր-Դամի նկարագրութիւնը:

Բառացի արտագրուած են, սակայն, Մարտիրոսի «Ուղեգրութիւնից» միայն այն պարբերութիւնները, որոնք վերաբերում են քաղաքի տեսարժան վայրերի՝ ըստ մեծի մասի նշանաւոր վանքերի ու եկեղեցիների արտաքին տեսքին ու զարդարանքին: Բոլոր այն հատուածները, որոնք ճանապարհորդութեան մանրամասներին են վերաբերում, ինչպէս եւ սպասելի էր, խիստ տարբերւում են միմեանցից[2]:

Արդ, ի՞նչ ճանապարհով են Մարտիրոսի նկարագրութիւնները մտել Սարգիս աբեղայի «Ուղեգրութեան» մէջ: Ի՞նքն է քաղել դրանք, թէ՞ մէկ ուրիշը:

Վերոյիշեալ հատուածների ուշադիր քննութիւնը մեզ բերում է այն համոզման, որ Սարգիսն ինքը չէր կարող այդ բանաքաղութիւնները կատարել: Երբ ծանօթանում ենք Սարգսի «Ուղեգրութեան» երկրորդ՝ անաղարտ պահպանուած հատուածին, ակնյայտ է դառնում մեր

1 Ս. Կիրակոսի վանքն ունեցել է ճարուստ ձեռագրատուն, որը յետոյ կողոպտուել է (Հ. Ոսկեան, նշ. աշխ., էջ 89):

2 Այսպէս օրինակ՝ Մարտիրոս Երզնկացին Վենետիկում մնացել է ընդամէնը 29 օր, յայտնում է, որ քաղաքում կայ 74 հազար տուն, իսկ Սարգիսը 2 ամիս է եղել եւ Վենետիկի բնակչութեան մասին այլ տուեալ է հաղորդում (100 հազար տուն): Մարտիրոսը 7 ամիս մնացել է Հռոմում եւ օրական 10-20 եկեղեցի այցելել, իսկ Սարգիսը, որ միայն 2 ամիս է մնացել, ստիպուած է եղել աւելի շտապ դիտել քաղաքի սրբավայրերը (օրական շրջագայել է 20-30 եկեղեցի). Ախէնում Մարտիրոսը մնացել է 18 օր, Անուերսում՝ 11, իսկ Սարգիսը համապատասխանաբար՝ 1 ամիս եւ 4 շաբաթ: Մարտիրոսի 13 օրուայ դիմաց Սարգիսը Փարիզում մնացել է 2 ամիս եւ այլն:

հեղինակի սեղմ ու համառօտ գրելաոճը: Ըստ նրա ծրագրի՝ առաջին հերթին յիշատակութեան արժանի են նշանաւոր քաղաքների բնակչութեան քանակի (տներով հաշուած), կարեւոր սրբավայրերի ու սրբոց մասունքների մասին տեղեկութիւնները եւ իր ճանապարհի յիշարժան կանգառների անուանական կամ թուական («Գ (3) քաղաք ալ անցայ», «Ե (5) քաղաք ալ անցայ» եւ այլն) հաշուառումը (երթուղին ճշգրտօրէն ներկայացնելու մտահոգութեամբ):

Այս համեստ ծրագիրը խախտուած է որոշ տեղերում ազգագրական, պատմական ու տնտեսական երեւոյթների մասին հակիրճ գրանցումներով, սակայն ընդհանուր առմամբ Սարգիսը հարազատ է մնում իր որդեգրած ծրագրին: Նրա գրելաձեւին անյարիր են հէնց այն հատուածները, որոնք, ինչպէս տեսանք, գրեթէ բառացի ներմուծուած են Մարտիրոս Երզնկացու «Ուղեգրութիւնից»:

Այդ ներմուծումներ կատարող խմբագիրը չէր կարող ինքը՝ Սարգիս աբեղան լինել, որովհետեւ բանաքաղուած հատուածներում տեղ են գտել Մարտիրոս եպիսկոպոսի անձնական կեանքի մի քանի դրուագներ, ինչպէս նաեւ թիւրիմացութիւններ, որոնք բացատրելի են միայն խմբագրի անտեղեակութեամբ:

Այսպէս օրինակ՝ Բազէլ քաղաքում Մարտիրոս Երզնկացուն բանտարկել են եւ նեղացրել՝ կասկածելով լրտեսութեան մէջ: Նոյն այս դրուագը ներմուծուած է նաեւ Սարգսի «Ուղեգրութեան» մէջ: Մարտիրոս եպիսկոպոսը եղել է Սէն-Դենի քաղաքում (Փարիզի մօտակայքում), որ «եպիսկոպոսաց եւ թագաւորաց եւ թագուհեաց գերեզմանատուն էր». այստեղ գլխաւոր եկեղեցում նա տեսել եւ զարմանքով նկարագրել է ահռելի մեծութեան ձկան կողեր:

Սարգիսը Սէն-Դենիում չի եղել. այս հանգամանքը, սակայն, չի խանգարել խմբագրին՝ նրա «Ուղեգրութեան» մէջ ներմուծելու այդ վայրի մասին Մարտիրոսի գրանցած տողերը՝ դրանք վերագրելով Աթուա (Troyes) քաղաքին:

Այս կարգի խմբագրական «վրիպակների» մի շարք այլ օրինակներ կարելի է մէջբերել, որոնք, իրար լրացնելով, վկայում են յօգուտ այն իրողութեան, որ Մարտիրոս Երզնկացու «Ուղեգրութեան» վերոյիշեալ հատուածները մուծուել են Սարգսի «Ուղեգրութեան» մէջ երրորդ մի անձնաւորութեան ջանքերով, որը խմբագրի դեր է ստանձնել՝ անձամբ ճամփորդած չլինելով եւրոպական երկրներում: Այդ խմբագրի ձեռքի տակ եղել են Մարտիրոս Երզնկացու (ընդամէնը 2 ձեռագիր ընդօրինակութիւններով մեզ յայտնի) եւ Սարգսի (նոր միայն յայտնաբերուած) «Ուղեգրութիւնները», որոնք ամենայն հաւանականութեամբ պահւում էին վանական այն հաստատութեան գրատանը, որի միաբաններն են եղել մեր ուղեգիրները: Մարտիրոսը, գիտենք արդէն, Երզնկայից ոչ հեռու գտնուող Ս. Կիրակոսի վանքից էր. վերոյիշեալ նկատառումներով նոյն այդ միջավայրի ծնունդ ենք համարում նաեւ Սարգիս աբեղային:

* * *

Ե՞րբ է ճամփորդել, եւ քանի՞ տարի են տեւել Սարգիս աբեղայի դեգերումները:

Իր «Ուղեգրութեան» Փարիզին նուիրուած հատուածում նա յայտնում է, որ «Թագաւորն Լուդրան էր գնայեր ԿՌ (60,000) մարդով, խոստովանահարն սպանեց զթագաւորն թվ. ՌԼԸ (1589), քաղքին դռվին փակեցին եւ ամիս մն չի բացին, մէջն մնացի մինչեւ բացին, շատ չար քաշեցի»: Ըստ այդմ, մեր ճանապարհորդը Փարիզում եղել է քաղաքացիական լարուած պայքարի ու բախումների ժամանակաշրջանում: Փարիզեան Լիգայի հրամանի ներքոյ գործող զինուորական ուժերը, որ հիմնականում բաղկացած էին քաղաքի արհեստաւորական

չերտերից, պարտութեան էին մատնել Վալուա դինաստիայի (Ֆրանսիայում իշխել է 1328-ից) վերջին գահակալ Հենրիկոս Թագաւորին (1551-1589). վերջինս ապաւինել էր Հենրիկոս Նաւարացու ողորմածութեանը, սակայն ապստամբութիւնը խեղդելու պատրաստութիւններ էր տեսնում: 1589 թ. օգոստոսի 2-ին դոմինիկեան վանական Ժակ Կլեմանին յաջողւում է մօտենալ Թագաւորին եւ սրախողխող անել նրան[1]:

Սարգիս աբեղան ականատես է եղել այս դէպքերին, ուստի գտնուել է Փարիզում 1589 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին (2 ամիս):

Ժամանակագրական յաջորդ տեղեկութիւնը գրանցուած է Սպանիայի Վալենսիա քաղաքում. անդադրում հետիոտն երթեւեկից յոգնած մեր ճանապարհորդը դիմում է տեղի հոգեւորականներին ու խնդրում մի նաւ գտնել Իտալիա վերադառնալու համար. «Մարմնու կարիքս (իմա՝ ուժս) հատաւ, որ Դ (4) տարի է կու քալիմ»,- գրում է նա:

Առաւել առիթ կունենանք մանրամասն ծանօթանալու Սարգսի դեգերումների երթուղու հետ: Անհրաժեշտ է, սակայն, նշել այստեղ, որ Փարիզից Վալենսիա հասնելու համար մեր ուղեգիրն անցել է Նանտ, ապա նաւարկել Բիլբաօ (նաւարկութիւնը տեւել է 25 օր), մեկնել է նշանաւոր ուխտավայր Սանտյագո քաղաքը, Սպանիայի հիւսիս-արեւմտեան շրջաններում դեգերել 8 ամսից աւելի, այնուհետեւ եղել է Պորտուգալիայում, Գրենադայում, Անդալուզիայում եւ Սպանիայի կենտրոնական ու արեւելեան նահանգներում: Հաշուի առնելով այս բոլորը՝ կարծում ենք, որ Փարիզից մինչեւ Վալենսիա հասնելու համար մեր ուղեգիրը թափառել է առնուազն մէկ ու կէս տարի՝ մինչեւ 1591-ի առաջին ամիսները: Եւ քանի որ իր ճամփորդութիւնը սկսել է 4 տարի դրանից առաջ, ուրեմն հայրենի երկրից դուրս է եկել 1587 թ. սկզբներին:

«Ուղեգրութեան» վերջում նա յայտնում է, որ «Թվ. ՌԽԱ (1592) հասա Հայաստան». ուստի ճամփորդել է 1587-1592 թթ.՝ դեգերումների մէջ լինելով շուրջ 6 տարի:

* * *

Հետեւենք այժմ Սարգիս աբեղայի երթուղուն՝ անհրաժեշտ պարզաբանումներ կատարելով, ճշտելով եւ սրբագրելով ձեւափոխուած ու աղճատուած տեղանունները[2]. նպատակայարմար ենք գտել «Ուղեգրութեան» մէջ նշանակուած բոլոր տեղանուններին առընթեր փակագծերի մէջ նշել դրանց ճիշտ ձեւը լատինական տառադարձութեամբ: Ներդիր քարտէզի վրայ նոյնպէս ցոյց է տրուած մեր ճանապարհորդի երթուղին իր բոլոր կանգառներով:

1587 թ. սկզբներին Սարգիս աբեղան դուրս է եկել՝ հաւանաբար Երզնկայից, անցել Կոստանդնուպոլիս (ինքը գրում է Ստամբուլ): Այստեղ նաւ է նստել, կարճատեւ ափ իջել Զմիւռնիայում եւ 56 օր նաւելով՝ հասել Յոնիական ծովի Կափալա (Kephallinia) խոշոր կղզին: Վեց օր մնալով՝ գտել է եւրոպական մի նաւ ու շարունակել իր ճանապարհը: Նաւը, որ Վենետիկ էր գնում, առաջին անգամ խարիսխ է նետել Վենետիկի հանրապետութեանը պատկանող Դալմաթիայի Զառա (Zara, Zadar) քաղաքում, որն իրաւացիօրէն Սարգսի կողմից «առաջի քաղաքն Ֆրա[ն]կաց» է կոչուած: Այնուհետեւ լինում է Իստրիայի Ռովինին (Rovigno) եւ Փառնսա (Parenzo) քաղաքներում, ապա Փափառար ու Տմագու կոչուած մեզ անծանօթ վայրերում եւ 30 օր նաւի մէջ լինելուց յետոյ հասնում Վենետիկի մօտ՝ Ս. Ղազարի հարաւակողմը գտնուող Նազարէթ (Lazzaretto vecchio) կոչուող կղզին, ուր պարտադիր կերպով իջեցնում էին արեւելեան երկրներից ժամանածներին վարակիչ հիւանդութիւններից քաղաքն ապահովելու մտահոգութեամբ: 30 օր այստեղ մնալուց յետոյ մտնում է Վենետիկ եւ 2 ամիս շարունակ դիտում այդ շքեղ քաղաքի տեսարժան վայրերը:

Վենետիկից մեկնում է Հռոմ՝ անցնելով Պատուա (Padua), Ռընանուլուին, Աֆառա (Ferrara), Բոլէնց, Տրմաղոյ[1] եւ 15 այլ քաղաքներով (որոնց անունը չի տրուած): Երկու ամիս է տեւում այս ճամփորդութիւնը: Սարգիս աբեղան դժուարութիւններ է կրում՝ իտալերէն լեզուին անծանօթ լինելով, բայց այդ ընթացքում սովորում է: «Բայց լեզու ոչ էի գիտել, խիստ չարչարեցա մինչեւ սովրեցա»,- գրում է նա:

Հռոմի ու մօտակայ վայրերի նշանաւոր սրբատեղիներում 2 ամիս շրջագայելուց յետոյ, մեր ճանապարհորդը, 15 քաղաք անցնելով, դուրս է գալիս Պապական նահանգից ու մտնում. «Հռոմէական սրբազան կայսրութեան» սահմանները. «Հասայ Տուտէշ (իմա՝ գերմանացի[2]) ազգի աշխարհն, որ կասին Ալաման,- գրում է նա:

Հռոմից յետոյ առաջին քաղաքը, որի անունը գրանցել է Սարգիս աբեղան, Բոդենի լճափին գտնուող Կոստենցիա (Konstanz) քաղաքն է. սահմանագլխից այստեղ հասնելու համար նա անցել է 10 այլ քաղաքներով՝ ընթանալով հաւանաբար Պարմա-Միլան-Ցյուրիխ ուղեգծով:

Ուշագրաւ է այն հանգամանքը, որ այս տարածութիւնը կտրելու ընթացքում մեր ճանապարհորդն այս անգամ էլ սովորում է գերմաներէն, այդ մասին յատուկ նշում կատարելով («Այն աշխարհն ալ լեզու չէի գիտել, չարչարեցայ մինչեւ սովրեցայ»):

Հռենոսի տափինայ 20 քաղաքներ անցնելով՝ Սարգիս աբեղան հասնում է Բազէլ, ապա Ֆրուտ (Ferrette)[3]: Այնուհետեւ, 10 քաղաք անցնելով, հասնում է Ֆրիփուրխ (Freiburg), ուր մնում է 20 օր: Յաջորդ քաղաքն է Ստրազբուրխ (Strasburg), ապա 20 քաղաք անցնելուց յետոյ՝ Կապլա, որ անշուշտ Coblentz քաղաքն է: Կոբլենցից 15 քաղաք անցնելով՝ մեր ճանապարհորդը հասնում է «ի մեծայհամբաւ քաղաքն ի Կալոնիայ», այսինքն՝ Քեօլն (Colonia), ուր տեսնում եւ նկարագրում է շատ «զարմանալի բաներ»:

Քեօլնից, 15 քաղաք անցնելով, հասնում է Սանթա-Մարիա դ'Աքս, որ գերմանացիների կողմից՝ Aachen, ֆրանսիացիների կողմից Aix-la-Chapelle կոչուող քաղաքն է: Ապա, 17 այլ քաղաքներ տեսնելով, հասնում է միջնադարեան Եւրոպայի արհեստագործութեան ու առեւտրի նշանաւոր կենտրոն՝ հայ վաճառականներին քաջածանօթ Յանուես (իմա՝ Անուերս կամ Անտվերպէն) քաղաքը:

Բաւն ուրիշ քաղաքներ անցնելով՝ մեր ճանապարհորդը մտնում է Ֆլանդրիա եւ սովորում նաեւ ֆլանդրերէն լեզուն: Այս երկրում եղած քաղաքներից յիշատակում է միայն մէկը՝

---

1 "История средних веков", том II, под редакцией С. Д. Сказкина, Москва, 1954, с. 304-305

2 Այս նպատակով օգտագործել ենք Atlas Nouveau, contenant toutes les parties du Monde, par le Sr. Sanson, Paris, 1692 եւ Andrees algemeiner Handatlas, herausgegeben von A. Scobel, Bielefeld und Leipzig, 1901 նշանաւոր ատլասները եւ քարտէզագրական այլ նիւթեր:

---

1 Այս երկուսը, նախորդ՝ Ռընանուլուին կոչուածի նման, կա՛մ աղճատուած տեղանուններ են, կա՛մ էլ, աննշան վայրեր լինելով, չեն նշանակուած մեզ մատչելի քարտէզագրական նիւթերի մէջ:

2 Գերմանացիներն իրենց Deutsche են անուանում, իտալացիները՝ Tedesco. Սարգիս աբեղայի (ինչպէս նաեւ Մարտիրոս Երզնկացու) *Տուտէշը* այս բառի աղաւաղուած ձեւն է:

3 Գտնւում է Բազէլից արեւմուտք շուրջ 20կմ հեռաւորութեան վրայ:

կոչելով «մեծ քաղաքն Առոմէ», դժուար է ստոյգ որոշել, թէ այդ անուան տակ որ քաղաքն է նկատի առնուած: Բրիւսէլի եւ Լիեժի կիսաճանապարհին կայ Ռամիյի (Ramillies) անունով մի քաղաք, որը չնայած Առոմէ տեղանուան հետ հնչիւնական աղերսի մէջ է (Ռամիյի-Առոմէ), սակայն աննշան մի վայր է եղել. ուստի ենթադրում ենք, որ այդ անունը միջնադարեան Ֆլանդրիայի մահուդագործութեան նշանաւոր կենտրոն Սէնտ-Օմեր քաղաքանուան աղճատ գրութիւնն է՝ առաջացած մ եւ ռ տառերի դրափոխութեամբ (Օմեռ-Առոմէ): Մեր ուղեգրի տուեալներով՝ այդ քաղաքն ունեցել է 180,000 տուն բնակիչ, 500 եկեղեցի:

Մէկ ամիս այստեղ մնալուց եւ 18 այլ քաղաքներ շրջելուց յետոյ Սարգիս արեղան ուղեւորւում է «աշխարհն Ընկլուզաց», այսինքն՝ Անգլիա, լինում Լոնդոնում, շրջում 25 այլ քաղաքներում (որոնց անունները դժբախտաբար չի նշում), սովորում նաեւ անգլերէն, ապա մեկնում Ֆրանսիա: Այստեղ արդէն միանգամայն տարբերւում են Մարտիրոս Երզնկացու եւ Սարգիս արեղայի երթուղիները: Վերջինս, ափ իջնելով Ֆրանսիայի հիւսիսային նաւահանգիստներից մէկում, ուղեւորւում է հարաւ եւ առաջինը յիշատակում Սանդիա կամ Տանդիա քաղաքի անունը, որ նոյնացնում ենք Սան-Դիզէի (St. Dizier) հետ: Այդտեղից սպասելի էր, որ մեր ճանապարհորդը կանգնի Փարիզ՝ հռչակաւոր այդ քաղաքի տեսարժան վայրերն ուսումնասիրելու համար: Սակայն մայրաքաղաքում տիրող խառնակ քաղաքական վիճակից երկիւղ կրելով, թէ՞ յարմար հովանաւոր-ուղեկից չգտնելով՝ նա հետաձգում է Փարիզ գնալը. հիւսիսից հարաւ կտրելով ողջ Ֆրանսիան՝ անցնում է Աթուա (Troyes), Այդուաժ (Dijon), Լիոն (Lyon) քաղաքներով եւ հասնում Մարսէյլ (Marseille):

Այս ճամփորդութեան ընթացքում նա սովորում է նաեւ ֆրանսերէն լեզուն: Մարսէյլից ուղեւորւում է Փարիզ՝ անշուշտ ընտրելով մի այլ ճանապարհ (թերեւս Նիմ-Կլերմոն-Ֆերրան-Նեւեր-Ֆոնտենբլօ ուղեգիծը). «Այլ ժե (15) քաղաք անցայ, [հասայ] մեծ քաղաքն, որ կասեն Բարիզ»,- գրում է նա:

Փարիզի սրբավայրերի, մասնաւորապէս Նոտր-Դամի նկարագրութիւնը Սարգիս արեղայի «Ուղեգրութեան» մէջ ներմուծուած է Մարտիրոսի «Ուղեգրութիւնից», բայց քաղաքի հիւանդանոցների, աղքատանոցների, դպրոցների եւ այլ հաստատութիւնների մասին նա գրանցում է հարցուփորձով իմացած ուշագրաւ տուեալներ: Նշել ենք արդէն, որ կարեւոր են մեր ճանապարհորդի գրանցած տողերը նաեւ Ֆրանսիայի քաղաքական դրութեան, Հենրիկոս III Վալուայի սպանութիւնից յետոյ ստեղծուած խառնակ վիճակի մասին:

Սպանիա մեկնելու համար Սարգիս արեղան ուղեւորւում է Նանտ նաւահանգստային քաղաքը՝ անցնելով հետեւեալ բնակավայրերով. Օռլեան (Orleans), Ալպլա (Blois), Անպոզա (Amboise), Աթուրշը (Tuors), Անճէշ (Angers), Առոմէր եւ Անանդ (Nantes):

Ուշադիր ընթերցողը կնկատի, որ այս (ինչպէս եւ նախորդ ու յաջորդ) տեղանուններից մի քանիսը Սարգիս Արեղայի գրչի տակ ձեւափոխուած են՝ յատկապէս անուան սկզբում յաւելեալ ա ձայնաւոր ստանալով (Տրուա-Աթուա, Բլուա-Ալպլա, Նանտ-Անանդ, Բիլբաո-Աւբլուա եւ այլն): Ըստ երեւոյթին այդ առաջացել է ֆրանսերէն ուղղութիւն ցոյց տուող à նախդիրի (դէպի, B նշանակութեամբ) թիւրիմացաբար տեղանուանը կցելու հետեւանքով: Ֆրանսերէն նոր սովորած մեր ուղեգիրը դիւրութեամբ կարող էր իր լսած à Nantes-ը ընկալել որպէս Անանդ, կամ à Blois-ը՝ Ալպլա եւ այլն:

Նանտից նաւով Սարգիս արեղան մեկնում է «Սուրբ Յակոբայ աշխարհն»՝ Սպանիա: «Ուղեգրութեան» այս հատուածն ամենահետաքրքրականն ու կարեւորն է: Միջնադարեան հայ ճանապարհորդներից ոչ մէկը չի կարող մրցել Սարգիս արեղայի հետ՝ Սպանիայի ան-

ծայրածիր տարածքի վրայ այդքան երկար քայլելով եւ այդքան կարեւոր տեղեկութիւններ գրանցած լինելով:

Երեք հարիւր մղոն ծովային ճանապարհ կտրելով եւ 25 օր նաւելով՝ մեր ուղեգիրը ափ է իջնում Սպանիայի Բիլբաո քաղաքում եւ առանց շտապելու, նշանաւոր քաղաքներ ու տեսարժան սրբավայրեր այցելելու համար շեղումներ կատարելով, ուղեւորւում այդ երկրի հիւսիսարեւմտեան ծայրամասում գտնուող Սանտյագո դէ Կոմպոստելլա աշխարհահռչակ վանքը: Այս է նրա երթուղին՝ Աւբլուա(Bilbao) - Պուրգուս(Burgos) - Վալայտուլի(Valadolid) - Սալամանք(Salamanca) - Սամուրա(Zamora) - Պէնուվէնդ(Benuvente)- Մէդին էլ Գամբ(Medina del Campo) - Մեդին Ռուշէք(Medina de Rioseco)- Սիմանդաս(կամ Տիմանդաս) - Դադդայալ - Լէվոն(Leon) - Վիլայֆռանգ(Villafranca) - Աստորկա(Astorga) - Սուրբ Յակոբ առաքելոյ գերեզմանն(Santiago de Compostella):

Այստեղ ուխտ է անում, սակայն սրբի գլխատեալ մարմինը (գլուխը, ըստ աւանդութեան, թաղուած է Երուսաղէմի Սուրբ Յակոբեանց հայկական վանքում) չի կարողանում տեսնել, քանի որ դէպի սրբի գերեզմանը տանող միակ դուռը բացել են միայն 7 տարին մէկ անգամ[1]: Սարգիս արեղան ուրախութեամբ տեղեկանում է, որ 8 ամսից յետոյ է լինելու բաղձալի ուխտի օրը, ուստի, ինչպէս ինքն է ասում. «Ելայ, գնացի, ութ ամիս շուռ եկի, շատ քաղաք ու գեղ, վանորայք, ուխտատեղ, վանք տեսայ, անկից դարձայ ճանիով մ'ալ եկի, հասայ Սուրբ Յակոբ բխտին»: Ամիսներ տեւող դեգերումների մասին այլ տուեալ չի գրանցուած:

Այնուհետեւ Սարգիսն ուղեւորւում է Եզր աշխարհի (Finisterre) կոչուող հրուանդանի Աստուածածնի վանքը, ապա իջնելով հարաւ՝ լինում է Բադրուն (Padron), Փունթուպեւր (Pontevedra) եւ Ադուա (Tuy) քաղաքներում, անցնում մի գետ (անշուշտ Մինյո գետը) եւ մտնում «Փաթուկալաց աշխարհն»:

Չմոռանանք ասել, որ մինչ այդ, իր իսկ վկայութեամբ, նա սովորել էր սպաներէն լեզուն, իսկ Պորտուգալիա մտնելու մասին տեղեկութիւնը գրանցելուց անմիջապէս յետոյ Սարգիսը շտապում է, եօթերորդ անգամ լինելով, արձանագրել իր սիրած բանաձեւը. «Հոն ալ լեզու չէի գիտեր, չարչարեցայ, մինչեւ որ ուսայ»: Այսպիսով, ընդամէնը 3-4 տարում մեր ճանապարհորդը, որ հայերէնից բացի անշուշտ գիտէր թուրքերէն, գուցէ եւ յունարէն լեզուները, սովորում է իտալերէն, գերմաներէն, ֆլանդրերէն, անգլերէն, ֆրանսերէն, սպաներէն եւ պորտուգալերէն լեզուներով պարզ նախադասութիւններ կազմել, հարց ու փորձ անել, հասկանալ, թէ ուր պէտք է գնալ, ինչ տեսնել եւ այլն: Ըստ այդմ, մեր ուղեգիրը լեզուագիտական մեծ ընդունակութիւններով օժտուած անձնաւորութիւն է եղել:

Պորտուգալիայում Սարգիս արեղան լինում է Վալենցա (Valenca), Կամէնայ (Caminha), Բրակա (Braga), Վիլա-Նովայ (Villa Nova), Վիանայ (արդեօ՞ք Villa de Conde) եւ 3 այլ քաղաքներում (անունները չի տալիս) ու հասնում է Փու'' (Porto) կոչուող մեծ քաղաքը: Ապա, ինչպէս ինքն է ասում, «եկայ, գնացի մտայ ի ծովն, եկայ Կալայ»: Պէտք է ենթադրել, որ ծով է կոչում Դուերո գետի լայն գետաբերանը, իսկ Կալա կոչուածը հաւանաբար Villa Nova de Gaia (Գայա>Կալա?) բնակավայրն է: Այստեղից էլ 3 քաղաք է անցնում, հասնում է

[1] Այս տեղեկութիւնը քաղում ենք Աւգուստինոս Բաջեցու «Ուղեգրութիւնից» («եւ մէկ դուռն կայ եկեղեցուն՝ մօտ գերեզմանին, որ կոչին դուռն ողորմութեան, որ Է (7) տարէնն մէկ հետ կու բացի, ու երանի այնոցիկ, որ այն տարին որ բացուի՝ հոն լիցի» - գրում է նա:

Կուռիմրա (Coimora), ապա Սանթարեն(Santarem) – Վիլա Նով[1] – Կաստինար(Castinhera) – Զաքապին եւ Լիզպոյ(Lisboa), այսինքն՝ Լիսաբոն:

«Խիստ մեծ քաղաք է»,- ասում է մեր ուղեգիրը Լիսաբոնի մասին եւ յայտնում, որ բնակչութիւնը 100 հազար տուն է, 500 նաւ է կանգնում նաւահանգստում, 300 եկեղեցի ունի եւ այլն: Ասում է նաեւ, որ տեսակցութիւն է ունեցել թագաւորի հետ, մեծարուել նրա կողմից ու «ողորմութիւն» ստացել: Պէտք է, սակայն, նկատի ունենալ, որ Սարգսի ճամփորդութիւնից դեռ 10 տարի առաջ (1581 թ.) Դոն Սեբաստիանոս թագաւորի մահուանից յետոյ Պորտուգալիան բռնի միացուել էր Սպանիային: Ուստի պէտք է ենթադրել, որ Սարգիս աբեղային ընդունել ու պատուել է փոխարքան կամ բարձրաստիճան մի պաշտօնեայ:

Լիսաբոնից մեր աբեղան նաւով մեկնում է Կոն անուանեալ քաղաքը, որի տեղադրութիւնն անորոշ է մնում, ապա Սեթուլ (գուցէ Setubal) եւ Բունդայլիմնայ (կրկին անորոշ բնակավայր, գուցէ խիստ աղճատ անուն): Այստեղից դարձեալ նաւով մեկնում է Այմոնդ (Ayamonte), որը Պորտուգալիայի հարաւ-արեւելեան սահմանագլխին գտնուող առաջին սպանական քաղաքն է:

Այմոնդից 5 քաղաք անցնելով՝ Սարգիսը հասնում է Սեւիլիա (Sevilla), որի բնակչութեան թիւը 80 հազար ընտանիք է հաշւում. ասում է, որ «աղէկ քաղաքին մեծ գետ մն կայ» (նկատի ունի, անշուշտ, Գուադալկուիվիրը), որի վրայ բազմաթիւ թագաւորական նաւեր են կանգնած: Շեղուելով իր «Ուղեգրութեան» բուն նիւթից՝ նա մի ընդարձակ հատուած է նուիրում Նոր Հունդուստան (իմա՝ Ամերիկա) կոչուող երկրից ամէն տարի ուղարկուող 5 նաւ լիքը արծաթի ու ոսկու մասին իր լսած առասպելական պատմութիւններին: Ուշագրաւ է 14 առագաստանոց հսկայ նաւերի նկարագրութիւնը, որով Նոր Հունդուստանից Սեւիլիա էին հասնում 6 ամիս տեւող նաւարկութեամբ:

Այնուհետեւ բազմաթիւ նշանաւոր քաղաքներ ու սրբավայրեր է այցելում մեր ուխտաւորը Անդալուզիայի եւ Գրանադայի շրջաններում: Երկարաբան չլինելու մտահոգութեամբ ստորեւ թուարկում ենք միայն նրա այցելած բնակավայրերը՝ հայերէնի կողքին նշելով նրանց ճշգրտուած անուանումները:

Սեւիլիայից յետոյ այցելած բնակավայրերն են՝ Կարմունայ(Carmuna) – Մարչինայ (Marchena) – Սունայ(Osuna) – Էսիջայ(Ecija)– Գորտովայ(Cordoba) – Հրճիտոն(Arckidona) – Անթքել(Anteguera)–Լոշ(Loja) – Պլեւս(Campillos) – Մալակայ(Malaga) – Ալհամայ(Alhama) – Սանթափէ(Santafe) – Ակրանատ(Cranada) – Ճայէն(Jaen) – Ալխալայ(Alcala la Real): Այնուհետեւ անցնում է ուրիշ 10 քաղաքներ ու հասնում մի մեծ վանք, որին «Նոստր Սինոր Վատալուպ» է անուանում:

Սա, անտարակոյս, Գուադալուպայի (Guatalupe) Տիրամօր հռչակաւոր վանքն է, որ XII դարի վերջերից սկսած՝ դարձել էր նշանաւոր ուխտավայր: Նոստր Սինոր-ը Nuestra Senora (ֆրանս. Notre Dame) բառերի աղճատ գրելաձեւն է. նշանակում է Մեր Տիրուհի, այսինքն՝ Աստուածամայր:

Այստեղից ուղեւորւում է Մադրիդ՝ անցնելով հետեւեալ վայրերով՝ Տալայուեր(Talavera) –

1 Այս եւ միւս տեղանունները, որոնց առընթեր չեն տրուած նրանց ճշգրտուած անունները լատինական տառադարձութեամբ, մնում են անորոշ: Հին ու մանրամասն քարտէզների օգնութեամբ հնարաւոր կլինի որոշել նաեւ սրանց տեղերը:

Թուլիթ(Toledo) – Նոստր Սինոր Կարիդա(Nuestra Señora de Carita)[1]:

Մադրիդ (գրում է Մադրիլ) քաղաքից Փիլիպպոս II թագաւորին (1555–1598) տեսնելու բաղձանքով Սարգիս աբեղան մեկնում է Ուսկուրեալ (Escorial)՝ թագաւորի ամառային աթոռանիստը («ամառն հոն կերթայ, ձմեռն Մադրիլ կու նստի»), որ յայտնի էր վանական նորակառոյց շինութիւններով: Թագաւորից «ողորմութիւն» (նպաստ) եւ «թուղթ» (օգնութիւն ցոյց տալու յանձնարարական գրութիւն) ստանալով՝ մեր ճանապարհորդը շարունակում է իր ուղեւորութիւնը. անցնում է Ալխալայ (Alcala de Henares), Վադալայչար (Guadalajara), Սարայկոս (Saragossa), Լերիդա (Lerida) քաղաքներով եւ հասնում Պարսալոն (Barselona): Յայտնում է, որ 50 հազար տուն ունեցող այդ քաղաքի բնակչութեան կէսը զոհ է գնացել տարափոխիկ ինչ-որ հիւանդութեան:

Բարսելոնից անցնում է Թոռթոն (հաւանաբար Tortosa նաւահանգստային քաղաքը), ապա 3 այլ քաղաքներից յետոյ՝ Վալենսայ (Valencia):

Սարգիսն այստեղ վերյիշում է Մարտիրոս եպիսկոպոսի «Ուղեգրութեան» այն դրուագը, ուր գրանցուած են հետաքրքրական տողեր հեռաւոր քայլերով իր ուժասպառ լինելու, իրեն մի նաւի վրայ տեղ տալու խնդրանքի, նաւավարի «համատարած ծովով» ծրագրած հեռագնաց ճանապարհորդութեան եւ յարակից հարցերի մասին[2]: կրկնելով իր նախորդից փոխառած որոշ բառեր ու արտայայտութիւններ՝ մեր աբեղան գրում է. «Գնացի, իրիցներուն աղաչեցի: Այլ չիմ կարնալ քալել, մարմնու կարիքս հատաւ, որ Դ (4) տարի է կու քալիմ. ինձի նաւ մի պալէք»: Նաւավարը յայտնում է, որ՝ «Ես անտակ ծովն կու երթամ», չնայած խօսքը Միջերկրական ծովի մասին է (պարզ նկատւում է Մարտիրոսի «Ուղեգրութեան» ազդեցութիւնը):

Ի վերջոյ, մեր ուխտաւորը նստում է նաւ ու շարունակում իր ճանապարհորդութիւնը: Լինում է Բալեարեան Էվիսայ (Yvica), Մաճուակայ (Maiorca) եւ Մինորգա (Minorca) կղզիներում, ապա 2 ամիս նաւելուց յետոյ կրկին ոտք է դնում իտալական հողի վրայ. «Հասայ մեծ քաղաքն Ճենեւայ (Genova)»,- գրում է նա: Եօթ այլ քաղաքներ անցնելով՝ հասնում է Բաւիայ (Pavia), Միլան (Milano), ապա՝ Պոլոնիայ (Pologna), Ֆլորենցայ (Florenza), Սին (Siena): Սիենայից յետոյ յիշատակւում են Աքուա (արդեօ՞ք Acguapendente), Թենթիր, Սանկիրիկո (St. Quirico), Մոգանթիֆիաշկ (Montefiascone) եւ Վիտերբ (Viterbo) քաղաքները: Ուրիշ 10 բնակավայր անցնելով (որոնց անունները չեն տրւում)՝ Սարգիս աբեղան հասնում է Անապոլի (Napoli), այնուհետեւ յիշատակւում են Պոլիա (Paola) քաղաքը՝ Իտալիայի հարաւում, եւ Մոնինու կղզի ու Լար կոչուող ինչ-որ բնակավայրեր: Յաջորդ՝ Ֆարֆարին տեղանուան տակ հակուած ենք տեսնել Սիցիլիան Իտալիայից բաժանող Faro նեղուցն ու համանուն

1 Կամ՝ Notre Dame de Corita. 1169 թ. Կալատրաւա միաբանութեան ասպետները օգնեցին Ֆերդինանդ II թագաւորին՝ արաբներից գրաւելու Կորիտա ամրոցը, որը 5 տարի անց դարձաւ այդ միաբանութեան տիրոյթ. այստեղ կառուցուեց Աստուածամօր անունով նշանաւոր վանք:

Գուադալուպայի եւ Կորիտայի Տիրամօր վանքերի մասին տե՛ս Encyclopédie théologique ou série de dictionnaires sur toutes les parties de la science réligieuse, publiée par l'abbé Migne, 50 volumes, vol. 20, 21, Paris, 1847:

2 Ոմանք ենթադրել են, որ Մ. Երզնկացին, տեղ ստանալով վերոյիշեալ նաւում, մասնակցել է Կոլումբոսի 2-րդ ճանապարհորդութեանը դէպի Ամերիկա: «Ուղեգրութեան» մէջ գրանցուած տուեալները բնաւ հիմք չեն տալիս նման ենթադրութեան: Անպատասխանատու եւ աղմկարար յօդուածները, որ գրուեցին վերջերս այդ մասին, գիտութեան հետ առնչութիւն չունեն:

Հրուանդանը Մեսսինայից Հիւսիս: Արան յաջորդում է ձիկճիլիան, որ անշուշտ Սիցիլիա կղզին է, եւ Սարայկոսա տառադարձուած մի անուանում, որն ըստ երեւոյթին առաջացել է Սարգինիա եւ Կորսիկա կղզիների անունների աղճատ ու անբնական կցումից: Տեղանունների նորաՀնար այս Համաձուլումը Թիւրիմացաբար կատարել է կա՛մ ինքը՝ Սարգիս աբեղան, կա՛մ էլ նրա «Ուղեգրութեան» խմբագիր-ընդօրինակողը:

Սարայկոսա կոչուած վայրից յետոյ «բազում քաղաքաւ» անցնելով՝ մեր ճանապարՀորդը մէկ էլ յայտնւում է Իտալիայի Հիւսիսում գտնուող Կրեմոնա (Cremona) քաղաքում, ապա անցնում Վերոնա (Verona), Աւիցենց (Vicenza), Պատուայ (Padua): Եւս մի Թռիչք «բազում քաղաքաւ», եւ նրան գտնում ենք Ադրիատիկի ափին՝ Մառուհա Լոռէտ (St. Maria Laurentana) սրբավայրում, Լորետտո քաղաքի մօտ, ապա Անքոնիայում (Ancona), որտեղից նաւով, երկրորդ անգամ լինելով, Հասնում է Վենետիկ:

«Ուղեգրութիւնն» այստեղ Թերութիւն ունի. անուաղն 6 տող պակաս է (չի ընդօրինակուած, ու դատարկ տեղ է Թողնուած): Յաջորդ էջի շարունակութեան մէջ յիշատակւում են Կ. Պոլսի մօտակայքում գտնուող Չորլու (Corlu), Սիլիւրի (Silivri) եւ Չորմայճայ (Համանաբար Բույուկ Չեքմեջէ) բնակավայրերը: Սրանցից վերջին երկուսը ծովափնեայ են, իսկ Չորլուն գտնւում է Թեքիրդաղից շուրջ 60կմ Հիւսիս-արեւելք՝ ծովից Հեռու: Ուստի պէտք է եզրակացնել, որ Սարգիս աբեղան Վենետիկից Ստամբուլ ճանապարՀի գէԹ վերջին Հատուածը կտրել է ոտքով

Չեքմեջէից յետոյ մեր ուղեւորը մտել է Ստամբուլ՝ յայտնելով, որ այդ տեղի է ունեցել Հայոց ՌԽ, այսինքն՝ 1591 Թուականին:

Եւրոպական երկրներում կատարած իր դեգերումների առաջին ու Հիմնական շրջանն աւարտելով՝ Սարգիս աբեղան մի կարեւոր նախադասութեամբ ամփոփում է իր ճամփորդութեան արդիւնքները, Հաշիւ ներկայացնում, Թէ քանի բերդ ու քաղաք, եկեղեցի ու վանք է տեսել իր շրջած երկրներում: «Ո՛վ ընԹերցող բանիս՝ Հայր եւ եղբարք,- գրում է նա,- Թէ կամէք մեղաւոր Սարգսին Ֆռանգստան կամ ինչ դատար քաղաք է տեսեր: Ռ (1000) բերդ ու քաղաք տեսեր եմ, Թող գեղերանքն, ԴՌ (4000) Հանդիսի եկեղեցի տեսեր եմ, ԳՌ (3000) վանք արեգի, ԸՌ (8000) կուսանաց վանք»:

ՃանապարՀորդութեան երկրորդ շրջանը սկսւում է Կոստանդնուպոլսից նոյն 1591 Թ.: Այդ մասին գրում է ընդամէնը մէկ էջ, որից յստակօրէն պարզւում է նրա նոր երԹուղին՝ Ստամբուլ - Ադրանա(Edirne) - Բրուստա(Bra?) - Պապա(Papa), նաւով անցնում է Տունա (Դանուբ) գետը եւ մտնում Պուղտանայ երկիր (այսինքն՝ Մոլդովա), Հասնում Թագաւորանիստ Եաշ (Yassy) Հայաշատ քաղաքը, ապա Ռոմանի(Roman) - Սուչավ(Suczava) - Պոչան (Botuschani) - Սերեթ(Sereth) - Խոթին(Chotin): Անցնելով Դնեստր գետը՝ մտնում է Իլախաց աշխարՀ (ԼեՀաստան), լինում միայն Կամենեց-Պոդոլսկ նշանաւոր Հայաքաղաքում: Կրկին վերադառնում է Եաշ, մեկնում Աղքերման (Akkerman), նստում նաւ եւ մէկ ամիս ծովային ճամփորդութիւնից յետոյ, ինչպէս ինքն է ասում, «Հասա Հայաստան»: Առել ենք արդէն մեր կարծիքն այն մասին, որ Սարգիս աբեղան ափ է իջել Հաւանաբար Տրապիզոնում, ապա անցել Երզնկայի մօտ գտնուող Սուրբ Կիրակոսի վանքը: Ինչպէս վերն աշխատեցինք ցոյց տալ, մեր ճանապարՀորդն, ըստ երեւոյԹին, այդ վանքի միաբաններից է եղել:

Իր «Ուղեգրութեան» ամենավերջում Սարգիս աբեղան գրանցել է միջնադարեան մի գողտրիկ Հայրեն օտար աշխարՀ ընկած գարիպի ծանր Հոգեկան վիճակի մասին: Հայրենի երկրի կարօտը ձգում է մարդուն նոյնիսկ այն ժամանակ, երբ այնտեղ ծարաւ է ու անօԹի,

իսկ օտար Հորիզոններում տէր է դարձել Հազար բարիքի.

Ի՞նչ անեմ ես Հազար բարին,
Որ կու գայ ձայնս գարիպի,
Թողում, իմ աշխարՀն երԹամ,
Թող կենամ ծարաւ, անօԹի:

Այս քառեակով էլ աւարտւում է Սարգիս աբեղայի «Ուղեգրութիւնը»:

* * *

Ինչպէս ասել ենք արդէն, Սարգիս աբեղայի «Ուղեգրութիւնը» պաՀպանուել է միակ ընդօրինակութեամբ՝ Մաշտոցի անուան Մատենադարանի N 9832 Թանկարժէք ձեռագրում: Գիտենք նաեւ, որ այս ընդօրինակութիւնը, մանաւանդ իր սկզբնական մասերում, յետագայում ընդարձակուել է՝ ներընկալելով խոշոր Հատուածներ Մարտիրոս Երզնկացու «Ուղեգրութիւնից»: Աւելացնենք այստեղ եւ այն, որ N 9832 ձեռագրի «Ուղեգրութիւնը» պարունակող Թերթերի ընդօրինակութեանը մասնակցել են 2 տարբեր գրիչներ: Առաջինը գեղեցիկ, կանոնաւոր նոտրգրով ու սեւ Թանաքով ընդօրինակել է բնագրի պաՀպանուած մասի 1ա-2ր եւ 17ա-18ր էջերը, իսկ երկրորդը՝ մեծագոյն մասը՝ 3ա-16ր էջերը. սրա ձեռագիրը նոյնպէս նոտրգիր է, սակայն՝ տձեւ, օգտագործուած Թանաքը բաց շագանակագոյն է: Այս երկուսն էլ իրենց գրագիտութեամբ չեն փայլել եւ բազմաԹիւ վրիպակներով ու սխալագրութեամբ աղճատել են բնագրի առանձին նախադասութիւններ, իսկ ամն սրբագրող փորձել է որոշ ճշգրտումներ կատարել լուսանցքներում ու տողամէջերում: Վերոնշեալ Հանգամանքների Թելադրութեամբ բնագիրը շտկում ենք՝ Հաշուի առնելով ձեռագրի սրբագրողի նշումներն ու ընդօրինակողների ուղղագրական ըմբռնումները: Մարտիրոս Երզնկացուց քաղուած Հատուածները ներկայացրել ենք տարբերուող տառատեսակով՝ Սարգսի բուն շարադրանքը ակնառու ներկայացնելու մտաՀոգութեամբ:

Տողատակում, ըստ այդմ, նշել ենք ձեռագրի առանձնայատկութիւնները, սրբագրողի շտկումները, ինչպէս նաեւ Մարտիրոս Երզնկացու «Ուղեգրութեան» զոյգ ձեռագրերի տարընԹերցուածքները (անշուշտ, այն Հատուածներում, որոնք քաղուած են Մ. Երզնկացուց):

Օգտագործել ենք Հետեւեալ ՀամառօտագրուԹիւնները.

Զ - ձեռ. N 9832.

Սրբ. - սրբագրող N 9832 ձեռագրի Սարգիս աբեղայի «Ուղեգրութեան» Հատուածի:

Բզմ. - «Մարտիրոս եպիսկոպոսի Երզնկացւոյ Ուղեգրութիւն ի Սպանիա» («Բազմավէպ», 1937, N 2-5, էջ 49-60):

Տղկ. - **Վ. Յակոբեան**, Մարտիրոս Երզնկացու ճանապարՀորդական նոԹերը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1957, N 6, էջ 97-110):

Բնագրին կցուած է Սարգիս աբեղայի ճանապարՀորդութիւնների երԹուղին ցոյց տուող քարտէզ, իսկ ներածական մեր խօսքի 11-րդ ծանօԹագրութեան մէջ տրուած է օտար բառերի այբբենական բառացանկը՝ Համառօտ բացատրութիւններով:

ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԳԻՍ ԱԲԵՂԱՅԻ

....1

/1ա/ Թուխ կասեն: Վանք մի կայ Կ (60) հաբեղայ կայ ի մէջն, Թ (9) գումպէթ է, խիստ մեծ վանք է. սուրբ Նիկողիոս հայրապետի մարմինն մէջն է, արծաթէ նաշով է դրված. ինչ ցաւագար որ գա, կու բժշկէ՝ կաղ, կույր, անդամալուծ, հայ ու Թուրք ու հ[ո]ռոմ՝ ՀԲ (72) միլաթ գինչ խնդիրք որ ուզէ՝ կուտա, նման սուրբ Կարապետի: Ի սուրբ մարմինն երկրպագեցի եւ մեղաց թողութիւն խնդրեցի մեզ եւ մեր ծնողացն եւ մեր երախտաւորացն:

Անկէց ելայ գնացի Խապալայ[2], որ նաւահանգիստ է: Ըստամպալէն մինչեւ ի հոն ԾԶ (56) ուրն հասաք, Զ (6) օր տեղն մնացինք. մտայ ֆրանկի նա/1բ/ւ մի եւ գնացի առջի քաղաքն ֆռա[ն]Ջկաց՝ Զատրայ քաղաքն, Ուրուվին, Փանայ, Փափասար, Տմազու. երեսուն օրն նաւին մէջն կեցա, հասա ի Նազարաթ[3]. Լ (30) օր Նազարաթ կեցա, անկից ելա, մտա ի Վանատիք:

Մեծ* եւ փառաւոր քաղաք է եւ ինք ի մէջ ծովուն շինած. ՃՌ (100,000) խանայ է, ասին: Ա (1) եկեղեցի մի կայ, ի մէջն խիստ զարդարած է ոսկով, սուրբ Մարկոս աւետարանչի եկեղեցին է, եւ Բ (2) մեծ երգեհոն կա ի մէջն, եւ Ա (1) Թեւաւոր ոսկի առիւծ է շինած ի մէջն, *ԲՃ (200) սրբոց մաս կա ի մէջն:* Եւ այլ շատ եկեղեցիք կա /2ա/ ի քաղաքն եւ շատ վանորայք կա ի բոլոր քաղաքին. ամէնն ի մէջ ծովուն է շինած: Եւ մեծ մոյտան մի կա առջեւ եկեղեցուն սուրբ Մարկոսի, եւ ի վերայ դրանն Դ (4) դեղին պղընձէ ձի է շինած մեծ, Ա-Ա (մէկ-մէկ) ոտվին ի վեր է կալել: Եւ ի հարաւային կողմն՝ ծովուն դիհն Բ (2) մեծ սուն է կանգնեցուցած. Ա (1)-ին վերա Թեւաւոր առիւծ մի կա եւ մէկալին վերա սուրբ Գէորքն է կանգնել: Եւ Թագաւորին դարպասն ամէն ոսկով զարդարած: Ով կարէ պատմել գքաղքին գեղեկութիւն: *Եւ ԺԴՌ (14,000) կարմունճ կա ի մէջն, եւ կեցաք ի հոն Բ (2) ամիս:*

Ելա մտա ի նաւն, գնացի հասայ /2բ/ Պատվայ, Ուրնանուլուին, Աֆռառ, Քամէնց, Տրմազօ, այլ ԺԵ (15) քաղաք այլ անցա, Բ (2) ամսին հասա [Հռոմ]: Բայց լեզու ոչ էի գիտել, խիստ չարչարեցա մինչեւ սովրեցա, ապա հասա աստուածայպահ մեծ քաղաքն Հռոմ ուր եւ սուրբ փառաւորեալ. ամենագովելի սուրբ մարմինք են գլխաւոր առաքելոցն սուրբ Պետրոսի եւ Պօղոսի: Մարմինքն երկրպագեցի եւ մեղաց թողութիւն խնդրեցի մեզ եւ մեր ծնողաց եւ մեր երախտաւորացն: *Եւ կացի անդ Բ (2) ամիս,* եւ զամէն անօրինական տեղիքն տեսա:

Սուրբ Պետրոսի դուռն արեւելք է, Ե (5) բարձր եւ ահեղ դուռ ունի եւ միջի դուռն Թափցու է, *ամէնն պատկերք է, խիստ զար/3ա/մանալի բաներ կայ.* եւ մէկ փեղկն սուրբ Պօղոս է կանկնել եւ Ա (1) սուրբ Պետրոս: Յարեւելից դիհն՝ Ներոն Թագաւորին դարպասին դիմացն՝ Պետրոսի խաչելութեան տեղն է: Ի մէջ քաղքին իւրեանց գնտանին տեղն է: Եւ ի Հռոմայ ի դուս. հեռու Գ (3) *մղոնաւ,* Պօղոսու գլխատման տեղիքն է. եւ հարաւու դիհն, որ կայ ի մօտ քաղաքին, այն տեղ է, որ Քրիստոս հանդիպեցաւ սուրբ Պետրոսի: Եւ քաղքին եղերն Սան Ճիվան եկեղեցին է, *որ սուրբ Յովաննոյ* գլուխն ի հոն

* Ուղիղ տառատեսակով ներկայացւում են Մ. Երզնկացու «Ուղեգրութիւնից» ներմուծուած հատուածները:

է՝ ամպողջ մարմնով: Եւ ի քաղքին մէջն հարաւու դիհն Գրիգոր Ակռակնդացուն /3բ/ գնտանն է, հիմայ եկեղեցի է շինած: Եւ այլ առաջ՝ մէջ քաղաքին Սանթիլինայ կայ. այն եկեղեցին Ճ (100) սրբոց նշխարք կայ եւ այլ շատ բազում փառաւորութիւն կայ. ի մէջ քաղաքին ՌԷՃՀԴ (1774) եկեղեցի կայ՝ ի Հռում, ԸՌ (8000) սրբոց գերեզման կայ ի քաղաքն եւ ի դուսն: Եւ ամէն օր Ի(20)-Լ(30) եկեղեցի շուրջ կու գայի, մեծ եւ փառաւոր եկեղեցիք կայ, եւ ամէն օր գլխաւոր առաքելոցն գերեզման կերթայի եւ ինձ մեղաց թողութիւն խնդրէի: Ով կարէ պատմել զփառաւորութիւն սուրբ եկեղեցացն եւ քաղքին:

Եւ եկին գիս փափին մօտն տարան, հետս զրուցեց, հարցաւ /4ա/ եւ Թուղթ երետ, որ ամէնն կու զարմանային, որ կու տանէր մօտն, կու զրուցէր հետս[4]:

Անկից ետեւ ելանք գնացաք. ԺԵ (15) քաղաք անցայ, հասայ Տուտէշ[5] ազգին աշխարհն, որ կասին Ալաման: *Այն աշխարհն ալ լեզու չէի գիտել, չարչարեցայ՝ մինչեւ սորվեցայ: Եւ գնացի, Ժ (10) քաղաք անցայ,* հասայ ի մեծն Կաստէնցիայ, եւ այլ Ի (20) քաղաք ալ անցայ Ըռին գետովն. *որ լանքն Ա (1) գիհէն մէկ ալ գիհն չի երեւալ՝ անչափ մեծ է,* գնացի ի մեծ քաղաքն [Պազլ], որ գիս բռնեցին, թէ չաշուտ ես, ասին. *հանց շատ հարցան ու քննեցին, եւ Աստուած ազատեց[6]:*

Եւ այլ բազում քաղաքաւ ալ անցայ, հասա ի [քաղաքն, որ], Ցռուտ[7] կու ասեն, որ շատ հիանալի բաներ [տեսայ]: /4բ/ Եւ անտի Ժ (10) *քաղաք ալ* անցայ, հասայ ի Ցրիփուլս, որ ասին, թէ այս քաղքին ԳՌ (3000) *այգի կայ, մեծ եկեղեցուն մէջն ԲՃ (200) սրբոց մաս կայ:* Եւ զմեզ մեծ հարկով հարկեցին: *Ի (20) օր կացինք, ուխտ արինք, ելանք* գնացինք Ստրազրուս: Եւ անտից *Ի (20) քաղաք ալ անցայ,* հասայ ի Կոպլայ, որ խիստ հարկեցին զմեզ: Եւ անտից *ԺԵ (15) քաղաք ալ անցայ,* հասայ ի մեծայհամբաւ քաղաքն ի Կուլոնիայ, որ ասեն, թէ Բ հարուր Ռ ու ԻԴՌ (224,000) տուն է, խիստ մեծ եւ զարմանալի քաղաք է: Եւ անդ /5ա/ ԺԲ (12) հազար սրբոց նշխարք կայ, ամենուն գլուխն մեծ եկեղեցուն մէջն է շարած, եւ ամէն մարդ կու տեսնու եւ մարմինքն ի գերեզմանաց: Եւ եկեղեցի մի այլ կայ՝ խիստ գեղեցիկ է, ԻԴ (24) կուսանաց մարմինք կայ արծաթէ սնտըկով դրած: *Այն քաղքին մէջն ԵՃ (500) եկեղեցի կայ. զԱստուածածնին պատկերքըն հոն է՝ մեծ եկեղեցուն մէջն Գ (3) դուռն ունի Թունճէ շինած եւ լատ իւր* սուրբ արժանեացն զարդարած. Աստուածածինն իւր գիրկն է դրած զոտրն մեր Յիսուս Քրիստոս, եւ *Ա (1)* Թաճ մն դրած ի գլուխն ան/5բ/գին զոհար ակներով եւ մարգարտով զգունդգուն [զու]գած էր, որ գին չի կար: Հարցայ եկեղեցւոյն իրիցուն, թէ ինչ խատար գնոց լինի այս. նորա ասին, թէ ԲՃՌ եւ ԺԵՌ (215,000) ոսկի խարճ է եղել: Եւ ի սիրտն սուրբ Աստուածածնին մարգարտէ խնծոր մի կապած էր, քան ի բռով ունկուզ մի էր, եւ բոլորն ԺԲ (12) հատ մարգարիտ կար, ամէն հատ քան ի փոքր կղթոր մի էր, եւ մէջն ընդ մէջ Դ (4) ակն՝ Բ (2) լալ, Բ (2) եաղութ, ամէն մէկ քան ի մեծ կղառր մի է: Եւ ավագ խորանին բոլորն ԺԶ (16) գերեզման կայ, դեղին պղինձ /6ա/ է քաշած՝ ի վերայ ոսկով զարդարած, վարագուրն ի վեր քաշած: Եկեղեցին ԵՃ (500) կամարի վերայ է, դուռն ունի բարձր եւ ահեղ. գինչ որ աշխարհս բան կայ, զամէնն ի դրուց դիհն է հանած, ոսկով զարդարած. *ԳՃԿԵ (365) լուսամուտ ունէր, որ երկանքն Գ (3) գիրկ էր,* եւ եկեղեցուն լուսամուտն գոյնզգունեց ճամով զարդարած էր: Եւ զանկակատոյպուաճ մի կար, քան ի բերթ մի մեծ էր, եւ ահեղ զանկակ մի կար կախ, որ ԻԸ (28) հոգի կու քաշէր: *Եւ այլ զարմանալի բաներ շատ կար /6բ/ շատ եկեղեցիք. շատ վանորայք կար. Հարցայ, թէ*

քանի եկեղեցի կայ, ասին թէ ՆԷ (407) եկեղեցի է, Խ (40) վանք է. ուխտ արի, մեղաց թողութիւն խնդրեցի:

Եւ ապա ելայ, գնացի, ԺԵ (15) քաղաք ալ անցայ, հասայ ի մեծ քաղաքն Սանթա-Մարիայ տ'Աքս, ուր կասեն թագաւորաց գերեզմանայատուն է ալաման ազգին, ամենաւրհնեալ եւ փառաւորեալ շապիկն ի հոն է սուրբ Աստուածածնին. եւ անդ շատ ջերմանջուր կայ: Եւ եկեղեցին, որ ամենաւրհնեալ շապիկն է, ամէնն ոսկով է զարդարած. եւ Դ (4) դեղին պղընձէ սիւն է /7ա/ կանգնեցուցած եւ օսկած, եւ մեծայմեծ սան գլխըներն ոսկով զուգած, եւ մեծ ոսկէզօծ սնտուկ մն շինած, եւ սուրբ Աստուածամօր սուրբ շապիկն ի ներսըն է դրած: Եւ կեցաք անդ ամիս մի, մինչեւ բացին. որ արժանի եղաք տեսանելոյ, եւ մեղաց թողութիւն խնդրեցաք մեզ եւ մեր ծնողացն եւ մեր երախտաւորացն, խիստ մեծարեցին:

Եւ անտի ելաք գնացաք, ԺԷ (17) քաղաք ալ անցաք, հասաք մեծ քաղաքն Յունվէս, որ թագաւորայնիստ է Ալաման ազգին, եւ կեցաք անդ Դ (4) շաբաթ մի: Եւ անդ է ամէնայզօր սուրբ թագաւորին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի /7բ/ սուրբ փութան, յորժամ խաչելութեանն կապեցին. Քրիստոսի աստուածընկալ արեամբն ներկեալ է: Եւ արժանացաք սուրբ տեսոյն նորա, եւ մեղաց թողութիւն խնդրեցաք մեզ եւ մեր ծնողացն եւ մեր երախտաւորացն:

Եւ անտի ելայ, Ի (20) քաղաք ալ անցայ, հասա աշխարհն Ֆլանտրու. լեզու չէի գիտել. խիստ չարչարանք քաշեցի մինչեւ սորվեցայ: Հասայ մեծ քաղաքն Առմէշ. ՃՁՌ (180,000) տուն է, ասին, ԵՃ (500) եկեղեցի կայ ի մէջն: Կեցաք ամիս մի, ելաք, գնացաք, ԺԸ (18) քաղաք ալ անցայ, հասայ աշխարհն Ընկլըւզաց. որ կու ասեն Լուզրան է. ի հոն /8ա/ ալ լեզու չէի գիտել, խիստ չարչարանք քաշեցի, մինչօր սորվեցայ: Նոքա ձկնակերք են. զինչ մեծ ահեղ ձուկն կայ, այն ծովն է: Եւ անտի գարձեալ արեւմուտս ձկան կող մի տեսայ, ԺԴ (14) թիզ էր:

Գնացի, ԻԵ (25) քաղաք ալ անցայ, հասայ աշխարհն Ֆռանցու, ի քաղաքն որ կոչի Սանդիլայ[8] ի հոն ալ լեզոյ չէի գիտել, խիստ չարչարեցայ մինչեւ սորվեցայ:

Հասայ ի քաղաքն Աթուռ, որ եպիսկոպոսաց, թագաւորաց եւ թագուհուց գերեզմանայատուն է, խիստ գեղեցիկ քաղաք է, ԵՃ (500) եկեղեցի կայ, եւ ավագ եկեղեցին, ուր թագաւորաց /8բ/ գերեզմանայատունն է, եկեղեցոյ ձախ դիհն Դ (4) ձկան կող էր դրած, Ա (1) կողն ԺԵ (15) թիզ էր, եւ ասին թէ այս ծովս այլ մեծ ձուկն կայ[9]:

Եւ ելայ, գնացի հասայ մեծ քաղաքն Այղուռժ, ուր ասին թէ ՃՌ (100,000) տուն է, ՋՃ (600) եկեղեցի կայ, մեծ եկեղեցին ԲՃ (200) սրբոց մաս կայ: Ուխտ արի, ելայ, գնացի հասայ Լեվոն, Մարսիլիէ: Այլ ԺԵ (15) քաղաք անցայ, [հասայ] մեծ քաղաքն, որ կասեն Բարիզ: Խիստ մեծ քաղաք է, Ա (1) մեծ եկեղեցի մն կայ ի մէջն, ԺԲ (12) դռնէն է. ՃՌ (100,000) մարդ մանու՝ չի լցվեր. եւ Գ (3) մեծ դուռն արեւմտած դիհն է, եւ ի մեծ դուռն Բ (2) բդ/9ա/կէն է. դռան վերայ Քրիստոս է կանկնել եւ վերայ դռանն Քրիստոս դատաստան է նստել ոսկի աթոռով, եւ ամէնն ոսկով է զարդարած: Եւ հրեշտակապետք, սերոբէք եւ քերոբէք աջ եւ ի ձախ կանկնել են, եւ աջ դիհի հրեշտակն բռնել է զայն սիւն, որ Քրիստոս զանեցին, եւ զգեղարդն, որ զՔրիստոսի կողն խոցեցին. եւ ձախ դիհն հրեշտակն կա[ն]կնել է, զխաչն է բռնել: Եւ աջ դիհն սուրբ Աստուածածինն է չոքել ի վերայ ծնկանց եւ ձախն՝ սուրբ Յովանէս եւ սուրբ Ստեփանոս. առջեւ[ն] հրեշտակ[ք] եւ հրեշտակապետքն եւ ամենայն սուրբք: Եւ Ա (1) հրեշտակին ձեռն կշեռք

կայ, որ զմարդուն մեղքն ու վարձքն կու կշիռեն. եւ /9բ/ ձախ դիհն՝ քիչ մի վար, սատանէք եւ դեւք եւ ամենայն հետ իւր եւ մեղաւոր մարդիկն զնճիլէին եւ դժոխքն կու քաշին: Եւ դժոխքն հանած է զարհուրելի դիմօք, որ մարդ կու տեսնու, կու սոսանի: Եւ դէմ Քրիստոսի սուրբ առաքեալքն եւ սուրբ մարգարէքն եւ սուրբ հայրապետքն եւ այլ[ք] ամենայն՝ ազգի ազգի գունով զարդարած է եւ ոսկով է շինած զարքայութիւն[ն], որ մարդ կու տեսնու, կու փառաւորի: Եւ այլ ի վեր հանած է ԻԸ (28) թագաւոր, թաճն ի գլխըներն, եւ կա[ն]կնել ե[ն] մարդու պէս ի կարգն: Եւ այլ ի վեր՝ տիրայմայր Աստուածածինն ոսկով զարդարած է գունզգու/10ա/նով, որ կանկ[ն]ել են ի յաջ եւ ի ձախ սուրբ հրեշտակայպետք [ի] սպասաւորութիւն. եկեղեցոյն լուսայմուտերին մեծութիւն ամէն քան ի կալ մի էր: Եւ եկեղեցին ի ձախ դիհն հանած է անտառ դէմ մի մեծ՝ սուրբ Քրիստոսյփորն եւ Քրիստոս ուսին վերայ. եւ բազում զարդարանք: Ով մարդ կարէ լեզվով պատմել զքաղքին աղեկութիւնն: Եւ Բ (2) գետ կու մտնու մէջն եւ կէսն ի դուրս չի ելնել: Ասին թէ ՋՃ (600) եկեղեցի կայ, Ճ (100) խապիտալի եւ հիւանդի տեղ կայ, Ճ (100) աղքատի կայ, ԿՌ (60,000) զպրայտուն կայ, ամէն զպրայտուն Դ (4) վարպետ կայ, ԿՌ (60,000) խասապխանայ կայ: Հայց մեծ քա/10բ/ղաք է, որ ասին թէ Ճ տարպայ ՃՌ տուն է[10], Է (7) պարիսպ է, քաղքի բոլորն ԽԳ (43) միլ է, մեծ եկեղեցին ԲՃ (200) սրբոց մաս կայ: Բ (2) ամիս կեցաք: Թագաւորն Լուզրան էր գնացել ԿՌ (60,000) մարդով, խոստովանհարն սպանեց զթագաւորն թվ. ՌԼԸ (=1589), քաղքին դռվին փակեցին եւ ամիս մն չի բացին, մէջն մնացաք մինչեւ բացին, շատ չար քաշեցի:

Եւ ելաք, գնացաք հասաք Ուռլիան, Ապլկայ, Անպօզայ, Աթուրշը, Անճէշ, Ասոմէր, Անտնդ:

Մտաք ի նաւն, ԳՃ (300) միլ տեղ է, ԻԵ (25) օրն հասաք Ըսպանիայ՝ սուրբ Յակոբայ աշխարհն. լեզու չէի գիտել, չարչարանք քաշեցի մինչեւ ուսայ: [Հասայ] Աւիլվայ, Սան Պատիան[11]. այն մարտիրոսին մարմինն ի հոն է, որ խա/11ա/չեցին, նետն բռնեցին: Անոր մարմինն երկրպագեցաք մեղաց թողութիւն խնդրեցաք, անկից ելաք, գնացաք հասաք այն տեղն, որ սուրբ Յակոբ հավն յարուց. հոն ալ ուխտ արինք, ելաք, գնացաք հասաք մեծ քաղաք Պուրգուս, որտեղ որ Քրիստոսի խաչայփայտն է. Սանթայ Կ[ը]ուսաին[12] կասին, այնոր մէջն է: Երկրպագեցաք զայլ պազի ուխտայտեղանք տեսանք. ԳՃ (300) եկեղեցի կայ եւ Խ (40) վանք կայ, հօղէտուն կայ, թագաւորն է շինել: Կեցաք եւ ելաք, գնացաք հասաք Վալայտուլի. մեծ քաղաք է, ԳՃ (300) եկեղեցի կայ, ԲՃ (200) սրբոց մարմին կայ. ուխտ /11բ/ արի, ելայ գնացի Սալամանք. ԺԴՌ (14,000) դպիր կայ, մեծ եկեղեցին Ճ (100) սրբոց մաս կայ: Ելայ գնացի Սամուրայ, Պէնուվենդ, Մէգին էլ Գամբ, Մէգին Ըռուշէք, Սիմանքաս, Դօռդայսէլ, Լէվոն Վիլայֆռանգ, Առգօրկայ: Մեծ եկեղեցի մի կայ, Է (7) դուռն ունի, Ծ (50) խորան է, Ճ (100) սրբոց մաս կայ: Ուխտ արի, ելայ գնացի, ԺԵ (15) քաղաք անցայ, հասայ սուրբ [Յ]ակոբ առաքելի գերեզմանն. ուխտ արի, մարմինն չի կարցի տեսնուլ. ասին, թէ տարին Ա (1) անգամ կու հանին, գնայ, ուխտին ատենն եկոյ:

Ելայ, գնացի, ութ ամիս չուռ եկի, չա/12ա/տ քաղաք ու գեղ, վանորայք, ուխտայտեղ, վանք տեսայ, անկից դարձայ ճանփով մ'ալ եկի, հասայ սուրբ Յակոբ ըլտին: Հանին զմարմինն դուրս, ուխտ արի: ԴՌ (4000)[13] էրէց ու հարեղայ կար, թող զաշխարհականն, զկնիկն ու զաղան, զմեծն ու զպզտիկըն՝ անթիւ էր, համբար չէր ի գալ. Գ (3) օր ուխտ

արին, շատ սրբոց մասեր կար:

Սուրբ Յակոբայ եկեղեցին Գ (3) տապատայ է, ԲՃԶ (206) կամար է, Լ (30) խորան է, Դ (4) դուռն է, Ճ (100) կրէց կայ ի մէջն, մեծ զանկակատուն մի ունի Է (7) տապատայ է, Բ (2) մեծ զանկակ կայ ի մէջն, Լ (30) թիզ էր Ա զանկակն, մէկ ալ զանկակն /12բ/ Ի (20) թիզ էր[14]: Ուխտ արի, ելայ գնացի, բազում քաղաք անցայ, հասայ ի Եզր Աստուածածին[15]. աւրհնեալ է Աստուած, որ ողջ ու առողջ ի հոս հասայ, ուխտ արի: Այլ չէն չի կայ՝ ծով է, հանց ծով է, որ նաւ ալ չի երթայ:

Գ (3) օր կեցայ, ելայ գնացի հարաֆոյին կողմն, հասայ այն տեղն, որ ծովն սուրբ Յակոբայ մարմին[ն] դուս էր հանել, որ անգլուխ Աստուած կու պաշտէին. քաղաքին անունն Բաղրուն կասին: Անկից գնացի, Ե (5) քաղաք ալ անցայ, հասայ Փունթուպետրն, Ադուու: Եւ անկից մեծ գետ մն անցայ[16], մտայ Փոռթուկալաց աշխարհն. հոն ալ լեզու չէի գիտել, չարչարեցայ, մինչեւ որ յուսայ /13/:

Եւ հասայ Վալէնցայ, Կամէնայ, Բրակայ, Վիլա-Նովայ, Վիանայ, Գ (3) քաղաք ալ անցայ, հասայ մեծ քաղաք մն Փոռթ. ԲՃ(200) եկեղեցի կար, Ճ (100) սրբոց մաս կար, ուխտ արի, ելայ, գնացի մտայ ի ծովն, ելայ Կոլայ, գնացի Գ (3) քաղաք ալ անցայ, հասայ Կուումբրայ. ի հոն ալ շատ եկեղեցի կար, հասայ Սանթարին, Վիլա Նովն, Կաստինար, Զաքապին, հասայ մեծ քաղաքն Լիզպոյ:

Բոռթուկալայ թագաւորին քաղաքն է, գնացի թագաւորին մօտ[17]. խիստ մեծարեց, ողորմութիւն երետ: ԳՃ (300) եկեղեցի կայր, Լ (30) վանք կար, շատ սրբոց մաս կար. ուխտ արի, ասին /13բ/ թէ ՃՌ (100,000) տուն է, խիստ մեծ քաղաք է. ԵՃ (500) նաւ կու կանկնի առջեւն:

Մտայ ի նաւն գնացի առաջի քաղաքն Կոն, Աէթօվրն, Բունդայլիմնմայ: Մտայ ի նաւըն, գնացի Այմոնդ, Ե (5) քաղաք ալ անցայ, հասայ մեծ քաղաք էր՝ Սիվիլիայ: Գ (3) հարուր եկեղեցի կայ, շատ սրբոց մաս կայ, մեծ եկեղեցի մն կայ՝ Է (7) դուռն ունի, ՃԾ (150) խորան է, շատ սրբոց մաս կայ ի մէջն. ասին, թէ ՁՌ (80,000) խանայ է:

Առջեւ քաղքին մեծ գետ մն կայ[18], նաւեր շատ կանկնել է թագաւորն Իսբանեայու, որ Նոր Հնդստանան գատու: Տարին Ե (5) կամի կու գայ, բասակ ու ոսկի կու բերէ: /14ա/ Այս այն ոսկին[ն] արծաթ[ն] է, որ ինքն իրեն կու բուսանի, գարմանք բան է: Շատ ձի, շատ ջորի, կով, ոչխար կու մորթին, լաշն կու տանին այն տեղն կու ձգին, որ ոսկին-արծաթն կու բուսնի. ան տեղն մեծ մաջիմ կու լինի, մեծութիւնն քանձ շան չաք. մաջիմներն կու ելին ոսկուն միջէն, լաշն ուտել կու երթան Գ-ԴՃ (3-400) ձիաւոր կարից կու երթան, ի մէջն կու մտնուն, վայր ու վեր կու վազեցընեն, ոսկի-արծաթն կու մանրի մինչեւ մաջիմն գայ, մաջիմն լաշն կուտէ ու գառն[այ] գայ իր տեղն, տես[ն]ու մա[ն]խրած է ոսկին ու արծաղն. մաջիմն բան տեղ կու չենէ, կու տան[ի] հեռու տեղ ///[19]: Կու առնուն ու կու տանի[ն]՝ ի նաւըն կու լնուն ու կու բերին: Նաւին մեծութիւնն ԺԲ (12) տապատա [է], ԺԴ (14) տեղ առ/14բ/ազատ կու բանան. եկեղեցի կայ ի մէջն, պահէզ կայ ի մէջն, ջրհոր կայ ի մէջն՝ քար ու կիր պատած, անծրեւ որ գայ՝ ի մէջն կու լցվի, խասաֆ կայ, պաղազ կայ, ԵՃ (500) նաւավար կայ. Զ (6) ամիսն կու գայ կու հասնի Սիվիլիայ:

Ելաք գնացաք Կարմունայ, Մարչինայ, Սուոնայ, Էսիչայ, Գորտովայ: Մեծ եկեղեցի մն կայ, ԺԲ (12) գռնէն է, այլ շատ վանքեր կայ, շատ սրբոց մաս կայ: Ելայ գնացի Հրճիտոն, Անթքել, Լոչ, Պլեկա, Մալակայ, Այհամայ, Սանթափէ, հասայ մեծ քաղաքն

Ակրանատ. Մաղրիպացոց թաղթէն է[20] հիմայ քրիստ/15ա/ոնեայ է եղել, շատ եկեղեցի, վանքեր կայ: Մեծ եկեղեցի կայ՝ Ը (8) դուռ ունի, Ճ (100) խորան է, շատ սրբոց մաս կայ. տեսայ, ելայ գնացի Ճայէն, ի հոն է Քրիստոսի անկար պատմուճանն. այլ շատ մասեր կան: Ուխտ արի, մեղայ թողութիւն խնդրեցի, ելայ գնացի Ալխալայ. այլ Ժ (10) քաղաք ալ [անցայ], հասայ Նուստր Սինոր[21] Վատալուպ կասեն, մեծ վանք մի կայ. ՃԾ (150) հարեղայ կայ, շատ սրբոց մաս կայ, ըղտաւոր խիստ կու գայ: Ուխտ արի, ելայ գնացի Տալայվեր, Թուլիթ. մեծ քաղաք է, շատ եկեղեցիք կայ. մեծ եկեղեցի մի կայ՝ Ճ (100) սրբոց մաս կայ ի մէջն, Է (7) դուռն ունի, ուխտ արի, ելայ գնացի Նուստր Սինոր Կարիդայ /5բ/:

Գնացի Մատրիլ, թագաւորին քաղաքն է Ըսպանու թագօրն հոն չէր. ԻԱ (21) միլ տեղ մէկ վանք մի կայ, ՃԾ (150) ապեղայ կայ, Ուսկուրեալ կասեն[22] թագօրի գերեզմանայտուն է, ամառն հոն կերթայ, ձմեռն Մատրիլ կու նստի: Խիստ մեծ վանք է, Ծ (50) խորան է, շատ սրբոց մաս կայ[23]:

Թագաւորն ի մօտ գնացի, ողորմութիւն առի. թուխթ առի, ելայ գնացի Ալխալայ, Վատալայչար, Սարայկոս. մեծ քաղաք է, զօրաւոր եկեղեցի մն կայ ի մէջն, Աստուածածին է անունն, այլ շատ մասեր կայ: Ուխտ արի, ելայ գնացի Լերիդայ, Պարսալոն. ԾՌ (50,000) տո[ւ]ն է. մահ էր ընկել, ԻԵՌ (25,000) դուռն փակվել էր:

Ելայ գնացի Թոռթոն[24], այլ Գ (3) քաղաք ալ, հասայ Վալենսայ. մեծ քաղաք է, շատ եկեղեցի կայ, վանքեր կայ, սրբոց մասեր կայ. նաւահանգիստ է:

Գնացի, իրիցներուն աղաչեցի. Այլ չիմ կարնալ քալել, մարմնու կա/16ա/րիքս հատաւ, որ Դ (4) տարի է կու քալիմ. ինձի նաւ մի գտիք: Եկին, գտան նաւ մի, ասին նաւայվարին. Առ դայտ աղքատ հաբեղատ. տար հռոմայ աշխարհն: Նաւավարն առաց, թէ իմ նաւին մէջն օտար ապրանք չի կայ, նաւըն իմն է, ապրանքն իմ[ն] է, մարդն իմն է. ես անատակ ծովն կու երթամ, այլ ճանփան քաղաք չի կայ, Բ-Գ (2-3) ամիս նաւին մէջն եմ, Աստուած գիտէ իմ ազատիլըս. թէ ինքն ալ կարող է, թող մտնու, ես ալ աստուծոյ սիրո[յն] համա[ր] տանի [մ][25]. Ես ալ ասի, թէ քանց գիրս աղէկ չեմ ես, ինչպէս գուն՝ այնպէս ես:

Ես ալ հանց մտայ ի նաւըն, գնացի հասայ կղզի մըն Էվիսայ կու ասին, /16բ/ անկից գնացի Մաճուրղայ, կղզի է, ԼԵ (35) քաղաք կայ, անկից գնացի Մինորգայ, շատ գեղ ու շատ քաղաք կայ:

Անկից ետեւ գնացաք Մեծ ծովին մէջ. ՃԾ (150) նաւավար էր. ես իմ ընկերներովն Բ (2) ամիս ծովին վերայ կեցայ, չէն չի տեսայ, Աստուած պահեց ազատեցայ:

Հասայ մեծ քաղաքն Ճենեւայ, աւրհնեալ է Աստուած շատ եկեղեցի կայ, Ի (20) վանքեր կայ: Ուխտ արի, ելայ գնացի, Է (7) քաղաք ալ անցայ, հասայ Բաւիայ, Միլան: Խիստ մեծ քաղաք է, Բ (2) տարպայ ՃՌ (200,000) տուն է, ասին, ԴՃ (400) եկեղեցի կայ, շատ սրբոց մասեր կայ. ուխտ արի, ելայ գնացի, Ի (20) քաղաք ալ անցայ՝ Պլոնիայ, Ֆլորենցայ. Սին, Ակվայ, /17ա/ Թենթիր. Սան Կիրիկոյ, Մոզանթիֆիաչկ, Վիտերբ: Եւ այլ Ժ (10) քաղաք անցայ՝ Անապօլի, Պօլիա, հասայ Մոնինու կղզին, Լար, Ֆարֆարին, Ճիճիլիա, Սարայկոսայ: Այլ Ե (5) քաղաք ալ [անցայ], ելա[յ] գնացի բազում քաղաքա Կամինա, Ակրոնայ, Աւիցենց, Պատվայ եւ այլ բազում քաղաքաւ հասա Մատունա-Լոռէտ, որ կու թարգմանի՝ Զօրաւոր Աստուածածին, հասա ի քաղաքն Անքունիա: Մտայ ի նաւըն՝

Վենետիք, անկից մտա ի նաւըն եկա Թո//[26] [Հասայ] /17բ/ Զոլու, Սիլիվրի, Չաքմաջեայ, Ըստամպոլ, Ատրանա:

Ո՛վ ընթերցող բանիս՝ Հարք եւ եղբարք, թէ կամէք մեղաւոր Սարգսին Փռանգըստան կամ ինչ պատառ քաղաք է տեսեր: Ռ (1000) բերդ ու քաղաք տեսեր եմ, թող գիւղորանքն, ԴՌ (4000) Հանդիսի եկեղեցի տեսեր եմ, ԳՌ (3000) վանք Հաբեղի, ԸՌ (8000) կուսանաց վանք, ուրհնեալ է Աստուած:

Թվ. ՌԼԷ (1588) Ըսբանու թագաւորն տօնանմայ շինեց, ՃԼ (130) կամի զարդարեց, ՁՌ (80,000) մարդով Լուղրանին վերայ գնաց, փուռթանա եղաւ զամենն[27] /18ա/:

Թվ. ՌԽ (1591) եկի Ըստամպոլ, եկա գնացի Ատրանա, Հայոտուստ Բրուսայա, Պազարճուխ, Պապա, Հասա Տունա՝ մեծ գետ է[28], նաւով անցա, մտա Պողտանայ երկիրն[29], Հասա առաջի քաղաքն Եաշն, Ուսմանի, Սաչովն, Պոչանն, Սերաթն, Խութին[ն], մտա գետն[30], անցա գնացի Կամենիցն, Հասա Իլախաց աշխարհն: Բազում քաղաքաւ Հասա Եաշ քաղաքն, որ է թագաւորանիստ Պուղտան ազգին: Անկից եկա, գնացի Հասա Աղքիրման, որ է Սեւ ծով, մտա ի նաւըն, գնացի:

Աղաչեմ զքեզ Աստուածածին սուրբ կոյս,
Որ հանես զիս մթնէ ի լոյս:

Ա (1) ամիս ծովն կացի, Հասա Հայաստան, ուրհնեալ է Աստուած:

Թվ. ՌԽԱ (1592) Հասա Հայաստան /18բ/:

Թուխթն շատ էր, թանաք [հ]ոլով,
Մեղաւոր Սարգիսն էր մտամոլոր,
Որ զայս բաներդ չի գրեց զամէնն բոլոր,
Անմեղադիր լերուք ուժով:

Ղարիպ եմ ու խիստ լալի,
Այտ օտար աշխարհս որ եկի,
Կու տան ինձ հազար բարի,
Կու պահեն աչերս ի լալի:
Ինչ անեմ ես հազար բարին,
Որ կու գա ձայնս ղարիպի,
Թողում, իմ աշխարհն երթամ,
Թող կենամ ծարաւ, անօթի[31]:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ձեռագիրը թերի է. մէկ կամ մի քանի թերթեր չեն պահպանուել: Նիկողայոս հայրապետի նկարագրուող վանքը գտնւում է Զմիւռնիա (Իզմիր) քաղաքում: Ուստի Սարգիս աբեղան, Ստամբուլից նաւ նստելով, կարճատեւ կանգառ է ունեցել Զմիւռնիայում:

2. Այս եւ միւս բոլոր տեղանունների ճիշտ գրութիւնը եւ գտնուող տեղը ցոյց է տրուած ներածական խօսքի մէջ եւ ներդիր քարտէզի վրայ:

3. Նազարաթ կամ Նազարէթ էր կոչւում Վենետիկից ոչ հեռու՝ Ս. Ղազարի հարաւակողմը (շուրջ 400մ հեռաւորութեան վրայ, Լիտոյի մօտ) գտնուող եւ այժմ Lazzaretto Vecchio կոչուող կղզին: Իր անունը ստացել է Նազարէթի Աստուածամօրը նուիրուած եկեղեցուց, որ կանգուն է եղել մինչեւ 1249 թ.:

Միջին դարերում այս կղզու վրայ շուրջ 40 օր արգելափակում էին արեւելեան երկրներից Վենետիկ այցելողներին. տարափոխիկ հիւանդութիւնների, յատկապէս ժանտախտի համաճարակից քաղաքն ապահովելու համար (տե՛ս «Բազմավէպ», 1968, № 7-12, էջ 406): Սիմէոն Լեհացին մանրամասն նկարագրում է իր քաշած ծանր օրերը այս Նազարէթում:

4. Հռոմի պապի հետ տեսակցութիւն ունենալու եւ զրուցելու հատուածը բառացի քաղուած է Մ. Երզնկացուց, ուստի դժուար է պնդել, որ այդ պատիւն արուել է նաեւ Սարգիս աբեղային: Մեր ճանապարհորդի՝ Հռոմում եղած ժամանակ պապ էր Սիքստոս V-ը (1585-1590), որը բարեկարգեց պապական նահանգի կառավարչութիւնը, կառուցեց Վատիկանի գրադարանի շէնքը եւ հիմնադրեց տպարան:

5. Տուտէշ ասելով՝ մեր հեղինակը, հետեւելով Մ. Երզնկացուն, նկատի ունի գերմանացիներին, որոնք իրենց Deutsche են կոչում: Աղաւաղուած Տուտէշ ձեւն առաջացել է հաւանաբար իտալական tedesco-ի ազդեցութեամբ:

6. Լրտեսութեան մեղադրանքով Բազէլ քաղաքում բանտարկուելու հատուածը, ընդմիջարկուած լինելով Մ. Երզնկացու «Ուղեգրութիւնից», չի կարող վերաբերել նաեւ մեր ճանապարհորդին:

7. Բազէլից յետոյ այցելած քաղաքը Մ. Երզնկացու «Ուղեգրութեան» ձեռագրում Ֆռանկֆուրթ է կոչուած: Այդ, անշուշտ, սխալ է՝ ստեղծուած յետագայում, Եւրոպայի աշխարհագրութիւնը վատ իմացող ընդօրինակողի կողմից: Ճիշտ է Սարգսի մօտ պահպանուած Ֆրուտ-ը, որ Բազէլից շուրջ 20կմ արեւելք գտնուող Ferrette (տառադարձուած նաեւ Pfirt ձեւով) քաղաքն է:

8. Այս քաղաքի անունը գրուած է այնպէս, որ կարելի է կարդալ նաեւ Տանզիա: Գերադասում ենք Սանզիա վերծանումը՝ կարծելով, որ մեր ուղեգիրն ի նկատի ունի Սան-Դիզյէ (St. Dizier) քաղաքը:

9. Թագաւորական գերեզմանատուն հանդիսացող եկեղեցու մէջ վիթխարի ձկան կմախքի գոյութեան մասին այս տեղեկութիւնը գրեթէ բառացի քաղուած է Մ. Երզնկացու «Ուղեգրութիւնից»: Այնտեղ, սակայն, այդ ամէնը պատմուած է Սէն-Դենի քաղաքի նկարագրութեան մէջ: Սարգիս աբեղան այդ քաղաքում չի եղել: Նրա «Ուղեգրութեան» մէջ Մ. Երզնկացուց ընդարձակ հատուածներ ներմուծած խմբագիրն այս դժուարութիւնը յաղթահարել է՝ Սէն-Դենի քաղաքի մասին պատմածը վերագրելով Աթուռ (հիմա՝ Troyes) քաղաքին:

10. «Ճ տարպայ ՃՌ տուն» նշանակում է 10 միլիոն տուն: Չարհուրելի չափազանցութիւն է:

11. Սան Սեբաստիանոս վկայի անունով կոչուած Սան-Սեբաստիան քաղաքն է՝ բասկերի երկրի վարչական կենտրոնը:

12. Սպաներէն cruz նշանակում է խաչ:

13. ԴՌ (4000) թուանշանի առաջին նիշը (Դ) գրուած է սրբագրողի կողմից, նախկինում գրուած մի այլ թուանշանի վրայ: Ուշադիր զննութեամբ հնարաւոր է լինում վերծանել նախկին թուանշանը՝ ԿՌ (60,000), որ անշուշտ չափազանցութիւն է:

14. Սուրբ Յակոբի վանքում (Santiago de Compostella) Սարգիս աբեղայից շուրջ երկու տասնամեակ յետոյ եղել է հայ ունիթոր քահանայ Աւգուստինոս Բաջեցին: Ստորեւ մէջբերում ենք նրա «Ուղեգրութեան» այն հատուածը, որ վերաբերում է նշանաւոր այդ վանքի նկարագրութեանը.

«...Հասայ սուրբ Յակոբ, այն աւուրն էր վիճիլ հոգագալստեանն.. վաղեան աւուրն տունն կատարեցին. ես մեղաւորս խոստովանեցայ եւ հաղորդ առի. այն աւուրն խիստ լաւ զարդարել ին եկեղեցին, գեղեցիկ թափուր արին. Ը (8) կարտինար հանապազ հոն կու բնակին. ամեներեան եպիսկոպոսական զգեստ էին յագեալ եւ բազում ոսկէ եւ արծաթէ գաւազան էին վերառեալ եւ շատ սրբոց մասունք, ամենայն ոսկով պատած, եւ սուրբ Յակոբոս Ալփեան գլուխն ի թափուրն վեր էին առեալ: Իւր պատկերն ոսկով շինած այ մինչեւ ի գոտկայտեղն. ի գլխին անգին թագ էին եդեալ, որ գինն Աստուած լաւ գիտէ. Դ քահանայ յօժարութեամբ (իմա՝ դժարութեամբ – Լ. Խ.) վեր կունին: Եւ սուրբ Յակոբայ գերեզմանն մեծ խորանին տակին այ. դուռն մեծ բեմումն այ. պապէն բանադրանք կայ, որ ոչինչ մարդ չէ կարիլ դուռն բանալ եւ վեր իջնիլ, տեսնոյ գերեզմանն սրբոյն: Եւ գերեզմանին վերայ Բժ. կանթեղ կայ մեծիմեծ եւ արծաթէ եւ այլ բազում, հանապազ վառ են: Ամենայն քրիստոնեայ թագաւորի կանթեղ եւ տաճար կայ հոն շինած: Եւ սուրբ Յակոբայ գաւազանն ի մէջ եկեղեցումն է եւ երկաթով պատած է, վասն եկող եւ գնացողքն չկտրատեն, եւ մէկ դուռն կայ եկեղեցուն՝ մօտ գերեզմանին, որ կոչեն դուռն ողորմութեան, որ Է (7) տարէնն մէկ հետ կու բացի. երանի այնոցիկ, որ այն աւուրն որ բացուի՝ հոն լինին: Այս սուրբ եկեղեցիս երկու տակ է. որչափ որ վերն է եւ այնչափ վայրն է. խիստ զարմանալի գեղեցիկ շէնք: Եւ Խ (40) մանկունք հանապազ երգեն եւ շարականեն եղանակաւ եւ բարբառիւ. եւ խիստ լաւ քաղաք է եւ էժանութիւն: Եւ այլ բազում գեղեցիկ վանքեր եւ եկեղեցիք կայ հոն շինած, որ մարդի բերան չի կարիլ պատմել ամենայն» (Նշխարք մատենագրութեան Հայոց, ի լոյս էած Ք. Պ[ատկանեան], Ս. Պետերբուրգ, 1884, էջ 12-13):

15. Այս վայրում եղել է նաեւ Մ. Երզնկացին: Իր «Ուղեգրութեան» մէջ նա գրում է. «Ելեալ դիմեցի յեզր աշխարհի յեզր Աստուածածինն... որ ֆրանկերէն ասեն Սանթայ Մարիայ Ֆենէստիռնա» (իմա՝ Santa Maria Finisterre): Աւգուստինոս Բաջեցին ասում է, որ «սուրբ Յակոբայ մինչեւ եզեր Աստուածածին Գ (3) աւուր ճանապարհ է, ապայ ես գնացի ոչ վասն ընկեր չունելոյն» («Նշխարք մատենագրութեան Հայոց», էջ 13):

16. Mino (Մինյո) գետն է, որ Սպանիան բաժանում է Պորտուգալիայից՝ հանդիսանալով վերջինիս հիւսիս-արեւմտեան սահմանագիծը:

17. Պորտուգալիայի թագաւոր Սեբաստիանոսի (1554-1578) վախճանից յետոյ (սպանուել է Մարոկկոյում) 1580 թ. Սպանիայի թագաւոր Փիլիպպոս II-ին յաջողուեց զինական ուժով Պորտուգալիան միակցել Սպանիային՝ խոստանալով յարգել այդ երկրի ներքին ինքնավարութիւնը: Այսպիսով, 60 տարի (մինչեւ 1640 թ.) Պորտուգալիան Սպանիայի մասն էր կազմում, ուստի չունէր իր թագաւորը: Սարգիս աբեղան հաւանաբար թագաւոր է կոչում Պորտուգալիայի փոխարքային կամ բարձրաստիճան պաշտօնեաներից մէկին:

18. Գուադալկուիւիր գետն է, որն իր ստորին հոսանքում նաւարկելի է:

19. Աստղանիշով եզերուած հատուածն աւելացուած է սրբագրողի ձեռագրով, էջի

ստորին լուսանցքում: Վերջին տողը զոհ է գնացել կազմարարի դանակին. պահպանուել են միայն տառերի վերին եզրերը:

20. Արաբերէն «մաղրիպ»՝ արեւմուտք բառից: Այդպէս էին կոչում Եգիպտոսից արեւմուտք ընկած երկրները՝ Լիբիա, Թունիս, Ալժիր, Մարոկկո, ինչպէս նաեւ Սպանիայի հարաւային շրջանները, որոնց մի մասը մինչեւ 1492 թ. գտնւում էր արաբական տիրապետութեան ներքոյ:

21. Սարգիս աբեղան Նոստր Սինօր աղճատ ձեւով է տառադարձում սպաներէն Nuestra Señora (ֆրանս. Notre Dame) արտայայտութիւնը, որ նշանակում է Մեր Տիրուհի, այսինքն՝ Աստուածամայր: Կաթոլիկ Եւրոպայում եւ մասնաւորապէս՝ Սպանիայում Աստուածամօր անունով բազմաթիւ վանքեր կան, որոնցից են նաեւ Սարգսի յիշատակած Գուադալուպայի եւ Կորիդայի վանքերը:

22. Սպանական թագաւորների ամառային աթոռանիստ Էսկուրիալ քաղաքն է, որ յայտնի է շքեղ ապարանքով ու վանական մեծ համալիրով: Իր հիմնական մասով կառուցուել է Սարգիս աբեղայի ճամփորդութեան շրջանում թագաւորող նշանաւոր գահակալ Փիլիպպոս II-ի նախաձեռնութեամբ ու ծրագրով:

Էսկուրիալում եղել է նաեւ Աւգուստինոս Բաջեցին. «Այն աւուրն հասայ մէկ վանք,- գրում է նա,- որ կոչի Ըսկուռեալ, որ է խիստ զարմանալի շինած մէջն եւ ի դուսն. շէնքն ամենայն մառմարիայ. ի մէջ եկեղեցին կայր բազում աշտանակ եւ կանթեղք արծաթեղէն եւ ոսկեղէն. ԳՃ (300) միաբան կայ մէջն սուրբ Ջերանիմոսի կարգէն, թող գնացողն, որ հանապազ Գ (3) աւուր հաց կուտան եւ ամենայն պէտսն: Մէջն գրքատոյն կայ, որ Ծ (50) գազ երկայնութիւն է եւ ԻԵ (25) գազ լայնութիւն է, գրքով լի, զամենայն ոսկով կազմած եւ ամենայն ցեղ լեզուէ ի մէջն կայ. Խ (40) ջրի հանապազ կերակուր կու բերէ եւ ըմբելի եւ ամենայն պէտսն: Ի մօտ վանքին է շինած գեղեցիկ դարպաս թագաւորին, որ թագաւորն ամառն հոն կու բնակէ» («Նշխարք մատենագրութեան Հայոց», էջ 12):

23. Աստղանիշով եզերուած հատուածը լրացուած է աջակողմեան լուսանցքի վրայ, սրբագրողի ձեռագրով:

24. Այս տեղանուան վերջին Ն տառը պէտք է եղած լինի զ. քանի որ խօսքն, անտարակոյս, Tortosa քաղաքի մասին է:

25. Աստղանիշով եզերուած հատուածը լրացուած է լուսանցքի վրայ, սրբագրողի ձեռագրով:

26. Այս մասից հաւանաբար թերթ է ընկել: Բնագրի թերի լինելը նկատել է նաեւ ձեռագրի գրիչը, որ 5 տողի չափ տեղ անգրել է թողել: Այս կորստի պատճառով անորոշ է մնում Սարգիս աբեղայի ճանապարհորդութեան այս հատուածի ուղեգիծը: Վենետիկից նա է նստում, բայց որտեղ է ափ իջնում՝ չգիտենք: Շարունակութեան մէջ յիշատակուած առաջին աշխարհագրական անունը Զողուն է, որ գտնւում է Թեքիրդաղից շուրջ 60կմ հիւսիս-արեւելք՝ ծովից հեռու: Պէտք է ենթադրել ուստի, որ մեր ուղեգիրը ճանապարհի այս հատուածի գէթ մի մասը կտրել է հետիոտն՝ ծանօթանալով Թուրքիայի եւրոպական մասի որոշ շրջանների հետ:

27. Սա ուշագրաւ գրանցում է Սպանական ծովուժի «Անպարտելի արմադա» կոչուող նաւատորմիղի Անգլիա կատարած անյաջող արշաւանքի, փոթորկի տակ ընկնելու եւ կործանման մասին: Սարգիս աբեղան Սպանիայում թափառել է ողբերգական այդ դէպքից (1588 թ.) շուրջ 2 տարի յետոյ: Նաւերի թիւը (130) ճիշտ է տրուած, իսկ անձնակազմինը (80,000) չափազանցուած է: Ըստ ստոյգ տուեալների՝ «Անպարտելի արմադային» սպասարկում էին 8 հազար նաւաստի եւ 19 հազար զինուոր:

28. Դունայ կամ Դանուբ գետն է:

29. Միջնադարեան հայ հեղինակներն այսպէս (Պուղտանա կամ Պողտանաց երկիր) էին անուանում Մոլդովան:

30. Դնեստր գետն է, որի աջափնեայ տարածութիւններն այս ժամանակաշրջանում պատկանում էին Մոլդովային (Պուղտանաց երկիր), իսկ ձախափնեայ շրջանները՝ Լեհաստանին (Սարգիս աբեղան ուրիշ շատ հայ հեղինակների նման, Լեհաստանը Իլախաց աշխարհ է կոչում):

31. Այս գողտրիկ հայրենը, որ իր հոգեկան վիճակին համապատասխան ընտրել է իր գիտցած գուսանական-ժողովրդական երգերի միջից ու գրանցել մեր ուղեգիրը, անծանօթ է: Մ. Աբեղեանին յայտնի է գրեթէ նոյն («Ղարիպ եմ ու խիստ լալի // Յայս օտար երկիրս որ եկի») սկսուածքով մի հայրեն, որի միւս տողերը միանգամայն տարբեր են (տե՛ս «Գուսանական-ժողովրդական տաղեր», Երեւան, 1940, էջ 199):

«ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԳԻՍ ԱԲԵՂԱՅԻ»-ի ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

էջ 306

5 Զ ցաւարար, Զ կա *փխ* կու: 8 Զ երըխտաւորացն: *Այս բառը ձեռագրում գրուած է տարաձեւ աղաւաղումներով: Բնագրում տալիս ենք ուղիղ ձեւը՝ տողատակում համապատասխան նշում կատարելով:* 15 Զ եկեղեցին: *Շատ յաճախ այս բառը որոշեալ յօդով (եկեղեցին) է գրւում ուղղական հոլովաձեւի դէպքում: Ուղղում ենք՝ տողատակում համապատասխան նշում կատարելով:* 16 Զ երքեւոն. *ուղղում ենք* երգեհոն՝ *հաշուի առնելով Մ. Երզնկացու բնագիրը:* 19 Զ մոտտան. *ուղղում ենք ըստ իմաստի* մոյտան՝ հրապարակ: 21 Զ եւ Բ մեծ տուն մէ կանկեցուցած. *ուղղում ենք ըստ Բզմ. Տղկ.-ի:* 34 Զ «յարեւելից դիհն»-ի *փխ* Մ. Երզնկացին ունի՝ եւ ի Հռոմայ յարեւմտից դեհն: 35 Զ թարպասին: 38 Սրբ. որ սուրբ Յովաննոյ գլուխն *փխ* Զ որ երկուսին գլուխն:

էջ 307

1 Սրբ. մարմնով *փխ* Զ մարմին: Զ ակռարկկանդացուն: 2 Զ եկեղեցին է Զ *չիք* շինած (աւելացրել է սրբագրողը): 3 Զ եկեղեցինն: 4 Զ եկղեցին: Զ սրբոցս: 5 Զ եկեղեցին: 6 Զ գլխայոր: 7 Զ Օվ կարէ: 8 Զ քաղքնին: 9 Զ հետս զրուցեց, հարցաւ բառերն աւելացուած են սրբագրողի ձեռագրով: 11 Սրբ. ելայ գնացի: 14 Զ Ըոզին գետովն ուղղում ենք Ըոին (իմա՝ Հռենոս) ըստ Մ. Երզնկացու: 15 Զ Պազլ (Բազէլ) քաղաքի անունը բացակայում է. լրացնում ենք Մ. Երզնկացուց: 17 Զ քաղաքաւ ի (20) ալ անցայ: 19 Բզմ. Ֆռիբուրխ, Տղկ. Ֆրիբուրխ, անտարակոյս Բադենի Ֆրեյբուրգ քաղաքն է: 20 Զ զմեզ մեծ հարկով հարկեցին զմեզ: 20-21 Սրբ. արի ելայ գնացի: 21 Զ Տրապուխ, Բզմ. Ստրազբուխ, Տղկ. Ստրազբուրխ, Բզմ. Կապլ, Տղկ. Կապլեր (իմա՝ Կոբլենց): 23 Զ Կալայ. ճիշտ են Բզմ. Կալոնիայ եւ Տղկ. Կոլօնիայ, որ Colonia (Քեօլն) քաղաքն է, Զ տուն է ասին: 26 Զ եկեղեցին, Զ գեղեցիք: 27 Զ սնտկօվ, Զ եկեղեցին: 29-30 Զ աստուածածինն գիրկն է դրած եւ տէրն մեր Յիսուս Քրիստոս (աղճատուած է): 30 Զ Սրբ. մի *փխ* մն, Զ ակներօվ եւ մարգարտօվ: 31 Զ քար *փխ* կար: 32 Զ ոսկի է: 33 Զ բրօվ: 36 Բզմ. գերեզման *փխ* վարակուր: 37 Զ եկեղեցինն Զ վերայ է: (7) *փխ* վերայ է: 38-39 Զ հանաց ոսկօվ զարդարած: 40 Բզմ. ճամով, Տղկ. ճամբով, Զ ճարպօվ: 42 Զ եղկեցին:



ՍԱՐԳԻՍ ԱԲԵՂԱՅԻ
ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԵԳԻԾԸ
(1587-1592 թթ.)
Կազմեց Լ. Խաչիկյանը
Գծագրեց Գ. Ճանճապանյանը
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Սարգիս Աբեղայի երթուղին
երթուղու ենթադրյալ հատվածները
London
Anvers
St. Omer
Aachen
Colonia
Coblenz
Paris
St. Dizier
Troyes
Strasburg
Freiburg
Dijon
Basel
Konstanz
Angers
Amboise
Orleans
Nantes
Tours
Blois
Lyon
Marseille
Finisterre
Padron
Santiago
Pontevedra
Tuy
Caminha
Villa Nova
Valença
Braga
Villa do Conde
Porto
Coimbra
Santarem
Lisboa
Ayamonte
Sevilla
Carmona
Marchena
O Suna
Antequera
Malaga
Ecija
Cordoba
Jaen
Alcala
Archidona
Granada
Santafe
Villafranca
Astorga
Leon
Benavente
Burgos
Medina de Rioseco
Valadolid
Zamora
Salamanca
Medina del Campo
Bilbao
Sarogossa
Lerida
Guadalajara
Alcala de Henares
Madrid
Toledo
Talavera
Guadalup
Barcelona
Tortosa
Valencia
Menorca
Mallorca
Milano
Pavia
Genova
Verona
Vicenza
Cremona
Padova
Ferrara
Bologna
Revigne
Zara
Florenza
Siena
Ancona
Montefiascone
Viterbo
Roma
Neapel
Paola
Faro
Sicilia
Kephallinia

էջ 308

1 Զ եկեղեցին: 3 Զ ապայ: 6 Զ եկեղեցինն, Զ ոսկօվ: 7 Զ սոյն *փխ* սիւն, Զ օսկուծ, Զ ոսկօվ: 8 Տղկ. ոսկէզօծ, Զ ոսկեւզոցն, Սրբ. ոսկէզոց: 9 Սրբ. կեցայ: 10 Սրբ. եղայ, Սրբ. խնդրեցի: 11 Զ էրէխտայորացն: 12 Սրբ. ելայ գնացի... անցայ, հասայ, Զ Ովնես *փխ* Յունվէս, իմա՝ Անվերս (Ֆրանս. Anvers Ֆլամդր. Antwerpen): 13 Սրբ. կեցայ, Զ անդ Դ (4) շաբաթ մի աղաւաղուած է. կամ պէտք է լինի «անդ շաբաթ մի» կամ՝ «անդ Դ (4) շաբաթ», Զ անտ *փխ* անդ: 14 Զ Քրիստոսի ամէնայզօր: 16 Սրբ. արժանացայ, Սրբ. խնդրեցի: 17 Զ էրղտուորացն: 20Զ եղկեցին, Սրբ. կեցայ... ելայ, գնացայ: 22 Զ սորվեցաք: 27 Զ իպիսկապոսաց: 28 Զ խիստ գերեզմանայտուն է, Զ գեղեցիք, Զ եղեկեցի: 29 Զ ցախ թիհն: 30 Զ այլ մեծ ծօվ այլ կայ, այլ մեծն ձուկն կայ (Սրբագրողը ջնջել է ծով այլ կայ բառերը): 32 Զ եղկիցի, Սրբ. եկեղիցի *փխ* եկեղեցի: 34 Զ Սրբ. մի *փխ* մն: 35 Զ մեծն, Սրբ. մեծ: 37 Զ աթոռօվ, ոսկօվ: 38 Զ ցախ կանգնել է: 39 Զ սոյն *փխ* սիւնն, Զ գանեցին, Սրբ. գապեցին, Մ. Երզնկ. կապեցին, Զ ցախ: 42 Զ սուրբք եւ ամ. *փխ* ամենայն սուրբք, Սրբ. կշիռ է:

էջ 309

1 Զ ցախ դիհն քիչ: 2 Զ զննիլելին: 7 Բզմ. եւ կանգնել են մարդու պէս ի բոլորին. Տղկ. եւ կանկներ են մարդու պէս: 8 Զ ոսկօվ, Զ զուզգունօվ: 9 Զ ցախ: 10 Զ լուսայմուտերն մեծութիւն Ա քան ի գալ մի էր, Բզմ. լուսամտերն բոլոր ամէն մէկ քան ի կալ մի, Տղկ. եւ այլ Գ (2) լուսամուտի բոլորն ամէն մէկ մէկ քան ի կալ մ'է, Զ ցախ թին: 11 Զ գիստայփորն: 12 Զ օվ, Զ եւ զքաղքին: 13 Զ ջի ելել, Սրբ. ջի ենել *փխ* չի ելնել, Զ եղկեցին: 15 Զ դպրաց տուն, Սրբ. դպրայտուն, Զ հասապհանայ, Սրբ. խասսայ հանայ: 17 Զ եկեղեցինն: 18 Զ մարդօվ: 19 Զ ջի բացին, Սրբ. մնացի: 21 Սրբ. ելայ գնացի հասայ: 23 Սրբ. մտայ, Սրբ. հասայ: 26 Սրբ. երկրպագեցի: 26-27 Սրբ. խնդրեցի անկից ելայ գնացի հասայ: 27 Զ օր *փխ* որ: 27-28 Սրբ. ուխտ արի, ելայ գնացի հասայ: 29 Սրբ. կասին վանք մի (է), այնոր մէջն է, Սրբ. երկրպագեցի: 30 Զ տեսայնք, Սրբ. տեսի, Զ եկեղեցին կայր: 31 Զ գեցաք, Սրբ. գեցայ եւ ելայ գնացի հասայ, Զ եկեղեցին: 33 Զ եկեղեցինն: 34 Զ Սիմանզաս, կարելի է վերծանել նաեւ Տիմանզաս: 35 Զ եղկեցին: 36 Զ տեսնեսոյ *փխ* տեսնոյ: 38 Զ ուխնին:

էջ 310

4 Զ եւ Ա զանկակն: 7 Զ չի քայր *փխ* չի կայ: 12 Սրբ. մինչեւ որ յուսայ (Զ *չիք* մինչեւ): 16 Զ եկեղեցի մն կար: 19 Զ եկեղեցին: 23 Սրբ. քաղաք ալ անցա (Զ *չիք* անցայ): 24 Զ եկեղեցին, Զ եկեղեցին մն, Զ կաս *փխ* կայ: 27 Զ որ գտաւ: 32 Զ կու մատնրի: 36 Զ եղկեցին, Զ կայ *փխ* գայ: 38 Զ նաւարար *փխ* նաւավար: 39 Սրբ. ելայ գնացի, Զ եղկեցին: 41 Զ Պլեչ, Սրբ. Պլեւս:

էջ 311

1 Զ եղկեցին: 2 Զ մեծ եղկեցին: 7 Զ շատ եղկեցիք կայ մեծ եղկեցին մի կայ: 15 Զ եկեղեցին: 17 Սրբ. Պարսալոն, Զ Պարզալո: 22 Սրբ. նաւայվարին, Զ նաւչուն: 23 Զ չի գայ, Զ մարդն իմնն է: 24 Զ չի գայ: 25 Զ իմ *փխ* եմ: 31 Զ նաւաւար, Զ իմ ընկերն էի, Սրբ. իմ ընկերներովն էի: 33 Զ եկեղեցին:

էջ 312

3 Զ օվ: 5 Զ եկեղեցին: 11 Զ Սավոյն:

ՅԱԿՈԲ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ԿՏԱԿԸ*

1966 թ. յունուար-մարտ ամիսներին Յորդանանում եւ Լիբանանում գիտական շրջագայութիւն կատարելիս ծանօթացանք Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան ու Զմմառի Հայոց վանքի ձեռագրատներում պահուող հայերէն գրչագրերի հարուստ հաւաքածուներին: Այդ հաստատութիւնների վարիչներն ամէն դիւրութիւն ստեղծեցին մեզ համար համեմատաբար կարճ ժամանակամիջոցում մեզ հետաքրքրող ձեռագրերից զգալի քանակութեամբ ընդօրինակութիւններ ու միկրոպատճէններ կատարելու, եւ մենք վերադարձանք գիտական գործուղումից՝ բերելով հայ միջնադարեան մատենագրութեան տարբեր բնագաւառներին վերաբերող ուշագրաւ նիւթեր, որոնք ըստ մեծի մասի օգտագործուելու եւ հրատարակուելու են համապատասխան մասնագէտների կողմից մեր գիտական պարբերականներում եւ առանձին գիտական աշխատութիւնների մէջ:

*Բերած նիւթերի շարքում իր բովանդակութեամբ կարեւոր նշանակութիւն ունի Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսի շրջաբերական մի կոնդակը՝ իր կողմից «Կտակ» կոչուած, որի միակ ընդօրինակութիւնը պահպանուել է Երուսաղէմի մատենադարանի N 2864 ձեռագրում**:*

Մի քանի խօսք այդ ուշագրաւ փաստաթղթի նշանակութեան ու գրութեան հանգամանքների մասին:

***

Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսը բեղմնաւոր իր գործունէութեամբ առանձնայատուկ տեղ է գրաւում XVII դարի Էջմիածնի կաթողիկոսների շարքում: 1655 թ. ապրիլի 8-ին օծուելով Ամենայն Հայոց կաթողիկոս եւ աւելի քան 25 տարի գահակալելով (մահացել է 1680 թ. օգոստոսի 2-ին Կ. Պոլսում)՝ նա առաւել չափով, քան իր գործունեայ նախորդները՝ Մովսէս Տաթեւացին եւ Փիլիպպոս Աղբակեցին, ծրագրուած գործունէութիւն ծաւալեց Էջմիածնի վանքի հիմքերն ամրապնդելու, նոր կալուածքներ ձեռք բերելու, ջրանցքներ ու ջրաւազաններ, ինչպէս նաեւ վանական ու տնտեսական շէնքեր կառուցելու գծով[1]: Պատմագիտական նորագոյն ուսումնասիրութիւններում դրուատական էջեր են գրւում Յակոբ Ջուղայեցու մասին՝ համարելով նրան նաեւ հայ ազատագրական շարժման առաջնորդ: Նրա գործունէութեան այս բնագաւառը լուսաբանելու համար մէջբերուող փաստագրերը կարօտ են մանրակրկիտ քննութեան. սակայն ինչ արդիւնքներ էլ ստացուեն այդ քննութիւնից, Յակոբ Ջուղայեցին անտարակոյս չի զիջի իր դիրքերը՝ որպէս մի գործիչ, որ, Մ. Օրմանեանի խօսքերով ասած, «իր մտադրութիւնը կը սեւեռէ ոչ միայն կրօնական եւ կրթական բարեկարգութեանց վրայ, այլեւ ուշադրութիւն կդարձնէ ազգին ապագային վրայ. եւ անոր կենցաղական ու քաղաքական վիճակն ալ իր ջանքերուն առարկայ կ'ընէ եւ գաւառին հովանաւորութիւններով ու նիւթական օգնութիւններով կը խորհի ազգին անկեալ կացութիւնը բարձրացնել եւ արկա-

* «Պատմա-բանասիրական հանդէս», 1966, N 4, էջ 173-186

** Պարտք ենք համարում խորին շնորհակալութիւն յայտնել անուանի բանասէր Նորայր եպիսկոպոս Պողարեանին, որը սիրալիր կերպով մեր ուշադրութիւնը սեւեռեց այդ ձեռագրի վրայ:

1 **Սիմէոն Երեւանցի**, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 104-105, 197-200 «Զաքարիա սարկաւագի Պատմագրութիւն», հտ. երկրորդ, 1870, էջ 62, 91

նեալ վիճակը երջանկացնել»[1]:

Յակոբ Ջուղայեցու «Կտակը» (կոչւում է նաեւ «Գիր օրհնութեան եւ նամակ պահպանութեան») մի կարեւոր աղբիւր է, որ լոյս է սփռում ոչ միայն Յակոբ Ջուղայեցու արդիւնաշատ գործունէութեան տարբեր կողմերի վրայ, այլեւ հնարաւորութիւն է ընձեռում ծանօթանալու Ամենայն Հայոց կաթողիկոսութեան տնտեսական ու քաղաքական դիրքերն ամրապնդելու նպատակով լուսամիտ կաթողիկոսի մշակած արմատական բարեփոխումներ կատարելու ծրագրերի հետ:

Իր «Կտակը» կամ շրջաբերական կոնդակը Յակոբ Ջուղայեցին հասցէագրել է «ընդ ոլորտս տիեզերաց» «ցիր ու ցան եղեալ» հայ ժողովրդի հոգեւոր ու աշխարհիկ պետերին:

Թուացիկ մի ակնարկ նետելով Հայոց պատմութեան տարբեր շրջանների վրայ ու համառօտակի անդրադառնալով Արշակունեաց, Բագրատունեաց ու Ռուբինեանց տիրապետութեան շրջանների անցուդարձերին՝ Ջուղայեցին յանգում է այն եզրակացութեան, որ Հայ եկեղեցու տնտեսական բարգաւաճ վիճակի ու նիւթական բարեկեցութեան յուսալի պատուարը միշտ էլ եղել է աշխարհիկ իշխանութիւնը: «Որպէս մարմինն է կառավարիչ հոգոյն, եւ հոգին մարմնովն կատարէ զկամս Աստուծոյ եւ թողութիւն մեղաց եւ զկատարումն ամենայն բարեկարգութեանց, նոյնպէս եւ հոգեւորական գործ եւ եկեղեցական կարգ եւ սահման՝ մարմնաւոր իշխանութեամբ յառաջանայ»,- գրում է նա:

Ջուղայեցին յիշում է երանելի այն ժամանակները, երբ Բագրատունի թագաւորների բարեգործութեամբ Հայաստանում կառուցուեցին բազմաթիւ վանքեր ու եկեղեցիներ, երբ «ոչ էր պակաս տուն Հայրապետանոցի, քան զտուն թագաւորացն»: Սակայն նա ապրում էր մի ժամանակաշրջանում, երբ երկու մասի բզկտուած Հայաստանը հեծում էր թուրք եւ պարսիկ տիրապետողների ծանր լծի տակ. չկային հայ թագաւորներ ու իշխաններ, որոնց հովանու ներքոյ բարգաւաճ վիճակ ստեղծուէր Հայ եկեղեցու համար:

Վշտալի ու ծանր այս պայմաններում «ի ներքոյ իշխանութեան տաճկաց երբեմն յեշտութեամբ, երբեմն նեղութեամբ, երբեմն հարստութեամբ եւ երբեմն աղքատութեամբ եւ այսպէս փոփոխմամբ» են անցկացրել իրենց օրերը Ամենայն Հայոց կաթողիկոսները, որոնց մէջ եղել են նաեւ ապիկար ու ագէտ մարդիկ: Իր «Կտակի» մի զգալի մասը Ջուղայեցին նուիրում է XVII դարի սկզբներին գահակալած Դաւիթ, Մելքիսէթ եւ Սահակ կաթողիկոսներին, թուարկում է նրանց վատշուէր գործերը՝ այդ մասին հաղորդելով նաեւ ուշագրաւ նոր տեղեկութիւններ: Այնուհետեւ նա գովասանական պատմութիւնն է հիւսում իրեն նախորդող Մովսէս ու Փիլիպպոս կաթողիկոսների, յայտնում է, որ Մովսէսը «նորոգեաց սուրբ աթոռն յամենայն դիմաց... եթէ հոգեւոր կարգօք՝ վարդապետօք, դպրատանօք եւ աշակերտեալ մանկտօք, սուրբ եկեղեցուն բազմազան զարդիւք եւ սրբութեան անօթիւք, նոյնպէս մարմնաւորօք, ընչիւք եւ ապրանօք, վարօք եւ վաստակօք»:

Շատ աւելի մանրամասնօրէն Ջուղայեցին շարադրում է իր գործունէութեան դրուագները որպէս Փիլիպպոս կաթողիկոսի աթոռակալ, իսկ այնուհետեւ՝ որպէս Ամենայն Հայոց կաթողիկոս: Սիմէոն Երեւանցին «Ջամբռում» ու Զաքարիա Քանաքեռցին իր «Պատմութեան» մէջ մանրամասն տուեալներ են գրանցել Էջմիածնի վանքում եւ այլ վայրերում Յակոբ Ջուղայեցու կատարած շինարարական ձեռնարկների, Մայր Աթոռի կալուածքների

1 **Մ. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Բ, Գ գիրք, Պէյրութ, 1960, էջ 2618-2619

ընդարձակելու եւ գործունէութեան այլ կողմերի մասին: Ջուղայեցին, սակայն, լրացումներ է կատարում. «Եւ յորժամ,- գրում է նա,- Շահ-Սեֆի թագաւորն եկն ի վերայ Երեւանայ բերդին՝ Յօշականայ մէջին Բ (2) դանկ եւ կէսն ծախեալ էին տեառն Փիլիպպոսին եւ դանկ ու կէսն գրաւեցեալ. ի ժամանակս տեառն Փիլիպպոսի Աղջուց վանուց մուլքն ես էի գնեալ, Ծոփանիսայ մուլքն եւ Սօլաքայ Գ (3) դանկն... Յօշականայ գրաւն եւ մնացեալն այլ գնեցի»: Այլուստ յայտնի չէ Աղջուց վանք, Ծաղանիս (Բիւրականի մօտ) եւ Սոլաք (Կոտայքում) գիւղերի մուլքը XVII դարում Էջմիածնի վանքին պատկանելու փաստը: Շատ աւելի կարեւոր է Վաղարշապատ գիւղի մուլքը Երեւանի խաների կողմից բռնագրաւուած լինելու եւ մեծ ջանքերի շնորհիւ շահական հրովարտակով կրկին Էջմիածնի վրայ հաստատուելու պատմութիւնը, որ շարադրում է իր «Կտակում» Յակոբ Ջուղայեցին: «Բ (2) տարի,- գրում է նա,- բազում աշխատութեամբ դեգերեցայ ի դրունս մեծամեծաց, մինչ Տէր գթացաւ եւ քաղցրացոյց զսիրտ թագաւորին, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին վերստին շնորհեաց սուրբ աթոռոյն»: «Կտակի» մէջ տուեալներ կան նաեւ անշարժ այլ կալուածքներ ձեռք բերելու եւ Էջմիածնի տնտեսութեան բարգաւաճման նպատակով ձեռնարկուած շինարարական աշխատանքների մասին. «Գեղի մուլք եւ այգիք վախմ եմ հաստատեալ սուրբ աթոռոյն, նոյնպէս եւ այլոց մուլք եւ այգիք եմ գնեալ, բաղանիք եմ վախմ ճարեալ, դրամ բազում եմ խարճեալ եւ ջուր բերեալ, որ այլեւայլ անուն առեն. հայոց լեզուաւն աճակուղայ (իմա՝ ադուգայ), թուրքի լեզուաւն՝ քարեզ, իսկ պարսիցն՝ ղանաթ. այն ջրոյն ներքեւն ծովակ եմ արարեալ, ի նմանէ եւս գոյ վաստակ»,- գրում է Ջուղայեցին[1]:

«Կտակի» բուն բովանդակութիւնը բացայայտւում է ընդարձակ այս նախաբանից յետոյ, որ գրուած է 19 ձեռագիր էջից բաղկացած փաստաթղթի 13 էջը: Էջմիածնի վանական տնտեսութեան եւ կաթողիկոսական աթոռի համար համեմատաբար բարւոք վիճակ ստեղծելու նպատակով իր եւ իր նախորդների կատարած աշխատանքը ներկայացնելուց յետոյ Յակոբ Ջուղայեցին ուղղակի յայտարարում է. «Եթէ Սուրբ Էջմիածնայ գէլուրի (իմա՝ հասոյթի) եւ դրամի հրամանն ի ձեռն սեւագլխի եղնի, փոքր ինչ ժամանակաց յետոյ սուրբ աթոռն աւեր տեսէք»:

Տնտեսական կայուն եւ բարւոք վիճակ ստեղծելու մտահոգութեամբ Ջուղայեցին առաջարկում է սահմանափակել կաթողիկոսի իրաւունքները եւ բարեկարգել աթոռի տնտեսութեան վարչութիւնը՝ ստեղծելով մի նոր մարմին՝ «դղլվաթաւոր երեսփոխանաց» գլխաւորութեամբ:

Դիմելով հայ ժողովրդի հոգեւոր եւ մարմնաւոր առաջնորդներին՝ Ջուղայեցին աղաչում է իրագործել իր կտակը եւ այսուհետեւ կաթողիկոս օծելիս ճշտել նրա իրաւունքներն ու պարտականութիւնները հետեւեալ կերպ. կաթողիկոսն ինքնագլուխ իրաւունք պէտք է ունենայ տնօրինելու նուիրակութիւնների եւ այլ դրամական հասոյթների ընդհանուր գումարի մէկ հինգերորդ մասը միայն, իսկ անշարժ կալուածքներից (մլքերից) ստացուող եկամուտի՝ մէկ-տասներորդը: Միւս՝ մեծ մասը Մայր Աթոռի անկապտելի ստացուածքն է համարուելու եւ տնօրինուելու է նոր ստեղծուելիք վարչութեան կողմից, որի կազմում լինելու են «գործօքն պարկեշտ, ինքն համեստ եւ մարդաշահ» մի աշխարհական՝ «երեսփոխան», նրա «խոստովանահայրը»՝ մի հոգեւորական, եւ մի «դաւթար գրող», այսինքն՝ հաշուապահ: «Դրամի

1 Յակոբ Ջուղայեցու կառուցել տուած քանքանների («գետնափոր ջուր») եւ ջրամբարների մասին մանրամասն տեղեկութիւններ է հաղորդում Ս. Երեւանցին իր մեծարժէք «Ջամբռում» (տե՛ս էջ 197-200):

պահելն, աւելցնելն եւ շահեցուցանելն ի ձեռն երեսփոխանին է», նրա ձեռներէցութեամբ ու գլխաւորութեամբ աթոռի հասոյթները պէտք է օգտագործուեն նոր կալուածքներ ձեռք բերելու, շինարարական օգտակար նոր գործեր կատարելու եւ այլ նպատակներով:

Պարզ ու որոշ պէտք է լինեն նաեւ այս «երեսփոխան դղլվաթաւորի» իրաւունքները. նա «զինչ որ առնէ՝ գիտութեամբ կաթողիկոսին լինի, իսկ թէ կաթողիկոսն այլ տեղ լինի գնացեալ՝ գիտութեամբ աթոռակալին եղնի, զի ծածուկ բան չանէ»:

Տարին մէկ անգամ կաթողիկոսն իր խորհրդականների հետ միասին պէտք է ժողով գումարի՝ պարզելու համար, թէ «այս տարւոյս մուտն ինչ է եւ ելն ինչ է»:

Յակոբ Ջուղայեցու եկեղեցական բարենորոգութեան այս ծրագրում նախատեսուած են նաեւ այլ կէտեր: Կաթողիկոսը պարտաւորուած պէտք է լինի «գլխաւոր բան եւ գործ» լինելու դէպքում եկեղեցական ժողով գումարել հեղինակաւոր առաջնորդների եւ գիտուն վարդապետների մասնակցութեամբ: Էջմիածնում նոր կառուցումներ կատարելը կամ հին շինութիւններ քանդելը նոյնպէս կատարուելու է ժողովի կողմից հաւանութեան արժանանալուց յետոյ: Ի վերջոյ, կաթողիկոսները պարտաւոր են միշտ չէն պահել Աթոռի դպրատունը (հոգեւոր ճեմարանը) եւ դասատունը (դպրոցը), «զի այն է օգուտ օրինաց եւ հաւատոյ եւ պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ»:

Ստոյգ չգիտենք, թէ երբ է գրել իր «Կտակը» Յակոբ Ջուղայեցին: Մի հատուածում նա յայտնում է, որ բարենորոգութիւնների իր ծրագրի մասին նա առիթ է ունեցել գրուցելու Սպահանի (Նոր Ջուղայի) «դղլվաթաւորաց» հետ «Կտակի» գրութիւնից 18 տարի առաջ:

Յայտնի է, որ Իրանի շահից իր կաթողիկոսութեան հաստատման հրովարտակը ստանալու, Վաղարշապատ գիւղը կրկին Էջմիածնին վերադարձնելու եւ ապահարկման այլ արտօնութիւններ ձեռք բերելու համար Ջուղայեցին կաթողիկոս օծուելուց յետոյ մեկնել է Սպահան եւ, ինչպէս ինքն է յայտնում կոնդակում, 2 տարի մնացել այնտեղ («Բ տարի բազում աշխատութեամբ դեգերեցայ ի դրունս մեծամեծաց»):

Մատենադարանի արխիւային բաժնում պահպանուել են Շահ-Աբբաս Բ-ի 2 հրովարտակները՝ տրուած Յակոբ կաթողիկոսին հիջրայի 1069 թ. Ջումադի II ամսի 24-ին, որ համապատասխանում է մեր թուարկութեան 1659 թ. մարտի 19-ին: Հրովարտակներից մէկում Յակոբ կաթողիկոսի անունով վերահաստատւում է Էջմիածնի մէկ գութանի ապահարկութիւնը (մուաֆութիւնը), որ տրուած է եղել Փիլիպպոս կաթողիկոսին, իսկ միւս հրովարտակով երկրի բոլոր նահանգներում անարգել երթեւեկութեան իրաւունք է շնորհւում Էջմիածնի նուիրակներին[1]: Ըստ այդմ, Յակոբ կաթողիկոսը Սպահանում իր գործերն աւարտել է 1659 թ. գարնանը եւ հաւանաբար նոյն ժամանակ էլ վերադարձել Էջմիածին. գիտենք արդէն, որ «Կտակը» գրուած է դրանից 18 տարի յետոյ, ուստի՝ 1677 թ.:

Այս տուեալը հաստատւում է նաեւ «Կտակի» մէջ առկայ կենսագրական բնոյթի մի քանի ակնարկներով:

Ասել ենք արդէն, որ Յակոբ Ջուղայեցուն յաջողուել է Վաղարշապատ գիւղը (որի մուլքը Թահմազ-ղուլի խանի թուրքերի կողմն անցնելուց յետոյ, որպէս տոյուխ (առճիկ), տրւում էր Երեւանի իրար յաջորդող 5 խաների) շահական հրովարտակով կրկին դարձնել Էջմիածնի աթոռի վակֆային կալուածք: Այս կապակցութեամբ նա գրում է. «Իսկ այժմս (այսինքն՝

1 Տե՛ս Մաշտոցի անուան Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթապանակ 1բ, վաւ. 104, 105:

«Կտակի» գրութեան ժամանակ) Ե (5) խան է նստել, շնորհօք Սուրբ Հոգւոյն հաստատ է (Վաղարշապատ գիւղը) սուրբ աթոռոյն»: Եւ իրօք, այդ տարիներին, այսինքն՝ 1659–1677 թթ. միջոցին, Երեւանում իշխել են հետեւեալ 5 խաները.

1) Նաջաֆ-ղուլի, որ խան է եղել մինչեւ 1663 թ.,

2) Աբաս-ղուլի՝ 1663–1666 թթ.,

3) Ալխաս-Միրզա (Սէֆի-ղուլի)՝ 1666–1674 թթ.,

4) Սարուխան-բէկ (ժամանակաւոր պաշտօնակատար)՝ 1674–1675 թթ.,

5) Ռուստամ խանի որդի Սէֆի-ղուլի խան՝ 1675-ի նոյեմբեր ամսից[1]:

Մի այլ կապակցութեամբ Յակոբ Ջուղայեցին յայտնում է, որ «անմարմին սատանայքն մտին Սահաթափոսի (Երեւանի նահանգի) սեւագլուխքն, եւ իւրեանքն եղեն մարմնաւոր սատանայ Երեւանայ խաներին, որ այնքան վիշտ եւ նեղութիւն կրեցաք ի ձեռաց Բ (2) խաներին»:

Այս երկու խաներից մէկը, անտարակոյս, Ալխաս-Միրզան է՝ Յակոբ կաթողիկոսի անձնական թշնամին[2], իսկ միւսը՝ Սէֆի-ղուլի խանը, որն Էջմիածնի պարտքերի վրայ նոր պարտքեր էր կուտակել եւ, երկիւղ կրելով կաթողիկոսից, որ կարող էր գնալ Սպահան ու բացայայտել խանի ապօրինի գործերը, արգելափակել էր նրան Երեւանում: 1677 թ. յունիսի 1-ին[3] նա «առանց գիտելոյ խանին՝ ելեալ գնաց ի Տփխիս քաղաք Վրաց, թէպէտ կարացէ ժողովել դրամս, զի օգնութիւն լիցի պարտուցն»[4]: Ահա հէնց այս օրերին էլ, երբ, իր իսկ խօսքերով, Ջուղայեցին «կիսամեռ հասակաւ» շրջում էր «երկրէ ի յերկիր եւ դռնէ ի դուռն... իբր մուրացիկ»,– գրուած պէտք է լինի մեզ հետաքրքրող փաստաթուղթը՝ հաւանաբար հէնց Տփխիս քաղաքում:

Յակոբ Ջուղայեցու «Կտակն» արժէքաւոր է ոչ միայն Մայր Աթոռի տնտեսական հիմքերն ամրապնդելու հեռանկարով մշակուած վարչական բարենորոգումների ծրագրով եւ XVII դարի քաղաքական ու եկեղեցական անցուդարձերի մասին ուշագրաւ տեղեկութիւններով: Այս նոր սկզբնաղբիւրն իր նպաստն է բերում նաեւ Հայ պատմագրութեան պատմութեանը: Պարզւում է, որ Ջուղայեցին ունեցել է նաեւ «Կաթողիկոսաց պատմութիւն» կոչուող մի աշխատութիւն, որի մէջ շարադրել է ոչ աւելի վաղ շրջանների, ապա, անտարակոյս, իր ապրած ժամանակի Հայ եկեղեցու ընդարձակ պատմութիւնը:

Սահակ կաթողիկոսի գործունէութեան դրուագները պատմելիս նա գրում է. «Շահն առաքեալ էր խոճայ Նազարին, եւ նա տուեալ զպատասխանին, որպէս որ գրեալ եմ ի մէջ Կաթողիկոսաց պատմութեանն», եւ այնուհետեւ՝ «Անդ (յերկիրն Օսմանցոց) եւս ոչ դադարեաց վասաշուէրն (Սահակ) իւր խարդախութենէն, որպէս գրեալ եմ լիապէս արարք նորա ի Պատմութիւն կաթուղիկոսացն»: Նոյն աշխատութեան մասին մէկ անգամ էլ ակնարկ է

1 Այս տուեալները հիմնականում քաղում ենք Զաքարիա Ագուլեցու աստուգապատում «Օրագրութիւնից» (Երեւան, 1938):

2 Խանի եւ կաթողիկոսի լարուած յարաբերութիւնների ու թշնամանքի մասին պերճախօս տուեալներ են գրանցուած Զաքարիա Քանաքեռցու Պատմութեան մէջ (տե՛ս «Զաքարիա Սարկաւագի Պատմագրութիւն», հտ. երկրորդ, 1870, էջ 77 եւ յետ.):

3 Զաքարիա Ագուլեցի, էջ 128

4 Զաքարիա Քանաքեռցի, հտ. Բ, էջ 91

տնում Մովսէս կաթողիկոսի մասին խօսելիս. «Նորոգեաց սուրբ աթոռն (Մովսէս) ի յամենայն դիմաց, որպէս գրեալ կայ ի Պատմութիւնն»:

Յակոբ Ջուղայեցու գրած «Պատմութեան» մասին վկայութիւն ունի նաեւ Երեմիա Քէօմուրճեանը բազմավաստակ կաթողիկոսի մահուան առիթով հիւսած իր «Ողբի» մէջ, ուր կան այսպիսի տողեր.

«Զպատմութիւնս գրեցեր,
Յիշատակ մեզ թողեր,
Զգանգատող աշխարհի ծանուցեր»[1]:

Ջուղայեցու «Կտակն» արժէքաւոր է նաեւ իր լեզուով, որ ժամանակի խօսակցական լեզուն է՝ գրաբարախառն աշխարհաբար: Նա, օրինակ, գրում է. «Եթէ իմ կամք այլ չեղնի՝ դուք բռնադատեցէք զիս, տարին քանի մի ղուռուշի մուլք գնենք, որ սուրբ աթոռս մնացական եղնի, յետակայից ժամանակաց լիցի օգուտ, ո՞վ գիտէ զինչ լինելոց է, եւ այլ բազում խօսք» եւ այլն եւ այլն (տե՛ս բնագիրը):

Ջուղայեցու լեզուն խառն է թուրքերէն ու պարսկերէն բառ-տերմիններով՝ տօլաթաւոր, ղապալայ, իճարայ, վախմ, ռաղամ, սիկել, արզուհալ, դաւթար, տօնլուխ, խարճ, դէլուր, քարեզ, ղանատ, զատ, իղրար, հաստ եւ այլն, սակայն հասկանալի են ու անկարօտ բացատրութեան:

***

Ստորեւ հրապարակում ենք Յակոբ Ջուղայեցու «Կտակը» ճիշտ այնպէս, ինչպէս ընդօրինակուած է Երուսաղէմի մատենադարանի N 2864 ձեռագրում, որ, ըստ հնագրական տուեալների, XVII դարի վերջերի կամ XVIII-ի սկզբների արտագրութիւն է (յիշատակարան չունի): Լուսանցքներում նշում ենք ձեռագրի էջահամարները:

1 Տե՛ս Աշոտ Յովհաննիսեան, Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, գիրք երկրորդ, Երեւան, 1959, էջ 220:

[ԿՏԱԿ ՅԱԿՈԲԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՋՈՒՂԱՅԵՑՒՈՅ]

1 // [Յիսուսի] Քրիստոսի նուաստ ծառայ Յակոբ կաթողիկոս Ամենայն Հայոց եւ
փոխանորդ սուրբ առաքելոցն Բարդուղիմէոսի եւ Թադէոսի, եւ աթոռակալ սրբոյն
Գրիգորի Հայաստանեայց Լուսաւորչի, եւ վերադիտող Վաղարշապատու աստուա-
ծաէջ սուրբ տեղոյն իջման Բանին Աստուծոյ, եւ խնամիչ սուրբ աթոռոյն տառապեալ
ազգիս, յորմէ հասցէ գիր օրհնութեան եւ նամակ պահպանութեան, շնորհք առաքելա-
կան եւ աստուածային բազմապատիկ օրհնութիւնն ի վերայ բոլոր եւ տառապեալ
ազգիս, որ մնացս հողմով ցիր եւ ցան եղեալ են ընդ ոլոր[տ]ս տիեզերաց:

Այլ եւ զեկուցումն լիցի լուսաւորեալ չարչարանօք սրբոյն Գրիգորի մերոյ
լուսաւորչին լուսածնունդ զաւակաց մօրն լուսոյ սուրբ Էջմիածնայ հոգեւոր եւ սիրելի
2 որդիք իմ՝ եպիսկոպոսք եւ վարդապետք, վանականք եւ անա//պատաւորք, քահա-
նայք եւ եկեղեցւոյ աստիճանաւորք, իշխանաշուք տօլվաթաւորք եւ երեսփոխանք,
քալանթար եւ մելիք, տանուտերք եւ, առհասարակ, աստուածասէր ժողովուրդք, զի
որպէս մարմինն է կառավարիչ հոգւոյն եւ հոգին մարմնոյն կատարէ զկամս Աստուծոյ
եւ թողութիւն մեղաց եւ զկատարումն ամենայն բարեգործութեանց, նոյնպէս է
հոգեւորական գործ եւ եկեղեցական կարգ եւ սահման՝ մարմնաւոր իշխանութեամբ
յառաջանայ: Ոչ միայն քրիստոնէից է այս, այլազգեաց եւ կռապաշտից եւս էր, զի
այնքան նահատակք, որ վասն սիրոյն Քրիստոսի նահատակեցան, կռապաշտք թագա-
ւորքն վասն իւրեանց օրինացն խափանման վրէժխնդիր եղեն: Իսկ մերոյս տառապեալ
ազգիս Գ (3) անգամ կանգնեալ եւ անկեալ է թագաւորութիւնն նախ՝ Արշակունեաց
թագաւորութիւնն, որ Գճ (300) ամաւ յառաջ էր, քան զգալուստ Փրկչին մերոյ. ի
ժամանակս կռապաշտութեանն բազում քաջութիւն եւ յաղթութիւն եւ երեւելի գործ
ցուցին, եւ այլ այլազգ թագաւորք հարկատու արարին: Իսկ յորժամ եկն լոյս
աշխարհս տէրն մեր Քրիստոս եւ աստուածաճանաչք եղեն, ի մէջ Արշակունի[ե]աց
թագաւորաց փոքր ինչ նշոյլ Աբգար թագաւորիցն երեւեցաւ, իսկ կատարելապէսն՝
3 սուրբն Տրդատ, որ քրիստոսական հաւատովն փայլէր իբրեւ զա//րեգակն, իսկ այլքն
ոչ արարին այնպէս գործ, որ յիշելոյ եւ գրելոյ լինէին արժան: Եւ յորժամ անկաւ
թագաւորութիւնն Արշակունեաց՝ սպարապետօք եւ մարզպանօք վարեցին զիշխա-
նութիւնն իւրեանց, խրատով հայրապետացն առնէին ԳճԼԱ (331) ամ, մինչ թագա-
ւորեաց մեծն Աշոտ Բագրատունին:

Իսկ Բագրատունիքն ի Հրէից են բերեալ երկիրս Հայոց. ի ժամանակս թագա-
ւորացն Հրէից երբեմն հարկս տային Բաբիլացւոցն եւ երբեմն ոչ: Քանիցս անգամ
եկին Բաբիլացիքն ի վերայ Հրէից եւ ոչ կարացին ըստ իւրեանց ախորժակացն առնուլ
վրէժ: Բաբիլացիքն յօգնութիւն խնդրեցին յազգէս Հայոց՝ գնալ ընդ բաբիլացւոցն
երկիրն Հրէաստանի, որ է Երուսաղէմ[1] եւ իւր շրջակայսն, այն պայմանով եդին ուխտ,
զի գերիքն Հայոց լիցի, ոսկի եւ արծաթն՝ Բաբիլացւոց: Թագաւորն Հայոց զլուխ
զօրացն կացոյց եւ սպարապետ Բագարատն, եւ բազում զօրօք գնացին երկիրն Հրէաս-
տանի, եւ դարձան մեծաւ յաղթութեամբ: Եւ բերեալ Բագարատ ՄՌ (200,000) գերի, եւ
բնակեցուցին ի յԱնի եւ իւր շրջակայքն, եւ եղէն թագադիր թագաւորացն

1 Ձեռագրում Երուսաղէմայ:

Արշակունեաց: Իսկ զկնի՝ ՅԼԶ թուին (Հայոց 887 թ.) թագաւորեաց Աշոտ Բագրա-
տունին, զկնի որդի նորա Սմբատ, եւ որդի նորա Աշոտն՝ կարգաւ մինչ ի Ժ (10) թագա-
4 ւոր Բագրատունեաց նստաւ ի յԱնի: Եւ ոչ էին սոքա նման թագաւորացն // Արշակու-
նեաց. բազում բարեգործութիւն յաւելին ազգիս Հայոց, եւ բազում վանորայք եւ անա-
պատք հաստատեցին, եւ բազում եկեղեցիս կառուցին. յիշատակ նոցա օրհնութեամբ
եղիցի, եւ տէր թողցէ զյանցանս նոցա: Որպէս ի գիրս պատմութեանց գրեալ է՝ ոչ էր
պակաս տուն հայրապետանոցի, քան զտուն թագաւորացն, զի ունէր Շ (500) գեւղ
մեծանիստ եւ Շ (500) հեծելազօրս, ԼԳ (33) եպիսկոպոսք եւ գիտնական վարդապետք,
[որ միշտ կային ի ծառայութիւն հայրապետին][1]: Վասն միջասահման գոլոյն սուրբ
Էջմիածնայ եւ էր անմարդաբնակ, զի պարսիկ[ք] զԹօփրախղալայն[2] ունէին եւ Հայք
զԱնեբերդ, կէս աւուր ճանապարհ է հեռի միմեանց:

Իսկ ի բառնալ թագաւորացն Բագրատունեացն ի յԱնոյ, որ ՃԾ (150) ամ վարեցին
զթագաւորութիւնն՝ յերկիրն Կիլիկոյ Ռուբենիքն ունէին մասն ինչ յերկրէն՝ բերդ եւ
գեղորայք: Սոքա սերեալք էին յազգէն Յարշակունեաց եւ Բագրատունէից, ՃԾ (150)
ամ իշխանութեամբ կային, մինչեւ ի մեծն Լեւոն, որ թագաւորեաց եւ տիրեաց բոլոր
տանն Կիլիկոյ: Եւ աթոռ թագաւորութեանն էր ի Սիս, մինչ ՃՀԸ (178) ամ թագաւորե-
ցին ի Սիս: Ի յայն ժամանակն ոչ էր Մըսր ի ձեռն Օսմանցոց, այլ յատուկ թագաւոր
գոյր, որ սուլթան ասէին: Մսրա սուլթանն բազում նաւօք յանկարծակի եկն ի վերայ
5 մեր թագաւորին, եւ մերայինքն էին անպատրաստ. ձերբակալ արար // զթագաւորն, եւ
զերկիրն քանդեալ եւ գերէվարեաց, եւ բարձաւ թագաւորութիւնն: Սոքա եւս էին
բարեբարոյ քրիստոսասէրք եւ երկիւղած յԱստուծոյ, յիշատակ նոցա օրհնութեամբ
եղիցի, տէր թողցէ զյանցանս նոցա: Իսկ ի բառնալ թագաւորութեան մերոյ ի Սըսայ,
զկնի ԽԵ (45) ամի, Օսմանցիքն առին Իստամպօլ:

Իսկ ի բառնալն թագաւորութեան Հայոց, այնուհետեւ ուր գոյր մեծ իշխան՝ անդ
մնայր կաթողիկոսն, մինչ որ յամենայն տեղիս տիրեցին մահմետականք: Եւ վարդա-
պետն Թումայ Մեծոփեցին արար ժողով եպիսկոպոսաց, վարդապետաց եւ գիտնական
արանց, նորոգեցին սուրբ Աթոռն, եւ անդ նստաւ կաթողիկոսն ի ներքոյ իշխանութեան
Տաճկաց, երբեմն հեշտութեամբ, երբեմն նեղութեամբ, երբեմն հարստութեամբ, եւ
երբեմն աղքատութեամբ, եւ այսպէս՝ փոփոխմամբ անցուցեալ են: Իսկ կաթողիկոսքն՝
ոմանք գիտունք եւ ոմանք անգէտք, մինչ ի յետին ժամանակս, որ մեք աչօք տեսաք՝
Դաւիթն եւ Մելքիսեթն՝ այր ագէտք եւ անտեղեակ ի սուրբ Գրոց: Բազում ժամանակ
էր, որ երկուքն ի միասին վարէին զկաթողիկոսութիւնն, եւ յետոյ Մելքիսեթն Ճ (100)
թուման զարալայ եդին ի վերայ սուրբ Էջմիածնայ, որ եւ իճարայ եւս ասեն, որ ինքն
միայն իշխեսցէ կաթողիկոսութեանն: Քանի մի ամ ետ Ճ (100) թուման, եւ յետոյ ոչ
6 կարացեալ տալ՝ եմուտ // Օսմանցոց երկիրն, եւ անտուստ ի Լէհ, եւ անդ հատ զրաւ
կենաց իւրոց:

Իսկ զկնի վախճանի Մելքիսեթ կաթողիկոսին եղբօրորդի կայր՝ Սահակ եպիսկո-
պոս, գնաց առ թագաւորն Շահ-Աբաս, թէ տուր ինձ զտեղի հօրեղբօրն իմոյ, եւ ես
վճարեցից զպարտքն, նոյնպէս ամէն տարոյ զՃ (100) թուման[ն], հաւ թագաւորէն

1 Փակագծերի մէջ առնուած հատուածը գրուած է լուսանցքում:

2 Ձեռագրում՝ զԹօփրախղալաճայն:

Հրաման եւ ըստ իւր արժանեացն նմանիցն եղեւ ձեռնադրեա[լ][1]: Տարի մի ի Սպահան
մնաց եւ ոչ ումեք գտաւ օգնութիւն, զի ամենեքեան պատճառեցին, թէ մեր մեծ
եղբարքն Ջուղայեցիք են, եւ յորժամ նոքա քեզ ընդունեն, մեք եւս քեզ ձեռնտու լինինք,
թէպէտ թագաւորին զեկուց, թէ խօճայ Նազարն եւ այլ Ջուղայեցիքն զիս չեն ընդու-
նել, չահն ասացեալ էր խօճայ Նազարին, եւ նա տուեալ զպատասխանին՝ որպէս որ
գրեալ եմ ի մէջ Կաթողիկոսաց պատմութեանն: Եւ ոչ այնու գտաւ իւր անկարգ
արարմանց դեղ, եկն երկիրս Հայաստանեայց տարի եւ երկու այսր եւ անդր, եւ ոչ
այնու գտաւ հնար. զինչ որ ժողովէր՝ իւրայոց եւ թագաւորի ծառայիցն լինէր
կարեացն բաւական: Հարցեալ էր զիտուն արանց, թէ որով հնարիւք կարեմ զերծանիլ
ի ձեռաց ծառայից թագաւորին, եւ նոքա ասացեալ են՝ որպէս արար հօրեղբայրն քո:
7 Ըստ նոցա խրատուն խոյս ետ // եւ եմուտ Օսմանցոց երկիրն: Անդ եւս ոչ դադարեաց
վատաշվէրն իւր խարդախութենէն, որպէս գրեալ եմ լիապէս արարք նորա ի Պատմու-
թիւն կաթողիկոսացն, ոչ լսելով զոլվաթուորացն, մինչ եղեւ ի Քրիստոսի սեւերես եւ
ուրացող Հաւատոյն:

Մինչ ի վախճան Շահ-Աբասին Է (7) տարոյ հարկն մնացեալ կայր ի վերայ սուրբ
Աթոռոյն: Իսկ երջանիկ սուրբ հայրն մեր Մովսէս հոգեւոր տէրն բազում աշխատու-
թեամբ եւ միջնորդութեամբ Ջուղայոյ եւ Երեւանայ զոլվաթուորացն եւ սուրբ Լուսա-
ւորիչին աղօթ[ի]ւքն ողորմածն Աստուած քաղցրացոյց զսիրտ Շահ-Սօֆի թագաւորին,
հանց մնացեալ հարկին եւ խափանեաց զեղեալ Ճ (100) թուման Մելքխեթին: Եւ
նորոգեաց սուրբ Աթոռն ի յամենայն դիմաց, որպէս գրեալ կա ի Պատմութիւնն. եթէ
հոգեւոր կարգօք՝ վարդապետօք, դպրատնօք եւ աշակերտեալ մանկտօք, սուրբ
եկեղեցուն բազմագուն զարդիւք եւ սրբութեան անօթիւք, նոյնպէս մարմնաւորօք՝
ընչիւք եւ ապրանօք, վարօք եւ վաստակօք: Ի յառաջին ալէտ կաթողիկոսաց եւ ոչ մի
ինչ է մնացեալ, սուրբ սեղանն փոքր է եղեալ եւ ոչ ըստ պատշաճին եւ արժանուն: Ի
յօրհնել զսեղանն ոչ է եղեալ խաչ մի ի սուրբ Աթոռն, որ ի ձեռն առնու եւ օրհնէ
զսեղանն, այլ ի յիւր վզի սուրբ նշանն է Մովսէս հոգեւոր տէրն ձեռին առեալ եւ
օրհնեալ զսեղանն:

8 Եւ մեղապարտս // յորժամ եկն ի սուրբ Աթոռն՝ Ա. փոքր գեղի չափով անօթ
չկայր ի սուրբ Աթոռն, զայս ամենայն վասն չքաւորութեան եւ աղքատ մնացեալ ի
յառաջին նստող կաթողիկոսացն գրեցի, նոյնպէս եւ մլքի կողմանէ՝ հողի եւ վաստա-
կից ոչ ինչ կայր եւ ոչ դրամ մի:

Իսկ զկնի տեառն Մովսէսի զինչ կիսակատար կայր ի շինուածոյ, եթէ եկեղեցւոյն
եւ թէ այլ շինուածք կայր՝ Փիլիպպոս հոգեւոր տէրն ի կատար հասոյց, եթէ հոգեւոր
պակասութիւն եւ թէ մարմնաւոր, զամենայն ելից զթերին: Սուրբ աջն Լուսաւորչին՝ որ
Շահ-Աբասն տարեալ էր Սպահան, սուրբ աջն խնդրեալ ի թագաւորէն եւ դարձոյց ի
սուրբ աթոռն: Սուրբ աթոռոյն զինչ վաստակ որ կայր՝ ոչ էր ազատ, նոյնպէս տեառն
Փիլիպպոսի արարեալ ազատ ի հարկից դրան թագաւորին:

Եւ յորժամ Շահ-Սօֆի թագաւորն եկն ի վերայ Երեւանայ բերդին, Յօշականայ
մլքին[2] Բ (2) դանկ եւ կէս ծախեալ էին տեառն Փիլիպպոսին եւ դանկ ու կէսն զրաւ

1 Լուսանցքում աւելացուած է. «Եւ ոմանք ասեն, թէ ի ճորեղբօրէն եղեւ ձեռնադրեալ»:

2 Լուսանցքում աւելացուած է. «Ի մեծ մեղութիւն էին անկեալ»:

եղեալ, ի ժամանակս տեառն Փիլիպպոսի Աղչուց վանուց մուլքն եւ էի գնեալ, Ծափա-
նիսոյ մուլքն եւ Սօլաքայ Գ (3) դանկն, զի մլքի կատարեալն Զ (6) դանգ է, Յօշակա-
նայ գրաւն եւ մնացեալն այլ գնեցի: Թէ Փիլիպպոս հոգեւոր տէրի գնեալն, թէ մեր
9 գնեալն տարէն ԲՃ (200) ղուռուշ ի նոցանէ վաստակ // լինէր սուրբ աթոռին:

Իսկ զկնի վախճանի տեառն Փիլիպպոսի ժողովեցի զվարդապետքն եւ զմիաբանս
եւ ասացի. Եղբարք եւ սիրելի որդիք իմ, Փիլիպպոս հոգեւոր տէրին ձեռն այսքան
դրամ եկն եւ գնաց, եւ այնքան դրամիցն քանի մի մուլք գնեցաք, որ տարին քանի մի
թուման սուրբ Աթոռոյս վաստակ է գալիս. դարձեալ, սիրելի որդիք, տարին այսքան
խարճ է գնում սուրբ Աթոռիս, եթէ այլազգաց, եթէ միաբանից, եւ եթէ եկող-գնացո-
ղաց: Եթէ իմ կամք այլ չեղնի՝ դուք բանադատեցէք զիս, տարին քանի մի ղուռուշի
մուլք գնենք, որ սուրբ աթոռոյս մնացական եղնի, յետակայից ժամանակաց լիցի
օգուտ, ո՞վ գիտէ զինչ լինելոց է, եւ այլ բազում խօսք:

Հոգեւոր սիրելի որդիք, մեղապարտս զինչ գրեմ վասն իմ, հրամայէ Սողոմոն.
«Գովեսցէ զքեզ ընկերն եւ մի քո բերան, օտարն եւ մի քո շրթունքն»: Սիրելիք, եթէ
գովելոյ եւ պարծանաց սակէ գրեմ զարարս, տէր Քրիստոս հատեալ է վճիռն, թէ. «Այն
իսկ է վարձք նոցա», իսկ եթէ սուտ գրեմ, նոյնպէս տէրն մեր Քրիստոս հրամայեաց.
«Որ սուտ խօսի, յիւրմէ անտի խօսի, զի հայր նորա սատանայ է»: Զի թէ սուտ խօսողն
որդի սատանայի է, իսկ որք սուտն թղթին արձանացուցանեն որքա՞ն պակաս են քան
10 որդի սատանային: Իսկ թէ վասն // օգտի սուրբ Աթոռոյն եւ յետակայից բարի օրինակ
լինելոյ, որ ամէնքն ըստ իւրեանց չափոյն ջանան, թերեւս նոքա եւս յաւելուն ինչք
սուրբ Աթոռոյն օգուտք: Իսկ գրելս ոչ է ինձ մեղք, գովեստ եւ պարծանք, այլ բարի
օրինակ յետակայիցն, եւ օգուտ սուրբ Աթոռոյն, եւ մեղապարտիս յիշատակ բարի
առաջի տեառն մերոյ Քրիստոսի վասն ջանացս իմման իւրոյ տեղւոյն: Սիրելի որդիք,
մի լիցի յաճախ գրելս ձեզ լսելն ծանծրութիւն, զի թէ կարճառօտ գրեմ ոչ լինի
պարզապէս իմացումն, վասն այն գրեմ փոքր ինչ յաճախ:

Հոգեւոր որդիք, բազում ժամանակ էր, որ սուրբ Էջմիածնայ գեղի մուլքն ի սուրբ
Էջմիածնայ ելած էր, այլ յառաջ վախմ է եղած, ձեռաց ի ձեռն անկանելով եկեալ է ի
ձեռն Ամիրգունայ խանին, զկնի նորա ի ձեռն որդւոյ իւրոյ Թամազ-ղուլի խանին: Եւ
յորժամ Թամազ-ղուլի խանն գնաց ընդ խոնթկարին, զինչս նորա թագաւորական տիրե-
ցին, նոյնպէս եւ մուլքն սուրբ Էջմիածնայ գեղին: Եւ իմ ապաւինեալ աղօթք սուրբ
Լուսաւորչին, միջնորդ ունելով սուրբ զԱստուածածինն առ միածին որդին իւր, զի
օգնեացէ մեղապարտիս, գնացի ի տեսն թագաւորին՝ Երկրորդ Շահ-Աբասին, յառաջ ի
տեսութիւն իւր եւ մեր կաթողիկոս նստելոյն, եւ նորոգեցաք ըաղամ եւ սիկկեն մեր:
11 Եւ զկնի այնորիկ ետու արդուհալ, թէ // էջմիածնայ գեղի մուլքն ժամանակաց-
ժամանակ սուրբ Էջմիածնայ վաղմ է, Ա. պատճառ ի մեր ձեռաց ելած է, ձեռաց ի ձեռն
անկանելով ի ձեռն Ամիրգունայ խանին, անկաւ ի ձեռն որդւոյն՝ Թամազ-ղուլի
խանին. եւ յորժամ նա գնաց օսմանլուն, ձգեալ են ի քո դաւթարն, խնդրեմք ի մեծու-
թենէ քումէ սուրբ Էջմիածնայ վաղմն այլվի շնորհես իւրն: Բ (2) տարի բազում
աշխատութեամբ դեգերեցայ ի դրունս մեծամեծաց, մինչ Տէր զթացաւ եւ քաղցրացոյց
զսիրտ թագաւորին, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին վերստին շնորհեաց
սուրբ Աթոռոյն, զի Ե (5) խանի տոնլուխ եւ տուած դաւթարով՝ Քալպաալի խանին,
Ձաղաթայ Մահմատ-ղուլի խանին, Քէխոստրով խանին, Հալայ-բէկի տղայ Մահմատ-

ղուլի խանին, եւ Նաջաֆ-ղուլի խանին: Ի գաւթարացն դուրս ձգել ետու եւ սուրբ
էջմիածնայ վերայ հաստատեցի: Իսկ այժմս Ե (5) խան է նստեալ, շնորհօք սուրբ
Հոգւոյն հաստատ է ի վերայ սուրբ Աթոռոյն:

Դարձեալ ծանիք սիրելի որդիք, բազում աղաչանօք, խրատով եւ քարոզելով եմ
ճարեալ ի բազմաց, Աստուած ձեզ յաջողումն պարգեւէ եւ ձեր ծնօղաց հոգին լուսա-
ւորէ, եւ երեւանցի խօճայ Յակոբջանին մեղացն թողութիւն շնորհէ եւ արքայութիւն
12 պարգեւէ, գեղի մուլք // եւ այգիք վախմ եմ հաստատեալ սուրբ Աթոռոյն, նոյնպէս եւ
այլոց մուլք եւ այգիք եմ գնեալ, բաղանիք եմ վախմ ճարեալ, դրամ բազում եմ
խարճեալ եւ ջուր բերեալ, որ այլեւայլ անուն ասեն՝ Հայոց լեզուաւն աճակուգայ,
Թուրքի լեզուաւն՝ քարեզ, իսկ Պարսիցն՝ ղանաթ. այն ջրոյն ներքեւն ծովակ եմ
արարեալ, ի նմանէ եւս քոյ վաստակ:

Զայսոսիկ վասն այն ծանուցանեմ սիրելի որդւոցս, զի ժամանակս դառնացեալ է
եւ ոսկրն սպառեալ, տուրք եւ ողորմութիւն պակասեալ: Զի յառաջն գրեցի, թէ Մովսէս
հոգեւոր տէրին ժամանակն մլքից զատ չգոյր, եւ Փիլիպպոս հոգեւոր տէրի ժամա-
նակն՝ փոքր ինչ: Սիրելի որդիք, նոցա ժամանակն քաղցր էր, ոսկրն ոչ էր սպառեալ,
տուրք եւ ողորմութիւն առատ էր: Իսկ ժամանակս այն ժամանակին ման չէ մնացեալ,
զի որքան վերայ հայիմք, տարի քան զտարի, ըստ հաճոյիցն Աստուծոյ գործ նուազում
է, մարգարէն Եսայիաս եւ այլ մարգարէք գրեն. «Աչք ձեր ի հեռաստանէ տեսցին եւ
զզուչացարուք յամենայնի»: Հոգեւոր որդիք, պարտիմք յամենայնի պատրաստ եւ
զգաստ լինիմք, չարն սատանայ մեզ թշնամի է, որ յամենայն կողմանց կամի մեզ
փորձութիւն յարուցանել, զի բարին խափանեսցէ եւ զիւր չարիքն յառաջեսցուսցէ. մեք
13 եւս պարտիմք յամենայնի զգաստ // եւ զգոյշ լինիլ, զի մի խաբեա առ ոտն կոխան
լինիմք: Դարձեալ, սրբազան առաքեալն Պօղոս հրամայէ. «Նախանձեցարուք շնոր-
հացն, որ լաւն են», զի թէպէտ մեք յետին աղքատութիւնն եմք հասեալ, պարտիմք
զխոնոց եւ իմաստնոց կարգ եւ սահմանն նայիլ եւ ի նոցանէ ուսանիլ: Զի փախն հաւ-
մայ, թեպէտ յամենայնի հրամայող է եւ ամենեքեան նմա հնազանդ եւ լսողք են, այլ
ոչ ունի իշխանութիւն ի վերայ Պետրոսի առաքելոյ գանձին եւ գանձարանին, այլ է ի
ձեռն երեսփոխանաց: Նոյնպէս պարտիմք եւ մեք մեր աղքատութեամբն նոցա կարգա-
ւորութենէն օրինակ առնումք, թերեւս զթասցի Տէր, բարի կարգ եւ սահման հաստա-
տեսցի ի մէջ տառապեալ ազգիս: Գիտեմ, զի ոմանք այլ եւ այլ ընդ վայր խօսին,
ասելով, թէ Մովսէս եւ Փիլիպպոս հոգեւոր տէրքն զայս ոչ սահմանեցին. բարւոք
բարբառին ըստ իւրոց արժանուն. որպէս որ յառաջն գրեցի Մովսէս հոգեւոր տէրի
ժամանակն զատ չկայր նորա [եւ Փիլիպպոս հոգեւոր տէրի ժամանակն Ժ (10) թուման
կայր–չկայր][1], նոքա ի՞նչ կարգ դնէին. իսկ այժմս, շնորհօք սուրբ Հոգւոյն, բազում է,
հարկիւ պարտիմ կարգ եւ սահման հաստատել, օրհնութեամբ եւ անիծիւք փակել:

Հոգեւոր որդիք, զայս ոչ եթէ նոր առնեմ, այլ ԺԸ (18) տարաւ յառաջ եմ ասացեալ
14 ի Զուղայոյ դօլվաթաւորացն, // եթէ սուրբ էջմիածնայ գէլուրի եւ դրամի հրամանն ի
ձեռն սեւագլխի եղնի, փոքր ինչ ժամանակաց յետոյ՝ սուրբ Աթոռն աւեր տեսէք. իսկ
եթէ ի ձեռն դօլվաթաւոր երեսփոխանաց լինի սուրբ Աթոռոյն դրամի հրամանն եւ
գէլուրն՝ մինչ ի գալուստ Քրիստոսի հաստատ գիտասջիք:

1 Փակագծերի մէջ առնուած հատուածն աւելացուած է լուսանցքում:

Խնդրեմ ի ձէնջ, սիրելի որդիք եւ աչացս լոյս եպիսկոպոսք, վարդապետք, քահա-
նայք եւ իշխանաւորք տօլվաթաւորք, մելիք եւ տանուտեարք, տէր առաջնորդէ, յերբ
կաթողիկոս լինիք օրհնելոյ, յառաջ զայս ձեռագիրս եւ իղրարս խնդրեսջէք, զինչ
գէլուր, որ սուրբ Աթոռոյն գայ, թէ նուիրակից, քարվանից, գանձանակից, խոսամանց
եւ կամ ձեռնադրեալ եպիսկոպոսաց եւ այլ ինչ կողմանց որ լինի, Ե (5) բաժնէն Ա (1)
կաթողիկոսին եղնի, եւ իմ ասացելոցս, թէ ճարովի իցէ եւ կամ գնովի, վախմ դնողից եւ
կամ Փիլիպպոս հոգեւոր տէրի ժամանակէն մնացելոցն՝ տասանորդն լիցի կաթողիկո-
սին, ի կամս իւր լիցին, զինչ եւ կամի՝ եկեղեցի շինէ, կարմունջ կապէ, աղքատի տայ,
եւ կամ կարօտելոցն բաշխէ, եւ թէ կամի՝ ի ջուրն ձգէ, ոչ ոք իշխանութիւն չունի
գէլուրին հնգեակն, որ իւր ժամանակն կուգայ, նոյնպէս եւ մեր ճարեցելոց, գնեցելոց
տասանորդին. հրամանն միայն կաթողիկոսին է, եւ ոչ այլ ումեք: Իսկ մերոց մնացելոց
15 ինն[1], սխարաթի // եւ գէլուրի մնացեալ չորսն, այն սուրբ Աթոռոյն է: Ուստից որ
լինի ընտրեն լաւ մարդ, որ վկայեալ լինի նորա լաւութեան եւ ճշմարտասիրութեան,
նոյնպէս գործօքն պարկեշտ, ինքն հաւատ եւ մարդաշահ, ի նորա ձեռն տան, եւ
կարգաւորացն Ա (1) նորա խոստովանահայր դնեն, եւ մի նմա դաւթար գրող դնեն, զի
առանց դաւթարի առեւտուր չեղնի: Իսկ թէ կաթողիկոսն ի սուրբ Աթոռն լինի, զինչ որ
առնէ՝ գիտութեամբ կաթողիկոսին լինի, իսկ թէ կաթողիկոսն այլ տեղ լինի գնացեալ՝
գիտութեամբ աթոռակալին եղնի, զի ծածուկ բան չանէ: Իսկ դրամին պահելն,
աւելցնելն եւ չահեցուցանելն՝ ի ձեռն երեսփոխանին է, որպէս օրէն է աշխարհի
զգրամն ամենքն կու ջանան յաւելցնել:

Դարձեալ, տարին Ա անգամ կաթողիկոսն եւ իւր խորհրդականքն նստին եւ ընդ
երեսփոխանին հաշւ տեսանեն եւ գիտենան, թէ այս տարւոյս մուտն ինչ է եւ ելն ինչ
է. ամենքն վերահասու եղնին եւ գրեն ի մեծ դաւթարն, բայց զինչ որ գայ, ուստից որ
լինի, Բ (2) դաւթար եղնի՝ Ա (1) առ երեսփոխանն եւ միւսն առ կաթողիկոսին յառաջա-
կան: Եւ յորժամ հաշիվ տեսանեն, ճշմարիտն այն է՝ Բ (2) ի մասին խօսին դաւթարքն:

Զայս եւս հարկ լիցի ի վերայ կաթողիկոսին, զինչ մեծ եւ գլխաւոր բան եւ գործ
16 // լինի՝ առանց ժողովի չանէ. եթէ մեծ գործ է՝ զամենայն երեւելի առաջնորդք եւ
գիտուն վարդապետք ժողովէ, եթէ միջակ գործ է՝ թղթով հեռակայիցն զեկուսցէ եւ
մօտակայքն ժողովէ, զայն բանն գլխաւորէ:

Դարձեալ, զինչ սուրբ Աթոռոյն հարկաւոր կարիք լինի՝ շինելոյն եւ կամ քակելոյ,
զայն եւս առանց ժողովի չառնեն. եւ յերբ հարկաւոր լինի եւ ժողովեալքն հաւանին՝
սուրբ Աթոռոյն դրամովն շինեն:

Դարձեալ, եթէ թշնամի յառնէ եւ կամ ոք չհնազանդի եւ ինքնագլուխ շարժի,
զայն եւս ժողովով քննեն, զոր ինչ վճռի արժան է՝ միաբանութեամբ հրամայեն:

Եւ զպրատուն հաստատուն պահեն, նոյնպէս եւ զդասատուն, զի այն է օգուտ
օրինաց եւ հաւատոյ եւ պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ:

Այլ եւ եկողաց եւ գնացողաց հարկիս եւ պատիւ ըստ իւրոց արժանուն ըստ սրբոյն
Պօղոսի առաքելոյն. «Սէր հասարակաց է եւ պատիւ ըստ արժանոյն»: Եւս առաւել
զաս կամ քարոզ անպակաս լիցի ի միջոյ սուրբ եկեղեցւոյն, մանաւանդ յորժամ

1 «ԻՆՆ»-ից յետոյ այլ ձեռագրով գրուած է՝ «եւ մի»:

քարվան եւ աստուածասէր վաճառականքն գան, զի են ոմանք, որ ի ժամանակս կենաց իւրոց միանգամ հանդիպին ի սուրբ աթոռն:

Ծածկագիտին Աստուծոյ է յայտ, զոր ինչ գրեցի՝ յառաջ ես առնելոց էի եւ ապա
17 թղթով ձեզ պատ//ուիրելոց: Ոչ թէ միայն ձեզ, այլ բոլոր աշխարհիս է յայտ, ԺԵ (15)
տարի է, որ գիշերն հանգիստ չունիմ եւ ցերեկն դադար, պատճառն վատաշվէր
սեւագլուխք: Է (7) տարի էր ի տուն Հունաց էի՝ նեղութեան միջի, վասն Եղեազար
վարդապետին ցանկ-պատառութեանն, եւ մեր անքարտաւան եւ թշնամի բարեկամաց
արարմանցն, որ ոչ լսելով գիտուն եւ ճշմարտասէր արանց եւ խաղ(աղ)արար մարդ-
կանց պարտքն կուտակեալ են իբրեւ գլեառն, եւ զմեզ այսքան վշտի եւ նեղութեան
մատնեալ:

Դարձեալ, հոգեւոր որդիք, մեր ակնկալութիւնն այն էր, որ գայինք ի սուրբ Աթոռն, փոքր ինչ հեշտութեամբ հանգստանայինք: Անմարմին սատանայքն մտին Սահաթափսի սեւագլուխքն եւ իւրեանքն եղեն մարմնաւոր սատանայ Երեւանայ խանէրին. որ այնքան վիշտ եւ նեղութիւն կրեցաք ի ձեռաց Բ (2) խանէրին. թող զվիշտն, այնքան պարտուց ներքոյ գրաւեցաք, եւ կիսամեռ հասակաւս երկրէ ի յերկիր եւ գանէ ի գաւառ շրջիմ իբր մուրացիկ, թերեւս գթասցի Տէրն բոլորից եւ ազատեսցէ ի պարտուցս, զի մի պարտական ի գերեզման մտից եւ տագնապով խղճի մտաց մաշեալ եւ հիւծեալ մնացեմ:

18 Սիրելի որդիք, ի ժամանակս տեառն Մովսէսի եւ // Փիլիպպոսի կաթողիկոսին ոչ
ինչ կողմանէ լիութիւն չկայր եւ իրաց կողմանէ շինութիւն, այլ յամենայնի պակա-
սութիւն եւ աւերակ: Զինչ որ նոցա ժամանակն եկն՝ ի նորոգութիւն սուրբ եկեղեցւոյն,
տանց շինութեանց եւ նորոգութեան եղեւ խարճ: Իսկ մեղապարտս զինչ շինեցի եւ
արարի՝ մեծ մասն պարտեօք էր: Իսկ այժմս շնորհօք Սուրբ Հոգւոյն այնքան հարկա-
ւոր բան չկայ շինելոյ պարտիք զգրեալս հաստատուն պահէք, որ սուրբ Աթոռոյդ զատ
յաւելնուածէր մի արասցէ, եթէ նեղութիւն ինչ պատահի, առձեռն պատրաստ իրմի լինի,
եւ կամ հարկաւոր շինութիւն լինի՝ ինձ նման պարտեօք չանեն, որ վիշտ եւ նեղութիւն
կրեն:

Հոգեւոր եւ սիրելի որդիք այ[ս] իմ կտակս է, որ հարկաւոր ձեզ պատուիրեցի. եթէ
զգրեալս կատարէք, կատարեսցէ Տէր զբարի խնդրուածս ձեր եւ պահպանեալ պահեսցէ
զձեզ յամենայն վտանգէ յոգւոյ եւ մարմնոյ. եթէ զգրեալս հաստատէք, ակն ունիմ
յԱստուծոյ, որ սուրբ Աթոռդ պայծառ եւ անկարօտ յամենայնի կու մնա, իսկ եթէ
զգրեալս անտես առնէք եւ ոչ կատարէք, տէր մի լուիցէ ձեզ եւ ամենայն խնդիրք ձեր
անընդունակ լիցի: Զինչ պակասութիւն սուրբ Աթոռոյն պատահի՝ դուք լինէք
19 պարտական եւ ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ սեւերես մնաք եւ անլսողացն // պատ-
ժոյն պատժակից լինիք: Կատարողք աղաչանաց եւ խնդրուածոց իմոց՝ օրհնին
յԱստուծոյ, իսկ անլսողքն եւ անհնազանդքն՝ դատապարտեալք մնասցեն արդարա-
դատէն Աստուծոյ:

Սիրելի եւ աչացս լոյս որդիք, ոչ եթէ զայս կտակս, աղաչանքս եւ պաղատանքս վասն միայն զկնի իմոյ կաթողիկոս նստողին գրեցի, այլ ամենայն ժամանակի կաթողիկոսաց: Նախ զայս ձեռագիրս առնուն եւ ապա ձեռնադրեն, զի այժմս որ դուք կենդանի էք, ձեզ աղաչանօք օրհնութիւն եւ անէծք գրեցի, վասն հաստատ եւ անկարօտ մնալոյ սուրբ Աթոռոյն. եւ զայն օրհնութիւնն եւ անէծքն յիտակայից

առաջնորդաց, վարդապետաց, քահանայից, կարգաւորաց եւ աշխարհականաց վերայ լիցի, զոր յառաջն յանուանէ գրեալ եմ: Դարձեալ՝ զի որքան կենդանի եմ՝ զձեզ աղաչօղ եմ եւ առ Տէր Աստուած աղօթող եւ պաղատօղ, որ ըստ իւր հաճոյից տպաւորեսցէ ի սիրտս սիրելի որդւոցս, իսկ զկնի վաղճանիս՝ միշտ բողոքօղ եմ առ միածին Որդին, զի թէպէտ սեւերես եմ յիւրմէ, այլ ինքն ողորմեսցի եւ գթասցի իւր կշման տեղոյն եւ ցաւակցողացն ամենայնի:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԺԷ ԴԱՐԻ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԸ

(Քննութիւն եւ քննադատութիւն)

ԺԷ ԴԱՐԻ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԸ

Որքան յիշում եմ, 1952 թուականն էր, երբ Աշոտ Յովհաննիսեանը (այդ ժամանակ նա դեռեւս չէր աշխատում Պատմութեան ինստիտուտում, բայց արդէն աւարտել էր «Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան» երկհատոր աշխատութիւնը) հարցրեց ինձ, թէ յիշատակարանների ո՞ր դարերի ժողովածուներն եմ ես անձամբ հաւաքելու եւ հրատարակութեան պատրաստելու: Տեղեկանալով, որ ԺԷ դարն իմ հետաքրքրութիւնների սահմաններից դուրս է մնում՝ նա իր ցանկութիւնը յայտնեց ձեռնարկելու այդ աշխատանքը, եւ ինչպէս յատուկ էր նրան, առանց յապաղման գործի անցաւ ու մեծ ջանասիրութեամբ սկսեց ընդօրինակել Մատենադարանում պահուող ձեռագրերից ԺԷ դարի յիշատակարանները:

Սակայն երկու տարի էլ չանցած, նա աշխատանքի ընդունուեց Պատմութեան ինստիտուտում, ստացաւ գիտական աւելի հրատապ յանձնարարութիւններ. յիշատակարանների հաւաքման գծով սկսուած աշխատանքների թափը նուազեց, եւ, ի վերջոյ, այդ գործի ամբողջացման ու աւարտման ծանրութիւնը ստանձնեց փորձուած աղբիւրագէտ ու բանասէր, մեր յարգելի ընկեր Վազգէն Յակոբեանը: Կարելի էր վստահ լինել այլեւս, որ աղբիւրագիտական մեծ ծաւալի ու տաժանակիր այդ աշխատանքն իր աւարտին է հասցնելու, եւ ԺԴ ու ԺԵ դարերի յիշատակարաններից յետոյ հրատարակելու է նաեւ հայ ժողովրդի պատմութեան համար բախտորոշ նշանակութիւն ունեցող ԺԷ դարի յիշատակարանների ժողովածուն:

Այսօր ահա սեղանի վրայ է այդ աշխատութեան առաջին հատորը, որն ընդգրկում է 1601–1620 թուականների ընթացքում շարադրուած 1041 յիշատակարանային միաւոր, որոնցից շատերն իրենց հերթին մի քանի ինքնուրոյն մասերից են բաղկացած[1]: Գիտական շրջանառութեան մէջ դրուած յիշատակարաններն առաջնակարգ տուեալներ են պարունակում ոչ միայն Հայաստանի ու հայկական գաղթօջախների պատմութեան տարբեր բնագաւառների՝ սոցիալ-քաղաքական կեանք, մշակոյթ եւ այլն, ուսումնասիրութեան համար, այլեւ իրենց շօշափելի նպաստն են բերելու Թուրքիայի եւ Իրանի պատմութեան այդ ժամանակաշրջանի վերաբերեալ մեր գիտելիքներն ընդարձակելու եւ խորացնելու գործին: Ջալալիների հուժկու սոցիալական շարժումը, թուրք-իրանական ռազմական բախումները, Հայաստանի ու Վրաստանի մի շարք շրջանների բնակչութեան բռնագաղթը դէպի Իրանի կենտրոնական շրջանները եւ բազմաթիւ այլ պատմական եղելութիւններ այս հատորում հրատարակուած նիւթերի շնորհիւ շատ աւելի հանգամանօրէն են լուսաբանուելու: Անտարակոյս, կարեւորագոյն յիշատակարանները յետագայում թարգմանուելու են նաեւ ռուսերէն եւ օտար լեզուներով՝ մատչելի դառնալով արեւելագէտների լայն շրջաններին: Ոչ պակաս չափով այդ յիշատակարանները լրացնելու են մեր գիտելիքները հայկական մշակութային կենտրոնների գործունէութեան եւ առանձին մատենագիրների կեանքի ու ստեղծագործական աշխատանքի մասին եւ այլն:

Որեւէ աղբիւրագիտական աշխատանք գնահատելիս, անշուշտ, առաջին հերթին նկատի է առնւում նրա բովանդակութիւնը՝ ի՞նչ նոր ու արժէքաւոր նիւթեր են գիտական շրջանա-

1 «Հայերէն ձեռագրերի ԺԷ դարի յիշատակարաններ» (1601–1620 թթ.), հտ. Ա, կազմ. Վազգէն Յակոբեան, Աշոտ Յովհաննիսեան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, Երեւան, 1974, ԼԲ, էջ 828

ռութեան մէջ դրւում տուեալ սկզբնաղբիւրի հրատարակութեամբ: Այս հարցին կարելի է միայն մէկ պատասխան տալ. նիւթերն, իրօք, շատ մեծ գիտական արժէք ունեն, ուստի մեր պարտքն ենք համարում նախ եւ առաջ շնորհակալական խօսք ուղղել ժողովածուի կազմողներին ու հրատարակողներին: Երկրորդ հարցը, սակայն, վերաբերելու է հրատարակութեան աղբիւրագիտական մակարդակին. ինչպէ՞ս են ներկայացուած սկզբնաղբիւրները. բանասիրական ի՞նչ աշխատանք է թափուած, գտնուա՞ծ է արդեօք ճիշտ ձեւը նիւթի մատուցման ու աղբիւրագիտական մշակման, գիտական ապարատն արդեօք համապատասխանո՞ւմ է պատմագրութեան այսօրուայ պահանջներին եւ այլն:

Խիստ դժուարանում է ուշադիր ընթերցողի խնդիրը, երբ նա փորձում է պատասխան գտնել հարցերի այս երկրորդ խմբի համար: Ինչպէ՞ս գնահատել ԺԷ դարի առաջին երկու տասնամեակների յիշատակարաններն ընդգրկող այս հատորի վրայ թափուած բանասիրական աշխատանքը: Թերութիւններն ու վրիպումներն ակնառու են եւ շատ: Խօսե՞լ դրանց մասին, թէ՞ լռութիւն պահպանել կամ այս կամ այն անկիւնում շարախօսել (դժբախտաբար, մեզանում շատերը գերադասում են «քննադատութեան» հէնց այս ձեւը):

Մենք խորին յարգանքի զգացմունքներ ունենք ինչպէս հանգուցեալ ակադեմիկոս Աշոտ Յովհաննիսեանի յիշատակի, այնպէս էլ մեր վաղեմի ընկերոջ՝ Վազգէն Յակոբեանի գիտական վաստակի նկատմամբ: Եւ, տեղեակ լինելով, որ այս հատորին յաջորդելու են ԺԷ դարի յիշատակարանների ուրիշ չորս ստուար հատորներ, որոշ տատանումներից յետոյ յանգեցինք այն հետեւութեան, որ լռելու բարոյական իրաւունք չունենք, մանաւանդ որ կազմողներն իրենք, դիմելով ընթերցողներին, յայտնել են, որ «շնորհակալութեամբ կընդունենք մասնագէտների քննադատական դիտողութիւնները՝ յետագայ հատորներում դրանցից խուսափելու նպատակով» (Առաջաբան, էջ ԻԶ):

Մեր դիտողութիւնները լսելի դարձնելու լաւագոյն ձեւը համարեցինք կիսապաշտօնական այս հանդիպումը, մի խումբ աղբիւրագէտ-բանասէրների ներկայութեամբ:

Մինչեւ բուն նիւթին անցնելը՝ պէտք է պայմանաւորուենք մի հարցի շուրջ: Մեր շարադրանքի ընթացքում յաճախ գործածելու ենք «հրատարակիչ», «հատորի կազմող» եւ նման արտայայտութիւններ՝ եզակի թիւ օգտագործելով: Այդ բոլոր դէպքերում նկատի ունենք ընկ. Վ. Յակոբեանին. հանգուցեալ Ա. Յովհաննիսեանին հանգիստ ենք թողել ոչ թէ նրան հեղինակային իրաւունքից զրկելու միտումով, այլ այն պարզ գիտակցութեամբ, որ առաջաբանը, ծանօթագրութիւնները, անուանացանկը եւ ժողովածուի նիւթերի համախմբման հիմնական աշխատանքները կատարել է Վ. Յակոբեանը միայնակ: Հատորը հրատարակութեան է յանձնուած 1972 թ. նոյեմբերի 22-ին, երբ Ա. Յովհաննիսեանն այլեւս ֆիզիկապէս ի վիճակի չէր որեւէ կերպ մասնակցելու հատորի յարդարման ու խմբագրման աշխատանքներին: Առաւել եւս անկարող էր հանդէս գալ որպէս խմբագիր, քանի որ հատորի տպագրութեան հիմնական աշխատանքները կատարուել են մեծանուն գիտնականի մահուանից յետոյ:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաեւ, որ առաջաբանին բնաւ չենք անդրադարձել. եւ ոչ այն պատճառով, որ այն շատ յաջող է կազմուած, այլ նկատի ունենալով այն հանգամանքը, որ առաջաբանի լաւ կամ վատ լինելը որեւէ առնչութիւն չունի հրատարակուած յիշատակարանների մշակման կամ մատուցման եղանակների հետ:

***

Մեր առնչէքը պարզ մատուցելու համար նիւթը բաժանել ենք այսպիսի ենթաբաժինների

1. Յիշատակարանների ընտրութիւն
2. Յիշատակարանների շարակարգութիւն կամ համարական հերթաշար
3. Տոմարագիտական ու ժամանակագրական խնդիրներ
4. Ձեռագրերի խորագիրը
5. Յիշատակարանների հասցէն
6. Յիշատակարանների հեղինակի հարցը
7. Նիւթերի զատդասման սկզբունքը
8. Գրչութեան վայրը
9. Բնագրի վերծանութիւնը
10. Չափածոյ յիշատակարաններ
11. Կէտադրութիւն
12. Ծանօթագրութիւններ
13. Ցանկեր
14. Վրիպակներ
15. Եզրակացութիւն

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է նշանակում յիշատակարանների ընտրութիւն. ումանց համար այս խորագիրն ինքնին տարօրինակ կարող է թուալ: Յիշատակարանների ժողովածու կազմողը հաւաքելու է այս կամ այն դարի ընթացքում շարադրուած ձեռագրական յիշատակարանները, ապա, առաջնորդուելով որեւէ սկզբունքով, շարայարելու է դրանք ըստ տարեթուերի եւ այլն: Բայց երբ խորամուխ ենք լինում հարցի էութեան մէջ, տեսնում ենք, որ յիշատակարանների ընտրութիւնն ինքնին այնքան էլ պարզ ու դիւրին գործ չէ:

Գարեգին Յովսէփեանի «Յիշատակարանք ձեռագրաց» (Անթիլիաս, 1951) մեծարժէք հատորի նիւթերի կէսից աւելին, օրինակ, ձեռագրական յիշատակարանների հետ ոչ մի առնչութիւն չունի:

Հէնց առաջին համարի տակ դրուած է Թադէոս առաքեալի վանքի յաջորդականութեան ցանկի յիշատակարանը, որն անվաւեր նիւթերի հիման վրայ շարադրուած է ԺԴ դարի սկզբներին (տե՛ս էջ 4), 3-րդ համարի տակ տպագրուած է Երուսաղէմի N 1 ճառընտրից քաղուած՝ Նունէի խաչի պատմութիւնը: Հատորի մէջ տեղ են գտել բազմաթիւ վարքաբանական գրուածքներ (Դաւիթ Անյաղթի, Յովհ. Մայրագոմեցու, Սարկաւագ վարդապետի վարքերը), ուշ դարերում գրուած ժամանակագրական ու պատմագրական պատառիկներ, որոնց մէջ վաղ դարերի առանձին դէպքերի մասին կան, ըստ մեծի մասի, անստոյգ կամ հնարովի տեղեկութիւններ եւ այլն: Չենք վիճում. հատորի մէջ տեղ գտած այդ բնոյթի նիւթերի մի զգալի մասը բացառիկ արժէք ունի հայ ժողովրդի մշակոյթի ու գրականութեան պատմութեան տարբեր հարցերի լուսաբանութեան համար, սակայն դրանք ձեռագրական յիշատակարաններ չեն եւ, տեղ գտնելով տարաբնոյթ նիւթերի շարքում, իրենց համար ոչ հարազատ միջավայրում, տուժել են ե՛ւ իրենք, ե՛ւ իրենց հարեւանները:

Յիշեցման կարգով նշենք այստեղ, որ ընկ. Վ. Յակոբեանն իր «Մանր ժամանակագրութիւններ» մեծարժէք հատորների մէջ հնարաւոր էր համարում տեղ յատկացնել նաեւ ձեռագրական յիշատակարաններին: «Մանր ժամանակագրութիւնների» 1-ին հատորում (Երեւան, 1951, էջ 181-187) «Անանուն ժամանակագրութիւն» խորագրի տակ տպագրուած է քննարկուող ժողովածուի N 354 յիշատակարանը, իսկ «Ժամանակագրութիւնների» 2-րդ հատորում (Երեւան, 1956, էջ 218-221)՝ Մովսէս Արծկեցու 1472 թ. շարադրուած չափածոյ յիշատակարանը եւ այլն: Մեր միտք բանին այն է, որ ամէն մի ժողովածուի վերնագիր անհրաժեշտաբար համապատասխանելու է նրա բովանդակած նիւթերին: Ըստ այդմ, ձեռագրական այն նիւթերը, որոնք յիշատակարան չեն, պէտք չէ բռնադատուելով մուծուեն յիշատակարանների ժողովածուների մէջ:

Այս տեսակէտից քննարկուող ժողովածուն, իհարկէ, շատ աւելի բարւոք վիճակի մէջ է, քան Գ. Յովսէփեանի «Յիշատակարանք ձեռագրացը», բայց սրա մէջ եւս մուծուել են այլ բնոյթի ձեռագրական նիւթեր: Բայց որո՞նք են ձեռագրական յիշատակարանների յատկանիշները, կամ ո՞րն է «յիշատակարան» կոչուածի սահմանումը:

Մեր կարծիքով յիշատակարան պէտք է կոչել եւ ըստ այդմ՝ յիշատակարանների ժողովածուների մէջ տեղ յատկացնել գրիչների, ծաղկողների, ստացողների, կազմողների, նորոգողների, գերութիւնից ազատողների կամ ձեռագրի հետ մի այլ կերպ առնչուող անձնաւորութիւնների կողմից ու նրանց անունով շարադրուած տեղեկութիւնները, որոնք

առնչւում են տուեալ ձեռագրի կամ նրա նախագաղափարի ընդօրինակութեան, նկարազարդման, նորոգման, ստացման, ձեռքբերման հանգամանքներին: Եւ ընդհակառակը՝ յիշատակարան չեն կարող կոչուել ձեռագրի մէջ ընդօրինակուած պատմական, ժամանակագրական եւ այլ կարգի նիւթերը, որոնք ձեռագրի ստեղծման ու պահպանման հետ չեն առնչւում, այլ նրա մէջ ընդօրինակուել են որպէս անկախ նիւթ-միաւոր:

Մենք մեր «Տնտեսական գործարքների մասին գրառումները հայերէն ձեռագրերի մէջ եւ նրանց աղբիւրագիտական նշանակութիւնը» յօդուածում («Բանբեր Մատենադարանի», N 5) ցոյց ենք տուել, որ ինչպէս վանքերի ու եկեղեցիների պատերը, այնպէս էլ ծիսական ձեռագրերի (Աւետարան, Յայսմաւուրք, Մաշտոց եւ այլն) ազատ էջերն ու լուսանցքները յաճախ օգտագործուել են տուեալ վանքին կամ եկեղեցուն արժէքաւոր որեւէ կալուածք, եկեղեցական սպասներ, հանդերձանք եւ այլն նուիրած անձնաւորութիւնների յիշատակը յաւերժացնելու համար: Այսպիսով, որոշ ձեռագրերում կան նաեւ յիշատակարաններին նմանուող (այստեղ եւս յաճախ գործածւում է «Յիշեցէք» բառը) գրութիւններ, որոնք, սակայն, իրենց բովանդակութեամբ կալուածագրեր կամ նուիրաբերական արձանագրութիւններ են եւ պէտք է հաւաքուեն ու հրատարակուեն առանձին ժողովածուի մէջ, համապատասխան ուսումնասիրութեամբ ու ծանօթագրութիւններով:

Այս հանգամանքն, աւա, հաշուի չի առնուած քննարկուող ժողովածուի մէջ, որի հետեւանքով նրա մէջ տեղ են գտել շուրջ մէկ տասնեակ նուիրաբերական արձանագրութիւններ: Այդպիսիք են հետեւեալ համարների տակ ներկայացուած նիւթերը՝ NN 208թ, 254բ, 368ա, բ, 454, 508, 515, 612ե, 613բ-ը եւ այլն:

Ծանօթանանք դրանցից մի երկուսին:

«Յիշեցէք ի Քրիստոս զԳրիգոր հէրպետն, որ զվանից տղանքն վերուց եւ զվանից խաչխամբօրն եւ ըղպսակ դրամն ոխ. նրաց վանից միաբանին...»:

«Յիշեցէք ի Քրիստոս զուսթայ Միրիջան զԱղերթցին... որ ամէն տարի երկու սոլ տայ վանից մշակուն...» (N 368, էջ 304-305):

«Մեք հանավանցիք (թուարկուած են մի շարք անուններ)... միաբանեցաք Դիլանջու Ամրումի այգին տուինք յիշատակ ի դուռն Ս. Կարապետիս...» (N 454, էջ 358):

Պարզ է, որ սրանք ձեռագրական յիշատակարաններ չեն:

Ժողովածուի մէջ, բացի այս կարգի կալուածագրերից ու նուիրաբերական արձանագրութիւններից, տեղ են գտել եւ ուրիշ կարգի անհարազատ նիւթեր:

N 185բ յիշատակարանն, օրինակ, հին Ջուղայի գերեզմանատան խաչքարերից մէկի արձանագրութիւնն է՝ Ղ. Փիրղալեմեանի մի ծանօթագրութեան յաւելումով: Ահա այն. «Սուրբ խաչս բարեխօս է առ Քրիստոս մեծ եւ անուանի քաղաքապետ խօջայ Խաչիկին, որ ի ՌԾԳ (1604) թուականիս հանգեաւ ի Քրիստոս»: Այնուհետեւ գալիս է Փիրղալեմեանի ծանօթագրութիւնը. «Էր սա նահապետ տոհմին Լազարեանց. եւ չիրիմս է ի գերեզմանատան Հին Ջուղայու»: Մի՞թէ պարզ չէ, որ Լազարեանների ու խօջայ Խաչիկի ազգակցութեան մասին անհիմն այս ենթադրութեան հեղինակը Փիրղալեմեանն է, որ շատ յաճախ իր հաւաքած ձեռագրական նիւթերի մէջ բանասիրական միջամտութիւններ է կատարում (ի պատիւ իրեն պէտք է ասել, որ այդ միջամտութիւններն ըստ մեծի մասի նա կարմիր թանաքով է կատարել՝ ակնառու դարձնելու համար միջնադարեան բնագրի եւ իր յաւելումների սահմանները): Այս փաստերի լոյսի տակ արտառոց տպաւորութիւն է գործում Վ. Յակոբեանի ծանօթագրու-

թիւնը, որի համաձայն՝ «Սոյն յիշատակարանը ուշ շրջանում է գրուել տուեալ ձեռագրում» (էջ 157): Ի՞նչ ձեռագրի մասին է խօսքը, երբ Փիրղալեմեանը ծանուցում է, թէ «չիրիմս է ի գերեզմանատան Հին Ջուղայու»:

Բացարձակ կեղծիք է Մ. Տէր-Մովսիսեանի անտիպ ցուցակից քաղուած եւ 68-րդ համարի տակ ներկայացուած միաւորը, որի մէջ խօսք կայ 1602 թ. Անանիա Շիրակացու կողմից մի ժամագիրք ընդօրինակուած լինելու մասին: Տէր-Մովսիսեանը, ինչպէս եւ սպասելի էր, հաւատ չի ընծայել այս կեղծիքին ու նշել է, որ այն «ԺԹ դարու գրած է», սակայն ժողովածուի կազմողը լիարժէք միաւորի իրաւունքով այդ կեղծ գրութիւնը հրատարակել է մեծարժէք յիշատակարանների հարեւանութեամբ:

Որպէս N 94 յիշատակարան մէջբերուած է մի «Հաւանութեան թուղթ», որ կազմուած է Կիլիկիայի երկու կաթողիկոսների՝ Սսում նստող Յովհաննէսի եւ Հալէպում ձեռնադրուած հակաթոռ ու հռոմէադաւան Պետրոսի միջեւ ծագած վէճերը հարթելու մտահոգութեամբ: Անշուշտ, կարեւոր փաստաթուղթ է (հրատարակուած է բազմիցս), բայց, ինչպէս եւ վերոյիշեալները, յիշատակարան չէ:

Ժողովածուի առաջաբանում ասուած է, որ «առանձին դէպքերում, երբ յիշատակարանը աղբիւրագիտական, բանասիրական եւ առհասարակ պատմագիտական որեւէ արժէք չի ներկայացնում, այդպիսիները չենք վերցրել. օրինակ՝ մեր Մատենադարանի N 4834 ձեռագրի 1-ին պահպանակի ա էջում գրուած է. «Թուին ՌԾԱ աշակերտեցայ ես անարժանս, սկիզբն ամսոյ հօռի», «Կատարեցաւ գիրքս ի թուին ՌԿԹ, սեպտեմբեր ամսոյ ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ (ՄՅԶԵՊ, V, N 1601, էջ 395), «Նորոգեցաւ սուրբ Աւետարանս ի թուին ՌԿԳ» (ՄՈՒՐՄԱՐ, II, N 50, էջ 136) եւ այլն» (էջ ԻԵ):

Չնայած այս որոշակի յայտարարութեան՝ ժողովածուի մէջ տեղ են գտել վերը մէջբերուած մանր գրութիւններից շատ աւելի անարժէք միաւորներ: Այսպէս օրինակ՝ N 15-ի տակ բերուած է ընդամէնը մի տող. «//զեղկելի երդումն յիշեաց, գրեց. Կարուես քաղաք, ի թուին ՌԾ Աստուած//» (էջ 14). N 149-ի տակ բերուած է երկու տող. «...Ջմերջին կազմողս ար. տասիս զաէր Հայրապետն յիշեցէք ի Տէր, ի թուին Ռ եւ ԾԲ ամէն» (էջ 121). N 153-ի տակ մէկ տող. «Ես Յակոբ երէցս Զամօսցացին ստացայ զաս ի թուին ՌԾԲ» (էջ 124). N 241-ի տակ մէկ տող. «Նորոգ. կազմեալ ի Յամիթ ՌԾԴ թուին» (էջ 192):

Ժողովածուի տարբեր տարեթուերի տակ կան մէկ տասնեակից աւելի այս կարգի մանրուք-միաւորներ: Արդ, ինչու սրանց նման բազմաթիւ նմուշներ աչքաթող են արուած, իսկ մի մասը՝ հրատարակուած:

Մեր կարծիքով ճիշտ չի լինի անտեսել այդ կարգի մանր միաւորները, բայց համարաշարքի մէջ մուծելն էլ շռայլութիւն կլինի, ուստի գերադասելի է իւրաքանչիւր տարեթուի վերջին յիշատակարանի տողատակում՝ յատուկ ծանօթագրութեան մէջ, ըստ անհրաժեշտութեան նշումներ կատարել, որ նոյն այս թուականին շարադրուած են նաեւ մի քանի մանր-մունր յիշատակագրութիւններ. պէտք կլինէր նաեւ մէջբերել դրանք հէնց այդտեղ՝ տողատակի ծանօթագրութեան մէջ:

Հարցերի այս փնջի մասին մեր ասելիքը սպառելու համար նշենք նաեւ, որ հրատարակուած յիշատակարանների մէջ կան նաեւ առանձին միաւորներ՝ քաղուած մեծ մասամբ Գ. Սրուանձտեանի ու Ղ. Փիրղալեմեանի հաւաքածուներից, որոնք հարազատ յիշատակարաններ չեն, այլ համառօտագրութիւններ՝ կատարուած հրատարակիչների կողմից:

Յաճախ այդպիսի համառօտագրութիւններն այն աստիճանի հեռանում են բուն բնագրերից, որ շատ դժուար է լինում այդ աղճատ շարադրանքի միջոցով ճանաչել բուն բնագիրը: Այսպէս օրինակ՝ քննարկուող ժողովածուի մէջ N 121 համարի տակ տպագրուած է այժմ Կ. Պոլսի Պալատ թաղի Ս. Հրեշտակապետաց եկեղեցում պահուող Մաշտոցի յիշատակարանը (ըստ Մատենադարանում պահուող մանրաժապաւէնի): Մի քանի էջ յետոյ նոյն 1603 թ. տակ գրուած է նոյն այդ յիշատակարանի համառօտագրութիւնը, որ ժամանակին կատարել է Ղ. Փիրղալեմեանը: Արդ, եթէ հրատարակիչը չի կարողանում տարբերակել կամ ի մի բերել նման միաւորները, էլ ինչ ասենք ոչ փորձառու ընթերցողների մասին: Մի՞թէ յատուկ ծանօթագրութեամբ հրատարակիչը չի զգուշացնելու ընթերցողներին, որ այս կամ այն միաւորը յիշատակարանի բուն բնագիրը չէ, այլ նրա համառօտուած տարբերակը՝ կատարուած ԺԹ դարի մեր ազգագրագէտ-ձեռագրագէտի կողմից: Այս կարգի համառօտուած-վերաշարադրուած միաւորներից մէկում, օրինակ, գտնում ենք այսպիսի տողեր. «Սաղմոսարան՝ Եպիփանու եւ Գառնեցոյ յառաջաբաններով» (էջ 336): Անփորձ ու դիւրահաւատ ընթերցողը կարող է աշխարհաբար այս նախադասութիւնը վերագրել հէնց 1609-ին՝ սխալ պատկերացում կազմելով հայոց լեզուի պատմութեան ընթացքի մասին:

Ժողովածուի մէջ կան երկու տասնեակից աւելի այս կարգի՝ վերափոխուած համառօտագրուած միաւորներ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՇԱՐԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ

(համարական հերթաշար)

Ի՞նչ սկզբունքով են շարադասուելու այս կամ այն թուականին շարադրուած յիշատակարանները տուեալ թուաշարքի տակ: Այս հարցին հնարաւոր չէ մէկ ու սպառիչ պատասխան գտնել: Պէտք է հաշուի առնել մի շարք յատկանիշներ.

1. ***Ժամանակագրական.*** եթէ յայտնի է այս կամ այն յիշատակարանի գրութեան ամսաթիւը, կամ այս կամ այն դէպքի կատարումից առաջ ու յետ գրուած լինելու մասին կայ տուեալ, ապա, բնականաբար, վաղ գրուածը պէտք է դնել սկզբից. այսինքն՝ պէտք է ըստ հնարաւորի պահպանել ժամանակագրական կարգը նաեւ՝ ամէն մի տարեթուի տակ:

2. ***Տեղագրական.*** յիշատակարանների կէսից աւելին օժտուած են գրչութեան վայրի մասին տեղեկութիւններով: Ըստ այդմ, պէտք է նոյն կամ հարեւան վայրերում գրուած յիշատակարաններն իրար մօտ հաւաքուեն՝ տուեալ աշխարհագրական միջավայրի մասին տուեալներ իրար մօտեցնելու համար:

Բնականաբար պատմական Հայաստանի շրջաններին վերաբերող յիշատակարանները պէտք է նախադասուեն գաղթավայրերում գրուածներից: Եւ ոչ մի դէպքում պէտք չէ երկրից երկիր տարուբերել ընթերցողների ուշադրութիւնը:

3. Միեւնոյն անձնաւորութեան կողմից նոյն տարեթուին շարադրուած յիշատակարանները, իհարկէ, պէտք է համախմբուեն իրար մօտ:

4. ***Ամենակարեւորը***, սակայն, այն է, որ ամէն մի նոր տարեթուի սկզբի մասերում պէտք է գրուեն պատմական ամենահարուստ տեղեկութիւններ պարունակող յիշատակարանները, որոնց մէջ բնութագրուած է ժամանակը, տրուած է անցուդարձերի ժամանակագրութիւնը եւ այլն: Եւ ընդհակառակը՝ տարեթուի վերջում պէտք է տեղադրուեն մանրմունր այն յիշատակագրութիւնները, որոնք այս կամ այն ձեռագրի ստեղծման, նորոգման

կամ օտարման մասին տեղեկութիւններից բացի ուրիշ որեւէ պատմական տուեալ չեն պարունակում:

Վերոյիշեալ հարցերին տրուած պատասխանները յանպատրաստի խօսքեր չեն, այլ շուրջ 15 տարուայ մեր աշխատանքի փորձից արուած եզրակացութիւններ: Եւ պէտք է խոստովանենք, որ այս տեսակէտից մեր հրատարակուած յիշատակարանների առաջին հատորը (ԺԴ դար) զերծ չէ լուրջ թերութիւններից: Միւս հատորները, սակայն, շտկուած են. յիշատակարանների դասդասումը նրանց մէջ կատարուած է նշուած տուեալների հաշուառումով:

Արդ, ինչպէ՞ս է վարուել քննարկուող հատորի հրատարակիչը:

Ցաւօք պէտք է արձանագրել, որ նա կարծես մտածուած կերպով այնպէս է շարադասել այս կամ այն տարեթուի տակ գրուելիք միաւորները, որպէսզի հիմնաւորապէս խախտի վերոյիշեալ բոլոր սկզբունքները: Այս, իհարկէ, կատակով է ասւում: Ճիշտն այն է, որ նա ինչպէս որ պատահականօրէն ընդօրինակել է յիշատակարանները նախ ձեռագրերից, ապա տպագիր աղբիւրներից, այդ պատահականութեամբ էլ շարել է դրանք իրար ետեւից՝ նկատի չունենալով ո՛չ ժամանակագրութիւն, ո՛չ գրչութեան վայր, ո՛չ բովանդակութիւն եւ ո՛չ էլ մի ուրիշ յատկանիշ:

Մեր այս եզրակացութիւնը վերաբերում է ողջ հատորին եւ բոլոր հրատարակուած միաւորներին, ուստի ստորեւ մէջբերուող մի քանի օրինակներն ընտրուած են պատահականօրէն՝ ի հիմնաւորումն մեր ասածի, եւ անհրաժեշտութեան դէպքում կարող են տասնապատկուել:

1603 թուականին շարադրուած յիշատակարանների մեծ մասն ունի տուեալ՝ գրչութեան վայրի մասին (մի մասը՝ նշուած Վ. Յակոբեանի կողմից, մի մասը՝ մոռացուած): Հատորի մէջ նրանք դասդասուած են այսպէս.

Բաղէշ, Եղեգիս, Վասպուրականի Խուփ գիւղ, Խիզան, Հալէպ, Ուռհա, Վասպուրականի Արզապ գիւղ, Վարագ, Վան, Կարուց երկիր՝ Արխտոս գիւղ, Առինջ, Հին Ջուղա, Համիթ, Կ. Պոլիս, Լվով, Հին Ջուղա, Բաղէշ, Մոկաց Սէպ գիւղ, Կամախ, Խիզան, Ուռհա, Կաֆա, Մերտին, Զամոսցա, Արզրում՝ Դիւնիկ գիւղ, Լվով, Զամոսցա, Թոխաթ, Սեչավ:

Այսպիսով, ընթերցողը պէտք է Տարօնից մտովին անցնի նախ Սիւնիք, ապա Վասպուրական, Սիրիա, նորից Վասպուրական, յետոյ Կարս, Այրարատեան աշխարհ, Գողթան գաւառ, Համիթ, Կ. Պոլիս, Լեհաստան, նորից Գողթան գաւառ (Հին Ջուղա), կրկին Վասպուրական, Մոկք, ապա Բարձր Հայք, դարձեալ Խիզան, Ուռհա, Ղրիմ, Լեհաստան, Բարձր Հայք, էլի Լեհաստան, Փոքր Ասիա, այնուհետեւ Մոլդովա եւ այլն:

Այժմ ծանօթանանք 1614 թուականի տուեալներին.

Լվով, Երզնկա, Կ. Պոլիս, Նոր Ջուղա, Լվով, Կաֆա, Կ. Պոլիս, Համիթ, Վասպուրական՝ Աւընդանց, Լվով, Մոկաց աշխարհ, Լվով, Թիֆլիս, Մոկաց աշխարհ, Դաշտ, Լվով, Երուսաղէմ, Տիգրանակերտ, Երուսաղէմ, Լվով, Բեխ, Նոր Ջուղա:

Լվովից 6 յիշատակարաններ կան, որոնք, որպէս կանոն, միմեանցից տարանջատուած են աշխարհի տարբեր ծագերում գրուած յիշատակարաններով եւ այլն:

Այժմ անցնենք «Ժամանակագրութեան» հարցին. դարձեալ, որպէս օրինակ, ծանօթանանք միայն երկու տարեթուի՝ 1619 եւ 1620 թթ. յիշատակարանների դասաւորութեանը՝ նախ նշելով ամսաթիւ ունեցող յիշատակարանների համարն ըստ քննարկուող ժողո-

վածուի, ապա՝ ամսաթիւը.

1619 թ.

N 920–մայիս 25
N 921–օգոստոս 1
N 924–յունիս 1
N 932–մարտ 18
N 938–սեպտեմբեր 7
N 941–յուլիս 11
N 948–յուլիս 20
N 950–նոյեմբեր 29
N 957–յունուար 1
N 958–մարտ 12
N 959–յունուար 15
N 960–յունիս 6
N 963–յունուար 4
N 968–մայիս 10
N 969–փետրուար 7
N 975–օգոստոս 8
N 976–հոկտեմբեր 7
N 977–նոյեմբեր 17
N 978–սեպտեմբեր 1

1620 թ.

N 979–մարտ 14
N 981–փետրուար 9
N 991–հոկտեմբեր 10
N 992–ապրիլ 8
N 994–մարտ 11
N 996–դեկտեմբեր 15
N 1001–օգոստոս 28
N 1007–յուլիս 22
N 1009–յունուար 18
N 1012–հոկտեմբեր 7
N 1022–մայիս 14
N 1024–նոյեմբեր 7
N 1029–յունիս 22

Մեկնաբանութիւնների կարիք չկայ:

Ժամանակագրական կարգը պահպանելու անհրաժեշտութեան գիտակցութիւն ժողովածուի կազմողը չի ունեցել: Եւ այն աստիճանի, որ հնարաւոր է համարել նախ դնել չահ Աբասի կողմից 1604 թ. Երեւանի գրաւման մասին մի յիշատակարան (N 161) եւ դրանից յետոյ՝ յիշատակարաններ, որոնցում Երեւանը դեռեւս պաշարուած է. կամ թէ նախ՝ մի յիշատակարան, որի մէջ ասուած է, թէ Սրապիոն կաթողիկոսը «վախճանեցաւ» (N 302), իսկ յաջորդ յիշատակարանում նոյն այդ Սրապիոնը դեռեւս ողջ ու առողջ է եւ այլն:

Հրատարակիչը ջանք չի թափել նաեւ իրար կից համախմբելու նոյն թուականին նոյն գրչի կողմից գրուած յիշատակարանները, որով մեծապէս կդիւրացնէր ընթերցողի գործը, նրան հնարաւորութիւն կտրուէր համադրել տուեալ գրչի կատարած աշխատանքի, կենսագրութեան, նախասիրութիւնների մասին տուեալներն առանց մեծ ջանքի:

Մի քանի օրինակ:

Սրապիոն Ուռհայեցին 1603 թ. շարադրել է 3 յիշատակարան (NN 100, 103, 119), որոնք հեռացուած են միմեանցից ուրիշների գրած յիշատակարաններով:

NN 246, 304 եւ 305 յիշատակարանները վերաբերում են խարբերդցի խոջայ Սաւարին եւ գրուած են նոյն 1606 թուականին:

Յակոբ Սգաւոր գրիչը 1609 թ. գրել է երկու յիշատակարան, որոնք գրուած են 448 եւ 453 համարների տակ:

Ռստակէս աբեղան 1610 թ. գրել է երկու յիշատակարան (NN 489, 491). կարծես մտածուած՝ միմեանցից հեռացնելու դիտաւորութեամբ սրանց արանքում հրատարակիչը մտցրել է աննշան արժէքի մի յիշատակագրութիւն:

Ամենից շատ տուժել է լվովցի գրիչ՝ Բոգդանի որդի Զատիկը. 1615 թ. Զատիկն ունի երեք յիշատակարան (NN 700, 703, 711): 1616 թ. երկու յիշատակարան (NN 752, 765), 1617 թ.՝ չորս յիշատակարան (NN 803, 809, 816, 849): Եւ դրանք բոլորն էլ ընդմիջուած են նշուած տարեթուերին ուրիշների կողմից ու տարբեր վայրերում շարադրուած մեծ ու փոքր յիշատակարաններով: Ուրիշ օրինակներ էլ կարելի է բերել: Եզրակացութիւնը պարզ է. ոչ մի բանասիրական աշխատանք չի կատարուած հաւաքուած յիշատակարանների խմբաւորման եւ օգտակար դասաւորման համար:

Մեր այս եզրակացութիւնն ամրապնդւում է, երբ ծանօթանում ենք միեւնոյն տարեթուի տակ գրուած յիշատակարանների բովանդակութեանը: Ամէն մի ընթերցող, բացելով ժողովածուի իրեն հետաքրքրող թուականը, ակնկալում է նախ եւ առաջ այնտեղ գտնել տեղեկութիւններ քաղաքական անցուդարձերի, ժողովրդի տնտեսական ու իրաւական վիճակի, նշանաւոր պատմական դէմքերի կեանքի ու գործունէութեան եւ յարակից հարցերի մասին: Հաշուի առնելով այս հրամայական պահանջը՝ ժողովածուի կազմողը պարտաւոր էր նոյն տարուայ ընթացքում շարադրուած յիշատակարաններն այնպէս շարայարել միմեանց, որ առաջին տեղերը գրաւէին հէնց պատմական մեծ արժէք ունեցող յիշատակարանները (այդպիսիք բազմաթիւ են այս ժողովածուի մէջ) եւ ապա միայն՝ մի քանի տող գրաւող մանր-մունր յիշատակագրութիւնները, որոնք նիւթն ամբողջացնելու նպատակին են ծառայում՝ յաճախ չունենալով որեւէ ինքնուրոյն նշանակութիւն: Ժողովածուի կազմողը, ինչպէս ասել ենք արդէն, բոլորովին հաշուի չի առել նաեւ այս կարեւոր հանգամանքը:

Օրինակ՝ 1605 թուաշարը սկսւում է ամենաչնչին մի յիշատակարանով (N 202), մինչդեռ նոյն այս տարեթուին շարադրուել են 224 կամ 225 համարները կրող բովանդակալից պատմական յիշատակարանները: 1606 թ. պատահականօրէն սկսւում է արժէքաւոր յիշատակարանով, սակայն նրան յաջորդում են մանր ու սակաւարժէք միաւորներ (NN 247–253), ապա N 254 յոյժ կարեւոր բովանդակութեամբ յիշատակարանը, նորից՝ անարժէք նիւթեր, եւ կրկին N 277 պատմական անցուդարձերով հարուստ միաւորը եւ այլն: 1611 թ. Ազարիա Սասնեցու շարադրած չափածոյ ընդարձակ յիշատակարանը կարելի է Ջալալիների շարժման ամենանշանակալից սկզբնաղբիւր համարել. կազմողը ոչ միայն դրանով չի սկսել տարեթիւը (առաջին տեղերում դրել է անարժէք միաւորներ), այլեւ մոռացել է նոյնիսկ նշել յիշատակարանի հեղինակի անունը՝ ոչ մասնագէտ ընթերցողին զրկելով հեղինակին ճանաչելու եւ հաղորդուած նիւթը նրա անունով օգտագործելու հնարաւորութիւնից: 1612 թուաշարքը, որի մէջ կան բազմաթիւ առաջնակարգ յիշատակարաններ, սկսւում է մի անարժէք ու բզկտուած երկտողով, եւ այսպէս՝ բոլոր թուականները:

Այսպիսով, յիշատակարանների համարաշարքը, այլ խօսքով՝ ամէն մի տարեթուի տակ յիշատակարան-միաւորների դասաւորութիւնը այս ժողովածուի մէջ կատարուած է, բառիս լայն իմաստով, առանց որեւէ գիտական սկզբունքի:

ՏՈՄԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Որոշ յիշատակագիրներ մեծ մասամբ իրենց գիտելիքներով պարծենալու միտումով ժամանակագրական տուեալները գրանցել են իրենց ձեւերով՝ օգտագործելով տոմարագիտական զանազան տերմիններ՝ ողիմպիադ, ինդիկտ, նոնոս եւ այլն: Նոյն տարեթիւը յաճախ արտայայտել են հայկական, փրկչական, աշխարհի արարչագործութեան թուականներով եւ այլն: Ըստ այդմ, տոմարագիտական գիտելիքներն անհրաժեշտ են այս կամ այն ծածկագիր տարեթիւը վերծանելու, պատմական տուեալ եղելութեան ժամանակագրութիւնը պարզելու եւ բանասիրական այլ խնդիրներ լուծելու համար: Ի պատիւ Վ. Յակոբեանի պէտք է ասել, որ նա այս առումով շատ դժուարութիւններ է յաղթահարել յատկապէս իր «Մանր ժամանակագրութիւնների» զոյգ հատորներում: Սակայն, չտապողականութիւնն ու պատասխանատուութեան նուազումն այստեղ իրենց զգալ են տուել. ժողովածուի մէջ տեղ են գտել մի շարք շատ ցաւալի սխալներ ու վրիպումներ, որոնք բնաւ չեն ներդաշնակում փորձառու եւ վաստակաշատ բանասէր-հրատարակչի նախորդ աշխատանքներին:

Մի երկու տասնեակ յիշատակարաններ իրենց գրութեան ճիշտ ժամանակից մէկ տարով առաջ են տարուել հետեւեալ թիւրիմացութեան հետեւանքով: ԺԷ դարի առաջին երկու տասնամեակներն ըստ հայոց տոմարի ընդգրկում են ՌԾ(1601)-ՌԿԹ(1620) թուականները: Սակայն հայկական տոմարով ՌԾ թուականը սկսւում է հոկտեմբերի 22-ից, եւ չորս տարին մէկ օր ետ ընկնելով՝ համապատասխանաբար ՌԿԹ թուականի ամանորը հոկտեմբերի 18-ն է դառնում: Ըլակէտ ունենալով այս իրողութիւնը՝ ժողովածուի հրատարակիչը յանգել է այն եզրակացութեան, որ բոլոր այն յիշատակարանները, որոնց մէջ տեղեկութիւններ կան հոկտեմբերի 18-22-ից (նայած թէ որ թուի մասին է խօսքը) յետոյ (մինչեւ դեկտեմբերի 31-ը) գրուած լինելու մասին, տարեթիւը թողնուելու է նոյնը, որովհետեւ չնայած ըստ հայոց տոմարի տարին փոխուել է արդէն, բայց ըստ յուլեան տոմարի մնացել է նոյնը (ինքն այսքան պարզ չի արտայայտւում. մենք փորձել ենք աւելի դիւրըմբռնելի դարձնել նրա իրթին դատողութիւնները)[1]:

Կատարեալ թիւրիմացութեան մէջ է հրատարակիչը: Ուշ միջնադարում հայ հեղինակները, երբ օգտագործում էին յուլեան տոմարի ամիս-ամսաթիւը (յունուար...դեկտեմբեր), տարեսկիզբը կամ ամանորը ըստ մեծի մասի[2] հաշւում էին ոչ թէ ըստ հայկական շարժական

1 Որպէսզի մեր ասածը հիմնաւոր լինի, ստորեւ բառացի մէջբերում ենք նոյն հարցի մասին Վ. Յակոբեանի ստերեոտիպ ծանօթագրութիւններից մէկը. «Հայոց ՌԿԶ թուականը սկսւում է 1616 թ. հոկտեմբերի 18-ին (հին տոմարով), հետեւապէս Հայոց ՌԿԶ թուականի դեկտեմբերի 4-ը կընկնի 1616 թ. մէջ: Հայոց ՌԿԶ, ՌԿԷ, ՌԿԸ եւ ՌԿԹ տարեթուերը սկսւում են համապատասխանաբար 1616, 1617, 1618 եւ 1619 թուականների հոկտեմբերի 18-ին (հին տոմարով): Այստեղից էլ այս չորս տարիներում, երբ ձեռագրի ընդօրինակութիւնը աւարտւում է հոկտեմբերի 18-ից յետոյ մինչեւ դեկտեմբերի 31-ը (հին տոմարով), եւ, իհարկէ, երբ յիշատակարանում այդ մասին նշում կայ, տարեթիւը պէտք է նշել ոչ թէ յաջորդ, այլ նոյն տարին» (էջ 578):

2 Ասում ենք «ըստ մեծի մասի» եւ ոչ «ամէնուրեք»՝ նկատի ունենալով, որ տոմարագէտ որոշ գրիչներ, յուլեան տոմարի ամիս-ամսաթուերին զուգահեռ, երբեմն նշանակում էին նաեւ հայկական ամիս-ամսաթուերը՝ առաջնորդուելով սարկաւագադիր անշարժ տոմարով կամ էլ հին շարժական տոմարով: Այսպիսի դէպքերը, սակայն, խիստ սահմանափակ լինելով, ընդհանուր կարգից դուրս են մնում:

տոմարի, այլ յունուարի 1-ից՝ յուլեան տոմարի թուականի փոխարէն համապատասխանաբար նշանակելով հայոց տարեթիւը՝ պարզ թուաբանական գործողութեամբ քրիստոնէական թուականից հանելով հայոց թուականի հիմնադրման տարեթիւը՝ 551: Ըստ այդմ, երբ գրում էին, դիցուք, «Ի թւ. Հայոց ՌԾԹ, փետրուար ԻԵ», այդ նշանակում էր 1059+551=1610 թ. փետրուարի 25, իսկ նոյն ՌԾԹ թուականի դեկտեմբերի Լ-ն համապատասխանաբար նշանակում էր 1059+551=1610 դեկտեմբերի 30: Ուրիշ ոչինչ:

Եւ զարմանալին այն է, որ հէնց իր հրատարակած յիշատակարանների մէջ կան մի շարք անառարկելի փաստեր յօգուտ մեր ասածի, որ անտեսուել են հրատարակչի կողմից կամ վրիպել նրա սեւեռուն ուշադրութիւնից:

Մանօթանանք այդ փաստերից մի քանիսին:

N 906 յիշատակարանը շարադրուած է ՌԿԸ (1619) թուականի հոկտեմբերի 25-ին, օրն երկուշաբթի: Յիշատակարանը տեղադրուած է 1618-ի թուաշարքում՝ հաշուի չառնելով, որ հոկտեմբերի 25-ը երկուշաբթի է ոչ թէ 1618, այլ հէնց 1619 թուականին:

N 1024 յիշատակարանը շարադրուած է 1621 թուականի նոյեմբերի 7-ին, օրը չորեքշաբթի: Այս յիշատակարանն էլ, որ գրուելու էր յաջորդ հատորի մէջ, մէկ տարի իր գրութիւնից առաջ է տարուած՝ դարձեալ անտեսելով այն հանգամանքը, որ օրուայ պատկերը համապատասխանում է 1621 եւ ոչ 1620 թուականին:

Բայց ունենք շատ աւելի կարեւոր ու զօրաւոր մի փաստ. N 950 յիշատակարանում ասուած է. «Թուականին ՌԿԹ նոյեմբեր ամսուն ԻԹ (29) լուսոյնկան ըբռնըեցաւ, ամէնեւին չէ(ր)եւեցաւ, մինչեւ ի երկու սահաթն» (էջ 698):

ՌԿԹ թուականը համապատասխանում է յուլեան տոմարի 1620 թուականին, բայց այս յիշատակարանը նախորդների նման գրուած է 1619 թուաշարքում՝ հաշուի չառնելով, որ այստեղ յիշատակուած լուսնի լրիւ խաւարումը ըստ յուլեան տոմարի, տեղի է ունեցել հէնց 1620 թ. նոյեմբերի 29-ին (ըստ գրիգորեան տոմարի՝ դեկտեմբերի 9-ին), սկսուել Գրինուիչի ժամանակով ժամը 17 անց 17 րոպէին (տեղական ժամանակով երեկոյեան ժամը 9 անց 17 րոպէին), տեւել է երկու ժամ (աւելի ճիշտ՝ 110 րոպէ), որից 49 րոպէ՝ լրիւ խաւարում[1]:

Այսպիսով, պարզւում է, որ բազմաթիւ յիշատակարաններ ճիշտ թուականի տակ չեն տեղադրուած (օրինակ՝ NN 578, 801, 805, 826, 887, 906, 908, 950, 977, 1024 եւ այլն)[2]:

Ժողովածուի մէջ կան նաեւ ժամանակագրական ու տոմարագիտական այլ վրիպումներ:

N 894 միաւորն, օրինակ, շարադրուած է «ի նոր թուիս Հայոց Գ (3)» (էջ 664): Հրատարակիչը կարծել է, թէ սա Ազարիայի թուականն է, որի առաջին տարին համապատասխանում է մեր թուականութեան 1616-ին, ուստի յիշատակարանը տեղադրել է 1618-ի թուաշարքում: Այս անկարելի է: Ազարիայի թուականը գործածութեան մէջ է մտել 1616-ից տարիներ յետոյ, այն էլ Նոր Ջուղայում ու նրա հետ կապուած հայկական գաղթօջախներում: Իսկ յիշա-

1 **Theodor Oppolzer**, Canon of Eclipses, New York, 1962, p. 368, խաւարման համարն է 4367:

2 Մի երկրորդական հարցի մասին խօսենք այստեղ: Վերը թուարկուած յիշատակարաններից մի քանիսը (NN 801, 805, 1024) գրուած են Լեհաստանի հայաբնակ քաղաքներում (Լվով, Յազլովեց): Արդ, մի՞թէ կարելի է մի վայրկեան անգամ մտածել այն մասին, որ այդտեղ բնակութիւն հաստատած հայերը, առաջնորդուելով իրենց հին տոմարով, գրում էին, դիցուք, 1620 թ. դեկտեմբեր, բայց դրա տակ հասկանում 1619 թուականը՝ հաշուի չառնելով, որ իրենց հիւրընկալած լեհերն ու ուկրաինացիները (որոնց հետ ամէնօրեայ տնտեսական համագործակցութեան մէջ էին) առաջնորդւում են ուրիշ հաշիւներով:

...ը գրուած է Տիւրիկի շրջանում, արտաքին աշխարհից կտրուած ու աւանդապահ մի վայրում, ուստի «Նոր թիւ» առնելով յիշատակագիրը հաւանաբար նկատի է ունեցել Հայոց Հազար (Ռ) թիւը լրանալուց յետոյ սկսուող նոր հազարամեակը. ըստ այդմ, յիշատակարանը շարադրուել է ոչ թէ 1618-ին, ինչպէս ենթադրել է հրատարակիչը, այլ 1554-ին (1551-3):

Անդրադառնանք մէկ ուրիշ հարցի. քրիստոնէական կամ փրկչական (այսպէս էին ասում միջնադարում) թուականների մի շարք հաշուումներ կան. ըստ Եթովպացոց, ըստ Հռովմայեցոց, ըստ Հայոց եւ այլն: Այժմ ողջ աշխարհում համընդհանուր տարածում է գտել քրիստոնէական թուագրութիւնն ըստ Հռովմայեցւոց: Հայկականը երկու տարով հռովմէականից շուտ է սկսւում. այլ խօսքով՝ հայկական փրկչականի սկիզբը մեր թուագրութիւնից առաջ՝ 2-րդ թուից պէտք է հաշուել:

Հայկական միջնադարեան աղբիւրներում, երբ որեւէ թուականը տրւում է զուգահեռաբար՝ և՛ հայկական թուականով, և՛ Հայոց փրկչական թուականով, դրանց տարբերութիւնը միշտ եւ անպատճառ 553 է լինում: Այդպէս է Սամուէլ Անեցու մօտ եւ ամէնուրեք: Հայ ունիթորներն են միայն, որ սկսած ԺԴ դարի 30-ական թուականներից, հետեւելով Կաթոլիկ եկեղեցուն, սկսում են գործածել փրկչական թուականը՝ ըստ Հռովմէացւոց հաշուի:

Այս հարցին մենք անդրադարձել ենք տարիներ առաջ եւ, հաշուի առնելով այս պարագան, ճիշտ տեղադրել մի շարք հայկական փրկչական թուականով օժտուած յիշատակարաններ (տեղին է այստեղ խոստովանել, որ ԺԴ դարի յիշատակարանների մէջ մի տեղ սխալուել ենք):

Այս հատորի հրատարակիչը, սակայն, պարզ չի պատկերացնում այս հարցը եւ իր մի քանի ծանօթագրութիւններով կարող է թիւրիմացութեան մէջ գցել մեր սկսնակ բանասէրներին: Նա, օրինակ, գրում է. «Քրիստոնէական եւ հայկական տարեթուերի տարբերութիւնը՝ 1611 եւ 1609... նրանից է, որ միջնադարեան որոշ հեղինակներ, օրինակ՝ ԺԲ դարի ժամանակագիր Սամուէլ Անեցին, քրիստոնէական եւ հայկական տարեթուերի տարբերութիւնն ընդունում է ոչ թէ 551, այլ 553: Վերջինիս հետեւել է նաեւ Յակոբ Սղուեցը: Ուստի սոյն յիշատակարանը դնում ենք 1609 թ. շարքում» (էջ 357-358): Իրաւացի է վարուել յիշատակարանը 1609-ի թուաշարքում դնելով, բայց ճշմարտութիւնից շատ է հեռացել, երբ պնդում է, թէ տարեթուերի այդպիսի հաշիւը յատուկ է միայն միջնադարեան հայ «որոշ հեղինակների». ճիշտ հակառակը՝ այդպէս են վարուել միջնադարեան բոլոր հայ հեղինակները, ի բաց առեալ կաթոլիկ դաւանանք ընդունածներին:

Ժողովածուի մէջ տեղ են գտել նաեւ մի քանի յիշատակարաններ, որոնք գրուած են կա՛մ ԺԷ դարի առաջին տասնամեակներից շատ առաջ, կա՛մ էլ շատ յետոյ:

Այսպէս՝ N 925 միաւորը Եսայի Կաֆայեցի տոմարագէտի աշխատութիւններից մէկի հեղինակային յիշատակարանն է, իսկ այդ գիտնականն ապրել ու ստեղծագործել է 1430-1440-ական թուականներին, ուստի չէր կարող յիշատակարան գրել 1619 թուականին:

N 237 միաւորի Բ եւ Գ յիշատակարանները գրուել են ձեռագրի նորոգման առիթով, ուստի ձեռագրի ընդօրինակութեան թուականից, այսինքն՝ 1605-ից շատ տարիներ յետոյ: Հասկանալի է, որ դրանք չպէտք է գրուէին գրչութեան յիշատակարանին առընթեր, կամ էլ յատուկ ծանօթագրութեամբ պէտք է նշում կատարուէր նրանց ժամանակի մասին: Նոյնը, պէտք է ասել N 459գ յիշատակագրութեան մասին, որի մէջ խօսք կայ Յայսմաւուրքի վաճառման մասին: Ձեռագիրն ընդօրինակուել է 1610 թ. պարոն Ազարայի պատուէրով, իսկ

վերոյիշեալ յիշատակագրութեան մէջ այս Ազարայի թոռ Հախնազարն է, որ վաճառում է ձեռագիրը: Պարզ է, ուրեմն, որ այս միաւորը, նոյնպէս, իր տեղում չի դրուած:

Բարեբախտաբար, այս կարգի վրիպումների քանակը մեծ չէ:

ՎԵՐՆԱԳՐԵՐԻ ՀԱՐՑԸ

Նախորդ դարերի յիշատակարանների հրատարակուած հատորներում բուն բնագրերից առաջ, միմեանց յաջորդող 4 տողերով տրուած են խիստ անհրաժեշտ տեղեկութիւններ տուեալ միաւորի վերաբերեալ:

Առաջին տողը յատկացուած է այն ձեռագրի վերնագրին, որից քաղուած է յիշատակարանը կամ յիշատակարանների տուեալ փունջը: Երկրորդը բացայայտում է ձեռագրի հասցէն. որտե՞ղ է պահպանւում ձեռագիրը, ի՞նչ տպագիր կամ ձեռագիր աղբիւրից է քաղուած յիշատակարանը (եթէ հրատարակիչը ձեռագիրն անձամբ չի տեսել, այլ յիշատակարանի հետ ծանօթացել է միջանկեալ կերպով): Երրորդ տողով տեղեկութիւն է տրւում տուեալ յիշատակարանի հեղինակի մասին. ո՞վ է շարադրել այն՝ գրիչը, ծաղկողը, ստացողը, նորոգողը, թէ՞ ձեռագրի հետ առնչուած մի այլ անձնաւորութիւն: Եւ վերջապէս, չորրորդ տողը յատկացուած է յիշատակարանի գրութեան վայրին. որտե՞ղ է շարադրուած տուեալ յիշատակարանը:

Նախորդ ժողովածուներում նոյնիսկ մշակուած է այս տողերի տպագրական յարդարման ձեւը. վերնագիրը շարուած է գլխատառերով, հասցէն տրուած է մանր տառատեսակով, յիշատակարանի հեղինակի ու գրչութեան վայրի մասին տեղեկութիւնները շարուած են էջի աջ կողմում՝ հարց ու պատասխանի ձեւով, ըստ որում հարցը շարուած է սովորական տառատեսակով, իսկ պատասխանը՝ շղագիր. այսպէս՝

Գրիչ՝ **Վարդան**
Վայր՝ **Աղթամար**

Դրանից յետոյ միայն մէջբերւում են ձեռագրի յիշատակարանը կամ յիշատակագրութիւնները, իհարկէ՝ եթէ կան այդպիսիք:

Երբ բացում ենք քննարկուող հատորը, առաջին հայեացքից թւում է, թէ նոյն այս սկզբունքներով է յիշատակարանները հրատարակութեան պատրաստել նաեւ Վ. Յակոբեանը, մանաւանդ որ այդ մասին նա որոշակի նշում է կատարել նաեւ առաջաբանի մէջ. «Ժողովածուն կազմելիս,- գրում է նա,- առանձին լրացումներով հետեւել ենք Լ. Խաչիկեանի կազմած ժողովածուների կառուցուածքին»: Բայց այդ խաբուսիկ տպաւորութիւնն իսպառ ցրւում է, երբ խորամուխ ենք լինում կատարուած աշխատանքի մէջ եւ փորձում բացայայտել, թէ որոնք են այդ «առանձին լրացումները», որ փորձել է կատարել հատորի հրատարակիչն ինքը:

Յետագայ էջերում փորձելու ենք ցոյց տալ, որ իրականում ոչ թէ «առանձին լրացումներ» են կատարուած, այլ ամբողջովին նոր մօտեցում է ցոյց տրուած. ինչպէս ասացինք, պահպանուած է միայն նախորդ հրատարակութիւնների արտաքին ձեւը: Եւ չտապում ենք հէնց այստեղ յայտարարել, որ կատարուած փոփոխութիւններից եւ ոչ մէկն իրեն չի արդարացրել ու միայն վնաս է բերել յիշատակարանների ժողովածուին:

Եւ այսպէս, վերը նշուած հերթականութեամբ այժմ անդրադառնալու ենք բուն

յիշատակարաններին նախորդող բացայայտիչ այն տողերին, որոնք կոչուած են ձեռագրի բովանդակութեան հասցէի, յիշատակագրի անձնաւորութեան ու գրչութեան վայրի մասին ընթերցողին անհրաժեշտ տեղեկութիւններ մատուցելու նպատակին:

Ձեռագրի խորագիրը կազմելը մեծ դժուարութիւնների հետ չի կապուած: Ձեռագրագէտ-բանասէրն այսօր իր ձեռքի տակ ունի, տարբեր վայրերում պահուող մի քանի տասնեակ ձեռագրական ցուցակներից բացի, Մաշտոցի անուան Մատենադարանի ձեռագրերի համառօտ ցուցակը, որոնք լայն հնարաւորութիւններ են ընձեռում՝ այս կամ այն ձեռագրական միաւորի համար ճիշտ վերնագիր ընտրելու: Չնայած այս հանգամանքին, հատորի հրատարակիչը չի մշակել վերնագրերը ներկայացնելու որոշակի մի սկզբունք, որի հետեւանքով ամենախայտաբղէտ ձեւերի ենք հանդիպում ժողովածուի մէջ:

Բազմաթիւ յիշատակարաններ օժտուած են ամբողջական ու ճշգրիտ վերնագրերով, որոնց մէջ նշում կայ ե՛ւ ձեռագրի բովանդակութեան, ե՛ւ հեղինակի մասին: Այսպէս օրինակ.

Ընդհանրական թուղթ Ներսէսի Շնորհալւոյ (N 3),

Գիրք հարցմանց Գրիգորի Տաթեւացւոյ (N 96),

Գիրք պարապմանց Կիւրղի Աղեքսանդրացւոյ (N 107),

Քարոզգիրք Գրիգորի Տաթեւացւոյ (N 540) եւ այլն:

Այսպիսի ամբողջական ու ճշգրիտ վերնագրերը, սակայն, բացառութիւն են կազմում: Ըստ մեծի մասի կազմողը գլացել է ընթերցողին ծանուցել այս կամ այն աշխատութեան հեղինակի անունը: Բազմաթիւ օրինակներից բերենք մի քանիսը.

N 6 միաւորը կրում է «Մեկնութիւն քաղուածոյ գրոցն Յոբայ» խորագիրը, բայց չի ասուած, որ հեղինակը Գրիգոր Տաթեւացին է:

N 7-ը դարձեալ «Մեկնութիւն Յոբայ» է, բայց սրա հեղինակն արդէն Վանական Վարդապետն է: Դարձեալ ոչինչ չի ասուած:

N 569-ը կրում է «Մեկնութիւն քերականի» խորագիրը, բայց չէ՞ որ այդպիսի բազմաթիւ միջնադարեան մեկնութիւններ կան. ո՞վ է սրա հեղինակը (դժուար չէր պարզել, որ Յովհ. Երզնկացին է):

N 100-ի տակ Ներսէս Լամբրոնացու «Մեկնութիւն սաղմոսացն Սողոմոնի» աշխատութիւնն է՝ առանց հեղինակի անուան յիշատակութեան, իսկ յաջորդ վերնագրում («Մեկնութիւն չորեքտասան թղթոցն Պօղոսի») չի նշուած Յովհան Ոսկեբերանի անունը: Եւ այսպէս շարունակ, հանդիպում ենք «Մեկնութիւն Աւետարանին Յովհաննու» (Նանայի Ասորւոյ), «Անգիտաց անպէտ» (Ամիրդովլաթ Ամասիացւոյ), «Մեկնութիւն Ղուկասու Աւետարանին» (Իգնատիոսի), «Մեկնութիւն հնգամատենին» (Վարդանայ Արեւելցւոյ), «Գիրք առաքինութեան» (Պետրոսի Արագոնացւոյ) եւ այլ վերնագրերի՝ առանց տեղեկութիւն ստանալու նրանց հեղինակների մասին: Արդ, ինչո՞ւ մի դէպքում նշում է, 3-4 դէպքում՝ անտեսում: Այս հարցին բանական պատասխան տալ հնարաւոր չէ: Հրատարակիչը պարզապէս որեւէ սկզբունքով չի ղեկավարուել կամ էլ քմահաճօրէն է ընտրել վերնագրերը:

Այս բնագաւառում միւս մեծ թերութիւնը հետեւեալն է. տասնեակ ու տասնեակ վերնագրեր իրենց կից՝ փակագծերի մէջ ունեն տարեթուեր կամ դարաթուեր, իսկ մի քանիսն էլ՝ «ժամանակ» բառը հարցական մի նշանով: Այսպէս.

Լուծմունք քերականի (1600 թ.) (N 130),

Նարեկ (ժամանակ՞) (N 157),

Յայսմաւուրք (1565 թ.) (N 219),

Յայսմաւուրք (1601 թ.) (N 533),

Քերականութիւն (ժամանակ՞) (N 221),

Ճաշոց (ԺԵ-ԺԶ դդ.) (N 598),

Մաշտոց (1364 թ.) (N 640) եւ այլն եւ այլն:

Ի՞նչ են նշանակում այդ թուերն ու դարերը: Բանասիրական աշխատանքի փորձ ունեցող ամէն ոք առաջին հայեացքից պէտք է մտածի, որ այդ թուականներով ցոյց է տրւում տուեալ աշխատութեան գրութեան կամ խմբագրութեան ժամանակը: Յայսմաւուրք ու Մաշտոց ժողովածուների տարբեր խմբագրութիւններ կան. «Յայսմաւուրք» բառի կողքին՝ 1565 կամ 1601 թ., իսկ Մաշտոցի կողքին 1364 թ. գտնողն այլ բան չի կարող մտածել, քան այն, որ դրանք յօրինուել կամ վերամշակուել են նշուած այդ թուականներին եւ այլն: Բայց պարզւում է, որ ժողովածուի կազմողը բոլորովին այլ նպատակ է հետապնդել վերնագրերին կից թուականներ նշանակելով. ցանկացել է նշել, որ այն ձեռագիրը, որի մէջ գտնւում է տուեալ յիշատակարանը, ընդօրինակուած է այս կամ այն թուականին, կամ էլ իրեն յայտնի չէ, թէ երբ է ընդօրինակուած (այս վերջին դէպքում է, որ գրում է «ժամանակ» հարցական նշանով):

Բուն ձեռագրի գրութեան ժամանակի նշումը մեր կարծիքով ոչ մի նշանակութիւն չունի ուշ ժամանակում շարադրուած յիշատակարանների ժողովածուի մէջ, իսկ եթէ այնուամենայնիւ անհրաժեշտ համարուի այդ տուեալի մատուցումը, դրա համար կարելի է գտնել տասնեակ այլ, շատ աւելի տրամաբանական եղանակներ (թէկուզ եւ համապատասխան ծանօթագրութեան մէջ նշում կատարելը):

Կան նաեւ այլ սխալներ ու թերութիւններ:

N 47 միաւորի խորագիրն է «Մխիթար վարդապետ Սկեւռացի»: Սկեւռացու ո՞ր աշխատութիւնն է՝ ոչինչ չի ասուած: N 265-ն օժտուած է «Ժողովածու» խորագրով, մինչդեռ այդ ձեռագրում հաւաքուած են միայն Գրիգոր Կեսարացու գրութիւնները (յիշատակարանը, յամենայն դէպս, վերաբերում է միայն Գ. Կեսարացու աշխատութիւններին): N 307-ը նոյնպէս «Ժողովածու» վերնագիրն է ստացել, բայց յիշատակարանի մէջ կոչուած է «Ոսկեփորիկ»: N 545-ին տրուած է «Նամականի» խորագիրը, իսկ յիշատակարանում ասուած է. «այս գիրքս, որ կոչի Հաւատոյ թուղթ»: N 659-ը կոչուած է «Գիրք մեկնութեան Գր. Տաթեւացւոյ». այդպիսի գիրք չկայ: N 683-ի «Ճառք»-ի փոխարէն ճիշտ կլինէր դնել «Վարդանգիրք» խորագիրը, որ գալիս է յիշատակարանից: N 726-ը կոչուած է «Հարցմունք քաղուածոյ», որ ոչինչ չի նշանակում: N 903-ի խորագիրն է «Առ որս», իսկ N 803-ինը՝ «Աստուածաբանութիւն Առ որս Գր. Աստուածաբանի». առաջինը խիստ թերի է, երկրորդը ճշգրիտ չէ. պէտք է լինէր «Առ որս գիրք Գր. Աստուածաբանի»: N 974-ն, ըստ յիշատակարանի, կոչուելու էր «Գիրք խոստովանութեան», մինչդեռ ստացել է «Ժողովածու» խորագիրը: Եւ այսպէս, ժողովածուի մէջ կան հարիւրից աւելի վիճելի, թերի կամ բացարձակօրէն սխալ վերնագրեր: Ասենք նաեւ, որ մի շարք միաւորներ վերնագրեր ստանալու փոխարէն կոչուել են «Պատառիկ» եւ միայն այն բանի համար, որ նրանք ամբողջապէս չեն հասել մեզ, այլ պահպանուել են խիստ թերի վիճակով ու պահւում են այժմ Մա-

տենադարանի ոչ թէ ձեռագրերի, այլ պատառիկների հաւաքածոյում: Բայց չէ՞ որ նրանց գտնուելու տեղի մասին տուեալներ հաղորդելու համար սահմանուած է վերնագրից յետոյ եկող տողը, ուստի վերնագիրը պէտք է համապատասխանէր այն ձեռագրի բովանդակութեանը, որից պոկուել ու մեզ է հասել այդ պատառիկ-բեկորը: Բարեբախտաբար, յիշատակարանները հնարաւորութիւն են ընձեռում բացայայտել բոլոր այդ պատառիկ կոչուածների վերնագրերը.

N 311՝ Գանձարան,

N 351՝ Աւետարան,

N 508՝ Մատեան նախրատութեանց,

N 704՝ Աւետարան եւ այլն:

Բերուած օրինակներն իրաւունք են տալիս առանց երկընտրանքի յայտարարել, որ յիշատակարան-միաւորների վերնագրերի մի զգալի մասը սխալ կամ անյաջող է ընտրուած:

Այժմ՝ յիշատակարանների հասցէի մասին:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ ՀԱՍՑԷՆ

Ամէն մի յիշատակարան պէտք է ունենայ իր հասցէն, այլ խօսքով՝ հրատարակիչը պարտաւոր է յստակ ու մատչելի եղանակով տեղեկութիւն հաղորդել այն մասին, թէ որտեղ է այժմ պահւում կամ տարիներ առաջ պահուել այն ձեռագիրը, որից քաղուած է տուեալ յիշատակարանը, ինչ համարի տակ է գրանցուած եւ այլն:

Արդ, քննարկուող հատորում ինչպէ՞ս է մատուցուած յիշատակարանների հասցէն: Պատասխանն այս դէպքում եւս դրական չի լինելու. ի բացառեալ մեր Մատենադարանի ձեռագրերի, որոնք ներկայացուած են «Երեւան, N (այսինչ)» դիպուկ ու պարզ բանաձեւով, այդ տեղեկութիւնը տրուած է ընթերցողի շահերից չբխող ու խառնելի ձեւերով: Հիմնաւորենք մեր յայտարարութիւնը:

Ինչպէս յայտնի է, Մաշտոցի անուան Մատենադարանից յետոյ հայերէն ձեռագրերի քանակով երկրորդ ու երրորդ տեղերը բաժանում են Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի ու Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարանները, որոնցից իւրաքանչիւրում պահւում են շուրջ չորս հազար ձեռագիր մատեաններ:

Քննարկուող ժողովածուն տպագրութեան ներկայացնելու օրերին արդէն լոյս էին տեսել Երուսաղէմի ձեռագրերի Մայր ցուցակի 6 հատորները (Ն. Պողարեանի ջանքերով), որոնցից եւ քաղուած են հարիւրաւոր յիշատակարաններ:

Ընթերցողի գործը դիւրացնելու համար ժողովածուի կազմողը երուսաղէմեան որեւէ ձեռագրի հասցէն ներկայացնելիս տրամաբանութեան բոլոր օրէնքներով պէտք է նախ գրէր «Երուսաղէմ», ապա տար ձեռագրի համարը, դրանից յետոյ նշէր ցուցակի հատորն ու էջը. այս երկրորդ տեղեկութիւնը կարելի էր մատուցել երկու տարբեր ձեւերով՝ կա՛մ Ցուցակ, I (II, III եւ այլն), էջ..., կա՛մ Ն. Պողարեան, I (II, III), էջ...:

Ուրեմն այսպէս (թիւն ու համարը նշում ենք պայմանականօրէն).

Երուսաղէմ, N 106, Ցուցակ, I, էջ 150

կամ Երուսաղէմ, N 106, Ն. Պողարեան, I, էջ 150:

Սեղմ, դիպուկ եւ ամէն ինչ ասող մի բանաձեւ:

Նոյն այս տուեալը հատորում ներկայացուած է ահա այսպէս՝ ՄՑՁԵՊ, I, N 106: Եւ ամէն այսպիսի հասցէի դէպքում ընթերցողը պարտաւորուած պէտք է լինի գտնել առաջաբանի վերջում գրուած ցանկը, ուշադիր նայել բոլոր համառօտագրութիւնները, գտնել այդ ՄՑՁԵՊ-ի բանալին, հասկանալ, որ դրա տակ պէտք է կարդալ «Մայր ցուցակ ձեռագրաց Երուսաղէմի Պողարեան(՞)» (որը ճիշտ խորագիրը չէ այդ ցուցակի)՝ այս բոլորից յետոյ միայն հասկանալու համար, որ իրեն հետաքրքրող յիշատակարանը քաղուած է Երուսաղէմի N 106 ձեռագրից:

Վենետիկի ձեռագրերի հասցէն տրուած է ՑՁՎՍ, I, II, III համառօտագրութեամբ, որը նոյնպէս խրթին է եւ անմիջական ինֆորմացիա չի պարունակում: Այսպէս են նաեւ բազմաթիւ այլ գրադարանների հասցէները:

Ժողովածուի N 29 միաւորի վերնագրի («Տաղարան») տակ հասցէն գրուած է այսպէս՝ ՏԵՐԱՎՋ, N 518: Ընթերցողը պէտք է հասկանայ, որ խօսքը Սմբատ Տէր-Աւետիսեանի «Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի» աշխատութեան մասին է: Բայց մի՞թէ աւելի դիպուկ չէր լինի գրել այսպէս՝ Նոր Ջուղայ, N 518, Ցուցակ, էջ... (այս կապակցութեամբ նշենք նաեւ, որ այդ Ցուցակը լոյս է տեսել 1970 թուականին զգալի չափով ճշգրտուած ու խմբագրուած ձեւով, մինչդեռ հրատարակիչն օգտագործել է ցուցակի սխալաշատ ձեռագիրը):

N 31 միաւորի հասցէն տրուած է այսպէս՝ ՄԻՆՋ, N 28: Այստեղ էլ մատնանշուած է նոյն Նոր Ջուղայի N 28 ձեռագիրը, որը քաղուած է Լ. Մինասեանի Ցուցակից (դարձեալ ոչ տպագրից, այլ ձեռագրից, երբ այն 1972-ին արդէն տպագրուած էր):

Ո՞վ կարող է գլխի ընկնել, որ ԼԱԼՎԳԱԻ, N 213 համառօտագրութեան տակ տրուած են Թբիլիսիի հայերէն ձեռագրերի հասցէները (ըստ այդմ ԼԱԼՎԳԱԻ նշանակելու է Ս. Գ. Լալաֆարեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Վրացական ՍՍՀ Գիտութիւնների ակադեմիայի ձեռագրերի ինստիտուտի): Իսկ մի՞թէ աւելի կարճ ճանապարհը չէր լինի այս բանաձեւը՝ Թբիլիսի, N 213, Ս. Լալաֆարեան, էջ...

Եւ այսպէս շարունակ, Մանչեստր գրելու փոխարէն գրուած է Տիրայր վարդապետ, Բուխարեստի փոխարէն՝ ՔՑԲ (իմա՝ Ս. Է. Քոլանջեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Բուդապեշտի (պէտք է լինէր՝ Բուխարեստի) հայ մշակոյթի տան ձեռագրերի), Թբիլիսիի Պետ. արխիւի փոխարէն՝ ՄՑՁՎԿՊԱ, Բրիտանական թանգարանի փոխարէն՝ CBCon, Բեռլինի փոխարէն՝ KarHB, Զմմառի փոխարէն՝ ՔՑՁՁՎ, Լենինգրադի Արեւելագիտութեան ինստիտուտի փոխարէն՝ ԼԱԱԺԻ (իմա՝ Լենինգրադի Ասիայի եւ Աֆրիկայի ժողովուրդների ինստիտուտ) եւ այլն եւ այլն:

Խուժալուր եւ անհասկանալի համառօտագրութիւններ, որոնք կարծես ստեղծուած են հէնց դժուարացնելու համար ընթերցողի գործը, մինչդեռ պէտք է կոչուած լինէին՝ դիւրին ու կարճ ճանապարհով ընթերցողին առաջնորդելու դէպի նպատակակէտ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՐՑԸ

Յիշատակարանների մասին ընթերցողին հաղորդուելիք կարեւորագոյն տեղեկութիւնները վերաբերում է հեղինակին. ո՞վ է շարադրել տուեալ յիշատակարանը, եւ ի՞նչ յարաբերութեան մէջ է այդ հեղինակը ձեռագրի հետ: Մի՛ւս՝ ոչ սակաւ կարեւոր տեղեկութիւնը վե-

բաբերում է տուեալ յիշատակարանի շարադրման վայրին՝ որտե՞ղ է գրուել յիշատակարանը:

Ահա այս 2 կարեւորագոյն հարցերի պատասխանը մեր հրատարակած ԺԴ եւ ԺԵ դարերի յիշատակարանների 4 հատորներում տրուած է հաւաքէին յաջորդող երկու տողերում, որոնք տեղադրւում են գրադաշտի աջակողմում, այսպէս.

գրիչ՝ **Յակոբ**
վայր՝ **Աղթամար**

«Գրիչ՝ Յակոբ» տուեալն այս դէպքում նշանակում է, որ ԺԵ դարի յիշատակարանների մեր ժողովածուի 3-րդ հատորի 63-64 էջերում տպագրուած N 68 յիշատակարանի հեղինակը Յակոբն է, եւ որ նա տուեալ ձեռագրի գրիչն է (եւ ոչ, ասենք, ստացողը, ծաղկողը, նորոգողը կամ գերութիւնից ազատողը): Վ. Յակոբեանն ուշադրութիւն չի դարձրել այս հանգամանքին, որի հետեւանքով ընթերցողին զրկել է տուեալ յիշատակարանի կամ յիշատակագրութեան հեղինակի մասին դիւրութեամբ տեղեկութիւն ստանալու հնարաւորութիւնից:

Մի քանի բնորոշ օրինակներով տեսնենք, թէ ինչպէս է լուծուած այս խնդիրը քննարկուող ժողովածուի մէջ.

1. N 90 միաւորը Կանոնագիրք է. որա համապատասխան տողերում գրուած

գրիչ՝ **Սիմէօն, Զախնօ**
վայր՝ **Իլով**
ստացող, նուիրատու՝ **Էսան պեյ**

Արդ, ո՞վ է այս յիշատակարանի հեղինակը՝ Սիմէօնը, Զախնօն, թէ՞ Էսան պեյը: Պարզւում է, որ դրանցից ոչ մէկը յիշատակարանը շարադրողը չէ. այդ բանը կատարել է ոչ այլ ոք, քան Յակոբ Թոխաթեցի նշանաւոր բանաստեղծ-գրիչը եւ շատ պարզ գրել է այդ մասին յիշատակարանի մէջ.

«(յիշեցէք)... եւ զիս զանպիտան Յակոբ երէցս, որ զյիշատակարանս գրեցի» (էջ 77):

Ինչո՞ւ է այսպես ստացուել: Որովհետեւ Վ. Յակոբեանը չի կարողացել իր համար պարզել մի շատ կարեւոր հարց. որպէս ի՞նչ է հանդէս գալիս ինքը՝ որպէս յիշատակարանների ժողովածուի կազմո՞ղ, թէ՞ ձեռագրերի ցուցակի հեղինակ: Ձեռագրի նկարագրողը նախ պէտք է տեղեկութիւն տայ տուեալ ձեռագրի գրչի, ծաղկողի եւ գրչութեան հետ առնչուող այլ անձնաւորութիւնների մասին. բայց յիշատակարանների ժողովածու կազմողի պարտականութիւնն է ընթերցողին անմիջապէս լուր տալ, թէ ով է տուեալ յիշատակարանի հեղինակը: Եւ այս չի գիտակցուած ողջ հատորի մէջ:

2. Որպէս N 92 միաւորի (Աւետարան) յիշատակարանի հեղինակ նշուած է՝ «Գեր. ազատող, նուիրատու՝ Պատուական»: Ո՛չ, յիշատակագիրը Միքայէլ երէցն է («Ես Միքայէլ երէցս գրեցի զյիշատակարանս» (էջ 78),- պարզ ծանուցել է նա իր յիշատակարանում):

3. N 101. Մեկնութիւն չարեքտասան թղթոցն Պօղոսի ձեռագրի կապակցութեամբ մի հսկայական ցանկ է մէջբերուած.

Գրիչ՝ **Թումայ արքեպիսկոպոս, Սիոն**
Ծաղկող, կազմող՝ **Գրիգոր վարդապետ**
Ստացող՝ **Կարապետ վարդապետ**

Ո՞վ է սորեւ բերուող ա, բ, գ յիշատակարանների հեղինակը: Պարզւում է, որ միայն Սիոնը. «Սկիզբն Թումայ արքեպիսկոպոս արարեալ էր... եւ զայլն ես՝ անարժանս Սիոն աւարտեցի» (էջ 87):

Արդ, եթէ որեւէ մէկը ցանկանայ մէջբերում կատարել այդ յիշատակարաններից, ինչպէ՞ս վկայակոչի, ո՞ւմ անունը տայ, վերոյիշեալ ամբողջ ցա՞նկը մէջբերի... Այս շիլաշփոթի փոխարէն պէտք է գրուէր միայն գրիչ՝ Սիոն. եւ այսքանը միանգամայն բաւական կլինէր մատնանշելու, որ յիշատակարանների հեղինակը Սիոնն է, որ նա ձեռագրի գրիչն է (կարեւոր չէ, որ՝ մի մասի) եւ ոչ ծաղկողը եւ այլն:

4. 137 համարի տակ կարդում ենք. Մեկնութիւն ԺԴ թղթոցն Պօղոսի

Գրիչ՝ **Սարգիս Մոկացի, Բարսեղ վարդապետ, Դիլաք սարկաւագ**
Ծաղկող եւ կազմող՝ **Գրիգոր**
Ստացող՝ **Բարսեղ վարդապետ**

Ո՞վ է յիշատակագիրը: Այս հարցին որոշակի պատասխան կայ յիշատակարանում. «Ես անարգս եւ անպիտանս յամենայնի ի գիրս գրչութեան Դիլաք սուտանուն սարկաւագս» (էջ 109): Ուստի վերոյիշեալ քառայարկ տուեալները ոչ միայն որեւէ բան չեն աւելացնում ի նպաստ ուսումնասիրողի, այլ խանգարում են պարզ ու մէկէն գիտենալու, որ յիշատակագիրը Դիլաք սարկաւագն է: Եւ այդ հինգ անունների փոխարէն կարելի էր նշել միայն նրա անունը, ահա այսպէս. «Դիլաք՝ որդի Լուսիկի»:

5. Հեռու չգնանք, վերցնենք յաջորդ՝ 138 համարը (Գիրք հարցմանց Գր. Տաթեւացու):

Արի՛ իմացիր՝ ո՞վ է շատ արժէքաւոր այդ յիշատակարանի հեղինակը: Վ. Յակոբեանը գրում է.

Գրիչ՝ **Յակոբ, Գրիգորիս, Դիլաք**
Ծաղկող՝ **Մարտիրոս, Սարգիս Խիզանեցիներ**
Ստացող՝ **Սարգիս կրօնաւոր**

Հասկանալի է, որ յիշատակարանները կոլեկտիւ ուժերով չեն ստեղծւում, եւ այդ գործը տուեալ դէպքում կատարել է վերոյիշեալ եղբայրական գերեզմանի մէջ մտած Մարտիրոս Խիզանցին, որը ոչ միայն ծաղկողն է, այլեւ մի մասի գրիչը: Իր կատարած գործի մասին նա գրել է. «Աջողմամբն Աստուծոյ աւարտեցաք եւ ծաղկեցաք, զարդարեցաք ոսկով եւ լաջուարդով եւ երանգ երանգ դեղօք ես՝ մեղաւոր Մարտիրոս Հիզանցիս»:

Ձեռագրի ցուցակ կազմողն, անշուշտ, պէտք է տեղեկութիւններ հաղորդէր միւս գրիչների, ծաղկողների եւ պարագաների մասին, բայց յիշատակարաններ հրատարակողից պահանջւում է մաղել այդ բոլորը եւ գտնել, թէ ով է տուեալ շարադրանքի իսկական հեղինակը:

6. Եւս մէկ օրինակ. N 224 միաւորի (Աւետարան) կապակցութեամբ գրուած է.

Գրիչ՝ **Յոհաննէս քահանայ**
Ծաղկող՝ **Խաչատուր քահանայ**
Ստացող՝ **Խօջայ Աղաջան**

Մինչդեռ շատ կարեւոր այս յիշատակարանի հեղինակը Խաչատուրն է. գրչութեան վայրը նշուած է Մոկք, Հիզան, բայց իրականում գրուած է Հիզանում:

Ուրեմն պէտք է գրուած լինէր.

Ծաղկող՝ **Խաչատուր**
Վայր՝ **Հիզան**

7. N 254. Յայսմաւուրք

Գրիչ՝ **Սարգիս, Յովանէս, Կիրակոս Հիզանցիներ**
Ստացող՝ **մէլիք Սարգիս**

Խիստ արժէքաւոր պատմական բովանդակութեամբ այս յիշատակարանը շարադրել է Սարգիս Հիզանցին. միւսների անունները աւելորդ են:

8. N 439. Աւետարան

Գրիչ՝ **Միքայէլ**
Ծաղկող՝ **Ղազար քահանայ**
Ստացող՝ **Մինաս Թեոդուպօլսեցի**

Իրականում յիշատակագիրը գրիչ Ղազարն է. «Յիշեցէք... զՂազար գրիչս, որ լոկ անուամբ եմ կոչեցեալ քահանայ»:

9. N 468. Աւետարան

Գրիչ՝ **Յակոբ երէց**
Ստացող, նուիրատու՝ **խօջայ Աւետիք**

Զորս յիշատակարաններից բաղկացած այս միաւորի ամենակարեւոր հատուածը Գ-ն է, որ մի չափածոյ է՝ գրուած Յովհաննէս Երզնկացու «Զարթի՛ր ի քնոյ մեղաց»-ի նմանողութեամբ: Ծայրակապով (ակրոստիքոսով) յօդւում է հեղինակի անունը՝ Աւետիք, բայց նրա անունը բնաւ չի յիշւում:

10. N 549. Կանոնագիրք

Այս համարի տակ բերուած է Ջալալիների շարժման ամենահարուստ սկզբնաղբիւրներից մէկը՝ Ազարիա Սասնեցու չափածոյ յիշատակարանը (էջ 437–450). նրա անունը ոչ մի տեղ չի նշուած:

11. N 550. Կանոնագիրք

Ամբողջ յիշատակարանը գրուած է Յակոբ Քէօթահիացի եպիսկոպոսի կողմից, որն իր անունից (առաջին դէմքով) պատմում է իր կենսագրութիւնը եւ այլն. մինչդեռ որպէս հեղինակ նշուած է գրիչ Ասլանի անունը:

12. N 729. Վարք հարանց

Գրիչ՝ **տէր Մինաս, Մելքոն դպիր**
Ծաղկող՝ **Յովանէս**
Ստացող՝ **Մինաս Կարնեցի**

Արդ, ո՞վ է ընդարձակ յիշատակարանի հեղինակը: Անշուշտ Յովհաննէսը, որը գրել է. «...ես անարժան Յովանէս գրիչս ոչ համարձակեցայ ձեռնամուխ լինել...» եւ այլն: Պատմում

է, որ յանձն առնելուց յետոյ գրչութեան գործը յանձնարարել է իր աշակերտներին՝ Մինասին եւ Մելքոնին, եւ այլն:

Պարզ չէ՞ միթէ, որ յիշատակարանի հեղինակը հէնց Յովհաննէսն է:

13. N 808. Գիրք պատճառաց

Գրիչ՝ **Վարդան Հիզանցի**
Ստացող՝ **Բարսեղ վարդապետ**

Մինչդեռ ա. յիշատակարանի հեղինակն է Յոհան Բաղիշեցին, որ բնաւ չի յիշւում:

14. N 844. Աւետարան

Գրիչ՝ **Մելքոն դպիր**
Ծաղկող՝ **Յովանէս, տէր Մինաս**
Ստացող, նուիրատու՝ **խօջայ Պօղոս**

Այս չորս անձնաւորութիւններից Յովանէսն է յիշատակագիրը. «Որ եւ ես մեղապարտ Յովանէս գրիչս ուսուցանող նորին՝ ծաղկեցաք...»,– գրել է նա իր մասին: Շարունակենք այս թուարկումն աւելի արագ եւ այլեւս թուահամարի տակ չառնելով:

N 220. Աւետարան

Գրուած է՝ հետ. ստացող նուիրատու՝ **Սէթ**:

Պէտք է լինի՝ **Գրիգոր Դարանաղեցի**:

N 246. Գիրք Առաքինութեան

Գրուած է՝ Գեր. ազատող՝ **խօջայ Սաւար**:

Պէտք է լինի ՝ **Յովանէս երէց Գահլուեցի**:

(«Գրեցաւ սակաւ յիշատակարանս գրոցս ձեռամբ խոցիւ խոցեալ անարժան Յովանէս իրիցու, որ եմ յերկրէն Ղարբերդու, ի գեղջէն Գահլուայ», էջ 197):

N 265. Ժողովածու

Չի նշուած՝ ո՞վ է յիշատակարանի հեղինակը. մինչդեռ պարզ է, որ այդ ժողովածուի մէջ եղող «Ողբերգական բանք»-երի հեղինակ Գրիգոր Կեսարացին է (նշանաւոր անձ):

N 268. Աւետարան

Գրուած է՝ հետ. ստացող, նուիրատու՝ **Սմբատ**:

Պէտք է լինի՝ յիշատակագիր **Յովհաննէս վարդապետ**:

(վայրը չի նշուած, մինչդեռ յայտնի է՝ Վան)

N 281. Աւետարան

Գրուած է՝ հետ. ստացող՝ **խօջայ Աղաջան**:

Պէտք է լինի՝ **Շաղաւաթ, որդի խօջայ Խլղաթի, վանեցի**:

N 320. Աւետարան

Գրուած է՝ հետ. ստացող՝ **Միրի Թուման**:

Պէտք է լինի. Յիշատակագիր՝ **Քրիստոսատուր երէց:**

N 415. Ժողովածու

Մէջբերուած է Դաւիթ Զէյթունցու չափածոյ տաղերի հեղինակային յիշատակարանը, ուստի նախ՝ վերնագիրը «Ժողովածու» չպիտի գրուէր, եւ ապա՝ պէտք է նշուէր՝ հեղինակ՝ Դաւիթ Զէյթունցի:

N 768. Աւետարան

Գրուած է՝ Հետ. ստացող՝ **Մուրատբեկ:**

Պէտք է լինի. Յիշատակագիր՝ **Աստուր:**

N 774. Աւետարան

Գրուած է՝ Հետ. ստացող՝ **Մինաս:**

Պէտք է լինի՝ **Ովանէս** («ես ծառայի փեսայ Ովանէս գրեցի զայս գիրս»):

N 799. Աւետարան

Յիշատակարանի հեղինակի մասին բան չի ասուած, մինչդեռ պարզ գրուած է. «Գրեցաւ սակաւ յիշատակս… ձեռամբ Զաքարայ Վանեցոյ իրիցու»:

N 932. Աւետարան

Գրուած է՝ Հետ. ստացող՝ **Մահտեսի Յեայլա:**

Պէտք է լինի. Յիշատակագիր՝ **Սիմէոն (վայր՝ Ախըլցխայ):**

Օրինակները կարելի է դիւրութեամբ կրկնապատկել:

Այս հատուածը պէտք է ամփոփել այսպէս. ժողովածուից օգտուողը զրկուած է իրեն անհրաժեշտ յիշատակարանը վկայակոչելիս շարադրողի անունը նշելու հնարաւորութիւնից, որովհետեւ կազմողը 3-4-5 անուն է շարել իրար ետեւից (յիշատակելով բոլոր գրիչներին, ծաղկողներին, ստացողին եւ այլն)՝ մի բան, որ ոչ մի օգուտ չի բերում, եւ ընդհակառակը՝ գլացել է ցոյց տալ, թէ ով է տուեալ յիշատակարանի շարադրողը:

Սրա հետ միասին, բազմիցս ճիշտ չի որոշել յիշատակարանի հեղինակի անունը եւ դրան յատկացուած տողի վրայ յիշատակագրի փոխարէն գրել է ձեռագրի հետ առնչուող այլ մարդկանց անուններ:

Այս հարցի հետ սերտ աղերսւում է մի շարք յիշատակագրութիւններ ունեցող միաւորի առանձին մասերի դասդասման եւ իւրաքանչիւրի հեղինակի յիշատակման կարեւորագոյն հարցը, որին անդրադառնում ենք յաջորդ բաժնում:

ՆԻՒԹԵՐԻ ԴԱՍԴԱՍՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Ձեռագրերի մեծամասնութեան մէջ գրչութեան հանգամանքների մասին, ընդարձակ յիշատակարանից բացի (որ սովորաբար գրւում է վերջում), տարբեր գլուխների աւարտին կամ լուսանցքների վրայ ու տողատակերին գրչի, ծաղկողի, ստացողների եւ այլ անձնաւորութիւնների կողմից գրուած են լինում մեծ ու փոքր յիշատակագրութիւններ:

Արդ, ի՞նչ հերթականութեամբ պէտք է դասդասուեն յիշատակարաններն ու յիշատակագրութիւնները: Յիշատակարանների ժողովածու կազմողի համար այս հարցն, անշուշտ,

կարեւոր է:

Մենք վարուել ենք այսպէս. **նախ** գրել ենք գլխաւոր յիշատակարանը, **ապա՝** նոյն այդ յիշատակարանի հեղինակի (գրիչ, ծաղկող եւ այլն) միւս յիշատակագրութիւնները, **դրանից յետոյ՝** ուրիշ անձանց յիշատակագրութիւնները: Ըստ որում, ամէն մի յիշատակագրութեան վերին աջ կողմում նշել ենք նրա հեղինակի անունը եւ գրչութեան վայրը, եթէ, իհարկէ, ուրիշ մէկն է այդ յիշատակարանի շարադրողը:

Վ. Յակոբեանն այդպէս չի վարուել: Ճիշտ է, գլխաւոր յիշատակարանը մեծ մասամբ տպագրել է առաջին տեղում, սակայն յաջորդ յիշատակագրութիւնները շարադասել է ոչ ըստ հեղինակների, այլ ձեռագրի մէջ նրանց գրաւած տեղի (ըստ էջերի հերթականութեան): Եւ բնաւ անհրաժեշտութիւն չի զգացել ցոյց տալու դրանց հեղինակներին: Այսպիսով, ընթերցողն ինքն է որոշելու, թէ ով է իրեն հետաքրքրող այս կամ այն յիշատակագրութիւնը շարադրել՝ արդեօք գլխաւոր յիշատակարանի հեղինա՞կը, թէ՞ մի այլ անձնաւորութիւն:

Այսպէս օրինակ՝ N 3 միաւորի («Ընդհանրական թուղթ») Ա եւ Բ յիշատակարանների հեղինակն Աւետիս կաթողիկոսն է, մինչդեռ Գ-ը գրել է Աստուածատուր Ամասիացին, բայց այդ մասին նշում չկայ: N 24-ի Ա եւ Գ յիշատակարանները գրիչ Կարապետինն են, բայց Բ-ի հեղինակը Փիլիպոս ծաղկողն է: N 64 միաւորի 4 յիշատակարաններն էլ վերագրուած են գրիչ Մատթէոս աբեղային, մինչդեռ Բ-ը շարադրուած է Իսահակ ստացողի կողմից կամ նրա անունից: N 65-ը բաղկացած է 3 միաւորից, որոնք բոլորն էլ վերագրուած են Թորոս դպրին, մինչդեռ Բ-ը գրել է ոմն Աստուածատուր, իսկ Գ-ն՝ անծանօթ մէկը: N 70-ի 3 յիշատակարանն էլ վերագրուած են գրիչ Բարսեղ Վարագեցուն, սակայն առաջինը շարադրել է Աւետիս Մոկացին, երկրորդը՝ այդ Բարսեղը, իսկ երրորդը չի իմացւում, թէ դրանցից որ մէկը: N 105-ը 8 միաւորից է բաղկացած: Ընթերցողին է թողնուած որոշել դրանց հեղինակներին: Պարզւում է, որ Ա-ը վաճառող Մարտիրոս Վանեցու յիշատակարանն է, Բ-ը՝ ծաղկող Զաքարիա Աւանցունը, Գ-ը, ըստ երեւոյթին, ստացող պ. Յովհաննէսինը, Դ-ը՝ Համարարքատի գրիչ Յովհաննէս աբեղայինը, Ե-ը՝ գրիչ Կարապետինը, յաջորդ 3-ը՝ հաւանաբար նոյն գրչինը: Հասկանալի է, որ մենք հնարաւորութիւն չունենք ստոյգ որոշելու այս հարցը, քանի որ յիշատակարանների գրութեան տառաձեւերի եւ հնագրական այլ առանձնայատկութիւնների մասին տուեալները ձեռագրի մէջ են, իսկ ձեռագրի մանրակրկիտ ուսումնասիրութիւնն այս առումով ժողովածուի կազմողի առաջնահերթ պարտականութիւններից մէկն է:

180-րդ համարի տակ բերուած է ութ յիշատակարան-յիշատակագրութիւն: Գլխաւորը վերջինն է, ուստի պէտք է հրատարակուէր նախ այդ միաւորը, ապա միւսները, որոնք մի քանի տողանոց մանր գրութիւններ են:

N 208՝ բաղկացած է 11 միաւորից. որանցից 8-րդը կալուածագիր է (ճիշտ կլինէր չհրատարակել), միւսները գրուած են Կիրակոս ծաղկողի, Ստեփանոս երէցի, Ներսէս Մոկացու, ուստայ Վարդանի եւ գուցէ ուրիշների կողմից, բայց շարադասուած են ըստ էջերի հերթականութեան:

N 457-ի 5 միաւորներից Ա, Գ, Ե-ը պատկանում են նորոգող Ստեփանոսին, իսկ Բ, Դ-ը՝ ոմն Յովհաննէսի, մինչդեռ դրանք, ըստ էջերի հերթականութեան դասդասուած լինելով, ագուցուել են մէկը միւսի արանքում:

N 875-ի տակ բերուած են 5 յիշատակարաններ, որոնք, ըստ հրատարակողի,

պատկանում են նորոգող-ծաղկող Խաչատուրին եւ Հեռ. ստացող Գրիգորին: Պարզւում է, սակայն, որ վերջինս (Գրիգորը) ոչ մի յիշատակարան չունի: Խաչատուրը շարադրել է միայն Ա եւ Բ միաւորները, Գ-ը պատկանում է նորոգել տուող Մանուկին, Ե-ը՝ կազմող Թորոսին, իսկ Դ-ը մնում է անորոշ:

Ահա այսպէս, խառնաշփոթ ձեւով է դասդասուել մէկ միաւորի տակ համախմբուած յիշատակարան-յիշատակագրութիւնների մեծագոյն մասը (Հմմտ. նաեւ NN 459, 807 եւ այլն եւ այլն): Չի բացայայտուած իւրաքանչիւրի հեղինակը, չեն համախմբուած տուեալ անձնաւորութեան կողմից շարադրուած յիշատակագրութիւններն իրար կից: Դասդասման ելակէտը եղել է ամէն մի ենթամիաւորի գրուած տեղը ձեռագրի մէջ (ըստ էջերի հերթականութեան)՝ մի հանգամանք, որ ոչ մի առնչութիւն չունի այդ միաւորների բովանդակութեան, գրութեան հանգամանքների կամ հեղինակային պատկանելութեան հետ:

Հասկանալի է ուրեմն, որ ԺԷ դարի յիշատակարանների յետագայ հատորները հրատարակութեան պատրաստելիս պէտք է վերանայուեն նաեւ նիւթի մատուցման հետ առնչուող այս հարցերը:

ԳՐՉՈՒԹԵԱՆ ՎԱՅՐ

Պատմա-բանասիրական աշխատութիւնների մէջ, ինչպէս յայտնի է, անցուդարձերի յաջորդականութեանն ու ժամանակագրութեանը համահաւասար, ջանքեր են թափւում՝ պարզելու, թէ աշխարհագրական ինչ միջավայրում, որ նահանգում, գաւառում կամ մեծ ու փոքր բնակավայրում է տեղի ունեցել այս կամ այն եղելութիւնը՝ լինի այն աշխարհացունց մի իրադարձութիւն կամ տեղական նշանակութիւն ունեցող մի դէպք: Հաշուի առնելով ահա այս հանգամանքը՝ ամէն մի աղբիւրագէտ իր կողմից հրատարակութեան պատրաստուող սկզբնաղբիւրի գիտական մշակման ընթացքում պարտաւոր է առաւելագոյնս օգտագործել առկայ տուեալներն ու ակնարկները՝ պարզելու համար, թէ որտեղ է շարադրուած այն: Այս առումով շատ աւելի ուշադիր պէտք է լինի ձեռագրական յիշատակարաններ հրատարակող բանասէրը, քանի որ հայ միջնադարեան մշակոյթի տարբեր բնագաւառների ուսումնասիրողի համար յաճախ մեծ կարեւորութիւն ունի այս կամ այն յիշատակարանի կամ յիշատակագրութեան շարադրման վայրի ճիշտ որոշումն ու մատնանշումը:

Մեր հրատարակած յիշատակարանների ժողովածուներում ամէն մի յիշատակարանի հեղինակի մասին նշում կատարելուց յետոյ, յաջորդ տողով, մատնացոյց ենք արել գրչութեան վայրը, իսկ տեղանունների ցանկում ըստ հնարաւորութեան փորձել ենք որոշել նաեւ քիչ յայտնի բնակավայրերի ու վանքերի վայրը՝ պատմական Հայաստանի ո՞ր նահանգում են գտնուել եւ այլն:

Չի կարելի ասել, թէ քննարկուող հատորի հեղինակն անտեսել է յիշատակարանների շարադրման վայրի մասին տեղեկութիւնները: Նա եւս, հետեւելով նախկինում հրատարակուած հատորներին, համապատասխան տողի վրայ վայր հարցին պատասխանել է՝ նշելով այս կամ այն յիշատակարանի գրչութեան վայրի անունը:

Այսպէս օրինակ՝

Վայր՝ Կ. Պոլիս (N 2)
Վայր՝ Ենկիւրիայ (N 4)
Վայր՝ Կաֆայ (N 5) եւ այլն:

Բայց, ցաւօք, այդպէս արել է քմահաճօրէն, կարծես ըստ տրամադրութեան: Շատ յաճախ յիշատակարաններում գրչութեան վայրի մասին կան որոշակի տուեալներ, որոնք բոլորովին հաշուի չեն առնուած, իսկ որոշ դէպքերում էլ կան ուշագրաւ ակնարկներ, որոնց հիման վրայ կարելի էր բանասիրական աշխատանք կատարել ու երեւան բերել վայրի անունը, բայց այս հնարաւորութիւններն էլ չեն օգտագործուած:

Ստորեւ տալիս ենք մի ընդարձակ ցանկ այն միաւորների, որոնց գրչութեան վայրը քննարկուող հատորում չի նշուած, բայց առանց մեծ ջանքերի պարզել ենք մենք: Հէնց սկզբից ասենք, որ ցանկը դիւրութեամբ կարելի էր ընդարձակել (աւելի պարզ լինելու համար՝ իւրաքանչիւր համարից յետոյ պէտք է տայինք այսպիսի կամ նման մի բացատրութիւն. «Գրչութեան վայրը չի նշուած, բայց յայտնի է, որ գրուած է այսինչ վայրում». կրկնութիւններից խուսափելու մտահոգութեամբ՝ այդ բանաձեւից հրաժարւում ենք ու յիշատակարանի հերթական համարին առընթեր, անմիջապէս, նշանակում մեր կողմից պարզուած վայրի անունը).

N 65 – Ղրիմ
N 97 – Եղեգիս
N 118 – Հաւանաբար՝ Երեւան
N 265 – Կեսարիա
N 268 – Վան
N 271 – Խարբերդի շրջան
N 272 – Սալմաստի Մալհամ գիւղ
N 355 – Ատրէնիս գիւղ
N 370 – Կաֆա
N 389 – Թոխաթի շրջան
N 434 – Երուսաղէմ
N 443 – Հալէպ
N 456 – Գորի
N 465 – Կալիպոլի
N 487 – Երուսաղէմ
N 489 – Երուսաղէմ
N 502 – Կեսարիա
N 594 – Տրապիզոն
N 687 – Մշոյ Առաքելոց վանք
N 688 – Ամրդոլու վանք
N 699 – Տաթեւ
N 704 – Ղարաջալու գիւղ
N 714 – Տաթեւ
N 720 – Լեհաստան
N 722 – Ղրիմի Ս. Նշանի վանք
N 724 – Սեբաստիա
N 725 – Զէյթուն
N 731 – Արտաշիկ գիւղ
N 739 – Համիթ
N 762 – Նարեկայ վանք
N 774 – Արագածոտնի Շիրիղլա գիւղ
N 778 – Մշոյ Առաքելոց վանք
N 779 – Հալէպ
N 804 – Վրաստան
N 821 – Գանձակի շրջան՝ Համասարաբակ գիւղ
N 824 – Շնող գիւղ
N 893 – Երուսաղէմ
N 927 – Երուսաղէմ
N 932 – Ախալցխա
N 944բ – Ջնուկ գիւղ
N 1004դ – Գաւառ (Նոր Բայազէտ)
N 1016 – Հալէպ
N 1026 – Սեբաստիա

Այսպիսով, յիշատակարանների մի զգալի մասն առանց գրչութեան վայրի է ներկայացուել ոչ թէ այն պատճառով, որ այդ մասին տուեալներ ու ակնարկներ չեն գրանցել իրենք՝ յիշատակագիրները, այլ որովհետեւ առկայ տուեալները զլացել է բացայայտել ու ներկայացնել ժողովածուի հրատարակիչը: Այս թերութիւնը հիմնականն է քննարկուող հարցի կապակցութեամբ, բայց ոչ միակը:

Քիչ յայտնի կամ բոլորովին անյայտ տեղանունները յաճախ նշւում են այնպէս, որ ընթերցողի համար պարզ չի լինում, թէ որտեղ են գտնւում դրանք: Օրինակ՝ որպէս N 31 յիշատակարանի վայր նշուած է Քարթման տեղանունը: Առաջին հայեացքից կարող է թուալ, թէ խօսքը Արցախի Գարդման գաւառի մասին է, մինչդեռ հէնց յիշատակարանում ասուած է, որ այդ մի գիւղ է Սպահանի շրջանում: Ըստ այդմ, պէտք է գրուէր՝ վայր՝ Սպահանի շրջան, Քարթման գիւղ:

N 66 – գրուած է Խաչլու, ճիշտ կլինէր՝ յերկիրն Բասենու ի գիւղն Խաչլու

N 72 – գրուած է Հիլի՝ յերկիրն Ռոտան, ի գիւղն Հիլի

N 78 – Խառց՝ յերկիրս Նախչուանայ, ի գիւղս Խառցն

N 100 – Խուփ՝ Վասպուրական, ի գիւղս Խուփ

N 111 – Արխոստ՝ յերկիրն Կարուց, ի գիւղն Արխոստ

N 129 – Սէպ՝ յերկիրս Մոկաց, ի գիւղս Սէպ

N 737 (եւ բազմաթիւ այլ յիշատակարաններ) – գրչութեան վայր նշանակուած է «Դաշտ», բայց չի ասուած, թէ նոյն անունը կրող 3 վայրերից (Գողթան Դաշտ, Մոկաց Դաշտ, Սպահանի Դաշտ Թաղամաս) որն է:

Նման օրինակների թիւը տասնեակներով կարելի է հաշուել:

Անորոշութեան ու սխալների տեղիք են տալիս նաեւ կրկնակ տեղանունները, որ յաճախ նշուած են վայր հարցին առնթեր: N 138 միաւորի գրչութեան վայրերն, ըստ հրատարակչի, երկուսն են՝ Սեբաստիա եւ Խիզան: Պարզւում է, որ Յակոբ անունով մի գրիչ ձեռագրի ընդօրինակութիւնն իրօք սկսում է Սեբաստիա քաղաքում, բայց առուփախից յետոյ կիսակատար ձեռագիրը բերուել է Խիզան եւ աւարտուել ու ծաղկուել այնտեղ: Խիզանում էլ գրուել է յիշատակարանը:

Ճիշտ այսպէս, ոչ թէ Խիզանում եւ Վանում, այլ միայն Վանում է շարադրուել N 254 յիշատակարանը. ոչ թէ Սեբաստիայում եւ Ռումինիայի Եաշ քաղաքում, այլ միայն Եաշում է շարադրուել N 349 յիշատակարանը եւ այլն եւ այլն: Հրատարակիչը երկուական անուններ է մէջբերում՝ դարձեալ չփոխելով իր առջեւ դրուած խնդիրը. տուեալ ժողովածուն ձեռագրաց ցուցակ չէ, այլ յիշատակարանների ժողովածու, իսկ ամէն մի յիշատակարանի ընթերցող պէտք է տեղեակ լինի, թէ որտեղ է շարադրուած տուեալ յիշատակարան-միաւորը. իսկ թէ ինչ ուրիշ վայրեր են տարբեր առիթներով յիշուած այդ յիշատակարանում, այդ մասին տուեալներն իրենց համապատասխան տեղն են գտնելու տեղանունների ցանկի մէջ եւ ո՛չ յիշատակարանին կից:

Մի երկու օրինակով ցոյց տանք, որ ժողովածուի մէջ կան նաեւ գրչութեան վայրի սխալ նշումներ: N 81 միաւորը գրուած է ոչ թէ Բոլնիսում (այդպէս է ծանուցում հրատարակիչը), այլ Շամախի Ակէոյ վանքում («Աւետարանն ի Մոկս գրեցի՝ ի Բոլնիս, ի դուռն Ս. Գէորգայ, եւ յիշատակարանս՝ ի Շամախ, ի յԱկեոյ վանք», էջ 71): N 244-ը Ջզիրէում է շարադրուած եւ ո՛չ Արտամետում, N 492-ը՝ Բարիձորի վանքում եւ ո՛չ Պոռ գիւղում եւ այլն եւ այլն:

Գրչութեան վայրի եւ ընդհանրապէս տեղանունների բացայայտման, նշման եւ ծանօթագրման հարցերին մենք դեռ անդրադառնալու ենք ստորեւ, երբ հերթը կհասնի տեղանունների ցանկի բնոյթին եւ նրա մէջ տեղ գտած անճշտութիւններին ու թերութիւններին:

Այժմ տեսնենք, թէ ինչպէս է իրագործուած բուն նիւթի, այսինքն՝ յիշատակարանների վերծանութիւնը:

ԲՆԱԳՐԻ ՎԵՐԾԱՆՈՒԹԻՒՆԸ

Ժողովածուի կազմողները (ե՛ւ հանգուցեալ ակադեմիկոս Աշոտ Յովհաննիսեանը, ե՛ւ գիտութիւնների դոկտոր Վազգէն Յակոբեանը), փորձառու եւ հմուտ աղբիւրագէտ-բանասէրներ լինելով, ինչպէս եւ սպասելի էր, յիշատակարանների մեծ մասը յաջողութեամբ են վերծանել ու հրատարակել: Բայց այս բնագաւառում եւս կան թերութիւններ, որոնց բացայայտումը, յուսով ենք, նպաստելու է յաջորդ հատորների կատարելութեանը: Մեր կողմից նշուած թերութիւնները վերաբերում են ե՛ւ վերծանութեանը, ե՛ւ կէտադրութեանը, ե՛ւ ուղղագրութեան ու չակերտման ձեւերին, ե՛ւ բնագրի մշակման այլ կողմերին: Ուստի որոշ հերթականութեամբ ստորեւ անդրադառնալու ենք դրանց՝ հարիւրաւոր օրինակներից մէջբերելով միայն մի քանի բնորոշները:

Որեւէ նոր սկզբնաղբիւր հրատարակողից ընթերցողները պահանջում են նախ եւ առաջ այնպէս վերծանել բնագիրը, որ ճիշտ արտացոլուի հեղինակի շարադրանքը՝ արդի աղբիւրագիտութեան ընձեռած հնարաւորութիւններով (գիտական կէտադրութիւն, առանձին բառերի ու տառերի ընդգծումներ, փակագծեր, չակերտներ, ծանօթագրութիւններ եւ այլն) պարզաբանելով մութ տեղիները, շտկելով ու մատնացոյց անելով սխալներն ու վրիպակները եւ այլն:

Արդ, որքանո՞վ է յաջողուել սոյն հատորի հրատարակչին բարձր մակարդակով լուծել վերոյիշեալ խնդիրները:

Յիշատակարանների մի զգալի մասի նկատմամբ անկարող պէտք է լինենք այս հարցին դրական պատասխան տալ: Նախ ծանօթանանք որոշ օրինակների (թուարկումը կատարում ենք ըստ յիշատակարանների տարեթուերի):

1. Ոմն Աթաճան մասնակցել է մի Աւետարանի ձեռքբերմանը, ինչպէս ինքն է ասում, «ի հալալ վաստակոց իմոց (տպ. իմոյ)» տալով անհասկանալի մի բան՝ վարթեղն (էջ 64): Ի՞նչ է նշանակում վարթեղ (պարտէ՞զ, թէ՞ մի այլ բան). Հրատարակիչը ո՛չ ծանօթագրում է, ո՛չ հարցական նշանով տեղեկացնում, որ իր համար նոյնպէս նախադասութեան իմաստն անհասկանալի է: Մինչդեռ ուշադիր լինելու դէպքում դիւրութեամբ այդ չինծու բառը կարելի էր տարալուծել վարթ եւ եղ մասերի: Կստացուէր, որ Աթայճանն իր Վարթ անունով եղն է տուել Աւետարանի գինը:

2. N 164 յիշատակարանում կարդում ենք. «Գէնջոյ զուլն երեա Թէկէտաման խիստ կոտրեց» (էջ 133): Արդ, ի՞նչ է արել Գանձակի զուլը (=ժամկոչը). Թէկէտաման-ը, որ տպագրուած է շղագիր ու մեծատառով որպէս տեղանուն, որտե՞ղ է գտնւում եւ ի՞նչ է նշանակում եւ այլն: Ընթերցողն անկարող է լուծել այս հարցերը, որովհետեւ վերծանութիւնը ճիշտ չի կատարուած. հաւանաբար ձեռագրում եղել է այսպէս. «Գենջոյ զուլն երեկ (այսինքն՝ եկաւ եւ ոչ՝ երեա-տուեց) թէկէտ աման խիստ կոտրեց»: Այս մասին տեղեկութիւններ կան նաեւ N 166 յիշատակարանում, ուր ասուած է. «Գանձայու զուլն ի

անգամ գնաց ի երկիրն Գեղամայ, բազում գերիս գերեաց...» եւ այլն (էջ 134): Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ Թէժէտ վայրը Գեղամայ երկրում է գտնուել եւ այլն:

3. N 169 յիշատակարանում ուրիշների հետ միասին յիշատակւում են նաեւ Խուս Մկրտիչ եւ Բնայ Բուշարաթ անունով անձնաւորութիւններ: Եւ որովհետեւ Խուս եւ Բնայ բառերը տպագրուած են շղագրով ու գլխագրով, ուստի համարուել են անձնանուան մասեր, մինչդեռ խուս Վասպուրականի գաւառաբարբառներում նշանակում է հիւսն, իսկ բնայ-բաննահ՝ սրանք այդ անձանց արհեստի անուններն են, ուստի պիտի տեղ գտնէին նաեւ առարկայական ցանկի «Արհեստներ» բաժնում (էջ 825):

4. Ոմն Նիկողոս 1606 թ. ստանում է Կեղծ Կալիսթենեսի «Պատմութիւն Աղեքսանդր Մակեդոնացու» երկի մի օրինակ եւ գրում, որ ձեռք է բերել «այս Աղեկսա(ն)տրս մեղաւոր եւ անարժան եթեայցի Նիկողոս...»: Աղեքսանդր անունը շղագրով տպագրելով՝ հրատարակիչն այն ընկալել է որպէս յիշատակարանում նշուած անձնանուններից մէկը:

5. Կոստանդնուպոլսի հայաբնակ հնագոյն թաղամասերից է Սուլու Մանաստր կոչուածը: Տարբեր յիշատակարաններում հրատարակիչն այդ տեղանունը ներկայացնում է Սուլու Մանասար (էջ 311), Սուլու Մանասիր (էջ 350, 400) ձեւերով եւ ոչ մի անգամ՝ ճիշտ: N 227 ձեռագիրն ընդօրինակուած «ի քաղաքն Իստամպալ, ի վանքն /// տիր» (տիր տառերից առաջ չի ընթերցուել). դժուար չէ լրացնել այդ բառը [Սուլու Մանաս]տիր ձեւով:

6. N 405 յիշատակարանը շարագրուած է Խիզան քաղաքում՝ «ի Թագաւորու /// պասին»: Հրատարակիչը բացակայող տառերը լրացնում է առանց որեւէ հիմքի եւ պատմական տուեալների. «ի Թագաւորու/թեան շահ/ Աբա/զ/ին (էջ 327)՝ հաշուի չառնելով, որ Խիզանը երբեք չի եղել Սեֆեանների տիրապետութեան տակ:

7. Դաւիթ Ջէյթունցին գրել է չափածոյ տումար՝ իր կատարած աշխատանքի մասին ասելով.

Յիմար Դաւիթս Ջէյթունցի

Զատկաւ տումարս խոտ հանի... (էջ 333)

Խոտ բառի առաջին տառը շղագիր տալով՝ հրատարակիչը յուշում է, որ այստեղ ինչ-որ սխալ կայ, բայց ի՞նչ: Շարքային ընթերցողն ինչպէ՞ս լուծի այս հանելուկը: Դրա համար պէտք է նայուէին Ջէյթունցու տումարի՝ Մատենադարանում պահուող միւս ձեռագրերը. Թերեւս նրանց մէջ գտնուէր անաղարտ որեւէ օրինակ: Բայց առանց դրա էլ կարելի էր այս տարօրինակ խոտ-ի խ-ն սրբագրել ի եւ կարդալ.

«Զատկաւ տումարս ի ոտ հանի», այսինքն՝ ոտանաւորով շարադրեցի:

8. Մոկսի եկեղեցիներից մէկը կոչուել է Երեքխորան: N 676 յիշատակարանում ասուած է, որ մահմեդականները «քակեցին զերեք խորան» (էջ 529), եւ որովհետեւ մեծատառով չի տրուած, թւում է, թէ երեք տարբեր եկեղեցիների աւերման մասին է խօսքը: Մոկսում գրուած մի այլ յիշատակարանի մէջ (N 764) ասուած է, որ Աւետարանի ընդօրինակութիւնը կատարուած է «ընդ հովանեաւ հանդար(տ)եալ երեք խորանիս» (էջ 577): Իհարկէ սխալ է վերծանուած. պէտք է լինի ոչ թէ հանդարտեալ, այլ հանդարեալ, խանդարեալ (Մոկացու համար խ-ի եւ հ-ի շփոթութիւնը սովորական է), որ նշանակում է «աւերուած, տակնուվրայ տրուած»:

9. Լվոյցի Սարգիս գրիչն ասում է, որ ձեռագրի ընդօրինակութիւնը կատարել է «ծերա-

ցեալ անձամբ ԻԵ (25) ամեայ գոլով» (N 801, էջ 599): Պարզ է, որ յիշատակարանի առաջին հրատարակիչները տառաւոր թիւը ճիշտ չեն վերծանել, եւ, նկատի ունենալով, որ բոլորագիր Ի եւ Հ տառերը շատ նման են միմեանց, պէտք է թիւը սրբագրուէր (եթէ ոչ բնագրում, ապա տողատակում՝ ծանօթագրութեան մէջ)՝ ՀԵ (75):

10. N 953ն յիշատակագրութեան մէջ կարդում ենք այսպիսի բառեր. «Այս բանս Զատիկ շաբաթ օր դէք (sic) ժամի դահն աւարտ եղեւ»: Հրատարակիչը դէք բառի կողքին sic նշանակելով՝ ծանուցում է, որ ձեռագրում այսպէս է, բայց իր համար անհասկանալի է:

Sic լատիներէն նշանակում է «այսպէս»: Իսկ ինչո՞ւ լատիներէն բառն օգտագործել եւ ո՛չ հայերէնը, կամ ինչո՞ւ հայերէն հարցական նշանի փոխարէն յաճախ դնել լատինական ? նշանը՝ մեզ համար անհասկանալի է մնում: Միով բանիւ, այդ sic-ն այստեղ միանգամայն անտեղի է, որովհետեւ դէք նշանակում է Դ-էք, այսինքն՝ չորեք («Զատկի օր չորեք ժամի դահն աւարտ եղեւ»):

Նման կարգի բազմաթիւ sic-երից ծանօթանանք եւս մէկին:

Ամիր-Սարգիս գրիչը 1601 թ. ընդօրինակած իր ձեռագրի յիշատակագրութիւններից մէկում գրում է. «Վայ ճպուկ (sic) Ամիր Սարգիս դպիր գրչիս» (էջ 38): Մի՞թէ ձեռագրագիտական մեծ փորձ էր պէտք՝ հասկանալու համար, որ ճպուկ-ը հարիւրապատիկ բառի ամենասովորական համառօտութիւնն է, ուստի որեւէ sic-ի կարիք չի զգացւում նաեւ այս դէպքում:

11. Հայերէն ունենք շատ նոյնանիշ բառեր, որոնցից են նաեւ սէր (զգացմունք, գրւում է է-ով) եւ սեր (կաթի սերուցք, գրւում է եչ-ով):

Աւետիս Մոկացի գրիչը N 70 յիշատակագրութիւններից երրորդում երկու անգամ, չափածոյ խօսքերով շնորհակալութիւն է յայտնում Բարսեղ վարդապետին (կամ մէկ ուրիշի, պարզ չի իմացւում) այն բանի համար, որ իր աշխատանքի ընթացքում իրեն սեր են տուել՝ ասելով՝ մեղրով խառնեա ու կեր, եւ այլն:

Գրագէտ գրիչը շատ լաւ իմացել է, որ կաթնասեր սերը եչ-ով է գրւում, եւ այդպէս էլ գրել է, բայց մեր հրատարակիչը, դա տառասխալ համարելով, երկու անգամ էլ սեր բառի ե տառը ներկայացրել է շղագրով՝ կարծելով, թէ մատնացոյց է անում գրչի «սխալը», բայց իրականում՝ ինքն ընկնելով սխալի մէջ:

12. Աղթամարի Գրիգոր Փոքր կաթողիկոսը, Երուսաղէմից վերադառնալով հայրենիք, Վասպուրականի նշանաւոր վանքերի համար նուէրներ է բերել. «...քիմխայ վարակոււ մի Ս. Ստեփանոսին, վեց ժամու գտակ պատկերով արծաթի առաքելոցն, երեք ժամու չապիկ...» եւ այլն (էջ 62):

Առաքելոց բառն այստեղ, ըստ երեւոյթին շաղկապուած լինելով ժամու գտակների պատկերների հետ, տրուած է փոքրատառով, որով եւ Առաքելոց վանքն առանց նուէրների է մնացել:

13. Ոսկան անունով մի տանուտէր իր Փաշա տիկնոջ հետ միասին, անզաւակ լինելով, գրել է տուել մի Աւետարան իր յիշատակը յաւերժացնելու համար: Յիշատակարանում կարդում ենք այսպիսի անիմաստ տառակապակցութիւններ. «որդի Ա, փափաքայ գծիւ ? գրել տուին սբ. Աւետարան» (հարցականը հրատարակչինն է): Պա՞րզ չէ միթէ, որ ձեռագրում գրուած է եղել «որդիափափաք ըղձիւ» (էջ 64):

Մէկ ուրիշը՝ Մելքսեդէթ Սեբաստացի, գերութիւնից ազատել է մի Նարեկ. «իմ տեսեալ զայս մատեանս ի ձեռս հենից ասպատակողաց եւ փաղաքշանաւք ժանեցայ մինչ զի կամք տրարին տալին զսայ» (էջ 132). Նախորդի պէս անիմաստ տառախումբ, որ կարելի էր վերծանել տալ ինձ սայ ձեւով:

14. Ձեռագրագէտ-բանասէրների առջեւ յաճախ ծառանում են նաեւ բառանջատման դժուարութիւններ, որոնք, սակայն, լուծւում են անձնական փորձով եւ արդէն կատարուած հայագիտական աշխատանքների օրինակով: Միջնադարեան բնագրերի հետ գործ ունեցող բանասէրների համար այսօր արդէն պարզ յայտնի է, որ իլի (լիքը) բառը, որ շատ յաճախ է հանդիպում յիշատակարաններում («մեղօք իլի»), պէտք է գրել որպէս մէկ բառ եւ ոչ՝ ի լի անջատ ձեւով: Հատորում, սակայն, հաւասար չափով գործածուած ենք գտնում այս երկու ձեւերն էլ. ըստ երեւոյթին հրատարակիչը հետեւել է ձեռագրի գրիչներին՝ չունենալով որոշակի տեսակէտ:

Ոմն Բարսեղ վարդապետ Համիթ քաղաքում ընդօրինակել է Գր. Տաթեւացու «Գիրք հարցմանցը», բայց ձեռագիրն անկատար է մնացել, որովհետեւ, ինչպէս ինքն է գրում, «մեր գնացեալ եղաք ի Ս. Առաքելքն, որ տէղապաշհէաք երկրին եւ սպասաւոր նորին Ս. Առաքելոյն» (էջ 155): Պարզ է, ընդգծուած «տէղապաշհէաք» անիմաստ կապակցութիւնն առաջացել է ոչ ճիշտ բառանջատումից. ձեռագրում, անշուշտ, եղել է «տեղպահ էաք»: Ըստ այդմ, Բարսեղը Տարօնի տեղապահ-աթոռակալ եպիսկոպոսն է եղել:

Գրուած է «մեծ ազգի» («եւ մայրն է քո մեծ ազգի», էջ 175) որպէս երկու առանձին բառեր, երբ պէտք է գրուէր «մեծազգի»-ագնուական: Գրուած է «զհամեստ եւ զհարկ եւ որ յամուսին» (էջ 196): Հարկ եւ որ ոչինչ չի նշանակում. ձեռագրում, անշուշտ, եղել է հարկեւոր, այսինքն՝ «պատուաւոր, մեծարանքի արժանի»:

Կարդում ենք «սեպտեմբեր ամսոյ Իէ (27)-նի, օրն շաբաթ» (էջ 227). պէտք է լինի. ...Իէ (27)-ն, ի օրն շաբաթ:

«Բայց թէ ախորժես մատաւր» (էջ 159). պէտք է լինի ախորժ ես:

«Հէնցեղ պատուհասել էր ետ » (էջ 315). պէտք է լինի էրետ:

«յերկրէն Բաղըշոյի, (ի) գեղջէն Նէլայ» (էջ 324). պէտք է լինի Բաղըշոյ, ի գեղջէն:

«որ կոչի մականուն Քաշոտի, թվին ՌՃԹ (էջ 383). պէտք է լինի Քաշոտ, ի թվին:

«սխալանաց եւ խոշորութեան, մեղադիր լերուք» (էջ 405). ձեռագրում հաւանաբար եղել է խոշորութե, անմեղադիր լերուք:

«Յահեղաւորն որ տէրն գայ» (էջ 622). պէտք է լինի յահեղ աւուրն:

«զաղապատն եւ զշիրանն նայերաց» (էջ 741). առաջին բառերը հաւանաբար կազմի պարագաներ են, իսկ նայերաց ոչինչ չասող բառը պէտք է գրուէր նայ երաց (այսինքն՝ նա արեց) ձեւով եւ այլն, եւ այլն:

15. Շատ անխնամ են վերծանուած նաեւ անձնանունները. այս մասին դեռ առիթ կունենանք որոշ խօսք ասելու անձնանունների ցանկի կապակցութեամբ: Այստեղ, սակայն, հարկ է բերել ոչ ճիշտ ներկայացուած մի շարք անուններ:

«Փոքր Մալազին տէր Գրիգորին» (էջ 105) արտայայտութեան մէջ առանձին անձնանուններ է համարում Մալազ եւ Գրիգոր, մինչդեռ մալազ հաւանաբար նշանակել է

երիտասարդ[1]:

Ջոհալ անուան փոխարէն տպագրել է Ոհալ (էջ 186) (զ-ն հայցականի յօդ է համարել):

«Քաթումին» (էջ 189). պէտք է լինի՝ Քա(մալի)թումին:

«զգիրքս ովբայ» (էջ 197). պէտք է լինի՝ Ովբայ, այսինքն՝ Յոբի գիրքը:

«Ալախչուլի» (էջ 241). պէտք է լինի՝ Ալախղուլի:

«Մէլիքշաղաւաթ» (էջ 297). պէտք է լինի՝ մէլիք Շաղաւաթ:

«Ըռէֆիլիպըն նոր ծառիկ» (էջ 382). հրատարակիչը Ըռեփլիպը անձնանուն է կարծել. պէտք է լինի՝ Ըռէ փլիպն՝ նոր ծաղիկ (այսինքն՝ Re Philippe արքայն Փիլիպպոս, որ դարձրել են անձնանուն. կայ նաեւ Վիեննայի մի ձեռագրում. տե՛ս **Հ. Աճառեան**, Անձն., Դ, 318):

«զԱրդարիկ» (էջ 423). պէտք է լինի՝ Զարդարիկ:

«Ով Ջանում եղբայր» (էջ 605). Ջանում-ը անձնանուն է կարծել, բայց լոկ ջանս, հոգիս բառն է:

«Ո(հ)գոհի» (էջ 661). (հ)-ն աւելորդ է. ճիշտ ձեւը Ոգոհի է:

«Շատ չարաչար տանջեցին, միաբանեցան եկան: Մրուաթ թագաւորին է մնացել, հրաման ետ թագաւորն...» (էջ 738). Մրուաթ-ը անձնանուն է կարծել, մինչդեռ այստեղ մրուաթ բառն է, որ նշանակում է «բարեգործութիւն, գթառատութիւն» եւ այլն եւ այլն:

16. Վերծանութեան սխալների տեսականին ամբողջացնելու համար մէջբերենք նաեւ մի շարք օրինակներ (իհարկէ՝ ընտրովի), որոնք այլ բնոյթի են.

Մի յիշատակարանի մէջ կարդում ենք. «թողութիւն արէք մեր ա /// գիր եւ ծաղիկ եւ կազմն այս է» (էջ 9). ուրեմն ա տառով սկսուած մի բառ մնացել է անընթեռնելի կամ ջնջուել-աչնչացուել է: Վերծանողը, իմաստից ելնելով, այն պէտք է վերականգնէր ա/ռաջին»/՝ ըստ այդմ ամբողջացնելով նախադասութեան իմաստը:

Ջուղայեցի մի յիշատակագիր թուարկում է ժամանակի հայ առաջնորդներին՝ կաթողիկոս, Ստեփանոս Նախավկայի վանահայր, Ջուղայի առաջնորդ, եւ ամենավերջում գրում է. «///նուարութիւն խօ///գարէս» (էջ 15): Հրատարակիչը առաջին վնասուած տառախումբը, որ առանց տարակոյսի կարելի էր վերծանել [տա]նուտրութիւն, թողել է անվերծանելի, իսկ երկրորդ տառախումբն առաջարկել է կարդալ խո[ջայ Սար]գարէս, որ յոյժ կասկածելի է, քանի որ ԺԷ դարի առաջին տարիներին Հին Ջուղայի տանուտէրը խոջա Սափարն էր:

«Եւ ոչ ով ակլում չանէ» (էջ 198). պէտք է լինի՝ աւելում չանէ. այս մի բանաձեւ է, որին բազմիցս հանդիպում ենք վիմագիր արձանագրութիւնների մէջ, նշանակում է՝ վէճ չբացի եւ այլն:

«Եւ բազում զօրաւք չահ Աբասն ի վերայ երկրին Արարատեան» (էջ 278). կիսատ է մնում միտքը, որովհետեւ առաջին եւ-ը անտարակոյս եղել է եկ («եկ բազում զօրաւք...»):

Սահակ Վանեցի գրիչն իր յիշատակարանի վերջում գրում է. «Աստուած ողորմի Աստուած-ողորմի ասացողացն» (էջ 301). այսինքն՝ Աստուած ողորմի բոլոր նրանց, ովքեր

1 [Մալազն տերմինը յուն. մոնազոնն է (կուսակրօն, միայնակեաց). տե՛ս Լ. Մելիքսէթ-բէկի յօդուածը՝ "Хр. Вост.", II, вып. III, с. 399: Խմբ.]

«Աստուած ողորմի» ասելով կփչնի իրեն եւ իր ազգականներին: Հրատարակչի համար, սակայն, անիմաստ է թուացել այս «կրկնութիւնը» եւ նա, սուրանկիւն փակագծերի մէջ առնելով երկրորդ «Աստուած ողորմին», դրանք առաջարկել է դուրս նետել որպէս թիւրիմացաբար կրկնուած բառեր:

Եւ այսպէս, կարելի է հարիւրաւոր (չափազանցութեան համար չի ասուած այս խօսքը) նման օրինակներ բերել, որոնք, լրացնելով մէկը միւսին, իրաւունք են տալիս եզրակացնելու, որ յիշատակարաններից շատերի բնագրերն անփոյթ ու անխնամ են վերծանուած:

Միջնադարեան բնագրեր հրատարակող ու գիտական շրջանառութեան մէջ դնող բանասէրը աղաւաղուած տեղինները, գրչագրական վրիպակները, կասկածելի վերծանութիւնները մատնացոյց անելու տարբեր ձեւերից է օգտւում: Երբ այս կամ այն բառի տառերից մէկ-երկուսը գրչի ագիտութեան հետեւանքով կամ նրա խօսած բարբառի ազդեցութեամբ ձեռագրում գրուած է լինում գիտական տառադարձութիւնից շեղուող ձեւերով, բայց այդ տարբերութիւնն այն աստիճանի չէ, որ բառն անհասկանալի լինի, ընդունուած է այդ մէկ-երկու տառը տպագրութեան ժամանակ շարել այլ տառատեսակով. դիցուք՝ խորեդփայր, անէցք եւ այլն: Գրչի ուշադրութիւնից վրիպած տառերը վերականգնւում են հրատարակչի կողմից՝ ուղղագիծ փակագծերի մէջ առնելով. սուրանկիւն փակագծեր են օգտագործւում կրկնուած բառերը մատնացոյց անելու համար եւ այլն:

Այս բոլոր եղանակներից հրատարակիչն օգտւում է լայնօրէն: Սակայն նրա ելակէտը հին հայերէնի ուղղագրական այն համակարգն է, որ մխիթարեան բանասիրութեան կողմից օրինականացուել է ԺԹ դարի առաջին տասնամեակների ընթացքում: Եթէ որեւէ գրիչ գրում է Տիգրանա, Գանձակա, Էջմիածնա, Վանա, Հաոց, Իսմաելեան, մերո, իւրո եւ այլն (բառավերջին ա-ից եւ ո-ից յետոյ յ չնշանակելով), այսպիսի դէպքերում գրեթէ ամէնուրեք հրատարակիչը «շտկում» է բառը՝ վերջում (ուղղագիծ փակագծերի մէջ) աւելացնելով յ տառը. այսպէս՝ Տիգրանա[յ], Գանձակա[յ], Էջմիածնա[յ], Վանա[յ], Հա[յ]ոց, Իսմա[յ]ելեան, մերո[յ], իւրո[յ] եւ այլն:

Հրատարակողի սկզբունքն այս է, բայց ինչպէս այլ դէպքերում, այս անգամ էլ այն հետեւողականօրէն չի կիրառուած. հանդիպում ենք նաեւ Լօվա աշխատեցա, արեղակս, վաելել տա, ի վերա եւ այլն բառերի, որոնց վերջում յ չի գրուած: Եւ եթէ ա եւ ո տառերով աւարտուող բառերի վերջում գրաբարեան ուղղագրութեանը հարազատ մնալու համար հրատարակողն աւելացրել է յ տառը, նոյն տրամաբանութեամբ նա պէտք է սուրանկիւն փակագծերի մէջ առնելով կամ ընդգծելով մատնացոյց անէր այն տեղերը, ուր յ տառը գրուած է սխալմամբ. օրինակ՝ նոքայ, ապայ, գնայ, ջանայ, տայ եւ այլն: Սակայն այդպէս չի արուած:

Ասացինք արդէն, որ առանձին տառերի գրութեան գրաբարեան ուղղագրութեան սկզբունքներին չհամընկնող ձեւերը հրատարակիչը մատնացոյց է արել սխալ գրուած տառը կամ տառերը ներկայացնելով այլ տառատեսակով. օրինակ՝ ցանքալի, ընդերձող, ձեռքս փոր, յանտքնի, աղքատասեր, խարիպ, փափաք, անկէալ, էղէ, հոգէլից, աւեդարան, սարկաւագ եւ այլն եւ այլն (այս մի քանի օրինակները քաղել ենք մի քանի պատահական էջերից):

Բայց ինչո՞ւ այդպէս է վարուել գրեթէ կէս առ կէս: Կարելի է բազմաթիւ օրինակներ բերել հէնց նոյն էջից, նոյնիսկ նոյն նախադասութիւնից, երբ որեւէ սխալ գրուած տառ ընդգծուած է, իսկ մեկ ուրիշը՝ անտեսուած: Մի քանի օրինակ էլ բերենք այս կարգի

բառերից. բաղցանք, վաղնճուց, փափաք, հան (խանի փոխարէն), շայ (շահի փոխարէն), անց (անձի փոխարէն), անէցք, խեխթեց, սրախոհոհ, յուռի (յոռի փոխարէն), մղտեցի, կայր (կարի փոխարէն), խնտիր, միուս, ծաղկաւէդ, դաստարակ, փծուն, արուփ, փանակ խոր (հօր փոխարէն) եւ այլն եւ այլն (սրանք նոյնպէս պատահական օրինակներ են):

Մենք թերեւս այսքան երկար կանգ չառնէինք յիշատակագրերի սխալների «շտկման» այս եղանակներին, եթէ նրանց անհարկի կիրառումը շատ դէպքերում բնագիրը շտկելու փոխարէն այն աւերած չլինէր:

Ուրիշ առիթով մենք արդէն նշել ենք, թէ ինչպէս կաթի սերը հրատարակչի մեղքով շփոթուել է սէր զգացմունքի հետ: Կան այդպիսի ուրիշ օրինակներ եւս:

Երկու տարբեր յիշատակարաններում, գրուած 1602 եւ 1603 թթ., տեղեկութիւն կայ Ջամստէ քաղաքի պարիսպների եւ դարպասի բարաւորի (դռան շրջանակի վերին սեմի) կառուցման մասին. «Յորում ամի կամարեցաւ բարաւոր դրանց պարսպի քաղաքիս» (էջ 77), «Յայսմ ամի կամարեցաւ բարաւոր դրունց քաղաքիս» (էջ 118): Հրատարակիչը, քիչ գործածուող բարաւոր բառը փառաւոր բառի աղաւաղում համարելով, վերայիշեալ երկու դէպքում էլ այն «շտկել» է՝ բ եւ ր տառերը շղագրով տպագրել տալով («բարաւոր»):

1607 թ. մի յիշատակագիր գրում է. «դառն եւ լեղի ժամանակ հասանք մենք» (էջ 279). աշխարհաբար է եւ հէնց այս տեսակէտից՝ հետաքրքրական: Բայց ամէն ինչ գրաբարի վրայ ձեւելու անընդունելի միտումով հրատարակիչը մենք-ի ն տառը շղագիր է ներկայացնում՝ չանդրադառնալով, որ նոյն վիճակում է (այսինքն՝ աշխարհաբար է) նաեւ դրան նախորդող հասանք-ը:

Մէկը գրում է «առ Աստուած են փոխել» (էջ 580). փոխել բառը նոյնպէս աշխարհաբար է. հրատարակիչն ուղղագիծ փակագծերի մէջ մի ա է աւելացնում եւ նախադասութիւնը դարձնում գրաբար. «առ Աստուած են փոխե/ա/լ»: Մի տեղ կարդում ենք. «որք կարդայք կամ աւրինակէք, նայ ողորմիս ասէք» (էջ 473). ամէն ինչ կարծես կարգին է (Նայ բառն այստեղ նամանաւանդ-ի բաղադրիչը կամ արեւմտահայերէնի նէ-ն է՝ մօտաւորապէս «ապա» իմաստով): Այդ բառից յետոյ հրատարակիչը փակագծերի մէջ մի եւ է աւելացրել՝ խաթարելով իմաստը: «Ի թագաւորութեան Հիզնայ միր Հասանին» (էջ 345). ի՞նչն է այստեղ պակաս. ըստ հրատարակչի՝ Հիզնայ ճիշտ չէ, պէտք է լինի Հիզանայ եւ փակագծերի մէջ, մի հարցական նշանով՝ աւելանում է այդ ա-ն... Մի գրիչ իր մասին ասում է, որ «Խ (40) տարի է, որ անպարապ ի գրել եմ (էջ 94). ի գրել եմ, այսինքն՝ գրելով եմ զբաղուած եղել: Նկատելով, որ սա եւս գրաբարեան արտայայտութիւն չէ՝ դարձեալ «շտկում է»՝ ի տառն (ի գրել եմ) անկիւնաւոր փակագծերի մէջ առնելու ճանապարհով անվաւեր յայտարարելով: Ձեռագրում գրուած է «քերքըս» (էջ 89). շտկուած է ք(ւ)երքըս: Ձեռագրում Զաքարայ անունը բազմիցս «շտկում է» Զաքարիայ. ձեռագրում՝ Սիմոն (էջ 472), դարձնում է Սիմ(է)ոն. ձեռագրում՝ Համիթացոյ (էջ 532), դարձնում է Համիթաց(ւ)ոյ եւ այլն եւ այլն:

Այս կարգի «շտկումներից» միջնադարեան բնագրերը բնաւ չեն շահում: ԺԷ դարում ապրած յիշատակագիրները նաեւ իրենց ուղղագրութեամբ (գուցէ սխալագրութեամբ) իրենց ապրած ժամանակի հարազատ ծնունդն են ու արտայայտիչը: Ուստի գիտական գործ չէ գրաբարի ուղղագրութեան մկրատով նրանց խուզելն ու յարդարելը: Հայ աղբիւրագէտի պարտքն է գրաբարի հետ զուգընթաց, հարազատօրէն վերարտադրել նաեւ միջին հայերէնը, միջնադարեան աշխարհաբարի ու գաւառաբարբառների առանձնայատկութիւնները, եթէ նրանք երեւան են գալիս ձեռագրական յիշատակարաններում, վիմական արձանագրութիւն-

ներում կամ այլ սակաւաթիւ սկզբնաղբիւրներում:

Մի քանի խօսք նաեւ Հրատարակուած յիշատակարանների պատմական արժէք չունեցող մասերի կամ բացարձակ կրկնութիւնների կրճատման մասին: Հրատարակիչը, իրաւամբ հետեւելով այս բնագաւառում աշխատանք կատարած նախորդ բանասէրներին, այդպիսի հատուածները դուրս է թողնում ժողովածուից: Կրճատուած հատուածները ցոյց են տրւում բազմակէտերով, ըստ անհրաժեշտութեան գրւում են նաեւ ծանօթագրութիւններ եւ այլն: Երբեմն, սակայն, կրճատումներն այստեղ կատարուած են առանձին նախադասութիւնների միջնամասից, երբ իմաստը գնալով չի ամբողջացել: Այսպիսի անյաջող կրճատման օրինակներ հետաքրքրուողը կարող է գտնել քննարկուող հատորի 83, 515, 602, 691, 721 եւ բազմաթիւ այլ էջերում:

Կարելի՞ է արդեօք «Ով հանդիպի սմա կարդալու կամ օրինակելու...» կամ «եւ ինքն որ առատ է ի տուրս բարեաց...» եւ կամ «եւ ինքն Քրիստոս կոչւալն աշխատողաց...» կիսատ նախադասութիւններով պարբերութիւնը փակել:

Հատորի մէջ կան նաեւ բազմաթիւ չափածոյ յիշատակարաններ, որոնց վերծանութիւնը լրացուցիչ դժուարութիւնների հետ է կապուած, ուստի հաժառօտակի անդրադառնանք նաեւ այս կարգի յիշատակարանների պղբերագիտական մշակման մակարդակին:

ՉԱՓԱԾՈՅ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Հատորում տեղ գտած չափածոյ յիշատակարաններից մի քանիսը բացառիկ պատմական արժէք ունեն, իսկ աւելի քչերը զուրկ չեն նաեւ գեղարուեստական արժանիքներից:

Բնագրի վերծանութեան հետ սերտ աղերսի մէջ են չափածոյ ամբողջական յիշատակարանների կամ առանձին չափ ու կշռոյթով գրուած հատուածների ճիշտ ներկայացման, ծայրակապ բառերի բացայայտման մտահոգութիւնները: Հէնց սկզբից ասենք, որ այս առարկէզում նոյնպէս կան անակնկալներ: Նախ մի շարք ուշագրաւ չափածոյ հատուածներ ներկայացուած են արձակ ձեւով եւ ակնարկ անգամ չի արուած դրանց չափ ու կշռոյթով գրուած լինելու մասին: Այսպէս՝ N851 յիշատակարանում կարդում ենք.

Մեղօք լցեալ եմ յաշխարհի,
Ի բարի գործս մերկ եւ ունայն,
Զանունս ունեմ քահանայի,
Գործովս չար ու անարժան:

Զձեզ աղաչեմ սուրբ ընթերցողք
Յիշման առնեք զիս արժան (պէտք է լինի արժանի),
Բազում ջանիւք աշխատեցայ
Յաւարտ հասի (պ. լ. հանի) զԱւետարան...

Եւ այսպէս մինչեւ յիշատակարանի վերջը (էջ 633):

Չափածոյ է նոյնպէս N 885գ յիշատակագրութեան վերջին մասը.

Ես Յովանէս սարկաւագ Տզաղեցի,

Որ նորա աշակերտ էի,
Ապայ որ մնաց այնպիսի
Յետոյ ես առի գրեցի,
Պակասընին ամէն լցի.
Մատթէոսոյ, Մարկոս իլիի,
Թէր ու թուփն այլ ես քաշեցի
Ապա ամէնն կատարեցի,
Որ թամամ արի, կապեցի,
Յիշատակ առ ձեզ թողեցի,
Ով որ հանդիպի ընթերցի
Մի բերան ողորմի ասի (էջ 657):

Չնկատուած չափածոյ են նաեւ N 988 յիշատակարանի վերջին պարբերութիւնը (էջ 685) եւ N267 յիշատակարանի մի մասը.

Վա՜յ եւ եղուկ վերայ իմ հոգոյն,
Որ տեսաք տագնապ սովոյն,
Զի այլք կերան զմիս մարդոյն,
Զտղայս խաբեալ տանէին ի տուն,
Զենեալ կերան զերթ զանասուն (էջ 212):

Գուցէ լինեն մեր կողմից չնկատուած ուրիշ յիշատակարաններ եւս:

Ըստ երեւոյթին սրանց հակակշռելու մտահոգութեամբ հրատարակիչը ոտանաւոր է դարձրել սովորական արձակով գրուած մի շարք յիշատակարաններ: Մարդ մնում է զարմացած, որ չափածոյ են համարուած նոյնիսկ այսպիսի սովորական տողեր. «Զայս մեծ գանձս ստացուածային տեսեալ Ստեփանոս քահանայն եւ որդի նորա Մելքիսէդեկ քահանայն, ետուն գրել զԱւետարանս յիշատակ իւրոց եւ ծնողաց իւրոց: Որք ընթեռնուն կամ տեսանեն բոլոր սրտիւ զողորմին տան...» եւ այլն (N81, էջ 69):

Չափածոյ չէ նաեւ ոտանաւորի ձեւով ներկայացուած N 610բ յիշատակագրութիւնը. «Զանբաժս ի բարեաց եւ զանգեղջս ի չարեաց, զպիտակ անուն երէց կոչեցեալ Յակոբ, աղաչեմ յիշել ի միտս բարի, զի եւ ձեզ լիցի մասն բարի ի տվողէն հանայնի» (էջ 486):

Ոտանաւորի ձեւով է տպագրուած նաեւ N 419 յիշատակարանի վերջին արձակ հատուածը (4 տող) եւ այլն:

Միւս նշանակալից թերութիւնը ոտանաւոր յիշատակարանների հրատարակման չափ ու կշռոյթի պահպանման մտահոգութեան իսպառ բացակայութեան հետ է կապուած: Պատմական հարուստ բովանդակութեամբ չափածոյ յիշատակարանների մէջ մեծ քանակութեամբ թուեր ու թուականներ են նշուած հայոց այբուբենի թուահաշուով: Յիշատակագիր-բանաստեղծները, սակայն, երբ գրել են գիցուք Ճ կամ Ռ, նկատի են ունեցել, որ ընթերցողներն այդ թուերը համապատասխանաբար կարդալու են հարիւր եւ հազար (երկվանկանի բառեր), որով եւ ամբողջանալու է տուեալ տողը՝ համապատասխանելով իր կշռոյթին:

Ստեփանոս Թոխաթեցին, իր հայրենի քաղաքի գովքը հիւսելով, 1607 թ. գրել է.

Աւարտեցաւ գիրգըս գանձի
Հայոց մեծի թըւականի,
ՌԾԶ աւելի
Սեպտեմբերի ԺԴ-ին...

կամ՝

Հարիւր Ռ բարով իլի...
Վեց Ծ տուն կայր յայն թաղի (էջ 245, 249 եւ այլն):

Արդ, ինչպե՞ս են կարդացել միջնադարում նման կարգի տասնեակ ու հարիւրաւոր թիւ ու թուական պարունակող չափածոյ տողերը. «ՌԾԶ աւելի» բառերն, օրինակ, կարելի է բաժանել վանկերի եւ արտասանել այսպէս. «Ռը-Ծը-զա-ւե-լի» կամ «Ռը-Ծը-զը-ա-ւե-լի»՝ ստանալով համապատասխանաբար 5 կամ 6 վանկանի տողեր:

Բայց չէ՞ որ ստանաւոր յիշատակարանն ամբողջապէս գրուած է 8 վանկանի տողերով: Ուստի, անտարակոյս, վերոյիշեալ տողերը պէտք է վերծանուէին ու տրուէին իրենց հնչիւնական արտայայտութեամբ: Այսպէս.

Հայոց Մեծի թըւականի
Հազար ճարիւր վեց աւելի
Սեպտեմբերի տասնչորսի...
Հարիւր ճազար բարով իլի...
Վեց ճարիւր տուն կայր յայն թաղի

եւ այլն:

Տողատակի ծանօթագրութիւնները հէնց նրա համար են, որ նման դէպքերում ընթերցողին ծանուցեն, որ այս կամ այն թիւն ու թուականը ձեռագրում գրուած են Հայոց թուահաշուի այս կամ այն կարգով:

Խօսքը, սակայն, թուականներին չի վերաբերում միայն: Սուրբ բառը հրատարակիչն ամէնուրեք, մեզ համար անընդունելի պատճառաբանութեամբ, հապաւում է սբ. կամ ս. ձեւով (նոյն տրամաբանութեամբ պէտք է համառօտուէին նաեւ Աստուած, Յիսուս, Քրիստոս, Տէր եւ այլ տէրունական անունները, որ միջնադարեան աղբիւրներում, ինչպէս սուրբ բառը, միշտ ու ամէնուրեք համառօտուած են ներկայացւում): Եթէ արձակով գրուած յիշատակարաններում այդ հանգամանքը որեւէ դժուարութիւն չի առեղծում, չափածոյ յիշատակարանների մէջ խախտում է չափն ու կշռոյթը:

Ստեփանոս Թոխաթեցու վերոյիշեալ յիշատակարանում, օրինակ, կան այսպիսի տողեր.

Նախ Ս. Աճ/ա/րոն եկեղեցի
Ի առ յոտըն Ս. Լուսօրչի:

Հրատարակիչն ինքը դժուարութիւնների առջեւ է կանգնել այս տողերն ընդօրինակելիս: Ձեռագրում գրուած է «Նախ Ս. Աճրոն եկեղեցի». Ս-ն վանկ չհամարելով՝ հրատարակիչը 8

վանկանի տողն ապահովելու համար Աճրոնը դարձրել է Աճարոն, բայց ստանաւորի հեղինակը գրել է «Նախ-սուրբ-Աճ-րոն // ե-կե-ղե-ցի» եւ բնաւ երբէք՝ «Նախ Սա-ճա-րոն // ե-կե-ղե-ցի»:

Որ հրատարակիչն ինքն իսկ չի կողմնորոշուել, թէ ինչպէս պէտք է ճիշտ ընթերցուեն տառաթուեր պարունակող չափածոյ տողերը, պարզ երեւում է տարբեր մէջբերուող օրինակներով:

Ոմն Մարտիրոս դպիր 1613 թ. շարադրել է չափածոյ մի յիշատակարան 8 վանկանի տողերով: Եւ ահա այդ տողերից երկուսը հրատարակիչը մատուցել է այսպիսի կերպարանքով.

Ի Ռ թվականի ԿԲ յարաբարթի
Գրեալ եղեւ բան եւ գործի (էջ 502):

Պա՞րզ չէ միթէ, որ այս երկտողի առաջին տողը երկու ինքնուրոյն տողերի տարօրինակ մի համաձուլուածք է, որ կեանքի է կոչուել տառաթուերի վերծանման ու ընթերցման տարրական կանոնների խախտման ճանապարհով: Պարզ է, որ վերծանումն ու տողատումը պէտք է կատարուէր այսպէս.

Ի /մէկ/ ճազար թվականի
Վաթսուն երկու յարաբարդի
Գրեալ եղեւ բան եւ գործի:

Մէկ ուրիշ օրինակ՝ N 760 չափածոյ յիշատակարանում կան այսպիսի տողեր.

Ես անարժան ամասիացի...
Որ Կարապետ անուամբ կոչի,
Ի թվականիս ՌԿ-ի Ե աւելի յարայ բարթի (էջ 574):

Սրա վերջին տողը նոյնպէս երկու ինքնուրոյն տողերի արհեստական կցման արդիւնք է, որ կատարուած է տառաթուերի վերծանման պարզ կանոնների անգիտութեան հետեւանքով: Այդ արհեստական տողը պէտք է վերծանուէր ու երկու մասի բաժանուէր այսպէս.

Ի թվականիս ճազար վաթսնի
Հինգ աւելի յարաբարթի:

Չափածոների մասին մեր ասելիքը սպառելու համար նշենք, որ N 481 յիշատակարանի չափածոյ բաժինը գրուած է 8-ական վանկ պարունակող սովորական տողերով, սակայն հրատարակիչը երկուական տողեր միաձուլել ու 16-վանկեայ տողեր է ստեղծել՝ հաշուի չառնելով յանգաւորման տուեալները (իւրաքանչիւր 8-րդ վանկ աւարտւում է ի-ով):

Ըստ այդմ, ցաւով արձանագրելու ենք, որ քննարկուող ժողովածուի մէջ տեղ գրաւած չափածոյ յիշատակարանների աղբիւրագիտական մշակումը նոյնպէս անփութօրէն է կատարուած: Ոչ ընդունելի սկզբունքներով առաջնորդուելով՝ հրատարակիչը շատ տեղերում խախտել է ստանաւորի չափն ու կշռոյթը, դժուարացրել պատմագեղարուեստական որոշակի նշանակութիւն ունեցող այդ սկզբնաղբիւրների օգտագործման հնարաւորութիւնները:

ԿԷՏԱԴՐՈՒԹԻՒՆ

Ժողովածուի կազմողն իր առաջաբանում ասում է, որ «յիշատակարանները բերուած են նոյնութեամբ՝ պահելով ուղղագրութիւնը: Միայն փոփոխուած է ձեռագրերից քաղուած բնագրերի կէտադրութիւնը, որովհետեւ գրիչների մօտ այն խիստ անկանոն է» (էջ ԻԵ): Միանգամայն իրաւացի է: Ձեռագիր սկզբնաղբիւրները, սակաւ բացառութեամբ, հնարաւոր չէ հրատարակել գրիչների կողմից դրուած կէտադրութեամբ, քանի որ միջնադարում գիտական կէտադրութեան հարցերը մշակուած չեն եղել, իսկ չարքային գրիչներն ու ծաղկողներն անծանօթ են մնացել նոյնիսկ այն մի քանի աշխատութիւններին, որոնց մէջ այս կամ այն չափով շօշափուել են կէտադրութեան հետ առնչուող հարցերը: Նկատի ունենալով վերոյիշեալը՝ արդի բանասէրը պարտաւորուած է կա՛մ ամբողջովին փոխել իր կողմից հրատարակութեան պատրաստուող սկզբնաղբիւրի կէտադրութիւնը, կա՛մ էլ արմատապէս շտկել ու լրացնել: Բայց այդպիսի աշխատանք կատարողը, բնականաբար, առաջնորդուելու է կայուն ու գիտական սկզբունքներով՝ հետապնդելով հիմնականում մի նպատակ՝ արդի գիտական կէտադրութեան կիրառումով դիւրացնել բնագրի բովանդակութեան ճիշտ ընկալումը ընթերցողների կողմից: Անկեղծ վշտով յայտնելու ենք, որ ԺԷ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարանների քննարկուող հատորի կէտադրութեան մէջ կայուն ու որոշակի սկզբունքներ չեն կիրառուած: Հրատարակիչն ամէն մի յիշատակարան հրատարակութեան պատրաստելիս կարծես տարբեր սկզբունքներով է առաջնորդուել:

Որ շաղկապի դերը բարդ նախադասութիւնների մէջ հանրայայտ է. եւ ամէն ոք գիտէ, որ այդ որ-ից առաջ անպայման ստորակէտ է դրւում: Իսկ ի՞նչ է արուած այստեղ. մէկ անգամ դրուած է, երկու կամ երեք անգամ՝ ոչ: Եւ այսպէս, ողջ հատորի մէջ սկզբից մինչեւ վերջ կարելի է մի քանի հարիւր օրինակ բերել: Ահա մի քանիսը.

«Ստացա զսուրբ գիրքս որ կոչի Ոսկեփոր» (էջ 60). ստորակէտ չի դրուած:

«Ոհ, ոհ, հազար բերան գծողիս, որ մեծ գուժ լսեցի» (էջ 27). ստորակէտ դրուած է:

«Թվականն... ՌԾ էր որ Սիմոնն բանեցին» (էջ 4). առանց ստորակէտի:

«Ընդ հովանեաւ... Վարդան զօրավարին, որ է սակաւ մի հեռի» (էջ 28). ստորակէտով:

«Յիշեցէք Միրումն որ ստացաւ սուրբ Աւետարանս» (էջ 14). առանց ստորակէտի:

«Ողորմի ասացէք լի սրտիւ, որ եւ մեզ ողորմեսցի» (էջ 32). ստորակէտով:

«եւ այլ սրբոցս որ աստ կան» (էջ 15). առանց ստորակէտի:

«Մահդասի Ամիրաղէն, որ եռափափաք սիրով...» (էջ 33). ստորակէտով:

«Նորոգող սուրբ գրոցս որ է Գանձարան» (էջ 51). առանց ստորակէտի:

«Ոհ թէ որպէս լինիցի ճարակ գերոյս, որ զկեանս իմ հպարտութեամբ... անցուցի» (էջ 38). ստորակէտով, եւ այսպէս ամէնուրեք:

Յիշատակարաններում հսկայական տեղ են գրաւում այն նախադասութիւնները, որոնցով ընթերցողներին կոչ է արւում յիշել ձեռագրի պատուիրատուին, գերութիւնից ազատողին, նորոգողին, մի խօսքով՝ ձեռագրի ստեղծման կամ պահպանութեան գործում օգտակար աշխատանք կատարած անձանց ու նրանց բազմաթիւ ազգականներին՝ ծնողներին, եղբայրներին, որդիներին եւ այլն: Պարզ է ուրեմն, որ յիշատակարաններ հրատարակող բանասէրը պարտաւոր էր մշակել որոշակի մի սկզբունք գրեթէ նոյն կաղապարով ձուլուած այդ բնոյթի նախադասութիւնները կէտադրելիս: Այդպէս չի վարուել, սակայն, մեր հրատարակիչը: Այսպէս օրինակ՝ ժողովածուի 4-րդ էջում նախ կարդում ենք.

«Գրեցաւ սայ ի հալալ արդեանց իմոց եւ ի արդար վաստակոց, յիշատակ ինձ Աւետիս կաթողիկոսին, եւ ծնողաց իմոց՝ հաւրս Միրզին եւ մաւրս Գաւարին...»: *Մի քանի տող միայն յետոյ գրեթէ նոյն բառերով կազմուած նախադասութիւնն այլ կերպ է կէտադրուած.* «...յիշատակ ինձ՝ Աւետիս կաթողիկոսին եւ ծնողաց իմոյ, հաւրս Միրզին եւ մաւրս Գաւարին»:

Ինչպէս տեսնում ենք, կէտերը դրուած են կարծես տարբեր անձնաւորութիւնների կողմից, գիտական կէտադրութեան կանոնների անտեսումով: Եւ այս մեր ասածն անհրաժեշտութեան դէպքում կարելի է հաստատել հարիւրաւոր օրինակներով: Որքան էլ բարեխիղճ լինենք, չենք կարող չնշել, որ այս հանգամանքն ինքնին բացասաբար է ազդում հրատարակուած յիշատակարանների առաջնակարգ պատմական այդ սկզբնաղբիւրների որակի վրայ:

Բայց առաւել ցաւալին այն է, որ կան (եւ ոչ քիչ քանակութեամբ) այնպիսի հատուածներ, որոնք հրատարակչի նշանակած կէտադրութեամբ աղաւաղուել կամ անհասկանալի են դարձել: Օրինակներն այստեղ անհրաժեշտ են:

N *166 արժէքաւոր յիշատակարանում կարդում ենք այսպիսի տողեր. «Փախիր փուխարէն (=աղքատ մուրացկանները) խիստ հալածական. եղեւ սով հացի եւ աղի. եկաւ որ մէկ հոխկայ աղն Ա (1) շահի...» եւ այլն: Այստեղ ոչ մի կէտ ճիշտ չի դրուած: Նախադասութիւնը պէտք է կէտադրուէր այսպէս. «Փախիր փուխարէն խիստ հալածական եղեւ, սով հացի եւ աղի եկաւ, որ մէկ հոխկայ աղն Ա (1) շահի» (էջ 134):*

N *176 յիշատակարանում կարդում ենք. «Զի ի ներկայս վայելումն լիցի խոճայ մահդասի Զիրաքին: Եւ յապագայս յիշատակ մնասցէ հոգոյ իւրոյ...» (էջ 149): Պարզ է, որ եւ-ից առաջ վերջակէտն աւելորդ է:*

N *277 յիշատակարան. «Եւ շնորհեաց պարգեւս եւ խիլայս, տանն ամենեցուն, մեծի եւ փոքու» (էջ 219): Պէտք է լինէր այսպէս. «Եւ շնորհեաց պարգեւս եւ խիլայս տանն (այսինքն՝ Մելիք Շահնազարի գերդաստանին), ամենեցուն՝ մեծի եւ փոքու»:*

Ստեփանոս Թոխաթեցու չափածոյ նշանաւոր յիշատակարանում (էջ 244–252) բազմաթիւ են կէտադրական անճշտութիւնները.

Աւարտեցաւ գիրգըս գանձի
Սեպտեմբերի ԺԴ-ին:
Ձեռամբ ումեմն անարժանի...
ԸՍտեփանոս ձեր ծառայի:

(երկու դէպքում էլ վերջակէտի տեղ ստորակէտ էր պէտք).

Յետնորդ ամէն քահանայի,
Վարդապետաց էր սիրելի:
Որ ի Թոխաթ նա վախճանի, (էջ 245)

(որ-ից առաջ ստորակէտ էր պէտք).

Կովեր ճորթեր այծ եւ ոչխարնի, (էջ 248)

(ստորակէտներով պէտք է բաժանուէին, ինչպէս մի քանի տող առաջ. «Այգով, արտով, պաղչով ի լի»).

«Ջոր մէկն ասեմ ըզմութախնին» (էջ 248)

(Ջոր-ը պէտք է հարցական ընդունէր, եւ այսպէս շարունակ):

N *367 յիշատակարան. «Աստուած ողորմի ասացէք. անարժան Սարգիս գծողիս՝ ինձ...» (էջ 303). ասացէք-ից յետոյ միջակէտ կամ որեւէ կէտ պէտք չէ:*

N *462 յիշատակարան. «Ես իմ կամաւս տուի իմ հոգոյ, որդոյն՝ Մարտիրոս սարկաւագին» (էջ 371). անտեղի ստորակէտը աղճատել է միտքը. պէտք է լինի հոգոյ որդոյն=հոգեորդի:*

N *521 յիշատակարան. «զայս Յայսմաւուրքս ի ձախ հանեց նայ: Ես մեղօոր Ստեփանոս հրէցս զայխլ չեղայ» (էջ 415). պէտք է լինէր. «ի ձախ հանեց, նայ ես մեղաւոր...»:*

N *655 յիշատակարան. «Գրեցաւ գիրքս այս անիմաստից, մուԹն եւ խաւար». պէտք է լինի «անիմաստից մուԹն ու խաւար», այսինքն՝ «Անգիտաց անպէտի» նման մի բան. ձեռագիրն ալքիմիական ձեռնարկ է (էջ 518):*

N *719 յիշատակարան. «եղ ի դուռն Ս. Առաքելոյն Պետրոսի, նորընծայ սուրբ եկեղեցոյն» (էջ 552).*

(ստորակէտի պատճառով ստացւում են երկու եկեղեցիներ՝ ս. Պետրոս առաքեալ եւ Նորընծա(°), բայց նորընծան հէնց ս. Պետրոսն է):

N *730 յիշատակարան. «Ստեփանոս արհեպիսկոպոս, ի հոգին (Աստուած) լուսաւորէ» (էջ 560). պէտք է լինէր «Ստեփանոս արհիեպիսկոպոսի հոգին լուսաւորէ»:*

N *748 յիշատակարան. «եւ քակեաց /շահ Աբաս/ զվէմն, որ է հիմն հաւատոյ, զոր միածին նաստեալ էր ի վերայ նորա: Եւ զվէմն սուրբ սեղանոյն (էջ 570). վերջակէտի փոխարէն պէտք է լինի ստորակէտ:*

N *895 յիշատակարան. «Ընդ առաջին... ստացաւղացն աստուածեղէն տաւիս եւ սուրբ կտակիս: Եւ զվերջին եւ զնուաղեալ ծնունդս եկեղեցւոյ... (յիշեցէք)» (էջ 664). վերջակէտի փոխարէն պէտք է լինի ստորակէտ:*

Եւ այսպէս, կարելի է հարիւրաւոր օրինակներ բերել:

Եզրակացութիւնն այն է, որ հրատարակուող յիշատակարանների մշակումը կէտադրութիւններով օժանդակ առումով նոյնպէս կատարուել է հապճեպ ու անուշադիր:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրատարակիչն էջերի տողատակերում տարբեր բնոյթի ծանօթագրութիւններ է զետեղել, որոնցով յայտնում է, թէ ինչ հատուածներ է կրճատել, ինչպէս է վերծանել այս կամ այն բառը, ինչպէս պէտք է հասկանալ բարդ ձեւերով ներկայացուած թուականները եւ այլն: Դրանք բատ մեծի մասի օգտակար ծանօթագրութիւններ են՝ գրուած բանիմացութեամբ: Բայց այստեղ եւս կան թերութիւններ ու թիւրիմացութիւններ, որոնց համառօտակի անդրադառ-

նում ենք նոյն նպատակով, այն է՝ աւելի կատարեալ տեսնել ԺԷ դարի յիշատակարանների յաջորդ հատորները:

Յիշատակարանների եւ այլ սկզբնաղբիւրների մէջ առկայ տեղեկութիւնների համադրումով այս կամ այն միաւորի շարադրման վայրի որոշումը պէտք է հրատարակչի մտահոգութիւնների մէջ կարեւոր տեղ գրաւի, քանի որ հեղինակից ու Թուականից յետոյ յիշատակարաններն օգտագործող հայագէտների համար նրանց մէջ պատմուող դէպքերի արժանահաւատութեան աստիճանն ու պատմա-բանասիրական այլ հարցեր պարզելու առումով առաջնակարգ նշանակութիւն ունի գրչութեան վայրը:

Ցաւօք, պէտք է կրկին արձանագրենք, որ այս հարցը դրեԹէ չի յուզել հատորի հրատարակչին: Վ. Յակոբեանը ո՛չ ծանօթագրութիւնների մէջ է փորձ արել անծանօթ տեղանունների վայրը որոշել եւ ո՛չ էլ տեղանունների ցանկում: Մի երկու բացառութիւններ կան, եւ, դժբախտաբար, դրանք էլ անյաջող են: Այսպէս՝ N *368 յիշատակարանում խօսք կայ Ասպխաթան գիւղի մասին: Հրատարակիչը յատուկ ծանօթագրութեան մէջ փորձում է որոշել նրա տեղը. «Արդեօ՞ք Արճեշի մօտ գտնուող Ասպխակ գիւղը չէ»,- հարց է տալիս նա (էջ 304), կարծես թէ ընթերցողն է հրատարակչի համար պարզելու այդ խնդիրը: Առանց դժուարութեան կարելի է առաջադրուած հարցին բացասական պատասխան տալ, քանի որ հէնց նոյն յիշատակարանից դժուար չէ եզրակացնել, որ այդ գիւղը Աղբակի շրջանում է եղել եւ ո՛չ Բաջբերունիքում:*

Ակնո կամ Ակէ վանքը գտնւում է Շատախում. այդ մասին տեղեկութիւններ կան ԺԵ դարի յիշատակարանների մէջ, ինչպէս եւ քննարկուող հատորում («Գրեցաւ սուրբ Աւետարանս ի յերկիրս Շատխոյ, ի սուրբ ուխտս, որ կոչի Ակէ»,- կարդում ենք N *368 յիշատակարանում): Եւ որքան էլ տարօրինակ է, հրատարակիչը ժողովածուի մէջ երկու անգամ (էջ 170 եւ 304), որեւէ հիմք չունենալով, այդ վանքը տեղադրում է Մակու գաւառում:*

Մի ծանօթագրութեան մէջ «Ի յերկիրն Ըռըճակոյ» վայրի մասին գրում է. «Հաւանաբար Արճակն է, Վանից արեւելք» (էջ 521), այն դէպքում, երբ Արճակը Վանից հիւսիս կամ հիւսիս-արեւելքում է գտնւում:

Բազմաթիւ յիշատակարաններում կան ծածկագիր թուականներ. դրանք բոլորն էլ բացատրուած են ծանօթագրութիւնների մէջ, բայց յաճախ այնպէս հապճեպ ու համառօտ են կազմուած, որ մեծ ջանքեր են պէտք հասկանալու համար: Այսպէս օրինակ՝ N *518 յիշատակարանում կարդում ենք. «Ի Թվականիս հայկազեան տաւմարիս ի ՌՃԳ ամին եւ փոքր Թվականն հոռոմայեցւոց Մ եւ ՂԲ ամին» (էջ 411): Ծանօթագրութեան մէջ գրուած են միայն հետեւեալ թուերը՝ 292+248+(2×532), որոնցից ոչինչ չի հասկացւում: Ցաւօք, սա բացառութիւն չէ:*

Նոյնպիսի հապճեպութեամբ են բացատրւում նաեւ ծածկագիր բառերն ու անունները, իսկ 632-րդ էջի ծանօթագրութեան մէջ ծածկագրութիւնը ճիշտ չի վերծանուած. այնտեղ կարդացւում է. «Զատիկ Պողտանին որդի...», մինչդեռ հրատարակիչը Զատիկի փոխարէն կարդացել է զէտիլ:

Կան մի քանի յիշատակագրութիւններ, որոնք առանց ծանօթագրութեան իրենց բուն բովանդակութիւնն ընթերցողի առջեւ չեն բացում:

N *315ժ յիշատակագրութեան մէջ ասուած է. «Աչք իմ ծով ի ծով ծիծաղախիտ եւ Թէ չես կարենա, ով զարմանալոյն ձայն սայ...»: Խօսքն ուրեմն ինչ-որ երգի մասին է, որը գրչի*

յանձնարարականով պէտք է երգել Գր. Նարեկացու վերոյիշեալ երգերի եղանակով, բայց այդ ո՞ր երգն է. ահա այդ մասին պէտք է գրուէր ծանօթագրութեան մէջ:

N 369 յիշատակարանի ձեռագիրը կոչուած է Ժամագիրք, բայց երեւում է, որ նրա մէջ կան երգաշհան, ինչ-որ մեկնութիւն եւ այլն: Դրա մասին եւս պէտք է խօսք լինէր ծանօթագրութեան մէջ:

N 707բ յիշատակագրութեան մէջ ասուած է. «Այստեղս տարակուսանք բան կա, հարցանել վարդապետաց» (էջ 546): Մի՞թէ պէտք չէր նշել, թէ այդ ինչ բնագրի եւ որ հատուածի մէջ է տարակուսական բան նկատել յիշատակագիրը: Այս կարգի թերութիւնները շատ են:

N 31 յիշատակարանը գրուած է Սպահանի մօտ՝ Քարթման գիւղում, ըստ յիշատակարանի՝ «ի Թուականիս Հայոց ՌԾ (1601)»: Թուականի կապակցութեամբ Լ. Մինասեանը (որի ցուցակից է քաղուած այս յիշատակարանը) գրում է. «ՌԾ թուականը սխալ է, թերեւս մոռացութեան է տուել մի որեւէ միաւոր տառ» (Լ. Մ., Ցուցակ, էջ 38): Հրատարակիչն, օգտագործելով Մինասեանի ցուցակի ձեռագիրը, նրան անհարկի դիտողութիւններ է անում եւ զարմացած հարց է տալիս. «Թէ ինչու է սխալ, չի ասուած», բայց մի՞թէ պարզ չէ, «թէ ինչու է սխալ». այն պարզ պատճառով, որ 1601 թուականին դեռեւս շահ Աբասի կազմակերպած բռնագաղթը տեղի չէր ունեցել, ուստի Սպահանի մօտ գտնուող որեւէ գիւղում հայերէն ձեռագիր չէր կարող ընդօրինակուած լինել:

Բազմաթիւ մանր-մունր դիտողութիւնների վրայից թռիչք կատարելով՝ անհրաժեշտ ենք համարում մի քանի խօսք ասել ծանօթագրութիւնների լեզուի մասին: Ընթերցողն այն տպաւորութիւնն է ստանում, որ կարդում է սեւագիր մի գործ. կարծես թէ խմբագրական ու սրբագրական աշխատանք բնաւ չի կատարուած ո՛չ հրատարակողի, ո՛չ այն անձնաւորութիւնների կողմից, որոնք պարտաւոր էին հետեւել նաեւ լեզուի ու շարադրանքի հարցերին:

Տասնեակ անգամ այս կամ այն յիշատակարանի կամ որեւէ հատուածի զեղչման մասին ծանօթագրելիս գործածուած է «չվերցրինք» անյաջող բառը: Օրինակ. «Եւ այսպէս շարունակաբար չվերցրինք» (էջ 38). ուզում է ասել պատմական տեղեկութիւններ չպարունակող բազմաթիւ տողեր կան, որոնք զեղչուել են, չեն հրատարակուել:

Բազմիցս հարկ է լինում նշել, որ արդէն մէջբերուած անունները նորից են կրկնուած յիշատակարանի մէջ: Այս միտքն արտայայտում է այսպիսի բանաձեւով. «Թւում է վերեւում յիշուած անունները»: Պարզ է, որ պէտք է լինէր «Թուարկում է» եւ ոչ թէ «Թւում է»:

Գրում է այսպիսի տողեր. «Ինչպէս կարող է... Աւետարանը նորոգուի եւ վերակազմուի 1605 թ.» (էջ 188). ուզում է ասել «...նորոգուել եւ վերակազմուել»:

«Լրացրել ենք համաձայն «Արցախ»-ի ունեցածի» (էջ 194) փխ «Արցախ»-ում տպագրուածի»:

«Յիշատակարանի ընդհանուր պատառը համընկնում է N (այսինչ) յիշատակարանին» (մի քանի անգամ): Պատառ նշանակում է լաթի կտոր կամ նման մի բան. այստեղ, սակայն, օգտագործուած է շատ տարբեր եւ ինքնահնար իմաստով: Միտք բանին այն է, որ տուեալ յիշատակարանը ձուլուած է մէկ ուրիշի կաղապարով կամ հանդիպանում է մէկ ուրիշի կրկնութիւնը եւ այլն:

«Յիշատակարաններում նշուած ակտը (իմա՝ դէպքը) կարող էր պատահել ՌԾԱ-ից մինչեւ ՌԾԹ թուականները (այսինքն՝ թուականների ընթացքում)» (էջ 384):

«Տառերից յօղուում է» (էջ 389). ուզում է ասել «տառերով յօղուում է»:

N 772զ յիշատակագրութեան մէջ ասուած է. «Անմեղագիր լերուք, զի նաւոր արի գիրն. պատճառն այն է, որ աչքս խիստ կու ցաւէր» (էջ 582): Յատուկ ծանօթագրութեան մէջ այս կապակցութեամբ ասուած է. «Խօսքը վերաբերում է ձեռագրի առաջին գրիչ Ղազար եպիսկոպոսին», մինչդեռ գրուելու էր. «Այս յիշատակագրութեան հեղինակն է ձեռագրի առաջին գրիչ Ղազար եպիսկոպոսը»:

Էջ 591-ում կարդում ենք. «այլ թանաքով գուցէ գրչից աւելացուել է Աւետիս կաթողիկոսի ծնողների անունները եւ ձեռագիրը Էջմիածնին նուիրելու մասին»: Իհարկէ, հայերէն չի գրուած: «Որոշ բառերի բացատրութիւնը շնորհակալութեամբ վերցրեցինք» (էջ 761). դարձեալ հայերէն չէ:

Բազմիցս գրում է. «Մագիստրոսը գրում է» կամ «տեղեկացնում է» եւ այլն: Ո՞վ է Մագիստրոսը. հայագիտութեան հարցերով հետաքրքրուող հարիւրաւոր մասնագէտներից այսօր 4-5 հոգի հազիւ գիտէ, իսկ մի 20 տարուց յետոյ հաւանաբար ոչ ոք չի իմանայ, որ Մեսրոպ եպիսկոպոս Տէր-Մովսիսեանը Էջմիածնի միաբանութեան անդամների շրջանում ծանօթ էր «Մագիստրոս» մականունով: Նա իր բոլոր աշխատութիւնները հրատարակել է Մեսրոպ Տէր-Մովսիսեան անունով, ուստի այդպէս էլ պէտք է յիշատակուի գիտական գրականութեան մէջ:

Օրինակները կարելի է նապատկել, բայց արդէն մէջբերուածն իսկ բաւարար է՝ յանգելու այն եզրակացութեան, որ ծանօթագրութիւնները եւ ընդհանրապէս հրատարակչի հեղինակային խօսքը շարադրուած են գրական հայերէնի քերականական ու ոճաբանական կանոնների յաճախակի խախտումներով, անփոյթ մշակուած ոճով:

ՑԱՆԿԵՐ

Բնագրի հրատարակութեան հետ առնչուող հարցերը սպառելով՝ մօտենում ենք աւարտին: Հատորի վերջում տրուած են տարբեր բնոյթի ցանկեր եւ ուղեցոյցներ, որոնք կոչուած են դիւրացնելու բանասէրների աշխատանքը հարիւրաւոր յիշատակարանների մէջ իրենց հետաքրքրող դէպքի, դէմքի ու վայրի մասին տեղեկութիւններն առանց ճիգ ու ջանքի գտնելու գործում: Անդրադառնանք այդ ցանկերին նոյն այն հերթականութեամբ, ինչպէս նրանք յաջորդում են միմեանց քննարկուող հատորի վերջում:

Առաջին տեղը գրաւում է «Ժամանակագրական օժանդակ ցանկեր» խորագիրը կրող ուղեցոյց ցանկը, որի մէջ ընթերցողը պէտք է գտնի ամենավստահելի տուեալներ 1601–1620-ական թուականներին իշխած աշխարհիկ ու հոգեւոր պետերի յաջորդականութեան եւ գահակալութեան ու աթոռակալութեան տարիների մասին: Այստեղ յատուկ ենթավերնագրերի տակ տրուած են օսմանեան սուլթանների, Սեֆեան շահերի, Ղրիմի խաների, Լեհաստանի, Քարթլիի եւ Կախեթի թագաւորների, Էջմիածնի, Սսի, Աղթամարի եւ Գանձասարի կաթողիկոսների, Երուսաղէմի, Կ. Պոլսի հայ պատրիարքների ու Հռոմի պապերի մասին ժամանակագրական տեղեկութիւններ: Անտարակոյս, շատ արժէքաւոր ու պիտանի տեղեկատու միաւոր է, սակայն սխալաշատ է ու թերութիւններով լի:

Մահմեդական իշխողների մասին տեղեկութիւնները քաղուած են Ստենլի Լեն-Պուլի վաղուց հնացած աշխատութիւնից (**Лен-Пуль Стенли**, Мусульманские династии..., СПб., 1899). այժմ լաւագոյն տեղեկատուն է համարւում Կ. Բոսվորթի աշխատութիւնը (**К.**

Э. Босворт, Мусульманские династии, Москва, 1971):

Որպէսզի պարզ լինի, թէ որքան անստոյգ են հրատարակուած տուեալներից շատերը, ստորեւ զուգահեռաբար տալիս ենք Ղրիմի խաների ցանկը՝ ըստ խնդրոյ առարկայ ցանկի եւ ըստ Կ. Բոսվորթի:

Յիշատակարաններ (էջ 756)	Կ. Բոսվորթ (էջ 209)
Ղազի-Գիրեյ Բ (կրկին) 1594–1608	Ղազի-Գիրեյ Բ (կրկին) 1596–1608
Սելեմետ-Գիրեյ Ա 1608–1610	Թոխթամիշ-Գիրեյ 1608
Ջանիբէկ-Գիրեյ Բ 1610–1622	Սալամաթ-Գիրեյ 1608–1610
	Մուհամմեդ-Գիրեյ Գ 1610
	Ջանիբեկ-Գիրեյ 1610–1623

Կիլիկիոյ կամ Սսի կաթողիկոսների շարքում տեղ չի տրուած Պետրոս Հակաթոռ կաթողիկոսին, որը նստում էր Հալէպում եւ յիշատակւում է հէնց այս հատորի մէջ 1601–1608 թթ.:

Աղթամարի կաթողիկոսներից նշուած է միայն Գրիգոր Գ, որ աթոռակալել է 1586–1612 թթ.: Ո՞վ է նրա յաջորդը. նախորդ ուսումնասիրողները չեն իմացել, որովհետեւ իրենց ձեռքի տակ չի եղել հայերէն ձեռագրերի յիշատակարանների այս ճոխ ժողովածուն: Բայց հատորի հրատարակիչն ինքը մի՞թէ չպէտք է օգտուէր իր կողմից շրջանառութեան մէջ դրուող նիւթերից՝ գտնելու համար Գրիգորի յաջորդի՝ Ստեփանոսի անունը, որը յիշատակուած է 1618 թ. շարադրուած N 882 յիշատակարանում («ի կաթողիկոսութեան Աղթամարայ տեառն Ստեփանոսին», էջ 654):

Նոյնը պէտք է ասել նաեւ Գանձասարի կաթողիկոսների ցանկի մասին, որի մէջ յիշատակուած են երկու անուններ՝ Շմաւոն Բ 1600–1611 թ., Արիստակէս Գ. Քոլատակեցի 1611–1622 թթ.: Բայց չէ՞ որ քննարկուող ժողովածուի երկու տարբեր յիշատակարաններում, մէկը՝ գրուած 1606-ին, միւսը՝ 1617-ին, յիշատակուած է Յովհաննէս անունով կաթողիկոսը («ի հայրապետութեան տեառն տէր Յոհաննէս կաթողիկոսի, ի յաթոռս Աղվանից Սուրբ Գանձասարայ», էջ 208), որով եւ մէջբերուած ցանկը դառնում է խիստ թերի, ուստի եւ՝ անընդունելի: Մենք հնարաւորութիւն չենք ունեցել ստուգելու Կ. Պոլսի եւ Երուսաղէմի պատրիարքների ցանկերը. չի բացառուած, որ թերութիւններ կան նաեւ դրանց մէջ:

Յաջորդ միաւորը օտար բառերի բառարանն է: Այստեղ կան բազմաթիւ բառեր, որոնք վաղուց ի վեր օտար չեն համարւում եւ տեղ են գտել նոյնիսկ «Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարանում»՝ թալան, թաս, հալալ, դաստապ, ղարիպ, նալբանդ, ուսթա, չարուխ, պաղար, պանդոկ եւ այլն: Եւ ընդհակառակը՝ բառարանից բացակայում են մի շարք խիստ օտար ու անհասկանալի բառեր՝ աւտայ (էջ 371), ճաբոյ (էջ 685), մրվաթ (էջ 738), չարքչի (էջ 596), տաւէթ եւ այլն:

Յիշատակարանների ժողովածուի համար ամենակարեւորն ու ամենաընդարձակը (էջ 764–811) անձնանունների ցանկն է: Առանց ուղեցոյց այս միաւորի՝ հրապարակուած նիւթերի օգտագործումն անպատկերելի է: Արդ, ինչպէ՞ս է կազմուած այս ցանկը: Հէնց սկզբից կարող ենք ասել, որ կազմուած է բազմաթիւ թերութիւններով ու շատ անփոյթ: Մեր նկատած բոլոր պակասներին ու թերութիւններին, բնականաբար, չենք կարող անդրադառնալ: Դրան-

ցից յատկապէս ակնառու են հետեւեալները.

1. Ցանկի հէնց սկզբում տրուած է համառօտութիւնների մի շարք.

գրչ. – գրիչ

եպս. – եպիսկոպոս

ծղկ. – ծաղկող

ստց. – ստացող եւ այլն:

Դրանք այն բառերն են, որ պէտք է օգտագործուէին անձնանունների ցանկի մէջ՝ ցոյց տալու համար այս կամ այն յիշատակուած անձնաւորութեան պաշտօնը, կոչումը եւ մանաւանդ առնչութիւնը տուեալ ձեռագրի հետ (գրի՞չն է, ստացո՞ղը, նորոգո՞ղը, թէ՞ այլ ոք): Այսպիսի տուեալներ ստանալու յոյսով սկսում ենք նայել ցանկը եւ հէնց առաջին էջում (էջ 764) հանդիպում ենք բազմաթիւ անձնանունների, որոնց կրողների ով լինելը չի բացայայտուած ցանկը կազմողի կողմից: Որպէս օրինակ վերցնենք Աբրահամ անունը.

Աբրահամ Արծկեցին ձեռագրի նորոգող է, բայց այդ մասին նշում չկայ:

Աբրահամ Բուղտանցին նուիրատու է. չի նշուած:

Աբրահամ Թոխաթեցին գրիչ է. չի նշուած:

Աբրահամ Կ. Պոլսեցին ստացող է. չի նշուած:

Աբրահամ Կոլճովցի խոջան ստացող է. չի նշուած:

Աբրահամ Սեչովցին գրիչ եւ ծաղկող է. չի նշուած:

Եւ այսպէս, հարիւրաւոր օրինակներ կարելի է բերել:

2. Մի շարք անուններ կան, որ գործածուած են հաւասարապէս ե՛ւ տղամարդկանց, ե՛ւ կանանց համար, ուստի յաճախ անհրաժեշտ է լինում նշում կատարել այս կամ այն տարակուսելի անուան արական (ար.) կամ իգական (իգ.) լինելու մասին: Այս բանը կատարուած չլինելով՝ ընթերցողը հնարաւորութիւն չունի ցանկից պարզելու, դիցուք, կի՞ն է, թէ՞ տղամարդ այս Բասաւը, Բոլորը, Բուլմիշը, Գուլիարը, Դովլաթը կամ նման օտարալուր անուն ստացած հարիւրաւոր այլ անձնաւորութիւններ:

3. Մեր միջնադարեան գրիչները միեւնոյն անունը յաճախ հէնց նոյն յիշատակարանում գրում են տարբեր ուղղագրութեամբ. հէնց միայն Յովհաննէս անունը տասից աւելի տարատեսակներով է հանդիպում (Յովհաննէս, Յովաննէս, Յովանէս, Յոհաննէս, Յոհանէս, Յոհան, Յովան, Օհան, Ուան, Իւան եւ այլն եւ այլն): Բուն ձեւից խիստ շեղուած տարատեսակներն ինքնուրոյն անուան իրաւունք ստանալով՝ բնականաբար, ցանկում առանձին տեղ պէտք է գրաւէին եւ գրաւել են: Սակայն միանգամայն սխալ է, դիցուք, Մարիամ, Մարեամ եւ Մարեմ ձեւերը ներկայացնել առանձին-առանձին՝ որպէս տարբեր անուններ: Հ. Աճառեանի «Անձնանունների բառարանն» այսպիսի հարցերում անսխալական ուղեցոյց է. ըստ այդմ, պէտք է նախ տալ անուան ճշգրիտ տառադարձութիւնը, տուեալ դէպքում՝ Մարիամ, ապա՝ փակագծերի մէջ՝ միւս տարատեսակները: Այսպէս վարուելու դէպքում Ալէքսանոս, Ալէքսիանոս, Ալիքսանոս, Ալէքսիան անունները ցանկում միմեանցից չէին հեռանայ. Ակոբն ու Ակոբջանը պէտք է տեղ գրաւէին Յակոբի եւ Յակոբջանի կողքին (նման դէպքերում՝ յղման միջոցով). Ախիջանն ու Աղիջանը պէտք է իրար մօտենային. Գասպար–Գասբար–Կասպար–Քասպար–Քասբար անունների մասին տեղեկութիւնները պէտք է կենտրոնացուէին Գաս-

պարբ տակ եւ այլն եւ այլն: Եւ քանի որ այդպէս չի արուած, ընթերցողը երբեք վստահ չի կարող լինել, թէ իրեն հետաքրքրող անձնաւորութեան մասին հատորում առկայ տուեալները կարող է ձեռք բերել՝ ցանկի համապատասխան տառի տակ այդ անունը գտնելով:

Սա լուրջ թերութիւն է, բայց գունաթափւում է յաջորդի կողքին:

4. Անձնանունները յիշատակարաններում ճնշող մեծամասնութեամբ տրուած են լինում հոլովուած ձեւերով՝ «զԽաչատուրն», «Խաչատուրին» եւ այլն: Անձնանունների ցանկում եթէ որեւէ մէկը Խաչատուր անուան փոխարէն գնէր Խաչատուրին հոլովաձեւը՝ այն ներկայացնելով որպէս անուան ուղիղ ձեւ, ապա կհամարուէր, մեղմ արտայայտուած, զարմանալի անգիտութեան արդիւնք: Որքան էլ տարօրինակ է, տասնեակ ու տասնեակ անունների նկատմամբ հէնց այդպէս է վարուել անուանացանկի կազմողը:

N 774 յիշատակարանում, օրինակ, գրուած է, որ Աւետարանը վաճառուել է «Թագաւորութիւն շահ Աբասին, իշխանութիւն Ամիրկոնին (խմբ՝ Ամիրգունա խանին), կաթողիկոսութիւն տէր Աւետիսին, մէլիքութիւն Առուն» (էջ 583): Վաճառքը կատարուել է Շիրազլու գիւղում. վերջում յիշատակուած անձնաւորութիւնն այդ գիւղի մելիքն է. «մէլիքութիւն Առուն»՝ նշանակում է Առի անունով անձի մելիքութեան ժամանակ: Ցանկի մէջ, սակայն, այս Առի անունով անձը դարձել է «Առուն», այսինքն՝ հոլովուած ձեւը չփոխուել է ուղղականի հետ: Նոյն այս ճանապարհով՝

Արտամշահ-ը դարձել է Արտամշէ,

Գուլբաղի-ն՝ Գուլբաղէ (նաեւ Գոչբաղէ՞),

Եղխա-ն՝ Եղխէ,

Թարաուուկ-ը՝ Թարաուք (այս անունը N 255 յիշատակարանում գրուած է երեք տարբեր ձեւերով՝ Թարաուլք, Թարաուիկ, Թարաուակ, իսկ N 595 յիշատակարանում՝ Թարաուուկ: Ճիշտն այս վերջինն է, քանի որ անունն արաբերէնից է եւ նշանակում է «օրհնութիւն տանալ». տե՛ս **Հ. Աճառեան**, Անձն. բառ.),

Թուլխիկ-ը՝ Թուլխկէ,

Խաթայի-ն՝ Խաթայ,

Խաթուչիկ-ը՝ Խաթչիկ,

Կեռաս-ը՝ Կեռսէ,

Մաղթումփաշա-ն՝ Մախթումփաշէ,

Մուչիկ-ը (յիշատակարանում «Մըչկէն» ձեւով) Մչկէ,

Ոսկեակ-ը՝ Ոսկեկա,

Ջինի-ն՝ Ջինո,

Վարդիկ-ը՝ Վարդկէ,

Վարդտիկին-ը՝ Վարտիկնէ,

Փիրվալի-ն՝ Փիրվալէ եւ այսպէս շարունակ:

Ուստի պարզ է, որ այս ցանկը հնարաւորութիւն չի տալիս վստահելի տեղեկութիւններ քաղել 17-րդ դարի սկզբներին Հայաստանում եւ հայկական գաղթօջախներում կիրառուած անձնանունների մասին:

5. Նշանաւոր շատ մշակութային ու եկեղեցական գործիչների մասին քննարկւող ժողովածուի մէջ կան կարեւոր տեղեկութիւններ. յիշատակուած են որպէս գրիչներ, ձեռագրի պատուիրատուներ, նորոգողներ եւ այլ առիթներով: Անձնանունների ցանկում նրանք, անշուշտ, տեղ են գրաւել, բայց ցանկի կազմողը խօսել է նրանց մասին միայն այն կապակցութեամբ, ինչի համար յիշատակուած են այս ժողովածուի մէջ: Ըստ այդմ, ընթերցողին հնարաւորութիւն չի տրուել որոշելու, թէ մի քանի ձեռագրեր ընդօրինակած Ասար Սեբաստացին այդ անունը կրող նշանաւոր բժի՞շկն է, թէ՞ նոյնանուն մի այլ անձնաւորութիւն:

Նոյն ձեւով հնարաւոր չէ նաեւ իմանալ, որ Աւգուստինոս գրիչը Աւգուստինոս Բաջեցի ունիթոր պատմագիրն է. Կաստանայ մականուամբ Խաչատուրը հեղինակն է Վենետիկ քաղաքի մասին յայտնի գովքի. Յակոբ Այվաթենցն ու Յակոբ Թոխաթեցին յայտնի բանաստեղծներ են. ոմն Ակոբը 15-րդ դարի տոմարագէտ Յակոբ Ղրիմեցին է եւ այլն եւ այլն:

6. Անուանացանկի մէջ կա՞ն արդեօք պակաս անուններ, կամ առկայ անունների մասին բոլո՞ր տուեալներն են նշուած, թէ՞ կան բացթողումներ: Այս հարցին լիակատար պատասխան տալ հնարաւոր չէ: Տաժանակիր ուսումնասիրութիւն պէտք է կատարել՝ պարզելու համար ինչպէս այս, այնպէս էլ որեւէ այլ պատմագրական աշխատութեան ցանկերի ամբողջական կամ թերի լինելու հանգամանքը: Հասկանալի է, որ մենք մեր առջեւ այսպիսի խնդիր չենք դրել, բայց այլ առիթներով, Անձնանունների ցանկն ուսումնասիրելով, նկատել ենք, որ նրա մէջ տեղ չեն գտել Հնդուշահ (էջ 384), Մասի (էջ 736) անունները եւ Բարսեղ Արծրունի վարդապետի (էջ 720) մասին տեղեկութիւնները, ինչպէս նաեւ չեն նշուած Աւիբեկ եւ Ճանդեմիր անունների մասին տեղեկութիւններ պարունակող բոլոր էջերը (էջ 736, 703):

Անձնանունների ցանկի թերութիւնները սրանով չեն սպառւում, բայց չենք ցանկանում մանրուքների մէջ մտնել, ուստի՝ մի քանի խօսք Մականունների ցանկի մասին: Նախ պէտք է պարզել, թէ ինչ է նշանակում մականուն. արեւմտահայերէնում այդ բառն օգտագործուել է եւ այժմ էլ խօսակցական լեզւում օգտագործւում է ազգանուն բառի իմաստով, սակայն հրատարակիչն այդ բառն օգտագործել է արեւելահայերէն գրական լեզուի մէջ կիրառուող իմաստով, որ է «աւել անուն» (прозвище): Եւ եթէ այդպէս է, ստիպուած ենք արձանագրել, որ այս ցանկի մէջ մտած մականունների շուրջ կէսը մականուան հետ որեւէ առնչութիւն չունի: Այսպէս՝ Բաթուկի Յակոբ. այս Յակոբը կոչւում է նաեւ Բաթուկենց, ուստի Բաթուկ նրա հօր անունն է (հմմտ. Գրիգոր Ծերենց կամ Գրիգոր որդի Ծերի).

Բնայ Բաշարաթ – Բնայ՝ բաննահ բառն է (արհեստի տեսակ).

Բրգութ կամ Բրգութենց Յովաննէս – ազգանուն է.

Դիլանջու Ամրամ – Դիլանջին Ամրամի հօր անունն է.

Խուս Մկրտիչ – խուս նշանակում է հիւսն.

Կուճիպարկեցի Առաքել – Կուճիպարկ. Առաքելի հօր մականուն-աւելանունն է.

Ծլեցի Խաչատուր – Ծլե՝ գիւղի անուն է.

Մազման Սարգիս – Մազման՝ արհեստի անուն է.

Մանկուչլուենց Ղազար – ազգանուն է.

Մար բռնակալ – սա արդէն զաւեշտական երանգ ունի, քանի որ Մար բռնակալ մականուան հետ ոչ մի առնչութիւն չունի, այլ պարզապէս նշանակում է քուրդ տիրակալ:

Պարզ է, որ ազգանուն են եւ ոչ մականուն նաեւ Տօմաժիրսկի, Քարմատանենց, Բուչկանց միաւորները:

Անձնանունների ցանկից յետոյ իր ծաւալով ու կարեւորութեամբ երկրորդ տեղն է գրաւում Տեղանունների ցանկը (էջ 812–823): Յիշատակարաններից օգտուող բանասէրն ակնկալում է այստեղ գտնել անհրաժեշտ տուեալներ անծանօթ կամ քիչ յայտնի գրչութեան վայրերի ու տարբեր առիթներով յիշատակուած տեղանունների մասին. Հայաստանի կամ հարեւան երկրների ո՞ր նահանգներում ու գաւառներում են գտնւում, ի՞նչ բնակավայրեր են՝ գիւղ, քաղաք, բերդ, թէ՞ մի այլ բան: Յուսախաբութիւնն այս անգամ եւս անխուսափելի է. այդպիսի տուեալների անհրաժեշտութիւնը չի գիտակցուած ցանկի կազմողի կողմից, որի հետեւանքով ցանկում մէկը միւսի ետեւից շարուած են տասնեակ ու տասնեակ տեղանուններ, որոնք որեւէ տեղեկութիւն չեն պարունակում իրենց մէջ: Ահա մի շարք՝ քաղուած ցանկի հէնց միայն առաջին էջից. Ագարակ, Ախթա, Աիքլիս, Ահավանք, Ատիչ, Արգաղ, Արիքան, Արմուտթաղ եւ այլն: Որեւէ խօսք չի ասուած դրանց ինչ լինելու եւ որտեղ գտնուելու մասին:

Ցանկի երկրորդ ցաւալի թերութիւնը մատնացոյց անելուց առաջ ստիպուած ենք այստեղ երկու խօսք ասել ընդհանրապէս ցանկերի նշանակութեան մասին: Ինչի՞ համար են պատմական սկզբնաղբիւրների վերջում դրւում մանրամասն ցանկեր: Ի սէր Աստծոյ, խնդրում եմ վիրաւորական չհամարել այսպիսի հարցադրումը: Հանրայայտ է, որ ցանկերը կոչուած են դիւրացնելու տուեալ աղբիւրից օգտուել ցանկացողի աշխատանքը: Որեւէ մէկը, դիցուք, հետաքրքրւում է Տաթեւի վանքով եւ ցանկանում է իմանալ, թէ յիշատակարանների այս ժողովածուի որ էջերում կարելի է տեղեկութիւններ գտնել մշակութային այդ կենտրոնի մասին: Նա անմիջապէս պէտք է բացի ցանկը, գտնի Տ տառի հատուածը, կանգ առնի Տաթեւ տեղանուան վրայ եւ նրան առընթեր գտնի ժողովածուի այն բոլոր էջերի յիշատակութիւնը, որոնցում խօսք կայ Տաթեւի մասին: Այսպէս պէտք է լինէր, բայց սոյն ցանկի կազմողը հակառակ ուղով է ընթացել. կարծես միտումնաւոր կերպով փնտրել ու գտել է հէնց այն եղանակը, որով կարելի է արհեստական բարդութիւններ ստեղծել ուսումնասիրողի համար, թոյլ չտալ, որ նա դիւրութեամբ գտնի իր ցանկացած միաւորը:

Ահա ձեզ փաստեր: Շարունակենք Տաթեւի օրինակը: Տեղանունների համապատասխան բաժնում Տաթեւ անուան դիմաց հետաքրքրուողը գտնում է միայն 2 էջերի նշում՝ 542, 636: Բայց մի՞թէ 17-րդ դարի սկզբներին նշանակալից դեր կատարած այդ վանքը 750-ից աւելի մեծադիր էջերից բաղկացած այս ժողովածուի մէջ յիշատակուած է միայն երկու անգամ: Պարզւում է, որ ոչ. բուն ցանկում Տաթեւ գտնելուց յետոյ ընթերցողը գլխի է ընկնելու, որ պէտք է նայել նաեւ «Հոգեւոր կենտրոններ» ենթավերնագրի տակ բերուած անունները: Եւ եթէ խելապէս գլխի ընկնի ու նայի, ապա «Անապատներ» ենթա-ենթավերնագրի տակ կգտնի Ստաթէի անունը (իմա՝ Ստաթէի անապատ)՝ 484 էջանիշով: Սրանով, սակայն, հարցը չի փակւում: Այնուհետեւ ուշիմ ընթերցողը պէտք է հասկանայ, որ միջնադարում Անապատից բացի հոգեւոր կենտրոնները կոչուել են Ուխտ, ուստի պէտք է գտնի այդպիսի մի ենթա-ենթավերնագիր, որի տակ դարձեալ՝ Ստաթէի ուխտ՝ 543, 713 էջանիշերով: Կարծում եք՝ սիզիփեան աշխատանքը սրանով վերջացա՞ւ: Ո՛չ, պէտք է իմանալ նաեւ, որ Անապատից ու Ուխտից բացի Տաթեւը կոչուել է նաեւ Վանք, ապա՝ փնտրել ու գտնել, որ ցանկի մէջ իրօք կայ նաեւ այսպիսի ենթա-ենթավերնագիր, որի համապատասխան տեղում եւս կայ Ստաթէի վանք անունը՝ 133, 549, 654, 699 էջանիշերով: Փառք Աստուծոյ, նոր որոնումների կարիք

այլեւս չկայ, այժմ արդէն ուսումնասիրողը ձեռքի տակ կարող է ունենալ վերոյիշեալ բոլոր տուեալների հանրագումարը, որը նա, մեծապէս տարբերուելով ցանկի կազմողից, կարող է գրանցել ընդամէնը երկու տողի վրայ ահա այսպէս.

Տաթեւ, նաեւ Ստաթեւ (գիւղ, վանք, ուխտ, անապատ) – 133, 484, 542, 543, 549, 636, 654, 699, 713:

Եւ հէնց այսպէս պէտք է անէր ինքը՝ ցանկի հեղինակը:

Տաթեւն ամենաբնորոշ օրինակն է, բայց տեղանունների ցանկում մօտաւորապէս նոյն ձեւով են ներկայացուած բազմաթիւ այլ տեղանուններ՝ Աղթամար, Լիմ, Այրիվանք, Վահկա եւ այլն:

Տեղանունների ցանկի թերութիւններից վերջինը, որի վրայ ցանկանում ենք ուշադրութիւն հրաւիրել, նրա ոչ լրիւ լինելն է: Գործնական նշանակութիւնից բացի, այս ցանկը մեծապէս նպաստելու էր Հայաստանի պատմական աշխարհագրութեան մշակմանը եւ տեղանունների բառարանի ստեղծման աշխատանքներին, ուստի ժողովածուի կազմողը, հետեւելով իրենից առաջ յիշատակարանների ժողովածուներ հրատարակողներին, պէտք է տեղանուններ քաղէր նաեւ իրենց ծննդավայրով կամ գործունէութեան վայրով յիշատակուած գործիչների անուն-ազգանուններից: Եթէ յիշատակուած է ոմն Մկրտիչ Պրաձորցի, դա նշանակում է, որ եղել է նաեւ Պրաձոր անունով բնակավայր եւ այլն: Այս ձեւով յիշատակուած վայրերը մեր կազմած ցանկերում նշուած են, օրինակ, այսպէս.

Աւզրին – ծննդավայր ոմն Գալուստի,

Եղեպատ – Ստեփանոս երէցի ծննդավայրը եւ այլն:

Այս կարգի վկայութիւններն օգտագործելով՝ հնարաւոր կլինէր ԺԷ դարի յիշատակարանների ցանկն աւելացնել 3 տասնեակից աւելի այսպիսի տեղանուններով.

Ագուլիս (էջ 195),

Արտագածու տուն (մոռացուած է, էջ 583),

Արղնի (էջ 497),

Աւրին (էջ 464),

Բաղէն (էջ 455),

Բենիկ (էջ 600),

Բուղտան (էջ 324),

Գահլու (էջ 276),

Գեղամայ երկիր (էջ 108),

Դարենից (մոռացուած է, էջ 577),

Թուլկուրան (էջ 497),

Լուցք (էջ 388),

Խառկալ (էջ 337),

Ծիծան (էջ 586),

Կապենց ուխտ (մոռացուած է, էջ 529),

Կասիմ (էջ 350),

Կուլճուկ (էջ 415),

Կորատուն (էջ 707),

Հէգէպատ, իմա՝ Էգեպատ (մոռացուած է, էջ 58),

Ձլել (էջ 537),

Մարաղա (էջ 700),

Շամբ (էջ 392, 753),

Որկեր (էջ 455),

Պրաձոր (էջ 474),

Սուրբկանց (էջ 578),

Տիւրիկ, Տիպրիկ (էջ 600, 737):

Այս ցանկը լրիւ չէ. Թերեւս կարելի լինի երկնապատկել:

Ասենք նաեւ, որ ինչպէս Անձնանունների ցանկում, այնպէս էլ այստեղ կան սխալ ներկայացուած կամ տառադարձուած տեղանուններ: Գրուած է, օրինակ, Լոլըն, պէտք է լինէր Լոլընից, Գոչան՝ Բոթուշանն է, ուստի պէտք է ծանօթագրել՝ Տատկէ, պէտք է լինէր Տատկուդաշտ:

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՆԱԵՒ ՎՐԻՊԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ժողովածուին կցուած է նկատուած վրիպակների մի ցանկ՝ 36 տարբեր բառերի ճշգրտումով: Այսպիսի ստուարածաւալ հատորի համար դրանք շատ չեն: Կան նաեւ բազմաթիւ այլ՝ չնկատուած վրիպակներ: Անդրադառնալով այս հարցին՝ մենք դիւզն-ինչ չափով անգամ չենք ցանկանում մեղադրել հրատարակչին կամ սրբագրիչներին, այլ աւելի ուշադիր խմբագրական աշխատանքի կոչ ենք անում, քանի որ մեր կողմից նկատուած վրիպակների մի մասը կարելի է բացատրել հէնց խմբագրական աշխատանքի թերութիւններով: Նշենք մեր նկատած վրիպակների մի մասը.

ի հատուցանողեն (6)

յամէնատատ սեղանայս

Շօղ քաղաք (89)

մեղացեալ (96)

Տաթկայի (116)

ուրենէ փխ ուրհնէ (152)

Լակ Թամուր (էջ 198)

էնց խոստացաւ մահն (212)

զայս տախն փխ տարին (236)

Զլինել փխ Ջլինել (277)

տասցք փխ տասցաք (293)

վերջացացեալ (300)

ի դրան փխ ի դրանէ (331)

(յ)ուղմամբ փխ յուղմամբ (342)

օտարացն փխ օտարացան (346)

Քանզ սեւ փխ քան զսեւ (373)

գարի փխ բարի (524)

ոֆ փխ ոխֆ կամ ո/խ/ֆ (531)

բարեհմիտ (547)

դատակեացէ փխ դատակցեացէ (703)

ազաց փխ աչաց (343) եւ այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

ԺԷ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարանների այս առաջին հատորի մէջ ամփոփուած նիւթերի դասակարգման, վերծանութեան, ծանօթագրման եւ ընդհանրապէս աղբիւրագիտական մշակման թերութիւնների ու անյաջողութիւնների մասին մեր ասելիքը սպառեցինք: Նորից ուզում ենք նշել, որ տարբեր առիթներով մէջբերուած փաստերն ու վկայակոչումները մեր այս կամ այն դիտողութեան հիմնաւորման նպատակին են ծառայում: Անհրաժեշտութեան դէպքում կարելի է մատնացոյց անել նոյն կարգի բազմաթիւ այլ սխալներ ու թերութիւններ:

Այսպիսով, ժամանակն է արդէն վերջակէտ դնելու:

Հայերէն ձեռագրերի յիշատակարանները հայ պատմագրութեան համաշխարհային արժէք ներկայացնող այն եզակի սկզբնաղբիւրներն են, որոնց հրատարակութեան ու ուսումնասիրութեան վիթխարի աշխատանքը բախտի բերումով մեր սերնդին է վիճակուել: Հայերէն յիշատակարանների արդէն լոյս տեսած հատորները ընդհանուր արեւելագիտութեանն իրենց նպաստը բերեցին հրապարակումից ընդամէնը մի քանի տարի յետոյ: Նրանց մէջ ամբարուած նիւթերի մեծ կարեւորութեամբ պէտք է բացատրել այն հանգամանքը, որ հայերէն յիշատակարաններն ամէնուրեք արդէն դիտւում են որպէս ինքնատիպ աղբիւրագիտական միաւորներ, նրանց մասին գրւում են ուսումնասիրութիւններ ինչպէս Հայաստանում, այնպէս էլ նրա սահմաններից դուրս, բացայայտւում են նրանց պատմագրական, գեղարուեստական ու լեզուական առանձնայատկութիւնները, ցոյց է տրւում նրանց նշանակութիւնն ի նպաստ հարեւան երկրների սոցիալ-քաղաքական ու մշակութային կեանքի ուսումնասիրութեան եւ այլն:

Մեր միջնադարեան յիշատակագիրների վաստակի նկատմամբ հպարտութեան զգացմունքով առլեցուն, արձանագրելով այս փաստը՝ գիտակցում ենք նաեւ այն մեծ պատասխանատուութիւնը, որ դրուած է բոլոր այն հայ բանասէր-աղբիւրագէտների ուսերին, որոնք իրենց նպաստն են բերում յիշատակարանների հաւաքման, գիտական մշակման ու հրապարակման կարեւոր աշխատանքներին: Նրանց գործն անհամեմատ դիւրին է: 25–30 տարի առաջ հայ աղբիւրագէտը ձեռքի տակ չունէր Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրերի գիտական ցուցակ, այժմ հրապարակի վրայ են համառօտ ցուցակի զոյգ հատորները, որոնց մէջ յատուկ ցանկով, ըստ ժամանակագրական հերթաշարի, ցոյց են տրուած մեր ձեռագրերի մէջ առկայ բոլոր յիշատակարանների ձեռագիր աղբիւրներն ու էջերը: Այս նոյն ժամանակաշրջանում հրատարակուել են աշխարհի տարբեր մշակութային ու եկեղեցական հաստա-

տութիւններում պահուող հայերէն ձեռագրերի շուրջ երկու տասնեակ մանրամասն ցուցակներ, որոնցից յիշատակարաններով հետաքրքրուող բանասէրն ի վիճակի է քաղել իրեն պիտանի հարիւրաւոր նիւթ-միաւորներ: Ոչ պակաս բարերար գործօն է եւ մշակութային կապերի ստեղծումն ու ամրապնդումը հայերէն ձեռագրերի արտասահմանեան հաւաքածուների հսկիչ մարմինների հետ. այսօր մենք հնարաւորութիւն ունենք տարբեր երկրներից ստանալ մեզ հետաքրքրող ձեռագրերի մի զգալի մասի լուսանկար պատճէնները կամ մանրաժապաւէնները:

Նկատի ունենալով վերոյիշեալ հանգամանքները, չմոռանալով նաեւ յիշատակարանների նախկինում հրատարակուած ժողովածուների դրական փորձը՝ մենք այսօր իրաւունք ունենք աւելի մեծ պահանջներ ներկայացնել դեռեւս անտիպ հայերէն յիշատակարանների ուսումնասիրողներին ու հրատարակութեան պատրաստողներին: Եւ երբ այս հանգամանքների լոյսի տակ նորից անդրադառնում ենք քննարկուող հատորին ու փորձում ընդհանուր յայտարարի բերել մեր քննադատական դիտողութիւնները, ցաւով ու տխրութեամբ կրկին ստիպուած ենք արձանագրել, որ ԺԷ դարի յիշատակարանների այս առաջին գիրքը չի համապատասխանում այսօրուայ գիտական պահանջներին:

Ինչո՞վ բացատրել ցաւալի այս իրողութիւնը: Չէ՞ որ հատորի պատրաստման աշխատանքների հիմնական ծանրութիւնն իր վրայ է վերցրել փորձուած բանասէր, մի շարք մնայուն, մեծարժէք ու ծաւալուն աղբիւրագիտական երկերի՝ «Մանր ժամանակագրութիւններ», «Կանոնագիրք Հայոց» հմուտ հրատարակիչ Վ. Յակոբեանը: Ինչո՞ւ է այս անգամ նա իջել իրեն պատշաճ մակարդակից եւ թոյլ տուել իրեն ոչ յատուկ սխալներ ու թերութիւններ:

Այս հարցերի սպառիչ պատասխանը հաւանաբար կարող է տալ ինքը՝ Վ. Յակոբեանը: Մենք հակուած ենք կարծելու, որ թերութիւնների ծայրը թաղուած է այն ժառանգութեան մէջ, որ նա ձեռագրական նիւթերի արտագրութիւնների ձեւով ստացել է հանգուցեալ ակադեմիկոս Աշոտ Յովհաննիսեանից: Ե՛ւ Վ. Յակոբեանի, ե՛ւ նրա սեկտորի, ե՛ւ Պատմութեան ինստիտուտի տնօրինութեան սխալն է եղել հատորի խմբագրութեան գործը նիւթեր հաւաքողներից մէկին յանձնարարելը: Եթէ նոյնիսկ մոռանանք այն հանգամանքը, որ վերջին տարիների ընթացքում մեծարգոյ ու երջանկայիշատակ մեր ուսուցիչը կորցրել էր իր աշխատունակութիւնը, դարձեալ չենք կարող հաշտուել այդ իրողութեան հետ: Աղբիւրագիտական այսպիսի դժուարին ու բարդ աշխատանքները համեմատաբար անթերի ի կատար ածելու համար օժանդակ ու փորձուած աչքերի հրամայական պահանջ է զգացւում: Խմբագրութիւնը պէտք է յանձնարարուէր այնպիսի մի բանասէրի, որը, ձեռագրագիտական աշխատանքների մեծ փորձ ունենալով, ընդունակ լինի աքնաջան բանասիրական աշխատանք կատարել՝ ուշադրութիւն դարձնելով ոչ միայն աշխատանքի հիմնական ուղղութեանը, այլեւ խորամուխ լինելով առաջին հայեացքից քիչ նշանակութիւն ունեցող մանրուքների մէջ: Այո՛, խմբագիրը պարտաւոր է պատասխան տալ նաեւ ամէն մի սխալ դրուած ստորակէտի կամ վերջակէտի համար: Հայերէն ձեռագրերի յիշատակարանների գիտական արժէքը մեծ է ու հսկայական, ուստի մեծ ու հսկայական պէտք է լինի նաեւ պատասխանատուութեան զգացումը բոլոր այն անձնաւորութիւնների, որոնք առնչւում են նրանց գիտական մշակման ու հրատարակման սրբազան գործին:

Ուզում ենք հաւատալ, որ շուրջ մէկ ամսուայ լարուած աշխատանքի արդիւնք հանդիսացող քննադատական մեր այս դիտողութիւնները չեն լինելու «ձայն բարբառոյ յանապատի», այլ նպաստելու են յիշատակարանների յաջորդ հատորների կատարելութեանը:

ՑԱՆԿԵՐ

(Կազմեցին Մարգարիտ եւ Շուշանիկ Խաչիկեանները)

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբաս-Ղուլի 322
Աբգար 186, 324
Աբգար եպս. 277
Աբդլա 261
Աբեղեան Մ. 31, 32, 49, 50, 52, 16, 35, 54, 63, 64, 92, 118, 119, 120, 174, 220, 221, 316
Աբէլ 74
Աբէլ եպս. Մխիթարեանց 33, 34
Աբիսողոմ 250, 254
Աբկար եպս. 274, 284
Աբովեան Խ. 90
Աբրաամ 182
Աբրահամ Արծկեցի 379
Աբրահամ Բողոտանցի 379
Աբրահամ Թոխաթեցի 379
Աբրահամ Կոլնովցի 379
Աբրահամ Կ. Պոլսեցի 379
Աբրահամ Մեչովցի 379
Աբրահամեան Ա. 15, 27, 98, 121, 129, 143
Աբուբաքր 252
Աբուլաձէ Իլիա 131
Ագաթանգեղոս 28-32, 36, 62, 101, 108, 119
Ագապ 63
Ադամ 83, 181, 182
Ադամանտիոս 58, 60, 86
Ադդէ Գամրացի 185
Ադոնց Ն. 34, 41, 51, 53, 54,58, 60, 62, 64, 65, 68, 70, 85-88, 142, 195
Ազատեան Թ. 129, 293, 294
Ազարիա Սասնեցի 343, 354
Աթանաս Աղէքսանդրացի 18
Աթաճան 361
Աթանագէնէս 124
Աթանաս 164, 165, 242
Ալախողլի 365
Ալամ-Խաթուն 261
Ալէքսանոս (Ալէքսիանոս, Ալիքսանոս, Ալէքսիան) 379
Ալխաս-Միրզա 322
Ալի 252, 260
Ալիշան Ղ. 28, 36,43, 67, 69, 112, 115-1194 122, 124, 126, 128, 174, 195, 202, 203, 218, 220, 230, 234, 235, 241, 242
Ալփասլան 138
Ախիջան տե՛ս Աղիջան
Ակակիոս 49, 51
Ակինեան Ն. 33, 38, 53, 65, 67, 71, 128, 236, 292
Ակոբ տե՛ս Յակոբ
Ակոբջան տե՛ս Յակոբջան
Ահարոն 73, 74, 139, 199
Ահարոն-Գրիգոր տե՛ս Գրիգոր-Ահարոն
Ահմադ 274
Աղաբաբ 346, 347
Աղայեան Է. 15
Աղաջան (խօջայ) 353, 355
Աղաւրոս, Աղաւրես 181, 191
Աղբերիկ 285
Աղբուբայ 261
Աղեքսանդր 83
Աղեքսանդրոս 83
Աղեքսանդր (Մամեայ որդի) 185, 192
Աղեքսանդր Մակեդոնացի 362
Աղէքսանդր 60, 61, 75
Աղիջան (Ախիջան) 379
Աղուան 183
Աճառեան Հ. 15, 16, 43, 48, 118, 122, 128, 189, 209, 248, 365, 379, 380
Ամատունի Ս. 43, 166
Ամիրաղայ 372
Ամիրգունեայ խան (Ամիրկոն) 327, 380
Ամիրդովլաթ Ամասիացի 348
Ամիր-Եզդին 288
Ամիր Հասան Ա 241
Ամիր Հասան Բ 233, 241
Ամիր-Սաադ 283
Ամիր Սարգիս 363
Ամրամ Դիլանչու 381
Այգեկցի տե՛ս Վարդան Այգեկցի
Անակ Պարթեւ 30
Անակշատ-Սուրէն 30
Անանիա Շիրակացի 121, 122, 156, 176, 177, 188, 190, 339
Անանիա Սեբաստացի 161
Անանիա 186
Անասեան Յ. 128, 141
Անաստաս 185
Անաստաս Ակոռեցի 190
Անատոլիս եպս. 185
Անդրա, Անդրէ 185, 192
Անդրէաս 183, 185, 191
Անդրէաս Բիւզանդացի 189
Անդրէասեան 189
Անդրիկեան Ն. 44
Անդրոնիկոս 141
Անթապեան Փ. 193
Անկէաս 183, 191
Անտոնինոս 185
Անտօն 280
Աշխադար96
Աշոտ Բագրատունի 111, 136, 324, 325
Աշոտ Ողորմած 142
Ապուսահլ (որդի Սենեքերիմ Արծրունու) 142
Առաքել Դաւրիժեցի 202, 279, 281
Առաքել Կոճիպարկեցի 381
Առաքել Սիւնեցի 247, 272
Ասատուր 356
Ասար Սեբաստացի 381
Ասլան 354
Ասկղեպիադէս Բիւթանացի 121, 12
Ասողիկ 113, 286
Ասողիկ 47
Աստուածատուր 357
Աստուածատուր Ամասիացի 357
Ասքանազեան Թորգոմ 235
Ատի 380
Ատիբէկ 381
Ատոմ 257
Արա Գեղեցիկ 21, 47, 175, 176
Արամազդ 119, 120
Արասփիոս 87
Արեւշատեան Ս. 230
Արէս 119, 120, 124, 126
Արիստիդէս Աթենացի 57, 185, 192
Արիստակէս (Լուսաւորչի որդի) 32, 37, 87
Արիստակէս Լաստիվերցի 130, 131, 132, 135
Արիստակէս Գ. Քոլատակեցի 378
Արիստարքոս տե՛ս Արիստակէս (Լուսաւորչի որդի)
Արծրունի իշխաններ 103, 112, 113
Արձան քրմապետ 101
Արղուն-ղան 240
Արշակունիներ 47, 324, 325
Արտամշահ 380
Արտաշէս Ա 47, 115-119, 123, 126, 127, 176, 187
Արտաւազդ Ա 21,68, 69, 75, 92, 96, 174-176, 179, 187, 192
Արտաւազդ Բ 47
Արտաւանդ 60, 61, 83
Արտիթ(էս) եպս. 36, 39
Արուանդ 60,61, 83
Արփաքսադ 181
Աւագ 160, 169

Աւան 379
Աւգերեան Մ. 113, 294
Աւգուստինոս Բաքեցի 292, 301, 314, 315, 381
Աւետիս Մոկացի 357, 363, 373, 377, 380
Աւետիք (խոջայ) 354
Աւրատ 208
Ափրաատ Զգօն Պարսիկ 43

Բաբիլաս 49, 51
Բագրատ V 274, 283
Բագրատունիք 28,112,113, 274, 283,319, 324, 324, 325
Բազարբամ, Բազարբան 324
Բահատուր 208
Բայազիտ Ա Ցըլդրում 274, 287
Բայրամ 285
Բաչու Նոյին
Բարդուղիմէոս առաք. 1104 111, 114, 324
Բարձրբերդցի տե՛ս Կոստանդին Բարձրբերդցի
Բարբեղ վրդ. 242
Բարսեղ քհն. 195
Բարսեղ Արծրունի 381
Բարսեղ Կեսարացի 43, 57
Բարսեղ Մաշկեւորցի 212, 272
Բարսեղ Վարագեցի 357
Բարսեղ վրդ. 353,355, 364
Բարտողդ Վ. 286, 289
Բաքիդաս տե՛ս Բաբիլաս
Բժշկեան Մ. 218
Բնայ Բուշարայ 362, 381
Բոգդան 343
Բոսվորտ Կ. Է. 378
Բոստր տե՛ս Բուստր
Բրգութ (Բրգութենց) Յովաննէս 381
Բուզանդ տե՛ս Փաւստոս Բուզանդ
Բուսաիտ-ղան 280, 288
Բուստր 106

Գագիկ Արծրունի 112, 113
Գագիկ Բագրատունի 140, 142, 283
Գագիկ (Յովհաննէս որդի) 146
Գաթըրճեան Յ. 28
Գալեմքեարեան Գ. 57, 58, 60, 64, 85-87
Գալլիոս կայսր 185
Գալուստ 383
Գայլ Վահան 105
Գառնեցի 340
Գասպար (Գասբար, Կասպար, Քասպար, Քասբար) 379, 380
Գարագաշեան Ա. 93, 94, 96
Գարեգին վրդ. 157, 229,
Գաւառ 373
Գաւրգի տե՛ս Գէորգ (վրաց թագաւոր)
Գեղէոն 74
Գեղոնեոն 102, 104
Գէորգ, վրաց թագաւոր (Գորգի, Գէորգի, Գաւրգի) 131, 146, 152, 284
Գէորգ Կիլիկեցի 229
Գինդ վրդ. 40
Գիսանէ (Գիսանեա, Գիսիանէ) 106
Գոյուկ-ղան 162
Գրիգոր (Գրիգորիս) 106
Գրիգորիոս արքեպս. 101
Գրիգոր (տէր) 364
Գրիգոր (Մոկաց եւ Մանազկերտի եպս.) 115, 120, 126
Գրիգոր (Գրիգորէս) 177
Գրիգոր Ախալցխացի 156
Գրիգոր Ակներցի 160, 161
Գրիգոր Ակռականդացի 307
Գրիգոր Ահարոն 210, 211
Գրիգոր Անաւարզեցի 234, 242
Գրիգոր Աստուածարան 349
Գրիգոր Բջնեցի 177, 193
Գրիգոր Դարանաղեցի 355
Գրիգոր երէց 179
Գրիգոր Լուսաւորիչ (ս. Գրիգոր, ԳրիգորՊարթեւ) 15, 28, 30, 32, 37, 39, 42-44, 47, 52, 53, 57, 59, 62, 64-66, 70, 72, 85, 87, 89, 90, 101, 102, 105, 110, 111, 113, 124, 165, 168, 187, 192, 259, 279, 283, 285, 324, 326
Գրիգոր Ծերենց 254, 255, 381
Գրիգոր Գ (Աղթամարի կաթ.) 378
Գրիգոր Կեսարացի 349, 355
Գրիգոր Կրօնաւոր 201
Գրիգոր Հէրպետ 338
Գրիգոր Մագիստրոս 115-120, 123-126, 141, 195
Գրիգոր Մուկեցի 279
Գրիգոր Նարեկացի 257, 376
Գրիգոր Նիւսացի 133
Գրիգոր Պարթեւ տե՛ս Գրիգոր Լուսաւորիչ
Գրիգոր Սամոնեցի 235
Գրիգոր Սանահնեցի վրդ. 202, 210, 222, 226, 352
Գրիգոր (ստացող) 358
Գրիգոր Տաթեւացի 156, 231, 232, 237, 243, 247, 250-256, 348, 349, 353, 364
Գրիգոր Փոքր 363
Գրիգորիս (գրիչ) 353
Գուլբագի 380

Դամուր-բուղա 261
Դանիէլ 40, 65
Դանիէլ պատմագիր 128
Դանիէլ եպս. 48
Դանիէլ քորեպս. 87
Դանիշմանեան տոհմ 137
Դաւիթ 284
Դաւիթ (գրիչ) 39, 40
Դաւիթ Անյաղթ 337
Դաւիթ Ջեյթունցի 356, 362
Դաւիթ կաթ. 319, 325
Դաւիթ (կրօն.) 284
Դաւիթ Մամիկոնեան 113
Դաւիթ մարգարէ 222
Դաւիթ մոլորեցուցիչ 165
Դաւիթ (որդի Սենեքերիմ Արծրունու) 142
Դաւիթ (վանահայր) 222
Դաւիթ Ռաբունի 242
Դաւիթ փիլիսոփայ (Հարքացի) 195
Դաւիթ (թագաւոր) 83, 180, 188, 189, 197, 270
Դէոսկորոս Սանահնեցի 140, 142, 143
Դիլաք սրկ. 353
Դիոդոր 58
Դիոնիսիոս Թրակացի 194, 195, 196
Դշխո 197
Դոմետիանոս կայսր 92-97
Դոմետիոս Կորքուզն 94
Դոն Սեբաստիանոս 302

Եաչի 241
Եգանեան Օ. 294
Եզնիկ Կողբացի 29, 33 -35, 53, 55, 57-62, 64, 66, 68-72, 85-88, 90, 175
Ելիկում 240, 241
Ելոգս (իմաստասէր) 185
Եղեազար վրդ. 330
Եղիայ 60, 75, 83
Եղիազար 101
Եղիազար կաթ. 218
Եղիշէ 15, 17, 19, 26, 55, 62, 67, 71, 83, 85, 88
Եղիսաբէթ 73
Ենովք 60, 75, 83, 181, 191,
Եպիփան 340
Եպիփան Կիպրացի 57
Եպիփան միայնակեաց 28, 39-42, 44
Եսայեան Բառնաբաս 121
Եսայի Կաֆայեցի 346
Եսայի Նչեցի 196, 229, 230, 232, 234, 241, 242
Երուանդ 69, 75
Եռանդեաններ 47
Եսայի 128
Եսայիա մարգարէ 328
Եսայեայ Բարունապետ 234
Եւսեբիոս Կեսարացի 121
Երեմեան Ա. Տ. 136
Եւագր Պոնտացի 43, 247, 248, 255
Եփթաղ 43
Եւսեբ 186
Եւսեբիոս Կեսարացի 43
Եփրեմ Ասորի 43, 256

Զաղոյեան Մանուշակ 166
Զախնօ 352
Զամինեան Ա. 28, 31, 44
Զատիկ 343, 375
Զարբհանալեան Գ. տե՛ս Զարպհանալեան
Զարդարիկ 365
Զարպհանալեան Գ. 36, 62, 121, 235, 247
Զաքար (գինեձախ) 209
Զաքար Վանեցի 356
Զաքարէ 280
Զաքարիա 183
Զաքարիա Ագուլեցի 322
Զաքարիա Աւանցի 357
Զաքարիա Բ (Ախթամարի կաթ.) 249, 254
Զաքարիա սրկ. տե՛ս Զաքարիա Քանաքեռցի
Զաքարիա սպասալար 173
Զաքարիա Քանաքեռցի 318, 319, 322
Զենոբ Ասորի 104, 105
Զենոբ Գլակ 29, 30
Զենոն 121, 185
Զիկ 30
Զոհրապեան 87
Զոյատ 131, 136, 146, 152

Էաս Աղեքսանդրացի 185, 189
Էմին Մ. 39, 116, 117, 126, 193
Էսան-պեյ 352
Էսերպեկ 217
Էսքիլոս Աթենացի 186, 190

Ըռուբենիք 325

Թարատուլ (Թաբատրք, Թարատիկ, Թարատակ) 380
Թադէոս 324
Թադէոս առաք. 44, 110, 111, 114, 284, 337
Թահիր 250
Թադիադեան Մ. 176
Թահմազ-ղուլի 321, 327
Թարաարի 182
Թէոդորոս Մոպսուեստացի 51, 65, 66, 87
Թէոփիստէ 138, 139
Թոդիկ վանահայր 29, 55
Թողթամիշ 284
Թովմա առաք. 111
Թովմա (գրիչ) 156
Թովմա Մեծոփեցի 129, 248, 273, 275-277, 280, 281, 283-286, 288, 325
Թովմա Մինասենց 289
Թորոս 194, 195, 197-199
Թորոս (դպիր) 357
Թորոս երէց Ըռաբինենց 195
Թորոս Երզնկացի 202
Թորոս իշխան 141
Թորոս կազմող 358
Թորոս Ռոսլին 195
Թորոսեան Հ. 57
Թոխթամիշ- Գիրեյ 378
Թուխիկ 380
Թումայ արքեպս. 352, 353
Թումա Սիւնեցի 251
Թումանով Կ. 131
Թումաս (կրօնաւոր) 283

Իքն-Բատուտա 201, 206, 219
Իգնատիոս 348
Իգնատիոս Անտիոքացի 43
Իգնատիոս վրդ. 253
Իսկանդար 288
Իսրաէլ (Իսրայէղ) 76
Իրինէոս 58
Իրիոն Բիզանդացի 189
Իրիոն (Իրոն) 185, 192
Իւան տե՛ս Յովհան
Իւզբաշեան Կ. Ն. 130
Իփակ (ստացող) 357

Լալայեան Ե. 124, 171
Լալայ-բէկ 327
Լալաֆարեան Ա. 351
Լազարեանց տոհմ 338
Լանկ Թամուր, Լանկ Թեմուր 129, 250, 254, 258, 259, 273-278, 283-288
Լեւոն 325
Լեւոն Ա 239
Լեւոն Բ 239
Լիպարիտ 131, 136, 146, 157
Լուսիկ 353

Խաթայի 380
Խաթուշիկ 380
Խալաթեանց Գ. 68, 93, 117, 118, 126, 174, 175, 179
Խաղբակեան Պռօշ 233, 241
Խաչատուր 380
Խաչատուր (գրիչ) 206
Խաչատուր (նորոգող–ծաղկող) 358
Խաչատուր Կաստանայ 381
Խաչատուր Կեչառեցի 234
Խաչատուր Ճլեցի 381
Խաչատուր քհն. 353, 354
Խաչիկ (խոջայ) 338
Խաչիկեան Լ. 40, 41, 85, 86, 88, 95, 208, 217, 218, 230, 251, 347
Խըտըր 217
Խլղաթ 355
Խոսրով 28, 103
Խոսրով Բ 125, 126, 285
Խոսրով Դ 45
Խոսրով Կոտակ 118
Խոսրովիկ 121
Խորենացի տե՛ս Մովսէս Խորենացի

Կադմոս Միլեթացի 188
Կազոր մանկտաւագ 208, 217
Կանայեանց Ստ. 30
Կարա-Կոյունլուներ 252, 258, 274, 284, 285
Կարա-Մահմադ, Մպհմատ-խան 284
Կարա-Յուսուֆ 258, 281, 284, 288
Կարապետ (ախի) 206
Կարապետ (գրիչ) 156, 357
Կարապետ (հայր Սիմէոնի) 217
Կարապետ (ճգնաւոր աբղ.) 285
Կարապետ (ջուղայեցի աբղ.) 274, 277
Կարապետ վրդ. 352
Կարէն (տոհմ) 30
Կերբենոս 130
Կեղծ-Կալիսթէնես 362
Կեռաս 380
Կիրակոս Բանասէր Ռշտունեցի 280-282, 286, 287, 289,290
Կիրակոս Գանձակեցի 132, 157, 158, 161, 163, 165, 173, 177, 194, 195, 210, 213, 228, 232
Կիրակոս Երզնկացի 235
Կիրակոս (ծաղկող) 357
Կիրակոս կրօնաւոր 283
Կիրակոս Հիզանցի 354
Կիրակոս Վիրապեցի կաթ. 279, 280, 290
Կիւրեղ 106
Կիւրեղ Աղեքսանդրացի 43, 348
Կիւրեղ Երուսաղէմացի 43
Կիւրեղ վրդ. 242
Կլաւիխո 201, 277
Կլեման Ժակ 298
Կոզեռն տե՛ս Յովաննէս Կոզեռն
Կոստանդիանոս (կայսր) 185, 285
Կոստանդին Բարձրբերդցի կաթ. 156-162, 166, 168, 193, 194, 197, 198, 229
Կոստանդին 284
Կոստանդին Դուկաս 140
Կոստանդին Երզնկացի 201, 204, 213-216, 219
Կոստանդին Կատուկեցի կաթ. 240
Կոստանդին Մոնոմախ 136
Կոստանեանց Կ. 115, 280

Հաբէլ 285
Հազկերտ 46, 51
Հախնազար 347
Համազասպ 113
Համամ Արեւելցի 195
Հայկ 182, 191
Հասրատ 208
Հացունի Վ. 44
Հեթում Ա 194, 195, 239
Հեթում Բ 67
Հեթում թագաւոր 158, 162
Հենրիկոս (Կաստիլիայի թագաւոր) 277
Հենրիկոս Նաւարացի 298
Հենրիկոս III Վալուա 298, 300
Հերակլէս 186
Հերովդէս 74
Հիպոկրատ 121

Հիպպոլիտ (Հիպողիտոս) 58, 59
Հնդուշահ 381
Հռաքել 73
Հռիփսիմեանք 168
Հռիփսիմէ 39

Ղազար բանաստեղծ 254
Ղազար եպս. 377
Ղազար Մանկուշլուենց 381
Ղազար Ջահկեցի 128, 129
Ղազար (վանահայր) 285
Ղազար Փարպեցի 15, 29, 45-47, 49, 55
Ղազար քհն. 354
Ղազի- Գիրեյ Բ 378
Ղարա-Մահմատ 285
Ղարա- Ոսուֆ 252, 278, 287, 288
Ղափադարեան Կ. 140
Ղեւոնդ 55, 185
Ղլտճեան Ա. 63
Ղով-օղլի Երզնկացի 202
Ղուկաս 61
Ղոտրաղի 261

Ճանդեմիր 381
Ճանոյ 356
Ճիհանշահ տե՛ս Ջհանշահ

Մագիստրոս տե՛ս Գրիգոր Մագիստրոս
Մագնոս 185, 192
Մաթեւոսեան Ա. 230
Մաթէոս Կիլիկիացի 229
Մաթէոս վրդ. 240
Մալխասեանց Ստ. 16, 55, 208
Մակար Երուսաղէմացի 44, 37
Մակլեր Ֆ. 128
Մակւեցի (Մակուեցի) 290
Մահմատ խան տե՛ս Կարա-Մուհամադ
Մահմատ-դոլի-խան 327
Մահմեդ (Մահմատ) 260
Մահտեսի Յեպպա 356
Մաղաքիա արք. 161
Մաղթումփաշա 380
Մամբրէ 40
Մամիկոնեան 106, 131
Մայրավանեցի 66
Մանանդեան Յ. 16, 43, 46, 51, 94, 130, 160
Մանասէ 183
Մանգնոս տե՛ս Մագնոս
Մանգու-ղան 195, 232
Մանուէ 74
Մանուկ 358
Մաշտոց տե՛ս Մեսրոպ Մաշտոց
Մառ Ն. 53, 67, 123, 129, 132-134, 144, 156, 166, 211, 218, 286
Մասի 381
Մաստիձէ (Մաստե(ն) ձէ) 87
Մատուրիոս 87
Մատթէոս արղ. 357
Մատթէոս Ջուղայեցի 247-272
Մատթէոս Ուռհայեցի 129, 130, 133-138, 140-145, 152, 207, 208, 217
Մարիամ (Մարեամ, Մարեմ) 379
Մարիես Լուի 58, 70
Մարկո Պոլո 201
Մարկոս միայնատր 36
Մարի 182
Մարտիրոս (գրիչ) 371
Մարտիրոս (Դաւիթ գրչի եղբայր) 39
Մարտիրոս Երզնկացի 291, 295-297, 299, 300, 303, 305,306, 313
Մարտիրոս Հիզանցի 353
Մարտիրոս սրկ. 374
Մարտիրոս Վանեցի 357
Մարտիրոս (տանուտէր) 276, 283
Մարփկ 103, 106
Մեթոդիոս Պատարացի (Օլիմպիացի) 57, 58, 60, 86
Մելիք-շահ 138
Մելիք-Շահնազար 373
Մելիք-Օհանջանեան Կ. Ա. 132
Մելիքսէթ-Բէկ Լ. 140, 161, 283, 365
Մելքիսէթ կաթ. 325, 326, 319
Մելքեսէթ Սեբաստացի 364
Մելքիսեդեկ քհն. 369
Մելքոն դպիր 354, 355
Մեծոփեցի տե՛ս Թովմա Մեծոփեցի
Մեծքարեցի տե՛ս Յակոբ Մեծքարեցի
Մենանդր 102
Մեսրոպ եպս. Տէր-Մովսիսեան 377
Մեսրոպ Մաշտոց 15-17, 26, 27, 31, 32, 35, 43-45, 48-55, 63-66, 85, 87
Մեսրոպ Վայոցձորեցի 29
Մերուժան 113
Մըմբարաքշահ 251, 257
Միհրան 98, 103, 105
Միհրան (տոհմ) 30
Մինաս (գրիչ) 354, 355
Մինաս (ծաղկող) 356
Մինաս (ստացող) 355
Մինաս Կարնեցի 354
Մինասթեր 217
Մինասեան Լ. 351, 376
Մինասեան Մ. 35, 41, 85, 87-91
Միրաքեան Սղերթցի 338
Միրզայ 373
Միրի Թուման 355
Միրում 372
Միքայէլ 352, 354
Միքայէլ Ասորի 194
Մխիթար Այրիվանեցի 39, 40, 161, 286
Մխիթար Անեցի 209
Մխիթար Ապարանեցի 220, 249
Մխիթար Գոներցի 286
Մխիթար Գօշ 156, 173, 213, 228, 237, 242
Մխիթար Եզնկայեցի 234
Մխիթար Սասնեցի 235
Մխիթար Սկեւռացի 349
Մխիթարեան Ա. 59
Մկրտիչ 78, 235
Մկրտիչ Խուս 362, 381
Մկրտիչ Պրաձորցի 383
Մհեր 126, 166
Մնացականեան Ա. 21, 54
Մոմզէն 93
Մովսէս 72-74, 180, 181, 185, 199
Մովսէս Արծկեցի 337
Մովսէս Եղվարդեցի 186, 190
Մովսէս Խոտանանցի 318
Մովսէս Խորենացի 15, 32, 36, 38, 45, 47, 55, 68, 69, 92-94,96, 97, 110-114, 117, 118, 122, 124, 174, 175
Մովսէս կաթ. 319, 323, 326, 327, 330
Մովսէս Քերթող 195
Մուհամմեդ-Գիրեյ Գ. 378
Մուշեղ 103
Մուշիկ 380
Մուրադեան Կ. 57
Մուրատբեկ 356
Մուրիկ 106

Յախշի-բէկ 261
Յակոբ 73
Յակոբ (ս.) 291, 301, 309, 310
Յակոբ (գրիչ) 352, 353, 360
Յակոբ Այվաթենց 381
Յակոբ Բաթուկենց 381
Յակոբ եպս. 201
Յակոբ երէց 354, 369
Յակոբ երէց Ջամուսցացի 339
Յակոբ երէց Թոխաթեցի 352, 381
Յակոբ կաթ. տե՛ս Յակոբ Ջուղայեցի
Յակոբ Կարնեցի 201
Յակոբ Կլայեցի 208, 272
Յակոբ Ղրիմեցի 381
Յակոբ մանկտաւագ 220
Յակոբ Մեծքարեցի 141
Յակոբ Մծնբայ հայրապետ 250, 251, 254
Յակոբ վրդ. Ովսանանց 256
Յակոբ Ջուղայեցի 318-324
Յակոբ Սանահնեցի 128-132, 136, 137, 139-144
Յակոբ Սգատր 343, 346
Յակոբ վրդ. 284
Յակոբ քհն. 130-135, 138, 143, 144, 146
Յակոբ Քարաբնեցի տե՛ս Յակոբ Սանահնեցի
Յակոբ Քէոթահիացի 354
Յակոբեան Վ. 33, 34, 129, 278, 305, 334, 335, 337, 338, 341, 344, 347, 352, 353, 357, 361, 375, 386
Յակոբեան Յով. 162
Յակոբջան (խոջայ) 328, 379
Յակոտ 201
Յաննայ Անտիոքացի 131
Յարութիւնեան Ս. 92
Յոհան Բաղիշեցի 355
Յոհան վրդ. 242
Յոհանէս քհն. 353
Յովաթամ արքա 186
Յովան 183
Յովան (ս.) 150, 187, 249, 253, 257, 306
Յովան եպս. 286
Յովանէս (ս.) 186, 308
Յովանէս երէց Գահլուեցի 355
Յովանէս Հիզանցի 354
Յովանէս սրկ. Տզաղեցի 368
Յովբ, Յոբ 173, 348, 365
Յովհան 55
Յովհան եպս. 48
Յովհան Մամիկոնեան 29, 55, 98, 104, 108
Յովհան Մայրավանեցի 17, 19, 26
Յովհան Մանդակունի 66
Յովհան Ոսկեբերան 43, 254, 256, 348
Յովհան Որոտնեցի 242, 243, 275
Յովհան Քռնեցի 231
Յովհան Օձնեցի 121, 129
Յովհաննէս (արղ.) 357
Յովհաննէս (գրիչ) 290
Յովհաննէս 39
Յովհաննէս Գառնեցի 193
Յովհաննէս Դրասխանակերտցի 286
Յովհաննէս Երզնկացի 196, 202, 203, 215, 216, 220, 222, 226, 348, 354
Յովհաննէս ծաղկող 354, 355
Յովհաննէս կաթ. 190, 339, 378
Յովհաննէս Կանխիկ տե՛ս Յովհան Որոտնեցի
Յովհաննէս Կոզեռն 129, 132-138, 144, 146, 148, 153, 154
Յովհաննէս կրօնաւոր 283
Յովհաննէս Մայրագոմեցի 337
Յովհաննէս մանկտաւագ 217
Յովհաննէս Մեծոփեցի 231, 232, 242, 247, 250, 253, 256, 275
Յովհաննէս Չանկի 288
Յովհաննէս Չմշկիկ 142
Յովհաննէս Սարկաւագ 143, 228
Յովհաննէս-Սմբատ 130, 136
Յովհաննէս (ստացող) 357
Յովհաննէս վրդ. 355
Յովհաննէս վրդ. Վանական տե՛ս Վանական վարդապետ
Յովհաննէս Տարօնեցի 132
Յովհաննէս քհն. 128
Յովհաննիսեան Աշոտ 292, 323, 334, 335, 361, 386
Յովսէփ 53, 55, 65
Յովսէփ արքեպս. Արղութեան 218
Յովսէփ Ընծայուց 136, 148
Յովսէփեան Գ. 39, 240, 241, 279, 280, 282, 337
Յուլիանոս կայսր 46
Յուլիոս Մաքսիմոս 95, 97
Յուսիկ 38
Յուստիանոս 185

Նանա Ասորի 348
Նազար (խոջայ)
Նաջաֆ-ղուլի-խան 322, 326
Նար-Դոս 90
Ներոն 94, 306
Ներսէս Աշտարակեցի 40
Ներսէս Լամբրոնացի 348
Ներսէս եպս. 274, 275
Ներսէս մանկտաւագ 209, 217
Ներսէս Մեծոփեցի 273, 276-278, 282, 283
Ներսէս Մշեցի (Տարօնացի) 229, 230, 233
Ներսէս Մոկացի 357
Ներսէս Շինող 40
Ներսէս Շնորհալի 141, 213, 348
Ներսէս Պարթեւ 28, 38-42, 45
Ներսէս վրդ. 234
Ներուաս 92, 97
Նիկոլ արքեպս. Թորոսովիչ 217, 218
Նիկողայոս հայրապետ 294, 313
Նիկողոս 362
Նիհորմէն, Նիխորճես 102, 106
Նոխազուռն 183
Նորայր Բիւզանդացի 29, 44
Նումա Պոմպիլոս 183, 189
Նունէ 337
Նուրադին 209

Շահ-Մանսուր 283
Շահ-Սօֆի 320, 326
Շահնազարեան Կ. 283
Շահրուղ (Շահրադ, Շահրուխ) 280, 287, 288
Շաղաւաթ (մելիք) 365
Շաղաւաթ (որդի խոջայ Խլղաթի) 355
Շաղիտա (ս.) 40, 41
Շամիրամ 47
Շապուհ Բ 46
Շապուհ արքայ 285, 286
Շարաւ (ամիր) 285
Շարաֆ-բէկ 248
Շիդար, Շիդար-Արտաւազդ 21, 187
Շիրուանզադէ 90
Շմաւոն Բ կաթ. 378
Շամս-եդ-դին 288
Շահ-Աբբաս (շահ Աբաս, շահ Ապազ, շահ Ապաս) 292, 321, 325-327, 342, 365, 374

Ոզնի 365
Ոզունի, Ուզունի 106
Որմիզդ 102
Ոսկան 363
Ոսկան Երեւանցի 158
Ոսկեակ 380
Ոսկեան Հ. 114, 229, 284, 295, 296
Որոգինէս, Որոգէն 58, 185, 192
Որոտնեցի տե՛ս Յովհան Որոտնեցի
Ովանէս 356
Ովկիանոս 182

Չալոյեան Վ. 231
Չամչեանց Մ. 230, 273
Չարմաղան տե՛ս Ջուրմագուն
Չարքազ 290
Չինի 380

Պայճեան Ա. 159
Պահլաւունի (իշխան) 115
Պապաք 241
Պատկանեան Ք. 39, 314
Պատուական 352
Պարեխ 104
Պաղոս տե՛ս Պօղոս
Պետրոս (առաք.) 61, 199, 222, 291, 306, 328, 352, 353, 374
Պետրոս Արագոնացի 348
Պետրոս կաթ. 130-132, 136, 139, 141, 144, 148, 153, 339
Պետրոս (Սարգսի որդի) 241
Պետրուշեւսկի Ի. Պ. 289
Պերիտոս 183
Պղատոն 199
Պոլիմոս 183, 191
Պողարեան Ն. 89, 140, 318, 350, 351
Պողտան 375
Պոտուրեան Մ. 213, 214
Պոօշեան 233
Պրոբոս 141
Պրոկոպիոս Կեսարացի 29
Պուսափտ տե՛ս Բուսափտ
Պօղոս, Պողոս (առաք.) 186, 199, 243, 291, 306, 328, 329, 348
Պօղոս (խօջայ) 355
Պօղոս Տարօնացի 138, 139

Ջանիբէկ-ղան 286
Ջանիբեկ-Գիրեյ Բ 378
Ջանփոլադեան Հ. 157, 167
Ջաֆարզադէ Ի. Մ. 94, 95

Ջհանշահ 280-282, 290
Ջուվեյնի 289
Ջուրմագում 160

Ռահան, Ըռահան 106
Ռաշիդ-ադ-դին 263
Ռատ 146, 152
Ռատակէս 343
Ռուբինեաններ 239
Ռուբրուք Ու. 202
Ռուստամ խան 322

Սալամաթ-Գիրեյ, (Սելեմետ-Գիրեյ) 378
Սահաթ 276
Սահակ Արծրունի 110, 112, 113
Սահակ Բագրատունի 112
Սահակ եպս. 325
Սահակ Պարթեւ 34, 34, 43, 44, 48, 51, 55, 63-65, 87, 319, 322
Սահակ Վանեցի 365
Սաղամոն 190
Սումուէլ 286
Սամուէլ եպս. 44
Սամուէլ Անեցի 144, 145, 229, 279, 281, 290, 346,
Սան Սեբաստիանոս 314
Սանատրուկ 111
Սանդուխտ կոյս 44
Սառա 73, 76
Սատաղա 96
Սարգիս աբղ. 128, 129, 241, 291, 293-305, 313, 315, 316,
Սարգիս (գծող) 374
Սարգիս Լվովցի 362
Սարգիս Խիզանեցի 353, 354
Սարգիս կրօնաւոր 255, 353
Սարգիս Մազման 381
Սարգիս (մէլիք) 354
Սարգիս Մոկացի 353
Սարգիս Շնորհալի 212,272
Սարգիս վրդ. 279, 290
Սարգիս Րաբունապետ 280
Սարգիսեան Բ. 28-32, 67, 217, 247
Սարկաւագ վրդ. 188, 337
Սարուխան-բէկ 322
Սաւար (Սաֆար) 343, 355, 365

Սեբաստիանոս 314
Սեբէոս 286
Սեբերիանոս Եմեսացի 43
Սեթիել 183
Սելեմետ-Գիրեյ Ա. տե՛ս Սալամաթ- Գիրեյ
Սեղբեստրոս (ս.) 185, 283, 285
Սեմ 182
Սեմենով Լ. 116
Սենեքերիմ Արծրունի 113, 142
Սերովբէ վրդ. Ագլեան 145
Սերովբէ Պօղոսեան 67
Սեֆեաններ 362
Սէթ 181, 355
Սէֆի-Ղուլի 322
Սիթառ տե՛ս Շիդար-Արտաասգդ
Սիմաքոս 101
Սիմէոն Երեւանցի 318-320
Սիմէոն Լեհացի 292, 313
Սիմէոն (որդի Կարապետի) 217
Սիմէոն Մարքնդունեցի 211
Սիմէոն չրախճի 208
Սիմէօն 352, 356
Սիմոն թագաւոր 292
Սիմոն (ծաղկող) 352, 353
Սիւան 182
Սիքստոս V 313
Սմբատ 92, 96,198, 232, 325, 355
Սմբատ Բագրատունի 285, 286
Սմբատ Սպարապետ 129, 130, 133-135, 144, 145, 152, 162
Սմբատ մարզպան 274
Սմբատ Օրբէլեան 232, 240
Սոկրատ 199
Սողոմոն 22, 180, 188, 190, 197, 198, 255, 327, 348
Սողոն 182
Սոնեթացի 183, 191
Սպահպատ 30
Ստենլի 377
Ստեփաննոս 196, 199
Ստեփաննոս, Ստեփանոս (ս.) 187, 308
Ստեփաննոս (գրիչ) 198
Ստեփանոս Ասողիկ 135

Ստեփանոս արքեպս. 374
Ստեփանոս եպս. 161
Ստեփանոս երէց 357, 374, 383
Ստեփանոս Թոխաթեցի 370, 373
Ստեփանոս կաթ. 378
Ստեփանոս Դ Հռոմկլայեցի 240
Ստեփանոս Մեծոփեցի 129, 273-278, 282-284
Ստեփանոս Օրբէլեան 108, 233, 234, 240-242
Ստեփանոս (վանահայր) 365
Ստեփանոս (նորոգող) 357
Ստեփանոս Սիւնեցի 195
Ստեփանոս քհն. 369
Սրապեան Ա. 31, 220
Սրապիոն Ուռհայեցի, Սրապիոն կաթ. 342, 343,
Սրուանձտեան Գ. 158, 189, 293
Սուետոնիոս 95
Սուրեն-Սուրեան-Սուրէն 106
Սուրէն-Պահլաւներ, Սուրէն տոհմ 30
Սքանդար Կարա-Կոյունլու 280-282, 288-290

Վալուա 298
Վախթանգ 105
Վահագն վիշապաքաղ 21, 47, 119, 120, 124-126
Վահան Ամատունի 55
Վահան Մամիկոնեան 47
Վահանանք 56
Վահրամ Րաբունի 67, 69-74, 88, 239
Վանական վարդապետ 173-178, 180, 188, 190, 229, 348
Վաչէ Մամիկոնեան 37
Վասակ Սիւնեցի 285, 286
Վասիլ Բ (Վասիլ կայսր, Վասիլ թագաւոր) 130-132, 134, 136, 139, 141, 144, 146, 148, 149, 152-154
Վարազ 341
Վարդան 67
Վարդան Աղուանեցի 193, 197, 198
Վարդան Այգեկցի 18, 19, 26, 166, 213, 228, 272
Վարդան Արեւելցի 130, 157, 158, 161, 168, 173,177, 178, 178, 189,193-198, 228-230, 233, 235, 272, 348
Վարդան Բաղիշեցի 247, 248
Վարդան (գրիչ) 347
Վարդան (Դաւիթ գրիչ հայր) 39
Վարդան Հիզանցի 355
Վարդան Մամիկոնեան 285, 286, 372
Վարդան (շինական, Մաշտոցի հայր) 45
Վարդան (ուստայ) 357
Վարդանանք Ա. 67
Վարդիկ 380
Վարդապատրիկ (իշխան Արծրունեաց) 103
Վարդոփկին 380
Վարդուհեր 105
Վեբեր Ս. 31
Վըհաք 166
Վռամշապուհ 48, 51
Վրան ուսթայ 209
Վրթանէս 37-39

Տակիտոս 117
Տահիր (Ահմատի որդի) 287
Տաշեան Յ. 49, 57, 217
Տարագրոս 141
Տարաւնացի 53
Տարսայիճ Օրբէլեան 232, 240, 241
Տէր-Աւետիսեան Ս. 351
Տէր-Մինասեան Ե. 51, 87, 98
Տէր-Մկրտչեան Գ. 30, 34, 51, 59, 70, 123
Տէր-Մկրտչեան Կ. 31
Տէր-Մովսիսեան Մ. 339
Տիգրան 105
Տիգրան Բ. 47
Տիմանչ 158
Տիմոթէոս 99
Տիրայր վրդ. 351
Տիրան 92
Տիրատուր 242

Տիրացու (գրիչ) 178
Տրայանոս 97
Տրդատ 28, 30, 36, 47, 96, 99, 101-103, 110, 111, 119, 259, 285, 324
Տրեւեր Կ. Վ. 95, 125
Տօմաժիրսկի 382
Տորք Անգեղ (Անկեղ, Անկիւղ) 47, 106
Տումբիլ Պ. Խ. 94, 95

Րաբուլաս 51

Ուգուհի տե՛ս Ոգուհի
Ուլուբէկ 288, 289

Փաշա 363
Փառէն 38, 48
Փաւստոս Բուզանդ 29, 37, 38, 40, 46, 47, 62, 87, 165, 175
Փիլարտոս 141
Փիլիպոս (ծաղկող) 357
Փիլիպոս արքայ 365
Փիլիպոս կաթ. 319, 320, 326-330
Փիլիպպոս II 292, 303, 314, 315
Փիլոն Եբրայեցի 121
Փիտիոս տե՛ս Փոտինոս
Փիրզատայ 291, 292
Փիր-Հասան 274, 285
Փիրղալեմեան Ղ. 338-340
Փիրվալի 380
Փլաբիոսներ 93
Փոլին Քալայմաչի 214
Փոտ պատրիարք 65, 87
Փոտինոս 186, 192

Քալպալի 327
Քամ 151, 156
Քաշոտ 364
Քասունի Ե. 28
Քարափնեցի տե՛ս Յակոբ Սանահնեցի
Քարմատաններ 382
Քեօմուրճեան Երեմիա 323
Քէխուստրով խան 327
Քիւրդեան Յ. 294
Քիւրքճեան Վ. Ս. 123
Քոլանջեան Ս. 293, 351
Քրիստոսատուր երէց 356
Քուչկանց 382
Քուրդ (մեծ իշխան) 229

Օգոստոս 264
Օգոստոս Գերմանիկոս Դոմետիանոս 95
Օթման 290
Օլիմպացի տե՛ս ՄեթոդիոսՊատարացի (Օլիմպիացի)
Օհան 379
Օրմանեան Մ. 33, 87, 230, 318, 319

Ֆախրատին 261
Ֆեթթեր Պ. 31
Ֆերդինանդ II 303
Ֆիլիպպոս Աղրակեցի, Ֆիլիպպոս կաթ. 318, 321

Адонц Н. 195
Ахвердов Ю. 209
Ашот, царь 142
Бартольд В. 206
Босворт К. Э. 378
Вардан 228, 266
Гордлевский Вл. 206
Дарбинян М. О. 293
Джафарзаде 95
Дионисий Фракийский 195
Иоанн Воротнеци 231
Иоанн Козерн 129
Иоанн Цимисхий 142
Капанцян Г. 176
Кучук-Иоаннесов Х. И. 142
Марр Н. Я. 129, 132, 228, 266
Микаелян Г. Г. 141
Моисей Хоренский 68, 174
Одабашян А. 21
Петр, католикос 129
Рюи Гонзалес де Клавихо 278
Симеон Лехаци 292
Сказкин С. Д. 298
Стенли 377
Тимур 278
Тумбиль П. Х. 95
Фома Мецопеци 283
Ричард Фрай 30
Халатьянц Г. 117, 175, 179
Эмин Н. 116
Юстиниан 54

Adontz N. 142
Mommsen 93
Oppolzer Theodor 345
Re Philippe 365
Schlumberger 6, 142
Toumanoff Cyril 131

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ախալքէն 296, 299, 308
Ագարակ 382
Ագուլիս 383
Ադրբեջան 92, 94, 129
Ադրիատիկ ծով 304
Ադոու 301, 310
Ազախ 286
Աթէնք 235
Աթոռ 297, 300, 308, 313
Աթուրշ 300, 309
Աիքլիս 382
Ալաման 299, 307
Ալժիր 315
Ալխալայ 302, 303 311,
Ալհամայ 302, 310
Ալնջոյ բերթ 287
Ախալցխա, Ախըլցխայ 356, 359
Ախթա 382
Ախթամար113, 250, 254, 260, 347, 260, 347, 352, 363, 377, 378, 383
Ակվալ 311
Ակրանատ տե՛ս Գրանադայ
Ահավանք 382
Աղբակ 375
Աղբերկայ վանք 277
Աղբերց վանք 233
Աղեքսանդրիա 189
Աղթամար տե՛ս Ախթամար
Աղջուց վանք 230, 327
Աղուանք, Աղւանք 51, 182, 191
Աղքերման 295, 304, 312
Ամերիկա 293, 302, 303
Ամիդ 48, 49, 51, 268
Ամոյ 286
Ամրդոլու վանք 359
Ամու-Դարեայ 286
Այաս 201
Այդուժ 300, 308
Այլաբերից գիւղ 122
Այմոնդ 302, 310
Այրարատեան աշխարհ, երկիր 47, 283, 341, 365
Այրիվանք 40, 383
Անադ 300, 309
Անապոլի, Անապօլի 303, 311
Անբերդ 325
Անգլիա 291, 296, 308, 315
Անդալուզիա 298, 302
Անդրէի վանք 229
Անդրկովկաս 206, 209, 273
Անթքել 302, 310
Անի 130.138, 146, 152, 201, 210, 211, 217, 228, 232, 283, 325
Անձեւացեաց գաւառ 110, 111,
Անճէշ 300, 309
Անպոզա 300, 309
Անտիոք 131, 148, 153, 207, 208
Անտվերպէն (Անվերս, Անուերս, Յանուես, Ովնես) 296, 299, 316, 317
Անքունիա 304, 311
Աշտիշատ 38
Ապարաներ 292
Ապիլա տե՛ս Բյուա

Ապրակունեաց վանք 252
Առաքելոց վանք (Մշոյ) 230, 277
Առինչ (Առինջ) 106, 341
Առոմէ 300, 308
Աս 339
Ասդորկա 301, 309
Ասպահան տե՛ս Սպահան
Ասոմէր 300, 309
Ասորիք 19, 48, 50
Ասպիսակ (գիւղ) 375
Ասպիսթան (գիւղ) 375
Ավրօնա 304, 311
Ատիշ 382
Ատրանա 304, 312
Ատրէնիս 359
Ատրպատական 252, 258, 284
Արագածոտն (Արածուոտն) 359, 383
Արազ (գետ) 272
Արածանի 106,
Արարատ 176
Արարատեան երկիր տե՛ս Այրարատեան աշխարհ
Արգազ (գիւղ) 341, 382
Արդակ 103
Արեւելեան Հայաստան 156-160, 166, 240
Արեւելեան Հռոմէական կայսրութիւն 46
Արեւմտեան Հայաստան 293
Արզանջան 201
Արզրում 341
Արիտոս, Արիտօստ 341, 360
Արիքան 382
Արծկէ 274, 278, 285, 287
Արձան 103, 104, 105
Աղնի 383
Արճակ 375
Արճէշ 249, 268, 278, 284, 287, 375
Արմուտթաղ 382
Արտազ 108, 111
Արտամետ 360
Արտաշատ 94, 96
Արտաշիպ (գիւղ) 359
Արցախ 360
Աւելոյաթինչ 106
Աւքնդանց 341
Աւիլուա, Աւիլվայ տե՛ս Բիլբաո
Աւիցենց 304, 311
Աւճ քաղաք 105
Աւղբին 383
Աւրին 383
Աքուա 303

Բաբելոյն, Բաբելոն 80
Բագառինջ 106
Բաղեն 316
Բաղրուն 301, 310
Բազէլ 295, 297, 299, 313, 316
Բազէն 383
Բալեարեան Էլիսայ 303
Բալխաշ լիճ 286
Բալխաստան 106
Բահղ Ռահաստան 106
Բաղդադ (Բաղդատ, Պաղտատ) 233, 278, 287
Բաղէշ 278, 281, 285, 287-289, 341, 364
Բաղու 104
Բասենու երկիր, հովիտ 92, 93, 96, 106, 360
Բատմա 11
Բարդող լեռ 276
Բարիզ տե՛ս Փարիզ
Բարիձոր
Բարձր Հայք 295, 341
Բաւիայ 303, 311
Բեխ 341
Բենեւենտո, Պէնովենդ 294, 301, 309
Բենիկ 383
Բեռլին 351
Բիլբաո (Աւիլուա, Աւիլվայ) 298, 300, 301, 309
Բիզանդիա 65, 130, 131, 136, 233
Բիւրական 320
Բլուախ (Ապիլայ) 294, 300, 309
Բողեն լիճ 299
Բոթուշան 384
Բոլենց 360
Բոյուկ Չեքմէջէ, Ջաքմայճայ 304, 312
Բորչալու 124, 125
Բջնի 193
Բրակա 301, 310
Բրաստա 304, 312
Բրեխ 99
Բրիւսէլ 300
Բուդապեշտ 351
Բուխարեստ 351
Բուղտան 383
Բունդայլիմնմայ 302, 310
Բուրգաս 294

Գագ բերդ 173
Գալիսիա 291
Գահլու (գիւղ) 355, 383
Գայա 301
Գայլեձոր վանք 234
Գանձակ (Գանճայ, Գէնջոյ) 193, 268, 359, 361
Գանձասար 377, 378
Գաւառ (Նոր Բայազէտ) 359
Գարդմանք, Գարդման գաւառ 51, 360
Գեղամայ երկիր 362, 383
Գետաթաղ գիւղ 291
Գերմանիա 291
Գլակ 104, 285
Գլակայ վանք 29, 55, 104
Գլաձոր 228, 230, 231, 233-235, 241, 242
Գողթան գաւառ 48, 51, 348
Գողթան դաշտ 360
Գողթն 64
Գորի 359
Գորտովայ, Գորտուայ տե՛ս Կորդոուայ
Գրանադա (Ակրանատ) 294, 298, 302, 311
Գուադալկուիւիր 302, 315
Գուադալուպա 302, 315

Դալմաթիա 298
Դաղման 283
Դանուբ 315
Դաշտ 341
Դարա գիւղ 275
Դարբնաց քար 111
Դարենից 383
Դ'Աքս (տ'Աքս) 294
Դաւրէժ տե՛ս Թաւրիզ
Դեմրէ 294
Դիարբեքիր 129, 293
Դինեգր (գետ) 301
Դիւնիկ 341
Դնեստր 304, 316
Դոն գետ 95
Դորդայտէլ (Դորդայտէլ) 301, 309
Դովնադաշտ տե՛ս Դունայ դաշտ
Դուին 103, 111, 190
Դունայ (Տունա) 304, 312, 315
Դունայ դաշտ 106

Եաշ 304, 312, 360
Եգեպատ 383
Եգիպտոս 72, 162, 181, 292, 315
Եդեսիա 48, 49, 50, 51, 141, 143
Եզր աշխարհի (հրուանդան) 301
Եզր Աստուածածին 314
Եղեգիս 341, 359
Ս. Եղիշէի վանք տե՛ս Վարդապատրկի վանք
Եղնուտ 106
Ենիկիւրիայ 358
Երզնկա 200-204, 206, 207,210, 211, 215-220, 222, 226, 268, 290, 295-2984 341
Երեւան 320-322, 326, 342, 359
Երնջակ (Երնճակ, Էրնճակ) 250, 251, 253, 254, 276, 2834 292
Երուսաղէմ 37, 38, 101, 111, 134, 141, 157, 193, 274, 277, 285, 291, 301, 318, 341, 350, 351, 359, 363, 374, 378
Եւստաթէի ուխտ տե՛ս Տաթեւի վանք 251
Եւրոպա 292, 299, 313,

Զամոսցա 341
Զատրա 298, 306
Զաքապին 302, 310
Զէյթուն 359
Զմիւռնիա 294, 298, 313
Զմմառ 318, 351

Էգէեան ծով 292
Էթիլ տե՛ս Վոլգա
Էլեւսին 190

Էջմիածին 279, 280, 290, 318-322, 324, 325, 327, 328, 377
Էսիշայ 302, 310
Էսկուրիալ (Ըսկուրեալ, Ուսկուրեալ) 303, 311, 315
Էվիսայ 311
Էրնճակ տե՛ս Երնջակ

Ընկլուզաց աշխարհ տե՛ս Անգլիա
Ըռին (Ըռզին) տե՛ս Հռենոս
Ըսկուրեալ տե՛ս Էսկուրիալ
Ըսպանիա (Սպանիա) 309, 311
Ըստամպալ (Ըստամպոլ) տե՛ս Իստամպօլ

Թակալթու, Թաքալթու լեռ 2704 274, 276, 283
Թամդան 283
Թանջան (Թաջան) 283
Թաքալթու տե՛ս Թակալթու
Թաւրիզ (Թարիզ, Թաւրէզ, Թաւրէժ, Թավրէզ, Թարվէզ) 197, 201, 268,278, 279, 283, 288, 290
Թբիլիսի տե՛ս Թիֆլիս
Թեղենեաց մենաստան, Թեղինեանց ուխտ 229
Թենթիր 303, 311
Թեքիրդաղ 304, 315
Թիֆլիս 268, 283, 287, 292, 322, 341, 351
Թոխաթ 341
Թոխաթի շրջան 359
Թորթոն 303, 311,
Թուլիթ 303, 311
Թուլկուրան 383
Թունիս 315
Թուխլ 283
Թուրքիա 209, 292, 315, 334
Թօփրախղալայ 325

Իզմիր 294, 313
Իլախաց աշխարհ տե՛ս Լեհաստան
Իսքանեայ տե՛ս Սպանիա
Իսիկկուլ լիճ 286
Իստամպօլ 306, 325
Իստրիա 298
Իսքանդար 288
Իտալիա 291, 295, 303, 304
Իրան 129,201, 217, 273, 291, 321, 334

Լար 303, 311
Լեհաստան 156, 218, 292, 304, 312, 316, 341, 345, 359
Լենինգրադ 156, 351,
Լէվոն Վիլայֆռանց 301, 308, 309
Լերիդայ 303, 311
Լիբանան 318
Լիբիա 315
Լիեժ 300
Լիզպօյ տե՛ս Լիսաբոն
Լիմ 383
Լիոն 300
Լիսաբոն 302, 310
Լիտա 313
Լոլընից 384
Լոնդոն 300, 308, 309, 312
Լոշ 302, 310
Լոռի 166
Լորետտո 304
Լվով 292, 341, 345
Լուդրան տե՛ս Լոնդոն
Լուցք 383

Խաչէն 249
Խաչլու (գիւղ) 360
Խապալա 294, 298, 306
Խառոցն (գիւղ) 360
Խասգեղ 284
Խասկալ 383
Խարբերդի շրջան 359
Խիզան 284, 341 360, 362
Խլաթ 249, 268
Խնուս 281, 288, 289
Խոզնա գաւառ 139
Խոյթի լեռներ 274, 284
Խոր Վիրապ 30, 168, 229, 279
Խորակերտի մենաստան 229
Խորանաշատ վանք 173
Խորասան 283
Խութ 103, 288
Խութա լեառ տե՛ս Խոյթի լեռներ
Խութին 304, 312
Խուփ 341, 360

Ծամբղաւ 283
Ծար գաւառ 251
Ծիծան 383
Ծիրանեաց լեառ 122
Ծծմակ (Ծծմահոտ, Ծծմայ, Ծմակ) 103, 106
Ծովասար 285
Ծոփանիս 320
Ծոփաց երկիր 40

Կալա (Կալայ) 294, 301, 310
Կալիպոլի 359
Կախեթ 377
Կաղզուան 283
Կամախ 341
Կամենեց-Պոդոլսկ 156, 218, 304, 312
Կամէնայ 301, 310, 311
Կան (գիւղ) 217
Կապադովկիա 36
Կապենց ուխտ 384
Կալլ (Կալլա, Կալլեր) տե՛ս Կոբլենց
Կասպից ծով տե՛ս Կասպիական ծով
Կասիմ 384
Կասպիական ծով 95, 286
Կաստենցիա 299, 307
Կաստիլիա 277
Կաստինար 302, 310
Ս. Կարապետի վանք 277
Կարբի 278, 287
Կարին, Կարնոյ քաղաք 122, 217, 249
Կարմիր ծով 74
Կարմունայ 300, 310
Կարս 152, 178, 232, 341
Կարուց երկիր 341, 360
Կալոն, Կալոնիայ տե՛ս Քեօլն
Կայճուկ 384
Կաֆա 208, 217, 341, 358, 359
Կեսարիա 30, 92, 97, 101, 105, 123, 359
Կետեղք 104
Կիլիկիա 157, 158, 162, 193, 194, 229, 240, 289, 325, 339
Կինն 281, 288, 289
Կիպրոս 289
Ս. Կիրակոսի վանք անապատ 295
Կլերմոն 300
Կոբլենց 296, 299, 307, 316
Կոգովիտ 275
Կոլոնիա տե՛ս Քեօլն
Կողբ 274, 276, 283
Կոն 302, 310
Կոնստանց 295
Կոռ (գիւղ) 234
Կոստանդնուպոլիս (տե՛ս նաեւ Իստամպօլ…) 65, 87, 98, 136, 140, 142, 186, 247, 249, 293, 294, 298, 304, 318, 340, 341, 358, 362, 377, 378
Կոտայք 320
Կորատուն 384
Կորդոուայ 294, 302, 310
Կորիդա տե՛ս Կորիտա
Կորիտա 303, 315
Կորսիկա 304
Կտուց անապատ 206
Կրամինա 304
Կուրան 283
Կոտումրա 302, 310

Հալէպ 268, 339, 341, 359, 378
Հաղբատ 157, 178, 194, 229
Համասարաբակ գիւղ 359
Համիթ տե՛ս Ցամիթ
Հայաստան 16, 18, 19, 26, 28, 29, 32, 33, 36-38, 40, 44-47, 53-55, 64, 68, 87, 91, 93, 94, 96, 97, 108, 110-112, 124, 138, 140, 159, 160, 162, 166, 173, 176, 193, 194, 200, 201, 207, 209-211, 218, 228-230, 232, 233, 234, 240, 242, 249, 250, 252, 257, 258, 261, 267, 268, 272-274, 281, 283, 284, 291-293, 295, 298, 312, 319, 334, 340, 358, 383, 385
Հայաստանեայց երկիր 326
Հացեկաց 45
Հանազահ 284
Հանրքիս տե՛ս Հարքնիս

284
Հաշտենից գաւառ 103, 104
Հերմոնի վանք 156
Հէգէպատ 384
Հիզան (տե՛ս նաեւ Խիզան) 353, 354
Հիլի գիւղ 360
Հին Ջուղայ 338, 339, 341
Հիւսիսային Հայաստան 160-162
Հնդկաստան 27, 111
Հոնընկեցն 105
Հոնոս (Ըռին, Ըռզին) 295, 307, 316
Հռոմ, Հռոմ 60, 75, 92-94, 96, 101, 158, 162, 233, 291, 292, 295, 296, 299, 302, 306, 313, 328, 377
Հռոմայ աշխարհ 311
Հռոմէական կայսրութիւն 19
Հռոմկլա 158, 194
Հրէաստան 324
Հրճիտոն 302, 310
Հունգարիա 218

Ձագավան, Ձագավանք 28, 157,158

Ս. Ղազար (կղզի) 299, 313
Ղազարու վանք 230, 285
Ղազուին 283
Ղարաչալու (գիւղ) 359
Ղարբերդ 355
Ղլաթ (տես նաեւ Խլաթ) 288
Ղրիմ 201, 217, 286, 341, 354
Ղում 283

Ճաղաթ 328
Ճակատուց երկիր 276
Ճայէն 302, 311
Ճապլխչուր 284
Ճենեւայ 303, 311
Ճիլճիլիա 304, 311
Ճլել 384
Ճուղայ գեղ 285

Մադրիդ 303
Մազանդարան 283
Մալակայ (Մալագայ) 294, 302, 310
Մալհամ գիւղ 359
Մակու 249, 375
Մալտուրան 283
Մանուղգայ (Մանուռկայ) 303, 311
Մամուշ գետ 40
Մանածկերտ 284
Մասիս 60, 68, 75, 83, 175, 176, 187
Մատրիդ 303, 311
Մատոնա Լոռէդ 304, 311
Մարաղա 384
Մարաց կողմեր 51, 64
Մարկոս աւետարանչի եկեղեցի 306
Մարոկկո 314, 315
Մարսէլիէ տե՛ս Մարսէլ
Մարմարի ծով 292
Մարչինայ 302, 310
Մարսէլ 300, 308
Մեծամօր 187, 192
Մեծոփայ վանք 275, 280, 284
Մեղտի 99, 103, 106
Մանչեստր 351
Մեսսինա 304
Մետին Ըռուշէք տե՛ս Մէդին Ըռուշէք
Մերտին 341
Մէդին էլ Գամբ 301, 309
Մէդին Ըռուշէք 301, 309
Միամար տե՛ս Մեծամօր
Միլան 299, 303, 311
Մինչո գետ 301, 314
Մինորգա 303, 311
Միջերկրական ծով 268, 303
Միջին Ասիա 277, 278, 289
Միրա 294
Մոզանթիֆիաշկ 303, 311
Մոլդաւիա տե՛ս Մոլդովա
Մոլդովա (Պողտանաց երկիր, Պուղտանա, Պուղտանաց երկիր) 218, 304, 312, 316, 341
Մոխենցո-դարո 27
Մոկաց երկիր, Մոկաց աշխարհ 249, 341, 360
Մոկք (Մոկս) 341, 342, 353
Մոնինու կղզի 303, 311
Մուր 278, 287
Մուշ 103, 230, 274, 277, 281, 284, 285, 288, 289, 359,

Յագոռճան (Յագդիճան, Յագդիոճան, Յագոհին, Յառգին) աւան 36
Յազլովեց 217, 345
Ս. Յակոբայ աշխարհ տե՛ս Սպանիա
Յամիթ 339, 341, 359, 364
Յանուես տե՛ս Անտվերպէն
Յաշ 218
Յառին 229
Յոնիական ծով 249, 298
Յորդանան 318
Յորդանան գետ 150
Յուլիոսի վանք 295
Յունաստան, Յունաց աշխարհ 146, 190

Նազարէթ (Նազարաթ) 299, 306, 313
Նախճաւան 51, 112, 287, 360
Նանտ 298, 300
Նարեկ 359
Նեղոս 255
Նեւեր 300
Նիկիա 32, 87
Նիմ 300
Նիչ 230
Նիշապուհ 283
Նոր Բայազէտ տե՛ս Գաւառ
Նորգեղակ 295
Նոր Հունդուստան 302, 310
Նոր Ջուղա 321, 341, 345, 351
Նփրկերտ 233

Շամ, Շամբ 278, 287, 384
Շամշուլտ 290
Շամքոր 232
Շատախ 360, 375
Շատուան 288
Շիրազ 283
Շիրակ 131, 146
Շիրաղալա գիւղ 380
Շիրհան գիւղ 250, 254
Շիրիղալա գիւղ 359
Շմեզդ, Շմըզտին 278, 287
Շնազ (գիւղ) 359
Շուեյցարիա 291, 295

Ողնուտ 106
Ոստան 278, 283, 288, 360
Որկեր 384
Որոտանի շրջան 291
Որոտն գաւառ 275
Ովնես տե՛ս Անտվերպէն

Չնքուշ 293

Պադուայ (Պատվայ, Պատուայ) 294, 304, 306, 311
Պազարճուխ 312
Պազլ 307, 316
Պալունեաց գաւառ 106
Պաղակացիս ծովակ 131
Պաղակձիակ վանք 131, 149, 153
Պաղեստին 162, 242
Պաղեստինացոց կողմանք 92
Պապա 304, 312
Պապական նահանգ 299
Պապաք 233
Պատուշան 218
Պատուա 299, 304
Պարզալո, Պարսալոն 303, 311, 317
Պարմա 199
Պարսկաստան 207
Պարսք 65, 87
Պարտաւ 106, 113, 207
Պետերբուրգ (տե՛ս նաեւ Լենինգրադ) 59
Պերկամայ 179
Պէնուվէնդ տե՛ս Բենեւենտո
Պըրդուս տե՛ս Բուրգաս
Պլեւս, Պլեչ 302, 310, 317
Պլոնիայ 311
Պոլիս 303
Պոլոնիայ տե՛ս Լեհաստան
Պողտանաց (Պուղտանաց) երկիր տե՛ս Մոլդովա
Պոչան 304, 312
Պորտուգալիա 292, 293, 298, 301, 302, 310, 314
Պոռ 360
Պրահա 246
Պրաձոր 383, 384
Պուլանուխ 281, 288, 289
Պուխարայ 283
Պուրդուս 301, 309
Պուրսայ 287
Պօլիս 311

Ջահուն գետ 283, 286
Ջաքմայնայ տե՛ս Բոյուկ Չեքմեջէ
Ջզիրէ 360
Ջինգիրդաղ 94
Ջնուկ (գիւղ)
Ջողու 304, 312, 315
Ջուղայ 326, 328, 365
Ջոլամերկ 288

Ռամիջի 300
Ռէ 283
Ռընանոյուին 299, 306
Ռշտունեաց գաւառ 283
Ռումինիա 218, 360
Ռուսաստան 201, 292

Սագակ 103
Սագաստան 285
Սալամանք 300, 309
Սալմաստ (Սալամաստ) 288, 359
Սալնապատայ ուխտ 280
Սահաթափոս 322, 330
Սաղմոսավանք 229
Սամարղանդ (Սմրղանդ) 274, 277, 278, 283, 285, 286, 288, 289
Սամշուղէ տե՛ս Շամշուլտ
Սամոսատ 50
Սամուլա 301, 309
Սանահին 140
Սանգաչալի 94
Սան-Դիզէ, Սան-Դիզյէ 300, 313
Սանզիայ 308, 313
Սանթայ Մարիա Ֆենէստրինա 314
Սանթարին 302, 310
Սանթաֆէ 302, 310
Սանթիլինայ 307
Սանկիրիկո (Սան Կիրիկոյ) 303, 311
Սան-Սեբաստիան 309, 314
Սանտա-Մարիա դ'Աքս տե՛ս Ախսէն
Սանտյագո 298
Սանտյագո դէ Կոմպոստելլա վանք 291, 301
Սաչով 304, 312
Սասանեան Պարսկաստան 46, 47
Սասուն 130, 230, 234, 281, 288, 289
Սարայ 286
Սարայկոսա (Սարայկոս) 303, 311
Սարդինիա 304
Սարմատիա 95, 97
Սեբաստիա 142, 249, 287, 359, 360
Սեթովր (Սէթօվրն) 302, 310
Սեւ լեռ 131, 149, 153
Սեւ ծով 268, 295, 312
Սեւիլիա 302
Սեմիրեչյէ 286
Սեչով 341
Սերաթ 304
Սէն-Դենի 297, 313
Սէնտ-Օմեր 300
Սէպ 341, 360
Սիլիվիր (Սիլիփր) 304, 312
Սիմանգաս 301, 309, 317
Սին 303, 311
Սիս 158, 194, 279, 325, 377, 378
Սիվիլիայ 310
Սիրիա 162, 292, 341
Սիցիլիա 303, 304
Սիւնիք (Սիւնեաց աշխարհ, Սիւնեաց երկիր) 51, 64, 232, 233, 250, 275, 276, 283 341
Սպահան (Ասպահան) 283, 321, 322, 326, 360, 376,
Սպանիա (Ըսպանիա) 291-293, 298, 300-302, 309-311, 314, 315
Ստաթեւ տե՛ս Տաթեւ
Ստամբոլ (տե՛ս նաեւ Իստամպօլ…) 292, 294, 298, 304, 313
Ստրագբուրգ (Ստրասբուրխ, Ստրագբուլխ, Տրաքուխ) 296, 299, 307, 316
Սրեմաձոր տե՛ս Սրոց ձոր
Սրկղունք աւան 232
Սրոց ձոր (Սրեմաձոր, Սրենց ձոր) 106
Սուլթանիա (Սուլթանիայ, Սուլտանիայ) 209, 217, 268, 278, 281, 283, 287, 288
Սուլու Մանաստր 362
Սունայ 302, 310
Սուրբ Խաչ տաճար 113
Սուրքկանց 384
Սուրխաթ 199
Սուրբ Մարի, Սուրմարի 276, 283
Սօլաք 320, 327

Վաղալաշար (Վատալաշար) 303, 311
Վալպատուլի 301, 309
Վալենսիա (Վալենաց, Վալենցա) 298, 301, 303, 310, 311
Վահկա 383
Վաղարշապատ 45, 48, 51, 55, 144, 152, 234, 320, 321, 322, 324
Վայոց Ձոր 232-234, 240
Վան 210, 217, 278, 284, 287, 289, 341, 359, 360, 375
Վանա լիճ 207
Վանի շրջան 189
Վանանդ 178
Վանատիք 306
Վասպուրական 110, 112, 207, 210, 250, 284, 287, 341, 360, 363
Վատալույ 311
Վարդիկ 283
Վարդով 288
Վարդպատրկի վանք 283
Վենետիկ 67, 70, 98, 145, 152, 292, 295, 296, 298, 299, 304, 312, 313, 350, 351, 381
Վիեննա 67, 89, 90, 217, 301, 310, 365
Վիլա Նով (Վիլա-Նովայ, Վիլա -Նօվա) 301, 302, 310,
Վիլպֆռանգ 301
Վիտերբ 303, 311
Վիրապ տե՛ս Խոր Վիրապ
Վոլգա 286
Վրաստան (Վիրք, Վիրգ, Վրաց աշխարհ, Քարթլի) 131, 146, 160, 161, 186, 192, 209, 282, 290, 291, 292, 334, 359, 377
Վրկանայ աշխարհ, Վրկանաց երկիր 285, 286

Տաթեւ (Ստաթեւ) 231, 251, 256, 257, 269, 359, 382, 383
Տաթեւի վանք 250, 251, 255
Տալայվեր (Տալայուեր) 302, 311
Տայք 130
Տանզիա 300, 313
Տանձափարախ անապատ , 251, 255
Տաշիրք 51
Տատկու դաշտ 384
Տարօն (Տարաւն) 29, 45, 55, 98, 101, 103-105, 108, 110, 234, 341, 364
Տաւուշ 173, 229
Տըմաղօ 306
Տիգրանակերտ 96, 293, 341
Տիգրիս 186
Տիմանգաս 301, 317
Տիպրիկ (Տիւրիկ) 346, 384
Տիրոս լեռ 285
Տմաղու (Տմաղօյ) 299, 306
Տրապիզոն 131, 144, 146, 152, 201, 295, 304, 359,
Տրապոխ տե՛ս Ստրագբուրգ
Տրոա 300
Տունա տե՛ս Դունայ 304, 312, 315
Տուրուբերան 110
Տփխիս տե՛ս Թիֆլիս

Ցիւրիխ 299

Ուկրաինա 156, 218
Ուղնուտ 106
Ուռլիան 300, 309
Ուռհա տե՛ս Եդեսիա
Ուռմանի 304, 312
Ուսկուրեալ տե՛ս Էսկուրիալ
Ուրբանոս 111
Ուրմանի 218
Ուրուփին 298, 306

Փարիզ 128, 246, 296, 298, 300, 308
Փայտակարան 256

Փանիկ 105
Փափասար 299, 306
Փիշպեկ գիւղ 286
Փոռթ 301, 310
Փորթուկալաց աշխարհ տե՛ս Պորտուգալիա
Փոքր Ասիա 202, 206, 219, 292, 341
Փունթուպետր 301, 310

Քաբարդիստան 94
Քաղկեդոն 185, 192
Քամէնց 299, 306
Քաշան 283
Քաջբերունիք 274, 275, 284, 375
Քառավանառ գիւղ 251
Քարթլի տե՛ս Վրաստան
Քարթման գիւղ 360, 376
Քեօլն (Կալայ, Կալոնիայ, Կոլոնիայ, Կօլօնիա) 296, 299, 307, 316
Քրման 283

Օշական 55, 320, 326, 327
Օսմանցոց երկիր 322, 325, 326

Ֆարֆարին 303, 311
Ֆերրան 300
Ֆլանդրիա, Ֆլանտրու աշխարհ 291, 296, 299, 300, 308
Ֆլորենցիա (Ֆլորենցայ) 292, 303, 311
Ֆոնտենբլո 300
Ֆռանգստան 304, 312
Ֆռանկֆուրթ 313
Ֆռանցու աշխարհ տե՛ս Ֆրանսիա
Ֆռիբուրկ տե՛ս Ֆրեյբուրգ
Ֆռուտ տե՛ս Ֆրուտ
Ֆրանսիա (Ֆռանսա) 291, 298, 300, 306, 308
Ֆրեյբուրգ 299, 307, 316, 317
Ֆրուտ, Ֆռուտ (Ferrette) 299, 307, 313

Азербайджан 95
Армения 54, 67, 68, 117, 175, 179
Беюкдаш 95
Грузия 283
Иран 30
Кабаристан 95
Кавказская Албания 95
Малая Азия 206
Самарканд 278
Турция 206

Aachen 289
Acqupendente 303
Aix-la-Chapelle 299
Akkerman 304
Alcala de Henares 303
Alcala la Real 302
Alhama 302
Amboise 300
Ancona 304
Angers 300
Anteguera 302
Antwerpen 317
Anvers 317
Arckidona 302
Astorga 301
Ayamonte 302

Barselona 303
Benuvente 301
Blois 300
Botuschani 304
Bra 304
Braga 301
Burgos 301

Caminha 301
Campillos 302
Carmyna 302
Castinhera 302
Chotin 304
Coblentz 299
Coimora 302
Colonia 299, 316
Cordoba 302
Corita 303
Corlu 304
Cremona 304

St. Dizier 300, 313

Ecija 302
Edirne 304
Escorial 303
Europe 291

Faro 303
Ferrara 299
Ferrette 299, 313
Finisterre 301
Florenza 303
Freiburg 299

Genova 303
Granada 302
Guadalajara 303
Guatalupe 302

Jaen 302

Kephallinia 294, 298
Konstanz 299

Laurentana 304
Lazzaretto Vecchio 299, 313
Leon 301
Lerida 303
Lisboa 302
Loja 302
Lyon 300

Maiorca 303
Malaga 302
Marchena 302
Marseille 300
Medina del Campo 301
Medina de Rioseco 301
Milano 303
Mino 314
Minorca 303

Nantes 300
Napoli 303

l' Océan Atlantique 291
Orleans 300
Osuna 302

Padron 301
Padua 299, 304
Paola 303
Papa 304
Parenzo 299
Pavia 303
Pfirt 313
Pologna 303
Pontevedra 301
Porto 301

Rammillies 300
Roman 304
Rovigno 298

Salamanca 301
Sanson 298
Santa Maria Finisterre 314
Santafe 302
Santarem 302
Santiago de Compostella 301
Santiago de Galicia 291
Saragossa 303
Sereth 304
Setubal 302
Sevilla 302
Siena 303
Silivri 304
St. Quirico 303
Strasburg 299
Suczava 304

Talavera 302
Toledo 303
Tortosa 303, 315
Tours 300
Troyes 297
Tuy 301

Valadolid 301
Vaienca 301
Valencia 303
Verona 304
Vicenza 304
Villa de Conde
Villafranca 301
Villa Nova de Caia 301
Viterbo 303

Yassy 304
Yvica 303

Zadar տե՛ս Zara
Zamora 301
Zara 298

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՍՏԱԿԱԾԱՏ ՀԱՅԱԳԷՏԸ 9
ՆԱԽԱՄԵՍՐՈՊԵԱՆ ԳՐԻ ՀԱՐՑԸ ԵՒ ՀՄԱՅԱԳՐԵՐԸ 15
ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՉՈՐՐՈՐԴ ԴԱՐՈՒՄ 28
ՀԱՐՑՈՒՄՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԷՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՌ ԵՊԻՓԱՆ ՄԻԱՅՆԱԿԵԱՑ 41
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԾՆՆԴԵԱՆ 1600-ԱՄԵԱԿԸ 45
ԳՐԻԳՈՐ ՊԱՐԹԵՒԻՆ ՎԵՐԱԳՐՈՒԱԾ «ՀԱՐՑՈՒՄԸ» ՈՐՊԷՍ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՐԱԽԱՅՐԻՔ 57
ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ԵՐԿՐՈՐԴ ԳՐՔԻ ԾԴ ԳԼԽԻ ՄԱՍԻՆ 92
ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՅՈՎՀ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ «ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ 98
ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ «ՎԱՆԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ» ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ 108
ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՄՕՏ ԱՐՏԱԾԷՍ Ա-Ի ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՊԱՀՊԱՆՈՒԱԾ ՎԻՊԱԿԱՆ ՀԱՏՈՒԱԾԻ ՄԱՍԻՆ 115
ՅԱԿՈԲ ՍԱՆԱՀՆԵՑԻ՝ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ XI ԴԱՐԻ 128
ԿՈՍՏԱՆԴԻՆ ԲԱՐՁՐԲԵՐԴՑՈՒ ԽՐԱՏԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ՝ ԱՌԱՔՈՒԱԾ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ 1251 ԹՈՒԱԿԱՆԻՆ 156
[ԽՐԱՏԱԿԱՆ ԹՈՒՂԹ ԿՈՍՏԱՆԴԵԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ] 168
«ՅԱՂԱԳՍ ՏԱՐԵՄՏԻՆ Ի ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԱՍԱՑԵԱԼ» 173
ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՑՈՒ «ՎԱՍՆ ԲԱՆԻՆ ՄԱՍԱՆՑ» ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ 193
1280 ԹՈՒԱԿԱՆԻՆ ԵՐԶՆԿԱՅՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ «ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆԸ» 200
ԵՐԶՆԿԱ ՔԱՂԱՔԻ «ԵՂԲԱՐՑ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ» ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ (1280 թ.) 216
ԳԼԱՁՈՐԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԵՒ ՆՐԱ ՍԱՆԵՐԻ ԱԻԱՐՏԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ 228
ՄԱՏԹԷՈՍ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ԿԵԱՆՔՆ ՈՒ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ 247
ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆՅԱՅՏ ԷՋԵՐԻՑ 273
1. ՍՏԵՓԱՆՆՈՍ ԵՒ ՆԵՐՍԷՍ ՄԵԾՈՓԵՑԻՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ 273
2. ԿԻՐԱԿՈՍ ՌՇՏՈՒՆՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ 278
ՍԱՐԳԻՍ ԱԲԵՂԱՅԻ «ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆԸ» 291
ՅԱԿՈԲ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ԿՏԱԿԸ 318

ԺԷ ԴԱՐԻ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՑԻՑԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԸ 334
ՑԻՑԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ 337
ՑԻՑԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԾԱՐԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ 340
ՏՈՄԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ 344
ՎԵՐՆԱԳՐԵՐԻ ՀԱՐՑԸ 347
ՑԻՑԱՏԱԿԱՐԱՆԻ ՀԱՍՑԷՆ 350
ՑԻՑԱՏԱԿԱՐԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՐՑԸ 351
ՆԻՒԹԵՐԻ ԴԱՍԴԱՍՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ 356
ԳՐՉՈՒԹԵԱՆ ՎԱՅՐ 358
ԲՆԱԳՐԻ ՎԵՐԾԱՆՈՒԹԻՒՆԸ 361
ՉԱՓԱԾՈՅ ՑԻՑԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ 368
ԿԷՏԱԴՐՈՒԹԻՒՆ 372
ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ 374
ՑԱՆԿԵՐ 377
ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՆԱԵՒ ՎՐԻՊԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 384
ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ 385
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ 387
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ 393